Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

63·3(22)
Ռ-38

ԲԱԳՐԱՏ
ՌԻԼՈՒԲԱԲՅԱՆ

ԶՐՈՒՅԱՐԱՆ



ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ՋՐՈՒՅԱՐԱՆ

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ «ԱՐԵՎԻԿ»
1991

ԳՄԴ 63.3 (22) + 8427
Ա. 380

63.3 (22)
Մա
Ա. 380

ДГМВ
ВИЛАЯТ
ЧАСМ
ЗКАО ОБЛ
ОТДЕЛ

Ալուքթարյան Թ. Ա.
Զրուցարան։ Լրացված հրատարակություն։ (Դպր. միջին և բարձր տարիքի համար) Թագրատ Ալուքթարյան։ (Նկ. Գ. Խաչիկյան)— Եր.։ Արևիկ, 1991, 672 էջ։

Գրքում զետեղված պատմա-գեղարվեստական ակնարկները նվիրված են հայրենի պատմության առավել կարևոր ու հակասագրական պահերին և հայոց բազմադարյան մշակույթին՝ իր կազմավորման մշուշոտ ժամանակներից մինչև նոր ու նորագույն օրերի անհախադեպ նվաճումները։

4802010000
Ա1
707(01)91

ISBN 5—8077—0500—9

© Թագրատ Ալուքթարյան, 1991

75692

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքը ծնվել է իբրև պատասխանը մի հարցի, որն առեղծված է թվում մեր անցյալին ու ներկային ծանոթացող յուրաքանչյուր մարդու. ինչպե՞ս կարողացավ ապրել մի ժողովուրդ, որն իր ամբողջ պատմության ընթացքում այնքա՜ն շատ թշնամիներ ուներ, դաժան ու անողոքմ թշնամիներ, և այնքա՜ն քիչ բարեկամներ։ Մի ժողովուրդ, որին եթե բախտը երբեք ուշադրություն է դարձրել, ապա այդ էլ եղել է ճգնապարհի սկզբին։ Աշխարհի բոլոր դառնություններն ու տառապանքները, մարդկային ու անմարդկային ամեն տեսակ զրկանքներ նրա շալակն է ավել և ասել. «Ապրի՛ր, եթե կարող ես, քայլի՛ր, եթե կարող ես»։ Եվ նա ապրել է, այն էլ ինչպե՞ս։ Իր անթիվ-անհամար ցավերն ու մահերը հաղթահարելով, առասպելական փյունիկի պես զանգվածային չարդերից, իր շեների ու ոստանների մոխիրներից հառնելով։ Քայլել է, այն էլ ինչպե՞ս։ Քաղաքակիրթ ազգերի առաջին շարքերում, աշխարհին պարգևած իր հոգու կանաչ-կարմիրը, որ նրա ստեղծածն էր, նրա մտքերի ու քանքարի փայլատակումները, նրա երազներից հյուսված հրաշքներն ու հրաշալիքները։

... Արզնիում մտերմացել էի մի ասորի երիտասարդի հետ։ Նրա նախանախանախնիներն իրենց կոչում էին ասորեստանցիներ։ Ես այդ երիտասարդին պատմեցի իրենց թագուհի Շամիրամի ու մեր Արա Գեղեցիկի հին ասքը։ Պատմեցի, թե ինչպես իրենց գերհզոր կամ իրենք իրենց գերհզոր համարող թագավորները անվերջ գալիս-ավերում էին մեր եր-

կիրը, և մի անգամ էլ այդպիսի մի ավեր-ավարի ժամանակ Հայոց Թագավորն ինքնասպան եղավ, որպեսզի բաց աչքերով չտեսնի իր ժողովրդի տառապանքները։ Երիտասարդը փորձեց ուղղել ինձ. «Գուցե վախեցել է՝ իրեն է՞լ սպանեն»։ Ես նրան բացատրեցի, որ սպանությունից վախեցողն ինքնասպանություն չի գործում։ Ասացի. «Մեր Թագավորը պարզապես իր նախնիների պատվիրանով էր առաջնորդվում՝ «Լավ է մեռնել ոտքի վրա, քան տեսնել, թե ինչպես ստրկության են քշում քո ցեղը»։ «Հետո սպանողներն անհետացան աշխարհի երեսից, իսկ ազատության համար ինքնասպանություն գործողներն ապրեցին... Հրա՞շք բան է»,— ասաց երիտասարդը։

Պատահում է, պարսիկ ու արաբ գիտնականներ են գալիս Երևանի Մատենադարան՝ այնտեղ պահվող իրենց ձեռագիր մատյաններն ուսումնասիրելու։ Եվ մենք չենք էլ ուզում հիշեցնել, որ նրանց նախանախնիները մեր ձեռագիր մատյանները հրդեհի ճարակ էին դարձնում, հայ նախարարներին նախիջևանի ու Խրամի վանքերի աղոթասրահներն էին լցնում-վառում, որ նրանց երկրում ո՛չ հայ մարդ մնա, ո՛չ հայերեն մատյան։

Ասում են՝ մի անգամ հույն գրողին տարել, Արաքսի ձախ ափին ցույց են տվել Անիի ավերակները։ Եվ ցույց տվողներից մեկը, սիրտը վառված մի հայ, ասել է. «Ձեր արքունիքն սկսեց ավերածությունը...»։ Եվ հույն գրողը հառաչանք է արձակել բանիմացությամբ։ Ասել է. «Իսկ դրանից առաջ ձեր Տրդատ ճարտարապետը եկել էր, վերականգնել մեր սուրբ Սոֆյայի կործանված գմբեթը Կոստանդնուպոլսում։ Հրա՞շք բան է,— ասել է։— Ինչե՞ր են լինում... Եվ ինչե՞ր կարող էին լինել, եթե սերը միայն սիրով հատուցվեր, բարեկամությունը՝ բարեկամությամբ»։

Մի օտարերկրացու տարել էի Գեղարդ։ Ցույց տվեցի ժայռափոր տաճարը, բացատրեցի։ Եվ նա ցնցված հարցրեց. «Իսկ ի՞նչ է եղել այդ Գալձագ վարպետի ձեռքին, ինչո՞վ է փորել»։ «18-րդ դարում հայ քարգործի ձեռքին ի՞նչ պիտի լիներ,— ասացի ես։— Մուրճ ու բրիչ։ Այո՛, ձեռքին միայն մուրճ ու բրիչ է եղել։ Բայց հոգում... Հոգում ունեցել է հայի երազանքը։ Մանավանդ՝ հայի համառ ոգնությունը»։

Եվ իմ հյուրը խոնարհ գլխով արեց։

Մի՞թե սխալվել է մեր բանաստեղծը. «Մեզ չի հասկանա օտարերկրացին»։

Ահա այսպես է եղել։ Թե որ երկրի վրա անհնար է եղել շենք բարձրացնել, մենք մեր երազի շենքերը փորել ենք ժայռերի մեջ։

Հետո էլ, երբ երկիրը տիրել-բռնել էին Թուրք ու պարսիկ բռնավորները, և անհնար էր գիրք տպագրել հայրենիքում, մեր տարագիրները եվրոպական կենտրոններում ստեղծեցին հայկական տպագրությունը, Եվրոպայից էին տուն ուղարկում տպագիր գրքերը՝ որպես լույսի ճառագայթներ, որոնք ցույց պիտի տային մեր անցնելիք ճանապարհը։

Ասում եմ, չէ՞. Հին աշխարհի հրաշքներն ու հրաշալիքները պարզ էին, հասկանալի։ Իսկ մեր կենսագրության, մեր գոյատևումի հրաշքը ի՞նչ բազմանիստ է, բազմագաղտնի՞ք։ Հազար էջ ունի, մեկը մյուսից բարդ ու խորհրդավոր։ Պիտի մտնես խորքերը, ընթերցես, ցույց տաս, բացատրես։

Ամեն մի ժողովրդի համար էլ թանկ ու սրբազան են իր անցյալի հիշատակները, իր ստեղծած պատմամշակութային գանձերը։ Բայց երևի քչերը կան, որոնց համար իրենց պատմությունը դարերի ճանապարհին այնպես նեցուկ է եղել, դասագիրք և ուղեցույց, ինչպես մեր պատմությունը։ Դեռևս հինգերորդ դարում դա հասկանում էին մեր հոգևոր ու մարմնավոր առաջնորդները։ Նրանք գիտեին նաև,— այս մեկն արդեն հաստա՛տ գիտեին,— որ ազգն ապրում, գոյատևում, հարատևում է ո՛չ թե երկրներ ստրկացնելով, ուրիշի հողեր նվաճելով կամ հարևանի հոգևոր սեղանից պատառ թռցնելով, այլ սեփական հողի վրա, սեփական պատմությանը պորտաբարով, արյամբ և ուղեղի բոլոր թելերով կապված։ Ա՛յս կերպ միայն, ա՛յս պարագայում աշխարհի լույսին ու բարությանը, մարդկության առաջադիմությանը մատուցած գանձերո՞վ։ Նրանք գիտեին, որ փոքր է մեր ածուն, բայց համոզված էին, որ այն հասնելու է գալիքի բախտավոր հեռատաններին, քանի որ մենք անցած մեր ճանապարհը զարդարել ենք հիշատակության արժանի գործերով։

Նրանք երբեք չէին մոռանում նաև, որ մեր պատմությունը մեր ողնաշարն է. մեզ ուղիղ ու հպարտ է պահում, որ-

պեսզի չծոմվենք ամեն հողմից ու փորձությունից։ Մեր պատմությունը մեր ոտքի տակի հողն է, ա՛յն, որ Մեծ Հայքի թագավոր Արշակ Երկրորդին դարձնում էր հայրենասեր, հըպարտ ու անզիջում։ Եվ զգուշացնում էին, թե վա՜յ նրան, ով կտրվեց այդ հողից, կորցրեց այդ հողի ուժը։ Այլևս ո՛չ մի հող հուսալի պատվանդան չի դառնա նրա համար։ Մանավանդ, որ իր հողից կտրվածը, իր հողին դավաճանած մեկը համայն աշխարհում պիտի քայլի իբրև հայրենադավ, որից զգուշանում են, ինչպես բորոտից։

Մեր պատմության էջերը թերթելիս ես ինձ այնպե՜ս հզոր եմ զգում, այնպե՜ս հպարտ և լավատես մեր ճակատագրի, մեր այսօրվա ու վաղվա նկատմամբ։ Ի՜նչ դժվարություններ ենք հաղթահարել, ճակատագրի ի՜նչ անագորույն հարվածների տակ ենք անխաթար պահել մեր ազգային կերպարն ու դիմագիծը...

Իսկ հիմա,— երբ վաղուց հրաժեշտ ենք տվել ահերով ու մահերով «ճոխացած» մեր անցյալին, երբ մեկընդմիշտ լուծված է մեր ֆիզիկական գոյության հարցը, և այսօր ու հավիտյան բացառապես մեզնից պիտի կախված լինեն ինչպես անցյալ մեր լուսավոր մեծերի երազած «Հոգևոր Հայաստանի» և Հայկական մեր նոր պետության պահպանությունը, այնպես էլ մարդկության արդար ու երջանիկ համակեցությանը մատուցելիք մեր սեփական թույր ու բույրի հարբատությունը,— մի՞թե այստեղ ևս մեզ չպիտի նպաստավորի մեր պատմությունը, և մեզ համար դաս չպիտի դառնա մեր անցած բազմադարյան դժվար ճանապարհը, այդ ճանապարհին փայփայած ու այս լուսավոր օրերին հասցրած երազը։

Այս գիրքը ծնվել է իբրև պատասխանը մի հարցի, որն առնչվում է կամ հրաշք։ Սակայն ծնվել է ո՛չ միանգամից, այլ քայլ առ քայլ, աստիճանաբար, ինչ-որ չափով անսովոր, քանի որ պատմության հազարամյա հյուսվածքի մեջ ես փնտրել եմ ինձ տանջող հարցի պատասխանը և ոչ թե գրել եմ սիստեմատիկ պատմություն։ Պատմություն ուրիշներն են գրում՝ փաստերի ու տեղեկությունների անխախտ հերթականությամբ, սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային ամեն տեսակ շերտերի, փոխհարաբերությունների սառը քննությամբ, տնդը տեղին, որպեսզի ոչինչ դուրս չմնա

ամենատես հայացքից՝ ո՛չ մեծ ու փոքր նվաճումները, ո՛չ հավերժական ուղեկից անհաջողությունները, ո՛չ էլ ժամանակավոր կամ տարափոխիկ ձախորդությունները...

Ես մեր պատմության մեջ զրույցների նյութ եմ դարձրել այն էջերը, որոնք հենվելու կետեր են եղել, դարձել են մեր ազգային գոյի հիմքերը։ Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք սկիզբ առել, ինչպե՞ս ենք անցել մեր ճանապարհը։ Ի՞նչն է մեզ պահել և ի՞նչն է պահելու։ Չէ որ, վերջապես, ամեն մի պատմություն էլ կդառնա «պարապ վախտի խաղալիք», եթե առանցք չունենա այն դասերը, որ անցյալն է թողել՝ այսօրն ու ապագան անսխալ ապրելու համար։

«Զրուցարանն» առաջին անգամ լույս է տեսել երկու հատորով (1987, 1988)։ Ընդառաջելով ընթերցողների ցանկությանը՝ այն սեղմել ենք մեկ հատորի մեջ, կատարել նաև կարևոր շտկումներ, վերանայումներ ու լրացումներ։

ՀԱՅՈՑ ԲՆԱՇԽԱՐՀԸ

Ամեն մի ժողովուրդ ունի իր բնաշխարհը՝ պատմաաշխարհագրական այն միջավայրը, որի սահմաններում կազմավորվել է ինքը, ապրել իրեն բաժին ընկած կյանքը, ստեղծել իր քաղաքական, տնտեսական ու մշակութային կենսագրությունը։ Հայ ազգի բնաշխարհը Հայկական բարձրավանդակ անվամբ հայտնի այն ընդարձակ տարածքն է, որը նրա համար հանդիսացել է ծննդարան ու սննդարան և դարձել է նրա բազմադարյան դժվար կենսագրության ոչ միայն վայրը, այլև անմիջական մասնակիցը։

Հայտնի է, որ պատմական զարգացման հին փուլերում ամեն մի ժողովրդի ճակատագրի վրա խոշոր ազդեցություն է ունեցել նրա հայրենիքի աշխարհագրական դիրքը։ Հայ ժողովրդի պատմությունը, սկսած նախապատմական ժամանակներից մինչև վերջին դարերը, եղել է շընդմիջվող մի պայքար իր հայրենիքի խստաշունչ բնության և այդ հայրենիքի վրա բոլոր կողմերից եկած չար ուժերի դեմ։ Հասկանալի է, որ այս բազմադարյան պայքարն էլ պայմանավորել է մեր ժողովրդի հոգեբանության ու ազգային կերպարանքի շատ ու շատ կողմերը, դարձել մեր պատմությունն առաջ մղող ամենավճռական գործոնը։

Հայկական լեռնաշխարհ անունով է հայտնի այն երկիրը, որն անհիշելի դարերից հայի հայրենիքն է եղել։ Ընդարձակ այս տարածքի վրա է ծնունդ առել հայ ժողովուրդը, ստեղծել իր քաղաքական միավորումները և դարձել արարիչն ու տերը բարձրատիպ մի մշակույթի, որի նմուշները՝ նախապատ-

մական ժամանակներից մինչև այսօր, միշտ էլ գտնվել են մարդկային առաջավոր քաղաքակրթության մակարդակի վրա։

Հայկական լեռնաշխարհը կամ Հայկական բարձրավանդակը, որն իր դիրքով զգալիորեն բարձր է, քան հարևան Իրանական ու Փոքրասիական բարձրավանդակները, կազմված է հանգած հրաբուխների սարահարթերից և նրանց հարող ձորահովիտներից, որոնք իրենց մեջ առած պահում են լեռնապարերի, ալպյան, լեռնային, կիսալեռնային և դաշտավայրային բազմաթիվ գոտիներ՝ կլիմայական, բուսական ու կենդանական աշխարհների մի բազմազան համադրությամբ։

Ճիշտ է, իր քաղաքական բեմելի ու վերելքի շրջանի Հայաստանը հետագա դարերում աստիճանաբար նեղանում էր՝ հարևան բռնատիրություններին զիջելով ծայրամասային բազմաթիվ գավառներ ու նահանգներ։ Եվ, այսուհանդերձ, հին հայոց պետական կյանքը ձևավորվել ու երկար ընթացք է ապրել լայնածավալ այն տարածքում, որը բաժանվել էր երկու մասի՝ պատմական աղբյուրներում հայտնի իրրև «Մեծ Հայք» և «Փոքր Հայք»։ Մեծ Հայքն ընդգրկում էր Հայկական բարձրավանդակի ամբողջ տարածքը։ Իսկ Փոքր Հայքն ընկած էր նրանից հարավ-արևմուտք՝ Փոքր Ասիայի արևելյան մասում։ Այս երկու Հայքերի միջև սահմանային գիծն անցնում էր Եփրատ գետի հոսանքով։

Հայկական պետականությունը և տնտեսական ու մշակութային կյանքը բուռն զարգացում են ապրել նաև լեռնային Կիլիկիայում, որտեղ հայերը բնակություն էին հաստատել դեռևս մ. թ. ա. առաջին հազարամյակում։ Եվ մեր թվականության առաջին հազարամյակի վերջում այնտեղ կազմակերպված հայկական իշխանությունները, որոնք շուրջ երկու դար հետո պետք է միավորվեին՝ ստեղծելով բավականին կենսունակ մի թագավորություն, հիմնականում հենարան էին դարձրել տեղաբնիկ հայկական տարրը։

Ինչ էլ որ լինի, հայ ժողովրդի բնօրրանն ու բազմահազարամյա կենսագրության ասպարեզը Մեծ Հայք երկիրն է եղել, Հայկական բարձրավանդակը։ Այստեղ է ձևավորվել հայ ժողովրդի հնագույն պետական կյանքը, որի կարևոր պոռթկումները եղան Արմինա, Հայասա կազմավորումները,

ավելի ուշ՝ Վանի թագավորությունը՝ Վան-Տոսպ մայրաքաղաքով, Երվանդունիների պետությունը՝ Արմավիր-Երվանդաշատ կենտրոնով... Մինչև որ մեր թվականությունից առաջ երկրորդ դարի սկզբին Արտաշես Ա հզոր թագավորն ստեղծեց Հայոց միացյալ թագավորությունը, որի մակաբի տակ էր առնված ամբողջ Մեծ Հայքը կամ Հայկական բարձրավանդակը։ Ինչպես առաջ, այնպես էլ Մեծ Հայքի միացյալ կենտրոնական թագավորության շրջանից սկսած, հայ ժողովուրդը տնօրինում էր ամբողջ Հայկական բարձրավանդակին, որը բռնում էր ավելի քան 300 հազար քառակուսի կիլոմետր տարածություն։ Հենց միացյալ թագավորության շրջանում էլ այս տարածությունը բաժանված էր տասնհինգ նահանգների կամ երկրամասերի, որոնք ունեին հետևյալ անվանումներն ու տեղադրությունը ըստ Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույց»-«Աշխարհագրության»։ Առաջին երկրամասը Բարձր Հայքն է, այսինքն՝ Կարնո երկիրը,— թվարկում է յոթերորդ դարի մեր մեծ աշխարհագրագետը,— երկրորդը Ցորորդ Հայքն է, այսինքն՝ Ծոփաց երկիրը, երրորդը՝ Աղձնիքը, Տիգրիս գետի վրա, չորրորդը՝ Տուրուբերանը, այսինքն՝ Տարոնը, հինգերորդը՝ Մոկքը Ասորեստանի մոտ, վեցերորդը՝ Կորճայք երկրամասը, յոթերորդը՝ Պարսկահայքը Ատրպատականի մոտ, ութերորդը՝ Վասպուրականը, որը գտնվում է նրանից (Պարսկահայքից) հյուսիս-արևմուտք, իններորդը՝ Սյունյաց երկրամասը, որը գտնվում է Երասխ գետի մոտ, տասներորդը՝ Արցախը, որը գտնվում է նրա (Սյունիքի) մոտ, տասնմեկերորդը՝ Փայտակարանը համանուն քաղաքով, տասներկուերորդ երկրամասը Ուտիքն է, որը սահմանակից է Աղվանքին՝ Կուր գետով, տասներեքերորդը Գուգարքն է՝ Վրաստանի մոտ, տասնչորսերորդ երկրամասը Տայքն է՝ Եգեգի մոտ, տասնհինգերորդ երկրամասն Այրարատն է, որը գտնվում է նրանց մեջտեղում։

Հայոց երկրի այս տասնհինգ աշխարհները կամ նահանգները հանգամանորեն նկարագրված են «Աշխարհացույցում», բայց ավելի ընդարձակ՝ մեր հին մատենագրական երկերում և միջնադարյան ձեռագրերում։ Ամենից առաջ այդ նկարագրությունները պատկանում են ընիկ հեղինակներին. Արարատյան երկրի զգայացունց նկարագրությունը՝ Ղազար

Փարպեցուն, Տարոնինը՝ Հովհան Մամիկոնյանին, Վասպուրականինը՝ Թովմա Արծրունուն, Ուտիքինն ու Արցախինը՝ Մովսես Կաղանկատվացուն և Կիրակոս Գանձակեցուն, Սյունիքինը՝ Ստեփաննոս Օրբելյանին... Այդ քաջատեղյակ ու հայրենաշունչ նկարագրությունների մեջ յուրաքանչյուր նահանգ շողում է իր բնական հարստություններով ու հայաշեն դանձերով։ Լինեք, օրինակ, Արարատյան երկրի սիրահար Ղազար Փարպեցուն, որն իր հայրենի նահանգն իրավամբ համարում է «ամեն ինչ բուսցնող, ամեն ինչ տվող, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու հրջանկությանը անհրաժեշտ օգտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող՝ դաշտեր լայնատարած ու որսալից, շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ արոտներով ծածկված, կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրանց հետ էլի՛ ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն։ Լերանց բարձր կատարներից ջրեր են հոսում՝ լիուլի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած ոստանն են մատակարարում առատ հացով ու գինիով, անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու զանազան սերմերով»։

Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից յուրաքանչյուրը հարևաններից բաժանված էր բնական պատվարներով և ըստ էության կազմում էր ոչ միայն վարչական առանձին միավոր, այլև բնակլիմայական ինքնուրույն ու ինքնատիպ մի ամբողջություն։ Այսպես, օրինակ, եթե Այրարատն իր շոգ ամռան ու ցրտաշունչ ձմռան պայմաններով մի հետաքրքիր երևույթ էր ողջ բարձրավանդակի տարածքի համար, ապա Ուտիքը՝ նույն բարձրավանդակի հյուսիս-արևելյան եզրը, տափարակային իր գավառներում ամռան տապերից հետո ուներ այնքան մեղմ ու բարեբեր կլիմա, որ դարձել էր արևադարձային գյուղատնտեսական մթերքների շտեմարան։ Սակայն Այրարատ նահանգն էր, որ, շնորհիվ իր կենտրոնական դիրքի, ինչպես նաև Այրարատյան ընդարձակ ու արգավանդ դաշտի, միշտ էլ բախտորոշ դեր է ունեցել հայ ժողովրդի պատմության բոլոր վայրիվերումների ժամանակ։ Եվ պատահական չէ, որ հենց այս նահանգում են գտնվել մեր ժողովրդի պետական կազմավորումների՝ ռազմաքաղաքական

ու մշակութային կենտրոններից շատերը՝ Էրեբունի-Երևանը, Արմավիր-Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը, Երևանը։

Ասացինք, որ Հայկական լեռնաշխարհն անհամեմատ բարձր է հարևան բարձրավանդակներից։ Եվ լեռնաշխարհի տարբեր շրջաններում էլ վեր են խոյանում ուրիշ լեռնաշղթաներ, բարձրավանդակներ ու լեռնագագաթներ։ Այրարատյան նահանգի, ինչպես նաև ամբողջ Հայկական բարձրավանդակի կենտրոնում է գտնվում աշխարհի ամենափառահեղ լեռներից մեկը՝ Արարատն իր զույգ գագաթներով, որոնցից մեկը՝ հավերժաձյուն Մեծ Մասիսը, ունի 5156 մետր բարձրություն։ Արարատից դեպի արևմուտք ձգվում է լեռնային մի զանգված, որի մի ծայրը հասնում է Եփրատի ակունքներին և կոչվում է Հայկական Պար։ Արարատի արևելյան փեղերից սկիզբ առնելով՝ դեպի արևելք ձգվում է մի այլ լեռնային երկար զանգված, որն սպառվում է Արցախ-Ուտիքյան աշխարհում, Մուխանքի դաշտաբերանում և կոչվում է Փոքր Կովկաս։ Բարձրավանդակի հարավից ու հարավ-արևմուտքից բարձրանում է Հայկական Տավրոսը, որը ջրաբաշխի դեր է կատարում Տիգրիսի ու Եփրատի համար։ Արարատի դեմ-դիմաց, Երասխի ձախ ափին կանգնած է բազմագագաթ Արագածը, որի լանջերը հարուստ են ալպյան բուսականությամբ ու անուշահամ ջրերով։

Հայաստանի հարավում նշանավոր էին Բյուրակնը, Սիփանը և Մաղկանց լեռները։

Հայկական լեռնաշխարհը հողագնդի ամենաջրառատ երկրներից մեկն է և ջրաբաշխի դեր է կատարում Առաջավոր Ասիայի համարյա բոլոր մեծ գետերի համար։ Երկու խոշոր գետեր՝ Երասխ-Արաքսն ու Կուրը, իրենց ամբողջ ընթացքով չեն բաժանվում Հայաստանից. Կուրը միշտ էլ մեր երկրի հյուսիսային սահմանագիծն էր հանդիսանում, իսկ Արաքսը ջուր էր տալիս Այրարատի, Սյունիքի, Արցախի և Ուտիքի մի մասի դաշտերին, որի համար էլ կոչվում էր Մայր Արաքս։

Հարավային Հայաստանից է սկիզբ առնում Եփրատն իր զույգ վտակներով. Արևմտյան Եփրատը, որի ակունքները Կարնո գավառում են, Մաղկավետ լեռներում, և Արևելյան Եփրատը կամ Հայոց մեծ սրբազան համարված Արածանին,

որն սկիզբ է առնում Մաղկանց լեռներից, իսկ որա Մեղրագետ կոչված բազուկը հոսում է Տարոնի կամ Մշո դաշտի միջով։ Հայկական Տավրոսից սկիզբ առնելով՝ շուրջ 400 կիլոմետր մեր լեռնաշխարհով է հոսում նաև Տիգրիսը։ Կան նաև մանր գետեր, որոնք թեպետ այնքան ջրառատ չեն, որպեսզի օգտագործվեին նավագնացության համար, սակայն առնված էին ոռոգումների հաստատուն ցանցի մեջ և ապահովում էին գյուղատնտեսության բարձր բերքատվությունը։ Այդպիսիներից էին, օրինակ, Տրտու-Թարթառը՝ Արցախի և Ուտիքի համար, Զանգուն՝ Այրարատի համար, Աղստևը՝ Ուտիքի, Զորագետը՝ Գուգարքի, Որոտանը՝ Սյունիքի համար։

Հայկական լեռնաշխարհը ծով չունի և չի ելնում օվկիանոսների վրա, բայց հարուստ է խոշոր լճերով, որոնք ունեին բազմատեսակ ձկների հարուստ պաշարներ։ Դրանցից է Գեղարքունի, Գեղամա կամ Սևանա լիճը, աշխարհի բարձրադիր լճերի մեջ ամենամեծերից մեկը, որը ծովի մակարդակից բարձր է 1900 մետր։ Այստեղ են աճում իշխան, կարմրախայտ և գեղարքունի կոչվող ձկները։

Բարձրադիր բնական ջրամբարներից է նաև Վանա կամ Բզնունյաց լիճը, որը ծովի մակերևույթից բարձր է 1720 մետր, ունի 3733 քառակուսի կիլոմետր մակերես, սակայն ձկներից այստեղ միայն տառեխն է բազմանում, որովհետև լճի ջուրն աղի է։

Ուրմիա կամ Կապուտան լիճը Հայկական բարձրավանդակի արևելյան եզրն է կազմում՝ ընկած լինելով Հայաստանի և Իրանական սարահարթի միջև գտնվող մի գոգավորության մեջ։

Հայկական լեռնաշխարհն ունի նաև անուշահամ ջուր ունեցող բազմաթիվ բարձրադիր մանր լճեր, որոնցից են Արփին ու Այղրը Այրարատում, Արճակը՝ Վասպուրականում, Գայլատուն՝ Կոգովիտում։

Հայկական բարձրավանդակի կլիմայի և երկրաբանական կառուցվածքի բազմազանությամբ էին պայմանավորված տարբեր մարդերի հայ բնակիչների զբաղմունքների և կենցաղի շեշտված տարբերությունները։ Դաշտավայրերում մարդիկ զբաղվում էին երկրագործությամբ, նախալեռնային շրջաններում տնտեսության մեջ գերակշիռ դեր ուներ այգեգոր-

ծությունը։ Բարձր լեռնային գոտին՝ իր ալպյան արոտավայրերով, հրաշալի հիմք էր անասնապահության համար։ Մի շարք նահանգներ հարուստ էին հանքային բազմատեսակ հանածոներով։ Իսկ բարձրավանդակի ընդերքն իր ներսում պահում էր համարյա ամեն տեսակ մետաղներից մինչև ազերը, հանքային ջրերը, քարի բոլոր տեսակները։

Հայկական բարձրավանդակն աշխարհի այն բացառիկ երկրամասերից է, որոնցում քարն ու բրոնզը, երկաթն ու մյուս մետաղները գործածվել են՝ սկսած մարդկային ցեղի գոյացման վաղնջական ժամանակներից։ Հին Արցախի Ազոխ գյուղի մոտ գտնվող հնավայրում հայտնաբերվել են նեանդերթալյան մարդու կմախքի մասեր և գործածության նախնական առարկաներ։

Գիտնականները համոզված են, որ Ազոխի հնադիտական նյութերը, անտարակույս, վերաբերում են քարե դարի աշելյան փուլին։ Հետագա Ազոխը կանգնում է աշխարհում մինչև այժմ հայտնի չորս հոչակավոր հնավայրերի կողքին (Սիդի-Աբդեռահմանը՝ Մարոկկոյում, Շտայնհայմը՝ ԳՖՀ-ում, Սվանսկոմբը՝ Անգլիայում և Սեգիագել-Դիաբոլոնն՝ Իտալիայում)։

Սյունիքի ու Արցախի, Գուգարքի ու Տայքի, Այրարատի ու Վասպուրականի բազմամեծաղ հանքավայրերի զանազան հատվածներում հայտնի են երկաթի, պղնձի, կապարի, արծաթի ու ոսկու բուվեր, հորատանցքեր, որոնք վկայում են, թե այս նահանգներում վաղնջադույն ժամանակներից ի վեր զբաղվել են հիշյալ մետաղների մշակությամբ։

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասում՝ Նախիջևանում, Կողբում ու Կաղզվանում էին գտնվում արևելքի երկրներին հայտնի աղահանքերը, որոնց հանույթով Հայաստանն ապահովում էր ինչպես իրեն, այնպես էլ հեռու-մոտիկ բազմաթիվ երկրներին։ Իսկ անուշահամ ջրերի, ինչպես նաև բուժիչ «ջերմուկների» և «թթու ջրերի» աղբյուրներով մեր պատմական հայրենիքը գրավում է ամենաառաջնակարգ տեղերից մեկն ամբողջ աշխարհում։

Հայոց երկրի հին ու նոր մեծագույն հարստություններից մեկն է քարն իր բազմաթիվ տեսակներով և անհուն-անսպառ պաշարներով։

Լեռնոտ երկրներից մեկի զավակը, Իրանավոր գրող ու կատակագրաբան, իր հայրենիքի մասին խոսելիս ասել է՝ եթե հնարավոր լիներ քարը ծախել, ապա իրենք պիտի լինեին աշխարհի ամենահարուստ ժողովուրդներից մեկը։ Հայը չծախեց իր քարը։ Աշխարհի վրա աչք բացելով՝ նա սովորեց քարը կենդանացնել, խոսեցնել ու ծաղկեցնել։ Եվ քարը դարձավ շատ ավելի թանկարժեք մի բան, քան թե նա կա բնական վիճակում։ Դարձավ շենք ու դղյակ, բերդ ու հուշակոթող, դարձավ տաճար ու խաչքար... Եվ զուր չէ, որ Հայաստան աշխարհն այսօր ճանաչում են որպես թանգարան բաց երկնքի ներքո...

Եթե ընդհանրացնելու լինենք այս թռուցիկ խոսքը մեր պատմական հայրենիքի հանքային ու բնական հարստությունների մասին, պիտի ասենք. Հայկական լեռնաշխարհը, որ հայ ազգի օրրանն էր, բնակավայրն ու տունը, ուներ բոլոր պայմանները մարդու բարեկեցիկ ու հարուստ կյանքի համար։ Սակայն ճակատագիրը հային պահել էր ուրիշ մի կյանք, հազարամյակներ տևած, ողբերգական ու դրամատիկ դրվագներով հարուստ մի պատմություն, որը եթե շատ էր նման դրամայի ու ողբերգության, ապա խաղացվում էր հսկայական մի բեմահարթակի վրա, որի անունն է Հայկական բարձրավանդակ, իսկ դիտող-ականատեսները, որ հաճախ գործողության մասնակիցներն էին նաև, հարևան ու ոչ հարևան մեծ ու փոքր տերություններն էին։ Նրանցից շատերն արդեն հեռացել են թատերաբեմից և հիշվում են միայն գրավոր պատմության մեջ։ Իսկ հայ ազգը, անցած իր դժվար կենսագրության մղձավանջներից, ստեղծած իր նոր պետականությունը, նորոգված ու առավել զորացած, գնում է դեպի իր փառավոր պատմության գալիք հազարամյակները։

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ Է

«Մեր լեզուն մեր պատմությունն է»,— գերմանացի աշխարհահռչակ գրող ու լեզվաբան Յակոբ Գրիմմին է պատկանում այս թևավոր խոսքը։

Տասնամյակներ շարունակ երկու անխոնջ ու հարազատ գործակիցներ՝ Յակոբ ու Վիլհելմ Գրիմմ եղբայրները, գերմաներեն լեզուն ու այդ լեզվով ստեղծված ժողովրդական բանահյուսությունն էին պեղում՝ նրանց խորքերից հանելով իրենց ազգի պատմության գանձերը։ Եվ աշխարհին է հայտնի, որ նրանք հասել են իրենց նպատակին. պատմական ուսումնասիրությունները քայլ առ քայլ հաստատել են այն ամենը, որ վեր էր հանվել լեզվական պրպտումներով։

Կան ինչ-որ առումով բախտավոր ժողովուրդներ, որոնք կամ պատմության թատերաբեմ ոտք դնելուն պես ստեղծել են սեփական գիր, նրանով արձանագրել իրենց կենսագրությունը՝ սկսած առաջին իսկ քայլերից, կամ էլ հարևան են եղել գիր ունեցողներին ու հենց հարևանի իրավունքով էլ ընկել նրանց տարեգրությունների մեջ, և այսպես անմահացել է նրանց մանկությունը։

Հայ ժողովրդի բախտը երկու տեսակետից էլ լի բերել. սեփական գիր է ձեռք բերել օտար աղբյուրներում իր մասին եղած հիշատակություններից ավելի քան երեք հազար տարի հետո, և այդ հիշատակությունները պահպանած լեզուներն էլ շատ հեռու են եղել, նրա մասին խոսել են այնպես կցկտուր ու առիթից առիթ, ոնց որ իսկի խոսած չլինեն։

Բայց կա փրկարար մի հանգամանք՝ հայերեն լեզուն իր հին ու նոր վիճակներով, իր քերականությամբ ու բառապաշարով, իր սեփական ու փոխառյալ գանձերով։ Եվ ամենակարևորը. վաղագույն մեր մատենագրական երկերում գրի են առնվել ոչ միայն ժամանակի գրական հայերենն ու ժողովրդական խոսվածքի արժանահիշատակ նմուշներ, այլև բանավոր գրականության այնպիսի պատառիկներ, որոնցում մասնագետները տեսնում են հայոց լեզվի շատ ավելի վաղ շրջանի թանկագին մասունքներ։ Ինչպե՞ս չուրախանալ, երբ հենց վերջերս լեզվաբան արևելագետ Վ. Վ. Իվանովը «Վահագնի ծնունդը» բանաստեղծական պատառիկի մեջ հայտնաբերեց նախագրային հայերենի հետաքրքիր իրողություններ, հայերենի զարգացման, հարևան ու ցեղակից լեզուների հետ նրա ունեցած շփումների պերճախոս ապացույցներ։

Դե՛, արի և աշխարհահռչակ գերմանացու հետ միասին մի բացականչիր, թե մեր լեզուն մեր պատմությունն է։

Վաղուց է, ինչ հայոց լեզուն իր հին ու նոր վիճակներով գտնվում է լեզվաբանների ուշադրության կենտրոնում։ Հանգամանալից քննության են ենթարկվել նրա նախագրաբարյան ու գրաբարյան շրջանները, միջին հայերենը, նոր կամ աշխարհաբար հայերենն իր երկու գրական ճյուղերով՝ արևմտահայերեն և արևելահայերեն։ Հսկայական աշխատանք է կատարվել նաև հայոց լեզվի բարբառների ուսումնասիրության բնագավառում։ Մի քանի տասնյակ բարբառների քերականական կառուցվածքների ու բառապաշարի վերլուծությունը ցույց է տվել, որ միայն մեր բարբառների մեջ են պահպանվել մեծաքանակ տվյալներ հայոց լեզվի նախնական վիճակի, ցեղակից հնագույն լեզուների հետ ունեցած առնչությունների և ուրիշ կարևոր հանգամանքների վերաբերյալ։

Դեռևս 19-րդ դարում պատմահամեմատական լեզվաբանության կողմից ընդունված էր, թե հայոց լեզուն մտնում է հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ՝ իբրև իրանական խմբի անդամ։ Սակայն 1875 թ. գերմանացի խոշոր լեզվաբան-հայագետ Հայնրիխ Հյուբշմանը «Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների մեջ» հոդվածով հիմք դրեց մի նոր տեսության, որի համաձայն՝ հայոց լեզուն [illegible] մայր լեզվից առաջացած ինքնուրույն [illegible] խոշոր հայագետը համոզիչ փաստարկներով [illegible]

իրանյան լեզվախմբի հետ հայերենի ունեցած ընդհանրություններն ուշ շրջանի սերտ կապերի արդյունք են, իսկ տարբերությունները բնիկ հայկական են և գալիս են մայր հնդեվրոպական լեզվից։ Հյուբշմանն իր այս տեսությունը հետագա տասնամյակներում զարգացրեց նոր տվյալներով, բառաքննական հարուստ նյութերի և քերականական հետազոտությունների միջոցով։ Եվ դրանից հետո արդեն շուրջ մեկ դար հայերենը հետազոտության էր ենթարկվում որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ու ինքնատիպ մի ճյուղ, որը հազարամյա իր պատմությամբ, բառապաշարի ու քերականական հյուսվածքի առանձնահատկություններով վիթխարի նշանակություն ունի ինչպես մայր հնդեվրոպական լեզվին, այնպես էլ նրանից հատվածված լեզուներին վերաբերող բազմաթիվ հարցեր պարզելու համար։

Հնդեվրոպական մայր լեզվի օրրանի տեղը մինչև վերջին ժամանակները պարզված չի եղել։ Այն տեղադրում էին Եվրոպայի տարբեր մասերում, Բալկաններում, նույնիսկ Միջին Ասիայում։ Բալկանյան վարկածն առավել հավանական էր համարվում, և նրանով առաջնորդվող հայագետներից ոմանք պնդում էին, թե հենց այստեղ անջատվելով մայր լեզվից՝ հայկական ցեղը թրակափոյուգիական տարրերի հետ երկարատև շփումներ է ունեցել, «ծովի ժողովուրդների» մեծ գաղթի ժամանակ, մ. թ. ա. 13—12-րդ դարերում, անցել է Փոքր Ասիա ու Միջագետք, ապա այնտեղից շարժվել դեպի հյուսիս, տարածվել Հայկական բարձրավանդակում, այստեղ էլ իր հայերենը պարտադրել տեղաբնիկներին, և իր ու նրանց լեզուների խառնուրդից կազմավորվել է հայոց լեզուն։

Այս տեսության շենքը կառուցված էր աղբյուրագիտական լուրջ հիմքերից պարապ գետնի վրա, և հիմնական շարժիչը գուշակությունների եղանակն էր հանդիսանում։ Այդ պատճառով էլ վարկածի կողմնակիցների աշխատություններում հայերը մեկ Հայկական բարձրավանդակ էին թափանցում հենց անմիջապես Բալկաններից՝ փոքրասիական կարճ ճանապարհով, մե՛կ Միջագետքում երկար ժամանակ թափառելուց հետո, մե՛կ էլ տարբեր երկրամասերում, տարբեր ցեղակուններով կայաններ էին տալիս այնքան ժամանակ, մինչև որ Հայկական բարձրավանդակում Ուրարտու անվամբ

հայտնի պետությունը կործանվի, որպեսզի հայկական ցեղը գա, տիրանա նրա փլատակներին և, դաղթական ու փոքրաքանակ տեղով, ուրարտական պետակից փրկված ցեղախմբերի անհուն ու անեզերք տարածություններն առնի իր թևերի տակ, բազմաքանակ այդ ցեղերը հայացնի, երկիրն էլ դարձնի Հայաստան։

Այս տեսակետի մի տարբերակը՝ «մուշկերի տեսությունն» պետակով, վերջերս բավական համառորեն տարածված էր, չնայած չէր կարող առաջարկել աղբյուրագիտական որևէ լուրջ կռվան և իր իսկ հիմքում հակապատմական էր ու հակատրամաբանական։

«Տեսության» հեղինակ Ի. Մ. Դյակոնովը սկզբնապես գտնում էր, որ հայ ժողովրդի լեզվական նախնիները կամ «նախահայերենի կրողները» «եղել են մուշկերը կամ ուրումեացիները», որոնք, իբր Վերին Եփրատի ու Արածանիի հովիտներն են թափանցել մ. թ. ա. 1165 թ.[1], այնտեղից էլ դարեր հետո շարժվել դեպի Հայկական բարձրավանդակի խորքերը, հայացրել տեղաբնիկներին և կազմավորել հայ ժողովուրդը։ Հետագայում Դյակոնովն ստիպված եղավ իր «տեսությունն» ազատել վտանգավոր «ուրում-ուրումեացիներից», անկասկած, նկատի առնելով նրանց (ուրում-ուրմարմ-արմի են) հնավանդ տեղաբնիկությունը, որից անպայման խարխլվում էր առանց այն էլ հեղհեղուկ «տեսությունը»։

Ինչ մնում է «մուշկ» ցեղին, ապա նրա մասին եղած առաջին գրավոր հիշատակությունը 1115 թվականից մնացած Սալմանասար Ա-ի արձանագրության տեղեկությունն է այն առթիվ, որ Ասորեստանի թագավորը Եփրատի վերին ավազանում շարունակել է մուշկերին՝ իրենց 5 թագավորների (ցեղապետների՞, թե՞ տոհմապետների) հետ միասին և միաժամանակ հետին թվով հիշում է նույն մուշկերի մի արշավանքի մասին, որը տեղի է ունեցել այս դեպքից 50 տարի առաջ՝ մ. թ. ա. 1165 թվականին։

Մուշկերը հիշվում են նաև հետագա ժամանակներում՝ ընդհուպ մինչև մեր թվականության առաջին դարերը։ Հիշում են սեպագրերը, հունա-հռոմեական աղբյուրները, ինչ-

[1] **И. М. Дьяконов**, Предыстория армянского народа, 1969, էջ 103։

պես նաև Աստվածաշունչը։ Այդ հիշատակություններին հետևելով՝ առավել զգաստ ուսումնասիրողները, առանց երկմտության, գտնում են, որ մուշկերը հետագայում ցրվել են տարբեր ուղղություններով, հատկապես դեպի Սև ծովի հարավ-արևելյան ափերը, ուր և ձուլվել են վրացական ցեղերի հետ։

Ենթադրվում է, որ մուշկերի մի հատվածը մնացել է Հայկական Տարոն գավառում, այնտեղ ձուլվել հայ ժողովրդի հետ՝ իր անունը տալով Մոկք-Մուշ շրջանին։ Ի. Մ. Դյակոնովն ինքն էլ մի ժամանակ այս կարծիքին է եղել[1]։ Սակայն հետո մուշկերին դարձել է նախահայերենի կրողներ, Ուրարտու պետության կործանումից հետո նրանց բերում, խառնում է Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներին՝ խեթերին, լուվիացիներին, այսպես կոչված, ուրարտներին և կազմավորում հայ ժողովուրդը։

Ի. Մ. Դյակոնովի սեփական գաղտնիքն էր և նրա տեսակետն ընդունողներից ոչ ոք իրեն նեղություն չէր տալիս, որպեսզի իմանա, թե այն ո՞վ է ասել՝ մուշկերը խոսում էին հայերեն կամ թեկուզ նախահայերեն, մուշկերի լեզվից մնացե՞լ է մի պատառիկ, որը հիշեցնի հին կամ նոր հայերենը, և մանավանդ, ինչպե՞ս է պատահել, որ «մուշկ» ցեղանունը դարձել է «հայ»։

Ճշմարիտ հայագիտությունը չի կարող ընդունել այսօրինակ տեսակետներ, և բնական ու տրամաբանական է, որ այսօր վերստին արծարծվում է հայ ազգի ծննդի ավանդական տեսակետը, առավել հիմնավոր ու համոզիչ քննություններ են կատարվում հայ ժողովրդի ու հայերենի ծագման վերաբերյալ։ Ասպարեզ են եկել լրջախոհ մարդիկ, որոնք խոսեցնում են պատմական աղբյուրներում պահպանված անառարկելի փաստերը, վկայակոչում են ավանդական, 1500 տարի ստուգված ու հաստատված այն տեսակետը, որ հայ ժողովուրդը և նրա լեզուն իրենց կենսագրությունն սկսել են քնաշխարհում, որ հայ ժողովուրդը հնդեվրոպական նախամայր ընտանիքից հատվածված մի ճյուղ է, ինքնուրույն

1 Տե՛ս АВИИУ — И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту. «ВДИ», 1951, № 2—3—4, սեղագիր № 10, էջ. 1։

զարգացման արդյունք և ոչ թե իրար հետ ազգակցություն չունեցող տարբեր ցեղախմբերի ու խմբակցությունների բռնի կամ պատահական խաչաձևումներից գոյացած մի խառնածին։

Այս տեսակետը, ինչպես հայտնի է, առաջին անգամ շարադրվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ և անառարկելի ճշմարտություն է ընդունվել մինչև 19-րդ դարը, լեզվաբանական խոշոր հայտնագործությունների, սեպագրերի վերծանության հեղափոխիչ շրջանը, որը եկավ ավանդական տեսակետը ոչ թե մերժելու, այլ վերստին հաստատելու հայտնաբերված վիթխարի նյութերով և նրանց հիմքի վրա բարձրացած համեմատական քերականության հզոր տրամաբանությամբ հավաստելու, որ նախնական է հայ ազգը՝ իր հայերեն լեզվով, և նրա օրրանն է Հայկական բարձրավանդակը։

Իհարկե, անհնար էր, որ հայագիտության վերջին շուրջ երկուհարյուրամյա հետազոտական կուտակումները ևս երևան չհանեին ճշմարտությունը։ Մխիթարյան միաբանության եռանդաշատ հայրերի լեզվաքննական ջանքերը, նրանց կազմած կոթողային բառարանները, Հ. Հյուբշմանի, Հր. Աճառյանի պրպտումները, Գր. Ղափանցյանի մտքի խիզախ շողարձակումները, հայագիտության ձեռքբերումները հիմք դարձրած՝ հայագիտության նոր ներկայացուցիչները ցույց են տալիս հայ ժողովրդի անդրենածին լինելը, նրա լեզվի իսկական ակունքն ու բնական զարգացման ճանապարհները։ Եվ բարեբախտություն է, որ վերջին տասնամյակներում հրապարակվեցին հնդեվրոպական մայր ցեղախմբի նախահայրենիքը վերստին Փոքր Ասիայից արևելք՝ Միջագետքում ու Հայկական բարձրավանդակում տեղադրող ուսումնասիրություններ, որոնց հեղինակները (Գ. Բ. Ջահուկյան, Վ. Մ. Իլլիչ-Սվիտիչ, Գեորգ Թոմսոն, Թ. Վ. Գամկրելիձե, Վ. Վ. Իվանով, Լ. Ա. Գինդին, Օ. Ս. Շիրոկով, Գ. Կլըչկով ևլք) լեզվաբանական, հնագիտական և այլազան հարուստ նյութերի հիման վրա ապացուցում են, որ այստեղ է բնակվել հնդեվրոպական մայր ցեղը, սեմական լեզվախմբի հետ սերտ հարևանության և փոխառնչությունների միջավայրում, և այստեղից են դեպի իրենց բնակության վայրերը շարժվել

հնդեվրոպական նախալեզվի ճեղքումից առաջացած կամ ծնված լեզուները։

Տասնամյակներ առաջ, ըստ երևույթին, ո՛չ այնքան վստահելով հնդեվրոպական նախահայրենիքը Եվրոպայում տեղադրող կարծիքին, Գ. Բ. Ջահուկյանը համոզված էր, թե «հնդեվրոպացիները մի ժամանակ բնակվել են այն տարածքում, որ սահմանակից է եղել սեմական ցեղերի կողմից բնակեցված տարածությանը»[1]։

Այս տեսակետի համար, անկասկած, հիմք են հանդիսացել հնդեվրոպական լեզվի ու սեմական լեզվաբնտանիքի փոխազդեցությունների ակնհայտ փաստերը և մշակութային զանազան առնչությունները։

Եվ ահա, հաջորդ տասնամյակում աստիճանաբար իր համար տեղ նվաճելով արևի տակ՝ լեզվագիտական անդաստանի տերն է դառնում Թ. Վ. Գամկրելիձեի ու Վյաչ. Վս. Իվանովի հիմնավոր տեսությունը հնդեվրոպացիների նախահայրենիքն Առաջավոր Ասիայում ու Հայկական բարձրավանդակում տեղադրելու վերաբերյալ[2]։ Այստեղ արդեն ասպարեզ են քաշվում վիթխարաքանակ լեզվական նյութեր (բույսերի ու կենդանիների անուններ, ջրանուններ [հիդրոնիմիկա], տեղանվանական նշանակության բառեր են), ինչպես նաև հինարևելյան մշակույթի հետ ունեցած մերձավոր կապերի ապացույցներ... Հետաքրքիր է, որ, օրինակ, հնդեվրոպացիներն ունեցել են անվավոր կառք, որի ստեղծումն անպայման կապված է եղել մետաղի մշակման հետ։ Իսկ հայտնի է, որ Եվրոպան մետաղամշակման ձեռնարկել է համեմատաբար «ուշ» ժամանակներում։ Անվավոր կառքը՝ որպես տեսության հիմքերից մեկը, և այդ շարքում էլ՝ մեր Լճաշենից (Սևան) հայտնաբերված չորսհազարամյա ռազմակառքը։ Երկու գիտնականների հրապարակած կոթողային աշխատությամբ մեկընդմիշտ ապացուցվում է, որ հիշյալ տարածքն է եղել հնդեվրոպական մայր ցեղի նախահայրենիքը։ Այն-

[1] Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967. էջ 39։

[2] Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, тт. I—II, Тбилиси, 1984.

տեղ է մայր լեզուն ապրել իր զարգացումն ու տրոհումը։

Մեր հարցի համար կարևորն այն է, որ հնդեվրոպական ցեղերի նախահայրենիք ճանաչված ընդարձակ տարածքն ընդգրկում է նաև Հայկական բարձրավանդակը, և, բնականաբար, այս տարածքն է հանդիսացել հայ ցեղի ու նրա լեզվի օրրանը։

Ե՞րբ է առաջացել հայ ժողովրդի բուն կորիզը կազմող հայ ցեղը։ Այս հարցն ուրիշ պատասխան չունի, քան հնդեվրոպական ցեղերի տրոհման շրջանը, այսինքն՝ այն ժամանակը, երբ մայր նախալեզվով խոսող ցեղային մեծ միությունը բաժանվեց առանձին մասերի, և մասերից յուրաքանչյուրը մյուսներից կտրվելով վարեց ինքնուրույն կյանք, իր լեզվական առանձնահատկություններով այնքան հեռացավ մայր խոսվածքից, որ կարող էր համարվել բարբառախոս։ Ուրիշ խոսքով՝ նրա խոսվածքն ըստ էության մի ինքնուրույն բարբառ էր արդեն՝ գոյացած նախամայր լեզվի հիմքի վրա։ Հնդեվրոպական մայր ցեղախմբի տրոհման շրջան է ընդունվում նոր քարի դարը (նեոլիթ)։ Գեորգ Ջահուկյանը, ի մի բերելով հնդեվրոպաբանության ու հայագիտության հետազոտությունները և ընդհանրացնելով մինչև այժմ արված կարևորագույն եզրահանգումները, գտնում է, որ 5—4-րդ հազարամյակներն այն շրջանն են, երբ «հայկական ցեղերն աստիճանաբար ընդգծվում են հնդեվրոպական ընդհանրության կազմում։ Առաջ են գալիս հնդեվրոպական բարբառային մի շարք գծերի հետագա զարգացման ընթացքը, բարբառային գծերի աստիճանական անցումը լեզվականի»։ Սրան էլ հաջորդում է հայոց լեզվի զարգացման մյուս կարևոր շրջանը, երբ հնդեվրոպական նախամորից բաժանված (ծնված) ժողովուրդն արդեն ունի շատ կողմերով ինքնատիպ, այդ պատճառով էլ միանգամայն ինքնուրույն լեզու՝ հայերենը։ Գ. Բ. Ջահուկյանն այս շրջանի ժամանակ է համարում մ. թ. ա. 3-րդ հազարամյակը. «Այս շրջանում,— գրել է նա,— հայոց լեզուն արդեն գոյություն ունի որպես առանձնացած ամբողջություն»[1]։

[1] Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, էջ 330։

Հնդեվրոպական մայր ցեղախմբից անջատված ու իր բարբառն ստեղծած նախահայկական ցեղը մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակներում պիտի որ բնակված լիներ Հայկական բարձրավանդակի հարավային մասերում։ Այստեղ այն սերտ կապերի մեջ է եղել հարևան միջագետքյան և փոքրասիական տարածքների բնակիչների հետ։ Գիտնականներն այդ կապերն արտածում են լեզվաքննական ուսումնասիրություններով, որոնք բավարար տվյալներ են ընձեռում հիմնավոր եզրակացությունների համար։

Նշված ժամանակաշրջանում ու հետագա դարերում Միջագետքի համարյա ամբողջ տարածքն զբաղեցնում էին այն ժողովուրդները, որոնց ընդունված է կոչել ասուրաբաբելական։ Սրանց պետական կազմավորումներն էին, որ այն հեռավոր դարերում Առաջավոր Ասիայի քաղաքակրթության հիմքն էին դնում և վիթխարի ազդեցություն ունեին մոտ ու հեռու հարևանների վրա ինչպես քաղաքական կյանքում, այնպես էլ էթնիկամշակութային։ Այս տեսակետից մի առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 3-րդ հազարամյակը, երբ ձևավորվել էր և ռազմաքաղաքական հռանդուն գործունեություն ուներ Աքքադյան հզոր պետությունը (Աքքադ մայրաքաղաքի անունից)։ Աքքադի տերերը թողել են սեպագիր մեծաքանակ վավերագրեր, որոնցով վերականգնվում է նրանց երկրի ու հարևանների փոխհարաբերությունների պատմությունը։ Եվ որովհետև լեզուն, որով շարադրված են այդ վավերագրերը, գործածության մեջ է եղել միայն մինչև 3-րդ հազարամյակի վերջը, իսկ հաջորդ շրջանում արդեն երկրի տերերը խոսում ու գրում էին աքքադերենի երկու բարբառներով (ասուրերեն ու բաբելերեն), որոնք զգալապես տարբերվում են բուն աքքադերենից, ապա «մեռած» աքքադերենով գոյություն ունեցող գրականությունն անգնահատելի ծառայություն է մատուցում հետազոտողներին՝ առանձնապես հին օրերի պատմության ու լեզվական մթնոլորտի բազմաթիվ հարցեր պարզելու համար։ Իսկ ինչպես վերը տեսանք, գերմանացի լեզվաբանը գտնում էր, որ լեզուն ազգի պատմությունն է։ Եվ հասկանալի է, թե ինչո՞ւ լեզուների առնչությունների, ասենք՝ փոխառությունների հիման վրա գիտնականներն ստուգորեն վերականգնում են այդ լեզուներով խոսող ժողովուրդների ամենն տեսակ առնչությունների ոլորտները։

Եվ այսպես. աքքադերենը «մեռած» լեզու է։ Նրանից պահպանված գրական հուշարձանները վերաբերում են մինչև 3-րդ հազարամյակի վերջերը, մինչև մ. թ. ա. 21-րդ դարն ընկած ժամանակներին։ Ուստի հասկանալի է, որ, եթե որևէ լեզվի բառապաշարի մեջ նկատվեն անառարկելի ընդհանրություններ մեռած աքքադերենի բառապաշարի հետ, ապա դա պետք է դիտվի ապացույց, որ այդ լեզուն կրող ժողովուրդն իր լեզվով գոյություն է ունեցել այն ժամանակ, երբ աքքադերենը դեռևս կենդանի-խոսակցական լեզու էր, ապա՝ այդ լեզվով խոսող ժողովուրդն ու աքքադացիները մերձավոր կապեր են ունեցել իրար հետ։ Իհարկե հնարավոր է, որ փոխառու լեզուն տվյալ բառն ստացած լինի ոչ թե անմիջապես աքքադերենից, այլ մի երրորդ լեզվից, որը հանդես եկած կլիներ միջնորդի դերում։ Բայց այս դեպքում պետք են փոխառյալ բառի վրա անպայման պիտի լինի միջնորդ լեզվի դրոշմը։

Վերջին հարյուրամյակի ընթացքում, սկսած Հ. Հյուբշմանի հետազոտություններից, բազմաշերտ քննության է ենթարկվել հայոց լեզվի բառապաշարը։ Առանձնակի ուշադրության են արժանացել հայերենի ու հին արևելյան լեզուների աղերսները, և հատկապես Հր. Աճառյանի, Գր. Ղափանցյանի ու նրանց աշակերտների ջանքերով պարզվել են մեր լեզվի բառապաշարի հարյուրավոր փոխառությունների ակունքները։

Գ. Բ. Ջահուկյանը՝ մեր նոր լեզվաբանության նշանավոր դեմքերից մեկը, որն աչքի է ընկնում հին ու նոր լեզուների, հատկապես հնդեվրոպական լեզվաբանության խոր իմացությամբ, տարիներ շարունակ զբաղվել է հայոց լեզվի նախագրային վիճակի ուսումնասիրությամբ, այդ շրջանում մեր լեզվի կատարած փոխառությունների և ուրիշ հարցերով։ Իր վերջին ուսումնասիրություններից մեկում նա քննել է հայ լեզվաբանության նախորդ շրջանի ականավոր ներկայացուցիչների՝ Հր. Աճառյանի, Գր. Ղափանցյանի, Նիկ. Ադոնցի և մեր ժամանակակիցների կատարած ուսումնասիրությունները հայոց լեզվի աքքադական ու սեմական փոխառությունների

վերաբերյալ և եկել այն եզրակացության, որ այդպիսիք իսկապես կազմում են մի պատկառելի շերտ և արդյունք են ինչպես հայ-աքքադական անմիջական փոխհարաբերությունների, այնպես էլ միջնորդված առնչությունների։ Նշվում են նաև հնդեվրոպական աղբյուրից եկած նախնական նստվածքը և հնդեվրոպական ու սեմական ցեղակցության նշանները։

Գ. Բ. Ջահուկյանը հայ-աքքադական բառային ընդհանրությունների շարքն է դասում հետևյալ միավորները. անոթ, ցեյ, ցից, կամն, կաշառ, կիր, կղզի, կմախք, կնիք, կշեռք, խաղաք, խշտել, խուրմ, մաքս, մաղխազ, մաշկ, մզել, ոլոռն, փուկ, փոխ, սանդ, սառար, շար, շոր, տարի, թոնիր, խոփ, խար, խոռ, ագարակ, անագ, բերդ, զազաթն, հալավ, հոր, կուպր, պատառել, սահարակ, մարածել և այլն, ընդամենը 57 բառ[1]։ Նա այս բառերի մի մասը համարում է «աքքադերենից և սեմական համապատասխան այլ աղբյուրներից հայերենի անմիջական և միջնորդված փոխառություններ»[2]։

Ականավոր հայագետ-լեզվաբանի նոր հետազոտության մեջ աքքադական փոխառությունների ցանկը բավական մեծացել է[3], ու եզրակացությունն էլ այն է, որ փոխառյալ բառերը վերաբերում են «գերազանցապես մարդկային քաղաքակրթության և մշակույթի բնագավառներին՝ ուտելիք, հագուստ, բնակարան, արհեստ և առևտուր, ժամանակի ու տարածության հետ կապված գաղափարներ»[4]։ Ուրեմն, այս բնագավառներում են տեսական շփումներ ունեցել փոխառու և փոխառու լեզուների կրողները, հետևաբար այս բնագավառներն արտացոլող բառերի հետևից գնալով է, որ այսօրվա հետազոտողը պետք է երևան հանի վաղնջական ժամանակների իրողությունները։

Այսպիսով, հայերենում կան անմիջապես աքքադերենից կատարված լեզվական փոխառություններ։ Եվ որովհետև հին

1 Տե՛ս Г. В. Джаукян, Об аккадских заимствованиях в армянском языке. «Պատմաբանասիրական հանդես» (ՊԲՀ) , 1960, №4, էջ 104—106։

2 Անդ, էջ 106։

3 Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 468—474։

4 Անդ. էջ 474։

աքքադերենը վաղուց ի վեր մեռած լեզու է, մ. թ. ա. 2-րդ հազարամյակից այլևս կենդանի գործածություն չի ունեցել, հատկապես խոսակցական չի եղել, պարզ է, որ աքքադական փոխառությունները կատարված պիտի լինեին այն ժամանակ, երբ այն գործածական-խոսակցական լեզու էր, այլ խոսքով՝ հայերն աքքադացիների հետ առնչություն պիտի ունեցած լինեին մինչև մ. թ. ա. 3-րդ հազարամյակի վերջը, որպեսզի կարողանային այդ բառերը փոխ առնել։ Ընդ որում՝ այդ առնչությունը պետք է լիներ կենդանի ու անմիջական, որովհետև այն ժամանակ հայերը գիր չունեին, որպեսզի հնարավոր լինի մտածել, թե այդ բառերն ընդունել են գրական ճանապարհով։ Միայն կենդանի երկու լեզուները կրողների անմիջական փոխհարաբերությունները կարող էին միջոց դառնալ նման փոխառությունների համար։

Հայ-աքքադական փոխառությունների մասին գիտեին մեր անվանի հայագետները՝ Նիկ. Ադոնցն ու Հր. Աճառյանը, Հ. Մանանդյանն ու Գր. Ղափանցյանը։ Գիտեին և իրենք էլ միշտ բախվում էին նորանոր փաստերի հետ։ Սակայն գիտության մեջ վատ, եթե ո՛չ ամենավատ, խորհրդատու է նախապաշարմունքը։ Մեր այս մեծերի օրերում մշուշի պես տարածվել էր հնդեվրոպական մայր լեզվի նախահայրենիքը Եվրոպայում տեղադրող տեսությունը։ Դա այն նախապաշարմունքն էր, որ մեր գիտնականներին թույլ չէր տալիս լեզվական որոշակի փաստերին նայել բաց աչքերով։

Ավելի քան մեկ դար առաջ նույն փաստերի առաջնեկներին ծանոթ Ք. Պատկանյանը վճռականորեն հայտարարում էր, թե հայերը տեղաբնիկ են և տերն են այն բոլոր պատմական, քաղաքական ու մշակութային տեղաշարժերի, որ կատարվել են Հայկական լեռնաշխարհում։ Նրա ժամանակ է՛լ գոյություն ունեին հին հույն ու լատին հեղինակների ավանդական տեղեկությունները «Արմենն» անվան և սրանով կազմված բալկանյան ճիշտ ու սխալ տեղանունների շուրջ։ Նրա ժամանակ է՛լ այս անունների հիմքի վրա հայ-արմենների ծագման բալկանյան վարկածը համառ պաշտպաններ ուներ։ Սակայն բազմահմուտ գիտնականը, այսօր արդեն հնդեվրոպական մայր լեզվի բնօրրանը Փոքր Ասիայում ու Հայկական բարձրավանդակում տեղադրողներից 100 տարի առաջ,

պնդում էր, որ այստեղ են ապրել հնդեվրոպական մայր լեզվի կրողները, և երբ այդ լեզուն ճյուղավորվել է,— հայերը, իրանցիներն ու հույները միասին բաժանվելով մայր լեզվից, տարածվել են տարբեր ուղղություններով, զբաղեցրել իրենց երկրները[1]։ Իսկ Թեսալիայում, Թրակիայում ու Հունաստանում հանդիպող այն անուններն էլ, որոնց հիմք է ընդունվում «Արմենը», անշուշտ, նշան են, թե այդ երկրների բնակիչները երբևէ ապրել են Արմենիա-Հայաստանում կամ ուղղակի անցել են այնտեղով։ Հետագայի նույն հեղինակներն սխալվում էին՝ հակառակը պնդելով[2]։

Նախապաշարման դեմ յուրովի ընդվզելով՝ Գր. Ղափանցյանն ստիպված էր հայտարարել, թե հայերենը զտարյուն հնդեվրոպական լեզու չէ, որովհետև այն ծնվել է բնօրրանում, իսկ հնդեվրոպական նախամայր լեզուն Եվրոպայում էր բնավորված, և այնտեղից են ելել նրա «զավակները»։ Իսկ հայ-աքքադական լեզվական փոխառություններն անվանի գիտնականի կողմից լուրջ բանի տեղ չէին դրվում, որովհետև նա տեղյակ էր «Հայասա» և «հայ» անունների մասին խոսող խեթական աղբյուրներին, որոնց վաղագույն հիշատակությունները պարփակված էին մ. թ. ա. երկրորդ հազարամյակի սահմաններում, և այդ հիմքի վրա էլ նա համոզված էր, թե «Հայասան հայերի օրրանն է»։ Օրրանը օրորոցն է, իսկ օրորոցից այն կողմ ժողովուրդն ինքնուրույն գոյություն չէր կարող ունեցած լինել։

Նախապաշարման մշուշների միջից հեռավոր մի լույս նշմարելու պատիվը պատկանում է մեր մյուս խոշոր հայագետին՝ Նիկողայոս Ադոնցին։ Այդ նա էր, որ, թեկուզև ազոտ, երազի պես տեսնում էր այն օրը, երբ այդ փոխառությունների և համանման նյութերի օգնությամբ կատարվելու է գիտական մի մեծ հեղաշրջում։ Նա գիտեր, որ Սարգոն Աքքադացու և Նարամսինի սեպագիր արձանագրություններում (III հազարամյակ մ. թ. ա.) հիշատակվում է մի «Արմանի երկիր», բայց զգուշանում էր այդ անվան մեջ հետագայի Արմինա-Արմենիա (Հայաստան) տեսնելուց։

[1] К. Патканов, Ванские надписи и значение их для Передней Азии, СП, 1881, էջ 33։

[2] Անդ, էջ 94։

Նա ժամանակին ուշադրություն էր դարձրել հնագույն ժամանակներից եկած մի փաստի վրա, որը, իր կարծիքով, պակաս նշանակություն չպիտի ունենա հարցի պարզաբանման համար, քան Արմանիի հիշատակությունն աքքադական բևեռագրերում։ Փոքր Ասիայի Պուրուշխանդա քաղաքում, որը գտնվում էր Տուզ լճի և Դայլ գետի միջև, սեմական առևտրականների մի գաղութ է եղել։ Այդ քաղաքի բնիկ իշխանավոր Նուր-Դագանը նեղում էր առևտրականներին, և սրանք բողոքեցին Սարգոն Աքքադացուն՝ խնդրելով նրա օգնությունն ու հովանավորությունը։ Սարգոնն արշավանքի եկավ Պուրուշխանդա քաղաքի երկրի վրա, նվաճեց այն, «խելքի բերեց հարստահարիչ Նուր-Դագանին»։ Վերադառնալիս էլ Սարգոնն իր երկիր փոխադրել տվեց բույսերի ու պտղատու ծառերի մի քանի տեսակներ, որոնք, հավանաբար, Աքքադում նորություն պիտի լինեին։ Տարած բուսատեսակների մեջ էին hashuru, tittu, saluri, sirdu։ Ադոնցը համոզված էր, որ սրանք հայերենում պահպանված բառեր են՝ խնձոր, թուր, սալոր–շլոր ու ցիրդ, և այս փաստից հանել էր հետևյալ եզրակացությունը. «Սա շատ կարևոր մի իրողություն է, որը, նույն բնույթի ուրիշ բառային նյութերի հետ միասին, մի տեսակ ջահ կծառայի Հայաստանի նախահայկական ժողովուրդների ցեղային պատկանելության վրա լույս սփռելու համար»[2]։

Դարձյալ հիշենք, որ Ադոնցը կաշկանդված էր հնդեվրոպական նախահայրենիքի եվրոպակենտրոն տեսությամբ և շատ մեծ զգուշությամբ էր վերաբերվում հայոց լեզվում պահպանված հին-արևելյան բառամթերքին, հատկապես Փոքր Ասիայում ու Հայկական բարձրավանդակում օրըստօրե բացահայտվող պատմական այնպիսի իրողություններին,

[1] Ն. Ադոնցը Սարգոնի գահակալության տարիներ էր նշել մ. թ. ա. 2633—2579 թթ., սակայն այժմ հավանական է համարվում, որ գահակալությունը տեղի է ունեցել մ. թ. ա. 24-րդ դարում։

[2] Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1970, էջ 27։

Որ խնձորը հայերենից է անցել Առաջավոր Ասիայի հինավուրց լեզուներին, դա ընդունում էին Հր. Աճառյանն ու Գր. Ղափանցյանը, այժմ էլ ընդունում է Գ. Ջահուկյանը (տե՛ս «Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան», էջ 424)։

որանք կարող էին զլխիվայր շուռ տալ տիրապետող պեստիերացումները։ Եվ, այսուհանդերձ, հաճախ էր ընդվզում իրատես նրա միտքը։ Գիտնականը խանդավառվում էր այն հեռանկարից, որ հայագիտության առաջ կարող էին բացել հայ-աքքադական բառային ընդհանրությունները։ Իսկ երբ տեսնում էր, թե ինչպես դեռևս 3—2-րդ հազարամյակներում, ասիանիկ համարված ժողովուրդների մեջ կամ նրանց կողքին, իրենց զգալ են տալիս լեզուներ, որոնց հնդեվրոպական պատկանելությունը վեր է ամեն կասկածից, նա արդեն հրաշալի զգում էր այդ երևույթի ընծայելիք լույսը և հուսավառ բացականչում էր. «Կարելի է պատկերացնել այն բուռն հետաքրքրությունը, որ այս իրողությունն է ներկայացնում գալիք Հայաստանի պատմության համար. մի հարևան երկիր խոսում է հնդեվրոպական լեզվով»[1]։

Ադոնցի կանխագգացումը չխաբեց։ Վերջին տասնամյակներին լեզվաքննական հետազոտությունները հայտնաբերեցին այնքան ընդհանրություններ հայերենի և հին արևելյան մեռած լեզուների միջև, որ այլևս անհնար է զբաղանք համարել պատահական կամ միջնորդական փոխառությունների արդյունք։ Նշանակալից է, որ նոր հետազոտություններն ընդլայնել են նույնիսկ Սարգոնի տարած բուսանունների ցանկը։ Վերջերս Ներսես Մկրտչյանը հրապարակեց մի ուսումնասիրություն (տե՛ս «Древний Восток» ժողովածու, 4, Ե., 1983)՝ ցույց տալով, որ հայ-աքքադական բուսանվանական ընդհանրությունները շատ ավելին են, քան Սարգոնի վավերագրից հայտնի խնձոր, թուր, շլոր և ցիրդ։

Մկրտչյանի քննած ընդհանուր բառերն են՝ անանուխ, բոշնի–բոինչ, թուր, խաղող, խնձոր, խոռն, կանափ–կանեփ, կտավ, կուտ, նուռն, ոլոռ–միլոռ, սալոռ, սերկևիլ, տոլի–տոյլի (*խաղողի վազ*), տուղտ, փարփար (*դանդուռ*), քիմոն–քամուն (*չման*) և քաթան–քթեր։

Այս բառերի մեծագույն մասի համար անտարակույս է հայերենի ու աքքադերենի ընդհանրությունը, երբ համանիշները հին արևելյան մյուս լեզուներում բավական հեռացած

[1] Ն. Ադոնց, *Հայաստանի պատմություն*, էջ 28։

են, որ կնշանակի՝ նրանք փոխ են առնվել հետագայում կամ, համենայն դեպս, չեն կարող անմիջապես առնչված լինել հայերենի ու աքքադերենի հետ։ Օրինակ, հայերեն «անանուխ»-ը աքքադերենում «ananihi» է, երբ իրաներենում «nanxah» է կամ «nanuxeh» (նույնը չի կարելի ասել նույն բույսի ընտանեցված տեսակի՝ նանա-յի մասին, որն անպայման համապատասխանում է ասոր. nana-յին)։

Հայ. բոշնի—աքքադ. burasi, երբ արամեերենը barot է, եբրայերենը՝ baros։ Հայ. թուր — աքքադ. tittu կամ tuttu։ Հայ. խոռն (*արևելահայ որոշ բարբառներում՝ խոռնը*)—աքքադ. hurnu, հայ. նուռն—աքքադ. nurna, հայերեն սալոր (*բարբառներում՝ շլոր*)—աքքադ. salluri, հայ. փարփար—աքքադ. parparhu, հայ. քիմոն (*քամուն*)—աքքադ. kamuni, հայ. քթեր—աքքադ. kititi։

Հայ-աքքադական բառային այս բացահայտ նմանությունները, մանավանդ նրանց զգալի տարբերությունների կողքին՝ հարևան հին ու նոր բոլոր այն լեզուներում, որոնց տվյալները վկայակոչվում են Ն. Մկրտչյանի կողմից, իսպառ բացառում են ուրիշ որևէ փոխառություն կամ միջնորդական ազդեցություն, քան հայերենի ու աքքադերենի անմիջական շփումն է։

Ն. Մկրտչյանն այս բնույթի իր առաջին աշխատանքը հրապարակել էր տարիներ առաջ՝ և այնտեղ նա հայ-աքքադական անմիջական փոխառությունների մարզին էր վերագրում շուրջ հարյուր բառ, որոնց մի զգալի մասը՝ մեկնաբանություններով հանդերձ, քաղված էր հայագիտության նախորդ սերնդի աշխատություններից ու արդեն հայտնի էր գիտական լայն շրջաններին։

Ն. Մկրտչյանի աշխատանքի առթիվ հանգամանալից ուսումնասիրություն տպագրեց Դ. Բ. Ջահուկյանը[2], որի եզրակացությունն այն էր, թե բերված օրինակների մի մասը թյուրիմացությամբ է մտել փոխառությունների շարքը, մյուս մասի համար աղբյուր են ծառայել միջնորդ լեզուներ, և մեկ

[1] Н. Мкртчян, Отклонения от закономерностей армянского языка в свете данных аккадского языка. *ФРЛ, 1979, №4, էջ 219—234։*

[2] Г. Б. Джаукян, Об аккадских заимствованиях в армянском языке. *ФРЛ, 1980, №4։*

երրորդն է միայն, որ իր վրա կրում է Հայ-աքքադական անմիջական առնչությունների կնիքը։

Մկրտչյանը շարունակում է իր պրպտումները հայերենի և հին արևելյան լեզուների փոխազդեցությունների շուրջ։ Այդ պրպտումներից է ծնունդ առել նաև բուսանունների քննությանը նվիրված աշխատանքը, որի համար անպայման ելման կետ է հանդիսացել գերմանացի հայագետ Յոզեֆ Կարստի և Նիկ. Ադոնցի ուշադրությանն արժանացած հայ-աքքադական վերոհիշյալ բառափունջը։

* * *

Հարցի պարզաբանմանը մեծապես օգնում են նաև հնագիտության տվյալները, մանավանդ, եթե նրանց էլ դիմարվում են լեզվական համարժեքներ։ Պատմական Հայաստանի ծայր-հարավում, Ամիդ-Դիարբեքիրի մոտ, հայտնաբերվել է Սարգոն Աքքադացու թոռ Նարամսինի կանգնեցրած արձանագիր քարակոթողը, որի վրա իբրև զարդանախշ քանդակված է, այսպես կոչված, «կտուցավոր կացնի» մի տեսակը, որ գործածական է եղել մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, և որի տարածումը չի անցել Միջագետքի, Հայաստանի ու հարակից շրջանների սահմաններից։ Համանման կացիններ գտնվել են Միջագետքից (Աշուրի ու Թեփե-Գավրայի հնավայրերից) և Հայաստանի ու Վրաստանի մի շարք կենտրոններից։ Սա հիմք է դարձել, որպեսզի հենց հիշյալ տարածքը համարվի նման զենքի օրրան ու գործածության ասպարեզ։

Ուրեմն, դարձյալ միջագետքյան քաղաքակրթության ու Հայկական բարձրավանդակի տեղաբնիկների մի այնպիսի առնչություն, որը չի կարող ուշադրություն չգրավել։

Բայց կարող են ասել՝ իսկ դա ի՞նչ կապ ունի հայ ժողովրդի կամ հայոց լեզվի հետ։

Այս հարցը պարզելուն ևս օգնում է լեզուն, որի պահպանած փաստը ոչ միայն պակաս նշանակություն չունի, քան հնագիտական պեղածոն, այլև բացատրում, առավել խոսուն է դարձնում վերջինիս լուռ երևույթը։

Հայերենում «կացինը» փոխառություն է սեմական աշխարհից (ասուր. hassini, արաբ. xasin) և պահպանել է իր նախնական ձևն ու իմաստը. «կա-ցին»-ի «կան» բաղադրությունը դիտվում է որպես «քար»։ Ուրեմն, հայերենը փոխ է առել քարե կացնի անունը։ Մինչդեռ կան այլ օրինակներ, որոնք ուղղության իրողություն են հաստատում։ Օրինակ, նույն «կացին» անվան տակ եթովպերենում հասկացվում է նաև «երկաթ», որ նշանակում է՝ այդ լեզուն երկաթե կացնի անունն է փոխ առել։

Համարձակվե՞նք ասել, թե «կացին» բառի փաստը գալիս է ապացուցելու, որ հայերենը սեմական աշխարհի հետ առնչություն է ունեցել քարե դարից սկսած։ Իսկ «կտուցավոր» կացնի պեղածոն հաստատում է, որ առնչությունը շարունակվել է նաև մ. թ. ա. 3-րդ հազարամյակում։

Յակոբ Գրիմմը հին պատմության շերտերը բացում էր լեզվական այն երևույթներով, որոնք պահպանվել են գրական հուշարձանների մեջ։ Հայերենի ու հայ գրականության հուշարձանները, ցավոք, մինչև օրս չեն ենթարկվել այնպիսի քննության։ Որ նման քննությունը ևս մեր պատմության վաղագույն շրջանի հետազոտության նոր հորիզոններ պիտի բացեր, դա ցույց է տալիս վերը հիշված Վյաչ. Վս. Իվանովի փորձը։

Մովսես Խորենացու Պատմության մեջ մեզ է հասել հին հայոց աստված Վահագնին նվիրված ժողովրդական մի փոքրիկ բանաստեղծություն։ Չի կարելի կասկածել, որ այս երգավանդությունը գրի է առնվել բառացի, ճիշտ այնպես, ինչպես 5-րդ դարին է հասել սերնդեսերունդ, դարեդար փոխանցվելով։ Եվ ի՞նչ, Վ. Վ. Իվանովի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Քերթողահոր գրի առած վերջնական կերպարանքով բանաստեղծությունը ներկայացնում է ոչ միայն նախաստեղծ կորիզը, այսինքն՝ այն, որ դարեր առաջ հորինվել է իբրև վաղնջական հնդեվրոպական հավատալիքի և նրա հիմքի վրա գոյացած հայկական դիցաբանական ու գեղարվեստական մտածողության խաչաձևումից ժայթքածաշխարհ եկած բանաստեղծական մի գոհար, այլև իրենով դրսևորում է հաջորդ պատմաշրջանների, այդ պատմաշրջաններում բանաստեղծության հեղինակ հայ ցեղի և հարևան ցեղամշակութային միավորների՝ հնդկաիրանյան, հունական

ցեղակիցների, հյուսիսկովկասյան ցեղերի, խուռիների ու խեթալուվիացիների հետ ունեցած շփումների հետքերը, ազդեցությունների ու փոխհարաբերությունների թողած նրատվածքները։ Մի փոքրիկ բանաստեղծություն, որ իր մեջ է առել հայ ցեղի հոգևոր աշխարհի պատմությունը՝ հնդեվրոպական նախամորից բաժանվելու պահից մինչև իրանապահլավական հարևանի հետ ունեցած քաղաքական ու մշակութային սերտ աղերսների շրջանը[1]։

Վահագնի հիմնի այս պատմալեզվական քննության հեղինակ Իվանովը համոզում է նաև, որ բանաստեղծության բոլոր փոփոխությունները, գրական-մշակութային փոխներգործությունների նստվածքներն ու շերտավորումները կատարվել են բնաշխարհում։ Հետևապես, Վահագնի երգն ինքնին դառնում է մի նոր կովան, որով ևս հաստատվում է, թե Հայկական բարձրավանդակը և հարակից շրջանների տարածքները եղել են հնդեվրոպական մայր լեզվի նախահայրենիքը։ Այստեղ է կատարվել այդ լեզվի տրոհումը, այստեղ են նրանից ճյուղավորվել-բաժանվել և տարբեր ուղղությունների վրա տարածվել հնդեվրոպական լեզվի ժառանգ լեզուներն ու լեզվախմբերը։

Այս քննությունը ցույց է տալիս, թե հնագիտական նյութերի, արտադրական ու կենցաղային պեղածո առարկաների, գրական հուշարձանների մեջ, հատկապես այս ամենի տեր ժողովրդի լեզվի խորքերում որքա՞ն շատ ու բազմապիսի տվյալներ կան պատմական անցյալի պատկերը վերականգնելու համար, և թե որքա՞ն պարզ ու ճշմարիտ կներկայանա այդ պատկերը, եթե հմտորեն օգտագործվեն նյութերը, եթե լեզուն դիտվի ոչ թե միայն որպես այսօրվա մարդկանց հաղորդակցության միջոց, այլև որպես մի հզոր լուսատու, որի արձակած ճառագայթներից մեր առջև ցոլանում է պատմությունը, մեր ազգային կենսագրությունը։

Բայց այստեղ վերստին զգուշանանք բծախնդիր ընդդիմախոսի հետապնդող հարցից. իսկ այս բոլորն ի՞նչ կապ

---

[1] **Вяч. Вс. Иванов**, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагну. *ФРЛ, 1983, № 4, էջ 22—43։*

ունեն հայ ժողովրդի կամ հայերենի տեղաբնիկությունի հետ։ Դուցե իսկապե՞ս հայերենի կրողները եղել են գաղթականներ և, տեղաբնիկ ցեղերին իրենց հետ ձուլելով, յուրացրել են նաև վերոհիշյալ լեզվական փաստերն ու փոխառությունները։

Մեզնից հեռու վանելով այսօրինակ հարցի տակ թաքնված այն իմաստակությունները, որոնք վերջին ժամանակներս հրապարակվում են «նախահայերենի կրողներ», «հայ ժողովրդի բիոլոգիական նախնիներ» և նման անպտուղ ու հակագիտական կապակցությունների հետ միասին, հիշենք, որ հայ ժողովուրդը ինչքան իրեն հիշում է, հիշում է «հայ» անունով։ Օտարներն էլ նրան ճանաչում են «արմեն» (արմի, արմ, որից ստացված փոփոխակները՝ արիմ, ուրում, արմանի, արմյանին են)։ Ավելորդ է ասել, թե հայը «հայ» է կոչել այն մարդկանց, այն ցեղը կամ ժողովուրդը, ազգը, որը խոսել է հայերեն՝ նախահայերենից մինչև այսօրվա գրական լեզուն ու մեր հազարամյա բարբառները։ Կարիք կա՞ պնդելու, թե ուրիշները ևս «արմեն»— «արմյանին» են կոչել և այսօր էլ կոչում են էթնիկական այն միավորին, որը խոսել է, խոսում է և պիտի խոսի հայերեն։

Ուրեմն, նախահայերեն թե կատարյալ հայերեն՝ մեր լեզվով խոսողները միշտ և ամենուր պետք է կոչվեին հայեր կամ արմեր-արմեններ, նրանց երկիրն էլ՝ Հայք-Հայաստան կամ Արմինա (սրա այլալեզվյան տարբերակներով հանդերձ)։

Կա՞ն այս անուններն այն դարերի առումով, որ վերը ցույց տվինք հայերենի ընձեռած փաստերի օգնությամբ։

Բարեբախտաբար այդ անունները հիշատակվում են մ. թ. ա. 3-րդ հազարամյակի միջագետքյան սեպագիր արձանագրություններում և տարեգրություններում։ Զլիններին էլ, դա դեռևս չպետք է նշանակեր, թե սխալական են վերը վկայակոչված լեզվական իրողությունները։ Սակայն կան, հիշատակվում են, և դա մի նոր ու հզոր ապացույց է մեր լեզվի ընձեռած տվյալների ճշմարտության։

Վերը խոսք եղավ Վյաչ. Վս. Իվանովի հրապարակած այն ուսումնասիրության մասին, որը վերաբերում է «Վահագնի երգը» հին հայկական ժողովրդական ստեղծագործությանը։ Նույն այդ ուսումնասիրության մեջ անվանի գիտնականն

ի միջի այլոց ռուսերեն թարգմանությամբ ներկայացրել է նաև մի երկար շարք սեպագրական վկայություններ, որոնցում առկա են «Հայ» ցեղանունն ու «Հայք» երկրանունը՝ կապված «Արմի» տեղանվան հետ։ Արձանագրությունները մ. թ. ա. 3-րդ հազարամյակից են և հայտնաբերվել են հին Էբլա քաղաք-պետության տարածքում կատարված պեղումներով։

Այս սեպագիր արձանագրությունները մի քանի տարի առաջ հրատարակել են արևելագետ իտալացիներն ու գերմանացիները։ Դրանից հետո մեզ մոտ միայն խոսում էին Էբլայի սեպագրերի մասին, ոմանք՝ հույսով, որ ահա նրանցով կպարզվեն մի շարք մութ հարցեր, ուրիշներն էլ՝ սպառնալիքով, թե ահա Էբլայի նյութերով մեկընդմիշտ կփակվեն այն մարգկանց բերանները, որոնք հայ ժողովրդի ակունքները տանում-հասցնում են քարե դարին և այն էլ իր բնօրրանում։

Վյաչ. Վս. Իվանովի հրապարակած սեպագրական արձանագրություններում «Հայ» և «Հայք» անունները հիշատակված են հետևյալ կապակցությունների մեջ։

Էբլայից գտնված սեպագիր սալիկները գործնական գաշվիտվություններ են, և նրանց բնագրերից մեկում, ուր խոսք է գնում Եբրիում արքայի ժամանակ զանազան մարդկանց տրված գործվածքի տեսակների մասին, ասված է. «Հիանալի որակի մեկ գործվածք, մեկ նուրբ գործվածք, մեկ բազմագույն հագուստ Հայի միջնորդին (լիազորին)»։ Սրանից հետո այնտեղ, ուր խոսք է գնում զարդարանքի բաշխման մասին, «20 (սիկլել)ոսկուց մեկ առարկա է տրվում հային»։

Իվանովն այս տեղեկություններից հետո գրում է, թե «Առանձնապես հետաքրքրական է, որ այս դեպքում նախորդ անձնավորությունը կապվում է Արմի քաղաքի մարգի հետ», և բերում է հետևյալ տեղեկությունը. «1 քուսիտ գործվածք Արմիի (արմիցի) Մուրիի համար»։ Արձանագրության մեջ Արմի քաղաքը հիշվում է նաև իր մի այլ ներկայացուցչի առթիվ. «1 քուսիտ գործվածք, մեկ աքթում գործվածք, մեկ բազմերանգ շրջազգեստ բարձր որակի՝ Արմի քաղաքցի (արմիցի) Մալումի համար»։ Եվ այսքանից հետո էլ Իվանովը կատարում է հետևյալ եզրակացությունը. «Մեծ հավանակա-

նությամբ՝ Էբլայի (նախնական արձանագրություններում որպես իր առանձին թագավորը, հետագայում էլ՝ կուսակալն ունեցող քաղաք) բնագրերում Արմին նույնն է, ինչ նաև Սուեն Աքքադացու արձանագրություններում»[1]։

Այստեղ թերևս հարկ կա անդրադառնալու այս «արմի», «Արմանում» անունների շուրջ վերջերս հրապարակված և իրար մերժող երկու կարծիքներին։

Գիտնականներից շատերը, հատկապես նրանք, որ չեն առաջնորդվում նախապաշարումներով, համոզված են, որ այդ անուններն ու դրանցով կազմված մյուս տարբերակները վերաբերում են հայերին և նրանց հայրենիքին։ Օրինակ, Գ. Բ. Ջահուկյանը համոզված է, որ «Եփրատի վերին հովտում տեղադրվող Armanum[ki] քաղաքանունը ակնհայտորեն կապված է հայերի անվան հետ»[2]։

Խոսքը գնում է աքքադական աղբյուրներում հիշատակվող Արմանումին։ Եվ հասկանալի է, Հայաստանի հարավին վերաբերող տեղանուն, որ մ. թ. ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին հայտնվելով՝ հետագայում միշտ էլ գոյություն է ունեցել, էլ ո՞ւմ հետ պիտի կապված լիներ։ Եղե՞լ են ուրիշ ցեղեր կամ ժողովուրդներ, որ կոչված լինեն արմեր, արմեններ, արմանիներ։ Չեն եղել։ Ուրեմն...

Բայց ահա Ի. Մ. Դյակոնովը հայտարարում է, որ ո՛չ արմը, ո՛չ Արմանումը, իրենց տարբերակներով հանդերձ, հայերի կամ Հայաստանի հետ առնչություն ունենալ չեն կարող, որովհետև ինքը՝ Դյակոնովը գտնում է, թե մ. թ. ա. առաջին հազարամյակից վաղ հայերը գոյություն չեն ունեցել։ «В некоторых околонаучных кругах исключительный интерес вызвало название соседнего с Эблой сирийского города Armanum, а также нередко встречающегося в текстах топонима (?) или этнонима (?) armi[ki], и возникла надежда — нельзя ли видеть здесь предков армян?»— գրել է գիտնականը, ապա անմիջապես հանել այսպիսի վճիռ.

1 ՊԲՀ, 1983, № 4, էջ 31—32։

Նույն նյութերը տես նաև. «Древняя Эбла (раскопки в Сирии)», Москва, 1985, с. 284—286.

2 Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 473։

«Миф об армянах, упоминаемых в эблаитских текстах, обречен растаять так же, как миф о библейских городах»[1]։

Այստեղ ուշագրավ է Ի. Մ. Դյակոնովի վերաբերմունքը և՛ իր ընդդիմախոս գիտնականների, և՛ եթե ոչ անմիջապես հայերի, ապա նրանց մասին խոսող աղբյուրների նկատմամբ։ Ստացվում է, որ Վյաչ. Վս. Իվանովը, Գ. Բ. Ջահուկյանը և նմանները «околонаучные круги» են։ Իսկ էբլայի ավյալներն էլ թզի տերևի փոխարեն օգտագործելով՝ մարդիկ փորձում են հայոց ամոթը ծածկել... Եվ այսքանից հետո Դյակոնովն իր պարտքն է համարում զգուշացնել. «համարձակվե՛ք, դա մի՞թե է, ծիծաղելի՞..., որովհետև ես այդպես չե՞մ մտածում։

Ինքը մտածում է, թե էբլայի ավյալները հայերին չեն վերաբերվում, քանի որ դրա համար շատ պատճառներ կան, և այդ պատճառներից մեկն էլ ահա այս է. «никогда в течение своей истории сами армяне себя так не называли», այսինքն՝ հայերն իրենք իրենց արմի-արմանի, իսկ իրենց հայրենիքը՝ Արմինա, Արմանում չեն կոչել։ Բայց չէ՞ որ էբլայի սեպագրերը հայերի ձեռքի գործը չեն։ Եվ չէ՞ որ այսօր էլ հայերն իրենց ու իրենց հայրենիքը չեն կոչում այդպես, բայց ամբողջ աշխարհը համառորեն իր ձին է քշում՝ հայերին կոչելով արմեններ, Հայաստանը՝ Արմենիա։

Ըստ երևույթին անհնար է հետևել նույնիսկ տարրական արամաբանությանը, երբ մարդ կամովին հանձնված է լինում սխալին և ջանում է նրա համար «հիմքեր» հայթայթել։

Հրապարակված և Վյաչ. Վս. Իվանովի կողմից քննարկված բնագրերում «հայ»-«Հայքը» հիշատակվում են նաև Հութիմու բնակավայրի (քաղաքի) անվան հետ[2], իսկ սա առավել ևս ամրապնդում է այն համոզումը, որ «հայը» ցեղանուն է և ցույց է տալիս ցեղային պատկանելությունն այն մարդկանց, որոնք առևտրական ու արհեստագործական սերտ առնչություններ են ունեցել էբլայի տերերի հետ։

Էբլան քաղաք-պետություն է եղել Հյուսիսային Սիրիայում մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերին, նվաճվել է Սարգոն Աքքադացու (մ. թ. ա. 24-րդ դար) և Նարամ-Սուենի (մ. թ. ա. 2238—2202 թթ.) կողմից, որից հետո ավերվել է։

Ուրեմն, էբլայի արձանագրություններում «հայն» ու «Հայքը» հիշատակվում են այդ քաղաք-պետության ծաղկման շրջանում։ Հիշատակվում են Արմի քաղաքի երկրի հետ միասին, որ նշանակում է՝ «Հայքն» ու «Արմին» նույնական են, քանի որ մի տեղ հայ մարդը համարվում է հայէցի, մյուսում՝ արմիցի։

Պարզվում է, որ Հայք-Արմին մի անցողական երկիր կամ պետական կազմավորում չի եղել, որ մի անգամ կամ մի պատմաշրջանում շողարձակի, ապա անհետ կորչի։ Այն հիշատակվում է նաև հետագայում, նախ Սարգոն Ա Աքքադացու արձանագրություններում, այն կապակցությամբ, որ այդ արքան Արմանում երկրից բույսեր է տարել՝ արձանագրելով նաև նրանց հայերեն անունները, ապա Նարամ-Սուեն Աքքադացու նվաճումներին վերաբերող սեպագրում՝ իբրև նվաճված 17 երկիր-թագավորություններից 11-րդը («Մադակինա— թագավոր Արմանում քաղաքի երկրի»)։

Սրանցով սպառվո՞ւմ են «հայ»-«Հայք», «Արմի» կամ «Արմանում» անունների հնագույն հիշատակությունները։ Ո՛չ, չեն սպառվում և նույնիսկ չեն էլ ընդմիջվում որևէ ժամանակ։ Վ. Վ. Իվանովին ենք պարտական նրանց վերաբերող հաջորդ տեղեկությունների հրապարակման համար։ Այս տեղեկություններն էլ Աշշուրից հայտնաբերված արձանագրությունների մեջ են, մ. թ. ա. 3-րդ ու 2-րդ հազարամյակների սահմանագծի առումով։ Այս ժամանակ Աշշուրը քաղաք-պետություն էր և աքքադա-շումերական մշակույթի խոշորագույն կենտրոն։ Եվ ահա հենց այս շրջանին վերաբերող սեպագիր մի սալիկի վրա (գտնված Կապադովկիայից) ta-si-me-ti աստվածուհին «կապվում է «հայ» էթնոնիմի ու տեղանվան հետ, որը համապատասխանում է, մի կողմից, հայերի ու նախահայերի ինքնանվանմանը, մյուս կողմից «Հայք» տեղանվանը, որը (նախապես) վկայված էր Ալզի և Արմի վայրերի, մարզերի կամ քաղաքների հետ միասին»[1]։

1 «Древняя Эбла», с. 336.

2 ՊԲՀ, 1983, № 4, էջ 32։

1 Վ. Վ. Իվանով, անդ, էջ 30—31։

Հաջորդ հիշատակություններն արդեն աշխարհին հայտնի են խեթական արձանագրություններից՝ իբրև Հայասա («հայ» էթնոնիմ + «սա» տեղանվանական վերջավորություն) — Հայաստան երկրի պետության ու նրա թագավորների գործունեության վավերագրեր։ Հայասան գոյություն ուներ մ. թ. ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսից մինչև երկրորդ կեսի վերջերը։

Ականավոր գիտնական Գրիգոր Ղափանցյանը նախընթացի «հայ» ու «Հայք» անուններին վերաբերող աղբյուրագիտական տվյալներին անտեղյակ էր, քանի որ նրա ժամանակ դեռ լեզու չէին առել Էբլայի ու Աշշուրի նյութերը։ Այդ պատճառով էլ նա խեթական սեպագրերի մեջ այնպես լայնորեն արտացոլված հայասական տեղեկությունները համարում էր հայ ժողովրդի ու նրա Հայաստան հայրենիքի կենսագրության անդրանիկ վկայագրերը և ոգևորված պնդում էր, որ «Հայասան հայերի օրրանն է», հայ ժողովրդի կենսագրության անդրանիկ դրվագը[1]։

Ղափանցյանի տեղադրմամբ Հայասան՝ մ. թ. ա. երկրորդ հազարամյակում գոյություն ունեցած այդ պետությունը, բռնում էր պատմական Հայաստանի մեծագույն մասը։ Այս տեսակետն ապացուցվում է նորագույն ուսումնասիրություններով, որոնցից հատկապես ուշադրության են արժանի խեթագետ Վալերի Խաչատրյանի բազմամյա պրպտումները։ Նրա համոզիչ քննությամբ, մանավանդ խեթական աղբյուրների հիշատակած հայասական-հայկական տեղանունների ճշգրտմամբ ու տեղադրմամբ հաստատվում է, որ Հայասա-Հայքն ընդգրկել է «Վանա լճի, Հայկական Տավրոսի, Եփրատ գետի ու Սև ծովի միջև ընկած տարածքը, Արածանի ու Հորոխ գետերի, Վերին Եփրատի, նաև Վերին Արաքսի ավազանները»[1]։

Սա պատմական Հայաստանի առանցքն է, նրա հիմնական մասը։ Հետագայում նրա ազդեցությունը տարածվել է չորս կողմերի վրա, հատկապես դեպի հյուսիս և արևմուտք։ Այս հանգամանքը ճշգրտվում է մ. թ. ա. առաջին հազարամյակին վերաբերող սեպագիր աղբյուրների տվյալներով։

Անկասկած, միամտություն կլիներ կարծել, թե հսկայական այս տարածքի ընդգծիները միայն հայեր են եղել։ Դեռևս մեր Պատմահայր Խորենացին էր հիշում, որ դեպի հյուսիս և արևմուտք շարժվող հայկական տարրը բախվում էր այլացեղ տեղաբնիկներին, և Արամ թագավորն ստիպված էր լինում հրաման տալ նրանց՝ «ուսանել զլեզուս և զիրսս հայկական»։ Բայց որ հայ են եղել երկրի տերերը, նրանք են ձև ու կերպարանք տվել երկրի ցեղագրական պատկերին, դա կասկածից վեր է։ Այդ իրողության մեջ համոզվելու համար հարկ կլիներ թերթել վերջին տարիներին կատարված պատմագիտական, հնագիտական և լեզվաքննական հետազոտությունները։ Մանավանդ լեզվագիտական փորձը, որի բազմակողմանի ու հմուտ քննությամբ Գ. Բ. Ջահուկյանը հաստատում է արդեն պարզ, աներկբայելի մի իրողություն՝ «Հայասայի հիմնական լեզուն եղել է հայերենը, և որ հայկական տարրը գերակշռող դիրք է գրավել հայասական պետության մեջ»[2]։

Ուրեմն, երիցս իրավացի էր Գրիգոր Ղափանցյանը. հայ ժողովրդի բնօրրանն ու բնակության տեղին Հայասա-Հայքն է եղել։ Այստեղ է նա աշք բացել իբրև ինքնուրույն ցեղային միավոր։ Այստեղ է առաջին անգամ խոսել իր հայերեն լեզվով։ Այստեղ է ապրել իր տնտեսական ու քաղաքական կենսագրությունը, ստեղծել իր քաղաքակրթությունը։

---

1 Վ. Վ. Իվանովը վերոհիշյալ նյութերի հրապարակումից հետո եզրակացնում է, որ «նորագույն հայտնագործությունները, հատկապես նրանք, որ վերաբերում են «հայ» ցեղանվանն ու տեղանվանը՝ Արմիի ու Ալզիի առնչություններով, հաստատում են Գ. Ա. Ղափանցյանի եզրահանգումների ճշմարտությունը և լիակատար սխալականությունը Ի. Մ. Դյակոնովի բոլոր այն հորինվածքների, որոնք վերաբերում են հայ-հաթիի առաջացմանը և հայերի ծագումնաբանության մյուս հարցերին» (անդ, էջ 30, ծան. 31)։

1 Վ. Ն. Խաչատրյան, Հայաստանի պատմություն, նախաուրարտական շրջանի ոչդմաքաղաքական պատմության հարցեր, Ե., 1988 թ. (դոկտորական դիսերտացիայի ձեռագիր), էջ 25։

2 ՊԲՀ, 1988, № 2, էջ 88։



ԴԵՌ ՊԻՏԻ ԽՈՍԵՆ ՍԵՊԱԳՐԵՐԸ

Հայոց պատմության Արարատյան կամ Վանի թագավորության շրջանից մնացած սեպագիր արձանագրությունների մի հսկայական քանակություն է հայտնաբերվել պատմական Հայաստանի տարբեր նահանգներից։ Դրանք փորագրված են ժայռերի հարթ մակերեսներին, շինությունների որմերին, տարբեր կոթողների, կենցաղային իրերի, կավե սալերի, զարդարանքի և այլ առարկաների վրա։

Մինչև այժմ հայտնաբերված բոլոր այդ սեպագրերի հայրենիքը՝ ասուրերեն «Ուրարտու», իսկ հետագայի սեպագրերի լեզվով «Բիայնիլի» կամ «Նայիրի», իսկ Աստվածաշնչում և հայկական աղբյուրներում «Արարատ» կոչված երկիրը, իր տարածքով, ծաղկման շրջանի ընդգրկումների եզրերով համապատասխանում է պատմական Հայաստանին։ Այո՛, եթե հանգամանորեն կազմվի այդ սեպագրերի տարածման քարտեզը, կստացվի հետագայի Մեծ Հայքն իր բոլոր նահանգներով։ Նշանակում է՝ սեպագիր արձանագրությունների տերն այն ժողովուրդն է, որը ծնունդ է առել նույն երկրում, դարեր ու հազարամյակներ ապրել է այդ տարածքի վրա և հենց այդտեղ էլ ստեղծել է իր մշակույթի բազմատեսակ հուշարձանները ու գանձերը։

Բայց, հետաքրքի՛ր բան. Հայաստան երկրի ամբողջ տարածքում սփռված սեպագրերը հայերեն չեն։ Գիտնականները երկարամյա պրպտումների շնորհիվ եկել են այն համոզման, որ դրանք իրենց մեծագույն մասով խուռիերեն են, ավելի ճիշտ՝ խուռիերենի մի տարբերակը, որ նրանք կոչում են նորխուռիերեն։

Խուռիները՝ հինարևելյան մի ժողովուրդ, որը բնակվում էր Միջագետքում ու հարակից շրջաններում, մ. թ. ա. երկրորդ հազարամյակում ստեղծել էին իրենց Միտանիի կոչվող հզոր թագավորությունը, ինքնատիպ մշակույթը և սեպագիր հարուստ վիմական տարեգրությունը։ Եվ ահա մ. թ. ա. 9-րդ դարում Հայաստանի տարածքում ստեղծված մի հզոր պետություն, որի մայրաքաղաքն էր Տոսպ-Վանը, երեք դար շարունակ իր տերերի անունից հետնորդներին ի պահ թողել է սեպագիր հարյուրավոր արձանագրություններ, որոնք սկզբում ասուրերեն էին, իսկ հետագայում բացառապես խուռիերեն։

Այս երկիրը, որին վերաբերում են հիշյալ սեպագրերը, նույն սեպագրերի ասուրերեն տարբերակներում կոչվում է «Ուրարտու-Ուրաշտու», իսկ նորխուռիերենում՝ «Բիայնիլի» կամ «Նայիրի»։ Բիայնիլի երկրանվան հիմքը մայրաքաղաք Բիայն (հայերեն Վան) անունն է։ Հաճախ այդպես էին բնութագրվում հին աշխարհի երկրանունները։ Աքքադ մայրաքաղաքի անունից՝ Աքքադի երկիր, Բաբելոնի անունից՝ երկիր Բաբելոնիա... Եվ սույն դեպքում՝ Բիայնիլի նշանակում է Բիայն (այսինքն՝ Վան) մայրաքաղաքի երկիր (ոչ թե «բիայն» ժողովրդի երկիր, ինչպես սխալմամբ կարծում էին որոշ հետազոտողներ)։ «Նայիրի» էլ նշանակում է «գետերի երկիր» (naj—ասուր. «գետ»)։ Եվ պատահական չէ, որ հետազոտողները, սկսած սեպագրերի հայտնաբերման առաջին իսկ շրջանից, նրանցում գործող պետական կազմավորումը կոչել են «Վանի թագավորություն» (Լեո, Ք. Պատկանով, Բ. Պիոտրովսկի), «Բիայնիլի» (Ն. Հարությունյան), բայց երբե՛ք «բիայնների երկիր կամ թագավորություն», «ուրարտների երկիր կամ թագավորություն»։ Չէր կարող նկատի չառնվել, որ Ուրաշտու-Ուրարտուի ու Բիայնիլիի կողքին էլ Աքեմենյան Պարսկաստանի թագավոր Դարեհ Ա-ն իր Բեհիսթունյան եռալեզու արձանագրության պարսկերեն տարբերակում նույն երկիրը կոչում էր «Արմինա»։

Ուրեմն, այսքանից կատարելիք առաջին ու շատ կարևոր եզրակացությունն այն է, որ Ուրարտու-Բիայնիլի-Նայիրի

երկրի բնակիչները ո՞չ ուրարտներ էին, ո՞չ բիայներ, ո՞չ նայիրներ, և առհասարակ այդ անուններով ցեղեր կամ ժողովուրդներ գոյություն չեն ունեցել։

Այսպիսով, մեզ ապահովեցինք հնարավոր առաջին թյուրիմացությունից։

Բայց սա դեռ հարցի կեսն է։ Իսկ մյուս կեսը, որ ավելի կարևոր է, այն է, թե վերջապես, ովքե՞ր էին այդ Ուրարտու-Բիայնիլի-Նայիրի-Արմինա երկրի բնակիչները, էթնիկական ի՞նչ պատկանելություն ունեին այդ ո՞չ ուրարտ — ո՞չ բիայն— ո՞չ նայ մարդիկ։ Եթե գալիք սերունդներին ժառանգություն թողած նրանց սեպագրերի լեզուն սկզբում ասուրերենն էր, հետո՝ խուռիերենը, դա հարցը պարզելուն ամենևին չի օգնում, քանի որ սեպագրերի հեղինակները ասուրներ չէին, խուռիներ էլ չէին կարող լինել։ Կարո՞ղ էր պատահել, որ մինչև մ. թ. ա. 10—9-րդ դարերը խուռիներն իրենց Միջագետքից վեր կացած-եկած լինեին Հայկական լեռնաշխարհ և այստեղ ստեղծած մի հզոր պետություն, որը մրցում էր Ասորեստանի հետ։ Ոչ մի փաստ կամ տեղեկություն չկա, որ ապացուցի նրանց նույնիսկ ժամանակավոր բնակությունը Հայկական լեռնաշխարհի որևէ շրջանում։ Միտաննի պետությունը գտնվել է այս լեռնաշխարհից հարավ, և, ինչպես Ի. Մ. Դյակոնովն է գրում, միայն գուշակները կարող են ասել՝ երբևէ նրանց ազդեցությունը հասե՞լ է դոնե մինչև Վանա լճի կողմերը, թե՞ ոչ։

Ճիշտ է, մի տեղ Դյակոնովը պնդում է, թե Գր. Ղափանցյանը Թովմա Արծրունու վկայության հիման վրա գրել է, որ միջնադարյան Սասունում բնակվել են «հայերից տարբեր հատուկ էթնիկական խմբեր (խուռիներ)»[1]։ Սակայն Ղափանցյանի գրքում այսօրինակ պնդման հետքն անգամ չկա, այլ հիշվում է Արծրունեաց պատմիչի վկայությունն այն մասին, որ Սասունի լեռներում հայ մարդիկ, անջատ-անջատ, իրարից հեռու ապրելով, «վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն՝ «անհամբոյրք» են դարձել իրար, օտարացել[2]։

[1] «Предыстория», էջ 240.
[2] Տե՛ս Թ. Արծրունի, Պատմութիւն, Ս.—Պ., 1887, էջ 120—121։

Ուրեմն, Դյակոնովը ճիշտ չի հասկացել Գր. Ղափանցյանին ու նրա վկայակոչած աղբյուրի տեղեկությունը։

Հետևապես, ոչ միայն խուռիների Հայաստանում բնակվելու, Հայաստան թափանցելու մասին ոչ մի տեղեկություն չկա, այլև Միտաննի պետության հզորության ժամանակներում անգամ նրանց ազդեցությունը Հայաստանի որևէ շրջանի վրա բացառվում է։

Պարզվում է, որ նաև դժվար է հաստատապես ասել, թե ի՞նչ լեզվով էին խոսում իրենք՝ խուռիներն իրենց բուն հայրենիք Միտաննիում։ Նույնիսկ Դյակոնովը՝ հին արևելյան լեզուների ճանաչված գիտակը, դարձյալ ստիպված է որոշակի խոսք ասել այդ մասին։ Միտաննիի առթիվ նա գրել է. «Չնայած նրա թագավորները կրում էին հնդիրանական անուններ, կենցաղում նրանք օգտվում էին, հավանաբար (հավանաբա՞ր— Բ. Ռի.), խուռիերեն լեզվից, համենայն դեպս նրանց գրասենյակներն օգտագործում էին խուռիերեն լեզուն՝ աքքադերենի կողքին, ինչպես և սեպագրերի աքքադական սիստեմը»[1]։

Այսքանից հետո, աղբյուրագիտական նյութերի այս բացարձակ բացակայության պայմաններում խուռիներին Հայաստան բերելը և նրանց ու տեղաբնիկների լեզուները նույնացնելը պիտի լինի հակապատմական ու հակագիտական զբաղմունք։

Ինչ վերաբերում է Բիայնիլիի տարածքի արձանագրությունների խուռիերեն լեզվին, ապա դա միանգամայն ուրիշ հարց է, և դրանից չի էլ կարելի կատարել հեռագնա եզրակացություններ։ Խուռիերենը, որով գրվել է Բիայնա-Արարատյան թագավորության սեպագրերի մեծագույն մասը, այդ երկրի համար ո՞չ վերնախավի լեզու է եղել, ո՞չ ժողովրդական զանգվածների։ Նրանով միայն մ. թ. ա. 9-րդ դարի վերջից մինչև 7-րդը սեպագրեր են գրոշմվել Հայկական լեռնաշխարհի որմերին ու քարերին, ինչպես որ դրանից առաջ էլ (մ. թ. ա. 9-րդ դարի կեսերին) Լուտիպրիի որդի Սարդուրին այդ նույնն արել է ասուրերեն, իսկ Սարդուրիի որդի Իշպուինին ու սրա որդի Մենուան պիտի անեին երկու լեզ-

[1] «Предыстория», էջ 44։

վով՝ ասուրերեն ու խուռիերեն։ Եվ հաջորդ դարերում էլ նույն երկրի տերերը պիտի գրեին արամեերեն, լատիներեն, հունարեն։ Մեր թվականության արշալույսին հույն մեծ աշխարհագրագետ Ստրաբոնը վկայել է, որ իր ժամանակից առաջ Հայաստանի ամբողջ բնակչությունը, այսինքն՝ հայերը և նախկին ոչ հայերը, խոսում են մեկ լեզվով[1], հասկանալի է՝ հայերեն։ Այս վկայությունից չի կարելի չեզրակացնել, որ երկրում այլևս չէր մնացել ոչ մի այլախոս ցեղ։ Եվ ահա այս համատարած հայախոսության մթնոլորտո՛ւմ իսկ, հույն մի ուրիշ հեղինակի՝ Պլուտարքոսի վկայությամբ, հայ արքա Արտավազդը ողբերգություններ էր գրում հունարեն, և դրանք բեմադրվում էին բնագրով, երբ երկրում այդ բնագիրը հասկացող ունկնդիր գոյություն չուներ։ Այս բոլորի համար միայն մի պատճառ կար։ Հայաստան աշխարհը դեռևս չուներ սեփական-ազգային-հայերեն գիր, բայց արդեն հասել էր քաղաքակրթական-մշակութային այն մակարդակին, երբ գրով խոսելու, այսինքն՝ սեփական մտքերը հավերժացնելու պահանջը դառնում է կենսական ու անդիմադրելի։

Նույն տիպի երևույթներ տեղի էին ունենում ոչ միայն Հայաստանում։ Աքեմենյան հզոր Պարսկաստանում արամեերենն էր միակ պաշտոնական-գրասենյակային և ամեն տեսակ գրագրությունների լեզուն։ Սակայն մինչև հիմա ոչ մի գիտնականի, նույնիսկ դիլետանտի մտքով իսկ չէր անցնի վեր կենալ և Աքեմենյան Պարսկաստանի բնակիչներին կամ թեկուզ իշխող վերնախավին համարել արամեացիներ։

Միայն մի բան պարզ է. Բիայնա-Ուրարտու-Արմինայի բնակիչները, ավելի ճիշտ՝ այդ երկրի տերերը, իրենց վիմագրերում օգտագործում էին օտար տարբեր լեզուներ, բայց ամենից շատ՝ խուռիերեն։ Խուռիերե՞ն, խուռիերենի մի տարբերակը, որ ուսումնասիրողներից ոմանք կոչում են նոր խուռիերեն։ Հետևապես այս տարբերակ-խուռիերենը նրանց սեփական լեզուն չէր, որպեսզի կոչվի ուրարտերեն, ինչպես համառորեն պնդում են ուրիշ ուսումնասիրողներ՝ արհամարհելով վերը շարադրված պարզ իրողությունը և նրանից կատարելիք տրամաբանական եզրակացությունը։

[1] Տե՛ս Страбон, География, գիրք XI, գլ. XIV, § 4.

Արդ. ի՞նչ հիմքեր կան պնդելու, թե հին Հայաստանի երկուսուկես դարու սեպագրերի լեզուն եղել է սոսկ փոխառյալ-գրագրական և սեպագրության բնագավառին ծառայելուց բացի ուրիշ կիրառություն չի ունեցել, այսինքն՝ կենդանի-խոսակցական լեզու չի եղել սեպագրերի հեղինակների, առավել ևս երկրի բնակչության համար։

Նախ՝ սեպագրերի մեծագույն մասն են կազմում այն բնագրերը, որոնք ներկայացնում են կաղապարներ (տրաֆարետ), և պատահական չէ, որ մոտ հինգ հարյուր սեպագիր արձանագրությունների մեջ առկա են լոկ 350 բառ-միավորներ։ 350 բառերով անհնար կլիներ բավարարել կենդանի-խոսակցական լեզվի, որևէ ժողովրդի լեզվական գործունեության բազմաշերտ ոլորտի պահանջները։

Երկրորդ, ավելի քան 250 տարիների երկար միջոցին Վանի սեպագրերի լեզուն չի ենթարկվել որևէ շոշափելի փոփոխության, չի մշակվել, չի հարստացել, մի բան, որ կբացառվեր, եթե նրանով խոսած լիներին այն իբրև սեպագրերի լեզու օգտագործողները։ Բավական է հիշել, թե հայերենը զարգացման ի՞նչ աստիճաններ է անցել նույն տեղության որևէ շրջանում՝ լինելով խոսակցական, կենդանի լեզու։

Մյուս կարևոր հանգամանքը. ո՞ւր է անհետացել այդ, այսպես կոչված, ուրարտական լեզուն։ Եթե այն լուծվել է հայերենի մեջ, ինչպես պնդում են կարծիքի կողմնակիցները, ապա պետք է որ թողած լինի իր անջնջելի հետքերը, ինչպես բոլոր այն մեռած ու կենդանի լեզուները, որոնց հետ անմիջական առնչություն է ունեցել հայոց լեզուն։ Դեռևս Գր. Ղափանցյանն էր փորձում ուրարտերենից կատարված փոխառություններ համարել հայերենի մի շարք բառեր, որոնք նրա ժամանակակիցների ու հետնորդների կողմից իրավացիորեն ճանաչվում են բնիկ հայերեն, հաճախ էլ՝ ուրիշ լեզուների պատկանող։

Եվ, վերջապես, հին աշխարհի բոլոր լեզուներն էլ, կենդանի լեզուները, գրավոր կիրառության լծվելով, անպայման անմահացրել են նաև իրենցով խոսող ժողովուրդների դրական-գեղարվեստական նյութերը, բանահյուսությունն ու ընթացիկ գեղարվեստական գրականությունը։ Այսպես են եղել աքքադերենը Ասորեստանում ու Բաբելոնում, շումերերենը՝

Շումերի երկրում, խեթերենը՝ խեթական պետության մեջ։ Նրանցով գրի առնված էպոսներ են պահպանվել, պոեմներ ու բանաստեղծություններ, գեղեցիկ պատմություններ ու բնակչության համար գոհարներ։

Այնտեղ, ուր խուռիերենը կենդանի, հավանաբար նաև խոսակցական լեզու է եղել, այն դարձել է գրականության լեզու։ Բանաստեղծական խոսքի բազմաթիվ օրինակներ են պահպանվել նրանով։ Այն ժողովրդական երգի համար խոսքային հիմք է հանդիսացել։ Բացի այն գրական ու դիցաբանական ստեղծագործություններից, որոնք վաղուց հայտնի են խուռիերեն սեպագիր աղբյուրների հրապարակումով, Միջերկրական ափի Ուգարիթ քաղաք-հնավայրից (Սիրիա) 1919—55 թթ. պեղումներով հայտնաբերվել էին մեծաքանակ սալիկներ, որոնց սեպագրերը ոչ այլ ինչ են, քան գրական ստեղծագործություններ, ծիսական երգեր։ Վերջապես գտնվեց նաև մ. թ. ա. երկրորդ հազարամյակին վերաբերող մի սալիկ, որի վրա սեպագրված են «Աստվածների հիմն» կոչվող երգի խուռիերեն բնագիրը, նրա երաժշտության նշանները և աքքադերեն տեղեկանք այն մասին, որ դա «Աստվածների հիմն» է, Ուռխայի հավաքածուն սեփականությունը, և արտացրողը, այսինքն՝ գրիչն էլ Համմուրաբին է։

Մեր մերձավոր հարևանների՝ խեթերի սեպագրերով ևս պահպանվել են ժողովրդական մի վեպ՝ «Ուլլիկումմի երգը» և բանաստեղծական բազմաթիվ ուրիշ ստեղծագործություններ, որոնք գրի են առնվել ինչպես խեթական հին թագավորության (մ. թ. ա. 17—16-րդ դդ.), այնպես էլ նորի (մ. թ. ա. 14—13-րդ դդ.) օրերում, ընդհուպ մինչև վերջինի կործանումը 13-րդ դարի ավարտին։

Մինչդեռ, այսպես կոչված, Ուրարտուի խուռիերենով Հայաստանում ոչ միայն գրի չի առնվել գրական որևէ հուշարձան կամ նրա պատառիկը, այլև նրանով կազապարված սեպագրերի մեջ չես գտնի որևէ նախադասություն, գոնե որևէ արտահայտություն, որն իր վրա կրեր իր հեղինակի գեղարվեստական մտածողության կնիքը։ Իսկ սա անառարկելի ապացույց է, որ այդ կազապար-լեզուն գործածողները նրանով չեն մտածել, նրանով չեն արտահայտել իրենց հույզերը, ապրումները, գեղարվեստական մտածողությունը։

Այսպես, ուրեմն. ուրարտերեն համարվող, բայց իրականում խուռիերեն կամ նոր խուռիերեն լեզուն Հայաստանի բնակչության սեփականը չի եղել։ Այստեղ այն կոչված լինելով սահմանափակ կիրառության՝ պաշտոնական գրագրության ոլորտին ծառայելու, 7-րդ դարի վերջում իսպառ դուրս է մղվել գործածությունից, որովհետև Վանի թագավորական հարստության ժառանգորդները, որոնք իրենց քաղաքական կյանքի կենտրոն էին դարձրել Արարատյան աշխարհը, արդեն գտնվում էին Աքեմենյան պարսից տիրակալության ազդեցության ներքո և իրենց պարտավորված էին զգում պաշտոնական գրագրության համար գործածել ոչ թե խուռիների մեռած պետության գիրն ու լեզուն, այլ այն լեզուն, որը գործածում էր իրենց վրա քաղաքական ու մշակութային զորեղ ազդեցություն հաստատած Աքեմենյան բռնապետությունը։ Սրա պաշտոնական լեզուն արամեերենն էր, որ Հայաստանում պիտի գործածվեր մինչև հելլենիստական ժամանակաշրջանը և այս շրջանում որոշ ժամանակ էլ մրցեր հելլենիզմի գրոշակակիր հունարենի հետ, նրա կողքին գրոշմվելով հայ թագավորների հուշակոթողների վրա։

Այս նշանակում է՝ քաղաքական ու մշակութային ազդեցությունն էր որոշում, թե երկրի արքունիքը ո՞ր հարևանի գիրը պետք է օգտագործեր իր պաշտոնական գրագրությունը վարելիս։ Եվ զարմանալի չէ, որ հետագա դարերի Հայաստանի արքունիքում էլ նույն հաջողությամբ իրար հետ մրցում էին հունարենն ու պահլավերենը, լատիներենն ու ասորերենը... Մինչև որ հայերը կստեղծեին իրենց սեփական գիրը, մեկընդմիշտ կհենվեին նրա ամրությանը և կդադարեին տարուբերվել ստրկացնող օտար գրերի արանքներում։

Այս թռուցիկ քննությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացության. եղել է մի երկիր, որն ասորեստանցիների կողմից կոչվել է Ուրաշտու-Ուրարտու, իսկ այդ երկրի տերերի խուռիերեն (օտարալեզու) վավերագրերում՝ նայիրի կամ Բիայնա, հարևան պարսիկների սեպագրերում՝ Արմինա, Աստվածաշնչում՝ Արարատ։ Բնիկների լեզուն ոչ խուռիերենն է եղել, ոչ էլ, այսպես կոչված, ուրարտերենը, քանի որ Հայաստանում խուռիներ չեն բնակվել, և առհասարակ գոյու-

թյուն չեն ունեցել «նայ» և «բիայ» ժողովուրդներ կամ ցեղեր։

Իսկ այն հարցը, թե ովքե՞ր են եղել այն Նաիրի-Բիայնա-Ուրարտու-Արարատ-Արմինա երկրի բնակիչները, դա էլ պիտի պարզել այնպես, ինչպես արվում է համանման դեպքերում։ Քննում են պահպանված տեղանունները, երկիրը ժառանգած ժողովրդի լեզվից պահպանված այլազան տարրերը։

Օրինակ, ինչպես վերը տեսանք, ուսումնասիրողներից շատերը համոզված են, որ Հայասան հայ ժողովրդի ու հայերենի օրրանն է եղել։ Ի. Մ. Դյակոնովը կտրականապես մերժում է այս կարծիքը՝ պնդելով, թե Հայասայի թագավորացանկից ու տեղանուններից պահպանված փշրանքները հիմք չեն տալիս մտածելու, որ Հայասայի բնակչությունը պատկանել է հնդեվրոպական ընտանիքին։ Իսկ եթե հիմք տայի՞ն, եթե գտնված լիներ, ասենք, մի բառ, մի հատուկ անուն, որի հայկականության վրա ինքը՝ Դյակոնովն էլ չը-կասկածե՞ր։ Պարզ է՝ ստիպված պիտի լիներ ընդունել, որ այդ փաստը հաստատում է Հայասայի հայկականությունը։

Վերջին ժամանակները հայագիտության մեջ կատարվել են լուրջ հետազոտություններ, որոնք ապացուցում են հայ ժողովրդի հնագույն նախնիների տեղաբնիկությունը, նրանց վարչական ու մշակութային առնչությունները հարևանների՝ Միջագետքի տերերի, խեթերի ու այլոց հետ։ Առանձնահատուկ նշանակություն ունեն լեզվաքննական նոր ուսումնասիրությունների հիման վրա Գ. Բ. Ջահուկյանի կատարած եզրակացությունները այն մասին, որ մ. թ. ա. երկրորդ հազարամյակի Հայկական բարձրավանդակում գոյություն ունեցած Հայասան դա Հայքն է, քանի որ, անվան ակնհայտ նույնությունից բացի, հայերն են բացահայտ գերամասնություն կազմել այդ երկրում, նրանց քաղաքական, մշակութային տիրապետության ապացույցն է հանդիսանում անձնանունների, դիցանունների, տեղանունների և լեզվական այլևայլ հանգամանքների հայկականությունը։

«Հայասայի հիմնական լեզուն եղել է հայերենը, և... հայկական տարրը գերակշռող դիրք է գրավել հայասական պետության մեջ»,— այս էր, ինչպես տեսանք, Ջահուկյանի եզրա-

կացություններից մեկը[1]։ Իսկ եթե սա իրողություն էր մ. թ. ա. երկրորդ հազարամյակի Հայասայում, որը գրավում էր Հայկական բարձրավանդակի, առավել ևս Ուրարտուի կամ Վանի թագավորության հիմնական մասը[2], ապա կասկած կարո՞ղ է լինել Ուրարտու-Վանի հայկականության կամ նրա կյանքում հայերի խաղացած «գերակշռող դիրքի» առթիվ։

Փորձենք այս դիրքը հաստատող փաստեր որոնել սեպագրերի մեջ։

Իհարկե, քիչ է նման քննությամբ էական փաստեր գրանելու հավանականությունը, քանի որ բառերն ու հատուկ անունները մեզ են ավանդվել ոչ թե բնիկների լեզվով և նրանց լեզվի հնչյունական, առհասարակ լեզվական ու լեզվաբանական առանձնահատկությունների անաղարտ պահպանմամբ, այլ օտար գրերով, օտար լեզվի օրենքներով և, մանավանդ, մի դարաշրջանում, երբ քերականական կարգ ու կանոնի, ուղղագրական-ուղղախոսական օրինաչափությունների մասին պատկերացում իսկ չէր կարող լինել։ Հիշենք, որ, օրինակ, երկրի գլխավոր աստծու անունը Ալդի էր գրվում Մուսասիրում և Խալդի՝ մյուս վայրերում։ Ռուսա թագավորի անունը երկրի քաղաքական կենտրոնում գրում էին Ռուսա, իսկ հոգևոր կենտրոն Արդինի-Մուսասիրում՝ Ուրսանա։ Իսկ եթե փորձենք տեղորոշել լատինական ու հունական աղբյուրների մեջ պահպանված հայկական տեղանունները՝ մի պահ վերանալով նրանց հայերեն նախօրինակներից, Ո՞վ կարող է մտածել, որ Բոսորոպեդան այդ անվան տիրող լեզվում եղել է Վասպուրական, Էտիունին՝ Ուտիք, Ակիլիսենեն՝ Եկեղիք, Օրխիստինան՝ Արցախ։ Էլ չեմ խոսում բազմաթիվ այն անունների մասին, որոնց հայկական տարբերակների վերականգնումն առհասարակ անհնար է (Փավնիտիս, Կարնիտիս են)։ Իսկ այդ աղբյուրներում պահպանված

---

1 **Г. Б. Джаукян**, О соотношении хайасского и армянского языков. *ВДЯ, 1988, № 1—2, հատկապես № 2, էջ 87—88։*

2 *Խեթական աղբյուրների ընձեռած տվյալների և հայկական տեղանունների քննությամբ Վ. Խաչատրյանը հաստատում է, որ Հայասան ընդգրկել է ապագա Մեծ Հայքի, ուրեմն և, այսպես կոչված, Արարատյան պետության մեծագույն մասը (տե՛ս նրա դոկտորական դիսերտացիոն ուսումնասիրությունն Ա գլուխը)։*

հայ մարդկանց անունների վրա նման դատողություններ անող ընթերցողը կարող է հանդիպել ամեն տեսակ անհեթեթություններ։ Հայերեն չէին ոչ միայն ծագումով պարթև, բայց հայ Արշակունի թագավորների անունները, այլ հայկազուն Արտաշիսյաններինն ու Բագրատունիներինը։

Բայց ես, ակնհայտ բարդություններին, սահմանափակ հնարավորությունների այս պայմաններում էլ, սկսում եմ փնտրտուքը՝ այն ոգեպնդիչ համոզմունքով, որ գտնված ամեն մի փաստ պիտի ունենա անգնահատելի գանձի արժեք։

Հետազոտողները վաղուց պարզել են, որ քննության առարկա սեպագրերի նորխուրիերենը հին տարբերակից կամ բուն Միտանիի պետության սեպագրերի լեզվից տարբերվում է հիմնականում իր բառապաշարի մեջ ունեցած բազմաթիվ հայերեն բառերի առկայությամբ։ Վիմագրերում այս հայերեն բառերը հանդես են գալիս լոկ խուրիական նախածանցներով, երբեմն էլ առանց դրանց։ Ահա այդ բառերի մի շարք. հուրի (սեպագրի մեջ)— հայերեն՝ ճավիտ, շուրի-սուր, ծառի-ծառ, արիլի-ավելի, երանի-ավան, ծուծով, ուլտու-ուղտ, ճալիլի-խաղող, ուլի-ուղի, հուլի-հող, իեշե-ես և այլն։

Որքան գիտեմ, ոչ ոք չի հետաքրքրվել՝ Միտանիի թագավորության սեպագիր արձանագրություններում երբևէ տե՞ղ են գտել այս բառերը, թե սրանց փոխարինում են բուն խուրիերեն համանիշներ։ Այս հարցի քննությունը, ամենայն հավանականությամբ, շատ կօգնի սեպագրերի հեղինակների իսկական՝ մայրենի լեզվի հարցը պարզելուն։

Նախ ասեմ, որ պատահել է՝ նորխուրիերեն սեպագրերի հայերեն բառերի առկայությունը պատճառ է դարձել, որպեսզի այդ սեպագրերը կարդացվեն հայերեն։ Հետո այս մոտեցումը համարվել է մոլորություն, և այժմ հետազոտողներից ոմանք հակված են նման բառերի առատությունը բացատրելու երկու ժողովուրդների լեզվական մերձակցությամբ, իբր թե հայերն ու խուրիները դարեր շարունակ ապրել են հարևանությամբ և անպայման պիտի իրարից բառեր փոխառնեին։

Սակայն հայտնի է, որ փոխառյալ բառերը, առանց բացառության, հարմարեցվում են փոխառու լեզվի հնչյունական

ու ձևաբանական օրենքներին և այնքան են սեփականացվում, որ միայն մասնագիտական քննությամբ է հնարավոր լինում պարզել փոխառության պարագան։ Նույնիսկ օտար տեղանունների գործածության ժամանակ փոխառու կամ գործածող օտար լեզուն ցուցաբերում է այնպիսի ինքնահատուկ մոտեցում, իր տարբերակն այնպես է հեռացնում բնորդից, որ հաճախ մասնագիտական քննությամբ անգամ անհնար է լինում պարզել, թե ինչից ի՞նչ է ստացվել։ Օրինակ, ի՞նչ օրենքներով կարելի է հաստատել, որ հունական աղբյուրների՝ վերը հիշված «Բոսորոպեդան» հայոց «Վասպուրականն» է, կամ թուրքերը «էջմիածնից» են ստացել «Ուչքիլիսա»։

Այսօրինակ աղավաղումներ կամ օտարացումներ չկան Վանի թագավորության սեպագրերում։ Այնտեղ հայերեն բազմաթիվ բառեր սոսկ հայերեն բառեր են՝ այնպես ցցուն դրված նորխուրիերեն հյուսվածքի մեջ, որ պարզապես աղաղակում են իրենց օտար մարմիններ լինելու մասին։ Իսկ սա պետք է ստանա իր տրամաբանական ու համոզիչ բացատրությունը։

Պատահում է՝ որևէ լեզվով գրված բնագրի մեկ բառը, մի սովորական արտահայտությունը մատնում է նրա հեղինակի այլալեզու լինելը, ա՛յլ էթնիկական միավորի պատկանելը։ Կամ պարզվում է մի այլ կարևոր հարց. թե ո՛ւմ է վերաբերում բնագիրը, եթե այդ անհնար է եզրակացնել նրա բովանդակությունից։ Այդպիսի բառերն ու արտահայտություններն անգնահատելի ծառայություն են մատուցում բնագրագետ հետազոտողին։

Դժբախտաբար, մեր հետազոտող բնագրագետներն ու պատմաբանները մինչև օրս փորձ չեն կատարել օգտվելու սեպագրերի մեջ եղած հայերեն բառերի ու արտահայտությունների ծառայությունից՝ պարզելու համար, թե հայերեն բառերն ի՞նչ գործ ունեն ո՞չ հայերեն, նորխուրիերեն սեպագիր արձանագրություններում, երբ և՛ այդպիսի բնագրերը, և՛ առհասարակ ամեն տեսակ վիմագիր նյութերը չեն կարող իրենց մեջ պարունակել պատահական տարրեր։ Վիմական արձանագրությունների հեղինակները միշտ էլ գիտակցել են, որ իրենց խոսքը փորագրում են դարերի համար, որպես իրենց նվիրական ասելիքը գալոց սերունդներին։ Այդ պատ-

ճառով էլ նրանք նախապես մշակել-հղկել են իրենց խոսքը, տրամաբանական հյուսվածքի մեջ առել դրա յուրաքանչյուր մանրամասնը, նվազագույն տարածության մեջ քիչ բառերով շատ բան ասել։ Այս քիչ բառերի մեջ, այս նվազագույն տարածության վրա պատահական, իր ինքնուրույն իմաստային բեռը չունեցող բառ կամ արտահայտություն տեղ չէր կարող գտնել։

Վերը ես ասացի, որ ոչ ոք չի պարզել՝ սեպագրերում տեղ գտած բնիկ հայ բառերն ունե՞ն խուռիերեն համանիշներ, թե իսկապես նրանք պետք է դիտվեն իբրև փոխառություններ, որոնք կարող էին գործածվել և՛ խուռիերենում, և՛ հայերենում։ Հիմա քննենք մի դեպք, երբ հայերեն բառը սեպագրի մեջ է մտել միայն իբրև բնիկ հայերեն բառ՝ լոկ հայի համար հասկանալի հասկացություն, երբ նոր խուռիերենում, այն էլ Հայաստանի տարածքում սփռված սեպագրերի մեջ, նույն բառն ունի համանիշ խուռիերեն բառ-միավորը։

Վանի հարավ-արևմտյան կողմում, խորխոր ժայռի հարթեցված երեսին պահպանվել է Բիայնա-Նայիրի երկրի ամենախոշոր արձանագրությունը, որ Արգիշտի Ա-ի (մ. թ. ա. 786—764 թթ.) անունից պատմում է թագավորության 14—15 տարիների կյանքի կարևոր դեպքերը։ Այս վիմագիր-տարեգրությունը հետազոտողների ուշադրության կենտրոնում է 19-րդ դարի սկզբից և հսկայական նշանակություն է ունեցել հատկապես Արգիշտիի գահակալության առաջին մեկուկես տասնամյակի իրողությունները պարզելու համար։

Խորխորյան տարեգրության յոթ ընդարձակ սյունակներից 5-րդի 42—43-րդ տողերում կա մի բառ, որը, հավանաբար, իր անսովորության պատճառով ճիշտ չի ընթերցվել, և ստացվել է այսպիսի անորոշ ու անհասկանալի կապակցություն. «Արգիշտին ասում է. Ես լսեցի՝ էտիունի երկրից Արդինի քաղաքի astiu ziirbilani (ar-gis-ti se a-li-e ha-su-bi kur eti-u-ni-(ni) uru ar-di-ni-e-i as-ti-u zi-ir-bi-la-(ni)[1]։

Ընթերցվածքի վրա կասկածելով՝ նրա վրա նորից ուշադրություն է դարձրել անվանի արևելագետ Գ. Ա. Մելիքիշվիլին և վերականգնել բնագրի այս հատվածն այնպես հմտորեն ու ճշգրիտ, որ երկտողը ոչ միայն լիովին արտահայտում է ամբողջ սեպագրի ոգու հետ կապված մի շատ կարևոր բովանդակություն, այլև մեզ բանալի է տալիս մի փակ դուռ բացելու համար։

Գիտնականն անորոշ բովանդակության երկտողի հատկապես անհասկանալի հատվածի «astiu ziirbilani»-ն կարդում է «astiuzi irbilani», այսինքն՝ երկրորդ բառի առաջին վանկ համարված zi-ն վերադարձնում է առաջին բառին, և հատվածն ստանում է այսպիսի տեսք.

«Արգիշտին ասում է. Ես լսեցի, թե, իբր, էտիունի երկրում գողացել են Արդինի քաղաքի «astiuzi-ն»։

Ուրեմն, էտիունի երկրում, թե՞ նրա երկրի մարդիկ, գողացել են Արդինի քաղաքի աստիուզը, և Արգիշտին արշավանքի է ելել էտիունի երկրի դեմ։ Արդինի քաղաքը Մուսասիրն է՝ Բիայնա-Ուրարտու երկրի հավատի կենտրոնը, որ կոչվում էր նաև Հալդիի քաղաք (իսկ Հալդին երկրի գլխավոր աստվածն էր)։

Ուրեմն, գողացել են Արդինի քաղաքի աստիուզը, և սեպագրերը վերծանող գիտնական Գ. Ա. Մելիքիշվիլին մտածում է, որ «աստիուզը» Հալդին է, Արդինիի հովանավորը։ «Ինչպես հայտնի է,— գրում է Մելիքիշվիլին,— աստվածների (այսինքն՝ նրանց կուռք-արձանների) առևանգումը թշնամի երկրների կողմից բավական տարածված երևույթ էր Հին Արևելքում։ Հաշվում էին, թե այդ եղանակով երկիրը զրկվում է նույն աստծու հովանավորությունից...»[1]։

Այսքանից հետո Գ. Ա. Մելիքիշվիլին հեշտությամբ և միանգամայն համոզիչ գտնում է, որ խորխորյան արձանագրության առեղծվածային «astiuzi»-ն հայերեն «աստուած» բառն է, և նրա կարծիքով, այդ բառը «հայերենում լիովին կարող էր փոխառություն լինել ուրարտերեն լեզվից»[2]։

---

[1] **Г. А. Меликишвили**, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 226.

[1] **Г. А. Меликишвили**, К чтению одного места в летописи Урартского царя Аргишти I. «Переднеазиатский сборник», III, М., 1979, էջ 173—174.

[2] Անդ, էջ 174

Որքան համոզիչ է գիտնականի առաջարկությունը «astiuzi»-ն ճանաչել որպես հայերեն «աստուած» բառը, նույնքան էլ անընդունելի է նրա ենթադրությունն այն մասին, թե հայերեն «աստուածը» կարող է լինել փոխառություն, այսպես կոչված, ուրարտերենից, որ իրականում նորխուռիերենն է։ Անընդունելի է, ամենից առաջ այն պատճառով, որ «աստուածը» բնիկ հայերեն բառ է և բացատրվում է միայն հայերեն։ Մխիթարյան գիտնականների բացատրությամբ այն նշանակում է «Հաստիչ կամ աստ և յաստիս ածող, այսինքն՝ գոյացուցիչ, արարիչ, ստեղծիչ»[1]։

Ուրեմն, «աստվածը» հայերի բառն է, որ մտել է նորխուռիերեն սեպագրի մեջ։

Իսկ գուցե այս իսկապե՞ս փոխառություն է, որ նորխուռիերենն է կատարել հայերենից։ Բայց այս դեպքում արդեն պետք է պարզել, թե նորխուռիերենն ինչո՞ւ պիտի հայերեն «աստուած» բառը փոխ առներ, երբ ինքն ուներ դրա համանիշը, մեկի փոխարեն երկու հատ՝ iniriasi — աստված, dingir — աստված, աստվածություն, և սեպագրի մեջ էլ նրանց դետերմինատիվը՝ d։ Չէ՞ որ մի լեզու ուրիշ լեզվից փոխ է առնում իր չունեցած բառը, հասկացությունը, անունը։ Փոխ է առնում և սեփականացնում։ Իսկ տվյալ պարագային նման ոչինչ չկա։ Հայերենն ու խուռիերենը մեկմեկուց չէին կարող, ավելի ճիշտ՝ կարիք չունեին փոխ առնելու «աստուած» նշանակող բառը, քանի որ նրանք ունեին իրենց սեփականները, իրարից տարբեր, իրար հետ ոչ մի կապ ու նմանություն չունեցող։ Խորխորյան տարեգրության մեջ պարզապես արձանագրվել է Վանի սեպագրերի լեզվին խորթ մի փաստ, որ կարող է դառնալ պատմական իրականության պատկերը որոշելու կարևոր գործոն։ Այս փաստն ինքնին խոսում է այն մասին, որ Արդինի-Մուսասիրի հավատացյալնե՛րն էին իրենց կուռք Հալդիին կոչում «աստուած»։ Այդ է հաղորդում սեպագիրը. «Արգիշտին ասում է. «Ես լսեցի, թե իբր Էտիունի երկրում (երկրի բնակիչները — Բ. Ոհ.) գողացել են Արդինի քաղաքի «աստուածը»։

«Աստուածը» և ոչ թե խուռիերեն «ինիրիասը» կամ «դինգիրը»։ Որովհետև Արդինիի հավատացյալներն իրենց աստծուն ասում էին «աստուած», հայերե՛ն։

Հիմա արդեն պիտի պարզել այն հարցը, թե Արդինի-Մուսասիրի հավատացյալներն էթնիկական ի՞նչ պատկանելություն ունեին, որ իրենց աստծու անունը հայերեն էին տալիս։

Բայց մի՞թե միայն այսքանը։ Իսկ Արգիշտին իր արձանագրության մեջ Արդինիի աստծու անունն ինչո՞ւ խուռիերենի փոխարեն դրել է հայերեն։ Որևէ օտար մարդ կանե՞ր այդպիսի բան։

Ուրարտու-Վանի թագավորության կամ Բիայնիլի երկրի տերերն իրենց խոսքը փոխադրել են խուռիերեն՝ ամենուրեք իրենց աստվածներին կոչել iniriasi կամ dingir։ Եվ ահա խորխորյան տարեգրության մեջ, օտար լեզվի սովորությամբ ճեղքելով, արևերես է ելել նրանց սեփական «աստուած» բառը՝ ապացուցելով, որ Հալդիին պաշտողները նրան կոչում էին հենց իրենց «աստուած» բառով, որ հայերեն է։

Անկասկած «աստուած» բառի գործածության օրինակն է առկա նաև Մենուա արքայի մի այլ սեպագրում, որը գտնվել է Վանում, տաճարի սյան խարիսխի վրա։ Այստեղ վիմագիրը կրկնված է երեք անգամ, երեքի մեջ էլ «աստվածը» կա նույն ձևով՝ «ašihuse». «Իշպուինիի որդի Մենուան ašihuse-ի այս տունը կառուցեց»[1]։

Վանի թագավորության ժամանակներից ի վեր հայերեն «աստծու տուն» են ասում տաճարներին, եկեղեցիներին, վանքերին։

Այս արձանագրությամբ զբաղված Սեյսը, Ի. Մեշչանինովը, Գ. Մերեթելին և Գ. Մելիքիշվիլին ašihuse-ն չեն թարգմանել ու չեն բացատրել։ Բայց մի՞թե պարզ չէ, որ Մենուա արքան խուռիերեն բնագրում օգտագործել է իր լեզվի «աստված» բառը. «Իշպուիինիի որդի Մենուան աստծու այս տունը կառուցեց»։

Քննենք մի ուրիշ փաստ։

Վանի թագավորության ամենահզոր ներկայացուցիչներից մեկը՝ Մենուան, որ գահակալել է մ. թ. ա. 9-րդ դ. վերջից

[1] «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1836, էջ 320։

[1] Г. А. Мелихишвили, УКН էջ 189.

ակած (810—786 ՔՔ.), վան քաղաքից արևելք (հետագայի Սիկե՞խ գյուղում) մի արձանագրություն է թողել, որի մեջ իր ձին կոչում է Արծիվ հատուկ անվամբ («Arsibini tini». «Արծիվ անունով» ձին)[1]։

Ուսումնասիրողներն ուշադրություն դարձրել են, իհարկե, «Արծիվ» հայերեն հատուկ անվան վրա, և միայն այսքան բան։ Այսինքն, մտածել են, թե հայերենն ու նորխուրիերենն այնքան սերտ փոխհարաբերությունների մեջ են եղել, որ լեզվական փոխառություններ են կատարել, և ահա մեկ փաստ ևս. հայերեն «արծիվ» բառը նորխուրիերեն սեպագրի մեջ։

Սակայն այս հայերեն բառը, այս «Արծիվ» հատուկ անունը Մենուայի վիմագրի մեջ շատ ավելին է, քան սովորական բառափոխանակություն։ Այն հուշում, պարզում, բացահայտում է պատմական մի իրողություն, որն այլևս ընկատել՝ միևնույն է, թե խուլ մնալ դարերի հեռվից եկած հարազատ ձայնի հանդեպ։

Երբ որ մեր օրերի համամիութենական մասուլի էջերում կամ ձայնասփյուռի հաղորդումներում խոսք է լինում «Աշխատանք» կամավոր ընկերության կամ էլ «Մահասուլ» ընկերության մարզական գործերի մասին, շատից-քչից տեղյակ մարդիկ անմիջապես հասկանում են, որ առաջին դեպքում խոսքը գնում է հայկական, իսկ երկրորդ դեպքում՝ թուրքալեզու որևէ ազգի մարզական ընկերության մասին։ Այս բառանուններն այն ազգանշաններն են, որոնց շնորհիվ մենք հասկանում ենք ամենագլխավորը, եթե հաղորդման հեղինակը պատահաբար կամ էլ պարզապես ավելորդ համարելով՝ չի ասել «Աշխատանքի» կամ «Մահասուլի» տիրոջ անունը։

Եվ ահա մեր առաջ է Մենուայի ձիու անունը հայերեն։ Ինչպես որ մարզական ընկերության «Աշխատաք» անունից առանց դժվարության հասկացվում է նրա տերերի ազգային պատկանելությունը, այնպես էլ «Արծիվը» պարզիպարզ հուշում է իր տիրոջ էթնիկական նկարագրին։ Ո՞վ իր ձին կկոչեր հայերեն։ Իհարկե, հայ ձիատե՛ր։ Այլապես անմտություն կլիներ մտածել, թե ո՛չ հայ մի մարդ վերցրել։

1 Անդ, էջ 204։

իր ձիուն հայերեն «Արծիվ» է կոչել։ Չիո՞ւն, որն ամեն օր՝ պատերազմների դաշտում, նվաճումների ճանապարհին կամ սեփական երկրում երթևեկելիս իր հետ էր՝ զինակցի ու ամենահարազատ էակի պես։

Մենուան իր ձիուն հայերեն «Արծիվ» բառով էր փառաբանում, քանի որ այն իսկապես արծվի պես էր սուրում դաշտում, և վիմագիրն էլ կազմվել է նրա մի արծվային թռիչքի առթիվ. Արծիվ ձին թռել է 29 կանգուն՝ 11 մետր երկարություն։

Սակայն, չմոռանանք նաև, որ այսօրինակ փառաբանությունն անիմաստ կլիներ, եթե «Արծիվը» սեփական ու խոսուն բառ լիներ միայն Մենուայի համար։ «Արծիվ» անունը սեպագրերում կարդարանար միայն մեկ պայմանով, որ Մենուայի շրջապատի համար ևս հասկանալի ու հարազատ լիներ, այսինքն՝ նրան շրջապատած լիներին հա՛յ մարդիկ, հա՛յ զինվորություն, հա՛յ պալատականներ, մի խոսքով՝ հայկակա՛ն միջավայր։

Ահա թե ինչպես է լինում, երբ մի բառը, բանալի դառնալով, բաց է անում մի գաղտնարան, որին, առանց այդպիսի բանալու, պիտի մնայինք անհաղորդ։

Մտնավանդ, եթե այդպիսի բառ-բանալին էլ հանդես է գալիս ոչ թե միայնակ, այլ յուրայինների հետ, և նրանք միասնաբար մեր առաջ բացում են ոչ թե մեկ, այլ շատ գաղտնարաններ։

Հաջորդ օրինակը ևս դարձյալ վերցնում եմ Արգիշտիի խորխորյան տարեգրությունից։ Այնտեղ, նույն 5-րդ սյունակում, ուր «աստված»-ի օրինակն էր, հիշատակվում է մի տեղանուն, որն այլևս չկա ուրիշ որևէ սեպագրում։ Այդ անունն է՝ tuarasini hubi։ Եթե նկատի առնենք, որ առաջին բառի ni-ն ածանց էլ կմնա tuarasi hubi։ Տարեգրության մեջ այն վերաբերում է Արգիշտիի գահակալության 12-րդ տարվան՝ մ. թ. ա. 775 թ. և վկայակոչված է այն կապակցությամբ, որ նշանավոր արքան նվաճել է այդ անունով երկրամասը («tuarasini hubi»), ապա Դաինալա գետից ջրանցք հանել ոռոգման համար։

Դեռևս Ի. Սանդալջյանն է իր ժամանակին համոզված ասել, որ այս արձանագրության tuarasi hubi-ի մեջ պետք

է տեսնել Վանա լճից հյուսիս-արևմուտք փռված Տուարածատափ կոչվող դաշտի անվան հնագույն հիշատակությունը։ Իսկ Գր. Ղափանցյանը, ճշտելով hubi-ի իմաստը, գտնում է, որ դա հայերեն «հովիտն» է՝ իմաստով նույնը, ինչ «տափ»-ը («դաշտ», «հարթավայր»), ուստի և tuarasi hubi-ն լրիվ համապատասխանում է «Տուարածատափ»-ին։ Այս նույնացումն ընդունում է նաև Ն. Վ. Հարությունյանը[1]։

Տուարածատափ կամ նոր ուղղագրությամբ՝ Տվարածատափ, նշանակում է Տուարածի դաշտ (հովիտ)։ «Տուարածն» էլ հայտնի է իբրև հին հայերեն բառ՝ «տուար արածացնող, հովիվ, նախրապան»։ «Տափ»-ի տեղ արձանագրության մեջ նույնիմաստ, բայց դարձյալ բուն հայերեն մի այլ բառ է՝ «հովիտ» — hubi (բ-վ և հակառակը հայերենի մեջ օրինաչափություն է, ինչպես — Բարսեղ-Վասիլ, Աղվանք-Ալբանիա)։

Ավելորդ չի լինի նշել, որ «Տուարած» բարդ բառն ինքը ջատ ավելին է ասում, քան մի սովորական բառի առկայությունը սեպագրում։ Այստեղ բնիկ հայերեն երկու արմատ՝ «տուար» և «արածել», միացել են միայն ու միայն հայերենին հատուկ բառաբարդման եղանակով. «տուար-արածող» → «տուար+արած» → «տուարարած» → «տուարած»։ Իսկ լեզվի մեջ, այն էլ վաղնջական օրերում, այսօրինակ երևույթները պիտի կատարվեին տևական ժամանակում, դարերի ընթացքում։

Ուրեմն, մ. թ. ա. 8-րդ դարի առաջին քառորդում Վանից հյուսիս-արևմուտք ընկած երկրամասը կոչվում էր հայերեն՝ Տուարածի հովիտ, բնականաբար, այն պատճառով, որ այստեղ բնիկները մեծ մասամբ զբաղվում էին անասնապահությամբ։ Ն. Վ. Հարությունյանը հիշում է տարեգրության մեջ Արգիշտի Ա-ի նվաճումներին վերաբերող տվյալների այն մասը, ուր ասված է, թե Տուարածի հովտից ու շրջականներից գրավվել են 8221 խոշոր եղջերավոր անասուն և 32538՝ մանր եղջերավոր[2]։ Ի՞նչ խոսք, որ այս վիթխարի քանակությունն արդարացնում է «Տուարածի հովիտ» անունը։ Պարզ է, որ այդ հովտի տերերի համար անասնապահությունը կարևոր բնագավառ է եղել։

Սակայն ավելի պարզն այն է, որ այդ հովտի տերը, այնտեղ բնակվող ժողովուրդը, չէր կարող հայ չլինել, բայց հայերեն կոչեր իր երկրամասը։ Հայ է եղել, և դա իր անջնջելի դրոշմն է դրել իր բնակության վայրի, իր երկրամասի անվան վրա՝ Տուարածի հովիտ, որ հետո և մինչև այսօր ու հավիտյան պետք է կոչվեր Տուարածատափ։

Հակառակության ոգին, սակայն, կարող է բորբոքվել այստեղ՝ ասելով. շա՞տ լավ, Արգիշտիի նվաճած աշխարհը հայկական ու հայաբնակ, իսկ ինքը՝ Արգիշտի թագավորը, այսինքն՝ Տուարածատափի նվաճողը, օտար մի բռնակալ էր, որը ոչ մի էթնիկական աղերս էլ չէր կարող ունենալ այդ երկրի հետ։

Բայց չէ՞ որ օտար նվաճողը Տուարածի հովտի անունն իր արձանագրության մեջ թարգմանած կփորագրեր կամ, որ շատ հավանական է, կաղավաղեր, այնպես կհեռացներ, որ այդ բավականին անբարեհունչ բառի հայերեն ձևն անհնար կլիներ վերականգնել։ Ինչպես գիտենք, հին հույն ու լատին հեղինակների երկերում, հետագայում էլ միջնադարյան արաբական աղբյուրներում, ավելի ուշ՝ պարսիկ ու թուրք հեղինակների վկայություններում հայերեն ոչ մի տեղանուն չի գրանցված իր հայերեն անաղարտ ձևով։ Սակայն Արգիշտիի արձանագրության մեջ այդպիսի բան տեղի չի ունեցել. tuarasi-ն իր ուղղագրությամբ այնպես համապատասխանում է հայերենին, կարծես փորագրել են 5-րդ դարի գրաբարով։

Ուրեմն, համարձակվենք անել նաև երկրորդ եզրակացությունը. հայ են եղել ոչ միայն Տուարածի հովտի բնակիչներն ու տերերը, այլև այդ երկրամասը նվաճող Արգիշտի Ա թագավորը, նրա սեպագրի փորագրողները։

Եվ այսքանից հետո էլ տրամաբանական է մտածել, որ հայերն այդ հովտում կամ դաշտում հայտնվել են ոչ թե մ. թ. ա. 775 թ., որպեսզի դաշտն այդպես կոչեն, և Արգիշտի թագավորն էլ անմիջապես արձանագրի, այլ այդ կարևոր վկայությունից շա՞տ ժամանակ, չվախենանք ասել՝ դարե՞ր առաջ, քանի որ տեղանունները ստեղծվում, արմատավորվում ու համընդհանուր ընդունելության են արժանանում.

1 Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, էջ 185—186.

2 Տե՛ս Н. В. Арутюнян, Биайнили, Ереван, 1970, էջ 378—383.

տեսական ժամանակում, եթե իրենց հետ կապում են ո՛չ թե որոշակի դեպք, դեմք կամ երևույթ (օրինակ՝ Արգիշտիխինիլի, Էրեբունի են), այլ ժողովրդական կյանքը, կենցաղը, հավատալիքներն ու հոգեբանության դրսևորումները։

Այո՛, այստեղ անպայման դարեր։

Նույն երևույթն ենք տեսնում նաև ոչ միայն նախընթացից եկող բառերի ու տեղանունների շարքում, որը կարելի է շարունակել, այլև այն տեղանունների, որոնք ստեղծվել են, այսպես կոչված, ուրարտական շրջանում։ Ուսումնասիրողները (Ք. Պատկանյան, Հ. Հյուբշման) վաղուց նկատել են, որ, օրինակ, Արգաստովիտը կամ Արգիշտովիտը բուն հայկական բառակազմություն է՝ կապված Արգիշտի թագավորի անվան հետ (Արգիշտիի հովիտ)։ Կամ «Մանազկերտը», որ դարձյալ հայկական տեղանուն է, ստեղծված հայերենի հայտնի կարգուկանոնով, նշանակում է «Մենուայի կերտած» (Մենուա-կերտ-Մենասկերտ-Մանազկերտ)։

Կարիք կա՞ հիշելու, որ այս տեղանուններն ստեղծվել են Արգիշտի Ա-ի (մ. թ. ա. VIII դ.) և Մենուայի (Արգիշտիի հոր) ժամանակներում։ Ստեղծվել են հայերեն, որովհետև որքան էլ խուռն երևեր գործածվել է իբրև պետության պաշտոնական գրագրության լեզու, հայերե՛ն է տիրապետել բնակչության, ինչպես նաև վերնախավի կենցաղի փոխհարաբերությունների ոլորտներում։ Մարդիկ հայերեն են մտածել ու խոսել, հայերեն անուններ են դրել իրենց քաղաքների, դաշտերի ու հովիտների վրա։

Մի ժամանակ Ի. Դյակոնովն ասում էր՝ Հայաստային վերաբերող սեպագրերում ցույց տվեք հայերեն մի հատուկ անուն, և ես կհավատամ, որ այդ երկրում հայեր են ապրել։ Հայագետները, հատկապես Գ. Ջահուկյանը, այդպիսի տասնյակներն են ցույց տվել։ Հիմա էլ ա՛յս օրինակները՝ երևակայական Ուրարտուի, առեղծվածային ուրարտների ու նրանց լեզվի հորինովի տիրապետության շրջանում։

Բայց կա ամենակարևորը, որ երկրի կամ պետության անունն է՝ «Բիաինիլի», որը բոլոր մասնագետների կողմից ընկալվում է որպես «Բիաին-Վան քաղաքի երկիր կամ պետություն»։ Հիշենք Բ. Բ. Պիոտրովսկու գիրքը, այսպես կոչված, Ուրարտուի մասին՝ «Ванское царство»—«Վանի թագավորություն»։

Ուրեմն, «Բիաինիլի»—«Վանի թագավորություն»։ Տեղացիները միշտ ու ամենուրեք այսպես են կոչել իրենց երկիրը-պետությունը։ Մի՛ այսպես։ Լոկ մեկ անգամ Ռուսա Ա թագավորը «Բիաինիլի» փոխարեն հիշատակել է «Ուրարտու», այն էլ իր ասուրերեն արձանագրության մեջ (տե՛ս УКН, 264)։ Ինչպես որ այսօր որևէ հայ իր ռուսերեն գրի մեջ դնի «Արմենիա»։

Ահա այսպե՛ս. թագավորության մայրաքաղաքը կոչվել է Վան։ Իհարկե, այն ունեցել է մի այլ անուն ևս՝ Տուշպա-Տոսպ, որը պահպանվել է հետագա ժամանակներում, նույնիսկ մեր դրավոր աղբյուրներում։ Օրինակ, Պատմահայր Խորենացին ասում էր «ի Վանն Տոսպայ»։ Սակայն տարածվածն ու հարազատը Վանն է եղել, որից էլ գոյացել է երկրի ու պետության անունը։

Բայց չէ՞ որ «Վան» («ավան») հայերեն բառ է (տե՛ս ՆԲՀԼ, հ. Ա, էջ 389, հ. Բ, էջ 781)։ Հայերեն բառ, որով երկրի բնակիչները կոչել են իրենց մայրաքաղաքը, որպեսզի նրանից էլ փոխանցվի երկրին ու պետությանը։

Ի՞նչ ազգության պիտի պատկաներեն այս բնակիչները, որպեսզի իրենց մայրաքաղաքը, երկիրն ու պետությունը կոչեին հայերեն։ Մի՞թե կգտնվի մեկը, որ հանձինս նրանց տեսնի ո՛չ հայերի։

Կարծում եմ՝ հենց այս փաստն ինքնին ասում է շատ բան, եթե ոչ ամեն ինչ «Նաիրի»-«Ուրարտու»-«Բիաինիլի»-«Հայաստան» շարքի մասին։

Շատ կարևոր է նաև մի այլ հանգամանք. Վանի թագավորության ասուրերեն և նորխուռիերեն սեպագրերում վկայված տասնյակ տեղանուններ պահպանվել են միայն հայոց լեզվով։ Պահպանվել են անխաթար ու անեղծ, ճիշտ այն պատկերներով, որոնք առկա են սեպագրերում։ Սակայն նման բան չի լինում, եթե որևէ երկրում, որևէ տարածքի վրա կատարվում են էթնիկական հեղափոխիչ տեղաշարժեր, կամ որևէ լեզվի կտրուկ փոխարինում է մեկ ուրիշը։ Այժմյան Թուրքիայում չի պահպանվել ոչ մի տեղանուն այն ամբողջ պատմական աշխարհագրությունից, որ ավանդել են

այդ երկրի առաջին-հիմնական բնակիչները կամ նրանց ժամանակակից օտարները։ Ամբողջ աշխարհում «Արարատը» ճանաչված, ընդունված, անփոխելի անուն է, բայց տեսեք, որ Թուրքերն այդ է՛լ չեն ճանաչում։ Ոմանք հին Աղվանքի կամ հունահռոմեական աղբյուրների Ալբանիայի վրա աչք դնելով՝ ստեղծեցին հատուկ տեղանուններ։

Մինչդեռ Վանի Թագավորության սեպագրերից հայանի տեղանունների մեծագույն մասը,— այսինքն՝ բոլոր նրանք, որոնց «առարկաները» շարունակել են իրենց գոյությունը նաև հետագա դարերում,— պահպանվել են անմիջական ժառանգորդ հայկական միջավայրում։ Եվ, ինչպես պետք էր սպասել, ավանդված խուռիական տարբերակները ենթարկվել են միայն աննշան փոփոխությունների՝ կապված հայերենի ուղղագրության հետ։ Ահա այդօրինակ տեղանուններից մի շարք. Արիլիան-Արեղյանք, Ադախունի-Ադախ (Արցախում), Ահուրիանի-Ախուրյան, Ալզնի-Աղձնիք, Գիարնիանի-Գառնի, Հալիտի-Խաղտիք, Ծուպանի-Սոփք, Իրբունի-Էրեբունի-Երևան, Նայիրի-Նաիրի, Ուելիքունի-Գիեհունի-Գեղարքունի, Կումախա-Կամախ, Տուշպա-Տոսպ և այլն։

Շուրջ հարյուր տարի առաջ, երբ սեպագրագիտությունն իր առաջին քայլերն էր կատարում, խոշոր արևելագետ և Վանի սեպագիր նյութերի հմուտ մեկնաբան Քերովբե Պատկանյանը համոզված էր, թե այդ նյութերից պիտի ենթադրել, որ «նույնն են ուրարտացիներն ու հայերը»[1]։

Պատկանյանը Ռուսաստանի Ակադեմիայի առաջին խորթաթափանց հետազոտողներից մեկն էր, որ սեպագրերի տեղեկությունները քննում էր հինարևելյան աղբյուրների ընձեռած տվյալների, հայ ժողովրդի պատմության և հայերենի բաղմակողմանի քննության հիմնապաստառի վրա։ Եվ շնչած Վանի սեպագրերի լեզվի վերաբերյալ վերջնական ու համոզիչ կարծիքն ապագան էր ասելու, նա այդ սեպագրերի արդեն իրեն հայտնի տվյալներից և հարակից նյութերից եզրակացրել էր, «թե հայերն այն ժողովուրդն են, որը փորագրել է այդ արձանագրությունները, սակայն նրա լեզուն այլևս այն չէ, որով նա խոսել է այն ժամանակ»

1 К. Паткенов, Ванские надписи..., СП, 1881, էջ 150.

(«Мы имеем основание думать, что армяне тот народ, который начертал эти надписи, а язык их уже не тот, каким он говорил в то время»[1].

Հայերն այն ժողովուրդն են, լեզուն այն չէ...

Մինչև Պատկանյանի այս կարծիքի հրապարակումը գերմանացի արևելագետ Մորդտմանը Վանի սեպագրերի լեզուն համարում էր հայերենը։ Շատ հետո՛ պիտի պարզվեր, որ Վանի թագավորներն իրենց սեպագրերի համար օգտագործել են նախ ասուրաբաբելերեն լեզուն, ապա խուռիերենը։ Իսկ այս խառնակ պատկերացումների մե՛ջ անգամ Պատկանյանը չէր հրաժարվում իր այն համոզումից, որ Վանի թագավորությունի սեպագրերի հեղինակն ու տերը հայ ժողովուրդն է։ Եվ նա նույնիսկ «Վանի» հատկացուցիչը կամ որոշիչն էլ հակամետ էր մեկընդմիշտ փոխելու «հայկական»[2], որովհետև նրանք միայն և միայն պատմական Հայաստանում էին սփռված, իսկ ինքն այն գլխից համոզված էր և պնդում ու հաստատում էր նաև, որ այդ երկրի տեղաբնիկն ու տերը ոչ այլ ժողովուրդ է, քան հայը՝ իր ծագման օրերից ի վեր այնտեղ բնակված, իր քաղաքական ու տնտեսական անընդմեջ կյանքն այնտեղ ապրած և այն ամբողջ տարածքի վրա իր ինքնատիպ նյութական ու հոգևոր մշակույթի բազմատեսակ արժեքներն ստեղծած[3]։ Տասնամյակների ընթացքում պիտի հավաքվեին, վերծանվեին, թարգմանվեին սեպագրերի մի քանի հարյուր բնագրեր, որոնց հիման վրա գրվել են գիտական բազմաթիվ հետազոտություններ։ Պիտի ցույց տրվեին Նայիրի-Բիաինիլի-Ուրարտու երկրի քաղաքական, տնտեսական կյանքի դարձդարձումները, շինարարական ոգորումներն ու մշակույթի առանձնահատկություն-

1 Անդ, էջ 32։

2 «... Утвердилось за ними (клинописными надписями — Б. У.)... название Ванских, хотя было бы в настоящее время гораздо точнее называть их армянскими — не потому, чтоб язык, в них заключающийся, был армянский, а потому, что они ныне помимо Вана попадаются также на всем пространстве древней Армении» (К. Паткенов, О клинообразных надписях Ванской системы, открытых в пределах России, СП, 1883, стр. 1).

3 К. Паткенов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СП, 1881, էջ 132, հատկապես 148—149.

ներքը... Սակայն, բոլորովին էլ չթերագնահատելով կատարված հսկայական աշխատանքի նշանակությունը, չի կարելի չնշել, որ դեռ չեն կարդացվել սեպագրերի խորքային շերտերը։ Եվ պատահական չէ, որ այսօր էլ դեռևս սեպագրերի հեղինակների, երկրի տերերի, այն վիթխարի պետության հիմքը կազմած ժողովրդի էթնիկական պատկանելության մասին հետազոտողները չունեն շատ ավելի պարզ պատկերացում, քան արտահայտել է արժանահիշատակ Պատկանյանը ավելի քան հարյուր տարի առաջ։

Պատմության խորքերը պիտի գնալ նրա հազարամյա առեղծվածները լուծելու, հին ճշմարտությունները պարզելու ազնիվ մղումներով։ Եվ այն ժամանակ սեպագրերը կխոսեն ամբողջ ձայնով, հետազոտողների առաջ կբացեն իրենց խորքերը մինչև հատակ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախորդ մեր զրույցներից կարելի է հանգել հիմնական մի շարք եզրակացությունների, որոնցից ամենակարևորներն են.

ա) Հայ ժողովրդի ծագումը տեղի է ունեցել Հայկական բարձրավանդակում, և այստեղ էլ անընդմեջ անցել է նրա պատմական կյանքը։

բ) Միջագետքյան վաղագույն գրավոր աղբյուրներում (ք. թ. ա. 3-րդ հազարամյակ) պահպանվել են ստույգ տեղեկություններ հայոց առաջին ցեղային միավորների («Հայ»-«արմի») և վարչական կազմավորումների («Հայք»-«Արմանի»-«Արմանում») մասին։

գ) Մ. թ. ա. 2-րդ—1-ին հազարամյակների սեպագրերում հիշատակվող «Հայասա», «Ուրուատրի», «Նայիրի», «Ուրարտու», «Թիաինա», «Արմինիա» տեղանունները «Հայք»-«Արմանիի» համանիշներն են՝ տրված տարբեր ցեղային ու լեզվական աշխարհների կողմից։

Ուրեմն, Հայկական բարձրավանդակը հայ ժողովրդի ծննդյան տեղն է ու օրրանը, նախնական, հետագայի անփոփոխ հայրենիքը, նրա քաղաքական, տնտեսական ու մշակութային բազմահազարամյա կենսագրության ասպարեզը։

Հնագիտական նյութերի, հատկապես քարե ու մետաղե գործիքների, խեցեղենի, ժայռապատկերների ու հավատքային կոթողների հիման վրա հնագետների կատարած եզրակացություններից ուշագրավն այն է, որ Հայկական բարձրավանդակում տիրապետող է եղել միասնական մեկ մշակույթ, և որ այդ մշակույթի տեր ժողովուրդն իր հայրենիքում ապրել է սկսած վաղ քարե դարից, առանց սրևէ ընդմիջման։

Մեր հինավուրց հայրենիքի վարչական կյանքի մասին խոսող առաջին վավերագրերը Էբլա քաղաք-պետության նոթահայտ նյութերն են, որոնցում Հայքը կամ Արմանումը ներկայացված է իբրև «քաղաքի երկիր»։ Իսկ սա նշանակում է, որ հիշյալ քաղաքն իր շրջականներով կազմելիս է եղել մի վարչական միավոր՝ այնքան նշանակալից ու ազդեցիկ, որ նրա իրավասությունը ճանաչում էին Միջագետքի հզոր օտարները։ Եվ սա էլ իր հերթին նշանակում է՝ արմի-հայ ցեղն արդեն իր Արմանի-Հայք երկրում հասել էր պետական կազմավորումների մակարդակին կամ շատ էլ հեռու չէր այդ մակարդակից։

Վերացական չլինելու համար այստեղ նշենք երկու շատ կարևոր այն վիմագրերը, որոնցում Արմանում-Հայքը հիշատակվում է իբրև երկիր, որն ունի իր իշխանությունը։ Առաջինը մ. թ. ա. 24-րդ դարում գահակալած աքքադական թագավոր Սարգոն Ա-ի ընդարձակ սեպագիրն է, որը պատմում է, թե ինչպես Արմանում երկիրը նվաճելով՝ նա այնտեղից տարել է մի շարք բույսեր։ Հետազոտողներն այս բույսերի ասուրական անվանումների մեջ հստակորեն ճանաչում են նրանց հայերեն բնօրինակները՝ բուք, խնձոր, ալոր-շլոր, ցիրդ։ Հետևյալ սեպագիրն էլ փորագրվել է Սարգոնի թոռ, մ. թ. ա. 23-րդ դարում գահակալած Նարամ-Սուենի կողմից և թվարկում է նրա նվաճած 17 թագավորությունները, որոնց շարքում 11-րդ տեղում հիշվում է «Արմանում քաղաքի երկրի թագավոր Մադակինան»։

Դժվար չէ վճռական եզրակացության հանգել նաև Հայք-Արմանի երկրի տնտեսության վերաբերյալ՝ ելնելով այն տվյալներից, որոնք առկա են Էբլայի սեպագրերում, Սարգոն Աքքադացու և նրա հաջորդների վավերագրերում։ Այս կրցկրտուր, բայց միանգամայն որոշակի տեղեկություններից և, մանավանդ, պեղածո հարուստ նյութերից կատարելիք առայժմ ընդհանուր եզրակացությունն այն է, որ Հայք-Արմանի երկրի բնակիչներն զբաղվում էին բազմաճյուղ գյուղատնտեսությամբ (այգեգործություն, հացագործություն, անասնապահություն), բավական հմտացած էին արհեստների մեջ և առևտրական սերտ հարաբերությունների մեջ էին հարևանների հետ։

Հայք-Արմի-Արմանի երկիրը՝ իր հայ-արմ-ուրում բնակչությամբ հիշատակվում է մ. թ. ա. երկրորդ հազարամյակի ամբողջ ընթացքում։ Եվ Հայկական բարձրավանդակի մի ընդարձակ տարածքում ստեղծված հզոր պետության, այս պետության գահակալների ու ռազմաքաղաքական գործերի առթիվ հարուստ վկայություններ են պահպանվել արևմտյան կողմից մերձավոր հարևան խեթերի վիմագրերում ու դիվանական նյութերում։

Հայասա — խեթական բևեռագրերում այսպես էր կոչվում այն ընդարձակ երկիր-պետությունը, որ տարածված էր Սև ծովի, Եփրատ գետի, Հայկական Տավրոս լեռների և Վանա լճի միջև։ Սա երկրի ու պետության անունն էր խեթական արձանագրություններում՝ փորագրված մ. թ. ա. 15—13-րդ դարերում։ Խեթերի բազմաթիվ սեպագիր արձանագրություններում վկայված են Հայասա-Հայքի տնտեսական ու պետական կյանքը, քաղաքների, գավառների անունները, նրանցում իշխած թագավորների գործերը։ Այդ սեպագրերի տեղեկությունների քննությամբ հետազոտողները եկել են այն համոզման, որ Հայասա-Հայքը եղել է ստրկատիրական պետություն՝ զարգացած գյուղական տնտեսությամբ ու արհեստագործությամբ։ Թեև խեթական պետությունը մ. թ. ա. 14-րդ դ. առաջին քառորդի գահակալ Թուդխալիա Գ-ի առաջին շրջանում տիրապետություն էր հաստատել Հայքի վրա, ապա հենց այս թագավորի օրոք էլ հայերը թոթափեցին օտարի լուծը, և Թուդխալիա Գ-ն ստիպված եղավ վերստին արշավանքի գալ դեպի Հայք։ Այստեղ նվաճողի դեմ ելավ Հայասա-Հայքի զորքը՝ Կարաննի թագավորի գլխավորությամբ։ Ճակատամարտը տեղի ունեցավ Կումմախա քաղաքից հարավ և անորոշ ելք ունեցավ։ Այդ պատճառով էլ խեթերը հետագայում քանիցս արշավանքներ ձեռնարկեցին Հայքն իրենց ենթարկելու համար։

Թուդխալիա Գ-ի հաջորդ Սուպպիլուլիումա թագավորը, Միտանի պետության դեմ կռվի ելնելով, պայմանագիր էր կնքել Հայքի թագավոր Հուկկանայի հետ, որին կնության էր տվել իր քրոջը՝ փոխարենն ստանալով նրա ռազմական օժանդակությունը։ Հետագա ժամանակներում բազմիցս տեղի են ունեցել բախումներ խեթական պետության և Հայասա-Հայքի

միջև։ Հայտնի է, օրինակ, որ Հայքի նահանգներից մեկի՝ Այդիի տիրակալ Աննիյան հարձակվել է հարևան խեթական Տանկուվա քաղաքի ու շրջակաների վրա, ասպատակել, ոտքի տակ տվել օտարի հողը։ Խեթական հարձակումներն էլ մեծ վնասներ են պատճառել Հայասա-Հայքի հարավ-արևմտյան շրջաններին, որոնցից Վերին Եփրատի ավազանը մնաց խեթերի տիրապետության տակ։

Խեթական պետությունը կործանվեց մ. թ. ա. 13-րդ դարի վերջում։ Եվ դրանից հետո Հայասա-Հայքի մասին վերստին սկսեցին տեղեկություններ հաղորդել ասորեստանյան սեպագրերը։ Այսօրինակ աղբյուրներից առայժմ հայտնի առաջին վկայությունները գտնվում են Ասորեստանի թագավոր Թուկուլթի Նինուրտա Ա-ի (1243—1221) արձանագրություններում։ Այստեղ Հայասա-Հայքի փոխարեն երկրի անունը Նայիրի է կամ Ուրուատրի։

Հայասա-Հայքի թագավորությանը վերաբերող տեղեկությունները մարել են խեթական թագավորության կործանման հետ միաժամանակ՝ 13-րդ դարի վերջում։ Սակայն սա բոլորովին էլ չի նշանակում, թե մարել է նաև Հայքի պետությունը։ Պարզապես խեթական պետության հետ լռել են խեթերի սեպագրերը, որոնց փոխարինելու եկավ հայերի ու Հայաստանի մասին վաղնջական վկայություններ պահպանած միջագետքյան քաղաքակրթությունը։ Հենց 13-րդ դարից սկսած էլ ասուրերեն սեպագրերի մեջ հաստատուն տեղ բռնեց Նայիրի անունը, որը Հայքի նոր հորջորջումն էր և պետք է փոխանցվեր նաև հաջորդ հազարամյակին, երբ ըստ ասորեստանյան սեպագիր աղբյուրների, մեր հայրենիքի ընդարձակ տարածքում ստեղծվել էր մի նոր ու հզոր պետական կազմավորում՝ **Վանի (հետագայում՝ Արարատյան) թագավորությունը։**

Մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբից Հայկական բարձրավանդակի մեծ մասն զբաղեցնում էր այն խոշոր պետությունը, որն սկզբնապես իր վարչական կենտրոնի անունից պետք է կոչվեր Բիաինա, այսինքն՝ Բիաին-Վանի թագավորություն, իսկ հետագայում՝ Արարատյան թագավորություն, այն պարզ պատճառով, որ վերջին շրջանում Արարատյան երկիր էին փոխադրվել վարչական կենտրոնն ու տնտեսական հենակետերը։

Հին Արևելքի ամենահզոր տերություններից մեկն էր Վանի թագավորությունը։ Նրա տիրակալներն իրենց ռազմական ու տնտեսական մեծագործություններն անմահացնում էին հայրենի երկրի տարբեր վայրերում փորագրած ասուրերեն ու խուռիերեն սեպագրերում։ Նրանք ունեին իրենց աստվածները համատեղությունը, որի մեջ առաջին տեղում էր Հալդին՝ թագավորության հովանավորն ու հզորության աղբյուրը։ Ապա գալիս էին ռազմի աստված Թեյշեբան, Արևի աստված Շիվինին, սրանից հետո էլ՝ այլազան աստվածներ, հավանաբար երկրի տարբեր նահանգների և միավորված երկրների պաշտամունքի կուռքերը։

Տուշպա-Վանն էր թագավորության քաղաքամայրը։ Իսկ հոգևոր կենտրոնը գտնվում էր Վանից հարավ-արևելք։ Վանի տերերն այն կոչում էին Արդինի, ասորեստանցիները՝ Մուսասիր։ Այստեղ էր գտնվում Հալդիի տաճարը՝ այդ գլխավոր աստծո ոսկեձույլ արձանով։ Արդինիի սրբատեղիներում էին պահվում Վանի թագավորների բրոնզե հսկա արձանները։

Վանի թագավորության առաջին իսկ շրջանից մնացած վավերագրերը ցույց են տալիս, որ հենց այն գլխից այս պետության մեջ է մտել նախորդ հազարամյակի Հայասա-Հայքի ամբողջ տարածքը։ Ուրեմն, չի կարելի կասկածել, որ պետության կազմի մեջ տիրապետող է եղել հայ ժողովուրդը՝ Հայքի բնիկ տերը։

Վանի թագավորներից առաջինը, որի մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում Ասորեստանի արքաների թողած սեպագրերը, ինչպես նաև Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Արամն է։ Նրա գահակալությունը եղել է մ. թ. ա. 9-րդ դարի առաջին կեսում։ Ըստ երևույթին, Արամի թագավորությունը տարածված է եղել Վանա լճի շրջակայքի և հարևան բավական ընդարձակ մարզերի վրա, որոնք նախորդ շրջանում ներգրավված էին Հայասա-Հայքի կազմի մեջ։ Արամի օրոք Ասորեստանի Սալմանասար Գ թագավորն արշավանքների է ելել 859, 857 և 845 թթ., կատարել ասպատակություններ ու ավերածություններ։ Ինքը՝ զոհոզ ասորեստանցին, իր արձանագրություններում այդ արշավանք-

ների արդյունքներն այնպես է ներկայացնում, որ թվում է, թե Հայքում այլևս չպետք է թողած լինի ոչ մի շունչ-կենդանի (մի անգամ, իբր, Սուզունիա ամրոցը նվաճելուց հետո, Արամի հազարավոր զինվորներին է գլխատել ու կառափներից աշտարակ վեր հանել)։ Սակայն պարբերաբար արշավանքի գալն ինքնին հաստատ վկայություն է, որ Արամի երկիրը երբեք չի ընկճվել ու չի հպատակվել բռնագրավչին։ Վերջապես նվաճումներին վերաբերող սեպագրերում խոսք անգամ չկա թագավորության գահանիստ Տուշպա-Վանը գրավելու, նույնիսկ դեպի Վանի շրջակայքն արշավելու մասին։ Իսկ սա լուրջ հիմք է՝ մտածելու, որ ասորեստանցիները միշտ էլ հակահարված ստանալով հետ են դարձել, առանց թագավորության սրտին հասնելու։

Արամի կերպարն ամբողջանում է հայ ժողովրդի ավանդություններից և վաղնջական գրավոր աղբյուրներից Մ. Խորենացու Պատմությանն անցած տվյալներով։ Պատմահայրն ասում է. «Արամը շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերի վրա»։

Մար Աբասի մեհենական մատյանի տեղեկությունները շարադրելով՝ Խորենացին գրում է, թե Արամն «աշխատասեր, հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը, լավ էր համարում մեռնել հայրենիքի համար, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»։

«Լավ էր համարում մեռնել հայրենիքի համար...»։

Եվ մեր քննախույզ պատմիչը հանգամանորեն ներկայացնում է հաղթական այն ճակատամարտերը, որ Արամ թագավորն էր վարում հարևան բռնակալ տերությունների դեմ՝ իր հայրենիքի ազատությունն ու անկախությունը հաստատ պահելու համար։ Ահա նա կռվում է մեդացիների դեմ, որոնց առաջնորդում է ոմն Նյուքար Մադես։ Արամն իր քաջ նիզակավորների գլուխն անցած կոտորում է Հայաստանն ասպատակող մեդացիներին, իսկ Նյուքար Մադեսին էլ կենդանի բռնելով՝ վարսել է տալիս իր երկրի մայրաքաղաքի պարոպի աշտարակին, նաև ցից մխելով ճակատի մեջ՝ իբրև ահեղ

զգուշացում բոլոր նրանց, ովքեր չարությամբ կգան Հայոց երկրի վրա։

Այս ճակատամարտը հաղթով ավարտած, Արամ թագավորն ստիպված է լինում գնալ դեպի հարավ-արևելյան սահմանները, որտեղ ասորեստանյան զորքերն էին ասպատակ փռում իրենց քաջահմուտ զորավար Բարշամի գլխավորությամբ։ Այս պատերազմում սպանվում է Բարշամը։ Նրա զորքերը կորդիք նահանգում ջարդվելով հետ են շպրտվում Ասորեստանի դաշտը, և վերստին ազատ շունչ են քաշում Ասորեստանին սահմանակից հայկական գավառները։

Արևմուտքում ևս Արամ արքան իր երկիրը օրհասական կռիվներով է պաշտպանում օտարներից։ Այստեղ էլ նա ճակատամարտ է տալիս Տիտանյան Պայապիս Քաղլայի դեմ, ազատագրում Կեսարիան և այնտեղից մինչև բուն Հայաստանն ընկած երկրամասի բնակիչներին «հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն» («բայց հրաման տալ բնակիչց աշխարհին ուսանել զիսսս և զլեզուս հայկական»)։

Մ. թ. ա. 833 թ. Սալմանասար Գ-ի զորքերը վերստին արշավանքի են գալիս Հայքի թագավորության վրա։ Այս անգամ նրանց դեմ է ելնում Վանի նոր գահակալը, որին ասորեստանցիները կոչում են Սեդուր։ Այս ճակատամարտի ելքը պատմելիս Սալմանասարի տենդը մի քիչ նստած է. իր զորքն անցել էր Արածանին, և «Սեդուր ուրարտացին լսեց այդ մասին և, հույսը դնելով իր բազմաքանակ զորքի հզորության վրա, ինձ ընդառաջ ելավ, որպեսզի ճակատ հարդարի և կռիվ տա։ Ես մարտնչեցի նրա հետ և պարտության մատնեցի. նրա զինվորների դիակներով ես ծածկեցի լայն դաշտը»։

Սակայն մեզ է հասել Սեդուր-Սարդուրի սեպական արձանագրությունն ասուրերեն, որից չի երևում, թե նա պարտություն կրած կողմն է եղել։

Վանի մոտ պահպանվել է վիթխարի ժայռաբեկորներից կազմված մի պարիսպ, որի քարերի վրա գտնվել են Սարդուր Ա-ի երեք արձանագրությունները՝ նույն բովանդակությամբ։ Ահա թե ինչ է գրված այնտեղ. «Այս գիրն է Սարդուրի՝ Լուտիպրիի որդու, մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերական արքայի, Նայիրի երկրի արքայի, այն արքայի, որի հավասարը չկա, զարմանալի հովվի, ճակատամարտերից չերկնչող,

անհնազանդներին ծնկի բերող արքային։ Սարդուրը՝ Լուտիպրիի որդին, արքայից արքան, որը բոլոր արքաներից տուրք էր ընդունում։ Այսպես է ասում Սարդուրը՝ Լուտիպրիի որդին. «Ես այս քարերը բերեցի Ալնիունու քաղաքից, կառուցեցի այս պարիսպը»։

Վանի թագավորությունն զգալիորեն ծավալվեց ու հզորացավ, քաղաքամայրն ու երկրի բերդամրոցները վերակառուցվեցին, ամրացան Սարդուրի ու նրա որդի Իշպուինիի (925—810) գահակալության տարիներին և մանավանդ Իշպուինիի ու նրա որդի Մենուա Ա-ի համատեղ ջանքերով։ Մենուայի սեպագրերից դատելով՝ պետք է կարծել, որ նրա թագավորությունը հարավում արդեն բախվում էր Ասորեստանի հետ՝ երանից խլած լինելով մի շարք շրջաններ։

Հյուսիսում սահմանային դիծ էր Երասխ գետի ընթացքը, չնայած հայտնի է, որ այս գետի ձախափնյակում հիմնավորապես տարածվել էր Մենուայի ազդեցությունը։ Թագավորության հոգևոր կենտրոն Արգիշի-Մուսասիրը բարգավաճեց, այնտեղ կառուցվեցին պաշտամունքային կարևոր շենքերը։

Մենուայի գահակալությունը նշանավորվեց երկրի տնտեսության մեծ վերելքով, որի համար ձեռնարկված միջոցառումների շարքում հատուկ տեղ է բռնում 80 կմ երկարություն ունեցող ջրանցքի անցկացումը Վանի մոտ։ Այս ջրանցքը, որի հզոր հենապատերն այժմ էլ ջրաշինարար մասնագետների զարմանքն են շարժում, կառուցվել էր պետության կենտրոնը ոռոգման ու խմելու ջրով ապահովելու համար և իր այս դերը կատարում էր նաև հետագա դարերում։

Տուրուբերան գավառում, Արածանիի մոտ Մենուան կառուցել է քաղաք, որն իր անունով էլ կոչվել է Մենուակերտ (հետագայի Մենուա-ղ-կերտ→Մենազկերտ→Մանազկերտը)։ Մենուայի կողմից է կատարվել նաև Արարատյան նահանգի ու հարևան շրջանների միավորումը միասնական պետությանը։ Այս երկրների վրա քաղաքական ու տնտեսական հզոր ազդեցության հաստատումն ավարտվեց մի շարք վարչական կենտրոնների կառուցումով։ Դրանցից էր Մենուա արքայի կառուցած Մենուախինիլի բերդաքաղաքը Մեծ Մասսի հյուսիսային լանջին, Երասխի աջափնյակում (հետագայի Ցոլակերտը՝ Դաշբուրուն գյուղի տեղում)։

Վանի թագավորության պատմությունը զարգացող էջերից է Մենուայի որդի Արգիշտի Ա-ի (786—760 թթ.) գահակալության շրջանը՝ հագեցած ռազմաքաղաքական մեծ հաջողություններով և տնտեսական ու մշակութային այնպիսի նախաձեռնություններով, որոնք այդ արքային դասում են հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենանշանավոր գործիչների շարքը։

Հայր Մենուայի օրինակը վարակիչ էր եղել եռանդաշատ Արգիշտիի համար, և սա կարճ ժամանակում ամրապնդեց իր տերության դիրքերը հարավում ու հյուսիսում, ձեռնարկեց շինարարական այնպիսի մեծագործություններ, որոնք փառավորեցին նրա անունը։

Արգիշտի Ա-ի գահակալության առաջին տասնհինգ տարիների գործունեության համար հանգամանալից աղբյուր է հանդիսանում նրա իսկ փորագրած հայտնի տարեգրությունը Վանի հարավ-արևմտյան կողմում գտնվող Խորխոր ժայռին («Խորխորյան տարեգրություն»)։ Այս վավերագրի համաձայն՝ Արգիշտիի առաջին մտահոգությունն են եղել հայր Մենուայի հյուսիսային ծավալումների շարունակումն ու ամրապնդումը։ Եթե Մենուան իր պետությանն էր կցել Արարատյան նահանգը՝ հարևան գավառներով, ապա Արգիշտին իր տիրապետության տակ առավ Սևանի ափերը, արևմուտքում վերջնականապես տիրեց Դիաուեխի-Տայքին, Դարիունիին (Դարույնք՝ Բասենում), Ջարախային (Ջավախք), Էտիունիի (Արարատյան նահանգ) ծայրամասային գավառներին, որոնք գեռևս հիմնավորապես չէին յուրացված իրենից առաջ։ Եվ այս ծավալումների պաշտպանության համար մ. թ. ա. 782 թ., իր գահակալության 5-րդ տարում, Արարատյան երկրի սրտում Արգիշտին կառուցեց Էրեբունի (հետագայի Երևան) բերդաքաղաքը, ուր պիտի պահվեին մեծաքանակ զորք և ռազմագերիների մի մեծ զանգված։ Ահա այս առթիվ փորագրված արձանագրությունը, որը փաստորեն Էրեբունի-Երևանի ծննդյան վկայականն է՝ 1950 թ. հայտնաբերված բերդաքաղաքի փլատակների պեղումներից Երևանի հյուսիս-արևելյան եզրում. «Հալդի աստծու վեհությամբ Արգիշտի Մենուաորդին կառուցեց այս փառահեղ ամրոցը, [այն] Էրեբունի անվամբ կնքեց հանուն Բիաինա երկրի հզորության և ի սարսափ թշնամական երկ-

կբրներին։ Արգիշտին ասում է. Հողն [այստեղ] մերկ էր, և ես հզոր գործեր կատարեցի։ Հալդի աստծու վեհությամբ Արգիշտի Մենուաորգի՝ հզոր արքա, Բիաինա երկրի արքա, Տուսպ քաղաքի տիրակալ»։

775 թ. Արգիշտին Արարատյան երկրում, նրասխ գետի ձախ ափին կառուցեց մի քաղաք ևս՝ այն իր անվամբ կոչելով Արգիշտիխինիլի, որը հետագա դարերում պետք է ծաղկեր, դառնար հաջորդ թագավորական գահատեղի (նրվանդունիներ) աթոռանիստը և վերակոչվեր Արմավիր։

Վերջին տասնամյակների պեղումներով արևերես է ելել նաև Արգիշտիխինիլի «ծննդյան վկայականը»՝ փորագրված հզոր արքայի անունից. «Հալդիի վեհությամբ Արգիշտի Մենուաորգին ասում է. «Ես կառուցեցի փառահեղ բերդաքաղաք, կոչեցի այն Արգիշտիխինիլի։ Հողն ամայի էր, ոչինչ կառուցված չէր այստեղ։ Ես գետից չորս ջրանցք հանեցի, խաղողի և պտղատու այգիներ գցեցի, կատարեցի մեծագործություններ»։

«Խորխորյան տարեգրությունից» և բազմաթիվ ուրիշ արձանագրություններից հայտնի է, որ Արգիշտին վիթխարի նվաճումներ է կատարել նաև երկրի մյուս սահմաններում։ Հարավ-արևմուտքում նա իր տերությանն է միացրել Նիրիբա և Խաթե երկրները, արևմուտքում Մելիտեան (Մալաթիա) ու Կամանան (Կամանենու)։ Այս և այլ նվաճումներով Արգիշտիի տերությունը հզորացել էր այնքան, որ բախումն Ասորեստանի հետ դարձել էր օրակարգի հարց, մանավանդ որ այդ նվաճումների հետևանքով Ասորեստանն իրեն ոչ միայն նեղված էր զգում ազդեցությունների ոլորտում, այլև պարզապես գուշակում էր, թե ինչպես մի օր էլ իր վրա կախվելու է օրեցօր մոտեցող աղետը։ 781 թվականից սկսած Արգիշտիի ու Ասորեստանի զորքերը ճակատում էին իրար դեմ։ Արգիշտին նվաճեց Խուրուշկիան (Արևելյան Տիգրիսի ավազանում), Ուրմիա լճից հարավ ընկած մի շարք երկրներ։ Ճիշտ է, այս ճակատամարտերին վերաբերող ասորեստանյան վավերագրերում դարձյալ հնչում է պարծենկոտ պոռոտախոսություն։ Հնարավոր է մտածել, որ իրենք՝ ասորեստանցիները, ևս ունեցել են մասնակի հաջողություններ։ Սակայն չի թաքցվում սարսափը Արգիշտիի հզորության առաջ։ Սալմանասար Գ-ի

զորավար Շամշիիլուն է խոստովանել, թե «Արգիշտիի անունն իսկ սարսափելի է, ինչպես ահռելի փոթորիկը, նրա ուժերն անքանակ են...»։

777 թ. և հաջորդ տարիների արշավանքներով Արգիշտին վերջնականապես իրեն ենթարկեց Ուրմիա լճից հարավ ու հարավ-արևելք ընկած երկրները, մանավանդ Մանան, Բուշտուն, Բարուատան, Բարշուան, Բաբիլուն, որոնցով Վանի թագավորությունը հասավ իր հզորության բարձրակետին։ Այստեղ, ինչպես նաև Մենուայի օրոք, Հայքի այս աննախադեպ թագավորության սահմանների մեջ էր առնված Հայկական բարձրավանդակի հիմնական մասը՝ Ուրմիա լճի արևելյան ափերից մինչև Տայք, Ճորոխի ավազանը և Սևանի շրջականներից մինչև Եփրատի վերին ու միջին հոսանքները, մի ընդարձակ տարածք, որի համարյա բոլոր կողմերում էլ տիրապետող է եղել հայ էթնիկական տարրը, և որ միշտ էլ պիտի մնար հայկական պետականության տապարեղը։

Արգիշտիի օրոք առավել լայն ծավալ էր ստացել բաղմաճյուղ տնտեսության զարգացման, երկրի շենացման ընթացքը։ Ջրանցքների կառուցումը, քաղաքների հիմնումն ու զարգացումը, նվաճողական պատերազմներով ձեռք բերված անհուն հարստությունները ծառայում էին երկրի բոլոր նահանգների անընախընթաց վերելքին։ Սեպագրական վկայություններից երևում է, որ թագավորը շրջապատված է եղել մի փարթամությամբ, որից ծաղկում էին արվեստները, հավատքի ու հավատալիքների տապարեղը, նույնիսկ մարդական կյանքը։

Վանի թագավորության ծաղկման տարիներ են համարվում նաև Սարդուր Բ-ի (764—735 թթ.) և նրա որդի Ռուսա Ա-ի (735—713 թթ.) գահակալության տասնամյակները։

Սարդուր Բ-ի ընդարձակ տարեգրությունը, որ հիմնականում նվիրված է արքայի 754—737 թթ. գործունեությանը, ճշգրիտ տվյալներ է պարունակում այս ձեռներեց գործչի այն միջոցառումների մասին, որոնք ուղղված էին թագավորության տարբեր վայրերում, մանավանդ միջագետքյան շրջաններում ծայր առած պառակտչական ընդվզումները ճնշելուն, և թագավորը ոչ միայն զսպում էր խռովարարներին, նրանց դնում ծանր հարկերի տակ, այլև ավելի էր ծավալում

երկրի սահմանները, պարտության մատնում Ասորեստանի թագավոր Աշշուրներարի Զ-ին (753—746)։ Երկրի էթնիկական ու վարչական միասնությունն ապահովելու համար խոշոր նշանակություն են ունենում Սարգուր Բ-ի հյուսիսային արշավանքները, որոնց շնորհիվ վերջնականապես թագավորությանն են միանում Սևանի արևելյան ափերը, ներառյալ Արկուկինի (հավանաբար Սյունիքի հյուսիս-արևելյան գավառի անուն), Ուրտեխե (Արցախ) երկրները, Կասպից ծովի հարավ-արևմտյան ափի Գուլուազի երկիրը (հավանաբար հետագայի Փայտակարանը)։ Իսկ հյուսիսում և հյուսիս-արևմուտքում նվաճվում են Աբելիանին (Աբեղյանք), Կուլխան (Կողբիս-Կոլխիդա) և Սև ծովի հարավ-արևելյան ափի Խուշանի երկիրը։

Մակայն շուտով Ասորեստանում գահ է բարձրանում Թիգլաթպալասար Գ-ն (745—737), որի գահակալությունը վերջին անգամ շունչ է ներարկում դեպի անկում գնացող բռնապետությանը։ Ասորեստանը վերստին բարձրանում ու հզորանում է՝ ձգտելով վերականգնել իր տիրապետող դիրքն Արևելքի երկրներում։ Թիգլաթպալասարի բանակները 743 թ. Կոմագենում լուրջ հարված են հասցնում Սարգուր Բ-ին ու նրա դաշնակիցներին, իսկ 735-ին ավերիչ ռազմերթով անցնում են Հայքի թագավորության տարածքով, պաշարում արքայական ոստանը, ապա չկարողանալով տիրանալ հզոր միջնաբերդին, ավերում են քաղաքը և հեռանում։

Աղբյուրների սուղ տվյալներից կարելի է ենթադրել, որ այս ծանր հարվածից հետո Սարգուր Բ-ն արևելքում ու հարավում, Ասորեստանի սահմանների մոտ, այլևս հույս չունենալով լուրջ հաջողությունների, ուժերը միավորել է երկրի կենտրոնական մասերում և հյուսիսային ու հյուսիս-արևմտյան նահանգներում։ Եվ այստեղ էր տերության քաղաքական ու տնտեսական ուժերը զարգացնում։ Այստեղ էր պատրաստվում գալիք հաղթական ելույթների համար՝ հավանաբար մտածելով, թե լավ է երկրի կենտրոնական ու հյուսիսային շրջաններում ամրապնդել տերության ռազմական ու տնտեսական հիմքերը, քան թե հույս դնել օտար հողերի նվաճմամբ ու ասպատակություններով հարստանալու կասկածելի և անհուսալի եղանակի վրա։ Իր գահակալության

առաջին տարիներին այս քաղաքականությամբ էր առաջնորդվում նաև Սարգուրին հաջորդած Ռուսա Ա-ն։ Նախ և առաջ նա բուժեց հոր անհաջողություններով երկրին հասցված վերքերը. Վանի մոտ կառուցեց Ռուսախինիլի ոստանը, այն դարձրեց գահանիստ, Սևանի շրջանում ամրոցներ հիմնեց («Հալդի աստծու քաղաք», «Թեյշեբա աստծու քաղաք»)՝ ծրագրելով այս կողմերի բարբեր պայմաններում, մանավանդ Արարատյան երկրում, զարկ տալ երկրագործությանն ու անասնապահությանը։ Ապա, օգտվելով Ասորեստանում ստեղծված քաղաքական հեղհեղուկ վիճակից, շարժվեց դեպի հարավ, Արդինի-Մուսասիրի կառավարչի հետ միասին հարձակումներ գործեց ասորեստանյան լեռնային նահանգների վրա, ձեռք բերեց հսկայական ավար և այս հաղթանակների պատվին տոնախմբություններ կատարեց Մուսասիրի գլխավոր տաճարում։

Սակայն Ասորեստանը չ՚ը կարող հանդուրժել իր գլխավոր թշնամու ռազմաքաղաքական նոր վերելքը։ Սալմանասար Ե-ից հետո գահ բարձրացած Սարգոն Բ-ն (722—705) լրջորեն նախապատրաստվում էր Վանի թագավորությանը վճռական հարված հասցնելու։ Նրա գահակալության հենց առաջին տարում Վանում և երկրի զանազան կենտրոններում հայտնվում են Սարգոնի հետախույզները, խառնակիչներն ու դավադիրները։ Պահպանվել են սրանց զեկույցները, որոնցում Սարգոնին հաղորդվում են տեղեկություններ Վանի թագավորության ուժերի դասավորության մասին, թագավորի ու նրա կառավարիչների գործունեության վերաբերյալ, հատկապես ուշադրություն է դարձվում ռազմական տեսակետից թույլ կետերի վրա, որոնք գալիք պատերազմում հենարաններ պիտի դառնային Սարգոնի համար։

Այս ընթացքում երկու կողմերն էլ ունենում են հետախուզական մեծ ու մեծ մարտեր, որոնց շնորհիվ Մանայի ու հարևան նահանգների վրա փոխնիփոխ հաստատվում է մեկի կամ մյուսի տիրապետությունը։ Եվ այսպես հասնում է վճռական ճակատամարտի պահը. 714 թ. Սարգոնի զորաբանակը Մանայի վրայով շարժվում է դեպի Արարատյան թագավորություն։ Մանայի տերը, տեսնելով ասուրական բանակի ահռելի ուժը, ստիպված է լինում ընդառաջ գնալ և

համբուրել Սարգոնի ոտքերը, որ նշանակում էր հպատակություն և հավատարմության երդում։ Ապա նույնն են անում Ռուսայի հարավային մյուս դաշնակիցներն ու հպատակները։ Սարգոն Բ-ի և Ռուսայի բանակների առաջին մեծ բախումը տեղի է ունենում Ուասուշ լեռան վրա, հավանաբար Մանայի ու Հայքի սահմանագլխին։ Հաղթում է Սարգոնը՝ գերի վերցնելով Ռուսայի գերդաստանի 260 անդամներին։ Ռուսայի զորքի մնացորդները թիկունք են դարձնում, և ասորեստանցիները նրանց հետապնդում են Ուրմիա լճի ափերով, դեպի Վանա լճից հարավ ընկած շրջանները՝ ճանապարհին կողոպտելով և ավերելով բերդերն ու բնակավայրերը։ Նույն բախտին է արժանանում նաև Մուսասիր-Արդինին՝ Ռուսայի թագավորության հոգևոր կենտրոնը, որտեղից նվաճողները բռնագրավում են անհամար հարստություն՝ ոսկի, արծաթ, թանկագին քարեր, Իշպուինիի, Արգիշտի Ա-ի և Ռուսա Ա-ի բրոնզե արձանները։

Սարգոնի տարեգրության մեջ այս ճակատամարտը նկարագրված է Ռուսայի ու նրա բանակի համար չափազանց անփառունակ երանգներով։ Իբր թե, իր զորքերի պարտությունն ու երկրի ավեր-ավարը տեսնելով՝ Ռուսան իրեն զարկեց գետնին, պատառոտեց զգեստները, ողբաց իր երկրի գառը վիճակը, վերջն էլ ինքնասպան եղավ։

Թե որքան ստույգ է այս ամենը, դժվար է պարզել, քանի որ մեզ է հասել միայն դեպքերի սարգոնյան նկարագրությունը՝ միակողմանի, սնապարծ ու ամբարտավան։ Ի՞նչ արժե, օրինակ, այս տարեգրության տեղեկությունը Ռուսա Ա-ի ինքնասպանության մասին՝ 714 թ. առումով, երբ նույն տարեգրության մեջ Ռուսան կենդանի է համարվում նաև մեկ տարի անց՝ 713 թ.։

Ինչևէ։ Ռուսայի պարտությունը ճակատագրական եղավ երկրի ողջ պատմության համար։ Այն ըստ էության դարձավ Վանի կամ Արարատյան թագավորության անկման սկիզբը, որից հետո, ճիշտ է, երկրի քաղաքական կյանքը կարճատև վերելքներ ունեցավ, երբեմն նույնիսկ հաղթական ճակատամարտեր վարեց դարավոր թշնամու՝ ասորեստանյան բռնապետության դեմ, բայց և այնպես օկսվել էր ձախորդությունների շրջանը, տեղի ուներ պետական կյանքի մի

անկում, որն անհաղթահարելի պիտի լիներ հաջորդ դահակալների համար, ավելի քան մեկ դար շարունակ։

Ռուսա Ա-ի որդի և հաջորդ Արգիշտի Բ-ի (713—685) քանքերն առավելապես ուղղված էին երկրի տնտեսության վերականգնմանը, և աղբյուրների կցկտուր տեղեկություններից երևում է, որ նա հաճախ խաղաղության ու բարիդրացիական հարաբերությունների է կոչել Սարգոն Ա-ին, նրա հաջորդ Սինախերիբին (705—681) և մնացած ռազմատենչ հարևաններին։ Այս թագավորի անունից հայտնի սեպագրերից ամենահետաքրքիրը Վասպուրականի Արճեշ քաղաքի մոտ գտնվածներն են, որոնք պատմում են քաղաքը կառուցելու, արհեստական լիճ ստեղծելու, ջրանցք անցկացնելու և այգիներ գցելու մասին։

Արգիշտի Բ-ի որդի Ռուսա Բ-ի (685—645) գահակալության տարիները դարձան Վանի թագավորության քաղաքական ու տնտեսական աշխուժության ժամանակաշրջան։ Նոր գահակալը հավանաբար զգուշանում էր Ասորեստանի հետ ուժ չափելուց։ Նա իր երկրի սահմանները ծավալեց հարավ-արևմուտքում՝ այնտեղ նվաճելով Մուշկերի երկիրը, Խաթեն, Խալիտուն և այլ շրջաններ։

Ռուսայի գահակալության չորս տասնամյակներին, անկասկած, գերակշիռ նշանակություն ունեին խաղաղ-շինարարական գործերը։ Բավական է հիշել, որ նա Վանա լճի ափին կառուցել է Հալդի աստծու անվամբ քաղաք, հավանաբար մեր մատենագրությունից հայտնի Հայկավանը, Մակուի շրջանում՝ «Ռուսայի փոքր քաղաքը» և տաճար, Արարատյան դաշտում՝ Թեյշեբաինին («Թեյշեբա աստծու քաղաք»— Կարմիր բլուր), ինչպես նաև ձեռնարկել ջրատնտեսական ու այգեգործական կարևոր գործեր։

Ռուսա Բ-ի հաջորդների օրոք (Սարդուր Գ, Սարդուր Դ, երիմենա, Ռուսա Գ, Ռուսա Դ), 50—55 տարիների ընթացքում Վանի թագավորությունը երևի թե պահպանում էր իր քաղաքական ազդեցությունը Հայքի հարավ-արևելյան նահանգներից մինչև Արաքսի ավազանը։ Հետազոտողներն իզուր են ջանում նրան կուչ ածել կամ Վանա լճի շրջանում, կամ էլ մի խղճուկ դերով սահմանափակել Արարատյան նահանգի այս կամ այն ծայրում։ Մինչև մ. թ. ա. 7-րդ դարի վերջն էլ

Վանի թագավորները տերն էին «Տուշպա մայրաքաղաքի երկրի» և միաժամանակ Արարատի երկրում բարեկարգում էին նախորդների կառուցած բերդաքաղաքներն ու տնտեսական կենտրոնները (Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թեյշեբաինի ևն)։ Իսկ եթե թագավորությանը ենթակա մնացած երկրամասերի վերաբերյալ առայժմ չեն հայտնաբերվել աղբյուրագիտական տեղեկություններ, դա դեռևս չի նշանակում, թե թագավորությունը զրկված է եղել այդ երկրամասերից։

Մ. թ. ա. 7-րդ դարի մայրամուտին և 6-րդ դարի արշալույսին վերաբերող աղբյուրների թռուցիկ ակնարկներից ենթադրվում է, որ Հայքն այդ շրջանում ենթակա է եղել Մարաստանի նորաստեղծ թագավորությանը։ Վերացե՞լ էր Հայքի թագավորությունը՝ դժվար է ասել, քանի որ հպատակությունը չի կարելի համարել թագավորական գահի բացակայություն։ Արժանահավատ տեղեկություն կա այն մասին, որ երբ Մարաստանի հզոր արքա Կիաքսարը (հայկական աղբյուրներում՝ Վարբակես) 612 թ. նվաճում էր Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, նրան օգնություն ցույց տվեց հայ «քաջ նախարար» Պարույրը՝ Սկայորդու որդին։

Սկայորդու և նրա որդի Պարույրի մասին խոսող մեր միակ աղբյուրը Մովսես Խորենացու Հայոց պատմությունն է։ Մար Աբաս Կատինայի երկից ու ժողովրդական ավանդությունից առնելով՝ Պատմահայրը հաղորդում է այնքանը, որ հայոց առաջնորդ-նահապետների շարքում եղել է մի Սկայորդի, և սրա որդի Պարույրը, որ ժամանակակիցն էր Սարդանապալի, դարձավ դաշնակիցը մարաց Վարբակեսի, նրանք միասին տապալեցին Ասորեստանի (Սարդանապալի) թագավորությունը։ Այս ծառայության համար Վարբակեսը Պարույրին թագավոր պսակեց Հայաստանի վրա, և Սկայորդու որդին դարձավ Հայոց առաջին պսակավոր թագավորը։

Սարդանապալն Ասորեստանում գահակալել է մ. թ. ա. 7-րդ դարի կեսերին։ Եթե Սկայորդին նրա ժամանակակիցն էր, ապա նրա որդի Պարույրն էլ անպայման կարող էր Հայոց թագավոր պսակված լինել 7-րդ դ. վերջին, երբ իսկապես տեղի ունեցան Ասորեստանի թագավորության կործանումը մարաց, սկյութների և հայոց միացյալ ուժերի հարվածներից (612—605 թթ.), ապա՝ Մարաստանի հզորվելը Ասորեստանի փլատակների վրա։

Այս դեպքերն իրենց արձագանքն են գտել նաև Աստվածաշնչի էջերում։ Երեմիայի գրքում հաղորդվում է, թե ինչպես ապականված Բաբելոն-Ասորեստանի դեմ երկնային հրամանով ոտքի են ելնում «Արարատի, Մինիի (Մարաստանի) ու Ասքանազյան (Սկյութական) թագավորությունները» (Երեմիա, ԾԱ, 27)[1]։

Տարակուսանքի տեղիք է տալիս Պատմահոր տեղեկության անորոշությունը մի հարցում. նա Սկայորդու որդի Պարույրին Հայոց առաջի՞ն թագավորն է համարում, թե՞ առաջին պսակավոր թագավորը։ Մի դեպքում նա կհակասեր Վանի թագավորության առաջին գահակալներից մեկի՝ Արամի վերաբերյալ իր իսկ հաղորդածին։ Չէ՞ որ Արամը տերն էր Հայոց ընդարձակ երկրի և նույնիսկ իր կողմնապահ-կուսակալներն ուներ պետության տարբեր մասերի վրա (օրինակ. Մշակը՝ Պոտին Արմենիայում)։ Հակառակ դեպքում էլ զուտ հեղինակային-քնարական ղեղում պիտի դիտվի նրա խոսքը Պարույրից հետո եկող մեր թագավորների շարքի մասին. «...ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք»։

Ամեն պարագայի, Մովսես Խորենացին հաստատում է, որ Մարաստանի ու Ասորեստանի բախումների և առաջինի հաղթանակի ու վերելքի խառնակ ժամանակներում էլ հայ ազգն ուներ իր թագավորությունը, որի պսակավոր գահակալն էր հայկազուն Պարույրը՝ Սկայորդու որդին։ Բայց ահա մեր պատմագիտության ու բանասիրության որոշ ծառայողներ այս կետում ևս փորձում են հավատաքննության ենթարկել Պատմահորը, նրա տվյալները շուռումուռ են տալիս, և ստացվում

1 Հին հայերեն թարգմանության մեջ այս հատվածը պակասավոր է. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան գնդին» (օրինակ, «Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր կտակարանաց», Վենետիկ, 1860, էջ 865—866)։ Դուրս է մնացել Մանա (Մինի)—Մարաստանը, որի պատճառով էլ եղակի Այրարատի հոգնակի թագաւորութեանցն անիմաստ է։

Աշխարհաբար (արևմտահայերեն) թարգմանությունն ունի Մինի—Մարաստանը, որովհետև այստեղ նկատի են առնված բնագիրն ու հունարեն հնագույն թարգմանությունը։

է այնպես, թե Սկայորդին (բնիկ հայերեն բառ, որ նշանակում է ճսկայի որդի) եղել է սակի-սկյութի որդի, ո՞չ հայ։ Իբր Մարաստանի տիրակալն իր զինակից սկյութական կամ Ասքանազյան թագավորության իշխաններից մեկի որդուն գահակալ է կարգել Հայաստանի վրա, և նրանից էլ սկսվել է մեր սեփական թագավորությունը։ Նշվում է նաև, թե Պարույրն էլ հայերեն ու հայ Պարույրը չէ, այլ օտար աղբյուրներում հանդիպող Պարատատուա սակը (մ. թ. ա. 673—654 թթ.)։

Այստեղ ոտնատակ են տրվում պարզ ժամանակագրությունը (Պարատատուան՝ 7-րդ դ. առաջին կեսին, Պարույրը՝ նույն դարի վերջին), և, մանավանդ, ավելի պարզ տրամաբանությունը. Սկայորդի նշանակում է հսկայի որդի և ոչ թե սակի որդի։ Պատմահայրը սակերին ճանաչում էր որպես սկյութացիների (գիրք երկրորդ, գլ. ԺԳ) և եթե ընդուներ, որ Պարույրը սերված է սրանցից, հորը կկոչեր Սկյութորդի։ Հիշենք, որ նա չէր խորշում հայոց որոշ իշխանական տների օտար ծագումներից և հարկ եղած դեպքում անպայման շեշտում էր։

Պակաս մոլորության մեջ չեն այն հետազոտողները, որոնք առանց աղբյուրագիտական որևէ հիմքի Պարույրին համարում են սոսկ Արմե-Շուբրիայի, այսինքն՝ Հայաստանի մեկ նահանգի տիրակալը։ Այստեղ էլ անտեսվում է աղբյուրների տվյալներից ճշդորեն հյուսվող այն իրողությունը, որի համաձայն՝ Ասորեստանի կործանումից առաջ գոյություն է ունեցել Արարատյան կամ Հայաստանի թագավորություն, որի գործերն իրենց մասնակցությունն են բերել գլխավոր թշնամու ջախջախմանը, և, ի գնահատություն այս ծառայության, Մարաստանի տերը Հայոց գահի վրա ճանաչել է Պարույրի գահակալությունը, նրան պսակել արքայական թագով։

Հիշենք, որ սա սովորական երևույթ էր հին աշխարհի ու միջին դարերի պետական կյանքում. մի երկրի թագավորության գահին այս կամ այն թագավորը նստած էր լինում տարիներ շարունակ, և մեկ էլ առավել ազդեցիկ որևէ տերության գահակալը ճանաչում էր նրա գիրքը, ուղարկում թագ ու արքայական զուգաներ, ուրիշ խոսքով՝ նրան պսակում էր իր գահի վրա։

Կարծում եմ՝ այս թռուցիկ քննությունից կատարելիք միակ

եզրակացությունը պիտի լինի այն, որ Սկայորդու որդի Պարույրը Հայոց հին թագավորության շղթայի իրական օղակն է եղել։ Նա մի կողմից սկզբնավորում էր նոր գահատոհմ, մյուս կողմից՝ իր գահը կապում նախընթացի Արարատյան կամ Վանի թագավորության երեքհարյուրամյա կյանքին։ Չէ՞ որ մ. թ. ա. 7-րդ դարում հյուսված Երեմիայի զրքից գիտենք, որ մինչև Բաբելոն-Ասորեստանի կործանումը գոյություն է ունեցել Արարատյան թագավորությունը։ Մանանա-Մարաստանի հետ դաշնակցած այն կոչվել է ընդհանուր թշնամու դեմ, և սրանից հետո է, որ Հայոց կամ Արարատյան գահի վրա բազմել է Պարույրը՝ իբրև Մարաստանի տեր Վարբակեսից թագ ստացած մեկը («առաջին ի Վարբակայ մարէ պսակեալ Պարոյր»)։

Պարույրից հետո գալիս է Հայոց թագավորության՝ պատմական հավաստի աղբյուրներով ստուգվող, անընդմեջ կյանքը մինչև մեր թվականության արշալույսը։ Այս թագավորության պատմությունն անմիջական շարունակությունն է Տոսպ-Վանի կամ Արարատյան պետության կյանքի։ Նրա մասին կխոսվի հաջորդ զրույցներից մեկում։

Իսկ այժմ ծայրակապենք սույն զրույցը. ի՞նչ եզրակացությունների կարելի է հանգել վերը կատարված, թող որ թռուցիկ, քննությունից։

Ամենից առաջ՝ մ. թ. ա. 3-րդ հազարամյակից ի վեր հիշվող Հայք-Արմանումի, ապա Հայասա-Հայքի վարչական կազմավորումները հայ ժողովրդի պետական կյանքի առաջին քայլերն էին, որոնք աստիճանաբար դառնալով հաստատուն ու կանոնավոր, մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբին երկրի վրա հաստատեցին մեկ միասնական ու հզոր տիրակալություն։

Ապա. Արարատյան կամ Վանի հայկական միասնական թագավորությունը (աղբյուրներում կոչված նաև Նայիրի, Բիաինա, Արարատու, Ուրարտու) հին աշխարհի հզոր պետություններից մեկն է եղել՝ ամենից առաջ իր տնտեսական ակնառու նվաճումներով։ Դատելով հայտնաբերված սեպագիր նյութերից՝ Վանի արքաները եռանդուն շինարարներ են եղել։ Իրենց Հայք երկրում և բոլոր այն հողերի վրա, որ նվաճում էին, նրանք ծավալում էին շինարարական այնպիսի աշխա-

տանքներ, որպիսիք չէին եղել իրենցից առաջ։ Եվ այս միջոցառումների շնորհիվ պետության ամբողջ տարածքը ծածկվել էր քաղաքներով ու բերդամրոցներով, տաճարներով ու հուշակոթողներով, մանավանդ ջրանցքների և ջրատնտեսական այլևայլ կառույցների այնպիսի ցանցով, որը հնարավորություն է ընձեռել բոլոր բնակավայրերի շուրջ անհուն տարածությունների վրա խաղողի ու պտղատու այգիներ դցելու, ստեղծելու ամենայն հնարավորություն հացագործության և անասնապահության բուռն զարգացման համար։

Տնտեսական շրջադիտված վերելքի հիմքի վրա բարձրացել էր պետության ռազմական ու քաղաքական հզորությունը։ Դեռևս Ք. Պատկանյանը և Լեոն են նկատել, որ տնտեսական վերելքի վրա բարձրացած Վանի թագավորությունը, ճիշտ է, ծավալվում ու առավել հզորանում էր նվաճումներով, սակայն գոյատևելու համար պետք է պետության շրջանակի մեջ բռնեղծեր նաև էթնիկական ամբողջականություն։ «Հայաստանը պետք է կատարելապես անկախ լիներ իր իսկական բարգավաճման համար,— գրել է Լեոն։— Այս զգացել էին Մենուան, Արգիշտին, Արտաշեսը, Տիգրանը, որոնք և իրականացրին ազգային կատարյալ անկախությունը՝ մեծ նվաճողական պետություն ստեղծելով»։

Առանց վարանելու կարելի է ասել, որ Վանի կամ Աքարատյան թագավորությունը, իբրև ռազմաստրկատիրական պետություն, երեք դարու իր ոգորումներով, ամենից առաջ հարևան բռնատիրություններից պաշտպանեց հայոց ինքնուրույն զարգացումը և ստեղծեց իսկապես ազգային պետություն։ Լինելով հարազատ ժառանգները Հայասա-Հայքի պետական կազմավորման և ժառանգելով նրա գրաղեցրած տարածքը՝ Վանի արքաները սկզբից ևեթ այն առավել ընդարձակեցին տարբեր ուղղությունների վրա, մասնավորապես արևմուտքում ու հյուսիսում, երեք դարի վարչաքաղաքական ու ժողովրդաձուլական երևույթների շնորհիվ ստեղծեցին Հայկական մի երկիր պետություն, որի էթնիկական ու վարչական սահմանները համապատասխանում էին իրար։ Այդ երկիրը՝ կոչված Մեծ Հայք կամ Հայաստան, հետագա բոլոր դարերում լինելու էր միասնական պետության կյանքի ասպարեզը, իսկ սրա բացակայության դեպքում՝ հայոց արդար հավակնությունների առարկան։



ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ընդունված է Հայաստանը համարել թանգարան բաց երկնքի տակ։ Սա, ամենից առաջ, վերաբերում է մեր թվականության առաջին դարից սկսվող ժամանակների մշակութային հուշարձաններին, որոնք սփռված են պատմական Հայաստանի ամբողջ տարածքով մեկ և վկայում են հայ ժողովրդի բազմադարյան մշակութային գործունեության, հայկական ճարտարապետության և առհասարակ քարգործ արվեստի (խաչքար, բարձրաքանդակ, քանդակագործությունն առհասարակ) բարձր մակարդակը, համաշխարհային քաղաքակրթության այդ մարզին մատուցած նրա շոշափելի ավանդը։

Պակաս նշանակալից չէ Հայաստանի մշակութային կյանքը նաև առավել վաղ ժամանակների առումով։ Քարե, բրոնզե ու երկաթե դարերից մնացած հուշարձանների մասնակի պեղումները, հնագիտական նույնիսկ ոչ բավարար ուսումնասիրությունները, որոնք պատմական Հայաստանի տարածքում կատարվում են վաղուց ի վեր և արդեն հանել հին մշակութային կյանքի զանազան բնագավառների ամենատարբեր նյութեր, փայլուն ապացույց են այն հանգամանքի, որ Հայաստանը հանդիսանում է նաև մի բազմահարուստ թանգարան՝ ծածկված հողով։ Քարե, ապա բրոնզե ու երկաթե գործիքները, թրծված կավե կենցաղային ու գեղարվեստական առարկաները, բնակելի շենքերը, բերդերն ու քաղաքները՝ իրենց մնացորդների պարունակած պերճախոս տեղեկություններով, ցույց են տալիս, որ հին Հայաստանի բնակչությունն

ապրել է հետաքրքիր մի կյանք, ստեղծել է ինքնահատուկ մի քաղաքակրթություն։

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ.— Սրանք երևի թե մարդու մշակութային զարգացման ամենատաջին գրոշմներն են, որոնք ինչքան էլ բնութագրական լինեն հին աշխարհի բազմաթիվ ժողովուրդների կյանքի համար, որքան էլ նմանակներն ունենան ասիական ու եվրոպական, աֆրիկական ու ամերիկյան բազմաթիվ երկրներում, Հայկական բարձրավանդակում հանդես են գալիս իրենց առանձնահատուկ դրսևորումներով։

Հայաստանի ժայռապատկերները, որոնց ամենահին օրինակները թվագրվում են մ. թ. ա. 4—3-րդ հազարամյակներով, նույնիսկ ավելի վաղ ժամանակներով, իսկ վերջինները հասնում են մինչև միջնադարյան իրականությունը, ամենից առաջ հետաքրքիր նյութ են տալիս նրանց անանուն հեղինակների կյանքն ուսումնասիրելու համար։ Այս ժայռապատկերների մեջ ուսումնասիրողները տեսնում են մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառների, հավատալիքների, տիեզերական պատկերացումների և նույնիսկ զրության նախնական տեսակների դրսևորումներ։

Ժայռապատկերները Հայաստանում սփռված են համարյա ամենուր, բոլոր նահանգներում՝ Արագածի ու Գեղամա լեռներից մինչև Հայկական Տավրոսի փեղերը, Տայքից մինչև Մռավի ու Քիրսի լանջերը։

Ժայռապատկերների մեծագույն մասը ներկայացնում է մեր հայրենիքի վաղնջական օրերի կենդանական աշխարհը, վայրի ու ընտանի այն կենդանիների ամբողջականությունը, որի շրջապատում ապրել են մեր նախնիները։ Այդ կենդանիներից շատերն այժմ չկան, և միայն ժայռապատկերներն են մնացել իբրև նրանց հինավուրց գոյության վկաներ։ Որսի տեսարաններում պարզ երևում են կենդանիների ընտանեցման շղթայի օղակները։ Օրինակ, նախնական պատկերներում ձին վայրի է, իր բախտակիցների հետ ապրում է բնության գրկում, հետո այն որսորդին իր վրա առած սլանում է եզջերուի կամ քարայծերի հոտի ետևից։

Ժայռապատկերների մեջ նրանց հեղինակներն ամենից շատ արտահայտել են իրենց հավատն ու բնապաշտական պատկերացումները։ Սրբացած կենդանիների, բույսերի, երկնային մարմինների ուղղակի կամ ոճավորված պատկերները, դրանց երկրաչափական-գեղարվեստական նմանակները, ծիսական տեսարանների ընդարձակ նկարները ցույց են տալիս, թե որքա՜ն զարգացած էին մեր նախնիների գեղարվեստական ճաշակը, հոգևոր աշխարհը, աշխարհընկալման կարողությունը։ Զարմացնում է հատկապես շարժումը վերարտադրելու վարպետությունը։ Եզջերուի սլացքը, նրան հալածող որսորդի վազքը, թռչունների չուն,— ընթացքի ու գործունության մեջ պատկերված բոլոր այս բնորդները,— շարժման այնքան նուրբ զգացողություն են հուշում, որ կարող են մեր օրերի վարպետ գեղանկարիչների նախանձը շարժել։

Վերջերս Սյունիքի ժայռապատկերներում հայտնաբերվել են ուսանյակ ու տասնյակ օրինակներ, որոնցում մարդը վեցական ձեռք ունի։ Ձեռքերը, զույգ-զույգ տարածված, վարից դեր են բարձրանում՝ ցուցադրելով իրենց տիրոջ ցնծությունը։

Ժայռապատկերների մի զգալի մասի մեջ էլ ուսումնասիրողները տեսնում են գրավոր խոսքի նախնական տեսակը՝ հիերոգլիֆ նշանագրեր։

Ժայռապատկերների մի հարուստ շերտ էլ իր մեջ արտացոլում է նախնադարյան մարդու տիեզերական պատկերացումները, աստղահմայության և առհասարակ առաջին գիտական այն քայլերը, որ Հայկական լեռնաշխարհում էին կատարվել աստղագիտության մարդում։

Անգլիացի նշանավոր աստղագետ Վ. Տ. Օլքոտը հնարավոր է համարում, որ աստղային առաջին հասկացությունները ծնունդ են առել, և համաստեղությունների հնագույն դիտարկումները կատարվել են, ու նրանց մասին առաջին պատկերացումները հյուսվել են Եփրատի հովտում ու Արարատ լեռան շուրջը։

Նա գտնում էր, որ ակներևաբար Հայկական բարձրավանդակի հետ է կապված կենդանակերպի 12 համաստեղությունների պատկերացումը (մ. թ. ա. 3-րդ հազարամյակ), որով փաստորեն դրվել է օրացույցի արեգակնային սիստեմի հիմքը։

Հայաստանի հինավուրց աստղագիտական առաջին լուրջ բայլերը պարզելու համար անգնահատելի վկայություններ է տալիս Մեծամորը՝ Արարատյան դաշտի այս հնավայրը՝

մի բազմակերպար թանգարան, որը կարծես իր մեջ է առել հին հայոց գործունեության բոլոր բնագավառները և հոգևոր կյանքի ամեն տեսակ արտահայտությունները։

Երբ 1960-ական թվականներին հրապարակվեցին Մեծամորի պեղումների արդյունքները, արտասահմանյան մի շարք հնագետներ նրանց մեջ գտան այնպիսի փաստեր, որոնք պատասխան են տալու գիտությանը վաղուց հետաքրքրող մի շարք հարցերի։ Սեհեռուն ուշադրություն դարձվեց այն հանգամանքին, որ մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերին իսկապես Հայաստանը մեկն է եղել աշխարհագրական այն կետերից, որտեղից լավ դիտվել է Սիրիուսը, որն այն ժամանակ եղել է ամառային երկնագնդի ամենապայծառ աստղերից մեկը (այժմ այն երևում է աշնանն ու ձմռանը)։

Առավել հետաքրքրականը դարձյալ աստղագիտական նշանակություն ունեցող մի այլ հուշարձանախմբի՝ զանգեզուրյան Զորաց քարի (Անգեղակոթի մոտ) գոյությունն է։ Այս հնավայրի նյութերը վերջին տարիներին լայնորեն ուսումնասիրվում են համանման ուրիշ հուշարձանների, հատկապես Անգլիայի հարավ-արևմուտքում հայտնաբերված Սթոունհենջ հնավայրի հետազոտության՝ այժմ բավական տարածում գտած փորձի համաձայն։ Եվ որքան էլ զարմանալի, պարզվել է, որ համարյա միաժամանակ, մ. թ. ա. 3-րդ հազարամյակում և 2-րդի սկզբներին ստեղծված այդ հուշարձանները եղել են աստղագիտարաններ, կոչվել են համարյա նույն սկզբունքներով։ Սթոունհենջի ծակ քարերի դիրքը, դասավորությունը, հնարավոր տեղափոխումների ու նրանց հիման վրա կատարված զիտարկումների ստուգումները ցույց են տալիս, որ նրանցով ճշգրտորեն հաշվել են տարվա օրերը, նշել կամ կանխատեսել եղանակի փոփոխությունները, գուշակել Արեգակի ու Լուսնի խավարումները։ Եվ զուր չէ, որ անգլիացի ժամանակակից աստղագետ Հոուքինսը, այս հայտնություններով ոգևորված, Սթոունհենջը համարել է «քարե գարի հաշվիչ մեքենա»։

Զանգեզուրի «քարեդարյան հաշվիչ մեքենան» հսկայական նշանակություն ունի պատմական Հայաստանի տարածքում հայտնաբերված բազմաթիվ ու բազմատեսակ նյութերը հաս-

կանալու, բացատրելու համար։ Մեր հնագետներն Արարատյան նահանգի, Արցախի և ուրիշ հնավայրերից պեղել են բրոնզե գոտի-օրացույց, ուշ բրոնզե դարի աշխարհի երկրակենտրոն մանրակերտ, մի շարք համաստեղությունների, Արեգակի, Լուսնի, անզեն աչքով տեսանելի հինգ մոլորակների աստղագիտական բովանդակությամբ ժայռապատկերներ։ Պատահական չէ, որ այս և ուրիշ շատ տիեզերագիտական տվյալներ կուտակած երկիրն ուներ մի այնպիսի աստղագիտարան, որպիսին Զորաց քարն է։

Ուրեմն, հաստատվում է անգլիացի Վ. Օլքոտի խիզախ կռահումը. Հայաստանը մ. թ. ա. 3—2-րդ հազարամյակներում ամենահարմար տեղերից մեկն է եղել երկնային-աստղագիտական հետազոտությունների առաջին քայլերն իրականացնելու համար, և մեր նախնիները կատարել են այդ քայլերը։

Տիեզերական-աստղագիտական պատկերացումների և հմտությունների հետ սերտորեն կապված է եղել նաև ժամանակահատվածների որոշման այն համակարգը, որ կոչվում է տոմար, և որի բնագավառում ևս հին հայերը բավական առաջադիմել էին։ Երկար ժամանակ հայագիտության մեջ ընդունված էր Ղևոնդ Ալիշանի հետազոտություններով հայտնաբերված Հայկյան (Հայկ նահապետի ծնունդով պայմանավորված) կամ բուն Հայոց տոմարը, որի առաջին տարին համարվել է մ. թ. ա. 2492 թվականը և ունեցել է 1461-ամյա պարբերաշրջան։

Այժմ հաստատված է համարվում, որ Հայկյան տոմարը գործածվել է մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներից։ Այն, իհարկե, հաշորդել է ժամանակաբաշխման այնպիսի կարևոր միջոցառումներին, ինչպիսիք են տարին ամիսների, ամիսը օրերի և օրը ժամերի բաժանելը։

Հին հայոց տոմարի համաձայն՝ տարին բաժանվում էր 12 լրիվ ամիսների, բաղկացած 30 օրերից, և մեկ լրացուցիչ ամսի, որ բաղկացած էր 5 օրից։ Բոլոր ամիսներն էլ ունեին իրենց անունները. 1. Նավասարդ, 2. Հոռի, 3. Սահմի, 4. Տրե, 5. Քաղոց, 6. Արաց, 7. Մեհեկան, 8. Արեգ, 9. Ահեկան, 10. Մարերի, 11. Մարգաց, 12. Հրոտից և 13. Ավելյաց։

Ամսվա 30 օրերից յուրաքանչյուրն էլ իր անունն ուներ

Հայկական տոմարը մեր երկրում գործածական է եղել մինչև Հայոց Մեծ թվականի ընդունումը։ Այս տարեցույցի առաջին տարին էլ համարվում է 552 թվականը։ Գործածվել է հավանաբար վեցերորդ դարում, սակայն գրավոր աղբյուրներից առայժմ հայտնի հնագույն գործածությունը 783 թվականից է՝ Ուխտաստուր վանականի արձանագրությունը Թալինի Մայր տաճարի ճախակողմյան սյան արևմտյան երեսին. «ՄԼԲ (232+551=783) թուականութեան Հայոց ես՝ Ուխտաստուր վանական...»։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ.— Ասել են՝ ճարտարապետությունը քարացած երաժշտությո՞ւն է, թե քարե՞ երաժշտություն։ Հավանաբար, այն մարդը, որ տեսնում-զգում է քարի երաժշտական կերպարը, նաև լսում է այն։ Բայց ճարտարապետությունն առաջին հերթին քարացած պատմություն է, ժողովրդի ամենահաստատուն ու ամենավստահելի ինքնակենսագրությունը։

Հայաստան աշխարհի քարացած ինքնակենսագրության միջնադարյան և նորդարյա վկայագրերն արդեն լայն ճանաչում են գտել, և օտարների համար անգամ այլևս կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ հայ ժողովուրդն ունեցել է իր սեփական, ինքնուրույն ու ինքնատիպ ճարտարապետություն, և որ այս ճարտարապետության լավագույն դրսևորումները առանց վարանելու կարելի է հասեմատել աշխարհի ամենաքաղաքակիրթ ժողովուրդների ճարտարապետական հրաշալիքների հետ։

Այո՛, միջնադարյան ու եռմիջնադարյան հայկական ճարտարապետությունն իր արժանի տեղն է գրավել համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ։

Բայց ահա հին հայոց մշակութային կյանքը, հատկապես ճարտարապետական ժառանգությունը, մինչև այսօր էլ ո՛չ միայն ճշմարիտ գնահատություն չի ստացել, այլև հաճախ առնվազն անպարկեշտություն է համարվում նրա մասին բարձրաձայն խոսելը։

Պատճառն, անկասկած, նրա քիչ ուսումնասիրված լինելն է, եթե չասենք՝ լուսումնասիրված լինելը։ Պատմական Հայաստանի վիթխարի տարածքում սփռված են պատմա-ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ կամ նրանց մնացորդները, որոնցում դժվար չէ տեսնել այդ բնագավառի ինքնուրույն զարգացման փուլերը, նրանց երբեք չընդմիջված շարունակությունը։

Հայաստանի Հանրապետության տարածքի պեղված հնավայրերում (Դառնի, Էրեբունի-Երևան, Արգիշտիխինիլի-Արմավիր, Ոշական ևն) հերթագայում են հինավուրց դարերը, փորձը նստած է փորձի վրա, գիտվում են կատարելագործման ատաձիանները, կիկլոպյան շինությունների մնացորդների վրա կանգնեցվել են կոպտատաշ շարվածքի նախնական ճարտարապետական կառույցներ, որոնք էլ իրենց հերթին հիմք են դարձել Վանի կամ Արարատյան թագավորության ժամանակների շինությունների համար։

Վանի կամ Արարատյան թագավորության շրջանից հայտնի բերդաքաղաքները, համարյա առանց բացառության, ունեցել են հաստատնոցյա շրջապարիսպներ, երբեմն նաև երկրորդ պաշարումների դիմանալու համար հարմարեցված ջրհորներ, որոնք օժտված են եղել գիտանոց-աշտարակներով և դրսի հետ պաշտպանի կապ պահպանելու անցուղիներով։

Պեղումներով բացվել են աշխարհիկ բազմաբիվ շինությունների մնացորդներ, որոնցով պարզվում են նաև բնակելի տների, թագավորական պալատների, նույնիսկ մեծ ու փոքր մատանների տիպերը։

Թիլշեբաինի-Կարմիր բլուրում (Հրազդանի ձախ ափին, Երևանի հարավային եզրին) բացված միջնաբերդը, որ գրավում է ավելի քան չորս հեկտար տարածություն, ունեցել է բազմաթիվ մեծ ու փոքր բնակարաններ, միահարկ ու երկհարկ, բոլորն էլ կանգնած քարե հիմքերի վրա, իսկ պատերը՝ քարից կամ հում աղյուսից։ Նրանք ունեցել են պատուհաններ։ Կենտրոնական առավել խոշոր սենյակները լուսավորվել են նաև երդիկով։ Մատանների ու պահեստային շինությունների շարքում գտնվել են մի քանի տասնյակ կարասներ՝ 700—900 լիտր տարողությամբ։

Առայժմ սահմանափակ թվով հայտնի տաճարային շինությունների ուսումնասիրությունից մասնագետները եզրակացրել են, որ նրանք ունեցել են երկու տիպի դասավորություն՝ քառակուսի և ուղղանկյուն։ Քառակուսի հատակագիծ են ունեցել Արևմտյան

Հայաստանի տարածքում գտնվող հնավայրերի՝ Ռուսախինիլի, Ոսկեբլուրի, Պատնոցի ու Ժայռաձորի (Կայալը-գերեզ) տաճարները։ Սրանք ոչ միայն նույն հատակագիծն են ունեցել, այլև ներքին չափերով, ծավալային համաչափությունով ու արտաքին մանրամասներով նման են եղել իրար, մի հանգամանք, որից հիմնավորապես եզրակացվում է, թե այն ժամանակ տաճարի արդեն մշակված տիպ կար, որը տարածված էր երկրի տարբեր վայրերի շինարվեստի մեջ։

Երկրորդ՝ երկայնակի-ուղղանկյունաձև հատակագծով գահլիճի տիպին են վերագրվում Էրեբունիի «Սուսի» տաճարն ու Արգիշտի-Մուսասիրի գլխավոր աղոթարանը։ Սրանցից առաջինը կանգնած է եղել Էրեբունիի պալատական բակի արևմտյան մասում և 1957 թ. պեղումներով բացվել է ավերված վիճակում, բացի արևելյան ճակատից, որի մուտքից ալ ու ձախ գտնվել են նույն բովանդակությամբ երկու սեպագիր արձանագրություններ։ Հայտնի է այնքանը, որ «Սուսի» տաճարը կառուցված է եղել կոպտատաշ տուֆ քարով, և նրա ներսում տեղադրված է եղել զոհասեղան։ Երկրորդի՝ Արգիշտիի Հալդի տաճարի պատկերը քանդակված է Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ի պալատի պատին, այն բարձրաքանդակների մեջ, որոնք ներկայացնում են Սարգոն բռնակալի նվաճումները հյուսիսային երկրներում։ Ընդարձակ արձանագրությունը, որը փոխադրվել և այժմ պահպանվում է Լուվրի թանգարանում, պատմում է Սարգոնի արշավանքները մ. թ. ա. 714 թ.։ Ասորեստանի ավերիչ-կողոպտչական հեղեղն անցել է Վանի թագավորության հարավ-արևելյան և հարավային մարզերով։ Ահավոր ավերածության է ենթարկվել պերճաշուք հոգևոր կենտրոն Արգիշտի-Մուսասիրը։ Սարգոնը կողոպտել է Հալդի տաճարը՝ այնտեղից տանելով մեծաքանակ ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր, Իշպուինիի որդի Սարդուրի և Արգիշտի Ա-ի բրոնզե վիթխարի արձանները, ինչպես նաև երկրի այն ժամանակվա տիրոջ՝ Ռուսա Ա-ին նվիրված ձուլածո արձանախումբը, որի մեջ եղել են արքայի, երկնի կառքի և շքախմբի քանդակները։

Հալդի տաճարի կողոպուտի տեսարանը ներկայացված է Սարգոնի պալատի բարձրաքանդակի մեջ, և այնտեղ ցայտունորեն երևում է կառույցի ճակատն իր ճարտարապետական

մանրամասներով։ Անկասկած է, որ տաճարը կանգնած է եղել բարձրադիր հարթ մի տարածության վրա, և դեպի նրա մուտքն են բարձրացել շքեղ սանդղասանդեղներ։ Տաճարի հանկյունաձև նախշազարդ ճակատը եզրափակվում է սրածայր լեզվակով, որը մի քանի ուսումնասիրողների կողմից համարվել է նիզակի սայր. սակայն, ամենայն հավանականությամբ, կենաց ծառի տերև է։

Հին հայկական կառուցողական գործի մի հետաքրքիր օղակն է կազմել ջրաշինարարության բնագավառը։ Ժողովրդական ավանդություններն ու սեպագիր աղբյուրները հիշում են բազմաթիվ ջրանցքներ ու առուներ, որոնք կառուցված լինելով հին հայոց ձեռքով՝ ծառայել են գյուղատնտեսության զարգացմանը, քաղաքային ու բերդամրոցային տնտեսությունների պետերին։ Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունների համաձայն՝ հսկայական ջրանցք են անցկացրել Վան մայրաքաղաքի մոտ։ Շուրջ 80 կմ ձգվող քարաշեն այդ հրաշալիքն այժմ էլ գոյություն ունի և պտղաբեր դաշտավայր է տալիս Վանի թագավորների շինարարական վիթխարածավալ գործունեության վերաբերյալ։ Պակաս նշանակալից չէ նաև Արգիշտիի նախաձեռնությամբ Հրազդանից (սեպագրի մեջ՝ Իլդարուն) հանված առուն, որի հունը բավական երկար տեղ անցնում էր ժայռաբլրի տակով, թունելի ձևով, և մինչև վերջերս էլ գործում էր հայտնի Դալմայի ջրանցք անունով։

ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ.— Ժողովուրդների վաղնջական կյանքում հոգևոր մշակույթի երկու հիմնական ճյուղերը՝ հավատքն ու բանահյուսությունը, այնպես կապված են իրար, այնպես իրար միահյուսված, որ մեկն առանց մյուսի անհնար է պատկերացնել։ Հավատալիքի մանրամասներն արտահայտություն են գտել գեղարվեստական մտածողության ներկայացրած կաղապարների մեջ, իսկ բանավոր առաջին երգերն ու հիմները հին կուռքերին են նվիրված, և հենց այս կուռքերն ու աստվածներն են հնագույն առասպելների ու վիպական զրույցների հերոսները։

Պարզապես նրանք նույն ծառի երկու ճյուղերն են, միահյուսված իրար, իրարով պայմանավորված, իրար պահող։ Իսկ եթե այս տրամաբանությանը հետևելու լինենք, կտես-

նենք, որ նրանց կենսավորող ծառն էլ կանգնած է մի հողի վրա, որ մեր պաղնջական պատմությունն է, մեր ազգային կյանքն իր դարձդարձիկ ընթացքով։ Այդ պատճառով էլ բոլորովին զարմանալի չէ, որ մեր դիցաբանական ամբողջ մշակույթը և մեր հին բանահյուսությունը իրենց էությամբ շաղկապված են պատմականությամբ. արտացոլում են հայոց հին պատմության կարևորագույն փուլերն իրենց էական մանրամասներով։ Ո՞չ միայն այն դեպքերում, երբ բանահյուսական ստեղծագործությունը, դիցաբանական զրույցը, առասպելն ու լեգենդը վերաբերում են աստվածացված մեր նախնիներին, մարգեղացած մեր կուռքերին կամ առասպելական զուգսերով ներկայացող մեր ազգային պետական ու մշակութային գործիչներին։ Այլև նույնիսկ այն պարագային, երբ ավանդության նյութ է եղել մի այնպիսի անդեմ ու ապազգային գործոն, ինչպիսին բնության այս կամ այն երևույթն է, ասենք՝ արևագալը, սոսյաց անտառի շրշյունը կամ թեկուզ փոթորիկը, տեղատարափ անձրևը, սովորական որսի տեսարանը։

Շատ իրավացի էր մեր Պատմահայր Մովսես Խորենացին, երբ վստահ էր, որ այդ առասպելներն ու զանազան զրույցները «զճշմարտութիւն իրաց այլաբանաբար զինքեանս ունին թաքուցեալ»։

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ.— Երևի թե ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենապարզ կերտվածքներից մեկը Մովսես Խորենացու գրի առած չափածո այն պատառիկն է, որ այժմ հայտնի է «Վահագնի հիմն» կամ «Վահագնի ծնունդ» անունով։ Հեթանոս մեր նախնին գիտել է արևի ծագումը ծովափին կամ մշուշ-մառախուղներով լցված ձորի պոնկին, և նրա աչքին աշխարհը երկունքով բռնված է երևվացել, եղեղները ծուխ ու բոց են ժայթքել... Բայց լավ է հիշենք բանաստեղծական այդ ադամանդը.

Երկնէր երկին,
Երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր
Ու զկարմրիկն եղեգնիկ։
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր։

Ընդ եղեգան փող բոց ելանէր։
Ու ի բոցոյն վազէր
Խարտեաշ պատանեկիկ։
Նա հուր հեր ունէր։
Ապա թէ բոց ունէր մորուս
Ու աչկունքն էին արեգակունք։

Ի՞նչ խոսք, որ Վահագնի ծնունդը դա արեգակի՝ մարդու ամենաառաջին պաշտելիներից մեկի ծնունդն է։ Երկինքն ու երկիրը հրեղեն ցոլքերով են օծվել, ծիրանի ծովն ասես վառվում է արևագալի բոցերով, բոցավառված է եղեգը, որ ծուխ ու բոց է վեր հանում, և այս հրակարմիր երկունքով ծնվում է խարտյաշ պատանեկիկը՝ բոց մորուսով և արեգակ աչքերով։

Նախնականը երևի այսքանն է եղել. արևապաշտն իր կուռքը պատկերացրել է մարդկային կերպարանքով, որի ծնունդը չէր կարող այլ կերպ լինել, քան արևագալի հետ, արեգակով օծված բնության գրկում։ Մեր հնագույն ձեռագրերից մեկում վկայված է, թե «զԱրեգակն կոչեցին և Վահագն կոչեցին»։ Իսկ Վահագնի անվան հետ կապված մյուս կարևոր երկնային երևույթը՝ Սիր-Կաթինը կամ Հարգապոդի ճամփան, որ հայերն ավանդաբար կոչել են նաև Վահագնի ճանապարհ, ըստ Անանիա Շիրակացու, հայտնի է եղել նաև իբրև Արեգական ճանապարհ։

Որ Վահագնի երգն սկզբնապես ծնունդ է առել որպես բնության մասին մարդու պարզագույն պատկերացումների արդյունք, երևում է հենց երգի էությամբ շարժման մեջ դրված չորս տարրերի՝ օդի, հողի, ջրի ու հրի առկայությունից։ Երկունքով բռնված էին երկինքը (օդ), երկիրը (հող), ծիրանի ծովը (ջուր) և կարմրիկ եղեգնիկի փողից ելնող բոցը (հուր)։ Սրանց միասնությունից է ծնունդ առնում խարտիշահեր աստվածը, որ պետք է շար ու մութ ուժերից փրկի մարդկանց։

Մեր հին ժողովրդական վեպերից, առասպելներից, զրույցներից, երգերից ու այլազան նյութերից պահպանված պատառիկները ցույց են տալիս, որ նրանց համար հիմք են եղել պատմական իրողությունները, բուն ժողովրդի կազմավորման, նրա պետականության ստեղծման ու ամրապնդման համար գործադրված ջանքերը։

Ինչպես վերը ցույց տրվեց, հնագետ-լեզվաբան Վ. Վ. Իվանովն իր հետաքրքիր և ուսանելի ուսումնասիրությամբ եկել էր այն համոզման, թե «Վահագնի ծնունդը» առասպելի լեզվական նյութն իր վրա անառարկելիորեն կրում է հնդեվրոպական նախամայր ակունքի, հնդկաիրանյան-հայկական-հունական բարբառային ընդհանրության, ինչպես նաև հյուսիս-կովկասյան լեզվական մթնոլորտի հետ ունեցած շփումների հետքերը։ Գիտնականն իր քննության մեջ հիշում է հին ասորեստանյան, խեթալուվիական, խուռիական առնչությունների շրջանները, նրանց թողած հետքերը։ Իսկ սա նշանակում է՝ առասպելի հեղինակ հայ ժողովուրդն իր հայրենիքում անընդմեջ բնակվել է հնդեվրոպական մայր լեզվի բնից ճյուղավորվելուց հետո դարեր ու դարեր շարունակ, որպեսզի նույն գրական ստեղծագործության մեջ առներ այդքան բազմաղան հոգևոր-մշակութային կապերի արձագանքներ։

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» պոեմն անպայման իրական հիմք ունի, արտացոլում է հայ-ասորեստանյան քաղաքական փոխհարաբերությունները մ. թ. ա. առաջին հազարամյակի առաջին կեսին։ Այդ հարաբերությունների կրողներն անշուշտ իրական-պատմական անձնավորություններ են։ Եվ, այսուհանդերձ, միանգամայն իրական-պատմական դեմքերը կատարում են գործողություններ, դրված են այնպիսի վիճակների մեջ, որոնք, ինչքան էլ առասպելական կամ պատմականության առումով անհավանական, գեղարվեստական տեսակետից ոչ միայն անհրաժեշտ են, այլև վերին աստիճանի ճշմարիտ, քանի որ մարդկային հարաբերությունների տրամաբանական շղթայի մեջ են առնված և արտացոլում են բարոյական բարձր կերտվածքի և նրա բացակայության ճակատագրական բախումները։

Շամիրամը՝ Ասորեստանի թագուհին, վավաշոտ ու անգուսպ մի կին, լսել էր Հայոց տիրակալ Արայի գեղեցկության գովքը և տենչալով տենչում էր նրան։ Իսկ երբ արդեն չկար Նինոս արքան, Շամիրամը կարծում էր՝ ժամն է իրականացնելու ցանկացածը. բանագնացներ է հղում Հայաստան, Արային առաջարկում գնալ Ասորեստան, կա՛մ դառնալ իր ամուսինը և թագավորել այն ամենի վրա, որոնց Նինոսն է

տիրել, «կա՛մ էլ կատարել իր կամքն ու ցանկությունը և մեծամեծ նվերներով ու խաղաղությամբ վերադառնալ»։

Արան չէր կարող լքել իր երկիրը և չէր կարող պղծել իր ամուսնական առագաստը, որովհետև ծնունդ է առել և ինքնացել մի աշխարհում, ուր բարոյական բարձր օրենքներ են գործում, առաքինության ու վարքի վսեմ սկզբունքներ։

Նա մերժեց բռնակալի առաջարկը, և Շամիրամը մեծ զորքով եկավ Հայոց երկրի վրա։

Զրույցն ասում է՝ Շամիրամը կարգադրել էր պատերազմում չսպանել Արային, որովհետև նա կենդանի Արային էր տենչում։ Սակայն զոհվում է Հայոց թագավորը, իր երկրի ու գերդաստանի պատվի ասպետը, որովհետև նրա համար լավ էր մեռնել, քան ծառայել օտար բռնակալի ստոր կամքին։

Հայոց պատմության հաջորդ շրջանը՝ Երվանդունի և Արշակունի թագավորական տոհմերի գահակալության դարերի իրադարձությունները ներկայացնող բանահյուսական երկերից շատերն են մեզ հասել և, բարեբախտաբար, առավել ամբողջական ու անխաթար։

Գրական-գեղարվեստական արժանիքներով մի բացառիկ ամբողջություն է կազմում Արտաշես թագավորի և Ալանաց դուստր Սաթենիկի վեպը։ Ալաններն արշավանքի են գալիս մեր երկիրը։ Արտաշեսն իր զորքով նրանց դիմավորում է Կուր գետի ափին։ Պատերազմում մեծ վնասներ է կրում ալանաց կողմը։ Ջերբակալվում, գերի է վերցվում նրանց արքայի որդին։ Այն ժամանակ արքայադուստր Սաթենիկը Կուրի մյուս ափից հաղթող Արտաշեսի հետ այսպես է խոսում.

Քեզ եմ ասում, քաջ այր Արտաշես,
Որ հաղթեցիր քաջ ազգին ալանաց.
Եկ համաձայնիր խոսքին իմ՝
Ալանաց աշագեղ դստեր,
Եվ տուր այդ պատանին։
Քանզի օրինական չէ,
Որ մի քենի համար դյուցազունները
Այլոց դյուցազունների դարմը
Կենդանի-կենդանի վերացնեն
Կամ ծառա դարձնելով պահեն ստրկաց կարգում,
Որով և երկու քաջ ազգերի միջև
Հաստատեն հավիտենական թշնամություն։

Արտաշեսի դիցվում է այս ֆիմաստուն խոսքերից և խնամախոսներ է ուղարկում Ալանաց արքայի մոտ՝ խնդրելով նրա դստեր ձեռքը։ Եվ երբ ընդդիմության է արժանանում, այն ժամանակ գուսաններն ասում են.

Հնծավ արի Արտաշես արքան
Իր սև նժույգը գեղեցիկ,
Եվ հանելով պարանը ոսկեօղ ու շիկափոկ
Եվ գետն անցնելով իբրև սրաթև արծիվ
Եվ ոսկեօղ ու շիկափոկ պարանը ձգելով
Գցեց մեջքը Ալանաց օրիորդի։
Եվ շատ ցավեցրեց փափուկ մեջքն օրիորդի՝
Արագորեն հասցնելով իր բանակը։

Ապա տեղի է ունենում հարսանիքը, որի մասին ևս գուսաններն առասպելաբանելով ասում են.

Ոսկե անձրև էր տեղում
Փեսայությանն Արտաշեսի,
Մարգարիտ էր տեղում
Հարսնությանը Սաթենիկի։

Արտաշեսի վեպը շարունակվում է՝ իր մեջ առնելով մի շարք հետաքրքիր դրվագներ, ինչպես նրա կին Սաթենիկի սերը վիշապազուն Արգավանի հանդեպ, Արտաշեսի զայրույթն ու Արգավանի տոհմի կոտորելը... Արտաշեսի մահն ու փառավոր թաղումը, որի ժամանակ տեղի են ունենում ինքնակամ մահեր ու մեծամեծ զոհաբերություններ... Այստեղ էլ, Գողթնի երգիչների պատմելով, դժգոհում է Արտաշեսի ժառանգ Արտավազդը։ Հորն ասում է.

Երբ դու գնացիր,
Ամբողջ աշխարհը քեզ հետ տարար,
Ես ավերակների վրա
Ո՞ւմ պիտի թագավորեմ։

Այս դժգոհության համար հայրը որդուն անիծում է հետևյալ խոսքերով.

Թե ձի հեծնես ու որսի գնաս
Ազատն ի վեր դեպի Մասիս,
Թող քաջքերը քեզ բռնեն-տանեն
Ազատն ի վեր դեպի Մասիս,
Այնտեղ մնաս ու լույս չտեսնես։

Եվ պատմում են նաև, թե Արտավազդը որսի ժամանակ անհետանալով, արգելված մնում էր մի քարայրի մեջ, կապված երկաթե շղթաներով։ Երկու շուն միշտ կրծում էին նրա շղթաները, և ինքը չանում էր դուրս գալ ու աշխարհին վերջ տալ։ Բայց, ասում են, դարբինների կռանահարության ձայներից զորանում էին կապանքները։ Դրա համար էլ մեր ժամանակներում իսկ դարբիններից շատերը, հետևելով առասպելին, կիրակի օրը երեք կամ չորս անգամ (կռանով) զարկում են սալին. ասում են՝ որպեսզի զորանան չար թագավոր Արտավազդի շղթաները։

Հին հայկական բանահյուսության այս և ուրիշ բազմաթիվ գոհարներ, սերնդեսերունդ անցնելով, հասել են գրավոր գրականության շրջանը և հետագայում էլ ապրել գրավոր ստեղծագործությունների հարևանությամբ։ Հայտնի են վաղ միջնադարյան հեղինակների վկայություններն այդ հեթանոսական ստեղծագործությունների կենսունակության և ժողովրդական զանգվածների մեջ ունեցած մեծ տարածման մասին։ Հայտնի են նաև նրանց թափանցումները քրիստոնյա հեղինակների երկերի մեջ, այս հեղինակների ակամա տուրքը սեփական ժողովրդի անցյալ գրական ժառանգության անմահ ավանդներին։

Հեթանոս հայության դիցարանի մեջ անշուշտ Վահագնին էր վերապահված ամենակարևոր տեղերից մեկը։ Նրա պաշտամունքը տարածված էր Հայոց բոլոր նահանգներում։ Սակայն Տարոնի Աշտիշատ ավանում է գտնվել նրա գլխավոր տաճարը՝ «մեծագանձ, լի ոսկով ու արծաթով»։ Այնտեղ են պահպանվել ինչպես Վահագնի, այնպես էլ դիցամայր Անահիտի ու դիցուհի Աստղիկի արձանները։ Աստղիկի, որը Վահագնի կինն էր համարվում, սիրո և գեղեցկության աստվածուհին էր, ընդունակ զանազան հրաշագործությունների։ Օրինակ, ասում են՝ գետում լողանալու պահին նրա շուրջն իջնում էր անթափանց մշուշ, որպեսզի դիցուհու մարմնական բարեմասնությունները ծածկված մնան լողափին դարանակալ չարաճճի կորիճների հայացքներից։

Մեզ են հասել ցավալիորեն քիչ տեղեկություններ հին հայկական դիցարանի մասին, և դրանք էլ՝ քրիստոնյա հեղինակների երկերում, բավական աղճատված ու միակողմա-

նի։ Առաջինն Ագաթանգեղոսն է, որ պատմում է, թե քրիստոնեության տարածողներն ինչպես էին ավերում հին հավատի տաճարները, կործանում, ջարդում աստվածների արձաններն ու ամեն տեսակ հին հիշատակները։ Եվ ավերի ու բնաջնջման այս եռուզեռի ոգեշունչ նկարագրությունների մեջ սպրդած հատուկենտ հիշատակումներով այժմ լափաղանց աղոտ պատկերացում կարող ենք կազմել մեր նախնյաց հավատի, աստվածների, նրանց դերերի ու ազդեցության ոլորտների վերաբերյալ։

Հայտնի է այնքանը, որ Արամազդն է եղել հին հայոց դիցարանի գլխավոր աստվածը, երկնքի ու երկրի տերը, ամեն ինչի արարիչն ու կենսավորողը (Ագաթանգեղոս՝ «արարիչն երկնի և երկրի»)։ Արամազդից հետո գալիս է Հայոց երկրի խնամակալ, պտղաբերության ու ամենայն բարյաց շնորհող Անահիտը, տնավարության ու խոհեմության աստվածուհի Նանեն, արևի ու հրո աստված Միհրը, որը գուցե թե Վահագնի մի տարբերակն է եղել։

Անահիտն արժանացել է մի առանձնահատուկ պաշտամունքի. նա հայոց աստվածամայրն էր՝ ոսկեմատն, ոսկեծղին, ոսկեհատ և այլ պատվանուններով հռչակված, հավանաբար այն պատճառով, որ ամենուր նրա տաճարն է եղել (Անահտական) և տաճարում էլ՝ ոսկեձույլ արձանը կամ կիսանդրին։

Անահիտի պաշտամունքը լայն տարածում ուներ Մեծ Հայքում և ամենից երկար ապրեց, առավել խոր հետք թողեց հայ ժողովրդի հոգևոր կյանքում։ Հույն մեծ աշխարհագետ Մարաբոնը տեղեկացնում է, թե Հայաստանի տարբեր նահանգներում եղել են ոչ միայն Անահիտի տաճարներ, այլև անահտական գավառներ, որոնցում այս աստծու պաշտամունքը գեր ու վեր էր ամեն ինչից։ Եվ այդ գավառներից մեկը հիշում է երկրի ծայր հարավում, որը, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Տարոնի կողմերում, մյուսը՝ Արցախ-Ուտիք հայաշխարհի, այլ խոսքով Հայազովանքի բարեբեր հյուսիսում՝ Կուր գետի ափին։ Ամենուր Անահիտն էր հայոց երկրի պահպանիչը, արգասավորության ու պտղաբերության, առհասարակ մարդկային ամենայն երջանկության պարգևողը (Ագաթանգեղոս. «...մեծի Անահտայ տիկնոջս,

որ է փառք ազգիս մերոյ և կենցուցիչ, ... որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան»)։

Հետազոտողները բոլոր այս աստվածների համար կրկնակներ կամ նմանակներ են հիշում ուրիշ ազգերի դիցարաններից։ Օրինակ՝ անառարկելի են համարում, որ հայոց Արամազդը պարսից Ահուրամազդան է, հունաց Զևսը, լատինացոց Յուպիտերը։ Իսկ Անահիտի կերպարից ի՞նչ տեսակ մանրամասներ են գտնում հունաց Արտեմիսի, հռոմեական Դիանայի, եգիպտացոց Նեիթի, մանավանդ պարսից Անահիտայի պաշտամունքների մեջ։ Մանուկ Աբեղյանն այդ նմանությունների համար ճանաչում էր դաղափարական փոխազդեցությունների խոր արմատներ։ Նա գրել է, թե «Այդ նույնացումները պետք է բացատրել նրանց առասպելների ու պաշտամունքի նմանությամբ։ Արտաքին և պատահական չէ, որ Արամազդը Դիոնիսի հետ է նույնացել, Միհրը՝ Հեփեստոսի, Անահիտը՝ Արտեմիսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Տիրը՝ Ապոլոնի և Վահագնը՝ Հերակլեսի հետ»։

Հայկը մեր ժողովրդի հնագույն պաշտելիներից առաջինն է, որ, լինելով բանավոր զրույցների հերոս, մտել է նաև գրավոր պատմության մեջ՝ իբրև հայոց անվանագիր նախնի, մեր պետության և հայրենիքի, ցեղային միասնության ու մշակութային ամբողջության կազմավորող։ Նրա մասին հավատի պատմությունը գրի առնելով Մար Աբաս Կատինայի մատյանից՝ Քերթողահայրն ստեպ-ստեպ հիշում ու հիշեցնում է, որ պատմիչի հաղորդածները հաստատվում են բանավոր զրույցներով, և զրույցներն էլ արդարացվում են գրի առնված պատմությամբ («Այս արդարացուցանէ զանգիր հին առացեալ զրոյցս», «Արդարացուցանէ և այս զասացեալ զբոյցս անգիրս»)։

Հայկ նահապետը, իր հետ առնելով սեփական ցեղի մեծ ու փոքրին, ամբարտավան Բելի ստեղծած բռնատիրությունից բաժանվում է այն ժամանակ, երբ մարդկային հասարակությունը ցրվում-տարածվում էր երկրի բոլոր կողմերի վրա («ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի»)։ Գալիս, տերն է դառնում Արարատ կոչված երկրի, այստեղ իր լեզվի անուններով է կնքում եղածը (Հարք) և լինելիքը (Հայկաշեն, Հայք, Հայոց ձոր, Գերեզմանք են)։

Սակայն միշտ էլ անհանդուրժող են բռնակալները։ Բելը վեր է կենում, զենք ու զորքով գալիս Հայկի վրա, որ հնազանդության բերի, դարձնի իր ու իր տոհմակիցների հավերժական հպատակը։ Իսկ Հայկը բռնակալին լքել էր այն պատճառով միայն, որ չէր հանդուրժում մարդկային կամքի ու ազատության վրա դրվող կապանքները և այժմ էլ վեր պիտի կենար ազգատակով, պիտի կենաց ու մահվան կռիվ մղեր իր ցեղի ու հայրենիքի անկախ, ազատ կյանքի համար։ Նշանակալից է Հայկի կոչն իր ցեղակիցներին. «Կա՛մ մեռնենք, և մեր տոհմն ընկնի Բելի տիրապետության տակ, կա՛մ նրա դեմ ցույց տանք մեր մատների քաջությունը, նրա ամբոխը ցրվի, և մենք լինենք հաղթություն ձեռք բերած»։

Թեժ կռվի մեջ հայկյանք հալածում են եկվոր բռնակալներին։ Մենամարտի մեջ էլ Հայկը նետահարում, սպանում է Բելին, և նրա խառնամբոխի մնացորդներից յուրաքանչյուրը փախչում է՝ ուր որ աչքը կտրի։

Հաղթանակի պատվին ճակատամարտի տեղում Հայկը կառուցում է դաստակերտ և այն կոչում Հայք։ Շրջակա գավառը կոչում է Հայոց ձոր։ Եվ ամբողջ երկիրն էլ, մեր նախնի Հայկի անունով, կոչվում է Հայք։

Այսպե՞ս եղավ սկիզբը մեր ազգային պատմության, նրա ազգային հավաքականության գոյի և գոյության կերպի։

Առասպելն է այսպես պատմում, մեր ազգային ավանդությունը, որ հաստատվում է Մար Աբասի գրի առած պատմության տվյալներով, որոնք էլ իրենց հերթին ճշգրտվում, լիովին ապացուցվում են հնագիտության ու սեպագրերի փաստերով և մանավանդ լեզվաբանական նոր հայտնագործություններով։

Բոլոր ուսումնասիրողները միահամուռ են այն տեսակետի մեջ, որ Հայկի ու Բելի ավանդազրույցը վերաբերում է մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերի պատմական իրողություններին, երբ Սարգոն Աքքադացին, Նարամ-սինը և նրանց ժառանգորդները ջանում էին Ասորեստանի գերիշխանությունը տարածել շրջակա մեծ ու փոքր երկրների վրա, և սրանք էլ պարբերաբար ապստամբում էին, պայքարում իրենց անկախության ու ինքնուրույնության համար։ Այս ամենի մասին խոսող սեպագրեր են հասել մեզ վերոհիշյալ արքաների

անունից, և, հասկանալի պատճառով, նրանք էլ պատմում են, թե իրենց ամեն անգամ բորբոքված ապստամբությունը ճնշվել է դաժանորեն, ու ապստամբ երկիրն այնուհետև հլու հնազանդ է դարձել Ասորեստանին։ Այս դեպքում, սակայն, էլ ինչո՞ւ այնպես շատ են ապստամբությունները, և ինչո՞ւ ամեն անգամ բռնակալն ստիպված է եղել նորից նոր զնալ ապստամբ երկրի վրա։

Նարամ-սինի ու Սարգոնի արձանագրություններում քանիցս հիշվում է Արմանի-Հայք երկիրը՝ Ասորեստանի դեմ ապստամբածների ցուցակում։ Սա ապացույց է այն իրողության, որ Հայկի ու Բելի զրույցներն ստեղծվել են իրական-պատմական փաստերի հիման վրա։

Վերը ցույց տրվեց, որ էբլայից (հյուսիս-արևմտյան Սիրիայում) հայտնաբերված սեպագրերում բազմաթիվ հիշատակություններ կան Արմի-Արմանի երկրի մասին՝ մեծ մասամբ կապված Հայք երկրանվան ու հայ ցեղանվան հետ։

Սրանք ևս հաստատում են մեր ավանդազրույցի իրական-պատմական հիմքերը, մի անգամ ևս ճշգրտում նրանց վավերականությունը։

Զրույցի սկիզբը՝ Հայկի ցեղի բաժանումը միջագետքյան, թեկուզև բռնակալական, հանրությունից, դարձյալ արձագանք է իրական-պատմական հանգամանքի, որն էլ հաստատվում է հնդեվրոպական լեզվաբանության հին ու նոր հայտնագործություններով։ Հայտնի է արդեն, որ հնդեվրոպական նախամայր լեզվի կրողները բնակվելիս են եղել Միջագետքի ու հարակից շրջանների տարածքում՝ անպայման ընդգրկելով նաև Հայկական բարձրավանդակը։ Այստեղ էր, որ մ. թ. ա. 4—3-րդ հազարամյակներում նախամայր լեզվի բնի վրա ճյուղավորված հայերենի կրող ցեղն անջատվեց ընդհանրությունից, իր համար բնակավայր ընտրեց Արարատյան երկիրը՝ այն դարձնելով իր հայրենիքը, իր բախտի ու պատմության օրրանը։

Հիմա արդեն ոչ որի համար առեղծված կամ հայտնություն չէ Հայկի ու խալդի նույնությունը։ Դեռևս, Ի. Մեշչանինովը, ռուս ականավոր արևելագետ ու լեզվաբան, գտնում էր, որ դրանք նույն աստվածության անվան տարբերակներն են,

անուշինը հավանաբար ամենուրեք պահպանված հայոց ավանդական հիշողություններում, մյուսը՝ հարմարեցված խուռիերեն-ուրարտերեն սեպագրերի ուղղագրության կարգուկանոնին։ Գիտնականին լավ հայտնի էր, որ հայերենում առհասարակ սովորական բան են հ—խ, յ—լ փոփոխակները։

Ուրեմն, քերականորեն ապացուցվում է երկու տարբերակների նույն անվան վերաբերելը, որ հաստատվում է նաև իրական-պատմական ոչ պակաս կարևոր հանգամանքներով։ Այսպես. հայ ժողովուրդը վերոհիշյալ ավանդություններում իրեն համարում է հայկազուն, Հայկից սերված, Հայկի սերունդ, Հայկի ժառանգ, Հայք, որ «Հայկք»-ի (հայկեր) բարեփոխված ձևն է։ Այդպես էր նաև Վանի կամ Արարատյան թագավորության մեջ. երկրի բնակիչներն իրենց համարում էին հալդի ժառանգներ, որդիներ — haldini։ Այս փաստի վրա էլ առաջին անգամ ուշադրություն է դարձրել Կարլ Ֆրիդրիխ Լեհման-Հաուպտը (1861—1938)։

Բայց մենք ունենք նաև այս ամենը միավորող, ամփոփող, միասնության մեջ ներկայացնող մի աղբյուրագիտական տրվյալ ևս, որի մեջ արդեն չի կարելի չտեսնել հարցի վերջնական ու սպառիչ լուծումը։ Դարեհ Ա-ի Բեհիստունյան տարեգրության մեջ Արախա հայը, նա, որ նվաճել էր Բաբելոնը և դարձել նրա գահակալը, կոչված է «Մեծ Հալդի որդի Արախա հայ», ուրիշ խոսքով՝ Մեծ Հայկի որդի կամ հայկազուն Արախա։

Հին Հայաստանի նյութական ու հոգևոր մշակույթի այս թեպետև թռուցիկ քննությունից կատարելիք առաջին ու ամենակարևոր եզրակացությունն այն է, որ Հայկական լեռնաշխարհի առաջին տերը եղել է հայ ժողովուրդը։ Հնդեվրոպական նախամորից բաժանվելուց, ուրեմն և իր ինքնուրույն կյանքն սկսելուց ի վեր նա անընդմեջ բնակվել է այստեղ։ Հետևաբար և այս ընդարձակ տարածքի վրա սփռված մշակութային արժեքները՝ ժայռապատկերներն ու ճարտարապետական հուշարձանները, արտադրական կյանքի խոսուն մնացորդները, հավատալիքն ու բանահյուսությունը նրա բազմադարյան մշակութային կյանքի արգասիքներն են համարվում և ցույց են տալիս մի վերին աստիճանի ինքնուրույն ու ինքնատիպ ազգագրական միավորի շարունակական-անխափար զարգացումն իր բնաշխարհում։

Հայաստանն այսպես մտավ հելլենիստական դարաշրջանը, իր ինքնուրույն-ինքնահատուկ մշակույթի պատկառելի հարստությամբ, որպեսզի այդ շրջանի հեղափոխիչ երևույթները յուրացնելով էլ ամուր ու անխախտ հիմք ստեղծի մեզ վաղմիջնադարյան հանճարեղ մշակույթի համար։

ՄԵՐ ԲՆԻԿ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾԱՂԿՈՒՄԸ

Հայագիտության մեջ ընդունված է մ. թ. ա. VI—I դարերի Հայկական թագավորությունը բաժանել երկու արքայատոհմի, որոնցից առաջինը, գահակալած VI—III դարերում, կոչում են Երվանդունիներ, Երկրորդը, գահակալած II դարի սկզբից մինչև I-ի վերջը, Արտաշիսյաններ։ Ընդ որում, այս բաժանման հեղինակներին հայտնի է, որ երկրորդ գահատոհմի առաջին արքա Արտաշես Ա-ն, որի անունից էլ մակաբերում են հաջորդների տոհմանունը, իր թոռած արամեերեն արձանագրություններում ներկայանում է որպես «Երվանդյան», և տոհմասարակ ստուգվում է Արտաշեսի անմիջական ծագումը նախորդ տոհմից։ Այս պատճառով էլ, կարծում եմ, պետք է մերժել մ. թ. ա. VI—I դարերի Հայոց թագավորական հարստությունը տարբեր գահատոհմերի բաժանելու սխալ սովորությունը՝ վերստին ընդունելով Մովսես Խորենացու ավանդած հիմնավոր ու արդար կարծիքը մեր այդ վեցհարյուրամյա գահատոհմի անխաթար միասնության մասին, չնայած հայտնի է, որ սկզբնական շրջանում Հայոց գահն զբաղեցրել են նաև օտար դրածոներ։

Մեր վաղ միջնադարյան հեղինակները Մեծ Հայքի միասնական թագավորության առաջին գահակալների տոհմաբանության վերաբերյալ ունեին մի այլ պատկերացում ևս, որն այսօր թվում է ո՞չ պակաս հավանական։ Նրանք համոզված էին, որ Պարթև Արշակունիների նախահայր Արշակ Մեծն է իր եղբայր Վաղարշակին թագավոր կարգել Հայոց վրա (տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Ա, գլ. Ը—Թ),

և այսպես է սկսվել հայ Արշակունիների գահատոհմի գործունեությունը։

Այս տեսակետն ընդունելով էլ՝ մենք պարտավոր ենք հայ Արշակունիների ծագումը տանել մ. թ. ա. երկրորդ դարի կեսը և ոչ թե մ. թ. առաջին դարի 66 թվականը, որը հանիրավի անառարկելի է համարվում հայագիտության նոր ներկայացուցիչների աշխատություններում։

Գալով Արշակունիներին նախորդած գահատոհմի կենսագրությանը՝ պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը. Պատմահայրը, հավանաբար, գիտեր, որ հայրենի երկրի տարբեր վայրերում նախընթացին ստեղծված թագավորություններն ու իշխանությունները միշտ չէ, որ գտնվել են հայազուն (Հայկի ժառանգներից սերված) գահակալների ձեռքին։ Իսկ ահա մ. թ. ա. 7-րդ դարի վերջում Հայաստանի թագավոր է դառնում Սկայորդու որդի Պարույրը, և նրանից սկսած հաստատուն է դառնում Հայկի ժառանգներից սերված-ների թագավորությունը («...մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հաստանն յաստիճան»)։ «Մեր թագավորների մեջ,— գրել է Քերթողահայրը,— ինձ համար այս մարդիկ են սիրելի՝ իբրև բնիկներ, արյունակիցներ և իսկական հարազատներ»։

Վերն ասացինք, որ Պարույրի գահակալության հանգամանքների մասին քիչ տեղեկություններ են պահպանվել։ Մովսես Խորենացին այնքանը գիտե, որ Պարույրին թագադրել է Մարաց արքա Վարբակեսը, որի դաշնակիցն էր առաջին Հայ պսակավոր (թագադրված) գահակալը։

Խորենացու պատմության մեջ կան նաև Պարույրի հաջորդների անունները՝ Հրաչյա, Փառնավազ, Պաճուլ, Կոռնակ, Փավոս, Մյուս Հայկակ, Երվանդ Սակավակյաց, Տիգրան։ Սրանցից առաջին վեցը հենց անուններ էլ մնում են՝ առանց լրացուցիչ տեղեկությունների։ Սակայն Երվանդից ըսկրսած՝ գալիս են անուններ, որոնցից շատերի մասին բավական հստակ տեղեկություններ են հաղորդում աղբյուրները, հատկապես հույն հեղինակները։ Օրինակ, Քսենոփոնի (մ. թ. ա. 5-րդ դ. վերջ — 4-րդ դ. սկիզբ) «Կյուրոպեդիա» գրքում հաղորդվում է, թե ինչ-որ ժամանակ Հայաստանը, որ ուներ սեփական զորք (40 հազար հետևակ և 8 հազար

հնձքալ), գտնվել է Մարաց թագավորության գերիշխանության ներքո, հարկ է տվել նրան, ինչպես նաև իր զորքի կեսն է տրամադրել պատերազմների ժամանակ։ Բայց ահա, շատ չանցած, Հայոց թագավորությունը հրաժարվում է կատարել այս նվաստացուցիչ պարտավորությունները և ձեռք է բերում որոշակի ինքնուրույնություն, դառնում Մարաց թագավորության փլատակների վրա բարձրացած Աքեմենյան պետության դաշնակիցը։ Հայանի էր, օրինակ, հայկական զորքերի մասնակցությունը հաղթական այն պատերազմներին, որ Աքեմենյան Կյուրոս Մեծն էր ձեռնարկել 539—538 թթ. Միջագետքի երկրները նվաճելու և հպատակեցնելու համար։ Սրանից հետո շուրջ մեկ ու կես տասնամյակ, Աքեմենյանների պետության մեջ բռնկված գահակալական կռիվների օրերում, Հայաստանն անջատվել էր իր հզոր հարևանից և ձեռք բերել լիակատար անկախություն, որը տևեց մինչև Դարեհ Վշտասպյանի ժամանակները, նույն դարի 20-ական թվականների վերջը։

Որոշ տեղեկություններ են պահպանվել նաև Երվանդի ու Տիգրանի գործունեության շրջանակների և գահանիստ կենտրոնի մասին։ Այս տեղեկություններից ենթադրվում է, որ մայրաքաղաքն է եղել Վան-Տոսպը՝ նախորդ շրջանի թագավորության երևելի գահանիստը։ Այս ենթադրությանն ուժ է տալիս ուշ դարերում հիշատակված այն իրողությունը, որ Վանը ժամանակին կոչվել է նաև Երվանդավան (տե՛ս Մատենադարանի ձեռ. № 5416, էջ 17բ — 18ա, № 6013, էջ 35ա, բ), ինչպես նաև Երվանդի անվան հետ կապված մի շարք տեղանուններ, որ եղել են հենց Վանի շրջակայքում ու ամբողջ Վասպուրականում։

«Կյուրոպեդիայի» և այլ աղբյուրների տվյալներով որոշվում են Հայկական պետության սահմանները, որոնք հարավ-արևելքում շփվում էին Մարաստանի հետ՝ անցնելով Վանա և Ուրմիո լճերի միջև, արևմուտքում հասնում էին Սև ծովի ափին տարածված խալդայների երկրին, իսկ հյուսիսում ընդգրկում էին բոլոր այն նահանգները, որոնք Վանի թագավորությանն էին ենթակա, ընդհուպ մինչև Կուր գետը։

Հին աշխարհի շգրված ու գրված օրենքներով՝ ուժեղները միշտ էլ պետք է իշխեին թույլերի վրա, և ուժեղների ուժն էլ իշխելու մեջ է, նվաճելո՛ւ և իշխելո՛ւ։ Հայկական պետու-

թյունը, իր կազմավորման շրջանից սկսած, միշտ էլ ենթակա է եղել ուժեղների ճնշմանը, որովհետև ինքը քիչ, համարյա բացառիկ դեպքերում է ցուցաբերել նվաճելու և իշխելու կիրք։ Եթե Նայիրի-Վանի թագավորության ժամանակներում Հայաստանը համարյա շընդմիջվող բախումների մեջ էր Ասորեստանյան հզոր տերության հետ, միշտ ենթակա նրա դաժան հարվածներին, ապա Հայկազունիների թագավորությունն ուշք բացեց մի նորաթուխ, բայց ո՛չ պակաս դաժան ու ծավայապաշտ բռնատիրության հարևանությամբ, որպիսին Իրանի և հարևան երկրների տարածքում գոյացած թագավորությունն էր։ Փոփոխվում էր այս թագավորական հարստությունը, տարբեր տոհմերն իրար էին փոխարինում, փոփոխական էին նաև թագավորության անունները՝ Մարաց, Աքեմենյան, Սելևկյան են, սակայն անփոփոխ ու համառորեն դիմացկուն էր Հայոց երկրի դեմ կիրառվող քաղաքականությունը, ոտիրելու, կախյալ վիճակում, տկար ու խեղճ պահելու քաղաքականությունը։

Հայոց անկախության դեմ Աքեմենյանների առաջին դաժան հարվածը կատարել էր Վշտասպի որդի Դարեհը, և այս մասին բավական հանդամանորեն խոսում է հենց նրա անունից փորագրված Բեհիստունյան (Բեհիստուն—Աստծու տուն) ընդարձակ սեպագիր տարեգրությունը։ Այնտեղ նախ հաղորդվում է այն մասին, որ Աքեմենյան լծի դեմ ապստամբել և այն թոթափել են նախկինում նրան հպատակ երկրները, որոնց թվում կար և Արմինա-Հարմինա-Ուրաշտու երկիրը (երեք անունները «Հայաստանի» հին պարսկերեն, էլամերեն ու աքքադերեն տարբերակներն են)։ Ապա տարեգրության մեջ ապստամբ Հայաստանի դեմ կազմակերպված կռիվների մասին հետևյալն է հաղորդվում.

«Դարեհ արքան ասում է.— Արդ Արմինա ուղարկեցի մի հույի (արմինացու)՝ Դադարշիշ անունով իմ ծառային, և այսպես պատվիրեցի. «Գնա և նվաճիր այդ ապստամբ զորքը, որն ինձ չի հպատակվում»։ Դադարշիշը գնաց Արմինան նվաճելու։ Երբ նա եկավ Արմինա, ապստամբները դուրս եկան Դադարշիշի դեմ՝ նրան ճակատամարտ տալու։ Դադարշիշը ճակատամարտն ընդունեց։ Արմինայի մեջ Զուզա անունով մի ավան կա։ Ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ։ Երա-

մազդն ինձ օգնեց։ Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից։ Թուրավահարա ամսի 8-ն էր (520 թ. մայիսի 21), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»։

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երրորդ անգամ հավաքվեցին և դուրս եկան Դադարշիշի դեմ պատերազմի։ Արմինայի մեջ Ուհիամա անունով մի բերդ կա։ Ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ։ Արամազդն ինձ օգնեց։ Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից։ Թայգրաչի ամսի 9-ն էր (521 թ. հունիսի 21), երբ ճակատամարտը տեղի ունեցավ։ Հետո Դադարշիշը, հնազանդվելով իմ հրամանին, մնաց Արմինայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի դեպի Մեդիա»։

«Դարեհ թագավորն ասում է.— Այնուհետև Արմինա ուղարկեցի Վահումիսա անունով մի պարսկի՝ իմ ծառային, և այսպես պատվիրեցի. «Գնա, նվաճիր այդ ապստամբ զորքը, որ ինձ չի հնազանդվում»։ Վահումիսան գնաց Արմինան նվաճելու։ Ապստամբները հավաքվեցին և դուրս եկան Վահումիսայի դեմ պատերազմի։ Ասորեստանի մեջ Իգալա անունով մի երկիր կա, ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ։ Արամազդն ինձ օգնեց։ Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ սպանեց ապստամբների բանակից։ Անամակա ամսի 15-ն էր (522 թ. դեկտեմբերի 31), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»։

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ անգամ հավաքվեցին և դուրս եկան Վահումիսայի դեմ պատերազմի։ Արմինայի մեջ Աուտիյարա անունով մի գավառ կա։ Ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ։ Արամազդն ինձ օգնեց։ Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից։ Թուրավահարա ամսի վերջն էր (521 թ. հունիսի 12), երբ ճակատամարտը տեղի ունեցավ։ Հետո Վահումիսան հնազանդվելով իմ հրամանին, մնաց Արմինայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի դեպի Մեդիա»։

Սեպագրի տեղեկությունների, մանավանդ թվականների վայրիվերությունն ուղղելով՝ հնարավոր է եզրակացնել, որ ապստամբների ու պարթևների առաջին ճակատամարտը տե-

ղի է ունեցել 522 թ. դեկտեմբերի 22-ին, Ասորեստանի Իգալա նահանգում։ Ինչո՞ւ Ասորեստանում, Հայաստանից այդքան հեռու։ Պարզ է, ա՛յն պատճառով, որ հայերն են նախահարձակ եղել և պատերազմ վարել իրենց երկրի սահմաններից դուրս։ Դժվար չէ նաև պատկերացնել ելքը. Դարեհի զորավար Վահումիսան պարտվել է։ Հակառակ դեպքում հենց այստեղ էլ կխոսվեր հայերի՝ հպատակություն ընդունելու մասին։ Մինչդեռ Գոռոզ Աքեմենյան արքան, ըստ երևույթին, Հայաստանի դաժան ձմեռից խուսափելով, սպասել է հաջորդ տարվա գարնանը, որպեսզի այժմ արդեն իր երկու զորավարներին ուղարկի ապստամբած և ինքնուրույնացած հայերին հնազանդեցնելու նրա՛նց իսկ երկրում։ Զորավարներից մեկը նույն Վահումիսա պարսիկն է, մյուսը՝ Դադարշիշ անունով հայը։ Այս անգամ երկու զորավարներն էլ ճակատամարտեր են տալիս բուն Հայաստանում, Դադարշիշը՝ Զուզա ավանի, Տիգրա և Ուհիամա բերդերի մոտ, Վահումիսան՝ Աուտիյարա գավառում։ Չի կարելի ասել, թե պատժարշավի եկած զորքերն իրենց գործը հեշտությամբ գլուխ բերեցին։ Նրանք ստիպված եղան մղելու մի քանի ճակատամարտեր, և վերջում էլ Դարեհը կարգադրեց, որ ընկրճված երկրում մնան իր երկու զորավարները՝ սպասելով իր ժամանելուն։

Ուսումնասիրողներից ոմանց համար երկրորդական նշանակություն ունի Դարեհի տարեգրության մի տեղեկությունն այն մասին, որ «խալդիտի որդի Արախա հայը» վերոհիշյալ դեպքերի ժամանակ նվաճել է Բաբելոնի գահը և դարձել նրա տիրակալը։ Կամ փորձում են եզրակացնել, թե պարզապես Դարեհի դեմ բարձրացած ապստամբության մեջ հայերն ու ասորեստանցիները հանդես էին գալիս որպես դաշնակիցներ։

Բայց այս դեպքում հայ Արախան ինչո՞ւ պիտի նվաճեր իր դաշնակցի գահը։ Եվ այդ էլ ա՛յն պատերազմի պահին, որը նրա ցեղակիցներն էին մղում ընդհանուր թշնամու դեմ։

Ինձ թվում է՝ այս իրողությունից անելիք միակ եզրակացությունն այն պիտի լինի, որ Հայոց զորքերը ռազմերթով մտել են Ասորեստան, այնտեղ ունեցել որոշակի հաջողություն, Արախան գրավել է երկրի գահը, իրեն հայտարարել Ասորեստանի ինքնակալ։ Եվ սրանից հետո է, որ Դարեհի

հանձնարարությամբ Վահումիսա զորավարն իզուր է հասել ու ճակատամարտ տվել հայ զորքին։

Հավանաբար Դարեհին վերջապես հաջողվել է Հայաստանը հպատակեցնել։ Հունական աղբյուրները հաստատում են, որ Հայոց երկիրը բաժանված է եղել երկու մասերի, որոնք և մտել են Աքեմենյան թագավորության ստեղծած սատրապություններից 13-րդի և 18-րդի մեջ։ Ենթադրվում է, որ 13-րդ սատրապության վարչական կենտրոնը եղել է Վան քաղաքը, քանի որ այնտեղ պահպանվել է Քսերքսես թագավորի մի արձանագրությունը՝ իր շինարարական ձեռնարկումների վերաբերյալ։ Սակայն ի՞նչ սատրապությունների էլ վերաբերեին Հայաստանի մասերը, Աքեմենյան արքաներն ըստ երևույթին միշտ էլ Հայաստանը դիտել են որպես մի ամբողջություն, որն ուներ իր զորքը. մասնակցում էր այդ արքաների մղած արշավանքներին, տալիս վիթխարի հարկ՝ 400 տաղանդ արծաթ և, ամենակարևորը, հիմնականում կառավարվում էր տեղացի-հայ սատրապների կամ կուսակալների կողմից, որոնք իրենց հայրենիքում հանդես էին գալիս գերագույն տիրոջ իրավունքներով։ Այս կուսակալ-թագավորների անուններից հայտնի են Հիդարնես Ա (մ. թ. ա. VI դ. վերջ), Հիդարնես Բ (մ. թ. ա. V դ. սկիզբ), Հիդարնես Գ (մ. թ. ա. V դ. կես), Արտաշիր (մ. թ. ա. V դ. երկրորդ կես), Երվանդ Բ (մ. թ. ա. 404—360 թթ.), Երվանդ Գ (մ. թ. ա. 339—300)... Ինչուհետև Հայաստանը վարչական երկու միավորի է բաժանվում։ Կենտրոնական և արևելյան մասում, Երվանդ Գ-ից շուրջ կես դար հետո, դահակալում է Երվանդ Դ-ն, որն այս շրջանում պետք է դառնար սատրապ-տիրակալների վերջին ներկայացուցիչը։ Իսկ Ծոփք-Կոմմագենում կառավարիչներ էին Սամեսը (մ. թ. ա. III դ. կես), Արշամը (240—220), Ծսերքսեսը (մ. թ. ա. III դ. վերջ)։

336 թ. Մակեդոնիայի թագավոր դարձավ Ալեքսանդրը՝ դիտական և ռազմական վիթխարի պատրաստության տեր մի դրածիչ, որն իր առաջ նպատակ էր դրել նվաճելու Արևելքի ոչն ժամանակ հայտնի բոլոր երկրները և ստեղծելու մի պետություն, որն ի վիճակի պիտի լիներ Արևելքը բարձրացնելու իր հայրենիքի մշակութային մակարդակին և իր հայրենիքն ու մնացած ոչ հարուստ երկրները լցնելու Արևելքի հեքիա-

թային հարստություններով։ 334 թ. Ալեքսանդրը մի թեթև զորաբանակով (ընդամենը 30 հազար հետևակ, 5 հազար հեծյալ և 160 նավ) Հելլեսպոնտոսն անցավ և առաջին իսկ ճակատամարտում Գրանիկոն գետի մոտ ջարդեց պարսիկներին։ 333-ին Դարեհ Գ-ն մեկ անգամ ևս ճաշակեց պարտության դառնությունը, իսկ հաջորդ տարում արդեն կորցրեց Փյունիկյան ծովափի բոլոր նավահանգիստները... Եվ այսքանից հետո ականատես եղավ, թե ինչպես նոր ու բազմահնար աշխարհակալի առաջ մեկը մյուսի հետևից իրենց գրոշներն են փռում մինչ այդ անհողդողդ համարված պետությունները։ 332-ին Եգիպտոսի քրմերը Ալեքսանդր Մակեդոնացուն հայտարարեցին իրենց թագավորը։ Իսկ հաջորդ տարվա (331) հոկտեմբերի 1-ին Գավգամելա (այժմ՝ Տել-Հոմել) գյուղի մոտ տեղի ունեցավ Ալեքսանդրի ու Դարեհ Գ Կոդոմանոսի ամենավճռական ճակատամարտը, որին պարսիկների կողմից մասնակցում էին նաև Մեծ Հայքի զորքերը՝ Երվանդի և Փոքր Հայքինը՝ Միթրավստեսի առաջնորդությամբ։ Մեծ զոհերի գնով, սակայն փայլուն ռազմավարությամբ, Ալեքսանդրը ջախջախեց հակառակորդին, ապա անմիջապես նվաճեց Աքեմենյանների մնացած գլխավոր կենտրոնները։ Իր իսկ զորավարների ձեռքով սպանվել էր Դարեհը։ Լիակատար հաղթանակով պսակված Ալեքսանդրը նրա դին մեծ շուքով թաղեց Պերսեպոլսում, ապա իրեն հռչակեց Աքեմենյան գահի օրինական ժառանգորդը և իր նոր աշխարհակալության գահանիստ հայտարարեց Բաբելոնը։

Հաջորդ տարիներին Ալեքսանդր Մակեդոնացին իր վիթխարածավալ տիրակալությանը ենթարկեց Արևելքի բազմաթիվ երկրներ՝ մինչև Միջին Ասիա և Հնդկաստանի խորքերը։ Այդպիսով ստեղծվեց մի տիեզերակալություն, որը եթե ինչ-որ չափով շարդարացրեց էլ նրա հեղինակի սպասելիքները իբրև հզոր ու առողջ մարմին և այդ պատճառով էլ երկար կյանք չպետք է ունենար, սակայն իրար բերեց, խաչաձևեց Արևելքն ու Արևմուտքը, հիմք դրեց մարդկային քաղաքակրթության մի նոր — բարձր շրջանի (մ. թ. ա. III—I դդ.), որն ընդունված է կոչել հելլենիստական (հունական)։

Ալեքսանդրի մահից (մ. թ. ա. 323 թ.) հետո շատ կարճ ժամանակում նրա հզոր կայսրությունը բաժանվեց մի քանի

տերությունների։ Ամենախոշոր մասի վրա, որն ընդգրկում էր համարյա բոլոր ասիական երկրները, տեր դարձավ Սելևկոս զորավարը, որից և սկիզբ առավ Սելևկյան թագավորական հարստությունը։ Եգիպտոսին տիրացավ Պտղոմեոսը, Մակեդոնիային ու Հունաստանին՝ զորավար Անտիգոնոսը։

Գավգամելայի ճակատամարտից տուն դարձած Երվանդ Դ-ն ու Միթրավստեսն անմիջապես հայտարարել էին իրենց թագավորությունների անկախությունը, առաջինը՝ Մեծ Հայքում, երկրորդը՝ Փոքր Հայքում։ Սելևկյանները քանիցս փորձեցին վերացնել այդ անկախությունը, նույնիսկ իրենց դրածո սատրապին Հայաստան ուղարկեցին օգնական զորքերով։ Սակայն հայերը ջարդեցին օտար ուժերին, պահպանեցին իրենց անկախությունը, նույնիսկ Բութանիայի ու Կապադովկիայի գահաժառանգներին զինական օգնություն հասցրին՝ իրենց գահերի վրա հաստատվելու՝ ընդդեմ Սելևկյանների։

Հավանաբար Երվանդ Դ վերջինի օրոք Մեծ Հայքի վարչական կենտրոնը Վանից տեղափոխվել է Արարատյան նահանգը։ Այստեղ հին Արգիշտիխինիլի բարեկարգումով Երվանդն ստեղծել է Արմավիր մայրաքաղաքը։ Նույն ժամանակ են կառուցվել նահանգի մյուս ավանները՝ Բագարանը Ախուրյանի վրա, Երվանդավանն ու Երվանդակերտը նրանից ոչ այնքան հեռու։

Եվ, այսուհանդերձ, Սելևկյան տիրակալները դեռ չէին մոռացել իրենց հաշիվները Հայոց երկրի հետ։ Անտիոքոս Գ Մեծը մ. թ. ա. երրորդ դարի վերջում, իր տերության վերջին ուժերը լարելով, հպատակեցրեց հարևան երկրները։ Հավանաբար նրան հաջողվել էր վերացնել նաև հայկական թագավորությունները, որոնց պետք է փոխարինեին իր նշանակած սատրապ-կուսակալները, Մեծ Հայքում՝ Արտաշեսը, Փոքրում՝ Զարեհը, որոնք հայկական ծագում ունեին, սերված էին Հայաստանի տեր հայկազուն թագավորական-կուսակալական հարստության ժառանգներից։ Սակայն ժամանակի քաղաքական իրադարձությունները դասավորվեցին այնպես, որ Հայոց երկրի միասնության վերականգնումն ու աննախադեպ հզորացումը դարձան օրակարգի հարցեր։ Եվ այդ հարցերը պիտի լուծեր Մեծ Հայքի տիրակալ Արտաշեսը՝ մեր հին պետականության այդ հզոր կազմակերպիչը։

ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԻ

Մ. թ. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյան Անտիոքոսի զորքերը ջարդվեցին Փոքր Ասիա մտած Հռոմեական հանրապետության ուժերից։ Դրանից հետո կնքված դաշնագրով Սելևկյան պետությունը զրկվեց Փոքր Ասիայից, և Հռոմի ներկայությունը մեծ հեղաշրջում մտցրեց արևելյան երկրների քաղաքական կյանքում։ Անկախ՝ հետագայում Հայաստանին պատճառելիք չարիքներից, Հռոմն այս պահին իրապես օգնեց հայկական իշխանություններին՝ վերագտնելու իրենց ինքնուրույնությունը։ Սելևկյան լուծը թոթափած հայ կառավարիչներն իրենց անկախ թագավորներ հայտարարեցին, Արտաշեսը՝ Մեծ Հայքում, Զարեհը՝ Փոքրում, Պտղոմեոսը՝ Կոմագենում, Միհրդատը՝ Փոքր Հայքում։

Սակայն այս պետական կազմավորումների մեջ հայոց համար ճակատագրական դերը վերապահված էր միայն Մեծ Հայքին, որովհետև այն հանդիսանում էր Հայաստանի մեծագույն մասը, որի շրջահայաց պետական գործիչ Արտաշեսը հասկացել էր իր տերության դերը և անմիջապես ձեռնարկեց դրա իրականացմանը։

Իր անունից փորագրված արամեերեն արձանագրություններում Արտաշեսը ներկայանում է որպես «Արտաշես արքա, Բարի, որդի Զարեհի, Երվանդյան»։

«Երվանդյանը» հաստատումն է այն իրողության, որ այս նոր գահակալը նախորդ շրջանի հայոց թագավորական տոհմի ժառանգորդն է եղել, հայկազուն Երվանդներից վերջինի թոռը և որդին Զարեհի, որի անունը ևս նշանավորված էր հայրենաշեն գործերով։ Մասնավորապես հայտնի էին այդ Զարեհի կառուցած քաղաքները. երեքը՝ միայն Զարեհավան անունով (Նորշիրականում, Բագրևանդում, Արշարունիքում), երկուսը՝ Զարիշատ անունով (Աղիովտում և Վանանդում)։

Արտաշեսի կյանքի ու գործի մասին տեղեկություններ են հաղորդում անտիկ մի շարք հեղինակներ, ինչպես նրա ժամանակակից Պոլիբիոսը, այնպես էլ հետագաները՝ Դիոդորոսը, Ստրաբոնը, Պլուտարքոսը, մինչև Հիերոնիմոսը, որոնք, անշուշտ, օգտվել են Պոլիբիոսի և մյուս ժամանակակիցների

վկայություններից։ Հայերենի աղբյուրների մեջ ակնառու տեղը պատկանում է Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, որի տվյալների համար աղբյուր են ծառայել ինչպես Դարանաղյաց Անիի քուրմ Ողյումպի «Մեհենական պատմությունը», այնպես էլ հայ ժողովրդի պատմական հիշողությունները։ Արդեն հաստատված է, որ մեր Պատմահայրը թյուրիմացաբար շուրջ երկու դարու ժամանակով տեղաշարժել է Արտաշեսին (մ. թ. ա. I դ. վերջ — II դ. սկիզբ) և մասամբ էլ Վաղարշակ ավանդական արքային է վերագրել Արտաշես Ա-ի գործունեությունը, հատկապես պետական շինարարության հիմնարար ձեռնարկումները։ Սակայն անտիկ աղբյուրների տվյալների և Արտաշեսի արամեերեն արձանագրությունների համադրությամբ ուսումնասիրողներն ստուգել են Պատմահոր տվյալները և եկել այն եզրակացության, որ դրանք միանգամայն հավաստի են ու առավել արժեքավոր, քանի որ ներկայացնում են նաև երկրի ներքին կյանքի կարևոր մանրամասները, հատկապես Արտաշիսյան պետության վերելքի հուժկու քայլերը։

Մ. թ. ա. 189 թ. իրեն Մեծ Հայքի ինքնակալ թագավոր հռչակելով՝ Արտաշեսն անմիջապես ձեռք զարկեց պետության սահմանների ծավալմանը չորս կողմերի վրա։ Ընդ որում, այստեղ կետ-նպատակն այն էր, որ իր մակերի տակ առներ ոչ միայն ամբողջ Հայքը, այլև շրջակա հայախոս բոլոր նահանգները։ Այս միջոցառումների մասին Ստրաբոնը հաղորդում է հետևյալը. «Պատմում են, որ Հայաստանն սկզբում փոքր է եղել և աճել է Արտաշեսի ու Զարեհի ջանքերով, որոնք առաջ Անտիոքոս Մեծի սատրապներն են եղել։ Հետագայում, սրա պարտությունից հետո, մեկը՝ թագավորելով Սոփքում..., մյուսը՝ Արտաշատի շուրջն ընկած նահանգներում, ծավալվեցին՝ հարևան ժողովուրդներից երկրամասեր գրավելով։ Մեդացիներից՝ Կասպքը, Փավենիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրիսի սատրոտի հողերը, Խորձենեն, Գոգարենեն, որն ընկած է Կուր գետի մյուս կողմում, խալիբներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենը, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասն են կազմում, կատաոններից՝ Եկեղիքը և Անտիտավրոսի շուրջն ընկած երկիրը, սատրիներից՝ Տմորիքը, Այսպիսով, բոլորը միալեզու են»[1]։

Ստրաբոնի այս տեղեկությունը մինչև այժմ տարբեր կերպ են մեկնաբանել։ Ոմանք մտածել են, որ սա հավաստում է, թե Արտաշեսի գահակալության առաջին տասնամյակներում արդեն թվարկված նահանգների բնակիչները վերջնականապես հայացել էին, ուրեմն և ամբողջ Հայաստանը միալեզու էր, խոսում էր հայերեն։ Կան գիտնականներ էլ, որոնք Ստրաբոնի խոսքը համարում են չափազանց լավատեսական. իբր, վերանվաճված նահանգները չէին կարող այդպես միանգամից հայացած լինել, և խոսքն այն մասին է, թե Ստրաբոնի ժամանակ, Արտաշեսի գահակալությունից շուրջ երկու դար հետո է, որ հիշյալ բոլոր նահանգները միալեզու են դարձել։

Ստրաբոնի խոսքը ճիշտ հասկանալուն մեծապես օգնում են մեր Պատմահոր տեղեկությունները, որոնք ևս վերաբերում են Արտաշիսյան պետության առաջին խիզախ քայլերին, առավել որոշակի են և մանրամասների մեջ ավելի ճշգրիտ, քան հույն աշխարհագետի հաղորդումները։ Արտաշեսը (Մ. Խորենացու տարբերակում՝ Վաղարշակը) Մեծ Հայքի նոր թագավորության ներքին և արտաքին կարգուկանոնի հաստատումն սկսել էր սահմանների կարգավորմամբ։ Նախ՝ արտաքի՛ն սահմանների, որոնք պետք է ընդգրկեին հայախոս նահանգները, հայ բնակչությունը, որտեղ էլ այն լիներ։ Պատմահայրն ասում է՝ Հայոց պետության սահմանները զծվեցին «զնզերբ հայկական խօսիցս», այսինքն՝ հայոց լեզվի տարածման սահմաններով։ Տրվում են նաև այդ սահմանների մեջ մտած ծայրամասային հայաբնակ նահանգներն ու գավառները։ Հյուսիսում սահմանը, հիմնականում անցնելով Կուր գետի հոսանքով, ընդգրկում էր նաև ամբողջ Գուգարք նահանգը, որի մի մասը փռված էր Կուրի ձախափնյակում։ Արևմուտքում Անգեղյա տան տիրույթները հասնում էին Պոնտական ծովին։ Հարավում հայ բդեշխությունը սահմանակից էր Ասորեստանին՝ «առ ափն Տիգրիս գետոյ»։ Արևելքում Կասպք (Փայտակարան) և Պարսկահայք կամ Պարսպատուն

1 Ստրաբոն, Աշխարհագրություն, գիրք XI, գլ. 14, § 5։

նիք նահանգն էր առնվել հայոց սահմանների մեջ։ Հետևապես Մովսես Խորենացու և Ստրաբոնի տեղեկությունները սահմանների հարցում համերաշխ են իրար հետ։ Մեր Պատմահայրն այդ սահմանների մեջ առնված է համարում այն նահանգները, որոնք հայախոս են եղել և հայկական։ Ուրեմն, այստեղից էլ պիտի եզրակացնել, որ Ստրաբոնի «բոլորը միալեզու են» արտահայտությունն իր մեջ է առնում հին իրողությունը. Արտաշեսի պետության սկզբնական տարածքի և վերամիավորված նահանգների բնակիչները «միալեզու են», քանի որ միասնական պետության սահմանների մեջ են առնվել հիմնականում հայախոս ու հայկական նահանգները։

Ուրեմն, այստեղից կատարելիք կարևոր եզրակացությունն այն է, որ Արտաշեսը հարևաններից ոչ թե նոր կամ օտար նահանգներ է գրավել, այլ վերանվաճել և իր թագավորությանն է միացրել այն նահանգները, որոնք առաջներում Հայոց պետության սահմաններում են գտնվել և գլխավորապես ունեցել են հայ բնակչություն։

Այստեղ ավելորդ չէ վերհիշել Վանի կամ Արարատյան թագավորության ծավալման շրջանը։ Այն ժամանակ, մեր Պատմահորը հասած տեղեկությունների համաձայն, Արամ թագավորը (մ. թ. ա. 9-րդ դ. առաջին կես) հարևան երկրներից շրջաններ էր միացնում իր տերությանը և ամեն անգամ հարկադրում էր, որ նորանվաճ երկրամասի բնակչությունը սովորի խոսել հայերեն («Հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական»)։

Շատ հետաքրքիր է, որ մեր հեռավոր նախնի Արամն արդեն հասկացել էր, թե որքա՜ն հեղհեղուկ պիտի լինեն հիմքերը մի տերության, որի սահմաններից ներս բնակչությունը կազմում է ոչ թե միաձույլ ու միատարր էթնիկական ամբողջություն, այլ հանդիսանում է տարացեղ, իրար շրջերվող կոնգլոմերատ։ Արամի հաջորդներին, ըստ երևույթին, հաջողվել էր իրականացնել իրենց իմաստուն նախորդի երազանքը. ընդարձակ պետության տարածքում հայացել էին նաև բոլոր այն նահանգները, որոնք հետագայում էին միացվել Վանի թագավորությանը։ Նախորդ գրույցների մեջ մենք ծանոթացել էինք այդ թագավորության սահմաններին, որոնք մոտավորապես համապատասխանում էին հետագայի (Արտաշիսյան)

Մեծ Հայքի «հայոց լեզվի տարածման եզերքներին»։ Եվ եթե Վանի թագավորությանը հաջորդած հայկազունի Երվանդյան թագավորների ու կառավարիչների շրջանում մի շարք նահանգներ պոկվել էին հին հայկական ու հայախոս պետությունից (նույնիսկ Բասորոպեդա-Վասպուրականը գտնվում էր մարաց տիրապետության ներքո), ապա Արտաշեսն իր առաջին խնդիրը համարեց Մեծ Հայքի թագավորության մեջ առնել բոլոր նրանց, ստեղծել միացեալ մի պետություն, որը կարողանար դիմանալ գալիք դարերի փորձություններին։ Եվ, ինչպես տեսանք Ստրաբոնի ու Մովսես Խորենացու տեղեկություններից, Արտաշեսն իր այդ խնդիրը կատարեց մեծագույն հաջողությամբ։

Հաջորդ կամ առաջինի հետ զուգահեռաբար կատարված կարևոր միջոցառումները վերաբերում էին երկրի ներքին կյանքին։ Արտաշիսյան տերությունն ընդարձակվում էր անընդհատ թափով և, դատելով մեր Պատմահոր ունեցած տվյալներից, պետք է ենթադրել, որ ուռճանում էր նաև երկրի բնակչությունը։ Իհարկե, ոչ միայն ի հաշիվ վերամիավորվող հայկական երկրամասերի։ Անհամեմատ բազմացել էր Հայաստան աշխարհի բնակչությունը,— հաղորդում է Մովսես Խորենացին,— ներմուծվել էին բազմաթիվ ցեղեր, որոնք բնակեցվել էին լեռներում և դաշտերում։ Այսքանից պետք է եզրակացնել, որ վերաբնակեցվածներն ստրկատիրական կարգի նյութն էին, և նրանց բնակավայրերը՝ նոր գյուղերը, ագարակներն ու դաստակերտները, կլցված տիրող վերնախավի ներկայացուցիչներին, պիտի ստանային իրավական հաստատում։ Եվ, ահա՛, թագավորը կատարեց այդ հաստատումը, գծեց սահմանները, «հաստատեց սահմանների այսպիսի նշաններ. հրաման տվեց կոփել բառակողմ քարեր, մեջները պնակաձև փոսեր անել, տնկել հողի մեջ, իսկ վրաները կանգնեցնել երկրի մակերևույթից փոքրին բարձր քառակողմ աշտարակներ» (գիրք Բ, գլ. ԾԶ)։

Արտաշիսյան սահմանային այս քարերից մի քանիսը գտնվել են, ունեն արամեերեն արձանագրություններ և հաստատում են մեր Պատմահոր տեղեկությունների վավերականությունը։

Դարձյալ Պատմահայրն է հաղորդում, թե՝ «Ասում են՝ Ար-

տաշեսի օրոք Հայոց աշխարհում այլևս անմշակ հող չկար՝ ո՛չ լեռնային, ո՛չ էլ դաշտային, այնքան շեն էր երկիրը» (անդ)։

Որոշակի տվյալներ կան նաև Արտաշես արքայի շինարարական, հատկապես քաղաքաշինական ձեռնարկումների մասին։ Նրա օրոք բավական ծավալվել էր սրբատեղիների բարեկարգման, հեթանոսական տաճարների շինարարության գործը։ Մովսես Խորենացին, հավանաբար Ողյումպ քուրմից առնելով, պատմում է, որ «Արտաշեսը գնաց այն տեղը, ուր Երասխն ու Մեծամորը խառնվում են, և այնտեղի բլուրը հավանելով՝ կառուցեց իր անվամբ կոչված քաղաքը։ Երասխն էլ օգտակար եղավ անտառի փայտով. որի համար էլ առանց դժվարության ու արագ կառուցելով՝ նրանում նաև մեհյան կանգնեցրեց և Բագարանից այնտեղ փոխադրեց Արտեմիսի արձանն ու հայրենի բոլոր կուռքերը» (գիրք Բ, գլ. ԽԹ)։

Արտաշեսի կառուցած Արտաշատ մայրաքաղաքի մասին հանգամանորեն հաղորդում է նաև Պլուտարքոսը, որն ասում է՝ իր խորհուրդներով Հայոց թագավորին գործուն աջակցություն է ցույց տվել Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը, որն այդ ժամանակ, իր երկրից վտարանդի, վայելում էր Արտաշեսի հյուրընկալությունը։

Ուսումնասիրողները վաղուց պարզել են, որ Մովսես Խորենացու Պատմության մեջ Հայոց պետության կարգավորիչի դերով հանդես եկող Վաղարշակը, ունենալով ինչ-ինչ առասպելական գծեր, հիմնականում իր վրա կրում է Արտաշես Ա թագավորի գործունեությանը վերաբերող ստույգ հիշողություններ։ Պատմահայրը հաղորդում է, թե ինչպես Վաղարշակ-Արտաշեսը կարգավորում է իր արքունիքը, Սելևկյան և հելլենական պետությունների օրինակներով ստեղծում գործակալություններ, որոնք պետք է գլխավորեին պետության բազմակողմանի կյանքը։ Եվ, բնականաբար, գործակալությունները ժառանգաբար գլխավորելու էին երկրի նախարարություններից կամ իշխաններից առավել հզորները, որոնք նաև խոշոր հողատերեր էին ու ռազմական ակնառու կարողության տեր իշխանավորներ։ Հնարավոր է, որ այս գործակալություններից շատերը ծնունդ լինեին ավելի ուշ ժամանակների՝ իբրև Արտաշեսի հաջորդների կամ նույնիսկ

Արշակունյաց գահակալների հավելվածները։ Սակայն Աբտաշեսի արձանագրություններից մեկը, որ գտնվել է Սիսիանում, տալիս է «թագադիր» պաշտոնյայի անունը։ Իսկ ոմանք կարծում է՝ հաստատելու, որ Պատմահոր պնդումն Արտաշեսի արքունիքի թագադիր ասպետ Սմբատի (Բագրատունյաց նախնիի) մասին միանգամայն իրական-պատմական է։ Ուրեմն, հնարավոր է, որ պարզվեն ու հաստատվեն մեր պատմիչի տեղեկությունները նաև մնացած գործակալությունների վերաբերյալ։

Այսպիսով, հայկազուն Երվանդյան Արտաշես Ա թագավորը վերականգնել էր հին հայկական պետությունն իր վաղնջական սահմաններում, ժամանակի առաջավոր երկրների օրինակով ստեղծել մի ճկուն պետություն, որը վարելու համար ստեղծված էին քաղաքական կյանքի ու գյուղական տնտեսության որոշակի նորմեր և ռազմական հզորությամբ ի վիճակի էր երկիրը պահել ոչ միայն հայ ժողովրդի բնակության, հայոց լեզվի տարածման անխախտ սահմաններում, այլև կատարում էր նվաճումներ, որոնք հիմք էին դառնալու ստրկատիրական կացութաձևի արմատավորման և հասարակության նոր շերտավորումների համար։

Արտաշեսի հաջորդների մեջ առաջինը Միհրդատ Բ-ն էր՝ մ. թ. ա. երկրորդ դարի կեսերին։ Սրան էլ հաջորդել են որդիները, նախ՝ Արտավազդը, ապա՝ Տիգրանը կամ Տիգրանը։ Այս երկուսի գահակալությունը տևել է շուրջ 60 տարի, քաղաքական մեծ իրադարձություններից պարապ մի ժամանակաշրջան, երբ, ինչպես ենթադրվում է, Հայաստանը հնարավորություն ուներ զարգանալու Արտաշես մեծագործ արքայի ընտրած ճանապարհով։ Սակայն, հենց Արտաշես Ա-ի մահից քիչ հետո, 147 թ., Իրանի հյուսիսային մասին տիրած պարթևների ցեղի առաջնորդ Արշակն իրեն թագավոր էր հայտարարել, կարճ ժամանակում հզորացավ, կանգնեց Սելևկյանների տիրակալության դեմ, և, այսպիսով, Մեծ Հայքից արևելք բարձրացավ մի նոր ուժ, որից մեծապես կախված էր լինելու հայ ժողովրդի ճակատագիրը։

Արշակի հաջորդների մեջ առաջինը Միհրդատ Բ (մ. թ. ա. 123—87 թթ.) արքան էր, որ բախվեց Հայոց թագավորության հետ և ունեցավ ակնառու հաջողություն։ Մեծ Հայքի

թագավոր Տիգրան Ա-ն ստիպված եղավ զիջումների գնալ և նույնիսկ իր որդի Տիգրանին պատանդ թողեց Միհրդատի արքունիքում։

Մ. թ. ա. 95 թ. Հայոց թափուր մնացած գահին բազմելու համար Միհրդատն ազատեց արդեն 45 տարեկան թագաժառանգ Տիգրանին, որպես փրկագին նրանից ստանալով «Յոթանասուն հովիտներ» երկրամասը, որ սահմանակից էր իր տերությանը։

Տիգրան Բ-ի գահակալության 40 տարիները դառնալու էին աննախադեպ և, ցավոք, անկրկնելի երևույթ Հայաստանի ամբողջ պատմության մեջ, ցույց տալով հայ ժողովրդի ռազմական ուժի ժամանակավոր մեծությունը և ապացուցելով, որ երկրի կենսունակությունը կախված է ո՞չ միայն, մանավանդ ո՞չ այնքան, ռազմական ուժից։



ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԺԱՄԱՆԱԿ

«Տիգրան թագավորը՝ այս դեռևս չճանաչված հզոր տիրակալը, շատ սվելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հիացած է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությանը», մինչդեռ Տիգրանն իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավերժության համար»։

ՌԸՆԵ ԳՐՈՒՍԵ (Ֆրանսիացի ականավոր արևելագետ)

Քերթողահայր Մովսես Խորենացին, որ, ինչպես տեսանք, Հայոց Հին պատմության նրանելի ժամանակն էր համարում հայկազունի թագավորների գահակալության դարերը, այս թագավորների շարքում էլ մի անմրցակից փառքով է պսակում Տիգրան Բ-ին, կոչված նաև Տիգրան Մեծ, նրան համարելով հայկազուններից ամենաքաջն ու խոհեմագույնը։

Տիգրան Մեծի կյանքը և գործունեությունը հանգամանորեն լուսաբանված են հույն ու լատին պատմիչների երկերում, որոնք նրա նվաճումների մասին խոսելիս բավական կողմնակալ են ու անբարեհաճ։ Բայց և այնպես արձանագրված փաստերն ու մանրամասները հնարավորություն են տալիս վերականգնելու մեր հին պատմության ու պետության ամենահզոր գործչի ամբողջական կերպարը։ Տիգրան Մեծը մի պայծառ լուսապսակով է զարդարված մեր ժողովրդական բանահյուսության մեջ։ Նրան են նվիրված արվեստի ու գրականության բազմաթիվ ստեղծագործություններ, Հակոբ Մանանդյանի ու Հրանդ Արմենի քննական ուսումնասիրությունները։

Տիգրան Բ-ը Հայոց գահը ժառանգեց մի այնպիսի ժամանակ, երբ երկիրը տնտեսական ու ռազմական կայուն հզորություն էր ձեռք բերել և ուներ արդեն ժամանակի հզորագույն տերությունների հետ ոտք ձգելու ամենայն հնարավորություն։ Մանավանդ, որ հարևան ավանդական հակառակորդների վիճակն էլ առժամանակ նպաստավոր էր Հայաստանի համար. հարավ-արևելքում թուլացել էր Սելևկյան թագավորությունը։ Արևելքում արդեն Պարսկաստանն էր բարեկամ, քանի որ Տիգրանին փեսայացել էր Միհրդատ Բ պարսից արքան. նրան կնության էր տրված Տիգրանի դուստր Ավտոման։ Իսկ Սև կամ Պոնտական ծովի ափերի տիրակալն էր Միհրդատ Զ Եվպատորը, որը Հռոմեական աշխարհակալության դեմ միայն փնտրում էր հզորացող Հայաստանի բարեկամությունը։ Մի խոսքով՝ ժամանակը և հանգամանքները շատ էին նպաստավոր Հայոց քաղաքական ու տնտեսական վերելքի համար, և Տիգրան Բ-ը էլ հանդես եկավ որպես իմաստուն ու եռանդաշատ մի թագավոր, որի աչքից չէր կարող վրիպել ներքին ու արտաքին և ո՛չ մի նպաստավոր գործոն։

Մեկ հարյուրամյակ առաջ, երբ Հայաստանի թագավորությունն ապրում էր իր պատմության ամենամռայլ շրջաններից մեկը, Սելևկյան տիրակալ Անտիոքոս Մեծը փորձեց նրան մեկընդմիշտ զրկել քաղաքական ինքնուրույնությունից, այն բաժանեց երկու մասի։ Առաջինը, որ Մեծ Հայքի ճնշող մասն էր կազմում, դրեց Արտաշեսի իշխանության ներքո, իսկ երկրորդը, որ Սոփք նահանգն էր ընդգրկում, հանձնեց Զարեհին։ Վճռված էր, որ Արտաշեսն ու Զարեհը, այնպես էլ նրանց հաջորդները, պետք է մնային Սելևկյան թագավորությանը հպատակ կառավարիչներ։ Սակայն եթե Արտաշեսը շատ շուտով բռնեց ինքնուրույնության ուղին և Հայաստանի համար ապահովեց պետականության մի բարեբեր շրջան՝ թագավորական տան կազմակերպված գործունեությամբ, ապա Սոփքն այնպես էլ մնաց պոկված Մեծ Հայքից։ Եվ ահա, Տիգրան Բ-ը իր առաջին իսկ պետական միջոցառումների մեջ իրականացրեց Սոփքի միացումը Հայաստանին։ Ավելորդ է ասել, որ այս պարագայում Մեծ Հայքը ոչ միայն ընդարձակվում էր՝ մերձարևադարձային մի բարեբեր երկրամաս առնելով իր

գիրկը, այլև ընդհուպ մոտենում էր Սև ու Միջերկրական ծովերի ափերին, և հեռանկար էր բացվում նոր նվաճումների համար։ Հանգամանք, որ չվրիպեց Միհրդատ Եվպատորի սուր աչքից։ Պոնտոսի տիրակալն անմիջապես հասկացավ, որ Սոփքում հիմնավորված Տիգրանի համար արդեն օրակարգի հարց պիտի դառնա հարևան Կապադովկիային տիրանալը, և շտապեց կանխել իր դաշնակցի այդ քայլը։ Միհրդատն ու Տիգրանը վարեցին բանակցություններ, դրանց արդյունքն այն եղավ, որ Կապադովկիայի գերիշխանությունն անցավ Պոնտոսին, իսկ ամեն ինչ, որ կարելի էր այդ երկրից փոխադրել՝ մթերքներ, բազմազան հարստություն, մարդ ու անասուն, տնօրինեց Հայաստանը։ Դաշինքն առավել ամրապնդվեց Միհրդատի դստեր՝ Կլեոպատրայի և Տիգրանի ամուսնությամբ։

Այսպիսով, Տիգրանն իր դիրքերն ամրապնդեց երկրի արևմտյան սահմաններում և հայացքը շրջեց դեպի արևելք։ Այստեղ էլ նրա ծավալապաշտական ձգտումները պետք է հագուրդ ստանային, որովհետև 87 թվականին վախճանվել էր իր փեսա Միհրդատը, և Մեծ Հայքի արքան Պարթևաց գահին տիրացած Գոդերձի հետ կարող էր մաքրել իր հին հաշիվները։ Տիգրանի զորքերը շարժվեցին դեպի Պարսկաստանի խորքերը՝ նախ վերանվաճելով հին հայկական «Յոթանասուն հովիտները», ապա Ատրպատականն ու Հյուսիսային Մարաստանի մյուս նահանգները։ Կենտրոնական Մարաստանում նրանք պաշարեցին էկբատանը՝ արքայից արքայի նստավայրերից մեկը, որտեղ և այդ ժամանակ Գոդերձն էր գտնվում։ Պաշարված Պարթև թագավորին ոչինչ չէր մնում, քան հաշտություն խնդրել Տիգրանից՝ նրան վերջնականապես զիջելով ոչ միայն «Յոթանասուն հովիտները», այլև Ատրպատականը, Մարաստանի մի մասը և Հյուսիսային Միջագետքի երկրների գերիշխանությունը։ Եվ, ամենից կարևորը, Գոդերձն ստիպված էր հրաժարվել «արքայից արքա» տիտղոսից, որն այնուհետև պետք է կրեր Տիգրանը։

Պարթևների երկրում ձեռք բերած այս հաջողությունները ոգևորել էին հայոց բանակներին։ Տիգրանի գլխավորությամբ նրանք շարժվեցին դեպի հարավ, Սելևկյաններից հետ նվաճեցին հայկական Կորդուք և Տմորիք նահանգները, տիրեցին

Տիգրիսի միջին հոսանքն ընդգրկող Ադիաբենե երկրին՝ հինգ Ասորեստանի սրտին, ապա ուղղություն բռնելով դեպի ավելի հարավ՝ գրավեցին անդրաֆրիսյան Միգդոնիա երկիրը՝ Մծբին (Նիսիբին) և Օսրոյենեն՝ Ուռհա (Էդեսիա) մայրաքաղաքներով։ Այսքանից հետո Տիգրան Բ-ի տերության հարավային սահման դարձավ Եփրատ գետը, որից այն կողմ կուչ էր եկել երբեմնի հզոր աշխարհակալությունը՝ Սելևկյան թագավորությունը։

Տիգրան Մեծի, նաև արքայից արքայի նոր ռազմերթն այժմ հայոց բանակները տարավ մինչև Ասորիքի կենտրոնը, ուր տեղական ուժերի խժդժությունեներից խռովված էր Անտիոք մայրաքաղաքը, և երկրի խաղաղ գոյությունն ապահովելու համար մի հզոր ուժ էր հարկավոր, որպիսին հանդիսացավ Տիգրանի տիրակալությունը։ Հուստինոս պատմիչն ասում է՝ տեսնելով Տիգրանի ահեղ առաջխաղացումը, Սելևկիայի մեծամեծներն իրե՛նք նրան հրավիրեցին Անտիոք։ Եվ այսպես, նույն պատմիչի վկայությամբ՝ Տիգրան Մեծը, իր երկրի հետ միաժամանակ, Ասորիքը «տասնյոթ տարի (83-ից մինչև 66 թվականը) կառավարում էր ամենայն անդորրությամբ. պատերազմներով չէր խանգարում ուրիշների հանգիստը, և ոչ ոք նրան չէր անհանգստացնում, այնպես որ պատերազմելու անհրաժեշտություն չկար»։ Հարակից աղբյուրների վկայություններից, սակայն, հայտնի է, որ այդ, այսպես կոչված, «անդորրության» տասնյոթ տարիները տիրական էին Ասորիքում, ուր Տիգրանի հովանու ներքո խաղաղորեն բարգավաճում էր այդ հին ու անհանգիստ երկիրը։ Մինչդեռ Տիգրան Մեծի հայկական բանակները հենց նշված տարիներին են նվաճել Փյունիկիան, Դաշտային Կիլիկիան, Կոմագենե երկիրը։

Այսքանից պարզ երևում է, որ Տիգրան Բ-ի 10—15 տարիների նվաճումների շնորհիվ բավականին ընդարձակվել էին Մեծ Հայքի թագավորության քաղաքական ազդեցության շրջանակները։ Եթե նկատի առնենք, որ հյուսիսում Տիգրանին ենթակա էին Վիրքն ու Աղվանքը, ապա դժվար չէ պատկերացնել սահմաններն այն հզոր տիրակալության, որ ձգվում էր Կովկասյան լեռնաշղթայից մինչև Հորդանան գետը և Կասպից ծովի հարավային ափերն ընդգրկող Ատրպատականից

մինչև Միջերկրականի ափերը։ Այս ընդարձակ տարածքի տարբեր կետերում անհրաժեշտ էին արքայանիստեր, որոնք և ստեղծվեցին։ Բավական է ասել, որ բացի Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատից, որ ժառանգել էր իր նախորդներից, և Անտիոքից, որ շուրջ երկու տասնամյակ գահանիստն էր տեղացիների բարի կամքով, արքայից արքա Տիգրանը հենց բուն Հայաստանում կառուցեց չորս քաղաքներ և նրանք կոչեց իր անունով՝ Տիգրանակերտ։ Սրանցից ամենամեծն ու ամենաբարգավաճը կանգնեցվեց Աղձնիք նահանգում, Տիգրիսի վտակ Նիկեփորիոնի (այժմյան Ֆարկին-սու գետի) հովտում, մյուսները՝ Արցախում, Ուտիքում և Գողթնում։ Հարավային Տիգրանակերտը, հավանաբար, նախատեսված էր դարձնել Հայոց գլխավոր արքայանիստը, և ոչինչ չէր խնայվում նրա համար՝ ո՛չ հարստություն, ո՛չ մարդկային ուժ։ Այս առթիվ հույն մեծ աշխարհագրագետ Ստրաբոնը տեղեկացնում է, թե Տիգրանն «այնքան հզորացավ, որ քաղաք հիմնադրեց... այն կոչելով Տիգրանակերտ։ Նա այնտեղ վերաբնակեցրեց իր իսկ ավերած հելլենական 12 քաղաքների բնակիչներին»։ Հայտնի է, որ Տիգրանի օրոք Հայաստանի հին ու նոր քաղաքներում վերաբնակեցվում էին ոչ միայն հելլեն-հույները, այլև նվաճված երկրների ասորի, հրեա և էթնիկական ուրիշ խմբեր ներկայացնող տասնյակ հազարավոր բնակիչներ, որոնցով Հայոց արքան նպատակ ուներ իր երկրում զարգացնել արհեստները, առևտուրը, տնտեսության ու մշակույթի տարբեր բնագավառները։ Այս ամենի շնորհիվ էլ Մեծ Հայք է թափանցում հելլենական մշակույթը, որն իր խոր ազդեցությունը պետք է տարածեր հայկական կյանքի լայն շրջանների վրա՝ սկսած քաղաքային ապրելակերպից մինչև թատրոնը և արվեստի մյուս ձևերը։ Կարևոր է նշել, որ Տիգրանն այդ անում էր ոչ թե նվաճված երկրներում նույն բնագավառները խաթարելու և բնակչությանը հետամնացության դատապարտելու գնով, ինչպես նրա մասին հաճախ գրում էին հելլեն աշառու ժամանակագիրները։ Բավական է նշել թեկուզ նույն հեղինակների ակամա այն խոստովանությունը, որ արել են Սելևկիա-Ասորիքի վերաբերյալ։ Ասում են՝ Տիգրանը, Անտիոքի գահին տիրանալով, պահպանեց սելևկյան քաղաքների անկախ վիճակը։ Իսկ Լաոդիկիան և Թե-

բիթը (Բեյրութ) հենց Տիգրանի տիրապետության ժամանակ ստացան «աղատություն» կոչվող այն լայն ինքնավարությունը, որից նրանք զրկված են եղել Սելևկյանների օրոք։ Եվ, ի նշանավորումն մ. թ. ա. 81 թ. Տիգրանից ստացած այդ ազատության, Բերիթն ու Լաոդիկիան ստեղծեցին իրենց քաղաքային տոմարը, որի սկիզբն էլ ընդունվեց հենց 81 թվականը։ Այնուհետև այդ տոմարով էին թվագրվում երկու քաղաքաբնակությունների կտրած դրամները։

Տիգրան Մեծն, այսպիսով, ժամանակի խոշորագույն պետական գործիչներից մեկն էր, հայկական պետականության հզոր վերելքի հեղինակը։ Նա ոչ միայն ամրապնդեց իր նախորդների ստեղծած միասնական Հայկական պետությունը, այլև նրա քաղաքական ազդեցության տակ առավ հարևան երկրները։ Եվ հասկանալի է, որ այս բոլորը չպետք է հանգիստ թողնեին Հռոմեական տիրակալությանը, որը նախընթացին աստիճանաբար հզորանալով ու ծավալվելով, նպատակ ուներ տիրաբար նստելու Փոքր Ասիայում ու Արևելքի մյուս երկրներում։

Հռոմի ու Տիգրանի բախման առիթն այն եղավ, որ Հռոմի դեմ կռվող Միհրդատ Պոնտացին՝ Տիգրանի անները, պարտվելով հռոմեական բանակներից, ապաստանել էր Հայաստանում, և Տիգրանը նրան չէր հանձնում թշնամուն, որպեսզի հանդուգն պոնտացուն տանեն ցուցադրելու Հռոմում կազմակերպվելիք հաղթահանդեսին։ Այսքանը կատարվել էր մինչև մ. թ. ա. 69 թվականը։ Եվ ահա, 69-ի գարնանը, երբ Տիգրանը գտնվում էր իր տերության հարավում և այնտեղ իր դիրքերն էր ամրապնդում, վրա հասավ հռոմեական զորավար Լուկիոս Լուկուլլոսի Հայաստան ներխուժելու գույժը։ Անկասկած Լուկուլլոսից առաջ էլ նրա մարդիկ թափանցել էին Մեծ Հայք և Տիգրանին ենթակա երկրները։ Նրանք կաշառքով ու դավերով իրենց կողմն էին դարձրել Կապադովկիայի, Սոփքի ու հարակից շրջանների տերերին և նախապես ապահովել հռոմեական զորքի անարգել երթը դեպի Մեծ Հայքի սիրտը։ Եվ պատահական չէր այն գյուրին ընթացքը, որով Լուկուլլոսը հասավ Տիգրանակերտ ու պաշարեց Հայոց նորակերտ թագավորանիստը։

Ավելի քան վեց ամիս տևեց պաշարումը։ Այս ընթացքում

Տիգրանին հաջողվեց փոքրաթիվ մի զորամասով ճեղքել հռոմեացիների շղթան, մտնել քաղաք և ազատել այնտեղ գտնվող իր կանանոցն ու արքայական գանձերը։ Հետո քաղաքից դուրս տեղի ունեցած ճակատամարտում նա տվեց մեծաքանակ զոհեր և հեռացավ Արտաշատ՝ երկրի բոլոր ուժերը հավաքելու և նոր ու վճռական մարտի նետվելու համար։

Տիգրանակերտն ընկավ վեցամսյա հերոսական պաշտպանությունից հետո։ Ժամանակակից պատմիչները միաբերան վկայում են, որ Լուկուլլոսի առաջ քաղաքի դռները բացել էին դավաճան օտարները, և Հռոմի սնապարծ զորավարը նախ կողոպտել, ապա ավերել է Տիգրանի պերճաշուք նրստավայրը։

Իսկ Արտաշատում այդ ժամանակ Տիգրանի հետ խորհրդի էր նստած նրա քաջ ու բազմափորձ անները՝ Միհրդատ Եվպատորը։ Նրանք որոշեցին մեծ զորահավաքով երկիրը ոտքի հանել ընդդեմ հռոմեական բանակների։ Տիգրանին հաջողվեց պատերազմի դուրս բերել ոչ միայն բուն Հայաստանի, այլև Վիրքի ու Աղվանքի, Ատրպատականի ու մյուս ենթակա հարևանների ուժերը։ 66 թ., ընդառաջ ելնելով Արտաշատը նվաճելու նպատակով Մծբինից դեպի հյուսիս շարժվող Լուկուլլոսին, Տիգրանը ճակատամարտ տվեց Արածանիի մոտ և թշնամուն ստիպեց բռնել նահանջի ճանապարհը։ Այնուհետև Տիգրան արքային հաջողվեց հռոմեացիներից մաքրել իր երկրի հարավային շրջանները։ Նույնիսկ վերադարձրեց Կապադովկիան։ Նրա զորքերի օժանդակությամբ Միհրդատն էլ իր Պոնտոսն էր ազատագրել թշնամիներից։

Չհաշված մի շարք ուրիշ մանր ու մեծ միջադեպերը, որոնք այս տարիներին զբաղեցնում էին Հայաստանի հզոր տիրակալին, հարկ է նշել, որ 66 թ. Հայաստան եկավ հռոմեական մի նոր բազմահազարանոց բանակ՝ զորավար Պոմպեոսի գլխավորությամբ։ Տիգրանի հետ չէր այլևս Միհրդատ Պոնտացին։ Պոմպեոսի բանակը դեպի Արտաշատ էր առաջնորդում Հայոց թագավորի դավաճան որդին՝ Տիգրան կրտսերը, որը նախ Պարթևաց թագավորի գիրկն էր նետվել՝ նրա օժանդակությամբ հորը տապալելու և Հայոց գահին տիրանալու համար։ Եվ հիմա էլ նույն նպատակով իր ծառայությունն էր մատուցում հռոմեացի նվաճողին։

Այս պարագաներում Տիգրան Բ-ը նախընտրում է հաշտությունը և բանակցություններ է սկսում Պոմպեոսի հետ։ Կնքվեց հաշտություն, որով, ճիշտ է, Հայաստանի թագավորությունը զրկվում էր նվաճած երկրների մեծ մասից (Ասորիք, Փյունիկիա, Կիլիկիա), սակայն պահպանում էր իր ամբողջությունը՝ դառնալով, ինչպես դաշնագրում էր նշված, «Հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ», որը նույն ժամանակի տիրողների լեզվով այն էր նշանակում, թե Հայաստանն իր արտաքին քաղաքականությամբ մասամբ պետք է հետևեր Հռոմին։

Այնուհետև, Տիգրան Մեծը շուրջ մեկ տասնամյակ էլ դահակալեց՝ ապահովելով իր ընդարձակ երկրի խաղաղ ու բարգավաճ կյանքը։ Աղկում էին քաղաքներն ու շենները։ Տիգրանի ճոխացրած քաղաքները ժամանակի առաջավոր մշակույթի օջախներ էին դարձել, իսկ նրա արքունիքում կային փիլիսոփաներ ու հռետորներ, բնագետներ ու պատմիչներ, որոնցից ոմանց անունները մեզ են հասել այն օրերի ժամանակագիրների երկերում։ Հելլենիստական մշակույթը Մեծ Հայքի նահանգներն էր թափանցել և այնպես արագ էր զարգանում, որ Տիգրանի որդի ու գահի ժառանգորդ Արտավազդն արդեն պիտի գրեր ողբերգություններ, որոնք բեմադրվելու էին քաղաքամայր Արտաշատում ու մյուս կենտրոններում։

Տիգրան Մեծը վախճանվեց մ. թ. ա. 55 թ., 85 տարեկան հասակում, գահի ժառանգորդ որդի Արտավազդին թողնելով ժամանակի խոշորագույն տերությունների հետ իր ուժերը չափող Մեծ Հայքի թագավորությունը։

Ահա այս է Տիգրան Մեծի կյանքի ու գործի համառոտ ուրվագիծը։ Իրավացի էին մեր հին պատմիչներ Փավստոսը, հատկապես Խորենացին, որոնք, քաջ գիտենալով պատմական աղբյուրների տեղեկությունները և հավատալով հայ ժողովրդի բանավոր զրույցներում պահպանված հերոսական կերպարին, այս Տիգրանին են համարում մեր անցյալ մեծերից մեծագույնը, ամենաքաջն ու ամենախոհեմը։ Խորենացու դիպուկ խոսքով՝ այդ նա էր, որ մեր երկրի սահմաններն ընդարձակելով հասցրեց մեր բնակության հին եզերքներին՝

սրանով իսկ հաստատելով մեր պատմական իրավունքն այն ընդարձակածավալ հայրենիքի վրա։

Այո՛, իրավացի էր ֆրանսիացի խոշոր արևելագետը, երբ Տիգրան Մեծի՝ այժմ արդեն մեր պատմության մեջ ըստ արժանվույն գնահատված այդ հզոր միապետի քառասնամյա գործունեության մեջ տեսնում էր հայ ժողովրդի հետագա կյանքն ապահովելու երախտալից առաքելություն։

* * *

Եվ այսպես, Տիգրան Մեծի տիեզերական պետությունը հենց նրա ստեղծողի աչքի առաջ էլ նվազել էր՝ սահմանափակվելով Արտաշես Ա-ի գծած շրջագծի մեջ։ Այն ինչ-որ չափով Հռոմից կախված մի պետություն էր, երբ գահ բարձրացավ Տիգրանի որդին՝ Արտավազդ Բ-ը (մ. թ. ա. 55—31 թթ.), որը մի լայնախոհ գահակալ էր, ժամանակի առաջավոր մշակույթի զինվոր և ինքն էլ ողբերգություններ էր գրում։ Սա ունեցավ դառն ողբերգական վախճան. պարթևաց և հռոմեացիների ստոր խաղերի դեմ հուսահատ, երկիրն ավերածություններից փրկելու համար հանձնվեց Հռոմի եռապետ Մարկոս Անտոնիոսին, և սա հայ արքային շղթայակապ Ալեքսանդրիա տարավ՝ հաղթահանդեսում գոռոզ ու վավաշոտ Կլեոպատրայի առաջ ցուցադրելու համար։ Արտավազդը գըլխատվեց, որովհետև շղթաների մե՛ջ անգամ իրեն պահել էր արժանապատիվ և պլուխ չէր խոնարհել գոռոզ բռնության առաջ։

Արտավազդ Բ-ի բախտին արժանացան նաև նրա հաջորդները՝ Արտաշես Բ, Տիգրան Գ, Արտավազդ Գ, Տիգրան Դ։

Այսպես սպառվեց «մեր բնիկ և հարազատ թագավորությունը»՝ հայրենիքը թողնելով երկու արյունռուշտ հարևան բռնատիրությունների ստեղծած աքցանի մեջ։ Քաղաքական ու դիվանագիտական խարդավանալից հարաբերությունների պատճառով ստեղծվել էր մի վիճակ, երբ հայը տերն էր իր հայրենիքի, բայց ո՛չ տնօրենն իր ճակատագրի։

Հայաստանը մեր թվականության առաջին տասնամյակներն էր ոտք դնում առանց սեփական թագավորության, բայց ըմբոստ, ազատակամ և քաղաքական նոր ոգորումների պատրաստ։

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԳԱՌՆԻ ՏԱՃԱՐԸ

Ռուս մի հետազոտող գրել է, թե «Գառնիից միշտ էլ հեռանում ես մի քիչ հեթանոսացած՝ սրտիդ մեջ տանելով Արեգակի քարաքանդակ հիմնը»։

Արարատյան նահանգի Մազազ կամ Գառնո գավառում, Ազատ գետի աջ ափին է գտնվում Գառնի ավանը՝ համանուն ամրոցով, բերդապարիսպներով ու արքունի պալատական շենքերի և տաճարային շինությունների փլատակներով։

Պատմական Հայաստանի տարածքում քիչ կան տեղանուններ, որոնք իրենց հնությամբ կարող են մրցել Գառնիի հետ։ Այստեղ հնագիտական պեղումներով հայտնաբերվել է բնակավայր՝ իր կացարաններով, բրոնզե գործիքներով, խեցեղենի ու կենցաղային իրերի, զենքերի ու դրամների նմուշներով, որոնց զգալի մասը բնորոշ է եղել 4—3-րդ հազարամյակներին։ Հենց Գառնիի ամրոցի պեղումներից էլ արևելեաս է ելել Արգիշտի Ա-ի սեպագիրը, որով Էրեբունի-Երևանի ու Արգիշտիխինիլի-Արմավիրի հիմնադիրը հաղորդում է, թե նվաճեց ու իր երկրին միացրեց Գառնիանի երկիրը։

Վանի արքաներին հաջորդած Երվանդունիների ու սրանց ժառանգ Արտաշիսյանների օրերում Գառնին եղել է թագավորանիստ-ամառանոց՝ իր հեռաքրքիր աշխարհագրական դիրքով ու բնակլիմայական գունագեղությամբ միշտ էլ ենթակա մեր ազգի գեղարվեստական հորինումների մարգին։ Եվ զուր չէ, որ Մովսես Խորենացու գրի առած ավանդություններում Գառնիի հիմնադիր է համարվում Հայկի ծոռ Գեղամը, որի թոռ Գառնիկի անվամբ էլ հետագայում դաստակերտն է

կոչվել։ Միջնադարյան մեր մատենագրության մեջ ճշմարիտ իրական է ճանաչվել այս ավանդությունը, և 14-րդ դարի մի ձեռագրի մեջ էլ դաստակերտ-ամրոցի հիմնադրության տարի է համարվում մ. թ. ա. 2166 թվականը։

Գառնիի դերը մեծ է հատկապես հելլենիստական շրջանի (մ. թ. ա. 3-րդ—1-ին դդ.) և նրան հաջորդած դարերի հայկական մշակույթի էական գծերը վեր հանելու տեսակետից։

Հելլենիստական տիպի միապետությունը ոչ միայն Երվանդյան-Արտաշիսյան տիրակալների, այլև փոքր ընդմիջումից հետո նրանց հաջորդած Արշակունիների օրոք տվեց բազմակողմանի զարգացման, քաղաքական վերընթացի բացառիկ դրսևորումներ։ Արտաշես Ա-ի ու Տիգրան Բ-ի, Տրդատ Ա-ի ու նրա հաջորդների հայրենաշեն քաղաքականությունը նպատակ ուներ Արևմուտքի ու Արևելքի մեծ բռնատիրությունների օրինակով և փորձով ստեղծել մի պետություն, որն ի վիճակի լինի դիմագրավել երկու թևերից եկող հարվածներին։ Նրանց ստեղծած այդ պետության մեջ կանգնեցին հելլենական տիպի քաղաքներ՝ Արտաշատն ու Տիգրանակերտը, Երվանդաշատն ու Վաղարշապատը։ Նոր շուք ու պերճություն ստացան հին ոստաններ Վանն ու Արմավիրը։ Այս քաղաքների կառուցապատման, ճարտարապետական և կենցաղային բարձր արժանիքների մասին հիացմունքի խոսքեր են թողել Ստրաբոնը, Պլուտարքոսը, Ապպիանոսը։ Նրանց վկայություններից պարզ երևում է, որ հայերը, փոխառնելով Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթության լավագույն դրսևորումները, մանավանդ քաղաքաշինական նվաճումները, իրենց երկրում ստեղծել են քաղաքների և քաղաքային կյանքի մի նոր տիպ, որն օրինակ պիտի ծառայեր հարևանների համար։ Հին և նոր քաղաքներում եռում էր առևտուրը, զարգանում էին արհեստները, որոնք, իրար զուգորդելով հելլենիստական շրջապատից ստացածն ու տեղական-ավանդականը, ներկայացնում էին հրաշալի արտադրանք շատ ու շատ բնագավառներում (ոսկերչություն և մետաղագործություն առհասարակ, ապակեգործություն, խեցեգործություն, փայտի ու քարի մշակման ասպարեզները են)։

Մի կուռ ներդաշնակություն կա այս շրջանի Հայաստանի նյութական ու հոգևոր մշակույթների միջև։ Շինարարությունն

ու արհեստները՝ մի կողմից, արվեստները և գրավոր ու բանավոր գրականությունը՝ մյուս, ժողովրդական կյանքն առաջ էին տանում անշեղորեն։

Հայաստանը դարձավ գրականության ու թատրոնի երկիր։ Երկու դեպքում էլ լեղուն, ինչպես և պետական գործունեության ոլորտում, հունարենն էր. ստեղծվում էին հունալեզու պատմագիտական ու դրամատիկական երկեր, թատրոնում ներկայացվում էին տեղական հեղինակների, ինչպես նաև հույն դասականների թարգմանությունները։

Պլուտարքոսը տեղեկացնում է, որ Տիգրանակերտում թատրոն կար, որտեղ բեմադրություններին մասնակցում էին Հունաստանից հրավիրված դերասաններ։ Իսկ երբ Արտաշատում՝ Արտավազդ Բ-ի արքունիքում, բեմադրվում էր Եվրիպիդեսի «Բաքոսուհիները», հանկարծ ներս են բերում հունապարթեական ճակատամարտում սպանված Կրասոսի գլուխը, և դերասան Յասոնն այդ պահին միանգամայն հարմար իր մենախոսությունն արտասանում է զորավարի կառափը ձեռքին...

Իհարկե, պարզ է, որ թատերական կյանքին հիմնականում վերնախավն էր ներգրավված։ Սակայն նույնիսկ այս օտարաշունչ գրական ու մշակութային միջավայրն իր գիրկն առած պիտի լիներ հայ ժողովրդին, որը ոաք էր ձգում հելլենիստական աշխարհի հետ և նրա ընդհանուր առաջաքայլերի մեջ պիտի կատարեր իր սեփականն ու ինքնատիպը։

Գրավոր գրականությունը, որ, մեզ հասած մատենագրական կցկտուր տեղեկությունների համաձայն, ստեղծվել է օտար լեզվով՝ հունարեն, հավանաբար իր բովանդակությամբ հելլենիստական աշխարհին հատուկ շրջանակներն ընդգրկելով հանդերձ, ունեցել է նաև տեղական երանգներ։ Հունական դիցարանը, Ալ. Մակեդոնացին ու նրա հաջորդները, ընդհանուր բանահյուսական հերոսները տիրապետող պիտի լիներին այդ գրականության երկերում։ Սակայն գրականությունն ստեղծողները հայ մարդիկ էին և նրանք անպայման պիտի անդրադառնային հայրենի երկրի պատմությանը, մայր ժողովրդի դիցարանի պաշտելի կերպարներին պիտի տեղ տային անտիկ-հելլենիստականների կողքին։ Նույնիսկ օտար հեղինակները, Հայաստանում բնավորվելով, գրում էին հայ

թագավորների գործունեության և Հայոց պետության անցուդարձի մասին։ Հայտնի է, որ Տիգրան Մեծի արքունիքը գալով՝ Տիգրանակերտում են ստեղծագործել այն ժամանակվա հելլենիստական աշխարհում արդեն անուն հանած մի շարք հեղինակներ։ Օրինակ, Մետրոդորոս Սկեփսացին երկ է գրել «Տիգրանի մասին»՝ հյուսելով ոչ միայն Տիգրանի, այլև նրա արքայատոհմի պատմությունը։ Նույն բովանդակությամբ, «Տիգրանի վարքը» անվամբ, երկ է հյուսել նաև Ամֆիկրատես Աթենացին՝ մինչ այդ Միհրդատ Եվպատորի Պոնտական թագավորության գերագույն դատավորը և հրաչակավոր հռետոր-պատմիչը։

Պլուտարքոսը հանդամանալից տեղեկություններ է հաղորդում Տիգրան Մեծի արքունիքում ծաղկած հելլենիստական պատմագրության ու թատրոնի վերաբերյալ։ Ասում է՝ Հայոց մեծ արքան թատրոնի շենք էր կառուցել, հույն դերասաններ էր հրավիրել, որոնք այստեղ պիտք է որ բեմադրեին ոչ միայն դասական ողբերգություններ, այլև ժամանակակից կյանքն արտացոլող, հենց տեղում ստեղծված թատերգություններ։

Վերջին հանգամանքն ավելի պարզորոշ երևում է Տիգրանի ժառանգ և հաջորդ Արտավազդ Բ-ին վերաբերող տեղեկություններում, որոնցում, ինչպես տեսանք, Պլուտարքոսը մանրամասնությամբ պատմում է Արտաշատում «Բաքոսուհիների» բեմադրության մասին, տեղեկացնելով նաև, որ Հայոց արքունիքում «հունական բազմաթիվ թատերգություններ էին բեմադրվում», և որ Հայոց թագավոր Արտավազդն ինքը «գրում էր ողբերգություններ, ճառեր ու պատմություններ, որոնցից մի քանիսը պահպանվել են»։

Ուշագրավ տվյալներ կարելի է հիշել նաև այդ շրջանի հայկական դիցաբանության ոլորտից։ Հայոց հին աստվածները՝ Արամազդ, Անահիտ, Վահագն, Աստղիկ, Տիր, Նանե են, հելլենիստական շրջանում ևս պահպանում էին իրենց նշանակությունը ժողովրդական կենցաղում և մտածողության մեջ։ Իսկ հնագույնները՝ Հայկ-Խալդ, Արա Գեղեցիկ, Տորք են, մարդանալով ձեռք են բերում ուրիշ նշանակություն. Հայկն «ստանձնում է» հայ ազգի նախահոր դերը, Արան՝ Հայկի պայազատներից մեկի ու հայրենապաշտպան ոգին կրող,

Տորքը՝ հայկական նախարարական մի տոհմի նախահոր։ Այս նոր դերաբաշխումը չի խանգարում, որ նրանք մնան հայոց հոգևոր աշխարհի, գեղարվեստական մտածողության և մշակութային կյանքի կենտրոնում։

Հույն մեծ աշխարհագետ Ստրաբոնը վկայում է, թե՝ Մեծ Հայքում ամենուրեք տաճարներ էին կանգնած Անահիտի անվամբ, և նրա պաշտամունքը գեր ու վեր էր բոլոր աստվածություններից։ Հետագայի հայկական աղբյուրն էլ (Ագաթանգեղոսի Պատմությունը), ինչպես տեսանք, տեղեկացնում էր, որ Ոսկեմատը, Ոսկեմայրը, Ոսկեծինը (Անահիտի տարբերակիչներն էին) Հայոց երկրի կենսաբաշխ աստվածն է եղել, «փառք ազգիս մերոյ և կեցուցիչ մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան»։ Հայտնի է, որ Անահիտի ոսկե, արծաթե և բրոնզե արձաններն են գրված եղել հայոց բոլոր սրբարաններում, և պատմական Հայաստանի տարբեր նահանգներից էլ գտնվել են հելլենիստական շրջանի բազմաթիվ մեդալիոններ՝ Անահիտի պատկերով։

Նախաքրիստոնեական աշխարհում, մանավանդ հելլենիզմի ազդեցության ոլորտի երկրներում, Միհրի պաշտամունքը, որ հատուկ վարդապետության՝ միհրականության, հիմքն էր հանդիսանում, բավական խոր արմատներ էր ձգել ժողովրդական զանգվածների ու վերնախավի հոգևոր աշխարհում։ Այս պաշտամունքի մի շարք գոգմաներ ու ծեսեր անցան քրիստոնեությանը։ Այս պատճառով էլ ես ինձ թույլ եմ տալիս բարձրացնելու օրինական մի հարց. արդյոք նորահավատ քրիստոնյա հայերը Գառնիի հեթանոսական տաճարն այնո՞ւ չպահպանեցին, որ այն կրում էր Արեգակի աստված Միհրի անունը, և իրենք էլ լրիվ չէին ձերբազատվել միհրականությունից։

Գառնիի հեթանոսական տաճարը կառուցվեց բուն հելլենիզմի վախճանից հետո։ Երիցս իրավացի էր Ալ. Սահինյանը, երբ համոզված էր, թե Հայաստանում դա միակ կառույցը չէր, որ իր վրա կրում էր հելլենիստական ճարտարապետական ավանդների դրոշմը։

Արդեն պարզված է, որ Գառնիի ամրոցի այժմ կիսավեր պարիսպները կանգնեցվել են մ. թ. ա. 3—2-րդ դարերում։

Նրանք ունեն ավելի քան երկու մետր հաստություն, կազմված են որձաքարի մեծաչանգված, սրբատաշ քարերից, որոնք իրար են միացված երկաթե գամերով, և սրանք էլ քարերի փոսերում ամրացված են արճճով։ Պարսպապատերից պահպանված մասերը տեղ-տեղ 6—8 մ բարձրություն ունեն։

Ամրոցի ներսի բոլոր շինքերն էլ խստորեն ենթարկված են եղել համակառույցի ճարտարապետական ամբողջությանը։ Նույնիսկ տարբեր դարերում կառուցված շինությունները։ Եթե եռանկյունի տարածության մեջ համալիրի կոմպոզիցիայի գլուխն է կազմել հեթանոսական տաճարը, ապա նրանից արևմուտք, լեռնաբազկի եզրին, բարձրացել է պալատական դահլիճն իր բավական խոշոր ծավալներով (հիմքում 40/15 մ չափի)։

Պալատական դահլիճից հետո գալիս են Տրդատ Գ-ի կառուցած աշխարհիկ շինությունների ավերակները։ Այստեղ կան և բնակելի շենքերի, և մառանների մնացորդներ։ Բայց ամենաուշագրավը բաղնիքն է, որը դրված լինելով տաճարից հյուսիս-արևմուտք, յուրովի եզրափակում է համակառույցը։

Բաղնիքից շատ բան է պահպանվել։ Իրար հաջորդող չորս սենյակները (առաջինը հանդերձարանն է, երկրորդը՝ սառը, երրորդը՝ գոլ և չորրորդը՝ տաք ջրի համար) տաքացվել են հատակից։ Ջուր է մատակարարվել թրծած կավե խողովակներով, իսկ բաղնիքն առհասարակ ջեռուցվել է հիպոկաուստի (հատակից տաքացնելու) եղանակով։

Հանդերձասենյակի հատակը զարդարված է եղել բազմաբանգ խճանկարով, որի մեծ մասը պահպանվում է՝ ներկայացնելով առասպելական-դիցաբանական մի խայտաբղետ բովանդակություն։ Այստեղ և՛ ջրահարսեր կան, և՛ տարբեր աստվածներ անձնավորող պատկերներ, նրանց անունների վիմագրեր... Մի տեղ էլ հունարեն՝ «Աշխատեցինք՝ ոչինչ չստանալով» արձանագրության պատառիկ։

Այս շինությունները, մանավանդ պալատական դահլիճն ու հարակից կառույցները, ժամանակին երևի թե ոչնչով չէին դիջել տաճար-«տուն-հովանոցին», քանի որ կառուցման նախաձեռնող Տրդատ Գ թագավորը, ինչպես Մովսես Խորենացին է տեղեկացնում, դրանք զարդարել էր ավել «մահարձա-

նոր, սքանչելի դրոշմուածովք, բարձր քանդակաւ...» (գիրք Բ, գլ. Ղ)։

Սակայն ինչ էլ որ լինի, Գառնիի հուշարձանախմբի պսակն է կազմում հեթանոսական տաճարը և այն է, որի իր վրա առավ հնագետ ու ճարտարապետ ուսումնասիրողների սևեռուն ուշադրությունը, արժանացավ մեծածախս վերականգնումի։

Տաճարը հելլենիստական շրջանի ճարտարապետությանը բնորոշ պերիպտեր տիպի կառույց է (պերիպտեր— չորս կողմից սյունաշարերով եղերված աղոթասրահ)։ Կանգնած է բարձր պատվանդանի վրա, որի գլխավոր մուտքի առաջ ունի ինն աստիճաններից բաղկացած քարե սանդուղք։ Եռանկյուն ճակատոնը (հյուսիսային ճակատ) եղերված է սատամնաշարի և բուսական ու երկրաչափական քանդակների հարուստ համադրությամբ։ Երկթեք տանիքը ծածկված է բազալտե սալիկներով, որոնք ևս իրար միացած են եղել արճճով ամրացվող գամերով։

Վերականգնման աշխատանքներն անթերի կատարելու համար տաճարի պատերի տակ շատ կետերում կատարվել են պեղումներ, որոնց շնորհիվ բացվել են առավել հին շինության որմնաշերտերը, սրբավայրի մնացորդներ և նախընթաց 3-րդ—1-ին հազարամյակներին բնորոշող հնագիտական նյութեր։ Իսկ այս նշանակում է՝ տաճարը կառուցվել է հնագույն սրբավայրում, որի շուրջը բնակավայրն անընդմեջ գոյություն է ունեցել սկսած մ. թ. ա. 3-րդ հազարամյակից։

Վիմագրական, մատենագրական ու հնագիտական նյութերի համատեղումով արդեն մեկընդմիշտ պարզված է, որ տաճարը կառուցվել է մ. թ. առաջին դարի երկրորդ կեսին, 77 թվականին, Տրդատ Ա թագավորի կողմից։

Ամենայն հավանականությամբ համանման հեթանոսական տաճարներ գոյություն են ունեցել նաև Հայաստանի ուրիշ վայրերում։ Դրա համար ունենք մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները, որոնք հաստատվում են դոնե հայոց վաղքրիստոնեական շինությունների պեղումներով։ Պատմիչները հիշում են, որ հեթանոսության սրբարանները կործանվել են հիմնահատակ, ու նրանց տեղերում կառուցվել են նոր հավատի շինքերը։

Գառնիի տաճարը հեթանոս հայության ճարտարապետական ժառանգությունից պահպանված միակ հիշատակն էր, որ բարեբախտություն ունեցավ անեղծ վիճակում ապրելու նաև քրիստոնեության շրջանը, միայն թե ուրիշ դերով. Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններից եզրակացվում է, որ Տրդատ Գ Մեծը՝ հայոց քրիստոնեության դարձի կազմակերպիչը, Գառնիում շինարարական մեծ նախաձեռնումներ կատարելով, հեթանոսական տաճարն էլ դարձրել է իր քույր Խոսրովիդուխտի «տուն-հովանոցը»։

Տաճար «տուն-հովանոցը» կործանվել է 1679 թ. մեծ երկրաշարժից, և դրանից հետո հնության սիրահարները կարող էին միայն հիանալ Գառնիի հուշարձանի վեհաշուք փլատակներով։

1949 թ. Հայաստանի ԳԱ արշավախումբը Բ. Ն. Առաքելյանի ղեկավարությամբ սկսեց ամբողջ հնավայրի պեղումները։ Դրանց շնորհիվ հայագիտության ուշադրությանը ներկայացվեցին մեծաքանակ բազմապիսի նյութեր, որոնք ցույց են տալիս Գառնիի ամրոց-բնակավայրի շարունակական, անխաթար կյանքը վաղ բրոնզե դարից մինչև Բագրատունյաց Թագավորության շրջանը և նրան հաջորդած ավերի ու ավարի դարերը։

Ուշագրավ է, որ հենց այս արշավախմբի հետ միասին ու միաժամանակ, 1949 թ., Գառնիի ճարտարապետական կառույցների իր ուսումնասիրությունն սկսեց Ալեքսանդր Սահինյանը՝ հեթանոսական տաճարի վերականգնման նվիրյալը։

Երկու տասնամյակ, ուղիղ քսան տարի, նա խոսում էր այդ քարերի հետ, փնտրում տեղահանվածները, որոնք դարերի ընթացքում սփռվել էին շրջակա ձորերում, հասել հարևան գյուղերն ու ավանները, չափում ու դծագրում էր, որոշում յուրաքանչյուր քարի կամ բեկորի տեղը կոթողի համապատկերի մեջ...

1969 թ. հունվարին սկսվեցին վերականգնման աշխատանքները։ Այստեղ ևս գործի ղեկը էր կանգնած Ալ. Սահինյանը, որի ղեկավարությամբ հանրապետության բազմափորձ վարպետների մի խումբ, զինված շինարարության բնագավառի ժամանակակից ամենաառաջավոր տեխնիկայով ու ամենալավագույն շինանյութերով, վերականգնումն ավարտեց

1975 թ., տաճարի կառուցումից ուղիղ 19 դար և կործանումից շուրջ 3 դար հետո։

Եվ ո՞րն է կարևորը. տաճարի նախնական ճարտարապետական ու գեղարվեստական ոչ մի արժանիք չի խաթարվել, ոչինչ չի մոդեռնացվել։ Ամեն մի քար կառույցի մեջ գտել է իր տեղը։ Եթե պակասողի փոխարեն նորն է դրվել կամ կոտրվածը կարկատան է ընդունել, այս «նորմուծությունները» երևում են տաշվածքի ձևից՝ չունեն նախնականների քանդակազարդերը։ Եվ այսուհանդերձ, վերականգնված կոթողի ոչ մի մանրամասն, ոչ մի քար,— հնավանդ թե նորամույծ,— արհեստական կամ կցոնի տպավորություն չի թողնում։

Իր նախնական կերպարանքով վերականգնված Գառնիի տաճարն, այսպիսով, սկսում է իր երկրորդ կյանքը կամ անմահությունը, և նրա հետ հավերժորեն կապրի նաև վերականգնող ճարտարապետի պայծառ անունը։

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր թվականության արշալույսը, ավաղ, դարձավ Արտաշիսյան թագավորական տոհմի մայրամուտը, և հաջորդ շուրջ հինգ տասնամյակներին հարևան մեծ ու անկուշտ պետությունների դրածոներն էին, որ իրենց թիթեռնիկի կյանքով ջանում էին լցնել բուն հայկական գահի պարապը։ Այս տասնամյակներին համարյա երբեք չդատարկած գահակալի մեջ առանձնակի եռանդ էին բանեցնում հռոմեական սիրակալները, որոնց խարդավանքներով Հայաստանը կորցրել էր իր քաղաքական ու տնտեսական երբեմնի հզորությունը։ Հայ ժողովուրդը չէր կարող մոռանալ կատարվածը, և պատահական չէր այն համառ դիմադրությունը, որ ցույց էր տրվում հռոմեական դրածոներին՝ ի՛նչ տոհմի ու ազգության էլ նրանք պատկանեին։ Այս պատճառով հասկանալի էր այն խոստումնալից բարեկամությունը, որ նույն տասնամյակներին հաստատվեց հայերի ու հարևան Պարթևական տերության միջև, և Հայաստանը՝ թիկունքում ունենալով Պարթև Արշակունյաց գահի հզորացրած Իրանը, աստիճանաբար իրեն պատնեշեց Հռոմեական կայսրության դեմ, վճռական հիմք ստեղծեց իր սեփական թագավորությունը վերականգնելու համար։

Հայոց նոր թագավորական հարստության ակունքում կանգնած է Պարթև Արշակունյաց տոհմի ժառանգ Տրդատը՝ հզոր Վաղարշակ արքայից արքայի եղբայրը, որը Հայաստանի գահի փաստական տերը դարձավ մ. թ. 66 թվականին։

Տրդատի գահակալության հանգամանքներն ավանդության ձևով պահպանվել են մեր ժողովրդի հիշողության մեջ, որից

և գրի են առել Ագաթանգեղոսն[1] ու Մովսես Խորենացին։ Իսկ լատին Կոռնելիոս Տակիտոսը, որ դեպքերին անմիջապես հաջորդած ժամանակի գործիչ է ու վստահելի պատմիչ, ամենայն մանրամասնությամբ շարադրել է Տրդատի գործունեությունը՝ հայ-հռոմեական, պարթևահռոմեական միջադեպերի և քաղաքական անկախության համար հայ ժողովրդի մղած դժվարին պայքարի հիմնապաստառի վրա։ Նույն մանրամասները, հավանաբար Տակիտոսի «Տարեգրությունից», անցել են լատին մի այլ պատմիչի՝ Դիոն Կասսիոսի (II—III դդ.) «Հռոմեական պատմությանը»։

Հայտնի է, որ Վաղարշակը Պարթևների գահը ժառանգել է մ. թ. 51 թվականին։ Սրանից մեկ տարի անց նա վիթխարի բանակով շարժվեց Հայաստանի վրա՝ երկրի գահին իր եղբայր Տրդատին բազմեցնելու համար։ Տակիտոսն այս ամենը ներկայացնում է իբրև ծրագրված միջոցառում. իբր Վաղարշակ-Վոլոգեզն ասել է. «Տրդատ՝ ծնված այն հորից, որից և ինքս, լինելով ինձնից կրտսեր, առաջնությունը զիջեց ինձ, և ես էլ նրան տվի Հայաստանի թագավորությունը, որը մեր գահատոհմի տիրակալության երրորդ աստիճանն է համարվում, քանի որ դրանից առաջ մարաստանցիներին իր տիրապետության տակ էր առել Պակորը» (Բակուր)։

Հավանաբար Տակիտոսն ինչ-որ բան շփոթում է այստեղ։ Մեր պատմության հետագա դարերը ցույց են տվել, որ Վաղարշակի երրորդ եղբայր Բակուրն իր ձեռքն է վերցրել բուն Աղվանքի կամ Մազքթաց աշխարհի թագավորությունը, քանի որ մ. թ. առաջին դարում Մարաստանը Պարթևական պետության մի մարզն էր կազմում և գոյություն չուներ իբրև վարչական առանձին միավոր։ Վաղարշակ խոհեմ թագավորը եղբայրներին Հայաստանի ու Աղվանքի վրա տիրակալներ կարգելով՝ ոչ միայն նրանց գլուխներն էր զարդարում թագերով, որպեսզի իր գլուխը չցավի նման պարագաների համար սովորական գահակալական գլխոտոցից, այլև ստեղծում էր երեք հարևան տերությունների մի դաշնակցություն, որը միակ հուսալի պատվարը պիտի լիներ Հռոմեական կայսրության արևելյան ծավալումների դեմ։

Եվ Ներոնը, 54 թ. Հռոմի կայսր հռչակվելով, ամենից առաջ որոշեց խորտակել այս դաշնակցությունը։

Տակիտոսը գույներ չի խնայում Ներոնի զորավար Կորբուլոնի հակահայկական ու հակապարթևական հաղթանակները զարդարուն ներկայացնելու համար։ Իբր թե Վաղարշակի զորքերի գլուխն անցած Տրդատը գալիս, տիրանում է Հայոց գահին, և անմիջապես էլ Կորբուլոնը գալիս, նրան քշում է մայրաքաղաք Արտաշատից, վերջինս ավերում, հողին հավասարեցնում, ապա շարժվում Տիգրանակերտի վրա։ Ճանապարհին քանի՞-քանի հանդիպում են հռոմեական ու հայ-պարթևական բանակները, միշտ էլ հաղթում են հռոմեացիները։ Եվ, այսուհանդերձ, Տրդատը նստում է Հայոց գահին, և ամբարտավան կայսր Ներոնն էլ ստիպված է լինում թագ շնորհել նրան։

Տակիտոսն այս թագադրությունը ևս ներկայացնում է իր պատումին վայել եղանակով։ Վաղարշակը եղբոր համար թագ է խնդրում Ներոնից։ Այս առթիվ երկար բանակցություններ են լինում ռազմադաշտում և, ի վերջո, «պայմանավորվում են, որպեսզի Տրդատն իր թագը վայր դնի Ներոնի արձանի ոտքերի տակ և վերստանա ոչ այլ կերպ, քան անձամբ Ներոնի ձեռքից»։

Թե որքան հավատի են հռոմեահաճ այս մանրամասները, այսօր անհնար է պարզել և, ըստ երևույթին, դա ոչ մի կարևորություն էլ չունի։ Կարևորն այն է, որ շուրջ կես դար ձեռքից ձեռք անցած Հայոց գահին վերջապես բազմեց հզոր և հուսալի մի տիրակալ, որից պետք է սկսվեր հայ Արշակունիների թագավորատոհմը՝ շուրջ չորս հարյուրամյակ Հայաստանի ու հայ ժողովրդի դժվար բախտը տնօրինելու առաքելությամբ։

Տրդատ Ա-ի գործունեության մասին քիչ բան է հասել մեզ։ Նախորդ տասնամյակների գահակալական խժդժությունները քայքայել էին երկրի պաշտպանական հզորությունը։ Հասկա-

[1] Տրդատի գահակալությանը վերաբերող ավանդությունը պահպանվել է Ագաթանգեղոսի Պատմության հունական օրինակում (տե՛ս Գ. Ջարպհանալեան, Պատմութիւն հայ հին դպրութեան, Վենետիկ, 1932, էջ 212)։ Այստեղ, սակայն, առկա է այն տարբերակը, որի մասին խոսել ենք նախորդ գրույցներից մեկում. Հայոց գահակալ է նշանակվել Պարթև Արշակունիների գահատոհմի հիմնադիր Արշակ—Տրդատի եղբայրը՝ ավագի նախաձեռնությամբ։

նալի է, որ նոր թագավորը պիտի նախ և առաջ հզորացներ Հայաստանը։ Եվ այս գործում նրան մեծապես օգնեց ավագ եղբայրը։ 70-ական թվականներին Տրդատը հաջողությամբ ետ վանեց ասպատակության եկած ալանական ցեղերին, որոնք մինչ այդ ավերել էին Բակուր եղբոր Աղվանքը։ Այս դեպքերի ժամանակակից Հովսեպոս Փլավիոսի հաղորդած կցկտուր տեղեկություններից ու Մովսես Խորենացու գրի առած ավանդությունից կարելի է եզրակացնել, որ Տրդատին մեծ հոգս է պատճառել ալանաց հեղեղը։ Եվ դատելով այն հանգամանքից, որ հետագա տասնամյակներում ալաններն այլևս չեն անհանգստացրել այսրկովկասյան երկրներին, պետք է մտածել, որ նրանք լավ դաս էին ստացել Տրդատ Ա-ի զորքերից։

Հայտնի է նաև Տրդատ Ա-ի շինարարական-վերաշինական գործունեությունը։ Կոստանդիոս Տակիտոսի հաղորդման համաձայն Ներոնը Հայոց թագի հետ միասին Տրդատին արամադրել էր հիսուն միլիոն դինար և բազմաթիվ արհեստավորներ՝ Կորբուլոնի ավերած Արտաշատ մայրաքաղաքը վերաշինելու համար։ Ներոնի ընծաներով և Արարատյան երկրի անբավ հարստությամբ Տրդատը վերականգնեց Արտաշատը, նրան տվեց մի նոր փայլ ու շուք, և տեսնողները հիանում էին շինարարների քանքարով։

Հավանաբար, վերակառուցողական ու շինարարական աշխատանքներ են կատարվել նաև երկրի մյուս նահանգներում։ Համենայն դեպս հայտնի է Գառնիում ծավալված շինարարական եռուզեռի փաստը, որի մասին Մովսես Խորենացին գրել է մեծ հիացումով։ «Այս ժամանակները Տրդատն ավարտեց Գառնի ամրոցի շինությունը տաշած որձաքարե վեմերով, որոնք իրար էին ագուցված երկաթե գամերով ու կապարով,— պատմում է Քերթողահայրը։— Նրա (այսինքն՝ Գառնիի) մեջ շինում է հովանոց՝ արձաններով, սքանչելի դրվագներով և բարձրաքանդակներով՝ իր խոսրովիդուխտ քրոջ համար և նրա վրա գրում իր հիշատակը հունարեն գրերով»։

Քերթողահայրն այս «հունարեն գրերով» արձանագրությունը տեսել է, երբ կանգուն են եղել ամրոցի շինությունը, ամարանոց-ապարանքն ու մնացած հոյակերտները (իհարկե, նաև հեթանոսական տաճարը)։ Սակայն, որովհետև ձեռքի տակ չի ունեցել լրացուցիչ տեղեկություններ, տեսածը վերագրել է մի ուրիշ Տրդատի, որի մասին ավելի շատ է խոսում ժողովրդական ավանդությունը։ Բայց ահա 19-րդ դարում քննացավով բռնված կրիտիկոսները մտածում էին, թե այս «հունարեն գրերով» հիշատակի գիրը սուտ բան է, մեր պատմիչի հորինած հերթական հեքիաթներից մեկը։ Նույնիսկ եվրոպացի շատ հարգելի մի հայագետ, որ հայտնի էր մեր միջնադարյան պատմության ու մշակույթի վերաբերյալ հրապարակած ճշմարիտ ու խոր գիտական խոսքերով, չկարողացավ հաղթահարել քննացավը և, առհասարակ չընդունելով Մովսես Խորենացու հանճարեղ Պատմության վավերականությունը, Գառնիի հունարեն արձանագրության մասին նրա վկայությունը հայտարարեց «մտացածին» և «որևէ կարևորությունից զուրկ»։

Բայց ահա ժամանակը՝ ամենից անողոք ու արդար քննադատը, արևերես հանեց Քերթողահոր նշած «հունարեն գրերով» հիշատակագրությունը։ Այն փորագրված է միակտոր վիթխարի մի քարի վրա։ Ճիշտ է, տողասկզբների մի մասը վերից վար քայքայված է, սակայն ընթերցվածքից, որ չընչին տարբերություններով կատարել են Ստ. Լիսիցյանը, Հ. Մանանդյանը, Աշ. Աբրահամյանը, Կ. Տրեները, Բ. Առաքելյանը, Գ. Սարգսյանը, Հ. Բարթիկյանն ու Ս. Կրկյաշարյանը, պարզվում է, թե վիմագիրը որքան ճիշտ է կարդացվել Մովսես Խորենացու կողմից։ Այստեղ «Արեգնափայլ Տիրիդատեսը»՝ Մեծ Հայքի թագավորը, պատմում է, որ իր գահակալության 11-րդ դարում քրոջ համար կառուցել է ամրոց, ապարանք և սուրբ տաճար[1]։ Ուրեմն, Գառնիում հայտնաբերված հեթանոսական տաճարը, արքայական ապարանքն իր հարակից շինություններով, ամրոցն իր հաստահեղույս պարիսպներով, ինչպես նաև դեռևս չհայտնաբերված արձաններն ու սքանչելի դրվագները (երեք քանդակներ) մեր առաջին Արշակունի թագավոր Տրդատի գործն էին, շինարարական մի հոյակերտ խիզախում, որի մեջ ստեղծագործաբար իրար էին բեր-

[1] Մանրամասները տե՛ս Ա. Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառույցների հարատարակություն, Ե., 1983, էջ 131—135։

վում տեղական-հայկական ու հելլենիստական ոճերը, հիմք էր դրվում Հայաստան աշխարհի մշակույթի նոր վերելքի համար։

Ստեղծվե՞ց այդ վերելքը։ Հաջորդ ժամանակները հնարավորություն տվի՞ն, որպեսզի հայկականի ու հելլենիստականի խաչաձևումից ստացված մշակութային կաղնին հասակ նետի ու հզորանա։

Դրա համար նախ և առաջ երկրին քաղաքական անդորր էր պետք։ Տրդատ Արշակունու հետնորդները պիտի կարողանայի՞ն վերականգնել Արտաշես-Տիգրանյան ժամանակների Հայոց թագավորության քաղաքական ու տնտեսական հզորությունը։ Հենց միայն Տրդատ Ա-ի դրած լայնահուն սկիզբը մեզ հիմք է տալիս այս հարցերին տալու դրական պատասխան։ Հայաստանն արդեն բռնել էր քաղաքական հզորացման և տնտեսական ու մշակութային զարգացման մի ճանապարհ, որի առաջ բացվում էին փայլուն հեռանկարներ...

Սակայն այդ ճանապարհին կանգնած էր Հռոմեական կայսրությունն իր հայակուլ խարդախ քաղաքականությամբ։ Այդ ճանապարհն անցնում էր պարսկահռոմեական ներհակությունների ահավոր վիհերի վրայով։ Այդ ճանապարհի դեմ կանգնած էր նաև Պարթև Արշակունյաց թագավորության հակամարտությունը։ Չէ՞ որ Վաղարշ արքայից արքան հույս ուներ իր հարազատ եղբոր ձեռքով պարսկահպատակ դարձնել Հայոց աշխարհը եղերքից եղերք և կրկնապատկել իր երկրի հզորությունն ու փառքը։ Իսկ այդ Հայոց աշխարհը, որքան էլ զարմանալի, անմիջապես կլանեց Տրդատին, դարձրեց մի հայ թագավոր, Հայաստանի սեփական շահերին լծված քաղաքական գործիչ, որի ժառանգները ոչ միայն չպետք է հիշեին, որ իրենց ակունքն այնտեղ է՝ Պարթևաստանում, այլև արյան ու մահու բախումներում պիտի պաշտպանեին Հայաստանի ինքնուրույնությունը հենց նույն պարթևական ոտնձգություններից։

Հենվելով Մովսես Խորենացու կազմած ժամանակագրական տախտակի վրա՝ հետազոտողները գտնում են, որ Տրդատ Ա-ն թագավորել է մինչև 88 թվականը։ Նրան հաջորդել է Սանատրուկը, որի հաջողությունների մասին ստիպված էր գովեստով խոսել նույնիսկ անբարեհաճ հույն հեղինակ Սվի-

դասը։ Նա գրել է, թե՝ «Հայոց թագավոր Սանատրուկը, որ միջահասակ էր, հակում ուներ դեպի ամեն տեսակ մեծագործությունները, մանավանդ պատերազմակա՛ն։ Նա հավատարիմ պահապանն էր արդարադատության և կենցաղում զուսպ էր, սակավապետ ու ողջամիտ, ինչպես լավագույնները հույների ու հռոմեացիների մեջ»։

Սանատրուկն էր, որ կառուցեց Մծուրն քաղաքը Արածանիի հովտում և այն դարձրեց Հայոց ոստաններից մեկը, ընդարձակեց իր երկրի սահմանները՝ շուրջ երկու տասնամյակ թագավորելով Եռաբ հարևան Օսրոենե երկրի վրա։

Սանատրուկի գահակալությունից (88—109 թթ.) հետո յոթ տարի Հայաստանը դարձյալ կռվախնձոր էր պարթևների ու հռոմեացիների համար։ Առաջինները յուրայիններին էին նստեցնում Հայոց գահին։ Հռոմեացիներն էլ այդ առիթ էին դարձնում նոր արշավանքների ու ավերածությունների համար։ Տրայանոս կայսրը 115 թ. նվաճեց Հայաստանը, ոտքի տակ տվեց պարթևների երկիրը՝ հասնելով մինչև Բաբելոնիա։ Գոռոզ հռոմեացին Հայոց երկիրը հայտարարեց իրեն հպատակ պրովինցիա, որն, իբր, հետագայում պետք է շոնեներ թագավորություն և պիտի կառավարվեր Հռոմի դրածո կուսակալներով։

Սակայն շուտով մահացավ Տրայանոսը, և 117 թ. Հայոց գահին տիրացավ հռոմեացիների դեմ բարձրացած հուժկու ապստամբության ղեկավարներից մեկը՝ Սանատրուկի որդի Վաղարշը։

Վաղարշ Ա-ը իր երկու նախորդների օրինակով մեծ ջանքեր գործադրեց երկիրն ամրապնդելու և զարգացնելու համար։ Նրա օրոք լայն թափ ստացավ առևտուրը հարևան երկրների հետ, ծաղկեցին արհեստները։ Թագավորն անձամբ գլխավորեց Արտաշատ մայրաքաղաքից դեպի արևմուտք գրտնվող Վարդգեսավան բնակավայրի վերակառուցումն ու ամրապնդումը։ Անճանաչելիորեն շենացած ու գեղեցկացած այս կենտրոնն այնուհետև կոչվեց Նոր-քաղաք կամ Վաղարշապատ և դարձավ երկրի նոր մայրաքաղաքը։

Վաղարշ Ա-ի ինքնուրույն քաղաքականությունից դժգոհ էին ինչպես պարթևները, այնպես և հռոմեացիները։ Այդ պատճառով էլ կայսր Անտոնինոս Պիոսը, 144 թվականին նրան

գահընկեց անելով, Հայոց գահին բազմեցրեց ոմն Սոհեմոսի, որը պարթևների պարտադրած ընդմիջումներով հասավ մինչև 190-ականների կեսը՝ հայ Արշակունի Վաղարշ Բ-ի գահակալությունը։

Չնայած Վաղարշ Բ-ով գահը վերջնականապես ժառանգական դարձավ հայ Արշակունյաց արքայատոհմի համար (Վաղարշին հաջորդեց նրա որդի Խոսրով Ա-ն, սրան էլ՝ իր որդի Տրդատ Բ-ը, որը գահակալեց 217-ից մինչև 252 թվականը), ո՛չ հռոմեացիները, ո՛չ էլ պարթևները չհրաժարվեցին Հայաստանի քաղաքական կյանքին միջամտելու, նրա հիմքերը փորելու իրենց հին սովորությունից։ Երկու բռնատիրությունների համար էլ Մեծ Հայքը գայթակղիչ ու առեղծվածային մի գոյություն էր, որի հետ վարելիք իրենց քաղաքականությանն ուղղություն էին տալիս ոչ թե տրամաբանությունն ու դրացիական հարաբերությունները, այլ աշխարհի չորս ծագերից փչող քամիները։ Օրինակ, բավական էր, որ ալանները երկրորդ դարի կեսերում նորոգեին իրենց ասպատակությունները դեպի Կովկասյան լեռնաշղթայից հարավ ընկած երկրները, որպեսզի Հռոմի համար Հայաստանի հզորությունը դառնար այնքան ցանկալի մի երևույթ, որ կայսրությունը Հայոց արքունիքին տրամադրեր դրամական մեծ նպաստ Կովկասյան լեռնանցքները հսկող կայազոր պահելու համար։

Եվ ամեն անգամ, երբ հռոմեացիները շարժվում էին դեպի արևելք՝ Իրանն ու նրա հպատակ երկրները ոտքի տակ տալու նպատակով, այս Իրանի համար Հայաստանի հզորությունն ու աջակցությունն էլ դառնում էին բաղձալի...

Հայ-պարսկական փոխհարաբերություններն անուղղելիորեն բարդացան, երբ Պարսից երկրի բախտը տնօրինելու եկան Սասանյանները։ 224 թ. Պարսկաստանի մի մասի տեր դարձած Սասանյան Արտաշիր Ա-ը 226-ին գահընկեց արեց Արշակունի Արտաբան Ե-ին և Տիզբոնում գահ բարձրացավ՝ միավորելով հին Պարսկաստանն ու հարևան երկրները։ Արտաշիր Ա-ը (224—239 թթ.), իրեն հայտարարելով Աքեմենյան տոհմի արյան ու քաղաքականության օրինական ժառանգորդը, մի աննախադեպ մոլեռանդությամբ դրոշի վրա բարձրացրեց մազդեզանց կրոնը, որով հույս ուներ ապահովել իր

երկրի վաղեմի հզորությունն ու փառքը։ Հետաքրքիր է Արտաշիրի կտակն իր որդի Շապուհ Ա-ին (239—272) և հաջորդներին։ «Զմոռանաս երբեք,— հանձնարարում էր առաջին Սասանյանը,— որ դու որպես թագավոր միաժամանակ պաշտպանն ես կրոնիդ և երկրիդ։ Ատրուշանն ու գահը համարիր անբաժանելի։ Այդ երկուսն են, որ միշտ զորավիգ են լինելու քեզ...»։

Սա փաստորեն առաջին դեպքն էր անցյալ բազմաստվածության դարերից հետո, երբ կրակ-աստծու պաշտամունքը հայտարարվում էր պետական կրոն, և նոր վերելքի լծված Իրանի հզորությունը ծառայեցվելու էր կրոնի տարածմանը։

Շապուհ Ա-ից սկսած Սասանյան տիրակալների կտրած դրամի վրա միակ զարդամոտիվն ատրուշանի պատկերն էր։ Նվաճված էր համարվում այն երկիրը, որ խոնարհաբար ընդունել էր ատրուշանը և ծնրադիր երկրպագում էր նրա հրին ու մոխրին։ Արտաշիրի ու նրա հաջորդների համար արդեն երդվյալ թշնամիներ էին ոչ միայն Պարթև Արշակունիները, որոնց ոչնչացնում էին ամենուրեք, այլև նրանցից ճյուղավորված հայ Արշակունի գահակալները, ինչպես նաև մազքութ Արշակունիները։ Այդ պատճառով էլ հետագա երկու հարյուրամյակի նրանց վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ դարձավ հայկական գահը խորտակելուն ուղղված մի լքնդմիջվող պատերազմ։ Այս պատերազմը, որ խոր հետք է թողել հայոց ժողովրդական բանահյուսության մեջ՝ դառնալով մեր ժողովրդական ազգային վիպասանության գլուխգործոցներից մեկը, ոտքի հանեց ամբողջ հայ ժողովուրդը, արթուն ու բորբոք պահեց նրա ինքնության ու ազատագրության համար մարտնչելու կորովը և արձանագրեց հերոսության քանի՞-քանի դրվագներ, որոնց կազմակերպիչներն էին հայոց թագավորներ Տրդատ Բ-ը (217—257), նրա որդի Խոսրով Բ-ը (279—287) և հաջորդները։ Պարսիկ Սասանյաններին հաճախ հաջողվում էր ընկճել հայոց դիմադրությունը։ Օրինակ, նրանք 252-ին նույնիսկ գահընկեց արին Տրդատ Բ-ին և «Հայաստանի մեծ թագավոր» հռչակեցին Շապուհ Ա-ի որդի Որմիզդ Արտաշիրին։ Սակայն երբեք էլ նրանց չհաջողվեց Հայաստանը դարձնել սովորական հպատակ մի սատրապություն,

որ իրենց երազանքն էր և հայ ազգը վերջնականապես ձուլելու ծրագրի առաջին գործը։

Հայոց երկիրը Սասանյանների դեմ անառիկ դարձավ հատկապես Տրդատ Գ Մեծի գահակալության տարիներին (298—330)։

Այս քաջ ու խոհեմ գահաժառանգը թագ պիտի կապեր իր հայր Խոսրով Բ-ի մահվան տարին՝ 287 թ., սակայն այդ ժամանակ պարսիկ բռնավորների կամայականություններն էին մոլեգնել Հայաստանում, իսկ նրա գահի օրինական ժառանգը Հռոմեական արքունիքում էր գտնվում և իր երկիրն ազատագրելու ծրագրեր էր մտմտում։ Աղբյուրների տեղեկությունների հիման վրա լրիվ վերականգնվում է Տրդատի այն տարիների սխրալից կյանքը, գլխավորած խիզախ մարտերը եվրոպական պատերազմներում, գոթերի դեմ ված հերոսական ճակատամարտերում, մինչև որ 295 թ. Սասանյան Ներսեհ արքան վիթխարի մի բանակով Հայաստանի հարավային շրջանների վրայով պատերազմի ելավ Հռոմեական կայսրության դեմ։ Դիոկղետիանոս կայսրը (284—305) կազմ ու պատրաստ սպասում էր այդքան ճակատագրական մի բախումի. երկրում վերացրել էր երկպառակությունները, եվրոպական հարևանները նվաճված-հպատակ էին, և իր բանակների հետ պարսից դեմ ոտքի էին ելնելու հայոց ուժերը Տրդատ գահաժառանգի գլխավորությամբ։

Կայսրության զորքերի գլխավոր հրամանատար Գալերիոս Մաքսիմիանոսը վճռական ճակատամարտի տեղ էր դարձրել Հայաստանի հարավային մասի լեռնոտ շրջանները, ուր պարսից հեծելազորը կաշկանդված պիտի լիներ տեղանքի անհարմարությամբ, և հայ լեռնականներն ու Տրդատի քաջավարժ դնդերն էլ պետք է մեծապես նպաստեին հռոմեացիների հաղթանակին։

Ներսեհի բանակը գլխովին ջարդվեց 297-ին։ Ինքը՝ արքայից արքա Ներսեհը, ծանր վիրավորվեց, գերի ընկան նրա կանանոցը, զավակներն ու մյուս հարազատները։ Հուսահատ Սասանյան թագավորն շտապեց Մծբինում հաշտության դաշինք կնքել, որի շնորհիվ ուղիղ քառասուն տարի Հայաստանը պիտի վայելեր խաղաղության բարիքը։

Մծբինի դաշնագրով Պարսկաստանը հրաժարվում էր Հա-

յաստանից, որն արդեն իբրև անկախ պետություն հովանավորվելու էր Հռոմի կողմից։ Սակայն հետագա դեպքերի ընթացքը ցույց է տալիս, որ հզոր ու շրջահայաց Տրդատը կարողացել էր իր երկրի համար ապահովել մի ինքնուրույնություն, որը չէր խանդարվում ո՛չ արևելքից, ո՛չ էլ արևմուտքից, և հասկանալի է, թե ինչո՛ւ նրա գահակալության տասնամյակները (մինչև 330 թ.) և հաջորդ ութ տարիները դարձան երկրի կայուն խաղաղության ու տնտեսական ծաղկման շրջան։

Տրդատ Գ-ի գահակալության ավելի քան երեսուն տարիներին հավանաբար տեղի են ունեցել նշանակալից դեպքեր, որոնք, մեծացնելով Հայաստանի տնտեսական ու ռազմական հզորությունը, բարձրացրել են նաև նրա միջազգային հեղինակությունը։ Խաղաղ փոխհարաբերությունները երկու հզոր տերությունների՝ Հռոմի ու Իրանի հետ, ստիպեցին, որ նրա բարեկամությունը փնտրելի դառնա նաև մերձավոր հարևանների՝ Վիրքի ու Աղվանքի համար։ Ինչ վերաբերում է աղետալից հյուսիսին, ապա ստույգ վկայություններ կան, որ այս կողմից ևս Տրդատի երկիրն ապահովված էր։ Նա ամուսնացել էր ռազմաշունչ ալանների թագավորի դուստր Աշխենի հետ և ապահովել բարեկամությունը հյուսիսի ավարառուների հետ։

Տրդատ Գ-ի կամ Մեծի նախորդների և նրա՛ օրոք Հայաստանում աննախընթաց զարգացում էր ապրել տվստակական կարգը։ Նախարարական մի շարք տներ, տիրանալով հողային հսկայական տարածությունների և ռազմական հզոր ուժի, այնքան էին ուռճացել, որ արդեն կարող էին երես դարձնել միասնական թագավորությունից։ Անջատական տրամադրությունները ծաղկում էին հատկապես ծայրամասային նահանգներում, որոնց տեր նախարարներն արտաքին ու ներքին քաղաքական փոխհարաբերություններ էին վարում՝ ելնելով բացառապես իրենց տիրույթների և ոչ թե համապետական ու համահայկական շահերից։ Անհրաժեշտ էր երկրի տարբեր մասերը միավորող, հզոր բարոյական մեկ առանցքի շուրջը կենտրոնացնող գաղափարախոսություն։ Եվ երբ քրիստոնեությունը հիմնավորապես ոտք դրեց Հայաստան, Տրդատը հանձին նրա տեսավ իր լայնածիր երկիրը միավո-

ռելու լավագույն միջոցը, կառչեց այդ միջոցից... ոչ միայն ընդունեց այդ նոր կրոնը, ոչ միայն հնարավորություններ ստեղծեց նրա արագ տարածման համար, այլև աշխարհում առաջինն այն հռչակեց պետական կրոն։

Քրիստոնեությունը ծագել էր որպես ճնշված ու անիրավված մարդկանց գաղափարախոսություն։ Այն մարդկային ընդվզումն էր անարդարության և անհավասարության դեմ։ Սակայն շատ շուտով դարձավ ավատականության ամենազորեղ զենքը հենց իրեն փարած ճնշվողների ու անիրավվածների դեմ։ Նոր աստվածն իր կամակատարներին կարգադրում էր. «Մառայք, հնազա՞նդ լերուք ամենայնորց» (Առ Եփեսացիս, Զ, 5) և այս աշխարհում կրած զրկանքների ու տառապանքների համար խոստանում էր անդրաշխարհյան երջանիկ անմահություն։ Երջանիկ անմահությանը (աստծու արքայությանը) արժանանալու միակ ճանապարհն անցնում է այս աշխարհի չարչարանքների միջով. «բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Գործք, ԺԴ, 21)։ Նոր հավատի ծառան ոչ միայն անմռունչ պիտի տաներ երկրային զրկանքներն ու տառապանքները (Մատթէոս, Ե, 39—40. «մի կալ հակառակ չարի... եվ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թող ի նա զբաճկոն քո»), այլև ինքը պիտի ձգտեր դրանց. «Երանի՞, որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։ Երանի՞ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձենջ սուտ՝ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են լերկինս...» (Մատթէոս, Ե, 10—12)։

Հայոց քրիստոնեության դարձի պատմությունը մեզ է հասել Ագաթանգեղոսի անունով հայտնի «Հայոց պատմության» մատյանի մեջ և ունի վարքաբանական բնույթ։ Այնտեղ առատորեն ներկայացվող տեսիլների ու հրաշապատում մանրամասների կողքին, սակայն, պահպանվել են արժանահավատ տվյալներ ժամանակի հեղափոխիչ շարժման և շարժումը գլխավորողների գործունեության վերաբերյալ։ Ըստ այս տվյալների՝ Տրդատ Մեծը, որ գահակալության առաջին տարիներին դաժան պայքար էր մղում հարավից՝ Ասորիքից ու արևմուտքից՝ Հռոմեական կայսրության նահանգներից

ներս թափանցած քրիստոնեական քարոզիչների ու հավատացյալ խմբերի դեմ, հետագայում ընդունում է քրիստոնեությունը և Գրիգոր Պարթևի հետ միասին հրով ու սրով հարթում նոր հավատի ճանապարհը։ Ամբողջ երկրում այլևս անհանդուրժելի համարված հեթանոսության դեմ ահռելի ուժեր հանվեցին, որովհետև հին հավատի երկրպագուները ևս համառորեն դիմադրում էին զենք ու զոքով։ Ավերվում, հողին էին հավասարեցվում հեթանոսական մեհյանները։ Նրանց հիմքերի վրա բարձրանում էին նոր հավատի սրբարանները։ Եթե հավատալու լինենք ավանդությանը, հեթանոսությունն արմատախիլ անելու ճանապարհին անհետ ոչնչացվել են նաև նրա հետ առնչվող մշակութային ամեն տեսակ արժեքները։

Գրիգոր Պարթևը, որ նոր հավատի լույսն անխոնջ տարածելու համար պիտի կոչվեր Լուսավորիչ, դարձավ Հայոց քրիստոնեական եկեղեցու առաջին նվիրապետը։

Ագաթանգեղոս պատմիչը, մանրամասներն իր աղբյուրից առնելով, պատմում է, որ ամբողջ երկրում նոր հավատը համատարած սփռելուց հետո Տրդատ արքան Մեծ Հայքի գլխավոր նախարարների ուղեկցությամբ Գրիգորին կաթողիկոս ձեռնադրելու է ուղարկում Կեսարիա։ Ահա այդ հատվածը Հայոց պատմությունից. «Յայն ժամ թագաւորն վաղվաղակի փութով և երկիւղիւ և մեծաւ խնդութեամբ հոդացեալ, զամարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն.

Առաջին՝ իշխանն Անգեղ տան,
Երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ,
Երրորդ՝ իշխանն Մարդպետութեան իշխանութեանն,
Չորրորդ՝ իշխանն թագակալ իշխանութեան ասպետութեանն,
Հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զորաւար Հայոց աշխարհին,
Վեցերորդ՝ իշխանն Կորդուվաց աշխարհին,
Եօթներորդ՝ իշխանն Սուիաց աշխարհին,
Ութերորդ՝ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բդեաշխն,
Իններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին,
Տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին,

Մեծասանեերորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին,
Երկոտասանեերորդ՝ իշխանն Սաւդէից աշխարհին,
Երեքտասանեերորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին,
Չորեքտասանեերորդ՝ իշխանն շահապ Զարավանդ և Հեր գաւառի,
Հնգետասանեերորդ՝ իշխանն Մաղխազութեան տանն,
Վեշտասանեերորդ՝ իշխանն Արծրունեաց։

Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մեջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զորս գումարեաց Թագաւորն Տրդատ և առաքեաց զնոսա ի կողմանս Կապուտկացւոց, ի քաղաքն Կեսարացւոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն, զի տարեալ զԳրիգորն, քահանայապետ կացուցցեն իւրեանց աշխարհին...»[1]։

Ուշադրության առնենք մի կարևոր հանգամանք. քրիստոնեությունն սկզբնապես գոյացել էր որպես ճնշված ստորին խավերի գաղափարախոսություն, որի դեմ անհաշտ պայքար էր մղում Հռոմեական պետությունը՝ ավելի քան երկու դար։ Իսկ Հայաստանում, անկախ նախընթացի կցկտուր դեպքերից, որոնք առավելապես ավանդության ու վարքաբանության մարզին են վերաբերում, նոր հավատի տիրակալությունն սկսվում էր թագավորից ու վերնախավից։ Թագավորը, նախարարությունը, առհասարակ բարձր ազնվականությունը մտնում են քրիստոնեության դրոշի տակ և հրով ու սրով, հին հավատի դիրքերն անխնա ջարդելով ճանապարհ են հարթում նորի համատարած տիրապետության համար։

Չի կարելի կարծել, թե այս միջոցառումներն արդեն լրիվ ապահովել էին քրիստոնեության տարածումը Հայոց աշխարհում։ Աղբյուրների վստահելի տեղեկություններից գիտենք, որ հեթանոսության մնացորդները նոր հավատին համառորեն դիմադրում էին ոչ միայն առանձին նահանգներում ու ծայրագավառներում, այլև կենտրոնական նախարարությունների կենտրոններում, նույնիսկ արքունիքում։ Իվ պատահական չէ, որ 4—5-րդ դարերի մեր պատմության ընթացքը հաճախ պղտորվել է հին ու նոր հավատների արյունոտ բախումներից ու աղանդավորական ընդվզումներից։ Այսուհանդերձ, հայ ժողովուրդը և հատկապես նրա վերնախավը հանձին քրիստոնեության ընդունում էին մի գաղափարախոսություն, որը նախ և առաջ պատնեշ էր կանգնելու Պարսից արքունիքի ձուլարար ամեն տեսակ ոտնձգությունների դեմ։ Իսկ հետագայում, հենց քրիստոնեության ներսում էլ փարելով իր ինքնուրույն ու ինքնատիպ ճանապարհին, նույն հայությունը պիտի անջրպետվեր մնացած աշխարհից, հատկապես բյուզանդական ձուլման առավել մոլեռանդ քաղաքականությունից։

* * *

330 թ. վախճանված Տրդատ Մեծին փոխարինեց նրա որդի Խոսրովը։ Կարճահասակ էր սա, այդ պատճառով էլ կոչվեց Խոսրով Կոտակ։ Կարճատև եղավ նաև գահակալությունը՝ ընդամենը 8 տարի։ Սակայն այս կարճ ժամանակում կարողացավ բավական մեծ գործերով նշանավորել իր անունը։ Հայրենաշինության բնագավառում դրանք հիմնականում երկուսն էին. մեկ, որ Արաքսի լքած և արդեն բավական անհարմար դարձած[1] Արտաշատի փոխարեն մերձակա Դվին բլրի վրա հիմնադրեց Հայոց երկրի հաջորդ մայրաքաղաքը՝ Դվինը։ Ապա և նոր ոստանի թիկունքից սկսած՝ դեպի արևելք ու հյուսիս երկու ընդարձակ անտառ զցեց՝ «Տաճար մայրին» և «Խոսրովակերտը», որոնք դարձան արքայական արգելոց-

---

«Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 403—404։ Այստեղ մի շարք նախարարություններ հիշվում են ըստ արքունիքում զբաղեցրած իրենց գործակալությունների. օրինակ, հայտնի է, որ «Թագակապ իշխանութեան ասպետութեան» կամ թագադիր ասպետի պաշտոնը միշտ էլ զբաղեցրել են Բագրատունյաց նախարարական տան ավագ տերերը, «իշխանն սպարապետութեան, զոր աւար Հայոց աշխարհին» (սպարապետ կամ գերագույն հրամանատար) եղել են Մամիկոնյան տան տերերը, մաղխազ-թագավորի թիկնապահ զորքի հրամանատար էին Խորխոռունյաց տոհմի տերերը։

Մնացած բռնշխություններն ու նախարարությունները հիշվում են իրենց տիրույթ-նահանգներով, բացի Արցախից, որ կոչված է իշխանանիստ Սատ-Սոգ (հետագայում՝ Ջոգ) ավանի անունով՝ «իշխանն Սաւդէից աշխարհին»։

[1] Սկզբնական շրջանում Արաքսն Արտաշատի բերդապարսպի տակ ծոնի էր տալիս՝ մայրաքաղաքի համար ստեղծելով պաշտպանական բավական հուսալի շրջան։ Չորրորդ դարում այն փոխել էր հունը, բավական հեռացել՝ նախկին հունի տեղը թողնելով Ճահճուտներ, որոնք վատառողջ մթնոլորտ էին ստեղծել մարզաշատ մայրաքաղաքում։

որստեղիներ և հետագա դարերում էլ պիտի մնային «Խոսրովի անտառ» անունով։

Խոսրովի օրերում նախարարական տների հզորացումն ավելի էր բորբոքել նրանց կենտրոնախույս տրամադրություններն ու միջավատական զինաբախումները։ Տեսնելով, որ պատժարշավներով անհնար է կայուն խաղաղություն ստեղծել երկրում, թագավորը կարգ սահմանեց, «որպեսզի «հազարավորներն» ու «բյուրավորները» մշտապես գտնվեն արքունիքում։ Այդպես պիտի կանխվեին նոր անախորժությունները։

335 թ. խախտվում է ավելի քան երեք ու կես տասնամյակ տևած խաղաղությունը։ Բուն Աղվանքի Մազքթաց թագավոր Արշակունի Սանեսանը, իր երկրում Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսի քարոզչությունը պատճառ-պատրվակ դարձնելով, մեծ զորքով մտնում է Հայաստան և մի ամբողջ տարի արևելյան նահանգներն ասպատակելով հասնում միջնաշխարհը, նվաճում Վաղարշապատը։ Կոգովիտ գավառի Գարույնք բերդում ամրացած Խոսրովն այնքան է սպասում, մինչև Բյուզանդիայից վերադառնում է Վաչե Մամիկոնյան սպարապետը, որն ի մի է բերում հայոց զորքը և, վճռական ճակատամարտ տալով, ջարդում մազքութներին, սպանում Սանեսան թագավորին։

338-ին վախճանված Խոսրովին հաջորդում է նրա որդի Տիրանը, որի գահակալության առաջին իսկ տարում, խախտելով Մծբինի դաշնագիրը, Պարսից Շապուհ Բ արքան մեծաքանակ զորաբանակով շարժվում է Հայաստանի ու Հռոմեական կայսրության արևելյան նահանգների վրա։ Սրանից հետո պարբերական են դառնում հայ-բյուզանդական զինաբախումները պարսից հետ։ Արտաքին վտանգին զումարվում են ներքին երկպառակությունները, որոնց խառնված էին ինչպես առանձին նախարարություններ, այնպես էլ եկեղեցին ու նրա նվիրապետությունը։ Երկիրն այս խառնակ վիճակից հանելու համար Տիրանը դիմում է ծայրահեղ միջոցների, որոնցից հատկապես հայտնի են արքունի կանանոցի ներքինապետ Հայր-Մարդպետին արտոնված անսահմանափակ իրավունքները, որոնց զոհ գնացին մի քանի նախարարական տներ, հոգևորական գործիչներ և, ինչ ասել կուզի, Արշակունյաց թագավորական տան բարի անունը։

Երբ Տիրանը, ո՛չ առանց հայ ավագանու ջանքերի, մատնվել էր պարսից բռնավորների ձեռքը և կուրացվել, սակայն երկրի ներքին ուժերն այնքան հզոր էին, որ խոսք անգամ չէր կարող լինել օտար տիրապետության մասին, Հայոց գահին բազմեց Տիրանի որդին՝ Արշակ Բ-ը։



ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐՁԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Նախորդ դրույցում ասվեց, որ քրիստոնեությունը ծնվել և նախապես տարածվել է իբրև ճնշված ու հարստահարված ժողովրդի գաղափարախոսություն։ Ընդվզումներն ու ազատագրական բաղձանքները հարստահարվածներին մղել են երջանիկ տեսիլքների և այն հավատին, թե պիտի գա գերբնական մի Փրկիչ, որը պիտի կործանի մեղավոր աշխարհը, մարդկությանը պարգևի հավասարություն, եղբայրություն, իսկ մահվանից հետո՝ դրախտի հավիտենական երանություն։ Հենց սկզբից եթե այս հավատը դայթակղիչ էր նրանով, որ տարբերություն չէր դնում ազգերի և հասարակական խավերի միջև։

Ուսումնասիրողները համոզված են, որ այս հավատի գաղափարախոսությունը կազմավորվել է հին հունահռոմեական փիլիսոփայության և Արևելքի (մանավանդ եգիպտական, հնդկական ու իրանյան) հավատքների հիման վրա, իսկ կազմավորմանն ուղղություն են տվել հրեա Փիլոն Այեքսանդրացու և հռոմեացի Սենեկայի (երկուսն էլ մ. թ. I դար) փիլիսոփայական ուսմունքները։ Հավատի դրոշակակիր Հիսուս Քրիստոսն էլ իր էությամբ նորություն չէր. նրա ամենակարևոր հատկանիշը՝ մեռնել-հառնելը, Արևելքի ժողովուրդների հոգևոր աշխարհում վաղուց իր կրողն էր ունեցել՝ հանձին Միհրը-Միտրա աստվածության և նրա տարանուն տարբերակների։

Սկզբնական շրջանում, որ ընդգրկեց մեր թվականության առաջին ու երկրորդ դարերը, նոր հավատը միայն քարոզիչների միջոցով էր տարածվում։ Կառավարող շրջաններն այն ընդունում էին թշնամաբար, հալածում քարոզիչներին։ Սակայն աստիճանաբար խորանալով այդ վարդապետության էության մեջ, նրանք հասկացան, որ նոր հավատով հեշտությամբ կարելի է զսպել ըմբոստ զանգվածներին, այն դարձնել ավատական կարգն ու միապետության հիմքերն ամրապնդող վարդապետություն։ Մանավանդ, երբ նոր ուսմունքի մեջ գնալով առավել տիրական էին դառնում համբերատարության, չարին չհակառակելու, աստծու ստեղծած կարգերը (իսկ սրանց մեջ էլ՝ տեր ու ծառա, իշխող ու շահագործվող աստիճանները) հարգելու պատգամները։ Եվ պատահական չէ, որ կարճ ժամանակ անց պետությունները ոչ միայն ընդունեցին քրիստոնեությունը, այլև այն պետական կրոն հայտարարեցին։

Հայաստանում քրիստոնեությունը ոտք է դրել իր սկզբնավորման առաջին իսկ տասնամյակներից։ Ըստ ավանդության՝ Քրիստոսի առաքյալներ Թադեոսն ու Բարդուղիմեոսն են եղել, որ հենց առաջին դարում ոտք են դրել մեր երկրի հարավային շրջանները և քարոզել նոր հավատի պատվիրանները։ Ասում են՝ Թադեոս առաքյալը քարոզչությամբ է զբաղվել Արտազ գավառում և այնտեղ էլ հիմնադրել է Թադեի վանքը։ Ճիշտ է, Սանատրուկ Արշակունի թագավորի գործակալների ձեռքով նահատակվել են քարոզիչները, սակայն հենց այս ժամանակից էլ երկիրը բռնված է եղել նոր հավատի հովերով, իսկ 3-րդ դարի երկրորդ կեսին նրա տիրապետությունն այնպես համատարած է եղել, որ այն ընդունել է նաև արքունիքը և ոչ միայն ընդունել, այլև 301 թ. դարձրել պետական կրոն, երբ քրիստոնեությունն իր ծննդավայրում՝ Բյուզանդական կայսրության մեջ, թույլատրելի կրոն պիտի համարվեր միայն 313 թ.՝ Կոստանդին Մեծ կայսեր ընդունած հրամանով (Միլանի էդիկտ)։

Ըստ քրիստոնեական վարդապետության՝ հավատի հիմնադիրը Հիսուս Քրիստոսն է՝ Սուրբ Երրորդության (Հայր Աստված, որդի Քրիստոս և Սուրբ Հոգի) երկրորդ դեմքը։ Ավանդության համաձայն՝ նա ծնվել է Բեթղեհեմ քաղաքում, անարատ հղիությունից (Սուրբ Հոգուց և Մարիամ Աստվածածնից)։ Երիտասարդ հասակից ծրագրել է փրկել մարդ-

կությանը, քարոզչությամբ է զբաղվել, որի համար դատապարտվել է մահապատժի, խաչվել Գողգոթայում։ Նույն ավանդությամբ՝ կամավոր է ընդունել նահատակությունը՝ անձնազոհությամբ մարդկությանը փրկելով Ադամին ու Եվային բաժին հասած նախածին մեղքից։

Առհասարակ անձնազոհությունը և այս ճանապարհով սեփական ու հասարակական մեղքերի քավումը, աշխարհի ապականությունների վերացումը նոր հավատի էությունն են կազմում։ «Ահա իմ արյունն ու մարմինը, ընդունեցեք և փրկվեցեք ձեր մեղքերից»,— սա Քրիստոսի՝ մեր նահատակ փրկչի կարգախոսն է եղել, նրա, որ երկրորդ գալստյամբ պիտի մարդկությունն իսպառ ազատի իր բոլոր ախտերից ու դժբախտություններից։

Քրիստոնեությունը Հայաստանում տարածվեց հրով ու սրով, և նրան զոհաբերվեցին հին բոլոր հավատներն ու այդ հավատների շնչով ստեղծված մշակութային արժեքները։ Հինը համառում էր, և նրա գահերը պիտի նվաճվեին արյունհեղությամբ ու ավերածություններով։

Նախորդ զրույցներում քան հնարավորին մենք ցույց տըվինք մեր ժողովրդի նախաքրիստոնեական մշակույթի ուրվապատկերը։ Այո՛, իրականի հեռավոր ու նվազագույն պատկե՛րը միայն, քանի որ քրիստոնեությունը հիմնահատակ ոչնչացրել է այն ամենը, որ կարող էր որևէ արժեք ներկայացնել, ուրեմն և դժվարացնել իր երթն ու համատարած տիրապետությունը։ Կարելի է պատկերացնել միայն, թե իր մայրաքաղաքներում, աշխարհիկ ու հոգևոր կենտրոններում ի՞նչ տեսակ շենքեր, մանավանդ «աստծու տներ» պիտի կառուցած լիներ այն ժողովուրդը, որի ձեռքով են բարձրացել Գառնիի հեթանոսական տաճարը, ավելի վաղ՝ Էրեբունիի Սուսին ու Արգինիի Հալդի տաճարը, ի՞նչ քանդակներ պիտի ստեղծած լինեին այն ձեռքերը, որոնց կերտածն են Անահիտ աստվածուհու գլուխը (այժմ՝ Բրիտանական թանգարանում), հունահռոմեական հեղինակների տեսած ու հիշած դիմապատկերները, ոսկեձույլ արձանները։

Նոր հավատը երդվյալ թշնամին էր նաև հեթանոսական գրականության՝ բանավոր թե գրավոր։ Ինչպիսի՞ գրական հարստություն կունենայինք, եթե ժամանակին գրի առնված լինեին թեկուզև միայն բանավոր գրականության բոլոր այն գանձերը, որոնց մասին հիշում են 5-րդ դարի մեր պատմիչները, և միայն Փավստոսն ու Պատմահայրն են, որ իրենց երկերում նրանցից հատուկտորներ են օգտագործել։

Այս բոլորը, սրանց հետ էլ՝ բազմաբնագավառ ու բազմաշերտ մեր հեթանոսական ամբողջ մշակույթը, զոհ գնաց քրիստոնեությանը։

Կար միայն մի բարեբախտություն. ի՞նչ էլ որ լիներ, վազ թե ուշ, անմիջապես կամ միջնորդաբար, նոր վարդապետության հետ կապված մշակույթը պիտի ժառանգեր հեթանոսական լավագույն, ամենակենսունակ ավանդները, նրանք, որ ոչնչացվելով ու թաղվելով էլ հողի տակ են անցել որպես ծլունակ սերմեր։ Այդ մենք կտեսնենք հետագայում, երբ խոսք լինի ոսկեդարյան մեր մատենագրության, ճարտարապետական մեր ոսկեդարի ու մյուս երևույթների մասին։ Իսկ այստեղ՝ տեսնենք, թե քրիստոնեության մուտքն ու առաջին քայլերն ինչպես են արտացոլվել գրական-պատմական այն հուշարձանում, որ մեզ է հասել Ագաթանգեղոս պատմիչի անունով և կոչվում է Հայոց պատմություն։

Հին հայ գրականության մեծագույն մասն են կազմում այն մատյանները, որոնց շապիկները զարդարում է «Պատմութիւն Հայոց» խորագիրը։ Այդ մատյանների շարքում էլ ավագության պատիվը պատկանում է Ագաթանգեղոսի երկին, որի համար, առանց երկբայության, հիմք է ծառայել մի ժամանակագրություն՝ գրված իրադարձությունների ականատեսի ձեռքով։

«Ագաթանգեղոս» հունարեն բարդ բառ է, որ նշանակում է «բարի լուր ավետող» («ագաթոս» — «բարի լուր» և «անգելոս» — «հրեշտակ», «ավետող», «լրաբեր», «ավետարանիչ»)։ Որոշ հետազոտողներ կարծում են, որ Ագաթանգեղեսը ոչ թե գրքի հեղինակի անունն է, այլ պատմության գլխավոր հերոս Գրիգոր Լուսավորիչի մականունը։ Ուստի՝ եթե գրքի խորագիրը նախապես եղել է «Ագաթանգեղայ պատմութիւն», ապա հարկ է դա հասկանալ իբրև «Ս. Գրիգորի պատմութիւն»։ Սակայն հայտնի է, որ 5-րդ դարի մեր պատմիչները՝ Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, այդ մատյանը գիտեին իբրև «Պատմութիւն Հայոց» և նրա հեղինակ էին ճա-

նաչում հենց իրեն՝ Ագաթանգեղոսին, չնայած հաստատ գիտեին նաև, որ այդ պատմության առանցքն են կազմում Գրիգոր Լուսավորիչի վարքն ու հայոց քրիստոնեության դարձը։

Մեզ հասած Պատմության բուն նյութի շարադրանքն ըսկըսվում է Սասանյան Արտաշիրի կողմից Պարթև Վաղարշի որդի Արտավանի սպանությամբ և ավարտվում հայոց քրիստոնեության դարձի հանգամանքների մանրակրկիտ նկարագրությամբ։ Եվ որովհետև բնագրի հիմնական մասն էլ նվիրված է Գրիգոր Լուսավորիչի կյանքի ու հավատանպաստ գործի նկարագրությանը, պարունակում է նաև հայոց առաջին վեհապետի քնդարձակ վարդապետությունը, ապա միանգամայն բնական է նաև մատյանի երկրորդ անունը՝ Գրիվորիսի գիրք, որի մասին ևս տեղեկացնում է Ղազար Փարպեցին։

Այսքանից կարելի է եզրակացնել, որ Պատմության այժմյան բնագրի սկզբի բավական երկար առաջաբանն ու վերջի թոուցիկ հիշատակարանը, որոնցում հեղինակն է ներկայանում իբրև Ագաթանգեղոս և խոսում Պատմությունը հյուսելու հանգամանքների մասին (հանգամանքներն ու ինքնաբնութագրական տեղեկություններն էլ՝ տարօրինակ կերպով հակասական ու խառնակ), ետին դարերի գործ են, խմբագրական միջամտություններ։ Այլապես Ղազար Փարպեցին չէր լռի այդ հանգամանքների մասին։ Սակայն դժվար չէ պնդել նաև, որ բնագիրը Ղազարի ժամանակ էլ, առանց վերահիշյալ միջամտությունների, հայտնի է եղել իբրև Ագաթանգեղոսի գործ։ Այսքանից հետո արդեն եկեղեցական գործիչները պիտի կատարեին խմբագրական միջամտություններ՝ հեղինակությունը բարձրացնելու նպատակով Ագաթանգեղոսին բերելով Հռոմից, նրան դարձնելով Տրդատ արքայի քարտուղարը, շարադրվող դեպքերի ժամանակակիցն ու ականատեսը, Տրդատի հրամանով դեպքերն ու եղելությունները շարադրողը։ Մինչդեռ, ինչպես Մանուկ Աբեղյանն է նկատել, Պատմության մեջ «Տրդատի մասին պատմված են այնպիսի ժողովրդական առասպելներ, ինչպես օրինակ՝ նրա խոզ դառնալը, որ չէր կարող մեջ բերել Տրդատի հրամանով գրողը։ Ս. Գրիգորի «Տեսիլի» մեջ աղոտ ակնարկվում են 5-րդ դարի կրոնական հալածանքներն ու հավատուրացությունները, որ չէին կարող լինել 4-րդ դարի գրվածքի մեջ»։

Պարզ է, ուրեմն, որ 4-րդ դարի աղբյուրը մեծ փոփոխությունների է ենթարկվել 5-րդ դարում։

Ագաթանգեղոսի երկը բովանդակում է հայ ժողովրդի կենսագրության ամենադրամատիկ շրջաններից մեկի հետաքրքիր պատմությունը։ Հայոց թագավորական գահին պարբերաբար բազմում էին Պարթև Արշակունյաց տիրակալների հարազատները, և անհրաժեշտ էր, որ թագավորական հարստությունը դառնար դինաստիական, գահատոհմի ժառանգները հաջորդեին միմյանց, ամրապնդեին երկրի քաղաքական կացությունը։ Եվ միաժամանակ, երբոր էին հին հեթանոսական հավատի հիմքերը, սկսվում էր քրիստոնեության տիեզերական տիրապետությունը, որի հաղթարշավը հենց առաջին շրջանում էլ պիտի անցներ Հայաստանով, ավերելով հին կյանքի ձևերն ու մշակութային արժեքները՝ մի անորոշ հեռանկարի համար։

226 թ. Պարսկաստանում կործանվեց Արշակունյաց թագավորական հարստությունը, և սկսվեց Սասանյանների տիրապետությունը։ Դեպքը տեղի ունեցավ Հայոց երկրից դուրս, հարևան մի երկրում, և, թվում էր, ոչ մի դեր չպիտի խաղար հայ ժողովրդի կյանքում։ Սակայն իրականում ճակատագրական նշանակություն ունեցավ հայոց համար, որովհետև երբ պարսիկ Արշակունիների տոհմակիցներն էին հայոց գահի տիրակալները, ապա երկու երկրներն էլ տնականորեն, դարեր շարունակ ապրում էին համարյա առանց քաղաքական մեծ բախումների։ Մինչդեռ Սասանյանները, բուն Պարսկաստանում Արշակունիներին վերացնելով, նույնը պիտի անեին նաև Հայաստանում, որովհետև հարևան այդ երկրի վրա իրենց քաղաքական ու տնտեսական ազդեցությունը ծանրացնելու այլ մի-ճանապարհ չկար։ Եվ հենց այս կետից էլ ծայր առավ արյունոտ այն դրաման, որի երկուհարյուրամյա դաժան խաղարկումի վերջին տեսարանն էր լինելու Հայոց թագավորական հարստության և քաղաքական անկախության բարձումը։

Ահա այս դրամայի սկիզբն էլ կազմում է Ագաթանգեղոսի Մատյանի բովանդակությունը։

Արտաշիր Սասանյանի ձեռքով Պարսից գահից զրկվում, ապա և սպանվում է Արտավան Արշակունին։ Հայոց թագավոր

Խոսրովը, իր տոհմակցի մահվան համար վրիժառությամբ լցված, տասը տարի շարունակ հաջող մարտեր է մղում Սասանյան Արտաշիրի դեմ, և Արտաշիրն այդ ամենին վերջ տալու նպատակով Հայաստան է ուղարկում Անակ Պարթևին, որը գալիս և դավադրաբար սպանում է Խոսրով թագավորին։ Հայերը կոտորում են չարագործի ամբողջ տոհմը, որից փրկված միակ ներկայացուցչին՝ Գրիգոր մանուկին փախցնում են Կեսարիա։ Այստեղ էլ նա դաստիարակվում ու հասունանում է իբրև քրիստոնյա։ Իսկ անթագավոր մնացած Հայաստանում ոսպատակ է փռում Արտաշիր Սասանյանը։ Նա ոչնչացնել է ասելիս Խոսրովի տոհմը, որից էլ փրկվում է Տրդատ մանուկը՝ Խոսրովի որդին։ Հայոց նախարարները Տրդատին հասցնում են Հռոմայեցոց երկիրը, ուր նա մեծանում է, դառնում քաջ զորական ու հնարամիտ քաղաքական գործիչ։ Գոթերի դեմ մղված ճակատամարտում խիզախ մենամարտի է ելնում նրանց թագավորի դեմ և փրկում Դիոկղետիանոս կայսրին։ Այսօրինակ քաջություններով իր վրա քաղցրացնում է կայսրության աչքը, ապա նրա զորքերի բազմությունն առած՝ գալիս, Հայաստանը մաքրում է պարսիկ բանավորներից, դառնում հայրենի գահի տնօրենը։

Հայաստան գալով, Տրդատի արքունիքում ծառայության է մտնում Գրիգոր Պարթևը, որն արդեն քրիստոնեության ոգեսավորն էր և մամուռում էր մի դաժան կռիվ հեթանոս աստվածների դեմ։ Տրդատը՝ մոլեռանդ հեթանոս, նորահավատ Գրիգորին ենթարկում է անլուր չարչարանքների և, չկարողանալով վերադարձնել հին հավատին, կարգադրում է նրան տանջանքներով մաշել Խոր-Վիրապի արգելափոսում։

Գրքի հաջորդ հատվածներում ներկայացվում են Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից Հայաստան փախած քրիստոնյա մի խումբ կույսերի նահատակության մանրամասները։ Գայանեի գլխավորությամբ նրանք կանգ էին առել արքայանիստ Վաղարշապատի մոտի մի հնձանում։ Նախապես նամակով Դիոկղետիանոսի կողմից տեղեկացված էր Տրդատը, որն իշխանազնուհի և չքնաղ կույս Հռիփսիմին արքունիք հրավիրեց և փորձեց դարձնել իր կինը։ Սակայն Հռիփսիմեն ըմբոստ մենամարտ տվեց արքային, փախավ ապարանքից և նահատակվեց արքունի հեթանոս մարդկանց

ձեռքով։ Սրանք տանջամահ արեցին նաև Գայանեին ու մյուս կույսերին։ Մի քանի օր հետո, երբ Տրդատը որսի գնաց Փառականի եղեգնուտները, դիվոտվեց և խոզի կերպարանք առավ։

Այսքանից հետո է, որ արքայի քույր Խոսրովիդուխտին տեսիլքը հայտնում է, թե Տրդատին բուժել կարող է միայն Խոր-Վիրապում կալանավորված Գրիգորը։ Կալանքից ազատում են Գրիգորին։ Նա բուժում է արքային։ Ապա սրան էլ հայտնվում է մի տեսիլք, որը հանձնարարում է եկեղեցիներ կառուցել Միածնի իջման տեղում և Գայանեի, Հռիփսիմեի ու մյուս կույսերի նահատակության վայրերում։ Արդեն բուժված և քրիստոնեություն ընդունած Տրդատի ամենագործուն օժանդակությամբ Գրիգորը հիմնադրում և 303 թ. կառուցում է էջմիածնի մայր տաճարը, ապա մատուռներ է կանգնեցնում Գայանեի, Հռիփսիմեի ու Շողակաթի եկեղեցիների տեղերում, կործանում է երկրի տարբեր դավառներում գտնվող հեթանոսական սրբարանները և նրանց տեղերում կանգնեցնում եկեղեցիներ ու վանքեր, որոնք դառնում են նոր հավատի կենտրոններ։

Գրիգորը, Հայոց երկրի բոլոր նահանգների տեր եպիսկոպոսների ու նախարարների ուղեկցությամբ, գնում է Կեսարիա՝ այնտեղ Զենոփիոս հայրապետից Հայոց եպիսկոպոս ձեռնադրվելու։

Անկասկած է, որ այս հատվածի նյութը Պատմության մեջ է մտել նախնական ազբյուրից։ Դրա ապացույցն է, ամենից առաջ, Մեծ Հայքի տասնվեց աշխարհների այն ցանկը, որ մեջ է բերվում զուտնամակյան ասույթ հնթիմականությամբ, և չկա հիշեցրած զորի ուրիշ մատյաններում։ Կրկնենք այստեղ այդ ցանկը. «Այնժամ թագավորը շուտափույթ և երկյուղածությամբ, մեծ ինքնությամբ հոգալով՝ հավաքեց նահանգների գլխավոր նախարարներին ու կուսակալներին։ Առաջինը՝ Անդեղ տան իշխանը, երկրորդը՝ Աղձնյաց իշխանը, որը մեծ բդեշխն է, երրորդը՝ մարզպետության իշխանը, չորրորդը՝ ասպետական իշխանության թագագիր իշխանը, հինգերորդը՝ ազարապետության իշխանը, Հայոց աշխարհի զորավարը, վեցերորդը՝ Կորդվաց երկրի իշխանը, յոթերորդը՝ Ծուրաց երկրի իշխանը, որն անվանվում էր մյուս բդեշխ, իններորդը՝

Ռշտունյաց երկրի իշխանը, տասներորդը՝ Մոկաց երկրի իշխանը, տասնմեկերորդը՝ Սյունյաց երկրի իշխանը, տասներկուերորդը՝ Ծավդեից երկրի իշխանը, տասներեքերորդը՝ Ուտիացոց երկրի իշխանը, տասնչորսերորդը՝ Զարավանդ և Հեր գավառի շահապ իշխանը, տասնհինգերորդը՝ Մաղխազության տան իշխանը, տասնվեցերորդը՝ Արծրունյաց իշխանը։

Սրանք են Հայաստան աշխարհի, Թորգոմի տան ընտիր իշխանները, կուսակալները, կողմնակալները, հազարապետները, բյուրավորները, որոնց հավաքեց Տրդատ թագավորը և ուղարկեց Կապուտկացոց կողմերը, Կեսարիա քաղաքը, որը հայերեն Մաժաք են կոչում, որպեսզի տանելով Գրիգորին՝ իրենց երկրի քահանայապետ դարձնեն...»[1]։

Ի դեպ, հենց Ագաթանգեղոսի մատյանի մասին է պահպանվել մի հետաքրքիր զրույց, որ «Աղվանից աշխարհի պատմության» մեջ է մեզ հասել։ Ասում է՝ մի անգամ Մեծ Հայքի նախարարական տների գլխավորները հրավիրված են լինում Պարսից արքունիք։ Արքայից արքա Շապուհ Որմզդյանը (309—379 թթ.) նրանցից պահանջում է մի որևէ փաստաթուղթ կամ հին Պատմության գիրք, որի մեջ նշված լինեն Հայոց երկրի տերերի բարձն ու պատիվը (պատվակարգը)։ Եվ այն ժամանակ Մեծ Հայքի իշխաններն արքային են ներկայացնում «զԱգաթանգեղայ Պատմութիւնն ցանկալի», որի մեջ նշված է լինում երկրի գլխավոր նախարարական տների «գիր տասնեւօթն բարձի», որի շարքում էլ Սյունյաց իշխանի տեղը նշված է լինում տասնչորսերորդ տեղում[2]։

Կարծում եմ՝ կարևորություն չունի, որ Ագաթանգեղոսի երկում նահանգների գլխավոր նախարար-կուսակալները 16 են, այստեղ՝ 17, առաջինում Սյունյաց գահը 11-րդն է, այստեղ՝ 14-րդը։ Կարող է պատահել՝ Աղվանքի պատմիչն է թվերը խառնել։ Բայց որ ավանդությունը չէր կարող պատմական հիմք չունենալ, դա անհերքելի է։ Ավանդության վերջին տվյալը՝ որ հայ նախարարներն իրենց պատմությունը ստիպված են լինում «թարգմանել ի պարսիկ գիր և լեզու»,

1 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, § 795—796։

2 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Ազուանից աշխարհի, գիրք Բ, գլ. Ա։

դա ևս բացատրելի է. ագաթանգեղոսյան հիմք-աղբյուրը նախապես գրված է եղել հունարեն, և ա՛յն պիտի թարգմանած լիներին Շապուհի համար։

Եվ այսպես, Կեսարիայից վերադառնալով՝ Գրիգորը Տրդատ արքային ու մերձավորներին, նախարարներին ու բազմաքանակ բանակը մկրտում է Եփրատի օժանդակ Արածանիի ստորջրերում։ Գրիգորն իր գործակիցների հետ անդադրում գործում է, քանդում-ոչնչացնում հեթանոսական մեհյանները, նրանց տեղերում եկեղեցիներ կառուցում, կազմակերպում հայոց եկեղեցական կյանքը, հիմնում եպիսկոպոսական թեմեր և նրանց համար առաջնորդներ ու սպասավորներ պատրաստում։ Իսկ հետո ճգնակեցության է գնում Մանյա քարայրը, որովհետև իր սկսած գործի շարունակությունը հուսալի ձեռքերում էր. Հայոց կաթողիկոս էր ձեռնադրված նրա որդի Արիստակեսը։ Քրիստոնեության առաջին Տիեզերական ժողովին մասնակից եղավ Արիստակես կաթողիկոսը։ Նա իր հետ հայրենիք բերեց Նիկիայի ժողովի կանոնները։ Գրիգոր Լուսավորիչն այդ կանոններին ավելացրեց իր հորինածներն ու ճառերը, և երկիրը բռնեց քրիստոնեական հավատի ճանապարհը։

Այս է Ագաթանգեղոսի Պատմության համառոտ բովանդակությունը։

Հիշված դեպքերը տեղի են ունեցել 3-րդ դարի վերջին և 4-րդի սկզբին։ Հայտնի է, որ Գրիգորի ու Տրդատի ջանքերով քրիստոնեությունը հայոց պետական կրոն է ընդունվել 301 թվականին։ Իսկ այդ իրողությունների մասին գրված աղբյուրի հիման վրա ստեղծվել է ընդարձակ պատմություն 5-րդ դարում, հավանաբար դարի առաջին կեսի վերջերին, գուցե և դրանից քիչ առաջ։

Ագաթանգեղոսի Պատմությունը թարգմանված է մի շարք լեզուներով՝ հունարեն, արաբերեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, եթիոպերեն։ Հունարեն մի տարբերակից, որը 10-րդ դարում մտել էր Սիմեոն Մետաֆրաստեսի կազմած «Վարք սրբոց» ժողովածուն, թարգմանվել է սլավոնական մի շարք լեզուներով և հայտնի է որպես «Վարք հայոց հայրապետ Գրիգորի»։

Հայ պատմիչ Ագաթանգեղոսի Հայոց պատմությունը

գեռևս միջնադարում դարձել է համաշխարհային գրականության ամենատարածված երևույթներից մեկը, հայ ժողովրդի պատմությունն ու մշակութային-գրական գանձը բազմաթիվ ազգերի ներկայացնելու հրաշալի մի հուշարձան։

* * *

Ագաթանգեղոսի Պատմության բովանդակությունը մեզ հուշում է, որ 5-րդ դարի հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է ոչ միայն Տրդատի ու Գրիգոր Լուսավորիչի գործունեությանը վերաբերող, շատ կողմերով արդեն վարքաբանական կերպարանք ստացած ժամանակագրությունը։ Առհասարակ այս հարցը բազմակողմանիորեն քննության է ենթարկվել հայ բանասիրության ու եվրոպական հայագետների կողմից, և այսօր անառարկելի են համարվում Պատմության հետևյալ աղբյուրները. Գրիգոր Պարթևի ու Տրդատ արքայի գործունեության մասին պատմող ձեռագիրը, որը հերոսների մանրամասն կենսագրությունը լինելով հանդերձ, ժամանակի ընթացքում ծածկված է եղել հրաշապատում շերտերով։ Ապա աներկբայելի է Դայանեի, Հռիփսիմեի և մյուս կույսերի վկայաբանությունը։ Սրանց էլ գումարվում է Գրիգոր Լուսավորիչի տեսիլքի ու վարդապետության մի բնագիր, որ նախապես գրված պիտի լիներ հունարեն կամ ասորերեն։ Եղել են նաև երկրորդական աղբյուրներ, ինչպես «Գորիա և Շմոն» վկայաբանական գրվածքը, սուրբ գրքերի վկայություններ ու քարոզներ։ Իսկ ժամանակի Հայաստանի քաղաքական կյանքը վերականգնելու համար հիմնական աղբյուր է ծառայել «Պարսից պատերազմ» ժողովրդական վեպը, որի մեջ գեղարվեստական անթառամ գույներով պահպանվել է հայ ժողովրդի ազատագրական դարավոր պայքարն իր պետական անկախության ու ազգային ինքնուրույնության համար։ Մի կողմում հայ Արշակունի թագավորական տոհմի ներկայացուցիչներն են, հայ նախարարություններն ու զորքը, մյուս կողմում՝ բրոնատիրական Իրանի գահին տիրացած Սասանյանները, նրանց սադրանքներով հայ ժողովրդի ու հայոց պետական անկախության դեմ եկող բռնավորները։ Կռիվն ու բախումները վերջ չունեն։ Հայոց երկիրը հերոսական ջանքերով պահում

է իր ամբողջությունը, պաշտպանում անկախությունը։ Վեպի հայ հերոսների կյանքն ու պայքարը գծված են ճշմարիտ գույներով, բայց ոչ առանց առասպելական-դյուցազնական փայլերի, որոնք, իհարկե, ժողովրդական բանահյուսության, ժողովրդի գեղարվեստական մտածողության վկայությունն են ու արդյունքը։ Ագաթանգեղոսի մատյանին ենք պարտական այս վեպի ամբողջ առաջին մասի համար։ Պատմիչն այնպես հաբաղատորեն գրի է առել վեպի այդ մասը, պահպանել նրա շունչն ու ոգին, որ ընթերցողն զգում է վեպ-բանաստեղծության չափածո տողերի, պատկերավոր մտածողության և գունեղ խոսքի հմայքը։

Ժողովրդական վեպի այս հատվածն սկսվում է Իրանում Սասանյանների գահ բարձրանալով ու հայոց դեմ նրանց նյութած խարդավանքներով և ավարտվում Տրդատ Մեծի աշխարհաշեն գործով ու հակասասանյան պատերազմներում ձեռք բերած նվաճումներով։ Այսպիսին է նաև Ագաթանգեղոսի Պատմության քաղաքական-պատմական հենքը, որի վրա հյուսվել է երկրորդ կարևոր դիպաշարային գիծը՝ հայոց քրիստոնեական դարձը։

Մյուս հարցը, որ ծագում է այսօրինակ աղբյուրների հիման վրա հյուսված Պատմության առթիվ, նրա հավաստիության աստիճանի կամ արժանահավատության հարցն է։ Մի դիրք, որի ճակատին գրված է «Պատմություն», առաջին հերթին պիտի տա ճշգրիտ պատկերն այն ժամանակահատվածի, որի համար հավակնում է։ Եվ այստեղ այն վստահելի պետք է լինի ոչ միայն ընդհանուր ուրվագծի տեսակետից, այլև դեպքերից ու դեմքերից, մեծ ու փոքր երևույթներից խոսելիս։

Ագաթանգեղոսն ինքը, որդեգրված հունական պատմագրության առաջավոր ավանդներին, իր համար սկզբունք ուներ հեռու մնալ «ստապատում ճարտարախոսությունից», գրել ճշմարիտն ու իրական-պատմականը։ «...Մ՛չ սուտ վիպասանել և ո՛չ էլ արժանիքներն ուռճացնող քմազարդ առասպելներով առաջնորդվել, այլ շարադրել հեղափոխ ժամանակների իրական դեպքերը...»։ Կա՞ ավելի բարձր սկզբունք, քան այս, որ կարելի է դրոշմել ճշմարիտ պատմագրության

ճակատին։ Այլ բան է, որ մեր պատմիչի ձեռքի տակ եղած աղբյուրները քիչ հնարավորություն էին ընձեռում վերականգնելու դեպքերի բնականոն ընթացքը, պատմական անձերի անխաթար պատկերները։ Ճիշտ է, նրա երկում կան անստույգ մանրամասներ, թվական տվյալները բացակայում են (իսկ Մովսես Խորենացին գտնում էր, որ «ո՛չ է պատմութիւն առանց ժամանակագրութեան»), հաճախ իրար են միանում նույնանուն հայ թագավորների գործերը, իսկ առասպելաբանություններն ու հրաշքները ո՛չ երկրորդական տեղ են բռնում ամբողջ պատումի մեջ։ Սակայն, այսուհանդերձ, Ագաթանգեղոսի գիրքը միակ և մեծավ մասամբ հավաստի աղբյուրն է Մեծ Հայքի այն պատմաշրջանի, երբ կործանվում էին հեթանոս կուռքերը, և հրի ու սրի, արյունոտ հեղաբեկման միջոցով ժողովուրդը ներքաշվում էր քրիստոնեության ոլորտը։ Այստեղ այն ամենայն բարեխղճությամբ ներկայացնում է հնի ու նորի շարժիչ ուժերը, պայքարի ծավալն ու դաժանությունը։ Հավանաբար 5-րդ դարի ոգու թելադրանքով, նորահավատ գործիչների դաժանությունը չափազանցված է այն ատիճան, որ կարող է համարվել հակադրություն քրիստոնեական վարդապետության հանրաճանաչ պատվիրաններին։ Սակայն քաղաքական միջավայրին, հեթանոսական կյանքին, նոր հավատի առաջին քայլերին վերաբերող տվյալները մեր առաջ բացում են ամբողջական ու տրամաբանորեն պատճառաբանվող մի իրականություն, որի համար դարեր շարունակ Ագաթանգեղոսն է եղել մեր միակ հարգված ու ընդունելի աղբյուրը։ Պակաս արժեքավոր չեն հայ Արշակունիների արքունիքին, նախարարական տներին և նրանց «բարձի ու պատվի» կարգին վերաբերող տեղեկությունները, որոնք ստուգվում են Հայոց Գահնամակի ու Զորանամակի գտնված պատառիկներով։ Մեր հին հեղինակների վկայությամբ՝ հայերը սովորություն են ունեցել իրենց դավանաբանական վեճերը վարելիս հենվել Ագաթանգեղոսի Պատմության տվյալների վրա։ Եվ հենց այս սովորության հաստատումն ենք տեսնում այն ավանդության մեջ, որ պատմեցինք վերը։

Երրորդ կարևոր հարցը, որ ծառանում է գրական համանման հուշարձանները քննելիս, այն է, թե գեղարվեստական

ի՞նչ արժեք ունի տվյալ երկը, դարերի երկար ընթացքին այն արդարացրե՞լ է ընթերցողներին դաստիարակելու, նրանց գրական ճաշակը կրթելու իր դերը։ Այստեղ ևս մեզ օգնության է գալիս Պատմության հեղինակը՝ պնդելով, թե ինքը միշտ նպատակ է ունեցել տալու «զդեղեցկագիր յարմարումն պատմութեան» (պատմության գեղեցիկ շարադրանքը)։ Նա իր երկի այդ շարադրանքն ապահովել է, նախ և առաջ, աչքի առաջ ունենալով հունական հին պատմագրության փորձն ու օրինակը («ըստ օրինակի յունական ճարտարութեանն արկեալ ի շար զամենայն»)։ Իսկ այս նշանակում է՝ մեր մատենագրության առաջին մեծը գիտակցում էր, որ անհնար կլինի իսկական առաջընթացը, եթե, մի կողմ թողած համաշխարհային գեղեցիկ դպրության փորձը, սկսի առաջ շարժվել շրջեթթաթ տալով։ «Հունական ճարտարապետությանը» հետևող մեր պատմիչն ստեղծել է դեպքերի ու գործողությունների մի կապակցված, հետաքրքիր ու գրավիչ շղթա, որի յուրաքանչյուր օղակը դարձել է, իր իսկ խոսքով ասած, «զմարգարիտն պատուական», որ շողում է անբիծ ու ինքնաբուխ։

Մեր պատմիչն իր ազգի կյանքի ամենադժվար պահի սպասավորն էր, այդ պատճառով էլ գիտակցում էր, որ ինքը ոչ թե լոկ հետաքրքիր ընթերցանության նյութ պիտի տրամադրի սերունդներին, այլև «զշահ վաճառին աշխարհի շինութիւն» (ի շահ հայրենի երկրի շենացման)։ Սա անցյալ պատմության փորձը գրական-գեղարվեստական եղանակներով ներկա և դալիք սերունդներին տրամադրելու, դրանով իսկ ժողովրդի հոգևոր ու ֆիզիկական ուժերը կազմակերպելու, հայրենի երկրի ինքնուրույնությանն ու շենացմանը նպաստելու կոչ էր, լուսավոր այն ավանդը, որ Ագաթանգեղոսը թողնում էր հայոց դպրության հաջորդ սերունդներին։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՇԱԿ Բ-Ի ԵՎ ՀԵՏՆՈՐԴՆԵՐԻ ԾՐՋԱՆՈՒՄ

Արշակունյաց հայկական թագավորությունը, ինչպես վերը տեսանք, շատ փորձություններ էր ենթարկվել, նրա գահակալները շատ միջոցներ էին գործադրել երկրի անկախությունը պաշտպանելու համար։ Սակայն չորրորդ դարի իրականությունը հայկական կյանքի դեմ հանեց նորանոր բարդություններ, որոնց խճճվածքի մեջ հերերում էր հայոց գահը, և նրա հզորությունը վերականգնելու համար անհրաժեշտ էին նոր միջոցներ ու գործոններ։ Այս նորի հայթայթման համար էր ծնվել Արշակը՝ մեր պետականության ամենաինքնատիպ երևույթներից մեկը, որի շուրջ պատմությունը բազմազան առասպելներ է հորինել, սերունդները փառքի ու դյուցազնության դրույցներ են հյուսել... Եվ, այսուհանդերձ, դեռ չի լուծվել առեղծվածը, մենք դեռ չենք հասուցել մեծարանքի ու երախտագիտության այն պարտադրանքը, որին արժանի է այդ մեծ երախտավորն ու նահատակը։ Եվ այս բոլորը՝ լոկ այն պատճառով, որ նրա կենսագրությանը խառնվել են նաև հետագա օրերում հորինված տհաճ մանրամասներ, որոնք բամբասանքի նստվածքներ պիտի դառնային, պիտի հոլովվեին դարեր շարունակ, նույնիսկ մեր օրերում։

Արշակի թագավորության սկիզբը ստույգ հայտնի չէ։ Հավանարար այն տեղի է ունեցել 4-րդ դարի 40-ական թվականների երկրորդ կեսին։ Խաղաղություն էր գահակալության առաջին տասնամյակում։ Սակայն Խոսրով Կոտակի թոռն ու Տիրանի որդին չէր կարող մոլորվել այդ խաբկանքից՝ մտածելով, որ այլևս ոչ մի վտանգ չկա Հայոց պետության համար։

Շատ ժամանակ չէր անցել Խոսրովի ու Տիրանի ժամանակներից։ Արշակը չէր կարող տեսած չլինել նրանց ճարահատ ու ծայրահեղ միջոցառումները, որոնք ավելի խարխըլեցին գահի հիմքերը, քան ապահովեցին նրա հարատևումը։ Նախարարությունը խորթ աչքով էր նայում կենտրոնական իշխանությանը։ Սա բացահայտ էր։ Ուրեմն, վստահություն չկար, թե տագնապի պահին երկիրը կբռունցքվի արտաքին թշնամու դեմ։ Նույնիսկ եկեղեցին, որ ստեղծվել էր, իբր թե, լայնածավալ երկրի տարամետ նահանգները դաղափարական մեկ ձուլվածքի մեջ ընդգրկելու համար, արդեն մրցակիցն էր դարձել թագավորական գահի, և կարելի էր կարծել, թե նրա համար ևս միասնական պետության հզորությունը դադարել էր երազելի մի երևույթ լինելուց։

Եվ ահա գահ բարձրանալով՝ Արշակն անմիջապես անցնում է երկրի հզորության ամրապնդմանը։ Մի շարք միջոցառումներով սիրաշահում է հոր ու պապի օրոք գահից տուժած նախարարներին, նրանց դարձնում թագավորության հենարանները։ Մեծացնում և հզորացնում է բանակը։ Նա սպարապետ է նշանակում Վասակ Մամիկոնյանին, որի տոհմն անցյալ ժամանակներում միշտ էլ աչքի էր ընկել ռազմական սխրանքներով։ Եկեղեցու առաջնորդությունը վերջապես վերադարձնում է Գրիգոր Լուսավորիչի տոհմին և կաթողիկոս դարձրած Ներսեսի գլխավորությամբ 353 թ. մի պատգամավորություն է ուղարկում Բյուզանդիա՝ կայսրության հետ բարեկամություն և զինական ու քաղաքական համագործակցություն հաստատելու համար։ Կայսր Կոստանդիոսն ընդառաջում է հայերին, և դաշինքով ամրապնդվում է բարեկամությունը։

Արշակի գահակալության առաջին տասնամյակի մեծ իրադարձություններից էր Աշտիշատում 365 թ. գումարված եկեղեցական ժողովը, որն առաջին անգամ հայոց եկեղեցու և հասարակության համար ընդունեց ղեկավար օրենքներ։ Դժբախտաբար, ժողովի կանոնները մեզ չեն հասել բնագրով, նրանց մասին խոսում է Փավստոս Բուզանդը, որի տվյալներով՝ մեծ ուշադրություն է դարձվել հեթանոսության մնա-

ցուկների, կենցաղում տիրող հոռի բարքերի (բազմակնություն, մերձամուսնություն ևն) դեմ մղվող պայքարին, երկրում բարեգործական ու լուսավորական հաստատություններ հիմնելուն։

Նկատի առնելով, որ Կանոններին անպայման պիտի նախապես ծանոթ լիներ Թագավորը, շափազանց հետաքրքիր է նրանցում շեշտված շափավորությունը, որ պետք է տարածվեր տերերի և ենթակաների (աշխատավորության) փոխհարաբերությունների վրա։ Ճիշտ է, այնտեղ օրենք է համարվում աշխատավոր խավերի հնազանդությունն իրենց տերերին։ Սակայն և գթասրտության կոչ է արվում վերջիններիս, պահանջվում, որ նրանք շինականներին ու ծառաներին չնեղեն ծանր հարկատուրքերով։

Հետաքրքիր է, որ շրջահայաց արքան բոլոր այս միջոցառումներն, այնուհանդերձ, քիչ է համարել իր երկրի հզորությունն ապահովելու համար։ Նա հենց այն գլխից մտածել էր առավել հուսալի մի գործոնի մասին և վերին աստիճանի ուշագրավ է, որ այդ գործոնը տեսել էր հանձին աշխատավոր ժողովրդի։ Այս մասին տեղեկություններ հաղորդող մեր պատմիչները՝ եկեղեցական գործիչներ և աշխարհիկ ու հոգևոր ավատականության շահերի երդվյալ պաշտպաններ, պատմում են, որ Արշակը որոշել էր Թագավորության համար առաջել հուսալի հենարան ստեղծել և Մասսի հարավահայաց լանջի Կոգովիտ գավառում քաղաք հիմնեց՝ որոշած լինելով այն բնակեցնել աշխատավորական խավերով։

Քաղաքի տեղը հարմար էր ամեն տեսակետից. այն Մեծ Հայքի համարյա կենտրոնում էր գտնվում, այնտեղ էին խաչվում Հայաստանով անցնող առևտրական տարանցիկ ճանապարհները։ Ուրեմն, վաճառաշահ մեծ քաղաքը վիթխարի եկամուտներ կբերեր Թագավորությանը։ Բայց և մեծ քաղաքը՝ իր հոծ բնակչությամբ, միայն Թագավորի կամքին ենթակա աշխատավորական խավերով, կդառնար ռազմական նոր ուժ արտաքին ու ներքին թշնամիների դեմ։

Կարճ ժամանակում կառուցվում է հսկա մի քաղաք, որ ուներ բնակելի թաղամասեր, ապարանքներ ու եկեղեցիներ, արհեստանոցներ ու առևտրին ծառայող շինություններ։ Բնակչությունն էլ շատանում ու բազմապատկվում էր օրեցօր,

որովհետև Թագավորի հրամանով այնտեղ բնակվողի վրա վերանում էր դատաստանի իրավունքը։ Ուրեմն, նոր քաղաքն ապահով ապաստարան էր իրենց տերերից դժգոհ անազատների համար, շահագործումից ու ամեն տեսակ նեղություններից փախչողների համար։ Իհարկե, նաև հանցապարտների համար, որովհետև միշտ շափազանցող Փավստոս Բուզանդի կարծիքով՝ նոր քաղաքում ոտք դրած բոլորն ավազակաբարո մարդիկ են եղել, գողեր ու մարդասպաններ, գոփողներ ու խարեբաներ, զազրախոսներ ու սուտասաններ... Այսօրինակ թվարկումից հետո կարելի է մտածել, թե բովանդակ երկիրը մի ավազականոց է եղել, որ հոսելով դեպի նոր քաղաքը՝ այն լցրել է ամեն տեսակ աղտեղությամբ։

Ճշմարտությունն այն է, ամենայն հավանականությամբ, որ նոր քաղաքը գայթակղիչ է եղել ամեն տեսակետից, իսկ ամենակարևորը՝ բնակիչներին ապահովում էր աշխատանքով և անձի պաշտպանությամբ։

Ինչ որ է։ Քաղաքն արդեն կառուցված էր, անունն էլ ստացավ՝ Արշակավան, որ, ըստ մեր պատմիչների, պիտի նշանակեր ամեն տեսակ հանցապարտների խառնիճաղանջ հավաքածու, սակայն ըստ էության ժողովրդական քաղաք էր, աշխատավորների, իրենց քրտինքով ապրողների, ազատության և անձի ապահովության ձգտողների քաղաք։ Չեմ վախենում պատմական անցյալը մոդեռնացնողի պիտակ վատակելուց։ Արշակ Բ-ը աշխատավորական քաղաք էր կառուցել և հույս ուներ նրանով ապահովել իր երկրի հարստությունը, բայց ամենից առաջ՝ հզորությունը։ Հայտնի՞ է նման ուրիշ մի օրինակ հին աշխարհի պատմությունից։

Փավստոս Բուզանդն Արշակ Բ-ի ձեռնարկումները գնահատում էր որպես Հայաստանի վաղեմի հարստության ու հզորության վերականգնում. «Նորոգեցաւ,— գրել է պատմիչը,— զուարթացաւ տէրութիւնն Թագաւորութեան Հայաստան երկրին, որպէս զառաջինսն»։

Սակայն կար, ծաղկում էր Արշակավանը, որ, հակառակ Թագավորի ծրագրի, առատ սնունդ էր տալիս ներքին երկպառակության ձգտող ուժերին. Թագավորի դեմ խուլ թշնամությամբ էին լցվել հոգևոր առաջնորդներն ու նախարարները, որոնցից փախած հպատակներն էին փարթամաց-

նում նոր քաղաքը։ Մյուս կողմից էլ խաղաղության մեկ տասնամյակն իրենց համար վտանգավոր գտնելով՝ պարսից զիշատիչ թշնամիներն էին ասում սրում Հայաստանի դեմ։ Չի ուշանում և հանգույցի լուծումը։ 359 թ. պարսից մի վիթխարի զորաբանակ Հայաստանի հարավային շրջաններն է մտնում, նվաճում Տիգրանակերտը, կողոպտում-ավերում ավաններն ու շենները։ Սա էլ դարձավ սկիզբը պարսկահռոմեական նոր պատերազմի։ Թագավորից դժգոհ նախարարներից մի քանիսը պարսիկ զորքերին առաջնորդում էին դեպի երկրի խորքերը։ Իսկ մյուսները, ներսեհ Կամսարականի գլխավորությամբ և հոգևոր նվիրապետության խրախուսանքով հարձակվեցին Արշակավանի վրա, հիմնահատակ ավերեցին նոր քաղաքը, կոտորեցին բնակչության մեծ մասին, որ հաշվում էր 20 հազար երդ-ընտանիք։

Արշակի գահակալության հաջորդ տարիներին պարբերաբար բորբոքվում էր պարսկաբյուզանդական պատերազմը, և միշտ էլ Հայաստանն էր ռազմաբեմը։ 363 թ. նոր կայսր Հովիանոսը, արևելքում իր զորքերը կարգավորելու նպատակով, Պարսից արքունիքի հետ դաշնագիր կնքեց՝ նրան զիջելով Հայոց երկրի հարավային մի շարք նահանգներ և հանձն առնելով այլևս ոչ մի օգնություն ցույց չտալ Հայաստանին։ Ամմիանոս Մարկելինոս պատմիչն այդ պայմանագրությունը, հատկապես վերջին կետի համար, կոչել է «ամոթալի պայմանագիր», որով Հայոց երկրի դեմ ազատ էին արձակվում Սասանյան արյունռուշտ նվաճողների ձեռքերը։ Եվ պատահական չէր, որ հենց հաջորդ տարին (364-ին) Շապուհ Բ-ի բանակները մտան Հայաստանի արևելյան նահանգները։ Ընդլայնեց հայ ժողովրդի ազատագրական պատերազմը, որ տևեց ութից չորս տարի։ Չորս տարի շարունակ հայերը ճակատ էին տալիս իրենց հայրենիքի ազատության համար։ Նրանք մեծ վնասներ էին հասցնում նվաճողներին։ Պարսիկ նորանոր զորքերով համալրվում էր ճակատը։ Հայ նախարարներից ոմանք դավաճանել էին թագավորին, կռվում էին թշնամու բանակում։ Սակայն Արշակի զորքերը մաքառում էին անզիջում։ Ժողովուրդը հերոսաբար դիմանում էր ծանր փորձություններին։ Սակայն պատերազմի վերջը չէր երևում։ Եվ պարսիկներն էլ իրենց համար նպաստավոր ելք չէին տես-

նում։ Շապուհն ստիպված է լինում Արշակին ու նրա քաջ սպարապետ Վասակ Մամիկոնյանին հրավիրել իր մոտ, իբր հաշտության դաշինք կնքելու։ Արշակն ու Վասակը ճանապարհվում են Տիզբոն, և վատշվեր Շապուհը նենգորեն նրանց կալանքի տակ է առնում, նետում իր երկրի հեռավոր բերդերից մեկի բանտը։

Հայ ժողովուրդը սիրելի թագավորի և սպարապետի այս վերջին ճանապարհի ու վախճանի շուրջ հյուսել է դեղեցիկ մի ավանդություն, որը կարելի է դասել համաշխարհային գրականության համանման գոհարների շարքը։ Ասում է. երեսուն տարի հայերն ու պարսիկները կռվում էին իրար դեմ, երեսուն տարվա ճակատամարտերում հաղթանակը միշտ էլ հայերի կողմն էր։ Սակայն հայոց զորքն այլևս չէր ուզում կռվել, և Արշակը դիր հղեց Շապուհին՝ առաջարկելով խաղաղ հարևանություն։ Այն ժամանակ, ինչպես հնոց կարգն էր, արքայից արքան Հայոց թագավորին հրավիրեց իր մոտ, որպեսզի պայմանավորվեն անելիքների շուրջ։ Շապուհն Արշակին ու Վասակ Մամիկոնյանին արքունիք էր կանչել խաղաղ բանակցությունների, սակայն ամարդորեն կալանավորեց և նոր սկսեց հարցաքննել։ Երբ Արշակին մեղադրում էր Արյաց երկրին հասցրած վնասների համար, նա իրեն հանգավոր ու համապարտ ճանաչեց և խոստացավ հետագայում իրեն պահել հպատակի պես։

Այն ժամանակ Շապուհը խորհրդակցեց իր ասողագուշակների հետ, և նրանք ասացին՝ Արշակն առերես է հպատակության երդում տալիս, հենց որ իր երկիր վերադառնա, վերստին կմնա նույն ինքնագլուխն ու վտանգավոր թշնամին։ Եվ այս գուշակության ճշմարտությունն ստուգելու համար խորհրդականներն առաջարկեցին Հայաստանից հող ու ջուր բերել տալ, հողը փռել մի սենյակի կես հատակին, վրան էլ ցանել բերած ջուրը, ապա սենյակում զրոսնելով հարցուփորձ անել։ Շապուհն այդպես էլ արեց։ Եվ երբ խոսելով ճեմում էին պարսից հողի վրա, Արշակը Շապուհի մեղադրանքներին տալիս էր խոնարհ ծառայական պատասխան, խոստանում էր լինել արքայի հլու հպատակը, իսկ երբ ոտքը դնում էր Հայոց հողի վրա, նրա պատասխանները դառնում էին ցասկոտ ու ազատասեր։ Շապուհը նորից էր ստուգում, և նո-

րից նույն վերափոխությունն ու հակոտնյան՝ պարսից հողի վրա խոնարհ ու ծառայական, հայոց հողի վրա՝ ըմբոստ և կռվի պատրաստ։

Շապուհը վերջնականապես համոզվեց, որ հայրենիք վերադառնալով՝ Հայոց թագավորը նորից կդառնա նույն խշնամին ու ինքնիշխան մարտնչողը, և նրան ցմահ տաժանակրության դատապարտեց՝ բանտարկելով Անհուշ բերդում։

Վասակ սպարապետի վախճանը ևս ժողովրդական վեպում ներկայացված է հայրենասեր ու անկոտրում հերոսին վայել արժանավորությամբ։ Ասում է՝ կալանավորելու հաջորդ օրը Շապուհն սկսեց անարգել Վասակին, սպառնաց աղվեսի մահով սպանել։ Այն ժամանակ քաջ զորավարը հպարտ կանգնեց բռնակալի առաջ և այսպես պատասխանեց։ Իմարկե,— ասաց,— ինձ տեսնում ես այսպես փոքրամարմին և մանավանդ կալանք-կապանքների մեջ քո առաջ կանգնած, և զարմանալի չէ, որ աղվեսի տեղ ես դնում։ Բայց չէ՞ որ մինչև այս վիճակին հասնելը քեզ համար առյուծ էի։ «... Մինչ Վասակն էի,— շարունակում է Հայոց սպարապետը,— ես այնպիսի հսկա էի, որ կանգնած էի մի ոտքս մեկ լեռան վրա, մյուս ոտքս՝ մյուս լեռան վրա։ Երբ աջ ոտքիս էի հենվում, աջ լեռն էր գետին խրվում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էր գետին խրվում»։ Շապուհը ցանկացավ իմանալ, թե այդ ի՞նչ լեռներ էին, որ նրա սակ գետին էին խրվում։ Վասակը պատասխանեց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը...»։

Ասում են՝ Շապուհի հրամանով Վասակի մորթը տիկ են հանել, խոտով լցրել, դրել կալանավոր Արշակ թագավորի առաջ, որպեսզի Հայոց թագավորի տաժանակրության պատկերը լիակատար լինի։

Բռնակալների հնարամտությունը չարագործության մեջ սահմաններ չի ճանաչում։

Սակայն նախախնամությունը երևի թե չի մոռանում հերոսներին և ամենամռայլ վիճակներում անգամ նրանց հասցնում է մխիթարական մի բան։

Փավստոսը, ինչպես նաև նույն նշանավոր պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին,— որ, ամենայն հավանականությամբ, օգտվել է Փավստոսի երկից,— պատմում են, թե Արշակ Բ-ի

հավատարիմ Դրաստամատ իշխանը՝ Անգեղտան տերը, պարսիկների զորքերի հետ քուշանաց դեմ կռվելիս անօրինակ հերոսություններ էր գործել, և, որպես այդ ամենի վարձատրություն, Շապուհ արքան նրան առաջարկել էր. «Ասա՛, թե ի՞նչ կկամենայիր ստանալ այդքան մեծ սխրանքների համար, և մերժում չի լինի»։ Այն ժամանակ Դրաստամատն ասել է. «Ես քեզանից ոչինչ չեմ ուզում, միայն մի բան՝ թույլ տուր, որ գնամ, տեսնեմ իմ իսկական տիրոջը՝ Հայոց Արշակ թագավորին։ Եվ միայն մեկ օրով, երբ ես նրա մոտ կգնամ, հրաման տուր նրան կապանքներից ազատել, և ես իրավունք ունենամ լվանալ նրա գլուխը, օծել, նրան պատմուճան հագցնել, նրա համար սեղան պատրաստել, նրա առաջ խորտիկներ դնել, գինի մատուցել և ուրախացնել երամիշանների՝ ամբողջ մեկ օր»։

Շապուհն այլայլվել էր, որովհետև նրանից անհնարին բան էր խնդրվում. արքունիքի դաժան օրենքներով՝ Անհուշ բերդի տեղը միայն այնտեղ ընկնողը պիտի իմանար, դրա համար էլ Անհուշ էր կոչվում։ Բայց ինչ էլ որ լիներ, ինքն էր նախապես խոստացել և ստիպված եղավ Դրաստամատի խնդրանքը կատարելու հրովարտակ արձակել։

Եվ դնաց Դրաստամատը, հասավ դժոխային Անհուշ բերդը, տեսավ իր սիրելի արքային, ազատեց նրան ամեն տեսակ պատժակապանքներից, լվաց գլուխը, լողացրեց, ազնիվ պատմուճան հագցրեց։ Ապա նրա առաջ սեղան բացեց, ինչպես որոշել էր, բազմեցրեց սեղանի գլխին, թագավորական ճաշեր ու ընտիր գինիներ մատուցեց, ուրախացրեց գուսանների երգ ու նվագով։

Իսկ երբ հերթը հասավ աղանդերին, սեղանը ծանրացավ տեսակ-տեսակ մրգերով։ Դանակ էլ դրին սեղանի վրա, որպեսզի նրանով մրգերը մաքրեն... Արքան գինով էր արդեն, երջանիկ էր կարծես։ Հառաչեց, սակայն, կիսաձայն ասաց. «Վա՜յ ինձ, ուրկից ո՞ւր եմ հասել»։ Ապա հավատարիմ Դրաստամատից աչք գողանալով՝ դանակն առավ, խրեց իր կուրծքը և նստած տեղն էլ վախճանվեց։ Ասում է. Դրաստամատն էլ, երբ տեսավ, քաշեց, դանակը հանեց նրա կրծքից, խրեց իր կուրծքը և մեռավ սիրելի արքայի կողքին։

Արշակ Բ-ի կերպարն ըստ հնարավորին ամբողջացնելու

համար արժե քննել նաև նրա ներպալատական մի երկու միջադեպ, որոնք սովորաբար մեկնաբանվում են որպես նրա դահակալության մռայլ ստվերներ։

Հայտնի է, որ Արշակի դրդումով սպանվել են մի շարք մերձավորներ, նախ՝ նրա եղբորորդի Գնելը, ապա մյուս եղբորորդի Տիրիթն ու Մամիկոնյան տոհմի պայազատ Վարդանը։

Փավստոսը սովորություն ունի արքունիքում կատարված մեծ ու փոքր բոլոր գործարքների հիմքում տեսնել բանսարկություններն ու կենցաղային խլրտումները։ Այս պատճառով էլ պատմության անլուրջ մեկնաբանները, առանց սպանություններին վերաբերող տվյալների հանգամանալից քննության, դրությունն այնպես են ներկայացնում, թե հիշյալ սպանությունների շարժառիթներն են եղել անձնական մանր կրքերն ու անսանձ կամայականությունը։ Սրանով էլ Արշակ թագավորը դառնում է մի սովորական խարդավանիչ, որի պակասը երբեք էլ չի զգացվել հին ու նոր արքունիքներում։

Մինչդեռ նույն Փավստոսի հաղորդած տեղեկությունների մեջ կան միանգամայն վստահելի այնպիսի մանրամասներ, որոնք, առանց կասկածի տեղ թողնելու, հաստատում են թագավորի գործադրած արտակարգ միջոցների հասարակական շարժառիթներն ու պետական անվտանգությամբ պարտադրված հիմքերը։

Մենք տեսանք, որ գահակալության սկզբից ևեթ Արշակը որոշել էր ապահովել իր երկրի անկախությունը՝ ինչպես Պարսկաստանից, այնպես էլ Արևելահռոմեական կայսրությունից։ Այդ ծայրահեղ դժվար գործ էր այն ժամանակ, անհնարինության չափ դժվար։ Եվ ահա մեծ ջանքերի գնով Արշակին հաջողվեց ստեղծել այդ անկախ ինքնուրույնությունը, իր ծրագրած ու երազած անհնարինը։ Պատկերացնենք մի պահ, թե ձեռք բերված անհնարինի վրա նա ինչպե՞ս պիտի դողար, ինչպես նրա համար պիտի պատրաստ լիներ ամեն տեսակ զոհաբերության, ամենածայրահեղ ու վճռական քայլերի։ Եվ հենց այս ժամանակ, քաղաքական այս բարդ մթնոլորտում պարզվեց, որ Հայոց երկրի ինքնուրույնության դեմ կրկին զենք է ճոճում կայսրությունը, զենքն

էլ Արշակի եղբորորդի Գնելն է։ Այո՛, հենց այսպես պարզ ու աներկդիմի։

Գիտենք, որ Արշակն իր հավատարիմ ներսես կաթողիկոսի գլխավորությամբ դեսպանություն էր ուղարկել Վաղես կայսեր մոտ՝ հուսալով ստանալ նրա բարեկամության երաշխիքը։ Սակայն կայսրն անմիջապես կալանքի տակ էր առել Ներսեսին և ազատ արձակել Արշակի եղբորորդիներին՝ Գնելին ու Տիրիթին, որոնք դրանից առաջ պատանդ էին արքունիքում։ Ազատվածներն ու դեսպանության մյուս անդամները՝ Վարդան Մամիկոնյանի հետ միասին, տուն դարձան Վաղեսի մեծագանձ նվերներով ու կասկածելի հանձնարարություններով։ Հասկանալի է, որ այս ստոր քաղաքական խաղը պետք է սաստիկ զայրացներ իր երկրի անկախությունն ու պատիվը փայփայող Արշակին։ Նախ և առաջ նա կշտամբեց իր բանագնացներին. «Ի՞նչ եք բերաններդ առել այդ խաբեական քարերը իբրև նվերներ, երբ արգելքի տակ է առնված մեր երկրի մեծ վարդապետն ու հոգևոր առաջնորդը։ Այդ քարերից,— ասաց,— մենք էլ այնքա՞ն շատ ունենք դրանց տվողի և ձեր ատամները ջարդելու համար»։ Եվ այս ցասումը պարպելու նպատակով նա զորք հավաքեց, Վասակ սպարապետի գլխավորությամբ ուղարկեց բյուզանդական Գամիրք նահանգի վրա։

Գնելն ամուսնացավ Սյունյաց մեծ նախարար Անդովկի դուստր Փառանձեմի հետ։ Այն Անդովկի, որը մի ժամանակ, Հայոց դեսպանության գլուխն անցած, Հունաց կայսեր մոտ էր գնացել, բարեկամության դաշինք կնքել, հետո էլ կայսեր հետ միասին կռվել էր պարսիկների դեմ, հաղթանակ տարել, որից հետո կայսրը Անդովկին ու Կամսարական Արշավիրին էր հանձնել Հայոց երկիրը, վերադարձել Հունաստան (Փավստոս Բուզանդ, գլխ. Ա. գլ. ԻԱ)։

Գնելը կայսեր վստահելի մարդն էր՝ հավանաբար, որոշակի ծրագրով ու հանձնարարականով հայրենիք ուղարկված։ Կայսեր վստահելի մարդն էր նաև նրա աներ Անդովկը։ Նախարարական շրջաններում տարամետ տրամադրություններ կային, հունասիրության ու պարսկասիրության արանքում արքան փորձում էր բարձրացնել ինքնուրույն ու անկախ իր պետության շենքը։ Եվ այս ժամանակ էլ նրան հա-

զորդում են, թե հունական նախարարներն իրենց գլխավոր հն ճանաչում Գնելին, «թէ Գնել թագաւորել կամի և զքեզ սպանել» (դպր. Դ, գլ. ԺԵ)։

Սրանից հետո էր, որ Արշակն իր գործակալներին հանձնարարեց սպանել Գնելին։

Իսկ այս իսկապես ցավալի պատժից հետո էլ պարզվում է, որ անվնաս ու անգործ չէ պարսկասիրությունը։ Վասակ սպարապետն Արշակին հաղորդում է իր ավագ եղբայր Վարդանի դավերի մասին («Վարդան է, որ մատնէ զքեզ թագաւորին Պարսից և կամի կորուսանել զքեզ»)։ Արշակը հիշում է, թե ինչպես Պարսից արքունիքում այդ նույն Վարդանն էր միջնորդ իր ու արքայից արքայի միջև, ուրեմն նա է, որ գործիք է արքունիքի ձեռքին և վնասում է Հայոց ինքնուրույնությանը։ Այսպիսով, բացվում է նաև չարության մյուս կծիկը, և Արշակը կարգադրում է սպանել Վարդանին։ Եվ քանի որ Տիրիթի ու Վարդանի նախաձեռնությամբ է կատարվել Գնելի սպանությունը, չի կարելի չմտածել, որ նրանք երկուսով գլխավորներն են եղել պարսկասերների թևի, հունասերների գլխավոր Գնելին շարքից հանելով, գործել սկսեցին ազատ ու անկաշկանդ և ընկան իրենց այդ պատակտչական հակաթագավորական գործունեության համար։

Իհարկե, այսօրինակ եղրակացությունները, ինչպես նաև հակառակ պնդումները, չեն կարող վերջնական ու սպառիչ համարվել, նախ՝ որովհետև մենք ձեռքի տակ ունենք միայն մեկ աղբյուր՝ Փավստոսի Պատմությունը[1], որի յուրաքանչյուր էջում երևում են հեղինակի միակողմանի կողմնակալությունն ու պատճառական կապերի հեղհեղուկ բացատրությունը։ Էլ չեմ խոսում այն մասին, որ պատմիչը խոսում է իրենից տասնամյակներ առաջ տեղի ունեցած երևույթների մասին, որոնք իրեն հասած պիտի լինեին բավական աղճատ ու աղավաղ վիճակում։

[1] Արշակ Բ-ի ժամանակն արտացոլված է նաև Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ, սակայն այստեղ Քերթողահայրն ակնհայտորեն աղբյուր է ունեցել Փավստոսին, չնայած նրա անունը երբեք էլ չի տալիս և շատ հաճախ է լռելյայն խմբագրում ու վերաշարադրում նրանից քաղած տվյալները։

* * *

Հետագա տասնամյակներին առավել դաժան բնույթ էր ստացել պարսկաբյուզանդական մրցակցությունը Հայաստանին տիրելու համար։ Եվ այդ մրցությունից քրքրվում էր Հայոց երկիրը, նվազում էր թագավորությունը, ցրվում-տարալուծվում էին նախարարության ուժերը։

368 թ. Հայաստան մտած պարսից զորքերի դեմ վերստին պայքարի ելավ հայ ժողովուրդը։ Անհավասար կռվում հայերը մեծ վնասներ կրեցին, Արտաշիրի հերոսական պաշտպանությունից հետո գերի ընկավ թագուհի Փառանձեմը՝ Արշակ Բ-ի այրին։ Դավաճան նախարարներ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի առաջնորդությամբ պարսիկները մտան Հայաստանի կենտրոնական նահանգները, ավերեցին շատ քաղաքներ՝ Արտաշատն ու Վաղարշապատը, Զարեհավանն ու Զարիշատը։ Այս քաղաքների բազմահազար բնակիչներին տեղահանեցին և բռնագաղթեցրին Պարսկաստանի խորքերը, ուր նրանք պետք է ծաղկեցնեին թշնամական երկրի՝ արհեստներն ու առևտուրը։

Սակայն թագաժառանգ Պապը, որ փախցվել էր Հռոմ, այնտեղից կայսերական զորքերի ուղեկցությամբ վերադարձավ Հայաստան և 370 թ. բազմեց Հայոց գահին։ Կարճ ժամանակում այս քաջ ու շրջահայաց թագավորը կարգի բերեց երկրի գործերը։ Մուշեղ Մամիկոնյան սպարապետն էլ անջատված հայկական նահանգներն ու դավառները վերամիացրեց թագավորությանը, չարաչար պատժեց դավաճաններին ու պառակտիչներին։ Սակայն երբ Պապը բավական ամրացրել էր իր գահը և փորձում էր, Բյուզանդիայի հետ բարեկամություն պահպանելով հանդերձ, խելամիտ դիվանագիտությամբ բարելավել հարաբերությունները Պարսից արքունիքի հետ, Վաղես կայսեր հանձնարարությամբ Տրայանոս զորավարը նենգորեն սպանել տվեց նրան։

Ամմիանոս Մարկելինոսի վկայությամբ՝ այս ստոր գործարքը տեղի է ունեցել 374 թ., նենգապատիր մի խնջույքի մեջ, ուր «Այդ անազնիվ գործարքով խախտվեց ամեն մի վստահություն, որովհետև Աստծու առջև օտարերկրացու արյունը հեղվել էր հյուրասիրության շքեղ սփռոցի վրա»։

Պապին հաջորդեց նրա եղբորորդի Վարազդատը, որը,

ժամանակակիցների վկայությամբ, մի առյուծակորով երիտասարդ էր, հաղթանակներ էր նվաճել Օլիմպիական մրցախաղերի ժամանակ, սակայն «ի մտաց թեթև» էր և չկարողացավ երկրի գահավիժող քաղաքական վիճակը փրկել։ Հակառակը, կատարեց տհաս քայլեր (Մուշեղ Մամիկոնյանի սպանությունը, ազդեցիկ մի շարք նախարարների հետ թշնամանալը), որենց պատճառով էլ սպարապետն ու նախարարները նրան վռնդեցին սեփական երկրից։

Վարազդատին գահընկեց անողը եղել է Մանուել Մամիկոնյան սպարապետը, խիզախ ու իմաստուն մի գործիչ, որ երևի ամենամխիթարական երևույթն էր դաշը փորձությունների և օրհասական ճիգերի ենթարկվող հայրենիքի այն օրերում։ Այդ նա էր, որ թափուր գահի վրա բազմեցրեց Պապի մանկահասակ որդի Արշակին (378—386), նրան էլ գահակից դարձրեց Պապի մյուս որդուն՝ Վաղարշակին, դարձավ նրանց խնամակալը և հաջող պատերազմներ մղեց երկիրը տարբեր կողմերից պաշարած թշնամիների դեմ։ Փավստոսն ասում է՝ երբ շատ տարիներ հետո, հայրենանվեր ու հերոսական կյանքի մայրամուտին, այս զորավարը մահվան անկողնում, հարազատներին դլխին հավաքած, մերկացրել է իր մարմինը, երևացել են անհամար վերքերի սպիները, և սպարապետը ողբալով ասել է՝ իր միակ ու մեծ դժբախտությունն այն է, որ մեռնում է անկողնում և ոչ թե պատերազմի մեջ, հայրենիքի ու ազգի փրկության համար մարտնչելիս։

* * *

Արշակունյաց թագավորությունը ցավալիորեն գնում էր դեպի անկում, և այս ընթացքն արագացնում էին ոչ միայն Պարսից արքունիքն ու Հռոմեական կայսրությունը, այլև ներքին ուժերը, որոնց համար կարծես թագավորական գահը մի ծանր բեռ էր, ավելորդ օղակ իրենց և Պարսից արքունիքի կամ իրենց և կայսրության միջև։

380-ական թվականներին Շապուհ Դ-ը (383—388 թթ.) և Հռոմի կայսրը բանակցություններ էին վարում Հայաստանը բաժանելու շուրջ, և 387-ին բաժանումը կատարվեց. երկրի մեծագույն մասն անցավ Պարսկաստանին, իսկ փոքրը՝ արևմտյան մի շարք նահանգներով (Եկեղիք, Դերջան, Կարին, Մանանաղի, Դարանաղի, Խորձյանք, Մզուր ևն)՝ Հռոմեական կայսրությանը։ Ղազար Փարպեցին այս բաժանումը համարում է բնական հետևանքը ներքին այն խարխլվածության, որին հասել էին թագավորությունը, նախարարությունը և առհասարակ հասարակական կարգը։ Ասում է՝ Հայաստանը հնացած ձորձի պես պատռվեց, և նրան տիրացան երկու դիշատիչները։ Ճիշտ է, սկզբնական շրջանում երկու մասերում էլ Արշակունի թագավորներ կային, բյուզանդահպատակ մասում՝ Արշակ Դ, պարսկահպատակ մասում՝ Խոսրով Դ, սակայն շուտով Արշակը մեռավ, և կայսրությունը, գահը վերացնելով՝ սկսեց իր կուսակալներով կառավարել երկիրը։

Ուրիշ կերպարանք ստացավ քաղաքական կյանքը Արևելյան Հայաստանում։ Ճիշտ է, այստեղ շատ կարճ տևեց Խոսրովի գահակալությունը։ Դարձյալ նախարարների ամբաստանությամբ նա մեղադրվեց հունասիրության մեջ և արժանացավ Արշակ Բ-ի ճակատագրին՝ ուղարկվեց Անհուշ բերդը։ Սակայն արքայից արքան դեռևս չէր համարձակվում Հայոց երկիրը գահազուրկ անել և ստիպված եղավ թագավոր կարգել Խոսրովի եղբայր Վռամշապուհին։

Խոսրովին գահընկեց անողն ու Վռամշապուհին թագավոր կարգողը եղել է Պարսից Շապուհ Դ-ը (383—388 թթ.)։ Այդպես գիտեն մեր երկու արժանահավատ հեղինակները՝ Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին։ Եթե Շապուհը Հայոց գահի վրա այս փոփոխությունը կատարած լիներ նույնիսկ իր վերջին տարում, ապա Վռամշապուհի գահակալությունը պիտի սկսենք 388 թվականից։ Հայտնի է նաև, որ Արշակունյաց թագավորական տոհմի այս վերջին երախտավորն ապրել ու գահակալել է մինչև 414 թ., այն ժամանակների համար բավական երկար մի տևողություն, որի մասին չնայած պահպանվել են սակավ ու կցկտուր տեղեկություններ, սակայն մենք ունենք ամենակարևորը՝ Վռամշապուհի ու նրա աշակիցների՝ Սահակ Պարթև կաթողիկոսի ու Մեսրոպ Մաշտոց վարդապետի աննախընթաց մեծագործության հանգամանքների իրապատում վավերականը։

Վռամշապուհի երկարամյա գահակալության մասին մեր պատմագիտության մեջ տիրապետող է այն կարծիքը, որ դա

եղել է քաղաքական անդորրի և երկրի խաղաղ զարգացման մի երանելի շրջան։ Սակայն չի կարելի մոռանալ ո՛չ նրան նախորդած տագնապալից դեպքերը, ո՛չ էլ հաջորդած խառնակչությունները, որոնք հայոց քաղաքական կյանքը դահավեժ տանում էին դեպի անկասեցնելի անկում։ Ուրեմն, դրժվար թե այսօրինակ դեպքերի միջև շուրջ երկուսուկես տասնամյակի ընթացքում երկիրը ենթարկված չլիներ համանման աղետների։ Պարզապես Հայոց դահի վրա նստած էր շրջահայաց մի քաղաքագետ, որը անանում էր իր հայրենիքի գլուխին կախված ճակատագրական վտանգը և խոհուն քաղաքականությամբ վնասազերծելով նախարարության կենտրոնախույս տրամադրություններն ու հոգևոր վերնախավի հակառակությունները, փնտրում էր երկրի և ժողովրդի ազգային ինքնուրույնությունը փրկելու, պաշտպանելու և պահպանելու ուղիներ։

Այս շրջանում կաթողիկոսական գահիսոնը վերադարձել էր Գրիգոր Լուսավորիչի տոհմին, և մեծագույն բարեբախտություն էր, որ գահակալն էլ այդ տոհմի երկրի թե ամենահմաստուն ներկայացուցիչն էր՝ Սահակ Պարթևը։ Որդին էր նա Ներսես կաթողիկոսի, որ եթե Մեծի պատվատիրոջոս էր վատաբել հետնորդների կողմից, ապա հիմնականում Արշակ Բ-ի պետական ամբարտավան միջոցառումների դեմ կատարած քայքայիչ քայլերի և Արշակունյաց դահի կործանմանն ուղղված անեծքների ու մռայլ սեսիլքի համար։ Որդին, բարեբախտաբար, հեռու էր հոր վեհապետական պատվախնդրությունից և ամեն կերպ ստատրում էր հայրենիքի պետական ինքնուրույնությանը, նախարարության հետ ինքն էր նախաձեռնում ամեն տեսակ դաշինք՝ երկրի դեկը Պարսից արքունիքի ձեռքից ետ վերցնելու համար։

Բայց, ինչ էլ որ լիներ, Վռամշապուհն ու Սահակը հաստատ քաղաքագետներ էին և չէին կարող զգացած չլինել իրենց վիճակված երկրի վարչական տխուր հեռանկարը երկու աշխարհակալ տերությունների աքցանի մեջ և հենց դրան Հայոց երկրի տարամետ ուժերի մշտագո խարդավանքների պայմաններում։ Դրա համար էլ, երբ նույն խոհերով ու ծանր մտատանջումներով տարված Մեսրոպ Մաշտոց վարդապետը նրանց դիմեց հայերեն գրեր ստեղծելու առաջարկությամբ, նրանք անմիջապես գործի անցան և ցույց տվին այնպիսի նախանձախնդիր մասնակցություն, կարծես հենց ամբողջ կյանքում իրենք պատրաստվել էին այդ սրբազան գործին։ Եվ իսկապես էլ պատրաստվել էին, որովհետև, Կորյունի վկայությամբ, երբ Սահակն ու Մեսրոպն իրենց առաջարկությունն են անում թագավորին, նա իսկույն հիշում է ասորի Դանիել եպիսկոպոսին, որն, իբր, հայերեն գրեր է հայտնաբերել պատահաբար։ Ուրեմն, Վռամշապուհ արքան Ասորիքում թե մի այլ տեղ շահագրգռություն է ցույց տվել իր մայրենի լեզվի գրերի խնդրի շուրջ, և նրան տեղեկացրել են, թե մի ասորի եպիսկոպոս Դանիել այդպիսի գրեր է հայտնաբերել։ Եվ Վռամշապուհն այս մասին հիշելով՝ մարդ է ուղարկում այդ գրերի ետևից («Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի Երէց, որոյ անուն Հաբել կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի»)։

Ուշագրավ է, որ սրանից հետո արդեն արքան միշտ էլ Սահակի ու Մաշտոցի հետ էր հայրենի գրերի ստեղծման ամբողջ ընթացքում։ Նրանց հետ ուրախացավ Դանիելյան գրերն ստանալով («Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն, ուրախ լինէին»)։ Ապա մատաղահաս մանուկներ առանձնացրեց, որպեսզի սովորեն գիրը, ստուգեն, պարզեն ամեն ինչ։ Միաժամանակ և հրաման տվեց, որպեսզի այդ գրերով մանուկներին կրթեն ամենուրեք («...հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթելոյ»)։ Իսկ երբ պարզվեց, որ Դանիելյան գրերն անբավարար են հայերեն լեզվի հնչյունական կազմն արտահայտելու համար, դարձյալ նա էր, որ Մաշտոցին հրաման տվեց՝ մի խումբ երեխաներ առնել և գնալ Ասորիք (Արամի կողմերը) և այնտեղ ստեղծել Հայոց սեփական ու անթերի գիրը («Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկրտոյ եռամանաւ արքայի...»)։ Կորյունը վկայում է, թե թագավորը նախարարների ու ժողովրդի գլուխն անցած վազարշապատից գնաց, Երասխի ափին դիմավորեց հայերեն գրերի սրբազան բեռով հայրենիք վերադարձող Մաշտոցին։ Եվ դարձյալ նա էր, որ, առանց ժամանակ կորցնելու, հրաման արձակեց սկսելու նորագյուտ գրերի ուսուցումը («Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ...»)։

Յիշեցնենք մի շատ կարևոր հանգամանք. այս բոլոր տեղեկությունների աղբյուրը հոգևորական Կորյունի Գիրքն է, որը, ինչպես հայտնի է, չանում է գործի ամբողջ ընթացքն ու հաջողությունը վերագրել հոգևոր նվիրապետությանը, հատկապես կաթողիկոս Սահակին, և հաճախ ստվերի տակ է թողնում նույնիսկ Մաշտոցին։ Եվ, այսուհանդերձ, բոլոր տեղեկությունների մեջ, հեղինակի կամքից էլ անկախ, բարձրանում, իր կատարածի անգնահատելի վեհությամբ ընթերցողի առաջ կանգնում է Վռամշապուհ արքան, որը գոնե այս մի հարցում անանխադեպ մի երևույթ էր, վեհ ու վսեմ իր տոհմի, ինչպես նաև մեր նախորդ հարյուրամյակներում իշխած գահատոհմերի նույնիսկ ամենալուսավոր ներկայացուցիչներից։ Եվ, իսկապես, մի՞թե նա չէր կարող կարգադրել, որ իր կատարած ու չկատարած գործերի մասին էլ սեպագրեր ճանկռեն Հայոց ժայռերի վրա, լատինատառ կամ հունարեն. փորագրություններ կատարեն իր հայրենիքի կիսված տարածքի երերուն սահմանաքարերին կամ Վաղարշապատում էլ, Արտաշատի օրինակով, հունարեն ողբերգություններ ու կատակերգություններ բեմադրեն՝ ուղղություն տալով իր երկրի ժողովրդի և ազնվականության լաց ու ծիծաղին։

Սակայն Հայաստանն իր ժողովրդով կանգնած էր ազգային գոյի ինքնության կորստյան սպառնալիքի առաջ, լինել-չլինելու հարցն էր ծառացել՝ թեքված դեպի չլինելն ու կորուստը, երբ անցյալ դարերի փորձ ու գործով տասնապատիկ իմաստնացած մի նոր այր՝ Մեսրոպ Մաշտոցը, ճակատագրի բերելիք ամեն տեսակ արհավիրքների դեմ առաջարկում էր միակ ու ամենազորեղ զենքը՝ սեփական-հայրենի գիրը։ Եվ նրան զորավիգ դարձան Հայոց թագավորն ու կաթողիկոսը։

Ես այսքանը պատմեցի ոչ նրա համար, որ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ կաթողիկոսի փառքից բաժին հանեմ Վռամշապուհ թագավորին։ Քա՛վ լիցի։ Նրանցից յուրաքանչյուրն իր փառքի տերն է, իր սեփական մեծագործությամբ բարձրացած մեր անցյալ պատմության ամենաճակատագրական պահի հորիզոնում։ Նրանք երեքով միասին էին ու միասնական իբրև երեք լծակիցներ կամ երեք հզոր սյուներ, որոնք

իրենց վրա առան մեր ազգի հետագա ինքնուրույն գոյության շենքը և անմահացան։

Նրանց սրբազան երրորդության ջանքերով ստեղծված հայերեն գիրը հիմք դարձավ հայրենի դպրությա՛ն, հայ դպրոցի՛, հայկական գիտությա՛ն, բազմաբնագավառ մշակույթի՛ համար։ Դարձավ մեր ազգային գոյության խարիսխը, և նրանով հայն ու հայկականը դիմացան հաջորդ հարյուրամյակների բոլոր ու ամեն տեսակ փորձություններին։

Վռամշապուհից հետո Արևելյան Հայաստանի գահը համարյա անուժ մի աթոռ էր, որի վրա կարող էին նստել և՛ Արշակունիներ, և՛ Պարսից արքայի տղան։ Վերջին գահակալն էր Արշակունի Արտաշես Գ-ը՝ Վռամշապուհի որդին, որը հոր ողջախոհությունից ու բարոյական բարձր նկարագրից զուրկ մի մարդ էր և անհավասարակշիռ վարք ու գործով առավել խորացրեց գահի և նախարարության միջև գոյություն ունեցած վիհը։ Նախարարները գնացին Պարսից արքունիք և խնդրեցին վերացնել Հայոց թագավորությունը, որպեսզի իրենք անմիջապես ճանաչեն արքայից արքային և գործ չունենան հայրենի գահակալների հետ։ Սահակ Պարթևը դեռ կենդանի էր, խորհուրդ էր տալիս և աղաչում-պաղատում էր հրաժարվել այդ կործանարար մտքից. չէ՞ որ Հայոց թագավորը հայ թագավոր է, հայ մարդ, նրա թերությունն էլ մեր ազգինն է, արժանիքն էլ, ասում էր՝ նրան մատնել Պարսից անհավատ թագավորի ձեռքը՝ այդ միևնույն է, թե սեփական գլուխը դնել թշնամու սրի տակ... Սակայն անդրդվելի էին հայ նախարարները, և Վռամ Ե դաժան արքան էլ մի այդպիսի առիթի էր սպասում, որպեսզի 428 թ. գահընկեց աներ Արտաշեսին, վերացներ Հայկական թագավորությունը և օրենք դարձներ, որ Հայաստանն այնուհետև կառավարվի արքունիքի կողմից նշանակված մարզպաններով։

Ահա այսպես անփառունակ վախճան ունեցավ հայ Արշակունյաց թագավորությունը, որն իր կենսագրության շուրջ չորս հարյուրամյակներում Հայոց երկրում պահեց ու զարգացրեց պետական կյանքը, գլխավորեց հայ ժողովրդի պայքարը պարսից ու հռոմեական բռնատիրությունների դեմ։

Հայոց թագավորության անկումից շուրջ կես դար հետո Արշակունիների հանդեպ արդեն մի խուլ հակակրանք էր թե-

վածում Հայոց երկրում։ Դա պարզ երևում է Մովսես Խորենացու հանճարեղ պատմության այն էջերում, որոնք ընդհանրական գծերով տալիս են անցյալ դարերի պետական կյանքի վայրիվերումները։ Քերթողահայրն առիթը բաց չի թողնում մեծարելու հայազուն և արյունակից թագակիրներին՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչև Արտաշիսյան գահի վերջին տիրակալները։

Պատմահայրն աներկմիտ խոստովանում է. «Ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք՝ որպէս ընիկք և իմոյ արեան առուք և հաւատի հարազատք»։ Եվ սրանց մեջ են բոլոր նրանք, որոնք կային «մինչև ցտէրութիւնն Պարթևաց»։ Չի կարելի չնկատել, որ Արշակունիների ծննդաբանությունը, նրանց օտար ակունքը մեր ազգային պատմության մեծ նահապետին թվում էին այն անկյունաքարը, որով պայմանավորված էին երկրին հասած ձախորդություններն ու օրհասական անկումը։

Դառնացած էր Պատմահայրը, և հասկանալի են նրա տեսած մոտիկ անցյալի ցավագին պատկերների մռայլ գույները։ Սակայն դարերի հեռվից հենց այդ պատկերների մեջ դժվար չէ տարազատել Արշակունյաց գահատոհմի այն փառավոր գործերը, որոնցով մեր ժողովուրդը կարող է հպարտանալ։ Այո՛, հպարտանալ, որովհետև դրանք մեր հայրենիքի ինքնությունը պահեցին այն դառն ու դժվար ժամանակներում և նեցուկ եղան հետագա առավել դաժան դարերում։

Փորձենք Արշակունի գահակալների հայրենաշեն մեծագործությունների շարքից թվարկել մի քանի կարևորները։

Հիշենք ՏՐԴԱՏ Ա-ին (մ. թ. 66—88 թթ.), որը ժառանգություն ստանալով 50-ամյա անտերունչ ու կռվախնձոր վիճակից խարխլված մի երկիր, հիմնովին վերակառուցեց և չենացրեց մայրաքաղաք Արտաշատը, ապա կառուցեց Գառնիի ամրոցը, ապարանքը, հեթանոսական տաճարն ու մնացած հոյակերտները։ Իսկ ամենակարևորը. մեկընդմիշտ հրաժեշտ տալով իրեն ծնած պարթևական քաղաքական ու ազգային-մշակութային միջավայրին, Հայոց գահի ու երկրի համար գծեց կյանքի և առաջընթացի ուրիշ ճանապարհ՝ բնիկ հայկականի ու առաջադիմական հելլենականի խաչաձևմամբ

կենսավորված, զարգացման մի ինքնուրույն, ինքնատիպ հեռանկարով օժտված։

Սանատրուկին հիշենք, որ կառուցեց Մծուրն քաղաքը և իր երկրի սահմանները տարածեց հարավում, տեր դառնալով նաև Օսրոենե երկրին։

Վաղարշ Ա-ին (117—144), որը հաջողությամբ շարունակեց երկրի քաղաքական ինքնուրույնության ամրապնդման գործը, լուրջ քայլեր կատարեց տնտեսական զարգացման համար և կառուցեց Վաղարշապատ մայրաքաղաքը։

Տրդատ Գ հզոր արքային, որի գահակալության երկար տարիները եղան Մեծ Հայքի ռազմական ու տնտեսական հզորության շրջան, քրիստոնեությունն ընդունվեց պետական կրոն և հայ ազգը մեկընդմիշտ անջրպետեց պարսից բռնապետության ազգային ու կրոնական ձուլման քաղաքականության դեմ։

Տրդատի որդի Խոսրով Կոտակը կառուցեց Դվին նոր մայրաքաղաքը և Արարատյան աշխարհում գցեց ընդարձակ անտառներ, որոնք հենց իր անունով էլ հայտնի են և կան մինչև այսօր ու կլինեն հավիտյան։

Արշակ Բ մեծագործ թագավորին հիշենք, գնահատենք Հայոց գահի ուրվագծվող խարխլումը կանխելու համար նրա գործադրած մեծ ու փոքր միջոցառումները, Արշակավանի ժողովրդական պատվարի կառուցումը, չմոռանանք հայրենասիրական այն վսեմ մղումները, որոնք մարմնավորվել են հայ ժողովրդական հրաշալի ավանդավեպում։

Եվ, վերջապես, Վռամշապուհ թագավորի լուսապայծառ գո՛րծը։ Մեսրոպ Մաշտոց — Սահակ Պարթև — Վռամշապուհ թագավոր։ Այս երեք սրբազան անունները ճառագեցին մեր ազգային գրի ու դպրության արշալույսին և կշողան միշտ նույն պայծառությամբ՝ ամեն հայ սիրտ լցնելով անխառն հպարտությամբ ու երախտագիտությամբ։

Ուրեմն, հենց Մովսես Խորենացուց փոխ առնելով մի ուրիշ առիթով ասված գնահատանքի խոսքը, ասենք, որ հայ Արշակունիք մեր դժվար պատմության մեջ կատարել են ողջախոհության ու քաջության շատ գործեր՝ «գրելու և հիշատակելու արժանի»։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ, ՀԱՅԵՐԵՆ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,
Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել նրանց։

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Ազգային ամեն մի գիր ստեղծվում է այն ժամանակ, երբ ազգը հավատում է իր Վաղվան և ուզում է խոսել այդ Վաղվա իր սերունդների հետ։

Հայ ժողովուրդն իր հետնորդների հետ խոսելու ցանկություն դրսևորել է անհիշելի ժամանակներից։ Դրա վկայությունները սփռված են Պատմական Հայաստանի անհուն տարածություններում իբրև ժայռապատկերներ ու զանազան զարդարուն նշանագրեր։ Հետագա դարերում Արարատյան կամ Վանի հայ թագավորներն օգտագործել են ասուրական ու խուռիական սեպագրերը, որպեսզի իրենց հայրենաշեն գործերն ու զինվորական սխրանքները պատմեն գալոց ժառանգներին։ Հաջորդ պատմաշրջանում արդեն հայ մարդկանց օգնության են գալիս արամեերեն ու պահլավերեն, լատիներեն ու հունարեն գրերը, որոնցով ևս հայ թագավորներն իրենց կյանքն ու կամքն էին գրոշմում մեր ժայռերին, մեր շենքերի որմերին ու քարակոթողներին։ Բանն այնտեղ էր հասել, որ հայ թագավորը հունարեն ողբերգություններ էր գրում... Մինչև որ կարիքն ստիպեց մտածել սեփական գրի մասին։

Հայ ազգի սեփական գիրն ստեղծվեց այն ժամանակ, երբ Վաղն այլևս չէր երևում կամ չպետք է լիներ, և գիրը պետք

է դառնար զորավոր միջոց կորցնելիքը գտնելու, մանավանդ պահպանելու և պաշտպանելու համար։

Ասում են՝ ժամանակն է ստեղծում իր հերոսին։

Չորրորդ դարի վերջում Հայաստան աշխարհը բաժանված էր հարևան երկու հզոր բռնատիրությունների՝ Սասանյան Իրանի ու Բյուզանդական կայսրության միջև։ Եվ եթե բյուզանդական մասում իսպառ վերացվեց հայ թագավորական իշխանությունը, ապա արևելյան մասում դեռևս հայ Արշակունյաց հարստության ներկայացուցիչներն էին պատրաստվում կատարելու իրենց տոհմի վերջնահաշիվը։ Պարսկաստանին կամ Բյուզանդիային հարող նախարարներից յուրաքանչյուրը շահագրգռված էր սոսկ իր ավատական տիրույթի և նրանում կանգնած իշխանական աթոռի անձեռնմխելիությամբ։ Հայոց եկեղեցում քարոզ էին կարդում ժողովրդին անհասկանալի հունարեն ու ասորերեն լեզուներով։ Հայոց տաղանդավոր զավակները կրթություն էին ստանում օտար երկինքների տակ, ծառայում էին օտար մշակույթների առաջընթացին կամ, լավագույն դեպքում, եթե վերադառնում էին հայրենի երկիր, մայր ժողովրդի համար մնում էին անհասկանալի։

Հետագայում Հայաստանի այս վիճակն էր ողբում Ղազար Փարպեցի պատմիչը՝ նշելով, որ մանուկներն այնտեղ «վիթխարի ծախսերով, հեռագնաց ճանապարհներով, բազմաժամանակյա դեգերումներով իրենց օրերն էին մաշում ասորական դպրոցներում։ Եվ քանի որ Հայաստանի վանքերում ու եկեղեցիներում ծիսակատարությունները վարվում և գրքերի ընթերցանությունն էլ արվում էին ասորերեն, ապա գրանցից ոչինչ ոչ լսում, ոչ էլ հասկանում էին այսքան մեծ աշխարհի բնակիչները՝ ասորերենը չիմանալու պատճառով»։

Աննախադեպ օրհաս էր կախվել հայ ժողովրդի, նրա ազգն էին միասնության ու ինքնուրույնության վրա։ Ազգի հետագա ինքնուրույն գոյությունը սատարող, ամրապնդող և անխախտ պահող հերոս էր պետք։ Բայց ո՞ւ զենքի հերոս, որովհետև շատ կային զենքի հերոսներ, որոնք, սակայն, անզոր էին հարևան տիրակալների զինական գերակշիռ ուժերի դեմ։ Պետք էր ոգո՛ւ հերոս, ժողովրդի ազգային միասնությունն անհաղթահարելի պատնեշի մեջ առնող ոգեղեն ուժի՛ հերոս։

Այդպիսին եղավ Մեսրոպ Մաշտոցը։

Նա չէր ծնվել իշխանական ապարանքում, ոչ էլ հոգևորականի հարկի տակ էր արձակել իր առաջին ճիչը։ Նրա հայրը եղել էր Տարոնի Հացեկաց գյուղի կիսազատ Վարդանը։ Ենթադրվում է, որ Մեսրոպը ծնվել է 460-ական թվականների սկզբին։ Մանկուց կրթություն է ստացել Տարոնում՝ հմտանալով հունարենի մեջ և վարժվելով հելլենական դպրությանը։ Ապա ծառայել է Արշակունյաց արքունական դիվանում։ Հետագայում լայն տեղեկություններ է քաղել աշխարհիկ իշխանության կարգերից, նույնիսկ ուսումնասիրել զինվորական արվեստը։ Այս բազմակողմանի գիտական ու գործնական պատրաստությամբ էլ նա հոգևորական կոչում է ընդունել և մի խումբ աշակերտներ իր հետ առած՝ քարոզչության գնացել Վասպուրականի ու Սյունյաց կողմերը։ Ճիշտ է, հաջողությամբ էր պսակվում Մեսրոպի քարոզչական գործունեությունը, նրա այցելած գավառների բնակչությունը վիրջնականապես դառնում էր քրիստոնեության։ Սակայն հենց այս շրջագայությունների ընթացքում առավել մոտիկից ճանաչելով իր հայրենիքը և առավել խորն զգալով նրա կարիքները, Մեսրոպը հասկացավ, որ աստվածառաք քարոզներով ժողովուրդը չի փրկվի վերահաս տրոհումից և ուծացումից, երբ բյուզանդահպատակ Հայաստանի հայոց եկեղեցում ու դպրոցներում հունարեն լեզուն է տիրապետում, իսկ Արևելյան Հայաստանում խորթ ու անհասկանալի ասորերենին գումարված է նաև մազդեզանց կրոնի հայաշինջ թաթը։ Մեսրոպը խոր տառապանք ապրեց այս գիտակցությունից։ «Տրամութիւն է ինձ և անպակաս ցաւ սրտի իմոյ վասն եղբարց իմոց և ազգականաց»,— Մաշտոցի հոգու այս պոռթկումն է արձանագրել նրա ավագ աշակերտ ու կենսագիր Կորյուն վարդապետը։

Ազգակիցների, որ ասել է՝ եղբայրակիցների, ցավը Մեսրոպին տանում է Վաղարշապատ։ Այստեղ նա ներկայանում է հայրենասեր կաթողիկոս Սահակ Պարթևին։ Դժվար չէ պատկերացնել երջանիկ պատահականությամբ միաժամանակ ապրած երկու մեծագույն հայերի, մայր ժողովրդի ճակատագրով վառված երկու հայրենասեր հոգիների ներդաշնակ զրույցը։ Մաշտոցը ներկայանում է հայերեն տառեր ստեղծելու, ժողովրդին սեփական գիր ու դպրություն տալու առաջարկով և բացատրում, որ չկա ժողովուրդ՝ առանց սեփական ու ինքնուրույն դպրության և մշակույթի, իսկ վերջիններիս հիմքը, հլման կետն ու առանցքը սեփական գիրն է։ Նա փորձում է բացատրել նաև, թե կորած է մի ժողովուրդ, որի զավակները,— թեպետ և հանճարի դրոշմը ճակատներին,— գրում են օտար գրով ու որդեգրված են օտար խոսքի... Մինչդեռ Սահակն ինքը վաղուց տանջվում էր նույն անելանելի իրականության պատճառով և գիշեր-ցերեկ ելք էր որոնում։

Նրանք իրենց մտահոգությունն ու առաջարկը հաղորդում են Արևելյան Հայաստանի Արշակունի թագավոր Վռամշապուհին։ Թագավորը ոչ միայն քաջալերում և հավանություն է տալիս նրանց առաջարկին, այլև հայտնում է, որ իրեն պատմել են, թե Դանիել անունով մի ասորի եպիսկոպոսի մոտ կան հին հայկական գրեր։ Նա շտապով բերել է տալիս այդ գրերը։ Մեսրոպը փորձում է նրանցով մայրենի լեզու սովորեցնել իր աշակերտներին, և պարզվում է, որ «Դանիելյան» այդ գրերը հայերեն չեն, այլ ինչ-որ օտար լեզվի են վերաբերում և պակասավոր են ու թերի հայերենի հարուստ հնչյունական համակարգը ներկայացնելու համար։

Մնում է շարունակել որոնումը և գտնել նոր գրեր, ստեղծել սեփականը։ Այդ նպատակով Մեսրոպն իր աշակերտների հետ միասին ուղևորվեց դեպի ժամանակի գիտական ու մշակութային նշանավոր կենտրոններից մեկը՝ Եդեսիա։ Այստեղ գիտական մանրակրկիտ քննությամբ ծանոթացավ այն ժամանակ գոյություն ունեցող այբուբեններին, ուսումնասիրեց նրանց կառուցվածքը, տառաձևերն ու այլևայլ առանձնահատկությունները և այս բոլորից հետո միայն ձեռնամուխ եղավ հայերեն տառերի ստեղծմանը։ Արդյունքն այն եղավ, որ ծնվեցին մեր սեփական գրերը՝ միանգամայն տարբեր՝ եղած օտարներից, օժտված բոլոր լավագույն արժանիքներով, որ ունեին այդ եղածները։

Ստեղծված այս այբուբենը հետագա երախտագետ սերունդների կողմից պետք է կոչվեր Մեսրոպյան գիր, իսկ նրանով գրվածը՝ Մեսրոպատառ հայերեն։

Մեսրոպյան գրերն ունեն հետևյալ հիմնական սկզբունքները, որոնք և միաժամանակ նրանց բարձր որակն են կազ-

մում։ Հայերեն լեզվի յուրաքանչյուր հնչյուն ունի իր տառապատկերը, և յուրաքանչյուր տառն էլ ունի յուր հնչյունը, այսինքն՝ ամեն մի տառ միայն մեկ հնչյունով է ընթերցվում, որը հեշտացնում է այբուբենի յուրացումը և կանխում է տարընթերցումներից առաջացող սխալները։ Այն ժամանակ գոյություն ունեին գրության մեր օրերի եղանակները՝ աջընթաց-հորիզոնական, վերից վար և այլն։ Մեսրոպն ընտրեց լավագույնը՝ աջընթաց-հորիզոնականը։ Եվ, վերջապես, իր ուսումնասիրած այբուբեններից շատերը լիքն էին տարբոշիշ նշաններով, երբ տառի վրա, նրա կողքին կամ տակը գրվող այս ու այն նշանով է որոշվում տառի արտասանությունը, ձայնավորը և այլն։ Մեսրոպը հեռու մնաց այբուբենն այսօրինակ նշաններով խճողելուց։

Ահա այսպես ստեղծվեցին հայերեն գրերը, որոնց կատարելության աստիճանը որոշելու համար բավական է հիշել, որ շուրջ հազար վեց հարյուր տարվա անընդմեջ գործածությունը, այսինքն՝ սառուցում-քննումը, չհայտնաբերեց որևէ պակասություն, որպեսզի կարիք զգացվեր նաև էական մշակման կամ բարեփոխության։ Ֆ և Ֆ տառերը մեր այբուբենն են մտել միջնադարում, առաջինը՝ աս երկբարբառի փոխարեն, երկրորդը՝ հետագայում հայերենի մեջ ավելացած փոխառյալ նոր բառերի հնչյուններն արտահայտելու համար։

Ոգեսիայում հայերեն գրերի ստեղծումն ավարտելուց հետո Մեսրոպը գնաց Սամոսատ, այնտեղ ծանոթացավ հմուտ գրագիր Հռոփանոսին և նրան էլ հանձնարարեց պատրաստել իր ստեղծած տառերի գեղագրական պատկերները։ Երբ այբուբենն ավարտված էր նաև այս տեսակետից, Մեսրոպը Սոզոմենի «Առակաց գրքից» թարգմանեց մի նախադասություն և Հռոփանոսին պատվիրեց նայն գրել, որպեսզի ստուգվի ստեղծված այբուբենի իրական կիրառելիությունը։ Ահա մեսրոպատառ հայերենով գրված առաջին այդ նախադասությունը. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», որ կարծես մեկընդմիշտ դարձավ նույն այդ գրերի ուղենիշը՝ ծառայելու իմաստությանն ու հանճարին, հետևելու մարդկային բարոյականության վսեմագույն խրատապատվիրաններին։

Դեպքերի մասնակից Կորյունն Ասորիքից Հայրենիք վե-

բադարձող Մեսրոպ Մաշտոցին համեմատում է Մովսես մարգարեի հետ, որը Սինեական սարից իջնելով՝ իսրայելցիներին էր տանում աստվածապարգև փրկարար օրենքները։

Մաշտոցը Հայաստան էր բերում ոչ թե օրենքներ, այլ Ասորիքում իր ստեղծած հայերեն գրերը, որոնք հայ ժողովրդին պիտի փրկեին վերահաս մեծագույն աղետից՝ ազգային ինքնուրույնության կորստից։

Կորյունը ոգեշունչ խանդավառությամբ է նկարագրում այն ընդունելությունը, որին Մեսրոպ Մաշտոցն արժանացավ գրերի գյուտից մեկ տարի հետո հայրենիք վերադառնալով։ Թագավորն ու կաթողիկոսը, «նախարարագունդ ավագանու ամբողջ բազմությունն առնելով», քաղաքամայր Վաղարշապատից դուրս եկան, Ռահ կամ Եռասխ գետի ափին դիմավորեցին երանելի Մաշտոցին ու նրա աշակերտներին։ «Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո այնտեղից ցնծության ձայներով և հոգևոր երգերով ու բարձրաձայն օրհնություններով վերադարձան քաղաքը և տոնական ուրախությամբ անց կացրին օրերը»։

Մաշտոցյան գիրը մեծ արագությամբ տարածվեց ամբողջ Հայաստան աշխարհում, որովհետև թագավոր Վռամշապուհ Արշակունու և կաթողիկոս Սահակ Պարթևի ամենագործուն աջակցությամբ Մաշտոցն ու նրա առաջին աշակերտները դպրոցներ բացեցին երկրի բոլոր նահանգներում ու գավառներում։ Կարճ ժամանակում թարգմանեցին, հայացրին սուրբ գրքերը և դավանաբանական ու գիտական բազմաթիվ աշխատություններ։ Ստեղծվեց հայրենի գրականություն, որի առաջին իսկ նմուշներն իրենց գրական ու գիտական արժանիքներով դասական օրինակներ պիտի մնային դալիք դարերի համար։

Ապագա քննախույզ սերունդները հայերենի գրի ու դպրության, մանավանդ մեր գրական լեզվի Ոսկեդար կոչեցին գրական-մշակութային խանդավառ վերելքի այս առաջին շրջանը՝ ակունքում վեհորեն բարձրացած տեսնելով Մեսրոպ Մաշտոցի տիտանական կերպարը։

Մեսրոպ Մաշտոցն է հայոց գրի ու դպրության հայրը, մեր առաջին ուսուցիչն ու թարգմանիչը, առաջին գիտնականն ու գրողը, բանաստեղծի խոսքով ասած՝ մեր ամենահայրն ու

ամենահայը։ Եվ պատահական չէ, որ նրան է նվիրված ու նրա դարակազմիկ սխրանքն է ներկայացնում մեր ինքնուրույն գրականության առաջին նմուշը՝ Կորյուն վարդապետի գիրքը՝ կոչված «Վարք Մաշտոցի»։

Կորյունը Մաշտոցի ավագ աշակերտներից է եղել և երախտագետ աշակերտի երկյուղածությամբ ու ականատես գիտնականի բարեխղճությամբ գրել է Մաշտոցի կյանքի ու գործի համառոտ պատմությունը։ Կորյունի գիրքն է միակ ու ամենաարժանահավատ աղբյուրը Մաշտոցի կյանքի և հայերեն գրերի ստեղծման հանգամանքների համար։ Հետագայի մեր բոլոր հեղինակները, նույնիսկ Մաշտոցի կրտսեր աշակերտ Մովսես Խորենացին ու սրա ժամանակակից Ղազար Փարպեցին, այս հարցում հավատի են միայն Կորյունի հետ ունեցած հարազատության աստիճանով։ Այս պատճառով էլ հայերեն գրի ու դպրության սկզբնավորման մասին խոսող միջնադարյան մեր հեղինակների համար միշտ էլ արժանահավատ ու ստույգ աղբյուր է համարվել Կորյունը։ Նրա հաղորդած տեղեկություններով են առաջնորդվել նաև հետազոտողները, որոնց ուսումնասիրությունների մեջ վաղուց արդեն բացահայտված են Մաշտոցի կյանքի, գործունեության ու ժամանակաշրջանի հայկական մշակութային կյանքի բազմաթիվ խնդիրներ։ Եվ, այսուհանդերձ, դեռևս վերջնական, սպառիչ ու անառարկելի պատասխան չի ստացել հայերեն գրի ստեղծման տարեթվի հարցը։

Մաշտոցը ե՞րբ է ստեղծել հայերեն նշանագիր-տառերը։ Հայագիտական ուսումնասիրություններում այս հարցին տրվել են տարբեր, հաճախ իրարից շատ հեռու պատասխաններ։

Բանն այն է, որ Կորյունի գրքի տպագիր տարբերակներում գրերի հետ կապ ունեցող թվական տվյալները հաղորդվում են երկու տեղ. մեկ՝ գրքի բուն շարադրանքի մեջ, մեկ էլ՝ գրքի վերջում տեղ գտած ժամանակագրական մի պատառիկում։

Գրքի՝ մեզ հասած բնագրի բուն շարադրանքի տեղեկությունները սրանք են.

Ա) Վռամշապուհի գահակալության հինգերորդ տարում Մեսրոպ Մաշտոցը գնում է Ասորիք, այնտեղ անհուն տքնությամբ հորինում, ստեղծում հայոց գրերը, կարգավորում

դրանք, ավագ աշակերտների հետ միասին նորելուկ հայերենով կատարում առաջին թարգմանությունները։

Բ) Հայերեն գրերը և թարգմանությունները ձեռքին Մաշտոցը «նկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն... ի վեցերորդի ամի Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց»։

Սրանք են հայերեն գրերի ստեղծման ժամանակի հետ առնչություն ունեցող թվական տվյալները, որոնք տեղ են գտել Կորյունի գրքի բնագրում։

Սակայն գրքի վերջում, բուն շարադրանքից հետո, տեղադրված է նաև ժամանակագրական տվյալների մի փունջ, որն ամբողջությամբ և առանձին միավորներով հակասում է վերը մեջբերված տեղեկություններին։ Այնտեղ Վռամշապուհի անուն չկա, և գրերի գյուտի տարին ցուցված է մի այլ պարզունակ հաշվով. ասում է՝ «Հայոց դպրությունից մինչև սրբի վախճանը՝ [լինում է] երեսուն և հինգ տարի»։ Հայտնի է, որ Սուրբ Մաշտոցը վախճանվել է 440 թվականի փետրվարի 17-ին։ Թե գրերի գյուտն էլ եղել է դրանից երեսուն և հինգ տարի առաջ, ուրեմն՝ 405-ին։

Այս ժամանակագրության մեջ կան, իհարկե, նաև ուրիշ թվական տվյալներ, որոնք այնքան էլ չեն համերաշխվում իրար հետ։ Սակայն գայթակղիչ է պարզունակ հաշիվը,— գրերի գյուտը՝ Մաշտոցի մահվանից երեսուն և հինգ տարի առաջ։ Շատ հետազոտողներ այդ հաշվի վրա հենվելով ջանում էին հարմարեցնել նաև մյուս տվյալները, և, բնականաբար, աջ ու ձախ էր քաշքշվում ամենահիմնականը՝ գրերի գյուտի տարեթիվը։

Ժամանակագրական տվյալների հիշյալ փունջը կասկածելի է թվացել մեր նախորդ մի շարք ուսումնասիրողների, նույնիսկ այնպիսի անառարկելի մեծությունների, ինչպիսիք էին Նիկողայոս Ադոնցն ու Հակոբ Մանանդյանը։ Հենվելով նրանց քննական փորձերի վրա և վկայակոչելով աղբյուրագիտական նոր տեղեկություններ ու փաստեր՝ ես էլ ցույց եմ տվել, որ իսկապես այն Կորյունի բնագրին կցված ուշժամանակյա մի հավելագրություն է, որն անվստահելի է ոչ միայն ամբողջության մեջ, այլև մանրամասներով։ Ուստի և ուսում-

1 Տե՛ս Զրուցարան, Բ, Երևան, 1988, էջ 94—104։

նախիրողը պարտավոր է հենվել միայն բնագրի այն զուտ թվական տվյալների վրա, որոնց մասին խոսք եղավ վերը։ Այս թվականներն էլ ավելի կպարզվեն, եթե գտնենք Վռամշապուհի գահակալության առաջին տարին։ Իսկ այդ տարին գտնելու համար մենք չունենք առավել վստահելի աղբյուրներ, քան Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու պատմական երկերն են։ Սրանց տեղեկությունների համաձայն՝ Վռամշապուհին Արևելյան կամ պարսկահպատակ Հայաստանի թագավոր է կարգել Պարսից արքա Շապուհը։ Ղազարը ներկայացնում է Խոսրով Արշակունուն գահընկեց անելու հանգամանքները, ապա հայտնում, թե «երբ Խոսրովը հեռացվեց թագավորությունից, հայերը Շապուհից մի ուրիշ թագավոր խնդրեցին իրենց համար, և նա էլ համաձայնեց թագավոր կարգել Վռամշապուհին՝ նույն Խոսրովի եղբորը, Արշակունյաց տոհմից։ Եվ թագավոր դարձրած՝ ուղարկեց Հայաստան» (Ղազար Փարպեցի, գլ. Թ)։

Իսկ Մովսես Խորենացու տեղեկությամբ՝ Շապուհի հրամանով էր, որ գահընկեց արվեց Հայոց թագավոր Խոսրովը, և նրա տեղը նստեց Խոսրովի եղբայր Վռամշապուհը (միայն թե այստեղ Շապուհի հրամանն ի կատար էր ածում մեծ զորքով Հայաստան ղրկված Արտաշիր արքայազնը։ Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. 50)։

Նկատի առնենք, որ Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու հիշած Շապուհը չէր կարող լինել ուրիշ մեկը, քան Շապուհ Երրորդը, որովհետև այդ անունը կրող առաջին Պարսից արքան գահակալել է 240—272 թթ., Երկրորդը կամ Երկարակյացը՝ 309—379-ին։ Սուրբ գիտենք և Շապուհ Երրորդի գահակալության տարիները։ Առհասարակ Մասանյան թագավորների ժամանակագրությունը վաղուց պարզված ու հայտնի է։ Ե՛վ հին հետազոտողները (Ա. Կրիմսկի, Թ. Նյոլդեկե, Կ. Պապադոպուլոս), և՛ նորերը (Ռ. Ֆրայ, Վ. Լուկոնին, Է. Բիկերման և ուրիշներ) գիտեն, որ Շապուհ Երրորդը կամ վերջինը գահակալել է 383—388 թթ.։

Շապուհը ե՞րբ է Հայաստանի թագավոր կարգել Վռամշապուհ Արշակունուն։ Հավանաբար իր գահակալության վերջին տարում՝ 388 թ., որովհետև Խոսրովին գահընկեց անելու պատճառ էր դարձել նրա բարեկամակ[illegible] կապը Բյուզանդիա-

յի հետ, որի նպատակն էր Արևելյան Հայաստանը ևս գնել հավատակից կայսեր հպատակության ներքո։ Իսկ այսքանը կատարվել էր Մեծ Հայքը 387 թ. Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև բաժանելուց հետո։

Ուրեմն, Վռամշապուհի գահակալության առաջին տարին 388 թվականն է։ Այս տարին էլ ելակետ պիտի դարձնենք գրերի գյուտի հետ կապված մյուս թվականները պարզելու համար։ Այս հաշվով կստացվի, որ Վռամշապուհի 5-րդ տարում, այսինքն՝ 393-ին, Մաշտոցն աշակերտների հետ գնացել է Ասորիք, այնտեղ ստեղծել հայոց գրերը։ Ասորիքում մնացել է մեկ տարի, այդ ընթացքում հունագետ ու գեղագիր Հռոփանոսի օգնությամբ գեղագրական վայելուչ տեսք տվել իր ստեղծած գրերին, կատարել առաջին թարգմանությունները։

Տարին բոլորելուց հետո, այսինքն՝ Վռամշապուհի 6-րդ տարում (394 թ.) Մաշտոցը Հայաստան է վերադարձել՝ իր հետ բերելով նորաստեղծ գրերը և նրանցով կատարված առաջին թարգմանությունների ուղենիշ փորձը։

Սրանք են հայոց գրերի հետ կապված արժանահավատ թվականները, որ հաղորդել է Կորյուն վարդապետը՝ Մեսրոպ Մաշտոցի աշակերտն ու կենսագիրը, գրերի գյուտի և հայոց դպրության առաջին քայլերի արդար վկան։

Կորյունի հավաստմամբ՝ հայերեն գրերի գյուտը տեղի է ունեցել 393 թվականին՝ և այս տարում է սկսվել հայոց դպրությունը։

* * *

Վերջին տասնամյակներին հայագիտական շրջաններում արծարծվում էր մի ուրիշ հարց ևս՝ արդյոք հայերեն առաջի՞ն գիրն է այդ մաշտոցյան կոչվածը, և հայ ժողովուրդը դրանից առաջ որևէ ժամանակ չի՞ ունեցել իր սեփական գիրը։

Համառ ու անդիջում վեճ էր գնում հայագետների երկու խմբերի միջև, որոնցից մեկը պնդում էր, թե գոյություն է ունեցել նախամաշտոցյան հայերեն գիր, նրանով ստեղծվել է ինքնուրույն դպրություն, և, իբր, այս դպրությունը, գրավոր մյուս հուշարձանների հետ միասին ոչնչացվել է քրիստոնեության հաստատման համար մղված պայքարում։ Մյուս խումբը, նկատի առնելով, որ չեն պահպանվել ոչ միայն այս

գիրն ու գպրությունը, այլև ոչ մի ուղղակի ակնարկ կամ աղբյուրագիտական փաստ, որն ապացույցի այդ երևակայական գրերի երբեմնի գոյությունը, դտնում է, որ անհիմն է համառող կարծիքը, հետևապես՝ մաշտոցյան գրերից առաջ հայ ժողովուրդը գիր չի ունեցել, որի պատճառով էլ հնարավորություն չպետք է լիներ ստեղծելու հաշատառ ու հայերեն գպրություն։

Այս վեճը, դժբախտաբար, դուրս է եկել հայագիտության սահմաններից, ծծվել հասարակական լայն շրջաններ և տալիս է անհաճո նստվածքներ։ Հենց այն հանգամանքը, որ շեղյալ նախամաշտոցյան գրի ու գպրության թմբկահարությունն ընդունվում է իբրև մի անձնվեր հայրենասիրական գործ, իսկ դրա դեմ գիտական հիմնավոր վեճ վարելը՝ հայրենադավություն կամ առնվազն դատապարտելի չկամություն, ապա չի կարելի չմտածել, որ արդեն անհնար է վեճը շարունակել գիտական առողջ մթնոլորտում։ Կարծես մեր ազգի համար այսօր ամենակենսական խնդիրն է դինվել ևս մի գրով, որը, ամենայն հավանականությամբ, նա չի ունեցել, համարվել տերը մի գպրության, որից չի պահպանվել և ոչ մի փշրանք։ Եվ, ամենակարևորը. կարծես ազգի գլխին լուսապսակ են դնում այն մարդիկ, որոնք ամեն կերպ, ծուռ ու շինծու հայտարարություններով չանում են ապացուցել, թե նա՝ այդ ազգը, ոչնչացրել է իր ստեղծած գիրն ու գպրությունը։ Եվ ոչնչացրել է ծրագրված այնպիսի հետևողականությամբ ու չարամտությամբ, որպեսզի նրանցից չմնա ո՛չ մի հետք, ո՛չ մի հուշ ու հիշատակ։ Եվ այս մեղքի տակ է քաշվում մի ժողովուրդ, որի համար միշտ գերագույն սրբություն է եղել ո՛չ միայն իր գիրը, պաշտելի ժառանգությունն է եղել ո՛չ միայն իր ստեղծած մշակութային ամեն մի արժեքը, այլև օտարներինը։ Մարդիկ իրենք իրենց հարց չեն տալիս, թե այդ ինչպե՞ս պատահեց, որ հայը դաժանորեն, անհետ ու անհիշատակ վերացրեց իր սեփական հեթանոսական գիրը, բայց խնամքով պահպանեց հարևան ժողովուրդների, մեծ մասամբ՝ իր երկիրն ապաստակող, իր վրա լուծ ու բռնություն դնող հեթանոս եկվորների սեպագրերն ու վիմագրերը։

Կարծում եմ այս վեճը կարելի է վերջնականապես լուծված համարել։ Նախամաշտոցյան հայերեն գրի ու գպրության կողմնակիցների, այսպես կոչված, աղբյուրագիտական նյութերն ու փաստարկները ի մի հավաքելով հրապարակել էր Աշ. Գ. Արքահամյանը։ Հակառակ տեսակետի ներկայացուցիչ է. Բ. Աղայանն էլ հանդես եկավ նրա քննադատությամբ և հիմնավոր ու համոզիչ կերպով ապացուցեց, որ ներկայացված ավյալներից ու փաստարկներից ոչ մեկը, տարացիորեն ո՛չ մեկը, հիմք չի տալիս պնդելու, թե հայ ժողովուրդը մաշտոցյան գրերից առաջ ունեցել է սեփական որևէ գիր, գպրություն՝ առավել ևս։ Իսկ այդպիսի գրի ու գպրության չգոյությունն էլ արդեն ամեն ինչ է նշանակում։ Ուստի և հակապատմական ու անլուրջ է այն ամբողջ աղմուկը, որ բարձրացվել է չեղյալ գրի, չեղյալ գպրության շուրջ[1]։

Ըստ երևույթին, այս արդեն լուծված հարցի հետ որոշակի առնչություն ունի մեկ ուրիշը, որի շուրջ ևս վեճ է գընացել վաղ ժամանակներից, և այն իրենց ուժեղ կողմերից էին դարձրել նաև նախամաշտոցյան գրի գոյության կողմնակիցները։ Ասում են՝ այն ինչպե՞ս է պատահել, որ սեփական գրերի գյուտին հասցրած մեր սեփական մատենագրության լեզուն միանգամից այնքան մշակված էր, այնքան կատարյալ, պարզապես ոսկեդարյան։ Մի՞թե դա ինքնին ապացույց չէ այն իրողության, որ մենք մաշտոցյան գրերից առաջ, գոնե նախաքրիստոնեական շրջանում, ունեցել ենք ուրիշ գրեր, որոնք ինչ-ինչ եղանակով ոչնչացել-վերացել են, իսկ նրանց բաղմակողմանի ու բաղմաժամանակյա կիրառումով կատարելության հասած մեր լեզուն մնացել է, որպեսզի 5-րդ դարի սկզբից իսկ նոր գրերին ծառայելով դրրսևորի իր հղկված կատարելությունը։

Նախ, չի կարելի այստեղ չպահանջել նույնը. այս նախաքրիստոնեական գիրն ու նրանով ստեղծված գպրությունը պետք է ցույց տալ, գոնե վստահելի աղբյուրներով ապացուցել։ Հակառակ դեպքում ամեն մի նման հայտարարություն չի կարող դառնալ իրենից ավելին։

Ապա. այն ո՞վ ասաց, թե մեր 5-րդ դարի մատենագրության լեզուն հենց իր առաջին իսկ օրն էլ կատարյալ էր ու

1 Տե՛ս Բ. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Ե., 1977։

ոսկեդենիկ։ Եվ ո՞ւր են մեր դպրության սկզբնական շրջանի լոկ թարգմանական գրականության անդրանիկ օրինակները, որպեսզի տեսնենք, որոշենք նրանց լեզվական մակարդակը, նրանց կատարելությունը։ Ամենանշանավոր գրքի՝ Աստվածաշնչի երկու թարգմանություն իրականացրել էին Մեսրոպն ու Սահակը։ Թարգմանել էին երկու անգամ, բայց էլի դժգոհ էին։ Դրա համար էլ Մովսես Խորենացուն ու նրա դասակիցներին ուղարկեցին Հռոմեական կայսրության կենտրոնները, որպեսզի գնան, կատարելագործվեն, թարգմանության և առհասարակ լեզվական բարձր ուսում ստանան, դան նորից թարգմանեն երկու թարգմանական շրջան անցած Աստվածաշունչը։ Եվ հունական դպրոցի լեզվական հեղաշրջումն էլ նկավ ո՛չ թե իբրև մի օտարամուտ հեղեղ, որն, իբր, ավերելու էր մեր լեզուն, այլ իբրև մշակող-բարեկրթող-կատարելագործող մի շունչ, որ շարունակությունն էր կատարելությանը ձգտող, պարզապես այն երազող Սահակ-Մեսրոպյան շարժման։

Եթե մեր առաջին մատենագրական երկը Կորյունի մատյանն է՝ գրված 440-ական թվականներին, ապա նրան նախորդել է թարգմանության 50-ամյա մի եռանդուն շրջան, սկսած գրերի գյուտի տարուց՝ 393 թվականից։ Հարկ է նկատի առնել, որ թարգմանությունը լեզվի զարգացման ու հարստացման, մշակման ու կատարելագործման ամենաբարեբեր հանապարհներից մեկն է։ Գրելիս մարդ հիմնականում գործադրում է այն լեզուն, իր լեզվի այն հարստությունը, որ արդեն կա և կիրառելի է։ Թարգմանական աշխատանքի մեջ է, որ ամեն քայլում առաջ է գալիս մշակելու պահանջը, նոր բառաձև, արտահայտություն, կապակցություն, խոսքի նոր երանգներ ստեղծելու անհրաժեշտությունը, և այս պահանջն անընդմեջ ու հմտորեն կատարելով էլ մարդիկ հարստացնում են իրենց լեզուն, դարձնում առավել կուռ, առավել մշակված ու ճկուն։

Եվ ահա, այսպես, 50 տարվա թարգմանական եռուզեռի մեջ զարգացել, հղկվել, դեպի կատարելություն է գնացել մեր լեզուն։

Կարելի է աներկբայորեն ասել, որ մեր թարգմանական գրականության վաղագույն օրինակները մեզ չեն հասել իրենց

նախնական վիճակով։ Նրանք անպայման մշակման են ենթարկվել հետագայի խմբագիրների ու գրիչների կողմից։ Եվ, այսուհանդերձ, չի կարելի պնդել, թե մեր հին լեզվի ոսկեդենիկ որակի ապացույցները նրանք են և ոչ թե դարի երկրորդ կեսին կատարված թարգմանական գործի արգասիքները, մանավանդ Եղիշեի, Քերթողահոր, Ղազար Փարպեցու երկերը։

Բավական է իրար կողք դնել Կորյունի ու վերոհիշյալ հեղինակների մատյանները, որպեսզի պարզ ի պարզո տեսնենք, թե մեր լեզուն ինչպես անճանաչելիորեն փոխվեց, հարստացավ, ստացավ կուռ ու կոփ, շքեղ, իսկապես ոսկեդենիկ կերպարանք՝ ընդամենը երեք-չորս տասնամյակում։ Եվ սա էլ այն դեպքում, երբ Կորյունն իր գիրքը գրել է հայերենի գրական մշակման հիսնամյա փորձից հետո։

Ուրիշ բան է, որ բանավոր հայերենն էլ սեփական գրերի գյուտին էր հասել ոչ թե կիսավայրենի, խեցբեկագույն վիճակում, այլ այնպես զեղեցիկ, գրական դառնալու համար նախապատրաստված, ինչպես այդ երևում է 5-րդ դարում գրի առնված բանահյուսական ստեղծագործություններից։ Այդպիսի օրինակներ ունենք Փավստոսի ու Մովսես Խորենացու երկերում։ Դրանք են՝ հայ-պարսկական պատերազմի առթիվ հյուսված ավանդաղրույցները, հին հավատալիքներին ու ասավածներին նվիրված առասպելները, ասքերն ու երգերը։

Խորենացին խոստովանում է, որ իր գրի աղբյուրները նախնական են, այնպես, ինչպես լսել է։ Իսկ Փավստոսի Պատմության այդպիսի հատվածները վաղուց հայտնի են որպես ժողովրդական ավանդապատումի զոհարներ, և հեշտությամբ վերականգնվում է նրանց չափածո պատկերը։

Ուրեմն, հինգերորդ դարի, մանավանդ դարավերջի, գրական հայերենը, հետագայում կոչված գրաբար, զարգացման մի երկար ճանապարհ է անցել, բանավոր բազմադարյան մշակման, ապա և գրավոր կատարելագործման ճանապարհ։ Այլ բան է, որ այս գրավոր կատարելագործման, ուրիշ խոսքով՝ գրավոր գործառնության շրջանը, կարող էր և պետք է վրա հասած լիներ ավելի վաղ ժամանակներում։ Ինչո՞ւ, օրինակ, ո՛չ Վանի կամ Արարատյան թագավորության օրի-

բում։ Չէ՞ որ այն ժամանակ երկրի տերերը խորապես գիտակցում էին գրի նշանակությունը. նրանք իրենց պաշտոնական գրագրությունն սկզբնապես վարում էին ասորեստանյան, ապա և խուռիական սեպագրերով։ Շուրջ երեք դար լծված օտար գրերին՝ նրանք երևի թե արդեն պիտի գիտակցեին հարազատ հայերեն գրի անհրաժեշտությունը, պիտի ստեղծեին սեփական դպրություն, որի գիրն ի սկզբանե ի՛նչ լեզվի էլ պատկանած լիներ, իրենց դպրության ու գրականության հայտարարը դառնալով՝ պիտի հարազատանար, ինքնանար, կոչվեր հայերեն գիր... Սակայն եկան կիմերներն ու սկյութները, և երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքը ետ նետվեց մի քանի դարով։ Քի՞չ հնարավորություն կար այսքանից հետո ոտքի ելած և երկրի տերն ու տնօրենը դարձած Երվանդյան թագավորատոհմի շուրջ վերհարյուրամյա ոգորումների արդյունքում։ Նրանց վերջին հզոր ներկայացուցիչների՝ Տիգրան Մեծի ու նրա ժառանգների օրոք արդեն կենսական պահանջ էր դարձել պատմագրությունը, թատրոնը մտել էր հայոց ոստաններ։ Եվ թեպետ սրանք լիովին հունական էին, այն ժամանակի աշխարհում տիրապետող հելլենիզմի պարտադրանքով, ապա հեռու չպետք է լիներ այն օրը, երբ թեկուզև հունարեն կամ արամեերեն գրերով հայ մարդիկ գրի կառնեին իրենց գեղարվեստական մտածողության արգասիքները, իրենց երկրի կենսագրությունը... Եվ այստեղ էլ դարձյալ վրա հասավ հարեան հզոր բռնատիրությունների ավերիչ ազդեցությունը։ Կործանվեց Երվանդյան-Արտաշիսյան թագավորությունը, և նրա փլատակներին տիրացած Արշակունիներն ամեն ինչ պիտի սկսեին զրո կետից...

Այսպես, ուրեմն. հայոց գրի ու դպրության աստեղային ժամը կարող էր ճառագել հին-հին դարերում, երբ երկիրն իր հզորության բարձրակետերն էր նշանավորում... Սակայն եղավ այն ժամանակ, երբ սեփական ընդարձակ պետականությունը գնում էր դեպի մայրամուտ, և ազգային կյանքն ու ինքնությունը հաստատող, պաշտպանող գործոններ էին անհրաժեշտ։

Սահակ-Մաշտոցյան շարժումը նախապատրաստված էր նախորդ պատմաշրջաններով։ Մաշտոցը, Սահակը և նրանց

աշակերտները քաջ գիտակցում էին իրենց ազգափրկիչ դերը, և յուրաքանչյուրը ջանում էր իր պարտականությունը կատարել հավելումով։

Մի՞թե պակաս նշանակալից էին Մաշտոցի ձեռնարկումները հարևան Վիրքում ու Աղվանքում։ Նա այդ երկրների համար ևս սեփական գրեր ստեղծեց, նրանց հոգևոր կյանքը կապեց իր հայրենի երկրի հետ՝ հրաշալի գիտակցելով, որ օտարների ոտնձգություններին, Պարսից նվաճողական ու Բյուզանդիայի ձուլարար քաղաքականությանը կարելի է դիմադրել և դիմանալ Հայաստանի ու հանուր Կովկասի մշակութային միասնական վերելքով, համակովկասյան միաձույլ քաղաքակրթության պատվարով։

Իսկ այն, ինչ կատարվեց բուն Հայաստանում, արդեն հրաշքի է նման։

Հենց միայն Աստվածաշնչի թարգմանությո՞ւնը։

Վերն ասվեց, որ 393 թ. մաշտոցյան գրերով գրված առաջին խոսքը եղել է Սողոմոնի Առակաց գրքի առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն...»։

Մեր եկեղեցու հայրերը գրությունն այնպես էին ներկայացնում, թե ինքնուրույն գիրն ստեղծվել է, ամենից առաջ, Աստվածաշունչն ու մյուս հոգևոր գրքերը թարգմանելու, հավատացյալ ժողովրդին իր հավատի գրքերով զինելու համար։

Այս պնդումն այսօր գիտական ոչ մի նշանակություն չունի։ Սակայն հայտնի է, որ մեր նորելուկ տառերով հայերեն կենդանացած առաջին խոսքերը աստվածաշնչյան են եղել՝ «Սողոմոնի առակները» գիրքը, որի թարգմանությունը Մաշտոցն սկսել է դեռևս Սամոսատում՝ հայոց գրերի ծննդավայրում։

Իրենից ի՞նչ է ներկայացնում քրիստոնեական հավատի գլխավոր մատյանը, որի բուն անունն է «Բիբլիա» (հունարեն «գրքեր» բառից)։ Միայն հայերեն է, որ «Աստվածաշունչ» է կոչվում։ Այս անունը հայ թարգմանիչներն են ստեղծել՝ նկատի առնելով, որ գիրքը գրել են Աստծուց ոգեշնչված մարգարեներն ու առաքյալները։ Մատյանը բաղկացած է երկու մասից՝ Հին կտակարան՝ իր 39 գրքերով, և Նոր կտակարան՝ 27 գրքերով։ Բնագրային են համարվում երկու խմբագրություններ՝ եբրայերենը և հունարենը։ Երկ-

բորդը կոչվում է նաև Յոթանասնից («Սեպտուագինտա», լատ. բառացի՝ «յոթանասուն»), քանի որ հրեա 72 մեկնիչներն էին Հին կտակարանի եբրայերեն ու արամեերեն բնագրերը թարգմանել հունարեն։ Նույնիսկ ավանդություն կա, որ ասում է՝ նրանք բոլորն էլ առանձին-առանձին, իրարից անկախ թարգմանելով՝ իրար են բերել ու համեմատել, և պարզվել է, որ բոլորն էլ տառացիորեն նման են իրար։

Կորյունի վկայությամբ՝ հայրենիք վերադառնալով, Մաշտոցը Սահակ կաթողիկոսի հետ միասին ձեռնարկում է Աստվածաշնչի թարգմանությանը, և կարճ ժամանակում «երկու հավասարյալների ձեռքով հայաբարբառ, հայերենախոս են դառնում» Մովսեսի գրքերը, մարգարեությունները, Պողոսի ու մյուս առաքյալների թղթերը, Ավետարանը։ Այս թվարկումից հետո պատմիչը տեղեկացնում է, որ նրանք արագորեն շարունակում են գործը, մինչև հասնում են վերջին՝ «Յայտնութիւն Յովհաննու» գրքին, ուր խոսք է գնում «աշխարհի կատարածի»՝ վերջի մասին։

Ո՞ր լեզվից են թարգմանել՝ Կորյունը չի հայտնում։ Սակայն Մաշտոցի կրտսեր աշակերտ Մովսես Խորենացին գիտեր, որ նախորդ թարգմանությունները կատարվել են ասորերենից, «ոչ լինելոյ յունի» (հունարենը չունեին)։

Կորյունը հաղորդում է նաև, որ Մաշտոցն ու Սահակը, Աստվածաշնչի այս հապշտապ թարգմանությունը բավարար չհամարելով, հետագայում իրենց ավագ աշակերտներից մի քանիսին՝ Կողբացի Եզնիկին ու Պաղնացի Հովսեփին, ինչպես նաև Ղևոնդին ու Կորյունին ուղարկում են ժամանակի գրական մեծ կենտրոնները՝ Եդեսիա ու Կոստանդնուպոլիս, որպեսզի կատարելագործվեն թարգմանության մեջ։ Եվ նրանք էլ, 431-ից հետո տուն վերադառնալով, իրենց հետ բերում են Աստվածաշնչի բնագրի «հաստատուն օրինակները»։ Սրանից հետո է, որ Սահակ վեհափառը, Եզնիկի հետ միասին, նախկինում շտապով կատարած թարգմանությունները ճշգրտում, մշակում է՝ համեմատելով նոր բերված կատարյալ բնագրերի հետ։

Այսքանը բավարա՞ր համարվեց։ Հավանաբար ո՛չ, քանի որ կրտսեր աշակերտ Մովսես Խորենացին էլ տեղեկացնում է, թե իրեն ու դասակիցներին ևս ուղարկել են Ալեքսանդրիա, բյուզանդական կենտրոնները՝ գործնական թարգմանական գործի մեջ կատարելագործվելու։ «Բայց որովհետև նրանք մեր արվեստին տեղյակ չէին, ուստի գործը շատ կոդմերից թերի դուրս եկավ։ Այս պատճառով մեծն Սահակն ու Մեսրոպը մեզ առան, ուղարկեցին Ալեքսանդրիա...» (Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԿԱ)։

Պետք է հիշել, որ այս խոսքը վերաբերում է Աստվածաշնչի երկրորդ թարգմանությանը՝ իրականացված հունարեն «ճշմարիտ օրինակների» հիման վրա։ Բայց այս ի՞նչ արվեստ է, որին տեղյակ չէին մեծ ուսուցիչները։ Իհարկե, թարգմանությա՛ն արվեստը, որի մեջ խորանալու համար էլ Մովսեսն ուղարկվեց արտասահման։

Մեծ ճանապարհորդությունից վերադարձած, ուսուցիչներին հանգուցյալ գտած Մովսեսն իր Ողբի մեջ հարց է տալիս. «Ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտի՝ մասամբ իր որդուց հաղթվելով»։ Այս էլ, անշուշտ, այնպես պիտի հասկանալ, թե ինքն Աստվածաշնչի թարգմանության գործում մրցելով երկու մեծ ուսուցիչների հետ, հաղթել է նրանց՝ կատարյալին հասնելով։ Այս և հարակից մի շարք տեղեկություններ քննելով՝ սփյուռքահայ նշանավոր հայագետ Հրանդ Արմենը եկել է այն եզրակացության, որ Աստվածաշնչի թարգմանությունը երրորդ ու վերջին անգամ կատարել է մեր Պատմահայրը (տե՛ս ՊԲՀ, 1969, № 1)։ Ի՞նչ խոսք, որ այստեղ արդեն գործի են դրվել հունական դպրոցի լեզվանորոգման բոլոր նվաճումները, և նոր թարգմանությունը (թե՞ թարգմանության նոր մշակումը) կատարվել է գրաբարի ամենազորեղ շրջանի ամբողջ զինանոցի օգտագործմամբ։ Պատահական չէ, որ 19-րդ դարի եվրոպական բանասիրությունը, հայերեն Աստվածաշնչի բնագրային բծախնդիր հարազատությունն ու գրական-լեզվական բարձր մակարդակը նկատի առնելով, էա Կրոզի բերանով այն կոչեց «թագուհի թարգմանությանց»։

Հայտնի է, որ Մաշտոցի ու Սահակի գլխավորությամբ, Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ, ապա և նրանից հետո ասորերենից ու հունարենից թարգմանվում էին քրիստոնեական եկեղեցու այն օրերի համարյա բոլոր նշանավոր երկերը։ Նրանց սոսկական թվարկումն իսկ շատ բան

կասի։ Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգորիս Նազիանզացու, Եվսեբիոս Եմեսացու, Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Սեբերիանոս Գաբալացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Եվագրոս Պոնտացու, Կյուրեղ Երուսաղեմացու մեկնությունները, ճառերն ու կանոնները, Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը», «Քրոնիկոնը» (ժամանակագրություն) են, են։

Թարգմանական գործի հաջորդ շրջանը, որ համարվում է 5-րդ դարի երկրորդ կեսը, խնդիր ունի ծառայելու իր առաջին քայլերը կատարող հայկական գիտությանը և, բնականաբար, հայացրեց անտիկ աշխարհի գիտական ժառանգությունը, փիլիսոփայական ու բնագիտական գրքերը։ Եվ որովհետև այս շրջանի թարգմանությունները կատարվում էին հիմնականում հունարենից, ապա թարգմանիչները, իրենց գործը դյուրացնելու, գիտության բոլոր բնագավառների համար միասնական տերմինաբանություն ստեղծելու նպատակով, հունարենի հետևությամբ, կատարեցին մի շարք նորամուծություններ, ստեղծեցին բազմաթիվ նախածանցներ (ապ, ան, արտ, բաղ, բաց, գեր, դեր, ենթ, հակ, հում, մակ, յար, ներ, շաղ, շար, պար, ստոր, վեր, տար, փոխ են), որոնց մեծ մասը հարազատացավ հայերենին, հարստացրեց նրա բառապաշարն ու բառակազմական հնարավորությունները։ Այս ամենի պատճառով էլ հիշյալ շրջանի (սկսած 460-ականներից) թարգմանական շարժումը կոչվեց հունաբան դպրոցի գործ, նորամուծություններով հարստացած մեր լեզուն՝ հունաբան հայերեն։

Հունաբան դպրոցի թարգմանություններից հիշատակելի են Դիոնիսիոս Թրակացու Քերականությունը, Աֆտոնիոսի Պիտույից գիրքը, Թեոն Ալեքսանդրացու Ճարտասանական վարժությունները, Որդիյուրի Արիստոտելի ստորոգությունների ներածությունը, Յամբլիքոսի, Գրիգոր Նյուսացու, Նեմեսիոս Նյուսացու, Տիմոթեոս Կուզի, Դիոնիսիոս Արիոպագացու և շատ ուրիշների աշխատությունները, որոնք ընդգրկում են այն ժամանակվա գիտության բոլոր բնագավառները։

Ուշագրավ է, որ այս թարգմանություններից մի քանիսն այժմ ունեն բնագրային արժեք (Փիլոնի 14 գործերից 7-ը, Տիմոթեոս Կուզի Հակաճառությունը, Թեոնի Յաղագս ճարտասանական կրթության են), քանի որ բնագրերն իսպառ կամ մասամբ կորել են, և ուսումնասիրողները նրանց հայերեն թարգմանություններից են օգտվում։

Թարգմանական գործը և նրա ականավոր կազմակերպիչները՝ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն ու նրանց աշակերտները՝ Եղնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Կորյուն Սքանչելին, Ղևոնդ Վանանդեցին, Հովհան Եկեղեցացին. կրասեր թարգմանիչները, հայ ժողովրդի ու հայոց եկեղեցու կողմից սրբացվել են, և դարեր շարունակ ամեն տարի երկու անգամ մեր երկրում մեծ հանդիսավորությամբ նշվում էր Թարգմանչաց տոնը. հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին՝ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի տոնը, հոկտեմբերին՝ Մաշտոցի ու նրա աշակերտների։

Սակայն թարգմանական գործը որքան էլ կարևոր ու անհրաժեշտ, հայոց մտավոր շարժման առաջնորդները հասկանում էին, որ ինքնուրույն գրականությունն է ազգի ինքնության խարիսխը, նրա զարգացման ապացույցը։ Եվ շատ բնական է, որ հենց առաջին շրջանում թարգմանելով զանազան աղանդների ու հերձվածների դեմ ուղղված հակաճառությունները, կրոնական ջատագովությունները, Աստվածաշունչը հիմնավորող մեկնաբանական գրքերը, նրանց նմանողությամբ ինքնուրույն առաջին երկերն էին ստեղծում։ Եվ այստեղ ևս առաջինը Մաշտոցն ու Սահակն էին, որ օրինակ էին տալիս ուրիշներին։ Մաշտոցի անունով մեզ են հասել բազմաթիվ ճառեր և հոգևոր երգեր-շարականներ։ Առաջինները կազմում են խրատների մի ամբողջ ժողովածու՝ վերնագրված «Յաճախապատում ճառք», որն ավանդաբար վերագրվել է Գրիգոր Լուսավորիչին, սակայն այժմ արդեն ապացուցված է, որ Մեսրոպ Մաշտոցի գրչին է պատկանում։

Սահակ Պարթևի անունով մեզ հասածները շուրջ վեց տասնյակ կանոններ են, ինչպես նաև ճառեր ու հոգևոր երգեր, որոնք անմիջապես ծառայում են եկեղեցու գործունեությանը։

Հոգևոր կյանքը, եկեղեցական իրականությունը հայերենացված ու հայկական առաջին մատյանների տիրապետող բովանդակությունն էին։ Հոգևորական լինելով՝ մեր առաջին հեղինակները ոչ միայն հոգում էին եկեղեցական գրակա-

նության մասին, այլև իրենց գրավոր ու բանավոր գործով պայքարում էին հեթանոսության, աղանդավորության դեմ։ Սակայն աստիճանաբար գրական կյանք թափանցեցին ժողովրդական ոգու ճառագայթները։ Թարգմանվեցին ո՛չ միայն այնպիսի երկեր, ինչպես, օրինակ, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը» իր աշխարհիկ տարրերով, բնագիտական հեռաքրքիր տվյալներով, համանման «Բարոյախոս» և այլ ժողովածուներ, այլև Կեղծ-Կալիսթենեսի «Պատմութիւն վարուց Ալեքսանդրի» գեղարվեստական երկը Ալեքսանդր Մակեդոնացու կյանքի ու գործի մասին։ Եվ որ շատ կարևոր է, այստեղ ևս թարգմանությանն ուղեկցում էր քննական ոգին, թարգմանիչը ցուցաբերում էր իր հատուկ վերաբերմունքը։

Ի՞նչ խոսք, որ այս թարգմանական գրականությունը (հիմնականում գիտական-փիլիսոփայական մատյաններ) հայ մտածող մարդուն զարգացման մեծ հնարավորություն բերեց, քանի որ նրա սեփականությունն էր դարձնում հին հունական ու լատինական գիտությունը, քրիստոնեական աշխարհի լավագույն պատմական ու իմաստասիրական աշխատությունները։ Թարգմանություններով, անկասկած, հարստանում և զարգացման հնարավորություններ էր ստանում հայ մարդը։ Բայց ո՛չ միայն դրանով, այլև այն ներգործող, քննող ու մեծ ճշմարտությանը հետամուտ վերաբերմունքով, որ հայ թարգմանիչներն էին ցուցաբերում թարգմանվող երկերի նկատմամբ։ Օրինակ, հայտնի են հենց սկզբնապես Դիոնիսիոս Թրակացու Քերականության թարգմանության հետ կապված մեկնաբանական փորձերը, որոնք շարունակվեցին նաև հետագայում, մինչև 9—13-րդ դարերը։ Սկզբից ևեթ հայ թարգմանիչներն ընդվզել էին Դիոնիսիոսի գրքի էությունը կազմող սկզբունքների դեմ և, մերժելով դրանք, առաջարկում էին իրենց մեկնությունները։

Նույն երևույթը տեղի ունեցավ նաև աշխարհիկ գրականության երկեր ստեղծելիս. հայ հեղինակները, ճիշտ է, սովորում էին հույն ու լատին դասականներից։ Սակայն այստեղ ևս քննական ու քննադատական ոգին ցույց էր տալիս իր սուր անկյունները։ Ինքնուրույնությունը բարձրանում ու հղկվում էր առավել, երբ նրանք մխրճվում էին ժողովրդական կյանքի, հայոց պատմության անցյալ դասերի մեջ։ Հայերեն ինքնուրույն գրականության առաջին իսկ հեղինակները՝ Ագաթանգեղոսից մինչև Ղազար Փարպեցի, Եղիշե, Հայոց երկրի պատմությունը հյուսելիս լայնորեն օգտագործում էին ժողովրդական զրույցներն ու աշխարհիկ բանահյուսության մյուս տարրերը, ստեղծում պատմագրական երկեր, որոնցում տիրապետողը ազգային ոգու արծարծումն էր, հայրենասիրությունը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ու հարատևումի լուսեղեն խորհուրդը։

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ Է

Արշակունյաց միասնական թագավորության անկումով (428 թ.) Հայաստանն անմիջապես չկորցրեց իր տնտեսական ու վարչական ինքնուրույնությունը։ Գահազուրկ երկրի բախտը դեռևս տնօրինում էին հայ սպարապետն ու մարզպանը, առաջինն իբրև զորքերի գլխավոր հրամանատար, երկրորդը՝ քաղաքական կյանքի ղեկավար, որը ենթարկվում էր միայն արքայից արքային։ Տնտեսական հարաբերությունների մարզում ևս տիրություն էր անում տեղացի հազարապետը, որի պաշտոնը Ամատունիների նախարարության մենաշնորհն էր։ Դատավարությունն ավելի քան մեկ հարյուրամյակ հայոց եկեղեցու հայրերի ձեռքում էր գտնվում (կաթողիկոսն էր երկրի գերագույն դատավորը), այստեղ ևս առաջին տարիներին ոչ մի փոփոխություն չկատարվեց... Եվ արքունիքի այս անտևական շնորհությունը, որ թելադրված էր իր քաղաքական հեղհեղուկ վիճակով, Հայքում այնպես հասկացվեց, թե Պարսից արքայից արքային բավական են միայն տուրքն ու զինական օժանդակությունը։ Հինգերորդ դարի մեր պատմիչների վկայությունների համաձայն՝ իբր, ժողովրդի վիճակը շատ էլ չէր փոխվել, քանի որ վերացվել էր միայն սեփական-միասնական թագավորությունը, և ժողովուրդը շարունակում էր հարկ ու տուրք տալ։ Իսկ նախարարությունները, եթե առաջ հարկատու էին հայրենի թագավորությանը, այժմ նույն հարկը մուծում էին Պարսից ու Բյուզանդական արքունիքների գանձարանները։ Բայց, ամենակարևորը, ունեին զորք պահելու իրավունք ու ներքին ինքնուրույնություն։ Եվ զարմանալի չէ, երբ Եղիշեն պարսկահպատակ Հայաստանի այս առաջին շրջանի վիճակն այնքան էլ անտանելի չէր հա-

մարում, որովհետև, ինչպես պատմիչն է գրում, «թեպետ հարկը Պարսից արքունիքին էր դնում, սակայն Հայոց հեծելազորը նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»։

Այս վիճակը երկար չտևեց հայրենի թագավորությունը կորցրած և արքունի դրածո հազարապետի ու մարզպանի կողմից կառավարվող Հայաստանում։ 438 թ. գահ բարձրացած Պարսից արքա Հազկերտ Երկրորդը, կարգավորելով իր տերության սահմանն արևելքում և հարաբերությունները Բյուզանդիայի հետ, Հայաստանի դեմ սկսեց կիրառել դաժան մի քաղաքականություն, որի նպատակն էր իսպառ վերացնել հայոց քաղաքական-վարչական ինքնուրույնության մնացորդները և ժողովրդին դարձնել պարսից կրոնին՝ կրակապաշտության։ Այս քաղաքականության սկիզբը դրվեց հարկերի աննախադեպ բարձրացումով։ «Ո՞վ կարող էր պատմել, թե ինչպիսի՜ տուրքեր ու սակեր, բաժեր և հասեր էին նշանակում լեռների, դաշտերի և անտառների վրա»,— վկայում է Եղիշեն, ապա զայրույթով պատմում, որ անողորմ հարկահանները տուրքավորում էին «ոչ միայն շեն բնակավայրերը, այլև ավերակները», հետո էլ այդ ագահները զարմանում էին, թե «այսքան գանձերը որտեղի՞ց են դուրս գալիս»։

Ծանր տուրքի տակ էր դրվել նաև հայոց եկեղեցին, որն առաջներում ազատ էր նման պարտավորությունից։ Եթե սրան էլ գումարվի վաճառականներից գանձվող արտասովոր մաքսը՝ «բաժը», ապա լիովին պարզ կդառնա, որ Պարսից արքունիքի քաղաքականությունն ուղղված էր հայ ժողովրդի բոլոր խավերի դեմ։ Այդ խավերի մեջ, անկասկած, պետք է մտցնել նաև նախարարական մասը, որովհետև պարսից դործակալները և հատկապես նրանց պարագլուխ, հազարապետ Դենշապուհը կաշառքով, բամբասանքով ու քսու գործարքներով իրար դեմ էին լարում հայ նախարարներին, ստեղծում անվստահության, փոխադարձ ատելության ու խռովքի մթնոլորտ։

Այսքանից հետո միանգամայն հասկանալի է, թե այն ինչո՞ւ, երբ Հազկերտը հրովարտակ ուղարկեց Հայաստան՝ կրոնափոխության առաջարկով, ոտքի ելավ ամբողջ հայ ժողո-

վուրդը՝ այդ առաջարկի ետևում տեսնելով նաև Պարսից արքունիքի հայակուլ քաղաքականության բոլոր հետևանքները։

Հրովարտակը քննարկելու և Հազկերտին պատասխան տալու համար քաղաքամայր Արտաշատում գումարվեց աշխարհաժողով, որին մասնակցում էին համարյա բոլոր նախարարներն ու եկեղեցական նշանավոր գործիչները։ Նրանք պատասխան նամակում, հպատակություն հայտնելով հանդերձ, մերժեցին արքունիքի պահանջը՝ վճռաբար հայտարարելով, որ ոչ ոք և ոչինչ չի կարող շեղել իրենց հավատից, «ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը, ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ ամենադառն հարվածները»։

Այս պատասխանը սաստիկ զայրացրել էր Հազկերտին, և նա նոր հրովարտակ հղեց Հայաստան՝ պահանջելով, որ երկրի ավագանին, բոլոր նախարարները ներկայանան Տիզբոն՝ արքայից արքայի նստավայրը։

Հայոց երկրի տերերը Պարսից արքունիք ժամանեցին 449 թ. գարնանը։ Հազկերտը նրանց ընդունեց սառն ու դաժան և հանդուգն պատասխանի համար սպառնաց նրանց հայրենիքը քար ու քանդ անել, ժողովրդին քշել գերության ու տաժանակրության։ Նորից մեջտեղ քաշվեց հավատափոխության պահանջը։ Հայ նախարարները, ուրիշ ելք չգտնելով, որոշեցին հանձն առնել կեղծ ուրացություն, որպեսզի անվնաս հայրենիք վերադառնան և որոշեն հետագա անելիքը։

Ըստ երևույթին Հազկերտը կանխատեսել էր ամեն ինչ։ ուրացությունը հանձն առած հայ նախարարներին ետ էր վերադարձնում յոթ հարյուր պարսիկ մոգերի հետ, որոնք պետք է կրակապաշտության դարձնեին հայ ժողովրդին։ Եվ արքունիքում էլ պատանդ պահեց հայ նշանավոր նախարարական տների ժառանգներին, ինչպես նաև Հայոց մարզպան Վասակ Սյունեցու երկու զավակներին։

Մինչև կեղծ ուրացությամբ փրկված հայ նախարարների արտասովոր թափորը Հայաստան կհասներ, այստեղ հուզումներ էին բորբոքվել։

Պարսից մոգերի առաջին իսկ միջոցառումները հանդիպեցին հայոց վճռական դիմադրությանը։ Մոգերի կանգնեցրած ատրուշանները ոչնչացվեցին Անդեղ գյուղում, Զարեհավանում և այլուր։ Այս ու այնտեղ ապստամբած հայ հա-

վատացյալները քարկոծում էին մոգերին, որոնցից շատերը զոհ գնացին ժողովրդական ասելությանը։

Հայոց աշխարհը պատրաստվում էր ընդհանուր ապստամբության։ Նախարարների մեծ մասը, սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, վճռել էր զենքով դուրս գալ պարսկական բռնապետության դեմ՝ պաշտպանելու իր ազգային ինքնուրույնությունն ու հավատը։ Այս վճռին սկզբնապես կողմնակից էր նույնիսկ մարզպան Վասակ Սյունեցին, չնայած որդիները պատանդ էին արքունիքում, և իրեն էլ ըստ պաշտոնի արքայից արքայի գերագույն ներկայացուցիչն էր հպատակ Հայաստանում։

Ճիշտ է, ապստամբությունը գաղտնի էր նախապատրաստվում, սակայն նրա կազմակերպիչներն արդեն ապահովել էին հարևան վրացիների, հոների, աղվանական ցեղախմբերի ղեկավարների և նույնիսկ Բյուզանդական արքունիքի ռազմական օգնության խոստումները։

Դժբախտաբար, շուտով պարզվեց, որ վախճանվել է օգնություն խոստացած բյուզանդական կայսր Թեոդոսը, իսկ նրան փոխարինած Մարկիանոսը ոչ միայն հրաժարվեց օգնել, այլև նախապատրաստվող հայկական ապստամբության մասին անմիջապես տեղեկացրեց Պարսից արքունիքին։

Հայ ապստամբներին մնում էր հույսը դնել սեփական ուժերի վրա և պատրաստվել ահեղ գոտեմարտին։

Զեռքերը ծալած չէր նաև Պարսից արքունիքը։ Հավանաբար ապստամբների մեջ խլրտում առաջացնելու նպատակով՝ Հազկերտը նոր գիր հղեց Հայաստան, հայտնելով, որ ինքը հրաժարվում է իր նախկին պահանջից. հայերը կարող են հավատալ իրենց ասածին։ Մինչդեռ այս գիրը հղելուց անմիջապես հետո Մուշկան Նյուսալավուրտ զորավարի հրամանատարությամբ մի խոշոր բանակ ուղարկեց՝ ապստամբների հետ հաշվեհարդար տեսնելու համար։ Պարսից բազմաբյուր բանակը, սահմանն անցնելով, ասպատակ էր փռում Հեր և Զարևանդ գավառներում։ Ամբողջ Պարսկահայք նահանգն ավերելով՝ այդ բանակը ծանր նստեց Արաքսից հարավ, Տրղմուտ գետակի ափին, Ավարայրի դաշտում։

Սպարապետ Վարդան Մամիկոնյանը շտապ ի մի գու-

մարեց հայկական ապստամբ ուժերը և իր զորաբանակով հասավ Ավարայրի դաշտը։

Դժվար խնդիր էին իրականացնելու հայ ապստամբները։ Պարսից քաջավարժ ու սպառազեն, նաև անհամեմատ մեծաքանակ զորքի դեմ ճակատամարտ պիտի տային հիմնականում կամավորական զնդերով, որոնք ո՛չ ռազմական փայլուն պատրաստություն ունեին, ո՛չ էլ արքայական բանակի բազմատեսակ ու ընտիր զենքերը։ Ապստամբությունից ետ էր կանգնել նաև հայոց նախարարների մի զգալի մասը՝ մարզպան Վասակ Սյունեցու գլխավորությամբ։

Սակայն ապստամբներն անհոգոդոդ էին։ Նրանք, Վարդան Մամիկոնյանի, հայոց կաթողիկոս Հովսեփ Վայոցձորեցու, Ղևոնդ Երեցի և ուրիշ հայրենասերների կրքոտ ճառերով ոգեորված, վճռել էին անհավասար մարտում հաղթել թշնամուն, հակառակ դեպքում նահատակների փառքով պատկել իրենց, որովհետև լավ է մեռնել ոտքի վրա, քան ապրել ծնկաչոք, քանի որ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»։ Եվ, վերջապես, թող պարսիկ բռնակալներն իմանա՛ն, որ հայ ժողովուրդն իր ինքնուրույնությունն ու լեզուն, իր սեփական գիրն ու կրոնը պաշտպանելու համար պատրաստ է ամեն տեսակ զոհաբերության։ Թող իմանան և այլևս երբեք չփորձեն ձեռք բարձրացնել այդ սրբությունների վրա։

Ճակատամարտը տեղի ունեցավ 451 թ. մայիսի 26-ին։

Պարսից բանակը մարտի պատրաստ՝ ահեղորեն ձգվել էր Տղմուտ գետի աջ ափով։ Հայոց զորագնդերը մյուս ափին չորս մասի բաժանվելով՝ Տղմուտն անցան, նետվեցին գրոհի։ Եղիշե պատմիչը, որ այդ ճակատամարտի մասնակիցն էր ու անմահացնողը, հայոց արդար մարտի ցնցող պատկերն է ներկայացրել իր պատմության մեջ։ Նա երկու բանակների զոտեմարտը ներկայացրել է իբրև մի փոթորիկ, որ թունդ էր հանել երկիրը։ «Կողմերի բարձրացրած աղմուկն ու աղաղակը լսվում էր որպես խուռն ամպերի ճայթմունք։ Ձայների դղրդյունից շարժվում էին լեռների քարանձավները։ Բազմաթիվ սաղավարտների ու զրահների փայլը կտրում էր արեգակի ճառագայթների շողը։ Անհամար սրերի փայլատակումներից ու բազմազան նիզակների ճոճումից կարծես կրակ էր

փայլում։ Ո՞վ կարող էր նկարագրել ահազդու ձայների այս մեծ տագնապը, իրար զարկվող վահանավորների թնդյունը և ճայթյունն աղեղաց լարերի, որոնք առհասարակ խլացնում էին բոլորին»։

Սկզբից մարտը հաջողություն էր խոստանում հայերին։ Նրանք մխրճվել էին պարսից զորաշարքերի մեջ, կոտորում էին անխնա։ Սակայն հետո թշնամին բոլոր ուժերն ի մի հավաքելով, շրջապատեց հայոց զորքը։ Պատերազմի դաշտում ընկավ սպարապետ Վարդան Մամիկոնյանը։ Ամբողջ օրն անհանգիստ կռվող հայերը, իմանալով սիրելի սպարապետի մահվան մասին, թողեցին պատերազմի դաշտը, հեռացան երկրի անմատչելի բերդամրոցները՝ սկիզբ դնելով թշնամուն հյուծող այն շարժմանը, որ կոչվում է պարտիզանական պատերազմ։

Ինչպե՞ս ավարտվեց Ավարայրի ճակատամարտը։ Եղիշեն շատ լավ է գնահատում այդ պատերազմի ելքը. նա գտնում է, որ երկու բանակներից ոչ մեկն էլ չպարտվեց, չնայած պարսիկները կորցրել էին երեք ու կես հազար զինվոր՝ հայերի շուրջ մեկ հազարի դիմաց։ Կարևորն այն է, որ հայ ժողովուրդն իր թշնամուն ու դալիք թշնամիներին ցույց ավեց կռվելու և գլուխ չխոնարհելու իր աննկուն կամքը, հասկացրեց, որ իր ազգային ինքնությունն ու հավատը չի զիջի երբեք և ոչ մի գնով։

Եղիշեի ու Ղազար Փարպեցու գրած անմահ երկերով պանծացան Ավարայրի քաջ նահատակները, սրբերի շարքն անցան, ժողովրդի համար դարձան հայրենիքին բոլորանվեր ծառայելու պայծառ օրինակներ։ Մեր այդ երկու պատմիչների երկերի, հատկապես Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» հրաշունչ պատմության հերոսները դարեր շարունակ հայ ժողովրդին պիտի սովորեցնեին ամեն տեսակ թշնամիների դեմ կռվել մինչև վերջին շունչը, պիտի միշտ բորբոք պահեին այրող ատելությունը հայրենիքի ոսոխների ու տնաբուլս հայրենադավների հանդեպ։

Հինգերորդ դարում պարսկական բռնատիրության դեմ հայոց պայքարն Ավարայրով չավարտվեց։ Պարսկական արքունիքը ստիպված եղավ շուտով մարզպանական Հայաստանից ետ կանչել իր զորքը, հրաժարվեց հավատափոխության

միջոցով հայերին ձուլելու ծրագրից և ճանաչեց նրանց ներքին ինքնավարությունը։ Եվ, թեպետ Հաղկերտի արքունիքն ստիպված եղավ անընկճելի հայերին զիջումներ անել՝ կանխելու համար հետագա ընդվզումները, Հայոց երկրում արդեն գլուխ բարձրացրին անհնազանդ նոր ուժեր, որոնք կոչված էին բարձր պահելու Ավարայրի նահատակների դրոշն ու ազատասիրական բաղձանքները։

ՎԱՀԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այսպես է կոչվում 5-րդ դարի վերջին քառորդում հայ ժողովրդի մղած հակապարսկական պատերազմը, որը գլխավորել է Վահան Մամիկոնյանը։

451 թ. պայթած մեծ ապստամբությունից (Վարդանանց պատերազմն Ավարայրի դաշտում) հետո հայկական նահանգներում ծայր առած ժողովրդական ընդվզումները շարունակվեցին նաև հետագա տասնամյակներում։ Աղբյուրներում պահպանված աղոտ ակնարկներից կարելի է եզրակացնել, որ դարի 70-ական թվականներին այդ ընդվզումներին տոն են տվել հայոց կաթողիկոս Գյուտ Արահեղացին և Մամիկոնյան տոհմի պայազատ (Վարդան սպարապետի եղբայր Հմայակի որդի) Վահանը։ Ղազար Փարպեցին որոշակի տեղեկություն է հաղորդում այն մասին, որ Գյուտ կաթողիկոսը, բացահայտ պայքար մղելով Պարսից արքունիքի ու կրակապաշտ կրոնավորների ուծացնող քաղաքականության դեմ, նպատակ ուներ նախապես հույների օժանդակությունն ապահովել և ապստամբել։ Մի քանի անգամ էլ այդ նպատակով իր «պատգամավորներին առաքեց Հունաց թագավոր Լևոնի մոտ, որը և թեպետ հանձն առնելով կամենում էր օգնել, սակայն ժամանակը ձգձգեց, և ծրագրերը խափանվեցին»։

Ուշ շրջանի մեր պատմիչները, հավանաբար ժողովրդական ավանդությունից առնելով, առավել որոշակի տեղեկություններ են պահպանել Գյուտի ու Վահանի ապստամբական գործողությունների մասին։ Եվ այսքանից հետո է, որ հասկանալի են դառնում արքունիքի կողմից այս երկու պաշտոնյաների դեմ գործադրած դաժան պատիժները։ Պերոզ արքան Գյուտին հեռացրեց կաթողիկոսական գահից, իսկ Վահանին հավա-

տափոխ արեց՝ նրանից կորզելով նաև Հայկական մարզի ոստիկու պաշարը։

Պարսկաստանից հայրենիք վերադառնալով, Վահանը, առերես ուրացած և ներքուստ հավատարիմ նախնյաց հավատին, մամուռում էր ճակատագրական այն գործը, որն իր վրայից մաքրելու էր ուրացողի անունը և հայրենիքը փրկելու էր պարսկական ծանր լծից։ Եվ մինչ կծրագրեր իր անելիքը, արքայից արքա Պերոզի գահակալության 25-րդ տարում Վրաց աշխարհում խռովալից հուզումներ սկսվեցին Վախտանգ թագավորի գլխավորությամբ։ Ապստամբներն սպառնեցին քրիստոնեությունն ուրացած ու կրակապաշտության մոլեռանդ տարածող մարզպան Վազգենին (Աշուշա բդեշխի որդուն) և, ըստ երևույթին նախապես պայմանագրություն ունենալով հայերի հետ, նրանց լուր տվին, թե ապահովված է լեռնաբնակ հոնաց զինական հզոր օգնությունը, որով հնարավորություն պիտի լինի վերացնելու պարսից տիրապետությունը։

Այս ժամանակ Հայաստանում մարզպան էր Ատրշնասպ Ցոզմանդյանը, որը Հայաստանի նախարարական զորքերի մեծ մասն ուղարկել էր Աղվանք՝ Զարմիհր Հազարավուխտի հրամանատարության ներքո այնտեղ ապստամբ բերդաքնակների («յապստամբ ամրականացն») դեմ կռվելու։

Հայերը ցնծությամբ ընդունեցին վրացիների ապստամբության լուրը։ Իսկ մարզպան Ատրշնասպն ու հազարապետ Վեհվեհնամը, զգուշության համար, հայոց նախարարական զորքերը ետ կանչեցին Աղվանքից, բանակ դրին Շիրվանի դաշտում։ Այստեղ էլ ահա հայ նախարարները որոշեցին իրենց գլխավոր դարձնել Վահան Մամիկոնյանին, երկիրը ոտքի հանել պարսկական բռնատիրության դեմ և, միանալով վրացիների ու նրանց օգնական հոների հետ, թոթափել պարսից լուծը։ Խորհրդակցության ժամանակ հավանաբար խոսք էր եղել նաև օգնության խնդիրքով Հունաց կայսրին դիմելու մասին։ Վահանն սկզբում թերահավատությամբ էր մասնակցում այս զրույցին, մանավանդ, որ դիտեր հոնաց ավարառությունների ուխտադրուժ վարքը, ճանաչում էր Հայաստանի ու Վիրքի թույլ վիճակը և «զԱրեաց ոյժն և ստամբակութիւնն», և «զՀոռոմոց զթուլութիւնն և զդիւրաբեկութիւնն»։ Սակայն ի

վերջո համաձայնվում է նրանց հետ, ընդունում ծրագրելիք ապստամբական պատերազմի ղեկավարությունը։ Ապստամբներն անմիջապես երդում են տալիս Ավետարանի վրա։

Սակայն նույն գիշերն իսկ Վարազ-Շապուհ Ամատունի նախարարը դավաճանեց սուրբ ուխտին և ապստամբների ծրագիրը մատնեց պարսից պաշտոնյաներին։ Պարսիկները, տեղանքին քաջածանոթ ուղեկիցների հետ միասին փախչելով Շիրակ, նախ բանակ դրին Անի բերդի պարսպի մոտ, ապա հետապնդումից փրկվելով հեռացան—ընկան Արտաշատի բերդը։ Եվ երբ հայ նախարարները, Դվին հասնելով, պաշարել էին Արտաշատը, պարսիկները գիշերով այստեղից էլ ելան, գնացին Ատրպատականի կողմերը։

Ատրշնասպ մարզպանն շտապեց ապստամբությունը խեղդել բնում, քանի դեռ չէին միավորվել հայոց ու վրաց ուժերը, և տեղ չէին հասել հոնաց օգնական զորքերը։ Նա հավաքեց Ատրպատականի, Կոպրաց մարզպանի ու Կատշաց զորքերը և, հասնելով Հայաստան, փորձեց Արաքսն անցնել ու բանակ դնել Նախիջևանում։

Պարապ նստած չէին նաև հայ նախարարները։ Հայաստան խուժած թշնամական զորքին դիմագրավելուց առաջ նրանք արդեն Արարատյան նահանգում հավաքել էին նախարարական զորագնդերը, երկրից վռնդած պարսիկ Ատրշնասպի փոխարեն մարզպան էին կարգել Սահակ Բագրատունուն, սպարապետությունն էլ հանձնել էին Վահան Մամիկոնյանին և ստեղծել ներքին մի ինքնուրույնություն, որը երկիրը պետք է տաներ դեպի ապստամբության լիակատար հաղթանակ։

Մարզպանն ու սպարապետը հաստատվեցին Հայոց ոստան Դվինում, իսկ նախարարական զորքերի մի գունդ՝ շուրջ 400 զինվոր, Վահան սպարապետի եղբայր Վասակի, Բարկեն Սյունեցու, Գարջույլ Մաղխազի, Կամսարական Արշավիրի երկու որդիների՝ Ներսեհի ու Հրահատի, Գնունյաց Ատոմ ու Առաստոմ եղբայրների գլխավորությամբ, գնաց թշնամուն ընդառաջ։

Պարսիկները Արաքսն անցել էին արդեն յոթհազարանոց իրենց բանակով։ Հայերը բանակեցին Վարազկերտ գյուղում, և Վասակ Մամիկոնյանը, որ առաջապահն էր հայ զորքի,

հարեան Կովակը գյուղում պատահաբար հանդիպեց պարսիկներին, հնարամտությամբ նրանց մասին ճշգրիտ տեղեկություններ հավաքելով, փախավ-հասավ յուրայիններին, որոնք Վարազկերտում էին։ Քննելով իրավիճակը, հայերը որոշեցին մեծաքանակ պարսիկ զորքի հետ բաց դաշտում ճակատամարտ չտալ, նրան քաշել Մասսյաց լանջերը, այնտեղ հմուտ ռազմավարությամբ ցանուցիր անել և ջարդել։

Պարսից զորքը հետապնդում էր նահանջող հայերին, որոնք արդեն հասել էին Ակոռի գյուղը։ Չորս հարյուր հայ զինվորները շորս մասի բաժանվելով՝ ընդունել էին հետևյալ մարտակարգը. կենտրոնական ջոկատ, որի գլխավորներն էին Բաբկեն Սյունյաց իշխանը և սեպուհ Վասակ Մամիկոնյանը։ Զախ թևի ջոկատի ղեկավարն էր Մաղխազ Գարջույլը։ Աջ թևում Գնունիներն էին՝ Ատոմն ու Առաստոմը։ Ըստ երևույթին չորրորդ ջոկատն էլ, Կամսարական Ներսեհ ու Հրահատ եղբայրների գլխավորությամբ, թողել էին այս բոլորի թիկունքում՝ որպես պահեստի հարվածող ուժ, որն անմիջապես օգնության պիտի հասներ տկարացող թևին։

Ճակատամարտն սկսվեց Ակոռի մոտերքի լեռնապարներում ու ձորախորերում։

Ճիշտ է, Մաղխազ Գարջույլը դավաճանեց յուրայիններին ու անցավ պարսից կողմը, բայց և այնպես հայ խիզախներին հաջողվեց տարբեր ուղղությունների վրա, ձորերում ու լեռնակողերին ցրել պարսից բազմաքանակ զորքը, ջարդել մաս-մաս, իսկ մնացածներին խուճապահար անել և փախցնելով հետապնդել ու կոտորել։ Բաբկեն Սյունեցու ջոկատի հարվածներից ընկան «մարզպան Ատրվշնասպը և այլ մեծամեծներ, ուրացած հայ նախարարներից ոմանք ու պարսիկներից շատ ուրիշներ»։ Հաջող մարտ էին տվել նաև Կամսարական եղբայրներն ու Գնունիները։ Եվ երբ հայերը պարսիկ զորքի մեջ մխրճված կոտորում էին ու հալածում, կատաղց գունդն իր հետ առած՝ Գարջույլ Մաղխազն անցավ հայերի թիկունքը՝ հանկարծակի ու նենգ հարվածով նրանց հաղթանակն ի չիք դարձնելու համար։ Սակայն Կամսարական եղբայրները կանխեցին այս հարվածը և հակահարձակման անցնելով ջարդ տվին, սպանեցին նաև կատաղց զորագլխին։

Հայոց փայլուն հաղթանակը խանդավառությամբ ընդունվեց ոստանում։ Մարզպան Սահակն ու սպարապետ Վահանը ժողովրդական տոնախմբություններ կատարեցին Ակոռիի հաղթական ճակատամարտի պատվին և վրա հասնող ձմռան ամիսներին ըստ ամենայնի նախապատրաստվեցին գարնանը մղելիք պատերազմին։ Նախ և առաջ բանախոսներ ուղարկեցին Վրաց Վախտանգ թագավորի մոտ՝ հիշեցնելով նախորդ տարվա նրա խոստումը զինակցության և հոնաց օգնական զորք տրամադրելու մասին։ Ապա Վահան սպարապետը բանագնացներ ուղարկեց Արծրունյաց, Մոկաց, Անձևացյաց ու Ռշտունյաց նախարարների մոտ և նրանց հրավիրեց մասնակցելու առաջիկա ապստամբությանը։

Նեղ, տեղայնական ու կենտրոնախույս տրամադրություններ ունեին սրանցից ոմանք, զբաղված էին իրենց գավառական հաշիվներով։ Այդ պատճառով էլ քչերն արձագանքեցին ապստամբության կոչին։

Գարունը բացվելուն պես պարսից մի մեծ զորաբանակ հասավ Պարսկահայքի Հեր ու Զարևանդ գավառները՝ նպատակ ունենալով ոտքի տակ տրորել ապստամբ Հայաստանը։

Հասկանալի է, որ արքունիքը մեծ նշանակություն էր տալիս այս պատժարշավին, որովհետև նրա գլխավորներ էր դարձրել Սուրեն Պահլավ զորավարին, արքայական թիկնապահ զորքի հրամանատարին (փուշտիպանան սաղար), զորապետներ Ատրներսեհին, Վին-ի-Խոռյանին, Ատրվշնասպ-ի-Տապյանին և ուրացած Գդեհոն Սյունեցուն։

Այս արշավանքի բոթն առնելով՝ Վահան Մամիկոնյանն էլ իրար գումարեց ապստամբ նախարարների ուժերը և գիշերանց Դվինից դուրս գալով՝ շտապեց երկրի արևելյան եզերքում ճակատելու թշնամու դեմ։ Նա չէր ուզում թույլ տալ, որ պարսից պատժարշավը խորանա Հայաստանում («ի միջոց կողմն աշխարհիս Հայոց»)։ Հայոց զորքը հասավ Արտազ գավառը, բանակեց Ներսեհապատ գյուղում։ Բանակի հետ էր նաև Հովհան Մանդակունի կաթողիկոսը (478—490 թթ.), որը ճակատամարտից առաջ ժամերգություն կատարեց, և սրբազան արարողությանը մասնակցեցին սպարապետը, մարզպան Սահակը, նախարարներն ու զորականները։

Առավոտյան Վահան սպարապետը ճակատ հարդարեց պարսից զորաբանակի դեմ։ Ճակատի կենտրոնում բազմա-

քանակ այրուձին մարտի էր նետվելու քաջ ասպետ և մարզպան Սահակի գլխավորությամբ։ Աջ թևը գլխավորելու էին Բարշղ Վահևունին, Բաբկեն Սյունին, Սասոմ Գնունին և Փապակ Պալունին՝ յուրաքանչյուրն իր այրուձիով և լրացուցիչ զորքով։ Ձախ թևի գլուխ անցան Կամսարականները՝ Վահանը, Ներսեհը և Հրահատը։ Աջ կողմում, յուրաքանչյուր գնդից առանձնացված ընտիր հեծյալներով, ինքը՝ սպարապետն էր լինելու։ Վրեն Վանանդացու և Պապ Արտակունու գլխավորությամբ էլ մի ընտիր գունդ առանձնացված էր որպես պահեստային ուժ, որը վրա էր հասնելու այնտեղ, ուր ճակատը նեղվեր թշնամու ճնշումից։

Հայոց սպարապետը վճռել էր նախահարձակ լինել։ Սակայն առաջինը բոլոր թևերով շարժվեցին պարսից գնդերը, և հայերն ստիպված եղան ընդունել պարտադրված մարտը։ Առաջին պահ նեղվում էին հայոց գնդերը։ Կենտրոնում իրար դեմ էին ելել Սահակ մարզպանն ու փուշտիպանան սաղարը, և որովհետև երկուսի նիզակներն էլ վրիպել էին, նրանք իրար մազեր բռնած՝ մենամարտում էին։ Աջ թևում Բարշղ Վահևունու հետ հայերը թիկունք էին դարձրել և նահանջում էին։ Այն ժամանակ սպարապետը, Կամսարական իշխանների հետ, քաջ հեծյալների գլուխն անցած, մարտի մեջ մտավ և հանդիպակաց պարսկական զորաջոկատը ետ տալով, շուտ եկավ թիկունքից եկողների վրա։ Դրանից հետո էր, որ պարսիկները խուճապի մատնվեցին, իսկ ընկրկած հայերը ետ դառնալով՝ սրընթաց գնացին թշնամու վրա։ Այնուհետև պարսից նահանջն արդեն ընդհանուր էր ճակատի բոլոր թևերում։ Միայն Խոռյան Վինն էր, որ երկու ուրիշ նիզակակիցների հետ միասին շարունակում էր դիմադրել։ Նրան տապալեց սպարապետ Վահանը։ Ներսեհ Կամսարականն էլ Ատրվշնասպ Տապլանին սպանեց։ Իրենց զորագլուխներին կորցրած պարսից գնդերը հուսահատ ու տագնապած փախչում էին, և հայերն էլ կոտորելով հալածում էին նրանց։

Այսպես ձեռք բերվեց Ներսեհապատի հաղթանակը, որից հետո Սասանյան բռնավորները պարտավոր էին ուրիշ լեզվով խոսել հայերի հետ։

Երջանիկ էր Հայոց աշխարհը, խանդավառ Ոստանում, ավաններում ու շեներում տոնախմբությունների մեջ էր ժողովուրդը։ Իսկ եկեղեցին էլ օրհնում էր հայրենիքի քաջ պաշտպաններին։

Հաղթանակած հայոց զորքը եկավ, հասավ Ծաղկոտն գավառը՝ Արածանիի վերին ավազանում և Վարշակի կոչված ջերմուկներում հանգստանում էր, երբ Վրաց թագավոր Վախտանգի լրաբերը հաղորդեց, թե պարսից մեծաքանակ մի զորաբանակ Միհրան զորավարի գլխավորությամբ եկել, տիրել է իր աշխարհին, և ինքը խույս տալով ապաստանել է Վիրքի սահմանակից հայկական լեռներում։ Վախտանգը խնդրում էր օգնության գալ։ Նույն խնդիրքով նա դիմել էր նաև հոներին և հույս ուներ, թե ահա ուր որ է հոներն էլ կըհասնեն և երեքի միացյալ ուժերով հնարավոր կլինի հաղթել պարսիկներին։

Վահանն անմիջապես հայոց զորքն առած գնաց-հասավ Վախտանգի մոտ և Գուգարք նահանգի Կանգարք գավառում քանակ դրեց փոքր-ինչ հանգստանալու համար։ Մի քանի օր հետո նա զորքն իջեցրեց Կուրի հովիտը և ամառային տոթին վրաններ զարկեց Ճարմանայնու դաշտում։ Պարսիկ զորավար Միհրանն իր բանակով եկավ, կանգնեց Կուրի մյուս ափին, հայերի դեմ-հանդիման։

Հայոց զորքի մեջ խառնակչություն կար. նախարարներից ոմանք չէին ուզում կռվել և այդ մասին հաղորդել էին պարսիկներին։ Ըստ երևույթին Վահանը տեղյակ էր այս ամենին և դժկամությամբ էր մարտի մեջ մտնում։ Բայց և այնպես զորքը դասավորեց իր ռազմավարական կարգով. աջ թևում կանգնեցրեց Բարշղ Վահևունու և Սասոն Գաբեղինու գնդերը, ձախ թևը Վրաց թագավորին հանձնեց, իսկ կենտրոնում ինքը կանգնեց՝ Կամսարական իշխանների ու Գնունյաց տիրոջ հետ միասին։ Սահակ Բագրատունուն և Բաբկեն Սյունեցուն էլ կանգնեցրեց իր ու Բարշղի արանքում։

Ճակատամարտն սկսվեց հայոց ափին. ըստ երևույթին այստեղ ևս պարսիկները նախահարձակ էին եղել։ Վահանի գլխավորած կենտրոնում և Կամսարականների թևում առաջին հաջողությունը հայերի կողմն էր։ Նրանք կայծակնային հարվածով ցանուցիր արին թշնամուն, փախուստի մատնեցին և քշելով մյուս ափը՝ այնտեղ շատերին կոտորեցին... Եվ հենց այս ժամանակ էլ հանկարծ պարզվեց, որ հայոց ու վրաց

զորքերը թիկունք են դարձրել, փախչում են պարսիկների առաջ, որոնք անխնա կոտորում են փախչողներին։ Իսկ նրանք, որ համառորեն դիմադրում էին, նահատակվեցին, ինչպես Սահակ մարզպան Բագրատունին ու Վահանի եղբայր Վասակ Մամիկոնյանը, կամ գերի բռնվեցին, ինչպես Հրահատ Կամսարականն ու Յազդ Սյունեցին։

Վահան սպարապետն ու չարդից փրկված հայազուն մյուս զորականները, շուրջ հարյուր մարդ, հավաքվեցին Տայք գավառի Մկնատինճ գյուղում։ Նրանց բավական մոտ, Դու գյուղում էլ պարսիկ Միհրանն էր կանգնել իր զորքով և բանախոս ուղարկեց, որպեսզի Վահանը հպատակություն հայտնի ու ենթարկվի արքունիքին։ Վահանը հրաժարվեց հպատակությունից՝ թվարկելով այն անարդարությունները, որոնք տիրում էին պարսկահայկական փոխհարաբերություններում, և որոնց ակունքն արքայի անհեռատես քաղաքականությունն էր։

Մինչ Միհրանն ու Վահանն այսպես բանակցություններ էին վարում, դեսպան եկավ և Միհրանին շտապ կանչեց արքունիք։

Վահանն ու յուրայինները վերադարձան Դվին ոստանը, որպեսզի այնտեղ անցկացնեն ձմռան ցրտաշունչ օրերը։

484 թ. գարնան հետ Հայաստան մտավ Ջաամիհր Հազարավուխտը՝ «պարսիկ անհամար ու ընտիր զորքով»։ Բոնապրավիշներն Արտաշատի բերդում իջևանեցին և այնտեղից էլ հարձակվեցին Դվին ոստանի վրա՝ ճակատ կազմելով Խոսրովի անտառից մինչև Ջրվեժի լեռնակողմը։ Տեսնելով պարսից բանակը՝ ծովացած Արարատյան դաշտում, Վահանը դիմադրելը համարեց անհեռանկար և իր փոքր զորախմբով պարսիկների ճակատը ճեղքեց, հեռացավ Խաղտյաց գավառ։

Եվ այստեղից էլ ծայր առավ արկածների այն շարքը, որ պետք է հյուսվեր թշնամու առաջ փախչող Վահանի ու նրան հետապնդելով հայոց երկիրն ավերող Հազարավուխտի գործողություններից։

Չի կարելի կասկածել, որ հայերն ու վրացիներն ապստամբել էին համախորհուրդ և սերտորեն իրար էին կապված այս դեպքերի ամբողջ ընթացքում։ Եվ, ահա՛, Վիրքում ապստամբությունը դեռևս բորբոք էր, ու Հազարավուխտը

ստիպված եղավ, Շապուհին ու Գդիհոնին Հայքում թողնելով, գնալ Վիրք և այնտեղ ճնշել ապստամբությունը։

Շապուհը Հայոց երկրում շարունակեց հետապնդել Վահանի ու նրա ուժատակիցների խմբին, սակայն ոչ մի միջոցով չկարողացավ ձեռք ձգել նրանց, այլև ունեցավ մեծ կորուստներ, սպանվեց Գդիհոն Սյունեցի գավառանը, և ցրվեց Սյունյաց գունդը։ Մինչև որ արքունիքից բանախոս եկավ ու հայտնեց, որ հիփթաղների հետ ունեցած պատերազմում սպանվել են Պերոզ արքան ու իր ժառանգները, և հարկ է, որ Շապուհն ու յուրայիններն անմիջապես վերադառնան Տիզբոն։

Նույն բոթով մի ուրիշ դեսպան էլ գնացել էր Վիրք, Հազարավուխտի մոտ։

Պարսից զորձակալները Հայքից ու Վիրքից վերադարձան իրենց երկիրը՝ մեծ ձախորդությունից հետո արքունիքի կարևորագույն հարցերը լուծելու։ Եվ սրանից հետո էր, որ Պարսից գահին բազմեց Պերոզի եղբայր Վաղարշը (484)։

Վահանն ու իր զինակիցներն էլ Վաղարշապատ եկան, ուխտ ու պատարագ արին Մայր տաճարում, ապա «Վահան Մամիկոնյանը մեծապայծառ շքեղությամբ հիմնովին նորոգեց իր նախնիների կառուցած ու այժմ հնացած այդ եկեղեցին»։

Այս ժամանակ ևս, ամենայն հավանականությամբ, Վահանանք դեռ մնում էին ապստամբական վիճակում և որևէ կապ չունեին արքունիքի հետ, որովհետև Վաղարշի գահակալության երկրորդ տարում՝ 485 թվականին էր, որ արքունիքում քննվում էր հայոց հարցը, և վիճակին ծանոթ Հազարավուխտն ու Շապուհը Վաղարշ արքային խորհուրդ տվին կանոնավորել հարաբերությունները Հայքի հետ, վերստին տիրանալ նրան, քանի որ երբ Հայքը Պարսկաստանինն էր, «Վիրքն ու Աղվանքը բնավ չէին համարձակվում մտքները ծռել և ուրիշ որևէ բան խորհել»։

Եվ թագավորի հրամանով՝ Վահանանց հետ բանակցելու, Հայքը վերստին Պարսից հպատակության տակ դնելու հանձնարարությամբ Մեծ Հայք ճանապարհվեց Նիխոր Վշնասպդատը։

Նիխորն իջավ Հեր գավառի Նվարսակ գյուղում և պատգամավորների միջոցով Վահանին առաջարկեց իր մոտ գնալ

բանակցություններ վարելու։ Բանակցությունները կատարվեցին փոխադարձ հարգանքի հանգամանքներում։ Քննության առնվեցին Վահանի կողմից գրավոր ներկայացված երեք պայմաններ, որոնք էլ հարգվեցին, ապա հաստատվեցին արքայի հրամանով, գրով ու կնիքով։ Ահա այդ պայմանները, որոնք մեզ են հասել Ղազար Փարպեցու Պատմության մեջ.

«Այդ երեքից մեկը նախ և առաջ այս կարևոր և պիտանի խնդիրն է. որ մեր հայրենի և բնիկ օրենքները մեզ թողնեք, հայ ոչ մի մարդու մոգ չդարձնեք, մոգության համար ոչ ոքի գահ ու պատիվ չտաք, կրակարանը Հայոց աշխարհից հեռացնեք, աղտեղի ու անպիտան մարդկանց կողմից եկեղեցուն հասած խայտառակությունները, որ մինչև այժմ եղել են, այսուհետև չլինեն, քրիստոնյա մարդկանց և քահանաներին թույլ տաք քրիստոնեական կարգն ու պաշտոնը համարձակ և անարգելի կատարել՝ ուր որ կամենան։ Ուրեմն, բարի է, և այդ է մեր առաջին խնդիրը»։

«Երկրորդ խնդիրն այս է. որ մարդուն ճանաչեք ոչ թե իշխանաբար, այլ արդարությամբ իմանաք լավն ու վատը, ընտրեք պիտանին ու անպիտանը, ճանաչեք տոհմիկին ու անտոհմիկին, քաջ ու օգտակար մարդկանց պահեք լավերի ու պատվականների մեջ, արհամարհելով ոչնչի տեղ դնեք վատին ու անպիտանին, սիրեք վաստակավորներին և ատեք անվաստակներին, իմաստուններին մոտ պահեք և նրանցից խորհուրդներ առնեք, անմիտին մոտ չընդունեք, այլև հրապարակից հալածեք։ Եվ երբ որ այս ամեն բաներն այսպես լինեն, Արյաց աշխարհի բոլոր գործերը կգնան հաջող ու անսխալ։ Իսկ թե հակառակը սիրեք, ինչպես որ մինչև այժմ է եղել, ապա վիճակն ու գործերն էլ այդպես հակառակը կլինեն, ինչպես որ եղել է, և դուք տեսաք»։

«Մեր երրորդ պահանջն այս է. ով Արյաց աշխարհի տերն ու թագավորն է, ցանկանում ենք, որ ինքն իր աչքերով տեսնի, ինքը լսի իր ականջներով, ինքը ճանաչի, ինքը խոսի իր բերանով և ոչ թե ուրիշի աչքով տեսնի, ուրիշի ականջով լսի, ամեն օր ուրիշի միջոցով մարդկանց լավ կամ վատ ճանաչի և ուրիշի բերանով ասի՝ ինչ որ պետք է։ Այս պատճառով էլ ճիշտ չի լինում տեսածը, ոչ էլ արդար է լինում լսածը, այլ

բազում խոսքեր ու դատարկ հրամաններ են ընդունվում, և ամեն ինչի մեջ խառնակչություն է ստեղծվում։ Եվ երբ այս ամենն այսպես լինի, բոլոր վաստակները հպատակների միջոցով կոչնչանան, և աշխարհն ու նրա մեջ բնակվողները չեն կարող անհոգ ու հաստատուն մնալ։ Իսկ թե որ թագավորն իր սուր աչքով տեսնի, իր անխարդախ լսողությամբ լսի և իր արդար բերանով էլ խոսի իր հպատակների հետ, խանդավառված հպատակները չեն հապճեպ աշխատելուց, այլ աշխատանքի մեջ ջերմանալով՝ կշտանան օրեցօր բազմացնել բարիքները։ Այսպես աշխարհը կշենանա, և տերը միշտ կշքեղանա ու կպայծառանա»։

Ղազար Փարպեցու շարադրանքից կարելի է ենթադրել, որ բանակցությունների ընթացքում գրավոր ներկայացված այս պայմանները նիխորն ուղարկել է Վաղարշ թագավորին, որը և կարդացել է, ապա գրավոր-կնքված ուղարկել իր համաձայնությունը, որով հայերին տրվել է հավատի լիակատար ազատություն և ներքին վարչական կյանքի ինքնուրույնություն։

Դաշնագրի կնքումից անմիջապես հետո, Նիխորի հանձնարարությամբ, Վահանը հայոց այրուձին Վրեն Վանանդեցու և իր եղբայր Վասակի որդի Դրիդորի գլխավորությամբ ուղարկեց Պարսկաստան, որտեղ այն մասնակցեց Պերոզի որդի Զարեհի ապստամբությունը ճնշելուն։ Հետո էլ Վահանն ինքը, այրուձիու գլուխն անցած, ներկայացավ արքունիք, այնտեղ արքայից ստանալով Հայոց սպարապետության ու Մամիկոնեից տիրոջ պատիվները՝ վերադարձավ հայրենիք։

Հայքի մարզպան էր նշանակված Անդեկանը՝ մի խելամիտ ու բարյացակամ մարդ, որն ուժամանակ այդ պաշտոնը վարելուց հետո հեռացավ-գնաց արքունիք և Վաղարշին արեց հետևյալ զեկույցը.

«Օտար մարզպանը, որ գնաց Հայոց այն մեծ աշխարհը, երկու-երեք տարում հազիվ կկարողանա ճանաչել, նախ, աշխարհի գործերը, հեշտն ու դժվարը, ապա՝ աշխարհի մարդկանց, լավին ու վատին, ապիրատին ու պիտանիին և անգիտությամբ գործը խառնիխուռն վարելով՝ կծանրանա մարդկանց վրա։ Իսկ նա (Վահանը), քանի որ բնիկ այդ աշխարհից է, ամեն ինչ ակունքից գիտե և լավը լավի տեղ է ընդունում,

անպիտանը՝ ստորի տեղ։ Ձեզ ասեմ հարցերից ամենակարևորը. պարսից մարզպանն այն աշխարհը գնալով՝ գնում է կանանոցով ու որդիներով, պալատով ու սիրելիներով, ծառաներով ու աղախիններով։ Եվ այս ամենը թե Արյաց տիրող ռոճիկն են ուտում, որ պակաս ծախս չէ, և թե այն աշխարհի եկամուտը, որով շատ վնաս է հասցվում այդ աշխարհի մարդկանց։ Իսկ թե որ նա ինքը լինի, իր տան պահեստից կուտի, մնացած ամեն ինչն արքունի գանձ կհամարի և արքունի գործերին օգուտ կտա»։

Վաղարշին դուր է գալիս Անդեկանի խորհուրդը և քանի որ մարզպանության համար նա տվել էր նաև տեղացի ամենահարմար մարդու՝ Վահան Մամիկոնյանի թեկնածությունը, արքան Հայաստան ուղարկեց նոր հրովարտակ, որով մարզպան էր հաստատվում Վահան Մամիկոնյանը։

Հայաստանում այս հրովարտակն ընդունում են համաժողովրդական խանդավառ ցնծություններով։ Հովհան կաթողիկոսը եկեղեցական տոնախմբություն է կատարում՝ արտասանելով ոգեշնչ մի ճառ, որով և ավարտվում է Ղազար Փարպեցու Պատմությունը։

Վահան Մամիկոնյանի գործունեության համար, ուրեմն և Վահանանց պատերազմի ու Նվարսակի դաշնագրության համար, միակ աղբյուրը Ղազար Փարպեցու Հայոց պատմությունն է, որի տվյալները շարադրվեցին այստեղ անհրաժեշտ մանրամասներով։ Մնում է, որ այդ տվյալների հիման վրա պարզենք կարևորագույն դեպքերի տարիները, որոնց շուրջ մեր պատմագիտության մեջ այնքան էլ պարզ պատկերացումներ չկան և հաճախ են խառնվում ու տեղիք տալիս թյուրիմացությունների։

Օրինակ, Նվարսակի դաշնագրության տարի են ընդունվում տարբեր թվականներ, մինչդեռ այս առթիվ հաղորդված միակ ու ճշգրիտ տվյալն այն է, որ բանակցություններն ու դաշնագրությունը տեղի են ունեցել Վաղարշի գահակալության երկրորդ տարում՝ «երկրորդումն աւուր թագաւորութեանն Վաղարշու» (գլ. ՁԸ)։

Հավանաբար, այստեղ «աւուրը» հասկացվել է իբրև «օր», ուրեմն և՝ Վաղարշի գահակալության առաջին տարին, որ է 484։ Մինչդեռ «գահակալության երկրորդ օրն» անիմաստ է. և «աւուրն» այստեղ պետք է ընդունել իբրև «ժամանակ, ամ, տարի» (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզվի», Բ, էջ 1031), որից և կստացվի 485 թ.։

Մնացած դեպքերի, հատկապես ապստամբության սկզբի և ընթացքի տարիները որոշելու համար առկա են երկու տվյալներ, որոնք, ցավոք, համերաշխ չեն իրար հետ։ Տվյալներից առաջինը Վիրքի ապստամբության ժամանակին է վերաբերում, այսինքն՝ այն տարուն, որից և սկսվում է Վահանանց պատերազմը։ Ղազար Փարպեցին վրաց ապստամբության համար որոշակի թվական է նշում Պերոզի գահակալության 25-րդ տարին։ Հայտնի է, որ Պերոզը գահակալել է 459-ից։ Ուրեմն, 25 տարի հետո կլինի 484 թվականը։ Մինչդեռ, իբր, 484 թ. սկսված ապստամբությունը տևել է ուղիղ երկու տարի, որից հետո միայն Պերոզն ապանվել է հեփթաղների հետ ունեցած կռվում։ Իսկ սա հաստատ տեղի է ունեցել 484-ին։ Լեոն իրավացիորեն կարծում էր, որ Ղազար Փարպեցին «Պերոզի թագավորությունն սկսում է ոչ թե 459 թվից, այլ 457, երբ Պերոզը դեռ կռվում էր գահի համար իր եղբոր հետ» (հ. 2, էջ 109, ծան. 4)։ Այս կարծիքն ընդունելով՝ կգտնենք նաև մնացած դեպքերի ստույգ թվականները. ապստամբությունն սկսվել է 482-ին։ Նույն տարում է եղել նաև Ակորիի ճակատամարտը։ Ներսեհապատի ճակատամարտը տեղի է ունեցել հաջորդ տարվա՝ 483-ի գարնանը։ Նույն տարվա ամռանը տեղի ունեցած Ճարմանայնի ճակատամարտում էլ նահատակվել է մարզպան Սահակ Բաղրատունին։

ՀԱՅՈՑ ՊԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ

Հինգերորդ դարն այսպես է կոչվում ամենից առաջ այն պատճառով, որ այս ժամանակ են ստեղծվել մեր պատմագրության ամենափառահեղ հուշարձանները՝ Ագաթանգեղոսի, Կորյունի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշեի և Մովսես Խորենացու երկերը։

Ագաթանգեղոսի և իր Պատմության վերաբերյալ մեր խոսքն ասացինք հայոց քրիստոնեության դարձի կապակցությամբ, Կորյունի մասին՝ Մաշտոցի մեծագործությունը շարադրելիս։

Հաջորդ մեծը Փավստոս Բուզանդն է, 5-րդ դարի հայկական գեղարվեստական մտքի և ժողովրդական խոսքի անառարկելի հսկան։ Նա, որը, թերևս, հենց իսկական արժանիքների համար, արժանացել է իր դարի թյուրատես հակակրանքին։

Փավստոսի բախտը չի բերել նաև բանասիրության մեջ. նրան համարել են հեքիաթասաց, դեպքերի ու դեմքերի նկատմամբ անքննադատ վերաբերմունք ունեցող, ժամանակագրական տվյալները չհարգող։

Հատուկ հարց է եղել նաև Պատմության ծավալը։ Մեզ հասած ձեռագրերում այն բաժանված է 3—6 գրվագների, և ուսումնասիրողներից ոմանք պնդում են, թե եղել են նաև 1-ին ու 2-րդ գրվագներ, որոնք պիտի որ կորած լինեն։ Սակայն հենց 3-րդ գրվագն էլ սկսվում է այն տեղից, որի մասին հիշատակություն ունի նրա վերաբերյալ առաջին տեղեկությունը հաղորդող Ղազար Փարպեցին։ Ուրեմն պետք է մտածել, թե գրվագների համարակալումն է սխալ, որ կարող էր լինել գրչական անփութության արդյունք։ Մանավանդ,

երբ մեզ հասած «3-րդ գրվագ» կոչվածը հարմար է հնչում իբրև սկիզբ։

Ամեն պարագայի, Փավստոս Բուզանդի անունով մեզ հասած «Հայոց պատմությունը» մի ամբողջական, իր ժամանակի համար բավական բարձր արժանիքներ ունեցող, պատմագիտական ու գեղարվեստական հրաշալի ձիրքերով օժտված երկ է, որ իր պատվավոր տեղն ունի 5-րդ դարի մեր անմահ մատյանների շարքում։

Պատմությունն ընդգրկում է Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակի գահակալությունից մինչև Հայաստանի բաժանումն ընկած ժամանակաշրջանը։ Հետևողականորեն և ամենայն մանրամասնությամբ ցույց են տրվում Խոսրովի, Տիրանի, Արշակ Բ-ի, Պապի, Վարազդատի և Արշակ Գ-ի գործերը, նրանց օրերում երկրի գլխով անցած բոլոր իրադարձությունները, որոնք իրար են հաջորդում, կազմելով քաղաքական պատմության համարյա լընդհատվող շղթան։

Սակայն այս շղթայի հետ ներհյուսված կամ սրան զուգահեռ տրվում է նաև եկեղեցական կյանքի շարժումը։ Այս գիծն էլ, սկսվելով Գրիգոր Լուսավորիչի ու նրա որդի Արիստակեսի վախճանով, ներկայացնում է Հայոց կաթողիկոսների և բազմաթիվ ուրիշ հոգևոր գործիչների (Գրիգորիս եպիսկոպոս, Խադ տեղապահ ևլք) հետ առնչվող իրադարձությունները։ Երկրորդ գծի կենտրոնում է Ներսես Մեծը, որի նկատմամբ Փավստոսն առանձնահատուկ վերաբերմունք ունի, գտնում է, որ անառարկելի է նրա ձգտումը՝ ստեղծելու եկեղեցական անկախ, թագավորի գործն ու վարքը ևս հսկող իշխանություն։ Եվ ոչ մի գույն չի խնայում նրա պատկերը սրբորեն կատարյալ ներկայացնելու համար։

Երբ ծանոթանում ես Փավստոսի ներկայացրած պատմական դեպքերի, Հայոց թագավորության ու եկեղեցու, Հայաստանի գլխով անցած փորձությունների հյուսվածքին, չես կարող չմտածել, որ պատմիչն ունեցել է պատմագիտական կուռ ծրագիր, որին և հարազատ է մնացել իր պատումի առաջին էջից մինչև վերջինը։ Թագավորն ու հոգևոր վեհապետը, հայ նախարարներն ու գյուղացիությունը միշտ էլ գտնվում են օտարների չդադարող հարվածներին ենթակա վիճակում, և բովանդակ Հայաստանը չունի բնականոն կյանքի մի օր,

որ ապրի առանց դրսից իրեն պարտադրած հոգսի։ Հարևան երկու մեծ բռնատիրությունների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի հայակուլ քաղաքականությունը մինչև վերջ պարզ խնդիր է, և խարդավանքները հայոց գլխին են թափվում ինչպես առատության եղջյուրից։ Պատմիչն ինչպիսի՞ հմտությամբ է ներկայացնում արևմուտքի ու արևելքի տիրակալների նյութած դավերը Արշակ Բ-ի թագավորության դեմ։ Դավերին խառնվում ու խճճվում են Հայոց թագավորի անշրջահայաց մերձավորները, երկիրը դառնում է քաղաքական ստոր գործարքների մի խառնարան, որից վերջ ի վերջո քրքրվում է ազգային պետականությունը։ Եվ որքան էլ ցավալի, այս վիճակը ժամանակակիցները ճիշտ չեն հասկանում, որպեսզի կողմնորոշվեն ու անշեղորեն կազմակերպեն իրենց քաղաքական կյանքը։

Մինչդեռ Փավստոսը մեկ առ մեկ ցույց է տալիս, թե ինչպես մի կողմից Բյուզանդիայի կայսրը, մյուս կողմից՝ Պարսից արքան իրենց խարդավանքներն էին տարածում Հայոց երկրում, յուրաքանչյուրն իր ազդեցության ոլորտի մեջ էր առնում Արշակ Բ-ի այս կամ այն հարազատին։ Գաղտնի ու բացահայտ խարդավանքները, մերձավորի ու օտարի հացրած հարվածները հաջորդում էին իրար, և Հայաստանն իր քաղաքական կյանքն ապրում էր կաթվածահարի պես։

Եթե փորձենք պարզել այն հարցը, թե ի՞նչն է կազմում Փավստոսի գրքի էությունը, առանց դժվարության պիտի շեշտենք Հայոց երկրի քաղաքական ու հոգևոր կյանքի ինքնուրույնության բաղձանքը։ Պատմիչը հինգերորդ դարի հայ մարդ է, արդեն տեսել ու վկայել է այդ ինքնուրույնության կորուստը և ցույց է տալիս կորստյան ճանապարհը, ներկայացնում է ինքնուրույնության համար մաքառած երկու թևի՝ աշխարհիկ իշխանության ու հոգևոր վերնախավի գործերը։ Առաջին թևում Արշակունի թագավորներն են, Մամիկոնյան տոհմի պայազատները, տարբեր նախարարությունների լավ ու վատ ներկայացուցիչներ։ Հոգևոր կյանքը հիմնականում ցույց է տրվում գերագույն վեհապետի պաշտոնն ստանձնողների միջոցով։ Նրանց կենտրոնում է նիստում Մեծը՝ վսեմ արժանավորություններով տոգորված մի կերպար, որի եկեղեցաշեն ու հայրենապաշտպան գործերի մասին խոսում է սրտապարար զոհունակությամբ։

Պատմության մեջ այս երկու թևերի գործունեությունը, երկրի անկախության համար գործադրած նրանց ջանքերը ներկայացվում են և՛ առանձին-առանձին, և՛ միասնաբար։ Երկու դեպքում էլ պատմիչն իր զրույցն առաջ է տանում ոգեշունչ խոսքով, ռոմանտիկ մի խանդավառությամբ, որը հաճախ իրարից չի տարբերում ճշմարիտ-իրական դեպքն ու հրաշապատում տեսիլքը։ Եթե պատմիչը հոգևորական է և կանգնած է կաթողիկոսի թիկունքում, նրան է պաշտպանում թագավորի հետ ունեցած բոլոր գժտությունների մեջ, ապա աշխարհականների շարքում էլ անսխալական է ներկայացնում Մամիկոնյան տան պայազատներին, մանավանդ սպարապետական տիտղոսը կրողներին։ Սպարապետներն են երկիրը պահողները, անպարտելի, ամենախելոք։ Սրամտության գաղափարն էլ նրանք են տալիս։ Փավստոսն այստեղ դեկավար մի սկզբունք ունի. քաջությունը խելք է և բարոյական վեհություն։ Աշխարհական հայրենասերների, մանավանդ Մամիկոնյան սպարապետների մարտական սխրագործություններից խոսելիս թվերն ու փաստերն ուռճանում են, գունազարդվում։ Սակայն խորքում չի նսեմանում պատմական փաստը, դեպքերը չեն խաթարվում, և պատմաբանի համար անհնար չի լինում վերականգնել գործողությունների տրամաբանությունը։

Եթե Փավստոսի Պատմությանը խորթ է ժամանակագրությունը, ապա ժամանակի քաղաքական ու զաղափարական ոգին նրա ուղն ու ծուծն են կազմում, և սա էլ այդ գրքի մեծագույն արժանիքն է։

Չորրորդ դարը՝ հայոց կյանքում համարյա չընդմիջված պատերազմների, երկրի ազատության, ազգային անկախության համար մղված պայքարի ու նահատակությունների շրջանը, բնականաբար ուներ բարոյական իր մթնոլորտը, առաջադիմիչ այն տենդենցները, որոնց կրողները Փավստոսի հերոսներն են։

Հայրենիքի սերը, քաջագործության ու նահատակության պատրաստակամությունը, արիությունն ու վեհանձնությունը ճակատամարտերում՝ վճռական դեր ունեն մարդկանց էությունը որոշելու համար։ Արշակ Բ-ի տիզբոնյան հավատա-

քնությունը, Մամիկոնյան Վասակի խրոխտ խոսքը Շապուհի արքունիքում, հայոց ազատասեր Մուշեղի ասպետական քայլը արքայից արքայի գերված կանանոցը վերադարձնելիս և շատ այսպիսի դեպքեր ու իրողություններ ցույց են տալիս, որ պատմիչն ինքն զգացել է չորրորդ դարի մթնոլորտում և տեսել է, թե ի՞նչ են շնչում և ինչպե՞ս են ապրում այն դարի մարդիկ, թագավորից մինչև հասարակ շինականը։

Ներսես Ազարգ ազատասեր Մանվել Մամիկոնյանը մահվան անկողնում գոռոնորեն ողբում է իր վիճակը ո՞չ նրա համար, որ հրաժեշտ է տալիս կյանքին, այլ որ մահն իրեն վրա է հասնում անկողնում։ «Մանկությունից ի վեր կյանքս անցել է պատերազմների մեջ, հանձն եմ առել ամեն տեսակ վիրք,— ասելով նա մերկանում է ցույց է տալիս ամբողջ մարմինը, որի վրա մի փոքրիկ դրամի չափ տեղ չկար, որ ծածկված չլիներ հին վերքերի սպիներով։ Ապա կոծ է դնում. ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու, երկրի՞ համար, հայրենի թագավորությա՞ն ու հավատի՞, զավակների՞ ու հարազատների՞ համար։ Եվ մեռնում եմ մաքար մահով՝ անկողնում պառկած։

Ժամանակի ոգին է խոսում այստեղ, պատերազմների մեջ, հայրենիքի ճակատագրի համար մղվող բախումներում թոթափած բարոյականություն է, որ ծառա է լինում՝ ցուցադրելով մի ճշմարտություն, որը բարձր գեղարվեստական լինելով՝ նաև համոզչորեն իրական է։

Փավստոսը հազվադեպ է, հայոց եկեղեցու շահերի արտահայտիչն ու պաշտպանը, և այս հանգամանքն էլ իր կնիքն է դրել Պատմության ամբողջ հյուսվածքի վրա։ Եկեղեցու սպասավորները, կաթողիկոսները ու եպիսկոպոսները, բացի նրանցից, որոնք իրենց աթոռներին տեր են դարձել քսությամբ ու խարդավանքով, անխտիր արդար են ու անբիծ, համարձակորեն կանգնում են Արշակունի գահակալի առաջ, դատապարտում նրա սխալ վարքն ու չար գործողությունները։ Եվ թագավորն էլ, Աստծու ծրից ելած, չանսալով նրանց ատվածային խորհուրդները, և՛ ինքն է իր վրա առնում վերնային ամենահաս պատիժը, և՛ իր տոհմն ու Հայոց թագավորական գահն է մղում անկասելի կործանման ճանապարհը։ Այս է կաթողիկոս Ներսեսի ու Արշակ Բ-ի, նույնիսկ խաղ

նեղապահի ու թագավորի միջև տեղի ունեցած բախումների ելքը։ Նույն փոխհարաբերությունները պիտի շարունակվեին նաև Արշակի ժառանգ Պապի ու օրա հաջորդների օրոք։ Կարծես մի հայտնի չափով հայ թագավորներն իրենք են նախապատրաստում իրենց գահի կործանումը..., չնայած ուրիշ հանգամանքներում էլ ներքայացվում են այդ գահի դեմ նյութվող դավերը, որոնց համար անառարկելիորեն մեղավոր են համարվում դրսի թշնամիներն ու ներքին երկպառակությունները։

Փավստոսը Հայոց երկրի խաղաղության ու բարեշինության շատագովն է և խանդավառ խոսքով է հիշում կարճատև այն շրջանները, Տրդատ Գ-ի ու Գրիգոր Լուսավորիչի, խոսքով Կոտակի, Արշակ Բ-ի գահակալության այն տարիները, երբ թագավորի գահն ու հովվապետի գայիսոնը համերաշխ են եղել, և երկիրը շենացել է, քաղաքներ ու ավաններ կառուցվել, անտառներ ու այգիներ են դցվել, և ժողովուրդը հավատացել է իր աստծուն ու իր բախտին։

Ըստ երևույթին, այս միջադեպերը պատմիչն առել է հոգևոր բանահյուսությունից, որի համար էլ իրենց հերթին անպայման գեղ թթխմոր են ծառայել չորրորդ դարի հայտնի գժտությունները թագավորի ու եկեղեցու հայրերի միջև։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ.— Հինգերորդ դարի հայ մատենագիրներից միակը, որի շուրջ ոչ մի վեճ կամ առարկություն չի եղել բանասիրության ու պատմագիտության մեջ։ Համարել են նաև ամենաարժանահավատը՝ թերևս նկատի առնելով հավատամքի այն կարգախոսը, որ զարդարում է նրա Պատմության ճակատը. «Չլսելով զանեղեալսն..., չնուազեցուցանել եղեալսն»։

Ղազար Փարպեցին ծնվել է Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի Փարպի գյուղում (այստեղից էլ նրա Փարպեցի մականունը), 440—443 թվականների միջում։ Կրթություն է ստացել Սահակ-Մաշտոցյան դպրոցի ավագ աշակերտներից մեկի՝ Աղան Արծրունու մոտ, Տաշիր-Գուգարքի բդեշխ Աշուշայի տանը, ուր հավաքվել էին Մամիկոնյան, Կամսարական, հավանաբար նաև ուրիշ տոհմերի պայազատները։ Այստեղ նախնական հիմնավոր կրթություն ստանալուց հետո Ղազարը գնաց Հունաց երկիր, այնտեղ էլ ձեռք

բերից ժամանակի գիտությունների հարուստ պաշարը (ըստ նրա առաջին կենսագրի՝ («լիով զմարգարիտն... ընկալեալ»), վերադարձավ հայրենիք, որպեսզի նվիրվի նրա հոգևոր ու մշակութային վերելքին։ Սակայն այն օրերին Հայաստանում մեծ ուժ ներկայացնող պարսկասեր հոգևորականներից հալածված՝ շուրջ մեկ տասնամյակ մնաց Կամսարականների տանը, հետո էլ քարոզչությամբ էր զբաղվում Սյունյաց աշխարհում։ Մինչև որ Վահան Մամիկոնյանը՝ իր մանկության ընկերն ու դասակիցը, Հայոց մարզպան դառնալով, նրան հրավիրեց երկրի կենտրոն և դարձրեց Վաղարշապատի Մայր տաճարի վանահայրը։ Ցավոք այստեղ էլ նրան չվիճակվեց հոգեկան անդորր։ Հետամնաց, երևի դարձյալ պարսկասեր-ասորամետ հոգևորականների խարդավանքների հետևանքով կաթողիկոսական հովանավորությունից զրկված՝ նա ստիպված եղավ ապաստանել Ամիդ-Դիարբեքիրում։ Այստեղից էլ գրեց մարզպան Վահան Մամիկոնյանին ուղղված իր հուշակավոր թուղթը, որ երկրորդ անվամբ կոչվում է «Մեղադրութիւն ստախօս աբեղայից»։

Վահանը հալածական Ղազարին ոչ միայն կանչեց իր մոտ, պաշտպանեց չարախոսներից, այլև հանձնարարեց գրել «Հայոց պատմությունը»։

Ղազարն իր պատմությունը գրել է հինգերորդ դարի վերջին, 80-ականների երկրորդ կեսին։ Անհասկանալի է, թե ինչո՞ւ այս երկի շարադրանքն ավարտել է Վահանի մարզպան կարգվելու փաստով և ոչինչ չի գրել ո՛չ նրա մարզպանական գործունեության, ո՛չ էլ առհասարակ երկրի հետագա կյանքի մասին։ Այդքանը զարմանալի է, մանավանդ այն պատճառով, որ Պատմության նույնիսկ գլուխները ճարտարապետական հմտությամբ կառուցող (սկզբում է ամեն մի դրվագի, գլխի, անգամ դեպքի նկարագրությունը կատարել սկզբի, բուն բովանդակության և վերջնախոսքի միջոցով), Ղազարը չի գտել իր կյանքի գիրքը՝ «Հայոց պատմությունը», փակող հարմարագույն ավարտը։

Չգիտենք, թե երբ է մահացել Ղազարը։ Սակայն Հայտնի է նրա գերեզմանի տեղը։ Ժողովուրդն ավանդաբար պահել է նրա մասին անմեռ մի հիշողություն. թաղված Փարպիից գետի արևելք գտնվող Ղազարավան գյուղում (աղավաղված՝

ձևը՝ Նազարավան)։ և նրա հիշատակին էլ նույն գյուղում կառուցվել է մի եկեղեցի, որը կանգուն էր դեռևս 19-րդ դարում, իսկ մարմինն ամփոփված է եղել այդ եկեղեցու հարավային ավանդատան մեջ։

Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունն» ընդգրկում է հայ ժողովրդի բազմադարյան կենսագրության մեկ հարյուրամյակը՝ Հայաստանի 387 թ. բաժանումից մինչև 487 թ. ներքին ինքնուրույնության արտոնումը, երբ Պարսից արքունիքը «Հայաստան» մարզպանության տնօրեն նշանակեց Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանին։

Պատմությունը բաղկացած է երեք դրվագից, որոնցից յուրաքանչյուրն ամփոփում է պատմական մի որոշակի ժամանակաշրջան՝ իր դեպքերով, հերոսներով և, ամենակարևորը, ունի սկիզբ ու վերջ և առանցքային խնդիր, որը պատմաշրջանի ամենաէական երևույթն է՝ ազգապահպանության իր վճռական դերով։

Առաջին դրվագն սկսվում է այն կետից, երբ Հայաստան երկիրը՝ իր քաղաքական խարխլված ու երերուն վիճակով «ըստ օրինակի հնացեալ ձորձոյ» պատվում-բաժանվում է երկու ծվենի, և ծվատողներն էլ նրա հին ու հզոր ոխերիմներն են լինում՝ արևելյան հարևան բռնակալ Պարսկաստանը և արևմտյան հարևանը՝ խարդավալից Բյուզանդիան։ Փոքր ծվենը բաժին է հասնում Բյուզանդիային, իսկ մեծը, երկրի լորս հինգերորդ մասը՝ Պարսկաստանին։ Պարսից արքային վիճակված մասի Հայոց նախարարներն իրենց համար թագավոր խնդրեցին Արշակունյաց տոհմից՝ ընիկ նախնյաց կարգի համաձայն։ Եվ Պարսից Շապուհ արքան, նրանց խնդրանքը կատարելով, թագավոր կարգեց Արշակունյաց տոհմից Խուրոյ անունով մեկին։ Այս միջոցառմանը հաջորդած դեպքերը Հայոց զեկավարներին հուշում են, որ երկիրն ու ժողովուրդը գտնվում են ճակատագրական մի ճամփաբաժանի առաջ. պետական անկախությունն ու տարածքային ամբողջությունը կորցնելով՝ նրանք այլևս չունեն ազգային միասնական կյանքն ապահովող որևէ միջոց։ Մանավանդ որ եկեղեցին էլ վտանգվում էր պարսկական մազդեից կրոնի սպառնալիքների պատճառով։ Բախտորոշ այս պահին է, որ ասպարեզ է գալիս Մեսրոպ Մաշտոցը՝ հայերեն գիր ստեղծե-

լու իր առաջարկով։ Ազգային մեծագույն բախտավորություն է, որ հենց այս ժամանակ Հայոց կաթողիկոսն էր Սահակ Պարթևը, և թագավորն էր Վռամշապուհ Արշակունին, երկուսն էլ վերահաս աղետը հիմնովին գիտակցող, դրա դեմ ամեն ինչ անելու պատրաստ գործիչներ։

Գլուխ է գալիս Մաշտոց վարդապետի նախաձեռնությունը։ Մաշտոցի ձեռքով հայերեն լեզվի նշանագրեր են ստեղծվում։ Հայ ժողովուրդն արդեն ուներ իր գիրը՝ ազգային դպրոց, գրականություն ու մշակութային այլևայլ ճյուղեր ստեղծելու և զարգացնելու կարևորագույն միջոցը։ Ցույց տալով նաև Արևելյան Հայաստանի թագավորության վերացումը Պարսից արքունիքի կողմից և հետագա խառնակիչությունները քաղաքական կյանքում ու հոգևոր նվիրապետության ոլորտում՝ Ղազարն իր պատմության այս դրվագն ավարտում է Հայոց լուսավորության նախակարապետների՝ Սահակ Պարթևի (439 թ.) ու Մեսրոպ Մաշտոցի (440 թ.) մահով։

Երկրորդ դրվագի առանցքը 451 թվականի ապստամբությունն է, հայ ժողովրդի մեծ կռիվն իր ազգային ու կրոնական ինքնուրույնության համար։

Այս դրվագն ավարտվում է պարսկական տաժանակրության ընկած հոգևորական գործիչների՝ կաթողիկոսության տեղապահ Հովսեփի, Ղևոնդ երեցի ու նրանց ընկերների նահատակության սրտաճմլիկ նկարագրությամբ, ապա իբրև վերջին պատկեր ներկայացվում է Աբրահամ երեցի վերադարձը հայրենիք՝ հաշմված դիմքով, մոլեռանդ բարբարոսության անջնջելի դրոշմով։

Ժամանակագրական տեսակետից այնքան էլ մեծ հատված չէ այս դրվագի ընդգրկածը՝ 440-ական թվականների կեսերից մինչև 60-ական թվականների սկիզբը։ Սակայն գրամատիկ լարումով ու մեկը մյուսին հաջորդող դեպքերի շարքով եղավ ժողովրդի պատմության ամենահետաքրքրական շրջաններից մեկը։

Եվ ահա հեղձուցիչ մթնոլորտով փակված երկրորդ դրվագին հաջորդում է **Երրորդը**, որը բացվում է հուսո և գալիք լավ օրերի ակնկալիքը նշանավորող տեսարանով. Գուգարաց Աշուշա բդեշխի նախաձեռնությամբ Պարսից գերությունից ազատված տուն են դառնում նախորդ շրջանի նահատակ

Հմայակ Մամիկոնյանի զավակները։ Մի ժողովուրդ, որ ազատություն է սիրում ու պատրաստ է նրա համար արյուն տալ պատերազմի դաշտում, մի ժողովուրդ, որ որդեգրված է լույսին ու հառաջադիմությանը, չի կարող չգտնել իր ազատագրության ճանապարհը։

Հմայակ Մամիկոնյանի ավագ որդի Վահանը ժառանգում է ոչ միայն իր տոհմի տիրոջ ու գլխավոր նախարարի աթոռը, այլև հայրենասիրական ոգին ու երկրի համար մարտնչողների բանակը գլխավորողի ծանր պարտականությունը։ Խրմորվում է նոր ապստամբությունը։ Վահանը դառնում է ծավալվող ու ահագնացող ժողովրդական պայքարի կազմակերպիչն ու ոգին։

Վահանի ու իր համախոհ նախարարների հակապարսկական պայքարը պարտիզանական բնույթ է ստանում և հաղթանակների ու պարտությունների հերթագայությամբ, հետաքրքիր վայրիվերումներով ձգվում է այնքան, մինչև որ հեփթաղների դեմ ձեռնարկված կռվում խայտառակ պարտություն է կրում Պարսից բանակը։ Պերոզ արքան, իր զավակներով հանդերձ, մահ է գտնում պատերազմի դաշտում, գահի վրա նրան փոխարինած եղբայրը՝ Վաղարշ արքան, այլևս ուժ չունենալով սանձահարելու հպատակների ըմբոստությունը, հարկադրված է լինում զիջումներ անել հայ ապստամբներին։ 484 թվականի վերջում Վահանի ու արքունիքի միջև հաստատվում է մի դաշնագրություն, որով փաստորեն վերահաստատվում է Հայաստանի հոգևոր-մշակութային անկախությունը, և հիմք է դրվում վարչա-քաղաքական ներքին ինքնուրույնության համար, որն առավել իրական ու շոշափելի ուժ է դառնում, երբ որոշ ժամանակ անց արքունիքը որոշում է այլևս պարսիկ մարզպան չուղարկել Հայաստան և մարզպանի պաշտոնը հանձնում է մինչ այդ Հայոց սպարապետության պատիվն ունեցող Վահան Մամիկոնյանին։

Այս է Ղազարի Հայոց պատմության բովանդակությունը, որը, եթե իր մի մասով հյուսված է աղբյուրագիտական հայտնի կամ անհայտ նյութերից, ապա հիմնական մասով էլ ներկայանում է որպես հեղինակի անձնական ընկալումն իր ապրած ժամանակաշրջանի և ինքնին սկզբնաղբյուր է հայ ժո-

ղովրդի պատմության մի որոշակի ժամանակաշրջանի համար։

Ղազարի ժառանգությունից պահպանվել է նաև նշանավոր Թուղթ-նամակը՝ ուղղված Վահան Մամիկոնյանին։ Դրժբախտաբար, նրա բնագիրը մեզ է հասել աղավաղումներով ու բացթողումներով։ Սակայն այս վիճակով էլ այն ոսկեդարյան հայ մատենագրության ամենափայլուն գոհարներից է և, Մովսես Խորենացու հռչակավոր «Ողբի» հետ միասին, ներկայացնում է մեր հին դպրության մեջ հրապարակախոսական ժանրի բարձր մակարդակը։

Հետազոտողները բազմիցս նշել են Թղթի՝ իբրև հրապարակախոսական-ճարտասանական գործի, բարձր արվեստը։ Արդարամիտ ու ըմբոստ է մեր հռետորը, կրակոտ ու սրամիտ, հմուտ արվեստաբան և թշնամիների դեմ նետարձակելիս՝ դիպուկ ու անվրեպ։ Թղթում Ղազարն իր թշնամիների անունները չի էլ տալիս։ Նույնիսկ հայտնի դեպքերի մասին խոսելիս շրջանցում է դեմքերն ու նրանց տեսերին։ Բայց ի՞նչ կարևոր են անունները, երբ Թուղթն ուղղված է հասարակական միջավայրի «խավարի թագավորության» դեմ, երբ երկրի լավերն ամբաստանված են ու հալածական, իսկ լրբերն ու ստահակները, գողերն ու կաշառակերները տեր ու տնօրեն են ամեն ինչի։

Ամբողջ Թուղթը, որ ըստ վերնագրի՝ մեղադրություն է ստախոս աբեղաների դեմ, առավելապես հասարակական կյանքը մաքրագործելու նպատակ ունի և մղում է մի եղրակացության՝ ուղղված մարդկանց առհասարակ. դատապարտելով անտարբերությունը՝ կոչ է անում պաշտպան կանգնել բարուն և լավին ամենուրեք, որովհետև չարն ամենուրեք է, գոյություն ունի արարչագործության օրերից և քանի գնում շատանում է ու զորանում։

Ղազար Փարպեցու Պատմության աղբյուրագիտական բարձր արժեքն ամեն կասկածից վեր է, եթե նկատի ունենանք, որ նրա առաջին ու երկրորդ դրվագները, Մովսես Խորենացու և Եղիշեի երկերի հետ միասին, ամենայն ճշգրտությամբ ներկայացնում են Հայաստանի պատմության շուրջ 80-ամյա մի պատմաշրջանը, իսկ երրորդ դրվագը 5-րդ դարի 60—80-ական թվականների պատմության միակ աղբյուրն է, ժամանակակից, ականատեսի ու մեծ մասամբ իրադարձությունների մասնակցի հյուսած միանգամայն վստահելի տարեգրությունը։

Պատմագիտության համար աներկբայելի է այս պատմիչի խոսքի արժանահավատությունը։ Առաջին ու երկրորդ դրվագների տեղեկություններ՝ անգամ իրենց ճշգրտությամբ լրացնում են գրչակիցների հաղորդածի պակասը, քանի որ, առաջին հերթին, աչքի են ընկնում մի անաչառությամբ, որը չի խախտվել նույնիսկ պատվիրատու Վահան Մամիկոնյանի տոհմի գործերից խոսելիս։

Ինչ վերաբերում է Պատմության գեղարվեստական արժանիքներին, ապա այստեղ ևս պատմիչը ցուցադրում է գրական ինքնահատուկ վարպետություն։

Ղազարը հունաբան դպրոցի հեղինակներից է, լեզվական նորամուծություններով փայլող ոճի տեր մի մարդ, որին, սակայն, խորթ չէ նաև ժողովրդական լեզվամտածողության ոլորտը։ Տեղ-տեղ այնպես է թվում, թե նա պարզապես արարատյան բարբառով է գրել՝ գրաբարյան ձևեր խառնելով լոկ իր հոգևորական հերոսների խոսքին։

Պատմության շատ էջեր տալիս են մեր հեղինակի գեղարվեստական մտածողության բարձր մակարդակի ապացույցը։ Հիշենք գրքի մուտքը զարդարող սքանչելի պատկերաքանդակը՝ «... բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատառեցաւ յերկուս ծուէնս՝ ըստ օրինակի հնացեալ ձորձոյ», իր գործն ավարտած տեսնելու բանաստեղծական փափագի արտահայտությունը՝ «ընդ յորձանս մեծապատումն ծաւալացս նաւեալ մտաւոր ստուգաբանութեամբ՝ հասից... անալեկոծ և յապահով նավահանգիստն», գեղարվեստական համեմատության այն շողշողուն օրինակը, ինչպիսին Թղթի պարունակած կրշտամբանքն է Մամիկոնյան տան անդամներից ոմանց դեմ. «Իսկ ոմանց ի տանդ տեառն ես իբրև զանօթ էի յաւելորդ», կամ նույն Թղթի շառաչուն խոսք-ապտակը հոգևորական վերնախավի ներկայացուցիչներին, որոնք Մովսես փիլիսոփային հալածում էին ու ամբաստանում, իսկ հետո այդ առթիվ լուսավոր մարդկանց տված ամոթանքից ուրիշ ելք չգտան, քան այն, որ «զիաբէական զեպիսկոպոսութիւնս նման զեղոց մահու արբուցեալ սրբոյն՝ հեղցուցին»։ Եվ, վերջապես,

Այրարատյան դաշտի շուայլաշող նկարագրությունը, որի հետ մեր բաղմադարյան մատենագրության մեջ շատ սակավ էջեր կարող են համեմատվել։ «Արարատյան դաշտի խանդավառհիացական և իրոք շատ գեղեցիկ նկարագրությունը ներկայացնում է մեզ Ղազարն իբրև առաջին քաղցրախոս արարատցի հայրենասերը, իբրև առաջին այն հայ, իրենց ինքնուրույնությամբ անմահ, գրողներից, որոնք մատրել են մեր գրական սնության մեջ մի վառ, հրաշունչ հայրենասիրություն, որ Արարատյան աշխարհի հետ է կապված և հենց այս պատճառով էլ արժանի է անվանվելու արարատյան հայրենասիրություն» (Լեո)։

ԵՂԻՇԵ

Մահ ո՞չ իմացեալ մահ է,
Մահ իմացեալ՝ անմահութիւն։

ԵՂԻՇԵ

Հինգերորդ դարի հայկական ազատամարտերը երկրին համեմատական ու քաղաքական որոշակի անկախություն բերին միայն ութսունական թվականներին։ Սրանից էլ կարելի է ենթադրել, թե ավելի քան երեքտասնամյա պայքարի վերջին փուլն է, որ նշանակալից է եղել իր ընդգրկումներով, հատկապես արդյունքով։ Սակայն դարեր շարունակ, հենց վաղ միջնադարից մինչև մեր օրերը, հայոց ազգային պատմության, ազատագրական ոգորումների համար կենսավորող ուժ է եղել այդ ազատամարտերի առաջին պոռթկումն Ավարայրի դաշտում։ Եվ դրա պատճառը Եղիշեն է՝ Ավարայրի պատմիչը։ Մի կրակոտ քարոզիչ, կախարդական խոսնակ, որն իր անմահ մատյանով համոզել էր, թե հայ ազգի համար չի եղել ու չպիտի լինի առավել ճակատագրական պատերազմ, քան այն, որ նա մղեց պարսկական բռնատիրության դեմ Ավարայրի դաշտում։ Չկան և չեն լինելու ավելի քաջ, ավելի անձնազոհ ու ավելի սուրբ հերոսներ, քան Ավարայրի նահատակները, և չկան ավելի վառթար ու արգահատելի թշնամիներ, քան Ավարայրի թշնամիները։

Ավարայրի ոգին դարերի դժվար ճանապարհին ուղղություն է տվել հայոց ազատագրական գաղափարախոսությունը, թնածել է հայկական ազատամարտերի վրա։

Եվ այս ամենի համար մենք պարտական ենք Եղիշեին։

Նրա մասին կենսագրական սուղ տվյալներ են պահպանվել։ Ըստ ավանդության՝ եղել է 451 թ. հայկական ապստամբության մասնակիցը, Վարդան զորավարի դպրապետը, ապստամբության ելքից հետո անցել է կուսակրոնության, ապրել Մոկաց աշխարհում իբրև մենակյաց, գրել մեկնաբանական աշխատություններ, օրինակ, «Արարածոց մեկնութիւնը», «Ծննդոց գրքի» մասին, դավանաբանական երկեր ու ճառեր և, վերջապես, «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին»։ Ապրել ու ստեղծագործել է մինչև խոր ծերություն, վախճանվել Ռշտունիքում, ուր և նրա գերեզմանն իբրև սրբատեղի ավանդաբար հիշվել է մինչև նորագույն ժամանակները։

Եղիշեի մատենագրական ժառանգության պսակը հինգերորդ դարի կեսի հայոց հակապարսկական ապստամբության մատյանն է, որ միաժամանակ մեր առաջին վեպն է, մեր ազգային գեղարվեստական արձակի կուռ հիմնաքարը։ Այն գրվել է Դավիթ երեց Մամիկոնյանի պատվերով, հետևաբար և կոչված էր ոչ միայն տալու հայոց պատերազմի պատմությունը, այլև Մամիկոնյան տոհմը պսակելու մի փառքով, որ անմրցակից էր նախարարական Հայաստանում։

Հայոց պատերազմի այս պատմությունն իսկապես գեղարվեստական գործ է, վիպասանություն,— սա ընդունում են ուսումնասիրողներից շատերը՝ նկատի առնելով երկի վսեմ քնարականությունը և լեզվաոճական միջոցները, կերպարների տիպականացման, այսինքն՝ պատմականորեն իրական դեմքերից գրական հերոսներ կերտելու եղանակները։

Սակայն չի կարելի մոռանալ, որ Եղիշեն ամենից առաջ պատմություն է գրել, անմահացրել է իր տեսած հայոց պատերազմը։ Եղիշեի պատմության բովանդակությունը շարադրել ենք նախորդ գրույցներից մեկում («Մահ իմացյալ անմահություն է»)։ Այժմ փորձենք ծանոթանալ նրա պատմագիտական ու գրական արժանիքներին։

Եղիշեի վիպական պատմությունը, որ, շարադրված յոթ գրվածքներում, մի կուռ ամբողջություն է կազմում, հյուսված

է հետևողական, տրամաբանական դիպաշարով։ Նրա ամբողջությունը և բոլոր մասերն ու մանրամասները ծառայում են մի գլխավոր նպատակի՝ մարդկանց կատարելագործմանը. որպեսզի ընթերցելով իմանան քաջերի սխրագործությունների մասին, դառնան նրանց օրինակին հետևողներ և ճանաչելով վատթարների վարքը՝ հեռու մնան նրանից, ապա որպեսզի այս հերոսամատյանը դառնա «մխիթարություն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերություն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերա մահուան»։

Դարեր շարունակ այսպիսին էլ եղել է Եղիշեի գիրքը. դաստիարակել է քաջություն և անձնազոհություն, այրող ատելություն բռնության և դավաճանության հանդեպ։ Եվ քանի որ հենց այս էլ եղել է հեղինակի նպատակը, բնական ու պարտադիր են նաև նրա միջամտությունները նկարագրած դեպքերին, նրա տված զգայացունց գնահատականները, առատ խրատներն ու իմաստալից ընդհանրացումները։

Եղիշեի հայրենասիրական ու բարոյագիտական իմաստությունները թեավոր ու հրեղեն խոսքեր են դարձել, ճառագել հայկական մտքի ոլորտներում, կրթել այդ միտքը, սիրտն ու բարոյական աշխարհը։ Մահ ո՛չ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց։ Լավ է կոյր աչօք, քան կոյր մտօք... Սրանց պես բազմաթիվ փայլատակումներով պատմիչն իր խոսքը դարձնում է ներգործուն և անբեկանելի։

Իսկ քնարական զեղումնե՞րը, որոնցով նա փառաբանում է քաջությունն ու նահատակությունը, նշավակում բարոյական սնկումն ու դավաճանությունը, դրոշի վրա բարձրացնում նվիրվածությունը գաղափարին, հայրենի աշխարհին, սիրելյաց նվիրական անուններին։ Այստեղ նա արդեն մրցակից չունի մեր միջնադարյան մատենագրության մեջ։ Հիշենք «Տիկնա՜յք փափկասունք Հայոց աշխարհին...»։

Բայց ինչ էլ որ լինի, Եղիշեի գիրքը վիպասանություն ենք համարում, և այդ վիպասանության ամենակարևոր հատկանիշը տիպական կերպարների ստեղծումն է։ Այստեղ ընթերցողի առաջ կանգնած են երկու հակադիր, հակամարտ ու պարզապես հակառակ բևեռներ զբաղեցնող խմբեր, որոնց գլխավոր ներկայացուցիչները տիպականացված են զրական արվեստի բոլոր հայտնի միջոցներով՝ գործունեությամբ, խոսքով ու վարքով, արտաքին նկարագիրներով, հոգեբանական վերլուծություններով... Յուրաքանչյուր շատ թե քիչ կարևոր հերոս, որ արժանանում է վիպող պատմիչի առանձնահատուկ ուշադրությանը, ձեռք է բերում ինքնահատուկ նկարագիր, հոգեբանություն, գործելակերպ։ Նրանցից յուրաքանչյուրը նույնիսկ իր ներքին ու արտաքին նկարագրին վայել ածական կամ մակդիր է ընդունում, որը չի կարող գործածվել մեկ ուրիշի համար։ Ավարայրի նահատակների ցուցակն իսկ անելիս Եղիշեն չանում է յուրաքանչյուրի անհատականությունը կնքել մի հատիկ այնպիսի բառով, որ պերճախոս է կամ, համենայն դեպս, շատ բնութագրական. Բաջն Վարդան, Խորենն կորովի, արին Արտակ, զարմանալին Տաճատ, իմաստունն Հմայեակ, ճաշակերտն Ներսեհ, արդարն Արսեն...

Եղիշեի վեպի հերոսները,— դրականները՝ Վարդան զորավարի գլխավորությամբ, բացասականները՝ Հազկերտի, Միհրնեղսեհի, մանավանդ Վասակի,— մեր գեղարվեստական արձակի առաջին անմահներն են, որ այսօր էլ հայ ընթերցողի հետ են առաջին հանդիպումից ի վեր, լիուլի կատարում են իրենց այն գլխավոր խնդիրը, որով նրանց տոգորել է հեղինակը։

Այստեղ ես չեմ կարող չանդրադառնալ մի հարցի, որն ահա շուրջ հարյուր տարի ուղեկիցն է Եղիշեի երկի։ Վեճ է գնում այն առթիվ, որ Եղիշեն, լինելով Մամիկոնյան տոհմի հանձնակատարը, միակողմանիորեն փառաբանել է այս տոհմի ներկայացուցիչներին, անթերի-անբիծ հերոսի ու նահատակի կաղապարով ձուլել Վարդանին, իսկ հակառակ թևը դուրս բերել իբրև սրիկաների ու զարշելիների բանակ։ «Ստացվում է այն տպավորությունը,— գրել է այս կարծիքի հեղինակներից մեկը՝ Լեոն,— որ Հայոց աշխարհում մարդիկ չէին կանգնած իրար դեմ, այլ հրեշտակներ և դևեր»։

Այս կարծիքը տարբեր ժամանակներ պաշտպանել, բավական համոզիչ փաստերով հիմնավորել են Նիկ. Ադոնցը, Հրանդ Արմենը և ուրիշ մեծ ու փոքր ուսումնասիրողներ։

Այս կարծիքն ընդունելուց կամ չընդունելուց առաջ պարտավոր ենք հիշել, որ Եղիշեն իր ատելությունն ուղղում է

միայն Վասակի դեմ, սակայն չի մոռանում, որ նրա հետ է եղել նաև այն օրերի Հայաստանի ամենահեղինակավոր կամ հեղինակությամբ Մամիկոնյան տան հետ գոնե մրցող տոհմի ավագը՝ Տիրոց Բագրատունին։ Եվ այս երկուսին էլ գործակցում էին շատ ուրիշները՝ Արտակ Ռշտունին, Գագիշո Խորխոռունին, Վահևունյաց տեր Գյուտը, Ապահունյաց իշխան Մանեճը, Գաբեղինյաց տեր Արտենը, Ակեայի իշխան Ընձուղը, Ուրծի իշխան Ներսեհը, Վարաղշապուհ Պալունին, Ամատունի Մանեն... Եվ սրանք ասպարեզում էին իրենց գնդերի, իրենց նահանգների ողջ բնակչության հետ։ Ուրեմն Վարդանանց հետ չէր Հայաստան աշխարհի բնակչության մի մեծ մասը, եթե ոչ կեսը։ Բայց այսքան դավաճա՞ն։ Եթե ստեղծվել է այնպիսի վիճակ, որ ժողովուրդը բաժանվել է երկու մասի, և այդ մասերը ձեռք են բերել հակամետ ծրագրեր, լծվել տարբեր ուղղությամբ տանող այդ ծրագրերին, ապա հարկ է, որ նրանց մասին իրավացի վճիռ հանելու համար լսես երկու կողմերին, ծանրութիթև անես երկու կողմի արած-թողածը...

Վարդանանց թևի անունից խոսում են երկու հզոր պատմիչներ, որոնց կողմնակալությունը վեր է ամեն կասկածից։

Իսկ ո՞վ է ունկնդրել Վասակին կամ նրա կողմնակիցներից որևէ մեկին։

Սա պարզապես հարց չէ։

Ճիշտ է, ավանդական տեսակետի կողմնակիցները պնդում են, թե սա ժամանակավրեպ հարց է՝ ծնված 19-րդ դ. վերջի ու 20-րդի սկզբի հայկական հասարակական կյանքում բնավորված ինչ-որ նոր մտայնության հարկադրանքից։ Սակայն չգիտեն կամ մոռանում են, որ միջնադարում ևս Վասակի անվերապահ ամբաստանությունն անընդունելի է եղել։ Հիշենք թեկուզև Կորյուն վարդապետի պանծացնող խոսքը։ Ասում է. «Այն ժամանակ ասված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխ անցավ քաջ Սիսական Վասակը, խելացի, հանճարեղ ու կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ։ Նա շատ նպաստեց Ավետարանի քարոզչության գործին, իբրև որդին հորը՝ ցույց տալով հնազանդություն և մինչև վերջ իրականացնելով նրա (Մաշտոցի) կարգադրությունները»։

Կարևոր չէ, թե այս խոսքը երբ է գրվել՝ Ավարայրից առաջ, թե հետո։ Մնացել է Կորյունի գրքում ու անցել սերնդից սերունդ, և շատ բան խմբագրող, իր կամեցածի պես դարձնող մեր հոգևորականությունը, գրիչներն ու գրագետները այն թողել են անաղարտ։

Կարծում եմ՝ պակաս բարյացակամ չէ նաև Ավարայրից ավելի քան երեք տասնամյակ հետո իր Հայոց պատմությունը հյուսած Մովսես Խորենացու վերաբերմունքը (տե՛ս գիրք Գ, գլուխ ԾԴ)։ Նույնպիսի, համարյա պաշտպանական մի խոսք էլ ունենք ուշ միջնադարից. Թովմա Մեծոփեցին՝ 15-րդ դարի մեր ամենաշրջահայաց հեղինակը, Վասակին հիշում է որպես Պարսից արքունիքում ամբաստանվածի... Այս նշանակում է՝ առհասարակ միջնադարյան մեր մտավոր միջավայրում Վասակին ոտուձեռով դատապարտելը եկեղեցու սահմաններում է եղել, և նրա հարևանությամբ, թերևս աշխարհիկ ու քաղաքական կյանքում գոյատևել է այն մտայնությունը, որ վեր էր եկեղեցական կամ խմբակային տրամադրություններից և փորձում էր Վասակի կենսագրությունը մաքրել նրան քսված մռայլ գույներից։

Իհարկե, ամեն ինչ հավատին ծառայեցնող, մարդկային բոլոր առաքինությունները հավատից բխեցնող և բոլոր թերություններն ու թուլությունները հավատի բացակայությամբ պայմանավորող նեղիշեն հակասություններ շատ ունի։ Հակասություններ, որոնք մեծ մասամբ երկրորդական-երրորդական են և, մանավանդ, բացատրելի։ Նա իր մատյանի սկզբից իսկ ցույց է տալիս տնտեսական, քաղաքական, ազգային և, իհարկե, նաև հավատքի այն սահմանափակումները, որոնց պատճառով հայ ժողովուրդը ոտքի ելավ ընդդեմ Պարսից բռնապետության։ Բայց մեկ էլ հայտարարում է, թե ապստամբության միակ պատճառը հավատքի ճնշումն է եղել։ Իբր, հայ մարդիկ ելել են լոկ իրենց հավատը պաշտպանելու։ Նույնիսկ Վարդան Մամիկոնյանն ապստամբության նախօրեին, գժգոհ իր հայրենակիցներից, ուզում էր հեռանալ Հունաց երկիրը և այնտեղ միայն Ավետարան կարդալով անցկացնել իր օրերը։ Մի ուրիշ անգամ Նեղիշեն պնդում է, թե հայերը ո՛չ ինքնուրույն թագավորություն էին երազում, ո՛չ ուրիշ որևէ ինքնուրույնություն, միայն թե ազատ լինեին իրենց

հավատը պաշտելու... Եվ մեկ էլ Վասակին հայտարարում է այնքան մեղավոր, «որ կամիրն թագաւոր լինել...»։

Այսօրինակ հակասությունները պատճառ են եղել, որ նրա գիրքը համարեն մոլեռանդ հավատացյալի ճառագրություն։

Իրավացի՞ են այսպես մտածողները։ Ակներևաբար ո՛չ, քանի որ այս դեպքում մոռացության են տրվում գլխավոր խնդի՛րը, որի համար գրվել է գիրքը, ժամանա՛կը, երբ այն գրվել է և, ինչու չէ, նաև ամբողջ միջնադարյան մեր իրականությո՛ւնը, որի վրա իշխող է եղել Եղիշեն։

Եղիշեի ստեղծած վիպական Վասակը, ինչ-ինչ կետերում կրավացի առարկության պաշարով, հիմնականում հաղթողված կերպար է. ապացույց՝ մեր ազգի բաղմագարյան վերաբերմունքը նրա նկատմամբ։

Վասակը դարձել է հասարակ գործածական անուն, այդպես են կոչում տանու դավաճանին, անձնական վերելքի համար համազգային շահերը ոտնատակ տվողին։ Եվ այստեղ միանգամայն ճշմարիտ է Լևոն-Զավեն Սյուրմելյանը, որ ասում է. «Եթե Վասակի այդ կերպարն ստեղծված չլիներ Եղիշեի վեպում, միևնույն է, մեր ազգը նման մեկը պիտի ստեղծեր, որ իր պատմական ճանապարհին ցույց տար սեփական սերունդներին, պարուրեր ատելության ու նողկանքի «փառքով» և գարշանք ստեղծեր երևույթի նկատմամբ, զգուշացներ, դաստիարակեր համաժողովրդական անհանդուրժողություն։

Իսկ պատմակա՛ն Վասակը, նա, որ գոյություն է ունեցել, ապրել է չորրորդ դարի վերջին և հինգերորդի առաջին կեսին, հենց Եղիշեի ու Ղազար Փարպեցու ուղղակի վկայություններով էլ՝ եղել է մեծ ապստամբության գլխավոր կազմակերպիչներից մեկը, հայոց թագավորության վերականգնման նախանձախնդիրը... Չէ՞ որ սրա մասին պատմագիտական խոսք ասելիս մեծ մասամբ առաջնորդվում են Եղիշեի համատարած մերժումի ու դատափետումի ամբաստանականով։

Ապստամբության նախապատրաստության շրջանում և բուռն նակատամարտի մանրամասների մեջ Վասակի ստուգվող գործողությունները թվարկելով՝ Հր. Թամրազյանը կատարում է մի այսպիսի արդար եզրակացություն. «Վասակը

շտեսնելով ապստամբության հեռանկարները, կես ճանապարհին փորձեց դիմել մեծ դիվանագիտության օգնությանը, քակտեց մեծ խաղ, որը չընկալեցին հայերը, Մամիկոնյանները և եկեղեցու սուրբ հայրերը։ Հայոց պետականությունը նա փորձեց վերստեղծել պարսիկների ձեռքով, այսպես ասած՝ անարյուն, խաղաղ ճանապարհով։ Հասկանո՞ւմ էին նրան պարսիկները։ Անտարակո՛ւյս։ Մի կողմից նրանք ճնշեցին ապստամբությունը, մյուս կողմից՝ հենց իրեն՝ Վասակին և Վասակի ներքնապես հանդուգն քաղաքականությունը։

Կարծում եմ՝ ճիշտ է ասված, և, ընդունելով Եղիշեի պատմության մեջ բարձրացրած կերպարի գոյության իրավունքը, ամեն մի իսկական գիտական, պատմական ճշմարտությանը հետամուտ ամեն մի հետազոտող աղբյուրների ուղղակի վկայություններից ու անուղղակի տվյալներից պարտավոր է կատարել ճշմարիտ եզրակացություն, ցույց տալ իրական-պատմական Վասակի դերն իր ժամանակի հայկական կյանքի թոհուբոհում։

Մի հարց ևս, որ վերաբերում է Եղիշեի գրքի ստեղծման հանգամանքին։

Հայտնի է, որ Ղազարի պատմության երկրորդ գրվածքն ու Եղիշեի մատյանը, վերաբերելով Վարդանանց նույն հակապարսկական պատերազմին, ունեն բավական շատ նմանություններ, որոնք հաճախ նույն տեղեկությունների, տվյալների, դեպքերի նկարագրությունների կամ գնահատությունների բառացի կրկնություններն են հանդիսանում։ Ուսումնասիրողներից ոմանք սրա համար էլ գտնում են, որ կա՛մ նրանք իրարից են օգտվել, կա՛մ մի ընդհանուր աղբյուրից։ Վերջինն անհիմն գուշակություն է։ Իսկ իրարից օգտվելու հանգամանքը որքան հնարավոր, նույնքան և դժվար է պարզել, թե ո՛րն է որի՛ց օգտվել։ Թերևս Ղազարը՝ Եղիշեից, քանի որ Եղիշեն ապստամբության մասնակից է եղել, քաջատեղյակ ու իրատես մարդ, որ գուցեև վաղ է գրել, քան Ղազարը։ Սակայն իրենից առաջ ստեղծված մատյանների և իր աղբյուրների մասին խոսելիս Ղազարը չի հիշում Եղիշեին։ Թաքցնո՞ւմ է, բայց ումի՞ց, իր պատվիրատու Մամիկոնյանների՞ց, որոնց պատվերով է գրվել նաև Եղիշեի մատյանը։ Դա անհնար է պատկերացնել։ Ուստի և ինձ միանգամայն հավանական է

թվում Նիկ. Աղբալյանի խոսքը մեր այս երկու պատմիչների փոխառնչության վերաբերյալ։ Նա ասում է՝ Վահան Մամիկոնյանի պատվերով Ղազարն արդեն գրած է եղել Հայոց պատմությունը, որի երկրորդ դրվագը, որ Վարդանանց նահատակությունն է նկարագրում, ոչ մի կերպ չէր կարող բավարարել ավագ Մամիկոնյանների ցանկությունը. «Ինչ թե Վարդանանք ներկայացվեն Վահանանց սովերի տակ, «ինչ թե դեպքերի «պատճառակից շարան՝ առանց խանդավառության», «դեպքերու հանդարտ թավալում՝ առանց նախանձախնդիր գնահատության»։ Նահատակության շրջանն ապրածներն ընդվզում են այս անարդարության դեմ, և ահա. «Դավիթ Մամիկոնյան երեցի նախանձահույզ ոգին ու խանգացող միտքը կըմբոստանա Ղազարի պատմությունը կարդալով և կը հրամայե Եղիշեին վերակոչել Վարդանանց պատերազմը իբրև ականատես, կիրարկելով իր գրական մեծ տաղանդը, որու արդասիքը տեսաք էր անոր մեկնողական գործերու և ճառերու մեջ»։ Եվ այսպես, «ապավինելով իր հարուցիչ երևակայության և նախանձահույզ զգացումին՝ Եղիշե կը վերամշակի Փարպեցիի Պատմության երկրորդ դրվագը՝ դարձնելով պատմական վարքագրություն» (Նիկ. Աղբալյան, Ամբողջական երկեր, Դ, Պատմություն հայոց գրականության, Պեյրութ, 1970, էջ 377—379)։

Սա ևս գուշակություն է, բայց ինձ թվում է՝ շատ համոզիչ ու տրամաբանական։ Իսկ հակառակը ո՛չ մի բացատրություն չի ընդունում։ Գուցեև մեղք եմ առնում խղճիս վրա։ Բայց ուրիշ ելք չկա։ Հազար հինգ հարյուր տարի հետո մեր առաջ ծառացած հարցին պատասխան տալու համար պիտի աղբյուրագիտական հիմքեր առաջարկել, իսկ նրանց բացակայության դեպքում՝ հետևել տրամաբանության շարժմանը։ Տրամաբանությունն ասում է՝ Եղիշեի վարակիչ ու վառվռուն երկից հետո Մամիկոնյանները նոր մեկին պատվեր չէին տա։ Եվ հենց այդ մեկն ինքն էլ չէր համարձակվի Վարդանանց շուրջ հյուսել իր խսկապես «դեպքերու հանդարտ թավալումը», եթե ապարեզում արդեն գոյություն ունեցած լիներ Եղիշեի հերոսամատյանը։

Ինչ որ է։ Այսօր մենք ունենք հազար հինգ հարյուր տարեկան մի մատյան ևս, բացառիկ իր տեսակի մեջ, որովհետև

թեկուզև գրված դեպքերի մասնակցի անկուսակ կրքով, զգացմունքի հախուռն հորդումով, սակայն իրական-պատմական է, ուրեմն և հավաստի, արժանահավատ, խորքում մինչև վերջ ճշմարիտ։ Վեպ, որն այսօրվա խոսքով ասած՝ վավերագրություն է։ Մեր առաջին վեպը, որն առանց որևէ զիջողության կարող է բռնել այսօրվա վիպական ժանրին ներկայացվող քննությունը և դեռ պիտի ապրի երկա՜ր ու երկար, քանի հայ մարդը կհիշի իր ազգային անցյալը, իր սրբազան նախնիներին ու նրանց ոգեշունչ դասերը։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Եթե մեր առաջին մեծագույն հեղինակը Մեսրոպն է, որ ստեղծելով հայ գիրն ու գրականությունը՝ հավերժացրեց հայերեն լեզուն, որ նախապայմանն է հայ ազգի գոյության, երկրորդ մեծագույն հեղինակն էլ Խորենացին է, որ ստեղծելով հայոց պատմությունը՝ հայ ժողովուրդն էլ իր ազգային գոյության գիտակից դարձրեց։

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

Մեր ազգային մատենագրության ոսկեդարի ծնունդն էր Մովսես Խորենացին, սահակ-մեսրոպյան դպրոցի կրտսեր աշակերտներից մեկը, որը կյանքի վաղ շրջանում հռչակվելով իբրև թարգմանիչ ու մեկնաբան, մայրամուտը նշանավորեց Հայոց ամբողջական պատմության անզուգական մատյանով։ Հանճարեղ այդ երկն ստեղծվեց 480-ական թվականներին, սակայն պիտի իշխեր հայոց ողջ միջնադարյան մշակույթի վրա՝ կատարելով նրա հավատարիմ ուղեկցի ու անխաբ ուղեցույցի դերը։

«Մովսես Խորենացի» անվանը համանիշ ու համահնչուն են «Հայոց Քերթողահայրը» և «Հայոց Պատմահայրը» ահա քանի՜ հարյուրամյակ։

Մովսեսը ծնվել է Տարոն գավառի Խորեանք կամ Խորոնք ավանում, 5-րդ դարի սկզբին։ Նրա կյանքի ու գործունեության մասին սուղ տեղեկություններ են պահպանվել միայն իր իսկ «Հայոց պատմության» մեջ, ապա և Ղազար Փար-

պեցու հայտնի Թղթում՝ ուղղված Վահան Մամիկոնյանին։ «Պատմության» հաղորդած տվյալներից իմանում ենք, որ եղել է Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի կրտսեր աշակերտներից, երիտասարդ հասակում, ուրիշ սննդակիցների հետ միասին, ուսումը լրացնելու է գնացել Ալեքսանդրիա՝ ժամանակի հունական մշակութային ու կրթական աշխարհահրոչակ կենտրոնը։ Այստեղ հմտացել է հունարեն խմացության, քերականության, փիլիսոփայության ու քերթողական արվեստի մեջ։ Հայրենիք է վերադարձել իր սիրելի ուսուցչապետների մահվանից հետո, 440-ական թվականների առաջին կեսին։ Ապա զբաղվել է թարգմանություններով և ստեղծել ինքնուրույն մի շարք երկեր, որոնցից հայտնի են «Թուղթ առ Սահակ Մամիկոնեան», «Պատմութիւն Հռիփսիմեանց», «Յաղագս Վարդավառին խորհրդոյ», «Յաղագս Պիտոյից»։ Թարգմանությունների շարքում նշանակալից տեղ ունի «Ալեքսանդրի պատմությունը», որը մեր միջնադարյան մատենագրության ամենահարգի մատյաններից մեկն է եղել և հսկայական ազդեցություն է ունեցել թարգմանական ու քերթողական արվեստների բնագավառում։ 5-րդ դարի վերջում, ստույգ հաշիվներով՝ 80-ական թվականների սկզբին, Հայոց մարզպան Սահակ Բագրատունու հանձնարարությամբ գրել է «Հայոց պատմությունը»։

«Հայոց պատմության» բովանդակությունը.— Պատմահայրն իր երկը հաճախ է կոչում «Պատմութիւն Հայոց մեծաց», հատկապես երբ խոսք է լինում երկրի միասնական թագավորության ժամանակներից։ Այս «Հայոց մեծացը» նշանակում է՝ «Մեծ Հայքի», որեմն՝ Մեծ Հայք երկրի պատմություն։ Եվ ահա Հայոց երկրի կամ պարզապես հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, հայ ազգի ծագման օրերից մինչև Արշակունյաց թագավորության անկումը, նա բաժանել է երեք մասի. առաջին՝ վաղնջական ժամանակներից մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներն ու հելլենիստական աշխարհակալության հաստատումը, երկրորդ՝ հելլենիստական դարաշրջանից մինչև Հայաստանում քրիստոնեության տարածման ավարտը, երրորդը՝ այս շրջանից մինչև Մեծ Հայքի միասնական պետության կործանումը, բայց և հայկական դրի ստեղծմամբ ու դպրության տարածմամբ սկսված գրա-

կան-մշակութային կյանքի եռուզեռը, որը պետք է խարիսխ դառնար մեր ազգային գոյությունը պահպանելու համար։

Հենց միայն պատմության այս պարբերացումն ինքնին ապացույց է Պատմահոր աշխատանքի խոր գիտականության։ Նա շրջաբաժանման համար երկու անգամ էլ սահմանագիծ է դարձրել համաշխարհային պատմական հեղափոխիչ երևույթներ. առաջին դեպքում՝ Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալ պետության ստեղծմամբ սկսվող քաղաքական ու քաղաքակրթական նոր շարժումը, երկրորդ դեպքում՝ քրիստոնեության դարձը և այստեղից սկիզբ առնող քաղաքական ու մշակութային նոր կյանքը։ Քանի որ հայ ժողովուրդն էլ ամբողջ այս ժամանակաշրջանում գտնվում էր և՛ առաջին, և՛ երկրորդ հեղափոխիչ երևույթների հորձանուտում, ուրեմն, նրա պատմական ճակատագրի համար դրանք ունեցել են վճռական, հեռաբեկիչ նշանակություն՝ անպայման արժանի դառնալու հայոց պատմությունը տարբեր հատվածների բաժանող սահմանագծեր, նոր պատմաշրջաններ սկզբնավորող գործոններ։

Ճիշտ է, այսքանն այսօր պարզ է ու հասկանալի, պատմական գիտության փորձով ու տրամաբանությամբ հաստատված, որ ոչ մի առարկություն չի կարող ընդունել։ Սակայն հինգերորդ դարի վերջին քառորդում, երբ նախորդ մատենագիրները տվել էին սոսկ նախընթաց երկու հարյուրամյակի պատմության շարադրանքը, իսկ առավել հին ժամանակներին ոչ միայն չէին անդրադարձել, այլև չէին թողել որոշակի պատկերացումներ, նման քայլ կատարելը խիզախում էր՝ անհասկանալի ու անչափելի նույնիսկ այսօրվա պայմաններում։

Եվ հենց այս պատճառով էլ թերևս բացատրելի է հին ու նոր քննադատների աղմուկը հայ ժողովրդի կենսագրությունը համաշխարհային պատմական զարգացման հիմնապատատի վրա գծելու խորենացիական ջանքերի շուրջ։ Բացատրելի, սակայն հակապատմական ու անարդար։ Հները չգիտությունից գանգատվում էին, նորերն էլ կրկնում են նրանց, թե, իբր, հին պատմության շավիղներում իր ժողովրդի քայլերը ցույց տալով՝ խորենացին պարզապես հագուրդ է տվել սեփական ազգասիրությանը, երբ այդպիսի քայլեր, իբր, ո՛չ միայն

չեն կատարվել, այլև պարզապես չէին կարող կատարվել, որովհետև դրա համար հայ ժողովուրդը դեռ չէր ծնվել, առավել ևս ոտքի չէր կանգնել։

Սուտ ու հեքիաթ էր համարվում հենց Հայոց պատմության սկզբնավորությունը Հայկ նահապետի գործունեությամբ, որն անմիջական շփումներ է պայմանավորում հին միջագետքյան քաղաքական ու տնտեսական կյանքի հետ։ Հիմք կա՞ այս ամենի համար։ Ո՞վ է պատմիչին հուշել այսպիսի փոխհարաբերություններ, երբ հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ամենավաղագույն տեղեկությունները գտնվում են հին հունական պատմագրության մեջ և վերաբերում են մ. թ. ա. 6—5-րդ դարերին։

Այն ժամանակ դեռ չէին խոսել սեպագրերը։ 19-րդ դարում սկսեցին խոսել, և տակավ առ տակավ, աստիճանաբար բացվեցին հին-հին դարերի խորքերը։ Եվ այսօր ճշմարիտ պատմագիտության համար այլևս գաղտնիք չէ, որ մ. թ. ա. երրորդ հազարամյակում Հայկական բարձրավանդակի հարավ-արևելյան մասերն զբաղեցնում էր պետական մի կազմավորում, որը հենց միջագետքյան սեպագրերի մեջ հանդես էր գալիս երկու անունով՝ Արմանում և Հայք։

Խորենացին այս երկու անունն էլ համարում է մեր հայրենիքի վաղնջական տարբերակիչները, առաջինը՝ օտարների հորջորջում, երկրորդը՝ մեր ինքնանվանումը, որը, իբր, Հայկ նահապետի անունից է մնացել ու տարածվել։

Հայկի իշխանությունը, նրա սերունդների գործերը, տոհմաբանական շղթան իր բոլոր օղակներով, իհարկե, քաղված են հայ ժողովրդի բանավոր զրույցներից, իրենց մեջ պարունակում են առասպելական բազմաթիվ մանրամասներ։ Բայց չէ՞ որ նրանց էությունը, ատաղձը, պատմական հյուսվածքի ողնաշարը ճշմարիտ են, իրական-պատմական և, ամենակարևորը, նորահայտ աղբյուրներով հաստատվող։

Խորենացին Հայկից հետո հանգամանորեն պատմում է Արամի մասին, ցույց է տալիս այս պետական գործչի եռանդուն ջանքերը, որոնք ուղղված էին իր տերության քաղաքական ամբողջությունն ապահովելուն, անխախտ պահելուն, մանավանդ երկրի ցեղագրական դեմքն անխաթար դարձնելուն։ Եվ եթե առաջներում այս ամենը համարվում էր հեքիաթաբա-

նություն, ապա դարձյալ ասորեստանյան սեպագրերը մեզ համար բաց արին 9-րդ դարի կեսերին Հայկական բարձրավանդակում կամ Արարատյան երկրում գահակալած մի Արամ թագավորի, որն անընդհատ բախումներ է ունեցել Միջագետքի տերերի հետ։

Հայկի ու Արամի մասին բուն ազգային ավանդությունների խորենացիական մշակումները հիմք են դարձել Հայոց պատմության առաջին գրքի առավել կարևոր գլուխների համար։ Այդ հերոսներով են սրբագործվում հայ ժողովրդի անունը, հայրենիքը, իշխանությունը։ Այդ մեծ առաջինների վարք ու բարքով, ավանդներով ու խորհուրդներով են պայմանավորվում մեր ազգային դիմագիծն ու բնավորությունը, մեր անցնելիք ճանապարհն ու պատմական առաքելությունը։ Հայկն ազատագրական պայքարով է դրել մեր հայրենի տան հիմնաքարը՝ նախապես ազդարարելով. «Կա՛մ կմեռնենք, և մեր ցեղը Բելի ծառայության տակ կընկնի, կա՛մ նրան ցույց կտանք մեր բազկի զորությունը և կհաղթենք ու կապրենք ազատ։

Կմեռնենք կամ կապրենք ազատ՝ այս էր Հայկից ժառանգություն ստացած մեր առաջին դասը։

Արամը ևս ազատագրական մարտերով, մաքառումով ու հերոսական գործերով է փառավորել իր անունը։ Նրա մասին Պատմահայրն ասում է. «Լավ էր համարում մեռնել հայրենիքի համար, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»։

Սա համարյա թե Հայկ նահապետի պատվիրանն է։

Բայց պատվիրաններով ապրելը քիչ է, յուրաքանչյուր սերունդ ստացած ժառանգությանը պիտի ավելացնի իր սեփական ավանդը։ Եվ Արամն իր ստեղծած ընդարձակ պետության բոլոր մասերի համար հռչակում է իր սեփական կարգախոսը՝ խոսել հայերեն, այսինքն՝ անխախտ պահել ազգային կերպարի առաջին ու ամենահիմնական գործոնը, քանի որ հայի համար չկա առավել մեծ սրբություն, քան իր մայրենի լեզուն։ Լեզուն նաև հայրենի երկրի անառիկության, պետական մարմնի ամրության հիմքերի հիմքն է։ Իր երկրին միացած մարզերի բնակիչներին հրամայում է «ուսանել ըզ-

խոսս և զլեզուս հայկական», որովհետև համոզված է նաև, թե ազգային միասնությունը և լեզվով իրար միացած հատվածների ամբողջությունն է, որ հզոր է ու անխախտելի։

Արամը հայոց պատմության մեջ վճռական մի ամբողջ դարաշրջան է սկզբնավորում, Վանի կամ Արարատյան պետության դարաշրջանը, որ ձգված է մ. թ. ա. 9—7-րդ դարերի ամբողջ երկարությամբ։ Հնարավոր է, որ Պատմահայրն այս շրջանի տիրակալների շարքում տեսել ու ճանաչել է նաև օտար ծագում ունեցողների, դրածոների, պարզապես կուսակալների։ Սա, ըստ երևույթին, շատ էլ կարևոր չէ, որովհետև ավանդության տրամաբանությամբ այդ շրջանի համար ևս պահելով Արամից սերված Արայի, ապա Արայան Արայի ու հաջորդների ցուցակը, այն հասցնում է 7-րդ դար, նրան հանգեցնում Սկայորդու որդի Պարույրի ծագումը, այն Պարույրի, որին պիտի կոչի հայոց առաջին պսակավոր թագավորը։

Շատերն այս պարագան այնպես են հասկանում, թե Պատմահայրը հենց Պարույրին էլ ճանաչում է հայ առաջին թագավորը՝ նրանից առաջ հիշած անուններին համարելով սոսկ նահապետներ, «հայոց մեծեր» են։ Սա խոր թյուրիմացություն է, քանի որ հենց միայն Արամի գործունեության նկարագրությունը ցույց է տալիս, որ պատմիչը ճանաչում էր նախընթացի հայկական պետականությունը, նրա ընդարձակ սահմանների, ներքին քաղաքական, տնտեսական ու մշակութային ձեռնարկումների իրականությունը։

Պարույրն առաջին հայ պսակավոր գահակալն էր։ Պատմիչն այս հանգամանքն է շեշտում։ Նախորդներին ոչ ոք չէր պսակել Հայոց գահի վրա։ Պարույրին պսակեց Մարաստանի Վարբակես թագավորը։ Այսինքն՝ օտարները ևս ճանաչեցին Հայոց թագավորության ինքնակա գոյությունը։

Հիշենք, թե Խորենացին առհասարակ ինչպիսի կարևորություն էր տալիս թագավորի պսակավոր լինելու հանգամանքին, երբ նա պսակված է արքայական փառքով, և այդ փառքն ընդունում են նաև օտարները, մանավանդ, եթե պսակն էլ տրված է օտարներից։ Տիգրանին համարում է «իններորդ ի ընկաց մերոց պսակաւորաց»։ Ո՛չ թե իններորդ թագավորը, այլ իններորդ պսակավորը։

Եվ ապա հերթականորեն շարադրում է («յարմարեալ զամենայն կարգեցիցն») հայ պսակավորների գործերը, Հայոց պետության ծաղկման, հզորացման երևույթները։

Երկրորդ գիրքը, որ կոչվում է «Միջակ պատմութիւն Հայոց», սկսվում է Ալ. Մակեդոնացու շրջանից և հասնում հայ ժողովրդի քրիստոնեության դարձին, դրա կազմակերպիչ Գրիգոր քահանայապետի ու Տրդատ Մեծ արքայի մահվանը։ Սա Հայոց Արշակունյաց թագավորության պատմության առաջին շրջանն է, որի մեջ է առնված ոչ միայն իսկական Արշակունիների, որոնց գահակալությունն սկսվել է մ. թ. առաջին դարից, այլև նախորդ շրջանի թագավորական այն տոհմը, որ հայտնի է Արտաշիսյանք անունով։ Թերևս ճիշտ է, որ հինգերորդ դարում այն ընդհանուր պատկերացումը կար, թե Արտաշեսն ու նրա ժառանգները, օրինակ. Տիգրանը ևլք, Արշակունիներ են եղել։ Փավստոս Բուզանդը Տիգրանին Արշակունի էր համարում («զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ»)։

Պատմահայրը, ի՞նչ խոսք, նկատի է առել այն հանգամանքը, որ Պարթև Արշակունիների գահակալությունը, ըստ աղբյուրների, սկսվել է մ.թ.ա. 3-րդ դարի երկրորդ կեսից, մոտավորապես 240—220-ական թվականներից։ Եվ ավանդությունն էլ դրությունն այնպես է ներկայացնում, թե Պարթև Արշակ Մեծն է իր եղբորը կարգել Մեծ Հայքի թագավոր։

Ինչ որ է, «Հայոց պատմության» երկրորդ գիրքը, Վաղարշակի մեծագործությունները շարադրելով, նրանց մեջ է տեսնում երկրի շենացման ու հզորացման նախադրյալները։ Այս անվան ներքո հետազոտողներն իրավացիորեն տեսնում են Արտաշես Ա-ից մնացած ժողովրդական հիշողության արտացոլումը։ Վաղարշակ-Արտաշեսն ստեղծում է հելլենիստական տիպի հզոր միապետություն իր գործակալություններով, պետական կարգուկանոնով, նախարարական տների իրավունքներն ու պարտականությունները սահմանող հրովարտակով։

Արշակունյաց գահակալության առաջին շրջանի Հայաստանի ներքին ու արտաքին փոխհարաբերությունները մանրամասնորեն շարադրելով՝ պատմիչը հասնում է Տրդատի ու Գրիգոր Լուսավորիչի դարակազմիկ գործին, պատմում նրանց

վախճանը, առանց տուրք տալու Ագաթանգեղոսի տեսլաշատ պատումին, որին նա հաճախ է անդրադառնում։

Երրորդ գիրքը («Աւարտաբանութիւն մեռոց հայրենեաց») Հայաստան երկրի ավելի քան մեկ դարու վայրիվերումներն է պատմում՝ Տրդատի մահից մինչև Մեսրոպ Մաշտոցի վախճանը։ Խոսրով Կոտակի, Տիրանի, Արշակ Բ-ի, Պապի, Վարազդատի, Արշակ Գ-ի, Վռամշապուհի, Արտաշես վերջինի գահակալության տարիներին Հայ ժողովրդի գլխով անցած փորձությունները, փրկարար գրերի գյուտը, որով և Մաշտոցի մեծագործությունը։ Գիրքն ավարտվում է հռչակավոր «Ողբ»-ով, որ Հայաստան աշխարհի ծանր վիճակն է ներկայացնում, քննադատության կրակի տակ առնելով ժամանակի հասարակության բոլոր խավերին, յուրահատուկ դեղատոմս ներկայացնելով հասարակությանը տանջող սիտեերը բուժելու, ազգային հավաքականություն ապահովելու, ավելի ճիշտ՝ ինքնամաքրմամբ բարձրանալու և առաջ գնալու համար։

Եվ, այսպես, Մովսես Խորենացու Հայոց պատմությունն ընդգրկում է Հայ ժողովրդի կենսագրության առաջին շուրջ երեքհազարամյա շրջանը, եթե նկատի առնենք, որ Հայկ Նահապետին վերաբերող իրողությունները կատարված են համարվում մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսերին, իսկ Պատմության հիշած վերջին դեպքը Մաշտոցի մահն է՝ տեղի ունեցած 440 թվականին։ Հայ ժողովրդի պատմության մի վիթխարի ժամանակահատված, որի ամբողջական ու կատարյալ շարադրանքն ստեղծելու համար այսօր իսկ մասնագետները հաճախ են կանգնում յուրջ դժվարությունների առաջ։ Հետևաբար առաջ է գալիս շատ բնական երկու հարց՝ Պատմահայրն ի՞նչ աղբյուրներ է ունեցել իր ձեռքի տակ և այդ աղբյուրներից օգտվելու ի՞նչ սկզբունք է կիրառել։

Առաջին հարցը պարզելուն մեծապես օգնում է ինքը՝ պատմիչը։ Նա սովորություն ունի մատնանշելու այն բոլոր աղբյուրները, որոնցից քաղում է իր օգտագործած այս կամ այն տեղեկությունը, հիշատակությունը, կարծիքը։ Կարևոր չէ՝ հավատո՞ւմ է աղբյուրին, թե՞ հետը վեճի է մտնում՝ այն մերժելու կամ ճշտելու նպատակով։

Խորենացու հիշած աղբյուրները կարելի է երեք խոշոր

խմբերի բաժանել՝ գրավոր աղբյուրներ, ժողովրդական ավանդություն և նյութական մշակույթ։

Առաջինի տակ առկա է վիթխարի մի ցուցակ, որի ամեն մի անուն իրավամբ օգնել է Պատմահորը, և հիմնականում պարզվում էլ է նրա բերած նպաստը։

Գրավոր աղբյուրները ևս կարելի է բաժանել շերտերի, որովհետև նրանց մի մասը եթե հիշվում է միայն հեղինակների անուններով, իսկ երկերն այժմ չկան, ապա ուրիշ դեպքերում էլ պահպանված երկերից կատարված են այնպիսի մուծումներ, որոնք այդ երկերի մեջ չեն պահպանվել։ Իսկ սա էլ երևի ապացույց է, որ այդ երկերը մեզ են հասել ոչ նախնական անաղարտությամբ, և խորենացու պատմությունը կարող է օգնել վերականգնելու նրանց բնագրերը։ Ինչպես պատմիչն օտար հեղինակներից վկայակոչում է Աբյուդենոսին, Բերոսոսին, Ալեքսանդր Բազմավեպին, Արիստոնին, Ափրիկանոսին, Բասսոսային, Եվագրոսին, Հովսեպոս Փիլեմոնին, Պորփյուրին, Խոռոհբուսին, Փերմելիանոսին և ուրիշների, որոնց բերած նպաստները տարբեր են։ կան, որ անմիջական ավյուններ են հաղորդել հայկական պատմությունից, կան, որ օգնել են հայկական նյութը ճիշտ հասկանալու և տեղադրելու ընդհանուր պատմության հյուսվածքի մեջ։

Յավոք, մեր պատմիչը ծանոթ չի եղել հայոց պատմության համար այնքան կարևոր նշանակություն ունեցող մի շարք աղբյուրների հետ, ինչպիսիք են Քսենոփոնի, Պոլիբիոսի, Ստրաբոնի, Տակիտոսի, Դիոն Կասիոսի, Ապպիանոսի, Ամմիանոս Մարկելլինոսի երկերը։ Ըստ երևույթին, դրանց մի մասը նրա ձեռքն ընկնել չէր էլ կարող, որովհետև վաղ միջնադարում մոռացության էր մատնված։ Այդպես էր, օրինակ, Ստրաբոնի «Աշխարհագրության» ճակատագիրը։

Գրավոր աղբյուրների շարքում երեքը (Մար Աբաս Կատինայի-Մծուրնացու մատյանը, «Պիտոյից հյուսման պատմությունը» և «Մեհենական պատմությունները») սկզբունքային դեր են խաղացել պատմիչի իսկ խոստովանությամբ, քանի որ ստեղծված են եղել Հայաստանում, հայոց պատմությունն ու բանահյուսությանն անմիջապես առնչված մարդկանց կողմից։ Նրանցից առաջինը պարունակել է հայկական

հին ավանդություններ ու տվյալներ, Տիգրան Բ-ի մասին մի ներբողյան, որ կարող էր գրված լինել հերոսի ժամանակ, նրա արքունիքում։

Ինչ վերաբերում է «Մեհենական պատմություններին», ապա այստեղ էլ առկա է երկու շերտ, առաջինը՝ հնագույն զրույցները, որի առնված Անիի Ողյումպ կամ Ոլիմպիոդորոս հույն քրմի ձեռքով, երկրորդը՝ ասորի պատմիչ Բարդածան Եղեսացու։ Որքան էլ ժողովրդական ակունքներից բխած, նրանք բավական ճշմարիտ-պատմական տվյալներ են պարունակում, համապատասխանում են արտաքին գրավոր աղբյուրների տվյալներին։ Ուսումնասիրողները պարզել են, որ, օրինակ, «Մեհենական պատմությունների» տեղեկություններն ստուգվում են Արտաշես Ա-ի (189—160 թթ.) թողած վիմագրերով և հույն աղբյուրների տվյալներով։

Նախորդ շրջանի հայ մատենագրությունից, անշուշտ, օգտագործել է Կորյունի, Ագաթանգեղոսի ու Փավստոսի երկերը, առաջին երկուսի մասին որոշակի խոսելով, վերջինը՝ լռելյայն։

Պատմական տվյալների համար աղբյուր ծառայած բնագրերի կողքին մեր Պատմահոր երկին իրենց նպաստն են բերել ուրիշ մի շարք մատյաններ, որոնց առնչությունը որոշվում է ստեղծագործական այլևայլ գործոնների առկայությամբ։ Այսօրինակ մի աղբյուր է Կեղծ Կալիսթենեսի հեղինակությամբ հայտնի «Ալեքսանդրի վարքը» կամ «Ալեքսանդրի պատմությունը»։

«Հայոց պատմության» աղբյուրների շարքում խոշոր տեղ են գրավում բանահյուսական տարրերը։ Պատմիչն ըստ երևույթին այստեղ երբեք պակաս չի զգացել, քանի որ հայոց վաղնջական հերոսների և հին իրողությունների շուրջ հյուսված բանավոր զրույցները, առասպելներն ու երգերը գուսանների ու ասացողների միջոցով սերնդեսերունդ անցնելով հասել էին 5-րդ դար, և դրանք այնքան շատ էին, որ պատմիչը խոստովանում է, թե իր ազգը եղել է «արգասավոր... ի բանս»։ Իհարկե, սա չի նշանակում, թե պատմիչն անխտիր օգտագործել է ամեն տեսակ զրույց։ Նկատի առնելով քրիստոնյա մտավորականության անողոք ժխտական վերաբերմունքը հեթանոսական ժամանակների մշակութային արժեքների և, մանավանդ, աշխարհիկ թեմաներով հյուսված առասպելների հանդեպ, պիտի դնահատել Խորենացու ընդվզումն այդ վերաբերմունքի դեմ։ Նա ոչ միայն իր ստեղծագործության հունի վրա շրջեց ժողովրդական բանավոր գրականության հին ու միշտ թարմ հարստությունը՝ իբրև ամենակենսալից հոսանք, այլև առաջինը մեր քննական մտքի պատմության մեջ նրա վերաբերմամբ ստեղծեց տեսություն, նոր կաղմավորվող դպրության մշակների համար մշակեց ժողովրդական քնարի ակունքներից խմելու կարգ ու կանոն, այդ քնարի գանձերը մշակելու և նրա խակսիան սիրուց՝ ժողովրդին վերադարձնելու դասական ավանդներ։

Խորենացին բանավոր գրականությունը դիտում էր քրնեախուլ հայացքով. «Ի հեթանոսականն գրուցասարութիւնս... զոր ինչ հաւաստին կարծեմք» («հեթանոսական զրույցներից... ինչ որ հավաստի կհամարենք»)։ Խորշանք զգալով պարսից առասպելների նկատմամբ («պարսից անյարմար և անոճ բանից»)՝ նա մեծ առավելություն էր տեսնում պերճ ու ողորկ, պատճառավոր հունականների մեջ, որոնց տակ այլաբանորեն թաքնված են ճշմարտապատում իրողություններ («Յունական պերճ և ողորկ առասպելքն իցեն հանդերձ պատճառաւ, որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեան ունին թաքուցեալ»)։

Անկասկած է, որ նա «թաքուցյալ ճշմարտություններ» էր տեսնում նաև հայոց առասպելների ու ազգային զրույցների մեջ, որոնցից շատերը վերապատմել է, քննությամբ հասել ճշմարտության կորիզին, մի մասն էլ ստաբզապես զրի առել նույնությամբ, ամբողջական անմահացնելով մեր ազգային բանավոր գրականության այնպիսի գոհարներ, ինչպես Արտաշեսի ու Սաթենիկի, Տիգրանի, Արտաշեսի ու Սրտավաղդի զրույցները, իսկ Վահագնի հիմնը, որ իր մեջ պահել է հայ ժողովրդի վաղնջական պատմության, զեղարվեստական պատկերացումների ու լեզվի անգնահատելի հիշատակներ, զարդարում է մեր ազգային քնարերգության ճակատը։

Գրի առնելով այս ադամանդե խոսքը, Քերթողահայրը վկայում է. «Զայս երգելով ոմանց փանդռամբ՝ լուաք մերովք իսկ ականջօք» (Ա, 31. «Մեր ականջով իսկ լսել ենք՝ ինչպես ոմանք փանդիռներով երգում էին»)։

Բանավոր զրույցների մի այլ շերտ էլ, որ նախարարական տների հիշողություններն էին կազմում իրենց ծագումնաբանության ու պատմական զանազան երևույթների վերաբերյալ, Պատմահայրն օգտագործել է՝ ամենայն ուշադրությամբ դրանք անցկացնելով իր ստեղծագործական մաղից։ Եվ այստեղ էլ դժվար չէ նկատել, թե ինչից ի՞նչ է ստացվել։ Մանավանդ որ համարյա ամեն անգամ պատմիչն ինքն է հիշում բանավոր ակունքից ստացածը և քննախույզ հայացքով նրանից քաղած ճշմարտությունը։

Վավերագրերը «Հայոց պատմության» աղբյուրների մի այլ կարևոր շերտն են կազմում։ Արշակունյաց արքունիքի ու Հայոց կաթողիկոսարանի դիվանները պետք է որ շատ զբաղեցրած լինեն Խորենացուն։ Գահնամակն ու Զորանամակն էլ՝ նրանց հետ։ Ապա Հունարեն ու պարսկերեն գրված անթիվ այն գրությունները, որոնք վերաբերում են «փիրաքանչիւր տան առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց... անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն» (Ա, 3)։

Վավերական ամենաթանկագին հիշատակարաններ են վիմագրերը, և սրանց էլ Պատմահայրը վերաբերվել է գերազույն ակնածանքով ու զգուշությամբ։

Հայտնի է, որ հենց նրա ժամանակ էլ Հայաստանում սփռված են եղել օտարալեզու բազմաթիվ վիմագրեր։ Էլ չենք խոսում հարյուրավոր սեպագրերի մասին, որոնց տեղը քաջ գիտեր պատմիչը, քանիցս հիշում է՝ տալով իր ժամանակի համար զարմանալիորեն հետաքրքիր բացատրություններ։

Հայաստանում այնպես լայնորեն սփռված բազմալեզու վիմագրերի խորենացիական արտացոլումները, բնականաբար, չէին կարող միատեսակ ու միատարր լինել. ժամանակով իրեն մոտիկները, մանավանդ հունարենը, լատիներենը, պարսկերենն ու արամեերենը,— նա մեծ մասամբ կարդացել էր և ներկայացնում էր այնպես ստույգ գիտականությամբ, որ այսօրվա հետազոտություններն անգամ չեն տալիս ավելին, քան պատմիչն է հաղորդել։ Իսկ սեպագրե՞րը,— սրանք որքան էլ առեղծված էին հինգերորդ դարի հայի աչքում, զոյություն ուներ ավանդություն, որը եթե բավարար

չէր գիտական մեկնաբանության համար, միևնույն է, օժանդակում էր հեռավոր պատմության ինչ-ինչ ծալքեր բացելիս։

Եվ, վերջապես, Խորենացու պատմությունի մի ինքնատիպ, գոնե իր ժամանակի համար նորագույտ աղբյուրը՝ հայոց լեզուն իր հատուկ անուններով, բառապաշարով, ստուգաբանություններով։ Շատ դարեր հետո Յակոբ Գրիմմը պիտի հայտարարեր՝ մեր լեզուն մեր պատմությո՛ւնն է։ Իսկ հինգերորդ դարում Մովսես Խորենացին հայոց լեզվի ընձեռած հնարավորություններով համարյա ամեն քայլի փորձում էր պարզել մեր պատմության բազմաթիվ հարցեր։ Նահանգների պատմական անցուդարձերը, նախարարությունների ծագումնաբանությունն ու հետագա դարձդարձումները, այս կամ այն քաղաքի կառուցումն ու ճակատագիրը... Որքա՞ն հարցեր են իրենց բացատրություններն ստանում հայոց լեզվի տվյալներով։ Եվ ո՛չ միայն հայոց լեզվի, որովհետև պատմիչը տիրապետում էր նաև օտար մի շարք լեզուների և հաճախ էլ քաջատեղյակությամբ վկայակոչում է հունարենն ու պարսկերենը։ Զարմանալի չէ, որ երբեմն այդ բացատրությունների մեջ են սողոսկում ենթադրաբար հորինված պատասխաններ, պարզունակ հարմարեցումներ... Հավանական է, պատմիչին հարցի այսօրինակ լուծումը երբեմն ավելի հարմար է թվացել, քան պատմության շարունակական, գեղեցիկ հյուսվածքի մեջ մութ կետ թողնելը։

Արդեն ասվել է, որ հայ ժողովրդի պատմության առաջին ավելի քան երկու հազարամյակի համար Պատմահայրը չի ունեցել գրավոր աղբյուրներ (այն ժամանակ սեպագրերը կարդալ չգիտեին) և հիմնականում առաջնորդվել է ժողովրդական բանահյուսության ընձեռած նյութերով։ Այս նյութերից հյուսած նրա պատմությունը հաճախ դիմանում է սեպագրերով զինված հետազոտության քննությանը, որովհետև բանավոր աղբյուրներից ժամանակագրական սանդուղք չկառուցելով հանդերձ՝ պատմիչը վերականգնել է պատմության ընթացքը, նրա տրամաբանական զարգացման աստիճանները։

Գրավոր աղբյուրների շրջանը ևս պատմիչի առաջ դրել է բազմաթիվ հարցականներ ու առեղծվածներ, որոնց լուծման համար ամեն անգամ նա դիմել է իր համար սկզբունք դար-

ձած քննական եղանակին. նախապատվություն տալ գրավոր աղբյուրի տեղեկություններին, այսպիսի տեղեկությունների մեջ էլ ընդունելի համարել նրանք, որոնք իրենց արդարացնում են նախորդ ու հաջորդ շրջաններից հայտնի փաստերի տրամաբանությամբ, օգնում հյուսելու պատմության անաղարտ, հավաստի շղթան։

Իր պատմության երկրորդ գրքի համար նյութը մեծ մասամբ քաղելով գրավոր աղբյուրներից, Պատմահայրն արդեն յուրաքանչյուր առաջաքայլը կատարում է՝ հետևելով ժամանակագրական տվյալներին։ Այստեղ էլ նա առաջնորդվում է մի կարգախոսով, որ կարող է դրոշմվել իրապաշտ պատմության ճակատին. «Ո՛չ է ճշմարիտ պատմութիւն առանց ժամանակագրութեան»։ Մեկ անգամ արդեն ընդունած սկզբունքը դերագույն օրենք դարձրած՝ նա կուռ, հավաստի, մինչև վերջ ներդաշնակ ժամանակագրական տախտակների մեջ է առնում բոլոր պատմական դեպքերն ու փաստերը, հարևան երկրների և հենց բուն Հայաստանի թագավորական տների գործերը, քրիստոնեության ընդունումից հետո՝ նաև եկեղեցին ու նրա գործիչներին։

Չի կարելի կարծել, թե այստեղ ամեն ինչ հարթ ու դյուրին պիտի լիներ, արդյունքն էլ՝ կատարյալ ու անթերի։ Բնա՜վ։ Միշտ չէ, որ նման ժամանակագրության համար գտնվել են բավարար տվյալներ։ Միշտ չէ, որ Պատմահայրն ինքը համոզված է եղել, թե իր կառուցած ժամանակագրությունն ստույգ է մինչև վերջ։ Բայց նրա համար շատ կարևոր է եղել կառուցիկ շենքն ավարտած տեսնելը և ավարտել է։ Ժամանակագրությունը պատմական երկի համար որոշիչ ոչ ճակատագրական համարելով հանդերձ, նա պակասող օղակները լրացրել է ոչ թե փաստերի թելադրանքով, որ չկար, այլ տրամաբանության ուժով, որ նրան թույլատրելի էր թվում։

Այստեղ չպետք է մոռանանք, թե ե՛րբ է ստեղծագործել մեր Պատմահայրը և գիտական կամ տեսական ի՞նչ մթնոլորտ էր շնչում։ Հայկական միջավայրի մասին խոսելն ավելորդ է։ Բայց ավելի՞ն պիտի տար արտաքին աշխարհը։ Իրենից հազար տարի առաջ Հերոդոտոսը գրել էր, թե հավասարապես

ականջ է դնում, ապա և գրի է առնում ամեն տեսակ ճիշտ ու սխալ բաներ, որոնց իսկությունը որոշելը թողնում է ընթերցողին։ Իսկ շուրջ հինգ հարյուր տարի առաջ Համբարձյան նույն սկզբունքով էր առաջնորդվել Ստրաբոնը։ Ի՞նչ էին ավելացրել հետագաները։ Լոկ այն, ինչ քաղում էին նախորդներից։ Իսկ նոր նյութը շարադրվում էր հին եղանակով. ասո՜ւմ են, թե... պատմո՜ւմ են, որ... Եվ ահա այս մթնոլորտում Խորենացին իրեն լծեց մի սկզբունքի, որի անթերի իրականացումը պարզապես անհնար էր աղբյուրների սակավության, բայց նաև այդ սկզբունքի անմշակության պատճառով... Հենց այս երկու պատճառով էլ մեր Պատմահոր կատարածն արդեն մի սխրագործություն է, որ մենք կարող ենք դնահատել այսօրվա հեռվից ու բարձունքից։

Գերքննադատության քմերը Խորենացու բացատրելի սրխալներից կառչած՝ գտնում էին, թե նա դիտավորյալ կեղծել է՝ իր ազգի պատմությունը միջազգային անցուդարձերի հետ առնչելու, հայ ժողովուրդը համաշխարհային թատերաբեմ հանելու սին շահախնդրությամբ։ Երկի հյուսվածքը ոտուձեռով ընդունողներն էլ մտածում են, թե այնտեղ ոչ մի սխալ չի կարող լինել, և անառարկելի է Խորենացու ժամանակագրությունն իր ամբողջության մեջ, բոլոր ու ամեն տեսակ մանրամասներով։

Երկու վերաբերմունք՝ իրար հակասող, իրար ջնջող, որ իրար արժեն։

Յոթերորդ դարից ի վեր Խորենացու ստեղծած պատմական ժամանակագրությունը և հայոց պատմաշղթան գերագույն օրինակ են եղել մեր մատենագրության համար։ Մովսես Կաղանկատվացին, Հովհաննես կաթողիկոսը, Ասողիկը, Թովմա Արծրունին, հետագաներից Վարդան Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ այդ պատմաշղթան կբրկնել են, նրա վրա կանգնեցրել իրենց գործերը, նրանից սկսել իրենց անելիքը։

Խորենացու Հայոց պատմությունն այնքան անառարկելի աղբյուր է եղել ամբողջ միջնադարում, որ նրա հիման վրա գրիչներն ու խմբագիրները կարգի են բերել պատմագրական ուրիշ բազմաթիվ ձեռագրեր։ Պատմության շրջաբաժանումը

և ժամանակագրական համակարգն իր հիմնական մասով, պատմաքննական շատ ու շատ ձեռնարկումներ, հնագույն շրջանին վերաբերող տվյալները, որոնք օրըստօրե ճշգրտվում են նորահայտ աղբյուրներով, երկրորդ ու երրորդ գրքերի անհամար նյութեր, որոնց համար ինքը միակ աղբյուրն է, քանի որ կորել-անհետացել են իր վկայակոչած աղբյուրները. այս բոլորի համար նորենացու պատմությունը մի անմրցակից հուշարձան է՝ կանգնած մեր վաղմիջնադարյան գրական անդաստանում։ Իսկ նրա տեղեկությունները հարևան ժողովուրդների՝ վրացիների ու աղվանցիների, պարսիկների ու հյուսիսկովկասյան բնիկների, Հայաստան աշխարհի հետ այս կամ այն կերպ առնչություն ունեցած մեծ ու փոքր տերությունների, մեռած ու ապրող ժողովուրդների մասին,— սրանք էլ մի ուրիշ կողմից են բարձրացնում նրա դերը համաշխարհային պատմագիտության բնագավառում։

«Հայոց պատմությունն» ավարտվում է «Ողբք...» գլխով, որ մեծ հայրենասերի վշտակոծ զեղումն է Հայոց Արշակունյաց թագավորության անկման և կաթողիկոսությունը Գրիգոր Լուսավորիչի տոհմից խլվելու առթիվ։

Հնարավոր է, որ այս գլուխն սկզբնապես տարածված է եղել իբրև առանձին ստեղծագործություն. Ղազար Փարպեցին հիշում է, թե Մովսես փիլիսոփոսը «վախճանի ժամին ինչ ահավոր նզովքի գիր է թողել քահանայության գլխավորների վրա», առանց տեղյակ լինելու Պատմության մատյանի գոյությանը։

«Ողբքի» մեջ տեսել են ծայրահեղորեն մռայլ մի վերջաբան, որ իբրև սև վարագույր փակում է Հայոց պատմությունը։

Հայոց Արշակունյաց թագավորության անկումով վերացել էր երկրի պետական անկախությունը։ Լուսավորիչի սրբագործված տոհմից խլվելով՝ կաթողիկոսությունը ձեռքից ձեռք էր անցնում, և գայլոնն անցնում էր նրան, ով ավելի շատ կաշառք էր տալիս և ավելի հարմար էր գալիս Պարսից արքունիքի շահերին։ Սա շարքի սկիզբն էր ու պատճառների պատճառը։ Հետագա այլանդակություններն արդեն պայմանավորված են օտար տիրապետության սաստկացմամբ. «Թագաւորք տիրեալք խիստք և չարաչարք...»։ Այս պայմաններում բնու-

թյունն անգամ խռովել է հայ ժողովրդի գլխին, և տարերքները փոխել են իրենց բնությունը։

Գրողը սրո՞ւմ է վիճակները, կրակի վրա յո՞ւղ է լցնում։ Բայց չէ՞ որ նա հենց դրա համար էլ գրող է և ջանում է ազգի գիտակցությանն ու սրտին հասցնել մի դաժան ճշմարտություն այն մասին, թե քաղաքական անկախության կորուստը սկիզբն է ամեն տեսակ արհավիրքների։ Եվ այստեղ էլ, ի՞նչ հզոր ներքնատեսություն, նա ազդարարում է ամենակարևորի մասին. չգիտեմ՝ որոնք ողբամ, մեր երկրին արդեն վրա հասած աղետնե՞րը, թե՞ նրա՞նք, որ սպասվում են ապագայում («...զաշխարհիս եկեա՞լ աղետս, եթէ զապագայիցն ակնկալութիւն»)։

Եվ մեկ անգամ որ նշել է այս աղետների ու արհավիրքների պատճառը՝ օտար տիրակալությունը, անհնար է չվերհիշել այն խոսքերը, որ նա նվիրել է հայրենի պետականության, երախտավոր զահակալների փառաբանությանը։

Հայրենի թագավորները՝ «բնիկք և իմոյ արեան առուք և հաւատի հարազատք», երանելի ժամանակներ էին պարգևել հարազատ ժողովրդին։ Օտար թագավորների տիրապետությունն է, որ ապականել է հայրենի երկիրը։

Ողբով է ավարտվում Պատմությունը, սակայն այդ ողբի մեջ Պատմահայրը դրել է նաև մեծ երազանքը՝ հայրենի թագավորության վերականգնման, ազգային քաղաքական ու հոգևոր ինքնուրույնության վերահաստատման մասին։ Երազանքի իրականացման ճանապա՞րհը։ Դրա համար պետք է վերադառնալ Պատմության խորքերը, նորից հաղորդվել ազգի անցյալ հերոսների կյանքի ու գործի փառավոր վերհանումներին, նրանց ավանդներին ու օրինակներին։ Մի՞թե «Պատմության», որ է նաև հայոց կենսագրության, հենց ակունքներո՞ւմ չէր, որ Հայկը՝ մեր մեծ նախահայրը, ժառանգներին ասում էր՝ «կամ մեռցուք, և ազխ մեր ի ծառայութիւն Բելոյ կացցէ, կամ... մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»։ Եվ Հայկի ժառանգներից մեկի՝ հայոց մյուս անվանագիր նախնի Արամի մասին խոսելիս էլ Պատմահայրը նախ և առաջ նրա ըմբոստ ու ազատ հայրենասիրությունն էր ի ցույց հանել. «Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, ... լավ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ

տեսանել զորգիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց»։

Այստեղ էլ ես ընդհուպ մոտեցա Մովսես Խորենացու դասերի հարցին։

Ուրեմն, Պատմահոր առաջին ու վերջին դասը պայքարն է հայրենի պետականության, ազգային ինքնուրույնության համար, քանի որ պետական ու ազգային ինքնուրույնության կորուստը բերում է հայրենի երկրի ազատալից վիճակ ու ազգային հավաքականության փլուզում։

Հինգերորդ դարը, դատելով ժամանակի աղբյուրների տեղեկություններից, ըստ էության ապազգային գաղափարների տիրապետության շրջան է եղել, քրիստոնեության հովերի ու փոթորիկների ստեղծած եղանակի շրջան։ Քրիստոնեական եկեղեցու մթնոլորտը ծածկել էր առանց այն էլ դեռ չձևավորված, իր դեմքն ու կերպարանքը չունեցող ազգային գաղափարախոսությունը, բռնել նրա տեղը, ստանձնել նրա դերը և ժողովրդին տանում էր դեպի անդեմ ու անկերպարան մի ընդհանրություն, որին, իբր թե, լիուլի բավական էր լինելու մեկ միասնական հավատի սիեղերական տիրապետությունը։

Եվ ահա այս մթնոլորտը ոտք է դնում Մովսես Խորենացին, որը, ճիշտ է, ոտքի տակին ունի 5-րդ դարի հողը, քրիստոնյա քարոզիչ է, եկեղեցու գաղափարախոսության ներկայացուցիչը, սակայն նրա եկեղեցին ամենից առաջ հայոց եկեղեցի է, հայ ազգի միասնությո՛ւնն ապահովող, նրա ճակատագրի համար ինքնուրույն, ապահով ուղիներ փնտրո՛ղ հաստատություն։ Նրա պետականությունը հայկական պետականություն է։ Վերստին հիշենք նրա կերտած Վաղարշակ-Արտաշեսին, որն իր Մեծ Հայքի սահմանները գծել էր «զեղերք հայկական խօսիցս»։ Առավել հին հերոս Արամ թագավորն ուր հասնում էր, կարգադրում էր անխախտ պահել հայոց խոսքը «զիսօսս և զլեզուս հայկական», այսինքն՝ այդ պետության առաջին ու վերջին հատկանիշը հայոց լեզուն է, հայերեն խոսքը։ Պետք չէ ուրիշ սահման, միայն հայոց լեզվի տարածման եզերքը։ Պետք չեն նվաճված, ծուռվիզ հպատակ ազգեր ու ժողովուրդներ, միայն հայոց անխառն ու անտրոհ ամբողջությունը, հայոց լեզվի հպարտ ղողանջը՝ հավերժության ճանապարհին։

Կարիք կա՞ եզրակացնելու, որ Պատմահայրն այսքանով ուզում է ասել՝ մեր լեզո՛ւն է մեր պատմության հիմքը, խարիսխը, ողնաշարը։ Պահպանենք այդ լեզուն, ապահովենք նրա հաղթական, միահեծան գոյությունը մեր հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողի վրա, ապա թե ոչ, նրա ամենափոքր նահանջն անգամ կշլատի մեր պետության ուժերը, կխարխլի մեր ազգային հավաքականության ամբողջությունը։

Մեր լեզուն մեր պատմությո՛ւնն է, մեր ինքնության համապարփակ ապացո՛ւյցը,— սա Պատմահոր մարգարեությունն է և առաջին մեծ դասն իր ազգին։

Մեր լեզուն մեր պետությունն է, ուրեմն և պետական մարմինն էլ պետք է խարսխված լինի այդ լեզվի վրա։ Մեր պետությունն ի՛նքը պետք է լինի արյունակիցը, մեր ազգային մարմինը, շունչն ու ոգին անխախտ պահող վարչակարգը։ Նույնիսկ ազգային թագավորության շղթայից էլ առանձնացնում, հատուկ սիրո և պանծացման է արժանացնում այն տոհմը, որի արյունն անխառն հայկական է. «Ինձ այսոքիկ արք ի մեր թագաւորաց են սիրելիք, որպէս ընիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք... Բայց արդ ես առ օտարաց թագաւորութեամբն կացեալ՝ ընդ նոցայն զմերս ազգի ածից զկարգ թագաւորացն...»։ Ասում է՝ օտար թագավորների օրոք մեր ազգի, մեր արյունակից թագավորների ցանկն եմ կազմում։ Եվ սա ևս մեկ անխախտ նպատակով՝ բարձրացնելու ազգն ու ամեն ազգայինը։ Այստեղ հիշենք Պատմահոր ամենաոգեշունչ գործչին՝ Տիգրան Մեծին, որ դասերից մեծագույնն է ավանդում ժամանակի ու գալոց սերունդներին։ Այս Տիգրանին մեր բոլոր թագավորներից ամենամեծն ու ամենաերախտավորն է համարում այն պատճառով, որ նա «Արանց կացեալ զլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց» (Ա, 24)։ Նրան բոլոր նրանց, ովքեր ազգի գլուխն անցնելով՝ հովանավորում են անբարոյական տարրերին, իրենց շրջապատում են սահակներով ու ոզորմելիներով՝ նրանց հարևանությամբ քաջ ու սուրբ երևալու համար։ «Արանց կացեալ գլուխ»,— ա՛յս է գովելին, եթե նկատի առնենք, որ այն ժամանակ «այրը» և տղամարդ է նշանակել, և քաջ, և ազնիվ ու առաքինի, մի խոսքով՝ տղամարդը որպես իրեն հատուկ վեհ հատկանիշների հանրագումար։

Եվ սա ևս Պատմահոր դասն է ժամանակակիցներին ու հետագաներին, մանավանդ նրանց, որոնց բախտ է վիճակվում առաջնորդելու ազգը ի վերելք։

Գերքննադատության քրմերին անհամատեղելի էին թվում 5-րդ դարի հոգևոր մթնոլորտն ու Խորենացու ազգային գաղափարախոսությունը, և սա էլ լրացուցիչ հիմք էր դառնում պատմիչին հետագա ժամանակների ծնունդ համարելու համար։ Այսպիսով մոռացության էր տրվում այն հին ու հայտնի ճշմարտությունը, որ կարիքից է ծնվում հերոսը։ 5-րդ դարի հայկական իրականությունը դեռևս ապազգային էր, որ կարող էր տանել դեպի մեծագույն ողբերգություն, և չէր էլ փրկի արդեն սեփական գրով ստեղծված դպրությունը։ Ուրեմն ազգային զգացումը չկար, բայց բորբոքված էր նրա կարիքը, որովհետև տասնամյակների ընթացքում ստեղծված մատենագրությունը՝ թարգմանական ու ազգային, գիտությունն ու ընդհանուր լուսավորությունը բացել էին մարդկանց աչքերը։ Ավարայրի ու հետագա ազատամարտերի արտաքուստ կրոնական մղիչների խորքում եռում էր ժողովրդա-ազատագրական տենդը։ Այս ամենի բովում հասունացած հայրենասիրությունը չէր կարող չվերածվել ազգային այն գիտակցությանը, որը սոսկ մեկ ձև ու կաղապար պիտի ստանար, պիտի կազմավորվեր ու դառնար ազգն առաջ տանող գործոն։

Եվ այս ամենից, նախ և առաջ՝ մեծ կարիքից, առաջացավ, ծնվեց նրա հանճարեղ հանձնակատարը, որ Մովսես Խորենացին էր։ Եվ որովհետև ծնվեց ճիշտ ժամանակին, ապա դարձավ ժամանակի մեծ հերոսն ու հանճարեղ գաղափարախոսը։ Ստեղծեց մեր ազգային գաղափարախոսությունը, այդ գաղափարախոսությանն ի սպաս դրեց մեր պատմությունը, մեր անցյալ բարոյական մեծությունները, մեր ստեղծած նյութական ու հոգևոր մշակույթը։ Եվ այսքանն էլ՝ այն վսեմ գիտակցությամբ, որ «թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութիամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութիամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս և արժանի դրոյ յիշատակի»։

Սփյուռքահայ պատմաբան Հրանդ Արմենը շատ էր իրավացի, երբ պնդում էր, թե «Խորենացին հայ ժողովրդին հայ ազգը ձուլեց ըստ իր մտքի կաղապարին»։ Նրա մտքի կաղապարով ձուլված, նրա սրտի թրթիռները ժառանգած ազգը կարող էր և պետք է դիմանար հաջորդ պատմաշրջանների բերած ազգավեր աղետներին, ո՛չ միայն դիմանար, այլև ստեղծեր նոր արժեքներ, ծներ նոր հերոսներ, առաջ գնար քաղաքակիրթ ազգերի հետ համաքայլ։

Դրա համար ազգային կյանքի դրոշ էր բարձրացված, և այդ դրոշի վրա վառվում էին մեր պատմության փառավոր էջերը, մեր հերոս նախնիների սրբազան անունները։

Սակայն մոլորություն կլինի դրությունն այնպես ներկայացնել, թե Խորենացին շլացած էր իր ազգի անցյալ փառքով, չէր նկատում նրա պատմության հին ու նոր սովերները և ազգն առաջ էր մղում լոկ վարդագույն երազների հետևից։

Խորենացին ամենասթափ հայրենասերն էր և Պատմության առաջին իսկ էջերից մեկում, բողոքելով մեր նախնիների անիմաստասեր բարքի դեմ (Ա, 3.. «Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոցն նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ...»), մատնացույց էր անում բանականության ու լույսի ակունքները, որոնցից պետք է օգտվել լիաբուռ, եթե ազգն ուզում է անցյալը ծառայեցնել ներկային ու ապագային։ Հետագայում քանիցս նա խոսում է մեր մեծերի ու փոքրերի մեծ ու փոքր թերություններից և գիրքն էլ ավարտում է ողբով, որը հայրենի երկրի հասարակության ախտերի մերկացումն է ամենաանալաո կրքով ու անողոք արդարամտությամբ։ Հենց այս ևս նրա մեծագույն դասերից մեկն է՝ ուղղված ազգին՝ նրա ինքնամաքրման ու ինքնակատարելագործման շահախնդրությամբ։ Նա գիտեր, որ բարձրանալու համար նախ հարկ է թոթափել ոտքերին կպած աղտեղությունները, և դրանք էլ մատնացույց էր անում անխնա ու սրտացավ։

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջին էջը ծածկելով, եթե փորձես ի մի բերել նրա բոլոր դասերը, անպայման պիտի հիշես վերոհիշյալները, ապա նաև նրանք, որոնք ներծծված են այդ Պատմության խորքերը՝ իբրև նրան դարերի մեջ կենդանի պահող արյուն կամ ավիշ։

Նրա մեծագույն դասը, որ հրաման է և իմաստնագույն

խորհուրդ. մի ազգ, որ մոռացավ իր անցյալը, կկորչի կյանքի ճանապարհին, կուլ կգնա շար բախտի բացած ամեն տեսակ վիհերին։ Մի ազգ, որ չսիրեց իր գիրը, չապրեց իր իսկ լեզվով՝ ոչ թե իբրև խնկարկության առարկայով, այլ իբրև իր բնական ձայնով՝ առավոտյան աչք բացելուց մինչև գիշերվան աչք փակելը, նույնիսկ աչքերը փակ՝ երբ երազում պիտի մրմնջա իր սերը կամ աղոթի իր աստծուն... Մի ազգ, որ չունեցավ իր գրի կերպն ու իր լեզվի համանվագը, արդեն իսկ մեռած է ոտքի վրա։

Եվ այսպես, Մովսես Խորենացին 5-րդ դարում, հայ ժողովրդի պատմական ճակատագրի ամենադժվար շրջանում, իր ազգի համար ստեղծեց նոր մի հավատ՝ սեփական պատմության փառավոր էջերով և պանծալի հերոսներով ապրելու, սեփական լեզվի ու դպրության, լույսի և առաջադիմության, ազատ ու ինքնուրույն կյանքի համար պայքարելու, սեփական թերությունները վերացնելով մաքրվելու և կատարելագործվելու հավատը։ Հավատներից ամենալուսավո՞ր, ամենակենսատո՞ւ, ամենաճշմարի՞տ։

* * *

Մովսես Խորենացին ծնունդն ու խոշորագույն ներկայացուցիչն էր մի դարաշրջանի, երբ գրողն ու պատմիչը գծիկով էին միանում իրար, ոչ թե շաղկապով, և գրողը պատմիչ-պատմաբան էր, պատմաբանը՝ գրող։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Եթե մատենագրի պարտքն էր պատմությունը վերակենդանացնել, տալ իր ազգին, որպեսզի նա դրանով զորանա և անշեղ անցնի այսօրվա ու վաղվա իր ճանապարհը, եթե պատմական երկի առաջին ու մեծագույն խնդիրն էր ազդել ընթերցողի սրտի ու մտքի վրա, ապա այն պետք է տոգորված լիներ գեղարվեստական միջոցներով։

Խորենացու «Հայոց պատմությունը» միջնադարի մեր ամենաշատ ընդօրինակված, կարդացված, գլխատակի պահված, այնտեղ ջերմացած ու ջերմացրած մատյանն է ոչ թե նրա համար, որ դասագիրք է եղել, ամենօրյա ընթերցանության մատյան, այլ որովհետև նրա առաջին էջը բացողն այլևս չէր կարող պոկվել, մինչև շհասներ սրտակեղեք ու լուսահորդ Ողբին, որովհետև մեկ անգամ նրա հետ առնչվողն այլևս չէր կարող ապրել առանց նրա ուղեցույց լույսի։ Եվ սա՝ ամենից առաջ «Հայոց պատմության» գեղարվեստական հզոր շնչի շնորհիվ։

Եթե գեղարվեստական երկի ամենակարևոր դերն այն է, որ տիպական կերպարներ ներկայացնի տիպական հանգամանքներում, ապա հիշեցեք Հայկին ու Բելին, Արամին ու Տիգրանին, Վաղարշակին ու Տրդատին, Մեսրոպ Մաշտոցին կամ Սահակ ասպետ Բագրատունուն, մանավանդ այն հանգամանքները, որոնցում այդ կերպարներն են բացվում, ամրոզչանում, ցուցադրում իրենց առանձնահատուկ, միաժամանակ և տիպական բնավորությունները։

Մովսես Խորենացին իր գեղարվեստական ձիրքի ուժով վերածնել, վերակենդանացրել է տասնյակ ու տասնյակ հերոսների, որպեսզի նրանք մեր ազգին ուղեկցեն իր դժվար ճանապարհին։ Եվ նրանք իրենց այս մեծ խնդիրն անթերի կատարում են ահա ուղիղ հազար ու հինգ հարյուր տարի։

Խորենացու լեզվի ու ոճի գեղարվեստական առանձնահատկությունների մասին շատ է խոսվել։ Ցույց են տրվել պատկերավոր, նկարեն արտահայտչականության այն գաղտնիքները, որոնց հրաշալի տիրապետում էր Քերթողահայրը։ «Երգէր ձեռամբ»,— վարձակ պարուհու կախարդական ձեվերի այս նկարը նոր օրերի մեր մեծագույն բանաստեղծի նախանձն է շարժել։

Փորձենք եզրափակել այս զրույցը, որ կարելի է շարունակե՞լ ու շարունակե՞լ։

Սրանից շուրջ 1500 տարի առաջ Մովսես Խորենացին կառուցել է Հայոց պատմության բազմահարկ շենքը մի կուռ ու անթերի ճարտարապետությամբ, որը, դրսից դիտես թե ներսից, պատճառում է հիացմունք, բայց ավելի շատ պատկառանք, եթե դիտես, թե ինչպես ի՞նքն է իր հոյակերտի համար հայթայթել շինանյութեր, ի՞նքն է մշակել այդ շինանյութերը, ի՞նքն է համակառույցը բարձրացրել հարկ առ հարկ՝ իր իսկ նախագծած ճարտարապետական կերպարով, որը կանգուն է դարեր ի վեր և պիտի մնա՝ միշտ էլ պատճառելով նախնական այն հիացքն ու պատկառանքը, որոնց արդար վարձատրությունն է եղել երախտագետ սերունդների տված նվիրական անունը՝ Պատմահայր։

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ. ԱՌԱՆՇԱՀԻԿ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Վանի թագավորության շրջանից ի վեր Հայոց միասնական պետության հյուսիսային սահմանը Կուր գետն է եղել։ Դեռևս Արդիշտի Ա-ի որդի Սարդուր Բ (764—735 թթ. մ. թ. ա.) հզոր թագավորն էր իր պետությանը միացրել Արաքսի ու Կուրի միջև գտնված երկրները, և այդ ժամանակներից էլ այս վայրերի բնակիչներն ընդգրկված էին Հայաստան աշխարհի ժողովրդազոյացման բուռն ընթացքի մեջ։ Նշանակալից է, որ Սարդուրի սեպագիր արձանագրություններում (Վարդենիսի շրջանի Ծովակ գյուղում և Մարտունու շրջանի Ծովինար գյուղ-ամրոցատեղում) հիշատակված են կենտրոնական պետությանը միացված երկիր-նահանգները, և նրանց շարքում՝ Ագախունին ու Էտիունին, որոնք, ինչպես հայտնի է, հետագայի Արցախի և Ուտիքի նախնական կամ խուռիերեն ձևերն են։

Մովսես Խորենացին, Արտաշես Ա-ի (նրա կարծիքով՝ Վաղարշակի) պետական ձեռնարկումների մասին խոսելիս, նշում է, որ Հայոց միասնական պետության սահմանների մեջ են մտել միայն հայախոս նահանգները, և այս ժամանակ էլ դարձյալ մեր երկրի հյուսիսային սահման է հանդիսացել Կուր գետը։

Օտար հեղինակներից առաջինը Սարաբոնն է հաղորդում հանգամանալից տեղեկություններ Մեծ Հայքի բնակչության ազգագրական պատկերի մասին, և այդ տեղեկություններից, մեր հարցի կապակցությամբ, ամենակարևորն այն է, որ հույն մեծ աշխարհագետը ևս Արտաշեսի պետության հյուսիսային սահման է ճանաչում Կուր գետը, ապա հաղորդում, որ այդ սահմանից ներս բնակչությունը խոսում է մեկ ընդհանուր

լեզվով՝ հայերեն։ Այս ապահովապես նշանակում է, որ Արցախը և Ուտիքը, որոնք բռնում էին Կուրի ու Արաքսի միջև ընկած ամբողջ տարածքը՝ այդ գետերի միախառնվելու վայրից մինչև Սևանի արևելյան ափերը, Արտաշես Ա-ի օրերում մ. թ. ա. երկրորդ դարի սկզբին, արդեն հայ բնակչություն ունեին։

Մեծ Հայքի թագավորության հետագա դարերի պատմության մեջ Ուտիքն ու Արցախն արդեն շատ կարևոր դեր էին խաղում իրենց ծայրամասային-սահմանապահ նախարարություններ, որոնք հայոց քաղաքական ու մշակութային ազդեցությունն էին տարածում հարևան երկրամասերի, հատկապես Աղվանք երկրի տարացեղ բնակչության վրա։ Աղբյուրներից հայտնի է, օրինակ, որ աղվանական ցեղերին քրիստոնեացրել են Արցախ-ուտիքյան հայաշխարհի քարոզիչները, և դրա շնորհիվ էլ ամբողջ միջնադարում ու հետագա ժամանակներում Աղվանքի եկեղեցական թեմերը միշտ ենթակա էին Հայոց եկեղեցու նույն Արցախ-ուտիքյան թևի նվիրապետությանը։

Ինչ վերաբերում է հիշյալ նահանգների նախարարական տների ծագումնաբանությանը, ապա այս առթիվ ևս պահպանվել են աղբյուրագիտական ուշագրավ տեղեկություններ։ Օրինակ, Մովսես Խորենացին, նկատի առնելով հայկական հնագույն ավանդությունը, հայտնում է, որ Հայոց միասնական թագավորության կարգավորման իսկ օրերից այս հայաշխարհում կուսակալ էր կարգված Առանը, որը սերված էր մեր ազգի ավանդական նախնի Հայկի ժառանգներից, և Առանից էլ սերվել են իշխանական-նախարարական այն տները, որոնք տիրություն էին անում Արցախում, Ուտիքում ու հարևան Գուգարքում։

Կարծում ենք՝ ոչ մի նշանակություն չունի այս տեղեկության ավանդական ակունքը։ Կարևորն այն է, որ սկզբնապես էլ հայազուն են եղել այս աշխարհի տերերը, և հավանական, նույնիսկ անառարկելի է համարվել նաև նրանց ծագումը մեկ ընդհանուր նախահորից. Հայկի սերունդներից էր Առանը, Առանից էլ սկիզբ առան եոյակ նախարարական տները, որոնցից երկուսը՝ Արցախինը և Ուտիքինը, ամբողջ միջնադարում ճակատագրով այնպես սերտորեն կապված էին մեկմեկու,

որ պարսկական ու արաբական դժնդակ տիրապետությունների ներքո էլ չքաժանվեցին և, պարսկերենի ազդեցությամբ, կոչվում էին Առանշահիկներ, այսինքն՝ Առանի շահիկներ-տերեր։

Ծագումնաբանական այս ավանդությունը միակ ճշմարիտն է համարվել միջնադարյան մեր պատմագրության կողմից։ Մովսես Կաղանկատվացին, օրինակ, այդ նախարարական տները ճանաչում էր իբրև «զնախնեաւն ազգս Հայկազնեայց զԱռանշահիկս», իսկ Կիրակոս Գանձակեցին՝ «ի զարմից Հայկայ, յազգականութենէն Առանայ»։

Արշակունյաց թագավորության վերացումից հետո Պարսից արքունիքը հպատակ Հայոց երկիրն ու Անդրկովկասի մյուս շրջանները կառավարում էր մարզպաններով։ Մեկական մարզպանություններ էր ստեղծել կենտրոնական Հայաստանից ու Վիրքից, Հայքի հյուսիս-արևելյան երկու նահանգները՝ Ուտիքն ու Արցախը, միացրել էր Աղվանքի հետ, որը Կուրից հյուսիս ընկած երկիրն էր, և կազմել էր մի ուրիշ մարզպանություն։ Իսկ հայոց ծայր-արևելյան նահանգ Փայտակարանը կամ հին Կազբքը, որ Արաքսի աջափնյակի վերջն էր կազմում՝ Կասպիական ծովի հարավ-արևմտյան ափին, կցեց Ատրպատականի կուսակալությանը։

Այսպես էր, ուրեմն. հին Մեծ Հայք երկիրը հինգերորդ դար ոտք դրեց անթագավոր, վարչաքաղաքական միասնությունը կորցրած, բռնակալների միջև բաժան-բաժան արված։ Եթե նրա արևմտյան նահանգները, թեկուզև բյուզանդական կուսակալներով կառավարվող, ինչ-որ չափով միասնական էին՝ իբրև հայկական երկրամաս, ապա արևելյան կամ պարսկահպատակ մասը նորից բաժան-բաժան արվեց, հյուսիս-արևելյան նահանգները՝ Ուտիքը, Արցախն ու Փայտակարանը, ստանձնեցին-կցվեցին վարչական ուրիշ միավորների։ Նպատակը մեկն էր և հասկանալի՝ խախտել արդեն քաղաքական միասնությունը կորցրած Հայքի ազգային ու մշակութային ինքնուրույնությունը և հետո նրա դիմադրուկ նահանգներում ու ջավառներում տարածել մազդեզանց կրոնը, որն էլ իր հերթին հիմք պետք է դառնար պարսկացման համար։

Քաղաքական այս ծրագրի մի կետն էր, որ հեշտությամբ իրականացավ։ Ատրպատականին միացված Փայտակարանը հեշտությամբ ձուլվեց պարսկական միջավայրին, և հինգերորդ դարի վերջում հայ հեղինակները միայն նրա վաղեմի հայկականությունն էին հիշում։

Պարսից արքունիքը նույն ճակատագիրն էր պատրաստել նաև Արցախի և Ուտիքի համար, սակայն չարաչար սխալվեց։ Բուն Աղվանքի հետ միասին նրանք, իբր թե, մեկ ամբողջություն էին կազմում՝ «Աղվանք» (պարսկերեն՝ «Առան») մարզպանությունը։ Սակայն Վարդանանց ապստամբության ժամանակ նրանք կենտրոնական Հայաստանի հետ կռվում էին Պարսից բռնապետության դեմ, ապստամբությունից հետո էլ դարձել էին պարտիզանական պատերազմի թեժ օջախներ, իսկ դարավերջին, Վաղարշ արքայի օրոք (484—488 թթ.), ընձեռված մասնակի արտոնություններից օգտվելով, հենց մարզպանության ներսում ձեռք բերեցին իրենց վարչաքաղաքական ինքնուրույնությունը և ստեղծեցին մի պետական ձույլ միավոր, որը պատմությանը հայտնի է որպես Աղվանից կամ Վաչագան Բարեպաշտի թագավորություն։

Բայց ինչո՞ւ «Աղվանից», եթե այն ընդգրկում էր հայկական Արցախ և Ուտիք նահանգները։

Սա էլ ունի իր հետաքրքիր բացատրությունը, որ հաստատվում է աղբյուրներով։

Ասացի, որ 428-ից հետո Աղվանից, Արցախից և Ուտիքից կազմվել է մեկ մարզպանություն։ Նրա կենտրոնը կամ մարզպանի նստավայրն էր Ջող բերդաքաղաքը հին Աղվանքի հյուսիսային եզրին (հետագայի Դերբենդը)։ Սկզբնապես այս նոր միավորը, առավել մեծ բաղկացուցչի՝ Աղվանքի անունից կոչվում էր Աղվանքի մարզպանություն, Աղվանք, Աղվանից երկիր (պարսիկների լեզվով՝ Արան)։ Նատ չանցած տրոհվեց միավորը. բաժանվեցին հայկական նահանգները, բայց այլևս միասնություն չկար նաև բուն Աղվանքում։ Այստեղ միասնական թագավորության կորստից հետո ցլուխ բարձրացրած ազգագավառները բաժան-բաժան դարձան, և դարի երկրորդ կեսում Կուրի ձախափնյակը հայտնի էր միայն իր բաժանելիներով. արևելյան ձախափնյակը՝ Բաղասական, արևմտյան ձախափնյակը՝ Լփինք կամ Լփենաց երկիր, հյուսիս-արևելյան մասը՝ Ջողա կամ Մազքթաց աշխարհ... Այս ազգագավառների անուններով կնքված ձախափնյակում այլևս ոչ մի անե-

լիք չուներ «Աղվանք» ընդհանրական անունը։ Այն կպած մընաց Ուտիք-Արցախ հայաշխարհին՝ ցույց տալով միայն և միայն որոշակի երկրամաս և ոչ մի նշանակություն չունենալով այդ երկրամասի բնակչության ազգագրական պատկերի համար։ Եվ այդ հավելյալ կամ հատկանշն անունն այնքան հիմնավոր էր կպել հայկական նահանգներին, որ դարի վերջում նրա անհեթեթությանը դեմ առնելով՝ Մովսես Խորենացին փորձեց մի տրամաբանական բացատրություն տալ զարմանալի առեղծվածին։ Մեր Պատմահայրը սիրում է տեղանունները կապել հայոց ավանդությունների հերոսներին, նրանց գործերին ու անուններին։ Այսպես ասպարեզ քաշվեցին Սիսակն ու նրանից սերված Առանը, որոնց հեռավոր նախնին Հայկ նահապետն է եղել։ Բացատրություն «ստացավ» նաև «Աղուանք»— «Աղվանք» տարբերակը. Սիսակն աղու-անուշ բնավորություն ուներ, դրա շնորհիվ էլ նրան բաժին ընկած հայաշխարհը կոչվեց «Աղուանք» («և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»)։ Եվ որովհետև Աղվանք աշխարհում իշխելու էր Սիսակից սերված Առանը, սրանից էլ՝ երկրամասի հավելյալ Առան անունը։

Իրավացի՞ էր Մովսես Խորենացին, լուրջ հիմքեր կայի՞ն ավանդության և նրա մանրամասների համար։ Պատմահայրը երևի այս հարցերին այնքան էլ կարևորություն չի տվել։ Նրա համար ամենակարևորն այն էր, որ իր տեսած Ուտիք-Արցախ երկրամասի բնակչությունը հայկական էր (նրանց հյուսիսային սահմանը Կուր գետն էր, որ անցնում էր «զեզերք հայկական խօսիցս»), և հայազուն էին նրանց իշխանական-նախարարական տները։ Հայկական մի աշխարհ՝ իր հայ իշխանավորներով։ Եվ այս ամենակարևոր ճշմարտության կողքին տեղված անհեթեթ անունները նա փորձում էր բացատրել, դնել տրամաբանական հյուսվածքի մեջ։

Հետագա դարերը պատմաաշխարհագրական խոշոր ավերածություններ չկատարեցին։ Երբեմն փորփրվում, հայտնաբերվում էին հին անվանումները։ Դրանով պիտի բացատրել, որ, օրինակ, արաբները, որոնց համար անդրկուրյան աշխարհում իրական-պատմական էին իրենց ստեղծած ամիրայությունների անունները (Դերբենդ, Շաքի, Շիրվան), այդ

աշխարհը հաճախ էր կոչում Առան՝ չմոռանալով, սակայն, որ կա նաև մի այլ Առան՝ աջափնյա հայաշխարհը։

Իսկ հայկական աղբյուրներում, հատկապես Մովսես Կաղանկատվացու անունով մեզ հասած «Պատմութիւն Աղվանից աշխարհի» երկում, Աղվանքն ընդգրկում է Կուրի ու Արաքսի միջագետքը, այն Հայոց աշխարհ է, որի բնակչությունը հայկական է, իշխանական տները՝ «զնախնական ազգս հայկաղնեայց», եկեղեցին՝ հայ լուսավորչական, չար բախտով մայր կաթողիկոսությունից կտրված, սակայն միշտ նրան ենթակա, նրա հետ կապված, նրանից անբաժան։

Մեր աղբյուրները երկրամասին տալիս են նաև ուրիշ անուններ. Աղվանից կողմանք, Արևելք, Արևելից կողմանք, մանավանդ՝ Հայոց արևելից կողմանք («կողմանք» գրաբարում նշանակում է «երկրամաս», «նահանգ»), այսինքն՝ Հայաստանի արևելյան երկրամաս, քանի որ Արցախ-Ուտիքյան հայաշխարհը կամ Հայաղվանքը կազմում էր Հայք կամ Հայաստան երկրի արևելյան մասը։

Հինգերորդ դարի վերջին քառորդում, Պարսից Վաղարշ թագավորի հանդուրժողական քաղաքականությանն ի պատասխան, այս տարանուն հայաշխարհը առավել միավորվեց, բռունցքվեց, ստեղծեց իր ինքնուրույն պետականությունը՝ ժամանակի թագավորական իշխանության բոլոր հատկանիշներով։ Առանձնահատուկ Վաչագանն էր թագավորության հիմնադիրը, եռանդուն, շրջահայաց ու անձնվիրորեն հայրենասեր մի գործիչ, որի շուրջն ավանդազրույցներ ու հեքիաթներ պիտի հյուսեին երախտագետ սերունդները։

Վաչագան թագավորի գործունեության պատմությունը, իբրև ժամանակակցի ու ականատես մարդու արժանահավատ շարադրանք, հետագայում մտել է «Աղվանից աշխարհի պատմության» մեջ և նկատելիորեն առանձնանում է այդ գրքի ընդհանուր հյուսվածքից։

Ժամանակագրի վկայությամբ՝ Վաչագանին թագավոր է ձեռնադրել Վաղարշ արքայից արքան։ Սա, հավանաբար, ասված է՝ նորելուկ թագավորության վարկը բարձրացնելու նպատակով... կամ գուցե Վաղարշը նրան պարզապես տվել էր անսովոր լիազորություններ, որովհետև պատմության մի հատվածից տեղեկանում ենք, որ Վաչագանին ենթակա են

եղել նաև անդրկուրյան երկրի գործակալները։ Այդպիսի ենթակայության տակ էր, օրինակ, բուն Աղվանքի գահընկեց արված թագավոր Արտավազդի որդի Խոճկորիկը, որը Վաչագանի օրերում Ցռի քաղաքի գործակալն էր։

Վաչագանը թագավոր էր դարձել իր երկրամասի շուրջ Լրեսուն տարվա անիշխանությունից հետո։

Մատենագիրն իր հերոսին հենց այն գլխից ներկայացնում է ամենավսեմ բարեմասնություններով. «քաջարությամբ իմաստուն և վարժ խոհականությամբ, բարձր և վայելուչ հասակաւ»։

Վաչագանն է՛լ այն մեծատուններից էր, որոնք բռնակալների կողմից մոգության էին դարձվել, սակայն գաղտնի պահում էին իրենց հարազատ հավատը։ Գահ բարձրանալով՝ նա հրաժարվում է կրակապաշտությունից, վերստին ընդունում իր պապերի լուսավորչական հավատը և դառնում նրա պաշտպանն ու եռանդուն տարածողը, իր երկրի աննախընթաց լուսավորիչն ու շինարարը։ Եվ հենց այս ծառայությունների ու բարձր արժանիքների համար էլ ժողովուրդը նրան կոչեց Վաչագան Բարեպաշտ։

Ճիշտ են ասել, թե ժամանակը ծնում է իր հերոսին։

Վաչագանը գահ բարձրացավ երկրի բազմամյա անիշխանությունից ու ավեր-ավարից հետո։ Արևելից կողմանց Հայությունն ավելի քան դարուկես առաջ քրիստոնեություն էր ընդունել մայր Հայրենիքի հետ, իր լեռներն ու խորաձորերը, դաշտերն ու անտառները լցնել հայաշունչ եկեղեցիներով ու վանքերով։ Սակայն Պարսից տիրապետության մեկ դարու մղձավանջը երկիրը լցրել էր կռապաշտների սանձարձակ ասիմիլյատորներով։ Գլուխ էին բարձրացրել նաև հին հեթանոսական դավանության տարատեսակները։ Իսկ ամենահավորը՝ երկրամասը կտրվել էր մայր ժողովրդի ամբողջությունից, նետվել այլացեղ և ուծացնող մի ոլորտ, որտեղ ինքնուրույնության պահպանությունը հնարավոր պիտի լիներ միայն գերմարդկային ջանքերով։ Երկրամասը գտնվում էր ճակատագրական ճամփաբաժանի առաջ և կարիք ուներ հզոր մի առաջնորդի, որը կարողանար ընտրել ճիշտ ճանապարհը, աննահանջ քայլել առջևից ու իր հետևից տանել ժողովրդի զանգվածները։ Արևելից կողմանց Հայության ձեռքին էր նաև

ազգային ինքնապաշտպանության հզորագույն զենքը՝ մեսրոպատառ գիրը։ Բացվել էին առաջին դպրոցները, սկիզբ էր դրվել լուսավորական-կրթական մի հզոր գործ։ Սակայն ապստամբությունների ու օտարների ասպատակությունները, դարձյալ պարսից ասիմիլյատորական խորշակները կանգնեցրել էին նրա առաջընթացը և կարող էին նա տալ ու տանել ուրիշ ուղղությամբ...

Իշխանների ու գավառապետների, ազատների ու հողատերերի տեղայնական մանր շահերն էլ մի երրորդ կողմից էին հյուծել երկիրը։ Անհրաժեշտ էր հզոր մի ձեռք, որ կարողանար նրանց միավորել, դնել պետական կարգ ու կանոնի տակ, ստեղծել կայուն օրենքներով գործող իշխանություն, որպեսզի մի գյուղապետ կամ տերտեր, գլուխ բարձրացնող ամեն մի պատահական ուժ այլևս չկարողանար շարիք դառնալ երկրի ու ժողովրդի գլխին։

Մի խոսքով՝ ժամանակը հրամայական պահանջ էր դնում, և պետք է ծնվեր այդ պահանջների կատարողը։ Վաչագան թագավորը դարձավ իրեն ժամանակի պահանջով առաջարկ եկած գործիչ։

Անկախ պետականության ժամանակներում թագավորը (օրինակ, Արշակունի Պապը) իր ձեռքն էր հավաքում երկրի ուժն ու իրավունքները՝ եկեղեցուն տալով գործունեության և իրավունքի սահմանափակ ոլորտ։

Վաչագանը համոզվել էր, որ օտարի տիրապետության տակ գտնվող երկրում անհրաժեշտ է ստեղծել ուրիշ ուժեր, հզորացնել դիմադրության ու ազգային ինքնապաշտպանության ուրիշ կռվաններ։ Նա տեսել էր, թե պարսկացման դեմ ի՞նչ անհաղթահարելի ուժ է կրոնը, որն իր հոգում ունեցող շարքային նիզակակիր ռազմիկը գնում է դրահապատ փղերի դեմ։ Նա զգում էր, որ վտանգված է մայրենի լեզուն, և այն արմատավորելու, գրահապատելու ամենալավ միջոցը մայրենի դպրության տարածումն է։ Եվ իր հայրենասիրական գործունեությունն սկսեց եկեղեցու շենացումից ու դպրության խանդավառ տարածումից։

Նախ և առաջ նա վերացրեց երկրի անմատչելի վայրերում և հատկապես Կուրի ափերին բուն դրած մոլի աղանդները։ Անհաշտ պայքար սկսեց կռապաշտության դեմ՝ քարոզներով,

հանախ էլ բռնությամբ քրիստոնեական հավատին դարձրեց բոլոր նրանց, ովքեր անկյունության տարիներին ենթարկվել էին մոգության։ Այդպես էր վարվում հատկապես թե՛ տերության մեծավորների նկատմամբ։

Այնքանից հետո նա ցնծում էր ոչ այնքան իր թագավորական փառքի ու պատվի համար, որքան սկսած գործի հաջող ընթացքի և հատկապես նրա համար, որ նախարարները հանկարծ վերադառնում էին նախնյաց հավատին, միաբանվում իրար հետ, եկեղեցու և թագավորության շուրջը։ Ապա կառուցում է բազմաթիվ եկեղեցիներ, ըստ ժամանակագրի վկայության՝ տարվա օրերի թվով, այսինքն՝ 365 կամ 366. «ըստ թուոց աւուրց տարւոյն եկեղեցիս միայն Բարեպաշտն Վաչական շինեաց յԱրենեալս։ Սրբացման կենտրոն են դառնում ազգային եկեղեցու այնպիսի գործիչներ, ինչպես Գրիգոր Լուսավորիչն ու նրա թոռ Գրիգորիսը, Պանդլեհոն բժիշկն ու Դիզափայտի նահատակները, հայոց գրի մեծ արարիչ Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները։ Ուշագրավ է, որ Մաշտոցն այստեղ սրբացվում է, գրերի հիմնադիր լինելուց բացի, նաև որպես հայ քրիստոնեական կրոնի մեծ ուսվիրա։

Թագավորը ոչ մի անգամ ադիթը բաց չի թողնում ժողովրդի կրոնական ջերմեռանդությունը բորբոքելու համար։ Այդ նա էր, որ իր ներկայությամբ ու անմիջական մասնակցությամբ բարձրացնում էր եկեղեցական ծեսերի հարգը։ Տեղական սրբություններին զուգորդվում էին նաև բերդերը։ Հավանաբար ո՛չ առանց թագավորի հանձնարարության՝ Հայաստանի կենտրոնից Արցախի Դարահոչ (թե՛ Քարահոչ-Քարահունչ) գյուղն են բերվում սուրբ Գրիգորի և Հռիփսիմե ու Գայանե կույսերի նշխարները։ Եվ իր Գյուտական (այժմյան Մարտակերտի շրջանում) սրբունի գյուղից այստեղ է շտապում թագավորը՝ թագուհու հետ, երկրի բոլոր նախարարներով ու մեծամեծներով, հոգևոր պետերով ու ծառայողներով հանդերձ։

Թագավորի ու երկրի մնացած մեծամեծների մասնակցությամբ այսպիսի ցնծալից արարողություններ են լինում նաև Արցախի ուրիշ վայրերում, հատկապես նշանավոր Ամարասում, ուր թաղված էր երկրամասի առաջին եպիսկոպոս Գրիգորիսը։ Թագավորը հրովարտակներով իր տերության ամեն մի բնակչի պարտականություն է դարձնում պաշտել հայոց սրբերի մասունքներն ու հիշատակները, լինել քրիստոնեական կրոնի նանդուն պաշտպանը։

Ժամանակագիրն առանձնահատուկ ջերմությամբ է նկարագրում Գրիգոր Լուսավորիչի թոռ Գրիգորիսի նշխարների գյուտը ու նրանց շուրջը տեղի ունեցած ցնծալից արարողությունները։

Վաչագան Բարեպաշտի հոգածության կենտրոնն էր դարձել դպրոցը։ Նա առաջին հերթին դպրոցներ էր բացում այն երեխաների համար, որոնց ծնողները նախկինում աղանգավորներ էին եղել։

Վաչագանն այնպես իր սրտին մոտ էր պահում դպրոցն ու երեխաների դաստիարակությունը, որ երբ որևէ գյուղ էր գնում (նույնիսկ սրբերի հիշատակը հարգելու համար), անպայման մտնում էր դպրոցատունը, իր շուրջն էր հավաքում մանկանց, առաջարկում բարձրաձայն կարդալ։ Եվ նրանց առաջադիմությամբ ուրախանում էր ավելի, քան եթե մեծագույն հարստություն գտներ։

Մատենագիրը խանդավառությամբ է նկարագրում Վաչագան թագավորի լուսավորական ջերմեռանդ գործունեությունը, նրա հայրական հոգածությունը դպրոցական մանկանց նկատմամբ։ Այդ նկարագրությունից մեր առջև հառնում է Բարեպաշտ թագավորը՝ իր երկրի հասունացող սերնդի կրթության ու դաստիարակության մեծ գործով խանդավառ։ Ահա նա դպրոց է գալիս, իր շուրջն է հավաքում երեխաներին և մեկի ձեռքը դիրք տալով, մյուսին՝ պնակիտ (գրելու կամ նկարելու տախտակ), առաջարկում է միասին, միաբան ու բարձրաձայն կարդալ։ Երեխաներն իրենց անարատ շուրթերով հեզում են ոսկեղենիկ հայերենը, և նրանց ինքնավստահ ու մեծաձայն ընթերցանությունն արձագանք է տալիս Արցախամուր աշխարհի բոլոր անկյուններում՝ հնավանդ լեռնաստանը լցնելով արդեն գրի ու դպրության փոխված մայրենի լեզվի հզոր ելևէջներով։

Կարևոր է, որ Վաչագան Բարեպաշտի լուսավորական-կրթական գործը դատարկ տեղում չէր ծավալվում։ Նրանից առաջ ևս Ուտիք ու Արցախ աշխարհներն ընդգրկված էին դարակազմիկ այն հոգևոր. վերափոխությունների ոլորտներում, որոնց հեղինակներն էին եղել հայոց առաջին կաթողիկոս Գրի-

գոր Լուսավորիչն ու նրա թոռ Գրիգորիսը, Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները...

Մեսրոպ Մաշտոցը, Արևելից կողմանք գալով, դպրոցներ էր հիմնել ու անխոնջ պայքարել հեթանոսության վերջին մնացորդների և օտար հավատալիքների դեմ։ «Աղվանից աշխարհի պատմության» հաղորդած տեղեկություններին համաձայն՝ Մաշտոցի և նրա աշակերտների գործունեությունը հիմնականում ծավալվել է Արցախի Մեծառանք, Մեծկվենք, Հաբանդ գավառներում և Ուտիքի Գարդմանում։

Վաչագանը չէր կարող մոռանալ այս բոլորը։ Նրա համար սրբազան խորհրդատուներ էին նախնյաց հիշատակներն ու ավանդները։

* * *

Այս բոլորի հետ միասին Վաչագան թագավորը չէր մոռանում երկրի ղեկավարությունը։ Նա տեր էր կանգնել համարյա խարխլված մի երկրի ու պետականության։ Նրա շուրջն ամենուր անկարգություն էր, և օտար կեղեքիչների ու տեղական իշխողների կամայականությունն էր տիրական։ Նրա պետական գործունեությունը, հասկանալի է, բոլորի սրտով չէր։ Մանավանդ նրանց, որ անիշխանության տարիներին անսանձ ու անօրեն վարքով էին ապրել։ Պարզ է, որ նրանցից շատերի շահերն էլ էին նեղվել թագավորի նորամուծություններից։ Բողոքում էին, դանդաղվում։ Եվ թագավորն ստեղծված դրությունից ելնելու միակ ելքը տեսնում էր բոլորի համար անսասան օրենքներ ստեղծելու մեջ։

Սակայն, ըստ երևույթին, դրա համար մեծ նախապատրաստություն էր պետք։ Նախ, թագավորն ինքը կարիք ուներ իր համար շատ հարցեր պարզելու։ Ապա հրապարակելիք օրենքների համար նրան պետք էին հեղինակավոր անուններ, որոնց ուղեկցությամբ այդ օրենքները կլանք պիտի մտնեին և դառնային առավել ազդեցիկ ու անառարկելի։

Դրա համար էլ նա մեկը մյուսի հետևից հարցումներով լի թղթեր հղեց իր ժամանակի հեղինակավոր մարդկանց.

ա) Գիտնական երեց Մատթեին, այն ականավոր եկեղեցականին, որը Գրիգոր Լուսավորչի և սուրբ կույսերի մասունքներն Արցախ էր տեղափոխել Հայոց մայրաքաղաքից և բախտ էր ունեցել զրուցելու Հովհան կաթողիկոսի հետ,

բ) Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսին, որի գրած պատասխանը պահպանվել է ոչ միայն Կաղանկատվացու գրքում, այլև միջնադարյան ուրիշ ձեռագրերում,

գ) Պետրոս Սյունեցի եպիսկոպոսին։

Պետրոս Սյունեցու և Վաչագան թագավորի թղթակցության առթիվ վկայություն է պահպանվել Ստ. Օրբելյանի պատմության մեջ, ինչպես նաև ձեռագիր հնագույն մատյաններում, որոնցից է նաև պահպանված թղթե ամենահին հայերեն ձեռագիրը 981 թվականից։

Հավանաբար, նաև ուրիշ ականավոր մարդկանց էր դիմել Վաչագան թագավորը։ Նրա թղթերը հարցումներ էին եկեղեցական ու աշխարհիկ բովանդակությամբ։ Բարեպաշտ թագավորին մտահոգում էին տասնյակ ու տասնյակ հարցեր, որոնց պատասխանները նա ուզում էր իմանալ ոչ թե մեկ, այլ մի քանի մարդուց, որպեսզի իրար կողքի դնի, համեմատի ու գտնի ամենաճիշտն ու ամենաօգտակարը։ Նա ցանկանում էր իր երկրի համար օրենքներ հրապարակել և երազում էր, որ այդ օրենքներն անթերի լինեն։

Եվ ահա գարնանային մի օր («յամսեանն Մարերի՝ որ օր երեքտասան էր ամսոյն») Վաչագան թագավորի կամքով Արցախի Աղվեն ամառանոցում գումարվում է «բազմամբոխ ատեան», որը պետք է քններ և ընդուներ նորաստեղծ թագավորության օրենքները։

Պահպանվել է ժողովի մասնակիցների ցուցակը, որից երևում է, որ մասնակիցները հիմնականում Ուտիքի և հատկապես Արցախի աշխարհիկ տերերն են եղել, ազատ մարդիկ (ազնվականներ) և նահապետները։ Հոգևորականներն էլ մեծ մասամբ այսրկուրյան Աղվանքից էին։ Անդրկուրյան Աղվանքի հայտնի բնակավայրերից իրենց ներկայացուցիչներն ունեին միայն Կապաղակը՝ բուն Աղվանքի առաջին մայրաքաղաքը, և Ցոր քաղաքն իր քորեպիսկոպոս Շմավոնով։

Աղվենի ժողովի գումարման տարեթվի առթիվ մեր պատմագիտության մեջ հրապարակվել են հակասական կարծիքներ։ Մեկ այն գումարված էր համարվում 4-րդ դարում, մեկ էլ՝ շատ ուշ, 6-րդում։ Սակայն աղբյուրագիտական բազմա-

զան և միանգամայն հավատի նյութերի քննությամբ արդեն պարզված է, որ աջ ու ձախ ընկնելու կարիք չկա, քանի որ այն տեղի է ունեցել 5-րդ դարի վերջում կամ 6-րդի սկզբին, այսինքն՝ Վաչագան Բարեպաշտի գահակալության օրոք, նրա ղեկավարությամբ։

Վաչագանի օրենքները կամ կանոնները 21-ն են և աղբյուրներում կոչվում են նաև «Սահմանադրութիւն կանոնական»։ Հետազոտողներն ապացուցել են, որ դրանք ստեղծվել են նախընթացի երկու հայկական աշխարհիկ ու եկեղեցական ժողովների (Աշտիշատի և Շահապիվանի) ընդունած կանոնների ազդեցությամբ, սակայն միաժամանակ ինքնուրույն ու ինքնատիպ մի ընդհանրություն են՝ ժամանակի հայկական իրականության, հատկապես Հայոց արևելից կողմանց քաղաքական ու տնտեսական կյանքի առանձնահատուկ պայմանների դրոշմներով։

Այդ օրենքները Հայոց արևելից կողմանց սոցիալ-տնտեսական հարաբերությունների քննության համար բացառիկ արժեք են ներկայացնում։ Նրանց մեջ անմիջական արտահայտություն են գտել 5-րդ դարի Արցախի և Ուտիքի հայ բնակչության հասարակական կյանքի տարբեր բնագավառներն իրենց առարկայական դրսևորումներով։ Նրանք հաստատուն կարգ ու կանոնի սահմանների մեջ են դնում եկեղեցական դասի տարբեր աստիճանների ներկայացուցիչների փոխհարաբերությունները։ Ընդունվում են պարտադիր հասարակական նորմեր բոլոր մարդկանց համար՝ թագավորազուններից մինչև ընչազուրկ շինականն ու անաշխարհիկը։

Հասարակարգի կյանքի մասին խոսող ոչ մի փաստաթուղթ չի կարող այնքան առարկայական ներկայացնել այդ հասարակարգի ներքին էությունը, որքան ժամանակի հարկային քաղաքականությունն արտացոլող փաստաթուղթը։ Վաչագանի կանոններին այդ տեսանկյունից նայելով, նրանց մեջ տեսնում ենք ժամանակի համար զարմանալի մի մտահոգություն՝ այնպես անել, որպեսզի հասարակական բոլոր խավերն էլ գոհ մնան իրենց վիճակից։ Ի՞նչ արժեր հենց միայն շինականից ըստ կարողության հարկեր գանձելու կարգը (կանոն Դ), եթե նկատի առնենք, որ այս ամենն արվում էր Սասանյան Պարսկաստանի հարկային դաժան քաղաքականության,

կրոնական անլուր հալածանքների մղձավանջից հետո, երբ նրանք, մի կարճ դադար տալով՝ վերստին պիտի կրկնվեին, և դրան էլ պիտի հաջորդեր համաձարակի պես տարածված արաբական տիրապետության ծանր մղձավանջը։

Վաչագանի կանոններով պետական ու եկեղեցական հարկերը պարտադիր էին հասարակության բոլոր խավերի համար՝ շինականներից մինչև ազնվական խավերի ներկայացուցիչները, նույնիսկ արքայական տոհմից սերվածները (կանոններ Գ, Ե)։ Կարգազանցությունների համար սահմանված ամեն տեսակ պատիժները ևս պարտադիր էին բոլոր խավերի ներկայացուցիչների համար։

Ի՞րն էր, այսքանից հետո, V դարի վերջի Հայոց արևելից կողմանց սոցիալ-տնտեսական կյանքի մոտավոր պատկերը։

Վաչագան Բարեպաշտի ժամանակագիրը մեզ շատ է օգնում, և Աղվենի կանոններն էլ բացառիկ հարուստ նյութ են տալիս՝ այդ պատկերն իր ընդհանուր գծերով ներկայացնելու համար։

Փոքրիկ մի թագավորություն, որի միապետն իր երկրի տնտեսական ու լուսավորական առաջընթացի կազմակերպիչն է։ Նա պատրաստ է խստագույնս պատժել կարգազանցներին և մանկան անմիջականությամբ երջանկանալ ամենափոքր հառաջադիմությամբ։

Բնակչությունը՝ շար բախտով զատված մայր ամբողջից, մեծ փոթորիկների ու մակընթացությունների դադարին փարվել է կարճատև մի տեղատվության, լծվել մայրենի գրի ու լուսավորության խանդավառ գործին։

Եթե շատ են հարկերը, ապա իրեն սփոփում է նրանով, որ աստծուց է սահմանված կարգը՝ բոլորն են հարկատու, թագավորազուններից մինչև վերջին շինականը։

Դաժա՞ն են պատիժները։ Դարձյալ կա սփոփիչ մի բան՝ պատժողների առաջ բոլորը մեկ են ու հավասար, իշխանավոր թե շինական։

Ուրիշ հարցեր դեռ չի քննում աստվածավախ նրա միտքը։ Բանակի մասին խոսք չկա այս երկրում։ Կարծես հովվեր-

գական մի անկյունն է աշխարհի, ուր կարելի է ապրել՝ միայն հողի վրա բերք ու բարիք աճեցնելով, Ամարասի ու Հոռեկա, Ջրվշտիկի ու Գյուտականի վանքեր կառուցելով, դպրատներում մայրենի բարբառ հեգելով։

Օրշանիկ հեքիաթի է նման այս բոլորը։

Եվ այստեղ լռում է ժամանակագիրը, որովհետև նրա պատմածը հեքիաթ չէր, որ ավարտվեր քաղցրիկ մի խաբկանքով...

Իսկ Վաչագան Բարեպաշտի թագավորությունն ընկած էր մեծ ու փոքր դիշատիչների ճամփաբաժանի վրա։

* * *

Աղվենի ժողովի կանոնների մեջբերումով էլ Աղվանից պատմությունն ավարտում է իր խոսքը Վաչագան Բարեպաշտի թագավորության մասին։ Պիտի ենթադրել, որ Աղվենի ժողովից հետո երկրում ավելի խաղաղ ու բարվոք վիճակ է եղել, որովհետև չկային արտաքին հարձակումներ, և ներքին խլրտումներն ու տրտունջները էլ վերացված էին Աղվենում ընդունված օրենքներով։

Վաչագան Բարեպաշտը Հայոց արևելից կողմանց Առանշահիկ տերերի լավագույն ներկայացուցիչն էր, այն քաջամիտ ու հայրենասեր իշխողը, որը կարողացավ երկրի աղգային ոգին անհախրնթաց բարձրության հասցնել՝ ըստ ամենայնի օգտվելով և՛ նախնիների թողած ավանդներից, և՛ իր ժամանակի բարենպաստ պայմաններից։

Նա դաստիարակվել էր Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի մատյանների վրա, նրանց հայրենասիրական կրակներից ջերմացել և նրանցից առել իր գործունեության ծրագիրը։ Այդ նրանց լուռ թելադրությամբ էր, որ թագավորը ամենուր հայալեզու դպրոցներ բացեց, թղթերով ու անձնական-անմիջական կապերով անբաժան մնաց մայր հայրենիքի հասարակական-կրոնական կյանքից և, աղգակից իմաստուններից դասեր առնելով, իր երկիրը դեկավարեց որպես ժամանակի ամենաառաջավոր պետական գործիչներից մեկը։

Մատենագիտական վկայությունների մեջ, հանձին Վաչագան թագավորի, չի կարելի չտեսնել հավատարակշիռ դիվանագետին։ Նա իր երկրի ներքին կյանքը կարգավորելիս չէր մոռանում նաև հարաբերությունները դրսի հետ։ Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններից իմանում ենք, որ Վաչագան թագավորն իր աղջկան կնության էր տվել Պարսից թագավորի եղբոր Աբլ-Աբաս որդուն։ Սա արդեն քրիստոնեություն էր ընդունել և ապրում էր Մեծ Սյունյաց նահանգում, «Երկրորդ Ներսաղեմ» կոչված վանքի մոտ։ Վաչագան թագավորի խրնդրանքով Սյունիքի իշխանը հինգ գյուղ էր տվել նրան ու նորահավատ փեսային։ Հենց այստեղ՝ Բարգուշատում էլ (Քաշունիք) մահացել են Վաչագանն ու փեսան։

Այստեղ, Վաչագան թագավորի ու նրա փեսայի՝ մինչև հիմա անհասկանալի մնացած մահվան մեջ, հավանաբար, դարձյալ առկա է Պարսից արքունիքի ընկալին քաղաքականության շոշափուկը։ Այս պարագան առավել հասկանալի է դառնում, հենց որ նկատի ենք առնում ժամանակը։ Պարսից արքունիքը ոչ մի դեպքում չէր կարող հրաժարվել հյուսիսային կողմերի հպատակ երկրների հանդեպ դարեր փայփայած իր հավակնություններից։ Այդ հավակնությունների դեմ, պարզ է, որ բարձրանում էր Վաչագան թագավորն իր լուսավորական ու քրիստոսադավան խոշոր միջոցառումներով, ազգապաշտպան լայնահուն գործունեությամբ ու վիթխարի հեղինակությամբ։

Պարսկական բռնապետությունը հպատակ երկրում չէր հանդուրժի Վաչագան Բարեպաշտի նման մի թագավորի, ինչքան էլ որ նախապես խոստացած լիներ չմիջամտել նրա հավատին ու ներքին գործերին։

Վաչագան Բարեպաշտը, ավանդության համաձայն, թաղված է Արցախ-Ղարաբաղի ամենագեղեցիկ անկյուններից մեկում՝ Մարտակերտի շրջանի Ջրվշտիկ կամ Եղիշառաքյալ վանքի կողքի մի մատուռի մեջ։ 13-րդ դարում նրա վրա նոր տապանաքար են քաշել, վրան փորագրել. «Այս է հանգիստ Վաչագան թագաւորին»։

Այս լեռնատանի հայությունն անանց փառքով է օծել միասնական թագավորության կորստից հետո ստեղծված հայկական առաջին լուրջ պետական միավորի հեղինակին՝ նրա մասին ստեղծելով ոգեշունչ մի հեքիաթ-ավանդություն, որը

երևի թե սիրու, գրի ու արհեստի մասին հյուսված ամենազգեցիկ ստեղծագործություններից է ամբողջ համաշխարհային գրականության մեջ։

Վաչագանից հետո Առանշահիկների թագավորական հարբսությունը պարբերական ծեգծեղումներով ապրեց իր բնաշխարհում՝ արձանագրելով քաղաքական կյանքի ու մշակութային վերելքի հետաքրքիր գրվագներ։

«ՀԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՆ ԻՐ ԶԻՐԱՑ, ԻՄԱՆԱԼ ԶՐԱՆՑ ՀԱՆՃԱՐՈՅ»

Այս խոսքը, որով բացվում է Սոկրատոնի Առակաց գիրքը, գարձավ մաշտոցյան այբուբենով գրված առաջին և մեծագույն պատվիրանը՝ այդ այբուբենը հեղողներին, հայոց գրի ու դպրության որդեգիրներին։

Բայց խոսքն այս, որ ինքնին ասում է ամեն ինչ,— ճանաչի՛ր, այսինքն՝ ընդունի՛ր, իմաստությունն ու խրատը և իմացի՛ր հանճարի խոսքերը,— ունի անմիջական շարունակություն. «Զի ասցէ անմեղաց դիտարգիտութիւն, մանկանց տղայոց զմիտս եւ զհանճար։ Որոց իբրև լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի»։

Դժվար ժամանակ էր սկսվել հայ ժողովրդի համար, փորձությունների, տանջանք-տառապանքի, ազգային գոյի դեմ բացված ահավոր վիհերի ու բարձրացած անանցանելի պատնեշների ժամանակ։ Մենք, որ ազգովին անմեղություն էինք, պիտի խորագիտություն ձեռք բերինք, միտք ու հանճար, մեր իմաստունները պիտի դառնային իմաստնագույն, իսկ հանճարեղները պիտի ստանձնեին ազգի առաջնորդությունը, որպեսզի դիմանալինք, դիմակայեինք, պահեինք ու պաշտպանեինք մեր հոգևոր ու նյութական գանձերը, մեր ազգային ինքնությունը։

Մեր գրի ստեղծողը հենց ինքն էլ ցույց էր տվել այս ամենի ճանապարհը։ Նա գիտեր, որ հանճարի խոսքերը, իմաստությունն ու խրատները ճանաչելու, իմանալու, հասկանալու համար դրանք պետք է հայերենացնել։ Եվ սկսեց թարգմանական գործի մի այնպիսի եռուզեռ, որի մեկ դարու արտադրանքը,— Սուրբ գրքի, հին ու նոր ասույթաբանական մատ-

յանների, մեկնությունների, հին իմաստուն հույների և քրիստոնյա հեղինակների իմաստասիրական, փիլիսոփայական, բնագիտական ու տիեզերագիտական գրքերի թարգմանություններ,— այսօր թվում է անհնար մի սխրագործություն։

Եվ թարգմանելու կողքին կամ հենց մեկտեղ սկսվել էին նաև թարգմանածի մեկնությունը, քննությունն ու քննադատությունը։ Հին աշխարհի գիտական մտքով տոգորված հայ վարդապետներն սկսեցին Հայաստան աշխարհի պատմությունն ու կյանքը գրի առնել, ստեղծել գիտություններ, որոնք օտարներից թարգմանած-փոխ առածին նման լինելով հանդերձ՝ նաև ինքնուրույն էին ու ինքնատիպ, որովհետև իրենց վրա կրում էին Հայաստան երկրի աշխարհագրական կնքադրոշմը, հայ ժողովրդի ճակատագիրն ու բաղձանքները։

Մաշտոցն ու Սահակ Պարթևը գիտեին, որ գիտությունների մայրը փիլիսոփայությունն է, որով ոտքի են կանգնում ու իրենց ինքնուրույն քայլերն են կատարում մյուս բոլոր գիտությունները։ Եվ, հին աշխարհի ու քրիստոնեության փիլիսոփայական մատյանները հայացնելու հետ միասին, նրանք ստեղծեցին հայոց փիլիսոփայության առաջին ինքնուրույն ստեղծագործությունները։

Մեսրոպ Մաշտոցը՝ մեր գրերի գյուտարարն ու առաջին ուսուցիչը, նաև մեր գիտության հիմնադիրը դարձավ։ Մենք նրան ենք պարտական մեր ազգային փիլիսոփայական մտքի սկզբնավորման, այս ուղղությամբ կատարված առաջին լուրջ քայլերի համար։ Մաշտոցի գրած «Հաճախապատում» ճառերը, որոնցում շարադրված են հայ առաջին մեծ մտածողի մտքերն ու խորհրդածությունները բնության, աշխարհի արարչության, իրական կյանքի և հոգեղեն երևույթների զարգացման մասին, հիմնաքար դարձան հայոց միջնադարյան գիտության համար, սկզբնավորեցին գիտական մի շարժում, որը հատկապես առաջին երեք հարյուր տարիներին, 5—7-րդ դարերում, ապրեց բուռն վերելք, յուրացնելով համաշխարհային գիտության անցյալ նվաճումները, ստեղծեց իր ազգային պատկերն ունեցող գիտական հարուստ ժառանգություն։

Մեսրոպ Մաշտոցից սկսված հայկական գիտությունը հենց մեծ ուսուցչի օրերում էլ ճյուղավորվեց, զարգացավ դարաշրջանին բնորոշ բոլոր ուղղություններով՝ փիլիսոփայությունից մինչև թվաբանություն, կենդանական ու բուսական աշխարհների հետազոտություններից մինչև տիեզերագիտություն։

5—7-րդ դարերի հայկական գիտությունը զարգացման ինքնատիպ, բնականոն ընթացք է ունեցել՝ ծառայելով ազգային կյանքին, պատասխանելով նրա առաջադրած հարցերին և ցույց տալով ազգի շարժման կետ-նպատակին։ Երեք դարու գիտական պրպտումներին լծված են եղել բազմաթիվ նվիրյալներ։ Սակայն եթե վերևից նայելու լինենք զարգացման այդ անշեղ ընթացքին, ոչ մի տեղ չհատվող շղթայի մեջ անպայման կերևան վերելքի երեք բարձրակետեր՝ կապված երեք անմահ անուններ հետ։ Այդ երեքն են՝ Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը և Անանիա Շիրակացին։

Եզնիկ Կողբացին *(մոտ. 380—450 թթ.)՝ Մաշտոց-Սահակյան դպրոցի ավագ աշակերտներից երևի թե ամենահեղինակավորը, վիթխարի դեր խաղաց 5-րդ դարի կեսի հայկական ազատագրական պայքարի գաղափարական նախապատրաստության մեջ, և պատահական չէ, որ նրանից պահպանված միակ գիտական երկը՝ «Եղծ աղանդոցը», ներծծված է այդ պայքարի էությամբ։*

5-րդ դ. հայկական մատենագրությունը և նրա առաջին մատյանների հետ ստեղծված գիտական գրականությունը, որի դրոշը Մաշտոցի ձեռքից վերցրել ու բարձր էր պահում Եզնիկ Կողբացին, ներծծված էր ազատագրական պայքարի ոգով, ազգային հանրությանը կոչ էր անում մերժել հին հավատներն ու նրանց ամենամոլեռանդ ներկայացուցիչ մաղդեզանց կրոնը, ամուր ու անեղծ կանգնել քրիստոնեության հիմքերի վրա։

Եզնիկը նույնպես, ինչպես և իր մեծ ուսուցիչ Մաշտոցը, ընդունում էր, որ աստված է աշխարհի, ամեն նյութականի ու հոգեղենի արարիչը, և նա է այդ բոլոր գոյացություններն ստեղծել «ի չգոյէ», ոչնչից, անէությունից։ Այս հայեցակետից էլ նա քննադատում էր անտիկ հույն մատերիալիստ փիլիսոփաների հայացքները, մերժում նրանց աշխարհայեցողության հետագա բոլոր դրսևորումները։

Սակայն մեր հայրենասեր փիլիսոփան իր երկը հյուսել է Հայաստանի դեմ Սասանյան Պարսկաստանի բռնակալական ոտնձգությունների օրերում, և հասկանալի է, որ մեր-

ժումի ու այպանումի ամենասուր սլաքներն էլ պիտի ուղղվեին պարսից կրոնի գաղափարախոսության դեմ։

Եզնիկի փիլիսոփայության առանցքը, սակայն, չարի ու բարու գրսևորումների, դրանց պայքարի, մարդկային առաքինության և դրա միջոցով կատարելության հասնելու մեկնաբանությունն է։ Նրա կարծիքով՝ եթե աստված մարդու մեջ դրել է չարի ու բարու նախադրյալները, միաժամանակ և նրան օժտել է ինքնատիրապետումի ուժով, որը նրան պիտի մղի լավ գործերի՝ ընդդեմ չարի։ Հետևապես ամեն մարդ, ինչպես և ամեն մի ժողովուրդ ինքն է իր ճակատագրի հեղինակը, ինքն իր կամքով, իր նպատակամետ գործողություններով պիտք է վանի չարը և դարձնի սեփական երջանկությունը։ Եթե թշնամիներն ասպատակում կամ նվաճում են քո երկիրը, ապա դա ոչ թե նախախնամության կամքով կատարված մի գործողություն է, որին պետք է սարկամտորեն ենթարկվել, այլ միայն և միայն թշնամիների՛, այսինքն՝ չար ուժի սանձարձակ կամայականությունն է, որի դեմ պիտք է պայքարել, պետք է զորք գումարել, ելնել չար ուժի դեմ և այն վռնդել հայրենի երկրից։

Հինգերորդ դարի հայկական մտավոր կյանքում սրբազան մեքանի դեր ունեցավ Եզնիկ Կողբացու փիլիսոփայությունը։ Նրա հայրենասիրական ու մարդասիրական, չարի դեմ ընդվզվող, բարին ու մարդկայնությունը անձնազոհությամբ պաշտպանելու կոչող եզնիկյան գաղափարախոսությունը 450—51 թվականներին Վարդանանց հայրենապաշտպան պայքարի սարավ Ավարայրի դաշտում։ Իսկ դարի 80-ականներին Վահանանց քաջ զնդերին անխոցելի դարձրեց Ակռռի ճակատամարտում, Ներսեհապատում ու Նվարսակում, որպեսզի հայ նախարարությունը վերստին տերը դառնա իր վարչական կյանքի։

5-րդ դարի հայկական աղատագրական բազմամյա պայքարում հաղթանակեցին ոչ միայն հայրենիքի ու ազգային ինքնության համար իրենց գլուխները դրած ժողովուրդը, զինվորությունն ու նախարարությունը, այլև հայկական ազգային-ազատագրական գաղափարախոսությունը։

Սահակ-Մեսրոպյան դպրոցի ավագ աշակերտներին, հատկապես Եզնիկ Կողբացուն, գիտության բնագավառում փոխարինելու եկան կրտսեր աշակերտները՝ Մովսես Խորենացին, Դավիթ Քերականը և, ավանդության համաձայն, Դավիթ Անհաղթը։ Հատկապես վերջինն էր, որ հայոց գիտական միտքը, մանավանդ, փիլիսոփայությունը բարձրացրեց ժամանակի համար աներևակայելի մակարդակի՝ սնունդ առած լինելով հին հունական գիտական մտքի հզոր փայլատակումներից, իր օրերի քրիստոնեական գաղափարախոսության հարուստ պաշարներից և, իհարկե, նաև հայրենի երկրի քաղաքական ու մշակութային կյանքի դրսևորումներից։

Դավիթ Անհաղթի մեզ հասած երկերն են. «Սահմանք իմաստասիրութեան» («Գիրք սահմանաց»), «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի», «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի», «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի»։ Կան նաև ուրիշ ստեղծագործություններ, որոնք կրում են Դավթի անունը կամ ենթադրաբար վերագրվում են նրան։ Սակայն աներկբայորեն նրա հեղինակություններն են ճանաչվում այս չորսը, և նույնիսկ սրանց վերնագրերից դատելով էլ կարելի է գծել գիտաքննական այն ճանապարհը, որ մեր փիլիսոփան է անցել՝ Արիստոտելի ուսմունքի մեկնաբանություններից հասնելով նեոպլատոնական Պորփիրիոսին (3-րդ դ.—4-րդի սկիզբ, վախճ. 304 թ.) և նրա ժամանակի բնափիլիսոփայության խնդիրներին։

Հետաքրքիր է, որ Դավթի փիլիսոփայական աշխատությունները հունարեն լեզվով ևս հայտնի են աշխարհին։ Համենայն դեպս նրանցից երեքը՝ «Սահմանքը», «Պորփյուրի Ներածության վերլուծությունը» և «Արիստոտելի Ստորագրության մեկնությունը» (դժվար է պարզել՝ բնագրե՞րը, թե՞ թարգմանությունները) վաղուց հայտնի էին գիտությանը և 1904-ին էլ հրապարակվել են Ադոլֆ Բուսեի ուսումնասիրությամբ հանդերձ։

Ո՞րն է Դավթի Անհաղթի փիլիսոփայության էությունը։ Մասնագետները գտնում են, թե այն եղել է նեոպլատոնականության մի տեսակը, որը միահյուսում էր հին հունական փիլիսոփայության ու նոր ժամանակների կենսաճանաչողության առաջ տեղենցները, իսկ ամենակարևորը՝ մեծապես հենվում էր բնական գիտությունների ու տրամաբանության նվաճումների վրա և դրսևորում մատերիալիստական հակումներ։

Դավիթը քրիստոնյա գիտնական էր և, ինչպես պետք էր սպասել, արարչության սկիզբ ու պատճառ էր ճանաչում աստծուն։ Ըստ այդմ էլ ընդունում էր արարման հետևանքը, մի կողմից՝ բոլոր գոյացությունները, մյուս կողմից՝ արարողգոյացնողն ու նրան վերաբերող պատկերացումները («ըստ զաղափարի՝ աստված, հրեշտակը, բանականությունը, հոգին»)։

Մերժելով ագնոստիցիզմի ամեն տեսակ արտահայտություններն ու հոսանքները, Դավիթը հաստատորեն պնդում էր, թե աշխարհն ու նրա բոլոր առարկաները (գոյերը) ճանաչելի են, և ճանաչումն էլ տեղի է ունենում մարդու զգայարանների հաղորդած տվյալների ու նրանց վրա հենվող բանականության միջոցով։

Ճանաչելի է, ըստ էության, նաև աստված, քանի որ «տեսնելով նրա կողմից ստեղծված իրերն ու արարածները, ինչպես և աշխարհի կանոնավոր շարժումը, մենք աստծուն ճանաչում ենք մտածողությամբ ու բանականությամբ։ Անտեսանելին հեշտությամբ ճանաչվում է այն բանի միջոցով, որը տեսանելի է»։ Այսինքն՝ ասա, թե ի՞նչ է քո ստեղծածը, ասեմ, թե ո՞վ ես ինքդ։

Դավիթը մեծ ուշադրություն է դարձրել ճանաչման ընթացքի քննությանը՝ հանգելով այն եզրակացության, թե այդ ընթացքը բաղկացած է հինգ աստիճաններից, որոնք իրար նախապատրաստող են և իրար պայմանավորող։ Ահա այդ աստիճանները՝ զգայություն, երևակայություն, կարծիք, խոհականություն և բանականություն։ Առաջին չորսը կարծես նախապատրաստում են վերջին աստիճանը, որպեսզի այն դրսևորի իրեն՝ դառնալով նախորդ փուլերն ստուգող ու ճշգրտող և առանցք դառնա համապարփակ գիտության՝ փիլիսոփայության համար։

Դավթի համար ինքնանպատակ գիտություն գոյություն չուներ։ «Գիտությունը,— պնդում էր նա,— պետք է ծառայի մարդկային հոգու կատարելագործմանը, օգնի մարդուն ընտրելու բարին և մերժելու չարը։ Բարին, ըստ Դավթի, բարձր է ճշմարտությունից, և մարդ պետք է կարողանա արդարության ու բարու համար երբեմն մեղանչել ճշմարտության (իրականության— Բ. Ու.) դեմ, որովհետև ամեն մի ճշմարտություն չէ, որ բարի է։ Փիլիսոփայության նպատակն է խուսափել չարից և պատրաստել հոգին՝ նրա զնդանից, մարմնից ազատվելու։ Մարդն օժտված է կամքի ազատությամբ և հավասարապես հակված է ինչպես դեպի չարը, նույնպես և դեպի բարին։ Փիլիսոփայությունը ցույց է տալիս չարից խուսափելու և բարուն հասնելու ուղիները» (Ս. Ս. Արևշատյան)։

Եթե բարձրագույն ու ամենակատարյալ գիտությունը փիլիսոփայությունն է, ապա նրա ուսումնասիրության գերագույն խնդիրն էլ մարդն է՝ աշխարհի ու բնության ամենաբարձր գագաթը, աստծու ամենավսեմ ստեղծագործությունը։ Եվ քանի որ մարդու մեջ էլ ի սկզբանե առկա են բարու և չարի դրսևորումների հիմքերը, ապա փիլիսոփայության կամ մարդու կատարելագործման արվեստի կարևորագույն խնդիրն է խեղդել չարի ծավալման հնարավորությունը, ոգեկոչել բարին, հնարավորություններ ստեղծել նրա լիակատար, անհաղթահարելի աճի համար։

Դավիթն այստեղ չի մոռանում նաև հասարակության խնդիրը։ Գտնելով, որ արդար մարդը միշտ է երջանիկ, եթե նույնիսկ չգնահատվի կամ պահպանվի, իսկ չարը՝ թշվառական, եթե նույնիսկ փառաբանվի ու թմբկահարվի,— նա հասարակությանը կոչ է անում լինելու արդար և հետևողականորեն ճշմարիտ, պայքարելու ինքնամաքրման ու բարոյական կատարելության համար։

Իսկական փիլիսոփան, մեր գիտնականի կարծիքով, «ոչ թե նա է, ով շատ բան գիտե, և ոչ թե նա, ով շատ բաների մասին կարող է դատողություններ անել, այլ նա՛, ով վարում է մաքուր ու անարատ կյանք»։ Սա, ըստ էության, Դավիթ Անհաղթի խոսքն է՝ ուղղված ոչ միայն փիլիսոփային, այլև մարդուն առհասարակ, հասարակությանը, իր ժամանակակիցներին ու գալոց սերունդներին։ Որովհետև, ինչպես Դավթից հազար տարի առաջ, նրա մեծ ուսուցիչ Արիստոտելի ժամանակ, ինչպես հենց Դավթի օրերում, այնպես և հետագայում, հասարակական ամեն կարգի, ամեն տեսակ գաղափարախոսության սիրապետության պայմաններում, միշտ ու ամենուր, քարոզիչներն ավելի շատ են, փիլիսոփայական դատողություններ ասելու և մաքուր վարքի կոչելու մեջ վարպետացածները շա՜տ-շատ են... Բայց ահա հասարակությունը գեռ սառապում է հին ու նոր ախտերից։

Հասակ ձգելով Ալեքսանդրիայի նորպլատոնական փիլիսոփայական դպրոցի պայմաններում՝ Դավիթ Անհաղթն ամեն կերպ ջանում էր քրիստոնեական վարդապետության վրա պատվաստել հունաց հեթանոսական գիտության հավերժ կենդանի գաղափարները, մաքրագործել, կատարելագործել իր ժամանակի մարդկային միտքն ու հոգին։ Սա, անշուշտ, խոշոր մտածողի գիտական ժառանգության մեծագույն արժանիքն է։

Դավիթ Անհաղթը, ինչպես և նրա ժամանակակիցներ Մովսես Խորենացին ու Ղազար Փարպեցին, Հայաստանում անլուր հալածանքի ենթարկվեց հոգևորականության ատորասեր թևի կողմից։ Նա ևս խաչ ուներ կրելու որպես հին հունական փիլիսոփայության հետևորդը և ուշ հելլենիստական առաջավոր գաղափարների կրողն ու քարոզիչը։ Այս առթիվ պահպանվել են աղբյուրագիտական ստույգ տվյալներ, բայց և բազմաթիվ ավանդություններ, որոնց հերոսները հալածական Մովսեսն ու Դավիթն են, հատկապես երկրորդը՝ առասպելական հերոսի լուսապսակով։

Դավիթ Անհաղթից սկսած Հայաստանում գիտական պրոցեսները, բնական գիտությունները ու փիլիսոփայությունը, հիմնական ուշադրություն դարձնելով աշխարհի, իրական գոյերի, իրերի ու երևույթների ուսումնասիրության վրա, գնալով առավել հագեցան մատերիալիստական տարրերով՝ սակայն չհեռանալով կրոնական-աստվածաբանական մտայնությունից։ Եթե Դավիթի բնափիլիսոփայության մեջ աշխարհի և մարդկային մտքի փոխհարաբերությունը հիմնականում ընդունել էր մատերիալիստական բացատրությունը, ապա նրա հետևորդները, հետզհետե խորանալով բնության երևույթների ուսումնասիրության մեջ, առավել մեծ չափով բախվեցին մատերիալիստորեն տրամադրող կենսական գրգիռների ու գիտական տվյալների հետ, և այս բախումների մեջ ծնվեցին հայկական աշխարհիկ գիտություններն ու նրանց հիմքերի վրա բարձրացած աշխարհիկ փիլիսոփայությունը, որի խոշորագույն ներկայացուցիչն էր Անանիա Շիրակացին։

Անանիա Շիրակացու կենսագրության համար մեզ է հասել միակ վստահելի աղբյուրը՝ նրա ինքնակենսագրությունը, որը զժբախտաբար քիչ տվյալներ է պարունակում հեղինակի

կյանքի վերաբերյալ և հաղորդում է լոկ այնքանը, որ նա ծնվել է Անանիա (երևի Աեի-ի գրչական աղավաղումն է) գյուղում, մանկուց ուսման մեծ ու անսահման ձգտում է ունեցել և այս ձգտումն իրականացնելու համար թափառել է ժամանակի Հայաստանի տարբեր վայրերում, նույնիսկ հասել Պոնտական ծովի հարավային ափերը։ Ապա այստեղ, Տրապիզոնում էլ հույն անվանի գիտնական Տյուքիկոսի դպրոցում ուսման սովորելով, ձեռք է բերել այն օրերի բազմաղան գիտությունների մեծ պաշարը, վերադարձել հայրենիք, զբաղվել ուսուցչությամբ ու գիտության տարբեր բնագավառներով։

Անանիա Շիրակացու անվամբ մեզ հասած կամ նրա ստեղծագործական-գիտական անհատականության ակնհայտ կնիքը կրող աշխատություններն ընդգրկում են բազմաթիվ ու բազմապիսի բնագավառներ. մաթեմատիկա և աշխարհագրություն, տոմարագիտություն և աստղագիտություն, փիլիսոփայություն և բնագիտության ամենատարբեր հարցեր։

Մաթեմատիկան (համարողություն) այն բնագավառն է, որի մեջ առավել ցայտուն փայլել են Անանիա վարդապետի ձիրքերը։ Մեզ հասած աշխատությունները՝ խնդրագիրքը, թվաբանական ու բազմապատկման աղյուսակները, խրախճանականները (հետաքրքրաշարժ խնդիրներ), անշուշտ ստեղծվել են իբրև դասագրքեր և հսկայական դեր են խաղացել միջնադարյան Հայկական դպրոցի կյանքում։

Ինչպես այս երկերում, այնպես էլ միջնադարյան Հայաստանում, թվանշանների դեր էին կատարում հայերեն դրերը, առաջին ինը տառերը (Ա—Թ) միավոր նշանակողներն էին, հաջորդ իններյակը (Ժ—Ղ)՝ տասնավորները, երրորդ իններյակը (Ճ—Ջ)՝ հարյուրավորները, չորրորդ իններյակը (Ռ—Ք)՝ հազարավորները։ Այսպիսով մեր տառերը հնարավորություն ունեին ցույց տալու մինչև 9999։ 10 հազարի համար ընդունված էր Ա(1)-ի վրա դնել բյուր (տասը հազար) ցույց տվող նշան ($\hat{\cap}$)—Ա։

Այս աշխատություններում կան թվաբանական ու երկրաչափական պրոգրեսիաներ հիշեցնող աղյուսակներ, հետաքրքրաշարժ բովանդակությամբ խնդիրներ իրենց սրամիտ լու-

ծումներով, որոնք ենթադրել են տալիս, թե դրանք լուծվել են կեղծ դրության և ինվերսիայի եղանակներով։

Այս ամենը նկատի առնելով է, որ մասնագետները գտնում են, թե Ա. Շիրակացու մաթեմատիկական դասագիրքը մեզ հասած հնագույն ամենաամբողջական ու նշանակալից երկն է, իր ընդգրկումներով ավելի լայն, քան Հունաստանում ու Հռոմում գոնվածները։

Անանիա վարդապետի փիլիսոփայական հայացքների մեջ կարևոր տեղ է բռնում աշխարհի նյութականության հինավուրց ըմբռնումը, որի համաձայն՝ ամեն ինչի հիմքում երկրագունդն է, և բնության մեջ ամեն ինչ չորս հիմնական տարրերի՝ հողի, ջրի, օդի ու հրի զանազան զուգորդումներն են։ Բնության մեջ ամեն ինչ փոփոխվում է,— համոզված էր մեր փիլիսոփան։— Փոփոխությունը զարդացման ընթացքն է, որ տեղի է ունենում այսպես՝ ծնունդ, զարդացում, մահ։ Վերջինս էլ իր հերթին դառնում է մի այլ գոյաձևի սկիզբ, «քանի որ լինելությունը անէացման սկիզբն է, իսկ անէացումը վերստին դառնում է լինելության սկիզբ։ Եվ այս անվնաս հակադրության շնորհիվ աշխարհն ստանում է իր հավերժությունը»։

Ուրեմն Շիրակացին ընդունում է հակասությունների գոյությունը բնության մեջ և առաջընթացը համարում է այդ հակասությունների միասնության դրսևորում։

Բնությունը (իմա՝ աշխարհը) ճանաչելի է, և ճանաչումը տեղի է ունենում զգայական ու գիտակցական ճանապարհներով։ Զգայական, այսինքն՝ զգայարանների միջոցով ստացված տվյալներն ստուգվում, ճշգրտվում են գիտակցությամբ, որն ավելի բարձր, առավել ստույգ եղանակն է, քանի որ կարող է քննել ոչ միայն զգայարանների միջոցով ստացված տվյալները, այլև նրանց հիմքերը, անցյալն ու հետևանքները։ Ուրեմն երկու եղանակների՝ զգայականի ու բանականի համագրությունն է, որ հուսալի ու լիակատար է դարձնում ճանաչումը։

Անանիա Շիրակացու գիտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նրա աստղագիտական և առհասարակ տիեզերագիտական ուսումնասիրությունները։ Կանգնած լինելով իր ժամանակի գիտական մտքի բարձրության վրա՝ նա ընդունում էր Երկրի գնդաձևությունը, գիտեր,

որ լուսի տարածման արագությունը շատ ավելի մեծ է, քան ձայնինը, համոզված էր, որ Լուսինը սեփական լույս չունեցող, Արեգակի լույսի անդրադարձմամբ երևացող պինդ մարմին է լոկ, որ Միր Կաթինը թույլ պայծառության աստղաբույլ է։ Իր ժամանակի համար նա զարմանալի ճշգրտությամբ է բացատրել Արեգակի ու Լուսնի խավարումները, հաստատել, որ Արեգակն անհամեմատ խոշոր է Լուսնից ու Երկրից և գտնվում է վիթխարի հեռավորության վրա։

Նրա աստղագիտական ուսումնասիրությունները, մանավանդ Լուսնի ծննդի ու լրման պարբերաշրջանի աղյուսակները, օտար ու հայկական օրացույցների վերաբերյալ կատարած քննությունները, նրա կազմած տոմարական աղյուսակը, ստեղծած հայկական «անշարժ» տոմարի առաջին նախագիծը,— սրանք բոլորն էլ ունեին կիրառական մեծ նշանակություն և օգտագործվում էին միջնադարյան Հայաստանում։

Տիեզերագիտության բնագավառում կատարած այս ուսումնասիրությունների դերը, այսինքն՝ առաջավոր հայացքների պաշտպանման շիրակացիական դիրքը, ճիշտ գնահատելու համար բավական է հիշենք նրա դարաշրջանի գիտական մթնոլորտը, որը, տոգորված քրիստոնեական իդեալիզմով, այլևս չէր հանդուրժում հին աշխարհից ժառանգություն մնացած մատերիալիստական պատկերացումները։

Հին Հունաստանի գիտական միտքը հրաշքներ էր կատարել աշխարհի ուսումնասիրման բոլոր մարզերում։ Կարելի՞ է պատկերացնել, թե ինչպես երկրաչափության, մաթեմատիկական մի շարք հայտնագործությունների հեղինակ Պյութագորասը մ. թ. ա. 6-րդ դարում արդեն բազմաթիվ ապացույցներ էր ավել Երկրի, Լուսնի և առհասարակ երկնային մարմինների կլորության վերաբերյալ։ Իսկ դրանից շուրջ չորս հարյուր տարի հետո Էրատոսթենեսը՝ ժամանակի մեծ աստղագետը, աշխարհագետը, փիլիսոփան և, իհարկե, մաթեմատիկոսը, կատարել էր ահռելի մի հայտնագործություն՝ պարզել էր մեր մոլորակի շրջագծի երկարությունը, որ նրա ճշգրիտ հաշիվներով հավասար է 250000 ստադիի, այսինքն՝ 39250 կիլոմետրի։ Միայն 750 կիլոմետրով պակաս մեր ժամանակի հաշվումներից (40000 կմ), մի տարբերություն, որը կարելի է նույնիսկ համարել բնական։

Էրատոսթենեսի հաշիվն աշխարհին հայտնի դարձավ մ. թ. ա. 250 թվականին...

Բայց այս ամենից շուրջ 1000 տարի հետո Երկրագնդի կլորությունն մասին խոսելը գիտական խիզախության նման մի բան պիտի ճանաչվեր, որովհետև քրիստոնեական աշխարհը գիտության համար հլուսել էր մի բաժոջ, որից դուրս աշխարհ բնական ու բանական չէր համարվում... Եվ հենց այսօրինակ պատկերացումների, տիեզերքի նյութականության ու իրական շարժումների ճշմարիտ իմացությունների համար միջնադարյան խավարամտությունը նույնիսկ ուշ միջնադարում խարույկի վրա պիտի վառեր գիտնականին։

Ինչպիսի, կայսեր գիտական պնդումներ (և Շիրակացին էլ անվերապահորեն ընդունում էր դրանք), որոնց միտքն այն էր, թե տիեզերքի կենտրոնը Երկիրն է, և այս համակարգով էլ բացատրվում էր տարվա եղանակների, գիշեր-ցերեկի առաջացումը։

Պատահում էր, քրիստոնեության քարոզիչը ոտքի էր կանգնում մեր գիտնականի մեջ, և նա, որ ընդունում էր Երկրի գնդաձևությունը ու հենց այս հիմքից ելնելով էլ պետք է ընդուներ նաև, թե Երկրի մյուս կողմի վրա ևս գոյություն ունի կյանք,— նա ժխտում էր այդ կյանքի գոյությունը, թե Երկրի հակառակ մասում (այժմյան խոսքով՝ արևմտյան կիսագնդում) կյանք գոյություն ունենալ չի կարող, քանի որ դա չի ընդունում Աստվածաշունչը։ Բայց չէ՞ որ ինքն էր կողմնակից Երկրի գնդաձևության և նույնիսկ ընդունում էր, որ գիշեր ժամանակ արևն անցած է լինում Երկրի մյուս կողմը։ Այնտեղ ի՞նչ է անում տիեզերքի մեծ լուսատուն։ Արևի անուններից գիտնականը պատասխանում է. «Աչքանց ես լույս եմ տալիս սաթերին, ձորերին և անկենդան կիրճերին»։ Այսպիսով գիտությունն ու Ս. գիրքը «համերաշխվում են» իրար հետ, և բավարարություն են տանում ինչպես գիտական միտքը (Երկիրը կլոր է), այնպես էլ աստվածաշնչյան դոգման (Երկիրը հաստատված է ջրային անսահմանության վրա, ուրեմն և հակառակ կողմում կյանք չի կարող գոյություն ունենալ)։

Սակայն վաղուց նկատված է, որ Շիրակացու բնափիլիսոփայական համակարգը մի վերին աստիճանի առաջադիմական երևույթ էր վաղմիջնադարյան իրականության մեջ։ Բավական է հիշել, օրինակ, այն անհանդուրժողական վերաբերմունքը, որ նա ուներ հեթանոսական անահտությունների և աստղահմայական ձեռնածությունների նկատմամբ։ Այստեղ նա գիտական առողջ հիմնավորումներով հերքում է ալքորինակ սուտերը և ներկայացնում իր աստղաբաշխական ու տիեզերագիտական հայացքները, որոնք, լինելով հին հույն-հելլենիստական մշակույթին ժառանգության դրսևորումները նոր պայմաններում, դուռ էին բացում աշխարհի մատերիալիստական ըմբռնումների, բնական ու ճշգրիտ գիտությունների զարգացման համար։

Հիմա երևի կարելի է հաստատապես ասել, որ Անանիա Շիրակացու գրչին է պատկանում նաև «Աշխարհացույց» («Աշխարհագրություն») կոչված հայկական վաղմիջնադարյան դասական աշխատությունը, թեպետ այսօր էլ դեռ կան ուսումնասիրողներ, որոնք թերահավատ են այս հարցում։

«Աշխարհացույցը» նախքնքացի համաշխարհային աշխարհագրության նվաճումների, հատկապես Պտղոմեոսի (ծն. թվին անհայտ—վախճ. 168 թ.) «Աշխարհագրական ձեռնարկի» և Պապպոս Ալեքսանդրացու (3—4-րդ դդ.) «Երկրագրության» հիման վրա ստեղծված մի երկ է, որն այս հիմքին ավելացրել է նաև հետագա 2—3 հարյուրամյակների բերած աշխարհագրական վերաձևումների և նոր պատկերացումների գիտական շարադրանքը։ Հանրանքի պատճառով այն իր մեջ է առել միայն երեք աշխարհամասերի՝ Եվրոպայի, Ասիայի ու Լիբիայի (Աֆրիկա) նկարագրությունը։ Սակայն մեր հեղինակը, շարավարվելով այս ամենով, մանավանդ իր հայրենիքի ու հարևան երկրների մասին խոսելիս, պատմական հետաքրքիր երթուղարձով քննում-վեր է հանում անցյալ դարերի քաղաքական ու աշխարհագրական այնպիսի փոփոխություններ, որոնք-նրա կան նախորդների գրքերում, ապա դառ էլ հանրագիտակ չլինի լինելու ժամանակակիցներին ու հետագաներին։ Օրինակ, որքա՞ն խորաթափանց դիտարկումներ կան երկի «Ճաղաց Պարսից» բաժնում, որոնք հիմք են դարձել Իրանի վաղմիջնադարյան պատմաաշխարհագրական հետազոտությունների համար (տե՛ս, օրինակ, Ե. Մարկվարտի «Եռանշահը» ուսումնասիրությունը, «Պարսկահայոց նահանգը» ևն)։ Էլ չեմ խոսում Հայաստանին, Վիրքին ու Աղվանքին վե-

բաբերող բաժիններից, որոնք, բացառիկ լինելով իրենց տեսակի մեջ, ներկայացնում են Մեծ Հայքի ու երկու այդ մերձավոր հարևանների աշխարհագրական սպառիչ նկարագրությունները նրանց պետական անկախության ժամանակներում (4—5-րդ դդ.), ապա հանգամանորեն տալիս բոլոր այն փոփոխությունները, որ երկրամասին բերեց մարզպանական շրջանը։ Եվ այս բոլորը՝ մի այնպիսի քաջատեղյակ ու բծախնդիր ճշգրտությամբ, որ բաղձալի պիտի լինի բոլոր ժամանակների աշխարհագետների համար։

Անանիա Շիրակացուց մեզ են հասել նաև թանկարժեք քարերին, չափ ու կշիռներին, օդերևութաբանությանը, բնական գիտությունների բազմազան հարցերին վերաբերող աշխատություններ։

Նրա գրչին է պատկանում նաև երաժշտագիտական մի աշխատանք, որով հայկական միջավայրն են մտնում «ձայնաշարերի կազմությանը վերաբերող նոր գաղափարներ» (Ն. Թահմիզյան)։

Եվ, այսպես, վաղմիջնադարյան հայկական գիտության մեջ Անանիա Շիրակացին ներկայանում է որպես լայնահուն հետազոտությունների, բազմաբնագավառ պրպտումների անխոնջ գիտնական, իսկական մի հանրագիտակ, որի ամբողջ ժառանգությունը հիմք դարձավ հետագա դարերի հայոց գիտական մտքի զարգացման համար և մտավ երախտապարտ սերունդների ստացած թանկագին ժառանգությունների գանձարանը։

Սակայն սխալված կլինենք, եթե Անանիա Շիրակացու վաստակն արժեքավորենք միայն ազգային մշակույթի ու գիտության սահմաններում։ Նրա ժառանգությունը համաշխարհային գիտական մտքի նվաճումներից է, վաղմիջնադարյան այն սակավաթիվ մխիթարական երևույթներից, որոնք, լինելով հին աշխարհի մատերիալիստական աշխարհըմբռնման արձագանքները, հող պատրաստեցին գիտության տարբեր բնագավառների, մարդկային բանականության հետագա բուռն զարթոնքի ու զարգացման համար։

Այս է Անանիա Շիրակացու՝ մեր առաջին խոշոր հանրագիտակի ժառանգության հզոր ու անանց դերը։)

ՀԱՅՈՑ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ

Մեր բազմադարյան ճարտարապետությունն ունեցել է վերելքների ու անկումների շրջաններ։ Նրանցից յուրաքանչյուրն արդյունք է եղել քաղաքական ու տնտեսական համապատասխան վիճակի, միանգամայն հասկանալի ու բացատրելի։ Եվ այսօր ետ նայելիս, մեր պատմության վայրիվերումները քննելիս պարզ տեսնում ենք, թե ինչպես հայ շինարար ձեռքը, առաջին իսկ հնարավորությունն օգտագործելով՝ կառուցել է, իր երկիրը զարդարել հավերժի հետ խոսող շինություններով, և, հակառակը, եղել են ստեղծության դատապարտված տասնամյակներ, նույնիսկ ամբողջ հարյուրամյակ (օրինակ, 8-րդ դարը), երբ, օտարի ղժնդակ տիրապետության պատճառով, չի կանգնեցվել շատ թե քիչ նշանակալից որևէ կառույց։

Բայց այն, ինչ կատարվեց 6-րդ դարի վերջից մինչև 7-րդի վերջը, շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում, հրաշքի է նման, քանի որ թագավորական հարստությունը կորցրած, արևմտյան ու արևելյան բռնատիրություններին ենթակա Հայաստանն այս կարճ ժամանակամիջոցում ծածկվեց ճարտարապետական այնպիսի հոյակերտներով, որոնցից շատերը դարակազմիկ, նույնիսկ հետագա ոչ պակաս բարեպատեհ ժամանակներում անհաղթահարելի մակարդակ պիտի մնային։

5—6-րդ դդ. հայկական ապստամբությունները երկրի համար ստեղծել էին համեմատական ապահովության մի շրջան, երբ օտար բռնակալներն այլևս չէին կարող անպատիժ կերպով ասպատակել ու ավերել Հայաստան աշխարհը։ Ազգային հոգևոր կյանքը ևս տաճկի վիճակում էր գտնվում, որովհետև 6-րդի սկզբին հայոց եկեղեցին իրեն մեկընդմիշտ անջատել էր

բյուզանդական-քաղկեդոնական միջավայրից, ուրեմն երկիրն անջրպետել արևմտյան ոտնձգությունների դեմ։

6-րդ դարի երկրորդ կեսում պարսկա-բյուզանդական հակամարտությունները վերսին սրվեցին։ 572-ին սկսվեց բազմամյա մի պատերազմ, որի փոփոխակի հաջողություններից արդեն ո՞րերորդ անգամ քրքրվում էր ռազմական բեմ դարձած Հայաստանը։ 591 թ. Հայաստանը բաժանվեց երկու բրոնակալների միջև, և Մավրիկիոս կայսեր անցավ Հայոց երկրի մեծ մասը՝ արևմտյան սահմաններից մինչև Դվինի մատույցները, հարավում մինչև Վանա լիճը։ Հանգամանալից տվյալներ կան, որոնք ցույց են տալիս, թե ինչպես բյուզանդական արքունիքն ու եկեղեցին բռնությամբ քաղկեդոնություն էին տարածում նվաճված հայկական նահանգներում։ Հայտնի են Մորիկի, Հերակլի ու նրանց գործակալների բռնությունները հայոց եկեղեցու հայրերի վրա, նրանց դաժան ջանքերը Հայաստանը մեկընդմիշտ իրենց դավանությանը դարձնելու։

Եվ ահա հենց այս պայմաններում էլ կատարվեց հրաշքը։ Հայ ժողովուրդն աղետների ու արհավիրքների դեմ վերսին բարձրացավ ստեղծումի իր անկասկածելի հիզերով և աքանչելի իրականացումներով։ Կրկնվեց 5-րդ դարի արարումի անախադեպ ոգորումը, այժմ ոչ թե դպրության ու մատենագրության, այլ շինարարության բնագավառում։ Շինարարությա՛ն, որի 7-րդդարյան հրաշքը հնարավոր պիտի լիներ միայն զրական-գիտական ոգեղարից հետո, որովհետև ճարտարարուեստության ոգեղարի հրաշալիքները կարող էին կանգնել միայն զրականության կոթողների վրա հոգևոր բարձր թռիչքների պատրաստված, մաթեմատիկական ու երկրաչափական բարդ հաշիվներ կատարող ճարտարապետների, շինարար մարդկանց ձեռքերով, նաև մեր մատենագրական-դիտական աշխարհներում բարձրացած Անանիա Շիրակացու կողքին, նրա հոգևոր միջավայրում։ Ինչպես 4-րդ դ. վերջին՝ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն ու Վռամշապուհ Թագավորը, ապա և նրանց իմաստուն աշակերտները,— նոր հերոսները կարողացան օգտվել նվաղագույն հնարավորություններից, անհնարինը հնարավոր դարձրին՝ կառուցելու, երկրի ճարտարապետական շքեղ դեմքն ստեղծելու և հենց դրանով էլ ուծացնող ամեն տեսակ փոթորիկների դեմ հայ ազգն անպարտելի դարձնելու համար։ Այդ գործիչների անունները պահել է հրախտագետ պատմությունը։ վարչաքաղաքական բնագավառում դրանք էին՝ Հայոց սպարապետ, ապա և մարզպան Թեոդորոս Ռշտունին (մինչև 654 թ.), Հայոց իշխան-կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանը (652—685 թթ.), Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը (615—628 թթ.), Ներսես Իշխանեցի կաթողիկոսը (641—661 թթ.), Անաստաս Ակռուեցի կաթողիկոսը (661—667 թթ.) և նրանց քաջահմուտ աշակերտներն ու գործակիցները։

4—6-րդ դարերի հայկական ճարտարապետական հուշարձանները (Դվինի, Արտաշատի և այլ հնավայրերի պեղումները) ապացույց են, որ հայ շինարարները կարևոր առաջադիմություն են կատարել քաղաքաշինության բնագավառում։ Եկեղեցաշինությունն ավելի մեծ նվաճումներ էր արձանագրել, քանի որ ոչ միայն կատարելության էր հասցվել բազիլիկը, որի լավագույն օրինակներն այժմ էլ պահպանվում են (Քասախ, Տեկորի, Աշտարակի, Եղվարդի բազիլիկները), այլև սկզբնավորվել և շատ վայրերում արդեն կիրառվել էր գմբեթը՝ իբրև մի նորույթ, որը Հայաստանում կիրառվեց հին հունական ու հռոմեական տիպի հետ միաժամանակ։

Այս ամենով ասես հայ շինարարները մրցության մեջ էին մտել արևմուտքի ու արևելքի գործընկերների հետ։

Իսկ սա հեշտ գործ չէր, թեթև մոռանանք, որ Բյուզանդիայի հենց այս ժամանակաշրջանը հայտնի է շինարվեստի այնպիսի խորհուրդ խիզախումով, որպիսին Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի եռանավ գմբեթածոր բազիլիկի կառուցումն է 532—547 թթ. (երկարությունը՝ 77 մ, գմբեթի տրամագիծը՝ 31,4 մ)։

Գմբեթը նորություն չէր նաև արևելյան երկրներում։ Նույն շրջանի Իրանում, օրինակ, քառակուսի դահլիճի չորս պատերի վրա հաջողությամբ էին բարձրացնում նման կառուցվածքը։

Հայ ճարտարապետներն իրենց առաջ ուրիշ խնդիրներ էին դնում՝ բյուզանդական ճարտարապետների հետ զուգահեռ, հաճախ էլ համագործակցելով կամ փորձի փոխանակումով ստեղծել այն բարդ հորինվածքը, որի մեջ գմբեթը բարձրանում է ոչ թե չորս պատերի կամ պատերից մույթերի, այլ թմբուկի վրա, որն էլ իր հերթին հեցած է լինում խաչվող կամարներից հյուսված առագաստին։

Ի դեպ, այս փորձի փոխանակման կամ ազդեցության մասին խոսելիս չի կարելի կարծել, թե հայերը միայն կրավորական դեր ունեին։ Հայտնի է, որ վերոհիշյալ Ս. Սոֆիայի տաճարի երկու շինարար-ճարտարապետներից մեկը՝ Անթեմիոս Տրալացին, մասնագիտական պատրաստություն է ստացել Հայաստանում, և նույն տաճարի գմբեթը, որ կործանվել էր երկրաշարժից, 989—992 թթ. վերականգնել է Անիի զվարթնոցատիպ եկեղեցիների հեղինակ հռչակավոր Տրդատ ճարտարապետը[1]։

Գտնում են, որ արևելաքրիստոնեական աշխարհում կառուցված առաջին տաճարները՝ չորս ներքին սյուներին հեցած թմբուկի վրա բարձրացող գմբեթով, Տեկորի բազիլիկն է և նրա նախօրինակը հանդիսացող էջմիածնի մայր տաճարը։ Սրանցով փակվեց հայ ճարտարապետության 5-րդ դարը։ 6-րդում եկեղեցական շինարարության համար ամենակարևոր խնդիրն էր դարձել գմբեթավոր դահլիճի կատարելագործումը, որը գնաց երկու ուղղությամբ։ Մեկի համար ելման կետն էր բազիլիկ տիպը՝ արևմուտքից արևելք երկարող սրահը, որը պսակվեց գմբեթով (գմբեթավոր դահլիճ, գմբեթավոր եռանավ բազիլիկ)։ Մյուսի հիմքն էր հայկական հինավուրց գըլխատունն իր գմբեթանման երդիկով, որը կատարելագործվելով տվեց բազմաթիվ տարբերակներ՝ մնալով խաչաձև-գմբեթավոր տիպի սահմաններում։

Առաջին տիպը, որի համար ակունք են համարվում Տեկորի տաճարն ու Երերույքի բազիլիկը, ներկայացնում են Օձունի տաճարը (5—6-րդ դդ.), Գայանեն՝ էջմիածնում (630 թ.), Մրենի (639 թ.), Բագավանի (639—640 թթ.) տաճարները, ինչպես նաև Դվինի 608 թ. վերակառուցված կաթողիկեն ու Թալինի տաճարը (7-րդ դ. երկրորդ կես)։

Երկրորդ տիպը, որ ամբողջությամբ և մանրամասներով համարվում է հայոց եկեղեցական ճարտարապետության ինքնուրույն ու ինքնատիպ երևույթը, սկզբնավորվել է 7-րդ դարում, պահպանված հնագույն նախօրինակ ունի էջմիածնի Մայր տաճարը (301 թ.), որի հիմքերի վրա 5-րդ դ. 80-ական թվականների երկրորդ կեսին Վահան Մամիկոնյան մարզպանի օժանդակությամբ Ղազար Փարպեցին է կառուցել («հիմնարկեալ նորոգեաց»)։ Այստեղ նախնական բազիլիկ դահլիճում կանգնեցված հիմքերի վրա բարձրացել է գմբեթը՝ նշանավորելով կենտրոնագմբեթ խաչաձև դահլիճի ձևի հաղթանակը։ Էջմիածնի փորձն իր զարգացումն ստացավ Ավանի խաչաձև-կենտրոնագմբեթ տաճարում (591—602), Զովունիում (6-րդ դ. սկիզբ), Պողնիում (6-րդ դ. վերջ—7-րդի սկիզբ) և այս տիպի գլուխգործոցը համարվող Հռիփսիմեի տաճարում (618)։ Այս տիպի տաճարներից են դարձյալ 7-րդ դարում կառուցված Ս. Աստվածածինը Վասպուրականի Արծվաբերդում, Ս. Հովհաննեսը Սիսիանում, Ս. Նշանը Արամուսում, Ս. Գևորգը Գառնահովտում (Թալինի շրջան), Բարգմանչաց վանքը Այգեշատում (Էջմիածնի շրջան), Մաստարայի Ս. Հովհաննեսը, Հառիճի հին տաճարը են, հսկայական մի քանակություն, որին էլ եթե գումարելու լինենք նույն դարի փոքրածավալ գմբեթավոր դահլիճներն ու մատուռները, որոնք աչքի են ընկնում ճարտարապետական ձևերի կատարելությամբ, ապա պարզ կդառնա, թե մեկ դարու ընթացքում հայ ժողովրդի տարբեր հատվածները, իշխանական տները և եկեղեցական մեծ ու փոքր թեմերը, առանձին բարեպաշտներ ինչպես երկիրը ծածկել են անանխադեպ շինարարական եռուզեռի հրաշալի արգասիքներով։

Այս շրջանի տաճարային կառույցների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում մասնագետների կողմից մատուռայատիպ կոչվածը, որը ևս լայնորեն տարածված է, մանավանդ՝ համեմատաբար լավ պահպանված մի քանի հուշարձանների մեջ։

Մաստարայի (Թալինի շրջանում). Ս. Հովհաննես համարյա քառակուսի (12×11,20 մ) հատակագծով տաճարի զարդաքանդակները (բարավորների հնատիպ խաչերը, արևմտյան ճակատի խաչքանդակը զույգ թռչունների հետ միասին, կամարակապ պսակի աղավնիների բարձրաքանդակները են) ակնհայտորեն 5-րդ դարի հետ են կապվում, և իրավացի են այն հետազոտողները, որոնք այս հուշարձանն այդ շրջանի կառույց են համարում՝ էական նորոգման ու վերակառուցման ենթարկված 7-րդում՝ Գրիգորասի կողմից, որի արձանագրություններն էլ պահպանվել են եկեղեցու վրա։ Այստեղ, հավանաբար, հենց նախնական կառուցվածքում տակա են եղել ճար-

[1] Տես՝ А. Ф. Гольштейн, Зодчество, Москва 1979, էջ 133—134.

տարապետական մի շարք առանձնահատկություններ, որոնք տիրական պիտի դառնային հետագայի շինարվեստի մեջ։ Դրանք են՝ մեծածավալ դահլիճը, նրա վրա բարձրացած գրմբեթակիր թմբուկի և հենց իր՝ գմբեթի լայնշի բացվածքները, որոնք սրահի հետ հավասարակշռվելով՝ նրան տալիս են վեհություն ու անդորրություն։

Մաստարայի տաճարի ճարտարապետական տիպը, ծնված լինելով բացառապես հայկական շինարվեստում, արագորեն տարածվել է երկրի տարբեր վայրերում՝ թողնելով այնպիսի ուշագրավ կառույցներ, ինչպես՝ Ոսկեփաթի Աստվածածինը (6-րդ դ.), Արթիկի Ս. Սարգիսը (7-րդ դ.), Հառիճի Ս. Գրիգոր եկեղեցին (7-րդ դ.)։ Այս տիպն օրինակ է եղել նաև հետագա դարերի հայ շինարարների համար, և պատահական չէ Կարսի Առաքելոցը (930—933 թթ.), որի մեջ երևի թե սպառվել են Մաստարայի տիպի ստեղծագործական բոլոր հնարավորությունները։

Եթե 7-րդ դարի հայկական ճարտարապետության հուշարձաններից ընտրելու լինենք 2—3 ամենակատարյալները, ապա նրանցից մեկն անպայման կլինի Վաղարշապատի Հռիփսիմեի տաճարը։ Այն 618 թ. կառուցվել է 4-րդ դարից գոյություն ունեցած վկայարանի տեղում, ավելի ճիշտ՝ նրա հիմքի վրա, և տաճարի գլխավոր արսիդի տակ ամփոփված պահպանվել է վկայարանի դամբարանային մասը։ Ըստ ավանդության՝ այստեղ են տեղավորված քրիստոնեության դարձի ժամանակ նահատակված Հռիփսիմե կույսի մասունքները։

Տաճարի ներսում, արևելյան արսիդում, պահպանվել է շինարարական հետևյալ արձանագրությունը։ «Քրիստոս աստուած, յիշեա զԿոմիտաս Հայոց կաթողիկոս՝ շինաւղ սրբոյ Հռիփսիմէիս»։

Հռիփսիմեի տաճարը մեզ է հասել իր նախնական կերպարի անխաթարությամբ, և մենք այսօր բախտ ունենք տեսնելու ճարտարապետական-գեղարվեստական այն տեսքը, որ նրան տվել է 7-րդ դ. սկզբին ճարտարապետը՝ Կոմիտաս կաթողիկոսի (615—628 թթ.) հանձնարարությամբ, նրա հսկողության ներքո։

Որ խոսք է լինում ճարտարապետական կյանքում որոշակի շրջան նշանավորող որևէ երևույթի մասին, բնականաբար

առաջանում է այն հարցը, թե որտեղի՞ց է գալիս այդ երևույթը, ի՞նչ ակունքներից է սնվել, որպեսզի բարձրանար, դառնար ժամանակի ազգային գեղարվեստական մտածողության ու շինարարական փորձի հայտարարը։

Հռիփսիմեի հատակագծի համար մերձակա նախատիպ է համարվում Ավանի կաթողիկեի կառուցվածքը (591 թ.), որի հետ, սակայն, նրա ընդհանրությունները քիչ են, այնքանը միայն, որ երկուսն էլ քառակուսի հատակագիծ ունեն, և նույնիսկ այստեղ էլ առկա են սկզբունքային անհամաձայնություններ. Ավանում անկյունների սենյակները շրջանցային են, այստեղ՝ քառակուսի։ Ինչ վերաբերում է արտաքին ձևերին, ապա այստեղ արդեն Հռիփսիմեի ճարտարապետը շատ հեռուն է գնացել՝ իր շինության չորս ճակատային պատերի երեսները վերից վար հատելով երկուական խորշերով, որոնք պատի լայնանիստ զանգվածին հաղորդում են թեթևություն և ստեղծում լույսի և ստվերի աշխույժ խաղեր։

Ամբողջ շենքը կառուցված է միագույն (գորշավուն սև) տուֆով, և հսկա, բազմանիստ գմբեթը, տիրաբար նստած քառաթև հորինվածքի վրա, նրան այնպիսի տեսք է տալիս, հեռվից այնպես է երևում, թե տաճարը կերտված է վիթխարի միակտոր քարից, դրված գետնից փոքր-ինչ բարձր պատվանդանի վրա՝ ի տես ամենեցուն։

Այս միասնականությունը համերաշխորեն ներդաշնակվում է շրջապատի վրա խշխող դիրքին ու հզոր շրջապարսպին, և արտաքին ամբողջական տպավորությունն այն է լինում, թե մարդ գործ ունի ամրոցի կամ, համենայն դեպս, մի կառույցի հետ, ուր պահպանվում և պաշտպանվում են ազգային արժեքները։

Հռիփսիմեի տաճարը հեռուներից դիտվելիս անգամ հիացմունք է պատճառում միասնական և հզոր ծավալներով, իսկ դիտողին իր ներսն առնելով՝ պարգևում է մոնումենտալ-հարազատության այն զգացումը, որը սովորաբար օրինական ծնունդ է լինում գեղարվեստական անթառամ արժանավորություններին։ Չորս արսիդների ներդաշնակ համաչափությունները, սրանց միջև դասավորված չորս խորշերը, որոնք պատկվում են բազմանիստ ու լուսավոր գմբեթով, գմբեթի լուսամուտներից շեղակի վար թափվող լուսափնջերը՝ միասին ստեղծում են վեր-

երկրային տրամադրություն, առավել են խորացնում արտաքին ձևերից ստացած հիացմունքը։ Մասնագետները ճիշտ են նկատել, որ կառուցողների մտահոգության առարկա է եղել տաճարի լուսավորության հարցը, և այն լուծվել է մեծ հմտությամբ. երեք պատուհաններով լուսավորվող գլխավոր աբսիդը ցայտունորեն ընդգծվում է համեմատաբար նվազ լուսավորվող մյուս աբսիդների և հատկապես՝ չլուսավորվող ու դրանով իսկ մթնշաղային խորհրդավորությամբ պարուրված խորշերի նկատմամբ, իր վրա կենտրոնացնում դիտողի ուշադրությունը։

Լուսավորության հմայքն առավել անդիմադրելի է դառնում գմբեթի հնարավորություններով. այստեղ տասներկու բարձր լուսամուտներից ներս հոսող առատ լույսը վար թափանցելով՝ ատիճանաբար սպառվում է, դարձյալ դիտողին պահելով այն պայծառ խորհրդավորության մեջ, որ ստեղծվում է վերին ծավալների անխառն վեհության շնորհիվ։

Հռիփսիմեի տաճարն իր տիպի բարձր կատարելությունն էր, մի անհասանելի ատիճան, որն այլևս չկարողացան հաղթահարել նույն տիպին հետևողները։

Նոր գծեր, ճարտարապետական նոր կերպար կարող էր ստեղծվել մի այլ ճանապարհով, կառուցվածքային ուրիշ լուծումների շնորհիվ։ Եվ այս էլ կատարվեց հաջորդ տասնամյակների հայկական շինարարական կյանքում, Հռիփսիմեից ոչ այնքան հեռու, Արարատյան դաշտի կենտրոնում։ Արդյունքը եղավ Զվարթնոցը՝ հայ ճարտարապետության ոսկեդարի մեծագույն նվաճումը։

Զվարթնոցով և առհասարակ 7-րդ դարի կեսի մեր շինարարական աննախընթաց վերելքով մենք պարտական ենք այդ շրջանի հոգևոր վեհապետ Ներսես Դ Իշխանցուն կամ Տայեցուն (641—661), որի գահակալության տարիները համընկել էին Բյուզանդիայի բռնի-միաբարական քաղաքականության մոլեգնումի և արաբական արշավանքների առաջին-խառնակիչ շրջանին։ Ներսես կաթողիկոսին մեղադրում են բյուզանդական հավատի՝ քաղկեդոնականության առաջ կատարած զիջումների համար։ Սակայն, հավանաբար, այստեղ պետք է տեսնել քաղաքական-հոգևորականի ճկուն քայլը՝ կայսեր առաջ առնելու զիջումների գնալու և հայրենի հավատի հիմունքները անխախտ պահելու նպատակով։ Այսպես նա կարողացավ չեզոքացնել արևմուտքից եկող ճնշումը և կարճ ժամանակում նորոգեց Դվինի Ս. Սարգիս, Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցիները, Վասպուրականի Զորոփ վանքը, կառուցեց նոր Վիրապի հիմա գոյություն չունեցող եկեղեցին (որի մասին հիացմունքով է գրել Ալ-Մուքադասին 10-րդ դ. վերջին), Իշխանի զվարթնոցատիպ տաճարը, և վերջապես, Զվարթնոցն ու նրա օժանդակ շինությունները (հայրապետական պալատը, պարիսպն ու տնտեսական կառույցները)։ Եվ այս բոլորի համար է, որ երախտապարտ սերունդները նրան կոչել են Ներսես Շինող։

Զվարթնոցը կառուցվել է 642—652 թթ. և ունեցել է շուրջ 300 տարվա կյանք, դիմանալով մեր պատմիչների կողմից վկայված 893 թ. ահավոր երկրաշարժին։

Կառույցի առանձին մասերում, հատկապես այն տեղերում, ուր հարկ է, որ կառուցվածքը թեթևանա՝ իրենից վար գտնվող հատվածի վրա ընկնող բեռը տանելի դարձնելու համար, օգտագործված է պեմզան՝ և՛ առանձին քարերի ձևով, և՛ իբրև մեծազանգված բետոնի հիմնական նյութ։

Սյունաշարերում, դրանք խարիսխների ու խոյակների հետ ամուր կապելու նպատակով, օգտագործված են երկաթե խոշոր գամեր, որոնք քարի հետ միացնելու տեղերում կապար է լցվել, մի եղանակ, որ հայ շինարարը դիտեր դեռևս Գառնիի բերդապարիսպը կառուցելիս։

Զվարթնոցի տաճարը, ինչպես և 5—7-րդ դարերի մեր բազմաթիվ հուշարձանները, ծածկված է եղել կղմինդրով։ Պեղումներից հայտնաբերվել են մեծ ու փոքր, հարթ ու կոթողաձև կղմինդրներ։ Նրանց մեջ կան այնպիսիները, որոնք մեխով ամրացված են տակի կրաշաղախին։ Կարելի է ենթադրել, որ սրանք դրված են եղել ծածկը եզրափակող հատվածներում։

Այսպիսով, 7-րդ դ. հայոց ճարտարապետության թագ ու պսակ համարվող հուշարձանի պեղված բեկորներն ու ամեն տեսակ մնացորդներն այնքան շատ են, այնքան բազմազան, որ համարյա դժվարություն չէր մնում վերակազմելու նրա ճարտարապետական ամբողջ պատկերը՝ համարյա բոլոր մանրամասներով։

Զվարթնոցի տաճարը փլվելուց հետո ավելի քան ութ դար

հողաշերտի տակ մնալով, հայտնաբերվել է մեր դարի սկզբին (1900—1907 թթ.) կատարված պեղումներով, որոնք սկզբում իրականացրել է նաչիկ վարդապետ Դաղյանը միայնակ, ապա ճարտարապետ Թորոս Թորամանյանի հետ միասին։ Արևերես են ելել պատերի վարի մասերը, բազմաթիվ որմնաբեկորներ՝ հաճախ հսկայական զանգվածներով, խոյակներ, զարդաքանդակ քարեր, կամարների սրբատաշ մնացորդներ, միակտոր սյուներ, նրանց առանձին հատվածներ, բեկորներ, որոնք իրենց վրա կրում են պատկերաքանդակների մնացորդներ, վարդ. նոտանշաններ ու վիմագրերի հատվածներ։

Թորամանյանը 1905 թ. արդեն ներկայացրեց տաճարի վերակազմության իր նախագիծը՝ ցույց տալով, որ այն, նրման չլինելով վաղմիջնադարյան հայկական ճարտարապետական հուշարձաններից որևէ մեկին, իր մեջ ընդգրկում է նրանց լավագույն գծերը և նշանավորում է մի նոր աստիճան, մեր շինարվեստի այնպիսի հաղթանակը, որ հետագայում, մինչև 10—11-րդ դարերը՝ Անիի շրջանը, իր ազդեցության տակ պիտի պահեր հայոց հողի վրա կանգնող ամեն մի նշանակալից կառույց։

Թորամանյանի վերակազմությունը բուն վեհեր հարուցեց՝ ամենից առաջ թերահավատությամբ լցնելով ժամանակի հետազոտողներից շատերին, որոնց պնդմամբ՝ այն դարում չէր կարող կառուցվել եռահարկ, վիթխարի մի շինություն, որի վերին ծավալները հենվում են կամարների վրա։ Սակայն շատ շուտով Անիի պեղումներից գտնվեց Զվարթնոցի օրինակով Դաղիկ Բագրատունու կառուցած Ս. Գրիգոր եկեղեցու մանրակերտը, որն իսկ և իսկ այն էր, ինչ վերակազմել էր հայոց ճարտարապետության մեծ գիտակը։

Թորամանյանի վերակազմությամբ՝ Զվարթնոցը ներսից քառակուսի-քառաբսիդ-կենտրոնագմբեթ, դրսից կլոր համաչափություններով, եռաստիճան, աստիճանաբար նեղացող մի հոյակերտ է, որի երրորդ՝ վերջին աստիճանը, բազմանիստ գմբեթն է իր վեղարաձև ծածկով։ Ճարտարապետը տաճարի բեկորներից վերականգնել էր առաջին ու երկրորդ հարկերի, գմբեթի արտաքին բոլոր ճակատների ճարտարապետական ձևերը, մանրամասները, հարդարանքը։ Առաջին հարկը վարից զարդարված է շքեղ կամարաշարով (32 կամար), որը նստած

է կրկնակ որմնասյուների վրա և իր տակ է առնում նեղ-երկարավուն լուսամուտները։ Այս հարկի վերնամասում, կամարաշարի յուրաքանչյուր կամարից վեր, մեկ կլոր լուսամուտ կա, որը ոչ միայն լույս է տալիս ընդարձակ դահլիճին, այլև դրսից խախտում է մեծազանգված նիստի հարթությունը, ստեղծում մի ակնահաճ ներդաշնակություն վարի փառահեղ կամարների հետ։ Նեղ համաչափություններ ունեցող երկրորդ հարկը հարդարված է 16 կամարազարդ պատուհաններով, որոնց եզրերը ևս ունեն որմնասյուներ և ներկայացնում են մի վեհ պատկեր՝ լայնանիստ-հզոր գմբեթի ներքո, որով ավարտվում է շինությունը։

Իր հատակագծային կառուցվածքով մեր ավանդական քառակոնք տիպին պատկանող կառույցը շրջափակված է օղակաձև, սյունազարդ սրահի մեջ։ Արևելյան աբսիդն իրենից ներկայացնում է փակ կիսաշրջան։ Իսկ մյուսներում կիսաշրջանաձև ջարված սյուների վրա բարձրանում են այդ կիսաշրջանները վեր հանող պատեր։ Աբսիդների անկյուններում տեղադրված հզոր մույթերն են, որ իրենց վրա կրել են կամարներ, և սրանց վրա դրվել է տաճարի թմբուկը, վերջինիս վրա էլ՝ գմբեթը։

Հարդարանքի մեջ հմտորեն օգտագործված են սյունաշարի, առանձին սյան, որմնասյուների, մուտքերի ու պատուհանների կամարների և երեսակալների ընձեռած անսահման հնարավորությունները։ Ինչպիսի՜ վեհություն է ստեղծված զույգ կիսասյուների վրա նստող խոյակների քանդակազարդերի՝ ականթների ու արմավենիկների միջոցով։ Դրանցից վեր բարձրաքանդակ զարդերը ներկայացրել են տեղական բուսական հնավանդ մոտիվները՝ որթագալար ու խաղողի ողկույզ, նռան ճյուղ ու նուռ, ոճավորված զանազան տերևներ ու երկրաչափական զարդեր։

Սրահի ներսի հզոր սյունների խոյակները, մեծազանգված ու բազմապիսի, արդեն ուրիշ քանդակազարդեր ունեն։ Այստեղ մե՛կ հյուսածո զամբյուղ է ներկայացնում՝ կենտրոնում խաչ, բառերի կամ տառերի փորագրություն, ոլորազարդեր, մե՛կ թեատարած արծիվների խրոխտ պատկերներ, որոնք ասես իրենց վրա պահում են երկնակամարը խորհրդանշող գմբեթը։

Արտաքին հարդարանքում, հատկապես առաջին հարկի կամարազարդի մեջ, կիրառվել է մի ինքնատիպ մոտիվ. որմնասյուների խարիսխների հատվածներում քանդակված են եղել մարդկային պատկերներ (վերից մինչև գոտկատեղ)՝ շինարարական գործիքներով, մեկի կողքին՝ «Յովհան» փորագիր անունը, որն, անկասկած, շինարարների գլխավորին է վերաբերում։ Քանդակներից յուրաքանչյուրն իր ինքնահատուկ դիրքն ու դիմապատկերն ունի, տարբեր են նաև ձեռքներին բռնած գործիքները։

Պեղումների ժամանակ աբսիդների մասերում գտնվել են նաև խճանկարի բեկորներ, ծեփի հատվածներ՝ որմնանկարների մանրամասներով։ Եվ սա էլ վկայություն է, որ շինության հատակին, պատերի վրա օգտագործվել է նախընթացի հայկական շինարվեստում տարածված խճանկարային ու որմնանկարային հարդարանքը։

Զվարթնոցը հայ շինարարների աննախադեպ սխրանքն էր՝ նախորդ դարերի կառուցողական գործի ու փորձի լավագույն ավանդների համադրությամբ ստեղծելու մի շինություն, որն անհասանելի օրինակ էր մնալու հաջորդ դարերի համար։

Շինարարության ժամանակակից մեր պատմիչը՝ Մովսես Կաղանկատվացին, հաղորդում է, որ Զվարթնոցի օծմանը ներկա է գտնվել նաև Բյուզանդիայի կայսրը, որը, հիացած հայ վարպետների ստեղծագործությամբ, նրանց կարգադրել է իր հետ գնալ և Բյուզանդիայի մայրաքաղաքում ևս կանգնեցնել այդպիսի մի շինություն։ Սակայն կարգադրությունը չի իրականացել, որովհետև ճանապարհին վախճանվել է ճարտարապետ-գաղատոսը։

Կոստանդնուպոլսում չկանգնեց Զվարթնոցի նմանակը։ Սակայն Հայաստանի տարբեր մասերում, ինչպես նաև հարևան Վիրքում ու Աղվանքում, ուր այն ժամանակ տիրապետող էր հայոց եկեղեցական ու մշակութային ազդեցությունը, կառուցվեցին զվարթնոցատիպ մի շարք եկեղեցիներ։ Հենց ինքը՝ Զվարթնոցի շինարարության մեծ նախաձեռնող Ներսես կաթողիկոսը, իր հայրենի Իշխան ավանում 652—659 թթ. կառուցեց նույնատիպ մի եկեղեցի։ Միաժամանակ այդպիսի տաճարներ կանգնեցին Վիրքի Բանա-Բանակ ավանում, Աղվանքի Լյաքիթում (Նուխի-Շաքիի մոտ)։ Իսկ բուն Հայաստանի համար Զվարթնոցը ոգևորության աղբյուր և դասական օրինակ հանդիսացավ ոչ միայն իր կանգուն պատկերով (նրա օրինակով են կառուցվել Գառնիի—659, Եղվարդի Զորավար—670-ական թթ. և մի շարք ուրիշ տաճարներ), այլև այն ժամանակ, երբ խորտակված էր արդեն բնական արհավիրքից, և մնացել էր միայն նրա փառավոր հիշատակը։ 11-րդ դարի սկզբին Անիի երախտավոր գահակալներից մեկը՝ Գագիկ Երկրորդ Բագրատունին, իմանալով, որ երկրաշարժից կործանվել է Զվարթնոցը, բայց երևի թե տեսած լինելով նրա անզուգական հրաշքը, Անիում կառուցել տվ՝ց մի տաճար, որը ճշտությամբ ներկայացնում էր Զվարթնոցի ո՛չ միայն ճարտարապետական կերպարը, այլև չափերը։

Զվարթնոցը հայոց ճարտարապետության ոսկեդարի գլուխգործոցն է, միաժամանակ մեր շինարվեստի եզակի կոթողներից մեկը, որ պատռել է ազգային ու տեղական սահմանները, դարձել քաղաքակիրթ աշխարհի մշակութային խոշորագույն գանձերից մեկը, հիացումի ու սքանչացումի առարկան։ Եվ պատահական չէ, որ Փարիզի Սեն-Շապել տաճարի (1243—48 թթ.) դռան բարձրաքանդակներում պատկերված է փրկարար Նոյան տապանն Արարատի վրա, թիկունքում՝ Զվարթնոցի եռահարկ հրաշակերտը։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Պարսկական և բյուզանդական բռնատիրությունների դեմ հայ ժողովրդի մղած տևական ու համառ պայքարը չանցավ ապարդյուն։ 6-րդ դարի վերջին և 7-րդ դարի սկզբին Հայաստանում օտար տիրապետությունն այնքան թուլացել էր, որ երկրի փաստական տնօրենները բնիկ իշխանական տների ներկայացուցիչներն էին դարձել։ Եվ դրա արդյունքն էր տնտեսական ու մշակութային այն վերելքը, որ տեղի ունեցավ այս ժամանակ, հատկապես 7-րդ դարի առաջին տասնամյակներում։ Հիշենք հենց այս շրջանում կառուցված Հռիփսիմեի, Գայանեի եկեղեցիներն էջմիածնում և, վերջապես, Զվարթնոցի հոյակերտը։ Սրանք հայկական ճարտարվեստի ամենավսեմ խիզախումներն էին, որ անգերազանցելի պիտի մնային հետագա դարերում։

Սակայն այս անգամ էլ հայ ժողովրդին չպիտի վիճակվեր երկարատև խաղաղություն կամ անկախության պատրանքի վայելում։ Հայաստանից հարավ ստեղծվել էր ռազմա-ավատական մի պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը ծավալվում ու հզորանում էր օրեցօր։ Այն կարճ ժամանակում նվաճեց ու հպատակեցրեց Սասանյան Իրանը, ապա նվաճեց բյուզանդահպատակ շատ երկրներ և շարունակում էր իր հաղթական երթը՝ բռնված տիեզերակալության փափագով ու իսլամի մոլեռանդությամբ։

Իսլամի նորահավատները Հայաստանում ոտք դրին 640 թվականի աշնանը։ Համարյա ոչ մի դիմադրության չհանդիպելով՝ նրանք հասան երկրի կենտրոնական գավառները և ասպատակեցին։ Ապա գրավելով Դվին քաղաքը՝ ավարի ու

ավերի ենթարկեցին այն և գերիների մի հոծ բազմություն առած հեռացան։

Այս առաջին արշավանքը, ասես, հետախուզություն էր եղել, արաբները ծանոթացել էին տեղանքին, համոզվել, որ ասպատակ փռելը հեշտ է։ Եվ նրանք նորից եկան երկու տարի հետո։ Սակայն այս անգամ սպարապետ Թեոդորոս Ռշտունին երկուհազարանոց հեծյալ գնդով հարձակվեց Կոգովիտ գավառի Արծափի բերդը գրաված արաբական զորամասի վրա, ջարդեց այն։ Նույն կերպ վարվեցին նաև երկրի մյուս մարզերում ու գավառներում։ Արաբները ջարդ կրեցին նաև Երևանի ու Նախիջևանի բերդերը պահպանող տեղացիներից։

Երրորդ անգամ արաբները Հայաստան մտան 650 թվականին։ Վերստին ասպատակեցին շատ գավառներ, հսկայական ավար ու գերիներ առած վերադարձան հարավ։ Երկրի իշխանավորները, համոզված, որ ահռելի արաբական բանակներին դիմադրելն անհնար է և պայքարն անիմաստ, փորձեցին բանակցություններ վարել խալիֆայության կենտրոնում։ Եվ սպարապետ Թեոդորոս Ռշտունուն հաջողվեց արաբների հետ կնքել մի համաձայնագիր, որով, ճիշտ է, Հայաստանը ճանաչում էր խալիֆայության գերիշխանությունը, սակայն առաջին երեք տարին հարկ պետք է վճարեր, իսկ խալիֆայությունը Հայաստանում զորք չպետք է պահեր։ Սակայն ո՞ր բռնակալն է հետևել որևէ օրինականության, որ արաբները հետևեին։ Հենց համաձայնագիրը կնքելուց հետո անմիջապես նրանք հարձակվեցին Արևելյան Հայաստանի վրա և ավերեցին մի շարք գավառներ։ Հետագայում այս հարձակումները դարձան պարբերական ու ավելի դաժան։ Իսկ որ ամենասոսկալին է, Հայաստանը 7-րդ դարի վերջում ոչ միայն արաբների ու բյուզանդացիների ասպատակությունների վայրն էր, այլև արաբա-բյուզանդական ճակատամարտերի թատերաբեմը, որ նշանակում է՝ այն կրկնակի ամայանում էր պատերազմողների կրնկի տակ։

Այլևս անկարող լինելով տանել այս օրհասական վիճակը, Հայաստանի նախարարական տների ներկայացուցիչները խորհուրդ են անում և որոշում թողնել հայրենիքը, ապրել բյուզանդական տիրապետության ներքո՝ արևմտյան մարզերում։ Սակայն իրենց այս մտադրությունն իրականացնելու ճանա-

պարՀին, Մասիսների ստորոտում, Հանդիպում են արաբական մի զորաբանակի, որը Հայերին տեսնելուն պես նեռվում է ճակատամարտի։ Հայերը, Սմբատ Բագրատունու գլխավորությամբ, անցնում են Երասխը և ամրանում Վարդանակերտ գյուղում՝ ջանալով խույս տալ արյունահեղությունից։ Արաբները, սակայն, նպատակ չունեին ազատ թողնել հակառակորդին և պաշարելով գյուղը։ Այն ժամանակ Սմբատ Բագրատունին իր փոքրաթիվ զորագնդով լուսադեմին, Հայաստանյան սառնամանիքի պայմաններում, հարձակվեց մեծաքանակ արաբների վրա, կոտորեց նրանց հիմնական մասը, իսկ կենդանի մնացածներին էլ հալածեց մինչև Երասխ և թափեց սառած գետի մեջ։ Վարդանակերտի ճակատամարտը կործես ահազանգ էր Հայոց երկրի մնացած նահանգների համար։ Արաբական կայազորների դեմ ելան ու նրանց անխնա կոտորեցին Վանանդի կողմերում, Սյունիքում ու Արցախում։

Արաբական խալիֆայությունը, տեղեկանալով այս դեպքերի մասին և իմանալով, որ դրանից հետո էլ նույն հայ նախարարները՝ դաշնակցած բյուզանդացիների հետ, կռիվ են տվել արաբ կառավարիչ Մուհամեդի դեմ, լցվում է մի ահավոր վրիժառությամբ։ Ապստամբական ելույթների ղեկավարները նախարարական տների ներկայացուցիչներն են եղել։ Նաև նրանք են արաբական բռնապետության բոլոր միջոցառումների խափանողները Հպատակ Հայաստանում։ Ուրեմն, նրանք էլ պետք է հատուցեին այդ բոլորի համար։ Նրանք պիտի դառնային այդ ահավոր վրիժառության զոհերը։

Եվ ահա 706 թվականին արաբ կառավարիչը Նախիջևանի իր տեղապահին կարգադրում է գործի անցնել։ Տեղապահ Կասրմը հրավեր է հղում Հայաստանի բոլոր նախարարական տների ներկայացուցիչներին, որպեսզի ժամանեն Նախիջևան՝ ցուցակագրվելու, քանի որ, իբր, խալիֆը թոշակ պիտի նշանակի բոլորին։ Հավատավոր Հայ նախարարների մեծ մասը եկավ այդ հրավերին։ Սկածներն այնքան շատ էին, որ Կասրմը մի մասին ուղարկեց մոտակա Խրամ ավան։ Նախիջևանում ու Խրամում բոլորին փակելով եկեղեցիների մեջ, նրանց հայտարարեցին կալանավորված։ Ապա եկեղեցիների դռները ազյուսապատելով, փայտե ծածկերը վառեցին։ Այսպիսով երկու եկեղեցիների մեջ վառվեցին Հայ նախարարական տների շուրջ

800 ներկայացուցիչներ, որոնք կազմում էին Հայոց ավագանու ծաղիկը։ Իսկ նրանք, որ չէին եկել այդ անլուր վրիժառությանը ենթարկվելու, կալանավորվեցին տեղերում և քշվեցին Արաբիա՝ տաժանակրության։

706 թվականը Հայոց միջնադարյան պատմության մեջ Հայտնի է որպես «կրակի տարի»։ Բռնակալի անգթությամբ բորբոքված այդ կրակի ճենճերահոտով ասես բռնված է ողջ միջնադարը։

8-րդ դարի սկզբի դեպքերով Հայաստանը վերջնականապես ընկավ Արաբական խալիֆայության տիրապետության տակ։ Խալիֆայությունը Հայաստանին միացրեց նաև Կուրից Հյուսիս տարածված երկրամասը՝ Աղվանքը, և Արևելյան Վրաստանը, ստեղծեց մի վիթխարի կուսակալություն՝ Դվին մայրաքաղաքով։

Հետագա տասնամյակներն արդեն Հայտնի են բռնակալների աննախադեպ չարությունների շարքով, հարկ ու տուրքերի բարձրացմամբ, որոնք նկարագրելիս մեր պատմիչները կարկամում են վշտից ու զայրույթից։ Արաբ տիրակալները նախկին ծանր ու անտանելի հարկերին ավելացրել էին նաև «ջիզյա» կոչվող այլադավանության հարկը, որը գանձվում էր ո՛չ մահմեդականներից և հետագա դարերում պետք է մնար արաբների հավատը ժառանգած բոլոր բռնակալների զինանոցում՝ որպես քրիստոնյաներին կեղեքելու և բռնի մահմեդականացնելու միջոց։

Այս վիճակը երկար հանդուրժել չէր կարող Հայ ժողովուրդը, որ գիտե կռվել իր ազատության ու անկախության համար և ճակատագրի բերած ամենասոսկալի պայմաններում անգամ ցուցադրել է իր հոգու արիությունը։

8-րդ դարի կեսերին խալիֆայության ներսում ծայր են առնում գահակալական խժդժություններ։ Օգտվելով այդ հանգամանքից՝ Հայ նախարարները մի քանի անգամ ապստամբություն են բարձրացնում, վերանվաճում իրենց ոտնահարված իրավունքները։ Ապստամբների պարագլուխներ էին երկրի երկու հռչակավոր տոհմերի՝ Մամիկոնյանների ու Բագրատունիների ներկայացուցիչները։ Դարի երկրորդ կեսին ապստամբական դրոշ էին բռնել նաև Արծրունիները։

Ապստամբները ոչնչացրին Կարինի, Վասպուրականի, Դվի-

նի և այլ կողմերում բնավորված արաբական կայազորները։ Շատ տեղերում ջարդել էին պատժիչ ջոկատներին և սպանել նրանց հրամանատարներին։ Խալիֆայությունն ստիպված եղավ ռազմական նոր համալրումներ կատարել, նոր զորքեր ուղարկել Հայաստան՝ իր խարխլված դիրքերը պահպանելու համար։ Հետագայում, իհարկե, խալիֆայությանը հաջողվեց ճնշել հայոց ապստամբությունները։ Սակայն հայ ժողովուրդն ու նախարարությունը փորձով համոզվել էին արդեն, որ անպարտելի չէ արաբական բռնությունը, և նրանից ազատագրվելու համար անհրաժեշտ է ոտքի ելնել երկրով մեկ՝ միասնաբար, բոլոր նախարարությունների միացյալ ուժերով։

Հակաարաբական շարժումներն ավելի կազմակերպված բնույթ ստացան 9-րդ դարի առաջին կեսում։ Անկասկած դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ խարխլվել էր խալիֆայության նախկին հզորությունը։ Գահակալական կռիվների հետևանքով գլուխը կորցրած կենտրոնն այլևս անկարող էր բռունցքի մեջ պահել տիեզերական տիրապետության ծայրամասերի սանձերը։ Սակայն հզորացել էին նաև ընդդիմադիր ուժերը։ Հայաստանում վերջը էր ապրում նախարարությունը։ Հին նախարարական տներն ապրում էին իրենց երկրորդ երիտասարդությունը։ Եթե Մամիկոնյաններն սպառվել էին համարյա, ապա նրանց տիրույթների մեծ մասերը տնօրինած Բագրատունիները հզոր էին ինչպես երբեք և 9-րդ դարի կեսերից սկսած հրաժարվում էին նույնիսկ հարկ վճարել արաբներին։ Իսկ Արևելյան Հայաստանում, առանձնապես նրա հյուսիս-արևելյան նահանգներում, սյունեցիները և Ուտիքի ու Արցախի նախարարական տները դարձել էին իրենց երկրամասերի լիիրավ տերերը։ Նրանց համար բացարձակապես ձևական բնույթ ուներ արաբական տիրապետությունը, որովհետև նրանք չէին ենթարկվում Ատրպատականի ամիրայությանը, որն այս ժամանակ պարտավոր էր իրականացնել արաբական տիրակալության միջոցառումները Արմենիա մարզում։

Հակաարաբական նախորդ ընդվզումների հաջողություններով ոգևորված հարավային հայկական գավառներում ըմբոստ պայքար է ծավալվում 851—852 թվականներին։ Ապստամբները ժողովրդական հերոս Խութեցի Հովնանի և Բագրատունյաց իշխանազունների գլխավորությամբ Մշո դաշտում ջախջախում են հայկական շարժումները ճնշելու եկած արաբական թարմ զորքերին։ Արաբ զորավար Յուսուֆը, որ զորքերը կորցնելուց հետո թաք էր կացել Մուշ քաղաքի եկեղեցու զանգակատանը, ցած բերվեց այնտեղից և ենթարկվեց խայտառակ մահապատժի։

Արաբական խալիֆայությունը որոշեց վրեժ լուծել կրած այսօրինակ խայտառակությունների համար։ Թուրք զորավար Բուղայի գլխավորությամբ 200-հազարանոց մի զորաբանակ ուղարկվեց Հայաստան և Անդրկովկաս՝ հանձնարարություն ունենալով ապստամբ մարդերի նկատմամբ լինել սոսկալի դաժան։

Եվ այսպես, 852 թվականի դարձանը Հայկական բարձրավանդակի հարավային սահմաններից եկող թուրք-արաբական բանակը հայ ժողովրդին բերում էր մի համատարած աղետ, չտեսնված ավեր ու ջարդ։ Բուղան արյան մեջ խեղդեց Սասունը, Վասպուրականը, Ռշտունիքն ու Մոկաց աշխարհը։ Հայկական այս նահանգների բախտին արժանացավ նաև Արևելյան Վրաստանը՝ Տփղիս մայրաքաղաքով։ Եվ միայն Կովկասյան լեռնաշղթայի փեշերին բնակվող ծանարներն էին, որ խիզախ դիմադրություն ցույց տվին Բուղայի արնածարավ զորքերին։ Այս դիմադրությունից կատաղած Բուղան շարժվեց դեպի հյուսիս-արևելյան Հայաստան՝ նպատակ ունենալով դաժան հաշվեհարդար տեսնել Արցախի և Ուտիքի տերերի հետ, որոնք նախընթացին քանիցս կոտորել էին օտար սանձարձակ հարկահաններին, ոչնչացրել նրանց պատժիչ ջոկատները և արդեն ինքնուրույն էին ու ինքնագլուխ։

Արցախի հակաարաբական պայքարը, նրա հին ավանդույթների վստահելի ավյուռները.— Արաբական բռնակալության դեմ մղված բազմադարյան պայքարը հայոց պատմության մեջ կազմում է մի առանձնահատուկ դրվագ, որը հրաշալի նյութ է տվել նաև մեր ազգի դեղարվեստական մտածողությանը, մանավանդ բանահյուսությանը (հիշենք «Սասունցի Դավիթ» էպոսը)։ Սա մի պատմաշրջան է, որն ըստ ամենայնի ստուգել է Հայաստան աշխարհի և նրա ժողովրդի կենսունակությունը։ Մենք լավ գիտենք, թե մեր երկրին ու նրա խաղաղասեր ժողովրդին ի՞նչ տառապանքներ հասան արաբական տիրապե-

տության երկուսուկես դարերի ընթացքում։ Բայց և չենք մոռանում հակաարաբական ազատագրական պայքարի մեր հերոսներին, որոնք անհավասար կռվի էին ելնում պղտոր հեղեղի պես եկող թշնամական հորդաների դեմ, իրենց մահերով ու նահատակություններով անշեջ պահում ժողովրդի ազատագրական ոգին, մինչև որ իններորդ դարի վերջում նվաճեցին երազած անկախությունը և ստեղծեցին համահայկական թագավորություն՝ Բագրատունյաց տոհմի գերագահությամբ։

Հայոց հակաարաբական պայքարը միշտ էլ ժողովրդական բնույթ է կրել. բռնակալ խալիֆայության ու նրա բանակների դեմ կռվում էին աշխատավորական զանգվածները։ Սակայն աղբյուրներում ու ժողովրդի հիշողության մեջ պահպանվել են հիմնականում զանգվածային պայքարի ղեկավարները՝ հայ իշխաններն ու զորապետները։ Իսկ այս անունների շարքում երկուսը՝ Սահլ Սմբատյանն ու Եսայի Աբու-Մուսեն, արժանացել են հայ և օտար աղբյուրների բացառիկ ուշադրությանը։

Սահլ Սմբատյանը Խաչենի տերն էր 9-րդ դարի առաջին կեսում։ Նրա տիրույթներն ընդգրկում էին Արցախական աշխարհի հյուսիսային մասը՝ Սևանի արևելյան ափից մինչև Մուխանք գաշտը։ Իսկ Եսայի Առանշահիկը նույն ժամանակ տիրում էր Արցախական աշխարհի հարավային գավառներին և իշխանանիստ էր դարձրել Գտիշ ամրոցը Դիզակ գավառի Դոզ ու Ցումի գյուղերի թիկունքում։

Այս երկու քաջ ու շրջահայաց իշխանների օրոք Արցախի լեռնաստանին տիրելու արաբական ամեն մի փորձ պատժվում էր արժանավորապես, և եկվոր բռնակալները շպրտվում էին հյուսիս-արևելյան Հայաստանի սահմաններից հեռու։

Աղբյուրները հանգամանորեն պատմում են, թե ինչպես Սահլն իր փոքրաթիվ զորախմբով արաբներին շարդեց Շիկաքար բերդում՝ այժմյան Շուշի քաղաքի տեղում։ Արաբները եկել էին Պարտավ մայրաքաղաքից։ Ասպատակեցին Ամարաս, շարունակեցին իրենց արյունոտ երթը դեպի արևմուտք և հազար հոգի գերելով՝ ամրացան Շիկաքար բերդում։ Ժամանակագիրն ասում է. «Այնժամ քաջ ու շրջատեսիլ Սահլ Սմբատյան իշխանն Առանշահիկ և նրա արիազարմ եղբայրներն իրենց զորքերով վրա տվին լուսադեմին, դիմաթավալ արնչին ասպատակիչներին, մնացորդներին էլ ցիրուցան դարձրին և, որպես առյուծի ժանիքներից, փրկեցին գերյալներին»։

Հաջորդ անգամ Բաղդադից եկած բռնավորների 12-հազարանոց բանակի հետ ճակատամարտը տեղի է ունենում Մուխանք գաշտում։ Ժամանակագիրը վկայում է, թե «Այստեղ էլ Սահլ Սմբատյանը, որ Զարմիհրական արքունի տոհմից էր, իրեն գործակից դարձնելով մեծ նահատակ Գեորգիոսին, թշնամիների վրա խոյացավ՝ որպես արծիվը տակաբ թռչունների վրա և, դաշտում այս ու այնտեղ կոտորելով, մնացորդներին փախուստի մատնեց»։

Հայ ժողովրդի հակաարաբական պայքարի պատմության ամենագեղեցիկ էջը կապված է Արցախական աշխարհի հարավային գավառների տեր Աբու-Մուսե Եսայիի անվան հետ։

Խաղաղասեր իշխան էր Աբու-Մուսեն։ Սակայն իրեն պարտադրված պատերազմներից միշտ էլ դուրս է եկել հաղթանակով,— Գտիշի տիրոջն այսպես է բնութագրում Աղվանքի պատմիչը։ Իսկ Թովմա Արծրունին ամենայն մանրամասնությամբ ու ոգեկոչող խանդավառությամբ է պատմում Եսայի Իշխանի մեկամյա խիզախ պայքարը խալիֆայության զորավար Բուղայի 200-հազարանոց բանակի դեմ։ Մեկ տարվա ընթացքում Բուղան 28 անգամ հարձակվում է Գտիշի վրա։ Անդրդվելիորեն սարսափի տակ առնելու համար խալիֆայի ուղարկած վիթխարի ուժերը 28 անգամ բախվում են Եսայի իշխանի անառիկ Գորոզ բերդին։ Բերդապահներն իրենց արծվային բարձունքներից կրակ են թափում անկոչ եկվորների վրա։ Եվ Բուղայի բազմաքանակ զորքն ամեն անգամ ետ է շպրտվում պարտված ու ամոթահար։

Թովմա պատմիչը բառացի հիշում է Եսայի իշխանի գրած մի պերճախոս թուղթը, որ Բուղային է ուղարկվել ի պատասխան բռնակալի ամբարտավան առաջարկության։ Այդ գրությունը շատ հետաքրքիր է և՛ իբրև հայ իշխանի ազատասեր ոգու հանդուգն արտահայտություն, և՛ իբրև այն օրերի հայ մարդու գեղարվեստական մտածողության չխարդախված պոետիկում։ Այդ պատճառով էլ արժե թուղթը մեջբերել ամբողջությամբ։

Բուղան Գտիշի տիրոջն առաջարկել էր ներկայանալ իրեն և հայտնել հնազանդ հպատակություն։ Հասկանալի է, որ ար-

յունարքու Բուղան իր առաջարկությանն ուրիշ պատասխան չէր սպասում, քան հայ իշխանի հպատակություն ազերբեյջ։ Չէ՞ որ առատ արյամբ ու ավերածություններով էր նշել իր պատժերթը Հարավային Հայաստանի նահանգներում՝ սկսած Սասունից, Վասպուրականից, մինչև Վրաստանի սահմանները և Վրաց բուն երկիրը, որի մայրաքաղաք Տփղիսում արյան բաղանիս էր սարքել խաղաղ բնակչության համար... Սակայն բանագնացները Եսայի իշխանի փոխարեն գտոող Բուղային տարան մի ըմբոստ պատասխան-գիր, որի յուրաքանչյուր խոսքը պիտի նետահարեր բռնակալի սիրտը։

«Աշխարհակալների կարգն է իրենց հպատակների երկիրը գնալ խնամակալությամբ, իբրև խնամարկուներ վերացնել տառապյալների նեղությունները և ոչ թե երկիրն ավերել ավազակաբար և ամայացնել սրով ու գերությամբ,— այսպես էր գրել Եսային— Եվ եթե դու արքունիքից նկել էիր որպես խաղաղության հսկիչ, պետք է շենություն պարգևեիր անցած ճանապարհիդ և ոչ թե ավերածություններ ու խռովություն։ Արդ, թող հայանի լինի, որ ինչքան իմ զորությունը բավականանա, և կենդանի լինեմ, դեմ կկանգնեմ տեր աստուծո ուժով և զորությամբ և քեզ կդիմավորեմ ոչ թե խաղաղության սիրով, այլ աղեղով ու սրով դինավառ, քաջ տղամարդկանցով և ընտիր երիվարներով։ Եվ եթե դու ցանկանում ես, որ ապրեք ինքդ ու քո զորքերը, ապա արի գնա այստեղից, հեռացիր իմ սահմաններից։ Իսկ եթե զայրույթից ու կատաղությունից կշտապես հեռանալ այս կյանքից և ոսկորներդ կցրես անապատներում՝ դառնալով երկրի գազանների ու երկնքի թռչունների կերակուր, թող քո կամքը լինի, և ես պատասխանատու չեմ քո արյան համար, մանավանդ որ մեծ բարեպաշտություն եմ համարում կոտորել աստծո թշնամիներին, ինչպես Մովսեսն Ամաղեկին, Հեսուն քանանացիներին, Սամուելն Ագագին, Դավիթը Գողիաթին, ինչպես որ իսրայելացիները միանգամից կոտորեցին այլազգիներին։ Աստծուն հաճելի եղան այս բոլորը։ Այդպես էլ ես կվարվեմ քեզ հետ և քո զորքերի հետ։ Արդ ավարտում եմ այս շատախոսությունը քեզ հետ։ Քո ձեռքում են գտնվում խաղաղությունն ու խռովությունը։ Եթե, ինչպես որ ասացի, ինձնից հեռանաս, կլինի խաղաղություն, իսկ եթե ոչ՝ պատերա՞զմ, կռիվ ու ճակատամա՞րտ. դու կդառնաս թիրախ,

իսկ աղեղն իմ՝ խոցող, դու՝ ախոյան և մարտիկներն իմ՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքերը՝ քեզ դատապարտողներ, պատերազմը քոնը կլինի և հաղթանակը՝ մերը, մարմինը՝ ձերը և նիզակը՝ մերը, պարանոցը՝ քոնը և սուսերը՝ մերը, ստացվածը՝ քոնը և մենք՝ ժառանգորդներ, ավարը՝ քոնը և մենք՝ ավարառուներ, դու՝ ավազակ և մենք՝ քեզ կողոպտողներ, դու՝ եղեգ և մենք՝ հուր դյուրավառ, դու՝ հարդ և մենք՝ հողմ քո զորքը ցրող, դու՝ ծաղիկ և մենք՝ խորշակ թառամեցնող, դու՝ հանդ պտղալից և մենք՝ կարկուտ կործանարար, դու՝ շինություն առանց հիմքի և ես՝ հեկեղ հիմնիվեր տապալող, դու՝ լեշ, իմ զորքը՝ պատառոտող գազան, որ ծվատում է քո սրտի առագաստը, դու՝ խաղալիք և մենք՝ մանուկներ, որ քո զորությունն առած՝ խաղեր կխաղանք քեզ հետ ու քո ամբողջ հպարտության ու ամբարտավանության հետ, դու՝ վայրի երե և մենք՝ որսորդներ, դու՝ թռչուն և մենք՝ քեզ բայձրությունից վար բերող, ցանցի մեջ առնող, դու՝ ծովային վիշապ և մենք՝ կարթ, քո քիմքդ խոցելով քեզ վեր հանք քաշում խոր անդունդներից, և դու՝ եղջերու առանց եղջյուրների, իսկ մենք՝ արծիվներ վերևների, քո աչքերը կուրացնողներ և քո լեշը մեր ձագերին ու ծակաբնակ աղվեսներին նետող։ Եվ ահա դարձյալ ասում եմ. ուրիշ ելք չունես. ինչ որոգայթ մեզ համար ես պատրաստել, ավելի վտանգավորն իր մեջ կառնի քեզ»։

Հայրենի աղբյուրները Եսայի Աբու-Մուսեին կոչում են «Իրիցու որդի»։ Պատասխան թղթից երևում է հոգևորական հոր դաստիարակությունը։ Աստվածաշնչյան անուններին հյուսվածքը, տրամաբանորեն կուռ շարադրանքը խոսում են հենց այդ մասին։ Սակայն ըմբոստ ոգին լեռնական հերոսինն է։

Միամյա պատերազմի բոլոր դրվագներով Եսային ապացուցեց, որ անընկճելի է իր Գոռիշ-Գորոզը։ Եվ ամոթապարտ Բուղան, տեսնելով, որ ինքն անզոր է պատերազմով նվաճել խիզախ լեռնականներին, դիմեց խարդավանքի. խալիֆից Եսայիի համար բերել տվեց մի թուղթ, որով նա հրավիրվում էր Բաղդադ՝ խալիֆի հետ խաղաղության բանակցություններ վարելու։ Սակայն արքունիք հասած հայ իշխանին անմիջապես կալանավորեցին որպես ապստամբի, և նա այլևս չտեսավ իր հայրենիքը։

Սա 855 թվականն էր։ Եսայի իշխանի հետ տաժանակրության ենթարկվեցին նաև արքունիք տարված հայ բազմաթիվ

ուրիշ իշխաններ՝ Սահլ Սմբատյանն ու նրա որդիներ Հովհաննեսն ու Ատներսեհը, Մամիկոնեից տեր Գրիգորը, Քուրդիա որդին Սյունյաց տեր Գրիգորը, Վայոց ձորի իշխան Վասակը, Սյունյաց մյուս իշխան Փիլիպպեն, Գարդմանքի Ներսեհ իշխանը և ուրիշներ։

Այսպես ավարտվեցին 9-րդ դարի առաջին կեսի հակաարաբական շարժումները Հայաստանում։

Սահլ Սմբատյանի ու Եսայի իշխանի անունները, սակայն, մեր պատմիչների ու արաբ հեղինակների երկերում առնչվում են ոչ միայն այդ շարժումների ընթացքին։ Բանն այն է, որ արաբների տիրապետության շրջանը կրկնակի չարաղետ էր արաբներին ուղեկցող կամ նրանցից անկախ Հայաստան խուժող ուրիշ մեծ ու մանր ասպատակիչների պատճառով։ Նրանք գալիս էին հյուսիսից ու հարավից։ Արևելքից էին հայտնվում անապատի սամումի պես։ Եվ Հայոց երկիրը ծվատվում էր տարացեղ ու այլակրոն թշնամիների խժդժություններից։

Գրավոր պատմությունը բավականին հանգամանալից տեղեկություններ է պահել մի այդպիսի բռնավորի մասին, որն 9-րդ դարի սկզբին բարեկամի պատրվակով ոտք դրեց Արևելյան Հայաստան և հետո դարձավ մի ահավոր չարիք անպաշտպան ժողովրդի համար։

Բաբեկ-Բաբան էր այդ եկվորի անունը։ Երևի Սյունյաց իշխանների բարյացակամությունը նվաճել էր նրանով, որ, լինելով պարսիկ, Արդաբիլից հարավ գտնվող Բազդ գավառի բնակիչ, ինքն էլ ապստամբել էր Արաբական խալիֆայության դեմ և խուռամյան աղանդավորների գլուխն անցած, նեղն էր գցել նորահավատ իսլամի զինվորությանը։

Հայ ժամանակագիրների վկայությամբ՝ պարսիկ այս Բաբեկ-Բաբանն ամուսնացել էր Սյունյաց իշխանի դրստեր հետ։ Այսքան սերտ բարեկամությամբ նա մտավ Սյունիք, բայց և խարդավանքով սպանեց աներոջը և տիրեց նրա Բազդ գավառին։ Այնժամ Բազդի բնակիչները, զայրացած այս աննախադեպ ապերախտության վրա, ըմբոստացան հափշտակիչի դեմ։ «Դրանից հետո Բազաց գավառն սկսեց չնթարկվել անօրեն Բաբանին,— հաղորդում է Մովսես Դասխուրանցին։— Եվ նա եկավ Պարսկաստանից, նվաճեց, ավերեց երկիրը, սրի քաշեց Բազաց գավառի կանանց ու մանուկներին։ Հաջորդ տարին էլ Բաբանն անցավ Գեղարքունիք գավառը և այնտեղ մոտ 15 հազար բնակիչների սրի քաշեց և Մաքենոցաց մեծ մայրաքաղաքը (վանքը) հրի մատնեց, մնաց միայն ջրաղացը և ուրիշ ոչինչ։ Եվ դա հայոց երկու հարյուր յոթանասունվեց թվականին էր» (827 թ.)։

Մի քանի տարի հետո Սյունիքի բախտին պիտի արժանանար նաև Արցախը։ Այստեղ Բաբանի գործած գազանությունների մասին խոսող մեր աղբյուրների հետ համերաշխ են նաև արաբ հեղինակները։

Երկտակ այս տեղեկություններից պարզվում է, որ Բաբեկը պարբերաբար հարձակվում էր Արցախ նահանգի տարբեր գավառների վրա, կողոպտում, կոտորում բնակչությանը, գերեվարում շատերին, ավերում վանքերն ու մենաստանները։ Հայ հեղինակներն ամոթից լռում են այդ նորաթուխ բռնավորի մյուս չարագործությունների մասին։ Սակայն արաբների հաղորդումների համաձայն՝ Բաբեկն ու նրա ուղեկիցներն ասպատակության ենթարկած բնակավայրերում տարածում էին մինչ այդ չեղած-չտեսնված անբարոյականություն։ Ասում են՝ Բաբեկն ինքն անձամբ գերի վերցրած իշխանավորին կապում էր տան սյանը, ապա նրա աչքի առաջ բռնաբարում կնոջը, մորն ու քրոջը։ Եվ նրա օրինակով էին գործում նաև իր զինակիցներն ու զինվորները։

Սակայն չուշացավ վրեժխնդրությունը բոլոր այսօրինակ վայրագությունների համար։ 837 թ. արաբական զորքերից պարտություն կրած և զինակիցներից լքված ու անօգնական Բաբանը Հայոց երկրով փախչում էր Բյուզանդիա։ Արցախում փորձեց պատսպարվել հայ իշխանների մոտ։ Ինքը թաքնվեց Սահլի ապարանքում, իր եղբայր Աբդալլահին էլ ուղարկեց Եսայի Աբու-Մուսեի մոտ։ Սահլ Սմբատյանը, որ այնքան անարգանք էր տարել անկոչ բռնավորի երեսից, ձերբակալեց Բաբանին՝ «զմարդախողխող աշխարհաւէր արիւնարբու գազանն» հանձնեց արաբ զորապետ Ամիրմոմինին և մեծ վարձ ստացավ արքունիքից։ Դիզակի տեր Եսային էլ արքունի գործակալի ձեռքը հանձնեց Բաբեկի եղբայր Աբդալլահին։

Բաբան-Բաբեկին ու նրա եղբորը ձերբակալելու և խալիֆի գործակալներին հանձնելու մանրամասները հաղորդում

են արաբ հեղինակները։ Ալ-Մուքադդասին, օրինակ, ասում է՝ երբ Բաբեկին լրեցին զինակիցները, ապա նա ծպտված, իր ընտանիքի հետ փախավ Հայաստան։ «Այստեղ էլ Սահլ իբն Սմբատը՝ քրիստոնյա, հայ բատրիկներից մեկը, ճանաչեց նրան, քանի որ դրանից առաջ Բաբեկի գերին էր եղել, ուղում էր մեծ գումար վճարելով ազատվել, սակայն Բաբեկը հրաժարվեց նրանից վերցնել այդ գումարը և Սահլի աչքերի առաջ կեղտոտ գործ կատարեց նրա մոր, քրոջ ու կնոջ հետ, որովհետև այդ հրեշն այդպես էր վարվում բոլոր այն մարդկանց հետ, որոնց գերի էր վերցնում իրենց կանանց հետ։

«Սահլը ձերբակալեց Բաբեկին և ուղարկեց ալ-Աֆշինի մոտ։ Եվ քանի որ խալիֆ ալ-Մութասիմը երկու միլիոն դիրհեմ էր խոստացել նրան, ով Բաբեկին կբերեր կենդանի... ապա Սահլ իբն Սունբաթին բերին երկու միլիոն դիրհեմ և արտոնեցին, որպեսզի նա ինքն իր նահանգի կառավարիչներ նշանակի։ Ան-Ջաբարին էլ այսպես է պատմում Բաբեկի եղբայր Աբդալլահին ձերբակալելու հանգամանքը. «Երբ ալ-Աֆշինը Բաբեկին բռնել, տարել էր իր ճամբարը և դրել հսկողության տակ, նրան հաղորդեցին, որ Աբդալլահն էլ գտնվում է Խաչ իբն-Յուսուֆ իբն-Խատիփանոսի (այսինքն՝ Եսայի Աբու-Մուսեի— Ռ. Ն.) մոտ։ Անմիջապես նա իբն-Խատիփանոսին գրեց, որպեսզի ան Աբդալլահին ուղարկի իրեն, և նա էլ այդպես արեց»։

Թվում է, աղբյուրագիտական այս տեղեկությունները ոչ մի մութ հարց չեն թողնում Բաբան-Բաբեկի ու նրա հետ առնչված հայ իշխանների փոխհարաբերությունների մեջ. օգտվելով միասնական թագավորություն չունեցող Հայաստանի քաղաքական անապահով վիճակից, պարսիկ Բաբեկն իր հեռավոր Բազզից Հայաստան էր եկել որպես մի նոր արնախում բռնավոր, այստեղ կատարում էր անպաշտպան բնակչությանը, կատարում սանձարձակ անօրինություններ, և այդ Հայաստանի տերերն էլ հարմար պահին բռնեցին նրան, որպես արժանի պատիժ հանձնեցին արաբ խալիֆի գործակալին։

Պատմությունն ունի իր անդիմադրելի տրամաբանությունը. հավերժական բռնակալ չկա։ Նվաճումների ու անսանձ կեղեքումների վրա հիմնված ամեն մի տիրակալություն վաղ թե ուշ կործանվում է, քանի որ, առաջին հերթին, այն ինքն է ստեղծում ու սնում իր իսկ բունը կրծող զեռունները։ Ինքերորդ դարի կեսից սկսած արաբական տիեզերակալությունը երերում էր կուսակալների ու ամիրաների խառնակիչ մրցակցությունից։ Իսկ Արմինիա կուսակալության մեջ ո՞չ Բուղայի նենգոտ շարությունները, ո՞չ էլ մյուս գործակալների օրհասական միջոցառումները խալիֆայությանը չփրկեցին անփառունակ ելքից։ Ինքերորդ դարի կեսերի հայկական համատարած շարժումներն ու խիզախ ինքնապաշտպանությունները հիմնովին սասանել էին բռնակալների տիրապետությունը։ Դարի ութսունական թվականներին երկրի նախարարական վերնախավի մեջ գերագահություն ստացած Բագրատունյաց տոհմն իր ձեռքը վերցրեց բովանդակ երկրի ղեկը։ 885 թվականին Աշոտ Բագրատունին վերականգնեց հայկական պետական անկախությունը՝ հիմք դնելով հայրենի թագավորական մի նոր հարատություն, որը ջուրջ դար ու կես պետք է վարեր հայոց բախտի նավը միջնադարի փոթորկոտ ծովում։

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց պատմության հին և միջնադարյան շրջանները լի են արտասովոր այնպիսի երևույթներով, որոնց անծանոթ էին հարևան մեծ ու փոքր տերություններն իրենց հաստատուն թագավորական տների մշտահոլով կյանքում։ Ինչպես Վանի կամ Արարատյան թագավորության ու Երվանդունիների, այնպես էլ Մեծ Հայքի Արտաշիսյան ու Արշակունյաց հարստությունների օրոք, իսկ միասնական թագավորական գահի կորստին հաջորդած դարերում, հատկապես Հայոց երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման գործում մի շատ կարևոր դեր ունեին հայ նախարարական-իշխանական տները։ Նրանց կյանքն ու գործը հիմնականում արտացոլված են մեր հին մատենագրության հուշարձաններում վիմական ու գրչական վավերագրերում և մեզ են ներկայանում իբրև հայոց հին ազնվականության լավագույն անհատների սխրանքը՝ կատարված հայրենիքի ազատության, հայ ազգի ինքնության պահպանման և ազգային մշակույթի զարգացման դժվար ճանապարհին։

Պատմահայր Մովսես Խորենացին՝ մեր ժողովրդի առաջին ամբողջական ու քննական պատմության հանճարեղ հեղինակը, նախընթացի բազմահարուստ աղբյուրների հիման վրա ցույց է տվել, թե ինչպես Մեծ Հայքի միասնական թագավորության հիմնադիրն ու հայ պետականության կարգավորիչը (մ. թ. ա. երկրորդ դարի սկիզբ), ժամանակի առաջավոր պետությունների օրինակով, իր երկրի քաղաքական կյանքը կանոնավոր հունի մեջ առավ՝ առաջին հերթին որոշելով նախարարական տների իրավունքներն ու պարտականությունները։ Ահռելի պայքարի ու զոհաբերությունների գնով էր ստեղծվել

Մեծ Հայքի միասնական թագավորությունը։ Եղել էին նախաբարությունները, որոնք, գիտակցելով կենտրոնացված հզոր պետության առավելությունն ազգային կյանքի անխոթար զարգացման գործում, անմիջապես ընդառաջել էին միարար թագավորին, և դարձել նրա եռանդուն աջակիցները կենտրոնախույս իշխանությունների տրամադրությունները կոտրելու, պետության միասնական մարմինն ամրապնդելու համար։

Առաջինների մեջ իր առանձնահատուկ տեղն էր ունեցել Բագրատունիների հին նախարարական-իշխանական տունը, որը հենց սկզբից հավատարմությամբ միացել էր թագավորին, քաջությամբ ծառայել նրա միարար գործին, և այս բոլորի համար էլ թագավորը Բագրատունյաց նահապետին էր շնորհել երկրի կառավարման գործակալություններից բարձրագույնը՝ թագադիր ասպետի ժառանգական իրավունքը։

Թագադիր ասպետը ո՛չ միայն թագադրության արարողությունների ժամանակ թագ էր դնում գահը ժառանգող արքայազնի գլխին, այլև թագավորի մերձավոր խորհրդականն էր և երկրի ընդհանուր կառավարիչը։ Այս իրավունքները Բագրատունյաց առանձնաշնորհը մնացին այնքան ժամանակ, որքան գոյություն ուներ Հայոց թագավորությունը։ Իսկ երբ Պարսից արքայի ու Բյուզանդիայի կայսեր սադրանքներով Հայոց Արշակունի թագավորությունը վերացավ, և երկիրը կառավարվում էր արքունիքի կողմից նշանակվող մարզպաններով, այս ժամանակ էլ հաճախ էր պատահում, որ, զիջելով հայոց հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների պահանջին, արքունիքը մարզպան էր կարգում Բագրատունյաց տան ներկայացուցչին։

Այս վիճակն էր նաև արաբական տիրապետության շրջանում, երբ հայ ժողովրդի ազատագրական պայքարը գլխավորող ուժերի առաջին շարքում էին Բագրատունյաց պայազատները։

Ութերորդ դարի և իններորդի առաջին կեսի հակաարաբական ընդվզումները, արաբների կողմից ի տրիտուր գործադրված անսանձ դաժանությունները ու բռնությունները արնաքամ էին արել Հայաստան աշխարհը։ Թվում էր, թե հայ ժողովուրդն արդեն դատապարտված է հավերժական ստրկության, և նրա երկրի տեր պիտի մնային մահմեդական զանգ-

վածները, որոնք արաբական տիրապետության դրոշով եկել, լցվել էին Հայոց ոստաններն ու շենները և արյունաբբու սարդերի պես ծծում էին բզկտված Հայաստանի վերջին կենսահյութերը։ Եվ հենց այս ժամանակ էլ հայ ժողովուրդը ձեռք բերեց դարեր երազած իր քաղաքական անկախությունը։ 855 թվականին խալիֆայությունն ստիպված եղավ Աշոտ Բագրատունուն հանձնել Հայաստանի իշխանաց իշխանի պաշտոնը, իսկ շուրջ երեք տասնամյակ հետո էլ, Հայոց հոգևոր ու աշխարհիկ ավազանու պահանջով, վերականգնեց երկրի հինավուրց թագավորությունը՝ նույն Աշոտ Բագրատունու գահակալությամբ։

Մատնագետները հաճախ առաջադնորդվում են այն սխալ պատկերացմամբ, թե խարխլվել էին արաբական խալիֆայության հիմքերը, և այդ պատճառով էլ հնարավոր դարձավ Հայաստանի պետական անկախության վերականգնումը։ Ինչ խոսք, որ այս գործում որոշ դեր խաղացել է նաև խալիֆայության թուլացումը։ Սակայն վճռական նշանակություն ունեցան ուրիշ գործոններ, որոնց մեջ առաջինն ու ամենաորոշիչը հայկական ազատագրական պայքարն էր, որի 850—852 թթ. հուժկու բռնկումը լուրջ բեկում մտցրեց երկրի վիճակի մեջ և փաստորեն դրեց Հայաստանի անկախության հիմնաքարը։ Ճիշտ է, արաբներին հաջողվեց արյան մեջ խեղդել Սասունի ու Զեյթունի, Արցախի ու Վասպուրականի ապստամբությունները և մի նոր խարդախ իշխանաժողով-արքորով նոսրացնել հայկական ավատականության շարքերը։ Սակայն ազատագրական մարտերի ընթացքը ցույց էր տվել, որ խալիֆայության համա՞ր իսկ այլևս անվտանգ չէր կարող լինել նրա բռնատիրության գոյությունը Հայաստանում։ Եվ խալիֆայությունն ստիպված եղավ իր զորքերը դուրս քաշել այդ ըմբոստ երկրից։ Դրան էլ հաջորդեց պետական վարչության հանձնումը տեղական ուժերին, իսկ Դվինում նստող արաբ ոստիկանի պարտականությունները սահմանափակվեցին միայն հարկեր հավաքելու վերակացությամբ։

Աշոտ Բագրատունին, այդ խելամիտ ու խիզախ քաղաքագետը, հմտորեն օգտագործեց իրեն տրված իշխանաց իշխանի իրավունքները ո՞չ թե արաբական հարկատվությունը կարգավորելու համար, այլ երկրի բոլոր ավատական ուժերը միավո-

րեց, դարձավ համարյա բովանդակ Հայաստանի փաստական տնօրենը։ Եվ երբ արդեն ստեղծված էր քաղաքական միասնությունը, երբ նույնիսկ ծայրամասային նախարարությունները իրենց զգում էին հայրենի քաղաքական ամբողջականության մասնիկներ, ինքնորդ դարի յոթանասնական թվականներին Գևորգ Գառնեցի կաթողիկոսը հրավիրեց հոգևոր ու աշխարհիկ մեծամեծների մի ժողով, որը որոշեց Հայաստանի թագավոր ճանաչել Աշոտ Բագրատունուն ու դիմել խալիֆին, որ նա հաստատի Աշոտի թագավորությունը։ Խալիֆայությունը միայն 884 թ. Աշոտ Բագրատունուն ճանաչեց Հայաստանի տիրակալ՝ նրան ուղարկելով արքայական թագ ու հանդերձանք։ Աշոտի թագավորությունը ճանաչեց նաև բյուզանդական կայսրությունը, որի գահակալն էր Մակեդոնական կամ Հայկական հարստության հիմնադիր Բասեղ (Վասիլ) Սառքինը։

Եվ այսպես, չորս ու կես դար հետո վերականգնվեց Հայոց կորսված թագավորությունը. Ախուրյանի աջ ափին գտնվող հինավուրց Բագարանում Հայոց արքա օծվեց Աշոտը, որը պիտի վերականգներ հին Մեծ Հայքի թագավորության բոլոր գործակալությունները, հաստատեր ու առաջ տաներ մի խելոք ու շրջահայաց քաղաքականություն երկրի ներքին ու արտաքին կյանքում։ Հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ լծվելու խաղաղ ստեղծագործական աշխատանքի։

Պատմությունն անհամար փաստերով ցույց է տալիս, որ շատ ավելի հեշտ է որևէ պետական կազմավորում ստեղծելը, քան այն պահել-պաշտպանելը։ Այդպես եղավ նաև Բագրատունյաց թագավորության պարագային։ Աշոտի գահակալության մեկ ու կես տասնամյակում երկիրը թոթափեց արաբական տիրապետության շղթայի չարիքները, ամրապնդվեց ու զորացավ՝ իր մեջ միավորելով հին Հայաստանի համարյա ամբողջ տարածքը՝ Պարտավից մինչև Ծորոխի հովիտը և Կուրից մինչև ծայր-հարավային նահանգները, մինչև Մանազկերտ։ Պայմաններ ստեղծվեցին լայն թափի շինարարական աշխատանքների համար։ Եռանդագին ծավալվում էր առևտուրը, և արհեստներն ու մշակույթն էին զարգանում։

Սակայն Հայաստանի այսօրինակ վերելքը ձեռնտու չէր Արաբական խալիֆայությանը, որը, ինչպես ցույց տվին հե-

տագա դեպքերը, դեռևս չէր հրաժարվել Հայոց երկրի նկատմամբ ունեցած հին հավակնություններից։ Այդ վերելքը կասեցնելու նպատակով խալիֆի կուսակալ և Ատրպատականի ամիր Յուսուֆը նախ Աշոտի որդի Սմբատ Ա-ի (890—914) թագավորության դեմ է լարում Գագիկ Արծրունուն՝ նրան թագավոր հռչակելով, ապա խոշոր մի զորաբանակով խուժում է Հայաստանի արևելյան նահանգները, ավերում բնակավայրերը, կողոպտում ու կոտորում երկրի պաշտպան կանգնած ժողովրդին։ Կապույտ բերդում ամրացած Սմբատն այլևս ի վիճակի չի լինում դիմադրելու թշնամու մեծաքանակ զորքին։ Ընկնում է բերդը։ Հայոց թագավոր Սմբատին գլխատում են բռնակալները։

Երբ ատրպատականցի ավերիչը տոնում էր իր հաղթանակը՝ կարծելով, թե Հայաստան աշխարհն արդեն ծնկի է եկել և այլևս երբեք ոտքի չպիտի կանգնի ու չպիտի կարողանա շունչ մարմինը, հայ ժողովուրդը թափ տվեց իրեն, ուժերի գերագույն լարումով բարձրացավ ընդդեմ բռնության։ Քաղաքական անկախության համար մղվող համաժողովրդական պայքարը գլխավորում էր Սմբատի որդի Աշոտը՝ քաջարի և անկոտրում կամքի տեր մի մարդ, որին ժողովուրդն իրավամբ կոչեց Աշոտ Երկաթ։ Յոթ երկար տարիներ ժողովուրդը կռվեց իր ազատության համար։ Յոթ տարվա ազատամարտերը պսակվեցին Սևանի ափի այն ահեղ ու հաղթական ճակատամարտով, որ Աշոտ Երկաթի փոքրաքանակ զորքը 921 թ. շահեց արաբ ավարառու Բեշիրի վիթխարի զորաբանակից։

Հին հայկական առածն ասում է՝ թշնամուն ծեծելով են բարեկամ դարձնում։ Չարաչար ծեծված Բեշիրի գերագույն տերը՝ արաբ խալիֆը, 922 թ. արքայական թագ ու թանկագին նվերներ ուղարկեց Աշոտ Երկաթին՝ միաժամանակ նրան շնորհելով շահնշահի, այսինքն՝ արքայից արքայի տիտղոս։

Աշոտ Երկաթի ազատագրական պայքարի հաղթական դասը երկար ժամանակ չմոռացան արաբական բռնակալները։ Ատրպատականի կուսակալները շուրջ հարյուր տարի չէին համարձակվում զենք բարձրացնել Հայաստանի վրա։ Պետական դաշինքով կարգավորվել էին հարաբերությունները Բյուզանդիայի հետ, և ներքին կյանքում էլ հաստատվել էր տևական մի անդորրություն, որի պայմաններում Բագրատունյաց գահակալին անմոռուկ կերպով հպատակվում էին նախկին կենտրոնախույս ուժերը՝ հայ ավատատեր այն թագավորությունները, որ արաբների խառնակիչ ձեռքով ստեղծվել էին Վասպուրականում ու Սյունիքում, Փառիսոսում ու Տաշիրում։

Աշոտի հաջորդ Աբասի (928—953), ապա նրա հաջորդ Աշոտ Գ-ի (953—977) և հատկապես սրա եղբայր Գագիկ Ա-ի (977—1020) գահակալության տարիները համեմատական անդորրի ու վիթխարի բարգավաճման շրջան եղան Հայաստանի համար։ 961 թվականից երկրի մայրաքաղաքն ու թագավորանիստը դարձավ Երասխի աջ ափին հինավուրց Անի բնակավայրի տեղում բարձրացած Անի բերդաքաղաքը։ Բագրատունի թագավորներն ու նրանց ենթակա իշխանները կարծես մրցում էին իրար հետ՝ երկրի տարբեր նահանգներում կառուցած իրենց փառահեղ շինություններով՝ եկեղեցիներով ու վանքերով, դղյակներով ու հյուրանոցներով, կամուրջներով ու կարավանատներով։ Թագավորներն ու նրանց հարազատները, ատրազատ իշխաններն ու զորապետները հիմնադրում ու հովանավորում էին հոգևոր-մշակութային այնպիսի ակնառու կենտրոններ, ինչպիսիք են Հաղպատն ու Սանահինը, Հաղարծինն ու Հառոմոսը, Կեչառիսն ու Մակարավանքը, Տաթևն ու Դադիվանքը և ուրիշ բազմաթիվ վանական համալիրներ, որոնք հետագա դարերում իրենց տանիքների ներքո բորբոքվող պիտի պահեին մեր ազգային մշակույթի, գիտության ու գրականության անհանգչելի կրակը։

Սակայն այս դարաշրջանի թագն ու պսակը, որ Բագրատունյաց տոհմի փառաց հուշարձանն է միաժամանակ, Անի քաղաքամայրը եղավ՝ ճարտարապետական իր հոյակերտներով, տարանցիկ առևտրի ու արհեստների, մշակութային բազմաբնագավառ կյանքի իր աննախընթաց ու անգերազանց վերելքով։

Վաղնջուց ի վեր Բագրատունյաց ժառանգական տիրույթը Սպեր գավառն էր (Ճորոխ գետի հովիտը) հյուսիս-արևմտյան Հայաստանում։ Այնտեղ նրանք ունեցել էին իրենց բերդամրցները, որոնցից ոչ մեկն էլ չէին կարող գահանիստ դարձնել հենց միայն այն պատճառով, որ Սպերը հեռու էր միջնաշխարհից, միշտ ենթակա արևմտյան ու հյուսիսային հարևաններն ասպատակություններին։ Անվստահելի էր նաև Հայոց հին

մայրաքաղաքներից այն ժամանակ գեռևս կանգուն Դվինը, որտեղ պարբերաբար տիրություն էին անում արաբական բռնապետության մնացուկ դեյլեմցի Շադդադյանները։ Ուստի և Բագրատունի առաջին թագակիրներն իրենց գահը հաստատեցին մեկ Բագարանում, մեկ էլ Երազգավորսում, մինչև որ Աշոտ Գ Ողորմածը նախընտրեց Անին և 961 թ. այն օծել տվեց իբրև «թագաւորանիստ քաղաք Հայոց»։ Օծման ծեսին ներկա էին Հայոց բոլոր իշխաններն ու հոգևոր առաջնորդները։ Այնտեղ էր ժողովվել զորքը։ Ազգակցի իրավունքով ժամանել էր Հայոց արևելից կողմանց Փիլիպե թագավորն իր շքախմբով և կաթողիկոսի ու եպիսկոպոսների հետ։ Մեծահանդես շուքով Անանիա կաթողիկոսն Անին քաղաքամայր օծեց, իսկ Աշոտին՝ շահնշահ (արքայից արքա), որովհետև նրա գերագահությունը ճանաչում էին Վասպուրականի, Հայաղվանքի ու Սյունիքի թագավորները։ Աշոտի այս տիտղոսն ընդունեցին Բյուզանդիայի կայսրը, Ափխազաց թագավորն ու Հարևան մահմեդական ամիրայությունները, «եւ լինէր ուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց՝ ըստ առաջին հարցն» (Մատթեոս Ուռհայեցի)։

Թագավորանիստ Անին կառուցվեց ու բարգավաճեց շատ կարճ ժամանակում։ Կամսարականների օրոք (Շիրակն ավելի վաղ ժամանակներում նրանց տիրույթն էր եղել) ստեղծված ամրոցը վերակերտումներից հետո դարձավ քաղաքի միջնաբերդը, իսկ նոր ծավալված շինարարական գործի սքանչելի արդյունքները՝ բնակելի թաղամասեր, պալատական շինություններ, արհեստանոցներ, առևտրական տներ և այլն, ընդգրկվեցին նորաստեղծ երկշար պարիսպների մեջ, որոնք ձգվում էին Ախուրյանի ձորից մինչև Անի գետակի ափը։ Այս լայնածիր պարսպաշարի ներսում և նրանից դուրս կառուցված էին Անիի հռչակավոր հաղարումիկ եկեղեցիները, որոնցից կանգուն մնացած մի քանի օրինակներն այսօր վկայությունն են այն դարի հայոց շինարարական հանճարի աննախադեպ փայլատակումների։

Անիի բարգավաճումով էր պայմանավորված նաև երկրի մեծ վերելքը մշակութային բոլոր բնագավառներում։ Մաղկեցին գիտությունները, ստեղծվեցին մատենագրական մեծարժեք երկեր, որոնց շարքում՝ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու, Ասողիկ Տարոնացու, Թովմա Արծրունու հրաշալի մատյանները։ Այս ժամանակ էր, որ թղթի արտադրության արհեստանոցներ ստեղծվեցին Անիում ու մյուս վայրերում, և մատավոր կենտրոններում նոր թափով զարգացան հայոց գրչությունն ու մանրանկարչությունը։

Տնտեսական, շինարարական ու մշակութային վերելքի հետ միասին բարձրանում էր նաև երկրի քաղաքական հեղինակությունը։ Բագրատունյաց թագավորության մի քանի ճյուղեր, որոնք նույն տոհմի պայազատների նախաձեռնությամբ էին ստեղծվել, բարգավաճում էին Տաշիր-Զորագետում, Տայքում, Տարոնում և Վրաստանում։ Տաշիր-Զորագետի տերերն իրենց համարում էին Աղվանից թագավորներ, քանի որ տիրում էին արևմտյան Աղվանքի հողերին և իրենց հովանին էին տարածել անդրկուրյան երկրի պետական կազմավորումների վրա։ Պատմական աղբյուրների անհերքելի տվյալներով ապացուցված է, որ հայ Բագրատունիներից է սերվել նաև Վրաց Բագրատունի թագավորությունը, որի առաջին գահակալները, Անիի թագավորների աջակցությամբ, վերացրին Վրաց երկրում բան դրած արաբական կառավարիչների տիրապետությունը, միավորեցին երկրի տարանջատված մարզերը և ստեղծեցին մի հզոր թագավորություն, որն իր ձեռքում անխախտ պիտի պահեր հետագա ինը դարերի Վրաստանի բախտը։

Եվ տես այսպես Բագրատունյաց հին տոհմն իր գերիշխանության տակ էր առել ամբողջ Հայաստանն ու Անդրկովկասը։ Տոհմակցական կապը նեղուկ էր տարբեր թագավորությունների միարար ջանքերին։ Հարևան ժողովուրդների բազմանքն էր միասնաբար կռվել դրսեկ թշնամիների դեմ։ Այս մթնոլորտում է ստեղծվել Անդրկովկասի ժողովուրդների հին եղբայրության մասին այն զրույցը, որ գրի է առել Վրաց պատմության («Քարթլիս-Ցխովրեբայի») ժամանակագիրը։ Այդ զրույցի համաձայն՝ Թորգոմի ութ որդիները՝ Հայոսը, Քարթլոսը և մյուսները, որոնք կառավարվում էին Հայոսի կողմից և խոսում էին հայերեն, համերաշխ մի ընտանիք էին կազմում, և այդ կուռ համերաշխության համար սարսափելի չէր արտաքին ոչ մի թշնամի։ Այսօրինակ զրույցի հիմքն, անկասկած, ժամանակի Անդրկովկասի քաղաքական վիճակն էր. Անի-

Շիրակի Բագրատունի թագավորությունն էր երեք բնիկ տիրակալությունների արմատը, բոլորի համար էլ երազելի վիճակ էր հարևան ազգերի համերաշխ եղբայրական զինակցությունը, որին զարկվելով կփշրվեին օտար բռնակալական բանակները։ Անի-Շիրակից «բխած կամ ներշնչված ջանքերը տանում էին դեպի մի հոյակապ կառուցում, որ է՝ հավաքել, խմբել կովկասյան բոլոր ցեղերին մի և հանուր քաղաքական հարկի տակ, ներգաշնակել նրանց կյանքն ու գործունեությունը համագործակցության և համերաշխության գետնի վրա, Բագրատունի ծառի հովանու ներքո» (Ն. Ադոնց)։

Սակայն քնած չէին հին թշնամիները, որոնք քինով ու խարդավանքով դիտում էին իրենց հայացքի առաջ բարձրացող Բագրատունյաց տարբեր ճյուղերի համագործակցությունը։ Ցավոք, նրանց թշնամությանը պատվար պիտի դառնային նաև Հայոց թագավորության ներսի անջատարար տրամադրություններն ու ավատական մենատիրության ստոր տենչերը։ Տասնմեկերորդ դարի սկզբին Հայաստանի անկախության վրա ոտնձգություն կատարեց Հայոց պետականության հին ու նենգավոր հակառակորդ Բյուզանդիան, և նրան իրենց օժանդակությունը տրամադրեցին Պետրոս կաթողիկոսը, Վեստ Սարգիս դավաճանն ու Աշոտ Դ Բագրատունին, որն ամեն կերպ ջանում էր գահընկեց անել իր ավագ եղբայր Հովհաննես-Սմբատ արքային և տիրանալ Անիի թագավորությանը։ Եվ Հովհաննես-Սմբատն էլ, իր դիրքն ամրապնդելու համար, Անին ու շրջակայքը կտակեց Բյուզանդական արքունիքին, որն իրավատեր պիտի դառնար նրա մահից հետո։

Ահա այսպես, երբեմնի հզոր թագավորությունը, երկրի ներքին երկպառակությունների պատճառով, դարձել էր ամոթալի վաճառքի առարկա։ Իսկ Բյուզանդական արքունիքը խարդավալից իր նպատակն իրականացնում էր ո՛չ միանգամից, այլ քայլ առ քայլ։ Նախ նվաճեց ու կայսրությանը միացրեց Տարոնի Բագրատունյաց իշխանությունը, ապա նվաճեց Տայքի կլուրապաղատությունը (1001 թ.)։ Դրան էլ հաջորդեց Վասպուրականի Արծրունյաց թագավորության տարածքի յուրացումը (1021)։ Հերթը հասել էր Անի-Շիրակին։ 1041 թ. վախճանվեց Անիի գահակալ Հովհաննես-Սմբատը, և անմիջապես բյուզանդական զորքերը հայտնվեցին Հայոց մայրաքաղաքի պատերի տակ։ Անին ոտքի ելավ պաշտպանելու իր ու Հայաստանի անկախությունը։ Պաշտպանությունը գլխավորում էր քաջ ու հայրենասեր սպարապետ Վահրամ Պահլավունին։ Բյուզանդական զորքերը խայտառակ պարտություն կրեցին և ամոթահար հեռացան Հայաստանից։

Անիում թագավոր նստեց տասնվեցամյա Գագիկ Երկրորդը (1042—1045), որը փորձեց Բագրատունյաց երերացող գահն ամրապնդել ներքին ուժերի համախմբումով։ Նա արքունիքից հեռացրեց ծախու Վեստ Սարգսին ու Պետրոս Գետադարձին։ Հաջողությամբ մի քանի անգամ ջարդեց ու ետ քշեց Հայաստան թափանցած բյուզանդական զորքերին։ Սակայն այս հաղթական ճակատամարտերն անգամ Անին չփրկեցին վերահաս կործանումից։ Բյուզանդական արքունիքը, այնտեղ ծվարած Վեստ Սարգսի ու Պետրոս Գետադարձի խորհրդով, դիմեց նոր խարդավանքի. բարեկամական բանակցությունների պատրվակով Գագիկ թագավորին հրավիրեց Կոնստանդնուպոլիս, բայց, բանակցելու փոխարեն, պահանջեց Անին և, երբ մերժում ստացավ, հայոց երիտասարդ թագավորին արգելեց վերադառնալ հայրենիք։ Անգլուխ մնացած Անին մեկ տարի ևս անհույս դիմադրեց բյուզանդական ոտնձգություններին, մինչև որ 1045 թ. ջլատված հայրենասեր ուժերը դավաճանների հորդորներով անօգուտ համարեցին հետագա դիմադրությունը և Անին հանձնեցին կայսրությանը։

Այսպիսի անփառունակ վախճան ունեցավ Բագրատունյաց թագավորությունը, որն ավելի քան դար ու կես Հայաստանը և Անդրկովկասը օտար բռնակալների դեմ պատնեշելու ուղիներ էր փնտրում։

Զրույցիս վերջում արժե վերստին հիշել ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցին, որի ճշմարիտ գնահատությամբ՝ «Բագրատունյաց փորձը՝ ընդգրկելու համայն Կովկասը իբրև մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցության շաղկապի մեջ, ներկայանում է մեզ որպես մի խիզախում՝ գաղտփարական լայնությամբ անօրինակ միջնադարյան նեղսիրտ մթնոլորտում և կազմում է այս նշանավոր տոհմի պատմական փառքը»։

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԿԱՄ ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊԸ

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ դյուցազներգություններ, որոնց մեջ ամենաբնորոշը, առավել նշանակալիքը, ամենից ավելի պերճախոսն ու հերոսականը, մեծն ու համապարփակը «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպն է։

ՀՈՎՍԵՓ ՍԻՐԵԿԻ

Իսկապես, մեր գրականությունը վաղագույն շրջանից ի վեր ստեղծել է դյուցազնավեպերի մի ամբողջ շարք։ Միջնադարում էլ, մեր գրավոր գրականության կողքին, անվերջ ու անընդհատ ստեղծվում էին ավանդավեպեր, որոնց առանցքը մեր հայրենիքի պայքարն էր օտար բռնակալների դեմ, հայ ազատակամ ժողովրդի ու անհատ հերոսների առօրեական դարձած սխրագործությունը։ Այս հերոսական ավանդապատմությունների, վիպասքերի և դյուցազներգությունների թագն ու պսակը «Սասունցի Դավիթն» է, որ ունի նաև մի ուրիշ անուն՝ «Սասնա ծռեր», որովհետև դյուցազնավեպ մտած գործողությունները տեղի են ունենում Սասուն աշխարհում, իսկ հերոսները Սասնա տան զավակներն են, նրանք, որ վտանգված հայրենիքի համար ծոի կամ խենթի նվիրվածությամբ նետվում են թշնամու դեմ, իսկ խաղաղության կարճ պահերին ապրում են իրենց ազնիվ ու արդար կյանքը նախնական մի այնպիսի պարզությամբ, որ խառն ու անազնիվ շրջապատի կարծիքով, խարդավանքով լի աշխարհի համեմատությամբ, դարձյալ պիտի դիտվի իբրև խենթություն ու ծռություն։

Բայց ե՞րբ է ստեղծվել վեպը, որն իր մեջ է առել ոչ միայն այս շրջանի հայկական ազատամարտերի ոգին, այլև նախորդ ու հաջորդ պատմաշրջանների հայկական կյանքի շատ արձագանքներ։

9-րդ դարի կեսերին Հայաստանի մի շարք նահանգներում ծայր էր առել հակատարաբական ամենահզոր ընդվզումը, իսկ Տարոնի Բագրատունիների, Վասպուրականի Արծրունիների և Արցախի Առանշահիկների ապստամբություններն այնպիսի չափերի ու հաղթական տարերքի էին հասել, որ խալիֆայությունն ստիպված եղավ իր զորքի մեծագույն մասը՝ ավելի քան 200-հազարանոց մի բանակ, վարձկան թուրք զորավար Բուղայի գլխավորությամբ, ուղարկել Հայաստան։ Արծրունիներն ու Բագրատունիները խնամիական կապեր էլ ունեին, և սա օգնեց, որպեսզի նրանք մի քանի վճռական ճակատամարտերում միահամուռ հերոսական կռիվ մղեն ու ջարդեն արաբական կայազորները։ Հայտնի է, օրինակ, մի ապստամբություն, որի կազմակերպիչներն են եղել Տարոնի Բագրատունի իշխանի երկու որդիները՝ Աշոտ և Դավիթ, որոնք, Սասունում ապաստանելով, տեղացիներին ոտքի են հանել, կոտորել Մուշում բնավորված բռնավորներին։ Զորավար Յուսուֆը, չիարդանալով անգամ փախչել-գլուխ պրծացնել, թաք էր կաբել Մուշի Սուրբ Փրկիչ եկեղեցու զմբեթի տակ և այստեղ էլ գտավ իր մահը։

852—53 թթ. Բուղան արյան մեջ խեղդեց Սասունի, Վասպուրականի ու հարակից շրջանների ապստամբությունները և խաչտառակ պարտություն կրեց Արցախի իշխան Եսայի Առանշահիկից, որը, ապավինած իր անառիկ Գտչա բերդին, մեկ տարի շարունակ վանեց Բուղայի հարձակումները։ Վերջ ծանոթացանք Թովմա Արծրունու երկում պահպանված Եսայի իշխանի ընդվզումի խոսքին՝ ուղղված բռնավորին։ Այստեղ շողշողում են այն ժամանակվա հայ ապստամբների ռոմանտիկ ոգին ու խոսքի ըմբոստ երանգները, որոնցից պիտի հյուսվեր մեր մեծ դյուցազնավեպը։

Ինչ խոսք, որ «Սասունցի Դավիթի» ծննդարանը Սասունն է, մեր այդ հինավուրց լեռնաշխարհն իր հերոսական ու բանաստեղծական մթնոլորտով։ Սակայն նրա տարբերակները տարածվել են ամբողջ երկրով մեկ և հիմք դարձել նոր պա-

տումների, տեղական նոր գունավորումների համար։ Պատահա՞ն է, որ հենց Վասպուրական աշխարհի պատմության ու աշխարհագրության շատ մասունքներ մտել են մի շարք տարբերակների մեջ։ Իսկ Փոքր Մհերի համար էլ վերջին հանգրվան է դարձել Վանի միջնաբերդի կողքի ժայռը, որը հնուց ի վեր հայտնի է եղել իբրև Հայկ-Խալդի դուռ, դյուցազնավեպի ազդեցությամբ դարձել է Մհերի դուռ։

Ուրեմն, դյուցազնավեպի բովանդակության հիմքում ընկած են հակասարաբական ոգորումները, և պարզ է, որ 8—9-րդ դարերում էլ վեպն ստեղծվել է։ Սակայն ակնհայտ է, որ նրա մեջ արտացոլվել են մինչարաբական իրողություններ, մանավանդ ուշ դարերի այնպիսի դեպքերի արձագանքներ, որոնց իրական-պատմական ակունքները ցույց են տրվում առանց դժվարության։ Այսպես. մի շարք տարբերակներում առկա են Խլաթի ամիրայությունը և նրա հետ հայերի ունեցած հերոսական բախումները։ Իսկ սրանք տեղի են ունեցել 12-րդ դարի երկրորդ կեսին, երբ հայերի հաղթական արշավանքների առաջնորդներ էին Զաքարյան իշխանապետները՝ Զաքարի ամիրսպասալարն ու Իվանե աթաբեկը։ Էպոսի Հայ-Խլաթյան հարաբերություններում կարևոր տեղ է գրավում Թամթա խանումը, և սա էլ Իվանե աթաբեկի դուստրն է՝ ըստ իրական պատմության (տե՛ս Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը»)։

Ծտարաբական իրադարձությունների հետ են կապված նաև այն գրվածները, որոնցում հայ-ֆրանկյան հարաբերություններն են արտացոլվում։ Ֆրենկ-ֆրանկները խաչակիրներն են, որոնք, ինչպես հայտնի է, Ասիայի հարավ-արևմտյան մասերում հայտնվել են 11-րդ դ. վերջին և իրական ուժ դարձել 12-րդում։

Սակայն իրական պատմությունն իրակա՞ն պատմություն, «Սասունցի Դավիթն», ամենից առաջ, հայ ժողովրդի գեղարվեստական մտածողության հանճարեղ արտահայտությունն է, նրա ազատասիրության, մարդասիրության ու ստեղծարար ոգու ամենավառ արտահայտությունը։ Այստեղ ի մի են գումարվել, խտացել ու բյուրեղացել մեր ազգային բնավորությունը, մեր կենսակերպն ու երազանքները։ Դյուցազնավեպի

կառուցվածքի մեջ անգամ դրսևորվել են մշակութային էության այնպիսի առանձնահատկություններ, որոնք միշտ էլ մեր ազգային հոգևոր մշակույթի հիմքերում են գտնվել։

Վեպը չորս ճյուղերից է բաղկացած։ Այստեղ, անշուշտ, արտահայտություն է գտել աշխարհի գոյությունը պայմանավորող չորս տարրերի պատկերացումը, որ առկա է մեր հին հոգևոր ու նյութական մշակույթի ամբողջ համակարգում։ Սակայն չորս ճյուղերից ամենակարևորը երրորդն է, Դավթի ճյուղը, որի մեջ խտացել են ստեղծագործության բոլոր ճյուղերում ձգված դիպաշարային, գաղափարական ու բարոյական գծերը։ Այստեղ են իրենց ամենացայտուն դրսևորումները գտնում հերոսի դյուցազնական ոգին, հերոսական գործերը, հայրենասիրությունն ու եղբայրական-խաղաղասիրական տրամադրություններն այլազգիների նկատմամբ։

Դյուցազնավեպի չորս ճյուղերը, կարծես, նույն չքնաղակերտ խաչքարի չորս թևերն են՝ իրենց հիմքերում միացած-միասնականացած, որ ստեղծում են մի կուռ ամբողջական բովանդակություն։

Ահա այդ բովանդակությունը.

Արաբ հարկահանները տեսնում են Հայոց Թագիկ թագավորի դուստր Ծովինարին, կախարդվում նրա գեղեցկությամբ և, մոռանալով, թե ինչի՞ համար են Հայաստան եկել, վերադառնում են իրենց խալիֆի մոտ, անում հայ գեղեցկուհու գովքը, խալիֆը Հայոց երկիր է ուղարկում իր բանագնացներին, որոնք պահանջում են Ծովինարին, սպառնալով հակառակ դեպքում պատերազմի դալ և ավարել ու ավերել երկիրը։

Այսպես է սկսվում ժողովրդական դյուցազնավեպը, այս աղետին է, որ պատասխան պիտի տային Հայոց թագավորն ու ժողովուրդը։

Հայոց արքայադուստրը, քրիստոնյա ու բարեպաշտ, ինչպե՞ս կարող է դառնալ կռապաշտ խալիֆի կինը։ Երկրի մեծամեծերն ու ժողովուրդը պատրաստ են պատերազմի ելնելու, պաշտպանելու արքայադստեր պատիվը։ Իսկ ինքը՝ Ծովինարը, որ գիտեր, թե այս դեպքում ի՞նչ դժբախտություններ են սպասվում իր հայրենիքին, կանգնում է չարիքի դեմ ու հայտարարում.

Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,
Ջամէն տի սպանի իմ պատճառով,
Աղեկն էն է՝ ե՞ս երթամ,
Ուրիշ մարդու թող բան չլնի։

Եվ գնում է։ Սակայն խալիֆի հետ պայման է կապում, որ նա մի ամբողջ տարի չմոտենա իրեն։ Մի ամբողջ տարի ապրում է միայնակ։ Մի անգամ էլ, զբոսանքի ելնելով, բնության գրկում ծարավում է։ Նրա ծարավ, աղերսող հայացքի առաջ ժայռը ճեղքելով՝ պաղ ջուր է ելնում։ Սովինարն այդ ջուրը խմում և հղիանում է։

Խալիֆն իմանում է հղիության մասին և որոշում սպանել տալ նրան։ Սովինարը խնդրում է վճռի կատարումը հետաձգել, մինչև որ ինքը երեխա կբերի։ Ծնվում են երկու տղա՝ մեկին կոչում են Սանասար, մյուսին՝ Բաղդասար։ Դահիճները գալիս են վճիռը իրականացնելու։ Սովինարը հիմա էլ խնդրում է, որ թույլ տան՝ երեխաներին սնի, մեծացնի։

Երկնային ջրի զավակները մեծանում են ինչպես հեքիաթում։ Դեռ չորս-հինգ տարեկան՝ հաղթում են իրենցից տարիքով խաղընկերներին, նրանց ջարդոտում խաղերի ժամանակ։

Խալիֆն ստիպված է լինում ահռելի մանուկներին ուղարկել Հայաստան, նրանց պապի մոտ։ Եվ այստեղ նրանք, երբ արդեն հաղթահնասակ ու հզոր պատանիներ էին, մի օր գնում են այնտեղ, ուր իրենք հղացել են։ Նրանց դեմ կապույտ ծովն էր, ալեբախության մեջ խաղացկուն ու գրավիչ։ Բաղդասարը վախենում է մոտենալ։ Իսկ Սանասարն իրեն ծովն է նետում և իր առաջ, ալիքների միջով բացված ճանապարհով հասնում ստորերկրյա մի թագավորություն, ուր, իբր, Մարութա Աստվածածնի սուրբը նրան պարգևում է հավլունի Թուր-Կեծակին և Քուռկիկ Ջալալին։ Վերջինս, իմաստուն ու հրաշք մի նժույգ, իր հեծյալին երկար չարչարելուց ու փորձարկելուց հետո հնազանդվում է, դառնում նրա բարեկամը։

Սանասարը խմում է ծովի ջուրը և դառնում անճանաչելիորեն հզոր դյուցազուն։ Իսկ տունդարձին նա ու եղբայրը տեսնում են, թե ինչպես մեծ դեռի պղտոր ջրերը ճեղքելով՝ երկար տեղ իր համար գնում է կապտաջինջ մի վտակ։ Այդ վտակի հունը բռնած գնում-հասնում են ակունքին և այնտեղ

իրենց համար բնակատեղի-ամրոց են կառուցում վիթխարի ժայռաբեկորներից։

Երբ կառուցվածին անուն պիտի տային, գալիս է մի իմաստուն ծերունի և, հիացած շինությունների ամրությամբ ու ահռելի կերպարանքով, բացականչում է՝ «Սա հո տո՞ւն չէ, սասո՞ւն է, սասո՞ւն»։ Եվ բերդի անունը մնում է Սասուն, որ ժողովրդական լեզվով նշանակում է մեծ, ահռելի, վիթխարաչափ։

Եվ այստեղ, Սասնա տանը, բնակվում են մեր զույգ դյուցազունները։ Սակայն իսկական դյուցազունն ավագ եղբայրն է, Սանասարը։ Այդ նրա ճյուղն է, որ հետագայում գործելու և դառնալու է պատմության շարժիչը։

Սանասարն ամուսնանում է Քաջանց արքայադուստր Դեղձունի հետ, որը նրան պարգևում է երեք արու զավակ՝ Մհեր, Հովան և Վերդ անուններով։

Սրանով էլ ավարտվում է դյուցազնավեպի առաջին ճյուղը, որը հարուստ է կենցաղային, սիրային, հերոսական բազմաթիվ միջադեպերով, ժողովրդական կյանքի ու առասպելական մտածողության այնպիսի դրսևորումներով, որոնք առանձին-առանձին բանաստեղծական հրաշալի փայլատակումներ են, միասին վերցրած՝ հրաշապատում վիպասք, որով արժանավորապես սկսվում է մեր հանճարեղ էպոսը։

Սակայն հերոսության ու ժողովրդապաշտպան ոգորումի աննախադեպ դրվագները սրանից հետո պիտի ցույց տրվեն Սանասարից ու Դեղձունից սերված Մեծ Մհերի գործունեության մեջ։ Նա ևս խմել է անմահական ջուրը և ձեռք բերել անհաղթահարելի ուժ, որ պետք է ծառայեցնի երկրին ու ժողովրդին։ Լսում է, թե երկիրը սովի է մատնված, որովհետև հացի ճանապարհին առյուծ է հայտնվել, որ հոշոտում է մոտեցողներին։ Գնում, զարհուրելի գազանին միջից ձևում, երկու կտոր է անում և վաստակում Առյուծաձև Մհեր անունը։ Ապա սպանում է ջրի ճանապարհը փակած ճիրմակ Դևին և ամուսնանում նրա ամրոցում գերված արքայադուստր Արմազանի հետ։

Սրան էլ հետևում են Մհերի կռիվները Մբսրա Մելիքի նվաճողական ոտնձգությունների դեմ[1]։ Մեռնում է Մելիքը, և նրա

[1] Մեր բանաստեղծության մեջ սովորաբար Մբսրա Մելիքի երկիր էր ճանաչվում Մբսրը-Եգիպտոսը։ Ակադ. Հ. Օրբելին գտնում էր, որ սա սխալ է

կին Խամիլ խաթունը Մհերին իր մոտ է հրավիրում՝ օգնելու իրեն անօգնական այրուն։

Արմաղանն այս հրավերի մեջ տեսնում է մի նենգ դավադրություն և առաջարկում է չգնալ։ Սակայն Մհերը գնում է և ծուղակն ընկնում. նրան հարբեցնում են, մտցնում Խամիլ խաթունի ննջարանը, և այս հանգիպումից ծնվում է Մրսր աշխարհի տեր կրտսեր Մելիքը։

Խամիլ խաթունը դյուցազուն Մհերի ժառանգին ներարկում է աշխարհին տիրելու և հակառակորդներին ծնկի բերելու ոգի, մանավանդ, փայփայում է այն երազը, թե «հիմա կը-շողշողա Մրսրա աստղը, և Սասնա աստղը կիսավարի»։

Խամիլի այս խրատների ակամա գաղտնի ունկնդիրը դառնալով՝ Մհերն սթափվում ու իրեն զգում է Սասուն։ Եվ այստեղ էլ բախվում է Արմաղանի անհողդողդ վճռին. սա որոշել էր 40 տարի Մհերին իր մոտ չթողնել, իրեն ամուսնական առագաստը պղծողի։ Սակայն, վերջապես, կինը տեղի է տալիս՝ հասկանալով, որ անհրաժեշտ է վառել Սասնա ճրագը և Մրսրա նոր Մելիքին դիմադրող ծնել։

Ծնվում է Դավիթը։ Սակայն դյուցազնավեպում խոկ անհաղթահարելի է բարոյական պարտքը. հենց այն պատճառով, որ Մհերը, ընդառաջելով Խամիլ խաթունի հրավերին, խախտել է իր ամուսնական պարտքը, կնոջ հետ էլ պետք է հեռանա այս աշխարհից՝ Դավթի աշխարհ գալուն պես։

Դավթի ծնունդով սկսվում է երրորդ ճյուղը, որն ամենակարևորն ու ամենաճակատագրականն է դյուցազնավեպում։

Ծնվում է Դավիթը, և վախճանվում են հայրն ու մայրը։ Բայց ո՞վ պիտի կերակրեր նորածին որդին, երբ փորձել էին Սասնա ծծմայրերին, ու նա բոլորի կաթից էլ հրաժարվել էր։ Եվ այստեղ հիշում են Խամիլ խաթունին, որոշում են տանել նրա մոտ։ Երկար ու տանջալից այդ ճանապարհն էլ հաղթահարվում է այնպես, ինչպես վայել է դյուցազանց աշխարհին. Դավթին կապում են իմաստուն Քուռկիկ Ջալալու մեջքին, և նժույգն է, որ իր ապագա տիրոջը հասցնում է ծծմորը։

և հանձին Մրսրի երկիր պիտի ճանաչեր Մասուրը, որն իսկապես հարեան էր Հարավային Հայաստանին (տե՛ս «Սասունցի Դավիթ», հայկ. ժող. էպոս, Ե., 1961, էջ XI)։

Դավիթն ընդունում է Խամիլ խաթունի կաթը, մեծանում ոչ թե տարով, այլ օրով ու ժամով։ Նրա մանկական խաղերից, ցույց տված ահռելի ուժից սարսափում է տարիքով բավական մեծ Մելիքը։ Սարսափում ու նրան փակում է մթին զընգանում։ Այստեղ ևս հրաշքներ են կատարվում։ Դավիթը փրրկվում է խավարից։ Եվ, այսուհանդերձ, Մելիքը որոշում է ազատվել նրա գոյությունից։ Ճանապարհում է Սասուն՝ ուղեկցող երկու հսկաներին հանձնարարելով նրան սպանել ճանապարհին։ Բաթմանա ջրի կամրջի վրա է լուծվում հանգույցը։ Դավադիրների նենգությունը կռահելով՝ Դավիթը նրանց երկուսին էլ իր ձեռքերի մեջ սեղմելով, կարող էր կոտորել, սակայն ազատ է արձակում՝ հասկացնելով, որ կարող էր խեղդոտել ոնց որ շան լակոտների։

Դավիթը Սասունում է։ Իրեն երեխա պիտի խաղա տարեկիցների հետ։ Սակայն նրա խաղերից հաշմվում են երեխաները. մեկի վիզն է ծռվում, մյուսի ոտքն է ջարդվում, երրորդի՝ մեջքը։ Խորհուրդ են անում, որ գառնարած կաթեն։ Եվ այստեղ էլ սկսվում են մանուկ հսկայի, անմեղ ու անկեղծ ամենակարողի արկածները։ Գառների հետ քշում քաղաքն է լցնում վայրի մանր-մունր գազաններին։ Նախրապան են կարգում, նախրի հետ քաղաք են լցվում արջերն ու գայլերը, վագրերն ու առյուծները։ Որսորդ է գառնում և պաշտպանում ապնիվ որսի սկզբունքը. ոչ թե պարիսպների մեջ առած, խեղճացած գազանների՛ն սպանիր («Հրոդրեր, ջանըմ, կապուկ տեղ պապս է՛լ կդարկի»), այլ ազատ, իր համար բնության գրկում թրևող կենդանուն։

Տարեց գյուղացիների, արտատեր պառավի և այլոց խորհուրդներով ճանաչում է հայրենի երկիրը, գտնում հորենական ժառանգության սրբազան մասունքները, վերականգնում Թշնամու ավերած Մարութա վանքը։ Եվ այս վերջին պարագայի իմաստուն խորհուրդը. առաջին վերականգնումից հետո վանքը նորից փլվում էր։ Տեսիլք է հայտնվում և ասում՝ վանքի հիմքում պիտի թուր լինի դրված։ Թուրը հիմքում է դնում, վերականգնում, և վանքը դառնում է անսասան։ Այսինքն՝ հոգևոր ու նյութական արժեքները պիտի զենքով պաշտպանել։

Եվ այսքանից հետո էլ Դավիթը ջարդում է արաբ հարկահաներին, որոնք Սասուն էին եկել յոթ տարվա հարկը տա-

նելու։ Դաղալած Մըսրա Մելիքն անհամար զորք է հավաքում, գալիս Սասնա տան վրա։

Այստեղ ևս հայտնվում է պառավը, որի խորհրդով Դավիթը տիրանում է հոր զենք ու զրահին, Քուռկիկ Ջալալուն և շարժվում Սասնա դաշտն ու սարերը ծածկած թշնամական զորքերի վրա։ Իսկ մինչև կռիվն սկսելն էլ կանչում է իր հանրահայտ զգուշականը.

— Էհե՜յ, ով քնած է, արթո՞ւն կացեք,
Ով արթուն է, ձիե՞ր թամբեք,
Ով թամբել է, զենքե՞ր կապեք,
Ով կապել է, ելեք, հեծե՞ք,
Ջանք՝ Դավիթ գող-գող եկավ,
Գող-գող գնաց։

Եվ այս ահազանգից հետո է, որ նա կոտորում է արաբ նվաճողի բանակները։ «Արնէ հեղեղ էլավ, լեշեր տարավ»։ Եվ այստեղ էր, որ ծեր մի զորական «առանց զենքի ու գրլխաբաց» կանգնեց Դավթի դեմ և ասաց արդարության իմաստուն խոսքը.

— Դավիթ,— ասաց,— մեռնեմ քո արևուն,
Չէ՞ որ էնոնք էլ մարդ են, իսան են,
Ինչի՞ կկոտրես, ինչի՞ կը սպանես,
Չէ՞ էդոնք էլ էրեխաներ ունեն.
Տուն ու կընիկ ունեն,
Էդոնց սպանես, ճժերու մեղք կընկնի քո՛ վիզ...
...Մեղ ի՞նչ մեղք կա,
Մըսրա Մելիքն է զոռովին բռնե, բերե,
Գընա իր հետ կռիվ արա։

Դավիթը լսում է իմաստուն արաբ ծերունու խոսքը և գընում է Մըսրա Մելիքի վրանը։

Եվ այստեղ էլ մեկը մյուսի հետևից շարվում են ժողովրդական բանարվեստի շքեղ, իրար չափազանցող գոհարները։ Մելիքը մրափած է, և նրան արթնացնելու համար շիկացած շամփուրներ և խոփեր են գնում ոտքերի տակ («Լու կա իմ տեղ, ինձ կը խածե՞»)։ Մի կերպ արթնացնում են, դեմը տեսնում է Դավիթին. «Փչեց, որ թոցնի տեղեն։ Տեսավ՝ Դավիթ իրար չեկավ, Մելիքի մոտեն քառասուն գոմշի ուժ պակասեց»։

Եվ սրանից հետո էլ Մելիքի նենգ հրավերը. «Դավիթ, ձիուց իջի, արի էստեղ, հանգստանանք»։ «Ձին փախ տվավ, չուզեց Դավիթ իջնի»։

Խաբեցին Դավթին, ձիուց իջեցրին, գցեցին «քառասուն գաղ» խորություն ունեցող հորի մեջ, երկաթե օղ ու շղթաների բերանը, վրան էլ շարեցին ջաղացքարերը, և խարդախ Մելիքը լարախնդաց. «Դե թող կենա էնտեղ, լուր ոսկորները փտեն...»։

Հորեղբայր Ջենով Օհանը երազում տեսավ Դավթի վիճակը, հետո էլ երբ եկավ անտեր մնացած Քուռկիկ Ջալալին, նա կանչեց, ձենը գցեց սար ու ձոր.

— Դավիթ, ո՞ւր ես,
Էիշա Մարութա բարձր Աստվածածին,
Էիշա զիաչ պատերազմին,
Ինչ վեր քո աչ թեկն,
Ու թափ տուր քեզ...

Դավիթը լսում է հորեղբոր ձայնը, հիշողությունը նրան նոր ուժ է հաղորդում. թափ է տալիս իրեն, շարդում կապանքներն ու ջաղացքարերը.

Երկաթե օղ ու շղթաներ թոան երկինք,
Ջաղցի քարեր բլան, թոան,
Էնոնց ամեն կտոր քառասուն մարդ սպանեց։

Եվ սրանից հետո թշնամու՝ դարձյալ նենգոտ, ողորմելի վախկոտ, Դավթի՝ միամտության չափ ազնիվ վարքի դրսևորումներով տեղի է ունենում այն մենամարտը, որն ավարտվում է Դավթի հաղթանակով։ Թրի մի հարվածով Մելիքին երկու կես անելով՝ նա դիմում է արաբ զինվորությանը և ասում է իր խաղաղասիրական ու արդար, հաղթողի ազնվական խոսքը.

— Ամենիդ իրավունք կը տամ,
Ուր աչեն էկեր եք, էլեք, գնացեք ձեր տեղ,
Էլեք, գնացեք ու ձեր աներ նստեք...

... Մեկ էլ չելնեք ու գաք վեր Սասնա։
Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,
Թե որ կռվի գաք վեր մեզ,
Քառասուն գաղ խոր հորում ըլնեք,
Թե չաղացի չոչ քարի տակ,
Տ'ելնեք ձեր դեմ Սասնա Դավիթ,
Ճ'ելնեք ձեր դեմ Փուր-Կեծակին։

Հետո գալիս է Դավթին ամուսնացնելու գործը։ Գեղեցկուհի Խանդութ խանումի սիրուն արժանանալու համար նա հաղթում է 39 կտրիճների, որոնց դավադիր թրերը կոտրատում, տալիս է ախոռապանին, որպեսզի սա նրանցից մեխեր պատրաստել տա Քուռկիկ Ջալալու պայտերի համար։

Դավիթն ունենում է որդի, որին կոչում են Մհեր՝ պապի անունով։ Եվ հետո ճակատագիրը դարձյալ փորձանքի է ենթարկում դյուցազնին. Դավիթը սիրահարվում է Ջմշկիկ Սուլթանին... Երբ պիտի վերադառնար, Սասնա սահմանների մոտ մենամարտում են իրար չճանաչող Դավիթն ու Փոքր Մհերը։

Զարկում են, զարկվում, երկու անպարտելիներից ոչ ոք չի հաղթում, և կռվին վերջ է տալիս Խանդութ խաթունը։ Դավիթն իրեն նվաստացած է զգում և որդուն անիծում է.

— Մհեր, որ դու հետ ինձի կռիվ արիր,
Ինձի ամանչեցրիր,
Կանչեր եմ քաղցրիկ ասված,
Անմահ ըլնիս, անժառանգ։

Իսկ Դավթի մահը՝ ջրում լողանալիս, Ջմշկիկ Սուլթանից սերված իր իսկ դստեր թունավոր նետից։

Խանդութ խանումն իմանում է նրա մահը և բերդից իրեն նետում ցած։ Բայց լավ է, այստեղ դարձյալ խոսքը տանք վիճակները չափազանցող, չափազանցությունների մեջ բանաստեղծական հրաշքներ ստեղծող ժողովրդին։

Էս անգամ Խանդութ էլավ բերդի գլուխ
Ու էնտեղեն իրեն թալեց.
Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց, էղավ փոս։
Էն փոսի մեջ՝ Սասունա կես շնիկ կորեկ
Կը լցնեն ու կը ծեծեն սանդի տեղ,
Էնոր ծծերի տեղ հիմի էլ երկու աղբյուր կը թալի։

Ցոթ ճյուղ ծամի տեղ էլ հիմի կէրեա,
Քանց յոթ սուն կը սեկոի։
Ու հիմի էլ սանդ էնտեղ է, բերդի տակը։

Փոքր Մհերը, որ հոր ու մոր մահից հետո արդեն հասուն տղամարդ էր, իր ինքնուրույն կյանքն սկսեց՝ պայքարելով երկրի ներքին ու արտաքին թշնամիների դեմ։ Արտաքին թշնամիներին հաղթահարելը հեշտ էր, շարդեց, հաղթեց, հայրենիքն ազատագրեց։ Իսկ ներքին թշնամիներին, ժողովրդի կեղեքիչներին, ժողովրդական ցավի ու տառապանքների պատճառներին հաղթելը գնալով անհնար էր դառնում։ Նույնիսկ բնության բերած աղետներն էր կանխում հեշտությամբ. վտանգի ենթակա հարևան երկրում վիթխարի ժայռեր գլորելով փակում է քաղաքի վրա սպառնալից եկող գետի ճանապարհը... Իսկ աշխարհում օրեցօր ավելացող ու բազմապատկվող անարդարությունների, մարդու քախտին սպառնացող չարիքի ու զրկանքների, իշխանավորների ստորությունների և մանավանդ աշխարհում հաստատված դաժան ու անմարդկային կարգերի դեմ անզոր էր ու անօգնական։ Դրանից էլ հուսահատվեց, հատկապես երբ համոզվեց, որ հողն էլ «հալևորցեր է» և այլևս չի կարողանում տանել իր ու Քուռկիկ Ջալալու ծանրությունը։ Մի անգամ այցի գնաց հոր ու մոր շիրիմներին, աղերսեց մի ելք ցույց տալ իր անտանելի վիճակից։

«Քո տեղ Ագռավու քա՞րն է»,— այս եղավ մոր խորհուրդ-խոսքը։ Իսկ հայրը դրան էլ ավելացրեց.

Աշխարք ավերի, մեկ էլ շինվի,
Որ գետին քո ձիու առջև դիմանա,
Աշխարք քոնն է։

Դյուցազնավեպի ավարտին Մհերն ասածուն խնդրում է վերջին մի կռիվ պարգևել իրեն և մեկ էլ տեսնում է՝ իր դեմ ելած ճակատ են տալիս երկնային հրեշտակները... Կասկածը սիրտն է ընկնում. գուցե մեղավորն ի՞նքն է, և այդ պատճառով իր անարդար քայլերի դեմ հիմա էլ ասված իր ուժե՞րն է ուղարկել։ Որոշում է ստուգել՝ իրավացին ի՞նքն է, թե՞ ասված. պիտի թրով հարվածեր ժայռին, եթե ժայռը ճեղքվեր, ուրեմն ինքն անմեղ է, իսկ եթե դիմանար՝ մեղավոր։

Գալիս է Վանա ժայռի մոտ, թրով հարվածում է, ժայռն ահռելի ճեղք է տալիս։ Եվ Քուռկիկ Ջալալին հեծած Մհերն այն ճեղքով ներս է մտնում, ժայռի մեջ փակվում։

Ասում են՝ ժայռի ճեղքը տարին երկու անգամ բացվում է՝ Վարդավորին ու Համբարձմանը, և Մհերն ուզում է իմանալ՝ հին աշխարհը դեռ չի՞ կործանվել, աշխարհը չի՞ նորոգվել... Մի անգամ էլ, երբ քարը բացվում է, ճեղքով մի հովիվ ներս է գնում ու Մհերին հարց է տալիս՝ «Մհեր, դու ե՞րբ տ'էլնիս էդտեղինն»։

Մհերը պատասխանում է.

— Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի։

«Սասունցի Դավիթը» ժողովրդական հոգեբանության լավագույն դծերը մարմնացնող հերոսների, նրանց կիսաիրական-կիսաառասպելական գործերի ու վարքերի մի այնպիսի կատարյալ համաձուլվածք է, որ, առանց վարանելու, կարելի է կանգնեցնել աշխարհի ժողովուրդների ամենաընտիր էպոսների շարքում։

Բուլանդակությունը պատմելիս ես կանգ առա հիմնականում աղամարդ հերոսների վրա։ Սակայն գեղարվեստական ավարտուն ամբողջականությամբ ու գաղափարական առողջ լիցքերով պակաս հմայիչ չեն նաև հերոսուհիները, Սովինարից սկսած մինչև Գոհար։ Ինչպե՞ս նվիրված են նրանք հայրենի հողին, ջրին, ազգի ավանդներին։ Ի՞նչ քաջագնական ոգի, հաճախ նաև առնական ուժ ու կորով են ցուցադրում նրանց կանացի, գեղեցիկ ու փափկասուն մարմինները։ Նույնիսկ օտար կանայք մեր էպոսում բարության ու ամենայն վեհանձնության աղբյուր են հանդիսանում։ Միայն մեկը՝ Զմշկիկ Սուլթանը, խանդից կուրացած, իր ու Դավթի կապուտաչ դստերը չարության է մղում, և դա էլ պատճառ է դառնում մեր ամենազոր հերոսի մահվան։

Ժողովրդի գեղարվեստական մտածողության բոլոր լավագույն ձևերը՝ պատկերավոր խոսք, չափազանցման հրաշալի հղանակ, քնարականություն ու երգիծանք, այնպես միահյուսված են իրար, օգտագործված այնպես բարձրաճաշակ ու հմտորեն, ասես ամբողջ դյուցազնավեպն անցել է հանճարեղ քնարերգակների ստեղծագործական քուրայով և ոչ թե ելել ժողովրդական բանասացների, անգրագետ հորինողների բերանից։

Շուրջ կես հարյուրամյակ առաջ մեր ժողովուրդը, աշխարհի քաղաքակիրթ մարդկության հետ միասին, փառավորապես նշեց «Սասունցի Դավթի» հազարամյակը։ Հազարամյակներ կանցնեն, և դարձյալ կնշվեն մեր դյուցազնավեպի նոր ու առավել փառաշուք հոբելյանները, քանի աշխարհի համար թանկ կլինեն հայրենասիրությունն ու մարդկային մյուս առաքինությունները և պաշտելի՝ գեղարվեստական խոսքի կատարելությունը։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԸ

Յասնմեկերորդ դարի առաջին կեսին մերձվոլգյան ու մերձարալյան տափաստաններից եկած վրանարնակները երբ հասան Մերձավոր Արևելքի երկրները և իրենց սարսափազդու երևույթով հայտնվեցին Հայաստանի արևելյան եզերքին, հայ մտավորականները հնավանդ տեսիլքներից հիշեցին Նեռի կարապետներին։ Վերարծարծեցին նաև Հովհաննու Հայտնության զարհուրելի այն գուշակությունը, որի համաձայն՝ «յետ հազար ամին լուծցէ զսատանայ և հանցէ ի բանտէ անտի. ելցէ և մոլորեցուցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի... որոյ թիւ նոցա իբրև զաւազ ծովու»։

Հազար տարին պետք էր հաշվել սկսած Քրիստոսի խաչելությունից, որն, ըստ ավանդության, կատարվել է 30-ական թվականներին։

Եվ, արդարև, 1030-ականներին էր, որ վրանաբնակները նվաճեցին Հայաստանի արևելյան հարևաններին, հասան Եդեսիա, Թերկրի։ 1023 թ. ահեղ երկրաշարժն ու արեգակի լիակատար խավարումը Հովհաննես վարդապետ Կոզեռնի կողմից հայտարարվել էր ահագանգ Հովհաննու գուշակության կատարման համար։

Իրական «Նեռի կարապետներն» ու «սատանայի զորքերն» ուրիշ անուն ունեին՝ սելջուկ-Թուրքեր։ Նրանք, որ Թուրք-օղուզական ցեղն էին ներկայացնում և նախահայրենիքում հատվածվել էին Թուրք-Թուրանական ընտանիքից, սելջուկ Թուրքեր կոչվեցին իրենց առաջնորդ Սելջուկի անունով։ Հենց Սելջուկի գլխավորությամբ էլ տասներորդ դարի վերջին Սիր-Դարյայից հարավ ընդունել էին իսլամը։ Այսպես էլ նրանք նոր հազարամյակը մտան քոչվոր նվաճողի իրենց բարբարոսությամբ և

կործես հենց իրենց վարք ու բարքին հարմարեցված նոր հավատի մոլեռանդությամբ։ Եվ, չհաշված շուրջ երկուհարյուրամյա ընդմիջումը, որի ընթացքում նրանք նվաճողի ու տիրողի դերը հանձնել էին Թաթար-մոնղոլներին, մնացած ամբողջ հազարամյակի տերն իրենք էին՝ մի ամբողջ անհուն տարածքի վրա, որ սփռված էր արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ։

1045 թվականի վերջին Բագրատունի թագավորը՝ պատանի Գագիկը, ինչպես տեսանք, Բյուզանդիայի մայրաքաղաք հրավիրվելով, արքունիքի ու հայ մեծատունների միացյալ խարդավանքով հեռացվել էր գահից, և թագավորությունից զրկված ու հուսախաբ Հայաստանի մայրաքաղաք Անին հանձնվեց Բյուզանդիայի ողորմածությանը։

Ցուշացան այս ահավոր գործարքի հետևանքները։ Բյուզանդական արքունիքը հայոց ազդեցիկ իշխանական տների ներկայացուցիչներին, նրանց զորաբանակներով ու գայթակղիչ պայմաններով, վռնտեցրեց իր երկրի արևմտյան ու հյուսիսային սահմանները՝ կայսրությունը եվրոպական ավարառուներից պաշտպանելու համար։ Միարար ուժերը կորցրած Հայաստանում գլուխ բարձրացրին ու տիրական դարձան անչատական ձգտումները։ Եվ երբ ընդամենը երեք տարի հետո, 1048 թ., իրենց հեռավոր միջինասիական տափաստաններից եկած սելջուկ-Թուրքերն ասպատակեցին երկրի հարավային մարզերը՝ հասնելով մինչև Տարոն, Կարին ու Տայք, նրանց դեմ լուրջ դիմադրության չելան ո՛չ հայոց զորքի ցանուցիր մնացորդները, ո՛չ էլ երկրին տեր դարձած բյուզանդացիները։ Վերջիններս մի տարի անց նոր ավարառության եկած սելջուկներին դիմադրելու փորձ արին, սակայն խայտառակ պարտություն կրելով Բասենում՝ ետ քաշվեցին և որոշեցին միավորվել հայկական ուժերի հետ, միասնական ճակատ հարդարել սելջուկյան պալիք հարձակումների դեմ։

Սելջուկ-Թուրքերը երրորդ անգամ Հայաստան խուժեցին 1054 թ., Գալով Ատրպատականի կողմից, ոտքի տակ տվին Վասպուրականը և համառ դիմադրության հանդիպելով Կարսում ու Մանազկերտում՝ ավերեցին երկիրը, կոտորեցին խաղաղ բնակչությանը և մեծ կողոպուտով վերադարձան իրենց հեռատաններին։ Չորրորդ արշավանքը, որ տեղի ունեցավ

մեկ տասնամյակ հետո, արդեն ճակատագրական եղավ հայ ժողովրդի համար, որովհետև սելջուկյան զորաբանակներն ասպատակել էին Աղվանքն ու Վրաստանը, Հայաստանի հյուսիսային ու արևելյան նահանգները։ Երբ իբր թե մեծ ուժով ամրացված Մանազկերտն էլ ընկավ արյունարբու հորդաների առաջ, և բյուզանդական զորքերի վերջին խղճուկ մնացորդները դիմեցին փախուստի, կայսրությունն ստիպված եղավ հաղթող սելջուկների հետ կնքել հաշտության պայմանագիր, որով համարյա թե ողջ Հայաստանն անցավ նոր բռնագրավիչներին։

Սելջուկ-Թուրքերը, սակայն, չբավականացան անպաշտպան Հայաստանի գրավումով։ Առաջ շարժվեցին և մեկը մյուսի հետևից նվաճելով կայսրության նահանգները՝ հասան Կոստանդնուպոլիս։

Աշխարհավեր այս արշավանքների մասին խոսող շատ աղբյուրներ կան։ Բայց նրանցից մեկը՝ մեր Մատթեոս Ուռհայեցու պատմական երկը, որ ամենաստիպին ու արժանահավատն է այդ անցքերի համար, Թուրքական ահավոր աղետի ամբողջ մեղքը դնում է Բյուզանդական կայսրության վրա։ Սակայն լավ է խոսքը տանք մեր արդարախոս պատմիչին. «Ո՞վ կը-կարողանա մեկ առ մեկ պատմել անհուն կորուստներն ու զրկման հեկեկոցները Հայոց երկրի, որը Թուրքաց անօրեն ու արյունարբու, գազանաբարո զորքերից կրեց անտիրության պատճառով, սուտ պահապանների, ապիկար ու Թուլամորթ հունաց ազգի վատության պատճառով,— դառը կսկիծով հայտնում է Մատթեոս պատմիչը և բացատրում, թե կայսրությունն ինչպիսի՛ ստորությամբ է քանդել Հայոց երկրի ամրությունը։— Եվ քանի որ մեկ առ մեկ բաժանեցին Հայոց տանից, տարան քաջ զորականներին՝ նրանց կտրելով իրենց տներից ու գավառներից և խափանելով՝ վերացրին Հայոց Թագավորության գահը։ Նրանք քանդեցին զորքերի ու զորավարների պաշտպանական պարիսպը, և հոռոմներն իրենց համար քաջության ու պարծանքի գործ դարձրին անդարձ փախչելը [Թշնամու առաջ], նմանվելով վատ հովիվների, որոնք փախչում են գայլ տեսնելիս։ Սակայն հոռոմները չանացին ու հաջողացրին Հայոց երկրի ամուր պարիսպը քանդելով կործանել, պարսիկներին զենքով հայոց վրա բաց Թողեցին և դա էլ

համարեցին իրենց մեծ հաղթանակը, հետո էլ անպատկառությամբ ձևացնում էին, թե կուրտ զորավարներով ու ներքին զինվորներով Հայաստանը պահում են, մինչև որ պարսիկներն անտերունչ գտան ամբողջ արևելքը։ Այնժամ այնպես սաստկորեն զորացան այլազգիները, որ մեկ տարվա ընթացքում հասան մինչև Կոստանդնուպոլսի դարպասները, նվաճեցին հոռոմների ամբողջ երկիրը, ծովեզրյա քաղաքներն ու նրանց կղզիները, և հույներին դարձրին Կոստանդնուպոլսի ներսում բանտարկվածներ»։

Այստեղ, ինչպես և մեր հին աղբյուրներում առհասարակ, պարսիկներ են կոչված սելջուկ Թուրքերը, ըստ երևույթին, որովհետև Հայաստան էին խուժել Պարսկաստանի կողմից՝ Ատրպատականից։ Սակայն հայտնի է նաև, որ մեր հեղինակները պարսիկ էին կոչում բոլոր նրանց, ովքեր իսլամի կրոնն էին դավանում։

Ուրեմն, սելջուկ Թուրք ավարառուները, Հայաստանը ոտքի տակ տալով, հասել էին մինչև Բյուզանդիա, հարավում՝ Միջագետք ու փոքր-ասիական երկրները։ Եվ այսպես, հաստատվեց նրանց տիեզերական տիրապետությունը։ Պատմության մեջ առաջին անգամ քաղաքակիրթ աշխարհը ծանոթանում էր Թրքության աղետին։ Ավատական կարգի բարձր զարգացման վիճակին հասած բազմաթիվ ժողովուրդներ քնկան անապատներից եկող կիսավայրենի խաշնարածների բռնության տակ։ Դա աշխարհի տեսած ամենաբիրտ ու ամենասոսկալի լուծն էր, որի ծանրությունն ամենից շատ հայ ժողովուրդը կրեց, որովհետև եկվորները Հայաստանի տարածքի մեծագույն մասի վրա ոչ միայն տիրապետում, այլև բնակվում էին արդեն, և նրանց հարևանությունն առաջնորդվում էր գայլի բնազդներով. անխնա կողոպտում ու ավերում էին, կասեցնում ամեն մի առաջադիմություն։ Իսկ եթե մեկ-մեկ ու տեղ-տեղ էլ թույլ էին տալիս տնտեսական որևէ առաջընթաց, գյուղական կյանքի ու առևտրի, արհեստների ու մշակույթի զարգացում, ապա այստեղ ևս առաջնորդվում էին գայլային վարք ու բարքով. համոզվել էին, որ պարարտացած հոտն ավելի ձեռնտու է։ Օրինակ, մեր միամիտ ժամանակագիրները գովեստով են խոսում սելջուկ տիրակալ Մելիք-շահի (1072—1092 թթ.) մասին։ Իբր, նա հոգատար է եղել հպատակ ժողովուրդների նկատմամբ.

թույլ է տվել, որ վերականգնեն քայքայված տնտեսությունը, նույնիսկ հանդուրժել է քրիստոնեությունը։ Բռնակալի այս նոր քաղաքականության մասին ժամանակագիրների միամիտ հիացմունքը հաճախ փոխանցվում է նաև մեր օրերի ուսումնասիրողներին։ Մինչդեռ մելիքշահյան այս կարճատև բարյացակամությունը ևս սելջուկ-թուրքական բռնապետության գայլային քաղաքականության արտահայտությունն էր հանդիսանում։ Թուրք տիրակալն էլ վերջապես հասկացել էր, որ ոչ մի օգուտ չկա ավերակ ու հյուծված փարախից, և շատ ավելի ձեռնտու է, երբ և՛ փարախն է շեն, և՛ հոտն է պարարտ։

Տասնմեկերորդ դարից սկսած սելջուկյան սուլթանության ներսում ծայր առան գահակալական կռիվները։ Սուլթանի կուսակալ ամիրները տեղերում իրենց անկախ հայտարարեցին և ճակատամարտերի էին նետվում միմյանց դեմ՝ նոր հողեր նվաճելու, գերագահության հասնելու համար։ Եվ բոլոր այս խժդժություններից միակ տուժողը ժողովուրդն էր լինում, տեղաբնիկ աշխատավորը, որի համար իր ավանդական երկիրը դարձել էր գժոխք։

Բռնության դեմ հայ ժողովուրդն անհույս կռվում էր ամենուրեք։ Համաժողովրդական ընդվզումներ էին պայթել Սյունիքում ու Տարոնում, Վասպուրականում ու Լոռի-Տաշիրում, Կարինում ու Բշնիում։ Սակայն ամեն անգամ, ապստամբությունն արյան մեջ խեղդելուց հետո, առավել անսանձ էր դառնում սելջուկ բռնավորը, ավելի կատաղի էր ճնշում հայ հպատակին, ավերում նրա երկիրը, հրկիզում տունն ու ինչքը։

Ստեփաննոս Օրբելյան պատմիչն է նկարագրել այն ավարավերը, որ եղել է Սյունիքում սելջուկ բռնավորների երեսփոխ Ասում է՝ 1126 թ. եկավ ամիր Հարոնը, ընաջնջեց Կապան հրուշակավոր բերդաքաղաքն ու Արևիք գավառը։ Իսկ Բաղակա քարը, որ ամրացված վանք էր, և ապահովության համար այնտեղ էին հավաքել շրջակա գավառների բոլոր սրբությունները, հատկապես ձեռագիր մատյանները, ենթարկվեց մի այնպիսի կողոպուտի, որ այլևս ոչինչ չմնաց, «և ամենայն ի գերութիւն մատնեցան»։

Իսկ 1170 թ., սելջուկյան տիրապետության հոգեվարքին, մի աննախադեպ ավերի ենթարկվեց Սյունյաց նահանգի հռչակավոր Բաղաբերդը։ Սելջուկներն այնտեղ կոտորեցին պաշտպան-

վողներին և կողոպտեցին նահանգի ամբողջ հարստությունը։ Նրանք հափշտակեցին Բաղաբերդի ամրությանն ի պահ տրված անհուն գանձերը և հրկիզեցին ու ոչնչացրին ավելի քան 10 հազար ձեռագիր մատյաններ, այսինքն՝ մոտավորապես այնքան, որքան այժմ հավաքված է Երևանի Մաշտոցյան մատենադարանում։

Սելջուկ-թուրքական տիրապետությունն առավել աղետաբեր էր եղել հարևան Արցախ-Խաչենի համար, քանի որ այնտեղ իշխող բնիկ տերերը երբեք գլուխ չէին խոնարհում եկվորների առաջ, և սրանք ամեն անգամ ահռելի զորաբանակներով գալիս, ավերում էին բերդամրոցները, քանդում վանքերն ու եկեղեցիները։ Այդ պատճառով էլ վաղ դարերից սկսած հոգևոր կենտրոններով հարուստ Արցախում չի պահպանվել մինչև 12-րդ դարի երկրորդ կեսը կառուցված որևէ շինություն։

Սելջուկ-թուրքերի մեկ դարու տիրապետությունը հպատակ ժողովուրդների համար մի աննախադեպ չարիք էր և չէր կարող չբորբոքել այդ իսկ ժողովուրդների ազատագրական պայքարը, մանավանդ որ ինքնագլուխ դարձած ամիրների ու կուսակալների գզվռտուքի պատճառով թուլացել էր կենտրոնական իշխանությունը։ Հայրենի աղբյուրները վկայում են, որ հյուսիս-արևելյան Հայաստանում, հատկապես Լոռի-Զորագետում, Արցախում ու Սյունիքում, հարավային նահանգներից՝ Վասպուրականում ու Սասունում, բնիկ հայ իշխանավորների գլխավորությամբ ոտքի էին ելնում աշխատավորական դասակարգերը և, եկվոր բռնակալներին վռնդելով երկրից, վերստին տիրանում հայրենի եղերքներին։ Սյունյաց վանական համալիրների արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ հին Սիսական տոհմի պայազատները թշնամուց վերանվաճել են այս կամ այն բնակավայրը, գյուղն ու ավանը և նվիրել վանքի միաբանությանը։ Արցախյան Դադի վանքում պահպանվել է Հայ՞երքի տեր և Արցախի գահերեց իշխան Հասան Առանշահիկի 1182 թ. փորագրած արձանագրությունը, որով նա հայտնում է, թե «կացի յաւագութեան ամս 40 շատ պատերազմաւ եւ յաղթեցի թշնամեացս»։ Իսկ Խաչենի թշնամիները սելջուկ-թուրքերն էին։ Նման վավերագրեր են պահպանվել նաև Վայոց ձորում, Ուտիքում և հատկապես Տաշիր-Զորագետում, որտեղ, բարեբախտա-

բար, Բագրատունյաց մի երկրորդական հյուղի տիրակալությունը ժառանգելով՝ անդրկովկասյան քաղաքական կյանքի երկնակամարում, պիտի բարձրանար Զաքարյան երախտավոր տոհմը։

Պատմությունը շատ ապացույցներ է տալիս այն իրողության, որ հերոսները ծնվում են համաժողովրդական պայքարի ընդերքից և նոր միայն դառնում այդ պայքարի առաջնորդներ։ Հանձնաժողովը, տասներկուերորդ դարի Անդրկովկասը, հատկապես Հայկական ու վրացական իրականությունը, փոթորկված էր հակաթուրքական ընդվզումներով, և չէին կարող չծնվել այդ ընդվզումները կազմակերպող, կանոնավոր պայքարի հունի մեջ դնող ուժերը։

Դարի կեսերին Զորագետի խոշոռնի բերդի տեր Սարգիս Զաքարյանն իր փոքրիկ զորաբանակով ակնառու դեր կատարեց Վրաց թագավորության ներսում և դարձավ Գեորգի Գ թագավորի սիրելին։ Աստիճանաբար Սարգիս զորավարի շուրջը հավաքվեցին նաև ուրիշ հայ իշխանազուններ իրենց զորքերով, որոնք վրացիների հետ զաշնակցած՝ սելջուկներից ազատագրեցին Վրաց հողերի մեծ մասը և Հյուսիսային Հայաստանի մի շարք գավառներ։ Այս անօրինակ քաջությունների շնորհիվ տաքացել էր Վրաց թագավորի աչքը Սարգիս Զաքարյան զորապետի վրա։ 1185 թ. թագավորը Սարգսին շնորհեց հայ-վրացական միացյալ զորքերի ամիրսպասալարությունը, որը պետության մեջ մեծագույն պաշտոնն էր թագավորից հետո։ Սարգսի, նրա որդիներ Զաքարեի ու Իվանեի, ինչպես նաև հայ մյուս զորավարների գլխավորությամբ մեկը մյուսի հետևից խորտակվեցին սելջուկ թուրքերի ռազմական հենակետերը։ Ազատագրվեցին Հայոց երկրի տարբեր շրջանները, Անին ու Դվինը։ 1192 թ. Թամար թագուհին միացյալ զորքերի ամիրսպասալարի պաշտոնը հանձնեց մի քանի տարի առաջ վախճանված Սարգսի ավագ որդի Զաքարեին՝ նրա կրտսեր եղբայր Իվանեին էլ դարձնելով արքունի զորքերի կառավարիչ։ Այս ժամանակ Վրաց արքունիքում բարձր դիրք ունեին նաև Զաքարեի ու Իվանեի քեռի Քուրդ Արծրունին՝ Թիֆլիսի ամիր-քաղաքապետը, Զաքարյան տոհմի ուրիշ պայազատներ, որոնց ազդեցությունը տարածված էր արևելյան Վրաստանի մի շարք գավառների և հատկապես Ուտիքի արևմտյան մասի վրա։

Այն օրերից մնացած արժանահավատ վավերագրերը հաստատում են, որ Զաքարյան իշխանապետերն իրենց համար նպատակ էին դարձրել հայրենիքի ազատագրությունը նվաճող բռնակալներից և Հայոց միասնական պետականության վերականգնումը։ Այդ նպատակի համար նրանք խոհեմաբար օգտվում էին եղբայրական Վրաստանի քաղաքական ու զինական հզորությունից, միաժամանակ անմնացորդ նվիրումի և անխախտ բարեկամության օրինակ տալով Վրաց արքունիքին ու նրա դահակալներին։ Երբ վրացի ավատատերերն ապստամբել էին Գեորգի Գ-ի դեմ, և երկիրը ծվատվում էր եղբայրասպան պատերազմի պատճառով, Սարգիս ամիրսպասալարն էր, որ արքունիքին հավատարիմ ուժերի գլուխն անցած, օգնեց վերականգնելու Վրաց երկրի խաղաղությունն ու թագավորության անխախտ հզորությունը։ Սարգսի որդիները՝ Զաքարեն ու Իվանեն, Գեորգիի դահի ժառանգորդ Թամարի թագավորության հզորացմանն էին ծառայում մի այնպիսի հավատարմությամբ, որպիսին օրինակ պիտի լիներ Թամարի արյունակիցների համար։

Սակայն և՛ Սարգիսը, և՛ Զաքարեն ու Իվանեն ունեին սելջուկ-թուրքության ճիրաններում հեծող մի հայրենիք, որի ազատագրության գոհասեղանին էին դրել իրենց առաջին ու վերջին ուժերը։ Նրանք հայ ժողովրդի պատմության, նրա քաղաքական կյանքի այն քաջասիրտ շրջահայաց գործիչներից էին, որոնք ջանացին հարազատ երկրի ազատագրությունն ապահովել հարևան եղբայրական ժողովրդի հետ սերտորեն դաշնակցած, միասնական անխախտ ճակատ կազմած։ Բայց նրանք մեծ քաղաքագետներ չէին լինի, եթե, Վրաց թագավորության հովանավորությունը նվաճելու հետ միասին, ապահովված չլինեին սեփական երկրի միասնությունը։ Հայկական նահանգները դեռևս սելջուկների տիրապետության տակ էին, երբ Սարգսի տոհմը անխախտ շաղկապներով իրար հետ միացրեց բնաշխարհի տեր իշխանավորներին։ Սարգիսն ինքը կնության էր առել ժամանակի ամենազդեցիկ նախարարության՝ Արծրունյաց տան դուստր Սահակդուխտին և իր չորս աղջիկներին էլ կնության տվեց մյուս հզոր ու նշանավոր իշխանական տների պայազատներին՝ Զորագետի տեր Կյուրիկյան Աբասին, Դեղի Մամիկոնյան տիրոջը, Ներքին

Խալեթի իշխան Վախտանգին և Ծարա տեր Հասանին։ Ժամանակի այս անվանի իշխանական տները հուսալի արհեստակցությամբ իրար միացնելով՝ Զաքարյաններն իրենց ձեռքը հավաքած բարձր իրավունքներն օգտագործեցին նաև Հայաստանի մնացած նահանգների վրա քաջ ու հավատարիմ իշխանություններ հաստատելու համար։ Նրանց անմիջական նախաձեռնությամբ ստեղծվեցին և հզորացան Վաչուտյանների, Օրբելյանների ու Խաղբակյանների կամ Պռոշյանների հզոր իշխանությունները, որոնց հիմնադիրները Զաքարյանների խիզախ զորապետներն էին եղել և նրանցից էլ բարձր պատվի ու իշխանության էին արժանացել սելջուկյան հորդաների դեմ թափած արյան դիմաց։

Ահա Զաքարյան իշխանապետներին այսպես հաջողվեց ստեղծել միասնական հայկական մի բազմահազարանոց բանակ, որը, եղբայրական Վրաստանի զինական ուժերի հետ միասին, կարողացավ Հայաստանի մեծագույն մասն ազատագրել սելջուկ-Թուրքական վայրագ տիրապետությունից։ Զաքարյանների ազատագրած Հայաստանի սահմանների մեջ էին մտնում հին հայկական նահանգները՝ Կուրի ափերից մինչև Ծաղկանց լեռների հարավային վերջավորությունները Եփրատի ավազանում և Արցախի արևելյան եզրը հանդիսացող Մուխանք դաշտից մինչև Կարսի արևմտակողմն ու Բասենի դաշտի արևմտյան եզրը։ Հաղարծնի վանքի դավթի պատին պահպանվում է Իվանեի փորագրած մի արձանագրությունը, որի մեջ նշվում են երկու զորապետների (Զաքարե և Իվանե եղբայրների) գլխավորությամբ հայ-վրացական զորաբանակների ազատագրած երկրամասերն ու քաղաքները։ Ահա այդ արձանագրության համառոտությունը. «Այս մեր՝ Բագրատունյաց տոհմից Սարգիս Մեծի որդիներ Իվանեի ու Զաքարեի հիշատակի դիրն է և մշտնջենավոր արձանագրությունը։ Նախախնամությունն օգնեց մեզ տիրելու մեր նախնիների սեփական ժառանգությանը և առաջինը մեր ձեռքը տվեց անառիկ դղյակն Անբերդ և թագավորանիստ քաղաքն Անի, ապա ամբոցը Բջնի, Մարանդը, Միչքն ու Գավազանքը Թավրեժում (այսինքն՝ Ատրպատականում), Կարնո քաղաքը՝ մինչև Խլաթ, Շաքին ու Շիրվանը, Պարտավը՝ մինչև Բելուական և այլ բա-

զում գավառներ իրենց սահմաններով, որ ավելորդ համարեցինք հիշատակել»։

Այս արձանագրությունից պարզ երևում է, որ Զաքարեի ու Իվանեի գլխավորած հայ-վրացական զորքերի առաջ ծնկի էին եկել օտար պետական այն միավորումները, որ սահմանակից էին բնաշխարհի ծայրամասային նահանգներին։ Վրաց թագավորությանը հարկատու էին դարձել Շիրվանի ամիրայությունը, Արդաբիլի ու շրջակայքի իշխանությունները։

Վարդան Վարդապետն ու Կիրակոս Գանձակեցին հաղորդում են շատ կարևոր մի իրողություն, որն անպայման հավատի է, քանի որ մեր այդ պատմիչները համարյա ժամանակակիցներն են Զաքարյան իշխանապետության վերելքի, և Զաքարեի մեծագործությունները տեղի էին ունեցել հենց Կիրակոսի ու Վարդանի մանկության շրջանում։ Ասում են՝ հայ-վրացական բանակներն արևելքում հասել էին Մարանդ, նվաճել այդ քաղաքն ու գավառը, հետո էլ շարժվեցին Արդաբիլի վրա, այն էլ նվաճեցին։

Ինչպես վերը տեսանք, Զաքարեի ու Իվանեի ազատագրած Հայաստանն իր սահմաններով համապատասխանում էր Բագրատունյաց համահայկական թագավորությանը։ Հետաքրքիր է, որ երկու եղբայր զորապետներն իրենց ինքնագրերում ներկայանում էին որպես Բագրատունյաց թագավորական գահատոհմի ներկայացուցիչներ («յազգէ Բագրատունեան») և իրենց ժառանգական իրավունքն էին համարում տիրել այդ թագավորությանը, Հայոց երկրի բարձրագույն գահին («սեփական ժառանգութեանն նախնեաց մերոց»)։ Ըստ երևույթին նրանք արդեն իրականացրել էին իրենց այդ երազանքը, և Վրաց թագավորությունն էլ ոչ միայն հովանավորել ու խրախուսել, այլև արդեն ինչ-որ ձևով օրինականացրել էր Զաքարյան իշխանապետության այդ մեծ վերափոխությունը։ Դրա ապացույց կարող են լինել ժամանակի բազմաթիվ անհերքելի վավերագրերը։ Հաղպատի վանքում, Վրաց թագավորության հարևանությամբ, Զաքարեն 1210 թ. արձանագրություն է փորագրել՝ ներկայանալով որպես «մանտատորթոխուցէս-ամիրսպասալար, շահանշահ», որի առաջին մասը նրա՝ Վրաց արքունիքում ունեցած պաշտոնն է, երկրորդ մասը («շահանշահ»—«արքայից արքա»)՝ այն նոր դիրքը, որ ձեռք էր բերել իր իսկ ազատագրած ու ստեղ-

ծած Հայկական իշխանապետության մեջ։ Առհասարակ շատ են այն օրերի վավերագրերը, որոնցում Զաքարեի ու Իվանեի ստեղծած Հայոց պետությունը կոչված է «աշխարհակալ տերություն», «աշխարհակալություն» («աշխարհն»՝ «ամբողջ Հայաստան» իմաստով), «թագավորություն», «թագավորական տերություն» և նույնաստիճան ուրիշ անուններով։ Չի էլ կարելի կասկածել, որ այդ անունների տակ արդեն ստեղծվում էր մի ինքնուրույն պետություն, որի գլուխ էին կանգնած Զաքարյան իշխանապետները, սկզբում՝ Զաքարեն ու Իվանեն միասին, իսկ 1212 թ.՝ Զաքարեի մահվանից հետո՝ միայն Իվանեն, որն ապրեց մինչև 1233 թ., թաթար-մոնղոլական տիրապետության հաստատման նախօրեին։ Այդ գերագահ դիրքը պահպանվեց նաև հետագայում. Զաքարեին փոխարինում էր նրա որդի Շահանշահը, իսկ Իվանեին՝ որդի Ավագը։

Զաքարյանների պետական իրավասության բարձր մակարդակը պայմանավորված էր ոչ միայն նրանով, որ Թամար թագուհուց հետո Վրաց զահակալները եղան անարժան մարդիկ։ Պարզապես փոխվել էին ծարաբերությունները։ Հայկական իշխանություններն ընդունում էին միայն Զաքարյանների գերագահությունը, և սրանք էլ իրենց քաղաքական ու ռազմական հզորությամբ ստիպեցին ճանաչել հայկական պետության ինքնուրույն մի գոյություն, որը նեցուկ էր դառնում երկրի տնտեսական ու մշակութային նոր վերելքի համար։ Մենք Զաքարյանների հզոր պետականությանն ենք պարտական 12-րդ դարի վերջին քառորդի և 13-րդ դարի առաջին կեսի հայկական կյանքի, հատկապես մշակույթի այն վիթխարի առաջընթացը, որի փառավոր հիշատակներն այսօր էլ հիացնում են իրենց մասշտաբներով ու կատարելությամբ։ Շինարարության թափով, կրթական, ուսումնական լայնահուն եռուզեռով, գրական ու գիտական նշանակալից առաջընթացով այդ ժամանակաշրջանը հայ ժողովրդի բազմադարյան կենսագրության մեջ հանդիսացավ հազվադեպ հանդիպած բախտավոր հատվածներից մեկը։ Եվ դարձյալ հիշենք. այդ կարճատև հատվածն ստացել էր ազգային քաղաքական ու մշակութային մի այնպիսի լիցք, որը նրան առաջ էր մղելու նաև հետագա տասնամյակներում, երբ երկրի վրա վաղուց տիրություն էին անում սելջուկներից հետո եկած նոր վրանաբնակները՝ թաթար-մոնղոլական հորդաները։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

13-րդ դարի սկիզբը միջնադարյան Հայաստանի պատմության ամենաբարենպատեհ շրջաններից մեկն էր. Զաքարյան զորապետների և հայրենասեր մյուս ավատատերերի ջանքերով ապահովվել էր երկրի մեծագույն մասի քաղաքական անկախությունը։ Օտարների պարբերական կամ չընդմիջվող ասպատակություններից փրկված ժողովուրդը լծվել էր խաղաղաստեղծարար աշխատանքի։ Տեսական խաղաղությունն ու տընտեսական վերելքը հիմք էին դարձել շինարարական, գրական ու մշակութային մի այնպիսի աշխուժության, որը մեր պատմագիտության կողմից պետք է կոչվեր Արծաթե դար, ի տարբերություն հայրենի գրի ու գպրության հիմնադրումին անմիջապես հաջորդած Ոսկեդարի։

Սակայն ճակատագիրը հայ ժողովրդին երբեք էլ հնարավորություն չի տվել վայելելու տեսական խաղաղության բարիքը։ Կես դարից էլ պակաս տևած քաղաքական անդորրը պղտորելու եկավ թաթար-մոնղոլների տիեզերական աղետը, որը Հայաստանի վրա ծանրացած պիտի մնար շուրջ երկու հարյուրամյակ։

Հյուսիսային Չինաստանի և Մոնղոլական տափաստանների վայրկաուն, ռազմատենչ ցեղախմբերը, որոնք Հայանի էին թաթար ու մոնղոլ անուններով, 13-րդ դարի սկզբին համախմբվեցին հզոր իշխան ու զորապետ Տեմուչինի գլխավորությամբ։ Ցեղապետների ղուրուլթայը (համագումար) համամոնղոլական խաքան-թագավոր ճանաչեց Տեմուչինին, նրան կոչեց Չինգիզ-խան, որ նշանակում է «ծովի-օվկիանոսի թագավոր» («չինգիզ»— «դենգիզ»— «դենիզ»— «ծով» բառից)։

Չինգիզ-խանի գլխավորած բանակները, Չինական պարիսպը անցնելով, շարժվեցին դեպի արևմուտք և գերիշխանության տակ առան հեռավոր երկրները։ Միջին Ասիայի նվաճումից հետո Չինգիզ-խանը հետախուզական նպատակով կասպից ծովի հարավային ափով 20-հազարանոց մի զորաբանակ ուղարկեց Անդրկովկաս։

1220 թ. դեկտեմբերն էր. թաթար-մոնղոլ ասպատակիչները, բռն դնելով Արցախի Մուխանք (այժմ Մուղան) գավառի տաք ու բարեբեր դաշտում, հարձակումներով կողոպտում, ավերում էին շրջակա գավառները՝ հասնելով Վիրք-Վրաստանի մայրաքաղաքը։ Տփղիսի մոտ, երամ գետի ավազանում, նրանց դեմ դուրս եկան հայ-վրացական զորքերը՝ թագավոր Գեորգի Լաշայի և Իվանե աթաբեկ Զաքարյանի գլխավորությամբ, սակայն ջարդվեցին գլխովին, և թագավորն ու աթաբեկ-զորապետը փախչելով հազիվ փրկվեցին։

Հետագայում թաթար-մոնղոլներն ավերիչ արշավանքով ոտքի տակ տվին նաև Շաքին ու Շիրվանը։ Նույնիսկ անցան Կովկասյան լեռնաշղթան և ասպատակ փոխեցին Հյուսիսային Կովկասում։

1223 թ. մայիսին մոնղոլները Դոնեցկ գետի Կալկա վտակի վրա հաղթելով ռուսների ու ղիպչաղների (պոլովցիներ) միացյալ զորքերին և հարուստ ավարով ու մոտ ապագայում նվաճելիք երկրների մասին հանգամանալից տեղեկություններով վերադարձան Չինգիզ-խանի մոտ։

Թաթար-մոնղոլների այս հետախուզական արշավանքներից հետո ցավալիորեն սկսեցին տկարանալ վրաց-հայկական զինական ուժերը։ Դրա պատճառը ոչ միայն 1223 թ. մահացած Գեորգի Լաշայից հետո Վրաց գահին բազմած նրա քույր Թուսուդանի անճարակությունն էր, այլև հարևան սելջուկ-թուրքական պետական կազմավորումները, որոնցից հատկապես Խորեզմի սուլթան Ջալալ էդ-Դինը 1225—26 թվականներին մի շարք ճակատամարտերում հաղթելով վրաց-հայկական զորքերին՝ տիրեց Գանձակին, Դվինին, ապա ավերեց Տփղիսը։ Ժամանակակից արաբ հեղինակ Իբն ալ-Ասիրը պատմում է, թե՝ «մուսուլմանները [Տփղիս] քաղաքը գրավեցին և... կոտորեցին քաղաքում գտնվող բոլոր վրացիներին՝ չխնայելով ո՛չ հասակավորներին, ո՛չ էլ երեխաներին, բացի նրանցից, որոնք ընդունեցին իսլամը և արտասանեցին [Ղուրանի] վկայության երկու խոսքը[1]։ Այդպիսիք փրկվեցին, որովհետև Ջալալ էդ-Դինը հրամայեց նրանց թլպատել ու հավանավորել։ Մուսուլմանները կողոպտեցին բնակչության գույքը, գերի վերցրին ողջ մնացածներին և անչափահասներին տարան ստրկության»։

Նույն վայրագությունները նրանք կատարել էին նաև Հայաստանում։ Սելջուկյան 60-հազարանոց բանակը 1225-ի աշնանը հեղեղել էր Դվինը՝ պատճառելով դաժան ավերածություններ։ Հայ-վրացական զորամասերը միայն Դառնիի մոտ փորձեցին ճակատ տալ թշնամու անսանձ հորդաներին։ Սակայն այստեղ էլ հաղթեցին թշնամու թվական գերակշռությունն ու ռազմավարական ճարպկությունը, և Հայոց երկիրը տրորվեց նվաճողների ոտքերի տակ։ Պատմիչն այդ առթիվ դառնությամբ պիտի հիշեր, որ «խորեզմցիները, մեր երկիրն անտերունչ գտնելով, անխնա կոտորեցին ու գերեցին, հրդեհեցին քաղաքների, գյուղերի և վանքերի շինությունները ու տները, նաև այրեցին մեր ամբողջ վաստակը և կորստեցին այգիներն ու ծառերը, այդ պատճառով էլ սաստիկ սով տիրեց ամենուրեք» (Ստ. Օրբելյան)։

1227 թ. վրաց-հայկական զորքերը հարձակվեցին Տփղիսի մահմեդական կայազորի վրա, գրավեցին քաղաքը։ Իսկ Վայոց ձորի տեր Գոռոշ Խաղբակյանը՝ հակասելջուկյան պատերազմների հերոս Վասակ Խաղբակյանի որդին, որ այս ժամանակ արդեն Հայոց զորքերի սպարապետն էր, մտավ Դվին, կոտորեց այնտեղ տեղակայված ջալալեդդինյան զորքն ու այն մահմեդականներին, որոնք երկու տարի առաջ բռնակալին աջակցելով՝ սրի էին քաշել հայ բնակչությանը։

Այս մասնակի հաջողությունները, սակայն, վճռական նշանակություն չունեցան երկիրը փրկելու համար, քանի որ Հայաստանի հարավային շրջաններում արդեն տիրություն էին անում մահմեդական ամիրայությունները, իսկ մի քանի տարի հետո էլ Հայաստանն ու Անդրկովկասը ոտքի տակ էին տալու թաթար-մոնղոլական պետության հիմնական ուժերը։

---

[1] «Չկա ուրիշ աստված Ալլահից բացի, և Մուհամմեդը նրա մարգարեն է»։

ու ձորերում, սփռվեցին բազմերամ մորեխի պես կամ իբրև հորդառատ անձրև, որ տեղում է երկրի վրա»։

Ասպատակիչ թաթար-մոնղոլներն իրենց դաժանությամբ կարծես որոշել էին ամբողջ աշխարհը սելջուկ-թուրքերին։ Ականատես պատմիչները նրանց անգթությունների մասին խոսում են սարսափով ու նողկանքով։ Արաբ Իբն ալ-Ասիրը, որ միայն առաջին արշավանքներին էր վկա եղել (վախճանվել է 1233 կամ 1234 թ.), դրանք ներկայացնում է իբրև «ամենասոսկալի դժբախտությունը և ամենաահավոր աղետը, որի նմանը դեռ չի տեսնվել երկրի վրա ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը, և որը պայթեց բոլոր ժողովուրդների, հատկապես մուսուլմանների գլխին»։

«Պետք է ենթադրել,— շարունակում է ալ-Ասիրը,— որ այս երկրի ժողովուրդներն այլևս չեն տեսնի այսպիսի աղետ մինչև Գոգի ու Մագոգի ժամանակները, երբ լինելու է աշխարհի վերջը։ Չէ՞ որ նույնիսկ Նեռը պիտի խնայի նրանց, ովքեր կհետևվեն իրեն, և պիտի ոչնչացնի միայն նրանց, որոնք իրեն կդիմադրեն։ Իսկ թաթարները ոչ ոքի չէին խնայում. նրանք կոտորում էին և՛ կանանց, և՛ տղամարդկանց, և՛ երեխաներին։ Բացում էին հղի կանանց փորերը և մորթում դեռ չծնված երեխաներին»։

Հայ պատմիչի վկայությամբ՝ Աղվանքում, Հայոց ու Վրաց երկրներում նրանք ոչնչացնում էին՝ ինչ որ պատահեր իրենց ճանապարհին. «ամեն ինչ սրի էին քաշում՝ թե՛ մարդ, թե՛ անասուն, նույնիսկ շներին։ Ոչնչացնում էին բոլոր անասունները, բացի ձիերից, որոնք անմիջապես իրենց հետ էին վերցնում» (Կիրակոս Գանձակեցի)։

Մուղանում բանակած մոնղոլ զորապետները (նոյինները), վիճակ հանելով, իրենց մեջ բաժանել էին Հայոց, Վրաց ու Աղվանից երկրները՝ նահանգ առ նահանգ և գավառ առ գավառ, որպեսզի նվաճեն, տիրեն, կողոպտեն ու ավերեն։ Հայ իշխաններից շատերն սկզբում փորձեցին դիմադրել կամ, բերդերում ամրացած, դիմանալ այդ աշխարհավեր հեղեղին։ Սակայն թշնամին անողորմ էր ու անհաղթահարելի։ Կիրակոսը պատմում է, որ այժմյան Գանձասարի վանքի մոտ գտնվող խոխանաբերդում ամրացած Հասան Ջալալ իշխանը, տեսնելով դիմադրության անհուսալիությունը, հաշտություն խնդրեց մոնղոլ

Այս անգամ թաթար-մոնղոլների արշավանքների նպատակն էր ոչնչացնել Իրանի հյուսիսում, արևմտյան մասում և հատկապես Հայաստանի հարավային շրջաններում իշխող մահմեդական իշխանությունները։ Մի ռազմերթով նրանք բնաջնջեցին Ջալալ էդ-Դինի սուլթանությունը, ապա հարձակվեցին Առանի կենտրոն Գանձակի վրա և այն հողին հավասարեցրին, ինչպես, անխնա կոտորելով բնակչությանը։

Այնքանը տեղի է ունեցել 1232—33 թվականներին։

1235 թ. Ղարաղորում[1] մայրաքաղաքում մոնղոլ ավագանու ժողովը (ղուրուլթայ) որոշեց մեծ արշավանք սկսել դեպի արևմուտք, և հաջորդ տարին Չինգիզ-խանի թոռ Բաթու-խանն ահռելի մի բանակով գնաց նվաճելու Ռուսաստանը, իսկ Ջարմաղան նոյինը շարժվեց դեպի Հայաստան ու Վրաստան։

Ջարմաղանի զորքը դարձյալ բանակ դրեց Մուխանք բարերեր դաշտում և այստեղից սկսեց իր ասպատակությունները։ Կիրակոս Գանձակեցին՝ դեպքերի ժամանակակիցն ու ականատեսը, թաթար-մոնղոլների այս միջոցառումը հետևյալ խոսքով է ներկայացնում. Ջարմաղանի զորքերն «իրենց ազգ ու տակով և ամբողջ բազմությամբ եկան հասան Աղվանից աշխարհը և, իրենց վրանները խփելով, տեղավորվեցին Մուղան կոչված դաշտում, որը լի էր ամեն տեսակ բարիքներով՝ ջրով, փայտով, մրգով ու որսով։ Այստեղ նրանք ապրում էին ձմեռ ժամանակ, իսկ գարնանն ասպատակ ու ավեր էին սփռում տարբեր կողմերում, ապա վերադառնում էին և բանակում նույն տեղը»։

Այս ասպատակն ու ավերը նրանք սփռում էին Հայաստանում ու Վրաստանում, քանի որ նախորդ արշավանքներից հյուծված և նորեկ բռնագրավիչների մասին պատվող ահավոր լուրերից սարսափած վրաց-հայկական զինական ուժերը համարյա անընդունակ գտնվեցին որևէ լուրջ դիմադրություն ցույց տալու։ Եվ դարձյալ նույն Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ հայ ու վրացի բոլոր զորապետները միայն «իրենց անձերն էին փրկում՝ փախչելով ամրոցները, ուր որ կարողանում էին։ Իսկ մոնղոլներն ամենուրեք՝ դաշտերում, լեռներում

[1] Ղարաղորումը մոնղոլ մեծ խանների մայրաքաղաքն էր Օրխոն գետի վրա։ Հիմնադրվել է 1220 թ. Չինգիզ-խանի կողմից և ավերվել է 16-րդ դարում։

նոյին Ջուղբուղայից և առատ նվերներով իր տիրույթները փրկեց կործանումից։ Սյունիքի Հրաշկաբերդ ամրոցում պաշարված էլիկում Օրբելյանն էլ փրկագնով հաշտություն կնքեց Աալան նոյինի հետ։ Մոնղոլ զորապետին ընդառաջելով՝ հպատակություն հայտնեց նաև Իվանե Զաքարյանի որդի Ավագը, որն այդ ժամանակ Վրաց արքունիքի բարձրաստիճան գործիչներից մեկն էր և Հյուսիսային Հայաստանի գահերեց իշխանը։

Այսպիսով, նվաճված էին արդեն Հայաստանի հյուսիսային նահանգները, և մոնղոլները, Զարմաղանի գլխավորությամբ, երկրի կառավարիչ Ավագ Զաքարյանին էլ իրենց հետ առած, շարժվեցին դեպի Անի։ Մոնղոլ նոյինը նախապես բանախոսներ ուղարկեց քաղաք՝ առաջարկելով հանձնվել իր ողորմածությանը։ Իշխանավորները համաձայն էին կատարելու նվաճողի առաջարկությունը։ Սակայն ժողովուրդն ըմբոստացավ նրանց դեմ, կոտորեց բանախոսներին և քաղաքը պատրաստեց պաշտպանություն։ Նրանց դիմադրությունը, ականատեսների վկայությամբ, համառ էր ու հերոսական։ Եվ հայտնի չէ, մոնղոլներին կհաջողվե՞ր ընկճել ինքնապաշտպանության անցած ժողովրդին, եթե նրա հետ ընդհանուր ճակատ կազմած լինեին նաև քաղաքի մեծամեծներն ու հայոց զորքը։ Սակայն պաշարվածների անմիաբանությունը մի կողմից, հարձակվողների մեծաքանակ ուժը, արտասովոր զինավառությունն ու հպատակություն հայտնած հայ իշխանների օգնությունն էլ՝ մյուս, պատճառ դարձան, որ ընկնի Անին։ Ներխուժած մոնղոլներն արյան բաղանիք սարքեցին քաղաքում։ Կոտորածից չփրկվեցին ո՛չ հերոսական պաշտպանները, ո՛չ էլ ձեռքները ծալած թշնամու գալստին սպասողները։ Դաժան էին թաթար-մոնղոլները, և բանախոսների սպանությունն ու համառ պաշտպանությունը նրանց դարձրել էին առավել արյունարբու։

Երբ նվաճողները, այստեղ իրենց գործն ավարտած, շարժվեցին դեպի Կարս ու Սուրբ Մարի (Սուրմարի), ամայի էր արդեն Բագրատունյաց շքեղաշուք ոստանը՝ քաղաքամայր Անին, և համառարած ավերածության ու փլատակների միջից միայն սուրբ տաճարների գմբեթներն էին միտում դեպի վեր՝ որպես երկնակարկառ բողոք օտար անողորմ նվաճողների և սեփական ապիկար իշխանավորների դեմ։

1236 թվականն էր, և այս տարում Հայաստանն ընդունեց թաթար-մոնղոլների տիրապետությունը։ Ըստ պայմանագրության՝ այս ժամանակից սկսած հայ իշխանավորները պարտավոր էին բնակչությունից հարկ ու տուրք հավաքել, հանձնել նոր տերերին և, միաժամանակ, նրանց զորքերի հետ միասին մասնակցել գալիք նվաճումներին։ Աղբյուրները կոնկրետ տեղեկություններ են պահպանել այն մասին, թե ինչպես 1242 թ. հայ իշխաններն ու զինվորները թաթար նվաճողների հետ հասել են Կարնո մարգը, նվաճել այն։ Հաջորդ տարում նրանք հարձակվել են Իկոնիայի սելջուկ սուլթանության վրա և մեծ զոհերի գնով ծունկի բերել։ Այս ճակատամարտով փաստորեն ավարտվում էր Միջերկրականի արևելյան՝ փոքրասիական ափի գրավումը, և օրակարգի մեջ էր դրվում Կիլիկյան Հայոց թագավորության նվաճման հարցը։ Սակայն այստեղ Խալենի տեր Հասան-Ջալալը, զգալով կիլիկիահայերին հասնելիք աղետը, միջնորդեց, որպեսզի թաթարներն ընդունեն Հեթում թագավորի հպատակությունը, զորք չմտցնեն Հայոց Կիլիկիա։ Պայմանագրով խաղաղություն հաստատվեց, և Կիլիկյան հայկական թագավորությունը փրկվեց մոնղոլական վայրագություններից։

Երկու տարվա ընդմիջումից հետո, 1245 թ., մոնղոլները նորից հեռավոր մի արշավանք ձեռնարկեցին, և հայոց զորքերն ստիպված էին նրանց հետ շարժվել դեպի Հայաստանի հարավային շրջանները։ Այս հպատակեցնող ռազմերթն անցավ Ամիդով, Եդեսիայով, Մծբինով, ոչնչացրեց Խլաթի Այուբյան ամիրայությունը, հասավ Դամասկոս, բախվեց Եգիպտոսի մամլուքների հետ։

Եթե նկատի առնենք, որ թաթար-մոնղոլական բռնագրավիչները հյուսիսում էլ Վոլգայի ավազանն անցել, նվաճել էին Ռուսաց երկրի մեծագույն մասը և իրենց իշխանությունը հաստատել Ռուսաստանի ու հարևան երկրների վրա, ապա դժվար չէ եզրակացնել, որ կարճ ժամանակում Չինգիզ-խանի ու նրա հաջորդների արյունարբու հորդաներն ստեղծեցին տիեզերական մի տիրակալություն, որը ժողովուրդների պատմության մեջ աննախադեպ էր իր ընդգրկումներով և մանավանդ ծավալումի կայծակնային թափով։

Ո՞րն էր պատճառը, թաթար-մոնղոլներին ինչպե՞ս հաջող-

վեց երկու-երեք տասնամյակում ստեղծել այդքան հզոր ու լայնատարած մի բանաիրություն, որի մասին ահով ու սարսափով էին խոսում ժամանակակիցները։

Հետազոտողներից ամենք այնպես են կարծում, թե թաթար-մոնղոլների տոտալիտարական հաջողությունները հիմնականում պայմանավորված են եղել նրանց ընտիր զենքով՝ նետաղեղով։ Մոնղոլական աղեղի լարը պատրաստված էր լինում ուղտի աղիքից և, իբր, ամենամուրն ու ամենաճկունն էր իր տեսակի մեջ։ Անշուշտ, նետաղեղի որակը պիտի որոշ դեր խաղացած լիներ թաթար-մոնղոլական արշավանքներում։ Իզուր չէ, որ նրանց մասին խոսող աղբյուրներում այնքան մեծ տեղ է տրվում այդ զենքին, իսկ հայ պատմիչները մոնղոլներին կոչում են «՝ այլ կերպ, քան «նետաղեղ ազգ»։ Բայց նետաղեղը միակ զենքը չէր այն օրերում, և ուղտն էլ իր աղիքը միայն թաթար-մոնղոլների համար չէր պահել։

Ճշմարտությունն այն է, որ ճակատագիրը թաթար-մոնղոլներին պատմական ասպարեզ հանեց նրանց համար վերին ատիճանի նպաստավոր ժամանակաշրջանում. դեպի արևմուտք ձգվող նրանց ճամփաներին համարյա բոլոր հին տերությունները քայքայվել էին՝ ծնունդ տալով մրցակից, իրար հոշոտող մանր իշխանություններ։ Վերջին երկու դարերի միակ հզոր վարչական կազմավորումը, որ կարող էր լուրջ արգելք դառնալ նրա հաղթական երթի դեմ, սելջուկ Թուրքերի մեծ պետությունն էր, և այն էլ նախօրեին բաժանվել էր ամիրայությունների, որոնք կնախընտրեին իրար պատառոտել, քան միասնական ճակատ հարդարել նորահայտ քնդհանուր թշնամու դեմ։

Պակաս դեր չէին խաղում նաև մոնղոլների հետախուզական-նախնական արշավները, որոնցից հետո՝ միայն, ապագա պատերազմների ու նվաճումների համար բազմակողմանի հարուստ ու ստույգ տեղեկություններով նրանք հարձակվում էին իրենց նոր զոհերի վրա։ Եվ եթե վստահ չլինեին իրենց հաղթանակի ապահովությանը, ոչ մի հարձակում էլ չէին ձեռնարկի։ Մի՞թե պակաս խոսուն է, օրինակ, այն փաստը որ նրանք սելջուկյան ամիրայությունների ու սուլթանությունների վրա արշավի գնացին միայն Անդրկովկասը նվաճելուց և հայ-

վաստական ու հարևան մյուս զինական ուժերն իրենց դամարելուց հետո։

Եվ, իհարկե, չի կարելի մոռանալ նաև մոնղոլների ռազմավարական քաղաքականությունը, որի կազմակերպիչները ռազմատենչ, արյունռուշտ ցեղապետներն ու առաջնորդներն էին, իրականացնողները՝ օրորոցից ի վեր պատերազմի ու ավերածությունների վարժեցված զինվորությունը։ Նրանք կյանքում գիտեին միայն կռվել և հաղթել կամ մեռնել։ Նրանք նվաճած երկրների ռազմական ամբողջ ուժը վերցնում էին իրենց հետ, իսկ քաղաքային բնակչությանը ոչնչացնում որպես թիկունքի վտանգավոր օջախ։ Մասնատում էին իշխանությունները, որոնք այս դեպքում կարող էին լինել միայն հլու կամակատարներ, նույնիսկ իրենց զորքերի շարքում՝ անձնազոհ ու քաջ կռվողներ, բայց երբե՛ք վճռական ուժ՝ իրրև նոր տիրապետական տիրապետության հակառակորդներ։

Եվ, վերջապես, մի հարց ևս. թաթար-մոնղոլական տիրապետությունն ի՞նչ բերեց նվաճված ժողովուրդներին։ Չէ՞ որ, օրինակ, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներն ու նվաճումներն իրենց հետևից թողեցին հելլենիզմը, որը քաղաքական ու մշակութային վիթխարի առաջադիմության կրողն էր, և նվաճված աշխարհը նրա հետ ոտք դրեց զարգացման մի նոր ու բարձր փուլ։

Համդալլահ Ղազվինին, որ թաթար-մոնղոլների բռնությունների ականատեսն է եղել և նրանց կենսագրության ամենաարժանահավատ աղբյուրներից է, տվել է մի բնութագրություն, որը ճշմարիտ է և հաստատվում է մնացած բոլոր աղբյուրների վկայություններով. «Եթե այսուհետև հազար տարվա ընթացքում այլևս ոչ մի աղետ էլ չլինի, դարձյալ անհնար կլինի վերացնել մոնղոլական արշավանքների ու տիրապետության հետևանքները, աշխարհը չի կարողանա վերադառնալ իր այն բարգավաճ վիճակին, որ ուներ մինչև այդ դեպքերը»[1]։

Ուրեմն, մոնղոլները Հայաստանը և իրենց տիրապետության տակ ձգած աշխարհը՝ ծայրից ծայր, հետ նետեցին հազար տարվա քաղաքակրթությունը հազար տարվա ընթաց-

1. «Материалы по истории туркмен и Туркмении», М.—Л., 1939, էջ 474.

քում չպետք է կարողանար վերականգնել իր կորուստները։ Եվ հրաշք պիտի լիներ, եթե մի ժողովուրդ նման տիրապետության ներքո կարողանար ոտքի կանգնել, առավել ևս՝ իրեն վիճակված հազարամյա հետամնացության խորխորատները հաղթահարելով՝ վերադառնալ իր քաղաքակիրթ վիճակին։

Դուս պատմաբանները գտնում են, որ մոնղոլների մեղքո՛վ իրենց երկիրն անմասն մնաց եվրոպական երկրների առաջընթացից։

Հայաստանը ժամանակի քաղաքակիրթ աշխարհում առաջիններից մեկն իր ուսերին զգաց թաթար-մոնղոլական լծի անտանելի ծանրությունը և, առանց չափազանցության, իրերի դժբախտ բերումով՝ միշտ էլ մնաց այդ ծանրության կենտրոնի ներքո։

Եվ, այսպես, երկիրը գտնվում էր մոնղոլական տիրապետության տակ, ժողովուրդը՝ ենթակա նոր բռնակալների անսանձ կամայականություններին։ Մյուս կողմից էլ մոնղոլների հաճելակատար տեղական իշխանավորներն էին կեղեքում խեղճ աշխատավորին։ Եվ այդ անհույս ու անհեռանկար իրականությունից դանդատավոր Ֆրիկն այսպես է ներկայացրել թաթար-մոնղոլական տիրապետության աղետը.

Հիմիկ գժարեց բաներ,
Որ թաթարն ելաւ թագաւոր,
Զրկեց զամենայն աշխարհ,
Ու զոզերն եդիր մեծաւոր։

Հայ շրջահայաց զորապետները հարկադրված էին օտար բռնակալության նոր նվաճումների օգտին զոհաբերել այն արյունը, որ խնայել էին սեփական հայրենիքի պաշտպանության համար։ Սակայն նրանք այս նոր ռազմերթերն օգտագործում էին նաև հանուն ազգօգուտ գործերի. հարավային նահանգներում հայրենակիցներին էին փրկում սելջուկյան տաժանակրությունից կամ հենց մոնղոլների դաժանություններից։ Օտար երկրներում փնտրում-գտնում էին Հայաստանից տարագրված ձեռագիր մատյաններ և ուրիշ սրբազան հարստություններ, վերանվաճում կամ նա գնում։ Մատենադարանում պահպանվող բազմաթիվ ձեռագրեր կան, որոնց հիշատակարանները պատմում են հայ զորավարների ու զինվորականների անշահախնդիր նվիրվածությունն այս գործին։ Կիրակոս Գանձակեցին հիշում է Զաքարե ամիրսպասալարի հարազատներ Ավագին ու Շահանշահին, Վահրամ Զաքարյանի որդի Աղբուղային և Գրիգոր եպիսկոպոսին, որոնք բազմաթիվ ձեռագրեր էին ազատագրել և՛ պատերազմով, և՛ մոնղոլներին վճարած մեծամեծ փրկագներով։ Ասում է՝ մոնղոլներն իրենց գրաված ձեռագիր մատյանները հայերին էին վաճառում բազմապատիկ թանկ գներով, որովհետև տեսել էին, որ սրանք ոչինչ չեն խնայում այդ ձեռագրերի համար։ Եվ վերանվաճված կամ վերադարձված փրկված հայերեն ձեռագրերը բերում, նվիրում էին հայրենի գավառների վանքերին ու եկեղեցիներին։

Համառեղ մղած պատերազմներով չբարեկամացան մոնղոլներն ու հայերը։ Երկրին տիրացած բռնակալներն ավելի անսանձ էին կողոպտում իրենց ողորմածությանը հանձնված ժողովրդին։

Նվաճված քրիստոնյա ժողովուրդների վիճակն ավելի անտանելի դարձավ, երբ մոնղոլները մահմեդականություն ընդունեցին։ Դրանից հետո նրանք հպատակներին բռնությամբ իրենց հավատին էին դարձնում, իսկ ընդդիմացողներին կոտորում կամ քաշում ահռելի հարկերի տակ։

Ուլջեյթու-խանն էր (1304—1316 թթ) այս դաժանությունները հրահրող գլխավորը։ Իսլամի կրոնին դառնալով՝ նա իր անունն էլ էր փոխել՝ կոչվելով Մուհամմեդ Խուդաբանդա։ «Խուդաբանդա»— «աստծու ծառա» անունը հայ հեղինակները շուտ տվեցին, դարձրին «աղա-բանդա», որ կնշանակի «իշի ծառա»։

Ստեփաննոս Օրբելյանը վկայում է, որ արնախում մոլեռանդի և հետնորդների օրերում թլպատում էին հայ հոգևորականներին։ Իսկ Գրիգոր Կարնեցին պատմում է, որ անասելի ծանր հարկերի տակ էին առնվել բոլոր բնակիչները՝ սկսած 11 տարեկանից, և ով չէր կարողանում հարկը վճարել, սպանում էին կամ գերության քշում։ Վերստին ասպարեզ էր եկել գլխահարկ-ջիզյան՝ այլադավանության տուրքը, որով կողոպտում էին քրիստոնյաներին։ Իսկ եթե սրան էլ գումարենք բազմատեսակ այն հարկերը, որոնք գանձվում էին մարդկանցից՝ անասունների, հողատարածությունների, հանքային հանածոների ու բնական այլևայլ հարստությունների դիմաց,

ինչպես նաև տեղական իշխանավոր-դրածոների ինքնահնար տուրքերը, պարզ կլինի, թե ինչո՞ւ հայ ժողովուրդը մոնղոլական տիրապետության վերջին շրջանում գտնվում էր տնտեսական քայքայման և քաղաքական անկման ամենավատթար վիճակում։

Կրոնական հալածանքներից, հարկահանների կամայականություններից ու չարաշահումներից զզված հայ մարդիկ զանգվածաբար հեռանում էին մայր հայրենիքից՝ ապահովություն փնտրելու օտար երկրներում։ Այսպես ամայացան բազմաթիվ քաղաքներ ու շեներ, վերջնականապես լքվեց քաղաքամայր Անին, անշքացան վաղեմի վաճառաշահ Կարսը, Դվինն ու մյուս հռչակավոր կենտրոնները։

Մեռնում էր քաղաքային կյանքը՝ որպես մոնղոլների տնտեսական ու մշակութային հետամնացության հակոտնյան։ Հայոց լուսավորությունն առկայծում էր միայն լեռնային շրջանների անմատչելի վայրերում։ Երկրի վրա ծանրացել էր միջնադարյան ամենամռայլ մղձավանջը, որին դիմանալու և նորից առաջ գնալու համար պիտի պահանջվեին գերմարդկային ուժեր։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈՒԼՆԵՐԻ ԲՌՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԳՈՅԱՏԵՎՈՒՄԸ

Երբ բռնակալներն իրենց տիրապետությունը հաստատում են որևէ երկրում, հաջորդ քայլերն արդեն ուղղում են այդ երկրի տնտեսության զարգացմանը։ Ո՛չ թե հպատակների բարօրության մտահոգությունից, այլ որովհետև իրենց՝ բռնակալներին, ձեռնտու է, որ այդ երկիրն ունենա տնտեսական հաջողություններ, և իրենք յուրացնեն այդ հաջողությունների առյուծի, իսկ տվյալ դեպքում՝ բռնատիրողի բաժինը։

Թաթար-մոնղոլների տիրապետության շրջանից էլ հայտնի են միջոցառումներ, որոնց նպատակն էր զարգացնել հպատակ երկրների տնտեսությունը։ Այդ միջոցառումների իրականացմամբ շահագրգռված էր կենտրոնական իշխանությունը (մեծ խաքան), որի գանձատունն էր հորդելու հարուստ հարկատուներից գանձվող հարկուտուրքը։ Սակայն ա՛յլ շահեր ունեին մոնղոլ զինվորությունը և նրա հետ եկած քոչվոր խաշնարածները։ Սրանց անհրաժեշտ էին ամայի տարածություններ, նոր արոտավայրեր, ուր միայն իրենք էին լինելու տեր ու տնօրեն։ Այս առթիվ Կ. Մարքսը նկատել է, թե սովորաբար «նվաճող ժողովուրդը նվաճվածների վրին է փաթաթում իր յուրահատուկ արտադրահեղանակը», և «մոնղոլները վարվում էին ըստ իրենց արտադրության եղանակի, երբ ամայացնում էին Ռուսաստանը, քանի որ անասնապահության համար, առաջին հերթին, անհրաժեշտ էին մեծ ու անմարդաբնակ տարածություններ»։

Հայաստանի լեռնային շրջանները՝ Գեղարքունիքը, Լոռին, Արագածի ու Արարատի փեշերը դարձել էին եկվոր վաչկա-

տունների ամառային արոտավայրերը։ Ջմերոցներ էին Արարատյան դաշտը, Մուղանը, Երզնկայի ու Բաբերդի շրջանները։ Եվ ամենուր ոչնչացվել էին տեղացիների արտերն ու այգիները, որոնք պիտի խանգարեին մոնղոլների հոտերի ու նախիրների տեղաշարժերին։

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Հայոց աշխարհը ծածկվել էր գիակներով, կենդանի մնացածներն իրենց զգում էին դժոխքում և գիշերը նախընտրում էին ցերեկից, որովհետև գիշերը գոնե դադարում էին մոնղոլական վայրագությունները։

Հայ ազդեցիկ իշխանները տառապալից ճանապարհորդությամբ գնում-հասնում էին Կարակորում, մեծ խաքանին հայտնում իրենց հպատակությունը, որ նշանակում էր՝ հարկ են վճարելու և իրենց զորքով մասնակցելու են նրա ձեռնարկելիք ռազմերթին։ Ապա արտոնագիր-յուլիզներով գալիս էին հայրենիք և տեսնում՝ ավեր ու ավար է իրենց տիրույթներում, որոնք, մեծ խանի արտոնագրի համաձայն, իբր թե, զերծ պիտի մնային կուսակալի ու նրա գործակիցների կամայականություններից։

Ռաշիդ էդ-Դինը պատմում է, որ կարճ ժամանակում մոնղոլներից շատերն ընտելացան նստակեցության և սկսեցին զբաղվել նաև երկրագործությամբ։ Այս էլ մի նոր չարիք դարձավ տեղացիների համար, որովհետև նրանցից խլված հողերի վրա՝ պիտի տեր դառնային սկսնակ հողագործները։ Այստեղ արդեն մոնղոլ պաշտոնյան էր միահեծան տերը։ Հայերից խլված հողամասերը նա հանձնում էր իր քոչվոր ցեղակիցներին, հայ ազդեցիկ իշխանավորների կողքին նրանց տիրույթներում կարգում էր մոնղոլ վերակացուներ, որոնք աստիճանաբար ուռճանում էին նորակեցության պայմաններում։

1254 թ. մոնղոլներն աշխարհագիր (մարդահամար) կատարեցին Հայաստանում ու Վրաստանում, և հարկատու դարձան երկրամասի 10 տարեկանից բարձր բոլոր բնակիչները։ Մեծ խանի օրենքով հարկերից ազատ էր հոգևորականությունը, սակայն արքունի գործակալների կամայականություններից զերծ չէին մնում նաև այս դասի ներկայացուցիչները։

Աշխարհագրից հետո հպատակ երկրներում, իբր թե կարգ պահպանելու համար, ստեղծվել էին մոնղոլական հատուկ զո-

բամասեր, իսկ վարչական կարևորագույն կենտրոններում՝ կառավարական գրասենյակներ՝ «դիվաններ», որոնցում պահվում էին բոլոր հարկատուների ցուցակները և գանձվող հարկերի չափերը։ Աշխարհագիր այս ցուցակներով էին կատարվում նաև տեղացիների զորակոչերը, քանի որ, ինչպես վրաց ժամանակագիրն է հաղորդում, աշխարհագրի հիման վրա էր որոշվում այն «հեծյալների ու զինվորների քանակը, որոնք նոյիններ հետ պիտի գնային պատերազմի»։ Այս միջոցներով մոնղոլ տիրակալներն իրենց ձեռքն էին վերցրել հպատակ երկրների կառավարման սանձերը։ Մոնղոլ էլխաններ Հուլավուն (1256—1265 թթ.), Աբաղան (1265—1282), Արղունը (1284—1291) Անդրկովկասում ու Հայաստանում մշտապես պահվող զորքերի պարբերաբար իրականացրած պատժարշավներով ու բռնադատումներով խարխլեցին տեղական իշխանությունների վաղեմի միասնությունը։

Կ. Մարքսը շատ դիպուկ է բնութագրել նվաճած երկրի իշխանավորների նկատմամբ թաթար-մոնղոլ բռնակալների վարած քաղաքականությունը, որն ըստ էության բնութագրական է եղել պատմական բոլոր շրջանների բռնագրավիչների համար։ Մարքսը գրել է. «Թաթարների ավանդական քաղաքականությունն էր՝ ոուս մեկ իշխանին զսպել մյուսի օգնությամբ, նրանց մեջ ներարկել երկպառակություններ, հավասարակշռել նրանց ուժերը և թույլ չտալ հզորանալու նրանցից որևէ մեկին»։ Հայկական իշխանությունների հանդեպ վարած քաղաքականությամբ ևս թաթար-մոնղոլ տիրապետողները ջանում էին չլատակելով հավասարակշռել նրանց ուժերը, այդ իշխանությունների գլխավոր ներկայացուցիչներին դարձնել մրցակիցներ՝ մեռցնելով նրանց համերաշխության ամեն մի ջանք ու տրամադրություն։ Եվ եթե Հայաստանի ու Վրաստանի նվաճման պահին իրենց հպատակությունն ընդունած Ավագ Ջաքարյանին՝ Վրաց ու Հայոց զորքերի գլխավոր հրամանատարին, նրանք ընդունեցին իբրև երկրամասի գերագահ իշխանավորի, ապա հետագա տարիների ու տասնամյակների թաղաքականությունն արդեն վերացրեց տեղական ամեն տեսակ զահերեցություն և պիտի ցրեր կամ իրար հակադրեր երկրի վարչական ու քաղաքական ուժերը։

Ավատատիրական կարգն առհասարակ պարարտ հող է

կենտրոնախույս տրամադրության սերմերի համար։ Սակայն եթե նախընթաց իրականության այդօրինակ տրամադրությունները խեղդվում էին Վրաց թագավորության և նրանում ամենաազդեցիկ դեր խաղացած Զաքարյան իշխանապետների ուժով, ապա մոնղոլ տիրակալները, ընդհակառակը, խրախուսում էին հայ ու վրաց ավատատերերի ներքին անջատական ձգտումները։ Այս նպատակը դյուրությամբ իրականացնելու համար նրանք նույնիսկ ի չիք դարձրին նախկինում օրինականացված դինաստիական մի շարք պաշտոններ ու արտոնություններ՝ շոյելով միայն իրենց հավատարմորեն ծառայող իշխանավորներին։ Այս պատճառով էր, որ ձեռքից ձեռք անցան Վրաց թագավորության ամիրսպասալարությունն ու աթաբեկությունը, Հյուսիս-արևելյան Հայաստանի իշխանական տների գահերեցությունն ու սպարապետությունը։ Եվ համահարակի պես տարածվեց կաշառքը՝ ամենայն օրինականության ու բարոյական մթնոլորտի ավերիչը։

Եվ այս պայմաններում անգամ, անսանձ բռնության ու մարդկային արժանավորությունների անկման պայմաններում, կային ժողովրդի ազատությամբ մտահոգված մարդիկ, իսկ ժողովուրդը կառչած էր հայրենի պետականության մնացորդներին։

Մոնղոլները հավանաբար դժգոհ էին վրաց-հայկական դաշնակցության ամիրսպասալար Շահանշահ Զաքարյանից. կենդանության օրոք նրան պաշտոնանկ անելով՝ ամիրսպասալարությունը հանձնեցին որդուն՝ Զաքարեին։ Կրտսեր Զաքարեն, որի վարչական ու մարդկային արժանիքների մասին ժամանակակիցները խոսում են հիացմունքով, շարդարացրեց բռնակալների հույսը, որովհետև մանկուց թշնամություն ուներ եկվոր տիրակալների դեմ։

Եվրոպացի ճանապարհորդ Ռուբրուքն ունի մի այսպիսի վկայություն. «Ես հանդիպեցի մի անգամ Շահանշահի հետ, և նա շատ մեծ քաղաքավարություն ցույց տվեց իմ հանդեպ, ինչպես նաև կինը և իր զավակը՝ Զաքարիա անունով մի շատ գեղեցիկ ու իմաստուն երիտասարդ, որը հարցրեց ինձ՝ «Եթե ձեզ մոտ գամ, դուք կպահե՞ք ինձ», որովհետև նա այնքան ծանր էր ապրում թաթարների տիրապետությունը, որ, ճիշտ է, ամենբան առատորեն ունի, սակայն նախընտրում է թափառել օտար երկրներում, քան տանել նրանց տիրապետությունը»։

Վրաց և Հայոց ամիրսպասալարությունը ստանձնած «գեղեցիկ ու իմաստուն երիտասարդ» Զաքարեն չհանդուրժեց թաթար-մոնղոլների անտանելի տիրապետությունը։ Վրաց ժամանակագիրը տեղեկացնում է, թե Ուլո խանի դեմ ապստամբեց Շանշեի որդի Զաքարե ամիրսպասալարը, որ ամենայն առաքինությամբ օժտված ու նշանավոր մարդ էր, և վախով Նարին Դավթի մոտ՝ Քութայիս։

Նարին Դավթի ու Զաքարե Զաքարյանի ապստամբությունը հակամոնղոլական առաջին ելույթը չէր Անդրկովկասում։ Աղբյուրներից հայտնի է, որ առաջինը Հյուսիս-արևելյան Հայաստանն էր գլուխ բարձրացրել Դավիթ Սարեցի գեղջուկի գլխավորությամբ։ 1250—51 թթ. էին, Դավիթը, ըստ պատմիչի վկայության, որոշել էր վերափոխել աշխարհը և վերականգնել Հայոց թագավորությունը։

Դավիթ Սարեցու ընդվզումի դեմ ելան հայ հոգևորականներն ու աշխարհականները, որովհետև չէին հավատում նրա ուժին և մտածում էին, որ դրանով չարն ավելի պիտի գրգռվի։

Մեկ տասնամյակ էլ չէր անցել, որ պայթեց համաանդրկովկասյան պայքարը՝ Վրաց Դավիթ թագավորի, Շահանշահի որդի Զաքարեի, Խաչենի գահերեց իշխան Հասան-Ջալալի և հայ-վրացական զինակցության ուրիշ ներկայացուցիչների գլխավորությամբ։ Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց։ Մոնղոլ խաքանի կուսակալ Հուլավուն մահապատժի ենթարկեց Զաքարեին։ Իսկ Հասան-Ջալալին կապոտած տարան Ղազվին և այնտեղ հոշոտեցին՝ հոդակոտոր անելով։

Այս դժնի հաշվեհարդարը տեղի ունեցավ 1261 թ.։

1265 թ. Հուլավու էլխանին փոխարինեց Աբաղան, որը քրիստոնեություն էր ընդունել, և քրիստոնյա հպատակները հույս ունեին, թե կառաջնորդվի իր նոր հավատի պատվիրաններով։ Սակայն նոր բռնակալը ոչնչով չէր տարբերվում նախորդից, և, ինչպես Ռաշիդ էդ-Դինն է վկայում, երկու տարի հետո նրա դեմ ապստամբեցին Արևելյան Հայաստանի ու Աղվանքի բնակիչները։ Ըստ երևույթին, այս անգամ ժողովրդական ցասումը մեծ չափեր էր ընդունել։ Այդ պատճառով էլ

Աբաղան մեծաթիվ զորք հանեց և անձամբ գլխավորեց ժողովրդական ապստամբության ճնշումը։

12—13-րդ դարերի հայկական կյանքում, հատկապես հայ-վրացական քաղաքական փոխհարաբերությունների ասպարեզում նշանակալից դերով հանդես եկած Արծրունյաց տոհմի ներկայացուցիչները մոնղոլական տիրապետության շրջանում ևս գտնվում էին իրենց բարձրության վրա։ Գոնցա թագուհու (Ավագ Զաքարյանի նախկին կնոջ) օժանդակությամբ Սադուն Գ Արծրունին 13-րդ դարի երկրորդ կեսին դարձել էր Վրաց թագավորության աթաբեկն ու սպարապետը և ջանում էր շրջահայաց քաղաքականությամբ մեղմել մոնղոլ տիրակալների դաժանությունը։ Այդ պաշտոններում Սադունը մնաց մինչև դարի 80-ական թվականների սկիզբը (վախճանվել է 1281—1283 թթ. միջում)։ Նրան հաջորդեց իր որդի Խութլու-Բուղան, որի գործունեությունն անընդմեջ շարունակվել է շուրջ մեկ տասնամյակ (այդ հանգամանքը հաստատող վիմական արձանագրություններ կան 1285, 1287 և հետագա թվականներից, ընդհուպ մինչև 1293-ը)՝ պատկվելով մոնղոլական բռնատիրության դեմ բորբոքված մի ապստամբության գլխավորողի փառքով, որի համար էլ նա գլխատվեց։ Ապստամբությունն այս անգամ ևս ընդգրկել էր հայոց ու վրաց ուժերը, ուստի պատահական չէ, որ նրա համար իրենց կյանքով հատուցեցին միացյալ ապստամբության երկու նշանավոր դեմքերը՝ աթաբեկ-ամիրսպասալար Խութլու-Բուղան և Վրաց թագավոր Դեմետրեն։ Բանաստեղծ ժամանակակիցը՝ Խաչատուր Կեչառեցին, «Ողբ վասն աւերման տանս Արևելյան» բանաստեղծության մեջ դառը մորմոքով է հիշում ապստամբության երկու կազմակերպիչների վախճանը.

Խութլու-Բուղայն յարիան հալաւի,
Ջիւր աննման պատկերն ի հողի,
Ամրքայն լիշխեմ լիշել զՎրացի՝
Զատլասերիան ըզԴեմետրէի,
Սիրտն քաշած ու դեռ կենդանի։

* * *

Մեր պատմագիտության մեջ մինչև վերջին ժամանակները լայն տարածում է ունեցել այն թյուր պատկերացումը, թե մոնղոլական տիրապետության շրջանում ոչնչացել են հայկական իշխանական տները, և բովանդակ Հայաստան աշխարհը այլևս ո՛չ վարչաքաղաքական միավորներ է ունեցել, ո՛չ էլ առհասարակ քաղաքական կյանք։

Վերը շարադրվածից չի կարելի չեղրակացնել, որ այս պատկերացումը թյուրիմացություն է։ Հայաստանի բնիկ իշխանությունները, թեպետև կիսանկախ և նվազուն, մոնղոլների տիրապետության ներքո պահպանում էին իրենց գոյությունը։ Իսկ նրանցից մի քանիսը՝ Օրբելյանները Սյունիքում, Առանշահիկները Խաչենում, սրանց մի ճյուղը՝ Խաղբակյանները, Վայոց ձորում, պիտի գոյատևեին նաև հետագայում՝ հիմք դառնալով 16—18-րդ դարերի հայկական քաղաքական կյանքի նոր վերելքի համար։ Հայտնի է, օրինակ, որ հակամոնղոլական ապրստամբության համար մահապատժի ենթարկված Հասան-Ջալալին հաջորդել է նրա որդի Աթաբակը (1261—1287), Աթաբակին էլ՝ իր որդի Ջալալը (1287—1318)։ Սրանից հետո 14-րդ դ. կեսերին իշխանությունը վարել է Իվանե-Աթաբակը՝ Ջալալի որդին, իսկ 14-րդի վերջում ու 15-րդի սկզբին՝ Իվանե-Աթաբակի որդի Ջալալ Մեծը։ Բոլոր այս իշխաններն էլ իրենց տիրույթների համար ապահովել էին մի կիսանկախ վիճակ, երբ բռնակալներին հարկ տալով՝ պահպանում էին իրենց զինական ուժը և ըստ հնարավորին զարգացնում ազգային մշակույթը։

Վերին Խաչենի կամ Ծարի Առանշահիկ իշխանական տունը, որ 11—12-րդ դդ. կոչվում էր Վախտանգ-Սակաոյան, իսկ 13-րդի սկզբից, այստեղ հարս եկած Զաքարյան Դոփի անունից (Զաքարյան Սարգիս ամիրսպասալարի դուստրը և Զաքարեի ու Իվանեի քույրը) պիտի կոչվեր Դոփյան, դիմացավ թաթար-մոնղոլների բերած արհավիրքներին։ Դոփին հաջորդել էր Գրիգոր իշխանը՝ Հասանի ու Դոփի որդին, երբ հաստատվեց մոնղոլների տիրապետությունը։ Գրիգորը, Ավագ Զաքարյանի զորաբանակների հետ, իր զորքով մասնակցում էր մոնղոլների նոր արշավանքներին։ Պահպանվել է նրա մի ինքնագիր հիշատակարանը, որով հայտնում է, որ իր և հայ մյուս զորապետների ու զինվորների հոգսն ազգակիցներին գերությունից փրկելն ու հայկական մշակութային գանձերը բարբարոս

օտարներից ազատելն է եղել և ոչ թե մոնղոլական նվաճումների բազմապատկումը։

Գրիգորին հաջորդել է նրա որդի Հասան Բ-ը՝ Արագածոտն գավառի տեր Քուրդ Վաշուտյանի փեսան։ Այս Հասանն աղբյուրներում կոչված է «քաջ և հաղթող զորավար», «Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահոյ և այլ բազում գաւառաց տէր», որ նշանակում է, թե նրա իշխանությունը տարածված է եղել Թարթառի միջին հոսանքից (Ականա բերդաքաղաքի մոտից) մինչև Սևանի հարավարևելյան ափին գտնված Շողգահ-Շողվագ ավանը և ներառել է Սոդք գավառը՝ Սևանի ամբողջ արևելյան եզերքը։

Հասանը վախճանվել է 1287 թ.՝ իշխանության ժառանգ թողնելով որդի Գրիգորին, որի կինն էր Սյունյաց տեր Տարսայիճ Օրբելյանի դուստր Ասփան։ Գրիգորի ու Ասփայի առատաձեռն նվիրատվություններով բարեկարգվել, ճոխացել են Վերին Խաչենի վանքերն ու եկեղեցիները, ստեղծվել արժեքավոր մի շարք ձեռագիր մատյաններ։ Ձեռագրերում ու վիմագրերում նրանք հիշատակվում են մինչև 14-րդ դարի երկրորդ տասնամյակը, որից հետո տիրական են նրանց որդիների՝ Վահրամ Իշխանի, Սարգիս եպիսկոպոսի և Խորիշահ իշխանուհու անունները։

14-րդ դարի երկրորդ կեսին արդեն Վերին Խաչենի տիրակալն էր Հասան Գ-ը, որը հաջողությամբ շարունակում էր շինարար ու բարեպաշտ նախնիների գործը։ Նրա վեց արու զավակները 1387 թ. իրենց զորքով անհավասար ճակատամարտի ելան Լանկ-Թամուրի հրոսակների դեմ և ընդունեցին հերոս նահատակների պսակը։

Գրիգոր Խլաթեցին հայրենապաշտպան մարտերում զոհված վերինխաչենցիներին է նվիրել իր եղերերգության մի սրտառուչ քառյակը։ Իսկ հիշատակագիրը բարի խոսքով է նշում արիությունն ինչպես «մեծաշուք իշխանին Հասանայ», այնպես և «զաւականց իւրոց՝ քաջ և արի պարոնացն Գրիգորայ, Սարգսի, Շանշի, Ջհանշի, Աղբուղին, Շիրվանին, նաև թագաւորմ իշխանին Սադունին, զոր տէր տէրանց ու թագաւորն թագաւորաց ընդ սրբոյ թագաւորացն ու բարեպաշտ իշխանացն դասեսցէ և պսակեսցէ զնոսա...»։

Գոռիյաններից Հարավ-արևմուտք և Օրբելյանների հարևանությամբ մի ընդարձակ տարածքի վրա («ի Գառնո մինչև ի Բարգուշատ») շարունակվում էր Խաղբակյանների կամ Պռոշյանների իշխանությունը։ 13-րդ դ. արշալույսին ստեղծված լինելով Զաքարյանների հովանավորությամբ՝ այս իշխանությունը մոնղոլական տիրապետության առաջին շրջանում ևս շարունակեց մնալ Ավագ աթաբեկի կազմած հայ-վրացական զինակցության կազմում, չնայած ներքին կյանքում, հատկապես մշակութային գործունեության ոլորտներում, վարած ինքնահատուկ ու ինքնուրույն գործունեությանը։

Մինչմոնղոլական և մոնղոլական տիրապետության հաստատման՝ շուրջ կեսդարյա ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական ու մշակութային պատմության ուշագրավ երևույթներից էր Պռոշյան Վասակի կրտսեր որդի Պռոշ-Հասանի գործունեությունը (1224—1284 թթ.)։

Պռոշի ժառանգները շարունակեցին վճռական դեր խաղալ երկրի քաղաքական ու մշակութային կյանքում։ Նրա անմիջական հաջորդները՝ որդիներ Պապաքն ու Ամիր-Հասան Ա-ը (վախճ. 1292 թ.) ոչ միայն իրենց երկրամասի լիիրավ տերերն էին, այլև զգալի աջակցություն էին ցույց տալիս հարևան հայկական իշխանություններին՝ դիմակայելու օտար բռնակալներին։ 1290 թ. կանգնեցված մի խաչքարի վրա Ամիր-Հասանը քանդակված է արքայական շուքով և տիտղոսով, «ի թվ. ՉԼԹ (1290) կանգնեցաւ սուրբ խաչս իշխանութեան բարեպաշտ արքային Ամիր-Հասանայ...»։ Մի այլ արձանագրության մեջ նա կոչված է «ասպարապետ Հայոց»։

Ամիր-Հասան Ա-ին հաջորդեց Էշի որդին (1299—1317 թթ.), Էշիին՝ նրա որդի Ամիր-Հասան Բ-ը (վախճ. 1351 թ.), որի իշխանության ժամանակը նշանավորվեց իբրև Հայրենի տիրույթների մշակութային բուռն զարգացման շրջան։ Նա շարունակեց հովանավորել Գլաձորի հայանի համալսարանի գործունեությունը և բարեկարգեց իր տիրույթների վանական համալիրները։

Խաղբակյան-Պռոշյանների իշխանության մնացորդները գոյություն ունեին նաև հետագա դարերում, մինչև Իսրայել Օրիի ժամանակը։

Արագածոտն գավառի տեր Վաշուտյան տոհմի իշխանությունը հաստատվել էր Զաքարյանների օրոք և իր գոյությունը

պահպանեց նաև մոնղոլական շրջանում։ Այս տոհմի ներկայացուցիչները խնամությամբ կապված էին ինչպես Զաքարյանների, այնպես էլ Խաչենի տերերի ու Դսեղի Մամիկոնյանների հետ և, ենթարկվելով մոնղոլ տիրակալներին, հաճախ հասնում էին բարձր դիրքի։ Իշխանության հիմնադիր Վալեի որդի, Քրդի Թոռ Քուրդ Անբերդցին 14-րդ դ. առաջին կեսին, ջարդնակելով նախորդների քաղաքական ընթացքը, կարողանում էր իր տիրույթները պահել համեմատական ապահովության վիճակում։ Եվ ժամանակակից հիշատակագիրը փաստորեն ամբողջ տոհմի քաղաքական բնութագիրն է տվել, երբ այս Քրդի մասին գրել է, թե բռնակալների հետ վարած իմաստուն ու ճկուն քաղաքականությամբ «պահէր խնամօքն և ողորմութեամբն աստուծոյ զգաւառս և զվանքս ի խաղաղութեան և այլոց դաւառակցացն բազում կարեկից և օգնական լինէր»։

Կային Հյուսիսային և Հյուսիս-արևելյան Հայաստանի տեղական ուրիշ իշխանություններ ևս, որոնք ավել կամ պակաս հաջողությամբ տեր մնացին իրենց տիրույթներին, թաթար-մոնղոլ բռնակալների տիրապետության ներքո պահպանեցին հայոց քաղաքական կյանքի հոլովույթը։

Բարեբախտաբար նրանք իրենց ձեռքն էին վերցրել նաև եկեղեցական թեմերի ու մշակութային օջախների ղեկավարությունը և իրենց ազդեցիկ դիրքերն ու նյութական միջոցների մեծ մասն օգտագործում էին ազգային մշակութային կյանքն անխաթար պահելու, անհնար պայմաններում այն առաջ տանելու համար։

* * *

Եվ այսպես. Զաքարյան իշխանապետության և հայ-վրացական համագործակցության շնորհիվ ազատագրված Հյուսիսային և Հյուսիս-արևելյան Հայաստանում հայրենի քաղաքական կյանքի գլուխ անցած իշխանությունները մոնղոլական տիրապետության նախօրյակին բավականին արմատավորվել ու հզորացել էին և այդ առողջ հիմքի վրա էր, որ կարողացան պահպանել իրենց գոյությունը թաթար-մոնղոլական տիրապետության ավելի քան դարուկեսի ընթացքում։ Իսկ հետո նրանցից մի քանիսն առավել կենսունակ գտնվեցին և դիմացան

նաև հետագա դարերի փորձություններին։ Ցավոք, պատմական Հայաստանի հարավային ու արևմտյան նահանգներն իրենց հիմնական մասով դուրս էին մնացել Զաքարյանների ազատագրության ոլորտից, այդ պատճառով էլ նրանցում հաղիվ իրենց գոյությունը պահպանած բնիկ իշխանությունների համար մոնղոլական տիրապետության ծանր մղձավանջը կործանարար եղավ։

Մոնղոլները Հայաստանի արևմտյան և հարավային նահանգներից կազմել էին մեկ վիլայեթ՝ կոչված «Մեծ Հայք», որի կառավարիչը նստում էր Կարին (Էրզրում) քաղաքում և իր ազդեցության տակ էր պահում ոչ միայն հայկական մարզերն իրենց հին իշխանական տների մնացորդներով (Մամիկոնյանների ժառանգները Սասունում, Արծրունիների երկրորդական մի ճյուղ՝ Եռգենիկյանները, Վասպուրականում և այլն), այլև սելջուկյան բռնատիրության օրոք մի շարք հայկական գավառներում ստեղծված մահմեդական իշխանությունները։

Միջնադարյան Հայաստանի քաղաքական կյանքի հետաքրքիր երևույթներից էր Վասպուրական նահանգի Արտազ գավառի հայկական իշխանության գոյատևումը մոնղոլական տիրապետության օրերում։ Ըստ երևույթին հանդիսանալով նահանգի հին նախարարական տան վերընձյուղված մի շառավիղը՝ այս իշխանությունը կարողացավ ավելի քան մեկուկես հարյուրամյակ դիմանալ թաթար-մոնղոլների բերած արհավիրքներին։

Ճիշտ է, Արտազի տերերը կտրված էին ժամանակի հայկական մյուս իշխանություններից և, բնականաբար, չէին կարող նրանց հետ ընդհանուր ճակատ հարդարել ո՛չ եկվոր բռնակալների, ո՛չ էլ հարևան մահմեդական սասպատակիչների դեմ, սակայն ապավինած իրենց երկրամասի ամրություններին, հատկապես Մակու բերդավանի անմատույց դիրքին, նրանք բազմիցս հաջող դիմադրություն են ցույց ավել նույնիսկ այնպիսի զորության, ինչպիսին Լանկ-Թամուրի զորաբանակներն էին։ Գավառի հայ իշխանավորները, Հայաստանի այլ մարզերում այդ ժամանակ գոյատևած մյուս ավատատերերի պես, իրենց ձեռքն էին վերցրել նաև գավառի հոգևոր իշխանության ղեկավարությունը և ապահովեցին հոգևոր-մշակութային կյանքի վերելքը հայրենի տիրույթներում։ Սակայն, դժբախտաբար,

այս իշխանությունը չդիմացավ մոնղոլներից հետո եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի հասցրած հարվածներին, քանի որ նրա հոգևոր ու աշխարհիկ տերերի անհեռատես քաղաքականության պատճառով գավառի բնակչության մեծ մասը՝ նախ կաթոլիկության դառնալով՝ իրեն կտրել էր բնաշխարհի հայ միջավայրից, իսկ հետագայում էլ հեշտությամբ պետք է զանգվածաբար ընդուներ մահմեդականություն։

Ծամոնդոլական շրջանում հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությունը, հոգևոր ու մշակութային զարգացման ընթացքը, ինչպես նաև քաղաքական երբեմնի Հզորության փշրանքները պահպանելու համար անօրինակ ջանքեր էին թափում Արևելյան Հայաստանի մի շարք մարզերում (Երցախ, Սյունիք, Այրարատ և այլն) և Տարոնում ու Ջեյթունում։ Այդ մարզերի հայությունը, բնիկ իշխանությունների գլխավորությամբ, համառորեն դիմադրում էր արևելյան հեռուներից եկող թուրքական վաչկատուն ցեղերի վայրագություններին և մոթիրների առակ ամբեղած կրակի պես վառ էր պահում ազգային ազատագրության ու քաղաքական ինքնուրույն կյանքի սրբազան հուրը, որ պետք է վերարծարծվեր ու բոլբոքվեր ուշ միջնադարյան իրականության մեջ։

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց պատմությունը լի է երևույթների ամենատարբեր դրսևորումներով, վիճակների արտառոց լուծումներով, ճակատագրի ամենաաղետալի հարվածներով։ Բայց նույնիսկ այսպիսի պատմության հյուսվածքի մեջ Կիլիկյան Հայքը, նրա պետությունն ու ազգային կյանքը հանդես են գալիս որպես բացառիկորեն արտառոց երևույթներ, որոնք պիտի ապացուցեին, թե հայի մեղքո՞վ չէ, որ նրա պետությունն ու հանրային գոյությունը նախընթաց դարերում քանիցս ընկել են ու հառնել։ Եվ, իհարկե, ինչպե՞ս կարելի էր հավատալ, թե չնվազող մի ժողովուրդ իր բնաշխարհից այնքան հեռու, արևելքի ու արևմուտքի, հարավի ու հյուսիսի խաչմերուկում, անկուշտ բռնատիրությունների ճամփաբաժանի վրա պիտի կարողանար ստեղծել իր ազգային ծաղկուն կյանքը և քաղաքական մի այնպիսի կազմակերպություն, որի հետ ստիպված լինեն հաշվի նստել նույնիսկ այդ նվաճող, անկուշտ բռնատիրությունները։

Այն խաչմերուկ երկիրը, որի մասին խոսք է գնում, գտնվում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան եզերքին, Փոքրասիական թերակղզու հարավ-արևելյան մասում։ Հնուց ի վեր, նույնիսկ Ասորեստանի թագավոր Սալմանասար Գ-ի (մ. թ. ա. 860—825 թթ.) վիմագրում, կոչվել է Կիլիկիա և ընդգրկել է բնակլիմայական խայտաբղետ մի տարածություն, որտեղ եթե արևելյան մասը դաշտային արգավանդ, համարյա ձիթարևադարձային մարզն է, ապա արևմտյան տարածքը լեռնային մի խորդուբորդություն է ներկայացնում, որից էլ ենթադրվում է, թե «Կիլիկիան» հենց հունարեն «կիլիկան»-ն է, որ նշանակում է «ջարբարոս»։

Սակայն բնակլիմայական խայտաբղետությունից երկրի ոչ մի մասը չի տուժում, քանի որ, եթե դաշտային մասը գյուղական բազմաճյուղ տնտեսության զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում, ապա լեռնաստանը հարուստ է բազմատեսակ հանքերով, բուժիչ աղբյուրներով, ալպյան արոտավայրերով։ Եվ պատահական չէ, որ պատմության ամբողջ ընթացքում միշտ էլ աշխարհի նվաճողների ուշադրության կենտրոնում է գտնվել այս փոքրիկ, ընդամենը 40 հազար քառակուսի կմ տարածություն զբաղեցնող երկիրը։ Հինարևելյան քաղաքակրթության օջախներից մեկը լինելով՝ սկզբնապես պատկանում էր Փոքրասիական թերակղզում մեկը մյուսին հաջորդող պետություններին, ապա անցավ Ալեքսանդր Մակեդոնացու ստեղծած աշխարհակալությանը, որից էլ ժառանգեցին Հռոմը, Բյուզանդական կայսրությունը։ 7—9-րդ դարերում արաբների ձեռքում էր, 10-րդ դարի կեսից՝ վերստին Բյուզանդիայի... Մինչև որ հաջորդ հարյուրամյակում այստեղ հայերն աստիճանաբար դչության տերը դարձան և իրենց ձեռքը վերցրին երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի տնօրինությունը։

Կիլիկիայի բնակչության կազմում, ասորիների, հրեաների ու հույների հետ միասին, հայերը միշտ էլ զգալի թիվ են կազմել՝ սկսած Տիգրան Մեծի ժամանակներից։ Մ. թ. 4—5-րդ դարերի աղբյուրներում որոշակի տվյալներ կան այստեղի հայկական աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների մասին։ Արաբա-բյուզանդական արշավանքների պատճառով Հայաստանից դուրս մղված հայ զանգվածների մի զգալի մասն էլ 8—10-րդ դարերում ապաստանեց այդ երկրում։ 11-րդ դարի սկզբին, սելջուկ թուրքերի դեմ ռազմական պատվար ստեղծելու նպատակով, Բյուզանդիայի կայսր Բարսեղ Բ-ը Վասպուրականից շուրջ 15 հազար ընտանիք գաղթեցրեց Կիլիկիա։ Հայոց մյուս նահանգներում անպաշտպան մնացած բազմաթիվ իշխանական տներ էլ, իրենց հպատակ բնակչությամբ ու ռազմական ուժերով, վասպուրականցիների հետքերով փոխադրվեցին այնտեղ, և դարի երկրորդ կեսում արդեն Կիլիկիայի դաշտային ու լեռնային մասերի մեծ իշխանությունների գլուխ էին կանգնած հայերը։ Դարի կեսից սկսած դաշտային Կիլիկիայի կառավարիչն էր Արլզարիբ Արծրունին։ Քիչ անց, 1073-ին, Լամբրոն

նշանավոր բերդին ու շրջականերին տիրացավ Գանձակից գաղթած Առանշահիկ Օշինը, որը մինչ այդ փեսայացել էր Արլզարիբին և թիկունքում ուներ նրա հզորությունը։ Պապեռոն բերդին ու շրջականերին տիրացել էր Նաթանայելյան տոհմը, լեռնային Կիլիկիային՝ իշխան հաչատուրը։ Իսկ Փիլարտոս Վարաժնունին երկրի արևելյան շրջաններից և հարակից գավառներից (ընդհուպ մինչև Հայոց Մոփք նահանգը) կազմած իր իշխանությամբ դարձել էր լուրջ քաղաքական ուժ և իր առաջ նպատակ էր դրել վերականգնելու հայոց թագավորությունը։

Ըստ երևույթին, հայերի քաղաքական այս վերելքի մեջ իրենց համար լուրջ վտանգ էին տեսնում արևմտյան հարևանները։ Եվ նրանց սադրանքներով դարի վերջին ու 12-րդի առաջին տասնամյակներում խաչակիր ասպետները կործանեցին դաշտային Կիլիկիայում ու նրանից արևելք ստեղծված հայկական մանր իշխանությունները։

Այն ժամանակ հայերը կծկվեցին երկրի լեռնային մասում, և դա զսպանակի կծկվելն էր։ Համախմբվելով Ռուբեն իշխանի շուրջ՝ լեռնաստանի հայությունը և դաշտային մասի կործանված հայկական իշխանությունների մնացորդները արիաբար դիմակայեցին թշնամիներին, ընդվզեցին բյուզանդական տիրապետության դեմ և 1080 թ. ստեղծեցին անկախ ու լայնածավալ մի իշխանություն, որը հիմնադրի անունով պատմության մեջ պիտի մտներ որպես Ռուբինյան պետություն։

Ո՞վ էր այս Ռուբեն իշխանը, որը, Բարձրբերդ, Կոռոմոզոլ, Կոսիտառա և այլ ամրոցների տեր դառնալով, տոհմակից հետնորդներին ժառանգություն թողեց հզոր մի իշխանապետություն և այն պաշտպանելու-զարգացնելու կամք ու համառություն։

Աղբյուրների տվյալներով՝ նա Անիի Բագրատունյաց վերջին թագակիր Գագիկ Բ-ի թիկնապահն է եղել, ազգակիցը Բագրատունյաց ու Արծրունյաց տոհմերի։ Ըստ երևույթին, Ռուբենը, որդի Կոստանդնի հետ միասին, Գագիկի թիկնապահ զորքի մեջ էր մինչև վերջինիս սպանությունը (1079 թ.) գավաղիր Մանդալե եղբայրների կողմից, բյուզանդական խարդավանալից երկրում։ Դրանից հետո է, որ անցել է Տավրոսյան լեռները, համախմբել այդ կողմերում ցրված հայերին և հաստակվել,

մահմեդականներից խլել բազմաթիվ բերդեր ու գավառներ և իրեն հռչակել Լեռնային Կիլիկիայի իշխանապետ։

1095-ին վախճանված Ռուբենին փոխարինեց որդի Կոստանդինը, որն առավել ծավալեց իշխանության սահմանները՝ նրանց մեջ առնելով հայաբնակ նոր գավառներ ու բերդեր։ Ապա իշխանանիստ դարձրեց Վահկա հզոր բերդը՝ այնտեղից և առհասարակ դաշտային Կիլիկիայի շատ գավառներից դուրս քշելով բյուզանդական կայազորները։

Կոստանդինին հաջորդեց Թորոս Ա-ը (1100—1129), որի գահակալության տարիները ևս նշանավորվեցին ազատագրական խիզախ մարտերով և հայկական նորաստեղծ իշխանության ամրապնդման համարձակ միջոցառումներով։ Թորոսը 1104-ին բյուզանդացիներից ազատագրեց Սիս ու Անարզաբա քաղաքները։ Երեք տարի անց հայոց զորքերը Բերդուսի մոտ ջարդեցին սելջուկ Թուրք բռնագրավիչներին։

Հայտնի են նաև Թորոսի շինարարական ու մշակութային ձեռնարկումները։ Այդ նա էր, որ Սիսը դարձրեց երկրի վարչական ու մշակութային կարևորագույն կենտրոն, կառուցեց Գրազարձի ու Մաշկևորի վանքերը, որոնք պետք է հռչակվեին իրենց լուսավորության ու գրչության խոշոր օջախներ։

Թորոս Ա-ին հաջորդեց եղբայրը՝ Լևոն Ա-ը (1129—1137), որը կարճ ժամանակում իր իշխանությանը միացրեց Տարսոն, Մամեստիա, Անչոնա քաղաքները, տեր դարձավ ծովեզրյա հայաշատ գավառներին և հաջողությամբ վանեց սելջուկների ու խաչակիրների հարձակումները։ Սակայն 1137-ին բյուզանդական զորաբանակները Կիլիկիա խուժեցին, գրավեցին կենտրոնական բերդերը և երկրի վրա հաստատեցին կայսեր տիրապետությունը։

Կարճ ժամանակ պահանջվեց, որպեսզի Լևոնի որդիները՝ Թորոս, Ստեփանե և Մլեհ, իրար թերեն հայկական ուժերը, հալածեն երկրին տիրացած սելջուկ և բյուզանդացի բռնագրավիչներին։

1145-ին արդեն հայկական իշխանությունը վերականգնված էր։

Թորոս Ա-ի 24 տարվա գործունեությունը (1145—1169 թթ.) լցնդմիջվող մի պայքար էր բյուզանդական նվաճող զորքերի, Անտիոքի ղեսության, Իկոնիայի սելջուկ սուլթանության

և հարևան մյուս ասպատակիչների դեմ։ Այդ պայքարի մեջ համարյա միշտ հաղթանակը հայկական իշխանության կողմն էր։ Հայոց զորքը գնալով զորանում էր ու ամրանում։ Դրան էլ եթե գումարվի Թորոսի ու եղբայրների դիվանագիտական քաղաքականությունը, միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչու դարի 60-ական թվականներին արդեն նույն բռնագրավիչները փնտրում էին Հայոց իշխանության բարեկամությունը։ Իկոնիան ու Անտիոքը համերաշխության դաշինքով կապվեցին նրա հետ։ Բյուզանդական կայսրը ոչ միայն բարեկամության երդում տվեց, այլև Թորոսին պատվեց ժամանակի ամենաբարձր տիտղոսով՝ «պան սեբաստոս»։

Թորոսի մահից հետո իշխանության գահը պիտի ժառանգեր դեռատի որդի Ռուբենը (Բ), որի խնամակալ էր նշանակված Թովմաս Պայլը։ Սակայն ասպարեզ եկավ Թորոսի եղբայր Մլեհը, որը, եղբոր քաղաքական ընթացքից դժգոհ, վերջին տարիներին գտնվում էր Ասորիքում, Նուրադ-դին սուլթանի մոտ։ Հենց սուլթանի զորքերի հետ էլ նա մտավ Կիլիկիա, բռնությամբ տիրացավ իշխանությանը։ Գահնամատակ Ռուբենին փախցրին Հռոմկլա՝ կաթողիկոսի մոտ, ուր և ուղարկեցին նրան՝ երևի ոչ առանց հորեղբոր միջամտության։

Եվ այսպես. հայոց նոր իշխանապետության դեռ լրիվ չկազմավորված, չկոփված մարմինը վարակվեց գահակալական գրգռատության տիֆով։

Իշխանության գալուց անցնելով՝ Մլեհը լուրջ փոփոխություններ մտցրեց ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտներում։ Նրա համար այլևս հարց չէր հարևան պետությունների նկատմամբ բռնելիք դիրքը։ Համոզված էր, որ միայն բարեկամությամբ կարելի է զսպել հարևան մահմեդական տերությունների ախորժակը։ Իսկ նրանց զսպելով բարեկամ դարձնելուց հետո դժվար չպետք է լիներ նաև դիմադրավել Բյուզանդիայի և խաչակիրների ոտնձգություններին։

Մլեհի այս քաղաքականությունն արդարացրեց իրեն։ Շուտով նրա և դաշնակից սուլթանության զորքերի սուր նահանջեցին ծովափնյա շրջանների տիրացած բյուզանդացիներն ու խաչակիրները։ Հայոց իշխանությունը տիրացավ ոչ միայն ծովամերձ գավառներին՝ իրենց բերդերով ու նավահանգիստներով, այլև Կիլիկիայի ու Անտիոքի միջև ընկած բարեբեր

հողերին, որոնց վրա մինչ այդ խաչակիր տաճարականներն էին նստած։

Մլեհն իր հրամանի ներքո ուներ ավելի քան 30-հազարանոց մշտական ու քաջավարժ բանակ, տնտեսական հզորության ճանապարհը բռնած մի երկիր, որի համար այլևս վտանգավոր չէին թշնամիները։

Ներքին քաղաքականության մարզում կատարված փոփոխությունները ևս նշանակալից էին։ Դրսի վտանգներն առժամանակ բթացնելով՝ Մլեհն իր երկիրը վերջնականապես մաքրեց բյուզանդական կայսրության, խաչակիր ասպետների և էթնոլիկ հողևորականության մնացորդներից։ Իսկ հայ ավատատերերի շրջանում բնաջնջեց լատինամոլությունը, ատաժեց անջատական ձգտումների կրողներին։ Եվ 1173-ին պետության մայրաքաղաքը Վահկա բերդից փոխադրելով Սիս՝ այն դարձրեց տնտեսական, քաղաքական ու մշակութային այնքան նշանավոր կենտրոն, որ հետագա ամբողջ ժամանակաշրջանում ներանով պիտի կոչվեր նաև ամբողջ երկիրը՝ Սիսվան։

Մլեհը դավով էր տիրացել իշխանությանը, դավադրության էլ զոհ գնաց։ Աշխարհիկ ու հոգևոր իշխանավորների դժգոհ տարրերը 1175-ին Սսում սպանեցին նրան, և իշխանությունն անցավ Մլեհի եղբայր Ստեփանեի ավագ որդի Ռուբենին։

Ռուբեն Գ-ին (1175—1187) գահակցում էր իր եղբայր Լևոնը, որը քաջահմուտ զորավար էր և եղբոր հավատարիմ օգնականը։

Արտաքին քաղաքականության բնագավառում նրանք այնքան էլ չհեռացան Մլեհի ընթացքից։ Իրենց յուրաքանչյուր նոր քայլը ծրագրում էին՝ նկատի առնելով մահմեդական տերությունների ու Բյուզանդիայի հակամարտությունները։ Այդ էր պատճառը, որ կարճ ժամանակամիջոցում երկրի արևմտյան շրջաններն իսպառ ազատագրվեցին կայսրության ազդեցությունից, իսկ Դաշտային Կիլիկիայի առանձին կետերի բյուզանդական ներկայացուցիչներին դուրս վռնդեցին և կայսեր կուսակալ Կիս Սահակին կալանքի տակ առած՝ հանձնեցին Անտիոքի դքսին։

Ազատ ու ինքնուրույն էր ամբողջ Կիլիկիան։ Հայոց իշխանությունը տարածված էր նրա լեռնային ու դաշտային ամբողջության վրա՝ Սելևկիայից մինչև Սև լեռները։ Եվ այս իշ-

խանության հետ արդեն հաշվի էին նստում հարևան պետությունները։ Մնում էր միասնական ու անարոհելի դարձնել ներսից, և եղբայր իշխանապետերն իրենց ջանքերն ուղղեցին հայ իշխանների անջատական ու ցլատիլ տրամադրությունները վերացնելուն, երկրի միասնության ստեղծմանը։

Այստեղ էր, որ նրանց ջանքերի դեմ ելավ, մոլեգնեց ազգակից իշխանների հավակնոտ անհամերաշխությունը։

Ըստ երևույթին Ռուբինյանների միահեծան իշխանությունը Լամբրոնի տեր Հեթումյանների սրտով չէր, և այդ չկամությունը գաղտնիք չէր առաջինների համար։ Ռուբեն Գ-ի զորքերը 1182 թ. պաշարեցին Լամբրոն բերդը։ Հեթումյանները, երկրի գերագահ տիրոջը հպատակություն հայտնելու փոխարեն, համառորեն դիմադրեցին և զինական օգնություն խնդրեցին Անտիոքի դուքս Բոհեմունդից։ Իսկ սա, Հեթումյաններին օգնելուց առաջ, Ռուբենին հրավիրեց Անտիոք, ձերբակալեց նրան և նոր միայն իր զորքերը մտցրեց Դաշտային Կիլիկիա։

Գահակից իշխան Լևոնը, հայոց զորքի գլուխն անցած, քաջաբար կռվեց Անտիոքի բանակների դեմ, նրանց դուրս քշեց հայրենիքի սահմաններից և եղբորն ազատեց գերությունից։ Դրանից հետո էր, որ Ռուբենը հրաժարվեց իշխանությունից, և 1187-ից Լևոնը դարձավ երկրի միահեծան իշխանը։

Մահմեդական և քրիստոնյա թշնամիներով շրջապատված՝ օրըստօրև զսրգանում ու հզորանում էր հայկական մի պետություն, որի վերելքը պիտի կանխեին այդ թշնամիները։ Որոշված էին հատկապես սելջուկ սուլթանությունն ու ամիրայությունները։ Հենց 1187-ին, կարծես Լևոնի միանձնյա իշխանապետության ուժն ստուգելու համար, Իկոնիայի թուրք ասպատակիչների մի մեծ բանակ, Ռոստոմ զորավարի գլխավորությամբ, խուժեց Կիլիկիա և հասավ Սիս մայրաքաղաքի մատույցները։ Սակ մոտ, Ռավին դաշտում, հայոց զորքը ճակատամարտի ելավ, սաստիկ ջարդ տվեց և, Ռոստոմին սպանելով, ասպատակիչներին հալածեց երկրի սահմաններից։

Նույն տարում սելջուկները ձեռնարկեցին մի նոր, առավել կազմակերպված արշավանք ևս. հյուսիսից Իկոնիայի սուլթանի զորքը հարձակվեց, հյուսիս-արևելքից՝ Մարաշի թուրքմենները, հարավ-արևելքից՝ Հալեպի ու Դամասկոսի սուլթանի բանակը։ Լևոնն անկասկած սպասում էր մի այդպիսի գրա-

չակրաց» արշավանք. կռիվ ու պատերազմ իր զորքերը հմուտ ռազմավարությամբ տարավ թշնամիների դեմ, հաղթեց նրանց, գերի վերցրեց բազմաթիվ զորագնդեր, և ռազմադաշտից հողոտելով մի կերպ փրկված սուլթանն ստիպված եղավ ընդունել Լևոնի գերագահությունը։

Այս ճակատամարտից հաղթանակով ելած հայոց զորքն արդեն ի վիճակի էր երկիրը պաշտպանել թշնամական հարձակումներից։ Սակայն հարկ էր ամրապնդել սահմանները և կատարել ամեն մի ներխուժում։ Դրա համար էլ իշխանապետ Լևոնը 1188-ին Իկոնիայից գրավեց Պռականա և Լուլուա բերդերը, իսկ Հարավ-արևելքում՝ Պաղրասն ու Դարպսակը և ամրացնելով դրանք՝ դարձրեց սահմանային անառիկ ամրություններ, որոնցում տեղակայված էին պահակազոր գնդերը։

1189 թ. սկսվեց խաչակիրների երրորդ արշավանքը, և Լևոնն շտապեց օգտվել այդ հանգամանքից։ Նրա բանագնացները կարողացան նվաճել Իկոնիայի զորքերին ջախջախած խաչակիրների բարյացակամությունը։ Լևոնը պատրաստվում էր խաչակիրներին ռազմապաշար ու ձիեր տրամադրել, ինչպես նաև դիպլոմատական օգնություն հասցնել դեպի Երուսաղեմ կատարելիք արշավանքի ընթացքում։

Խաչակիրներն էլ կարիք ունեին տեղական դաշնակցի և, հայոց իշխանապետության հովանավորությունն ստանձնելով, խոստացան Լևոն Բ-ին ճանաչել իբրև Հայոց թագավոր։

Սակայն խաչակիրների առաջխաղացման դեմ կանգնած էին մահմեդական ռազմաշունչ բանակները։ Հատկապես Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դինի հսկայական ուժերը։ Ճակատամարտերը տևեցին մի քանի տարի։ Այդ ընթացքում Կիլիկիան կրկին մնաց հարևանների հարձակումներից և հնարավորություն ունեցավ դրսևորելու իր գործերը։ Սահմաններն առավել ընդարձակեց՝ նրանց մեջ առնելով կարևորագույն պաշտպանական կետերն ու ամրոցները։ Անտիոքի դքսությունը մեկընդմիշտ վնասազերծելու համար Լևոնը մեծ զորքով շարժվեց նրա վրա, դքսին ձերբակալելով՝ ստիպեց ընդունել իր ավատությունը և վերադարձնել Ռուբեն Գ-ից զավթած գավառները, մի շարք բերդեր և Ասորոց դրունք կոչվող կարևոր հանգույցը։ Սպա կնքվեց բարեկամության դաշինք, ի լրումն որի դքսի որդի

Ռայմոնդը պիտի ամուսնանար Լևոնի եղբոր դուստր Ալիսի հետ, իբրև պատանդ պիտի դաստիարակվեր Լևոնի մոտ, իսկ դքսի մահից հետո Անտիոքի գահին պիտի նստեր Ռայմոնդի ու Ալիսի ժառանգը։

Այս միջոցառումները և հատկապես երկրի ներքին կյանքի հզորացումը նշանակալից կերպով բարձրացրին Հայկական Կիլիկիայի իշխանապետության վարկը հարևան երկրների և հատկապես տերությունների աչքում։

1196 թ. գերմանական զորքերը վերստին հայտնվեցին Փոքր Ասիայում։ Այդ զորքի առաջնորդ Կոնրադ Միրանավոր արքեպիսկոպոսն իր արքայից հանձնարարություն ուներ Երուսաղեմն ազատագրելու ճանապարհին թագավոր օծել Լևոն Բ-ին։ Տիզեկանալով այդ մասին՝ Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս Գ Անգելոսն էլ իր հերթին Լևոնին ուղարկեց առյուծանկար դրոշ, արքայական զգեստներ և ազամանդազարդ ոսկե թագ։ Թագադրությունը տեղի ունեցավ 1189 թ. հունվարի 6-ին, Սուրբ Մեծնդյան օրը, Տարսոն քաղաքի մայր տաճարում, մեծահանդես արարողությամբ, որին ներկա էին Բյուզանդիայի ու Գերմանիայի կայսրությունների, Բաղդադի խալիֆայության, հարևան մեծ ու փոքր երկրների պատվիրակությունները, Տարսոնի հույն պատրիարքը, Հայոց և Ասորոց կաթողիկոսները, հայոց աշխարհիկ ու հոգևոր բազմաթիվ առաջնորդներ՝ ինչպես Կիլիկիայի, այնպես էլ Մեծ Հայքի տարբեր նահանգներից։ Հանձնարարական այս «աշխարհաժողովը» Լևոնին օծեց «թագաւոր ամենայն Հայոց և նահանգին Կիլիկեցոց, և Խաչենոյ»։

Այս «ամենայն Հայոցը» կարող է չափազանցված թվալ առաջին հայացքից։ Միայն առաջի՛ն հայացքից, քանի որ իրականում Լևոնի թագավորության հիմնադրությունը ցնծությամբ ընդունեցին բովանդակ Հայաստանում։ Շուրջ դարուկես էր անցել Բագրատունյաց գահի կործանման դառնաղետ ժամանակից։ Հայերն ամենուրեք մի անհագուրդ թագավորածարավ էին և հեռավոր Կիլիկիայում Հայոց թագի շողարձակումն ընդունեցին որպես հայոց ազգային բախտի երջանիկ ժպիտը։ Լևոն Բ-ին իրենց գլխի վրա թագավոր էին ճանաչում նույնիսկ Զաքարյան մեծիրավ զորագնդերը, որոնք ևս ժամանակին հավակնում էին վերականգնել Հայոց դահը և ներկայանում էին որպես Բագրատունյաց տոհմի ժառանգներ ու գահի օրի-

նական ժառանգորդներ։ Հայտնի է այսպիսի մի դեպք. Զաքարե ամիրսպասալարը ցանկանում էր պատերազմի գնալիս իր հետ ունենալ «քահանայս և վրան պատարագի»։ Այս պահանջով նա դիմեց իր ազատագրած Հայաստանի հոգևոր առաջնորդների ժողովին։ Եվ նրա պահանջի դեմ կանգնեց այն ժամանակի մեր մեծ մտածողն ու իրավագետը՝ Մխիթար Գոշը։ «Մենք ո՞չ կարեմք առնել զայդ,— ասաց Գոշը,— առանց հրամանի կաթողիկոսին Հայոց և թագավորին Լեոնի»։

Ահա այսպես. միջազգային կարգուկանոնով թագավոր օծված Լեոն Բ Ռուբինյանը նստում էր Կիլիկիայում, սակայն նրան իրենց համար գահակալ արքա էին համարում նաև Մեծ Հայքի բոլոր նահանգներում և երազում էին այն օրը, երբ թագավորն իրական ուժ պիտի ունենար տիրություն անելու նաև իրենց վրա։ Իսկ մինչ այդ Լեոն Բ գահակալը պիտք է իր թագավորության հզորությունն ու հեղինակությունը հաստատեր բուն Կիլիկիայում և նրա հեռու-մոտիկ հարևանների աչքում։ Լեոնի թագադրությանը մասնակցած Բյուզանդիան ու Գերմանիան (վերջինիս հետ էլ՝ խաչակիրները), գոնե ձևի համար, առժամանակ բարեկամներ պիտի մնային։ Այդ պատճառով էլ նորընծա թագավորը խնամիական կապերով բարեկամություն հաստատեց նաև մյուս բախվող երկրների՝ Նիկիայի կայսրության, Երուսաղեմի, Կիպրոսի ու Հունգարիայի թագավորությունների հետ։ Նրան լրջորեն անհանգստացնում էր Անտիոքի խնդիրը և, այստեղ էլ ծանր ճակատամարտերում փայլուն հաղթանակի հասնելով, Ռայմոնդի ու Ալիսի որդի Ռուբենին գահի վրա հաստատեց և Ալիսին նշանակեց խնամակալուհի, որ նշանակում էր՝ Անտիոքի դքսությունը կառավարվելու էր հայադարմ մարդկանցով։ Սակայն քրիստոնյա ու մահմեդական տերությունների, Եվրոպայի ու Ասիայի շահերի խաչաձևման կետում Հայոց նոր պետությանը վիճակված չէր վայելել նույնիսկ ամենակարճատև մի խաղաղություն։ Իկոնիայի սելջուկները մի կողմից, Անտիոքի ֆրանկները՝ մյուս, դավադիր ուժերով համարյա չընդմիջվող պատերազմների մեջ պահեցին Կիլիկիան։ Նույնիսկ խնամարկու Ռուբեն-Ռայմոնդը՝ որ քաղաքական ապիկարության պատճառով գահազուրկ էր արվել, պետք է մեծ գլխացավանք պատճառեր Հայոց գահի վրա ունեցած հավակնություններով։

Եվ այս պայմաններում երկրի անկախության համար մղած մարտերում Լեոնը բավականին ընդարձակեց իր տերության սահմանները՝ նրանց մեջ առնելով Պամփիլիա, Իսավրիա, Լիկաոնիա, Կաղառնիա և Գերմանիկե մարզերը։ Այս ժամանակ արդեն Հայոց թագավորությունն ուներ մի ընդարձակ տարածք՝ Անտիոքից մինչև Սելևկիա և Միջերկրականի եզերքից մինչև Տավրոս ու Անտիտավրոս։

Երկրի արտաքին լարված քաղաքականությունը և պատերազմական մեծ ու փոքր բախումները հմտորեն հաղթահարելով՝ Լեոնը կարճ ժամանակում կանոնավոր հունի մեջ դրեց իր պետության ներքին կյանքը։ Հայոց հին թագավորական տների օրինակով ստեղծվեցին արքունի գործակալություններ, կարգվեցին նահանգների ու գավառների կառավարիչներ։ Վերակառուցվեցին և առավել ամրացան հին ու նոր բերդերը, և նրանցում տեղակայվեցին կանոնավոր զորախմբեր, որոնք համալրվում էին անընդհատ։ Բարեկարգվեցին քաղաքներն ու ավանները։ Գյուղատնտեսության բոլոր բնագավառներում նկատելի էին վերելքն ու նպաստավոր հեռանկարները։ Բուն թափով զարգացան առևտուրն ու արհեստները։ Հայ գործունյա վաճառականների նախաձեռնությամբ տնտեսական համագործակցության պայմանագրեր կնքվեցին Միջերկրականի ուղիներն զբաղեցնող երկրների ու քաղաքների վաճառականության հետ։ Եվ տնտեսական ու քաղաքական այս առողջ կյանքը հիմք դարձավ շինարարական մի աշխույժ եռուզեռի, մշակութային աննախադեպ առաջադիմության համար։

1219 թ. վախճանված Լեոն Բ-ի գահն օրինական ժառանգորդ չուներ և, մի քանի տարի տկար գործիչների բաժին դառնալով, կարող էր զրկվել քաղաքական հզորությունից։ Բարեբախտաբար մահից առաջ Լեոնը թագավորության խնամակալ էր կարգել իր քեռու որդի և Պապեռոն բերդի տեր Կոստանդին սպարապետին, որի ջանքերով էլ երկիրը շարունակում էր իր անշեղ ընթացքը։ 1226-ին Կոստանդինն իր 13-ամյա որդի Հեթումին ամուսնացրեց Լեոն Բ-ի դուստր Զաբելի հետ և օծեց թագավոր։ Այսպես սկզբնավորվեց թագավորական մի նոր հարստություն, որն իր ակունքում ուներ Ռուբինյան ու Հեթումյան տոհմերը և պետք է առավել բարգավաճ ու անխախտ զարգացում ապահովեր Կիլիկյան Հայքի համար։

Ձեռներեց, եռանդուն ու հզոր գործիչ էր Կոստանդինը։ Նա մինչ այդ Հայոց կաթողիկոս էր դարձել իր ազգական Կոստանդին Ա Բարձրբերդցուն (1221—1267 թթ.) և այս հայրենասեր ու ազգեղիկ հոգևոր վեհապետի օժանդակությամբ երկրի ղեկն ամրողջությամբ վերցրեց իր ձեռքը, արքունի կարևոր գործակալությունները հանձնեց իր որդիներին. Սմբատը գունդըստաբլն էր (սպարապետ-զորքերի գլխավոր հրամանատար), Լևոնը՝ իշխանաց իշխան և մարաջախտ (սպարապետի տեղակալը, մարշալ), Օշինը՝ պայլ (իշխան-կառավարիչ) և Կոռիկոս նշանավոր բերդի տեր։ Մյուս զավակը՝ Բարսեղը, Սսի արքեպիսկոպոսն էր և հսկայական ազդեցություն ուներ երկրի հոգևոր կյանքում։

Երբ թաթար-մոնղոլները նվաճել էին Անդրկովկասն ու Մեծ Հայքը և շարժվում էին դեպի Փոքր Ասիա, Կոստանդին թագավորահոր, Հեթում Ա թագավորի և Սմբատ գունդստաբլի դիվանագիտական ջանքերով Հայկական Կիլիկիան փրկվեց վերահաս աղետից։ 1248-ին Սմբատը բանակցության գնաց Կարակորում (մոնղոլ մեծ խանի նստավայրը Օրխոն գետի ափին, Մոնղոլիայում)։ 1254-ին էլ Հեթումին էր վիճակվել նույն երթը։ Մեծ խաքանի հետ կնքված դաշնագրով նրանք ոչ միայն իրենց երկիրը ազատ պահեցին մոնղոլական ավերածություններից, այլև նրանց ուժերով զսպել ուզին հարևան մահմեդական իշխանությունների ու Եգիպտոսի մամլուքների ոտնձգությունները Հայոց թագավորության դեմ։

Հեթում Ա-ի գահակալության (1226—1269) վերջին տարիներին ծանր փորձություններ ենթարկվեց թագավորությունը։ Մանգու խաքանի մահով (1259) ծայր էին առել գահակալական խառնակչություններն ու կուսակալական մրցակցությունները։ Հարևան մահմեդական իշխանությունները ժամանակը հարմար էին համարում Հայկական Կիլիկիային զիջած բերդերն ու դավառները ետ խլելու համար։ Պատերազմները, ասպատակությունները և ավերածությունները դարձան սովորական երևույթ։ Եգիպտական սուլթանության ձեռնարկած մի այդպիսի պատերազմում (1268) ծանր պարտություն կրելով՝ Հեթումը 1269-ին ավագ որդի Լևոնին թագավոր օծեց և ինքը գնաց Դրսպարկի վանքում կրոնավորելու։

Լևոն Գ-ի գահակալության երկու տասնամյակներում

(1269—1289 թթ.) նա երկիրն ազատված էր Եդիպտոսի ու Իկոնիայի տերերի պարբերական հարձակումներից։ Այդօրինակ պատերազմներում հայկական կողմը հաճախ էր հաղթում՝ թշնամուն ստիպելով կատարել զիջումներ։ Լևոնը ճկուն քաղաքականությամբ շարունակում էր հոր գործը երկրի ներքին ու արտաքին կյանքում և մեծապես հովանավորեց մշակույթը։ Իր կոտրած ոսկե ու արծաթե դրամների վրա նա ներկայանում էր որպես «Լևոն թագաւոր ամենայն Հայոց»։

Հաջորդ գահակալները, սկսած Հեթում Բ-ից (1289—1303), չունեցան նախորդների հեռատեսությունը, չկարողացան երկիրը պատվաստել արտաքին բախումների դեմ և փրկել ներքին անջատական ձգտումներից։ Տուրք տալով ապաղգայնացնող լատինասեր ուժերին՝ Հեթում Բ-ը հեռվից Հռոմի պապի ու արիստոյան տերությունների օգնությանը։ Եվ նրա այդ քայլի դեմ զայրացած մահմեդական հարևանները հարձակվեցին Կիլիկիայի վրա, նվաճեցին Հռոմկլան, ավերեցին հարավային ու արևելյան մի շարք նահանգներ։ Գահակալական պայքար սկսվեց թագավորական տոհմի ներսում։ Հեթումին բանտարկելով՝ 1296-ին գահին տիրացավ նրա եղբայր Սմբատը։ Երկու տարի անց էլ մյուս եղբայր Կոստանդինն իրեն հռչակեց թագավոր։ Եվ այս ցավալի դեպքերի ժամանակ հարևան տերություններն անպատիժ հոշոտում էին երկրի ծայրամասային գավառները։

Ճիշտ է, 1299-ին Հեթում Բ-ը վերստին գահակալ էր, և 1301-ին էլ, թագադրելով մանկահասակ որդի Լևոն Գ-ին, ինքն ստանձնել էր թագավորահոր անսահմանափակ իրավունքներ, սակայն նրա լատինամոլ քաղաքականության հետևանքով երկիրը գնում էր դեպի ծանր ճգնաժամ։ Երբ մահմեդական հարևաններն ասպատակում էին երկրի սահմանային նահանգները, Լևոն Գ-ն օգնության կոչով դիմեց Կղեմենս Ե պապին։ Վերջինս առաջարկեց, որ հայոց եկեղեցին ընդունի կաթոլիկություն և մտնի Հռոմի հովանու տակ։

1307-ին Սիս մայրաքաղաքում հրավիրված ժողովը թագավորի ճնշման ներքո ընդունեց կաթոլիկության հետ միավորվելու առաջարկը։ Սակայն դա երկրի վիճակն ավելի բարդացրեց, որովհետև, եթե ժողովուրդը, կառչած իր հնագույն ազգային հավատին ու ինքնուրույնությանը, մերժեց այդ ազգու-

բաց որոշումը, ապա հարևան պետություններն ու մոնղոլ դաշնակիցները նրա մեջ տեսան խաչակիրների նոր արշավանքի նախապատրաստություն։ Եվ սկսվեց դավերի ու չարությունների մի երկար շարք, որին զոհ գնացին ինքը՝ թագավորն ու բազմաթիվ մեծատուններ, երկիրը ներքաշվեց ներքին ու արտաքին թշնամիներից հյուսված մի բարդ ցանցի մեջ։ Դրությունն առավել բարդացրին և՛ Լևոն Դ-ին հաջորդած Օշին թագավորի (1308—1320 թթ.) բացահայտ լատինամոլությունը, և՛ Լևոն Ե-ի (1320—1342 թթ.) երիտուն դիրքը կենտրոնախույս ուժերի արտաքում։ Ներքին երկպառակություններից, արտաքին թշնամիների հարվածներից խարխլվեց Կիլիկյան Հայոց թագավորությունը, և դարի 40-ական թվականներին մարած Ռուբինյան-Հեթումյան գահատոհմին փոխարինելու եկան Կիպրոսի Լուսինյան տոհմի պայազատները, որոնցից յուրաքանչյուրն իր թիթեռնիկի կյանքով և մանավանդ լատինամոլ քաղաքականությամբ՝ երբեմնի հզոր ու անկախ պետությունը հասցրին կատարյալ անկման։

1375-ին եգիպտացիների հարվածներից հյուծված հայկական ուժերը հանձնեցին նաև Սիս մայրաքաղաքը, և դա անկումն էր Կիլիկյան Հայոց թագավորության։

Գահազուրկ-գլխատված երկիրը բզկտվում էր արևախում ու անկուշտ բռնագրավիչների ճիրաններում։ Ժողովրդական զանգվածները, դաշտային արգավանդ շրջաններն ու փարթամ քաղաքները թողած, ապավինել էին լեռնային ամրություններին և պետի իրենց հետագա զարերը զարդարեցին գոյատևումի ու ազգային կերպարի պահպանության անօրինակ հերոսամարտերով՝ մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը՝ Զեյթունի խիզախ ընդվզումները, և 20-րդի սկիզբը՝ Մուսա լեռան քառասնօրյա պայքարի հրաշքը։

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Թերևս անհավատալի թվա, եթե ասեմ, որ Հայաստանն Ասիայի համար ամենանշանավոր ակադեմիա է հանդիսացել... 9—18-րդ դարերում Հայաստանը կարող էր այս աշխարհամասի ուսուցիչը լինել։ Նա այդ ամբողջ ժամանակաշրջանի բոլոր գիտությունները հարստացրել է բազմահմուտ մարդկանցով...

ԳՈՒԼԻԵԼՄՈՒՍ ՎԻԼՖՐՈՒԱ
(Ֆրանսիացի արևելագետ, 18-րդ դար)

Հայերենում «համայսարան» բառը կար վաղնջական ժամանակներից ի վեր։ Այն ծվարել էր մեսրոպատառ առաջին մատյանների էջերում և պիտի իրականանար, հենց որ ճակատագիրը խաղաղ կյանքի առավոտ բացեր Հայոց աշխարհում։ Եվ երբ կար այդ առավոտը, ուսումնածարավ, այսինքն՝ համալսարանասեր հրիտասարդները խափառում էին օտար երկինքների տակ, օտար համալսարաններում էին մեղմացնում իրենց ուման պապակը՝ միաժամանակ բորբոքելով մայր հողի վրա սեփական համալսարան ունենալու անմար մի տենչ։

Մայր հողի վրա նրանք պարապ չէին նստում։ Բարձր դպրոցներ էին ստեղծել՝ Ալեքսանդրիայում ու Բյուզանդիայում, Հռոմում ու Աթենքում իրենց տեսածների օրինակով։ Եվ հայ մանուկներին, պատանիներին ու երիտասարդներին սովորեցնում էին այն գիտություններն ու արվեստները, որ իրենք էին սովորել ու տուն բերել քաղաքակրթության հնագույն կենտրոններից։ Սովորեցնում էին այն դասագրքերով, որ բերել էին իրենց հետ, և նրանցո՛վ, որ ստեղծել էին իրենք՝ մեր Պատ-

մահայր Մովսես Խորենացին, նրա դասակիցն ու հարազատը՝ Դավիթ Անհաղթ փիլիսոփան, Պետրոս Քերթող Սյունեցին, հանրագիտակ Անանիա Շիրակացին...

Եվ նրանք, իհարկե, համալսարան կարող էին կոչել 7-րդ դարում Անանիա Շիրակացու ստեղծած բարձր դպրոցը հայրենի Անի ավանում։ Մեծ գիտնականն ու մանկավարժն իր դպրոցի համար ստեղծել էր դասագրքեր, որոնք վերաբերում էին մաթեմատիկային, աստղագիտությանը, չափագրությանը, պատմությանն ու աշխարհագրությանը։

Համալսարան կարող էին կոչել 8-րդ դարի սկզբին Ստեփանոս Սյունեցու ստեղծած հռչակավոր վարդապետարանը Սյունյաց լեռներում, ուր սաներ էին հավաքվում Հայաստան աշխարհի բոլոր կողմերից և սովորում էին Սուրբ գրքերի իմաստությունները, ինչպես նաև իրենց մեծ վարպետի հետազոտությունները քերականության ու պատմության, երաժշտագիտության ու փիլիսոփայության մարզերում։

Եթե սրանք համալսարան չկոչվեցին, ապա այդպես պիտի կոչվեին, այո՛, անպայման պիտի կոչվեին Բագրատունյաց թագավորության քաղաքամայր Անիի բարձր դպրոցը, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Իմաստասերի, Կիլիկյան Հայքի իմաստուն հայրերի, Մխիթար Գոշի ու Վանական Վարդապետի հռչակավոր դպրոցները։

Հատկապես վերջինները՝ իրենց նախորդներով ու հաջորդներով, կազմում էին կրթական, մանավանդ բարձր դպրոցի մի շղթա, որի բոլոր օղակների մասին միշտ էլ երախտագիտությամբ են խոսել ժամանակակիցներն ու հաջորդ սերունդները։ Տեսեք՝ ժառանգորդության, ավանդներն անմահ պահելու ի՞նչ ջանքեր են թափել Անիի ու Հաղպատ-Սանահինի դպրապետներից, Կիլիկյան Հայքի վարդապետներից սովորած Մխիթար Գոշը Նոր Գետիկի իր հռչակավոր դպրոցում, Գոշի իմաստուն աշակերտ Հովհաննես Տավուշեցին (Վանական Վարդապետ) Խորանաշատի իր դպրոցում և Վանականի աշակերտ Վարդան Վարդապետ Արևելցին էլ իր հիմնադրած Խոր Վիրապի բարձր դպրոցում... Սրանց ձգած առողջ սերմերը պիտի հզոր ծիլեր տային, հայոց դպրոցը պիտի ծաղկեր՝ հակառակ ճակատագրի բերած ամեն տեսակ խորշակների։

Եվ դարեր փայփայած համալսարան անվան համար բախտն

ստեղծեց ուրիշ մի դպրոց, որը պիտի բացվեր թաթար-մոնղոլների տիրապետության ամենադժնդակ մոլեգնումի տարիներին ու խավարամած Հայոց երկրի վրա ճառագեր որպես լույսի աղբյուր։ Դա Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառում հիմնադրված այն դպրոցն էր, որ հետագայում հայտնի էր դառնալու իբրև Գլաձորի համալսարան։

Գլաձորի համալսարանը բացվեց 13-րդ դարի 80-ական թվականների սկզբին ու գործեց ավելի քան 50 տարի։ Եվ եթե դասընթացի մեջ տիրապետող էր եվրոպական կարգը, ապա լեզուն հայերենն էր, դասավանդվող առարկաները՝ սերտորեն կապված հայրենի երկրի և նրա գիտական ու մշակութային հինավուրց ավանդների հետ։

Նրա օրրանն էր Վայոց ձորի (այժմյան Եղեգնաձորի շրջանի) Գլաձորի կամ Աղբերց վանքը, որի դպրապետն էր բազմարդյուն Ներսես Մշեցին։

Ներսես Մշեցին, որ, ինչպես անունն է ցույց տալիս, Ծարոնի Մուշ քաղաքի ծնունդ էր, մեկն է եղել 13-րդ դարի մեր մեծագույն ուսուցչապետ Վարդան Արևելցու շնորհաշատ սաներից։ Գլաձորում նրան հովանավոր ու աջակից եղավ նահանգի տերը՝ Պռոշ Խաղբակյանը։ Աշխարհիկ ու հոգևոր երկու եռանդուն գործիչների ջանքերով կյանք առավ հայոց անառիկ լեռնաստանի բարձր դպրոցը՝ զարմանալիորեն պայծառ մի հաստատություն շրջապատի խավարի թագավորության մեջ։ Պռոշ մեծազոր իշխանը, որի անվան հետ կապված էին դեռևս 1223 թվականին խորեզմցի բռնագրավիչներին Դվինում չարդելու և քաղաքն ազատագրելու սխրանքը, աջա Գեղարդի ու Կեչառիսի ճարտարապետական հոյակերտների կառուցումը, դարձավ Գլաձորի համալսարանի հիմնադիրն ու հովանավորը։ Իշխանանիստ Սրկզոնք ավանի մոտ, հենց նրա հարևանությամբ բացվեց համալսարանը։ Վկայություններ կան այն մասին, որ Պռոշ իշխանը հոգացել է ոչ միայն նորաբաց համալսարանի նյութական պետքերը, այլև անձամբ է այնտեղ հավաքել ժամանակի համբավավոր ուսուցիչներին, որպեսզի ուսման գլուխ կանգնած լինեն երկրի լավագույն վարդապետները։ Հայտնի է Պռոշի ու համալսարանի ուսուցչապետների լուսախորհուրդ բարեկամությունը։ Երբ 1284 թ. իր մահկանացուն կնքեց համալսարանի հիմնադիր ու տնօրին

Ներսես Մշեցին, Պառչի հորդորանքով էր, որ տնօրենի գավազանն ընդունեց Պառչ իշխանի մի այլ իմաստուն բարեկամը՝ Եսայի Նչեցին։ Վկայված է նաև Պառչի հաջորդների հովանավոր դերը համալսարանի հետագա կյանքում։ Գլաձորում ստեղծված ձեռագրերից մեկի հիշատակարանում Պառչի ժառանգները հիշատակված են իբրև «տէր և իշխեցող սուրբ մենարանիս և տանս դպրոցական ժողովելոց»։

Պահպանվել են համալսարանի ուսումնական կյանքի հանգամանքները ներկայացնող բազմաթիվ վավերագրեր, իսկ ավելի շատ՝ մեծարժեք ձեռագիր մատյաններ, որոնց նյութերը, հատկապես հիշատակարանները, մեր առաջ բաց են անում համալսարանի կյանքի ամբողջ ընթացքը։ Այնտեղ ուսումնական գործը դրված է եղել կայուն հիմքերի վրա, որովհետև ունեցել է ներքին կանոնագրություն։ Հատուկ ծրագրերով դասավանդվել են աստվածաբանություն, հայոց լեզու և գրականություն, հռետորական արվեստ, փիլիսոփայություն, նույնիսկ բանաստեղծություն հյուսելու արվեստը։

Գլաձորի բարձր դպրոցում գործել են երեք լսարաններ, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է մասնագիտական իր որոշակի թեքումը։ Առաջինը եկեղեցական ու աշխարհիկ դպրության լսարանն էր, ուր պատրաստում էին եկեղեցական ղեկավար գործիչներ ու վարդապետներ, երկրորդը՝ գրչության արվեստի լսարանը, որի սաները հմտանում էին մատենագրության ու գրչական-մանրանկարչական արվեստի մեջ, և երրորդը՝ խազագիտության ու երաժշտության լսարանը, որի շրջանավարտներն արդեն, հոգևոր գործիչներ լինելու հետ միասին, երաժշտության գիտական ու գործնական հիմունքներին տիրապետող մասնագետներ էին։

Հայտնի է, որ Գլաձորի բարձր դպրոցն էին ընդունվում, այսօրվա լեզվով ասած, միջնակարգ կրթություն ստացած լավագույն երիտասարդները, որոնք այստեղ էլ վեց-յոթ տարվա դասընթացներն ավարտելուց հետո քննաճառեր էին պատրաստում և դրանք պաշտպանում գիտական ատյանի առաջ։ Այսքանից հետո միայն, հանդիսավոր պայմաններում, ստանում էին վարդապետական աստիճան և սկսում էին իրենց ինքնուրույն գիտական ու հոգևոր-մշակութային գործունեությունը։ 13-րդ դարի վերջի և 14-րդի առաջին տասնամյակների Գլաձորը պարուրված էր մի անմրցակից փառքով։ Հայաստանի տարբեր նահանգներում ստեղծված գրչագրերում այն կոչվում է ամենասուրբ վարդապետարան։ Թեղենյաց ռաբունի Մկրտիչն այն կոչում է «Երկրորդ Աթենք պանծալի»։ Իսկ Հակոբ Թագորցին կոչում է ոչ միայն «Երկրորդ Աթենք», այլև «մայրաքաղաք ամենայն իմաստից»։ Եվ պատահական չէ, որ Գլաձորը դեպի իրեն էր քաշում հայ ուսումնածարավ պատանիներին ժամանակի Հայաստան աշխարհի բոլոր ծայրերից՝ Արևելյան Հայաստանի գավառներից, արևմտահայկական տարբեր նահանգներից և նույնիսկ հեռու-հեռավոր Կիլիկիայից։

Համալսարանի դասասացներ կամ ժամանակակից խոսքով՝ դասախոսներ էին ժամանակի ամենապիտուն հայ գործիչները՝ Եսայի Նչեցին, Դավիթ Սասնեցին, Մարտիրոս, Գրիգոր, Կիրակոս, Կյուրեղ ու Հովհաննես ուսուցչապետները, նրանց հետ էլ՝ համալսարանի սաներից Թորոս Տարոնացին, Ամլագ վարդապետը, հռչակավոր գրիչ, ծաղկող-նկարիչ և ճարտարապետ Մոմիկը։

Գլաձորը ոչ միայն վարդապետարան էր, մտավորական գործիչների դպրոց, որ գիտական ու մտավոր մարդիկ էր պատրաստում այն օրերի հոգևոր կենտրոնների ու դպրոցների համար, այլև գիտական, գրչական ու մանրանկարչական իր արտադրանքով ապահովում էր հանուր Հայաստանի պահանջները, նշում այն ուղիները, որոնցով պիտի քայլեին հոգևոր մյուս կենտրոնները։ Այստեղ ստեղծված դասագրքերը, հատկապես Եսայի Նչեցի հռամեծ վարդապետի քերականությունը, անգնահատելի հեղինակություններ էին ժամանակի դպրոցներում։ Փիլիսոփայական երկերն իրենց մակարդակով և Գլաձորում ստեղծված ձեռագրերն իրենց գրչական ու մանրանկարչական արժանիքներով մի այնպիսի աստիճան էին մեր բազմադարյան մշակութային կյանքում, որ այսօր արդեն դարձել են լուրջ հետազոտությունների նյութ ու առարկա։

Այդ ձեռագրերի իսկական արժեքը պատկերացնելու համար առնենք, որ նրանցից մեկը, ընդօրինակված 1298 թվականին, բովանդակում է Հովհան Ոսկեբերանի, Եփրեմի, Կյուրեղ Ալեքսանդրացու, մեր Ստեփանոս Սյունեցու և ուրիշների երկերի

մեկնությունները։ Հովհան Ոսկեբերանի և Կյուրեղ Ալեքսանդրացու մեկնությունների բնագրերն անհայտ կորած են, հետևապես մեր այս ձեռագիրը Գլաձորի «փառքն ու պատիվը բարձրացնող մի կոթող է համաշխարհային նշանակությամբ» (Գարեգին կաթողիկոս Հովսեփյան)։

Մեր միջնադարյան մշակույթի պատմության մեջ վաղուց ընդունված է Գլաձորի համալսարանի գրչական ու մանրանկարչական ժառանգությունը ճանաչել իբրև մի ինքնուրույն հոսանք՝ բուն Գլաձորյան դպրոց։ Իր ակունքներում ունենալով բնաշխարհի բազմադարյան ավանդույթներն ու Կիլիկյան Հայքի արվեստի լավագույն գծերը, Գլաձորի գրչական, հատկապես մանրանկարչական դպրոցը ցույց տվեց զարգացման մի նոր աստիճան։ Գլաձորում ստեղծված ձեռագիր մատյաններում, հատկապես ծայրագույնը Հովհաննեսի ու Մատթեոսի, ապա Մամիկի ու իր գործընկերների մանրանկարներում գույների բազմությունը, սևի ու ոսկեգույնի արտասովոր համադրությունները, դիմանկարների հոգեբանական կերպավորումները կատարվում են մի աննախադեպ վարպետությամբ։

Գլաձորի ծառայությունն այն է նաև, որ նրանից սկզբնավորվեցին ու բարգավաճեցին նոր դպրանոցներ Հայաստանի տարբեր մասերում, ջրաձան նոր լուսատուներ, մշակութային կյանքի նոր ջեռուցիչներ։ Այստեղ՝ Գլաձորի համալսարանում են կրթություն ու դաստիարակություն ստացել Ստեփաննոս Օրբելյան պատմիչը, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի հռչակավոր գիտնականները, խաչատուր Կեչառեցի բանաստեղծը, Աթեմայան Հայաստանի մեծ լուսավորիչ ու գրական գործիչ Հովհաննես Երզնկացին, տաղանդավոր վարդապետներ Հովհաննես Առճիշեցին, Մխիթար Սասնեցին, Տիրատուր Կիլիկեցին և ուրիշ բազմաթիվ վարդապետներ ու դպրապետներ, որոնք ճառագայթվելով Գլաձորից՝ լույսի ու գիտության նոր կենտրոններ ստեղծեցին երկրի տարբեր վայրերում։ Այդպիսիներից չի կարելի չնշել Տաթևի և Մեծոփա վանքերի համալսարանները, որոնք 14—15-րդ դարերի խավարի մեջ, թաթար-մոնղոլների վայրենի տիրապետության ներքո, ապա ակոյունալու և կարա-կոյունալու թուրք վրանաբնակների ասպատակությունների օրերին դարձան հայ ժողովրդի հոգու անմար կրակը վառ պահողներ, լույսի ու գիտության անշեջ օջախներ։

Ենթադրվում է, որ 1340-ական թվականներին խամբել է Գլաձորի ուսումնական կենտրոնը։ Սակայն մինչև այդ, դարասկզբին և դրանից էլ առաջ, Գլաձորի հայրենասեր վարդապետներն էին, որ գլխավորեցին հայոց եկեղեցու պայքարը պապականության նոր ոտնձգությունների դեմ։ Հայտնի է, որ Գրիգոր Է Անավարզեցի (1293—1307) և Կոստանդին Գ Կեսարացի (1307—1322) կաթողիկոսների օրոք կաթոլիկ եկեղեցին վերստին եռանդուն ջանքեր էր գործադրում հայությանն իր գիրկը քաշելու համար, և Սսում նստող այս կաթողիկոսներն էլ ստիպված էին ընդառաջել պապականությանը։ Հայակործան այս շարժման դեմ վճռաբար ելան Արևելյան Հայաստանի հոգևոր առաջնորդները, որոնց առաջին շարքերում էին Գլաձորի վարդապետները՝ այն ժամանակ արդեն Սյունիքի միտրոպոլիտ և Գլաձորի հովանավոր դարձած Ստեփաննոս Օրբելյանի գլխավորությամբ։

Գլաձորի մայրամուտից հետո նոսայի նշեցու աշակերտ Հովհան Որոտնեցին, փոխադրվելով Տաթևի վանք, այնտեղ համալսարանական կարգ ու կանոն ստեղծեց։ Եվ նրա բարձրը դպրոցը տվեց մեծ թվով քաջահմուտ աշակերտներ, որոնցից բավական է հիշենք Գրիգոր Մերենց Խլաթեցուն ու Գրիգոր Տաթևացուն, որպեսզի պարզ լինի, թե ի՜նչ տեսակ լույսի օջախ էր Տաթևի համալսարանը։ Գրիգոր Խլաթեցի բանաստեղծը՝ իր օրերի ազգերի սրտառուչ պատմիչը, հարստացրեց ու կարգավորեց մեր Հայոմավուրքը։ Իսկ Գրիգոր Տաթևացին, որին ուշ միջնադարի մեր մյուս պայծառաշունչ մտածող Թովմա Մեծոփեցին կոչում է «վարդապետ ամենայն Հայոց, երկրորդ լուսավորիչն ու աստվածաբանն գեր ի վերոյ գալով ամենայն իմաստասիրաց և վարդապետաց՝ հնոց և նորոց», դարձավ միջնադարյան հայ փիլիսոփայության և աշխարհիկ գիտությունների մեծագույն գիտակը, դրանք տարածողն ու առաջ մղողը։

Գրիգոր Տաթևացու արժանավոր աշակերտը և գործի ըստ ամենայնի շարունակողն էր Թովմա Մեծոփեցին, որ տաղանդավոր պատմիչ էր և գիտնական, հոգևոր մեծ գործիչ և գիտության հմուտ կազմակերպիչ։ 14-րդ դարի վերջում Սուքիասյան դպրատունը սովորում էր, երբ առավ Տաթևի համալսարանի առաջադիմության լուրը և իր 12 դասակից ընկերների հետ փո-

խաղրվեց այնտեղ, աշակերտեց Գրիգոր Տաթևացուն։ Ապա դարձավ Մեծոփա վանքի առաջնորդն ու բարձր դպրոցի գլխավոր վարդապետը։ Շուտով Թովմայի ու նրա համալսարանի համբավը տարածվեց երկրով մեկ, տարբեր գավառներից նրա մոտ եկան չանասեր երիտասարդներ, և սկսվեց նրա համալսարանի եռանդուն կյանքը։ Սակայն հենց այդ ժամանակ էլ թաթարական մի արշավանք ավերեց Մեծոփա վանքը։ Աստվածակիցները հալածեցին վանականներին։ Թովմա վարդապետն իր բարձր դպրոցը՝ աշակերտներով, վարդապետներով, գրքերով և կայք ու զուլքով, առավ, փոխավ Սասուն, ապաստանեց Մշո սուրբ Առաքելոց վանքում։

Հետո այսպես շարունակվեց ուշ միջնադարի հայոց բարձր ուսումնական կյանքը. դրսևորվելով հալածական հայ վարդապետներն ու իրենց ուսումնականները բույն էին հյուսում շար աչքից հեռու վայրերում, գիտության և գրականության օջախներն էին վառ պահում իրենց հոգու աստվածային լույսով։ Իսկ երբ հայրենի երկնքի տակ այդ լինում էր անհնար, նման օջախներ էին ստեղծում հեռավոր ափերում, օտար ու խորթ երկինքների տակ, մի Վենետիկում, մի Վիեննայում... Մինչև որ կգար հայրենի հողի վրա ամուր հիմքեր դցելու, գիտության շենքը վեր բարձրացնելու երազած ժամանակը։

ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆԸ

«Ես Թոքեցի ոչ Հայաստանաս եսիր տալու»

ՄԵԼԻՔ ԵԳԱՆ ՑԵՐ ԳԻՉԱՆԻ

14-րդ դարի վերջին (1375 թ.) իր մահկանացուն կնքեց Կիլիկյան Հայոց թագավորությունը, իսկ բուն Հայաստանում հենց այդ ժամանակ ասպատակության եկած լանկթամուրյան ավերիչ հորդաների դաժան հարվածներից ջարդվեցին, ցանուցիր եղան երկրի բնիկ տեր իշխանությունները։ Նույնիսկ Արցախ-Սյունիքյան լեռնաստանի իշխանական տները, որոնք թաթար-մոնղոլական տիրապետության դժնդակ շրջանը տարել էին առանց քաղաքական մեծ կորուստների, նոր բռնակալների լծի տակ մանրացան և, ծվարած հայրենի բնական ամրություններում, կարծես սպասում էին իրենց օրհասին։

Դրությունն իսկապես օրհասական էր, որովհետև հին օրերում, երբ վերացել էր թագավորությունը, կար մխիթարական մի բան՝ հայրենի նախարարական տների գոյությունը։ Այդ պատճառով էլ զգայուն ու հայրենասեր պատմիչ Եղիշեն կատարվածը ճակատագրական դժբախտություն չէր համարում։

Հիմա չկային նախարարությունները, ջարդվել-մանրացել էին նրանց փոխարինելու եկած իշխանական տները։ Սրանց վերջին ներկայացուցիչներն իրենց մեծ մասով զոհ դնացին լանկթամուրյան ավերածություններին։ Ժամանակակից Գրիգոր Տեր-Սեն Եղանեցին դառնությամբ գրել է, թե.

Իշխանք բազում ի տանց ելին
Եւ ի լընլից պարապկին,
Ցերիւարացն գրկեցին
Եւ հետոտս տանէին։

Նախիջևանում և Երևանում արաբների կազմակերպած նախարարախորովից հետո սա հայ իշխանական տների հետ կատարված մեծագույն աղետն էր, որը, թվում էր, անթափանց խավարով ծածկեց վարչաքաղաքական կյանքը բովանդակ Հայաստանում...

Սակայն կարճ ժամանակ անց այս ու այնտեղ ճեղք տվեց այդ համատարած խավարը, և դյուխ բարձրացրին նախորդ հարյուրամյակներում գոյություն ունեցած իշխանական տների ժառանգները։ Սևանից արևելք՝ Վերին Խաչենի տարածքին վերստին տեր կանգնեց Առանշահիկների մի նոր ճյուղ, որի պայազատ Սայտին իր հայր Շանշեի (Շահանշահ) գերեզմանաքարին փորագրած խոսքով ներկայանում էր որպես «տեղացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ամանայ, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ, մինչև ի Շաղուագայս։ Նրանից արևելք իրենց տիրույթների վրա աներեր կանգնած էին Հասան-Ջալալյան իշխանությունից եկած ճյուղերը։ Իսկ դեպի արևմուտք, Զանգեզուրում, ոտքի էին կանգնում Օրբելյան տան ժառանգները։ Սրանցից արևմուտք էլ, Եղեգնաձորի շրջակաների վրա Խաղբակյան տան հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներն էին գլխավորում իրենց տիրույթների կյանքը։ Լոռու ձորերում հայտնվում էին գավառական մանր իշխանություններ, որոնք բավական հիմնավոր կերպով հավակնում են Մամիկոնյան ու Զաքարյան փառավոր տոհմերի ժառանգությանը։

Եվ այսպես, Հայաստան աշխարհի լեռնային շրջանները ծածկված ենք տեսնում գավառական բնիկ մանր, բայց կենսունակ իշխանություններով՝ մի ժամանակ, երբ դաշտային շրջանները տիրել-բռնել էին ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքմենական վրանաբնակներն ու հարևան մահմեդական ամիրայությունները։

Ի՞նչ պիտի լիներ այս ամենի վերջը։ Եկվոր բռնության համաճարակը պիտի կարողանա՞ր մաքրել նաև հայրենի լեռնաստանին ասպատանած քաղաքական կյանքի մնացորդները, թե՞ վերջիններս պիտի դիմանային նաև հետագա արհավիրքներին։ 15—16-րդ դարերում թուրքմենական ասպատակիչ խաժամուժի պատճառած աղետներին գումարվել էին օսմանյան Թուրքիայի և Իրանի պարբերական բախումները, որոնց թատերա-

բեմն այլևս Հայաստանն էր, բնավեր հայ ժողովրդի հազար անգամ բզկտված հայրենիքը։

Արևելյան ու հյուսիս-արևելյան Հայաստանը, որի տարածքն դարաշրջանում էին վերոհիշյալ գավառային իշխանությունները, հիմնականում գտնվում էր Պարսից շահի տիրապետության ներքո, և, բնականաբար, շահը կամ նրա կուսակալներն էին, որ պետք է պարզեին իրենց հարաբերությունները տեղական իշխանությունների հետ։

Առաջին շրջանում Պարսից արքունիքը բազմիցս փորձեց նվաճված երկրում չճանաչել ոչ ոքի ու ոչինչ՝ իր միահեծան ու անսահմանափակ բռնատիրությունից բացի։ Սակայն ամեն անգամ դեմ առավ տեղացիների համառ դիմադրությանը և ստիպված եղավ տեղի տալ։ Իսկ տեղի տալ նշանակում էր՝ ճանաչել տեղական իշխանավորների որոշակի իրավունքները, երկրի ժողովրդի հետ խոսել այդ իշխանավորների միջոցով։

15-րդ դարում հայկական գավառական իշխանություններն այնքան ուժ ունեին, որ շահին ստիպեցին մտածել, թե նրանց կարող են միավորվել և կազմել մի ոյնպիսի զորություն, ուր հետ այլևս անհնար կգտնար խոսել բանակալի լեզվով։

Պարսից գահին տիրացած կարա-կոյունլու Ջահանշահը (1437—1467 թթ.) հատուկ հրովարտակով ճանաչեց հայ գավառական իշխանների իրավունքները։ Նվիրեցին են պահպանվել Մարա տերերին նրա կողմից շնորհված արտոնությունների մասին։ Ենթադրվում է, որ համանման արտոնագրեր են տրվել նաև հարևան իշխանավորներին։ Այս ժամանակից ոչոչ էլ հայկական աղբյուրներում մելիքներ են կոչվում Արևելյան Հայաստանի գավառական իշխանները։ Ուստի և ենթադրվում է, թե հենց Ջահանշահի հրովարտակով է ակզբնավորվել հայ մելիքական կազմակերպությունը։

Սակայն [illegible] ազգությունների համաձայն՝ մելիքական իշխանությունը կանոնավոր ընթացքի մեջ է դրվել Շահ-Աբաս Ա-ի (1587—1629 թթ.) գահակալության ժամանակ, երբ Իրանի խորամանկ տիրակալը որոշեց Հայոց երկրի քաղաքական ու տնտեսական ուժերը գործադրել օսմանյան Թուրքիայի դեմ։ Նա հրովարտակներով ամրապնդեց հայ մելիքների իրավունքները, խրախուսեց նրանց ռազմական ուժերի աճը՝ հա-

մոլված, որ դա է լինելու մրցակից Թուրքիայի ծավալապաշտության դեմ կանգնեցվելիք հուսալի պատվարը։

Շահ-Աբասը գիտեր նաև մելիքներին իրարից հեռու պահելու, նրանց միաձուլման հնարավորությունները խեղդելու քաղաքականությունը։ Առանձին-առանձին հովանավորում էր նրանց, պատրաստում մրցակիցներ, բայց երբե՛ք դաշնակիցներ։ Երբեմն մելիք էր կարգում ո՛չ ազնվական մեկին՝ նվաճելով նրա համակրանքը, համոզված, որ հարևան իշխանաղունը չի դաշնակցի նրա հետ։ Զաքարիա Քանաքեռցին պատմում է, թե 1606-ին Թիֆլիսից դառնալիս Կայանս ձորում շահն ուզում էր ծանոթանալ հպատակների վիճակին և ծպտված գնաց Միրփոր դյուղի հովիվ Աթայի տունը, զրուցեց նրա ու կնոջ հետ, հետո էլ նոտարին կարգադրեց «գրել նոմոս, որ է բաղամ մելիքութեան և ետ նոցա յորդւոց որդիս լինել մելիք այնմ դաւառի»։

Հպատակ երկրի այս շրջունցքվող մասնատվածության խրախուսումը բոլոր հին ու նոր բռնակալների քաղաքականությունն է եղել։ Մելիքությունն սկզբնավորող Զահանշահը ոչ միայն գավառական իշխանություններն էր իրարից հեռու պահում, այլև երկատեց Հայաստան երկրի միասնական կաթողիկոսությունը՝ էջմիածնի վեհապետի մրցակից ու հավակնոտ մի նվիրապետություն էլ ստեղծելով Աղթամարում։

Պահպանված հրովարտակներից կարելի է եզրակացնել, թե արքունիքի հավանությանն արժանանալու համար մելիքության ժառանգորդը պարտավոր էր ներկայացնել իր գավառի բնակչության ստորագրություններով հաստատված համաձայնությունը։ Այսպես. Վարանդայի մելիք Բաղիի որդի մելիք Շահնազարին վերաբերող հրովարտակի մեջ գրված է, թե հիջրայի 1042 թ. (= 1664) Վարանդա գավառի մելիքությունը «հանձնված է եղել մելիք Բաղի քրիստոնյային՝ հպատակների գրավոր համաձայնությամբ»։ Հետո, հիջրայի 1055 (=1677) թ. Բաղիի որդի Շահնազարը, Շահ-Աբաս Բ-ին ներկայանալով, վերստին հաստատել է, որ իր հայր Բաղին եղել է իշխանավորը հիշյալ գավառի, ապա՝ «հպատակներն իրենց ստորագրություններն ու կնիքներն են դրել այն խնդրագրի վրա, որով մելիք Շահնազարին իրենց վրա իշխանավոր են ճանաչում»։

Այս կարգն ընդհանրական է եղել թե ոչ՝ հիմա անհնար է որոշել՝ տվյալների բացակայության պատճառով։ Սակայն հրովարտակներում միշտ էլ գլխավոր տեղ են բռնում հպատակների հանդեպ արդարամտության և հոգատարության պահանջները, ինչպես նաև մելիքի անսահմանափակ իրավունքները, դատաստանի իրավունքը, արքունիքին վճարելիք հարկի (շահլուզ) կանոնավոր հավաքումը։

«Մելիք» արաբական բառ է, որ նշանակում է իշխանավոր, տիրակալ, նույնիսկ թագավոր։ Իրանի շահերն, իհարկե, այս տիտղոսի մեջ տեսնում էին միայն իրենց ենթակա գավառական մի կառավարիչ, որի պարտականությունն իրենց նկատմամբ սոսկ հարկեր հավաքելն ու արքունիք ներկայացնելն էր։ Սակայն իրականում համարյա անսահմանափակ էին մելիքի իրավունքները սեփական գավառ-տիրույթում։

Լեոն իրավացիորեն գրել է. «Շահական հրովարտակներով այնպես էր պատկերանում մելիքների անձնավորության մեջ կենտրոնացած հայ ազգային իշխանությունը. մելիքը տեր էր, տիրապետող, այն էլ ինքնագլուխ ու միահեծան, ոչ ոք իրավունք չուներ ընկերանալ նրա իշխանությանը։ Ամենքը պիտի հնազանդվեին մելիքին, կատարեին նրա հրամանները, որովհետև մելիքը բարձր իշխանության կողմից նշանակված իշխանավոր էր։ Իր կողմից մելիքը պարտավոր էր լինել արդարադատ, պիտի հոգ տաներ իր երկրի բարօրության մասին...»։

Այս ամենից բացի, մելիքն ուներ դրոշ պահելու իրավունք։ Զորահրամանատարներ էին նշանակվում մելիքական ստհմի ոչ ավագ ժառանգները, որոնք կոչվում էին բեկ, հարյուրապետ (յուզբաշի), հազարապետ։

Սակայն, անկախ այս իրավունքներից ու հարկադիր պարտականություններից, մելիքի դերը մեծագույն մասամբ պայմանավորված էր լինում նրա անձնական կարողություններով ու արժանավորություններով։ Պատմությունը մեզ տալիս է բազմաթիվ ապացույցներն այն հանգամանքի, որ անճարակ սեռատակալը չի էլ վայելել շահական ֆարմանով իրեն արտոնված իրավունքները, իսկ ձեռներից ու շրջահայաց գավառապետ մելիքը հաճախ ոչ միայն հզոր իշխանություն է ունեցել իր տիրույթներում, այլև գերազանցություն է ձեռք բերել

հարևան մելիքությունների վրա, դարձել շահի մահմեդական կուսակալներից անկախ ու ինքնիշխան մի կառավարիչ։ Այդպիսիներից էր, օրինակ, Սոդքի ու Ծարի տեր մելիք Շահնազար Ա-ը 16-րդ դ. վերջին ու 17-րդի սկզբին, Շահ-Աբաս Ա-ի օրերում։

Հայանի են մելիք Շահնազար Ա-ի մղած հաղթական ճակատամարտերը օսմանյան զորաբանակների ու կովկասյան լեռնական ավարառուների դեմ։ Նրա զինվորությունը հաճախ էր խստորեն պատժում հարևան մելիքություններին նեղող օտար ասպատակիչներին։ Իսկ հարստության ու իշխանական փառքի մասին հիշատակագիրը տվել է հետևյալ գնահատականը. «Ո՛չ գոյր նման սորա իշխան յազգս Հայոց, զի է յոյժ փարթամ գոյիւք և առատ ընչիւք՝ լցեալ ի պարգևացն Աստուծոյ, ամենայն առատութեամբ և հզաւր իշխանութեամբ բարգաւաճեալ, պատուեալ և մեծարեալ ի իրոխտ կայսերէն Պարսից»։ Եվ սա չափազանցված խոսք չէ, քանի որ Առաքել Դավրիժեցու վկայություններից հայտնի է, թե որքա՛ն հարգի էր նրա ձայնը Շահ-Աբասի համար, և թե ինչպե՛ս այդ բռնակալը հաճախ նրա խոսքով զիջումներ էր անում Հայոց երկրին վերաբերող հարցերում։

Շահ-Աբասի արքունիքում նույնքան բարձր պատիվ ուներ և Սյունյաց Քաջաթաղ գավառի (Հագարի գետի ավազանը) տեր մելիք Հայկազը։ Այդ նա էր, որ 1500-ականներին, ընդվզելով թուրքական բռնակալության դեմ, պարսիկների օժանդակությամբ ազատագրեց իր տիրույթները, Սյունիքից դուրս քշեց քոչվոր ասպատակիչներին և անառիկ դարձրեց իր խանածախ իշխանանիստը, սեփական բերդամրոցները, մեծապես օգնեց Սյունիքի հոգևոր ու մշակութային կյանքի վերելքին։

18-րդ դարի սկզբին ազատագրական ոգորումներում,— և՛ Իսրայել Օրիի միջոցով ռուսական արքունիքի հետ վարած բանավարություններում, և՛ նրանից հետո թուրք ասպատակիչների դեմ վարած հերոսական պայքարում,— մելիքները Հայոց ազատագրության դրոշակակիրներն էին։ Նրանք իրենց զինքերը չզիջեցին նույնիսկ սղնախական պայքարի և Դավիթ Բեկի ու Մխիթար սպարապետի բորբոքած ազատամարտերին հաջորդած հակագիր դաշարի ժամանակներում։

Հաջորդ ասասնամյակները հայ մելիքության համար եղան

քաղաքական ու բարոյական ուժերի առավել դաժան մի փորձություն, որից նրանք դուրս եկան պատվով ու առավել հզորացած։

1725 և 1732 թթ. ռուս-պարսկական պայմանագրերը պատճառ եղան, որպեսզի Անդրկովկասը գլխովին Պարսից տիրապետությանը հանձնած ցարական արքունիքից առժամանակ երես դարձնեն Հայաստանի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները և հույս դնեն Պարսից շահի բարյացակամության վրա։ Նրանք ուրիշ ելք չունեին. նորից նոր օսմանյան բռնապետության անողորմ ճիրանները չլնկնելու համար հարկադրված էին գնալու հին թշնամու դուռը։

Եվ հենց այս ժամանակ էլ Իրանի բախտը տնօրինելու եկավ Նադիր-կուլի խանը՝ վերին աստիճանի շրջահայաց ու խորամտնկ մի տիրակալ, որն էլ իր հերթին, մինչև Ատրպատականի խորքերը հասած թուրքական ռազմակալությունը խորտակելու, Անդրկովկասին և պատմական Հայաստանի հարավային ու արևմտյան նահանգներին տիրելու գործում չէր տեսնում առավել հուսալի ուրիշ միջոց, քան Հայոց քաղաքական ու զինական աջակցությունը։ Այդ աջակցությունը ձեռք բերելու համար Նադիրն արեց այնպիսի զիջողություններ, որոնցից հիացած էին հայերը, շշմած՝ շահի հավատակից գործակալները։ Նա Ամենայն Հայոց կաթողիկոսությանը վերադարձրեց նրա հին ավատատիրական իրավունքները, ամեն տեսակ միջոցներով օգնեց վերակառուցելու և շքեղացնելու Էջմիածնի մայր տաճարն ու նրա օժանդակ շինությունները։ Եվ, որ վեր էր ամեն տեսակ ասպատածից, վանքին նվիրեց 15-կիլոգրամանոց ոսկե մի ջահ և կարգադրեց Քիրմանից ամենաընտիր գորգեր բերել և նրանցով ծածկել Մայր աթոռի ու վեհարանի սրահները։

Նշանակալից էր այն արտոնյալ վիճակը, որ հայ մելիքներին տվեց նորընծա շահը (թագադրվել է 1736-ի գարնանամուտին, Մուխանք դաշտում, հայ մելիքների և Աբրահամ Կրետացի կաթողիկոսի հոանդուն մասնակցությամբ)։ Արարատյան նահանգը փաստորեն ղեկավարում էին Նադիրի հաստատած հայ մելիքները, որոնցից մեկը՝ Երևանի մելիք Հակոբջանը, հետաղայում նույնիսկ իրավունք ստացավ հիմնելու փողերանոց և կտրելու արծաթե ու պղնձե դրամներ։ Արարատ-

յան երկրի մելիքների գահերից (քալանթար) էր ճանաչվում Դեղարքունիքի ու Սոդքի տեր Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը։

Նադիր շահի հրովարտակներով մեծ իրավունքների տիրացան Սյունիքի ու Արցախի մելիքները։

Արցախի հինգ մելիքությունները, որոնց տիրույթներն ընդգրկում էին Գանձակի մատույցներից մինչև Արաքսի ափը հասնող տարածքը, կազմում էին ռազմաքաղաքական մի ամբողջություն։ Այդ հյուսիսում Գյուլիստանի կամ Թալիշի մելիքությունն էր՝ ընկած Կուրակ և Թարթառ գետերի միջև։ Այստեղ իշխում էին մելիք Բեգլարյանները, որոնց նստավայրն էր Թալիշ ավանը, և ամրոցն էր Գյուլիստան բերդը։ Սրանից հարավ Ջրաբերդի մելիքությունն էր, որը տարածվում էր Թարթառի միջին ավազանում՝ Թրղի վտակի ու Թարթառի միախառնումից գոյացած բերդաքարի շրջակայքում։ Իշխողները մելիք Խաչատրյաններն էին՝ Հասան-Ջալալյանների մի ճյուղը, որ նստում էր հինավուրց Ջրաբերդ ամրոցում։ Խաչենի մելիքությունը հիմնականում բռնում էր Խաչենագետի հովիտը։ Այստեղ էլ բուն Հասան-Ջալալյաններն էին իշխում և նստում էին Գանձասարի հանդիման Խոխանաբերդում։ Վարանդայի մելիքությունը փռված էր Կարկառի հովտից մինչև Քիրս-Դիզափայտ լեռնագոտին։ Սրա տեր մելիք Շահնազարյաններն էլ նստում էին Ավետարանոց (հետագայի Ջանապրի) բերդավանում։ Դիզակի տեր մելիք Եգանյան-Ավանյաններն իշխում էին դրանից հարավ, մինչև Արաքսն ընկած ամբողջ տարածքի վրա և նստում էին Դող (Տող) ավանում։

Բոլոր այս մելիքական տներն էլ սերված էին երկրամասի հինավուրց տեր Առանշահիկ նախարարական-իշխանական տոհմից, և հետազոտողները թյուրիմացաբար են փորձում եկվորներ տեսնել նրանց շարքում։ Օրինակ, Վարանդայում «եկվոր» են համարվում Շահնազարյանները։ Բայց չէ՞ որ ստույգ հայտնի է, որ դրանք Վարանդային տիրացել են՝ իբրև Տար-Սոդքի Շահնազարյանների տոհմակիցներ։ Իսկ Սոդքի Շահնազարյանները,— այդ վաղուց ապացուցված է աղբյուրագիտական տվյալներով,— անմիջական ժառանգներն էին Վերին Խաչենի Դոփյան իշխանական տոհմի, որ էլ իր հերթին ուղիղ գծով ճյուղավորված էր հին Արցախի տեր Առանշահիկ ընից։

Արցախի հինգ մելիքությունները, ինչպես արդեն տեսանք, 18-րդ դարի առաջին երկու տասնամյակն անց էին կացրել հակաթուրքական անդիջում պայքարի մեջ և հնար էին բերել որոշակի ինքնուրույնություն, վճռական ուժ էին նադիրի աչքում։ Եվ պատահական չէ, որ նա հատուկ ուշադրություն դարձրեց հենց այս մելիքությունների վրա՝ գավառապետ-մելիքական իրավունքների մեջ հաստատելով հին մելիքական տների արժանավոր ժառանգներին։ Շահն ամեն կերպ խրախուսեց նրանց միասնությունը, իրար միավորեց և նորակազմ դաշնակցությունը կոչեց Խամսե (արաբերեն՝ հնգյակ) և նրա վրա գերագահ կառավարիչ-բեկլարբեկ (իշխանաց իշխան) նշանակեց Դիզակի մելիք Եգանին։

Դիզակի տերն այս ժամանակ արդեն ալեզարդ և իմաստուն մի իշխանավոր էր, իր անունը պսակած հակաթուրքական անվեհեր սխրանքներով։ Ավանդությունն այս Եգան-Ավան մելիքին է վերագրում այն հանդուգն միջոցառումը, որով շատ երկար ժամանակ օսմանյան թուրքերի ոտքը կոխվեց Անդրկովկասից ու Արևելյան Հայաստանից։ Սարբ-Մուստաֆա փաշայի բազմահազարանոց բանակը 1733 թ. ցրված ձմեռում էր Դիզակի ու Վարանդայի գյուղերում, իսկ ինքը՝ հրամանատար Սարբ-Մուստաֆան, Գանձակի խանի քյոշքում խնջույքներով էր անցկացնում ձմեռը, որպեսզի դարձնան ապատակի հայոց գավառները, վրեժ հանի անցյալ տասնամյակին իր գլխավորությամբ եկած 40-հազարանոց բանակին հաղթելու և առհասարակ ազնախական կռիվներում թուրքերի ստացած վարկաբեկիչ հարվածների համար։ Եվ ահա մելիք Եգան-Ավանի նախաձեռնությամբ, հատուկ ահազանգ-նշանով, մի գիշերվա մեջ հայերը կոտորում են իրենց տներում ձմեռող ասկյարներին։ Գլխովին բնաջնջվում է օսմանյան ամբողջ բանակը։ Սարբ-Մուստաֆան հազիվ է գլուխ պրծացնում՝ փախչելով Երևան։

Ավանդությունն այս սխրագործության մեջ մի բացառիկ անվեհեր դեր էլ վերապահում է մելիք Եգանի քրոջ աղջիկ Գայանեին, որը Վարանդայի մելիքի դուստրն էր և հետո պետք է մտներ կուսանոց ու փայլեր նաև գրչության արվեստի մեջ։

Եվ այսպես, Արցախը, կամ նոր անունով Խամսայի երկիրը, ոչնչացրել էր իր ամենաատելի թշնամուն՝ թուրքական

զորքը, որ նաև Նադիրի թշնամին էր։ Եվ Պարսից շահն առաջնորդվեց այն իմաստությամբ, որ ասում է՝ թշնամուս թշնամին իմ բարեկամն է։ Փաստորեն այդպես էր նաև հայ մելիքների համար։ Նրանք գիտեին, որ ջախջախված թուրքն իրենց հանգիստ թողնողը չէ։ Ուրեմն, անհրաժեշտ էր պատրաստվել նոր արհավիրքներ դիմագրավելու։ Իսկ այս դեպքում ամուր դաշնակից էր պետք, որն այդ ժամանակներում չէր կարող լինել ուրիշ մեկը, քան իր քաղաքական ու ռազմական վերելքն ապրող Նադիրը։

Նադիրը Հայաստանի փառավորված իշխանավոր մելիք Եգանին դարձրեց իր բարեկամն ու խորհրդատուն։ Պարսիկ պատմիչն ասում է՝ շահը ծերունազարդ մելիքին կոչում էր «բաբալըղ», որ իրենց լեզվով նշանակում է «հայրացու»։ Ռազմի փառքով ու քաղաքական նվաճումներով դեռևս չհրդփացած դաշար տիրակալը կարող էր իրեն թույլ տալ մի այդպիսի բարեկամություն հայ մելիքի հետ։ Իսկ Եգանն էլ օգտվում էր այդ հանգամանքից՝ իր հայրենիքի շահերը պաշտպանելու համար։ Նույն պարսիկ տարեգիրը վկայում է, որ Եգանի խնդրանքով ու խորհուրդներով Նադիրը բազմիցս օգնել է հայերին, նրանց տվել արտոնություններ, որոնք անպայման կմերժեր մնացած հպատակներին։ Նադիրը հենց մելիք Եգանի խորհուրդով էր բարեկամացել Հայոց կաթողիկոսի հետ, այցելել Էջմիածին, օժանդակել նրա վերակառուցումներին, հարգանքի ցույցեր արել հայոց հավատի նկատմամբ։

Եգանի խնդրանքով՝ Նադիրն ազատ է արձակել հազարավոր հայ դերիների, որոնք հավաքվել էին Արևելյան Հայաստանի տարբեր մասերից, Գանձակից ու շրջականներից և տարագրության պիտի քշվեին դեպի Պարսկաստանի խորքերը։ Երբ արևմտահայկական գավառների համար մղված ճակատամարտերում Նադիրի բանակը գերիներ էր վերցրել, նրանց մեջ կային տասնյակ հազարավոր հայեր, որոնք ևս ազատ արձակվեցին մելիք Եգանի խնդրանքով կամ նրա իսկ միջնորդությամբ գործին խառնված Էջմիածնի վեհապետի աղերսանքով։

Նադիրն ամեն կերպ ջանում էր նվաճել հայոց առաջնորդների, հատկապես մելիքների բարեկամությունն ու վստահությունը։

Ժամանակակիցներից մեկը՝ Սիմեոն Երևանցին, հայոց հանդեպ Նադիրի բարյացակամությունը բանաստեղծական պատկերով է ներկայացրել։ Ասում է. «Նատր շահ կոչեցեալն այնքան էր ահեղ ու զարհուրելի, մինչև քարինքն հալէին յահէն և յանուանէն», սակայն նա հայ մելիքների ու Աբրահամ Կրետացի կաթողիկոսի հետ այնպես էր բարեկամացել, որ սրանց ամեն տեսակ զիջումներ էր անում։ Նրանց միջնորդությամբ «զբազումս ազատեաց ի մահուանէ, զշատս իջոյց ի կախաղանէ, զբազմաց աչսն և զականջսն և զայլ անդամսն փրկեաց ի հատանելոյ և ի բրելոյ։ Զանհամար գերիս ազատեաց ի գերչաց։ Եւ զբազումս, զորս տանկացուցեալ էին կամաւ և թէ բռնութեամբ, յետս դարձոյց և առ ի ծառայս այլազգեաց» («Ջամբռ», էջ 30)։

Մելիք Եգանը վախճանվել է խոր ծերության մեջ։ Նրա տապանագրի մեջ ասվում է.

Եղև սիրելեալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին,
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին,
Յոյժ պատուեցաւ պարսից ազգէն,
Քան զիշխանս Հայոց երկրին։
ԹՃՂԳ (1744 թ.)։

Իսկ Տող ավանում գտնվող նրա ապարանքի շքամուտքի շուրջը փորագրված վիմագրում նա ինքն ասում է. «Ես թողեցի ոչ Հայաստանաս եռէր տալու», որ կարող է ամփոփ ու պերճախոս գնահատականը լինել մեծ մելիքի հայրենանվեր կյանքի ու գործունեության։

Եգանից հետո հայ մելիքները դեռևս վայելում էին Նադիրի բարեկամությունը։

Նադիրը չէր սխալվել իր հաշիվների մեջ։ Հայ մելիքներն ու ամբողջ ժողովուրդը բոլորանվեր վարձահատույց եղան շահի բարյացակամության համար և նրա հակաօսմանյան պատերազմներում՝ Գանձակում ու Շամքորում, հատկապես Ղզվարդի դաշտում բռնկված ճակատամարտին ցույց տվին մի այնպիսի խիզախ մասնակցություն, որպիսին նա չէր տեսել իր հին ու նոր ոչ մի դաշնակցից։

Հայերի ամենաեռանդուն աջակցությամբ Աբարատյան եր-

կիրը թուրքերից մաքրելով՝ Նադիրն անցավ Շիրակ, նվաճեց նրանից հարավ ու արևմուտք ընկած հայկական գավառները։ Տիրեց Կարինին, Երզնկային։ Թուրքիան ստիպված եղավ խաղաղության դաշինք կնքել՝ իր համար ստորացուցիչ պայմաններով։

* * *

Ժողովրդական իմաստությունն ասում է՝ բռնակալի հետ բարեկամ լինես էլ օձի, միևնույն է, վաղ կամ անագան թույն կխառնի բարեկամության հացին։

Նադիրը եթե ժանիքի տակ թույն էր պահել հայ «բարեկամների» համար, չհասցրեց խառնել նրանց հացին։ Թուրքերի և Դաղստանի հետ վարած պատերազմներում մի քանի ձախողանքները բավական էին, որպեսզի նա երևան հանի բռնակալի իր էությունը. հայ ելեկտեցու վրա հարկադրաբար դրեց, սկսեց անսանձ պահանջներ ներկայացնել հայ մելիքներին... Սակայն նա արդեն իսկ պատուհաս էր դարձել իր սեփական երկրի, նույնիսկ մերձավորների համար։ Այդ նրա հրամանով կուրացրին իր իսկ ժառանգին՝ Ռզակուլի Միրզային... Մինչև որ մերձավորներն սպանեցին նրան, և Իրանը, այս անգամ արդեն երկար ժամանակով, ընկղմվեց միջավատական կռիվների ու անիշխանության ճահիճը։

Հայ մելիքությունները մնացին օսմանյան Թուրքիայի և պարսկական կենտրոնական իշխանությունից անկախացած ու առավել սանձարձակ դարձած խանների մոլեռանդ թշնամության դեմ-հանդիման։

Ի՞նչ էր լինելու այս վիճակի վերջը։

Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Նադիրի շրջանի հայ մելիքներին, գոնե Արցախում ու Սյունիքում, փոխարինել են խելքով ու քաջությամբ նրանցից ո՛չ պակաս ժառանգները։ Սակայն նորերի ճանապարհին կանգնած էին ոչ միայն հին թշնամիները, այլև տանու գավառանությունը և սրան գումարված դրսից մի նոր բռնակալ, որը Պարսից շահի հրամանով խանի տիտղոս էր ստացել և պետք է կառավարեր հայ մելիքներին։ 1750-ական թվականների վերջից այդ խանը՝ Փանահը, նստում էր Շուշիի բերդում և կարճ ժամանակում, մանավանդ նրա որդի Իբրահիմ խանի օրերում, իր բուռն էր

հավաքել ոչ միայն խամսայի մեծ մասի, այլև Սյունիքի ու հարակից շրջանների տիրապետությունը։

Փանահը սարբազալը թուրքմեն վաշկատուն ցեղի ներկայացուցիչն էր։ 1730—40-ական թթ. իր ցեղակիցների ղլուին անցած ասպատակում էր դաշտային Ղարաբաղի, Գանձակի ու ավելի հեռու ընկած շրջանները։ Փորձեց նստակեցության դառնալ, նախ ամրացավ դաշտի Բայաթ բերդում, ապա այժմյան Աղդամի կողքին գտնվող հին Տիգրանակերտի ավերակների վրա (Շահ-Բուլաղ)։ Խամսայի մելիքները, որ նրա հարևանությունը համարում էին չարիք, ամեն անգամ խորտակեցին նրա ամրությունները և հեռու քշեցին իրենց սահմաններից։

Բայց հենց այս ժամանակ խամսայի ներսում տեղի ունեցավ մի տխուր միջադեպ, որը և պատճառ դարձավ, որպեսզի անհաճո հարևանության հավակնորդը դառնա մեծ իրավատեր տնկեց։ Վարանդայի մելիքության թափուր աթոռն սպօրինաբար գրավել էր Շահնազար անունով մեկը, և մյուս չորս մելիքներն այդ ուխտադրժությունն ընդունել էին թշնամաբար։ Նրանք փորձեցին դաս տալ ուզուրպատորին, և սա դաշնակցեց քոչվոր Փանահի հետ՝ նրան տրամադրելով Շոշ գյուղի թիկունքում բարձրացած ժայռի տափարակին գտնվող բերդը։ Հին-հին ժամանակներից ի վեր այս բնական անառիկ ամրությունը, որ կոչվում էր Բերդաքար, Քարագլուխ, Քարագլխի բերդ, իսկ վերջին ժամանակներում՝ նաև Շոշի բերդ կամ պարզապես Բերդ,— Վարանդայի բնակչության համար ամենահուսալի մի ամրոց էր պաշտպանական պատերազմների ժամանակ։ Հայտնի է, որ սղնախական կռիվների օրերում Ավան հարյուրապետն այստեղ էր ամրացել, այստեղից, Մեծ սղնախ կոչված այս լեռնածերպից էր գլխավորում Ղարաբաղի հայության աղատամարտերը թուրքական բանակների դեմ։ Լեռան՝ Կարկառ գետի վրա կախված դոշին հիմա էլ պահպանվում են կրկնապատերով ամրացրած, զորակայանի վերածված քարայրները, որոնք Մեծ սղնախի գեկավարների միջնաբերդն էին։

Եվ հիմա Մեծ սղնախը, լեռնաշխարհի պաշտպանության կենտրոնը, անցնում էր եկվոր մահմեդական բռնավորի ձեռքը։

Փանահը՝ Արցախական աշխարհում մշտական բնակություն հաստատած այդ առաջին ոչ-հայը, շատ շուտով սկսեց իր բարերարին օգտագործել որպես Շուշի էմանագին գործիք։ Շահնազարը պարտավոր էր իր զորքով մատնակցել մյուս մելիքներին հպատակեցնելու համար մղվող կռիվներին, դառնալ եկվոր կառավարչի հլու կամակատարը։

Շուշի բերդն ավելի ամրացնելով՝ խանը դարձավ անպարտելի։ Սկզբում հայ մելիքներն իրենք հարձակվեցին բերդի վրա, պաշարեցին այն, քանիցս պարկվեցին նրա բնական ամրություններին ու անխորտակելի պարիսպներին և համոզվեցով, որ Շուշի բերդն անառիկ է, Վարանդայի գյուղերն ու ավաններն ավերելով վերադարձան իրենց տիրույթները։ Խանի ու նրա գործակից մելիք Շահնազարի դեմ բորբոքված առելությունը քանդում էր Վարանդայի անմեղ հայության տները։ Սկիզբ դրվեց երբայրասպան մի պատերազմի, որը պիտի շարունակվեր այնչան ժամանակ, քանի կար մելիք Շահնազարը, և քանի դավաճանը խանի զինակիցն էր ու խորհրդատուն։ Այդ նրա խորհրդով էր, որ Փանահը պատժարշավի գնաց մելիքների վրա։ Խանի զորքերի հետ միասին հայության դեմ կռվում էին Վարանդայի զորաջոկատները։ Ազգակիցն ազգակցի դեմ։ Այսպես սկսվեց այն անփառունակ պատերազմը, որ թալանելու էր Խամսայի հիմքերը։ Նախ ծեկի բերվեց Խաչենի մելիքությունը, որին չհասցրին էլ օգնության հասնել Ջրաբերդն ու Գյուլիստանը։ Ապա, Խաչենը մեկուսացնելուց հետո, խանն ու նրա դաշնակիցը դեպի Թարթառի հովիտը։ Միաժամանակ դիմադրելուց հետո Ջրաբերդի տեր Հաթամ-Աղամն ու Գյուլիստանի տեր մելիք Հովսեփը, իրենց հպատակների բազմությունները առած, թողեցին-հեռացան հայրենի տիրույթներից, Գանձակի խանից բնակավայրեր ստացան Ղարաբաղյան լեռնաշղթայի հյուսիսային փեղերին։

1762 թ. մեռած Փանահին փոխարինել էր որդին՝ Իբրահիմը, որը հորից ավելի խորամանկ էր, ավելի մոլեռանդ ու դաժան։ Եթե հայը բռնավորը Խամսայի բնիկ տերերից պահանջում էր միայն հպատակություն, ապա որդին այլևս չէր հանդուրժում հպատակների հավատը։ Այդ նրա արյունոտ միջոցառումների հետևանքով էր, որ Դիզակի մելիքանիստ Տողի հայերի մի մասը, նույնիսկ հզոր մելիք Ոգանի ժառանգներից

շատերը, 1780-ական թվականներին դարձան մահմեդականություն։ Շոշի բերդի հարավային եզրին, Կարկառ ձորի պանկին կառուցվեց մի ահարկու բանտ, որի մութ պարունակներում մահ գտան Խամսայի մելիքական տոհմերի ներկայացուցիչներից ու հոգևոր առաջնորդներից շատերը, ժողովրդական հերոս շատ վրիժառուներ, լեռնատանի օրինական տերերը։ Բավական էր՝ խանը կասկածեր մեկի հավատարմությանը, բարեկամության երդումով իր մոտ էր հրավիրում և կամ իր գործակալների ձեռքով ճանապարհին էր հետքը կորցնում, կամ բանտ էր նետում, նրա կայքը վաճառում հարազատներին։

Ատաբեգական մելիք Հաթամն ու մելիք Հովսեփը պատուհաս էին դարձել Շուշիի խանի համար։ Միացած նրա թշնամի Գանձակի խանի հետ՝ քանի՞-քանի անգամ հարձակվեցին Շուշի բերդի վրա, Իբրահիմի ճանապարհները կտրած՝ լեռնային հեղեղի պես իջան նրա զորքի ու տնտեսական գումակների վրա, պատճառեցին մեծ վնասներ և կտրեցին նրա կապերը արտաքին աշխարհի հետ։ Վրիժառուների պայքարը խրախուսում էր նաև Վրաց թագավորը, որը ևս իր հաշիվներն ուներ Շուշի բերդի անօրեն տիրոջ հետ։ Մինչև Փանահի խան դառնալը նա էր Անդրկովկասի ամենազորեղ իշխանավորը, իսկ Հայաստանի ու Վրաստանի տնօրինությունը նրան էր տրվում, հենց որ Պարսից շահը դուրս էր թափում իր երկրի ներքին խժդժությունների և հիշում էր, իբր թե, ավանդական իր տիրակալության իրավունքը Հայաստանի և Վրաստանի վրա։ Բայց ահա, շահից խանի ու կուսակալի անսահմանափակ լիազորություններ ստացած Իբրահիմը փորձում էր ոտք ձգել Վրաց թագավորի հետ, դառնում էր նրա մրցակիցն ու ազդեցության ոլորտներին տիրացողը։

Իբրահիմ խանին ձեռնտու չէր, որ Խամսայի երկու քաջ մելիքները մնային իր թշնամիների թևում, և նա բանագնացներ ուղարկեց մելիք Հովսեփի ու մելիք Հաթամի մոտ՝ երդումհավատի ցույցերով նրանց հաղորդելու, որ կարող են վերադառնալ իրենց գավառները, ուր տեր կմնան ավանդական տիրույթներին և կլինեն խանի բարեկամներն ու հովանավորյալները։

Ջրաբերդի ու Գյուլիստանի մելիքները հավատացին Իբրա-

հիմ խանի հավատարիմությունները և վերադարձան։ Սակայն դա բոլորովին ձեռնտու չէր Գանձակի Շահվերդի խանին, որը պիտի զրկվեր երկու մելիքների քաջավարժ զորախմբերի ուժից։ Մանավանդ, երբ խանը համոզված էր, թե իրենից հեռանալով՝ այդ ուժը պիտի գումարվի իր թշնամու՝ Շուշի բերդի տիրոջ զորությանը։

Վերադարձը տեղի ունեցավ 1760-ական թվականների վերջին։ Եվ նույնքան արյունահեղ մարտերով, որքան տարաձգության ընթացքում։ Գրավոր աղբյուրներում պահպանվել են երկու մելիքների հայրենադարձության մանրամասները։ Ճիշտ է, մելիք Հովսեփի և մելիք Հաթամի վերադարձն առերես բարեկամությամբ ընդունեց Իբրահիմը, և առժամանակ խաղաղություն էր տիրում մելիքների ու հարևան մահմեդական իշխողի միջև։ Սակայն դա վտանգալից այն խաղաղությունն էր, որի ներքո իր նոր խարդավանքներն էր մտմտում Շուշի բերդի դուժան տիրակալը։

Եվ մելիքները հուսավառ իրենց հայացքները դարձրին դեպի հյուսիսի քրիստոնյա մեծ տերությունը։

Բարեբախտություն էր, որ այս ժամանակ նրանց գաղափարական առաջնորդը դարձավ Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը։ 1763 թ. ժառանգելով նվիրապետական աթոռը, հինավուրց իշխանական-կաթողիկոսական տոհմի այս գործունյա ժառանգն ամեն կերպ ջանում էր վերականգնել խամսայի ամբողջությունը։ Գործակցել էր Հովսեփ էմինի հետ, նամակագրական սերտ կապերի մեջ մտել հընդկահայ աղատագրական խմբակի և Ռուսաստանում հայ ժողովրդի ազատագրության խնդրով զբաղվող հայ ու ռուս գործիչների հետ։ Նրա նախաձեռնությամբ խամսայի ու Զանգեզուրի մելիքները պարբերաբար հավաքվում էին, քննում իրենց անելիքները, նամակներ հղում Ռուսական արքունիք, եռանդուն բանագնացություններով միշտ արթուն պահում ցարի ու նրա գործակալների ուշադրությունը հայոց ազատագրության հանդեպ։

Գանձասարը վերստին ստանձնել էր շարժման մշտաբորբոք օջախի իր դերը, և այնտեղից Ռուսական արքունիք ձգված ուղին դարձյալ այնքան բանուկ էր, որ այն օրերի փաստաթղթերին ծանոթանալիս թվում է, թե վերացել էր հաղարավոր մղոնների հեռավորությունը, և Ռուսաց արքունիքն ու Կարաբաղի լեռնաստանն իրար հետ նստել են մի գործնական համերաշխ ու համաշահ զրույցի, որի արդյունքն ահա շուտով պիտի ճառագի այս լեռնաշխարհի վրա՝ իբրև ազատագրության այգալույս։ Տեսեք, ի՜նչ արագությամբ ու վճռականությամբ են ծավալվում գործերը։ 1783 թ. հունվարի 2-ին կաթողիկոս Հովհաննեսը Գանձասարից թուղթ է հղում Եկատերինա Բ-ին՝ պատմելով, որ Ղարաբաղի կամ խամսայի հինգ մելիքությունները իրենց գլխավորներով՝ մելիքներով, հարյուրապետներով, հոգևոր առաջնորդներով ու ողջ բնակչությամբ՝ ավելի քան երեսուն հազար ընտանիք, խոնարհաբար հայտնում են իրենց հպատակությունը Ռուսական պետությանը և երդվելով երդում են այն օրը, երբ ռուս զորքը պիտի հաղթական արշավանք սկսի դեպի հարավային երկրները, օգնելով հայ ժողովրդին և նրա հարևաններին՝ ազատագրվելու նվաճողների անտանելի լծից։

Գանձասարի նվիրապետը թագուհուն հիշեցնում է նաև նրա նախնիների՝ Պետրոս Մեծի ու Եկատերինա Ա Ալեքսեևնայի տված խոստումները ու ստանձնած պարտավորությունները 1720-ական թվականների երանելի դեպքերի առթիվ, հույս է հայտնում, թե ոչինչ չպետք է փոխված լինի արքունիքի քաղաքականության մեջ՝ հայ ժողովրդի փրկության գործի վերաբերյալ, իսկ ինքը՝ հայությունը, առաջվա պես պատրաստ է ապրելու և կռվելու Ռուսական տերության հովանու ներքո, սերնդե սերունդ, հավիտյանս հավիտենից ծառայելու նրա ծաղկման ու բարգավաճման շահերին։

Հայոց երկրից գնացած գրությունները ցարին կամ արքունի գործիչներին էին հասնում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի և խոշոր վաճառական-արդյունաբերող իշխան Հովհաննես Լազարյանի միջոցով։ Հավանաբար այս երկուսը, ինչպես ուրիշ անգամներ, այստեղ էլ Գանձասարի կաթողիկոսին հասկացրել էին անմիջապես, որ Ռուսական արքունիքում բոլոր խնդիրները լուծվում են թագուհու սիրեկան իշխան Գրիգորի Պոտյոմկինի անմիջական մասնակցությամբ, իսկ հարավի երկրների հետ կապված հարցերը՝ հենց նրա ձեռքով, ուստի անհրաժեշտ է, որ հայոց թղթերը

գրվեն նաև նրա հասցեով կամ թերես միայն նրա հասցեով։ Կարևոր է, որ իշխան Պոտյոմկինի հետ հիշյալ երկու նշանավոր հայերն ունեին նաև սերտ բարեկամություն և հաճախ էին ունենում շփումներ, որոնց առանցքներում միշտ էլ լինում էր հայոց հարցը, կապված ռուսաց՝ դեպի հարավ կատարելիք արշավանքի հետ։ Նրանք հայտնում էին նաև, որ հարավային այդ արշավանքն էլ գլխավորելու է Գրիգորի Պոտյոմկինի ազգական զեներալ Պավել Պոտյոմկինը, որը հենց նոր նշանակված էր Հյուսիսային Կովկասի կառավարիչ և զորքերի հրամանատար։

Գրիգորի Պոտյոմկինը, իբրև ժամանակի Ռուսաստանի պետական խոշորագույն ու ամենահզոր գործիչը կայսրուհուց հետո, մտածում էր իր երկրի հարավային սահմաններն ընդլայնելու մասին և ժամանակն էլ համարում էր ամենահարմարը մի այդպիսի խիզախ ձեռնարկումի համար, քանի որ Իրանի պետական մեքենան խարխլված էր հիմնովին և անընդունակ էր վճռական դիմադրության, իսկ օսմանյան Թուրքիան ուներ իր ներքին ու արտաքին մաշող հոգսերը, և, որ շատ կարևոր է, Անդրկովկասում նրա տիրապետության դեմ անդիջում պայքարի մեջ էին քրիստոնեական երկու ժողովուրդները՝ վրացիներն ու հայերը, որոնց ռուսական կողմնորոշումը վաղուց հայտնի էր աշխարհին։

Իշխան Պոտյոմկինն անձամբ չէր կարող ռուսական բանակներն առաջնորդել դեպի հարավ։ Բայց հարկ էր, որ այդ արշավանքը գլխավորեր իր ամենավստահելի մի բարեկամը, որպիսին ճանաչվեց նրա ազգական զեներալ-պորուչիկ Պյոտր Սերգեևիչ Պոտյոմկինը։

Վերջինս մի ձեռներեց զինվորական էր և փորձված քաղաքագետ։ Իր հովանավոր-բարեկամի պես նա էլ սերտ կապերի մեջ էր ռուսական զինվորական շրջանակներում բարձր համբավ ու համարում ունեցող հայերի և հատկապես Հովսեփ Արղությանի ու Հովհաննես Լազարյանի հետ։ Վերջիններիս հաղորդած տվյալների հիման վրա ծանոթանալով Անդրկովկասի վիճակին և կայուն կապ ստեղծելով այնտեղ իրեն հենարաններ հանդիսանալիք հայ մելիքների հետ, զեներալը, ո՛չ առանց Արղությանի ու Լազարյանի օգնության, գործի մեջ է քաշում հայ ուրիշ եռանդուն գործիչների ևս, որոնք պետք է ապա-

հովեին իր ամենօրյա կապը Ղարաբաղի մելիքների և Գանձասարի ու Էջմիածնի կաթողիկոսների հետ։ Այդ եռանդուններից էին երկու ռուսահպատակ հայեր, որոնք ռուսական փաստաթղթերում կոչվում են Գաբրիել Կարախանով և Մկրտիչ Դեկազով։

Այսպիսով, սկսվում է քաղաքական ու դիվանագիտական կապերի մի խիստ ու աշխույժ ցանց, որի ծայրերը գտնվում էին Պետերբուրգում (Եկատերինա կայսրուհու արքունիքը), Սև ծովի դեղատեսիլ ափի Խերսոն վայրում (իշխան Գրիգորի Պոտյոմկինի ապարանքը, ուր համարյա միշտ լինում էր նրա բարձրապատիվ տերը), Կասպից ծովի հյուսիսային ափին (Գիորգիևսկ բերդը՝ զեներալ Պ. Ս. Պոտյոմկինի զորակայանը), ուսկից ծրագրվում էր Անդրկովկասի նվաճման արշավանքը, և Գանձասարի վանքում, ուր այդ ժամանակ դեռևս կենտրոնացած էին մնում Ղարաբաղի և հարակից հայկական շրջանների հոգևոր նվիրապետությունն ու աշխարհիկ իշխանության բեկորները։

Ասես ամեն ինչ դասավորվում էր հայոց ազատագրության ջահերին համապատասխան։

Եվ ահա 1783 թ. մարտի 6-ին Ղարաբաղի մելիքներն ու հոգևոր առաջնորդները վերստին հավաքվում են Գանձասար՝ գրելու հավատարմության ու պատրաստակամության նոր թուղթ՝ ուղղված ինչպես Պոտյոմկինին, այնպես էլ նրա ազգական զորավարին։ Այս թուղթը գրված է Գանձասարի կաթողիկոսության (իմա՝ նրա հովանու տակ գտնվող բոլոր թեմերի) Ղարաբաղի հինգ մելիքությունների անունից։ Թուղթն ստորագրել են կաթողիկոս Հովհաննեսը, արքեպիսկոպոս Մելքիսեդեկը, եպիսկոպոսներ Եսային, Գրիգորը, Հովհաննը, Հակոբը, Եղիազարն ու Իսրայելը, աշխարհիկ զեկավարներից՝ Ջրաբերդի տեր մելիք Հաթամ Իսրայելյանը (որդի Իսրայելի), Գյուլիստանի մելիք Սրբով Հովսեփյանը, Դանիել Մելիքբեկյանը, Գաբրիել Ջալալյանը և մելիք Իսրայելբեկյանը։

Ի՞նչ էր կազմում այդ շատ կարևոր նամակի բովանդակությունը։ Նախ՝ հավաստիացումներ ռուսների հանդեպ հայ ժողովրդի հավատարմության և զինակցելու անհուն պատրաստակամության։ Ապա հայտնվում էր, որ զեներալի ու Հովսեփ Արղությանի կողմից եկած լրաբեր հոգևորական Գաբրիելը

հաղորդել է ամեն ինչ, հատկապես այն հարցերը, որոնք մտահոգում են ռուսական հրամանատարությանը։ Եվ իրենք պատասխանում են՝ հայտնելով, որ Ղարաբաղի հայությունը պատրաստ է ընդունելու, ամեն տեսակ սննդով ու ձիերի կերով ապահովելու փրկարար զորքին, որքան էլ այն լինի մեծաքանակ։ Դա կարվի առանց որևէ դժվարության, քանի որ,— զեկուցում են նամակի հեղինակները,— երբ Նադիր շահն էր արշավել Անդրկովկաս՝ թուրքերին այնտեղից դուրս քշելու համար, նրա երեքհարյուրհազարանոց բանակը ամբողջ երեք տարի պարենավորվում էր բացառապես Ղարաբաղի հաշվին։ Պերճախոս տեղեկություններ են հաղորդվում երկրամասի գյուղատնտեսական մթերքների առատության, բնական բազմատեսակ անսպառ հարստությունների մասին, հարևան մահմեդական վարչական կազմավորումների ուժի ու կարողության և Իրանի ողորմելի վիճակի մասին։ Նրանք հանգամանորեն պատմում են նաև Շուշվա խան Իբրահիմի ապօրինությունները, հարևան խանությունների գործակցությամբ նրա կողմից նախապատրաստվող հակառուսական մեքենայությունները։ Այսքանից հետո պաղատագին խնդրում են շուշացնել խոստացած արշավանքը։

Այս նամակը գեներալ-պորուչիկ Պավել Պոտյոմկինին է հասել նույն թվականի ապրիլի 6-ին, այսինքն՝ գրվելու օրից ուղիղ մեկ ամիս հետո։ Ըստ երևույթին, մոտավորապես նույն ժամանակ, գուցե և ավելի վաղ, թուղթը հասել էր նաև իշխան Գրիգորի Պոտյոմկինին, որովհետև վերջինս ապրիլի 6-ին հատուկ հրամանով գեներալին տվել է հետևյալ հանձնարարությունը. «Շուշվա խան Իբրահիմին պետք է տապալել, քանի որ սրանից հետո Ղարաբաղը պետք է կազմի հայկական անկախ, Ռուսաստանից բացի ոչ ոքի [չենթարկվող] մարզ։ Դուք այնտեղ գործադրեցե՛ք ամբողջ ձգտումը, որպեսզի այս նոր մարզը կազմակերպվի ժողովրդի համար ամենաձեռնտու ձևով։ Սրա միջոցով է, որ հայկական մնացած ուժեղ նահանգներն էլ կամ կհետևեն նրա օրինակին, կամ մեծ թվով կգան Ղարաբաղ»։ Հրամանի մեջ կարևորագույն այս հանձնարարությանը հետևում են գեներալի տրամադրության տակ դրվող ցամաքային ու ծովային զինական ուժերի ու սպառազինության մասին հանգամանալից տեղեկություններ և ընտրությունն

այն ուղերթի, որը ռուսական զորքին առաջին անգամ պետք է հասցներ Ղարաբաղ։ «Դրա համար,—կարդացվում է իշխանը,— նախ անհրաժեշտ է նվաճել Դերբենդը։ Այս եղանակով դուք կմոտենաք Ղարաբաղին»։

Նույն այս հարցի կապակցությամբ Գրիգորի Պոտյոմկինը գրավոր տեղեկացնում է նաև կայսրուհի Եկատերինային՝ հաղորդելով իր ազգականին գրած նամակի բովանդակությունը և վերջինիցս կատարելիք կարևոր հետևությունը. Ղարաբաղում կազմակերպվելիք հզոր պետության գլուխ կանգնած կլինի մելիքներից մեկը, որի ջանքերով հայկական մյուս նահանգներն էլ կազատագրվեն, կմիանան այդ իշխանությանը։ Ուրիշ խոսքով՝ Ղարաբաղը դառնալու է ապագա հզոր հայկական պետության կորիզը։ «Այսպիսով,— Եկատերինա թագուհուն գրում էր Գրիգորի Պոտյոմկինը,— Ասիայում կվերականգնվի մի քրիստոնեական պետություն՝ համաձայն ձեր կայսերական մեծության խոստումների, որոնք իմ միջոցով հաղորդված են հայոց մելիքներին»։

Չի կարելի միամտություն ունենալ կարծելու, թե ռուսական արքունիքը Կովկասյան լեռնաշղթայից հարավ իջնելու իր պլանները գծելիս հենց միայն բարեգործական նպատակներ էր հետապնդում և իր առաջ սոսկ խնդիր էր դրել փրկելու դարերով տառապած, մահմեդական հարևանների անլուր բռնություններին ենթակա մի ժողովրդի, որպիսին հայությունն էր։ Ցարական պետությունը վաղուց ի վեր ցանկություն ուներ տիրելու Կասպից ծովի հարավային ու արևմտյան ափերին, Կովկասին ու Անդրկովկասին։ Սրագիրն իրականացնելու համար նրան վստահելի հենարաններ ու օգնական ուժեր էին պետք, ինչպիսիք էին Վրաց թագավորությունն ու հայկական մարզերը՝ տասնամյակներ շարունակ Մոսկվայի ու Պետերբուրգի տիրակալներին իրենց օժանդակությունն ու հավատարմությունը հավաստող հավատակից երկու ժողովուրդներով։ Ղարաբաղը հայկական միակ մարզն էր, որը դեռևս պահպանում էր իր վաղեմի քաղաքական իշխանության առողջ բեկորները և խոստանում էր ոչ միայն հավատարմություն և անդավաճան օգնություն ապագայում, այլև Անդրկովկաս ուղղ դնող ռուսական զորքին ապահովելու էր պարենով ու իր ռազմական աջակցությամբ։ Կան ռուսական առաջխաղացման

նախօրեին Գրիգորի Պոտյոմկինի՝ Հովսեփ Արղությանին ներկայացրած հարցացուցակի մանրամասները, որոնցում դրվատավոր տեղ էր բռնում պարենը, որը, ռուսական քաղաքականության ամենաազդեցիկ պաշտոնյայի կարծիքով, ամեն ինչի հիմքն է. «Ուր որ զորքը կուշտ է, այնտեղ նա գործունյա է։ Վա՜յ այն զորավարին, որն իր զորքերը կերակրելու մասին չի մտածում»։ Ղարաբաղի տերերը խոստանում էին «մինչև երեսուն հազար մարդ պահել 25—30 տարի (այսինքն՝ որքան անհրաժեշտ կլինի ռուսական տիրապետությունն Անդրկովկասում հաստատուն դարձնելու համար.— Բ. Ոհ.)՝ առանց որևէ պակասության...»։ Եվ սա դատարկ խոստում չէր։ Արքունիքի գործակալները քանիցս ստուգել էին տեղում ու համոզվել, որ զարաբաղցիների խոստումները համապատասխանում են ունեցած հնարավորություններին։

Եվ այսպես. ցարական Ռուսաստանի և հայ ժողովրդի շահերը համընկնում էին, և ոչինչ չէր խանգարում երկու կողմերի ցանկությունների իրականացմանը։ Լեոն ասում է. «Գործն այս անգամ, ըստ երևույթին, ամենաապահով ընթացքի մեջ էր։ Կայսրուհու խոստումները հաստատուն և անփոփոխելի էին երևում։ Կարևորն այն էր, մանավանդ, որ այդ գործն իր ձեռքն էր վերցրել Ռուսաստանի ամենաուժեղ մարդը՝ կայսրուհու սիրեկանը։ Հորիզոնի վրա չէր երևում ոչ մի փոքրիկ ամպ, որ մթնեցներ հայոց վաղվան հույսերը։ Առաջին հարվածը պիտի ոչնչացներ Իբրահիմ խանին։ Այդ քայլից էր սկսվում ամեն ինչ...»։

Սակայն Հենց այստեղ էլ, ինչպես ասում են, խոփը քարին դիպ առավ։ Կամ, ինչպես շախմատի լեզվով են ասում, Իբրահիմ խանը խալաձև հարվածով քայլ կատարեց, այն քայլը, որը մի թևով շախ է հայտարարում հակառակորդին, մյուս թևով հիմնովին խարխլում նրա ամրությունը։

Իբրահիմը սեղյակ էր մելիքների և արքունիքի քանակցություններին։ Տեղյակ էր, սակայն մարդ մտած սպասում էր նրանց։ Հենց այս ժամանակ էլ Վրաց Հերակլ թագավորը հայտնի դաշնագրով ընդունեց Ռուսաստանի հպատակությունը, և ռուսաց զորքերը մտան Թիֆլիս։

Իբրահիմ խանը ճարպիկ քաղաքագետ էր և չէր կարող չզուշակել, թե ի՞նչ կլինի իր վիճակը, եթե այդ զորքը մի օր

էլ Ղարաբաղի մելիքների ուղեկցությամբ մոտենա Շուշվա բերդին։

Ուստի նա փորձեց շուշացնել իր ծրագրած դիվանագիտական խաղի ցուցադրումն ըստ մասերի։ 1783 թ. ապրիլին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Գրիգորի Պոտյոմկին իշխանը կարգադրություն էր հղել իր ազգական գեներալ Պյոտր Պոտյոմկինին՝ Իբրահիմ խանին տապալելու և Ղարաբաղում հայկական նոր պետության հիմքը դնելու մասին, Պյոտր Պոտյոմկինին հասավ Իբրահիմ խանի նամակը։ Ի՞նչ էր գրում Շուշի բերդի տերը Կովկասի ռուսական զորքերի հրամանատարին։ Իբրահիմ խանը լորձնաշուրթ մի հաճոյախոսությամբ հայտնում էր, թե ինքը վաղուց ի վեր ցանկություն է ունեցել դառնալու «ամենամեծաշուք ռուսական գահի և անսպառ առատաձեռնությամբ գահակալող կայսրուհու հավատարիմ ու հաճկատար ստրուկը»։ Սակայն քանի որ մինչև այժմ չի ունեցել ոչ ծանոթներ, ոչ կապեր, ուստի և չէր կարողանում «մրտնել այն արահետը, որ տանում է դեպի այդպիսի մի երանություն»։ Դրա համար էլ իրեն մնում էր միայն վշտանալ և նախանձով նայել այն իշխանավորներին, որոնք վայելում են ռուսական տիրապետության հպատակությունը։

Շուշվա խանը չէր սխալվել, նրա «հպատակության» գիրն իսկապես ազդեցություն թողեց ռուս գեներալի վրա։ Սակայն վերջինս անմիջական վճռական քայլի դիմել չէր կարող, քանի որ ուներ խանի հանդեպ գործադրելու միանգամայն ուրիշ միջոցառումների կարգադրություն։ Նա Իբրահիմ խանի նամակի մասին շուտափույթ զեկույց ուղարկեց Գրիգորի Պոտյոմկինին, իսկ Իբրահիմին էլ պատասխանեց, թե ավելորդ են եղել ինչպես նրա վիշտը, այնպես էլ ամոթխածությունը. դեռ չի պատահել, որ ռուսական ցարի հովանավորությունը խնդրողներից որևէ մեկը չտանա այն։ Հետևապես, դա է այն եղանակը, որով ամեն մի տիրապետող ապահովապես կմնա իր վարչական իրավունքների տերը։

Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ հենց այստեղ էլ վճռվել է ամեն ինչ, և այս կետից սկսած Պոտյոմկինները սկսել են հովանավորել Իբրահիմ խանին կամ կատարել քայլեր, որոնք նրան պետք էին մղելու հայոց աղատագրության հարցը։

Գեներալ Պոտյոմկինի զեկույցը հասցեատիրոջը՝ իշխան Պոտյոմկինին է հասել Եկատերինա կայսրուհուն հանձնվելուց հետո։ Իսկ Եկատերինան, առանց իմանալու Իբրահիմի օ՛վ կամ ի՞նչ լինելը, իշխան Պոտյոմկինին հանձնարարել է ընդունել նրա հպատակությունը, եթե դա չի հանդիպի դժվարության կամ չի ունենա կասկածելի հետևանք։

Իշխան Պոտյոմկինը, կայսրուհու այս կարգադրությունն ստանալուց առաջ, ինչպես գիտենք, զորավար իր ազգականին կարգադրել էր տապալել Շուշվա խան Իբրահիմին և Ղարաբաղում ստեղծել հայկական հզոր իշխանություն՝ ապագա հայկական միացյալ, միայն Ռուսաստանին հպատակ պետության կորիզը։ Ինչպե՞ս վարվել այժմ, երբ հպատակություն է խնդրել Իբրահիմ խանը, և թագուհին էլ, իմանալով այդ մասին, կարգադրել է ընդունել նրա հպատակությունը՝ հետը կնքելով այնպիսի պայմանագիր, ինչպիսին որ արդեն կնքվել էր Վրաց Հերակլ թագավորի հետ։

Իշխան Պոտյոմկինը, որքան կարելի է դատել նույն թվականի մայիսի 19-ին իր ազգականին հղած նրա կարգադրությունից, այնքան էլ չէր հավատում Շուշվա խանի հավատարմության երդումին։ Սակայն քանի կար այդ երդմնաթուղթը, ապա ինքը պարտավոր էր ընդունել այնպիսի վճիռ, որը երաշխավորում էր խաղաղություն։ «Շուշվա Իբրահիմ խանի խոնարհությունը և նրա խնդրանքն իր հպատակությունն ընդունելու մասին՝ կանխում են նրա տապալումը,— գրում է իշխան Պոտյոմկինը։— Ձերդ գերազանցությունը, առանց իրականացնելու նախորդ հրահանգը՝ նրան տապալելու մասին, միայն նրան հայտնեցեք՝ [միակ] տուրքը, որ հարգում է համառուսաստանյան կայսրուհին, դա հավատարմությունն է։ Եվ այդպես, եթե նա կմնա աներեր միության մեջ և միշտ պատրաստ կատարելու բարձրագույնի կարգադրությունները, ապա կարող է հուսալ, որ կընդունվի նրա հպատակությունը»։

Դառնալով Ղարաբաղի բնակչության հարցին, իշխանը գրում է. «Ձերդ գերազանցությունը թող շոյի հայերին և սնի նրանց տրամադրվածությունը Ռուսաստանի հանդեպ՝ միշտ ունենալու համար նրանց ջանասիրությունը և պատրաստակամությունը կատարելու [բոլոր] միջոցառումները, որ կպահանջեն հանգամանքներն ու մեր գործերի շահը»։

Իշխան Գր. Պոտյոմկինի վերաբերմունքը Ղարաբաղի հայության նկատմամբ բռնելիք դիրքի հարցում առավել ցայտուն դրսևորված ենք տեսնում հենց նույն օրը (մայիսի 19-ին) նույն խնդրի կապակցությամբ կայսրուհուն գրած զեկույցի մեջ։ Այստեղ նա հայտնում է, որ արդեն կարգադրված է եղել ընդունելու Շուշվա Իբրահիմ խանի հպատակությունը։ Այնուհետև, «Անհրաժեշտ է նկատի առնել, որպեսզի նրա մարզը (Ղարաբաղը.— Բ. Ոհ.), որը կազմված է հայ ժողովրդից, հանձնել ազգային վարչության և դրա միջոցով Ասիայում վերականգնել քրիստոնեական մի պետություն, ինչպես որ [եղել են] ձեր կայսերական մեծության բարձրագույն խոստումները՝ իմ միջոցով տրված հայ մելիքներին»։

Այսքանից հետևում է, որ Իբրահիմ խանի հավատարմության երդումը, որին, ինչպես քիչ հետո կտեսնենք, այնքան էլ հավատ չէին ընծայում ցարական կառավարության ներկայացուցիչները, ոչ մի չափով փոփոխություն չի մտցրել Ղարաբաղին ու հարակից շրջաններին, հատկապես հայկական Ղարաբաղին վերաբերող ռուսական պլանների մեջ։ Բնական է, որ այդպիսի մի բացահայտ հանգամանքը կհասկանար նաև այնքան խորամանկ քաղաքագետը, որպիսին Իբրահիմ խանն էր։ Եվ հասկանալի է նաև, թե ինչո՛ւ նա, ռուսներին հավատարմության ու հպատակության երդումներ ուղարկելուց անմիջապես հետո էլ սկսել էր ավելի ամրացնել Շուշվա բերդը և ռազմական նոր պատրաստություններ տեսնել բերդի ներսում։

Այս երկերեսանությունը գաղտնի չմնաց գեներալ Պ. Ս. Պոտյոմկինից, որին զանազան աղբյուրներ հաղորդել էին, թե խանն ինչպես է նախապատրաստվում դիմագրավելու ռուսական արշավանքին։ Գեներալը Հերակլին գրած մի նամակում (հունիսի 28-ից) այդ ամենը հիշում է հեգնանքով։ «Նորին կայսերական մեծության զորքերի համար սարսափելի չեն այդպիսի ամրությունները,— գրել է գեներալը։— Սակայն անհարմար է հանդուրժել երկերեսանությունը»։ Հերակլից խնդրելով Շուշվա խանի մասին հաղորդել մանրամասն ու ճշգրիտ տեղեկություններ, գեներալը հիշեցնում է, որ եթե այդ Իբրահիմ խանը փոփոխում է կայսրուհու հպատակությունը, ապա պարտավոր է լինել ամենից առաջ անկեղծ ու աղնիվ և

ապավինել միայն նրա մեծահոգությանը և ոչ թե հույս դնել ինչ-որ «կասկածելի ամրություններին» վրա։

Անկասկած, ռուս գործիչները լավ էին ճանաչում Իբրահիմ խանին։ Ահա թե գեներալ Պոտյոմկինն ինչ էր գրում իր ազգականին. «Ես չեմ կարծում, թե կարելի է հավատալ այս խանի հայտարարություններին, քանի որ նա ծայրահեղորեն վրատահելի է Թուրքերի համար և հիմա սոսկ փնտրում է [առիթները] մեզ քնացնելու համար՝ վախենալով, թե մենք հայերին օժանդակություն ցույց տալով՝ իրեն կտապալենք»։

Այս անվստահությունն էլ պատճառ է եղել, որպեսզի ռուսները Շուշվա խանի հետ կնքելիք պայմանագրին առանձին կարևորություն չտան, մանավանդ որ հենց նույն ժամանակ էլ նրանք իսկապես լրջորեն զբաղված էին հայոց պետականության վերականգնման հարցի քննությամբ։ Դրա համար իշխան Պոտյոմկինը նույն թվականի նոյեմբերին Շուշվա խանին հղելով մի անորոշ պատասխան՝ պահանջում էր ավելի կոնկրետ գծերով ներկայացնել իր առաջարկներն ու խնդիրքը։

Պահպանված փաստաթղթերը հաստատում են, որ ռուսների անվստահությունն Իբրահիմ խանի հանդեպ միանգամայն արդար է եղել և ունեցել է իրական անհերքելի հիմքեր։ Այն քայլերից հետո, որ Իբրահիմը կատարել էր՝ իր թե դաշնալու «ամենամեծաշուք ռուսական գահի և անսպառ առատաձեռնությամբ գահակալող կայսրուհու հավատարիմ ու հաճելի ստրուկը» (այսինքն՝ 1784 թ. ամռանը), նույն Իբրահիմը, Դերբենդի Ֆաթալի խանի ու Խոյի Ահմեդ խանի հետ միասին, թուղթ է հղել Թուրքիայի սուլթանին՝ հաստատված այդ երեքի, ինչպես նաև Դաղստանի մի շարք ցեղապետների և այլ վայրերի խաների կնիքներով։ Եվ այս թուղթն էլ նրա համար էր, որպեսզի սուլթանն իր հովանու տակ առնի թղթի հեղինակներին։ Հովանավորության խնդիրքն էլ քիչ էր, նրանք սուլթանին վստահեցնում էին, որ իրենց ձեռքի տակ կան մեծաքանակ զորքեր, և միայն փողի կարիքն է, որ իրենց նեղում է։ Ա՛յ, եթե սուլթանն իրենց ապահովի փողով ևս, այն ժամանակ իրենք առանց այլևայլության կկանխեն Ռուսաստանի առաջխաղացումը և իրենց հպատակեցնելու վտանգը... Շատ չանցած նրանք ստանում են իրենց խնդրածը. 1785-ի սկզբին Թուրքաց նվիրակները Իբրահիմ, Ֆաթալի և Ահմեդ

խաներին են հասցնում սուլթանի ընծաները՝ յուրաքանչյուրին հարյուր հազար ոսկի և թանկարժեք իրեր։ Մահմեդական բնակչությանը ոգևորելու նպատակով սուլթանի նամակները հանդիսավոր պայմաններում կարդացվել են մզկիթների կամարների ներքո և հետո էլ կոչ է արվել, որպեսզի «բոլոր մահմեդականները չանան պաշտպանել իրենց հավատը և ռուսներին թույլ չտան գրավել Կովկասը»։

1785 թ. ամռանը Հյուսիսային Կովկասում, թուրքական սուլթանի հրահրումով և շեյխ Մանսուրի գլխավորությամբ, բռնկվեց հակառուսական մի շարժում, որը շատ կարճ ժամանակում ընդգրկեց չեչեններին, լեզգիներին, կաբարդացիներին ու մյուս ցեղերին, և ռուսական զորամասերի դեմ մեկը մյուսի հետևից ձեռք բերած մի քանի մասնակի հաջողություններից հետո ստեղծվեց այնպիսի վիճակ, երբ տեսականորեն ռուսները կտրվել էին Անդրկովկասից։ Ռուսական հրամանատարությունը նույնիսկ հնարավորություն չուներ պարենն ու ռազմիկ ուղարկել Վրաստանում գտնվող իր երկու գումարտակներին։ Ռուսական զորքում աջակցությունից կտրված Հերակլ թագավորի համար դա մի անտանելի ապետ էր, քանի որ հարևան թուրքական խանությունները հիմա անպատիժ կերպով գրգռում էին նրա երկրի մարմինը՝ իբրև «վարձատրություն» Վրաց թագավորի ռուսական հպատակության։ Հերակլն այս առթիվ Գրիգորի Պոտյոմկինին գրել է. «Մեր շրջապատի բոլոր այլացեղ հակառակորդները... ոտքի են ելել մեր դեմ և ուզում են թափել իրենց թույնը, որ հնուց ի վեր կուտակած ունեին»։

* * *

Պատմական դեպքերի մեջ հիմնականում վճռական դեր են խաղում գործողությունը գլխավորող անհատների վերաբերմունքն ու տրամադրվածությունը։ Հովսեփ Արղությանն ու Հովհաննես Լազարյանն անվերջ աշխատում էին ժամանակի Ռուսաստանում դեպքերին ընթացք տվող մեծ անհատների աչքը քաղցր պահել հայոց հարցի վրա։ Նույնն անել էին պահանջում նաև բուն Հայաստանում գործի գլուխ եղած հոգևոր ու աշխարհիկ իշխանավորներից, Հնդկաստանում հայրենիքի փրկության երազանքով ապրող հայրենասերներից։ Սրբ-

տահաճ խոսքով փափկացրե՛ք նրանց հոգիները, թանկագին նվերներով ու անուշ խոստումներով ջերմացրե՛ք նրանց,— այս խարհուրդները տիրական էին հայրենակիցների հետ ունեցած նրանց բանավոր ու գրավոր զրույցներում։ Իշխան Գրիգորի Պոտյոմկինին՝ Եկատերինայից հետո կայսրության առաջին մարդուն, նրանք կոչում էին ոչ այլ կերպ, քան «Հայոց խնամակալ», «Հայոց հովանավոր», և այս նոր տիտղոսը շատ էր շոյում իշխանին, շատ էր պարտավորեցնում նրան՝ ի կատար ածելու «աստուծո կողմից» իրեն շնորհված եղակի դերը հայ ժողովրդին անհավատների լծից փրկելու համար։ Իշխան Պոտյոմկինի անունից Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկասին գրած թղթում գեներալ Պոտյոմկինն ասում է՝ «աստված ինքն է կայսրուհու «մեծ ու մարդասեր սրտին հուշել պաշտպանելու բազմաչարչար Հայաստանը և ազատագրելու նրա հաշակավոր ժողովրդին»։ Ինչ վերաբերում է իրեն, ապա ինքն էլ,— շարունակում է գեներալը,— «աստծո կողմից կոչված է իրականացնելու այս մեծ նախաձեռնությունը։ Այսքանից հետո նա կաթողիկոսին հայտնում է, որ ռուսական կայսրությունը հսկայական զորքով գալիս է Հայաստանն ազատագրելու նրան հողոտող օտարների ճանկերից,- և անհրաժեշտ է, որ նախօրոք հայտնի լինի, թե ինչպես է լուծվելու կովողներին սնունդ մատակարարելու հարցը։ Գեներալը վստահեցնում է, որ իրենք ձրի չեն վերցնի և ոչ մի հատիկ ցորեն, սակայն լավ կլինի, որ նախապես մթերվի համապատասխան քանակությամբ պարեն, որպեսզի զորքը կարողանա այն ստանալ մատչելի գնով։

Ղուկաս կաթողիկոսը, ճիշտ է, երազում էր ռուսների հաղթական մուտքը Հայաստան, քանի որ դրանից հետո միայն հայ ժողովուրդը պիտի փրկվեր այլազգիների ճնշումից և պիտի լծվեր բարեշինության։ Դրա համար էլ նա խոստանում է աղոթել ռուսների հաղթանակի համար։ Իսկ պարենի կամ ուրիշ օգնության մասին «խոհեմաբար» լռում է, գեներալի ուշադրությունը դարձնելով Արցախի վրա։

Ամենայն Հայոց կաթողիկոսի այս դիրքը հայտնապես հեգնեց Հովսեփ Արղությանը, գրելով, թե նրանց նմանները ռուսական միապետությունից «միայն հայցին, թե զմեզ փրկեցեք», իսկ մենք ձեռքներս կրծքներիս խաչած սպասում ենք ձեր

փրկարար գալուստին։ Էլ չեն մտածում, որ ովքեր էլ լինեն փրկարարները, «երբ փրկեն սրով, ըստ օրինի թագաւորաց, հարկաւորին ծառայ առնել իւրանց»։

Հարցին այդպես չէին մոտենում Ղուկասի ենթակաները Գանձասարում, ինչպես նաև այն մելիքները, որոնց Ղուկաս կաթողիկոսն ազատ ու ինքնիշխան էր համարում, մինչդեռ իրականում գերմարդկային ճիգերով թպրտում էին Իբրահիմ խանի խարդավանքների ցանցում։

Գեներալ Պոտյոմկինը համանման նամակ էր հղել նաև Գանձասարի կաթողիկոս Հովհաննեսին ու Արցախ-Ղարաբաղի մելիքներին։ Այս նամակը ցայսօր չի հայտնաբերվել։ Նրա բովանդակության մանրամասներն իմանում ենք ղարաբաղցիների պատասխանից, որի մեջ նրանք խոստանում են ռուսական զորքին պարենով ապահովել ձրի և ցույց տալ գինական ամենայն աջակցություն։ Նրանք այս նույն խոստումները տվին և ամենայն պարտավորություններ հանձն առան նաև հաջորդ նամակներում, որոնք մեկը մյուսի հետևից հասնում էին արքունիք և նրա հետ իրենց կապող հայ գործիչներին։

* * *

Սակայն դեպքերը զարգանում էին ոչ հայոց իղձերի համաձայն։ 1784 թվականից սկսած՝ թուլանում է ռուսական ազդեցությունը Կովկասում ու Անդրկովկասում, որովհետև Հյուսիսային Կովկասի մանր ցեղերը ցույց էին տալիս ըմբոստության նշաններ, և ռուսական զինվորությունը նրանց խաղաղեցնելու գործով էր մտահոգված։ Ճիշտ է, հաջորդ տարին բարենպաստ պայմաններ էր տրամադրել ռուսներին՝ Անդրկովկասը նվաճելու համար, և պատահական չէ, որ Հովսեփ Արղությանը Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին հույս էր տալիս, թե «գիտասցիք, զոր ինչ լինելոց է, յայսմ ամի կատարումն լինելոց է...», և հաղորդում էր սրտապնդիչ տեղեկություններ։

Հովհաննես կաթողիկոսը նրան պատասխանել էր, թե իրենց վիճակը շատ է ծանրացել, քանի որ Իբրահիմ խանը, ռուսական օգնության հապաղումից ոգևորված, այնպես որոշություններ է լարել իրենց շուրջը, որ նույնիսկ չեն կարողանում մեկ-

տեղ հավաքվել, որպեսզի պայմանավորվեն անելիքների մասին։ Բայց, չնայած այս բոլորին, իրենք համառորեն կանգնած են իրենց նախկին դիրքում, պատրաստ են վճռական մարտի համար, և նույնիսկ մելիք Շահնազարն էլ իրենց կողմն է անցել ու պատրաստ է մասնակցելու հակաթանական միջոցառումներին։

Հովհաննես կաթողիկոսն ու մելիքները միաժամանակ Արզումյանի մոտ՝ Ասատրախան են ուղարկում Դանիել Հովհաննիսյան անունով իրենց ներկայացուցչին՝ նպատակ ունենալով Արզումյանին հանդամանորեն տեղեկացնելու իրենց վիճակի մասին և կոնկրետ իմանալու՝ պիտի դա՞ն ռուսները, թե՞ ոչ։ Մելիքները խնդրել էին հաղորդել, թե «բավական է՝ ռուսական բանակը հասնի Գանձակ, որպեսզի իրենք նրանց միանալով նվաճեն ոչ միայն ամբողջ Ղարաբաղը, այլև Շուշին»։

Սակայն այդ ուսում ևս բախտը նրանցին չժպտաց։ Ռուսները չկարողացան տիրել Անդրկովկասին, ավելին՝ չկարողացան իրենց երկու դիմադրատակ զորքը, որ բնկալի դեր էր կատարում, պահել Վրաստանում։

Շուշվա խանի ոդորմածությանը հանձնված հայ մելիքների ու հողեոր առաջնորդների վիճակը դարձել էր անտանելի։

1787 թ. հուլիսին Կովկասի ռուսական զորամասի հրամանատար Բուրնաշովը գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին գրավոր զեկուցում է Ղարաբաղի հայության ծանր վիճակի և Իբրահիմ խանի կամայականությունների մասին։ Գրում է, որ հուլիսի 1-ին Ղարաբաղից իր մոտ է ժամանել մելիք Բախտամի որդին, որը պատմել է, թե ինչպես արքունիքի լրաբեր Կաշրիել Կարախանովին բռնելուց և հարցաքննելուց հետո Իբրահիմը կալանավորել է Գանձասարի կաթողիկոսին ու Ղարաբաղի բոլոր մելիքներին։ Վերջիններս ենթարկվելով անասելի տանջանքների, խոստովանել են իրենց կապերը ռուսական արքունիքի գործիչների հետ, հանձնել են Պոտյոմկինից ստացած նամակներն ու եվերները։ Կաթողիկոսը մահացել է, և խանի գործակալներն էլ կողոպտել են Գանձասարի վանքը։ «Հիմա հայերն այնտեղ ծայրահեղ ճնշման տակ են,— շարունակում է Բուրնաշովը։— Իբրահիմ խանը մելիքներից վերցրել է 15000-ական ռուբլի և նրանց ազատ արձակել։ Նրանք իրեն (մելիք Բախտամի որդուն.— Բ. Ոհ.) գաղտնի ուղարկել են

ցարի մոտ՝ խնդրելու ազատագրություն, հայտնելով նաև, որ իրենք բոլորը պատրաստ են ուղղելու զենքն իրենց հարստահարողի դեմ, հենց որ նորին բարձրությունը հայտնվի Ղարաբաղում»։

Ժամանակի պաշտոնական թղթերում ամենայն մանրամասնությամբ ներկայացված են Ղարաբաղի հայության, ինչպես և առհասարակ հայոց ազատագրության գործի համար ճակատագրական նշանակություն ունեցող այս դեպքերը։ Գեներալ Պոտյոմկինի ու Ղարաբաղի մելիքների կապը հաստատուն պահող Գաբրիել Կարախանովին մատնել են Գանձակում, և սկզբում նա կալանքի տակ է առնվել իբրև ինչ-որ պարտքերի պատճառով։ Իսկ երբ հասցրել են Շուշի, արդեն տանջահարելով քննել են իբրև Պոտյոմկինի գործակալի։ Գեներալի այն հարցին, թե ինչպե՞ս է պատահել, որ Կարախանովը խանի ձեռքն է տվել մելիքների անունները, Բուրնաշովը գրավոր պատասխանել է. «... Երբ նա տարվել է Շուշի, այնտեղ արդեն հայտնել է, թե նամակներ է բերել Գանձասարի կաթողիկոսին ու մելիքներին, որոնք և շարչարանքների ենթարկվելուց հետո խոստովանել ու հանձնել են նամակները և նվերները»։

Հովհաննես կաթողիկոսի եղբայր Սարգիս Ջալալյանցի բացատրությունից էլ պարզվում է, որ կաթողիկոսը ոչ թե մահացել է հարցաքննությունից ու տանջանքների ենթարկվելուց, այլ նրան մահադեղ են տվել խանի հրամանով։ Որ կաթողիկոսին թունավորելով են սպանել, հաստատվում է նաև Հովսեփ Արզումյանի և մելիք Շահնազարի որդու հաղորդած զույգ տեղեկություններից։

Իսկ մելիք Աբովն ու մելիք Մեջլումը, որոնք եղել են Իբրահիմ խանի կողմից կալանքի տակ առնվածների ու տանջահարության ենթարկվածների մեջ և փախել են բանտից, հետագայում (1788 թ. հունվարին) իրենք են Գրիգորի Պոտյոմկինին գրավոր բացատրել, թե Իբրահիմը միշտ էլ նպատակ է ունեցել հաշվեհարդար տեսնելու իրենց հետ, սակայն վախեցել է ռուսներից՝ տեսնելով նրանց հովանավորությունը։ Հետագայում Սակայն երբ համոզվել է, որ կայսրուհու՝ Վրաստանի նկատմամբ ունեցած բարյացակամությունը չի զերաճում ու չի տարածվում հայ մելիքների վրա, դարձել է

սանձարձակ ու անմիջապես գործի է անցել, իրենց կանչելով Շուշի, իբր բարեկամական խորհրդի համար, հետո ուխտադրժորեն կալանքի տակ է առել ու նետել բանտ։

Բանտում սպանվել է նաև մելիք Բախտամը՝ Դիզակի տերը, ապա անպտուղ մնացած նրա տիրույթում սկսվել են անսանձ կամայականությունները, որոնց արդյունքն այն եղավ, որ բռնությամբ մահմեդականացվեցին մելիքանիստ Տողի հայ բնակչության մի մասը, նույնիսկ Մելիք-Եգանյան տան ներկայացուցիչներից շատերը։

Այս բոլորը, ինչպես նաև Հովհաննես կաթողիկոսին մահադեղով սպանելը, տեղի է ունեցել 1787-ի գարնանը, համենայն դեպս մինչև ամառը, քանի որ Բուրնաշովը գեներալ Պոտյոմկինին այս առիթով զեկույց էր հղել 1787-ի հուլիսին։

Շուշվա բանտում գտնվող մելիքներին հաջողվեց մի վերջին փորձ ևս կատարել ստանալու ռուսների զինական օժանդակությունը։ Նրանք, մելիք Բախտամի որդուն գաղտնի ուղարկելով Բուրնաշովի մոտ, ռուս հրամանատարությանը հաղորդեցին իրենց վիճակի մանրամասնությունները և աղերսեցին օգնություն։ Խնդիրքն ուղղված էր նաև Հերակլ թագավորին. մելիքները հայտնում էին, թե բավական է վրաց ու ռուսական զորքերը երևան Ղարաբաղի սահմաններում, որպեսզի իրենք միավորված ուժերով հարձակվեն ու ջախջախեն խանությունը։

Հերակլը ցանկանում էր օգնել մելիքներին։ Նրա համար Շուշվա խանն այլևս անհանդուրժելի մի թշնամի էր, քանի որ տարբեր ակունքներից քաղված լուրերը միահամուռ ապացուցում էին, որ Իբրահիմն ու անդրկովկասյան մյուս խանությունները, Թուրքիայի թելադրանքով հավատի պատերազմ են նախապատրաստել քրիստոնեության դեմ, և ահա ուր որ է կռիվ կսկսվի մի այնպիսի թափով, որպիսին չի եղել վաղուց ի վեր։ Հերակլը դեռևս 1787-ի մայիսի 25-ին էր Պ. Ս. Պոտյոմկինին հաղորդել, որ Իբրահիմ խանը, Ախալցխայի փաշա Սուլեյմանը, Էրզրումի, Գանձակի ու Դաղստանի խաները որոշել են միացյալ ուժերով գրավել Երևանը։ Ապա տեղեկացնում է, որ «Շուշվա Իբրահիմ խանն ամեն կերպ ջանում է չարագործություն անել մեր դեմ, նա իր գործակալներին հղել է տարբեր տեղեր, այսինքն՝ Ախալցիխա, Էրզրում ու Դաղստան,

օգնություն է խնդրում նրանցից, որոնք և հպատակ ունեն կարճ ժամանակից հարձակվել մեր թագավորության վրա»։

Սեպտեմբերի սկզբին Հերակլի ու Բուրնաշովի զորքերը բանակ են դնում Գանձակի արևմտյան մատույցներում։ Մերձակայքի հայ բնակչությունը խանդավառությամբ է դիմավորում նրանց։ Սակայն, տեսնելով նրանց փոքր քանակը և հույս չունենալով, թե այդ փոքրաքանակ զորքով հնարավոր կլինի հաղթել հակառակորդներին, նրանք դիմում են մի անհույս քայլի՝ Հերակլին խնդրում են իրենց վերաբնակության տեղ տալ Վրաստանում։ Շուտով (սեպտ. 13-ին) բանակատեղի է հասնում նաև Ղարաբաղի մելիքների սուրհանդակը և հաղորդում, որ «Մելիք Աբովը, փրկվելով կալանքից, Շուշուց փախել է, իր ժողովրդի հետ ամրացել բերդում (երևի Դյուլիստան ամրոցում.— Բ. Ոհ.), այսպես էլ՝ նաև մելիք Մեջլումը, և սպասում են թագավորի օգնությանը, քանի որ նրանք բացահայտորեն ապստամբել են Իբրահիմ խանի դեմ»։ Հակառակ դեպքում նրանք ևս խնդրում են իրենց 12 հազար տուն հպատակներին հնարավորություն տալ վերաբնակվելու Վրաստանում։

Հերակլ թագավորն ու Բուրնաշովը որոշել էին շարժվել դեպի հարավ, որ պիտի նշանակեր օգնել Ղարաբաղի մելիքներին՝ լուծելու ոչ թե վերաբնակության, այլ իրենց ավանդական հայրենիքում ազատ ապրելու, իրենց բախտի տերը մնալու հարցը։

Եվ հենց այս ժամանակ էլ բանակատեղի է հասնում գեներալ Պոտյոմկինի սուրհանդակը՝ Բուրնաշովին հանձնելու մի հրահանգ, որով կարգադրվում էր ռուսական զորքն անմիջապես հանել Վրաստանից՝ ռուս-թուրքական պատերազմին մասնակցելու համար։

Անդրկովկասցիների համար ծանր այդ կարգադրության մասին տեղեկանալով՝ Հերակլը Բուրնաշովին խնդրում է զորքերի հեռաշարժը հետաձգել գոնե մի քանի օրով, որպեսզի «չոչնչանան Գանձակի հետ կնքվելիք պայմանագիրը և հայ մելիքների փրկության գործը»։ Սակայն Բուրնաշովը անդրդվելի մնաց և անհապաղ կատարեց վերին հրամանատարության կարգադրությունը։

Բանն այն էր, որ օգոստոսի սկզբին Թուրքիայի սուլթանը Ռուսական կայսրությունից ետ էր պահանջել Ղրիմը և, հա-

վանաբար, մերժում ստանալով, նույն ամսի վերջին (օգոստ. 21-ին) հայտարարել պատերազմ։ Թուրքաց դեմ Սև ծովի ափերին ծավալված պատերազմը գլխավորում էր գեներալ-ֆելդմարշալ Գրիգորի Պոտյոմկինը։ Այդ պատերազմի մեջ պիտի ներքաշվեին բոլոր այն ուժերը, որոնք ռուսաց հրամանատարությունը նախատեսել էր Անդրկովկասն ու Հայաստանը գրավելու համար։

Ռուսաստանն ստիպված էր առժամանակ մոռանալ Անդրկովկասը և Թուրքերի դեմ վարել իր ամենաճակատագրական պատերազմներից մեկը։

Դրությունն առավել ծանրացավ նրանով, որ Ռուսիայի հին թշնամիներից մեկը՝ Շվեդիան, նախապես դաշնագիր կնքած լինելով Թուրքիայի հետ, հյուսիսից պատերազմի նետվեց Ռուսական կայսրության դեմ։

Օրհասական էր Ղարաբաղի ապստամբ մելիքների և առհասարակ հայության վիճակը։ Ռուսների օգնությունից զրկված հայ ժողովուրդն ասես երկաթե վանդակ էր նետված, և նրա վրա բաց էին թողել սանձակոտոր մի գիշատիչ։

Հետագա տասնամյակները մեծ փորձություններ բերեցին հայ մելիքությանը։ 19-րդ դ. առաջին քառորդում նրանք, հայ զինվորության գլուխն անցած, ռուսական բանակների հետ կռվում էին այն ճակատագրական մարտերում, որոնց տրամաբանական արդյունքներն էին 1801, 1805, 1813 թվականների ռուսական հաջողություններն ու ծավալումներն Անդրկովկասում, 1828-ի փետրվարի 10 (22)-ի Թուրքմենչայի հայտնի դաշնագիրը, որի համաձայն՝ Արևելյան Հայաստանը վերջնականապես միացավ Ռուսական կայսրությանը, և հայ ժողովրդի մի մասը մեկընդմիշտ փրկվեց պարսկական ու թուրքական բռնատիրությունների ճիրաններից։

Ցարական արքունիքը վերացրեց մելիքական իշխանությունը՝ իբրև վարձատրություն այն հավատի, հավատարմության և անձնազոհ ծառայությունների, որ շուրջ մեկ հարյուրամյակ մելիքներն էին ցուցաբերել կայսրության ու նրա ներկայացուցիչների հանդեպ։ Տեղական այս իշխանությունների ներկայացուցիչներից շատերին տրվեցին ազնվական տիտղոսներ, որոնցով նրանք օգտվում էին ինչ-ինչ կալվածատիրական իրավունքներից։ Արխիվներում պահպանվում են բազմաթիվ

նյութեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես մելիքների ժառանգները դեռևս կառչած էին մնում իրենց տոհմական տիտղոսներից և հաճախ դատարանների դռներն էին ծեծում՝ տիտղոսները հաստատելու, իրենց արտոնություններին տեր կանգնելու համար։ Պահպանվել են, օրինակ, Գեղարքունիք-Սոդքի և Վարանդայի Մելիք-Շահնազարյանների վարած դատական գործերը՝ իրենց ազնվականական-կալվածատիրական իրավունքների վերականգնման համար։ Խաչատուր Աբովյանը նկարագրել է հայ մելիքության վերջին մոհիկաններից մեկին՝ ցույց տալով այն բուռն ու խելոք հայրենասիրությունը, որը դեռևս հատուկ էր նրանց գործունեությանը։ Հայ մեծ դեմոկրատ-լուսավորիչը գերմանացի ճանապարհորդ Օգոստոս ֆոն Հաքստհաուզենին գրել է, թե Երևանի մելիքական տան ժառանգորդ Սահակ մելիք Աղամալյանը՝ արտաքին անթերի բարեմասնություններն և բարձր առաքինություններն տեր այդ մարդը, ինչպես կարողանում էր իր ազգակիցների իրավունքները պաշտպանել սարդարի բռնակալության օրերում, երբ մարդու գլուխն ու սոխի գլուխը հավասար արժեք ունեին։ Արդարամիտ էր նա և մարդասեր, քանի՞ անգամ հենց Երևանում բնավորված այլազգիներին էր պաշտպան կանգնել։ Իսկ յուրայինները նրա արևով էին երդվում, որովհետև գիտեին, որ սարի պես կանգնած է իրենց թիկունքում։ Անկասկած, հայ մեծ լուսավորիչն այստեղ ի մի է բերել ոչ միայն իր ճանաչած մելիք Սահակի իրական գծերը, այլև աշխարհիկ հայ առաջնորդի իր երազած կերպարի մանրամասներ։ Սակայն, ամեն պարագայի, նա հիմքում ունեցել է իր մանկության օրերի հայության շահերի այն պաշտպանին, որը պարսիկ սարդարի բռնատիրության դժնդակ պայմաններում շրջահայաց քաղաքականությամբ կարողանում էր ըստ հնարավորին տանելի վիճակում պահել հայ բնակչությանը։ Եվ որովհետև նա իր հպատակների սիրելին էր, ապա Պարսից արքունիքը ևս ստիպված էր հարգել նրա իշխանությունը հայերի վրա, հաշվի նստել նրա հետ, մանավանդ Երևանին ու շրջականերին վերաբերող հարցեր քննելիս։

Փակվեց մելիքության շրջանը։ Պատմության ասպարեզից անհետ հեռացան հայ պետականության վերջին մնացորդները, որոնք, լինելով Հայաստանի նախարարական-իշխանական տոհմերի կենսունակ բեկորները, պատմական ամենադժնդակ

փորձությունների մեջ պահպանեցին հայրենի պետականության ու քաղաքական կյանքի կայծերը, բորբոք պահեցին հարյուրամյա ազգի ազատագրության և ազգային ինքնուրույնության համար մղվող պայքարի կրակը։

Դիզակի մելիք Եղանի այն ինքնագնահատականը, թե՝ «ես թողեցի ոչ Հայաստանաս հսիր տալու»,— միայն գեղեցիկ խոսք չէ, որ հաճախ զարգարում է այս կամ այն գործչին։ Դա արկար գնահատականն է մելիք Եղանի ու նրա փառավոր դասակիցների գերմարդկային ջանքերի, միաժամանակ և, վերջապես, ինքնահանգստացման այն հպարտ գիտակցությունը, թե իրենց՝ այդ անվեհեր մարդկանց, հաջողվեց կատարել գերմարդկայինը, սովորական մահկանացուի ուժերից վեր, անեզրորեն հերոսականն ու հայրենասիրականը՝ մի դարում, երբ հերոսությունը գործվում էր ոչ միայն ռազմի դաշտում, այլև հարևան բռնատիրությունների և ներքին շար ու բարի ուժերի հյուսած քաոսի մեջ, քաղաքական ու դիվանագիտական մշուշոտ խաչուղիներում։

«Ես թողեցի ոչ Հայաստանաս հսիր տալու»։ Սա սրբազան խոստովանանք է ու ինքնագնահատականի հպարտ կանչ և զարդարում է ճակատն այն հերոսապատումի, որ գրեցին հայ մելիքներն ու նրանց անվեհեր զինվորությունը իրենց դառն ու զվարթ կարում։

ԱՐՑԱԽ-ՍՂՆԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 18-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԵՍՆԱՄՅԱԿՈՒՄ

Միասնական թագավորության կորստից ի վեր հայ ժողովրդի կյանքը ազգային ինքնուրույնության համար մղված մեծ ու փոքր ճակատամարտերի մի երկար շղթա էր, որը կարծես պիտի փշրված լիներ 16—17-րդ դարերում։ Թաթար-մոնղոլների, ապա նրանց հետքերով եկած թուրքական ցեղերի դաժան ճնշումներից ու հալածանքներից արդեն ոչնչացվում էին բնիկ հին պետական կազմավորումների մնացորդները, ժողովրդական ընդվզումները դիմավորող ուժեր չկային այլևս, և Պարսկաստանի ու Թուրքիայի միջև բաժանված հայկական նահանգներն աստիճանաբար հաշտվում էին բռնագրավածի իրենց վիճակի հետ։ Հայ բնակչությունն այլևս տերը չէր իր ավանդական բնաշխարհի, հլու հանձնվում էր դրսեկ հարբտահարիչների դաժան կամքին կամ բռնում գարթի ճամփան, որը քամում էր հայրենի եզերքի կենսական ուժերը և առավել մշուշոտում ազգի գոյության մոայլ հեռանկարը։

Սակայն ցածր լեռնային գոյացումների այն ցասկոտ կուտակումը, որով եզերված էր Հայկական բարձրավանդակն արևելքից, և ուր դեռևս կենդանի էին նախարարական-իշխանական տոհմերի բեկորները՝ իբրև գավառական իշխանություններ կամ, տարածուն անունով, մելիքություն ներ, լրհանձնվեց ճակատագրի բերած արհավիրքին։ Այստեղ, Արցախ-Ղարաբաղում ու Սյունիք-Զանգեզուրում, հայությունն ընդվզեց թուրք և պարսիկ բռնակալների դեմ, կասեցրեց Դաղստանի լեռնականների պարբերական ասպատակությունները, եռանդուն բանագնացություններով կանոնավոր հարաբերությունների մեջ մտավ ռուսական արքունիքի հետ։ Եվ այսպես ուրվա-

գծվեց հայ ժողովրդի ազատագրության, ինչ-որ չափով նաև քաղաքական անկախության հեռանկարը։

18-րդ դարի արշալույսին հայոց քաղաքական երկնակամարում մի կարճ պահ շողացել էր Իսրայել Օրու որոնած ու գտած հյուսիսային աստղը, որպեսզի այդ իմաստուն գործչի մահով էլ (1711 թ.) ծածկվի թանձր մշուշով, և հայ ժողովուրդը վերստին մնա իր դաժան ճակատագրի հետ մեն-մենակ։ Սայլ էին առել քաղաքական, սոցիալական ճնշումների և դավանական հալածանքների դեմ բարձրացած ընդվզումները։ Բովանդակ հայության աչքի առաջ Արցախ-Սյունիքյան հայաշխարհը ոտքի ելավ եկվոր բոլոր բռնակալների դեմ և պիտի ապացուցեր, որ անպարտ է իր ազատության ու ազգային ինքնուրույնության դեմ պայքարողը, թեկուզ թվով փոքր և սպառազինությամբ անհամեմատ ցածր իր թշնամիներից։

Այս տարիների հակապարսկական ու հակաթուրքական պայքարը չի կարելի չկոչել հայ ժողովրդի ազատամարտերի բազմադարյան ընթացքի ամենահասուն շրջանի հզոր պոռթկումը՝ պարզորոշ իր քաղաքական նպատակասլացությամբ և լայնահուն իր ընդգրկումներով։ Արցախում և Սյունիքում բորբոքված ազատագրական շարժումն արձագանք տվեց հայկական ու հայաբնակ բոլոր շրջաններում, դարձավ ամենայն հայության մեծագույն մտահոգությունը։ Գանձակի ու Շամախու կողմերից հայ կամավորական զորամասեր եկան, սկսեցին մարտնչել զարաբաղցիների ու սյունեցիների հետ կողք-կողքի։ Շարժման նախապատրաստությունն ու ընթացքը ոգևորել էին նաև գաղութահայության լայն շերտերին, և կողմնակի նյութերից կարելի է ենթադրել, թե նրանցից, հատկապես լեհահայերից ու ղրիմահայերից ևս առանձին ջոկատներ իրենց մասնակցությունն են բերել լեռնահայկական նահանգների ազատագրական մարտերին։ Շուրջ մեկ տասնամյակ տևած հերոսական պայքարն աստիճանաբար մարեց, սակայն չըպարտվեց։ Պայքարի դրոշ բարձրացրած ժողովուրդը խոր պաշտպանության անցավ, զեկավարները շարունակեցին օգնության կոչերով դիմել ռուսական արքունիք։ Եղան և այնպիսիք, որոնք, գաղարի փող հնչեցնելով, փորձեցին առժամանակ հանգիստ առնել և որոճալ ապագայում անելիքը։ Հենց այդ ժամանակ էլ ազատագրական շարժման մասնակիցները

հոգացին բուն պայքարն անմահացնելու մասին. գրեցին կամ գրել տվին այդ պայքարի պատմությունը։ Նսայի Հասան-Ջալալյանը՝ Արցախական աշխարհի մելիքական ուժերի կազմակերպիչն ու առաջնորդը, եթե կրծքին կաթողիկոսական խաչ ուներ կախած, կողքին՝ զորավարական թուր, ապա ձեռքից վար չէր դնում պատմիչի գրիչը, որը թուրք նվաճողների դեմ մղած թեժ մարտերի կարճ դադարներին անպաճույճ լեզվով, քաջիմացությամբ ու արդար խոսքով գալոց սերունդներին էր հանձնում կրակոտ օրերի շունչը, հայրենապաշտպան զորքերի սխրագործությունները, հայ-վրացական զինակցության փառավոր դասերը, հայոց ռուսական կողմնորոշման, ռուսական արքունիքի հետ կապված հույսի ու ակնկալության վառ արտահայտությունները։ Տպագրված մեզ է հասել Նսայի կաթողիկոսի պատմության մի հատվա՛ծը միայն, ամբողջը՝ ձեռագիր վիճակում, Բաֆֆու թողոնների մեջ, տեղից տեղ զաղթելով՝ անհետացել է, և հիմա պիտի հուսանք, թե հրաշքով կհայտնըվի Լոնդոնի, Մոսկվայի կամ մի այլ վայրի իր թաքստոցից և սերունդներին կպատմի Արցախի սղնախական ազատամարտերի ամբողջությունը ճշմարտությամբ։

Մի քիչ բախտավոր եղավ Սյունիքի ազատամարտը։ Ճիշտ է, այն չուներ իր ականատես պատմիչը, ինչպես Նսայի կաթողիկոսն էր Արցախի համար։ Սակայն Սյունյաց շարժման զեկավարներից երկուսը՝ Ստեփան Շահումյանն ու Տեր Ավետիքը, պայքարի դադարից հետո ընկնելով Եվրոպա, հայտնվեցին Վենետիկի նորաստեղծ Մխիթարյան ուխտում, այնտեղ իրար լրացնելով պատմեցին Սյունյաց լեռների գլխով անցածը, և երիտասարդ վանական Ղուկաս Սեբաստացի Ստեփանոսյանն ամենայն մանրամասնությամբ գրի առավ նրանց պատմածը, ստեղծեց ճշմարտապատում մի հերոսամատյան, որն իր պատվավոր տեղը պիտի բռներ այդ ուխտի հարուստ մատենադարանում և հայոց պատմության ու բազմադարյան մատենագրության մեջ։

Լեռնահայաստանի ինքնապաշտպանական մարտերը լայնորեն արտացոլված են նաև նրանց մասնակիցների պաշտոնական գրագրություններում, նամակներում և այլազան վավերագրերում։ Բարեբախտաբար դրանք համարյա բոլորն էլ հրապարակված են արդեն, և հետազոտողներց հնարավորու-

թյուն ունեն ստանալու մինչև վերջ ճշմարիտ այնքա՞ն տեղեկություններ ժողովրդի կենաց ու մահու կոիվների մասին։

Հայաստանն ու Անդրկովկասը վաղուց բաժանված էին Թուրքիայի ու Պարսկաստանի միջև, սակայն երկու բռնակալներից յուրաքանչյուրը դեռևս ախորժակ ուներ մյուսի բաժնի վրա և առիթը բաց չէր թողնում պատառ թռցնելու համար։ Հարկ է նշել, որ այս ժամանակներում Պարսից տերությունը խարխլվել էր ներքին երկպառակություններից ու աֆղանների հետ ձգվող պատերազմներից։ Իսկ Թուրքիան, նրան առավել հյուծելու նպատակով, ժամանակ առ ժամանակ Դաղստանի ռազմատենչ ու ավարառու լեռնականներին էր քշում դեպի Արևելյան Անդրկովկաս և Իրանի հյուսիսային նահանգները։

Կարելի էր կարծել, թե Արցախի ու Սյունիքի հայությանն ըմբոստ ինքնապաշտպանության մղեցին դաղստանցիների պարբերական հարձակումներն Այսրկովկասի վրա։ 18-րդ դարի սկզբին լեռնաբնակ հրոսակախմբերն իրենց ապրուստի միակ միջոցն էին դարձրել այն ասպատակությունները, որոնց ենթարկում էին Վրաստանը, Հյուսիսային Հայաստանն ու Շիրվանը։ Ավերիչ հեղեղի պես Դաղստանից իջնում էին անպաշտպան քաղաքների ու գյուղերի վրա, կոտորում, կողոպտում, ինչ որ չէին կարող փախցնել՝ մատնում հրդեհի և, իրենց հետևից ավեր ու մոխիր, մահ ու դժբախտություն թողնելով, հեռանում։

Վարդան Օձնեցին ամենայն մանրամասնությամբ նկարագրել է մի ահավոր հարձակում ու կոտորած, որին իր հայրենի Լոռին էր ենթարկվել 1719 թ.։ Անողորմ ասպատակիչները չխնայեցին նույնիսկ նրանց, ովքեր իրենց կյանքը փրկելու համար ապավինել էին անմատչելի քարայրներին։

Երկու տարի անց, 1721-ի օգոստոսին, ասպատակիչները եկան Շիրվանի վրա և կողոպտեցին առևտրով ու արհեստներով փարթամացած Շամախի մայրաքաղաքը։ Իրենք սունի մահմեդականներ՝ կոտորեցին շիա հավատակիցներին։ Հրահրված լինելով Թուրքաց սուլթանի կողմից՝ դաղստանցիներն առաջադրանք ունեին նաև բնաջնջել ռուսական ազդեցությունը։ Այդ պատճառով էլ կողոպտեցին ու ավերեցին ռուս առևտրականների պահեստները՝ նրանց հասցնելով ավելի քան 500 հազար ռուբլու վնաս։

Երևանի ու Գանձակի խաներն զգացել էին վերահաս աղետը։ Փորձեցին դիմադրել և միացյալ ուժերով ելան լեռնական հեղեղի դեմ։ Սակայն Բարգա գյուղի մոտ, Տրտու-Քարթաս գետի վրա սաստիկ ջարդ կերան։ Եվ դաղստանցիները, ինչպես Եսայի կաթողիկոսն է հաղորդում, «ժողովեալ զկապուտս նոցա, դարձան ի տեղիս իւրանց խնդութեամբ»։

Հայկական նահանգների վրա դաղստանցիները եկան հաջորդ դարնանը։ Հասնելով Մուղան, ծովեցին դեպի Դիզակ և դիմադրության հանդիպելով կոտորեցին տեղի հայերին։ Հարեվան Վարանդան նրանք շրջանցեցին՝ ընդունելով մելիք Բաղիրի առատ ընծաները։ Սակայն ընդդիմության հանդիպելով Խաչենում ու Ջրաբերդում՝ նորից արյունոտ հաշվեհարդար տեսան բնակչության հետ, կողոպտեցին բնակավայրերը, կոտորեցին մարդկանց, գերեվարեցին ողջ մնացածներին...

Դաժանությամբ բացառիկ այս դեպքերի մասին հայ մելիքները նամակ հղեցին Պետրոս Մեծին և, մեկ առ մեկ նկարագրելով դաղստանցիների անողորմ արարքները, տեղեկացրին նաև, որ «եթե մնացածն տեղոյս բռնակալաց Թուրքիոն այրելով, խորովելով հարկս պահանջէին, ամէնն թախտու թալան հափշտակէին»։

Եվ այստեղ էր, որ տառապանքն իմաստնացրեց մարդկանց. նրանք հասկացան, որ լավ է կռվելով պաշտպանվել, քան ողորմություն սպասել թշնամուց, որը գալիս է կոտորելու և կողոպտելու համար։

Հայտնի է, որ 18-րդ դարի սկզբից ի վեր Արցախի հայությունը, մելիքների գլխավորությամբ, զինվում էր ու պատրաստվում վճռական ճակատամարտերի։ Ճիշտ է, նրան համոզել էին, թե այդ ճակատամարտերում որոշիչը լինելու է հյուսիսի մեծ թագավորի ուժը։ Սակայն, այսուհանդերձ, նախապատրաստել էին, զինել, հավատացրել, թե թշնամուն հնարավոր է հաղթել։

Այստեղ մեծ դեր խաղաց Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը։ Իր գահակալության առաջին իսկ տարիներին կապվելով Իսրայել Օրիի հետ, փայփայելով ռուսաց օգնությամբ հայությունը Թուրքաց ու պարսից բռնակալություններից ազատագրելու գաղափարը, նա հավատում էր իր ազգի աստղին։ Նա իր կաթողիկոսական տիտղոսը հանդիսատ չէր թողնում

Պետրոս Մեծի զորությունն Անդրկովկաս բերելու համար։ Եվ հետաքրքիր է, որ իր թղթերում դույզն իսկ տեղ չէր թողնում այնպիսի պատկերացման համար, թե այն երկիրը, որ կարիք ունի փրկության, ողորմելի մի վիճակում է, աղքատ ու անօգնական, և Ռուսաց արքան միայն հավատակցի իր պարտքն է կատարելու նրան ազատագրելիս։ Ո՛չ,— գրում էր Եսայի կաթողիկոսը,— «յաղագս օգտի և մեծութեան և անուան և գանձուց թագաւորականաց բազում և յոլով լինելոց է աստուծով գանձուց յաւելումն և հեծելոց բազմութիւնք, զի այսպիսի բարելի գաւառ և ամենայն շահիւք լցեալ ոչ գոյ ի վերայ երկրի»։ Բարեբեր է մեր երկիրը, քաջ են ու հայրենասեր նրա զավակները,— երգվելու պես տեղեկացնում էր Եսային։— Պարզապես մեր թշնամիներն են շատ։ Շատ և նենգ։ «Սոքա խորամանկ օձ գոլով՝ օր յաւուր զմեզ նեղութիւն յաւելում են և կարողութինէ հատում զմեզ»։

Եսային իր հավատացյալ ժողովրդին հորդորում էր պատրաստվել բախտորոշ ճակատամարտերի։ Վրաց թագավոր Վախտանգին, որ Պարսից հավատարմատարն էր Կովկասում և նրան հպատակ զորքերի սպարապետը, համոզում էր այդ զորքերն առժամանակ օգտագործել թուրքաց դեմ, ապա Ռուսաց օժանդակությամբ և անդրկովկասյան ազգերի միացյալ ուժերով երկրից վռնդել նաև պարսիկներին։

Հայոց պատմության հին փորձը հրաշալի գիտեր Եսայի կաթողիկոսը, որ իր ձեռքն էր վերցրել ազատագրական պայքարի ղեկը։ Նա համոզված էր, որ բարեկամի ու հարևանի օժանդակությամբ ավելի հեշտ է ձեռք բերվում հաղթանակը։ Սակայն ազգը պետք է պատրաստ լինի նաև մենակ ու սեփական ուժերով պաշտպանելու իր երկիրը։ Հնարավոր է, որ թշնամիները ջանային հարցը լուծել ավելի վաղ, քան վրա կհասներ այն օգնությունը, որ խոստանում էին հարևաններն ու հյուսիսի բարեկամը։ Դրա համար էլ նա Արցախը պատրաստեց ինքնապաշտպանության, ստեղծեց լեռնային երկրամասի ազատագրական պայքարի մի կուռ եղանակ, որը մեր պատմությանը հայտնի է իբրև սղնախների շարժում։

Սղնախներ էին կոչվում Արևելյան Հայաստանի լեռնային այն բերդերն ու բնական ամրությունները, որոնց ապավինած բնակչությունը պաշտպանվում էր դրսի թշնամիների ասպատակություններից և արշավանքներից։ «Սղնախ» —«սրդմախ» թուրքական բառ է, որ նշանակում է «սեղմել»—«ամրացնել»։ Ռուսական վավերագրերում «սղնախի» փոխարեն գործ էր ածվում «Армянское собрание», որ պետք է թարգմանվի «Հայկական հավաքատեղի»։

Սղնախներ կային օտար բռնակալների դեմ պայքարող հայկական համարյա բոլոր նահանգներում։ Սակայն ազգությունական հարուստ նյութեր են պահպանվել միայն Ղարաբաղի և մասամբ էլ Սյունիքի սղնախների մասին, քանի որ Արևելյան Հայաստանի այս երկու նահանգների մելիքական տների կազմակերպած ազատագրական ոգորումները ռազմաքաղաքական տեսակետից սերտորեն ազերսված էին հարևան ժողովուրդների ու ռուսական արքունիքի հետ, և ռուսական դիվաններում են պահպանվել վավերագրական հսկայական նյութեր այդ սղնախների գործունեության մասին։

Ղարաբաղի հինգ մելիքություններից յուրաքանչյուրն ուներ իր մեծ ու փոքր սղնախները։ Դրանց մի մասը դեռևս վաղ միջնադարից հայտնի բերդամբոցներն էին՝ Գտիշ-Գորոգը, Ջրաբերդը, Կաչաղակաբերդը, Շիկաքար-Քարագլուխը (հետագայի Շուշի բերդը) և այլն։ Կառուցվեցին նաև նորերը, ինչպես Գյուլիստանը Թարթառի ափին, Ավետարանոցը Քիրսա սարի սարոտում և Քոլիզը՝ Հերհեր ու Ծովատեղ գյուղերի թիկունքում։ Այս բոլորի զինական ուժերը ղեկավարվում էին մեծ սղնախի կողմից, որի գլուխ էին կանգնած Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը և ռազմաքաղաքական նշանավոր գործիչ Ավան Հարյուրապետը։ Ղարաբաղյան բոլոր զորքերի ղեկավարի կամ Մեծ սղնախի դեր ուներ սկզբնապես Ջրաբերդը։ 1721 թ. գարնանն այստեղ հայոց զորքերի կողմից մեծ ջարդ ստացած ավարառու լեռնականները նահանջեցին դեպի Կուրի ձախափնյակը և այլևս չհամարձակվեցին երևալ Ղարաբաղի կողմերում։ Հետագայում Մեծ սղնախ էր կոչվում Շոշ գյուղի բերդը կամ Քարագլուխը, ուր տեղակայված էին Ավան Հարյուրապետը, նրա եղբայր Թարխանը և մյուս զորապետները։ Նրանք այստեղից գլխավորում էին հակաթուրքական և հակապարսկական պայքարի ելած նահանգի բոլոր ուժերին։ Դիզակի գավառի սղնախը Տողա բերդն էր։ Վարանդայի զորքերը տեղավորված էին Քոլիզում (Հերհերի ու Ծովատեղի

մոտ) և Ավետարանոցում (Զանգեզի), Թարթառի ու Խաչենի հովիտներում ամրացվել էին Գյուլիստանի հզոր բերդը, Հինավուրց Ջրաբերդը, Հավքախաղացն ու Կաչաղակաբերդը։ Ստույգ տեղեկություններով՝ Ղարաբաղի սղնախներում տեղակայված էին շուրջ 30 հազար հեծյալներ և 20 հազար հետևակայիններ, իսկ զինաբախումների ժամանակ զենքի տակ էր առնվում ամբողջ բնակչության մեծամասնությունը։ Սղնախներում ամրացած հայ զինվորությունը փաստորեն ապահովել էր նահանգի անկախությունը, և շուրջ վեց տարի, 1721—1727 թթ., Ղարաբաղի գավառներն այլևս հարկ չէին վճարում պարսիկ կամ թուրք բռնակալներին։ Եսայի կաթողիկոսի վրատահելի տեղեկությամբ՝ հենց այս ժամանակ էլ ժողովուրդն ու նրա պարագլուխները փայփայում էին հինավուրց ազգային պետականության «նոր նորոգումը», այսինքն՝ վերականգնումը։ Բայց որովհետև նրանք գիտակցում էին նաև այդպիսի իշխանության մեկուսի գոյության անհնարինությունը, կանոնավոր դիվանագիտական հարաբերությունների մեջ մտան և համագործակցության ծրագիր մշակեցին Վրաց Վախտանգ թագավորի, Պետրոս Մեծի արքունիքի, նույնիսկ Գանձակի մահմեդական բնակչության հետ, նպատակ ունենալով ստեղծել հայ-վրացական հզոր թագավորություն՝ Ռուսական կայսրության հովանու ներքո։

1722 թ. ռուսական զորքերը մտան Դերբենդ և պիտի շարժվեին դեպի հարավ, նվաճեին Անդրկովկասն ու Կասպից ծովի հարավային ափերը։

Նախապես իրենց համագործակցությունն ու հպատակությունը հայտնած վրացիներին և հայոց սղնախականներին Պետրոս Մեծը հանձնարարել էր ընդառաջ ելնել՝ Շիրվանում հանդիպելու և արշավանքը համատեղ շարունակելու համար։ Վրաց 30-հազարանոց զորքը Վախտանգ թագավորի գլխավորությամբ և 10 հազար սղնախականները Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի առաջնորդությամբ 1722 թ. սեպտեմբերի 22-ին իրար խառնվեցին Գանձակի մոտ, Զոլակ գյուղում։ Ցնծությունը բացարձակ էր, վերահաս ազատագրության հեռանկարը՝ պայծառ ու մոտիկ։ Սակայն երկու ամիս Գանձակի մոտերքում սպասելուց հետո հայ ու վրացի զորքերն ստիպված եղան տուն վերադառնալ, որովհետև նոյեմբերին միայն լուր առան, որ ռուսները վերադարձել են Աստրախան, և արշավանքը հետաձգվում է անորոշ ժամանակով։

Կատարվեց այն, ինչից զգուշանում էր Եսայի կաթողիկոսը։ Տեղեկանալով անդրկովկասցիների և ռուսների միջև ստեղծված բարեկամությանն ու նրա նպատակին՝ Ռուսաստանի հարավային ծրագրերից սարսափած շահ Թահմազ Բ-ը 1722-ի վերջում Վախտանգ թագավորին զրկեց Վրաց կուսակալի ու կովկասյան զորքերի հրամանատարի պաշտոններից և նրա տեղը նշանակեց Կախեթի թագավոր Կոստանդինին, որը մուսուլմանություն ընդունած մի դրածո էր՝ հայտնի նաև Մուհամեդկուլի անունով։ 1723-ի գարնանն արդեն Վրաստանի տերը վերջինս էր, որին ենթարկվեցին նաև Երևանի, Գանձակի ու հարևան մյուս խանությունները։ Իսկ պաշտոնանկ Վախտանգն ստիպված էր հեռանալ Ռուսաստան։ Ուրեմն, այս կետից սկսած հայոց զինվորությունը ոչ միայն զրկվում էր վրաց զինակցությունից, այլև ամեն պահ պիտի սպասեր եղբայր ժողովրդի նոր տիրակալի խարդավանքներին ու հալածանքներին։

Եսայի կաթողիկոսն ու նրա զինակիցները հաշտվեցին կատարվածի հետ և շարունակեցին սղնախների գործը։ Լեռնական հայությունը չէր ընդունում շահի նոր դրածոյին, կռվում էր Ղարաբաղի մատույցները կրծող թուրք զորքերի դեմ և հույս ուներ, թե Պետրոս Մեծի բանակները շուտով կհասնեն Անդրկովկաս, և միասնական ուժերով իրենք մեկընդմիշտ կազատագրվեն պարսից ու թուրքաց ճիրաններից։ Սակայն այստեղ էլ խանգարեց ռուսական արքունիքի դիվանագիտությունը։ Հավատացած լինելով, թե միաժամանակ պատերազմի մեջ մտնելով պարսիկների ու թուրքերի հետ անպայման կհաղթի՝ Պետրոսը 1724-ի հուլիսի 12-ին պայմանագիր կնքեց սուլթանի հետ։ Նրա ներկայացուցիչները, Կ.-Պոլսում այդ պայմանագիրն ստորագրելով, հաստատեցին, որ Ռուսաստանը տեր է մնում Կասպից ծովի ափերին՝ Դերբենդից մինչև Մազանդարան, իսկ Թուրքիան՝ Անդրկովկասին և համարյա ամբողջ Ատրպատականին։ Դրանից հետո թուրքաց զորքերը նոր համալրումներով շարժվեցին դեպի Անդրկովկաս՝ նախապես ահազանգած լինելով, որ դիմադրողները զենքերը ցած դնեն։

Պետրոս Մեծի բանբերներն էլ հայոց նահանգների բնակիչներին անորոշ խոստումներ էին տալիս, բայց որոշակի առաջարկում գաղթել հայրենի վայրերից և բնակվել ռուսաց կողմից նոր նվաճված Կասպիականի ափերին։

Ի՞նչ պիտի աներ հայ ժողովուրդը, որ իր հին երկու բռնակալ թշնամիների դիմաց մնացել էր միայնակ։ Շարունակեց կռվել ու պաշտպանվել։ Սղնախներն ավելի ամրացան, հայրենիքի պաշտպանների շարքերը միանգամից խտացան։ Եսայի կաթողիկոսն ու զորապետները ոչ միայն սղնախներում էին, այլև գյուղերում ու ավաններում։ Հուսադրում էին ինքնապաշտպանության, տառացիորեն ինքնապաշտպանությա՛ն ելած լեռնական գյուղացիությանը, ոգեկոչում էին հայ ժողովրդի անցյալ պատմության հերոսների ու հերոսուհիների անձնազոհությունը։ Եվ ինքնապաշտպանության գենք բարձրացրած ձեռները երդվում էին թշնամուն չզիջել ոչինչ, կռվել բոլոր միջոցներով, դիմադրել մինչև վերջին շունչը։

1723 թ. փետրվարին Թուրքական վիցհազարանոց մի զորամաս՝ Շահին, Սալահ և Ալի փաշաների ղեկավարությամբ, խորանալով Հայաստանի մեջ, հասնում է Արցախ։ Վարանդայում նրանց տեղաբաշխում են ըստ գավառի գյուղերի, և գիշերը, նախօրոք դրված պայմանով ու ահազանգով, կոտորում են Թուրքերին։ Մարտի 10-ին Եսայի կաթողիկոսն ու մելիքները Պետրոս Մեծին գրած նամակում միաձայնորեն դեռ հավատում են ցարից ստանալիք օգնությանը և պատմում են Վարանդայում տված չարդը, տեղեկացնելով նաև, որ փաշաներից մեկին կենդանի էին թողել ու հարցաքննել։ «Զնա խոսացրինք,— գրում են սղնախականները։— Դուք ինչպե՞ս եք եկել այս երկիրը։ Նա ասաց. «Մեր թագավորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս երկրներս հայն ու զղլբաշն փչացնեմք, չուն որ լուս թագավորի զորքն ծովի այս կողմս են անցել, նոցա վերա պիտի գնամք, հայն այս մեջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինի, որ մեր ճանապարհն բացվի։ Նաև ասաց այս փաշան, թե դուք չէիք այս միջումս, մեք հիմա Դարպանդու և Պաքու վերայ էինք գնացել, որ զատիմի մեքս է»[1]։

[1] «Армяно-русские отношения», т. II, ч. II, Е., 1967, էջ 249.

Ուրեմն, Թուրքերն իրենցն էին համարում Դերբենդն ու Բաքուն և հայերին համարում էին այն սեպը, որ խրված է իրենց ու իրենցը համարվող Դերբենդ-Բաքվի միջև։ Հայերին պիտի ոչնչացնեն, որպեսզի իրենի միանան «իրենց» և կանխեն ռուսների ելքը դեպի Կասպիականի ու Միջերկրականի ափերը։ Սղնախականները Թուրքաց քաղաքականության այս ծալքերն են բացում Պետրոս Մեծի առաջ, քաղաքականություն, որին հարազատ պիտի մնար սուլթանությունն իր հետագա ամբողջ կյանքում, և որը ժառանգություն պիտի մնար նույնիսկ երիտթուրքերին ու նրանց հետնորդներին։

Իսկ հայերը, իբրև սեպ՝ խրված Թուրքիայի ու Թրքության երազների արանքը, բոլորովին էլ ցանկություն չունեին ո՛չ տեղահանվելու, ո՛չ էլ մանավանդ վերանալու։

Դիվանագիտության հարցերում չորեքթաթ տալն անգամ չսովորած սղնախականները բռնագրավիչների դեմ համառորեն կանգնած ու արյուն տալով՝ Պետրոս Մեծին պատասխանում են հավատով ու հավատարմությամբ, բայց նաև հայրենի հողի հանդեպ մի այնպիսի սիրով ու սրբազան երկյուղածությամբ, որ այսօր էլ առանց սարսուռի անհնար է կարդալ նրանց նամակը։

Ոչ մի ժամանակ լեռնային երկրամասի տերերի ու բնակիչների, մելիքների ու ենթակաների, մեծի ու փոքրի այնպիսի համերաշխություն չի եղել, ինչպես այն օրհասական օրերին։ Նույնիսկ Արցախի երկու հակաթոռ կաթողիկոսները՝ Եսային ու Ներսեսը, անուշի էին եկել, միասին ու միահամուռ էին գործում։ Պետրոս Մեծին դիմելով՝ նրանք գրում են «Երկրպագութիւն և ողջոյն ի հեռուստ մատուցանեմք ազգս հայոց՝ նորընծայ ծառայքս քոյ, պատրիարքօք, եպիսկոպոսօք, մելիքներօք, հեծելազօրօք, տանուտիրօք, ռամկօք և առհասարակ միախումբ և միաբան և միահամուռ ժողովրդօ՛»։ Իրենց աղետալի վիճակի մասին են պատմում, ապա հիշում կայսերական հրամանը, որ է՝ «մեք ելնումք տանով ու տեղով և ամենայն ինչիւք գամք զձեր Պարսից նոր առած երկրներն, որ է Պաքու, Կիլան, Դարպանտ և աստ բնակիլ»։ Կամքը ձերն է,— ասում են նամակի հեղինակները,— մենք ձեզ հպատակություն ենք հայտնել և պարտավոր ենք ենթարկվել ձեր ամեն մի կարգադրությանն ու խոսքին («Կամք տեառնդ եղիցի և հրամանի

քում մահու չափ եմք հնազանդ»)։ Բայց «այս որ հրաման տեառնդ է, յոյժ անկարելի է մեզ, որ բնաւ ձեռք չէ տալ այս քանի պատճառաւս. զի այս երկրներս, որ ծառայքս քո բնակիալ եմք, որ են Գանջայ, Ղարապաղն, Զ(6) մհալ, այլ Գեղարքունի, Քօլանի, Ղափան, Սիսիան և այլ երկրներ...», մերն են, մեր ապուպապերից ենք ժառանգութիւն ստացել։ Այստեղ են մեր գյուղերն ու ավանները, յուրաքանչյուր նահանգում՝ 30, 40, 50, 60։ Եվ սրանցից ամեն մեկում էլ՝ 30—40-ից մինչև 600—700 տուն։ «Այս երկրներս սարով ու տեղով շատ ամուր են, և մեք այս խալդս ամէքն իւր երկրումն սղնաղ-սղնաղ եմք արել ամուր տեղերն, և ամէքս մեկ սղնաղին վերա նստած պահումք»։ Նորից անդրադառնում են իրենց վիճակին «Եւ մեր Դ(4) կողմի երկրներ օսմանցիք առել են, որ մեզ թշնամիք են, այլ և մեր մեկ կողմն էլ ղզլպաշ են, որ թշնամիք են», և «անհաշտելի խռովութիւն է մեր և անօրէնից մեջն»։ Եվ, սակայն, այս պայմաններում անգամ մենք մեր երկիրը չենք կարող թողնել։ Թե կարող ես, օգնիր, որ «մեք այս չար թշնամոցս ազատուիմք»։ «Գրեցաւ ՌՃԼԴ (1725) թուիս յուլիսի Իե (25) ի Գանձասար»։

Հետագայում պարզվում է, որ գաղթելու միտքը Պետրոս Մեծին տված է եղել մի բանագնաց՝ ոմն Անտոն քահանա։ Սա, Քյոխվա Զալաշու հետ միասին, Արցախից սղնախականների խնդրագիրը պիտի տաներ ցարին։ Ճանապարհին դրի մեջ, իբրև ծայրահեղ միջոց, ավելացրել էր այդ գաղթելու թույլտվությունը և ստեղծել մի վիճակ, որի համար ազատության ու հայրենիքի զինվորներն իրենց նվաստացած են զգում։ Այս մասին Իվան Կարապետն է պատմում կանցլեր Գ. Ի. Գոլովկինին, հայտնելով նաև, որ սղնախականներն իրենց երկրից հեռացողը չեն, որովհետև պատրաստ են մինչև վերջին շունչը պաշտպանվելու։ «Էսպես կովարար խալդ, որ էստեղ կայ, ո՞չ ինչ դեղ չկայ,— ավելացնում է ցարի պատվիրակը։— Ղզլպաշի երկրում (այսինքն՝ պարսկահպատակ Հայաստանում) էսօր ԺԲՌ (12 հազար) մարդ ձիով ողջ չախմախով թուֆանկ, ողջ թուրով հազիր են։ Ու առանց ձիով էլ չէնչանք, որ աստուած ա խպար ու ողջին էլ թուֆանկ կայ։ Ամեն օր Ժ (10) թուֆանկ այ շինում ու չախմախ այ շինում։ Էստեղ բան ան գտել արշիջի, էրկաթի ու պղնձի...»։

Այո՛, գործի էին դրել Արցախում հնուց ի վեր հայտնի հանքերը Գանձասարում, Թարթառի գույգ ափերում, երկաթ ու պղինձ էին ձուլում։ Արճճի անհուն պաշարներ ունեին հրացանների համար։ Իսկ վառոդ պատրաստում էին անտառանյութի տարբեր տեսակներից։ Եվ, այսպես, կովող զինվորությունը զենքի ու զինամթերքի պակաս չէր զգում։

Սղնախականները շարունակում էին կռվել թուրքաց դեմ և հավատում էին, որ ռուսներն օգնության պիտի գան, Վրաց թագավոր Վախտանգը պիտի վերադառնա իր հայրենիքը, ստատրի իրենց արդար պայքարին։ Եսայի կաթողիկոսն ու մելիքները, զորապետներն ու Ռուսաց արքունիքի բանագնացներն անդադար նամակներ էին հղում ցարին ու նրա ազդեցիկ ներկայացուցիչներին՝ խնդրելով խոստացված օգնությունն ու հովանավորությունը։ Հայ զինվորության համառությամբ ու հերոսությամբ հիացած էին ռուս բարեկամները։ 1726-ի օգոստոսին զորահրամանատար Լևաշովը հաղորդում էր, թե թուրքերը չորս անգամ վիթխարի ուժեր են հանել հայոց ինքնապաշտպանության դեմ, բայց և միշտ էլ պարտվել ու ետ են շպրտվել։

1726 թ. աշնանը, նախորդ տարիների անփառունակ արշավանքներից հետո, Սարը Մուստաֆա փաշայի բանակը ծանր նստեց սղնախների առաջ։ Նրա հիմնական ուժերն ուղղված էին մեծ սղնախի՝ Շոշի բերդի դեմ։ Ութ օր տևած թնդանոթային ռմբակոծությամբ թուրքերին հաջողվեց գրավել սղնախի մի մասը։ Սակայն մեծ զոհեր տալուց հետո նրանք ետ նահանջեցին և տեղավորվեցին Գանձակում։

Հետագա պայքարի կենտրոններ դարձան Ջրաբերդն ու Գյուլիստանը, որոնց մղած հերոսական պաշտպանությունը թուրքերին ստիպեց ձեռք քաշել Ղարաբաղի լեռնային գավառներից։

1727 թ. մայիսի 11-ին Վ. Վ. Դոլգորուկովն իր կառավարությանը հղած զեկույցում զարմացած է սղնախականների քաջությամբ և համարում է «մարդկային բանականությունից վեր մի բան, որ նրանք այդքան հզոր թշնամու դեմ կարողանում են պաշտպանվել»։ Երկու տարի անց, 1729-ի հոկտեմբերին 21-ին, նա պիտի զեկուցեր, որ սղնախականները ոչ միայն դիմադրում ու դիմանում են, այլև թուրքերի հանա-

պարհներն այնպես են փակել, որ սրանք ռուս-թուրքական պայմանագրով իրենց հպատակության տակ դրված հայկական գավառներից չեն կարողանում հարկ հավաքել, բացի Ղարաբաղից հեռու այն մի քանի գյուղերից, որոնց պաշտպանելու հնարավորություն չունեն սղնախականները։

Սղնախների պայքարը շարունակվեց նաև հետագայում, չնայած Եսայի կաթողիկոսի մահվանից (1828 թ.) հետո մյուս ղեկավարները, հետագա դիմադրությունն անհուսալի համարելով, անցան Ռուսաստան, ծառայության մտան ցարի բանակում՝ հայրենի երկրի փրկության հույսը դնելով ապագա դեպքերի նպաստավոր դասավորության վրա։

Հաջորդ տարիներին սղնախական պայքարի գլխավոր օջախ էր դարձել Գյուլիստանի բերդը, որտեղից Աբրահամ զորապետի (թուրքական աղբյուրներում՝ «Գյավուր Աբրահամի») քաջերը պարբերաբար հարձակվում էին թուրքական ասպատակիչների վրա, ցաք ու ցրիվ անում նրանց միավորումները։ Եվ Աբրահամի գլխավորած պայքարը՝ Արցախի մյուս սղնախների հետ միասին, այնքան լայն ու հզոր թափ էր ստացել, որ սուլթանն ստիպված եղավ նրա դեմ ուղղել Երևանի ու Շաքիի խանների, Բայազետի փաշայի զորքերը և Դաղստանում, Շիրվանում ու Գանձակում տեղակայված իր զորամասերը։

1729 թ. ամռանը սուլթանը Շաքիի Բեկլարբեկ Ալիին հատուկ ֆարման էր ուղարկել, կարգադրելով՝ իր զորքն առած միանալ Գանձակի խան Իբրահիմ փաշային, դաղստանցիներին ու շրջակայքի տերերին, որպեսզի միասնական ուժերով շարժվեն ապստամբ սղնախականների վրա։ «Դուք պարտավոր եք ձեզ հետ վերցնել ձեր հոգևորականությանը, ձեր զավակներին ու ձեր բեկերի որդիներին ու մնացած հերոսներին, որոնք ընդունակ են սրբազան պատերազմի»,— հրամայել էր սուլթանը։

«Սրբազան պատերա՛զմ»։ Սա մահմեդական մոլեռանդների ամենակատաղի արշավն էր, որ նրանք ձեռնարկում էին ըմբոստ այլադավանների բնաջնջելու համար։

Չի կարելի կասկածել, որ սուլթանի հրահրած «սրբազան պատերազմը» տխուր վախճան է ունեցել իր զորքերի համար։ Այդ պատճառով էլ նա հաջորդ տարին նոր ֆարման հղեց վերը հիշված Ալիին, Իբրահիմ փաշային և մյուսներին՝ նոր պատ-

ժարշավի գնալու Աբրահամ զորապետի ու մյուս սղնախականների դեմ։

Նույն հասցեներով սուլթանական ֆարմաններ ստացվեցին նաև 1731 թ. գարնանը։ Այս անգամ սուլթանը հիշեցնում էր, որ սղնախականները ոչ միայն տարիներ շարունակ հրաժարվում են հարկ վճարել իր կայսրությանը, այլև համառորեն չեն ուզում ճանաչել նրա տիրապետությունը և զինված ընդվզումներով վատ օրինակ են տալիս մնացած հպատակներին։ Ուստի «շարիաթի օրենքներով հարկ է նրանց ոչնչացնել իրենց գործողությունների համար»։ Հետաքրքիր է սուլթանի ֆարմանի վերջին հանձնարարությունը. «Եթե հիշյալ գյավուրները ցանկություն կհայտնեն Գանձակի գանձատուն մուծելու իրենցից պահանջվող հարկը և այսուհետ խոսքով ու գործով լինելու հլու հպատակներ՝ ներկայացնելով հավատարիմ պատանդներ, ապա հարգեք նրանց խնդիրքը, հակառակ դեպքում արշավեցեք նրանց դեմ, քանդեցեք նրանց բնակավայրերն ու ամրությունները և առհասարակ այնտեղ կատարեցեք անհրաժեշտ ավերածություններ...»։

«Անհրաժեշտ ավերածություններով» անգամ սուլթանի կամակատարները չկարողացան կոտրել սղնախականների կամքը։

Սղնախների ազատագրական պայքարի ավանդները վախճան չունեցան։ Նրանք փոխանցվեցին հայ զինվորությանը և հետագա տասնամյակներում եղան այն դասերն ու պատվիրանները, որոնցով պետք է հայրենիքը պաշտպանվեր թուրք և պարսիկ բռնակալների նոր հարձակումներից։

ԱԶԱՏԱՄԱՐՏԵՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Մյուս նահանգը, ուր 18-րդ դարի սկզբին բորբոքվեց ազատագրական-ինքնապաշտպանական ոգորումը և ունեցավ բուռն վերելքի պահեր, Սյունիքն է, Արցախից արևմուտք ընկած լեռնաստանը, Թարթառի, Խաչենի և Կարկառի ակունքներից մինչև Արարատյան աշխարհի արևելյան սահմանները։

Սա մի երկրամաս է, ուր նախապատմական ժամանակներից ի վեր հայությունն ապրել է իր շրջդմիջվող կենսագրությունը, ստեղծել հոգևոր ու նյութական մշակույթի անզուգական կոթողներ, ազգի քաղաքական պատմության մեջ գրել հետաքրքիր էջեր։ Լեռնային խստամբեր, մեկուսացնող բնությունն իր դրոշմն է դրել բնակչության կյանքի ու պատմական բնութագրի վրա։ Կենտրոնախույս տրամադրությունները, անտիկ բնաշխարհին ապավինելով՝ ներքին կյանքն ու հոգևոր եռանդը մեկուսի կազմակերպելու ձգտումը հաճախ են այս նահանգը բախման մեջ նետել միասնական թագավորության և առհասարակ երկերը միավորելու ցանկությամբ տոգորված ուժերի դեմ։ Եվ, որքան էլ այս ամենի հետ անհամեմատելի, ուշմիջնադարյան իրականությո՛ւնը ավելց փաստեր, որոնք եկան ապացուցելու, թե այստեղ է՛լ համազգային մտահոգությունները միշտ են առաջնորդել նահանգի տերերին։ Այստեղի՛ց սկիզբ առավ հայոց ազատագրության մեծ ճանապարհը, որի ուղղությունը էր Վայոց ձորի տեր մելիքական տոհմի պայազատ Իսրայել Օրի-խազբակյանը։ Այստե՛ղ, Սիսիանի Անգեղակոթ ավանո՛ւմ էր, որ հավաքվեցին Արևելյան Հայաստանի մելիքներն ու հոգևոր առաջնորդները և, հայ ժողովրդին արևելյան բարբարոսների ճիրաններից փրկելու ազերսագիր հղելով Ռուսական արքունիք, փաստորեն դրին հայ-ռուսական քաղաքական ու դիվանագիտական կանոնավոր փոխհարաբերությունների հիմքը։

Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ Իսրայել Օրիի ազգերգական ու ճակատագրորեն տարաժամ վախճանից մեկ տասնամյակ հետո արդեն Սյունի՛քը Արցախի հետ միասին ոտքի ելավ թուրք ու պարսիկ բռնատիրությունների դեմ և մղեց ազգային-ազատագրական մի պատերազմ, որը նրա շարժառիթներին, նպատակին ու հոգեբանական լիցքերին անծանոթ մարդու աչքին կարող է երևալ արկածախնդրական, եթե չլիներ այնպես բծախնդրորեն կազմակերպված, իմաստուն ու նպատակասլաց և արձանագրած չլիներ այնքան պանծալի մի էջ ազգային-ազատագրական հերոսամարտերի մեր բազմադարյան պատմության մատյանում։

Սյունիքի ու Արցախ-Ղարաբաղի ազատամարտերը համարյա միաժամանակ սկսվեցին և միաժամանակ էլ դադար առան՝ իմաստուն դասեր թողնելով հետագա տասնամյակների, հատկապես նույն դարի վերջերի ավելի լայնածավալ շարժումների համար։ Նրանք նմանության շատ գծեր ունեին նաև ռազմավարական տեսակետից։ Սակայն կար էական մի տարբերություն, որով սյունեցիների վիճակը շատ էր բարդանում, և նրանց հաղթանակները դառնում էին առավել դժվար ու թանկ, եթե Արցախի սղնախականների դեմ ամեն անգամ հայտնվում էր միայն դրսեկ թշնամին, թեկուզ և երկու դեմքով՝ թուրք ու պարսիկ, ապա սյունեցիներն ստիպված էին միշտ և ամենուր կռիվ տալ երկու ճակատով։ Այն ժամանակ Սյունիքում ու հարակից հայկական շրջաններում բնակվում էին մահմեդական տարբեր ցեղախմբեր ու համայնքներ, որոնք եկել էին այդ վայրերում ստեղծված խանությունների հետքերով, ամեն կերպ հովանավորվել էին նրանց կողմից և հայոց ազատագրական պայքարի օրերին ոչ թե հանդես էին գալիս անկողմնակալ դիտողի դերում, այլ կանգնած էին թշնամու կողքին կամ նրա համար ճանապարհ էին բացում դեպի հայոց բերդերն ու բնակավայրերը։ Եվ հասկանալի է, որ օսմանյան զորքերի դեմ ճակատելուց առաջ կամ դրա հետ միաժամանակ սյունեցիները պիտի հաղթահարեին տեղական խաների ու նրանց ցեղակիր համայնքների պարտադրած դիմադրությունը։

Օտար բռնակալության դեմ ապստամբած Սյունիքը

աղբյուրներում մեծ մասամբ կոչվում է Ղափան։ Հենց Դավիթ Բեկի շարժման հանգամանքների մասյանն էլ հայտնի է այդ անվամբ՝ «Պատմութիւն ղափանցվոց»։ «Ղափանը» հին հայկական «Կապանն» է, արաբական տիրապետությունից հետո ստեղծված Սյունյաց թագավորության մայրաքաղաք-բերդամբոցը, որը գտնվում էր Մեծ Սյունիքի Բաղք գավառում և պատմությանն առավելապես հայտնի է Բաղաց Կապան անունով։ Եսին դարերում այդ նշանավոր քաղաքի անունը տարածվեց ոչ միայն գավառի, այլև ամբողջ Սյունիքի վրա։ Որոշ աղբյուրներում, հատկապես Իսրայել Օրիի ժամանակ, Կապան-Ղափան էր կոչվում Մեծ ու Փոքր Սյունիքների տարածքը՝ բուն Բաղք գավառի մոտերքից մինչև Մուխանք դաշտը կամ Կուրի ու Արաքսի միախառնման վայրը։ Այս երկրամասը երբեմն էլ կոչվում էր Ղարաբաղ ընդհանուր անունով, և դա չէր խանգարում, որպեսզի տարբերակված ըմբռնումներ լինեին նաև բուն Կապան-Սյունիքի և բուն Արցախ-Ղարաբաղի վերաբերյալ։

Սյունիքը կամ Կապան աշխարհը հին Հայաստանի ամենախոշոր նահանգներից մեկն էր՝ հռչակված և՛ իր լեռնային անանցանելի-անառիկ բնությամբ, և՛ այդ բնության հարմար տեղերում հին-հին դարերում կառուցած և դարեդար ամրացված բերդերով։ «Պատմության» («Պատմութիւն ղափանցւոց») էջերում նահանգը կոչվում է նաև Յոթնաբերդյան Կապան, որով նկատի են առնվում յոթ նշանավոր բերդերը և ոչ թե բոլոր մեծերն ու փոքրերը, որոնցով ծածկված էր ամբողջ նահանգը, և որոնք բոլորն էլ, մեծ պայքարի օրերին նորոգված ու ամրացված, գործում էին իբրև զորակայաններ ու պաշտպանական հենակետեր։

Եվ այսպես. 18-րդ դարի սկզբին, Արցախի պես, Սյունիքն էլ եռում էր ազատագրական պայքարի խմորումներով, որովհետև Իսրայել Օրիի, Եսայի կաթողիկոսի ու հայրենասեր մեծիքների ջանքերով ոտքի էր ելել պարսիկ ու թուրք բռնավորների ճիրաններում տառապող ժողովուրդը, որը հավատում էր, թե հյուսիսի մեծ թագավորի օգնությամբ ինքն անպայման ի վիճակի պիտի լինի թոթափել օտար տիրապետությունը և վերականգնել իր պետական անկախությունը։ Ընդվզումների ու ըմբոստ ելույթների կրակը չէր կարող աննկատ մնալ բռնակալների աչքից։ Ճիշտ է, Պարսից տերությունը գնում էր դեպի խարխլում, և այն ի վիճակի չէր ռազմական ուժով հանգցնելու բորբոքված կրակը։ Սակայն Օսմանյան կայսրությունը, որ փաստորեն իր արյունոտ թաթն էր դրել Հայաստանի ու ամբողջ Անդրկովկասի վրա, չէր կարող հանդուրժել հպատակեցված ժողովրդի, մանավանդ այլադավանի որևէ ելույթ, որքան էլ այն արդար լիներ ու հիմնավոր։

«Պատմության» հավատումով, երբ դանակը հասել էր ոսկորին, և Կապան-Սյունիքի հայությունն արդեն պատրաստ էր վճռական ճակատամարտի ելնելու իր ազատության համար, բացակայում էր միայն մի հմուտ առաջնորդ։ Եվ ահա այդ ժամանակ Ստեփանոս Շահումյանը («վանքեցի, ի կողմանցն Կալերու») վեր է կենում, գնում Մցիսիթ, ուր վրացի Շահնավազ խանն էր նստում։ Հայազգի պատգամախոսը այդ օրերին հայոց ազնվականների հետ սերտ կապեր ու համագործակցության պայմանագրություն ունեցող Շահնավազին պատմում է իրերի վիճակը և առաջնորդ է խնդրում իր երկրի ազատագրական պայքարը գլխավորելու համար։ Վրաց տիրոջը հաճելի է թվում այս խնդիրքը, և նա «զԴավիթ զեկն մծխիթացի ի հայկազեանս տոհմէ» ուղարկում է Սյունիք՝ «զօրաժողով լինել անդ և պահել զերկիրն Հայոց»։

«Պատմության» բնագիրը հյուսվել է Ստեփանոս Շահումյանի պատումի հիմքի վրա։ Թե որքան է հավաստի այս հատվածը (հետագայում նկատելի են թվերի ու փաստերի բացահայտ անճշտություններ, իր ու յուրայինների ծառայությունների ուռճացում), մանավանդ, որքան հաստատ է մեր բանախոսի դերը Դավիթ Բեկին Սյունիք բերելու գործում, դա չէ կարևորը։ Իվան Կարապետը Ռուսական արքունիք հղած իր նամակներից մեկում հաղորդել է, որ Վրաստանից Դավիթ անունով մեկը, 30 գինակիցների հետ միասին, եկել է Սյունիք, թե՝ «Ինձ Շահնավազն է ուղարկել, որ ձեր երկրին տիրություն անեմ»։

Դավիթ Բեկի հետ էին Հայաստանի տարբեր նահանգներից սերված երիտասարդներ, որոնցից շատերը, հատկապես Գանձակեցի Մխիթարը, վրաստանցի Մեծ Գորգին, Փոքր Գորգին, Բայինդուրը, Ավթանդիլը, Ծատուրը, հետագայում դառնում են

իրենց զորավարի հավատարիմ գործակիցները և անմահանում են հայրենապաշտպան կռիվներում։

Դավիթ Բեկը Սյունիք հասավ 1722 թ.։ «Պատմության» մեջ սկզբից ևեթ նա ներկայացված է այսպիսի փառավոր գնահատականներով. «Եւ ինքն Դաւիթ ազնուական էր, բարեպաշտ, արդարակրօրով, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զորաւոր բանիւք և գործովք, տեղեակ գրոց, նախանձնայոյզ բարեաց ազգի և վրեժխնդիր վնասակարաց նորա»։

Բավական պարտավորեցնո՞ղ բնութագրություն, որը հետագայում բոլոր կետերով արդարանում է, քանի որ Սյունիքի ազատագրական պայքարի սանձերն իր ձեռքը հավաքած զորապետը գործունեության շուրջ վեց տարիների ընթացքում, 1722—1728 թթ., հանդես է գալիս որպես շրջահայաց քաղաքագետ, քաջ ու իմաստուն, հայրենիքին անսահմանորեն նվիրված և նույնն իր ենթականերից պահանջող զորավար։

Դավիթ Բեկը նախապես գիտե՞ր, թե ի՞նչ ծանրագույն պարտականություն էր բաժին ընկել իրեն, ինչպե՞ս հայերն այս լեռնաստանում կրում են թուրք ու պարսիկ բռնավորների, հարևան խաների, նույնիսկ իրենց իսկ ավանդական հողերի վրա արդեն սանձարձակորեն տիրություն անող քոչվոր ցեղերի ջարդաշարտ ճնշումը։ Կարծիք կա, թե նա հենց այս կողմերից Վրաստան ծառայության գնացած մի ազնվական էր, որ եկավ հայրենի եզերքին արյան պարտքը տալու։ Ինչ էլ որ լինի, նա հանկարծակիի չեկավ իրեն վիճակված նահանգի ահավոր կացությունից։ Հասնելով Եռաբլուր բարձրավանդակը Գորիսի հարավ-արևմուտքում, Սիսիանի սահմանագլխին՝ անմիջապես գործի անցավ, իր շուրջը հավաքեց չորս հարյուր հայրենասերների, «որք նեղեալք և տառապեալք էին ի դառն ծառայութենէ այլազգեաց», հարձակվեց Եռաբլուրին տիրացած զարաշոռլու ցեղի վրա և հալածեց։ Այնտեղից էլ եկավ Շինուհայր գյուղը, իր մոտ հրավիրեց Տաթևի առաջնորդին և, նոր զորահավաք անելով, տեղի մեծամեծների հետ խորհրդակցեց առաջիկա անելիքների մասին։ Եվ այստեղ էլ, զարաշոռլուների ջարդից կատաղած ջիվանշիր կամ Երեսուներկու կոչվող վաչկատուն ցեղը մեծ զորքով (իբր վեց հազար մարդ) եկավ մեր նորընծա զորավարի վրա։ Պատերազմը տեղի էր ունենում Եռաբլուրի բարձրավանդակում. և տևեց

ավելի քան երկու օր ու գիշեր։ Դավիթ Բեկը հաղթեց սանձարձակ քոչվորներին, «էառ զամենայն ինչս նոցա՝ զզեն, զսուր, զերիվար և զամենայն աղխս նոցա»։

Առաջին այս բախումներից դժվար չէր եզրակացնել, որ օսմանցիների հետ գլխավոր պատերազմը վարելուց առաջ անհրաժեշտ է երկիրը մաքրել թուրքական ցեղերից ու հարևան խաների զրածոներից, որովհետև ոչ ոք չի կարող հաջող ճակատամարտ մղել դրսեկ թշնամու դեմ, եթե նախօրոք չի ապահովել սեփական թիկունքը և աջ ու ձախ թևերը։

Հաջող սկիզբը՝ զարաշոռլուների ու ջիվանշիրցիների ջարդը, Դավիթ Բեկի համբավը տարածում է լեռնաստանում։ Տարբեր կողմերից, Սյունիքի բոլոր գավառներից, նույնիսկ ավելի հեռուներից խումբ-խումբ հայեր են գալիս, զինված միանում նրա զորքին, երդվում նրա հետ կռվել ներսի ու դրսի թշնամիների դեմ և երկիրն ազատագրել, վերականգնել հայրենի իշխանությունը։ Առաջինը Դավիթ Բեկի մոտ եկավ Թորոսը՝ Ջավնդուրի տերը։ Եվ Դավիթ Բեկը նրան ընդունեց, զորապետ կարգեց, վերադարձրեց Ջավնդուր՝ հետն ուղարկելով նաև իր զինակից Բայինդուրին։ Ապա եկան Հին Ջուղայի տերերը՝ մելիք Մազան, Դիլանչի կոչված մեկի որդիները։ Սկզբում հրաժարվեցին, սակայն հետո եկան, միացան Հալիձորի մելիք Փարսադանն ու նրա փեսա Տեր Ավետիքը։

Իհարկե, բոլորը չէ, որ հոժարակամ զինվորագրվում էին ազատագրական պայքարին։ Կային այնպիսիները, որոնք, չբավատալով Դավիթ Բեկի առաքելությանը, իրենց հեռու էին պահում նրա մարտական գործողություններից։ Կային նաև երդվյալ թշնամիներ, որոնք մինչ այդ մուսուլմանություն էին ընդունել և պիտի հավատարմորեն ծառայեին սուլթանին, ուրեմն և կռվեին Սյունիքի «անգորրը» խանգարող ինքնակոչի դեմ։ Դրանցից էր Տաթևի մելիք Դավիթը, որն առաջին իսկ օրերին զորք հավաքելով որոշել էր ճակատամարտ հարդարել Դավիթ Բեկի դեմ։ Զորավարն անմիջապես պաշարեց նրա բերդը, երկու օրվա ընթացքում նվաճեց այն, իսկ ուրացած մելիքին ձերբակալ հասցրեց Շինուհայր և, եկեղեցին մտցնելով, ստիպեց տասներկու օր շարունակ «յանդիման ամենեցուն, բարձր ձայնիւ» կրկնել. «Լո՛յս Լուսաւորչի հավատոյն, վա՛յ

ուրացողին»։ Եվ ապա գլխատել տվեց նրան և ինքը եկավ, նստեց Տաթևում։

Իբրև հեռատես զորավար Դավիթ Բեկը հետևում էր ազատագրական բանակի անազարտությանը և թույլ չէր տալիս այն դարձնել մի խառնամբոխ, որը կարող էր հեշտությամբ ցրվել ամենափոքր անհաջողությունից։ Եվ առհասարակ նա կողմնակից էլ չէր մեծ բանակի, որը դժվարությամբ պիտի շարժվեր լեռնային բավիղներով և կտրտված տեղանքով։ Իր տրամադրության տակ գտնվող ամբողջ զորքը բաժանել էր փոքրիկ զորախմբերի, յուրաքանչյուրին տեղավորել որևէ բերդում և հանձնարարել շրջակայքի ապահովությունը։ Զորախմբերի գլուխ էին կանգնած տեղական մելիքները կամ հարյուրապետները, որոնց հետ խորհրդականների դերում էին զորավարի հավատարիմ զինակիցները։ Այսպիսով, ամբողջ նահանգը ծածկվել էր զինական մանր, բայց վերին աստիճանի առույգ ու ճկուն օջախներով, որոնց ուժերը հեշտությամբ կարելի էր տեղից տեղ շարժել ըստ անհրաժեշտության։ Իրար օգնության հասնելու համար նրանց բավական էր մի թեթև ահազանգ։ Հարձակման ու նահանջի պահերին, ռազմական տեղաշարժերի ժամանակ նրանք ցուցաբերում էին այնպիսի դյուրաշարժություն, որ տափաստանների լայներին սովոր դանդաղաշարժ թուրքերը գլուխներն էին կորցնում։

Շարժման նախնական շրջանում, ճիշտ է, Դավիթ Բեկը կարիք ուներ զինական օգնության։ Եվ նրա օգնության կանչին արձագանքեցին Արցախի սղնախականները։ Հայտնի է, օրինակ, որ հենց 1722-ին Մեծ սղնախից Ավան հարյուրապետը երկու հազար ընտիր զորքով եկավ, պաշարեց Որոտնաբերդը, ուր տեղակայված էին Թուրքաց հիմնական ուժերը։

Եվ այսպես, երկու տարի, տեղական մանր ու մեծ պատերազմների մեջ կոփվեց լեռնային երկրի ազատագրական բանակը։ Ջարդվեցին Սյունյաց գավառներում վխտացող Թուրքմեն ցեղերը, որոնք զինված շարժվում էին իրենց անհամար խաշների հետևից, և ուր ոտք էր դնում ոչխարը, նրանք իրենցն էին համարում։ Դրանց մնացորդները դուրս շպրտվեցին Սյունյաց սահմաններից։ Ընկճվեցին հարևան այն խանությունները, որոնք առաջներում, իրար հերթ չտալով, գալիս էին անպաշտպան լեռնատանի վրա, կոտորում կամ գերեվարում բնակչությանը, ավերում շենքերն ու ավանները։ Բարգուշատի, Օրդուվատի, Նախիջևանի խաները, նույնիսկ Արաքսից այն կողմ գտնվող Ղարադաղի տիրակալը առանձին-առանձին և միավորված ուժերով փորձեցին խլացնել Սյունիքի ազատամարտը։ Բայց ամեն անգամ ջարդ կերած վերադարձան իրենց որջերը և դարանամուտ սպասեցին Օսմանյան կայսրության զորքին, որը, նրանց համոզմամբ, պիտի գար և վերջ տար այս գյավուրների անհնազանդությանը։

Իսկ Դավիթ Բեկը, տեղական պատերազմներում ձեռք բերած հաջողություններն ընդունելով որպես նախավարժանք, պատրաստվում էր ամենակարևորին։ Չէ՞ որ ռուս-Թուրքական պայմանագրով Հայաստանն ու Անդրկովկասը տրված էր Օսմանյան կայսրությանը, և սա էլ չէր կարող հանդուրժել, որ իր տիրապետության սահմաններում մի հայ իրեն հայտարարի ինքնիշխան և աջ ու ձախ վերացնի Թուրքական հենակետերը։

Դավիթ Բեկը Տաթևից փոխադրվեց Հալիձոր և տեղի հին բերդը նորոգեց, ամրացրեց, դարձրեց իր հիմնական զորակայանը։ Սակայն նա պարապ նստողը չէր և, զորաջոկատները ռազմական անթերի պատրաստությամբ կոփելու հետ միասին, չանում էր իր իշխանության սահմաններում չթողնել ոչ մի կետ, որի վրա կարողանար հենվել թրքությունը։ Իր գալըստյան երրորդ տարում, այսինքն՝ 1725-ին, վերջնականապես նվաճում է Որոտնաբերդը։ Ապա զորք է ուղարկում Բարգուշատի խանի դեմ։ Կատաղի պատերազմ է սկսվում, որին մասնակցում է նաև Նախիջևանի խանն իր 14-հազարանոց զորաբանակով։ Դավիթ Բեկը Սիսիանից զորք է հավաքում, հասնում ճակատ։ Հայերն սկզբում հաղթում, հալածում են Թուրքերին։ Սակայն հետո սրանք ետ են դառնում, համառորեն դիմադրում, նույնիսկ մեծ վնասներ հասցնում, հայերին ստիպում նահանջել մինչև Սիսիան։

Այս անհաջողությունը չի ընկճում Դավիթ Բեկին։ Զորախմբերը վերադասավորելով՝ նա արշավանքի է գնում դեպի Մեղրի, ուր հայտնվել էին Բարգուշատի Փաթալի սուլթանը, Լևազի Սաֆիկուլի խանը, Օրդուվատի զաղին և հարևան մահմեդական իշխողները՝ բազմահազարանոց իրենց զորքերով։ Մեկօրյա համառ մարտերից հետո հայերը հաղթում են, զորավա-

ը վերադառնում է Հալիձոր։ Սակայն թուրքերը նորից հարձակման են անցնում՝ Թավրիզից ու Ղարադաղից ստացած ռազմական համալրումներով։ Նրանց հաջողվում է գրավել Մեղրի ավանի Փոքր թաղը։ Մեղրեցիները հերոսաբար պաշտպանվում են այնքան ժամանակ, մինչև վրա է հասնում Բայինդուրը՝ Զավնդուրի երկուհազարանոց զորամասով և, հաղթելով թուրքերին, հալածում է մինչև Օրդուվատի մատույցները։

«Պատմութիւն զափանցւոց» մատյանը նկարագրում է նաև ուրիշ ճակատամարտեր, որոնք տեղի ունեցան Սյունիքի սահմաններում։ Նրանցում համարյա միշտ հաջողությունը Դավիթ Բեկի ու նրա զորապետների կողմն էր։

Եղան, անշուշտ, նաև ցավալի միջադեպեր, ինչպես Արծվանիկի մելիք Ֆրանգյուլի դավաճանությունը և ուրացությունը, Մխիթար բեկի կարճատև գժտությունը Դավիթ Բեկի հետ... Սակայն Դավիթ Բեկն օրըստօրե ամրապնդում էր իր երկրի պաշտպանությունը, պատրաստվում էր այն մեծ բախումներին, որ լինելու էին օսմանցիների հետ։

Օսմանյան բանակներն Անդրկովկաս մտան 1724-ին։ Իրենց ճանապարհին կոտորած ու ավեր փռելով՝ հաջորդ տարվա գարնանամուտին նրանք հասել էին Սյունիքի սահմաններին։ Դավիթ Բեկը նախատեսել էր այս հանդիպումը և հաջողությամբ ետ վանեց թուրքաց առաջին հարվածները։ Մայիսի 11-ին արքին Իվան Կարապետը Ռուսաց արքունիքին ներկայացրած զեկույցում նշում էր, որ Դավիթ Բեկը Ղափանի հայերին «հավաքել է իր շուրջը, թուրքերը եկել էին, ճակատամարտ տվեց, և հիմա... այնտեղ թուրք չկա»։

Սակայն շուտով դրությունը փոխվեց ի վնաս ազատամարտիկների։ Օսմանյան մեծաքանակ բանակը, որ Սյունիքի դռներին էր հասել Բեջիր և Արաբ-Ալի փաշաների գլխավորությամբ, խանդավառեց Դավիթ Բեկից ջարդ կերած խաներին։ Նրանց նորից զորք հավաքեցին, միացան օսմանցիներին։ Իսկ Դավիթ Բեկի զինակիցները, թշնամու երևույթից սարսափած, լքեցին իրենց քաջ զորավարին։ Շատերը նրանցից, տմարդի ու հայրենադավ, անցան թուրքերի մոտ, գումարվեցին նրանց ահարկու ուժին։ Եվ այսպես, Հալիձորում մնացած մի խումբ քաջերի դեմ արշավի ելան օսմանցիները՝ իրենց

հետ առած Օրդուվատի ու Ղարադաղի, Բարգուշատի ու Զավընդուրի, Սիսիանի ու Գողթնի, Ագուլիսի ու Մեղրու զորքերը՝ շուրջ 60—70-հազարանոց մի բանակ։ 60—70-հազարանոց բանակ՝ նահատակության պատրաստ մի խումբ հերոսների դեմ, որոնք Հալիձորի բերդին և Դավիթ Բեկի հնարամտությանն ու քաջությանն ապավինած, հավատում էին իրենց աստղին։ Եվ այստեղ է, որ նոր ուժով փայլեց Դավիթ Բեկի ռազմավարական տաղանդը։ Նա խուճապի չմատնվեց ամենաողբերգական իրադրության մեջ։ Իր շուրջը համախմբեց ամենավստահելի զինակիցներին, ամրացրեց բերդը, ապահով թաքստոցներին վստահեց ռազմամթերքն ու սննդի պաշարը։ Այնուհետև մի փոքրիկ զորախմբով ելավ բերդից և Հալիձորի գետի վրա երկու օր կռիվ տալով փակեց թշնամու ճանապարհը դեպի ամրոց։ Անհավասար, ահռելի կռիվ էր դա։ Մեկը հարյուրի դեմ։ Եվ մեկը պետք է հաղթեր հարյուրին, եթե նրա դեմ կանգնած թշնամիներին չառաջնորդեին տանու դավաճանները։ Թուրքաց բանակում կռվող հայերն իրենց հայտնի անցերով գետը շրջանցեցին՝ փորձելով թիկունքից հարվածել հարազատ զորավարին։ Այն ժամանակ Դավիթ Բեկը դիրքերից հանեց իր զորքը, փակվեց Հալիձորի բերդում և անցավ խուլ պաշտպանության։

Օսմանյան զորքերը Հալիձորի վրա թնդանոթային ու հրացանային կրակ էին թափում։ Մի քանի տասնյակ վիթխարի մեքենաներով գալիս-զարկվում էին բերդապարիսպներին՝ փորձելով այդ մեքենաների վրայով զինված խումբանը ներս անցկացնել և տիրել բերդին։ Սակայն խիզախ պաշտպանվողները կոտորում, վար էին թափում նրանց։ Եվ եթե այս քաջության գործը գլխավորում էր Դավիթ Բեկը, ապա պարիսպների վրա, ռազմիկների ու աշխարհական կռվողների անօրինակ քաջության անմիջական կազմակերպիչները Մխիթար բեկն ու Տեր Ավետիսն էին։ Այդ նրանք էին խրախույս կարդում անձնազոհ պաշտպաններին. «Արիացե՛ք, մի երկնչեք, եկե՛ք մեզ հետ։ Եթե հասել է մեր վախճանը, ապա մեռնենք քաջությամբ։ Քանզի լավ է՝ մենք քաջաբար մեռնենք պարիսպներից այն կողմ, քան այստեղ մեր աչքերի առաջ տեսնենք մեր ընտանիքների ու բարեկամների մահը և այլ դըժբախտություններ»։

Այս էր, որ գոչեցին նրանք՝ փոքրաթիվ զորքը հոգեպես պատրաստելով գերմարդկային ճիգի ու անօրինակ խիզախության։ Հետո կայծակնաթափ դուրս թռան պարսպի դաղտնի դռներով՝ իրենց հետևից տանելով երեք հարյուր զինավառ հալիձորցիներին։

Ըստ երևույթին, հայ քաջերը ծրագրել էին հարձակվել Թուրքերի այն զորամասի վրա, որն անտեսանելի է մյուսների համար։ Ապա նրանք գիտեին, որ նման դեպքում կռվի բախտը որոշում են հարվածի հանկարծակիությունն ու ուժգնությունը, և արծիվների նման վրա տվին, սկսեցին կոտորել աջ ու ձախ։ Նրանց հարձակման թափը, հարվածների ահռելի ուժն ու վրձռականությունը խուճապի էին մատնել թշնամիներին, որոնք սարսափից իրար կոխկրտելով նահանջում էին ու աղաղակում, թե ով ուզում է ապրել, թող փախչի՛, գլո՛ւխ պրծացնի։ Թուրք առաջապահները հնեղեղի պես ետ էին հոսում՝ իրենց հետ քշած տանելով զորական այն կուտակումները, որոնք անտեղյակ էին ճակատային գծից և մտածում էին, թե ալլահի պատիժն է գալիս իրենց վրա։ Անասնական սարսափը բերդի մատույցներից ետ էր վանում վիթխարի ու խառնիճաղանջ մի բանակ, որը կոտորվում էր հայ կտրիճների հարվածներից, բերդապահների հրացանազարկերից, բայց ավելի շատ անկանոն ու խուճապային նահանջի թափից, որի ժամանակ խելագար զորքն ինքն էր իրեն ոտնատակ տալիս ու ոչնչացնում։

Ահա մի հաղթանակ, որ հրաշքի էր նման, բայց իրականություն էր, այն երջանիկ երևույթը, որից վերսին կենդանացավ ու զարգացավ Սյունիքի ազատագրության գործը։ Պարտվել էր օսմանցիների բերած ամենամեծ բանակը և այն էլ մի բուռ հայ քաջերից, որոնց լքել էին մերձավորներն ու հայրենակիցները։ Հասկանալի է, թե հաղթանակն ինչպիսի՞ ոգևորություն պիտի առաջացրած լիներ իրենց՝ հաղթողների սրտերում և ինչպիսի՞ հեղինակություն ու փառք նրանց շուրջը։

Դավիթ Բեկի զորքը նորից ստվարացավ ժամ առ ժամ։ Այդ քաջ ու իմաստուն զորավարն սկսեց մտմտալ նոր ու հանդուգն ծրագրեր, իսկ ամենից առաջ՝ թշնամուն հալածելու և Սյունիքի սահմաններից վռնդելու, հայրենի հզոր մի իշխանապետություն ստեղծելու գործը, որը պետք է հաստատուն

հենարան դառնար Հայոց աշխարհի փրկության և ինքնուրույն պետականության վերականգնման համար։

Դավիթ Բեկը ժամանակը հարմար էր համարում Թուրքաց դեմ իրանցիների հետ դաշնակցելու և Մխիթարին ու Տեր Ավետիսին ուղարկեց Արաքսի ափերին Թուրքական հարձակման առաջն առնելու նպատակով տեղակայված պարսիկ խանների մոտ, առաջարկեց միասնական ուժերով հնել ընդհանուր թշնամու դեմ։ Պարսիկները նրանց տրամադրեցին միայն մի փոքրիկ ջոկատ, և, սակայն, այդքանն էլ բավական էր, որպեսզի հայերը հարձակվեն Մեղրին նվաճած օսմանցիների վրա և ճարպիկ ռազմավարությամբ նրանց այնտեղից դուրս անեն ու սաստիկ ջարդ տան արաքսամերձ կիրճերում։

Հայ ազատամարտիկները Մեղրիում հսկայական ավար ձեռք բերեցին և, որ շատ կարևոր է, կոտորեցին Թուրք հարկահաններին ու ոչնչացրին նրանց բերած հարկապահանջության 88 հազար թղթերը։

Մեղրիի հաղթանակն առավել բարձրացրեց Դավիթ Բեկի և նրա գլխավորած ազատագրական շարժման հեղինակությունը։ Դրանից հետո էր, 1727-ին, որ օսմանցիների դեմ նոր կռվի պատրաստվող շահ Թահմազ Բ-ը բարեկամաբար ընդունեց Կապանից ժամանած հայկական պատվիրակությանը, հատուկ հրովարտակով Դավիթ Բեկին հռչակեց հայկական նահանգի լիիրավ տերը և հարևան խանների գլխավորը («կացուցի զքեզ իշխան և գլուխ իշխանաց մերոց, որք են ի կողմանըսդ յայդոսիկ»), այլև արտոնեց դրամ կտրել։

Պատվիրակությունն իր հետ հայրենիք էր բերում շահի թանկագին նվերները Դավիթ Բեկին ու նրա զորապետներին, մի խաչվառ-դրոշ և գերագահի հանձնարարությունը՝ «Դու ելիր, քո շուրջը ժողովիր այդ կողմերի բոլոր զորքերն ու խաներին և քո երկրի սահմաններից դուրս քշիր օսմանցիներին»։

Եվ շահական օգնությամբ ավելի զորացած Դավիթ Բեկն սկսեց Արաքսի ափերի մաքրումն օսմանցիներից։ Նրա զորամասերը Մխիթար բեկի ու Տեր Ավետիսի գլխավորությամբ երկրից դուրս վռնդեցին, հալածեցին Թուրք հարստահարիչներին, պատժեցին Ագուլիսի ու Ջավնդուրի դավաճան տերերին և հայոց այդ լեռնային երկրամասում ստեղծեցին այն

համեմատական անդորրն ու ապահովությունը, որ շարժման առաջին նպատակն էր։

Դավիթ Բեկը վախճանվեց 1728 թ., ինչպես ականատեսը՝ «Պատմության» աղբյուրն է հայտնում, «խաղաղությամբ ի տան իւրում՝ ի Հալի ձոր»։

Կա մի այլ, ոչ այնքան վստահելի աղբյուր (Ղուզանենց Թաղիի հիշատակարանը), որի համաձայն՝ Դավիթ Բեկը մահացել է ավելի վաղ՝ 1726-ին և ոչ թե խաղաղ մահով, հիվանդությունից, այլ թշնամիների դեմ ճակատելիս։ Ի հաստատումն այս վարկածի՝ բերվում է նաև Մխիթար բեկի մի աղերսագիրը 1726 թվականից, ուղղված Ռուսաց ցարին։ Իբր, իրավ, Դավիթ Բեկն այդ թվականին զոհված պետք է լիներ, որպեսզի նրան փոխարինած Մխիթարն էլ իրավունք ունենար զափանցիների անունից նամակ հղել Ռուսաստան։ Ըստ այսմ, կասկածի տակ է առնվում «Պատմության» մեջ հաջորդ երկու տարիների հերոսական մարտերի շարադրանքը, և երկրամասի համար ենթադրվում է մի խղճուկ վիճակ, որ իսկապես կարելի է մակաբերել Մխիթարի աղերսագրից (լեզգիները եկել, մեզ կոտորել են, ղզլբաշ պարսիկները՝ նմանապես, օսմանցիները՝ ևս... Եկեք, մեզ փրկեցեք, «որ այս մնացեալ անչարակ լեալ քրիստոնեայքս... չլինեն անօրինաց գերի»)։

Որ հիշյալ աղբյուրը կողմնակի մարդու ձեռքով է սարքված և ի զորու չէ ականատես ու դեպքերի մասնակից Ստեփանոս Շահումյանի վկայությունը ջնջելու, դա վեր է ամեն մի կասկածից։ Ինչ վերաբերում է Մխիթարի անունից 1726-ին ուղարկված աղերսագրին, ապա դա ինքնին արժանահավատություն չի հաղորդում անարժանահավատ աղբյուրին։ Նախ՝ այն պատճառով, որ Մխիթարի աղերսագիրը վերաբերում է ոչ թե 1726-ի վիճակին, այլ առհասարակ նախընթացին, քանի գիտենք՝ այդ թվականին Ղափան-Սյունիքի վրա ո՛չ լեզգիներ են արշավել, ո՛չ ղզլբաշներ։ Ապա՝ հասկանալի է, որ զինական օգնության աղերսագիր ուղարկողը պետք է իրենց վիճակի տհաճ գույները թանձրացներ։ Եվ, երրորդն ու կարևորագույնը. Պարսից շահի հետ բանակցություններ վարող և նրա բարյացակամությանն սպասող Դավիթ Բեկը, ամենայն հավանականությամբ, ներհուն դիվանագետ էր նաև և չէր կարող ցարին նամակ հղել՝ խնդրելով զորքեր ուղարկել Անդրկովկաս։ Ի՞նչ մի տարօրինակ բան կա, որ նման նամակ է ստորագրել նրա հավատարիմ զորապետներից մեկը՝ մի քանի մեծավորների հետ միասին (Եղազար, Ավթանդիլ, Պապաս-երևի Պապ, Բանդուր-երևի Բայինդուր, Զուրապ և Մարտիրոս)։

Մնում է վստահել «Պատմութիւն զափանցւոց» մատյանի տեղեկությանը, մանավանդ որ նրա տվյալները տրամաբանորեն հյուսվում են իրար, ստուգվում այլազան աղբյուրներով։

Իրողությունն այն է, որ Դավիթ Բեկի մահը ճակատագրական է եղել ազատագրական շարժման հետագա ընթացքի վրա։ Վախճանվեց քաջ, իմաստուն և հայրենանվեր մի գործիչ, որը ծնվել, ասպարեզ էր նետվել ժամանակին, հայրենի նահանգը վեցամյա դաժան փոթորիկներից ու ալեբախումներից հանել երազելի ափ։ Նա իրականացրել էր, թեպետև մեկ նահանգի սահմաններում, հայոց ազատագրության երազանքը, որը, սակայն, դեռ չէր արմատավորվել, չէր առնականացել, որպեսզի կարողանար դիմանալ չար բախտի բերելիք նոր հարվածներին։ Նրան պիտի՞ հաջորդեր այն արժանավորը, որի կամքով ու ամենօրյա տքնանքով ամրանալու, անառիկ էր դառնալու ձեռք բերվածը։ Մենք տեսանք, որ Սյունիքում ուրք դնելով՝ «հայկազն մծխիթացին» իր հետ բերել էր Վրաց թագավորի աջակցության երդումը, Ռուսաց թագավորի հովանավորության խոստումները, սակայն շատ շուտով կանգնեց մի այնպիսի վիճակի առաջ, երբ ազգը՝ ցրված ու տարանջատ նահանգներով, միայնակ պիտի դիմակայեր իր վրա բոլոր կողմերից եկող հարվածներին։ Դավիթ Բեկը կարողացավ ազգի մի հատվածը տանել վճռական պայքարի, ձեռք բերել երազած հաղթանակը և, իբրև շրջահայաց մարդ ու հեռատես պետական գործիչ, փորձեց ձեռք բերածի համար նոր հենարաններ փնտրել նույնիսկ մահմեդական աշխարհում։ Հին առածն ասում է՝ բարեկամիս բարեկամը իմ բարեկամն է։ Դավիթ Բեկն արդեն փորձառու մարդ էր, գիտեր, որ ճիշտ է այդ առածը, բայց նույնը չի կարելի ասել «թշնամուս թշնամու» մասին. թշնամուս թշնամին ոչ միայն թշնամիս չէ, այլև կարող է դառնալ բարեկամս ու գործակիցս։ Եվ մեր հերոսը որոնեց ու գտավ իր թշնամու թշնամուն, ձեռք բերեց նրա բարեկամությունն ու համագործակցությունը։ Մի շրջահայաց քայլ,

որ կարող էր ամուր հենարան դառնալ, մինչև որ ստեղծվեին ավելի նպաստավոր ու նախընտրելի պայմաններ։

Դավիթ Բեկին փոխարինեց Մխիթար սպարապետը՝ ազատագրական մարտերում կոփված, քաջ ու հայրենանվեր զորապետը, որը ռազմական տեսակետից արժանի էր Հալիձորի հերոսին։ Սակայն թշնամիներով շրջապատված, նույնիսկ հարազատների մեջ այնքան հակառակորդներ ու դավաճաններ ունեցող Սյունիքին պետք էր ոչ միայն հերոս զորապետ, այլև ամուր մի բռունցք, դեպքերի ընթացքը կանխատեսող և հրամտորեն կողմնորոշվող գործիչ, ինչպիսին Դավիթ Բեկն էր։

Մխիթար սպարապետը միայն մեկ տարի կարողացավ պահել իշխանության սանձերը։ Տարին նոր էր բոլորել, որ տարաձայնություն ընկավ նրա զինակիցների միջև, անմիաբանությունը քայքայեց հազիվ ոտքի կանգնեցրած իշխանության մարմինը։ Եվ օսմանցիները պաշարեցին Հալիձորի բերդը։

Այս աղետալի պահին Տեր Ավետիսը՝ անցյալ պատերազմների հերոսն ու Մխիթարի զինակիցը, թշնամու առաջ բացեց Հալիձորի դարպասները։ Թուրքաց փաշան սկզբնապես նրան խոստացել էր բերդի բնակչությանը ոչ մի վնաս չտալ։ Սակայն ներս խուժելով՝ այնտեղ գործեց թուրքավարի և մեկ օրվա մեջ հզոր ամրոցի տեղ թողեց մոխիրների և դիակների կույտեր։

Տեր Ավետիսի աչքերի առաջ էր կատարվել այս բոլորը։ Եվ նա ուշացած զղջումի տառապանքով գնաց օտարության մեջ՝ Երուսաղեմո՞ւմ, թե՞ Հռոմում, աստծուց թողություն աղերսելու իր ստոր դավաճանության համար։ Իսկ խարդավանքի զոհը՝ Մխիթար սպարապետը, Հալիձորից հետո նորից զորք էր հավաքում, հարձակվում թշնամիների վրա, այս ու այնտեղ ջարդում նրանց, հալածում իր նահանգի սահմաններից։ Մի անգամ էլ արշավեց թշնամիների որջ դարձած Օրդուվատի վրա, կոտորեց պաշարյալ թուրքերին, հսկայական ավարով (հարյուր վաթսուն ուղտաբեռ) վերադարձավ Խնձորեսկ, որը դարձրել էր իր զորակայանը։ Սակայն վրեժխնդրությունից սարսափած խնձորեսկցիք մտածեցին, թե թուրքերը կգան, իրենց տուն ու տեղն էլ կավերեն այնպես, ինչպես ավերեցին Հալիձորը։ Առաջարկեցին, որ Մխիթարը հեռանա իրենց մոտից և տեսան, որ նա Խնձորեսկից հեռացողը չէ, սպանեցին

նրան, ապա բռնակալի առաջ հավատարմություն ցուցադրելու համար գլուխը տարան Թավրիզում նստող թուրք փաշային։

«Պատմությունն» ասում է՝ նույնիսկ բռնակալի՛ն զզվեցրել էր այս վատշվեր դավաճանությունը։ Դրա համար էլ կարգադրեց գլխատել իրեն այդօրինակ նվեր մատուցած խնձորեսկցիներին։

Եվ, այսպես, 1730 թ. Մխիթար սպարապետի հետ մեռավ Սյունիք-Կապանի ազատագրության գործը, որ ութ տարվա մեջ այնքա՞ն զոհեր տվեց, այնքա՞ն փառավոր նվաճումներ արձանագրեց և ցուցադրեց հայրենասիրության ու սրբազան նվիրումի այնքա՞ն օրինակներ։ Մեռավ մեծ գործը՝ նրա անմիջական գործիչներին ու ապագա սերունդներին ավանդություն թողնելով մի ծանր դաս, որը քանի՞-քանի անգամ կրկնվել է մեր պատմության մեջ՝ հին դարերից սկսած, Ավարայրից մինչև Հալիձոր՝ և նրանից հետո գալիք ժամանակներում։

Հենց այս դասով էլ ավարտվում է Սյունյաց ազատամարտի մատյանը։ Ասում է. «Արդարև շար ու դժնդակ է ընկերների անմիաբանությունը հասարակության մեջ, ինչպես նաև անձնական բարիքն ու շահը հասարակության շահից գերագասելը։ Եվ ո՞ր հասարակության մեջ էլ հայտնվի այս չարիքը, անմիջապես կ'եղծի, կապականի ու կոչնչացնի նույն հասարակությունը, տո՛ւն լինի այն, քաղա՞ք, ազգ, թե մեծ ու փոքր թագավորություն»։

Լա՞վ դաս է, իմաստո՞ւն խրատ, որ, դժբախտաբար, հաճախ էին մոռանում մեր ազգի դժվար բախտը տնօրինած անհատները։

ԽԱՉՔԱՐ

Տարբեր ազգեր հանուր մարդկությանը նվիրել են բառեր, որոնք չեն թարգմանվում, քանի որ հասկանալի են ինքնին, ներկայացնում են իրենց տեր ազգերի կենսագրության այս կամ այն դրվագը, ստեղծած նյութական կամ հոգևոր մշակույթի անկրկնելի որևէ արժեքը։ Հայ ժողովրդի կողմից քաղաքակիրթ աշխարհին անցած այդօրինակ բառերից է խաչքարը՝ քարի մշակման արվեստի մի զարմանահրաշ բնագավառ, որը հին ու միջնադարյան իրականության մեջ տարածված է եղել բացառապես պատմական Հայաստանի տարածքում և բոլոր այն վայրերում, ուր ոտք է դրել ու իր օջախի ծուխն է երկինք հանել հայ մարդը։

Դեռևս Վանի կամ Արարատյան թագավորության ժամանակներում (մ. թ. ա. 9—7-րդ դդ.) հայ վարպետներն ստեղծել էին քարակոթողի մի կատարյալ տիպ, որը բաղկացած էր երկու մասից՝ քարե մի խորանարդ պատվանդան հիմք, որ հարմարեցվում էր գետնի վրա, և տախտակաձև մշակված սալիկ, որը, պոչուկով ամրացված խորանարդի վերին երեսի փոսի մեջ՝ դառնում էր կոթողի հիմնական-կիրառական մասը։ Սալիկի վրա փորագրվում էին արքայական հիշատակարաններ՝ շինարարական, ռազմական, տնտեսական ու այլազան բովանդակությամբ։ Հաճախ այս վիմական սեպագրերին ուղեկցում էին ժամանակաշրջանի գեղարվեստական պատկերացումների համապատասխան զարդանախշեր ու պատկերաքանդակներ, որոնք հետագայում, հատկապես վաղ միջնադարից սկսած, հարստացան, դարձան ավելի բազմազան ու բազմակերպար։ Այսպես հնավանդ քարակոթողն ապրեց իր կյանքը մինչև մեր պատմության նոր շրջանը, ապրեց անընդ-

մեջ և արտաքին կերպարով ու կիրառության ասպարեզներով համարյա անփոփոխ։ Փոխվում, ավելի ճիշտ՝ հարստանում ու բազմազան էր դառնում հարդարանքը, և եթե դարաշրջանն իր դրոշմը պիտի դներ քարակոթողի վրա, ապա դա լինում էր հարդարանքի մանրամասների մեջ։ Այս կերպ էր, որ խաչը ելավ հնավանդ քարակոթողի վրա և աստիճանաբար նվաճեց նրա կենտրոնական մասը, դարձավ նրա էական հատկանիշը, հին կոթողին տվեց իր անունը՝ խաչի նշան, սուրբ նշան, առհասարակ նշան, խաչքար։

Խաչքարի ծագումն ու պատմությունը քիչ է ուսումնասիրված։ Սակայն հնագիտական ու մատենագրական նյութերի, պահպանված խաչքանդակների հիման վրա կարելի է ներկայացնել ստույգ ուրվագիծը զարգացման այն վերընթացի, որ ապրել է խաչքար-կոթողի արվեստը։

Խաչը, որպես զարդանախշ, ավանդված է դեռևս հին աշխարհի տարբեր ժողովուրդների հուշարձաններում։ Իհարկե, նախնական ձևը հավասարաթև խաչի պատկերն է եղել։ Այն տիրական էր հեթանոսական մշակութային զանազան բնագավառներում իբրև զարդանախշ, որն անպայման խորհրդանիշն էր աշխարհի նյութականությունը կազմող չորս տարրերի՝ օդի, ջրի, հողի ու հրի (արև)։ Հնագույն խաչանախշը մեզ է հասել և՛ մեկուսի պատկերով (խաչ, որ չորս հավասար թևեր ունի), և՛ կլոր մի շրջանակի մեջ, որը, հավանաբար, հենց երկրագնդի պատկերն է հանդիսանում։ Այսպիսի խաչանախշեր են գտնվել տարբեր երկրների հեթանոսական տաճարների ու զանազան շենքերի քարերի, հատկապես խոյակների վրա։

Վաղքրիստոնեական շրջանում, ըստ երևույթին, Քրիստոսի խաչելության ավանդության հիման վրա, խաչը լայն շրջանառություն ստացավ և, իբրև սրբազան նշան, դարձավ նոր հավատի դաղափարների խորհրդանիշը։ Հայկական աղբյուրները (Ագաթանգեղոսի Հայոց պատմությունը, Մովսես Խորենացու երկը, Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» և այլն) հավաստի տեղեկություններ են հաղորդում այն մասին, որ նոր հավատի քարոզիչներն ու մարտիկներն իրենց կործանած հեթանոսական տաճարների տեղում, հրապարակներում, մեծ ու փոքր ճանապարհների վրա տնկում էին փայտե խաչեր՝ որպես նոր կրոնի հաղթանակի նշաններ։ Բայց հասկանա-

լի է, որ փայտե խաչերը երկար կյանք չէին կարող ունենալ, և նրանց հեղինակները հետագայում պետք է մտածեին իրենց ստեղծագործությունների հարատևման մասին։ Հարատևությունն էլ պետի ապահովեր խաչի համար օգտագործվող նոր նյութը, որի գործածությունն անցյալ երկար դարերի կյանք ուներ հենց Հայաստանում։ Ահա այդ բազմադարյան փորձը, մանավանդ Վանի-Արարատյան թագավորության ժամանակներից ի վեր հայտնի քարակոթողը օգնության եկավ նոր հավատի մարդկանց՝ ներկայանալով իբրև հնավանդ ու հարազատ մի ստեղծագործություն, իբրև պարզ ու մատչելի մի կերպար՝ պատվանդան, որը հարմար նստում է գետնի վրա, և պատվանդանին ամուր կանգնող քարե խաչ, որը հանդիսանում է կոթողի հիմնական մասը։

Խաչի քանդակը, որ սկզբնապես լինում էր և՛ հավասարաթև (հարթ մակերեսի վրա, կլոր շրջանակի մեջ քանդակված խաչ), և՛ թևավոր (փայտե խաչի պատկերի նմանակը), տասնամյակներ, նույնիսկ դարեր շարունակ (4—6-րդ դդ.) տիրապետող զարդամոտիվ էր Հայաստանում։ Թևավոր խաչերն իրենց ստորին մասում ունենում էին քառակող պոչուկ, որը մտցվում էր խորանարդաձև պատվանդանի վերին երեսին փորված փոսի մեջ։ Իսկ հավասարաթև խաչը հիմնականում զարդանախշ էր՝ խորանարդաձև կամ քարե սյան վրա։ Նրանցից պահպանվել են բազմաթիվ օրինակներ, գլխավորապես իրենց նախնական տեղերում՝ որպես հուշասյուներ, գերեզմանաքարեր, եկեղեցական ու աշխարհիկ շենքերի հարդարանքի մանրամասներ։

Հավասարաթև ու թևավոր խաչերը քիչ տարածություն էին տրամադրում քանդակագործական հարդարանքի, հատկապես վիմական հիշատակարանի փորագրման համար։ Մինչդեռ հին դարերից մնացած կոթողները հարուստ էին և՛ մեկով, և՛ մյուսով, հատկապես երկրորդով, որովհետև ա՛յդ էր նրանց կիրառական դերը։ Ըստ երևույթին, երկար չէր կարող ապրել խաչի արտաքին այս կերպարը՝ երկու դեպքում էլ անհրապույր, քանի որ հավասար ու համանման թևերը միապաղաղ էին ու տաղտկալի։ Պետք է նկատի առնել նաև թևավոր խաչի մի այլ անհարմարություն. նրա թևերը հեշտությամբ վնասվում էին ու ջարդվում։ Կոթողը կորցնում էր իր դերն ու նշանակությունը։ Եվ հասկանալի է, թե ինչու ժամանակի ընթացքում թևավոր ու հավասարաթև խաչերն իրենց տեղը պետք զիջեին խաչի կոթողի մի նոր ձևի, որպիսին ըստ բարձրության ձգվող խաչքանդակն էր տախտակաձև մշակված քարի մակերեսի վրա։ Այս դեպքում խաչը ներկայանում էր բավական բարեփոխված տեսքով. վերին թևն ավելի երկար էր, քան հորիզոնականները, իսկ վարի թևն առավել երկար, քան վերինը։ Խաչի այս պատկերով էլ պայմանավորված էր քարի տախտակի նեղ ու երկար համաչափությունը, որն ավելի բարետես էր դարձնում կոթողի ընդհանուր պատկերը։ Մանավանդ որ նոր խաչարձանի թևերն արդեն զարդարում էին հարթաքանդակ զարդանախշեր, որոնք հետզհետե դառնում էին բազմազան ու գեղեցիկ՝ ընդգրկելով բուսական ու երկրաչափական պատկերների նորանոր ոլորտներ։

Եթե հեթանոսական և վաղքրիստոնեական ժամանակների կոթողներն ու նրանց տակ դրված պատվանդաններն ունեին միայն համեստորեն մշակված նիստեր, առանց ճոխ հարդարանքի, ապա 5-րդ դարից սկսած՝ հայ վարպետները հասարակ պատկերների մեջ են մուծում գեղարվեստական տարրեր, որոնք աստիճանաբար հարստանում են ու դառնում բազմազան։ Օրինակ, խաչի թևերը քանդակվում են որպես բույսի տերևներ կամ ծաղկաթերթիկներ, հաճախ երկրաչափական պատկերներ (եռանկյունիներ, ինչպես Լեռնային Ղարաբաղի Ճարտար ավանում պեղված հեթանոսական տաճարի խոյակի վրա), ապա հենց 5-րդ դարից մնացած կոթողների մեջ արդեն առկա են զարգացած խաչքանդակի գեղարվեստական տարրերն իրենց նախնական վիճակով։ Դվինի պեղումներից հայտնաբերված խաչն ունի ուշ շրջանի խաչի համաչափությունները (վարի թևը երկար և ծաղկումի բավական շքեղ զարդաքանդակով), թևերը հարդարված են եղրագնդիկներով։

Նույնը կարելի է ասել նաև թևավոր խաչերով կոթողների մասին։ Օձունում, Դվինում և այլ վայրերում գտնված բեկորները ցույց են տալիս, որ 5—6-րդ դարերում արդեն նրանք ունեին երկարուն վարի թև և զարդարվում էին պարզ ու հասարակ նախշերով։

Չի կարելի ասել, թե հետագայում, երբ արդեն ամենուրեք տիրապետող էր խաչքարի մեջ հայտնի ձևը, ասպարեզից հե-

ռացան կամ այլևս չէին կանգնեցվում հավասարաթև ու թևավոր խաչեր։ Վերջիններս տարածում ունեին նաև ուշ դարերում, և պահպանված լավագույն օրինակներով նույնիսկ կարելի է հետևել նրանց զարգացման ու կատարելագործման ընթացքին։ Ուշ շրջանի հուշարձաններում հավասարաթև խաչը մեծ մասամբ ոչ ինքնուրույն զարդարանք է և դրվում է խաչքարը եզերող վարդյակների մեջ, քիվի կենտրոնում, եկեղեցիների պատերին, գերեզմանների վրա՝ իբրև կոթողը եզրափակող նշան։ Իսկ թևավոր խաչերը հայտնի են նաև ինքնուրույն գոյությամբ, և Ղամշի վանքի հայտնի խաչքարը (1640 թ.), որ այժմ գտնվում է Էջմիածնում, նրանց լավագույն օրինակն է՝ զարդարված գեղեցիկ քանդականախշերով ու գեղարվեստական ընդհանուր լուծման մի արտակարգ մակարդակով։

Սակայն խաչքարը, իբրև հայ մշակույթի, հատկապես քարգործ արվեստի յուրօրինակ ու իր տեսակի մեջ բացառիկ երևույթ, կապված է հիմնականում խաչի այն պատկերի հետ, որը կատարելության հասավ 8—9-րդ դարերում՝ հետագա ժամանակներում էլ ապրելով բուռն ու աննախընթաց զարգացում։ Դա անհավասար թևերով խաչաբանն է՝ բուսական ու երկրաչափական բազմապիսի նախշերից հյուսված հիմնապաստառի վրա, ինքն իսկ կազմված այդպիսի զարդաքանդակներից։ Մենք տեսանք, որ այդպիսի խաչքանդակի նախնական ձևը կար դեռևս 5-րդ դարում։ 6—7-րդ դարերում այն պետք է որ բավական զարգացած լիներ։ Այդ հնարավոր է մակաբերել պահպանված բեկորներից և, մանավանդ, հայկական ճարտարապետության այն վիթխարի վերելքից, որ ներկայացնում էր 7-րդ դարը, Հռիփսիմեի, Զվարթնոցի և այդ շրջանի մեր մյուս հոյակերտների ստեղծման շրջանը։

Դժբախտաբար, այս շրջանի խաչքարերը ոչնչացվել են արաբական բռնագրավումների ու պատժարշավների ժամանակ։ Մեր պատմիչների երկերում այդ առթիվ պահպանվել են ամենաստույգ տվյալներ, որոնցից որոշակիորեն պարզվում է, որ ոչնչացումը տեղի է ունեցել ամենուրեք, համատարած։ Ականատես Ղևոնդ պատմիչը նկարագրել է այն վայրագությունները, որ Հայաստանում էին կատարվում Եզիդ խալիֆի (720—725 թթ.) հրամանով, ընդ որում՝ ջարդում ու ոչնչա-

նում էին քրիստոնյաների կերտած բոլոր պատկերաքանդակները, ինչպես նաև «խորտակէր և զնշան տէրունական խաչին Քրիստոսի, որ ուրեք-ուրեք կանգնեալ էին յանուն և ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեանն»։ Համանման վկայություն Մովսես Դասխուրանցին էլ ունի 9-րդ դարի առումով։ Նա էլ պատմում է, որ Ատրպատականի բռնավորը մտել էր Հայոց երկիրը, և «ուր գնացք ոտից նորա լինէր, ավերէր, քանդէր զեկեղեցիս Աստուծոյ, և զնշան Քրիստոսի, ուր և տեսանէր, մանրէր իբրև զփոշի»։

Կարող են ասել՝ մահմեդական թշնամիները, ըստ այդ վկայությունների, ավերել էին նաև եկեղեցիները, և, այդուամենայնիվ, մենք ունենք նրանց փառահեղ օրինակները 5—6-րդ դարերից և հատկապես 7-րդից։ Այո՛, ունենք, որովհետև թեև հրաման էր տրված գետնին հավասարեցնել քրիստոնեության բոլոր սրբարանները, սակայն թուլցիկ մի արշավով այդ անելն անհնար պիտի լիներ։ Եվ, հետո էլ, ավերված կամ կիսաքանդ վանական շինությունը հետագայում վերականգնում էին՝ երբեմն ամենայն մանրամասնությամբ հարատևելով նախնական կերպարին։ Մինչդեռ անհնար էր վերականգնել ջարդված և «իբրև զփոշի» ոչնչացված խաչքարը։

Եվ կարծում ենք՝ սխալվում են այն հետազոտողները, որոնց կարծիքով խաչքարի մեջ հայտնի ձևը միայն 9-րդ դարից հետո է ծագել ու զարգացել, և իբր թե խաչքարի վրա հայ վարպետն էլ թվական է փորագրել ու զարդանախշ քանդակել միայն 9-րդ դարի կեսից սկսած։ Պարզապես 9-րդ դարի կեսը շրջադարձ էր հայ-արաբական փոխհարաբերությունների մեջ։ Այս դարի առաջին կեսի հակաարաբական ընդվզումները (հիշենք Սահլ Սմբատյանի, Աբու-Մուսեի հաղթական ճակատամարտերը խալիֆայության դեմ, Սասունի ապստամբությունը և տարբեր վայրերի մի շարք աջողակ մարտերը) օտար բռնակալներին ստիպեցին հաշվի նստել հայության հետ, հարգել նրա քաղաքական ու մշակութային իրավունքները. 855 թ. Խալիֆայությունն ստիպված եղավ Աշոտ Ա Բագրատունուն ընդունել Հայոց իշխան (Հայաստանի կառավարիչ ու տնօրեն), 862-ից՝ Հայոց, Վրաց և Աղվանքի իշխանաց իշխան, որպեսզի 885-ին էլ ճանաչի նրա հիմնած Հայկական թագավորությունը։ Աշոտի իշխանապետության սկզբից իսկ

բացառվում էր մահմեդականների ամեն մի կամայականություն (հետևապես և խաչքարի զարդումը) Հայոց աշխարհում։ Դրա շնորհիվ է, որ մենք արդեն խաչքարեր ունենք, վիմագրով ու թվականով խաչքարեր, և այն էլ հենց 850-ական թվականներից։

Դարձյալ թյուրիմացությամբ կարելի է բացատրել, որ մեր ուսումնասիրողներից ոմանք խաչքարի արվեստի, ավելի ճիշտ՝ խաչքարի կերպարի վերջնական ձևավորման ժամանակ են համարում 12—13-րդ դարերը։

Բագրատունյաց թագավորության շրջանը (9-րդ դ. վերջ—11-րդի առաջին կես) Հայաստանի կյանքում նշանավորվեց քաղաքական, տնտեսական ու մշակութային բուռն վերելքով։ Եվ պատահական չէ խաչքարի արվեստի այն ակնառու ծաղկումը, որի փայլուն ապացույցները պահպանվել են երկրի համարյա բոլոր նահանգներում։ Այս շրջանում է, որ խաչքարի ճարտարապետական ու քանդակագործական կերպարը վերջնականապես ձևավորվում, ստանում է իր ավարտուն և կատարյալ տեսքը՝ զարգացման հաջորդ փուլը ոտք դնելով արդեն կանոնիկ դարձած, դասական տեսքով ու առանձնահատկություններով։

9-րդ դարի երկրորդ կեսի խաչքարերն անպայման ունեին հաջորդ պատմաշրջաններում լայն տարածում գտած կերպարի բոլոր կարևորագույն տարրերը։ Խորանարդաձև պատվանդանի վրա կանգնած է քարակոթող-սալը, որը ճակատով նայում է դեպի արևմուտք։ Այս ճակատը կամ երեսը ծածկված է խաչի հարթաքանդակով, որի շուրջը երկրաչափական ու բուսական զարդանախշեր են (Հովհաննես եպիսկոպոսի խաչքարն Արցախի Ս. Հակոբա վանքում—853 թ., Գրիգոր Ատբերներսեհյանինը՝ Մեծ Մազրայում— 881 թ., Սուսեի խաչքարը՝ Ներքին Թալինում— 882 թ., Նորատուսի, Մարտիրոս գյուղի, Հաղբատա վանքի մի շարք օրինակներ՝ դարձյալ 9-րդ դարից կամ 10-րդից)։ Կա այս բոլորն իր մեջ առնող մի շրջանակ-զարդանախշ ևս, որը քանի գնում, դառնում է բազմազան ու նրբաքանդակ, մինչև որ Բջնիի (1031 թ., Վահրամ Պահլավունու), Ցախաց քարի (1041 թ.), Հաղբատի և մի շարք ուրիշ վայրերի խաչքարերում 11-րդ դ. սկզբին ձեռք է բերում իր կատարյալ ու ավարտուն ձևը։ Եվ եթե այսքանի մեջ բացա-

կայում էր միայն մի քիվ, որի հրաշալի օրինակները տեսնելու ենք 12-րդ դարից սկսած, ապա Եղեգնաձորի Ցախաց քարում էլ կանգուն է այդ զարդաքանդակ քիվն ունեցող խաչքարը, որպեսզի հաստատի, որ այս ժամանակ, այսինքն՝ մինչև 11-րդ դարը, խաչքարն ուներ իր կերպարի էական ու երկրորդական բոլոր առանձնահատկությունները։ Ցախաց քարի խաչքարի վարպետն ըստ երևույթին մեծ ստեղծագործող է եղել, քանի որ ոչ միայն ի մի է հավաքել իրենից առաջ եղած նվաճումները և ստեղծել նախորդների ձեռքբերումների հանրագումարը, այլև հորինել է շատ ինքնատիպ մանրամասներ։ Դիտեցե՛ք թեկուզ խաչքանդակի թևերի տակ ծվարած երկու փոքրիկ խաչերը, որոնք, ըստ ավանդության, պիտի «ծաղեին» վարի թևի ծաղկուն եզրերից։ Բայց այստեղ վարի թևից բարձրանում են մարդկային ձեռքեր, որոնք էլ բռնած բարձր պահում են փոքրիկ խաչերը։

Ամփոփելով կատարած թռուցիկ այս ակնարկը, կարող ենք ասել, որ խաչքարն իր կերպարի բոլոր ձևերով արդեն ձևավորվել էր մինչև 11-րդ դարը։ Այլ բան է, որ խաչքարի ամենադասական օրինակներն ստեղծվելու էին 12—14-րդ դարերում։ Այո՛, դա միանգամայն ուրիշ բան է, նման նրան, որ մենք բանաստեղծություն ունեինք սկսած վաղնջական ժամանակներից, բայց նրա հանճարեղ պոռթկումը տեղի ունեցավ 10-րդ դարում։ Որովհետև պոռթկումի համար Գրիգոր Նարեկացի պիտի ծնվեր։ Ինչպես որ հանճարեղ խաչքարեր կերտելու համար պիտի ծնվեին Պողոսն ու նրա արժանավոր հաջորդ Մոմիկը։

Հետևելով նախորդ դարերում արդեն մշակված և ավարտուն ձևերով 12-րդ դար մտած խաչքար-կոթողի զարգացման ընթացքին, կարելի է ցույց տալ նրա ընդհանուր կերպարը, որը դասական, համարյա անխախտ օրինակ էր համարվում, և տեղից, ժամանակից, պատվիրատուի կամքից, մանավանդ վարպետի ոճից ու տաղանդից էին կախված մնացած հանգամանքները։

Եվ այսպես, ընդհանրացնենք մեր խոսքը խաչքարի ձեռք բերած կարևորագույն առանձնահատկությունների մասին. իրեն նախորդած քարակոթողների պես խաչքարն ունի խորանարդաձև պատվանդան և նրա վրա ամրացված քարե սալ։

Սալն արդեն օժտված է ուրույն համամասնությամբ. լայնությունից երկու և ավելի անգամ բարձր է։ Երեսի կենտրոնում խաչի քանդակն է՝ կանգնած կլոր, զարդահյուս վարդյակի կամ աստիճանաձև հարթաքանդակի վրա։ Այս բոլորն առնված են ամենատարբեր զարդաձևերից հյուսված մի քառանկյուն, միշտ զարդարեն շրջանակի մեջ, որը հավաքում, կենտրոնացնում է գեղարվեստական հարդարանքի մանրամասները։ Սալի վերին մասը զարդանախշով առանձնանում է շրջանակի մեջ առնված խաչի տարածությունից և ծառայում որպես նպատակի։ Այստեղ, իհարկե, դարձյալ հյուսկեն զարդաքանդակների մեջ, փորագրվում է հիմնական արձանագրությունը կամ քանդակվում են նոր զարդանախշեր։ Հաճախ հանդես են գալիս հարթաքանդակ, նույնիսկ բարձրաքանդակ պատկերներ, որոնք մեծ մասամբ ներկայացնում են Հայր աստծուն, Հիսուս Քրիստոսին, Աստվածամորը և այլ սրբերի կամ պատվիրատու հոգևորական ու աշխարհիկ մարդկանց։ Լավագույն օրինակներում մշակված են նաև պատվանդանները, որոնց ազատ տարածություններն օգտագործվում են վիմագիր-հիշատակարանի համար։ Հիշատակարանի ավանդական տեղն, իհարկե, քարե սալիկի թիկունքի տարածությունն է։ Սակայն հաճախ է պատահում, որ վիմագրի առանձին մասեր, թվականն ու վարպետի անունը փորագրվում են ոչ հիմնական արձանագրության հետ, այլ խաչի թևերի տակ, հիմք-վարդյակի մեջ կամ ո՛ր որ պատահի։

Խաչքարերը կանգնեցվում էին սրբավայրերում, գերեզմանատներում, մեծ ու փոքր ճանապարհների եզրերին, հատկապես ճամփաբաժանների, երբեմն բլուրների ու ժայռերի վրա, բացի այն դեպքերից, երբ խաչքարն ինքն էր զարդարում-նշանավորում իր տեղը։ Ինքնահատուկ սրբություն էր որմնափակ խաչքարը, որի համար հարմար ոճավորված խորշ էր թողնվում պատի մեջ, և խաչքարն այնտեղ ամրացվելով դառնում էր ոչ միայն շենքի հարդարանքի ամենաշքեղ մանրամասն, այլև ընդգծում էր նրա սրբությունը։ Առհասարակ խաչքանդակն իր լայն տեղն ուներ ճարտարապետական կարևոր կառույցների և հատկապես եկեղեցական շենքերի վրա։ Այն, ասես խաչքարից իջած, դրվում էր շքամուտքերից վերև, ակնառու ճակատներին և բոլոր այն եկեղեցիների վրա, որոնք

Սուրբ Նշան անունն էին կրում։ Իր կիրառության այս ոլորտում ևս խաչն ունի բոլոր այն տարբերակները, որ տեսնում ենք խաչքարի վրա՝ պարզ քանդակից մինչև ամենաշքեղ զարդահյուսները, բուսական ու երկրաչափական զարդանախշերից մինչև խաչելության բարձրարվեստ պատկերաքանդակը։ Այս տիպի խաչքանդակի լավագույն օրինակները պահպանվել են Հաղբատում, Սանահնում, Գեղարդի ժայռափոր դավթի շքամուտքին (13-րդ դ.), Եղվարդում (Աստվածածին երկհարկ եկեղեցու արևմտյան ճակատին, 1301 թ.), Գանձասարում (1216—1238)։ Վերջինս քանդակազարդի ճոխությամբ ու կոթողային վեհությամբ լավագույնն է նմանօրինակ հուշարձանների շարքում։

Վիմագիր-հիշատակարանը խաչքարի անձնագիրն է. նրա մեջ նշվում են խաչքարը կանգնեցնելու նպատակն ու հանգամանքները, պատվիրատուի ու վարպետի անունները։ Եվ այս տեղեկություններից հառնում է հուշարձանի կենսագրությունը, որ հաճախ հյուսված է լինում ժողովրդի պատմության, նրա քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի նշանակալից դրվագներին, ընկալվում է որպես հիշատակարան-տարեգրություն։

Տարեգրություններն այնքան հին են, որքան կոթողներ կանգնեցնելն առհասարակ։ Ասորեստանյան սեպագրերի վաղագույն օրինակներից հայտնի են տարեգրական ստեղծագործություններ՝ պատմական կարևորագույն դեպքերի ու դեմքերի մասին խոսող տեղեկություններով, ժամանակագրական ստույգ տվյալներով։ Վանի կամ Արարատյան թագավորները ևս սեպագրերով գալիք սերունդներին էին հղում ժամանակի նշանավոր անցքերի, իրենց հաղթանակների ու շինարարական ակնառու ձեռնարկումների պատմությունը։

Հավանաբար այն ժամանակներում սեպագրական հիշատակարանների ոչնչացումը սովորական երևույթ է եղել, քանի որ պահպանված վիմագրերի մեծագույն մասն ունի պարտադիր անեծք կամ աստվածային զանազան պատիժների սպառնալիքներ՝ ուղղված նրանց, ովքեր կհամարձակվեն ջարդել կամ «չուրը նետել» սեպագիր պարունակող քարը։

Խաչքարի վրա փորագրված արձանագրությունը մի կարևոր հանգամանքով ապահովված էր ոչնչացումից. խաչքարն ի՛նքն

արդեն սրբություն էր համարվում, և ճշմարիտ քրիստոնյայի ձեռքը չէր բարձրանա նրա վրա, իսկ ո՞չ քրիստոնյայի համար, հայտնի բան է, ոչ օրենք կար գրված, ոչ էլ աստվածային պատժի սպառնալիքը որևէ դեր պիտի ունենար։ Սակայն եթե երբեմն խաչքարի վրայի վիմագրերում էլ ենք հանդիպում անեծքի կամ սպառնալիքի, ապա դա վերաբերում է հիշատակարանի հանձնարարական մասի կատարմանը։ Այստեղ, հակառակը, տիրապետող է հավատը, որ խաչքարը մնալու է անձեռնմխելի, դառնալու է սրբություն, և նրան դիմելու են աղոթքով։ Ուստի և խնդրում են այդ աղոթքներում հիշել իրենց՝ խաչքարը կանգնեցնողներին, պատվիրատուին, քարգործ վարպետին, նրանց հարազատներին։

Խաչքարի սրբության ու անձեռնմխելիության նկատմամբ եղած հավատով պիտի բացատրել, որ զարգացած ավատատիրության շրջանի բազմաթիվ տարեգրական մեծ ու փոքր ստեղծագործություններ փորագրվել են ոչ թե աշխարհիկ շինությունների պատերին, քարերի վրա կամ ժայռակողերին, այլ խաչքարերի վրա։ Չնայած այսպիսի արձանագրություն-տարեգրությունները հաճախ հսկայական ծախսեր էին նըստում պատվիրատուի վրա, որովհետև փորագրվում էին փառահեղ խաչքարի և համապատասխան պատվանդանի նիստերին։

Հասկանալի է, որ բնության ավերիչ ուժերի դեմ կանգնած խաչքարի վրա ամենից շատ քայքայման վտանգի ենթակա է եղել հիշատակարան-վիմագրությունը։ Չէ՞ որ այն հիմնականում փորագրվում էր պատվանդանի հարթ երեսին, իսկ սա քամուց ու անձրևից, ցրտից ու արևից հողմնահարվում էր առավել վաղ, քան բուն խաչքարի երեսը, որ համեմատաբար պաշտպանված վիճակում էր քիվի ներքո։ Մյուս կողմից էլ, այս կամ այն չափով մաշված կամ քայքայված զարդաքանդակներից հնարավոր է լինում պատկերացում կազմել խաչքարի նախնական կերպարի մասին։ Իսկ հողմնահարված վիմագիրն այլևս անհնար է լինում վերծանել։ Հենց այս է պատճառը, որ մեր թվականության առաջին հազարամյակից մնացած խաչքարերի մեջ քչերն ունեն վիմագիր ու «ծննդյան» թվականներ։ Առայժմ հայտնի հնագույն թվականով խաչքարը գտնվում է Արցախի Մեծառանք գավառի (այժմ՝ Լեռնային

Ղարաբաղի ԻՄ-ի Մարտակերտի շրջանի) Քոլատակ գյուղի մոտ, հին կաթողիկոսանիստ Ս. Հակոբա վանքում։ Ահա նրա վիմագիրը՝ «ՅԲ (853) թուականութեանս Հայոց. ի ժամանակս Յովանիսի Աղուանից իշխանի, ես՝ Սողոմոն, Մեծառանից եպիսկոպոս, կանգնեցի զսուրբ խաչս»[1]։

Հովհաննես իշխանն արաբական բռնատիրության դեմ քանիցս ապստամբած Սահլ Սմբատյանի որդին էր, ինքն էլ արաբների ու Բաբեկ բռնավորի դեմ խիզախորեն մարտնչած։ 853-ին նրան հիշատակել են վիմագրում, իսկ հաջորդ տարում, Բուղայի պատժարշավից հետո, հոր և Ատրներսեհ եղբոր հետ քշվել է արաբական տաժանակրության, որից փրկված տուն է վերադարձել միայն Ատրներսեհը։ Եվ ահա Ատրներսեհի որդի Գրիգորն էլ, որ երկրորդ անվամբ կոչվում էր Համամ[2], իր իշխանանիստ Մեծ Մազրա գյուղի գերեզմանատանը կանգնեցրեց մի մեծանիստ (2,30×1,60 մ) խաչքար՝ հետևյալ վիմագրով. «ՅԼ (881) թուականութեանս Հայոց ես՝ Գրիգոր Ատրներսեհեան, Սիւնեաց և Աղուանից իշխան, կանգնեցի զսուրբ նշանս աւգնական հաւատացելոց։ Որք երկրպագէք սուրբ խաչիս Քրիստոսի, զիս յաղաւթս յիշեսցիք»[3]։

«Օգնական հավատացելոց»։ Գրիգոր-Համամ Բարեպաշտը նախնիների ապստամբ ոգին պարուրել էր բարեպաշտությամբ և նախընտրում էր դիվանախոսության ճանապարհը։ Բանակցություններով ու փրկագնով արաբական գերությունից ազատեց Գևորգ Դառնեցի Հայոց կաթողիկոսին, իր ինքնիշխան երկրամասում վերականգնեց Արցախի թագավորությունը և ընդունեց Բագրատունյաց գերագահությունը։

Հայ-Աղվանքի պատմիչը Գրիգոր-Համամի գործունեության առթիվ գրել է, թե նա իր տիրապետության տակ է առել ամբողջ նահանգը, անդրկուրյան մի երկրամաս՝ Հերեթ-Կամբեճանը, ինչպես նաև Սյունիքի հյուսիս-արևելյան գավառները։ Ապա «Գրիգոր շինէ զՀաւասիաղացին բերդը և յայն կողմ ձգէ զձեռն իւր իշխանութեանն»։ Ուսումնասիրողներն իրավամբ

1 Դիվան հայ վիմագրության, ե, էջ 12։

2 «Համամ» արաբերեն նշանակում է «զգոն», «զվարթ», որ հունարեն «Գրիգորի» թարգմանությունն է։

3 Դիվան հայ վիմագրության, Դ, էջ 334։

եզրակացրել են, որ «յայն կողմն» նշանակում է Կուրից այն կողմ, քանի որ պատմիչն ինքը Կուրի այս կողմից է, աջափնյակից։ Եվ ահա, ստեղծված աննախադեպ հզոր իշխանության տերը խաչքար է կանգնեցրել «օգնական հավատացելոց» և նրա արձանագրության մեջ ներկայանում է որպես «Սիւնեաց եւ Աղուանից իշխան»։

995 թ. Սևանի մոտ Վարսեր գյուղում խաչիկ քարգործը Հայոց թագուհի, Սյունյաց Վասակ թագավորի դուստր և Գագիկ Բագրատունու կին Կատրանիդեի հրամանով առու է անցկացրել և այդ առթիվ կանգնեցրել խաչքար, որի արձանագրությունն է. «Ես խաչիկ, որ ածի զառուս ի Շարէս՝ հրամանով Կատրանիդեի Հայոց թագուհոյ...»։

Հետո գալիս են շինարարական գործերի, մեծ ու փոքր կառուցումների առթիվ կանգնեցված, ընդարձակ արձանագրություններ ունեցող խաչքարերը։ Ահա մի այդպիսի օրինակ. Հաղբատի եպիսկոպոս Հովհաննեսը 1221 թ. պատմում է, որ իր առաջնորդության երկար տարիներին վանական համալիրում շինարարական մեծ գործեր է իրականացրել, նորոգել ու բարեկարգել հին շենքերը, կանգնեցրել Մեծ գավիթը (իր տեսակի մեջ ամենագեղեցիկն ամբողջ Հայաստանում), ձեռագիր մատյաններ է ստեղծել, ապա գավթում կանգնեցրել է երեք խաչքար։ Եվ այսքանից հետո ո՞րն է Հովհաննեսի խնդիրքը, որ մի տեղ էլ նա աղաչանք է կոչում («Եվ որք կատարեն զաղաչանս մեր...»). «Եվ իմ խնդիրն է ի միաբանացս՝ զսուրբ Յակոբի տաւնի կիրակէն իմ սուրբ նշանացս տաւն կատարէն...»։

Խաչքարի («սուրբ նշանաց») տո՞ն կատարել,— ահա թե ի՞նչ էին երազում միջնադարի մեր մեծ երախտավորները։

Հետաքրքիր է նաև Եղեգնաձորի Մարտիրոս գյուղի հիմնադրությանը նվիրված խաչքարը, որի տարեդրություն-արձանագրությունն ասում է. «...Ես՝ Մխիթար, որդի Դեղկա, հրամանաւ իշխանաց իշխանին մեծին Գռաւշա եւ որդոյ իւրոյ Սարոն Հասանա շինեցի զգեղս Մարտիրոս և կանգնեցի զքարս ի դուռն սուրբ վկայարանիս... Ի թվ. ՉԼԲ» (1283)։

Խաչքարեր են կանգնեցվել ազատագրական այն հաջող մարտերի առթիվ, որ Զաքարե և Իվանե Զաքարյան զորապետներն էին վարել 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբին

Արագածոտնում, Ամբերդում ու Հայաստանի մյուս մասերում։ Նրանցից մեկի վրա Պետրոս վարդապետը ցնծությամբ գրել է, թե ինչպես ինքը «հոգու ակամբ» տեսել է այդ հաղթական ազատամարտերը, որոնց շնորհիվ «սրբեցաւ երկիրս մեր, եւ պայծառացան եկեղեցիք Հայաստանեաց»։ Իսկ ինքը՝ Զաքարե զորապետը, հենց Ամբերդի ազատագրման առթիվ կանգնած խաչքարի վրա փորագրել է տվել. «Ի ՈՒԹ (1200) թուականութեանս ես Զաքարէ ամիր-սպասալար Հայոց եւ Վրաց, որդի մեծի Սարգսի, առի զանառիկ ամրոցս զԱնբերդոյ յաղախնայծին որդոցն հաքարու, որ առա սմա ի կորուստ քրիստոնէից եւ յաւետ եկեղեցեաց եւ ետու առնել զնշանս»[1]։

Խաչքարեր էին կանգնեցվում այս կամ այն գյուղը, գավառը, եկեղեցին տուրքից ազատելու առթիվ։ Լոռիում պահպանվել են մի շարք խաչքարեր, որոնք նշում են ջրի համար գանձվող ինչ-որ արգան հարկը վիշելը։ Հաղբատի մոտ կանգնած մի խաչքարի վրա արձանագրված է ձեռնավորաՀարկի, իսկ Կարբի գյուղի հանդում Վաչուտյան Քուրդ իշխանի կանգնեցրած (1235) խաչքարի վրա՝ շարետ հարկի վերացման փաստը։

Ջրվեժում 1178 թ. ջրի համար ծագած վեճի մեջ սպանվել է Խաչատուր անունով մի երիտասարդ, և նրա գերեզմանին կանգնած խաչքարը պատմում է անօրինակ ողբերգությունը, որի շուրջ ստեղծված է նաև թախծալի մի ավանդություն։

1634 թ. ոմն Խոդան (անվան այս ընթերցվածքը տարակուսելի է) մի վեհատեսիլ խաչքար է կանգնեցրել Նորատուսում՝ պատվանդանին արձանագրելով, որ ինքն այստեղ դեմեթար-գյուղապետ է եղել (Ի թվ. ՌՀԳ... կացի դեմեթար ի Նոր...»)։ Արձանագրությունը կիսատ է. երևի պաշտոնից հանել են մինչև վիմագիրը լրիվ փորագրելը։

Կան նաև արձանագիր ու անգիր խաչքարեր, որոնք սրբերի և հատկապես Քրիստոսի խաչելության պատկերաքանդակների պատճառով սրբացվել են, և նրանց վերագրվել է

[1] Այս խաչքարը տեղից տեղ փոխադրվելով հասել է Աշտարակի շրջանի Անտառուտ գյուղը, ուր այժմ դրված է 5-րդ դարից պահպանված կոթողի վրա։

հիվանդություններ բուժելու, չար ուժերից փրկելու, աղետներ կանխելու զորություն։

Զաքարյան շրջանի (12-րդ դ. վերջին քառորդից—13-րդ դ.) Հայաստանի վերելքի պայմաններում ծաղկում է նաև խաչքարը, որի լավագույն հուշարձանների մեջ մի հրաշալի համադրությամբ շողշողում են հայ ճարտարապետների և առհասարակ քարգործ վարպետների, մանրանկարիչ-ծաղկողների, նույնիսկ գրիչների լավագույն նվաճումները։ Եվ պատահական չէ, որ խաչքարի արարիչները կոչվում են «վարպետ», որ ճարտարապետ է նշանակում, «քարգործ», որ քարը մշակող արհեստավորն է, «նկարող», որ նկարիչ-ծաղկազարդողն է, «կազմող», որ ձևավորող, գեղարվեստական միջոցներն իրար բերողն է, «գծող», «հորինող» և այլն, որոնք խաչքարի հեղինակի տարբեր արժանավորություններն են բացահայտում։

Այս շրջանի խաչքարերի գեղարվեստական կերպարի համար ամենաբնորոշը նրանց հեղինակների ոգեշունչ մղումն է՝ հասնելու կատարելության։ Եվ լավագույն ստեղծագործություններից յուրաքանչյուրն էլ ինքնին այն է, ինչ կարելի է կոչել կատարելություն։ Ինչո՞վ կատարելություն չեն Գրիգոր Տուտերդու խաչքարը Սանահնում, Խաչատուր Մաստաբեցու ժանեկազարդ մահարձան-խաչքարը Մաստառայում, Տիմոթ և Մխիթար վարպետների խաչքարը Գեղարդավանքում, Դսեղի Սիրուն խաչքարը, Մարցի Խաչելության խաչքարը, Պողոսի խաչքարերը Գոշավանքում ու Դադիվանքում, Մոմիկինը՝ Նորավանքում... Այս թվարկումը կարելի է շարունակել, և ցուցակը հեշտ չի փակվի, որովհետև նրանք, որ ցուցակից դուրս պիտի մնան, դարձյալ կատարելության ապացույցներ են, ինքնատիպ ու անփոխարինելի, քանի որ խաչքարի կրկնություն չկա։ Խաչքարի ոչ մի վարպետ չի կրկնում ոչ ոքի, այլ ջանում է ստեղծել իր սեփական ստեղծագործությունը, իր գեղագիտական պատկերացումների սպառիչ արտահայտությունը։ Խաչքարի վարպետը չէր կրկնում ոչ միայն ուրիշներին, այլև իր արդեն ստեղծած որևէ ստեղծագործություն։ Ավելին. նույն խաչքարի վրա չէր կրկնվում ոչ մի զարդանախշ։ Եթե խաչքանդակը եզերող շրջանակը բաղկացած է մի տասնյակ զարդարուն վարդյակներից, ապա նրանցից յուրաքանչյուրն ան-

պայման ներկայացված է միայն իրեն հատուկ զարդաքանդակ մանրամասներով։

Արվեստի ամեն մի բնագավառ ունի իր ամենաբարձր գագաթը, որ անթերի է, կատարյալ ու անհասանելի։ Խաչքարի արվեստի մեջ դա Պողոս (Պաւղոս) վարպետի ստեղծագործությունն է՝ բարեբախտաբար մեզ հասած մի քանի լավագույն դրսևորումներով, որոնք հայտնի են Դեղձնուտի, Գոշավանքի ու Դադիվանքի համալիրներից։

12—13-րդ դդ. մեր անվանի ու անանուն քարգործներն իրենց արվեստը հասցրել էին մի այնպիսի մակարդակի, խաչքարի մակերեսը ծածկել այնպիսի քանդակազարդերով, որ, թվում է, դրանից հետո անհնար պիտի լիներ փորել որևէ գիծ, որ նորություն լիներ, որևէ զարդապատկեր, որ մի կարևոր մանրամասն ավելացներ նախորդների արած-թողածին։ Բայց Պողոսն անշուշտ եղել է նաև կառուցող ճարտարապետ։ Մեզ հասած հնագույն խաչքարը, որ կրում է նրա անունը, Կայեն գավառի (այժմ՝ Իջևանի շրջան) Դեղձնուտի վանքից է, կանգնեցված 1274 թվականին՝ եկեղեցու, գավթի և այլ մասնաշենքերի կառուցումն ավարտելու կապակցությամբ։

Պողոսի երեք խաչքարերը կանգնած են եղել Գոշավանքում, երկուսը՝ Ս. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքի աջ ու ձախ կողմերի պատվանդանների վրա, երրորդը՝ Ս. Հոգու մատուռի մոտ։ Ս. Գրիգորի դռան արևելակողմինը (1291 թ.) ընկածկոտրված է եղել, տեղափոխել են, և այժմ գտնվում է ՀՀ պատմության պետական թանգարանում։ Պողոսի երկու խաչքարերն էլ գտնվում են Դադիվանքում, երկհարկ զանգակատան երկրորդ հարկի որմնախորշում (1283թ.)։ Գոշավանքի Ս. Գրիգոր եկեղեցու մուտքի մոտ խաչքարի վրա վարպետը քանդակել է փոքրածավալ-հավասարաթև մի խաչ՝ գեղեցիկ ոճավորված շրջանակի մեջ, և խաչի վերին թևի աջ ու ձախ կողմերին ելնդավոր գրերով քանդակել իր անունը՝ «Պաւղոս»։

Քիչ ավելին է արել Դադիվանքում։ Այնտեղ էլ կաթողիկե եկեղեցու (Ս. Նշան) շքամուտքի ձախ կողմին դարձյալ մի փոքրիկ, հավասարաթև խաչ է քանդակել, կողքին՝ «Նկարող Սբ նշանացս զՊողոս յիշեցէք»։

Ուրեմն, երկու անզուգական խաչքար կանգնեցնելու առ-

թիվ տաճարի պատին ագուցվել է երրորդ հիշատակարան-խաչքարը[1]։

Ո՞րն է Պողոսի բերած նորությունը, որ նրան առանձնացնում է բոլոր արվեստակիցների շարքում։ Չէ՞ որ զարդանախշերի նրբությունն ու բազմազանությունը, նրանց բարձրաճաշակ դասավորությունը հատուկ են բազմաթիվ խաչքարերի։ Պողոսի խաչքարերն այս բոլոր արժանավորությունների կողքին ունեն նաև մի ամենաբարձր արժանիք, որ միայն իրենն է՝ նախշերի բազմաշերտ դասավորությունը։

Գոշավանքի խաչքարերում դրանք երկշերտ են. զարմանազան զարդաքանդակների շքեղ հյուսվածքը՝ իբրև հիմնապատատ (ֆոն) դրված կոթողի ամբողջ երեսին, ապա այս ժանեկազարդ շերտի վրա՝ խաչի պատկերն ու ամենաէական մանրամասները՝ խաչատակի մեծ վարդյակի բուսական հյուսկեն զարդերը, շրջանակի վարդյակների քանդակները։ Առանձնակի հմայք ունեն արմավենու տերևների քանդակները։

Դադիվանքում այս երկշերտ հրաշալիքին գումարված է երրորդ շերտը, որ արձանագրությունն է։ Ասես ձուլած երկաթագիր տառերը շարվել են երկշերտ քանդականախշերի վրա, նայելուց այնպես է թվում, թե դրանք կարելի է վերցնել կամ վերադասավորել։

Ահա այս երրորդ շերտն է, որ Պողոսի արվեստի մենաշնորհն է, և ո՛չ նախորդները, ո՛չ էլ հաջորդները, նույնիսկ մեծատաղանդ Մոմիկը, չհամարձակվեցին հանձնել քարին։

Մոմիկը՝ Սյունյաց Նորավանքի, Արենիի, ինչպես և ուրիշ մի շարք եկեղեցական ու աշխարհիկ շինքերի ճարտարապետը, մեծ մանրանկարիչն ու գրիչը, անշուշտ տեղյակ էր Պողոսի գործերին։ Եվ որպես նրա արվեստի արժանավոր ժառանգորդը, ստեղծել է խաչքարեր, որոնք առանձնահատուկ տեղ են գրավում մեր քարգործ արվեստի գանձարանում՝ իրենց

[1] «Պաւղոս» ինքնանվանումի և այս «զՊողոս»-ի գրության տարբերությունը հուշում է, որ երկրորդը փորագրվել է ոչ Պաւղոս վարպետի ձեռքով։ Կարելի է մտածել, որ Արցախում ավանդաբար հիշվել է Դադիվանքի երկու անգուգական խաչքարերի վարպետի անունը, և ահա ուշ ժամանակներում երախտապետ մեկն այս արձանագրությունն է փորագրել, որպեսզի մեծ վարպետին չմոռանան գալիք սերունդները։

հերթին պատկելով այն վսեմ բարձրությունը, որ անհաղթահարելի պիտի մնար հաջորդ սերունդների համար։

Մոմիկի անվամբ մեզ հասած խաչքարերը հայտնի են Ամաղուի Նորավանքից։ Մեկն այժմ գտնվում է Էջմիածնում (1308 թ.), մյուսը՝ Ամաղուի վանքի գավիթ-տապանատան մեջ, նորահայտ երրորդը՝ Եղեգնաձորում։ Երեքն էլ իրենց վրա ունեն վարպետի հզոր տաղանդի դրոշմը։ Եթե զարդաքանդակների մեջ Մոմիկը չհասավ էլ Պողոսի արվեստին (նա չփորձեց երրորդ զարդաշերտը քանդակել), ապա քիվի ու շրջանակի պատկերներում, իբրև մանրանկարչությունից բերած մի մեծ բարեմասնություն, փայլեցրեց իր անմրցակից ձիրքը, ստեղծեց գունեղ ու կենդանի կերպարներ։

Մոմիկի խաչքարերի զարդաքանդակներն ունեն մի ուրիշ առանձնահատկություն ևս։ Նրանք ասես հյուսված են լուսեղեն թելերից, պայծառ լույսի ու ստվերի զարմանալի խաղերով։ Դիտելիս թվում է՝ զարդաքանդակը ծածկված է մի անտեսանելի շղարշով, որը մութ տեղն էլ պիտի լույս տա։

14-րդ դարն առանձնահատուկ ոչինչ չավելացրեց նախընթացի նվաճումներին։ Եվ դա՝ ո՛չ թե խաչքար կերտող վարպետների մեղքով։

Լանկ-Թամուրի արշավանքները ոչնչացրել էին բնիկ իշխանությունները Հայաստանի նահանգների մեծ մասում։ Դրան էլ հաջորդեց ակ-կոյունլու և կարա-կոյունլու Թուրքերի ավերիչ ասպատակությունների շարքը։ 16-րդ դարի կեսին Հայաստանը բաժանվեց հարևան երկու բռնատիրությունների՝ Պարսկաստանի և Թուրքիայի միջև։ Հայոց քաղաքական կյանքի բեկորները, ապաստանած լեռնային դավառների ամրություններին (Սյունիք, Արցախ, Լոռի, Զեյթուն, Արարատյան նահանգի մի քանի հատվածներ), ապրում էին իրենց գոյատևման ամենածանր շրջանը։ Խաթարվել էր տնտեսական կյանքի զարգացումը, և անհնար պիտի լիներ մեծածախս շինարարական որևէ գործի ձեռնարկումը։ Կարելի է կարծել, թե կանգ էր առնելու նաև խաչքարի արվեստը։ Սակայն ճարտարապետական նշանակալի ձեռնարկումների հնարավորությունից զրկված հայ քարգործ վարպետները շարունակեցին նախնյաց հրաշալի ավանդները։ Ճիշտ է, 15—18-րդ դարերի խաչքարերը մեծ մասամբ գերեզմանական կոթողներ են։ Նրանց

հարդարանքի մեջ համարյա չկան մանրամասներ կամ գեղարվեստական այնպիսի լուծումներ, որոնք նշանավորեին խաչքարի արվեստի մի նոր մակարդակ։ Բայց կարևոր է, որ նոր ստեղծագործություններում ապրում են հին վարպետների արվեստի բարձր արժանավորությունները, շարունակվում է քարի մշակման, հայ միջնադարյան քանդակագործության շունչն ու ոգին պահպանելու ճիկը։ Իրավացի էր մեր միջնադարյան քարգործ արվեստի ուսումնասիրող Ս. Գ. Բարխուդարյանը, որ խաչքարի ու նրա ուշմիջնադարյան վարպետների մեջ տեսնում էր հայոց հազարամյա ճարտարապետության ու քանդակագործության, քարին հավերժական կյանք պարգևող, այդ հնավանդ գործը շարունակող ու պահպանող, պահպանո՞ղ, մեծ երախտավորներին։ Լայն ծավալի աշխատանքներ չկային, և «տաղանդավոր քարգործների համար մընում էր համեմատաբար փոքր, կարճ ժամանակ, նյութական մեծ միջոցների հետ չկապված բնագավառ, որտեղ նրանք կարող էին իրենց դործով զբաղվել,— գրել է Բարխուդարյանը։— Դա խաչքարերի արվեստն էր, և այդ փոքրիկ հուշարձանները դառնում էին նրանց գուրգուրանքի առարկան, մշակվում և մեծ արվեստի կոթողներ էին դառնում՝ չերմացած քարգործ վարպետների տաղանդի շնչով»։

Այս շրջանի լավագույն խաչքարերը գտնվում են Սյունիքում, Արցախ-Ղարաբաղում, Արարատյան նահանդի մի քանի գավառներում ու բնակավայրերում, հատկապես Եղվարդում, և, իհարկե, Հին Ջուղայում։ Հայտնի են բազմաթիվ վարպետներ, որոնց անունները փորագրված են խաչքարերի վրա։ Եվ նրանց մեջ առանձնանում են Մելիքսեթ կազմողը (16-րդ դ., Նորատուս), Վարդան կազմողը (16-րդ դ., Վայոց ձոր), Հրուշակավոր Քիրամը (16-րդ դ., Եղվարդից մինչև Գեղարքունիք, Շամշադին), Մելիքբեկ կազմողը (17-րդ դ., Գեղարքունիք) և շատ ուրիշներ։

Այս շրջանի հայկական քարգործ արվեստի գլուխգործոցները Հին Ջուղայի (այժմ Նախիջևանի ԻՀ-ում) խաչքարերն են։ Ականատեսների վկայությամբ՝ հայկական միջնադարյան այս քաղաքի գերեզմանոցում կանգնած են եղել շուրջ երկու տասնյակ հազար խաչքար, մեծ մասամբ գեղաքանդակ ու բարձրարվեստ։

Մասնագետներից ոմանց կարծիքով՝ Հին Ջուղայի խաչքարերի վրա նկատելի է իրանական զարդարվեստի ազդեցությունը։ Նշվում են հատկապես խաչքանդակը վերևից ներքև կամարի կենտրոնում դեպի վեր սրվող ելուստը և քարե սալի ծավալը, Հին Ջուղայում այն բավական նեղացվել ու երկարել էր։

Իսկապես, Հին Ջուղայի խաչքարերի արժանավորությունները նրանց առանձնացնում են, դարձնում ինքնատիպ ու բարձր դպրոցի գործեր։ Սակայն այս դպրոցը հաստատապես կանգնած էր նախընթացի հայկական արվեստի հիմքի վրա՝ նույնիսկ իր այն ցայտուն առանձնահատկությամբ, որը թյուրիմացաբար հայտարարվում էր օտարամուտ։ Հիշենք, որ կամարի (առհասարակ խորանի քանդակների) իրանյան համարվող մանրամասնը, թեկուզ ո՛չ խիստ ընդգծված, տեղ է գտել նաև ուրիշ վայրերի խաչքարերում (Նորատուս, Մեծ Մազրա, Բջնի ևն)։ Համեմատեք, օրինակ, Հին Ջուղայի 17-րդ դարի այդօրինակ խաչքարերը Բջնիում 1580 թ. Մելիքսեթի կազմողի, առավել ևս՝ Գեղարդի ժայռափոր եկեղեցու դավթում 13-րդ դարում հավանաբար Գալձագի կանգնեցրած խաչքարերի հետ և կհամոզվեք, որ առաջինների վարպետները փոխառության կամ ազդեցության համար Իրան գնալու կարիք չպիտի ունենային. և՛ սրածայր կամարը, և՛ հարթաքանդակ պատկերները նրանք կարող էին վերցնել ժամանակով ու տարածությամբ իրենց բավական մոտիկ Բջնիի վարպետ Մելիքսեթից և Գեղարդի Գալձագ ճարտարապետից[1]։ Մանավանդ, եթե նկատի առնենք, որ սրանց հորինած կամարի սուր ծայրը բոլորովին էլ խորթ չէ հայկական ճարտարապետությանն ու քանդակագործությանը։ Հարդարանքի այդ մանրամասնը առկա է մեր ճարտարապետության մեջ, նույնիսկ մանրանկարչության վարպետների մի շարք գործերում և այն էլ ո՛չ միայն 15—16-րդ դարերում, այլև ավելի վաղ ժամա-

[1] Մելիքսեթի և Գալձագի խաչքարերում, ժամանակով իրարից այնքան հեռու, կամարի սուր անկյունն դրաղեցնում է բուսական մի դարդաքանդակ, որը պսակում է խաչի վերին թևը իբրև նրա ծաղկումի խորհրդանշան։ Այդպես է նաև Հին Ջուղայի խաչքարերում (տե՛ս էջմիածին բերվածում, որը 1602 թվականից է)։ Իսկ սա մի նոր կոչան է Հին Ջուղայի խաչքարերի ծագումնաբանությունը ճիշտ որոշելու համար։

նակներում։ Կարելի է նշել Վասպուրականի Հայանի մանրանկարիչ, 14-րդ դ. երկրորդ կեսին և 15-րդի սկզբին ապրած Սերուն ծաղկողին, որը համարձակորեն սրածայր կամարներով խորաններ էր նկարում (տե՛ս Մատենադարանի ձեռագրերը՝ № 8772, էջ 11ա, 17ա, №4157, էջ 7բ, №1874, էջ 1բ են), առանց մտածելու, թե դա կարող է դիտվել իբրև սրբապղծություն։ Իսկ քանդակագործության մեջ 11-րդ դարն էլ մեզ կարող է նպաստավորել։ Սրածայր են Սանահնում 1063 թ. կառուցված դրսառան հարավային շքամուտքի կամարը, Հովհաննավանքի (13-րդ դ. սկիզբ) հարավային ճակատի զույգ որմնակամարները, Սաղմոսավանքի Ս. Սիոն եկեղեցու (1215 թ.) արևմտյան շքամուտքի կամարը, Գեղարդում Տիմոթ ու Մխիթար հորինողների կանգնեցրած խաչքարի (1213 թ.) պատվանդանի խորանները։ Նման մանրամասներ կան նաև Մակարավանքում ու Խորանաշատում։ Էլ չեմ խոսում Ամուղուի Նորավանքի մասին, որի Ս. Կարապետ եկեղեցու արևմտյան դռան կամարը սուր անկյուն է կազմում Սավուղի հարթաքանդակի գլխին։ Կամ Գոշավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (ավարտվել է 1231 թ.) շքամուտքի մասին, որը պատկվում է բարավորի սրածայր կամարով։ Համոզվելու համար, որ մեր միջնադարյան արվեստի բնագավառներից ոչ մեկին էլ խորթ չի եղել սրածայր կամարը, հիշենք հայկական գորգի այժմ պահպանվող արձանագիր հնագույն օրինակը (1202 թվականից է և գտնվում է Վիեննայի թանգարանում), որի խորանն ունի սրածայր կամար։

Ուրեմն, զուր տեղն աղանդավոր կամ մուրացիկ չհամարենք Հին Ջուղայի քարդործ վարպետներին, որոնք ոչ թե կանգ առան նախնյաց ստեղծած արվեստի մակարդակին, այլ առաջ տարան այն, դարձան հայ քարարվեստի համար նոր հորիզոն բացողներ։

Հին Ջուղայի խաչքարերի նյութը շագանակագույն, հեշտ մշակվող տուֆն է, որը հուշում է քանդակել նրբագույն մանրամասներ։ Նրանց զարդաքանդակները հիշեցնում են ժանյակներ, որոնք հյուսված են մետաքսաթելով։ Պատկերաքանդակները, որոնցով այնպես հարուստ են նրանք, իրապաշտ են գեղեցիկ համամասնություններով, բնական չափ ու ձևերի խստագույն սահմանների մեջ։

Ահա Հին Ջուղայից բերված մի խաչքար (1602 թ.), որն այժմ կանգնած է Էջմիածնի Մայր աթոռի բակում։ Պատկերաքանդակներն այստեղ ներկայացնում են եկեղեցական այնպիսի հասկացություններ, ինչպես երկնային կառքը, Քրիստոսը կառքի վրա, կողքերին՝ չորս ավետարանիչները։ Կառքի լծկաններն են մարդը, առյուծը՝ ձախ կողմին, և արծիվն ու եզը՝ աջ կողմին։ Այսպես է ներկայացվում երկնային կառքը քրիստոնյա աշխարհի արվեստի բոլոր բնագավառներում (քանդակագործություն, մանրանկարչություն ևն)։

Քննության առարկա խաչքարի ավետարանիչներն աղերսական կեցվածք ունեն. չէ՞ որ նրանք բարեխոսներ են՝ կոչված Քրիստոս աստծուն բարեխոսելու պարոն Հովհաննեսի համար, որը պատվիրատուն է (քիվի տակի արձանագրությունը. «Սբ խաչս բարեխուս առ Քս պարոն Յովանիսին», վարի քառակուսու մեջ. «Սբ խաչս բարեխոս առ Քս պարոն Յովանիսին հոգունս»)։

Խաչից ներքև ավանդական զարդահյուս գունդն է՝ մի բարձրաքանդակ նախշուն ու կլոր շրջանակի մեջ, որը ևս նորություն է (ուրեմն՝ հինգուղայեցի վարպետների նորամուծությունը խաչքարի արվեստի մեջ)։ Այս վարդյակից ներքև էլ քառակուսի մի տարածություն է՝ առնված շրջանակի մեջ, որի աջ կողմում արձանագրությունն է, ձախում՝ հեծյալ, իշխանավորի թուրը կողքից կախ և աջ ձեռքին խաչի նշանը բարձր պահած, իբրև բարեպաշտության պատգույց։

Հին Ջուղայի խաչքարերի այս քառակուսին համարյա միշտ նույն տեղն ու դերն ունի. պարունակում է արձանագրություն և հեծյալի քանդակ, եթե, իհարկե, հիշատակարանը վերաբերում է ազնվական անձնավորության։ Եվ այս մանրամասնը ևս ավանդված է մեր խաչքարի արվեստի վաղ շրջանից։ Գանձասարում գտնվող մի խաչքար, որ պարոն Հովհաննեսից ջուրջ մեկ դար առաջ Գրիգորիս կաթողիկոսն է կանգնեցրել իր հայր պարոն Մեհրապի հիշատակին («Սբ խաչս փրկութիւն պարոն Մեհրապին ի կոչման աւուրն»), խաչից ներքև ունի հեծյալի պատկերաքանդակը և կողքի արձանագրությունը։ Տարբերությունն այն է, որ Հին Ջուղայի վարպետը մի քայլ առաջ է գնացել քանդակելու բնագավառում։

Հին Ջուղայի վարպետները մեր միջնադարյան, հատկա-

պես 12—14-րդ դդ. քարգործ վարպետների հարազատ ժառանգներն էին, նրանց կախարդական արվեստի շարունակողներն ու զարգացնողները։ Այո՛, զարդացնողնե՛ր։ Նայե՛ք նրանց զարդանախշերին և չեք կարող չհամոզվել, որ ժառանգները մեծապես գերազանցել են այն ամենը, ինչ իրենց համար օրինակ են դարձրել։ Նայե՛ք նրանց պատկերաքանդակներին։ Ինչպիսի՞ նրբությամբ են ստեղծված, մարմնի մասերի, մարմնաձևերի ինչպիսի՞ համաչափությամբ ու ճշգրտությամբ։ Ապա շարժո՞ւմը։ Նժույգն այստեղ պլաստիկ այնպիսի ձևերով է քանդակված, որ թվում է՝ չի կարող չշարունակել իր ընթացքը։ Բարեխոս ավետարանիչներն ու առաքյալներն այնպես ձգված են դեպի Քրիստոսը, որ անհնար է չխղճալ նրանց, չանհանգստանալ նրանց աղերսանքին։ Իսկ մյուս մանրամասնե՞րը։ Նրանց մեջ ևս չի կարելի չնկատել արվեստի վերելքը, անշեղ զարդացումը։ Նորատուսի 14—15-րդ դդ. վարպետները խաչքարի վրա, կենտրոնական խաչի թևերի տակ, փոքրիկ խաչեր էին քանդակում։ Այս փոքրիկները վարի թևերով երկու ձեռքերի մեջ են, որոնք իրենց հերթին ծագել-ճյուղարձակվել են մեծ խաչի երկար թևերի տակից՝ իբրև ծաղկումի խորհրդանշան։ Հին Ջուղայի վարպետներն ավարտի ու կատարելության են հասցրել այս զարդաձևը։ Պարոն Հովհաննեսի խաչքարի մեծ խաչի վարի թևի տակ մարդու քանդակ է։ Նա գլխին մեծ խաչն է պահում, իսկ վեր պարզած երկու ձեռքերում՝ փոքրիկ խաչերը։ Մարդու քանդակի տակ կերտողի ինքնագիրն է «Գրգր վրպտ» (Գրիգոր վարպետ)։ Արդյոք այս Գրիգոր վարպետն իրե՞ն չի նկատի առել պատկերաքանդակի մեջ։

Եվ այսպես, ծնունդ առնելով հայոց վաղ քրիստոնեական մշակութային միջավայրում՝ իբրև հնամենի կոթողային քանդակագործության ժառանգորդն ու տրամաբանական շարունակությունը, խաչքարը դարերի ընթացքում զարգացավ, կատարելագործվեց, դարձավ գեղեցիկ արվեստի ամենաշքեղ բնագավառներից մեկը։ Եվ լինելով բացառապես հայկական երևույթ, այն նշանավորվեց կոթողներով, որոնք անզուգական են իրենց տեսակի մեջ ու հարստացնում են քաղաքակիրթ մարդկության գեղարվեստական մշակույթի գանձարանը։

Վերջերս Երևանի քարի ու սիլիկատների ինստիտուտի գիտնականներից մեկը շատ պատասխանատու մի ամբիոնից հայտարարեց, թե իրենք ստեղծել են քիմիական բարդ միացություն— հեղուկ, որը կարելի է փչել քարի մակերեսին և, արտաքին վնաս չպատճառելով հանդերձ, նրան տալ այնպիսի ամրություն, որ այլևս ոչ մի վտանգ չներկայացնեն ո՛չ բնական պատահարները, ո՛չ էլ ավերիչ դարերը։

Կգա ժամանակ, երբ մեր խաչքարերը, այս եղանակով ամրացած ու ապահով, կշրջեն երկրե երկիր, ինչպես Դրեզդենի պատկերասրահի հրաշալիքները կամ Լուվրի կախարդական Ջոկոնդան, և հանուր մարդկությանը կծանոթացնեն իրենց կերտող ժողովրդի հանճարի հետ։

Չի կարելի չհավատալ այս ապագային։



ՀԱՅՈՑ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՕՏԱՐ ԿՂԶՈՒ ՎՐԱ ԿԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Այս միաբանության եղբայրաց մաքրակեցությունը, անդորրը, բարեկրթությունը, անկեղծ նվիրվածությունը, բարձր արժանիքները, առաքինությունները աքանչելիորեն ներդաշնակված են՝ աշխարհիկ մարդուն համակելու այն հավատով, թե նույնիսկ այս կյանքի մեջ կա մի ուրիշը և ավելի լավը։

ՋՈՐՋ ԳՈՐԴՈՆ ԲԱՅՐՈՆ

Արդեն երկուսուկես դարից ավելի է, ինչ Իտալիայում, Ադրիատիկ ծովի եզերքին, Վենետիկի հարևան Սուրբ Ղազար կղզում հիմնադրված հայկական հոգևոր մի կենտրոն՝ Մխիթարյանների միաբանությունը, իր վրա հրավիրած պահում է քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը։ Համաշխարհային չափանիշներով ստեղծված բազմաբնագավառ հայագիտական վաստակով, հասարակական ու հոգևոր կյանքի մեծարժեք ուսումնասիրություններով, բնական գիտությունների, փիլիսոփայական, դեղարվեստական գրականության ժառանգությամբ, հայրենի ժողովրդի լուսավորության և առհասարակ մշակութային զարգացման գործին մատուցած անհուն ծառայություններով այդ ուխտը ներկայանում է որպես ամբողջ մի ակադեմիա, գիտության ու մշակույթի հրաշալի կամար, որ պատիվ է բերում իրեն ծնող ազգին։

Հարց կարող է առաջանալ, թե ինչպե՞ս պատահեց, որ Մխիթարյան հայրերը հենց Իտալիան ընտրեցին իբրև իրենց գործունեության վայր, Իտալիայում էլ՝ Վենետիկը, ավելի ճիշտ՝ Վենետիկի կողքի Ս. Ղազար կղզին։

Պատասխանը միանշանակ է. Իտալիան հնուց ի վեր հայկական երթևեկի վայր է եղել։ Ստույգ տեղեկություններ կան 5—6-րդ դարերից ի վեր այստեղ գործած հայ աշխարհիկ, մանավանդ ռազմական գործիչների, զորաջոկատների մասին։ Անկասկած է, որ հենց նրանց հետ կամ նրանց հետևից էլ առևտրականներ ու հոգևորականներ են գնացել։ Եվ երթևեկողների թիվն այնքան մեծ է եղել, Իտալիայում հանդրվանելը՝ այնքան տևական ու բազմամբոխ, որ 12-րդ դարում արդեն այնտեղ ավելի քան տասը քաղաքներում հայկական եկեղեցիներ էին գործում։ 13-րդ դ. Հռոմի մի քանի եկեղեցիներում ընդօրինակված ձեռագրեր են պահպանվել, և նրանց հիշատակարաններից պարզվում է, որ մեծ մայրաքաղաքի հայկական վանքերից մեկը եպիսկոպոսանիստ է եղել։ Մեր Վարդան Վարդապետ Արևելցին հյուրընկալվել է այնտեղ և հայրենիք վերադառնալով՝ հիացմունքով գրել երգեհոն երաժշտական գործիքի մասին, որը տեսել և ունկնդրել է այն երկրում։

Իսկ Վենետիկն իտալական այն քաղաքն է, որն ամենից վաղ ու ամենից շատ բարյացակամ է եղել Ադրիատիկի ափին ոտք դրած հայերի հանդեպ։ Հայ վաճառականները վաղ միջնադարում այնտեղ ունեին առևտրական օջախներ, որոնք ճայկական տներ էին կոչվում։ Հայ հոգևորականներն այնպես հիմնավոր էին բնավորված այնտեղ, որ Գուտենբերգի դյուտով խանդավառված հայ մարդն իր երազանքն իրականացնելու համար ուրիշ մի տեղ չէր տեսնում, քան հենց Վենետիկը։ Այնտեղ են լույս տեսել հայերեն առաջին գրքերը, և սա արդեն մեծ սկիզբն էր...

Յուրաքանչյուր մեծ գործի գլուխ կանգնած է լինում մի մեծ մարդ։ Մեծ անհատականություն, որը ոչ միայն ճանապարհ է բացում, այլև դառնում է իր իսկ բացած ճանապարհի առաջին ուղևորը, հետագա ընթացքի ուղենիշը։

Մեր ազգային մշակութային կյանքում վիթխարի դերով ու գործով հայության Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացի վարդապետն էր (1676—1749), իր դարի մեծագույն հայերից մեկը, որ, ծնված լինելով մեր պատմության ամենամռայլ շրջանում, պատանեկությունից իսկ իրեն

նվիրեց ազգի լուսավորությանը՝ ծրագրելով վիթխարի գործ՝ եվրոպական լուսավորական մակարդակով ու չափանիշով խթանել իր ազգի առաջադիմությունը։

Երբ ձեռնարկեց իր կյանքի գործին, արդեն հրաշալի գիտեր հայրենի երկրի բոլոր նահանգների կյանքը, ծանոթ էր հայության տարբեր հատվածների հավասարապես վատթար ու անմխիթար վիճակին։ Բավական է հիշենք, որ նա հենց միայն ուսումնառության համար եղել էր ծննդավայր Սեբաստիայի, Էջմիածնի, Սևանի, Կարինի վանքերում։ Սրագրել էր խավարում տվայտող ազգի «հոգևոր ու իմացական կարիքները» բավարարող միաբանություն ստեղծել և դրա համար պատեպատ էր զարկվում, փորձում էր ապավինել ժամանակի հոգևոր աշխարհի միջազգային հզորություններին և միաժամանակ շարժանանալ հայրենի լուսավորական եկեղեցու հակառակությանը։

Չմոռանանք, որ 17-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայում ամենատիրականը կաթոլիկ եկեղեցու ձայնն էր, որը նրա քարոզիչ գործակալների ջանքերով հասել էր նաև Ասիայի քրիստոնյաներին, և քրիստոնյա բովանդակ աշխարհից իրեն մեկուսացրած հայոց եկեղեցու հայրերն էլ ազգը թուրք ու պարսիկ բռնավորներից փրկելու ոչ մի ուրիշ հանապարհ չէին տեսնում, քան Հռոմի պապի ոտքը գնալը։ Եվ ահա իր ծրագրի իրականացումը նախապատրաստելու համար, իբրև ուսուցիչ արևմտահայկական վանքերում դեգերելով, Մխիթարը 1701-ին Կ. Պոլսում տասնհինգ համախոհ ու կամակից աշակերտներով հոգևոր միաբանություն է հիմնում, որն ստեղծում է իր կանոնադրությունը։ Միաբանությունն էլ, այս ու այնտեղ երկար դեգերելուց հետո, 1717 թ. հաստատվում է Վենետիկի կողքի Սուրբ Ղազար կղզում։

Մխիթար աբբահոր նախագծերով այստեղ կառուցվում են վանքն ու օժանդակ շինությունները։ Հայրենիքից հեռու, օտար երկնքի տակ, ստեղծվում է հոգևոր-լուսավորական-գիտական-գրական-մշակութային մի օջախ, որը հետագա տասնամյակներին դառնալու էր մեր ազգային կյանքը ներկայացնող մի անխոնջ հաստատություն, մեր մշակույթի ծաղկող և օրըստօրե շենացող մանրակերտը քաղաքակիրթ աշխարհի կենտրոնում։

Միաբանության հիմնադրի ոչ միայն կազմակերպչական

օրինակը, այլև գրական, գիտական գործունեությունն ու հոգևոր կերպարը որոշիչ եղան օջախի հետագա ամբողջ կյանքի ճանապարհին։

Կաթոլիկ եկեղեցու թևի տակ ծաղկելու, համապարփակ գործունեություն ծավալելու համար հարկ էր լինել կաթոլիկ, և Մխիթար վարդապետի միաբանությունը եղավ այդպիսին։ Սակայն հենց աբբահայր Մխիթարն էլ տվեց այս մթնոլորտում ապրելու և գործելու պայծառ մի օրինակ։ Ասում են՝ կաթոլիկությունը նրա համար պահպանիչ դիմակ էր, որի ներքո ապրում ու գործում էր հայ մարդը, հայկական մշակույթի ազգային ավանդներին մինչև վերջ նվիրված հոգևորականը։ Նրա գրական գործերը՝ «Ջաղաբան» քնարերգական ժողովածուն ու թարգմանությունները, ժամանակի հայ գրական կյանքում նշանակալից երևույթ էին։ Նա էր, որ գերմանացի արևելագետ Ցոհան Շրյոդերի ստեղծած «Արամեան լեզուի գանձ» (Ամստերդամ, 1711) քերականական աշխատությունից հետո գրեց աշխարհաբար հայերենի առավել ընդարձակ ու ընդգրկուն քերականությունը («Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց»)։ Նրա մյուս լեզվաբանական քննությունը՝ «Քերականութիւն գրաբառ լեզուի հայկազեան սեռի», կրոնական-աստվածաբանական, մեկնաբանական երկերը, իր ղեկավարությամբ միաբանության անդամների կատարած մատենագիտական ուսումնասիրությունները հիմք դրին գիտական բազմաբնագավառ այն գործի, որը Մխիթարյանների փառքն էր կազմելու։

Եվ, այսուհանդերձ, եթե Մխիթար Սեբաստացու գործունեության կազմակերպչական մասը փառավորվում է միաբանության ստեղծման փաստով, ապա գիտական-հետազոտական ճյուղի պսակը պիտի համարել նրա բացատրական երկհատոր բառարանը՝ «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. Ա—1749, հ. Բ—1769)։ Հայ բառարանագրության բազմադարյան պատմության մեջ վիթխարի մի գործ է սա՝ աննախադեպ իր ծավալով (շուրջ 100 հազար բառահոդված), պարունակած նյութի հարստությամբ (ընդգրկում է հայ մատենագրության մեջ օգտագործված ամբողջ բառապաշարը՝ բառերի ստուգաբանությամբ, աշխարհաբար և օտար մի շարք լեզուների համանիշների զուգահեռ քննությամբ հանդերձ)։

Մխիթար Սեբաստացու այս բառարանը հիմք դարձավ Մխիթարյանների ապագա «Նոր բառգրքի» և առհասարակ հայկական մյուս բոլոր բառարանների համար։

Բարեբախտաբար, Մխիթար աբբահորը հաջորդեցին նրանից ոչ պակաս եռանդուն ու քաջահմուտ դեկավարներ։ Նրանց գլխավորությամբ և հայագետ բազմաթիվ նվիրյալների աշխատասիրություններով ստեղծվեցին և լույս ընծայվեցին հայոց մատենագրության ընտիր գործերի քննական բնագրերը։ Բավական է հիշենք թեկուզ նրանցից ամենագլխավորները, որոնք ըստ էության մեր հին հեղինակների երկերի լիակատար ժողովածուներն են հանդիսանում. Գրիգոր Նարեկացու «Մատենագրութիւնքը» (1827), Բարսեղ Կեսարացու «Ճառք» (1830), Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» (1832), Դավիթ Անհաղթի «Մատենագրութիւնք» (1838), Մովսես Խորենացու «Մատենագրութիւնք» (1843) և բազմաթիվ ուրիշ ժողովածուներ ու մատյաններ։

Մխիթարյանները 18—19-րդ դդ. հայ գեղարվեստական գրականության առաջավոր շարքերում էին քայլում՝ առաջինն արձագանքելով եվրոպական և համաշխարհային գրականության նոր հովերին ու հոսանքներին։ Եթե Մխիթար Սեբաստացու «Տաղարանը» հայ քնարերգության մեջ կլասիցիզմի առաջին արձագանքն էր, ապա այս հոսանքն իր հետագա զարգացումն ստացավ «Տաղք Մխիթարյան վարդապետաց» հռահատոր ժողովածուի մեջ (1852—1854 թթ.), որպեսզի Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն» դիցապատմական պոեմով հասնի իր ավարտին ու կատարելությանը։

Լավ է, որ Մխիթարյան հայրերը շուտով հասկացան իրենց որդեգրած հոսանքի ազգաժողովրդական դերը, այդ հոսանքի համար ստեղծված լեզվաոճական տարերքի շինծվությունն ու անհեռանկար վիճակը։ 19-րդ դարի երկրորդ կեսին արդեն նրանց համար էական դեր ստացան հայրենի հողի վրա և հայկական մյուս գաղթավայրերում սկզբնավորված ազգային ազատագրական պայքարի կոչն ու նրան նվիրված ռոմանտիզմը։ Այս հոսանքի մեծագույն ներկայացուցիչը դարձավ Ղևոնդ Ալիշանը, որի բանաստեղծություններն ու պոեմները «Նուագք» ընդհանուր խորագրի տակ լույս են տեսել հինգ հատորով հետևյալ շարքերի մեջ՝ «Մանկունիք», «Մաղթունիք», «Բնունիք», «Հայրունիք», «Խոհունիք», «Տխրունիք», «Տերունիք», «Բանք պանդխտի», «Երգք նահապետի»։

Շարքերի մեջ բարձր արժեք ունեն «Բնունին» և «Հայրունին»։ Առաջինը բնության ոգեշունչ երգիչն է, որի յուրաքանչյուր տողը մարդու առաջ բացում է մայր բնության գաղտնիքն ու թովչանքը։ Զուր չէ, որ բանաստեղծի կարծիքով «Բնությունը ամենեն առաջ կրթողն ու հրահանգողն է, ամեն կրթության այբուբենն է, ամեն դժվարության դյուրացնողն է»։

«Հայրենին» կազմված է հայոց պատմության փառավոր դրվագներին նվիրված հայրենասիրական էջերից, որոնք հին հերոսների, նրանց սխրալից գործերի ոգեկոչումով նոր սերունդները դաստիարակելու, հայրենասիրական ոգորումների մղելու խնդիր ունեն։ Այս շարքով Ալիշանը մի գլխով բարձրացրել է հայոց ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսությունը՝ խոր ազդեցություն թողնելով հատկապես ժամանակի արևմտահայ քնարերգության վրա։

Մխիթարյան ակադեմիայի ժառանգության ամենածանրակշիռ մասն է կազմում հայագիտությունը և ես չեմ կարող այս բնագավառում կատարված մի քանի ամենաէական երևույթները չնշել թեկուզև ընդհանուր խոսքով։

Կարելի էր Մխիթարյանների հայագիտական կոթողային գործերի մեջ առանձնացնել մեկը և, նրա վրա սևեռելով ընթերցողի ուշադրությունը, ցույց տալ, թե ինչի՞ են ընդունակ այն մարդիկ, որոնց անձնազոհ նվիրումին նախապես գումարված են եղել «աստվածային հուրը», խորաթափանց միտքն ու բազմապիսի ձիրքերը։ Բայց ո՞ր մեկն ընտրեմ. Միքայել Չամչյանի «Հայոց պատմությունը», Ղուկաս Ինճիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանեաց», թե՞ հռահատոր «Հնախոսություն աշխարհագրականը Հայաստանեայց աշխարհի», վարդապետաց հոյակի «Հայկազեան բառարանը»...

Անհամեմատելի, անզուգակից գործերը շատ են, և թող հիշատակաց արժանիների անմահ հոգիներն ինձ ներեն, որ նույնիսկ նրանց մեջ ես պետք է ընտրություն կատարեմ։

Հայագետ Մխիթարյանների մեջ պատմաբանների շարքում, անշուշտ, առաջին անհամեմատելի մեծությունը Միքայել Չամչյանն է (1738—1823)։ Նա եղել է միաբանության ամե-

նաեռանդուն գործիչներից մեկը, Հմուտ ուսուցիչը, տարբեր տարիների գլխավորել է կաթոլիկ հայության Բասրայի ու Բաղդադի թեմը, Տրանսիլվանիայի Եղիսաբեթուպոլիս քաղաքի հայկական վարժարանների գործը, Կ. Պոլսում Մխիթարյանների մեծավոր ներկայացուցիչն է եղել։ Սակայն անուն է հանել հայագիտության բնագավառում ունեցած բազմաշերտ վաստակով։ 1779 թ. լույս տեսած «Հայկազյան լեզվի քերականությունը» հետագայում մեկ տասնյակից ավելի հրատարակություններ է ունեցել և շուրջ մեկ դար գրաբարի լավագույն դասագիրքն է եղել հայոց դպրոցում։ Այս ձեռնարկն ստեղծվել է վաղ շրջանի մեր մատենագրական երկերի ընձեռած նյութի հիման վրա, մերժում է հետագայում գրաբարի մեջ մուծված օտար տարրերը, մանավանդ լատինաբանությունները, և, ըստ էության, առ այսօր լավագույնն ու ամենակատարյալն է գրաբարի քերականության ուսումնասիրություններից։

Զամչյանը գրել է նաև եկեղեցական կյանքի կարգավորմանն ուղղված գրքեր, մեկնաբանություններ։ Նրա «Մեկնութիւն սաղմոսաց» տասհատորանոց ուսումնասիրությունը (1815—23 թթ.) հայոց բանասիրության ամենարնտիր գործերից է, որ սաղմոսների հայերեն թարգմանությունը համեմատում է հին լեզուների լավագույն թարգմանությունների հետ, հայերենը մաքրում, ճշգրտում, հասցնում մի կատարելության, որին իսկապես արժանի են այդ քնարերգական գանձերը։

Եվ, այսուհանդերձ, Զամչյանը Զամչյան է իր «Պատմութիւն Հայոց» եռահատոր երկով (1784—1786), որն ընդգրկման ծավալով, գիտաքննական մակարդակով ու նպատակասլացությամբ բացառիկ է մեր անցյալ պատմագիտության մեջ և առանց վարանելու այն կարելի է դնել ուրիշ ժողովուրդների համանման լավագույն գործերի շարքում։

Զամչյանի պատմությունն ընդգրկում է հայոց պատմությունը՝ աստվածաշնչյան արարչությունից մինչև 1784 թվականը, և բաժանվում է վեց գրքի, որոնցից առաջինը նահապետների ու հայկազունների պատմությունն է, երկրորդը՝ Արշակունյաց թագավորական հարստության, երրորդը՝ Հայաստանի մարզպանական ու ոստիկանական շրջանի, չորրորդը՝ Բագրատունյաց թագավորության ու նրան ժամանակակից նախա-

բարական տների տիրապետության, հինգերորդը՝ Կիլիկյան իշխանապետության, վեցերորդը՝ անիշխանության շրջանի։

Հայտնի է, որ մեզանում առաջին անգամ Մովսես Խորենացին է պատմության համար հիմք դարձրել ժամանակագրությունը և նրա հենքի վրա էլ հյուսել մեր ազգային պատմության դրվագները։ Ժամանակագրության հարցում Պատմահորից մի քայլ առաջ անցնելով՝ Զամչյանը բծախնդիր քննության է ենթարկում աղբյուրների տվյալները, հիմք ընդունելով հանրահայտ թագավորական հարստությունների ներկայացուցիչների, տիեզերական ժողովների, պատմական կարևորագույն դեպքերի տարեթվերը։ «Զսոցա ժամանակս իբր չափ և կանոն ունելով մեր առաջի, ընդ սոսին համեմատեցաք զընթացս պատմութեան մերոյ իբրև ընդ փորձաքարս»,— գիտնականն այսպես է բացատրում իր հետազոտության եղանակը։

Զամչյանի պատմության աղբյուրները բազմազան են, բազմալեզու։ Հին հեղինակների տպագիր ու անտիպ երկեր, ժամանակագրություններ, հիշատակարաններ, դիվանական փաստաթղթեր ու զանազան պատառիկներ, որոնց մասին ստույգ նշումներ են արվում հատորների լուսանցքներում։ Կատարվում են ճշգրտումներ, աղբյուրների քննական համեմատությունից արտածվող ուղղումներ կամ լրացումներ, որոնք արտացոլում են հեղինակի խորաթափանց միտքը։ Հայոց պատմության դիպաշարը, ըստ հնարավորին, համեմատվում է հարևան տերությունների՝ Պարսկաստանի, Հռոմեական կայսրության, հաջորդ պատմաշրջաններում հայտնված բռնակալների պատմության դեպքերի հետ, և սրանով առավել ըստուգվում ու անխաթար է դառնում մեր դարձդարձիկ կենսագրության ընթացքը։

Ելնելով պատմության, հատկապես հերոսական անցյալի, բարոյակրթիչ դերի մեր ոսկեդարյան ըմբռնումից, Զամչյանը մեծ ուշադրություն է դարձրել հայոց ազատագրական պայքարի լավագույն դրվագներին, անցյալի մշակութային գործիչների, պետական ու հոգևոր կյանքի անխոնջ կազմակերպիչների կերպարներին։

Ընդառաջելով պատմության ոչ մասնագետ ընթերցողների շահերին՝ Զամչյանը եռահատոր իր երկից քաղել է համառոտ ու հանրամատչելի մի շարադրանք, որը կոչվում է «Խրախճան

պատմութեան Հայոց» (1811) և հետագայում թարգմանվել ու հրատարակվել է օտար լեզուներով։

Վերջերս Երևանի համալսարանի հրատարակչությունն իրականացրեց Միք. Չամչյանի պատմության երեք հատորների վերահրատարակությունը։ Երկուհարյուրամյա գրապատմական հուշարձանը հայ ընթերցողին ներկայացավ այնպիսի փայլ ու շուքով և մանավանդ պարունակած նյութի այնպիսի գիտականությամբ, ասես մեծ վարդապետը հենց վերջերս է այն ավարտել՝ ընդգրկելով ոչ միայն հին հայտնի ու անհայտ պատմական փաստերը, այլև վերջին երկու հարյուրամյակի գիտական շարժման արդյունքները։

(Վենետիկի Մխիթարյան միաբանության առաջին մեծության աստղերից էր Ղուկաս Ինճիճյանը (1758—1833)՝ աշխարհագրագետ ու պատմաբան, բանասեր ու բանաստեղծ։)

Երբ 1806 թ. Գ. Ագոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» շարքի մեջ լույս տեսավ Ինճիճյանի ձեռքով գրված «Նոր Հայաստան» հատորը, ժամանակի գիտական աշխարհը կարող էր արձանագրել, որ վաղ միջնադարից ի վեր կազմավորված ու համաշխարհային գիտական մակարդակի հետ համաքայլ ընթացող հայկական աշխարհագրությունը թեվակոխում է իր զարգացման նոր փուլը, քննական ու քննադատական, աղբյուրագիտական խորագնա հետազոտություններով իր սկզբունքները հաստատող շրջանը։ Եվ լուսացավ նաև զարգացման բարձրակետը՝ «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» մեծածավալ հատորը (1822 թ.), որի համար եթե աղբյուրագիտական հիմք են ծառայել հին հունական ու հռոմեական, ասորական ու արաբական հեղինակների բոլոր ու ամեն տեսակ երկերը, եվրոպական ճանապարհորդների վկայությունները,— էլ չեմ խոսում հայ մատենագրության ու այլազան աղբյուրների տվյալների մասին,— ապա այս բոլորն ի մի է բերվել, դրվել գիտական կուռ ու հզոր մի հյուսվածքի մեջ, որի բարձր մակարդակն անհաղթահարելի է մնում առ այսօր։

«Ստորագրութիւնը» ոչ միայն հին Հայաստանի, նրա բոլոր նահանգների ու գավառների աշխարհագրությունն է, ներկայացնում է ոչ միայն նրանց վարչաքաղաքական վիճակների փոփոխությունները դարերի երկար ընթացքին, այլև մեր պատմության, Մեծ Հայքի կենսագրության դարձդարձումներն ու վայրիվերումները, մեր քաղաքական կյանքի, տնտեսության ու մշակույթի ամենաբնորոշ առանձնահատկությունների սառագապատումը... Այն պետք է դասագիրք լիներ, ընդօրինակության տիպար հանդիսանար ապագա հայ բոլոր աշխարհագետների համար, ամեն մի հայ մտավորականի համար, որ ուզում է իր հայրենիքի անցյալը ճանաչել և կարիք ունի մինչև վերջ վստահելի, բոլոր տեսակետներից անթերի մի ուղեցույցի։

Ինճիճյանի հաջորդ գործը դարակազմիկ մի երկ էր՝ «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատորը (1835)՝ Հայաստանի աշխահագրության, հնագիտության, պատմության, մշակութային զարգացման մի իսկական հանրագիտարան, որն անվարան կարելի է դնել հայագիտական գրականության լավագույն կոթողների կողքին։

Իսկ նրա գրական-գեղարվեստական ու հրապարակախոսական գործե՞րը, ութհատորանոց «Դարապատում» (1824—1827 թթ.) 18-րդ դարի համաշխարհային պատմության մասին, դարձյալ հանրագիտական մի աշխատանք, որի մեջ ժամանակի (նաև այսօրվա) ընթերցողը կգտնի պետությունների ու ժողովուրդների մեկ դարու, մանավանդ 1750—1800 թթ., կյանքը՝ դիտված ամենատարբեր կետերից, այն էլ՝ բազմահմուտ քննողի, պերճախոս պատմողի կողմից։ Եվ ամենակարևորը՝ հատորաշարի ձուլածո անունը՝ «Դարապատում», որ հաջորդ սերունդներին պիտի թելադրեր առնմանությամբ ստեղծելիք խորագրերն իրենց գրքերի՝ «Հայապատում» (Ալիշան), «Աղգապատում» (Մ. Օրմանյան), «Ավանդապատում» (Ա. Ղանալանյան), «Հուշապատում» (Ռ. Զարյան), «Հայրենապատում» (Ս. Խանդաղյան) են[1]։

Երբ խոսք է լինում Մխիթարյանների հայագիտական անաչառ ծառայությունների մասին, առաջին տեղերից մեկում հիշվում է Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի ու Մկրտիչ Ավգերյանի ստեղծած «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշ-

[1] Բոլոր այս անուններում «պատում» հավաքական իմաստ ունի և պարունակում է նաև հոգնակիի նշանակությունը։ Ուստի, կարծում ենք, սխալվում են այն գրագետները, որոնք նույն բառին երկրորդ հոգնակիակերտ («ներ») են ավելացնում՝ իրենց պատառիկները հրապարակելով «մանրապատումներ», «երգիծապատումներ» ու համանման տարբերակներով։

խատությունը։ Երեք անխոնջ նվիրյալներ շուրջ կես դար տքնել են այս բառարանի վրա։ Հայ հին մատենագրության մեջ մի բառ չկա, որ մտած չլինի բառարանը։ Յուրաքանչյուր բառ ունենում է իր տարբեր իմաստները, և ամեն մի հեղինակ էլ այդ իմաստներից ընտրում է այն, ինչ իրեն պետք է տվյալ դեպքում, տվյալ կապակցության մեջ։ Ընդ որում՝ հաճախ էլ հանրահայտ իմաստին գումարում է իր սեփականը՝ բառին տալով մի նոր երանգ, որը սկզբնապես լինելով պատահական, աստիճանաբար դառնում է օրինաչափ ու բնութագրական... «Նոր բառարար դառնում է օրինաչափ ու բնութագրական», որ հայտնի է նաև «Հայկազյան բառարան» անունով, բառը քննվում է բազմակողմանիորեն, իր բոլոր հիմնական ու երկրորդական իմաստների մանրակրկիտ հետազոտությամբ։ Եվ, որ շատ կարևոր է, վկայակոչվում են մատենագրական երկերը, տպագիր ու ձեռագիր, նշվում են նրանց արտահայտած իմաստներն իրենց բոլոր նրբերանգներով... Եվ հենց այդ պատճառով էլ բառարանը, որ գրաբարի ամբողջ բառապաշարի ստուգաբանության ամենաընդգրկուն երկն է, միաժամանակ և մեր բազմադարյան մատենագրությունը հասկանալու լավագույն բանալին է դարձել, նրա բառային հարստությունը ճշգրտած, այն գրչական ու խմբագրական աղավաղումներից մաքրած լավագույն աղբյուրը։

Հայկազյանի ստեղծման ժամանակ հնդեվրոպական լեզվաբանությունը դեռևս իր առաջին քայլերն էր կատարում, և հայերենի ուսումնասիրությունը խանձարուրային վիճակում էր գտնվում, երբ Մխիթարյան երեք հայրերը ցույց տվին հայերենի կատարած փոխառությունների աղբյուրները և հայերեն բառերի ստուգաբանություններն էլ ստուգեցին ու ճշգրտեցին բազմաթիվ ուրիշ լեզուների համապատասխանությունների շղթայի մեջ։ Սա աներևակայելի սխրանք էր այն ժամանակ և իր ճշգրտությամբ անպայման բռնում է նաև այսօրվա լեզվագիտության քննությունը։

Բառարանը նախապես բաղկացած է եղել 12 հսկայածավալ ձեռագիր հատորներից, որոնք ժամանակին հրատարակել չկարողացավ միաբանությունը՝ հիմնականում նյութական սղության պատճառով։ Եվ հարկ եղավ 12 հատորների նյութը սեղմել, ամփոփել երկու հատորի մեջ, որոնք էլ լույս տեսան 1836—1837 թթ.։

Արդեն դարուկես Հայկազյան բառարանը սեղանի գիրք է հայագիտության սպասավորների, յուրաքանչյուր հայ մտավորականի համար։ Լույս են տեսել տասնյակ բառարաններ՝ բացատրական, նույնիսկ արմատական, հայերենից ուրիշ լեզուներ կամ հակառակը, և համարձակորեն կարելի է ասել, որ նրանց բոլորի համար հայրոմայր են եղել Հայկազյանի երկու հատորները։

Շուրջ դարուկես հետո (1979—1981 թթ.) Երևանի համալսարանի հրատարակչությունը վերստին լույս ընծայեց Հայկազյան բառարանը՝ նրան շնորհելով մի երկրորդ, առավել լայնահուն կյանք՝ ի շահ մեր ազգային մշակույթի և մանավանդ հայագիտության հետագա զարգացման։

Ղևոնդ Ալիշանը (1820—1901), գրական գործունեությունն սկսելով բանաստեղծությամբ, ինչպես վերը նշվեց, գրել է հայրենասիրական երգեր, պոեմներ, ոգեկոչել հայոց ազատագրական մարտերի հերոսներին, ապա հրապարակել իր խրատաբարոյախոսական արձակ երկը («Հուշիկք հայրենյաց Հայոց», հհ. 1—2, 1869—70 թթ.)՝ դարձյալ հիմք ունենալով հայ ժողովրդի պատմական անցյալը։ Թարգմանել է եվրոպական դասական քնարերգության մի շարք նմուշներ, դրանց թվում՝ Ջ. Բայրոնի «Իտալիան», Ֆ. Շիլլերի «Երգ ի զանդակն», Հ. Լոնգֆելլոյի «Հնձողն և ծաղկունքը»։ Սակայն հայ մշակույթի պատմության մեջ իր մեծ տեղն ունի առավելապես իբրև հայագետ։ Նրա «Տեղագիր Հայոց Մեծաց» («Մեծ Հայքի աշխարհագրությունը», 1855), «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890) և «Սիսական» (1893) երկերն ի մի են բերում նշված նահանգների պատմությանը, աշխարհագրությանը, մշակութային կյանքին վերաբերող բոլոր ու ամենատեսակ նյութերը, կատարում նրանց համադրական քննությունը, որի շնորհիվ էլ այս հատորները ստացել են հանրագիտական նշանակություն, դարձել հայագիտական անգերազանցելի կոթողներ։

Ալիշանը հմտորեն հետազոտել և քաջատեղյակ ծանոթագրություններով հրատարակել է հայ մատենագրության մի շարք երկեր, որոնցից Վարդան Վարդապետ Արևելցու «Պատմութիւն սիեզերական» մատյանը (Վենետիկ, 1862) նմանօրինակ աշխատանքների հրաշալի նմուշ է հանդիսանում։

Հայտնի են նաև Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբանությունը» (1895)՝ Հայաստանի բնաշխարհի շուրջ երեքուկես հազար բառատեսակների նկարագրությամբ, «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» ուսումնասիրությունը հայոց նախաքրիստոնեական, հեթանոսական հավատի ու հավատալիքների ամենամանրակրկիտ, ժամանակի գիտության բարձր մակարդակով կատարված քննությամբ։

* * *

Ս. Ղազարի Մխիթարյան ուխտի համար գործունեության առաջին շրջանում իսկ մտահոգության առարկա է եղել նոր սերնդի կրթության գործը և հենց ուխտի հիմնադիրն էլ 1732 թ. Ս. Ղազարում բացեց «Վարժարան» կոչված դպրոցը։ Երկու տարի անց Իտալիայի հյուսիսային մասի Պադուա քաղաքում, հնդկահայ վաճառական Սամուել Մկրտիչ Մուրադյանի կտակած գումարով, բացվում է Մուրադյան վարժարանը։ Իսկ սրանից էլ երկու տարի հետո Վենետիկում, Սամուել Մուրադյանի փեսա Էդուարդ Ռաֆայել Ղարամյանի կտակած գումարով, բացվում է Ռաֆայելյանը։

Հայտնի է, որ երկու հայրենասեր բարերարներն էլ վաղ մահացել են ու չեն տեսել իրենց կտակով ծաղկած դպրոցների բացումն անգամ։ Սակայն միաբանությունն ու դպրոցների տնօրինությունները միշտ էլ նրանց հիշատակը սրբորեն պահել են, սներին ներարկել մի սրբազան սեր նրանց գործի ու հիշատակի հանդեպ։ Պահպանվել է բարերար Ռաֆայել Ղարամյանի ձեռքով գրված մի թուղթ, որ հասցեագրվել է իր սեփական զավակներին, սակայն ամենայն իրավամբ կարող էր ուղղվել նրա կտակով ապրող վարժարանի սաներին և առհասարակ բոլոր հայորդիներին։ «Որդիք,— գրել է հայ մեծահարուստ հայրենասերը,— կկրկնեմ և կազդարարեմ ձեզի. ազգով հայ եք, ոչ մեկ ժամանակ պիտի չմոռանաք ձեր ազգը կամ լեզուն, որովհետև բնության և բարի ուսումների օրենքով ամեն մարդ պիտի սիրե իր ազգը և օգնե անոր պայծառության։ Ճշմարիտն ըսելով՝ զձեզ Եվրոպա ղրկելու գիտավորությունն ինձ մեկն ալ այն է, որ դուք ջանաք իմաստուն ըլլալ՝ ապագային ձեր ազգին օգտակար ըլլալու համար, և կազաչեմ աստուծո, որ պիտանի ըլլաք անոր ազատության՝ խոսքով ու գործով»։

Մխիթարյան հայրերի հրատարակած մի գրքի մեջ այս խոսքի տակ իրավամբ գրված է. «Քանդակվելիք տողեր են ասոնք և առարկա խորհրդածության բոլոր անոնց համար, որոնք բախտը ունեցած են հարստությամբ անվանի ըլլալու»։

1873 թ. երկու վարժարանները միացվում են և Մուրադ-Ռաֆայելյան անունով գործում են առ այսօր։

1846 թ. Փարիզում բացվել էր Մուրադյանի մի այլ դպրոց՝ գրաբար Սամուել Մուրադյանի կտակած դրամով։ Այն գործում է նաև մեր օրերում։

Մխիթարյանների բացած և նրանց հաշվին գործող տասնյակ ու տասնյակ դպրոցներ են եղել հայկական տարբեր գաղթօջախներում։ Նրանցից շատերը (Ալեքսանդրիայում, Հալեպում, Բեյրութում, Բուենոս-Այրեսում, Կ. Պոլսում և այլ վայրերում) այսօր էլ գործում են՝ ապահովելով հարյուրավոր մանուկների հայեցի դաստիարակությունը։

* * *

1772 թ. Ս. Ղազարի Մխիթարյան միաբանությունը երկփեղկվեց։ Ուխտի կանոնադրության փոփոխման կապակցությամբ տարաձայնություն էր եղել, և մի խումբ ուխտավորներ, Աստվածատուր Բարիկյանի ղեկավարությամբ, հեռացան Ս. Ղազար կղզուց՝ նպատակ ունենալով ստեղծել իրենց ինքնուրույն միաբանությունը։ Եվ նախ նստավայր դարձրին Իտալիայի հյուսիս-արևելքում գտնվող Տրիեստ քաղաքը, ապա տեղափոխվեցին Վիեննա և 1811 թ. հիմնադրեցին այստեղի Մխիթարյան միաբանությունը։ Նույն 1811-ին էլ Ավստրիայի թագավոր Ֆրանց Իոսիֆ Ա թագավորը հաստատեց հայկական նոր միաբանության իրավունքները։ Եվ այն օրից ի վեր Վիեննայի Մխիթարյան ուխտը գործում է՝ ամեն կերպ ջանալով անմար պահել մայր միաբանության գիտական ու հայրենասիրական ավանդները։

Վիեննայում ևս ծաղկեց հայագիտությունը, ահեղին գիտնականներ, որոնց վաստակը հարստացնում է մեր ազգային մշակույթի գանձարանը։ Հ. Գաթրճյանի «Տիեզերական պատ-

մություն ի սկզբանե աշխարհի մինչև ցմեր ժամանակս» (2 հատոր—1849, 1852), Ա. Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզվի (1866), Ս. Տերվիշյանի «Հնդեվրոպական նախալեզու» (1885) և այլ գործերը, Հակոբոս Տաշյանի (1866—1933), Ս. Եփրիկյանի (1873—1952), Ա. Ղազիկյանի (1870—1941), Մ. Պոտուրյանի (1881—1959), Ն. Ակինյանի (1883—1963) ուսումնասիրությունները հայագիտության, մանավանդ հայ բանասիրության վերջին մեկ դարու ամենանշանակալից նվաճումներից են և Վիեննայի Մխիթարյան ուխտի փառքն են կազմում։

Վիեննայում 1847—1863 թթ. լույս էր տեսնում Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթը, իսկ 1887-ից հրատարակվում է «Հանդես ամսօրյա» ամսագիրը՝ ամենահեղինակավոր հայագիտական պարբերականներից մեկը, որն իր էջերում տեղ է տալիս ոչ միայն ուխտի անդամների, այլև եվրոպական հայագետների, հաճախ էլ հայրենիքում ստեղծագործող գիտնականների հետազոտություններին։

Անկասկած Մխիթարյանների պարբերական հրատարակությունների գագաթն է հանդիսանում Վենետիկում հրատարակվող «Բազմավեպ» բազմաճյուղ գիտական, հասարակական-բարոյախոսական-գրական հանդեսը, որը 1853 թվականից առ այսօր լույս է տեսնում անընդմեջ՝ հայ ժողովրդի լայն խավերին տանելով հասարակական ու բնական գիտությունների նորույթները, հայագիտական հմտալից ուսումնասիրություններ, հայ և եվրոպական գրականության ընթացիկ շարժման բազմաթիվ ապացույցներ, հայոց դպրոցին, եկեղեցուն, մշակույթի ամենատարբեր բնագավառներին վերաբերող գիտական ու լրատվական հարուստ նյութեր։

«Մխիթարյան ընտանիք» (1969-ից՝ «Հայ ընտանիք») հանդեսը լույս է տեսնում 1947 թվականից՝ խնդիր ունենալով արտացոլել Մխիթարյան և առհասարակ սփյուռքահայ դպրոցների կյանքը, ցույց տալ Հայաստանի տնտեսական ու մշակութային նվաճումները, ամրապնդել Հայրենիք-Սփյուռք կապը և սփյուռքահայ մանուկների ու երիտասարդների ուշադրության կենտրոնում պահել մեր Հայրենիքի կերպարը։

Ս. Ղազարի ավանդների շարքում մի առանձնահատուկ տեղ է բռնում Եվրոպայի նշանավոր մարդկանց հետ ստեղծած բարեկամությունը, որն ի վերջո միշտ էլ վեր է ածվել խոր սիրո և հիացումի հայ ժողովրդի ու նրա մշակույթի նկատմամբ։ Հանրահայտ է, օրինակ, Անգլիայի հանճարեղ բանաստեղծ Ջորջ Բայրոնի ու Մխիթարյանների բարեկամությունը, որը հիմք է դարձել, որպեսզի ազատության մեծ երդիչը ջերմագին տողեր նվիրի հայ ժողովրդին ու նրա ճակատագրին։ 1816 թ., արդեն մեծահամբավ բանաստեղծ, Բայրոնը դարձել է Մխիթարյանների ուխտի բնակիչը, Հ. Ավգերյանից սովորելով հայոց լեզուն, խորացել հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության մեջ, իր ուսուցիչ Ավգերյանի հետ միասին կազմել ու հրատարակել «Քերականութիւն անգղիական և հայերէն» (1817), «Քերականութիւն հայերէն և անգղիական» (1819) դասագրքերը, օգնել «Բառարան անգղիերէն և հայերէն» (1821) գրքի ստեղծմանը, որի համար առաջաբան է գրել՝ այնտեղ քաղաքակիրթ մարդկության պարտքը համարելով հայ ժողովրդին թուրքական ու պարսից բռնատիրությունների լծից ազատելու խնդիրը։

Բայրոնի գրչին են պատկանում մի շարք թարգմանություններ հայոց միջնադարյան մատենագրությունից ու դավանաբանական գրականությունից։

Ս. Ղազարի միաբանության հանդեպ տածած բայրոնյան հիացումի տողերը ես վկայակոչեցի այս զրույցի սկզբում։ Այնտեղ չի կարելի չնկատել օժանդակ տեղեկությունն այն մասին, որ Ս. Ղազարի միաբանությամբ զմայլված են եղել շատ ճանապարհորդներ։ Իսկ Բայրոնի հետաքրքրությունն ու հիացումը ոչ թե ճամփորդական-պատահական այցելության արդյունք էր, այլ տեսական համակեցության ու համագործակցության արդյունք։ Եվ այս առթիվ գրի առնված խոսքերն էլ անկեղծ ու անաչառ խոստովանություն են՝ ուղղված ազգակից մի բարեկամի և ոչ թե կորզված բանաստեղծի շուրթերից, ինչպես հաճախ արվում է ժամանակակից հարցազրույցներում։ Եվ այս պատճառով էլ առավել չի՞ վեհանում Բայրոնի հյուրընկալների երախտիքը, երբ հայտնի է, որ հենց նրանց միջոցով ու ըստ նրանց բարոյական կերպարի՝ ստեղծվեց պատկերացումը նրանց ծնող ազգի մասին։ Այստեղ թերևս հարկ կա մի քիչ բարեշրջելու հանրահայտ ասացվածքը. տեսա, թե ինչպիսին ես դու, կասեմ՝ ինչպիսին է քո ազգը։ Եվ այսպես

է եղել, որ բանաստեղծը խոր համակրանքով ու գորովանքով գրել է. «Թերևս դժվար է գտնել որևէ այլ ազգի կենսագրություն, որն առավել զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թուլությունները՝ բռնադատման հետևանք։ Սակայն ինչպես էլ լիներ նրանց ճակատագիրը, որը դառն է եղել, ինչպիսին էլ որ լինի ապագայում, նրանց հայրենիքը պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը...»։

Վերջին տասնամյակներում Մխիթարյան երկու ուխտերն էլ ունեցան դժվարություններ, որոնց հաղթահարումով չանացին պահպանել հին հայկական ակադեմիայի սրտի տրոփը։ Այժմ էլ հայագիտական ակնառու գործերով են նշանավորվում նրանց տքնությունները. Վիեննայում շարունակվում է «Ազգային մատենադարան» բազմահատոր մատենաշարի հրատարակությունը։ Ս. Ղազարի Մխիթարյանների վերջին շրջանի գործերից առանձնակի արժեք ունեն Պ. Անանյանի «Սեբեոսի պատմության գրքի մասին քանի մի լուսաբանությունները» (1973), Մ. Ճանաշյանի, Լ. Ջեքիյանի, Տ. Յարտըմյանի ուսումնասիրությունները։ Երկու միաբանություններում էլ շարունակվում են մեր ձեռագրերի ուսումնասիրությունն ու գիտական հրապարակումը։ Այս տեսակետից վերին աստիճանի ուշագրավ երևույթ էր Ս. Ղազարի միաբանության մատենադարանում պահվող մի ձեռագրի՝ «Դավիթ Բեկի» նախագաղափարի հրապարակումը՝ գիտական բարեխիղճ ուսումնասիրությամբ հանդերձ։

Բազմարդյուն հայագետն իր ուսումնասիրությունն ավարտում է մի խոսքով, որը կպատշաճեր ոչ միայն իր ուխտի երկու ճյուղի գործունեությանը, այլև աշխարհասփյուռ հայության գիտական-մշակութային ոգորումներին. թող ամենուր հոգեվոր մեր տքնանքի պտուղները «միևնույն զոհողություններով ու նվիրումով պահպանեն ոչ միայն հայ ազգի գոյությունը Սփյուռքի ու Հայրենիքի մեջ, այլ նաև օժանդակեն այն հակայաքայլ վերելքին, որ Արարատի շուքին տակ թառած հայ պետականությունը օրեօր գիտական նվաճումներով առաջ կտանի՝ գնելով մեր ժողովուրդը առաջադեմ ազգերու հույլին մեջ»։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ, ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՋՆ ՈՒ ԱՀՅԱԿԸ

5-րդ դարի սկզբին միասնական թագավորությունը կորցնելուց հետո, օտար բռնակալությունների տիրապետության տակ թե հայրենի ընդարձակ թագավորների ու իշխանների հովանավորության ներքո, հայ ժողովրդին միշտ էլ տանջում էր անլուծելի հարցը՝ ինչպե՞ս պահպանել ազգային ինքնությունը։

Դարերը ցույց էին տալիս, որ ապրում, դրության տեր են լինում հզոր մեծերը։ Իսկ մենք տրոհող, ուծացնող խորշակներից առաջ էլ, ինչպես հայտնի է, փոքր ածու էինք։

Ի՞նչ պիտի անեինք։ Եթե գանգատավոր էինք մեր բնաշխարհի դիրքից, եթե մտածում էինք, թե կարելի է հարցը լուծել այդ ազետավոր դիրքը փոխելով, ապա չէ՞ որ այդ էլ փորձեցինք. մեր ազգի մի մասը, հայրենի եզերքները թողնելով՝ տեր դարձավ Կիլիկիային, այնտեղ նորոգեց մեր պետությունը, շարունակեց ստեղծարար կյանքը... Բայց այնտեղ ևս վրա հասան հին ազետները, և մենք դարձյալ հայանվեցինք նույն դաժան առեղծվածի առաջ. ինչպե՞ս ապրել ու պահպանել ազգային ինքնուրույնությունը։

Հարցը ճակատագրական դարձավ հատկապես այն ժամանակից, երբ երկրի շատ շրջաններում քոչվոր թուրք հրոսակներն էին տիրություն անում։

Երևի թե գոյատևումի բնազդն էր նախապես հուշել, թե կա փրկության ճանապարհ, և դա էլ օտար մի հզորի հովանավորությունն է։ Այն օրերի մեր դժբախտ որոնողները երկար ժամանակ, եթե չասենք դարեր, այդ հզոր հովանավորին էին

փնտրում, Դոա համար է, որ ոտքի տակ տվին եվրոպական տերությունները...

Սակայն 17 և 18-րդ դարերի սահմանագլխին, երբ Իսրայել Օրին, եվրոպական նշանավոր տերություններից հույսը կտրած, հասավ Ռուսաստան և ծանոթացավ ցարի քաղաքական ու ռազմական ծրագրերին, արքունիքի մեծավորների հետ ունեցած առաջին իսկ զրույցների ժամանակ էլ հայտարարեց, թե հայ ժողովուրդն իր փրկությունն սպասում է Ռուսական կայսրությունից, և այդ սպասումն ունի այնքան պատմություն, որքան ժամանակ Կոստանդնուպոլսի տերն է թուրք արյունարբու սուլթանը։

Օրին դարձավ հայոց անպաշտոն ու անգադրում դեսպանը Ռուսաց մայրաքաղաքում, ամենագործուն կապեր ու փոխհարաբերություններ ստեղծեց արքունիքի և հայ մելիքների միջև, նույնիսկ նախաձեռնեց ռուսական մի պատկառելի պատվիրակություն, որի գլուխն անցած պիտի այցելեր Պարսից երկիր, բանակցություններ վարեր շահի հետ... Սակայն իրականում ուրիշ էին նրա մտահոգությունները՝ համախմբել Սյունյաց ու Արցախի մելիքական ուժերը, ամրապնդել միացյալ ուժերով Հայաստանը Պարսից ու Օսմանյան բռնատիրություններից ազատագրելու գործը։

1711 թ. Օրին նահատակվեց իր նպատակի իրականացման ճանապարհին։ Սակայն նրա լծակիցները՝ Մինաս Վարդապետը, Դանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը և մելիքները, շարունակեցին գործը։ Ռուսաց մեծ թագավոր Օեսարոս Ա-ը հատուկ հրովարտակով հայտարարեց, թե իր պետության հովանավորության տակ է առնում հայ ժողովրդին (1824 թ.)։

18-րդ դ. երկրորդ կեսին Հովսեփ Էմինը, հնդկահայ ազատագրական խմբակի անդամները (Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ), Ռուսաստանում բնակվող մի շարք մեծահարուստներ, ռազմական ու հոգևոր գործիչներ (Լազարյանները, Հովսեփ Արղությանը ևլք) մեծապես ընդլայնեցին հայ-ռուսական փոխհարաբերությունների ոլորտը՝ հայ ժողովրդի ազատագրությունը որոշակիորեն կապելով Ռուսաստանի հարավային ռազմական ծրագրերի հետ։

Հայ գործիչները, հատկապես Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Եսայի Հասան-Ջալալյանը և մելիքները, ռուսական պետության այդ ծրագրերին առնչելով հայոց ազատագրությունը, անտարակույս նպատակ ունեին վերականգնել սեփական պետականությունը։ Իսկ ազատագրական շարժման մի թեև էլ, ավելի առաջ գնալով, արդեն գիտակցում էր, որ օտար պետությունների, հատկապես եվրոպական գաղութարարների հետ ոչ մի հույս էլ չի կարելի կապել, հայ ժողովուրդն ի՛նքը պիտի նվաճի իր ազատությունը, ստեղծի իր ժողովրդավարական պետությունը՝ «անխախտելի սահմանադրությամբ և անեղծանելի օրինաց...» (Մովսես Բաղրամյան)։

Սակայն ուրի՛շ էր իրականությունը. բռնացող-հզոր հարևանների առկայությունն ստիպում էր դանել որևէ հզոր բարեկամ տերություն և նրա ռազմական ու քաղաքական աջակցությամբ ձեռք բերել ազատությունը, ստեղծել սեփական պետական իշխանություն...

Հորիզոնում չկար ուրիշ ոչ մի հզոր, Ռուսաստանից բացի, և հայերը շարունակեցին իրենց հույսը կապել նրա հարավային ծրագրի հետ։

* * *

18-րդ դարի վերջին տասնամյակը նոր աղետներ պիտի բերեր առանց այն էլ աղետյալ Հայաստանին ու նրա հարևաններին։ Տեսական ռազմաքաղաքական թմբությունը թոթափելով՝ 1795 թ. ամռանն Իրանը, ներքինի Մամեդ-Կաջար շահի դաժանությունը գրող արած, շարժվում էր դեպի Անդրկովկաս՝ վերականգնելու բռնատիրոջ իր անունն ու իրավունքները։ Մի քանի անհույս դիմադրությունից հետո հանձնվեց Երևանը, կողոպտվեցին, կործանվեցին հարյուրավոր գյուղեր ու ավաններ։ Սեպտեմբերին Մամեդ-Կաջարի զորքերը մտան Թիֆլիս, և մի քանի օրվա մեջ երբեմնի պերճաշուք մայրաքաղաքից մնացին ավերակներ ու անսանձ վայրենության մռայլ հետքեր։

Այս դեպքերը որքան աղետներ պատճառեցին ժողովուրդներին, այնքան էլ վարկաբեկիչ էին ռուս զինվորության համար, որն իր հովանավորության տակ մտած Վրաստանի՛ն անգամ չկարողացավ օգնել նրա օրհասի պահին։ Եվ ցարական ար-

քունիքն իր ընկած վարկը վերականգնելու համար նախապատրաստվեց վճռական ռազմերթի։ 1795 թ. դեկտեմբերին ռուսական երկուհազարանոց մի զորամաս մտավ Վրաստան՝ Մամեդ-Կաջարի հետագա հարձակումներից այն պաշտպանելու համար։ Հաջորդ գարնանը կոմս Վալերիան Զուբովի հրամանատարությամբ Ղզլարից մի այլ զորամաս էլ մտավ Արևելյան Անդրկովկաս, և, համարյա առանց դիմադրության հանձնված Դերբենդից հետո, նրան հպատակություն հայտնեցին Ղուբան ու Բաքուն, Շամախին ու Գանձակը։

Փրկությունը ծեծում էր Հայաստանի դռները։ Հայ ժողովրդի հաղարավոր զավակներ, զորքի հետ եկող, Ռուսաստանում ապրող հայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի կոչով, կա՛մ առաջուց մասնակից էին դարձել այս առաջխաղացմանը, կա՛մ ընաշխարհից ընդառաջ էին գնացել մոտեցող զորքին և պարենամթերք էին տանում իրենց փրկարարներին, փոխադրական զանազան միջոցներով զորամասերի ծանրոցներն էին տեղափոխում աշնանային անհարմար ճամփաներով։

Ռուսական հրամանատարությունը հիացած էր հայերի այս անձնվիրությամբ։ Արևելյան Անդրկովկաս մտած զորքի հրամանատար գեներալ Լիմսկի-Կորսակովն այս առթիվ երախտագիտությամբ գրել էր Հովսեփ Արղությանին. «Ես չեմ կարող իմ մեծագույն շնորհակալությունը չհայտնել Ձերդ սրբազնությանը՝ ձեր այնքան ծանր նեղությունների համար, որ հանձն եք առել իմ հրամանատարության տակ գտնվող զորքերին օգնելու նպատակով, և ես շատ վշտանում եմ, որ այս ցեխոտ ու վատ ճանապարհներին հոգնեցնում ենք ձեզ»[1]։

Ինչևէ։ Զորքն առաջ էր շարժվում։ Ազատագրության հեռանկարով խանդավառված հայությունն օգնում էր նրան՝ ինչով կարող էր... Սակայն այս անգամ էլ անակնկալ մի դեպք եկավ խափանելու ռուսական զորքի երթը։ 1796 թ. նոյեմբերի 6-ին վախճանվել էր Եկատերինա Բ թագուհին, իսկ հաջորդը՝ Պավել Ա կայսրը, առավելապես ուշադրություն նվիրելով իր

[1] «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. III, М., 1838, էջ 340։

երկրի մյուս հոգսերին, հրահանգել էր զորքերը փութով ետ քաշել Անդրկովկասից։

Դարձյալ հայ ժողովրդի տարբեր հատվածները մնում էին իրենց կեղեքողների ու արյան թշնամիների դեմ-հանդիման։

Այս աղետի պակասն էլ եկան լրացնելու սովն ու ժանտախտը։ Միջնադարյան մեր պատմիչի խոսքով՝ «սոսկալի զորաւարքն երեքին՝ սովն, սուրն և մահն գործակից նոցա, զոյգ-ընթացեալք ընդ միմեանս, խուճապէին, անխնայ վիրավորէին և դիաթաւալ տարածանէին...»։

XIX դարի արշալույսին Ռուսական կայսրությունը նորից օրակարգ մտցրեց Անդրկովկասում իր տիրապետությունը հաստատելու հարցը։ Եվ 1801 թվականից Վրաստանն ու հարակից հայկական շրջանները վերջնականապես միացվեցին Ռուսաստանին։ Հենց այս էլ դարձավ նոր ահազանգ, որպեսզի Հայաստանի տարբեր նահանգներում վերստին բորբոքվեն ազատագրական շարժումները, ոտքի կանգնեն ժողովրդական ինքնապաշտպանության ուժերը և, խառնվելով առաջ շարժվող ռուսական զորքերին, իրենց երկիրն ազատագրեն պարսկական լծից։

Դժբախտությունն այն էր, սակայն, որ ռուսական կողմնորոշմամբ իր պատմական բախտն ու հեռանկարը գծած հայ ժողովուրդը չուներ միասնական ազգային-պետական կյանք։ Պատմական Հայաստանի մարզերն ու գավառները գտնվում էին ոչ միայն հարևան երկու մեծ բռնատիրությունների՝ Իրանի ու Թուրքիայի անտանելի լծի տակ, այլև բաժան-բաժան էին արված և ենթարկվում էին այդ երկուսի դրածոներին՝ տեղական խաներին։ Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի խանությունները և հարավային ու արևմտյան Հայաստանի վրա տիրություն անող թուրք գավառապետներն անհրաժեշտ էին դարձնում հայոց համազգային կյանքն ու քաղաքական հեռանկարի համար պայքարելու միասնականությունը։ Այս պատճառով էլ հայկական տարբեր նահանգներ տարբեր ժամանակներում մտան ռուսական տիրապետության տակ, իսկ Արևմտյան Հայաստանի մեծագույն մասն այնպես էլ մնաց ենթակա թուրքական վայրագություններին։ Այսպես. 1801 թ. Ռուսաստանին միացվեց Արևելյան Վրաստանը, և նրա

հետ էլ՝ հայկական Լոռի, Փամբակ, Ղազախ, Բորչալու գավառները։

1804-ին Ռուսաստանը նվաճեց Գանձակի խանության տարածքը, և Ռուսաստանին միացվեցին Շամշադինի, Բասարգեչարի ու հարակից շրջանները։

1805-ին ռուսական զորքերը նվաճեցին արևելյան Շիրակը՝ Արթիկ կենտրոնով։ Նույն տարում Քյուրակ գետի մոտ կնքված ռուս-պարսկական պայմանագրով Ռուսաստանին միացվեց Ղարաբաղը։

Հետո տեղի ունեցան մեծ ու փոքր բախումներ ռուսների և պարսիկների, ռուսների ու թուրքերի միջև, տարբեր շրջաններ ձեռքից ձեռք էին անցնում, մինչև որ Նապոլեոնի դեմ հայրենական պատերազմը շահած ռուսական զորքը վերստին իր դեմքը շրջեց դեպի հարավ, և Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում 1813 թ. կնքված հաշտության պայմանագրով Պարսկաստանը մեկընդմիշտ ճանաչեց Ղարաբաղի հարավային սահմանից՝ Արաքսի ափից մինչև Դերբենդ ընկած ամբողջ տարածքի, ինչպես նաև Լոռու, Փամբակի, Շորագյալի, Շամշադինի ու Զանգեզուրի գրավումը Ռուսաստանի կողմից։

Սրանով, իհարկե, Հայաստանի ու հայ ժողովրդի հարցը վերջնական լուծում չստացավ, քանի որ, նախ, դեռևս ռուսական սահմանից դուրս էին մնում Արարատյան կամ Երևանի նահանգն ու Նախիջևանի մարզը, ապա՝ Պարսից արքունիքը որոճում էր նոր բորբոքելիք մի պատերազմ, որով հույս ուներ նորից իր ձեռքը ձգել Անդրկովկասյան այն մարզերը, որոնք ստիպված էր եղել զիջելու Ռուսաստանին։

Այդ պատերազմը շատ չուշացավ։

1826 թ. հուլիսի կեսին պարսկական բազմաքանակ զորքերը խուժում են Ղարաբաղ, Շորագյալի ու Փամբակի շրջանները, և սկսվում է ռուս-պարսկական երկրորդ մեծ պատերազմը։

Պարսիկ բռնագրավիչների առաջին խնդիրն է լինում պաշարել Ղարաբաղի սիրուն՝ Շուշի բերդաքաղաքը, որի բնակչության մեծամասնությունը հայերն էին կազմում։ Շուշիի բնակիչներն առաջին իսկ օրից ռուսական կայազորի հետ միասին խիզախ պաշտպանության են անցնում։ Պարսկական հարձակումից ոգևորված՝ Երևանի ու Նախիջևանի խաները էլ հարձակվում են շրջակայքի հայկական գավառների վրա, կողոպտում ու ավերում Փոքրիկ-Ղարաբիլիսան, Շիրակի, Զանգեզուրի ու Լոռու բազմաթիվ գյուղեր։

Պարսկական զորաբանակը հիմնականում զբաղված էր Շուշիի ու Գանձակ-Ելիզավետպոլի նվաճման գործով։ Երկրորդն ընկավ կարճ ժամանակում։ Իսկ Շուշին պաշտպանող 1700 ռուս զինվորները, հայ բնակիչներն ու հարևան գյուղերից հավաքված հայկական աշխարհազորայինները շուրջ մեկ ու կես ամիս հերոսաբար պաշտպանվեցին պարսիկ զահաժառանգ Աբաս-Միրզայի մեծաքանակ զորքերից։

Այս պաշտպանության ընթացքում հայերի ցուցաբերած անձնվիրության մասին բերդապահ ռուսական կայազորի պետ Ռեուտը գեներալ Երմոլովին գրել է. «Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունն արժանի է ամենայն ուշադրության, որովհետև նրանք անխտիր գործում էին գերազանց քաջությամբ, զիմացան բազմաթիվ զրոհների, հետ մղեցին թշնամուն՝ պատճառելով խոշոր կորուստներ, արհամարհում էին պարենի պակասը և բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեև վրա էր հասել կատարյալ սովը»։

Շուշիի հերոսական պաշտպանությունն ու Շիրակ-Լոռի-Փամբակի ճակատամարտերը կլանել էին պարսկական զորքերին՝ Թիֆլիսում ու մյուս կենտրոններում տեղակայված ռուս կայազորներին հնարավորություն տալով ի մի հավաքվել, կենտրոնանալ և լրացուցիչ պինական ուժեր ստանալ Ռուսաստանից՝ բախտորոշ ճակատամարտի նախվելու համար։ Այժմ արդեն հարձակում պիտի սկսեր ռուսական զորքը, որի հրամանատարն էր գեներալ-ադյուտանտ Ալեքսեյ Երմոլովը, և նրա օգնականն էր հայազգի գեներալ-լեյտենանտ Վալերիան (Ռոստոմ) Մադաթովը։

1826 թ. սեպտեմբերից սկսած ռուսներն ու նրանց ամեն ինչով օգնող անդրկովկասցիները ռազմաճակատի բոլոր կետերում ջարդ էին տալիս պարսիկ զորքերին։ Այդ հաջողություններից առաջինը Շամքորի ճակատամարտն էր, որով 2000 ռուս զինվորներ Մադաթովի գլխավորությամբ ջախջախեցին տասհազարանոց պարսկական բանակը և առաջ շարժվելով՝ նվաճեցին Գանձակ-Ելիզավետպոլը։

Հայոդությունն էր ուղեկցում նաև ռազմաճակատի մյուս կետերում մարտնչող ռուսներին ու աշխարհազորայիններին։ Նրանք մեկը մյուսի հետևից գրավում էին պարսիկներին անցած բնակավայրերը, ազատագրում բնակչությանը։

Սակայն Հայության գլխավոր կենտրոնը՝ Երևանը, դեռևս Քշնամու ձեռքում էր գտնվում, և ռուսական հրամանատարության ու պատերազմին մասնակցող հայերի խնդիրն էր օր առաջ ազատագրել այն՝ լուծելով ո՛վ-ո՛ւմ հարցն ամբողջ Անդրկովկասում։ Իսկ ազատագրական զորքին Երևան տանող ճանապարհն անցնում էր Սարդարապատ բերդով ու Օշականով։

Այդ ժամանակ Արաս-Միրզան 30-հազարանոց մի զորաբանակի գլուխն անցած Սուրմալու-Սարդարապատ ուղղությամբ շարժվում էր դեպի Էջմիածին։

1827 թ. օգոստոսին Օշականի մոտ ռուս զորքերը և հայ կամավորները զեներալ Կրասովսկու ղեկավարությամբ ճակատամարտ են տալիս պարսից մեծաթիվ բանակի դեմ, հաղթում և փակում Քշնամու երթը դեպի Էջմիածին ու Երևան։

Ռուս ազատամիտ մտավորական Լալինովն այս առթիվ գրել է, թե «Գեներալ Կրասովսկին իր 3-հազարանոց ջոկատով օգոստոսի 17-ին Օշական գյուղի մոտ ջարդեց պարսկական խաժամուժ զորքերին և գրանով իսկ կործանումից փրկեց Էջմիածնի վանքը»։

Սեպտեմբերի կեսին, մի քանի օրվա ահեղ ռմբակոծությունից հետո, նվաճվում է նաև Սարդարապատի բերդը։

Հերթը Երևանինն էր։

Սեպտեմբերի 24-ին պաշարելով այն՝ 25-ին իսկ ռուսներն սկսում են ռմբակոծությունը։ Յանկանալով կանխել արյունհեղությունը՝ նրանք միաժամանակ բերդում պաշարված Հասան խանին առաջարկում են անձնատուր լինել։ Սակայն ամբարտավան խանն արհամարհանքով պատասխանում է. եթե չորս թագավորություններ էլ միացած գան, չեն կարող առնել իր բերդը։

Երևանի բերդն իսկապես ժամանակի ամենահզոր ամրություններից մեկն էր։ Մի կողմից փակված Հրազդանի ձորի անմատչելի ժայռերով, մյուս կողմից էլ հագել էր հաստահեղույս բերդապարիսպներ, և թվում էր, թե ոչ մի ուժ չի կարող ընկճել նրան։

Սակայն բերդի դեմ էին նետվել ռուսական ամենարնտիր զորքերը և իրենց երկրի ազատագրության համար գլուխները դրած հայ աշխարհազորայինները։ Այս վճռական ճակատամարտին մասնակցում էին հայ ժողովրդի բոլոր հատվածների ներկայացուցիչները։ Ուշագրավ է պատերազմական գործողությունների կազմակերպմանն անմիջապես մասնակցած հայ ժողովրդի հոգևոր հայր ու առաջնորդ Ներսես Աշտարակեցու մի ոգեշնչող գրությունը՝ ուղղված Աշտարակի, Օշականի և շրջակաների բնակչությանը. «Գրում եմ բազմաթիվ օրհնանքներով, որպեսզի գրությունս ստանալուն պես, առանց մի բոպե իսկ հապաղելու, թողնեք ձեր տանն ու ընտանիքին վիրաբերող բոլոր կարևոր գործերը և շատ ու շատ հավաքեք հրացան ունեցող ու չունեցող, հեծյալ ու հետևակ կարիճ ազատներ և այսօր՝ սեպտեմբերի 28-ին, շրջեքշաբթի օրը, մինչև արեգակի մայր մտնելը հասցնեք այստեղ։— Այսպես է պատվիրում մեծ հայրենասերը և միաժամանակ իր հեղինակության ուժով զգուշացնում է.— Իսկ եթե ձեզանից որևէ մեկը ծուլանա և ուշանա, այդպիսինը թող լավ իմանա, որ թեկուզ իմ աչքի լույսն էլ լինի, չեմ ափսոսա հանել և դեն նետել»։

Եվ, այսպես, ռուսական զորքերի կողքին կռվում էր հայ ժողովուրդը։ Երևանի բերդի վրա տեղում էր ռուսական հրանոթներից ժայթքած կրակը, իսկ հայերը բերդի ներսում ու դրսում կռվում էին անօրինակ խիզախությամբ։ Սեպտեմբերի 28—30-ը 40 թնդանոթներ համարյա անընդհատ ռմբակոծում էին պարսկական բռնակալության վերջին հենակետն Անդրկովկասում։

Հոկտեմբերի 1-ին բերդապարսպի ճեղքվածքներով ներս մտան հետևակայիններն ու աշխարհազորականները, որոնք և, բոլոր ելքերը փակելով, որպեսզի պարսիկները փախուստ չըտան, սկսեցին ահեղ ճակատամարտը բերդի ներսում։ Պարսիկներն ընկնում էին կամ ծնկալոք աղերսում խնայել իրենց կյանքը։ Գոռոզ Հասան խանը լեղաճաք թաք էր կացել մի մզկիթում։ Ռուսները նրան դուրս քաշեցին մզկիթից, նրա հետ գերեցին նաև բերդապահ զորքի հրամանատարներին, կենդանի մնացած ավելի քան 3 հազար սարբազներին, գրավեցին հսկայական քանակության զինամթերք ու պարեն։

1827 թ. հոկտեմբերի 1-ը նշանավորվեց որպես Երևանի

ազատագրության օր։ Այդ առթիվ թողարկվեց հատուկ կրծքանշան, որով պարգևատրվեցին Երևանի գրավմանը մասնակցած հազարավոր զինվորականներ ու հասարակ աշխատավորներ։

Երևանի ազատագրումը ցնծությամբ լցրեց բոլոր հայերի սրտերը։ Այդ մեծ հաղթանակի ականատես Խ. Աբովյանը գրել է, թե «...դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնելը հայերի համար»։ Խանդավառությամբ էին համակվել նաև հայկական հեռու և մոտ գաղթավայրերը։ Հնդկահայ գաղութի ազատագրական տրամադրություններն արտահայտելով՝ Մեսրոպ Թաղիադյանը հեռու Կալկաթայից իր հայրենակիցներին շնորհավորում էր. «Աչքներդ լո՛ւյս, որ մեր քաղցր աշխարքն պարսից դառն չարչարանքներից ազատվեց»։

Երևանի ազատագրությունը հետագայում իրավացիորեն շատ բարձր է գնահատել Հովհաննես Թումանյանը։ Դրանով իսկ,— գրել է Թումանյանը,— «Հայ ժողովուրդն ազատվում էր մի դժոխքից, որ նրա համար ստեղծել էր պարսկական կոպիտ ու խավար բռնակալությունը, մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ո՛չ օրենք, ո՛չ իրավունք, ո՛չ խնդրանք, ո՛չ աղաչանք, ո՛չ կրոն, ո՛չ սրբություն, ո՛չ կայք, ո՛չ կյանք, ո՛չ կին, ո՛չ պատիվ, ո՛չ ամոթ, ո՛չ եղճմտանք... Եվ այդ դժոխքի միջնաբերդը Երևանն էր... Երևանի առումով Ռուսաստանին միացավ Մասիսի էս կողմը գտնըվող հայությունը, ու էդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան»։

Ռուսական զորքը բարեբախտաբար Երևանի ազատագրումով չավարտեց իր առաքելությունը։ Օրակարգում էր Արաքսից հարավ ընկած մարզերի ազատագրումը, և նա շարժվեց դեպի Պարսկաստանի խորքը։ Հոկտեմբերին Նախիջևանն անցնելով՝ ռուսական զորախմբերը, համարյա առանց դիմադրության, նվաճեցին Թավրիզը։ Սա արդեն մեծ օրհասի կիսն էր շահական Պարսկաստանի համար։ Վերջնական ու անկասեցնելի կործանումից փրկվելու միակ ելքը հաշտություն ազերսելն էր, և Պարսից արքունիքն ստիպված էր գնալ այդ քայլին։

1828 թ. փետրվարի 10 (22)-ին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա, Թուրքմենչայ գյուղում, Ռուսաստանի և Իրանի միջև կնքվեց պայմանագիր, որով Ռուսաստանին միացան Երևանի ու Նախիջևանի խանությունները, և հարավում Ռուսական կայսրության պետական սահմանը հաստատվեց Արաքս գետի հոսանքով։ Եվ պայմանագրով Պարսկաստանում բնակվող հայերին հնարավորություն էր տրվում վերադառնալ Հայաստան ու շենացնել հայաթափ դարձած հայրենի գավառները։

Ողջ հայ ժողովուրդը, նրա բոլոր խավերը մի անհուն ցնծությամբ ընդունեցին իրենց ազատագրությունը պարսկական բռնությունից։

Ռուսաստանին միացվելով՝ Արևելյան Հայաստանը փրկվեց պարբերական բնաջնջումներից և մշտագո վայրենի ճնշումից։ «Ռուսաստանը... միանգամայն ընդմիշտ վերջ տվեց կոտորածներով, գաղթականություններով ու առևանգումներով հայանի հայկական հարցին Հայոց աշխարհքի էս մասում...» (Հ. Թումանյան)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ե՞րբ է այն ծագել, պատմական ինչպիսի՞ միջավայրում, որո՞նք էին այն ծնող հանգամանքները։

Այսօրվա հայագիտության մեջ ընդունված է հայկական հարցի ծնունդը կապել 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի հարուցած ազատագրական հույսերի և պատերազմի ավարտից հետո Սան-Ստեֆանոյում կնքված պայմանագրի հետ։

Սակայն քանի որ հայկական հարց ասելով սովորաբար հասկանում են դիվանագիտական ասպարեզ քաշված այն արծարծումները, որոնք հիմնականում վերաբերում են թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրման, ինքնորոշման ու ինքնուրույն պետության ստեղծման խնդիրներին, որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ տրամաբանական է սկիզբ համարել 1555 թ. Ամասիայում Պարսկաստանի ու Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը։ Այնքանն է հայտնի, որ այդ ճակատագրական պահից հետո վերստին Հայաստանը բաժանվեց երկու բռնակալ տերությունների միջև։ Այստեղից սկսած՝ այդ երկու բռնատիրությունների տնտեսական, քաղաքական ու կրոնական ահավոր ճնշումների դեմ ծայր առան հայ ժողովրդի ազատագրական ընդվզումները, և արևմտյան տերությունները, հետագայում նաև Ռուսաստանը, դիվանագիտական իրենց խաղերի մեջ հաճախակի անդրադարձան հայոց խնդրին։

Բայց եթե էական է համարվում հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնության ապահովման խնդիրը հարևան տերությանց փոխհարաբերությունների հիմնապաստառի վրա, ապա ո՞ր պատմաշրջանում է, որ այն գոյություն չի ունեցել։ Չէ՞ որ

Հայաստանը նվաճելու ձգտող, նրա ամբողջությունը հոշոտող հարևանների պակաս չի զգացվել և ոչ մի ժամանակ։ Իսկ, որ ամենակարևորն է, հայ ժողովուրդն իր կենսագրության բոլոր շրջաններում, սեփական պետության հովանու ներքո թե բռնակալների տիրապետության տակ՝ անվերջ ու անդադար ունեցել է ազգային ու քաղաքական ինքնուրույնության ձեռքբերման կամ ձեռք բերածը պահպանելու հոգսը։ Դրա համար էլ մի՞թե պակաս նշանակալից է մեր ժողովրդի ավանդական նախահայր Հայկի կենաց սկզբունքը, որն ուղենիշ պետք է դառնար իրենով սկսվող ազգային հանրության կենսագրության համար։ Հայկը չհանդուրժեց օտարների բռնությունն ու լուծը, քաշվեց նախախնամությամբ իր սերունդներին հատկացված լեռնաստանը և այստեղ հռչակեց ապրելու իր կերպը՝ կա՛մ կմեռնենք, կա՛մ կհաղթենք և կապրենք ազատ ու ինքնուրույն։

Բայց որովհետև Հայկը միայնակ չէր այս երկնքի տակ, նրան և իր բոլոր սերունդներին միշտ էլ պիտի հետապնդեին բռնացողները։ Ուստի և նրանց որդեգրած ազատության ու ինքնուրույնության վրա միշտ էլ պիտի կախված լիներ հարցականը։ Ուրեմն, հենց ա՛յս ժամանակից, պատմաբեմ ելնելու օրերից սկսած՝ հայությանը պիտի ուղեկցեր նրա հարցը, որ հազարամյակներ հետո կոչվելու էր հայկական հարց։

Շատ իրավացի էր Լեոն, որ գտնում էր, թե «Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը՝ հայ ազգը»։ Այո՛, այդպե՛ս, որովհետև հայոց հարցը դա «հայ ժողովրդի ազգային գոյության հարցն է», և «Այսպիսով հայոց հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է սկզբից մինչև մեր օրերը»։

Լեոն հայոց հարցի զարգացումը կամ պատմական ընթացքը ևս բաժանում էր շրջանների, որոնք ճշգրտորեն համապատասխանում են հայոց բուն պատմության դարակազմիկ բաժանումներին։ Հայ ժողովուրդը պատմության խավար անհայտությունից լուսավոր ասպարեզ է ելնում, լծվում իր ինքնուրույն գոյությունը պահպանելու, իր ինքնատիպ քաղաքակրթությամբ աշխարհի մեծերի ու փոքրերի շարքում քայլելու և առաջին իսկ քայլերից դեմ է առնում չարերի անհանդուրժողությանը։ Հիշենք միջագետքյան տերերի հետ ունեցած արյունոտ բախումները, որոնք իրենց արտացոլումն էին գտել

Հայկի ու Բելի ճակատամարտին վերաբերող ավանդազրույցում, և վերջին հարյուրամյակում էլ իրենց մանրամասներով արևերես ելան սեպագրերից։ Հիշենք մի կողմից Պարսկաստանի, մյուսից՝ Հռոմի, հետագայում Պարսկաստանի ու Բյուզանդիայի, ապա անապատի մռայլ հեռուներից եկած արաբների, սելջուկ-Թուրքերի, Թաթար-մոնղոլների բերած աղետները, որոնց դիմանալու համար հայկական հարցը, այսինքն՝ հայ ժողովրդի գոյատևումը, պետք է հազար տեսակ ձևախեղվեր, մեռներ-հառներ՝ այդ ահավոր հոլովույթի մեջ անաղարտ պահելով ինքնուրույն ու անկախ ապրելու ժողովրդական կամքը։

Եղել են հուսահատության անագորույն պահեր։ Անթիվ թշնամիների, բիրտ բռնակալների բերած մութ ու մուժի մեջ հաճախ կորել է անցնելիք ճանապարհը, անէացել է լուսավոր հեռանկարը... Բայց մեկ էլ հայտնվել են ազգի ուժն ու միտքը, խիզձն ու երազանքը մարմնավորող առհվիրաները, և պարզվել-լուծվել է հարցը, ժողովուրդը շարունակել է իր ճանապարհը։

4-րդ դարի վերջին Մեծ Հայքի երբեմնի հզոր պետությունը ճեղք էր տվել, բաժանվել երկու մասի, և յուրաքանչյուր մասի վրա իր թաթն էր դրել մահաշունչ մի բռնակալ։ Տկարացել էր հոգևոր իշխանությունը, երկիրը քրքրվում էր տեղայնության ցավերով բռնված նախարարների ձեռքին։ Եվ հարցը, ազգի հետ ծնված հարցը դարձել էր յոթգլխանի, յուրաքանչյուր գլխի մեջ՝ անլուծելի խնդիր։ Այստեղ էր, որ հայտնվեց այր մի Մաշտոց, ամենահեռատես ու ամենակարող, ազգի համար սեփական դիր ստեղծեց՝ իբրև ամենաբարդ հարցերի, հազար անհայտներով լի խնդիրների լուծման բանալի, տվեց ազգին...

Սակայն հայկական հարցը հայոց հարցն էր, և մեկ ու միակ բանալին դժվար թե փրկություն լիներ բոլոր ու ամեն տեսակ հանգամանքներում։ Դրա համար էլ շուրջ մեկ դար հետո պիտի հայտնվեր մեր Պատմահայր Մովսես Խորենացին և ինքն էլ իր հերթին ժողովրդի ձեռքը դներ իր հայտնաբերած բանալին։ Այդ նա էր, որ պատմության ծալ-ծալ վարագույրները պատռեց, անհայտությունից դուրս բերեց մեր անցյալ մեծերին, նրանց տոգորեց կենսական նոր ուժերով ու հնա-

բավորություններով և պարգևելով ժողովրդին՝ ասաց. հետևի՛ր դրանց և դու անսխալ կանցնես քո ճանապարհը...

Եվ այսպես անցան դարեր։ Հայոց հարցի արծարծումների, նրա վրա շերտ-շերտ նստած բարդությունների ու առեղծվածների դարե՛ր։

Երբ Հայկական բարձրավանդակը դժբախտություն ունեցավ ծանոթանալու թրքության առաջին «Դիմեռնակներին» սելջուկ-Թուրքերի հետ, ժողովրդական փորձը կանխատեսեց նրանց հետքերով գալիք արհավիրքները։

Եվ այս անգամ հարց-հանգույցի լուծման համար փնտրվում-գտնվում էր դրսեկ մի փրկություն. իբր պիտի դան եվրոպական քրիստոնյա աղատարարները, պիտի ազատեն Երուսաղեմը և վերականգնեն հայկական անկախությունը։

Լեոն ասում է. այս գուշակությունը «սխալված չէր իր այդ ակնկալությունների մեջ։ Խաչակիրների օգնությամբ հայերը վերականգնեցին իրենց կորցրած անկախությունը եթե ո՛չ բուն Հայաստանում, գոնե Կիլիկիայում, Միջերկրական ծովի ափին»։

Իսկ բնաշի-արհի ժողովուրդը տնքում էր եկվոր բռնակալների անողորմ լծի, կիսավայրենի վրանաբնակների ասպատակությունների, կողոպուտի, ավեր-ավարի պայմաններում։ Երբ դանակը ոսկորին էր հասել, երբ եկվորների դաժանություններին էլ գումարվել էր հավատակից բյուզանդացիների հոգևոր արշավանքը, երկրի խորքերից ծնվեցին, իբար կոլքի կանգնեցին մեր հեռատես հոգևոր այն առաջնորդները, որոնց համար չկար ազգի ինքնուրույն գոյության ուրիշ եղանակ, քան մեր լեզվի, մեր հավատի, մեր քաղաքական իշխանության մնացորդների պաշտպանությունը հավատակիցներից ու անհավատներից։ Հարցի վերջնական լուծման համար նրանց լուսապայծառ հայացքները օգնական ուժեր էին փնտրում, երազում էին այն ամենակարող հարեհասներին, որոնք, իբր, պիտի գային արևմուտքից թե հյուսիսից, բայց անպայման պիտի գային։ Քանի որ անհնար էր պատկերացնել, թե չպիտի ապրի մի ժողովուրդ, որ ծնվել է ապրելու, աշխարհին իր խոսքն ասելու, իր հոգու և մտքի նվիրական արգասիքները պարգևելու համար։ 19-րդ դ. սկզբին Անդրկովկասն ու հարակից շրջանները նվաճելու համար ցարական ինքնակալության

մված կռիվները կայսրության կազմի մեջ մտցրին Արևելյան Հայաստանը, և թվում էր, թե հայկական հարցի կեսն ինչ-որ չափով ստացավ իր լուծումը. փրկվեց արևելահայության ֆիզիկական գոյությունը, անհնար դարձան կրոնական, ռասայական ճնշումներն ու հալածանքները։

Այսուհետ հայկական հարցը, նրա շուրջ ծավալված դիվանագիտական ու քաղաքական միջոցառումները պիտի վերաբերեին արևմտահայությանը, որը գտնվում էր օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո, միշտ ու անընդմեջ ենթակա սոցիալական վայրենի ճնշումների, կրոնական անօրինակ հալածանքների։ Ուրեմն, այստեղ էլ հայկական հարցի հետապնդումը պետք է նշանակեր օսմանյան բռնատիրության սանձահարում, հայ ժողովրդի քաղաքական ու ազգային իրավունքների ապահովում։

Թուրքիայի պետական, դիվանագիտական բնագավառների ներկայացուցիչներն ու, այսպես կոչված, պատմաբաններ։ ահա ավելի քան հարյուր տարի թմբկահարում են, թե հայկական հարցն առաջացել ու բորբոքվել է ռուս-թուրք հարաբերությունների սրման կապակցությամբ և հիմնականում ռուսների մեղքով։ Իբր ռուսները, Թուրքիայի տիրապետությանտակ գտնվող արևելյան նահանգները մտնելով, տեղի հայերին գրգռել են Թրքության դեմ, և հայերն էլ, իրենց շարն ու բարին չգիտակցելով, ոտքի են ելել «բարերար» Թուրքերի դեմ, գեշ օրինակ են տվել հարևաններին՝ Թրքահպատակ մյուս ազգերին։

Այս կեղծիքը մերկացնելու համար բավական է հիշենք նախորդ դարերի հայկական ընդվզումներն ու բախումները Թրքական տիրապետության դեմ։ Ռուսները Զեյթունում երբեք ոտք չեն դրել, և երբ զեյթունցիները տարիներ շարունակ հերոսական ճակատամարտ էին տալիս օսմանյան բազմահազարանոց բանակների դեմ, նույն ռուսները դեռ չէին էլ երևացել արևմտահայկական նահանգներում։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմն առավել սրեց հայկական հարցը։ Թվում էր, թե ռուսների հաղթանակի շնորհիվ այն կունենա բարեբաստիկ ընթացք ու վերջնական լուծում։ Սակայն անմիջապես դեմ առավ եվրոպական տերությունների շահախնդրություններին և առավել բարդացավ՝

Թուրքերի միշտ աջողակ դիվանագիտական մեքենայությունների և վայրենի բռնության պատճառով։

Կոստանդնուպոլսի մոտ գտնվող Սան-Ստեֆանո վայրում 1878 թ. փետրվարի 19-ին կնքված ռուս-Թուրքական պայմանագրի համաձայն՝ պարտված Թուրքիան հրաժարվում էր նախկինում բռնագրաված մի շարք երկրներից ու երկրամասերից, ազատություն էին ստանում բալկանյան ժողովուրդները։ Բնականաբար այս պայմանագրով հայությունը ևս պիտի ձեռք բերեր որոշակի արտոնություններ, եթե ո՞չ ինքնորոշման իրավունք ու ազատագրություն։ Եվ ահա, պայմանագրում Թուրքիայի տիրապետությունից հանվում էին Արևմտահայաստանի Կարսի, Արդահանի, Բայազետի մարզերն ու Ալաշկերտի հովիտը, իսկ 16-րդ հոդվածը, որ լիովին վերաբերում էր հայերին, Թուրքիային պարտավորեցնում էր հետևյալը. «Նկատի առնելով, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի [այժմ] Թուրքիային վերադարձվող վայրերից կարող է անդիք տալ բախումների ու բարդությունների, որոնք բացասաբար կանդրադառնան երկու պետությունների բարի հարաբերությունների վրա, Բարձր դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ [այդ] մարզերի տեղական կարիքներից բիսող բարեփոխումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»։

Եվ, այսպիսով, դարեր շարունակ գոյություն ունեցած, տարբեր պատմաշրջաններում ամենատարբեր ձև ու կերպարանք ընդունած հայկական հարցն իր մի մասով՝ Արևմտահայաստանի առումով՝ մտնում էր եվրոպական դիվանագիտական ոլորտները։ Մտնում էր ոտնահարվածի ու խեղճի իրավունքով՝ ասես այդ մակարդակից երբեք չբարձրանալու գամար։

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը մի տեսակ նախանշանն ու ազդարարն էր դիվանագիտական բոլոր այն փոխհարաբերությունների, որ հայերն էին ունենալու Թուրքերի և նրանց մյուս ցեղակիցների հետ։ Ստորագրվել էր մի պայման, որն արևմտահայությանը նվազագույն իրավական հնարավորություն էր տալիս ունենալու իր ազգային ինքնուրույն, բարեշինված միջավայրը... Սակայն պայմանագիրն ստորա-

գրելով, այսինքն՝ հաղթող կողմի աչքին թոզ փչելով, Թուրքիան շատ շուտով հրաժարվեց իր պարտականություններից կատարելուց. Մեծ Բրիտանիայի ու Ավստրո-Հունգարիայի օգնությամբ հասավ նրան, որ նույն թվականի հունիսին Բեռլինում տեղի ունեցավ կոնգրես, և սա էլ վերանայեց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, ավելի ճիշտ՝ գլխիվայր շրջեց այն, փաստորեն կարճացնելով հաղթանակած Ռուսաստանի ձեռքերը։

Հայերը բազմակողմանիորեն նախապատրաստվել էին Բեռլինի կոնգրեսին։ Իրենց ներկայացուցիչներն էին ուղարկել մեծ տերությունների մայրաքաղաքները՝ կոնգրեսին հրավիրվածների սրտերը քաղցրացնելու հայոց հարցի վրա, արդարության ու բարեսրտության մթնոլորտ ստեղծելու համար։ Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ էլ պատգամավորություն էր ժամանել Բեռլին՝ կոնգրեսին իր մասնակցությունը բերելու և ազգի իրավունքները հետապնդելու համար։ Սակայն այդ պատգամավորություն կոչվածը, կոնգրեսին մասնակցելու իրավունք իսկ չստանալով, լոկ հնարավորություն ունեցավ մասնակիցներին հանձնելու Արևմտահայաստանի ինքնավարության նախագիծն ու մեծ տերություններին ուղղված մի հուշագիր, որոնք այնպես էլ ուշադրության չարժանացան։

Ընդունված դաշնագրի 61-րդ հոդվածով Թուրքիան դարձյալ հանձն էր առնում հայաբնակ մարզերի բարենորոգումները, սակայն այժմ՝ առանց ռուսական զորքերի առկայության և Ռուսաստանի վերահսկողության։ Այսպես կոչված բարեփոխությունների, բարենորոգումների ու հայերի անվտանգության ապահովման մասին Թուրքիան ինքն էր «պարտավորվում պարբերաբար հաղորդել պետություններին»։

Նկատի առնելով, որ Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Ռուսաստանից Թուրքիային վերադարձվեցին Ալաշկերտի հովիտն ու Բայազետը, և Ռուսաստանն առհասարակ զրկվեց հայկական վիլայեթների վիճակը վերահսկելու իրավունքից, պետք է հաստատել, որ Արևմտահայաստանի հարցը մտցվեց մեծ տերությունների շահախնդրությունների ոլորտը, որ նշանակում էր՝ կախվեց օդում։

Բեռլինի կոնգրեսի և այնտեղ հայոց հարցի «քննարկման» մասին Խրիմյան Հայրիկն է պատկերավոր ու խորիմաստ ասել. «Պերլինի մեջ հոգեճաշ հարիսա կցրվեին բոլոր հպատակ ազգերին, ինձի զրկեցիք, որ հայերին ընկած մասը առնեմ-բերեմ, ես ալ պտուկն առի ու վազեցի... Դուք ինձի շերեփի տեղը թուղթ տվիք, այդ թղթի կտոր որչափ որ խոթեցի տաք հարիսային մեջ, թուղթ թացացավ, լխկեցավ, մելն ընկավ, ես ալ պարապ թողի, ետ եկա. մոռացա առաջուց մի քանի հատ դելթունցի տանեի հետս, անոնք շերեփ ունեին, կարելի է ամանին տակեն, քովերեն բան մը փրցոնեին»։

Բեռլինի կոնգրեսից հետո հայ շրջահայաց գործիչներն ու կազմակերպությունները համոզվեցին, որ մոլորություն է շահամոլ տերությունների սարքած դիվանագիտական շուկաներում դեգերելը, և չկա հայկական հարցի լուծման ուրիշ որևէ ճշմարիտ ուղի, քան ազգային ուժերի համատեղումն ու ազատագրական պայքարը։ Գրիգոր Օտյանը մտածում էր, թե «Հաջողեցանք 61-րդ հոդված մը դնել տալ Պերլինի դաշնագրին մեջ, իցիվ թե հաջողեինք ջնջել զայն»։ Եվ բալկանյան ժողովուրդների զինական ուժերով ու արյամբ ձեռք բերած փրկությունը նկատի առնելով էլ մյուս դեմոկրատական ուժերը ազատագրական պայքարի կոչ էին անում. «Մեզ վրա՛ հույս պետք է դնենք և ոչ թե Բեռլինի։ Այն ազգը, որ ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»։

Սակայն թմրած չէր նաև մյուս կողմը։ Այսպես թե այնպես հայկական հարցը բարձրացել, տերությունների ու ժողովուրդների աչքի առաջ էր, և աչք ունեցողը տեսնում, իսկ խելք ունեցողն էլ գիտակցում էր, որ ոտնահարվում են հայ ազգի ամեն տեսակ իրավունքները, նրան պետք է օգնել։ Ճիշտ է, անգլիական լորդ Շերբրուկը՝ դեպքերի մասնակից, իր երկրի քաղաքականությունը համարել է թուրքահպատակ քրիստոնյաների դեմ գործված այնպիսի խաղ, որը «փակում է գրժոխքից փրկվելու ելքը»։ Բայց չէ՞ որ թուրքերն այնքան խելք ունեին հասկանալու համար, թե այս աշխարհում ո՛չ անգլիական շահերն են կանգնած մնում մի կետի վրա, ո՛չ էլ Ռուսաստանը պիտի հրաժարվի զենքով ձեռք բերած տարածքներից, տիրապետողի հավակնություններից։

Եվ Թուրքիան հայկական հարցը թուրքավարի լուծելուն անցավ առանց ակն թոթափելու։ Միայն 1895—96 թթ. սուլթան Համիդի զորքերն ու ավարառու ավազակախմբերը («հա-

միգիտ») իրականացրին զանգվածային ջարդեր, որոնց զոհ գնացին ավելի քան 300 հազար հայեր։

Հետագա տարիներին հայկական շրջաններում եղան մոլորված մարդիկ, անգամ կազմակերպություններ, որոնք բարի հույսեր էին կապում 1908-ի երիտթուրքական հեղափոխության հետ։ Սակայն դրության տեր դարձած երիտթուրքերն էին, որ հայկական հարցի վերջնական լուծմանը ձեռնարկեցին՝ կազմակերպելով 1915 թ. հայկական Մեծ եղեռնը։

Հայտնի է հայ մտավորականության շատ ներկայացուցիչների հուսավառ վերաբերմունքը Առաջին համաշխարհային պատերազմի նկատմամբ։ Նաև այդ պատերազմում ռուսների հարավ իջնելու և արևմտահայկական վիլայեթները վերստին նվաճելու հետ էին մեծ հույսեր կապում։ Սակայն գաղտնիք չէ, որ Մեծ եղեռնի օրերին ցարական Ռուսաստանի զորքը շարված է եղել Արաքսի ափերով և այնքան է սպասել, մինչև երիտթուրքերը հայկական հարցը լուծեն, որպեսզի նոր միայն տիրություն անի հայերից պարպված բարեբեր հողերին։ Եվ զարմանալի չէ, որ Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Յուդենիչը դեռևս եղեռնի օրերին (1915 թ. ապրիլի 5/18-ին) փոխարքա Վորոնցով-Դաշկովին զեկույց էր ներկայացրել՝ խորհուրդ տալով արգելել ջարդերից փախած հայերի վերադարձն իրենց հայրենի վիլայեթները, որովհետև հարկ էր, որ այդ վայրերը բնակեցվեին Կուբանից ու Դոնից բերելիք կազակներով։ Սակայն անկախ այս լպիրշ առաջարկից էլ, ցարական Ռուսաստանը հայկական հարցում, հատկապես Արևմտահայաստանին ինքնավարություն շնորհելու առումով, արդեն հրաժարվել էր ամեն տեսակ խոստումներից և հարկ եղած դեպքում ժանիքներ էր ցույց տալիս։ Ահա թե Արտաքին գործոց նախարար Սազոնովը դեռևս 1916 թ. ի՞նչ տեսակ հանձնարարական է տվել Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչին։ Հայկական ինքնավարության առթիվ նա գրել է. «Պետք չէ մոռանալ, որ այժմ Ռուսաստանի կողմից նվաճված Մեծ Հայաստանում հայերը երբեք մեծամասնություն չեն կազմել, իսկ այն պատժիչ միջոցներից հետո, որ Թուրքերն են նրանց նկատմամբ գործադրել պատերազմի ժամանակ..., թվական այս հարաբերությունն է՛լ ավելի է փոխվել ի վնաս հայերի, որոնք ներկայումս դժվար թե կազմեն բնակչության նույնիսկ

1/4 մասը... Այսպիսի պայմաններում հայերի ինքնավարությունն իրականում այն անարդար հետևանքը կունենա, որ փոքրամասնությունը կստրկացնի մեծամասնություն կազմող տարրին»[1]։

Կարելի է մտածել, թե ապագայում Ռուսաստանին ստրկացնելու հեռանկարն է եղել պատճառը, որ յուդենիչներն ու սազոնովները նախ իրենց անտարբերությամբ օժանդակել են հայոց ջարդերին, ապա թույլ չեն տվել մնացորդաց վերադարձը վիլայեթներ։

Ինչպես, այսպես էր փակվում հայկական դժբախտ հարցի նախախորհրդային շրջանը։ Սկսվում էր մի նոր պատմաշրջան, որը թեև իր դրոշի վրա նախապես գրել էր ընդհանուր առմամբ ճշմարիտ կարգախոսներ, սակայն հայ ժողովրդի հարցում չպետք է հանգուրժեր որևէ փոփոխություն, որովհետև իր իսկ հռչակած կարգախոսներն ու վարած քաղաքականությունը շփման եզրեր չունեին և իրար պիտի «ուտեին»՝ առաջարկելով ազգային հարցն առհասարակ։

* * *

1917 թ. վերջին Ռուսաստանի խորհրդային հանրապետության կառավարության մեջ գործի անցած հայ կոմունիստների նախաձեռնությամբ ստեղծվեց փաստաթուղթ, որի նպատակն էր ապահովել Արևմտահայաստանի հայ բնակչության ինքնորոշման իրավունքի կիրառումը և անկախության հաստատումը հայրենի հողի՝ նախկինում Թուրքիայի տիրապետության տակ գտնված, իսկ այդ ժամանակ Ռուսաստանի զինվորությանն անցած վիլայեթների վրա։ Փաստաթղթի հեղինակներից մեկը՝ մեր մեծ բանաստեղծ ու հասարակական գործիչ Վահան Տեքյանը, որ պաշտոնի հանգամանքով (Ազգությունների ժողովրդական կոմիսարիատում հայկական գործերն էր վարում), դեկրետի նախագծի հետ միասին, կառավարությանն էր ներկայացրել «Զեկուցագիր Թուրքահայաստանի մասին», ընդունելի փաստաթղթի մեջ տեսնում էր արևմտահայության ճակատագրի լուծման համար վիթխարի մի ուժ։ Այդ փաստաթուղթ-դեկ-

[1] «Раздел Азиатской Турции по секретным документам...», Москва, 1924, էջ 209։

բերտը «հաստատելու էր բանվորա-գյուղացիական կառավարության աներեր մտադրությունը վճռականորեն պաշտպանելու Թուրքահայերի լիակատար ազգային ինքնորոշման ձգտումը,— դրված էր զեկուցագրի մեջ,— ըստ որում նշելու էր, որ ժողովրդական կոմիսարների կառավարությունն ըստ ամենայնի կօժանդակի այն երաշխիքների ստեղծմանը, որոնք ինքնորոշման իրական հնարավորություն կտան Թուրքահայաստանի հայ բնակչությանը»[1]։

Ինքնորոշման այդ իրավունքի կենսագործման ամենահիմնական նախադրյալների շարքում Տերյանը նշում էր շատ կարևորը՝ «...հենց այժմ էլ հայտարարել, որ ռուսական զորքերը դուրս չեն բերվի պատերազմի իրավունքով մեր կողմից գրավված Հայաստանի մասից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության հաստատուն երաշխիքներ, և մինչև այնտեղ նոր կարգ չհաստատվի»։ Հակառակ դեպքում,— նշվում էր զեկուցագրում,— «հայ ժողովրդի ինքնորոշման մասին ամեն մի զրույց կհնչի որպես դատարկաբանություն»[2]։

Դեկրետի նշանակությունը ցարդ ուռճեցված է ներկայացվել մեր ուսումնասիրողների կողմից։ Մինչդեռ նրան վիճակված էր մնալու «որպես դատարկաբանություն» արևմտահայության ճակատագրի համար, քանի որ հայ գործիչների, հատկապես Վահան Տերյանի անձնազոհ նվիրվածության դեմ կանգնած էր այն ժամանակ նոր-նոր իր հակաազգային ու հակաժողովրդական եղծյուրները հանող խորհրդային «ազգային» քաղաքականությունը։

Տերյանը պատմում է, որ նախապես զրույցներ է ունեցել Ստալինի ու Լենինի հետ, և երկուսն էլ անսքող արտահայտել են իրենց վերաբերմունքը հարցի մանրամասնների, մասնավորապես ամենակարևորի՝ զորքը վիլայեթներում պահելու անհրաժեշտության նկատմամբ։ «Ստալինն ասաց՝ մենք իսկույն ևեթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան և հայերին հնարավորվի ինքնորոշվելու։ Ես վիճեցի»,— գրել է Տերյանը։ Հետո մեր բանաստեղծը, հավանաբար այս կարգադրության աղեսը կանխելու համար, զրույց է ունեցել նաև Լենինի հետ և այդ

1 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963, էջ 497։

2 Անդ։

մասին էլ գրել է. «Այսօր զրույց ունեցա այդ առթիվ և ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչո՛ւ անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների և փախստականների վերադարձով և այլ գարանտիաներով։ Նա շատ լավ վերաբերվեց և պարզեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե երբ Հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրիենտացիա ընդունել։ Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասեր»[1]։

Սակայն այս զրույցը մնաց պարզ մի երեսպաշտություն. Լենինն իր խոստումը չկատարեց, և զորամասերը հանվեցին արևմտահայկական նահանգներից։ Թուրքերն անմիջապես ռազմական ուժեր մտցրին այն մարզերը, որոնցում պիտի իրականացվեին հայերի ինքնորոշումն ու անկախության հաստատումը։ Եվ այսքանից հետո հասկանալի է, թե ինչու 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի ժողկոմխորհի կողմից ընդունված, իսկ 1918-ի հունվարի 15-ին խորհուրդների համառուսաստանյան 3-րդ համագումարում հաստատված ազգակալից Դեկրետը դատապարտված էր մնալու «որպես դատարկաբանություն»։ Եվ սա քի՛չ էր, հետո էլ Թուրքիայի ու Հայաստանի, Հայաստանի ու մերձավոր հարևանների փոխհարաբերությունները որոշելիս Դեկրետն ընդունած ու հաստատած խորհրդային կառավարությունը պիտի մոռանար նրա էությունը կազմած սկզբունքների մասին, պիտի հոշոտեր Հայաստանին մնացած խղճուկ տարածքը, նվիրաբերումներ կատարեր Թուրքիային ու Ադրբեջանին՝ հանուն «համաշխարհային հեղափոխության» հաղթանակի։

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի հարևան Սևր քաղաքում հաշտության պայմանագիր կնքվեց Թուրքիայի սուլթանական կառավարության և մեծ պատերազմում հաղթանակած տերությունների միջև։ Պայմանագրի խմբագրական մասում հիշված էր նաև Հայաստանը՝ որպես հաղթանակած «Գլխավոր տերու-

1 Վ. Պարտիզանի, Տերյանի կենսապատմը, էջ 314—315։

թյունների՝ Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի ու Ճապոնիայի դաշնակից պետություններից մեկը։ Հայկական հանրապետության պատվիրակության նախագահն էր Ավետիս Ահարոնյանը։ Պայմանագրի մեջ Հայաստանի օգտին գրանցված բավական կետեր կային։ Նրանցից հիշատակելի են՝ 88-րդ հոդվածը, որով «Թուրքիան հայտարարում է, թե Հայաստանը ճանաչում է իբրև ազատ ու անկախ պետություն, ինչպես այդ բանն արել են դաշնակից տերությունները»։ 89-ը, որով որոշվում է «Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանաբաժանումը թողնել ԱՄՆ-ի հայեցողությանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ»։

Հայանպաստ էին նաև հաջորդ հոդվածներից շատերը։ Սակայն, ցավոք, Թուրքիայի կառավարությունը չճանաչեց այդ պայմանագիրը, ինչպես և, հմտորեն օգտագործելով Անգլիայի ու Ֆրանսիայի տարաձայնությունները պայմանագրի մի շարք կետերի շուրջ, հասավ նրան, որ պայմանագիրն ընդհանրապես չհղյալ հայտարարվեց Լոզանի կոնֆերանսում (1922—23 թթ.)։ Սակայն Լոզանից առաջ Սևրի անվավերականությունն Ալ. Խատիսյանի պատվիրակությունն էր ընդունել ու հայտարարել Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 3-ին Թուրքերի հետ կնքած պայմանագրով (տե՛ս այդ պայմանագրի 9-րդ հոդվածը)։

Երբ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվում էր ռուս-թուրքական պայմանագիրը, իսպառ մոռացության էր տրված վերը հիշված Դեկրետի ոգին, այսինքն՝ ոտնահարվում էր արևմտահայության ինքնորոշման իրավունքը, բայց նաև ոտնձգություններ էին արվում Խորհրդային Հայաստանի տարածքում կուչ եկած մի բուռ հայության ազգային-պետական իրավունքի դեմ։ Պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանի մարզը պոկվեց Հայաստանից, մտցվեց «Ադրբեջանի խնամակալության տակ, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չզիջի մի երրորդ պետության» (այսինքն՝ Հայաստանին)։

Բայց չէ՞ որ Նախիջևանն այն ժամանակ և այսօր իր տարածքով մտնում է Հայկական հանրապետության տարածքի մեջ և ոչ մի կապ չունի ո՛չ Ռուսաստանի, ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ Թուրքիայի հետ։ Այդ ինչպե՞ս է, որ ռուս-թուրքական պայմանագիրն այդպիսի հարց էր լուծում՝ առանց հայկական կողմի մասնակցության։ Որովհետև բանակցությունների ղեկի մոտ կանգնած Ստալինը՝ ՌԽՍՖՀ Ազգությունների կոմիսարը, համարում էր, որ Թուրքերն արդեն հայերի ճակատագրի վրա խաչ են քաշել, և այլևս հայկական հարց չկա... Այո՛, ճիշտ այդպե՛ս. երբ Թուրքաց կողմն անհանգստացել էր՝ չլինի՞ թե հայերը բողոքեն, իրենց իրավունքների հարցը բարձրացնեն... Ստալինը նրանց հանգստացրել է. «Հայկական հարց այլևս չկա, դուք այն լուծել եք ձեր երկրում...»։

1921 թ. կեսին էլ, դարձյալ Ստալինի դժնի միջամտությամբ և Լենինյան կենտրոնի լուռ համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղը հանձնեցին Ադրբեջանին, և այսքանից հետո համարյա հայկական հարց չմնաց Խորհրդային Հայաստանի համար։

Նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրվեց հայկական հողերի ստոր վաճառքի և առհասարակ հայ ժողովրդի նվազագույն իրավունքների ոտնահարման օրինականացումն այն պայմանագրով, որի ստորագրողներն էին մի կողմից՝ իբր թե հեղափոխության ուղին բռնած և Ռուսաստանի հետ պատեհապատշաճ սիրախաղ անող քեմալական Թուրքիան, մյուս կողմից՝ Խորհրդային Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը, իհարկե, Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերացիայի կառավարության ներկայացուցչի մասնակցությամբ։

Ի՞նչ էր բովանդակում այդ, այսպես կոչված, «բարեկամության պայմանագիրը», որն ստորագրողներն, իբր, բաժանում էին «ազգերի եղբայրության ու ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, նրանց միջև մշտական սրտագին փոխհարաբերություններ կային, և երկու կողմերը փոխադարձ շահերի վրա հիմնված անխախտ ու անկեղծ բարեկամություն հաստատելու ցանկությամբ էին խանդավառված»։

Պայմանագրի առաջին իսկ հոդվածով թաղվում էին այս կամ այն պետության, հատկապես Ռուսաստանի կողմից հայկական հարցի նկատմամբ երբևէ ցուցաբերված կեղծ կամ

ճշմարիտ բարյացակամության բոլոր արտահայտությունները, վերացված և ուժը կորցրած էին ճանաչվում նախկինում կընքված այն պայմանագրերը, որոնք վերաբերում էին երկու կողմերին և նրանց երկրների տարածքներին...

Վրաստանը մեկընդմիշտ տիրանում էր Բաթումին ու շրջականերին, Ադրբեջանը՝ երեք ամիս առաջ Լեռնային Ղարաբաղը ձեռք ձգելուց հետո, վերջնականապես լուծում էր նաև Նախիջևանի հարցը։ Անբարոյականությունն այնքան տիրական էր դարձել, որ Հայաստանի ներկայացուցիչներին ստորագրել տվին մարտի 16-ին Մոսկվայում Նախիջևանի մարզի շուրջ կատարված աճուրդին։

Ահա պայմանագրի այդ հոդվածը (5). «Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները համաձայն են (sic!), որ սույն պայմանագրի III հավելվածում նշված սահմաններով Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»։

Մինչ այդ գործված հակահայկական ստորությունները բավական չէին, ստիպեցին, որ բզկտված ու դժբախտ Հայաստանի ներկայացուցիչները սեփական ազգն ամեն կողմից կողոպտող փաստաթղթի տակ է՛լ ստորագրեն։

Սա խորհրդային կողմից հրահրված դիվանագիտական վերջին, բացահայտորեն նենգ հարվածն էր, որ հասցվեց հայկական հարցին։

Վերջին շուրջ 70 տարիների ընթացքում իբր թե իր տնտեսական ու քաղաքական կյանքով ապրող հայ ժողովուրդը ուեկուսացված էր հայոց հարցի հետ ունենալիք որևէ առնչությունից, հատկապես այն ազդակների առումով, որոնք պետի ընդգրկեին ազգամիջյան ու դիվանագիտական շրջանակները։ Այդ պատճառով էլ պատահական չէր, որ խորհրդային երկրի ղեկավարությունը քանի՞ցս անդրադարձավ հայ ժողովրդի պատմական շահերը շոշափող խնդիրների՝ հայտարարելով, թե Թուրքիայից տարածքային պահանջ չունի։ Հայտարարեց, առանց նկատի առնելու հայ ժողովրդի կարծիքը, նույնիսկ առանց նրան տեղեկացնելու իր նկատառումներին։

Հայկական հարցը կար, ապրում էր միայն սփյուռքահայության շրջանակներում, այն էլ ձևախեղված վիճակում՝ իբրև

հայկական դատ, որի թիկունքում կանգնած էին Սփյուռքի բոլոր կազմակերպությունները, հասարակական խավերը, հին ու նոր տերունները։

Յուրաքանչյուր ազգի քաղաքական կյանքի ղեկը գտնվում է դիվանագիտության ձեռքին։ Մեր հանրապետությունը շուրջ յոթ տասնամյակ զրկված է եղել այդ ղեկը վարողից և նույնիսկ ղեկից։ Նման պայմաններում նշանակալից դեր կարող էին խաղալ ազգի մտավոր բարձրագույն ոլորտների պաշտոնապես կամ հեղինակությամբ իշխող անհատները։ Նրանց խորհուրդներով կամ դասերով առաջնորդվող ղեկավարները հնարավորություն կստանային իրենց և ազգը հեռու պահել ճակատագրական սայթաքումներից։ Սակայն հայ ազգը զրկված էր այդ ո՛չ այնքան օրինական հնարավորությունից նաև Հայրենի մեծ մտավորականը, ցավատանջորեն մտահոգ տարտղնված ազգի ապագայով, դեղատոմս էր առաջարկում. «Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»։ Եվ նրան բանտախուց նետեցին ու հոշոտեցին։ Սփյուռքահայ իմաստունն էր խորհուրդ տալիս վերաքննել ու կարգավորել մեր հայրենիքի սահմանները (Ա. Զոպանյան. «Խոսքս ոչ միայն Տաճկաստանին հանձնված Անիի, Արարատի, Կարսի և Սուրմալուի մասին է, այլև Ղարաբաղի, Նախիջևանի...»)։ Եվ այս խորհուրդն ունկնդրողի՝ Աղասի խանջյանի գլուխը կերան... Ջարմանա՞նք, որ եթե «մեռցվել էր» հայկական հարցը, ապա և ոտի տակ տրորվում էր նրա հետ առնչվող ամեն ինչ՝ մարդ ու գաղափար, ցավ ու երազանք...

Սակայն պատմությունն ունի իր անխախտ օրենքները, որոնք արհամարհողն ինքն է ենթարկվում ահավոր աղետների։ Հիմա, երբ խորտակվում է սոցիալիստական սուտ համակեցությունը, առաջինը հենց արհամարհված, իբր թե մեռցված, ազգային հարցն է գլուխ բարձրացրել, ջարդում է իր կապանքներն ու իր դեմ կանգնած պատնեշները։

Ազատության տենչը բնորոշ է բոլոր ժողովուրդներին։ Նրան հասնելու եղանակները, այն պահպանելուն և պաշտպանելուն ուղղված զոհաբերությունների պատրաստակամության աստիճաններն են, որ այդ ժողովուրդներին տարբերում են իրարից։ 1988 թ. փետրվարի 20-ին, նախընթացին իր ազգային իրավունքների հաստատման համար ոտքի ելած Լեռնային

Ղարաբաղի հայության պահանջով, նրա Մարզային խորհուրդը որոշեց բաժանվել Ադրբեջանի ԽՍՀ-ից և վերամիանալ մայր ժողովրդին՝ Հայկական ԽՍՀ-ին։ Սա վերածնված հայկական հարցի առաջին հուժկու պոռթկումն էր, որին հետևեցին ազգային ինքնագիտակցության զարթոնքի օրինական ու հզոր դրսևորումները Հայաստանում ու Սփյուռքում։

Ղարաբաղյան շարժումն ամենակարճ ժամանակում գրաված ամբողջ աշխարհի բոլոր առաջավոր մարդկանց մտահոգության առարկան, վայելեց նրանց համակրանքն ու հպարտությունը (շվեցարական հասարակական գործիչն այն համարեց ամենաուսանելի դասը ապազգային թմբիրից արթնացող աշխարհի համար)։

Հայկական հարցն ապրում է, կա և արդար ու սպառիչ լուծում է պահանջում։

ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԸ

«Կոնգրեսի դռան վրա գրված էր՝ իրավունքն ալ ուժովինն է, քաղաքագիտությունը գթություն չունի... Հայաստանցինե՛ր, այսուհետև սիրեցե՛ք երկաթը, ձեր փրկությունը երկաթով կլինի, այն պատվական երկաթով, որ Զեյթունի լեռներեն կելնե»։

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Խոսքը վերաբերում էր Բեռլինի դիվանագիտական այն լրբենի համաժողովին (1878 թ. հունիս-հուլիս), որը քննարկում էր նաև հայոց հարցը, սակայն հայ ժողովրդի ներկայացուցիչներին թույլ չտվեց իր դռներից ներս մտնել և դառնալ դռնե ունկնդիրն այդ «քննարկումի»։

Դեռ թարմ էին Զեյթունի լեռնային հայության հակաթուրքական խիզախ պայքարի հիշատակները։ Իսկ սուլթանն ու նրա գործակալները, ոգևորված եվրոպական տերությունների թողտվությամբ, ավելի էին սաստկացրել ազգային ու կրոնական ճնշումները, որոշել էին Եվրոպա հասած հայկական հարցը տեղում լուծել՝ հայությանը ոչնչացնելով։

Արևմտահայությունը ոտքի ելավ պաշտպանելու իր ազատությունն ու ազգային ինքնուրույնությունը։

Պայքարը տևեց ավելի քան չորս տասնամյակ։

Չի կարելի ասել, թե հակաթուրքական շարժումների քառասնամյա շրջանում արևելահայությունը կամ ռուսահպատակ հայությունը ապրում էր երանության մեջ։ Հայդուկային շարժման առաջին իսկ տարիներին ցարի սատրապները հայ ժո-

ղովրդի համար նմանատիպ մթնոլորտ էին ստեղծել նաև Արևելյան Հայաստանում։

1885 թ. Կովկասում փակվեցին հայկական դպրոցները։ Իսկ դրանից երկու տարի առաջ Բաֆֆին էր գրել, թե՝ «կառավարության տրամադրությունը հայկական հարցի վերաբերմամբ այժմ, ինչպես երևում է, փոխվել է»։

Այո՛, Ռուսաստանի վերաբերմունքը փոխված էր, և ցարական կառավարության ներկայացուցիչները ազգային սեփական իրավունքների պաշտպանության համար կռվող հայերի դեմ գործելու էին ոչ պակաս դաժանությամբ, քան թուրքերը։

Եվ, այսուհանդերձ, ֆիդայական ու կամավորական ազատամարտերի սուր սլաքները միշտ էլ ուղղված էին թուրքական բռնապետության դեմ, որովհետև ազատամարտիկներն ու նրանց գաղափարական առաջնորդները համոզված էին, որ հայոց առաջին ու ամենամեծ թշնամին օսմանյան Թուրքիան է։

Հայկական ազատագրական կռիվները հենց սկզբից էլ կոչվում էին օտար բառերով՝ հայդուկային, ֆիդայական։ Իսկ կռվողները, ազատագրական շարժման մասնակիցները՝ հայդուկներ, ֆիդայիներ։

«Հայդուկ» հունգարերեն բառ է, որ ուղղակի նշանակում է հետևակ։ Բայց որովհետև այդ հայդուկ-հետևակային խմբերն էին, որ 19-րդ դարում և նախընթացին օսմանա-թուրքական բռնության դեմ կռվում էին Հունգարիայում ու Բուլղարիայում, Հունաստանում ու Արևմտյան Հայաստանում, առհասարակ հայդուկ անվան տակ հասկացվում էին թուրքական լծի դեմ կռվողները, մեծ մասամբ պարտիզանները։

«Ֆիդայի» (արաբերեն՝ նահատակ) առավել վայելող բառն է, որ բնութագրում է 19-րդ դարի վերջին քառորդի հայ ազատամարտիկների անձնազոհ պայքարը։ Հայ ֆիդայիներն իսկապես նահատակության գնացող, ազգի ազատագրության համար ամեն մի զրկանքի ու զոհաբերության պատրաստ մարդիկ էին, միավորված սրբազան երդումով, որի հիմնական կետերն էին՝ լինել անթերի զինվոր, աղնվապույն մարդ և խրոխտակային, կենցաղում՝ անբիծ, ազգանվիրության մեջ՝ հեռ ևվողական, կռվելու և հաղթելու համար՝ հնարամիտ։

Ֆիդայական հայ խմբերի այս սկզբունքներն ամփոփվել և

առավել ամբողջացվել են հայոց ամենամեծ հայդուկ և ֆիդայի զորավար Անդրանիկի «Մարտական հրահանգներ» գրքույկում։

Ֆիդայիներն ազգի պաշտպաններն ու պաշտելիներն էին, բարձր գնահատված նաև ուրիշ խմբակցությունների ու կուսակցությունների ազգանվեր ներկայացուցիչների կողմից։

Այստեղ տեղին է հիշել մեր ազատագրական պայքարի մեծ գեղագետին ու գաղափարախոսին՝ Բաֆֆուն, որի գրքերը հայդուկների ուսապարկերի մեջ էին՝ նրանց հանապազօրյա սնունդի ու պատանքի հետ միասին։ Բաֆֆին մեր ազատագրական շարժման կրակ վառողն էր և այն բորբոք պահողը։ Սակայն ինքն էլ, անկախ իր ծառայությունից, ժողովրդական շարժումը գնահատում էր իբրև սրբազան երևույթ, որ «հեղափոխական բնավորություն է ստանում... որովհետև նա (հայդուկը) իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին և ուխտում է անգթաբար պատժել անիրավությունը։ Իր հայրենիքն ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից,— ահա դրանք են նրա ցանկությունները...»։

Բաֆֆին, իհարկե, Բաֆֆի է, հայոց ազատագրության մեծ թմբկահարը, և նրա գրիչը հայդուկ-ֆիդայու կռիվը պիտի փառաբաններ։ Իսկ նրանից տասնամյակներ հետո եկած հեղափոխական սերնդի ներկայացուցի՞չը։ Մեր դարի արշալույսին Բոգդան Կնունյանցը ԻՍԴԲԿ երկրորդ համագումարին ներկայացրած իր զեկուցագրի մեջ Արևմտյան Հայաստանում կռվող ֆիդայական-հայդուկային խմբերը համարել է հեղափոխական ուժեր, երբ չէր կարող չիմանալ, որ իր կուսակիցներից շատերն ամեն կերպ ջանում են վարկաբեկել այդ սուրբ նահատակների անձնազոհ պայքարը... Իսկ սրանց անմիջական ժառանգորդնե՞րը...

Մեր ժողովրդի քառասնամյա, թերևս անհույս, բայց խիզախ ու հերոսական պայքարի վերաբերմամբ հաջորդ 40-45 տարիներին սխալ, պարզապես ապակողմնորոշող վերաբերմունքն էր տիրական մեր հանրապետության պետական-կուսակցական և գիտական շրջաններում։ Վարկաբեկելու նպատակով շարժումը ոտով-ձեռքով հանձնվում էր հայ բուրժուազիային, իբր, նա՛ է հրահրել, նա՛ է ցույց տվել ճանապարհը և նա՛ է պատասխանատու կատարված ձախողանքների ու

տրված գոհերի համար։ Ահա այս վերաբերմունքն ստեղծողներից մեկի՝ Արտաշես Կարինյանի կարծիքը, որ, անարդար լինելով հանդերձ, նաև անտրամաբանական է։ Խոսելով հայ բուրժուազիայի, այսպես կոչված, «արկածախնդրություններից», Կարինյանը գտնում էր, թե «Ուղարկելով ռազմական-հայդուկային խմբեր դեպի Տաճկահայաստան, ուղարկելով պատվիրակություններ Եվրոպա և Ամերիկա, նա (հայ բուրժուազիան— Բ. Ոի.) փաստորեն ելնում էր միշտ իր անմիջական շահերից և երազում էր ձեռք բերել ազատ վայրեր տնտեսական նորանոր գործառնությունների համար»[1]։

Եվ գիտե՞ք ինչն էր պատճառն այս, մեզմ ասած, անխոհեմ միջամտություններին։ Այն, որ հայ բուրժուազիան հիմնականում բնավորված էր ո՛չ Հայաստանում, ուստի և ի վիճակի չէր ըմբռնելու հայաստանաբնակ հայության շահերը։

«Եթե հայ բուրժուազիան գործեր բուն երկրում,— շարունակում է Կարինյանը,— եթե նրա սոցիալական հենարանը լիներ Տաճկահայաստանը կամ գյուղական Ռուսահայաստանը, այդ դեպքում կասկածից դուրս էր, որ նա լրջորեն կխորհեր նախքան որևէ քայլ անելը։ Այսպես թե այնպես վերջին պարագայում նա ստիպված կլիներ հոգալ իր սեփական անձի, իր ընտանիքի, մտերիմների, իր սեփականության և կապիտալների ապահովության մասին։ Արդեն տարրական այդ մտահոգությունը կդրդեր նրան լինել ավելի հեռանկար (երևի՝ հեռանկատ կամ հեռատես— Բ. Ոի.) և զգաստ ու խուսափել ավանտյուրիստական կասկածելի ձեռնարկություններից»[2]։

Այս մտայնության համաձայն, ուրեմն, ստացվում է, թե բավական էր հայ բուրժուազիան բուն Հայաստանում լիներ գոյացած, որպեսզի հայոց ազատագրական պայքարի, հայերի ինքնապաշտպանության կարիք չզգացվեր։ Բավական էր հայ կամավորները ոտքի ելած չլինեին թուրքական բռնության դեմ, որպեսզի այդ բռնությունը գոյություն չունենար։

Բայց չէ՞ որ հայերն արդեն գոյություն ունեցած բռնության դեմ էին ոտքի ելել։ Չէ՞ որ նրանք պայքարում էին դարեր ի

1 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, Առաջաբան, էջ 12։

2 Անդ, էջ 13։

վեր մոլեգնած թուրքական հայահալած քաղաքականության դեմ։

Ո՛չ ժամանակի և հետագա տասնամյակների մոլորյալ հայ քաղաքագետները, դաշնակցությանն ու հայ բուրժուազիային սևացնելու համար, պատրաստ էին նույնիսկ օրինականացնել թրքական վայրագությունը, պաշտպանել երիտասարդ թուրքերին, որոնց հակահայկական քաղաքականության մեջ փընտրում էին խրախուսելի ու քաղաքակրթական երանգներ։ Չե՞ք հավատում, խնդրեմ, տեսեք՝ Ա. Կարինյանն ինչպես է գնահատում նրանց արածը. «Երիտասարդ թյուրքերն էլ պաշտպանում էին իրանց «հայրենիքը», պաշտպանում էին իրանց հասկացած նացիոնալիստական հայեցողության պատգամների համեմատ և, համենայն դեպս, ո՛չ ավելի վատ, քան անգլիացիները, ֆրանսիացիները կամ ռուսները»[1]։ Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչո՛ւ այսպիսի մտայնության համար «անցյալի ողբերգական դեպքերի մեջ հավասար չափով մեղավոր են եղել և՛ թյուրքիան, և՛ դաշնակցությունը»[2]։

«Հավասա՛ր չափով», պատկերացնո՞ւմ եք։

Երևի գոհություն պիտի հայտնենք, որ չի գրել, թե դաշնակցությունն ավելի շատ, քան Թուրքիան, կամ թերևս՝ միայն դաշնակցությո՛ւնը և երբե՛ք Թուրքիան։

Եվ ինչո՞ւ զարմանանք, որ հետագայի հայ պատմագիտության ներկայացուցիչն էլ Հայաստանի հանրապետության կառավարների դատապարտելի քայլն էր համարում կռվելը, երբ որ նրանք զենք են առել և կռվել են Հայաստանի վերջին մի բուռ հողը ոտքի տակ տվող քեմալական թուրքերի դեմ. ինչպե՞ս կարելի էր, երբ ասպատակիչները ներկայացնում էին հեղափոխության ճամփան բռնած թուրք ազնիվ ու լուսավոր ժողովրդին...

Այս ամենն այսպես։ Բայց մենք փառք տանք մեր ժողովրդի իսկապես ժողովրդա-ազատագրական կամքին, որը ծնեց ֆիդայիներ ու հայդուկներ՝ հայոց ազատագրության այդ հերոսներին ու նահատակներին, որոնք ո՛չ իրենց ժամանակի սաթրակենցաղների քրիստոնեական հանդուրժողության կո-

1 Անդ, էջ 9։

2 Անդ։

չերն էին ուշադրության առնում, ո՞չ էլ գուշակում էին, թե, ի՞նչ է, գալիքի համաշխարհային հեղափոխության հովերին լծված դիվոտներն են դատապարտելու իրենց անձնազոհ պայքարը, աղգանվեր նահատակությունը։

Հայ շրջահայաց մտավորականներն ու անփորձ դիվանագետները վկա էին եղել եվրոպական տերությունների քաղաքական խաղերին և համոզված էին, որ այդ տերությունները շահագրգռված չեն փոքր ազգերի ազատագրությամբ։ Հայոց հարցը նրանք դիվանագիտական ատյաններն էին քաշել՝ այդ հարցով շահագրգռված երկու կողմերին՝ Թուրքիային և Ռուսաստանին սանձած պահելու համար։ Այո՛, իրականում Թուրքիային և Ռուսաստանին, և հայ ազգի խնդիրն էական ոչ մի նշանակություն չուներ դիվանագիտական խաղերի մեջ։

Թուրքիան էլ տեսել էր, որ հայոց հարցը բարձրացել, եվրոպական դիվանագիտական անդաստանն էր մտել ու գլորվում էր այն ձնագնդի պես, որը քանի գնա, պիտի մեծանա։ Նրա համար ավելի լա՞վ չէր այդ ձնագունդ-հարցը փշրել տեղնուտեղը, քան թույլ տալ, որ մեծանա ու ահազնանա։

Եվ հարցը Թուրքավարի լուծելուն ձեռնարկեց անմիջապես։

Հիմա չքմեղացող Թուրք պատմաբաններն աշխարհով մեկ տարփողում են իրենց երկրի տերերի ու ենթակաների անդատապարտելիությունը. իբր, իրենք միայն ապստամբած հայկական օջախների վրա են ջուր ցանել, որպեսզի կրակը չընտարածվի երկրի ուրիշ վայրերում։ Իբր, ռուսներն էին, որ Թուրքիա մտնելով՝ տեղացի քրիստոնյաներին և մանավանդ հայերին ոտքի հանեցին ավանդական ու բարյացակամ տերերի դեմ..., և սրանք էլ ստիպված էին խրատ տալ անհնազանդ հպատակներին։

Սակայն աշխարհին են հայտնի Թուրքական պետության գործած վայրագությունները նվաճած պետություններում։ Կար ժամանակ, որ Եվրոպայի քրիստոնյաները երկնառաք պատիժ էին համարում թրքության երևալը։ Նույն այդ պատի՞ժն էր երանություն դարձել իր տերության ներսում ապրող քրիստոնյաների համար։

Իսկ ի՞նչ էր պահանջում իր ապառության համար պայքարող հայը. իրավահավասարություն երկրի այն բնակիչների հետ, որոնք ոչնչով առավել չէին իրենից։

Սոցիալական ու քաղաքական անիրավության դեմ ամենուրեք և պարբերաբար բորբոքվող ընդվզումներից գոյացան հայկական ազատագրական խմբերը, և անմիջապես նրանց մասին իմացավ աշխարհը։

Անարդարության, թուրք պաշտոնեության և սրա հրահրումով հայկական նահանգները թափված հրոսակների կամայականությունների դեմ, երկրում սանձազերծված կրոնական ու ազգային հալածանքների դեմ կռվող հայկական խմբեր հայտնվեցին Բերլինի ամոթալի կոնգրեսից անմիջապես հետո, 1880-ականների վերջին։ Կարճ ժամանակում ժողովրդական վրիժառության դրոշակակիրներն ահ ու սարսափ դարձան թշնամիների համար։

Առաջին ֆիդայական խմբի գլխավորն էր Արաբոն (Առաքել), որի համար կենտրոն էր Տարոն գավառի Բերդակ գյուղը, սակայն գործունեության շառավիղներն ընդգրկում էին ամբողջ Մուշ-Սասունը։ Երզնկայում ու Սեբաստիայում գործում էին ուրիշ խմբեր, որոնց ղեկավարներն էին Դալուստ Արխանյանը (Մենուրիի աշյուծ), Ռուբեն Շիշմանյանը, Հովհաննես Մինասյանը։ Շապին-Գարահիսարում հայտնի էր Դանիել Զաուշի խումբը, որն իրեն պիտի պսակեր 1895 թ. ինքնապաշտպանական հերոսամարտով։

Հայության լայն շրջաններին հայտնի էին Մխո Շահենի (Մխիթար Սեֆերյան), Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան), Գևորգ Չավուշի (Ադամյան), Հակոբ Սարկավագի ու Հովհաննես Մինասյանի, Հրայրի (Արմենակ Ղազարյան) խմբերը, որոնք անհավասար հերոսական կռիվներում պաշտպանում էին հայ աշխատավորի իրավունքները՝ հաղթահարելով թուրքական պատժիչ ջոկատների, հաճախ ռազմական մեծ միավորումների հարձակումներն ու պատժարշավները։

Ֆիդայական կռիվները Մուշում, Զեյթունում, Բիթլիսում, Վասպուրականում և այլ վայրերում արձանագրել են անհամար հաղթանակներ։ 1893—1896, 1902—1904 թվականների թարդերի օրերին և մանավանդ Մեծ եղեռնի տարում այդ խմբերի մղած անձնազոհ դիմադրության ու համառ պայքարի շնորհիվ փրկվել են տասնյակ հազարավոր արևմտահայեր։ Նրանց վաստակն էր Վասպուրականի և մանավանդ Վանի փառավոր ինքնապաշտպանությունը։ Նրանց

շնորհիվ էր, որ այդ նահանգի բնակչությունը տվեց համեմատաբար սակավաթիվ զոհեր։

Ֆիդայի-հայդուկների շարժումը տեղի ուներ Արևմտահայաստանում, սակայն բռնկվելուն պես արձագանք տվեց հայության բոլոր հատվածներում, դարձավ Արևելյան Հայաստանի, ինչպես նաև ռուսական կենտրոններում ծվարած հայ ամենատարբեր խավերի ցավն ու մտահոգությունը։ Առանձնակի խանդավառություն ապրեց հայ ուսանողությունը, որի հարյուրավոր ներկայացուցիչներ շտապեցին Երկիր՝ սեփական արյունն ու կյանքը նվիրաբերելու Թուրքաց Հիրաններում խեղդվող հայությունն ազատագրելու գործին։ Առանձնակի հոդածության առարկա էր դարձել Երկիրը զենք փոխադրելու հարցը։ Ռուսաստանի ու Եվրոպայի կենտրոններից էին զենք ու զինամթերք առնում, փոխադրում ամենատարբեր ճանապարհներով։ Կովկասից և Ռուսաստանից զինագործություն սովորած երիտասարդներ էին գնում Պարսկաստան ու արևմտահայկական նահանգներ և զենք ու զինամթերք էին պատրաստում տեղում։ Հենց այս գործով էին զբաղված վանեցիներ Փանոս Թերլեմեզյանը, Արմենակ Եկարյանը, Շուշեցի Սարգիս Մեհրաբյանը (Վարդան), հետագայում Զեյթունի ինքնապաշտպանության համբավավոր հերոս Կարապետ Թուր-Սարգսյանը (Աղասի), երևանցի Գալուստ Ալոյանը և բազմաթիվ ուրիշներ։

Ռուսահպատակ հայության այսօրինակ ձեռնարկները, անկասկած, իրականացվում էին ռուս պաշտոնեության և առհասարակ ցարական մեքենայի դիմադրությունն ու արգելքները հաղթահարելու ճանապարհով։ Ինչ խոսք, որ Ռուսաստանն ինքն էլ սարսափում էր ազգային-ազատագրական խմորումներից և համոզված էր, որ Թուրք բռնատիրության դեմ կռվող հայն ու այլազգին վաղն էլ իրենց զենքի փողը պիտի ուղղեն բռնության ու ազգային ճնշման ռուսական տարբերակի դեմ։

Այս տեսակետից շատ բնորոշ էր Կուկունյանի խմբի կամ «Հայրենասիրաց միության» դեպքը։ Նուխեցի երիտասարդ Սարգիս Կուկունյանը, բարվոք կրթություն ստացած, հայրենակիցների ճակատագրով մտահոգ, Պետերբուրգում 1890 թ. հայ կամավորների մի խումբ է կազմում, ապա ժամանակի հայ ականավոր մտավորական գործիչներ Կարապետ Եղյանի ու Գրիգոր Արծրունու հանձնարարություններով ու օրհնությամբ

անցնում Արևմտահայաստան՝ մասնակցելու ազատամարտերին։ Թիֆլիսում ու Կարսում խումբը մեծացել, հասել էր ավելի քան հարյուր հոգու։ Այն ուներ իր անունը՝ Հայրենասիրաց միություն, նույնիսկ դրոշը, որի վրա շողում էին Գրիգոր Լուսավորիչի և փրկարար աույուծի պատկերները։

Թուրքական սահմանն անցնելով՝ խումբն անմիջապես բախվում է քրդական ղինված ջոկատների հետ։ Հետո էլ հավանաբար նախապես զգուշացված թուրքական կանոնավոր զորամասեր են հայտնվում, որոնց հետ կռվի բռնվելով՝ խումբն ստիպված է լինում նահանջել։ Կաղզվանի մոտ, իբր ապահովության համար, հանձնվում է ռուսական սահմանապահ զորքի հրամանատարությանը... Սակայն ռուս պաշտոնեությունը խմբի արած քայլերը գնահատում է քրեական հանցագործություն, ստեղծում դատական աղմկոտ գործ, որից հետո խմբից 17 հոգի դատապարտվում են տաժանակրության։

Հետագայում, հատկապես առաջին աշխարհամարտի տարիներին, Ռուսաստանն իր վերաբերմունքը փոխեց հայ կամավորության նկատմամբ։ 1914 թ. հուլիսի 23-ին ցարական կառավարությունը հրապարակել էր որոշում՝ բանակը կամավորներով համալրելու մասին, և դա ահազանգ էր, որպեսզի հայկական շրջաններում որոշվի կազմակերպել նման ջոկատներ՝ մասնակցելու սկսվելիք ռուս-թուրքական պատերազմին, որով, իբր, արևմտահայությունը պիտի ազատագրվի թուրքական բռնակալությունից և ձեռք բերի ինքնորոշման իրավունք։ Փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի հետ հայ գործիչների ունեցած բանակցություններն այն արդյունքն ունեցան, որ կառավարությունը սեպտեմբերին որոշեց թույլ տալ, որպեսզի կազմվեն հայկական կամավորական ջոկատներ։ Ռուսահպատակ Հայաստանից հավաքվեց շուրջ 250 հազար զինվոր, որին զենք ու ռազմահանդերձանք եթե տրամադրել էր ցարական պետությունը, ապա պարենավորման ու նյութական այլազան հոգսերը քաշում էին հենց այդ նպատակով ռուսական ու արտասահմանյան կենտրոններում ստեղծված հայկական կազմակերպությունները։

Հայ կամավորական ջոկատների հրամանատարներ դարձան Անդրանիկը (Օզանյան), Դրոն (Դրաստամատ Կանայան), Համազասպը (Սրվանձտյան), Քեռին (Ռուբեն Շիշմանյան),

Հայկ Բժշկյանը, Հովսեփ Արղությանը, Ջոկատները Թուրքերի դեմ կռվում էին ռուսական զորամիավորումների կազմերում և իրենց անձնազոհ խիզախությամբ, մանավանդ տեղանքին ծանոթ լինելու, տեղացիներին ևս ազատորեն իրենց նպատակներին ծառայեցնելու հանգամանքներով մեծապես օգնեցին ռուսական զորքի հաղթանակներին։ Սակայն այսքանն ի դիրև ելան, երբ գլխավոր հրամանատարությունը 1915-ի դեկտեմբերին ցրեց հայ կամավորական ջոկատները՝ նրանցից թողնելով լոկ հրաձգային գումարտակներ, որոնք, ճիշտ է, այլևս ինքնուրույնություն չունեին ռուսական զորքերի կազմում, սակայն դեռևս հերոսական մասնակցություն պիտի ունենային 1916—17 թվականների ճակատամարտերին, քանի որ դեռ հավատում էին ռուսաց հաղթանակին և դրա հետ էին կապում հայոց ազատագրության հույսը։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հայ կամավորներն ավելի ամուր հավատով էին կռվում ռուսական բանակների շարքերում։ Ռուսաստանի տարբեր շրջաններից նրանք խումբ-խումբ գալիս էին Անդրկովկաս ու Թուրքական ճակատ։ Հայ մեծահարուստներն իրենց միջոցները չէին խնայում կամավորներին զինելու և պարենավորելու համար։ Ռուսաստանի մեծ ու փոքր քաղաքներում ստեղծված «Հայաստանի և հայերի պաշտպանության խորհուրդ» անունը կրող կազմակերպություններն այդ օրերին լծված էին հիմնականում կամավորական զորամասեր ստեղծելու և դրանք ամեն ինչով ապահոված ռազմաճակատ հասցնելու գործով։ Նույնիսկ Սիբիրի աքսորավայրերում գտնված հայ երիտասարդները հավաքվեցին և ճանապարհվեցին Թուրքական ճակատ։ «Կարմիր օրեր» թերթի 1918 թ. մարտի 24-ի համարը հաղորդում է, որ «Խարկովից ռազմաճակատ են գալիս հայ 400 կամավորներ, որոնց ուղեկից են դարձել նաև ռուս կամավորները»։

Հայ ֆիդայական կամավորական շարժումն այսպես հասավ 1918 թ. գարնանը։ Այսպիսի փորձություններով անցավ հայոց ազատագրական աշխարհազորը, որպեսզի 1918 թ. մայիսին Սարդարապատում ասի իր վճռական խոսքը և հիմք դնի Հայոց նոր պետականության։

* * *

Ֆիդայական-կամավորական շարժումները հայոց ազգային ազատագրական պայքարի ամենափառահեղ դրվագներից են։ Դրանք իրենց արյամբ են գրել մեր ժողովրդի բոլոր հատվածների ներկայացուցիչները։ Այս պայքարի ասպարեզն Արևմտահայաստանն էր, միայն վերջին շրջանում՝ Արևելահայաստանի մի մասը, սակայն մարտական շարքերում արևմտահայերի կողքին, թե թևի, կռվում էին արևելահայերը, ռուսական կենտրոնների նվիրակները, նույնիսկ արտասահմանյան երկրներում վաղուց ի վեր բնակություն հաստատած գաղթականների զավակները։ Ֆիդայական առաջին ճակատամարտերի հերոսներից ու նահատակներից մինչև Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հաղթանակը կողքերը՝ ձգվում է անվանի ու անանուն հազար-հազարների պայծառ մի շարք, որի յուրաքանչյուր ներկայացուցիչ սուրբ է ու անմահ մեր ազգային գիտակցության մեջ, երախտապարտ սերունդների հիշողության ծալքերում։

Եկել է ժամանակը՝ հիշելու նրանց հայրենանվեր գործերը, հյուսելու նրանց սրբազան պատմությունը դրվագ առ դրվագ, էջ առ էջ։

Ես այստեղ հարկ համարեցի նրանցից մի քանիսին ներկայացնել իրենց կենսագրությունների կարևոր նշանաձողերով։

Ահա առաջին ֆիդայիներից, հերոս նահատակներից մեկը՝ Աղբյուր Սերոբը (Վարդանյան, 1864—1899)։ Ծնվել է Վասպուրականի Ախլաթ գավառի Սոխորդ գյուղում և պատանության շրջանում բախվելով հարստահարիչների հետ, նախ Պոլիսի ու Ռումինիայի հայ ազատատենչ շրջաններում միտքն ու կամքը կոփեց, ապա, երբ 1890-ականների կեսերին լուր առավ, թե հայրենի եզերքում բռնությունների են ենթարկում հայերին, մի խումբ պանդուխտների գլուխն անցած, Կովկասի վրայով անցավ Ախլաթ, դարձավ ծննդավայրի, Բաղեշի, Տարոնի հայության ինքնապաշտպանական կռիվների ոգին։ Ամենուրեք Սերոբի հետ կողք կողքի կռվում էին սեփական Վարդանյան գերդաստանի քաջազարմ այրերը, նույնիսկ նրա կինը՝ արիասիրտ Սոսեն։

Հաղթական ճակատամարտ տալով կառավարական զորա-

խմբերի դեմ, պատժելով ու վնասազերծելով հայկական գավառներն ասպատակող խիզանցի քրդերի ու մոնազկերտցի չերքեզների ավազակախմբերին, Սերոբի խումբը պատուհաս էր դարձել Թուրք պաշտոնական շրջանների համար։ Նրանք էլ գործի դրին իրենց տրամադրության տակ դտնվող ամենաստոր միջոցները, մանավանդ մատնությունը և 1899-ին քաջ ֆիդայու գլուխը գավառապետարան տարան ցուցադրելու հետաքրքրասեր խուժանի առաջ։

Սրտագին երգեր են հյուսվել Աղբյուր Սերոբի մասին։ Նրանցից մեկն ասում է.

Նեմրութա սարը հազար ականի,
Հաղարն էլ Մշո գաշան ի վար կերթան,
Միայն աղբյուրը Աղբյուր Սերոբի
Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա։

Դժոխք Հրայրը (*Արմենակ Ղազարյան, 1866—1904*) սասունցի էր, Մշո Սուրբ Կարապետ վանքի դպրանոցի սան։ Մուրատի, Գևորգ Չավուշի և մյուս նշանավոր ֆիդայիների հետ էր ասպարեզ եկել։ Գլխավորել էր հայրենի Սասունի, Ախլատի, Խնուսի ու Բասենի ապստամբ խմբերը։ Քանի՞ցս Թուրքական բանտ էր նետվել։ Ազատել էին մտերիմ զինակիցները կամ բախտն էր ժպտացել իր խելոք հնարամտություններ։ Կռվեց մինչև 1904 թվականը։ Վերջին տարիներին Սասունի հերոսական պայքարն էր գլխավորում Անդրանիկի ու Մուրատի կողքին։ Զոհվեց 1904-ի ապրիլի 12-ին։ Շուրթերին վերջին անգամ հնչել է մարտակոչը՝ կռվել մինչև հաղթանակ և ազատություն։

1894 թ. Դժոխք Հրայրի հետ միասին Թիֆլիսից Ալեքսանդրապոլի, Կարսի վրայով, Երկիր-Բասենի շրջան էր մտել նաև կարնեցի Աբամ Աբամյանը։ Ընդամենը երկու տարի գործեց այս աննկուն ֆիդային։ Երկու տարի միայն գլխավորեց Բասենի ու Խնուսի խմբերը։ Սակայն այդ կարճ ընթացքում ձեռք բերեց այնպիսի համարում ու հեղինակություն, որ զինվորները երդվում էին նրա անունով։

Հայտնի է Աբամյանի մի առաջարկությունը. ահաբեկչության մոլի պաշտպանն էր և գտնում էր, որ ահաբեկիչը պետք է շփախչի, այլ մնա և հայտարարի, որ ի՞նքն է եղել պատժողը, որպեսզի սպանված մեկի փոխարեն պատասխանատվության չենթարկվեն զանգվածները։

Երևի թե այս սկզբունքին էլ զոհ գնաց 1896 թ. հուլիսի 2-ին. ինքն ու Հրայրը բռնվել էին մի շատ կարևոր առաջադրանք կատարելուց հետո։ Հրայրը փրկվեց, իսկ ինքը կախաղանի դատապարտվեց և ապա ենթարկվեց անասելի չարչարանքների։

Արցախի զավակ Սարգիս Մեհրաբյանը, որ կամավորականների շրջանում հայտնի էր Վարդան, Սպարապետ, Խանասորի Վարդան անուններով, 1890-ական թվականներից Արևմտյան Հայաստանում էր, Վանի ու Մուշի ինքնապաշտպանական կռիվներում, շարքայինի ու հրամանատարի դիրքերում՝ ո՛ւր և ի՛նչ խնդրով կենտրոնական ղեկավարությունը նրան ուղարկեր, ի՛նչ հանձնարարություն որ պետք լիներ ազգի փրկությանը ծառայելու համար։

1905—6 թթ. անդրկովկասյան ազգամիջյան բախումների շրջանում նրան կանչել էր հայրենի Արցախը, և այստեղ էր, որ իր չոկատով քանի՞-քանի անգամ օգնության հասավ Թարթառի, Խաչենագետի ու Կարկառի հովիտների հայ գյուղերին, պատժեց մահմեդական ասպատակիչներին։

Սարգիս Մեհրաբյանը ֆիդայիների մեջ այն դժբախտ բախտավորներից էր, որ երկար ապրեց՝ հասնելով 20-ական, նույնիսկ 30—40-ական թվականներին։ Ապրում էր Երևանում. 1930-ականների բռնություններից խույս տալով ծպտված գընաց Մոսկվա, այնտեղ իր մահկանացուն կնքեց 1943-ին։ Դուստր Մարգարիտը, որ Մեծ թատրոնի ջութակահարներից է, հոր ձեռագիր հուշերը հանձնել է Հայաստանի պետական արխիվին։

Վանի Իշխանը (*1883—1915*) Շուշվա ծնունդ էր, Թեմականի սան, Արամի հեղափոխական խմբի անդամ, որ, Արամի վկայությամբ, «դպրոցական կարգերու, պարտադրված օրենքներու, չնչին հեղինակությունների, քմահաճ հովանավորությունների դեմ» ըմբոստանալու համար վտարվում է դպրոցից և ուսումը շարունակում Երևանի Թեմականում։ Կարծես ծնվել էր ֆիդայի և, Երևանի, Ալեքսանդրապոլի ու Կարսի շրջաններում հեղափոխական մկրտություն ստանալով, դարասկզբին մտավ Երկիր, մասնակցեց Ուզունվերանի ու Բասենի կռիվնե-

բին։ Այս կողմերում կորցրած ընկերների վրեժը սրտում, 1904-ին անցավ Վան։ Այնտեղ նախընթացի ազատագրական պայքարը գլխատված էր, ցրվել էին կարող ուժերը, և ժողովուրդը մնացել էր անպաշտպան։

Կենսագիրը նրա կազմակերպական գործի սահմաններն այսպես է գծում. «Ան իր հեղափոխական բեղուն գործունեության շրջանին մեջ կառներ տառապող հայ գյուղաշխարհը, ընդարձակ ու լեռնոտ այն երկրամասը, որ կսկսի Վան քաղաքի անմիջական սահմաններեն և կընդգրկե Վերին և Վարին Հայոց ձորի, Գավաշի, Կարկառի, Կարճկանի, Շատախի, Մոկսի, Սպարկերտի, Մամրտանքի, Խիզանի, Ողմի գավառները, Վանեն մինչև Սղերդի ու Բաղեշի տակ»։

Այս շրջագծի մեջ գործող նրա «Լեռնապար» կազմակերպությունը, որ զինական շարժումների համար էլ ուներ Քուրցիկ անուն խումբը, տերն էր դարձել Վանի ու վերը հիշված շրջականների, հայոց իրավունքն էր պաշտպանում թուրք բռնավորներից, քուրդ ավազակախմբերից, հայրենի վաշխառուներից ու բարոյազուրկ տարրերից։ Գյուղերում կարգ ու կանոնի արժանացած աշխատավորները երախտագիտությամբ էին տալիս Իշխանի և նրա ստեղծած խմբերի խիզախ ու անշահախնդիր զեկավարների անունները։

Թեպետ զենքի շառաչը խլացրել էր ժամանակակիցների ականջները, թեպետ ազատագրական խմբերի միակ հոգսն էր՝ փրկել-պահել հայրենակիցների կյանքը և կայքը, Իշխանը, որպես Լեռնապարի անմրցակից տեր ու իշխանավոր, ժամանակ էր գտնում ժողովրդական տնտեսության և մշակութային կյանքի հոգսեր արծարծելու։ Վկայություններ կան, որ նա գյուղերում հողագործության բնագավառում շահութաբեր նորություններ է նախաձեռնել և ամեն կերպ ջանացել, որ դրանք տարածվեն հայկական ու քրդական շրջաններում։ Աղթամարում հատուկ դպրոց բացեց՝ այնտեղ լավագույն մասնագետների աշխատանքի հրավիրելով Կովկասից և հայկական ուրիշ կենտրոններից։ Ասում են՝ հետագայում այս դպրոցի սաներն էին, որ դարձան Վանի ու Վասպուրականի ամենաշրջահայաց գործիչները, 1915-ի ապրիլյան ճակատագրական կռիվների հերոսներն ու նահատակները։

Հայտնի են Իշխանի ստեղծած դպրոցներն ու պրոգրամնե-

ները Վանում և Լեռնապարի մյուս վայրերում։ Ստեղծեց Վանի «Աշխատանք» թերթը, խմբագրեց՝ անձամբ հայթայթելով նրա տպարանը։ Ասում են՝ ժամանակ էր գտնում երգչախմբեր կազմելու և նրանց պարապմունքները գլխավորելու համար։ Հավաքել և ուսումնասիրել է հայերի և քրդերի բանահյուսության գոհարները։

Թուրք պաշտոնեությունը չէր կարող հանդուրժել այսքան բազմաշնորհ ու ձեռներեց մի զեկավարի իր տիրապետությունը պարբերաբար սասանող Վասպուրական աշխարհում։ 1915-ի ապրիլի 3-ին Թուրքիայի նենգավոր կուսակալ Ջևդեթը Շատախում նախ հայ-թրքական բախում հրահրեց, ապա, իբր, միջադեպը հարթելու և խաղաղություն հաստատելու խնդիրքով դիմեց հայոց ամենահեղինակավոր գործիչ Իշխանի միջամտությանը։

Դավադրությունից անտեղյակ Իշխանը մի քանի ընկերների հետ ճանապարհվել էր Շատախ։ Սակայն ճանապարհին, Հիրճ հայ-քրդական գյուղում, վրա հասան Ջևդեթի տամարդի դավադիրները և սպանեցին քրդի տանը գիշերած Իշխանին։

Կենսագիրներն ասում են՝ Իշխանն իր մահով էլ կաղամակերպի ու հերոսության մղողի դեր կատարեց։ Նրա դեմ գործված ստոր գործարքը ոտքի հանեց Վասպուրականի հայությանը, զինեց և տարավ հաջորդ օրերի այն հերոսական ինքնապաշտպանությանը, որը պիտի դառնար Մեծ եղեռնի օրերի ամենամխիթարական երևույթներից մեկը։

Արամ Մանուկյան, Արամ փաշա, հենց միայն Արամ (Սարգիս-Սերգեյ Հովհաննիսյան, 1879—1919)։ 20-րդ դարի սկզբի հայկական իրականության ամենաազդեցիկ դեմքերից մեկն էր, գործընկերների վկայությամբ՝ հայոց նոր պետականության հիմնադիրը։ Ծնվել է Կապանի Ձեյվա գյուղում, մանկությունն անցկացրել Շուշիում՝ սովորելով Թեմականում։ Հեղափոխական տրամադրությունների համար Իշխանի, Մենակի, Խաչանի և ուրիշ ըմբոստների հետ ոստիկանության կողմից վտարվեց դպրոցից, անցավ Երևան, որի Թեմականում ևս Իշխանի և մյուսների հետ սերմանեց հեղափոխական, ազգափրկիչ գաղափարներ։ Երևանի Թեմականն ավարտելուց հետո, արդեն իբրև դաշնակցության զեկավար գործիչ, եռանդագին աշխատել է Գանձակում, Բաքվում, Կարսում, Թիֆլիսում՝

ամենից առաջ հայդուկային խմբեր ուղարկելով Երկիր, զինամթերք ու պարեն հայթայթելով կռվողների համար։

1904-ին նա արդեն Վանում էր, Իշխանի, Վռամյանի, Վահան Փափազյանի կողքին, կատարում էր իր՝ կուսակցական ամենահեղինակավոր ղեկավարներից մեկի պարտականությունը, որի պարտադրանքով հաճախ էր լինում եվրոպական կենտրոններում, իր կարևորագույն մասնակցությունն էր բերում կուսակցական, գաղափարական ու կազմակերպչական միջոցառումներին։ Եվ, այսուհանդերձ, նրա գործունեության հիմնական բնագավառը մնաց Վասպուրականը, ուր կենտրոնական դեմք էր, թուրքական բռնություններից հայությանը պաշտպանող խմբերի ուղեղն ու բռունցքը։

Արամը, որքան էլ ոգևորված ռուսական հեղափոխության ահագնացող թափով, գործունեության ամբողջ ընթացքում ունեցել է այն սնեռուն համոզումը, թե չի կարելի լոկ ուրիշների օգնությամբ հասնել ազատության և երջանկության։ Հայտնի է նրա կոչը՝ «Մեր հույսը մե՛նք ենք և պետք է ապավինենք միայն մե՛ր ուժերին»։

Իշխանի եղերական մահից հետո, Փանոս Թերլեմեզյանի, Արամ Եկարյանի, Բուլղարացի Գրիգորի, Կայծակ Առաքելի հետ միասին, կազմակերպեց Վանի ինքնապաշտպանությունը, Վասպուրականի հայությանը փրկեց վերահաս բռնություններից ու ջարդերից։ Թուրք ավելի քան 12-հազարանոց կառավարական զորքերի և ասպատակիչ խառնամբոխի դեմ կռվում էր Վանի պարիսպներից ներս քաշված և արտաքին աշխարհի հետ ոչ մի կապ չունեցող հայությունը, որը կարճ ժամանակում բավարար քանակությամբ զենք ու զինամթերք պատրաստեց և մի ամբողջ ամսվա պաշտպանությամբ ոչ միայն ապահովեց իր ազատ գոյությունը, այլև վիթխարի վնասներ պատճառեց թշնամուն։

1915-ի մայիսի 6-ին ռուսական զորքերն ու հայ կամավորների խմբերը մտան Վան և պաշտպանվողների հնարամտությամբ ու հերոսությամբ հիացած, լսեցին նրանց հաղթական ղեկույցը, որ հաշվետվություն էր նաև ազգի առաջ, մեր պատմության ու ճակատագրի առաջ։ «Ամսօրյա պայքարը,— ասվում էր այդ զեկույցի մեջ,— զոր տարանք փառքով ու պատվով, այսօր իր կատարելության մեջ կվայելենք... Այսօր ահա հայկական դրոշակն է, որ հեր-յուրավոր տարիներու ընթացքին առաջին անգամն է կծածանի, անարգ բռնությունը՝ հայ զինվորի գնդակեն հալածական, կփախչի... Եվ այսօր, երբ փառավոր պայքարն է մեր ետին, լիակատար հաղթանակն է, որ կապրինք, և վերջնական ազատությունն է մեր առջև...»։

Արամը, որպես Վանի խիզախ պաշտպանության կազմակերպիչ և համաժողովրդական վստահության ու սիրո արժանացած գործիչ, նշանակվեց Վասպուրականի նահանգապետ։

Այս պաշտոնում, դժբախտաբար, նա կարճ գործեց, միայն չորս ամիս։ Շուտով ռուսական զորքը նահանջեց։ Վասպուրականի հայության գաղթը հմտորեն ու նվազագույն կորուստներով ազողեցնելուց հետո նա Թիֆլիսում էր, գերազանցապես գաղթականության հոգսերով զբաղված։ Հետո էլ, 1917-ի վերջին, Ազգային խորհրդի որոշմամբ նշանակվեց Երևանի Ազգային խորհրդի նախագահ ու Արարատյան երկրի կառավարիչ՝ դիկտատորի անսահմանափակ իրավունքներով։

1918 թ. գարունը և մանավանդ Սարդարապատի հերոսամարտը մեծագույն քննություն էին Արարատյան երկրի առաջին ղեկավարի համար։ Նրա անհուն ջանքերով էր, որ կազմակերպվեց հայ ժողովրդի բոլոր խավերի միասնական ուժը, և թիկունքն էլ դարձավ այնպես ամուր ու ռազմունակ, ինչպես գեռ չէր եղել հայոց պատմության անցյալ դարերում։

Մայիսի 28-ին, 26-ի սարդարապատյան վճռական ու փառավոր հաղթանակից հետո, Թիֆլիսում հայտարարվեց հայոց նոր պետականության ծնունդը։ Ուրիշներն էին այդ հայտարարության հեղինակները։ Սակայն նույնիսկ նրանք հետագայում քանի՜ցս հաստատել են, որ այդ պետականությունն ստեղծող ուժերի մեջ առաջինի ու անհամեմատելի մեծության պատիվը նրա՜ն է պատկանում, Արամի՜ն։

Հայաստանի հանրապետության առաջին կազմում Արամն ղեկավարեցնում էր ներքին գործոց ու Պարենավորման նախարարի պաշտոնը։ Սակայն ցավալիորեն չափազանց կարճ ժամանակ ծառայեց իր ստեղծած պետությանը և հզոր մտքի, ուժի, հոգատարության այնքան շատ կարիք ունեցող իր ժողովրդին։ Հայաստանում մոլեգնած տիֆը 1919 թ. հունվարի 29-ին նրան էլ գերեզման տարավ։

Տասնամյակների դաժան լռությունից հետո մեծ գործչի

անունը նորից հնչում է իր ազգի երախտապարտ սերունդների շուրթերին։ Հուսանք, որ այս անգամ անլռելի և հավիտյան։

Քաջերի քաջը։ Անդրանիկը համարվում է հայ ազգի ամենաժողովրդական, ամենասիրելի անուններից մեկը։ Իսկ եթե նկատի առնենք նրա գործունեության շրջանը,— 19-րդ դարի վերջին տասնամյակի և 20-րդի առաջին քսանամյակի հայոց ազատագրական պայքարի, անկումների ու հաղթանակների, մահերի ու հառնումների շրջանը,—ապա առանց վերապահության կարող ենք ասել, որ այստեղ նա չունի իր մրցակիցը։ Այստեղ նա այն անունն է, որ ժողովրդական պայքարի դրոշի վրա էր բարձրացել, դարձել մաքառումի կոչ և հերոսության ու նահատակության տանող նշանաբան, դեռևս տիրոջ կենդանության օրով զարդարվել էր առասպելական երանգներով, հյուսվել մեր հազարամյա հերոսական ասքերին։

Թուրքական բռնապետության դեմ այս շրջանի մեր պայքարի հերոսները հայդուկներն էին, ֆիդայիները, կամավորները։ Նրանց կռվի էին տանում անձնազոհ, հայրենիքի սրբական զոհասեղանին իրենց կյանքը դրած հերոսներ։ Եվ այս հերոս առաջնորդների շարքում առաջինը, ամենանշանավորը, ամենաանդրանիկը շապին-գարահիսարցի Անդրանիկ Թորոսի Օզանյանն էր։

Նա ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին։ Կրթություն է ստացել Շապին-Գարահիսարի Մուշեղյան դպրոցում, 1884-ին փոխադրվել է Կոստանդնուպոլիս, աշխատել որպես հյուսն։ Սակայն հենց այդ տարիներին մոլեգնել էին օսմանյան կառավարության հակահայկական ճնշումները, և հայրենասեր երիտասարդը հրաժեշտ տվեց արհեստին ու խաղաղ կյանքին, նվիրվեց իր ազգի ազատագրության գործին։ 90-ական թվականների կեսերին Սասունում, Աղբյուր Սերոբի զորամիավորման մեջ, կռվում էր թուրք ջարդարարների դեմ։ Մի քանի տարի անց արդեն գլխավորում էր արևմտահայկական հայդուկային շարժումը։ Նրա գլխավորությամբ մի քանի հաջող ինքնապաշտպանական մարտեր են մղվել Մշո Առաքելոց վանքի մոտերքում, Վասպուրականի գավառներում։ Այս մարտերն էլ նրա անունը հայտնի դարձրին հայկական լայն շրջաններում։ Ժողովուրդը նրա հորդորներով զինվում էր, սովորում ինքնապաշտպանության գործը, պատրաստվում գալիք

ճակատագրական կռիվներին։ Իսկ ինքը՝ Անդրանիկը, փոխակերպվող ոգու նման ամենուր էր՝ հայդուկյան կռվի ճակատներում, Կովկասում ու Ռուսաստանի հայաբնակ վայրերում։ Ամենուր ոգի էր հանում հայրենակից ուժերին, զինում ու մղում դեպի պայքարի թեժ կետերը։

Շուրջ մեկ տասնամյակ՝ 1905—1914 թվականները, ապրելով Բուլղարիայում, Անդրանիկը եղել է նաև եվրոպական մի շարք երկրներում, կապ պաշտպանել հայոց ազատագրության ասատանդական նվիրյալների հետ, զենք ու զինամթերք հայթայթել, առաքել արևմտահայկական գավառներում գործող հայդուկային խմբերին։ 1912—13 թթ., որպես հայկական զորամասի վաշտի վոյեվոդա, մասնակցել է Բալկանյան պատերազմներին և Թուրքերի դեմ մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար արժանացել Բուլղարական կառավարության պարգևներին ու սպայական աստիճանի։

Երբ Բուլղարիայի կառավարության անունից բրիգադի հրամանատար Ալեքսանդր Պրոտոգերովը հայ կամավորներին պարգևատրել էր «Քաջության խաչեր» կոչված շքանշանով, Անդրանիկին էլ հանձնեց «Ռազմական քաջության ոսկե խաչ» բարձրագույն պարգևը, մարտաշարքերի առաջ ասաց. «Բոլորդ էլ կռվում էիք առյուծների պես։ Սակայն քաջության ոսկե խաչը հազվագյուտ բան է և տրվում է միայն քաջերի քաջի՞ն»։

1914-ից Անդրանիկն արդեն հայրենիքում էր։ Ռուս-թուրքական ռազմաճակատում, հայկական կամավորական առաջին ջոկատի գլուխն անցած, նա խիզախորեն կռվում էր թշնամու գերազանց ուժերի դեմ և աչքի ընկավ Աշնակի ու Սարայի, Մոլլա Հասանի ու Բարդուղիմեոսի վանքի, Բաշկալեի ու Հայոց ձորի, Աղթամարի ու Դատվանի, Արճեշի ու Բերկթիկալեի կռիվներում։ 1915-ին Դիլմանի ճակատամարտում ռուսական զորամասը խալիլ փաշայի մեծաքանակ բանակին գլխովին ջարդեց հիմնականում Անդրանիկի զորաջոկատի ռազմական մանևրների շնորհիվ։

Ռուսական հրամանատարությունը բարձր է գնահատել կամավորական առաջին ջոկատի մարտական ծառայությունները՝ նրա հրամանատար Անդրանիկին պարգևատրելով մարտական շքանշաններով, իսկ 1918-ի հունվարին նրան շնորհելով գեներալ-մայորի կոչում։ Մեկ ամիս անց Անդրանիկն արդեն

գլխավորում էր հայկական առանձին հարվածային զորամասը, որի վրա էր դրված էրզրումի պաշտպանությունը։

Մանր օրեր էին։ Կազմալուծվել էր Կովկասյան ռազմաճակատը, ռուսական բանակը մեծ մասամբ տուն էր վերադարձել, և թուրքական մահաբեր հեղեղի դեմ կանգնած էին հիմնականում հայկական զորաջոկատներն ու կամավորական խմբերը։

Էրզրումն ընկավ։ Թշնամին առաջ էր շարժվում ավեր ու մահ տարածելով։ Հայկական կողմը պաշտպանական մարտեր մղելով նահանջեց։ Անդրանիկի զորամասի խնդիրն էր ապահովել արևմտահայ բնակչության մնացորդաց գաղթը Արաքսի ձախ ափը, որը նա իրականացրեց իրեն հատուկ հնարամտությամբ ու խիզախությամբ։

1918 թ. առաջին ամիսները հայկական ճակատի ձախորդությունների շրջանն էին։ Մեկը մյուսի հետևից թուրք նվաճողներին հանձնվեցին Սարիղամիշը, Կարսը, նույնիսկ Ալեքսանդրապոլը։

1918-ի հունիսի սկզբին, երբ կնքվել էր Բաթումի տիրապետական դաշնագիրը, որով փաստորեն վարկաբեկվում էին Սարդարապատի ու Բաշ-Ապարանի անօրինակ հաղթանակները ու Ղարաքիլիսայի նահատակների հիշատակը, Անդրանիկը, գաղթականների մի ստվար խմբի հետ իր զորամասն առած, Դիլիջանից հեռացավ դեպի Նախիջևան, որտեղից էլ անցավ Արաքսի աջ ափը, որպեսզի օգնության հասնի Վանից գաղթող հայ զանգվածներին։ Այստեղից, թուրքական գերակշիռ ուժերի ճնշման տակ, վերադարձավ Նախիջևան, այն ազատից հակահեղափոխական ուժերից և 1918 թ. հուլիսի 14-ին Նախիջևանից հեռացրեց Բաքու՝ Ստեփան Շահումյանին, հայտնելով, որ ազատագրված Նախիջևանը համարում է խորհրդային Ռուսաստանի անբաժանելի մասը և իր զորամասը գնում է խորհրդային կառավարության տրամադրության տակ։ Շահումյանն անմիջապես ողջունեց Անդրանիկի վճիռը՝ նրան կոչ անելով դիմակայելու թուրքերի առաջխաղացմանը։

Սակայն թուրքական հրամանատարությունն ամենալուրջ նշանակություն էր տալիս Նախիջևանին. թուրքերն այստեղ պիտի միավորվեին մուսավաթական ռազմական ուժերի հետ և շարժվեին Բաքվի կոմունայի վրա։

Այս անգամ էլ հայկական փոքրաքանակ զորամասը պիտի տեղի տար՝ անցնելով Զանգեզուր, որտեղ Անդրանիկը հույս ուներ Ղարաբաղի ու Գանձակի վրայով հասնել Բաքու և զորավիդ դառնալ Շահումյանին։

Մուսավաթականները, անպլիական ստոր հովանավորությամբ, Անդրանիկի դեմ փակել էին Ղարաբաղի դռները։ Այն ժամանակ զորավարը կարճ ժամանակում Զանգեզուրը մաքրեց սև ուժերից, քանի՞-քանի անգամ հետ վանեց թուրքերի ու մուսավաթականների հարձակումները։ Իսկ 1919 թ. ապրիլին վերադառնալով էջմիածին, ցրեց իր զորամասը։ Նավոք, նա չկարողացավ Հայաստանի հանրապետության կառավարությունների հետ։ Զբաղվել էր հայության հանդեպ Անտանտի տերությունների վարած երկդիմի քաղաքականությունից, զայրույթով տեսնում էր, թե ինչպես չի հայրենիքի իրավունքները ոտնահարվում են հարևան մուսավաթական ու մենշևիկյան կառավարությունների կողմից, ուստի և որոշեց հեռանալ արտասահման։

Ապրելով ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում՝ Անդրանիկը գործնական մասնակցություն էր ունենում հայկական կյանքին։ Բազմիցս հանգանակություններ էր կազմակերպել գաղթականներին ու որբերին օգնելու համար։ Ջերմորեն ողջունեց մայր երկրի վերակառուցման ընթացքը և իր զորավարական թուրն ուղարկեց Հայաստան։

Անդրանիկը մահացել է 1927 թ. օգոստոսի 31-ին։ Հաջորդ տարում աճյունը փոխադրվել է Փարիզ, ամփոփվել Պեր-Լաշեզ գերեզմանատանը։ Անշուք շիրմաքարը ներկայացնում է հեծյալ զորավարին՝ հայրենիքի ազատագրության համար դեպի մարտ սուրալիս։

* * *

Եվ այսպես փակվեց հայոց ազատագրական-ինքնապաշտպանական պայքարի նորագույն քառասնամյա շրջանը։ Հերոսամարտերը վարող զանգվածներն ու անհատ հերոսները քառասուն տարիների համարյա շընդմիջվող ընթացքում ցույց տվին սննդանյութ քաջության օրինակներ, հայրենի հողի ու մարդ ժողովրդի սրբազան կռիվը մի այնպիսի նվիրվածու-

թյուն, որպիսին չդիտեր նույնիսկ նահատակություններով հարուստ մեր սեփական պատմությունը։

Շուրջ յոթանասուն տարիների ամոթալի լռությունից հետո մենք նոր միայն իրավունք ենք ստացել խոսելու նրանց մասին, արտահայտելու մեր հիացումն ու երախտագիտությունը։ Իսկ որքա՞ն ժամանակ է պետք, որպեսզի մեզ փոխանցվեն նրանց ուժն ու վեհանձնությունը, քաջությունն ու նվիրյալի սուրբ զգացումները, որոնք պետք է փոխանցված լինեին ժառանգության իրավունքով... Սակայն չէին փոխանցվել, քանի որ դեռևս մեր ծնունդից առաջ պատերազմները խլել էին մեզանից։ Խլել էին և օտարել։

Ապավինենք ամենազոր ժամանակին։ Նրա՛ն, որ բոլոր ցավերի բուժողն է, բոլոր հարցերի լուծողը, ամենասուր ծովածքների հարթողը։

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Դերված էր մեր ազգը, կանգնած իր պատմության ամենածանր, ամենաահավոր արհավիրքի առաջ, ավերի ու կրակների մեջ։ Եվ, այսուամենայնիվ, նրա լուսավոր գավակները հավատում էին, որ իբրև փյունիկ դեռ կելնի «գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր», վերստին կանցնի իր ընտրած ճանապարհը, որ «սուրբ է ու հին» (Վ. Տերյան)։

Բայց ինչպե՞ս։ Ո՞րն էր ելքն այդ արհավիրքից, ավերից ու հրդեհներից։

1914 թ. դեկտեմբերին «Մշակ» թերթի լորս (26, 27, 28, 30) համարներում լույս տեսավ Վահան Տերյանի մի հոդվածը, որն ուներ շատ խորհրդանշական խորագիր՝ «Հոգևոր Հայաստան»։ Իր նուրբ, ինքնատիպ ու ցավագնորեն հայրենաշունչ քնարերգությամբ ընթերցող լայն շրջանները նվաճած բանաստեղծն այստեղ ճակատագրի ամենադաժան հարվածի առաջ կանգնած հայրենիքի փրկության ու հարատևումի գեղատոմս էր առաջարկում, և նրա մեջ գրված էր «Հոգևոր Հայաստան»։ Մենք պետություն չունենք, մենք սրով չենք կարող լուծել մեր բախտի վրա ծանրացած գորդյան հանգույցները, իսկ մեծ տերությունները ծարավի են միայն մեր վերջին արյան...

Հոգևոր Հայաստան՝ այս էր Վահան Տերյանի գտած միջոցը, որ նաև ճանապարհ էր։ Պատմական այս ամենադաժան ճամփաբաժանի վրա մեր փրկությունը հոգևոր Հայաստանն է՝ պատմության քառուղիներում միշտ էլ հովանի եղած մեր ազգային գոյությանը, մեզ պահած-պահպանած ամենաճակատագրական այնպիսի բախումներում, որոնց չէին դիմացել մեզանից առավել մեծ, իրավ հզոր ազգեր ու պետություններ։

Տերյանը նախ և առաջ հոգևոր Հայաստանի հաղթանակի

առաջին ու ամենապարտադիր պայմանն էր համարում համազգային միասնությունը։ Նրա՞նց դեմ, ովքեր հայրենիքի բախտը կապում էին լոկ արևմտահայությանը խոստացված ինքնավարության կամ որևէ նման կիսատ-պռատ որոշման հետ, նա հանում էր ամբողջ ազգի, ամբողջ Հայաստանի, միասնական երկրի ու նրա վրա մեկտեղված ազգի միասնության անհետաձգելի ապահովումը։ Եվ սրա նախապայմանն էլ համարում էր «ամբողջ հայության կուլտուրական ապագայի խնդիրը»։

Հոգևոր Հայաստա՞ն։ Նրա շենքը պիտի կառուցվի մեր հազարամյա հոգևոր ավանդների ու գանձերի մեկտեղումով ու վերհանումով, անդադար զարգացումով։ Որպեսզի չկորչի ոչինչ. «Չէ՞ որ նյութական կորուստները միշտ կարելի է վերադարձնել, իսկ հոգևոր կորուստն անդառնալի է»։ Տերյանը համոզված էր, որ «...ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծե այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչյաներն են»։

«Այդ Հոգևոր Հայաստանի կառուցումը,— գրել է Տերյանը,— ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տոկուն հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի ահավոր դոհաբերում, քան արյունի զոհաբերումը»։

Բանաստեղծը, ի՞նչ խոսք, հոգևոր Հայաստանը չէր հակադրում մարմնավորին, պետական ու քաղաքական ինքնություն ունեցող, ուրիշների առաջ իր արժանապատվությամբ հանդես եկող հայրենիքին։ Հակառակը, դրանք իրարով էր պայմանավորում՝ համոզված, որ երբ ժողովուրդը դառնա ազգային հոգեբանությամբ ու հոգևոր իր հարստությամբ ամբողջացած միավոր, այն ժամանակ «կենդանի կլինի մեր հայրենիքը, ուրեմն կենդանի կլինի և այն Հայաստանը, որի համար մեր ժողովուրդը թափում է այսօր իր արյունը»։

Հոգևոր Հայաստա՞ն։ Եվ այն ստեղծելու, շրջապատի ավերիչ ուժերի դեմ հանելու համար անհրաժեշտ էր համազգային մի աննախընթաց շարժում, մեր սեփական գրական ու մշակութային ուժերի, մեր հոգևոր հարստությունների աննախադեպ վերելք։

Սակայն հոգևոր Հայաստան կառուցելու կոչը 1914-ին

Տերյանի կողմից միայն գրոշի վրա էր բարձրացվել։ Ըստ էության այն կար նաև նախընթացին. Հ. Թումանյանի, Թ. Թորամանյանի, Կոմիտասի և ուրիշ մեծերի կողմից աս արեզ էր քաշվել և ապրում-գործում էր իբրև մեր ազգային կյանքի ճշմարիտ ճանապարհ։

Թորոս Թորամանյանը Ռուսաստանի ու եվրոպական քիտական կենտրոններին արդեն ստիպել էր ընդունել, որ հայ ժողովուրդն ունի իր հազարամյա ինքնուրույն ճարտարապետությունը, ճարտարապետական իր սեփական-ինքնատիպ ոճը, որը համաշխարհային ճարտարվեստի պատմության ամենաուշագրավ էջերից մեկն է։

Կոմիտասը Կովկասում ու Եվրոպայում երաժշտության ամենաներբին գաղտնիքների մեջ խորանալով՝ իր հայրենի ժողովրդական ու հոգևոր երաժշտության գանձերն էր հավաքել, ուսումնասիրել, համերգներով, դասախոսություններով, քարոզչական անհուն գործունեությամբ ազգակիցներին ու օտարներին ցույց տվել, որ հայ ժողովուրդն ունի իր սեփական, ինքնուրույն, ինքնատիպորեն հարուստ երաժշտական հարստությունը։ Եվ երբ 1913-ին Պոլսի «Աղատամարտում» տպագրեց իր «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» ուսումնասիրությունը, համայն Կովկասի, Ռուսաստանի ու Եվրոպայի համար դա այլևս հարց չէր, այլ մի անմեռ ճշմարտություն, որի թիկունքում կանգնած էին հայ ժողովրդի բոլոր բարեկամները, երաժշտական աշխարհը։

Մի՞թե պատահական պիտի համարել, որ Համիդյան ջարդերի անմիջական նախօրեին և հաջորդ շրջանում Յուրի Վեսելովսկին ու նրա հայ գործընկերներն իրար հետևից տպագրեցին հայկական քնարերգության հին ու նոր գոհարների թարգմանական հատորները։ Իսկ Մեծ եղեռնի հաջորդ իսկ տարին, 1916-ին, լույս տեսավ Վալերի Բրյուսովի կազմած «Հայաստանի քնարերգությունը» հոյակապ հատորը, որի առաջաբան-լայնահուն ուսումնասիրության մեջ ինքը՝ Բրյուսովը, հայտարարում էր, թե հայոց այս քնարերգությունը համաշխարհային պատմության մեջ մարդկային ոգու ամենավսեմ հաղթանակներից մեկն է, որով հայ ազգն իր համար ապահովել է «ազնվականական վկայագրություն», «патент на благородство»։

Այսպիսի շարժում էր ծավալված նաև հայոց մշակույթի մյուս բնագավառների՝ դպրոցի ու լուսավորության, թատրոնի ու ձեռագրական հարստության, ժողովրդական արվեստների ու արհեստների վերհանման, գնահատման համար։ Եվ այս բոլորն արվում էր, ամենից առաջ, հայ ազգի վրա աշխարհի խիղճը ջերմացնելու համար, թուրքի եղեռնատենչ ախորժակի առաջն առնելու համար։ Կարծես ամենուրեք հայ ժողովրդի զավակները, նրա իսկական բարեկամները, բոլորն առանձին-առանձին և միահամուռ ու միաձայն, կրկնում-երկինք էին հանում Խաչատուր Աբովյանի վկայակոչած զրույցի հերոսի աղաղակը. «Անօրեն, էդ ո՞ւմ ես սպանում», կամ հենց իր՝ հայոց վերքի ու վերածնության մեծ երգչի ահեղ խոսքն էին տարփողում հայակեր թուրքի դեմ, աշխարհի աչքի առաջ ու ականջի տակ. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»։

Եվ ահա այստե՛ղ է, որ հոգևոր Հայաստանի համար սկըսված համասփյուռ շարժման գլուխ կանգնած ենք տեսնում Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որն այն տարիներին պարզապես մարմնավորում էր հայ ազգի ոգին ու խիղճը։

Հայ մեծագույն բանաստեղծն ու մտածողը, հասարակական անպարագիծ լայնքի գործիչը, որի ստեղծագործությունը Բրյուսովը համարում էր «Հայաստանն ինքը՝ հնագույն ու նոր, հարություն առած ու բանաստեղծություն դարձած մեծ վարպետի ձեռքով», դեռ երեսուն տարեկան՝ ազգային գրականության ու մշակույթի ոահվիրայի դերն էր ստանձնել և հոր հոգատարությամբ ու իմաստուն առաջնորդի անսխալականությամբ գլխավորում էր հոգևոր Հայաստանի գործը։ 1899-ին նրա ստեղծած «Վերնատուն» գրական խմբակը հիմք դարձավ իր իսկ նախաձեռնությամբ 1912-ին կազմակերպված Հայ գրողների ընկերության համար։ Եվ այս ընկերությունը շուրջ տասը տարվա գոյության ընթացքում, անփոփոխ նախագահ Թումանյանի գլխավորությամբ, համախմբեց ու գործուրալից վերաբերմունքով զարդացրեց հայոց գրական ուժերը՝ նույն հոգատարությամբ շրջապատելով նաև հայկական արվեստների, հայագիտական ուժերի ներկայացուցիչներին, պաշտպան կանգնելով յուրաքանչյուր թարմ ծիլին, իր ուշադրության կենտրոնում պահելով ազգի հոգևոր անդաստանի ամեն մի տունկը։

1914-ին սկսված Առաջին աշխարհամարտն իր հեռաբեկիչ երևույթով հայությանը բերել էր հույսերի ինչ-որ փթթում, խլբրտում։ Եվ Թումանյանը կաուչել էր նաև այդ երևույթից՝ կոչ անելով. «Պարզ հասկանալ մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր գրականությունը, մեր պատմությունը ու մեր պատմական հիշատակարանները։ Մինչև այժմ նրանք խոսել են մեր սրտի հետ, և մենք սիրել ենք զգացմունքով, անխտիր, հախուռն, առանց հասկանալու, թե ի՞նչ ենք սիրում և ինչո՞ւ։ Այժմ գալիս է ժամանակը՝ նրանց էությանը ներհմուտ լինելու, նրանց լեզուն ու միտքը հասկանալու, և էդ նպատակի համար են և՛ Գրական ընկերություն, և՛ Երաժշտական ընկերություն, և՛ Պատմական ընկերություն, և ուրիշ նման ընկերություններն ու մասնավոր ձեռնհաս անհատների ջանքերը»։

Եվ նա ինչպե՞ս գործնականորեն ու տեսականորեն գլխավորում էր հոգևոր Հայաստանի հիմքերին ու բազկացուցիչներին վերաբերող հարցերի լուծումը՝ հայոց լեզվի կատարելագործման, հայոց պատմության, իսկական հայագիտության ստեղծման, հայոց հին ու նոր արվեստների ժողովրդականացման, մշակման խնդիրները։

Ինչքա՞ն ճառեր է ասել, հոդվածներ գրել, քննել ու առաջարկություններ արել՝ հիմք ունենալով հայոց լեզվի օրակարգի հարցերը, որովհետև հավատացած էր, որ հոգևոր Հայաստանի պատվանդանը հայերենն է. «Լեզուն է ամեն մի ժողովրդի գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»։

Պահանջում էր գրել հայ ժողովրդի ճշմարիտ պատմությունը, քանզի գիտեր, համոզված էր, որ պատմությունն ազգի Այսօրվա և Վաղվա ուղեցույցն է («պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփին անմոլոր գնալու համար»)։ Հայը պետք է իմանա իր պատմությունը, իսկ դրա համար պետք է համատե-

դել գիտնականների ջանքերը, ստեղծել մեր արդար պատմությունը, «մեր շատ թշնամի ու քիչ բարեկամ տեսած ցեղի» մի այնպիսի ճշմարիտ պատմություն, «որ ուրիշներն էլ ճանաչեն նրան, ինքն էլ ճանաչի իրեն»։

Բայց դրա համար գիտական, բազմակողմանիորեն զարգացած, քաջատեղյակ ու տաղանդավոր ուժեր էին հարկավոր, գիտական հաստատություններ, Հայկական Ակադեմիա, որի ստեղծման համար նա ազգի բոլոր խավերի ուշադրությանն էր դիմում, կոչ էր անում չխնայել ոչ մի միջոց, բաց չթողնել ոչ մի հնարավորություն։ Նա դարձել էր Հայոց Ակադեմիայի, այն առումով հայագիտության կենտրոնի ստեղծման կազմակերպիչը, ոգին։ Պետերբուրգի հայկական գաղութը միջոցներ էր գրել այդ գործի հիմքում։ Հայկական բարեգործական ընկերություններն իրենց նյութական աջակցության պատրաստակամությունն էին հայտնել։ Եվ մեծ բանաստեղծը դարձել էր համազգային եռուզեռի կենտրոնը. նամակներ հղեց Նիկողայոս Մառին, Գալուստ Տեր-Մկրտչյանին, Մեսրոպ Տեր-Մովսիսյանին, Հրաչյա Աճառյանին, Գրիգոր Ղափանցյանին, Մեսրոպ Վարդապետի միջոցով՝ Գարեգին Հովսեփյանին, հորդորեց գործի անցնել, ստեղծել եվրոպական մակարդակի հայագիտություն։ «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերեն լեզվով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ, Հայկական Ակադեմիա»։ Եվ գիտեր, զգուշացնում էր, որ միջոցների սղությունն ու ժամանակի անհամարությունը չեն կարող խանգարիչ հանգամանքներ լինել, քանի որ «հայ ժողովուրդը ի՞նչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է, չնայելով նեղ ու դառն ժամանակին»։ Հույսը գնելով հայ ժողովրդի ոգևորության վրա՝ ուրիշներին էլ հորդորում էր հավատալ գործի հաջողությանը, որովհետև «մի ուժ կա, որ փոքրին էլ դարձնում է մեծ, տկարին դարձնում է հզոր և հաղթություններ է ապահովում ու սխրալի գործեր։ Դա ժողովուրդների ոգևորությո՞ւն է»։

Այս բոլոր գործերի, բազմաբնագավառ այս գործունեության մեջ, հոգևոր Հայաստանի համար ծավալած այս անդադրում տքնանքի մեջ կա մի վեհ ու սքանչելի գործոն, որ չի կարելի առանձնապես չնշել։ Դա Թումանյանի հավատն է մեր ազգի

ներքին կարողությունների, համառ ու անկոտրում ոգու հանդեպ։ «Մեծ աղետի օրերում էլ նա, ասես թե մի վերածնունդ նախատեսելով, շարժվում է լայնածավալ ու բազմակողմանի»... Եվ հոգևոր Հայաստանն ապահովող, նրա կենսական ակունքներն անկանգ ու առատաբաշխ դարձնող նորաստեղծ ընկերությունները թվարկելով՝ վերստին հիշում է հայ ազգի անկոտրում ոգին։ Ասում է. «Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՝ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա ոգու հետ ի՞նչ ես անելու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ քարերից էլ կարող է Աբրահամու զավակներ հառուցանել և դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ժողովուրդ»։

* * *

Երբ 1920 թ. վերջին Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետության սանձերը հանձնեց հայ բոլշևիկներին, մեր փոքրիկ հանրապետությունը բոլոր կամ համարյա բոլոր հնարավորություններն ուներ հոգևոր Հայաստանի անանխընթաց զարգացման, նոր մեծագործությունների համար։ Մանավանդ որ 1921 թ. սկզբին հանրապետության գլխավոր դարձած Ալեքսանդր Մյասնիկյանն էլ, անմիջաբաց հասկանալով ազգահավաքի, մեր բազմադարյան հոգևոր ժառանգության տերերին ու սպասարկուներին ի մի բերելու պարտադրանքը, ստեղծել էր խանդավառ մի շարժում՝ հայ բոլոր մեծերին Երևան հավաքելու համար... Կարճ ժամանակում հայոց հողի վրա հոգևոր Հայաստանի կառուցմանը պետի լծվեին ժամանակի հայ ամենակարող ուժերը՝ Ալեքսանդր Թումանյանը, Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, հետագայում Ավետիք Իսահակյանը... Գրականություն էին եկել երիտասարդ տաղանդավոր ուժեր (Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի, Նաիրի Զարյան և այլ)։ Արվեստի ու գիտության բնագավառներն ապրում էին ստեղծագործական օրոնումների, հայտնությունների հոգեպարար շրջան։ Հայոց գրականության ու մշակույթի անանխադեպ զարգացմանը սնունդ էին տալիս ոչ միայն ազգային ավանդները, այլև ռուսական ու համաշխարհային ասպարեզներում գլուխ բարձ-

բացրած նոր, առաջադիմական հոսանքները։ Հայ ժողովուրդը պիտի ապրեր իր հոգևոր զարգացման իսկական ոսկեդարը։

1922 թ. Հ. Թումանյանն արտասահմանում գտնվող Ավ. Իսահակյանին տուն էր կանչում՝ հաղորդելով, որ այնտեղ գրականության ու մշակույթի վերաբերմամբ նոր կառավարությունն ունի մի արտակարգ հոգատար վերաբերմունք։ Եվ դա ո՛չ դայթակղեցնելու խոսք էր, ո՛չ էլ ավելորդ լավատեսություն։

Նոր կառավարությունն Ալեքսանդր Մյասնիկյանի գլխավորությամբ իսկապես բուռն ու գեղեցիկ մի շարժում էր սկսել հոգևոր Հայաստանի կառուցման համար... Սակայն 1925-ին այդ մեծ հայ լուսավորիչը զոհ գնաց ստոր դավադրության։ Այնուհետև Հայաստանում աստիճանաբար սկսեց տիրական դառնալ խորհրդային Միությունում մոլեգնող ստալինյան բռնությունը, և հոգևոր-մշակութային կյանքն առնվեց փշալարերի այնպիսի ցանկապատի մեջ, որը խեղդելու էր ազգային ամեն շունչ ու կենդանություն։

Եղան, իհարկե, երջանիկ բացառություններ, որոնք և կենդանի պահեցին հոգևոր Հայաստանի ու նրա կատարելության երազանքը։ Օրինակ, հայոց նոր ճարտարապետությունը բարեբախտություն ունեցավ զարգանալու համեմատաբար նպաստավոր պայմաններում։ Նախ՝ նրա ակունքում կանգնած էր և առաջին (ու երկրորդ) քայլերը գլխավորեց այնպիսի մեծություն, ինչպիսին Ալեքսանդր Թամանյանն էր։ Հայտնի է, որ այս հանճարեղ կառուցողի լավագույն գործերի և հատկապես կառավարական տան ճարտարապետական կերպարի դեմ ևս եղել են զանազան հարձակումներ և այն էլ 30-ական թվականների կեսերին։ Ասել են՝ խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի սրտում եկեղեցական շինություն է կառուցում։ Ասել են՝ հայկական նոր ու հեղափոխական ճարտարապետության ընթացքը շուռ է տալիս դեպի ետ, դեպի մռայլ միջնադար...

Մենք գիտենք, թե այսօրինակ մեղադրանքների վերջն ի՞նչ էր լինում այն ժամանակ ու նրանից հետո։ Սակայն մեծ բարեբախտություն էր, որ հարվածներն իր վրա էր ընդունում այնպիսի անհողդողդ հսկան, ինչպիսին Թամանյանն էր, և նրան պաշտպան էր կանգնած Արամայիս Երզնկյանի պես հայազարմ ու խիզախ մի գործիչ։ Վերջինիս պիտի փոխարիներ Գրիգոր Հարությունյանը, որը դարձավ Թամանյանական գործի և ուղղության հովանավորը, իր իշխանության կարճ ու ձախողակ շրջանում (ընդամենը 15 տարիներ, որոնցից չորսը՝ պատերազմական) գլխավորեց մեր մայրաքաղաքի Թամանյանական նախագծի իրականացումը... Այս պատճառով էր, որ հնարավոր դարձավ ճարտարապետական մեր մշակույթի շատ թե քիչ բնականոն զարգացումը։ Այս հիմքի վրա էր, որ բարձրացավ մեր քարարվեստի մյուս մեծի՝ Թաֆայել Իսրայելյանի ստեղծագործությունը, մանավանդ Սարդարապատի հուշահամալիրը։

Հայկական նոր արվեստի մյուս բնագավառներում ևս կային անխոցելի հսկաներ. Մարտիրոս Սարյանը՝ գեղանկարչության բնագավառում, Արամ Խաչատրյանը՝ երաժշտության... Նրանց վրա քի՞չ հարվածներ են տեղացել։ Բայց անհերթ մնացին նրանք և օրինակ եղան իրենց հետևից ընթացող սերունդների համար։

Թատրոնը մեծ առաջաքայլեր կատարեց։ Հայ բեմի մեծ վարպետների՝ Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Արուս Ոսկանյանի, Վաղարշ Վաղարշյանի և մյուսների կողքին աճեցին, բարձրացան նոր հրաշալի արվեստագետներ, որովհետև Թատրոնն ունի իր առանձնահատուկ ու շատ կարևոր մի պայմանը։ Եթե դրամատուրգիայում ժամանակակիցները դատապարտված են լռության, և նոր դրամատուրգների շարքում չկա բեմը փոթորկող մեծություն, ապա, միևնույն է, բեմ են բարձրանում անցյալի հանճարները, և Թատրոնն ապրում, նույնիսկ ծաղկում է դասականների տված սնունդով։

Մեր հանրապետության գիտությունը ևս ինչ-որ չափով ապահովված էր արտասովոր վայրիվերումներից։ Մանավանդ բնական ու ճշգրիտ գիտությունների բնագավառները, որոնց զարգացումն ահա քանի տասնյակ տարի ընթանում է ժամանակակից խոշորագույն գիտնական Վիկտոր Համբարձումյանի ընդհանուր ղեկավարությամբ։ Եվ պատահական չէ, որ հայ աստղաֆիզիկոսների ու մաթեմատիկոսների անունները վաղուց հայտնի են աշխարհին։

Իսկ գրականությո՞ւնը։ Այստեղ շատ ավելի դժվար էր ու բարդ։ 30-ական թվականներին արդեն կարծես պատնեշ էր քաշված նորի ու դասական գրականության միջև։ Օտարացրել

էին նաև արևմտահայ գրականությունը՝ նրա լավագույն և ուսանելի այն գասերով, որոնք պիտի քաղվեին հատկապես 19-րդ դարի վերջի ու քսաներորդի սկզբի եվրոպաշունչ ժառանգությունից։ Եվ որ առավել ցավալի էր, 30-ականների երկրորդ կեսին արդեն լավագույն նորերը զնդակահարված էին կամ բանտարկված, հայրենադարձ Իսահակյանը՝ համարյա դատապարտված ամլության, նորերը՝ միշտ ենթակա գանահարության։ Պաշտոնական շրջանների կողմից արդեն ընդունելի դարձած Նաիրի Զարյանի լավագույն գործերն անգամ (օր. «Արա Գեղեցիկը») սվիններով էին ընդունվում։ Էլ ի՞նչ խոսենք նոր բարձրացողների՝ Հովհաննես Շիրազից մինչև Պարույր Սևակ ձգվող մեր բանաստեղծական հույլի, արձակի բարձր շունչը պահողների (Դերենիկ Դեմիրճյանից ու Ստեփան Զորյանից մինչև Հրանտ Մաթևոսյան) մասին, որոնց լավագույն գործերը կամ չեն գրվել, կամ եթե գրվել են, ապա անպայման իրենց վրա ունեն կարկտահարության ու ցրտահարության մռայլ հետքեր։

Զմոռանանք, որ Հայաստանում միշտ էլ հոգևոր ամեն տեսակ արհավիրքները շատ ավելի կործանարար են եղել, քան Միության ուրիշ որևէ գոտում։ Ինչո՞վ բացատրել այդ ցավը, մեր գաղափարական բնագավառի զեկավարների չար եռանդո՞վ, թե՞ մի այլ պատճառով։ Այդ զեկավարները մտքի, ստեղծագործության նվազագույն ազատություն չէին հանդուրժում ո՛չ միայն սեփական տանը, այլև Սփյուռքում։ Եթե մոսկովյան որևէ ամբիոնից պիտի, այսպես կոչված, ինքնաքննադատական բարբաջանքով գրաղվեին, ապա դրա կեսը պիտի վերաբերեր սփյուռքահայությանը, հատկապես հայ հեղափոխական դաշնակցությանը։ Չկար մեկը, որ նրանց ականջը քաշեր, ասեր՝ արտասահմանում կա մի ամբողջ Ռուսաստան՝ իր հակախորհրդային գաղափարախոսությամբ, կյանք ու գործով, տեսե՞լ եք, որ այդ նույն ամբիոնից երբևէ կոիվ տան այն Ռուսաստանի դեմ։ Այդպիսի բան չի եղել և չէր կարող լինել... Այդ պատճառով էլ, երբ ճանապարհները բացվեցին, երբ հնարավոր դարձավ հրապարակել նաև իսկական գրականություն, պատմություն, հասարակական այլևայլ գիտություններ, ռուսական գրքի շուկան լցվեց իսկական մեծերի թոռներից հանված անհամար բարձրարժեք ստեղծագործություններով։ Իսկ մեզ մոտ լույս աշխարհ հանելու համարյա ոչինչ չկար, եթե չհաշվենք Գուրգեն Մահարու և ուրիշ մի քանիսի փոքրաքանակ գործերը...

Եվ, այսուհանդերձ, կա հայ նոր գրականություն։ Նրա լավագույն ներկայացուցիչները, ավագ ու կրտսեր, առաջ են տանում մեր բազմադարյան գրականության ավանդները, և չի կարելի չհավատալ վաղվա բարերեր հունձքին։

Այդ առատաբաշխ հունձքը կունենան նաև մեր մշակույթի մյուս բնագավառները, կունենա մեր նոր հոգևոր Հայաստանը, որովհետև նրան են ծառայում մեր անցյալի մշակութային գանձերի ժառանգորդ, վիթխարի փորձ ու հմտություն ունեցող նվիրյալները։ Վերջապես հիշենք Վահան Տերյանի պատգամը, որ նաև անխոսն հավատի արտահայտություն էր. «Այդ Հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ուշադրական աշխատություն է պահանջում» և առավել մեծ ու սրբազան, առավել աղնիվ ու դժվար մի զոհաբերում, քան արյան զոհաբերումը։

ԵՂԵՌՆ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒԴ

Երբ օսմանա-թուրքական հարյուրամյա հայրերից ժառանգած հայակուլ քաղաքականությամբ երիտթուրք արնախումներն արդեն իրականացրել էին Արևմտյան Հայաստանն առանց հայի թողնելու իրենց հրեշավոր վճիռը,

Երբ դեռ տաք էին Վանի ու Սասնո, Շապին-Գարահիսարի ու Զեյթունի, Ուրֆայի ու Մուսա-լեռան խիզախ ինքնապաշտպանության հրդեհներից մնացած մոխիրները, իսկ Դեր-Զորում ու արաբական անապատներում բռնագաղթի ենթարկված անպաշտպան հայ խլյակների օգնության վերջին հիլերն էին մարում,

Քաղաքակիրթ աշխարհի թմրած խիղճը, դաժան օրերին ունեցած առկայծումներից հետո, ծռաս ելավ մեկեն, և նրա պատգամախոսները դարձած տասնյակ ու հարյուրավոր մտավորականներ՝ լրագրողներ ու գիվանագետներ, գրողներ ու իրավաբաններ, եկան, տեսան, ապշեցին։ Նրանց աչքերի առաջ ահագնորեն բացվել էր հայ ժողովրդի դժոխային սպանդը, մարդկային պատմության մեջ չեղած-չտեսնված մի չա-

բագործություն, որի դեմ մանկական շար խաղեր էին թվում հին աշխարհում ու միջնադարում, աշխարհի չորս ծագերում կատարված բոլոր հայտնի վայրագությունները։

Ֆրանսիական հրապարակախոս Անրի Բարբին անձամբ շրջել էր Արևմտյան Հայաստանում և 1916 թ. սարսուռով գրեց, թե ամայացած անսահման տարածությունների վրա «չկա ո՛չ մի ծառ, ո՛չ մի ժայռ, մամուռի ո՛չ մի ծվեն, որ վկա եղած չլինի մարդկային կոտորածի», թե «չկա մի առու, գետ ու գետակ, որն իր հետ դեպի մոռացության տարած չլինի հարյուրավոր, հազարավոր խեղված մարմիններ։ Չկա ո՛չ մի անդունդ, ո՛չ մի կիրճ, որ դարձած չլինի բացօթյա դագաղ, որի խոր հատակին ճերմակին շտան կմախքների կույտերը, քանի որ դահիճները համարյա ոչ մի տեղ ո՛չ ժամանակ են ունեցել, ո՛չ էլ նեղություն են քաշել թաղելու իրենց զոհերին։

Այս լայնածիր մարգերում, որոնք զարդարված էին հրբեմնի ծաղկող հայկական բնակավայրերով, այժմ ավերն ու ամայությունն են թագավորում»,— Թուրքերի չարագործության նկարագրությունն այսպես էր եզրափակել ֆրանսիացի գրողը։

Սա հայ ժողովրդի բարեկամ ու բարբարոսության թշնամի հրապարակախոսի վկայությունն է, որ կարող է դիտվել իբրև տխուր իրականության չափազանցված արտահայտություն։ Սակայն նույնն են հայտնում նաև Թուրք այն գործիչները, որոնք չէին խրախուսում երկրի տերերի հակահայկական դիվային ծրագրերը։ Նրանցից մեկը՝ Դեր-Զորի բանագաղթի կազմակերպիչ Թուրք պաշտոնյաներից, Նամի-բեյ անունով, գրել է. «Իմ կարծիքով՝ հայերի բանագաղթի ու կոտորածի պատմությունը... չունի իր նմանակը մինչև այսօր գրի առնված բոլոր անմարդկային չարագործությունների մեջ»։ Ապա Թուրք այս պաշտոնյան իր ցեղակիցների կատարած սպանդի արդյունքն է նկարում, ասես պատկերներ փոխ առնելով ֆրանսիացի հրապարակախոսից. «Թուրքիայի անծայրածիր տարածքի որ անկյունն էլ աչք ածես, հայացքդ ո՛ր խոր ձորին էլ դարձնես, ամենուր կգտնես հայերի հազարավոր դիակներ՝ մորթոտված ու խոշտանգված ամենադաժան ձևով»։

* * *

[1915 թ. Մեծ եղեռնը օսմանյան բռնապետության հակահայկական չարագործությունների շարքում ո՛չ սկիզբ էր, ո՛չ էլ ավարտ պիտի լիներ։ Սոցիալական դաժան ճնշումների և կրոնական անլուր հալածանքների շղթան սկիզբ էր առել կայսրության ստեղծումով, 15-րդ դարում, և անընդմեջ շարունակվում էր հաջորդ հարյուրամյակներում։ 19-րդ դարի երկրորդ կեսն ու 20-րդի առաջին քսանամյակը պարզապես ճակատագրական դարձան արևմտահայության համար. արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի սադրանքներով միայն 1894—96 թթ. սպանվեցին 300 հազար հայեր։ Ապա սուլթանությանը փոխարինելու եկած երիտթուրք կառավարողները ծրագրեցին հայ ժողովրդի բնաջնջումը։]

Պատմության թուրք կեղծարարներն այսօր փորձում են մարդկանց հավատացնել, թե հայ ժողովուրդը կայսրության սահմաններում երբեք էլ դժգոհ չի եղել իր վիճակից և լոկ Առաջին աշխարհամարտի օրերին է, որ ցարական կառավարության հրահրումով ոտքի է ելել իր «բարերարի» դեմ։ Իսկ «բարերարն» էլ, անախորժությունները կանխելու նպատակով, դիմել է միջոցների, որոնք պահանջում էին զոհեր։ Զոհեր՝ երկուստեք,— պնդում են երիտթուրքերի չքմեղացող ժառանգները։ Նույնիսկ երդում-հավատ են անում, թե այդ չնախատեսված, ուղղակի իրենց վզին փաթաթված միջոցառումների մեջ Թուրքերն ավելի շատ զոհեր են տվել, քան հայերը։

Սակայն քաղաքակիրթ աշխարհին այժմ հայտնի է, թե օսմանյան Թուրքիան ինչպես է գրել իր մռայլ պատմության ամենասև էջը՝ հայոց Մեծ եղեռնը։

Թուրք կառավարողները ծրագրել էին բնաջնջել ամբողջ հայությունը, և այս հարցում սուլթանն ու երիտթուրքերը, հինն ու նորը, ոչնչով չէին տարբերվում իրարից։ Երիտթուրքերը ի՞նչ պիտի մնային Աբդուլ Համիդից։ Նրանք իրենց բեմելը նշանավորեցին 1909 թ. Ադանայում ու շրջականներում կազմակերպած ջարդերով, որոնց զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր։ Ապա թմբկահարեցին Բալկաններից մինչև Միջին Ասիա, Վոլգայի ավազան ու Հյուսիսային Կովկաս տարածելիք իրենց համաթուրքական-համաիսլամական պետության գա-

ռանցանքը և հայերին ասացին՝ դուք սեպի պես խրված եք մեր սրբազան բաղձանքի մեջ, պետք է ինքներդ հեռանաք, կամ ձեզ կոտորելու ենք։ Այսպես վայրենի ու անսքող։ 1911-ին Սալոնիկում տեղի ունեցած իթթիհատական համագումարը, որ անցավ համաթուրանական դրոշի տակ, որոշեց օսմանացնել Թուրքիայում բնակվող բոլոր հպատակներին և այն էլ ո՛չ այլ կերպ, քան զենքի ուժով։ Իսկ երիտթրքության գաղափարական առաջնորդներից մեկը՝ դոկտոր Նազիմը, իր կուսակցության ուշադրությունը հրավիրեց առաջնահերթ խնդրի վրա՝ պնդելով, թե «Ծրագրի իրականացման նախապայմանը հայկական հարցի արմատական լուծումն է... Պետք է հայերին բնաջնջել մեր կայսրության մեջ»։

Ծրագիրն արդեն գործի էր դրված, կայսրության բոլոր հայաբնակ վայրերում այն կիրառվում էր կամ պիտի կիրառվեր, երբ պայթեց Առաջին աշխարհամարտը, և թուրքերն շտապեցին պատերազմի ծխածածկույթի ներքո դործել մեծ ոճիրը։ 1915-ի սկզբին երիտթուրք կառավարողների հատուկ խորհրդակցությունը որոշեց անմիջապես անցնել հայերի բնաջնջմանը, և ներքին դործոց նախարար Թալեաթն էլ խոստացավ դրա համար ոչինչ չխնայել։ Կազմեցին այդ որոշումն իրականացնող գործադիր կոմիտե և 10-հազարանոց հատուկ կազմակերպություն, որը Թալեաթի գլխավորությամբ ղեկավարելու էր ջնջարարությունը։ Հայտնի են Թալեաթի ու նրա գործակիցների հրահանգները, որոնցով առաջնորդվում էին վիլայեթներում։ Ահա նրանցից մեկը՝ ստորագրված Թալեաթի ձեռքով. «...Որոշված է լիովին ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին... Որքան էլ դաժան լինեն ձեռնարկվող միջոցները, պետք է վերջ արվի հայերի գոյությանը։ Ոչ մի ուշադրություն չդարձնեք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին և ո՛չ խղճմտանքին»։

Այս է եղել թուրք պաշտոնեության վճիռը, որի կիրառումը դյուրացնելու համար նախապես մինչև վերջ վնասազերծեցին անմեղ զոհերին, զինաթափեցին ամբողջ հայությանը, ռազմական նախարար Էնվերի կարգադրությամբ մեկուսացրին ու կոտորեցին հայ զինվորությանը՝ ավելի քան 60 հազար զինվորների, կայանքի տակ առան հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներին, ապա գազանաբար հոշոտեցին

Եվ անզեն, անպաշտպան, անգլուխ մնացած հայ բնակչության վրա ուղղեցին թրքական պետական մեքենայի ամբողջ դաժանությունը։

Իր հրամաններից մեկում Թալեաթը մատնել է հայությունը բնաջնջելու թուրքական պլանի վաղեմությունը՝ հաստատելով, թե դա նաև իր նախորդների երազանքն է եղել և գործողության ծրագիրը։ Պարզապես առաջներում հանգամանքներն են խանգարել։ «Թեպետ հայկական տարրի ոչնչացման հարցը վճռված է եղել առաջուց... հանգամանքները թույլ չէին տալիս իրականացնել այդ սրբազան գործը,— գրել է Թալեաթը։— Այժմ, երբ վերացված են բոլոր արգելքները, և եկել է ժամանակը՝ մեր հայրենիքն ազատելու այդ վտանգավոր տարրից, հրամայաբար երաշխավորվում է չենթարկվել ցավակցական զգացումին նրանց խղճալի վիճակը տեսնելուց, այլ բնաջնջել բոլորին և ամեն կերպ ջանալ վերացնել «Հայաստան» անունը Թուրքիայից։ Հետևեցեք, որպեսզի նրանք, որոնց վստահված կլինի այդ խնդրի իրականացումը, լինեն հայրենասերներ և վստահելի մարդիկ»։

Եվ Թալեաթն ամեն օր, ամեն ժամ այդ «հայրենասեր ու վստահելի մարդկանց» ապառնալից հորդորում էր մինչև վերջ իրականացնել օսմանյան հին ու հրեշավոր ծրագիրը։ 1915-ի սեպտեմբերի 9-ին Հալեպի գավառապետն ստացել էր մարդակերի նոր հրաման, որը գուժում էր, թե «թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքն իսպառ վերացված է։ Դրան համապատասխան՝ կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել նույնիսկ օրորոցի մանկանց»։ Այս հրամանի վերջը ևս նշանակալից է։ Ասում է. «Հաղորդեցեք այդ առաջադրանքի իրականացման համար պատասխանատու անձանց, որ իրենք պարտավոր են կենսագործել մեր անկեղծ ձգտումը՝ առանց վախենալու պատասխանատվությունից»։

«Առանց վախենալու»։ Այս կեցվածքը, հավանաբար, ոչնչան էլ չէր համապատասխանում իրականությանը, որովհետև հետագա հրամաններում, այնուամենայնիվ, երևում էին վախի երկար ակնարկները։ «Մի՛չ օրի մի թողնեք կենդանի,— զգուշացնում էր Թալեաթը,— հատկապես հինգից յոթ տարեկան երեխաներին։ Ապա թե ոչ, նրանք կաճեն և վրեժ կլուծեն»։

Եվ այս հրամանով ոգեշնչված թուրք ու քուրդ հրոսակները մոլեգնել էին ամենուրեք։ Թուրք մի պաշտոնյայի վկայությամբ Դեր-Զորի մարդակերների գլխավոր Զաքի-բեյը «թուրքերի խանդավառությունը չմարելու նպատակով, ձի նստած՝ բռնում էր փոքրահասակ երեխայի ձեռքը, բարձրացնում, պատում իր գլխավերևը, զարկում գետնին, կտոր-կտոր անում նրան։ Եվ հետո էլ հպարտությամբ բացատրում էր. «Մի՛ կարծեք, որ ես անմեղ արարած սպանեցի։ Այս ժողովրդի նորածին մանուկները անգամ հանցագործներ են, քանի որ նրանք իրենց մեջ կրում են վրեժի սաղմեր։ Եթե դուք ուզում եք ձեր վաղվա ապահով օրը, ապա կոտորեցեք նաև նրանց մանուկներին»։

«Վրե՜ժ կլուծեն», «վրեժի սաղմե՜ր»... Երևում է՝ մարդակերության մոլուցքն անգամ չի խանգարել, որպեսզի այդ հրեշները գուշակեն, թե ի՜նչ տեսակ ուժ է այդ վրեժը, որ նորածին մանկան մեջ էլ բուն է դնում և հետո աճում նրա հետ, ահագնանում...

1915 թ. վերջերին երիտթուրք դահիճները հայոց հարցն արդեն վերջնականապես լուծված էին համարում։ Արդյունքն էլ հայտնի է աշխարհին. արևմտահայկական նահանգները՝ պարպված իրենց բնիկ տեր հայերից, շուրջ երկու միլիոն նահատակներ, մնացյալը՝ տարագրության քշված, քաղցի ու համաճարակների մատնված։

Թրքության պարագլուխներն իրենց վաստակած իրավունքն ու պատիվն էին համարում հայոց Եղեռնը սպառնալից թափ տալ թուրքիաբնակ այլադավանների դեմ. «Ովքեր գլուխ չխոնարհեն օսմանյան մահիկի առաջ, հայոց վիճակին պիտի արժանանան»,— նույն 1915-ի վերջին ոչ-թուրք հպատակների հետ այսպես էր խոսում հազարավոր հայերի դահիճ Խալիլբեյը։ Եվ դա ևս նրա կառավարության վճիռն էր։

1916 թ. Թալեաթն ամերիկյան դեսպան Մորգենթաուին, արդեն իր պարտքը կատարած գործչի հպարտությամբ, նաև հեգնանքով՝ ասել էր. «Այլևս հայկական հարց գոյություն չունի, քանի որ հայերն իրենք գոյություն չունեն»։ Եվ ապա, խմանալով, որ այդ այլևս գոյություն չունեցող հայերից շատերն իրենց կյանքն ու հարստությունը նախօրոք պահ տված են եղել ամերիկյան ապահովագրական ընկերություններին,

նույն Մորգենթաուին է դիմել այնպիսի մի անամոթ առաջարկով, որ միայն իրեն՝ թուրքին կվայելի։ Ասել է. «Որովհետև հիմա համարյա բոլոր հայերն էլ մեռած են՝ առանց ժառանգներ թողած լինելու, հետևաբար, նրանց փողերը պետք է ըստանա թուրքական կառավարությունը։ Մեր կառավարությունը պետք է օգտվի այդ փողերից։ Դուք ինձ կարո՞ղ եք օգնել այդ գործում»։

Արնահարբ ճիվաղն այստեղ չարաչար սխալվում էր։ Ճիշտ է, հայ ազգը Թուրքիայում (այսինքն՝ կիսով չափ) կոտորված էր և ամբողջությամբ էլ՝ կոտորակված, սակայն նա դեռ պիտի ապրեր և վերածնվի ու վերածաղկումի իր հրաշքով ապացուցեր, որ չեն մեռնում աշխարհին ասելիք ունեցող ազգերը։ Այդ առթիվ չի կարելի չհիշել մեր ժողովրդի մեծ բարեկամներից մեկի մարգարեությունը։ Հենց նույն օրերին, երբ Թալեաթը փորձում էր համոզել, թե հայ ազգն այլևս գոյություն չունի, և մեկընդմիշտ լուծված է նրա ողբերգական հարցը, Անատոլ Ֆրանսը՝ ազատասեր ու արդար Ֆրանսիայի որդին, ի լուր աշխարհի հայտարարեց, թե «Հայաստանն իր վերջին շնչումն է, բայց նա կվերածնվի։ Արյան այն փոքր մասը, որ նա դեռևս պահպանում է, թանկարժեք արյուն է, որից կծնվի մի հերոսական սերունդ»։

Հայ ժողովրդի դահիճ Թալեաթը չէր հասկացել նաև, որ ծնվելիք այդ հերոսական սերունդը լինելու է իսկ և իսկ հայ ժողովրդի հարազատ զավակն ու օրինական ժառանգորդը, որը պետք է ժառանգի իր նախորդների ո՛չ միայն նյութական ու հոգևոր ամբողջ հարստությունը, այլև պարտքը։ Բարեկամների հանդեպ երախտագիտությամբ, իսկ թշնամուց վրեժ լուծելով ապրելու սրբազան պարտքը։

Իրենց այս թյուրատեսության համար, ի միջի այլոց, Թալեաթն ու մեղսակիցները պիտի վճարեին սեփական գարշելի գլուխներով։

Հայտնի է, որ դաշնակից կամ մեծ տերությունները ժամանակին խոսքով դատապարտել էին երիտթուրքերի կազմակերպած հայկական Մեծ եղեռնը։ 1919 թ. Պոլսում երիտթուրք կառավարության անդամները դատարանի որոշմամբ պատասխանատու էին հայտարարվել կատարած չարագործությունների համար, իսկ նրանցից ոմանք դատապարտվել էին մահ-

վոն։ Սակայն հանցագործները ոչ միայն չպատժվեցին, այլև ծպտված ապրում էին Եվրոպայի շքեղ մայրաքաղաքներում, նրանց հանցապարտ ճանաչած տերությունների հովանավորության ներքո։

Հայության վրիժառությունը չէր կարող հաշտվել այս անօրինակ ամարդությունի հետ և ինքը ծառս եղավ՝ չարագործների պատիժը սեփական ձեռքով իրականացնելու համար։

1921 թ. մարտի 16-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի գնդակից ընկավ Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուն՝ իթթիհատի պարապետ Թալեաթ փաշան։

1921 թ. հուլիսի 19-ին Պոլսում Միսաք Թորլաքյանն սպանեց Բաքվի հայերի ջարդի կազմակերպիչ, մուսավաթական կառավարության անդամ Ջիվանշիրին։

1921 թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում չբացահայտված հայ երիտասարդի գնդակից ընկավ եղեռնի օրերի Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշան։

1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արամ Երկանյանն սպանեց հայկական ջարդերի ու տեղահանությունների կազմակերպիչներ Բեհաեդդին Շաքիրին ու Ջեմալ Ազմին։

1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում Պետրոս Տեր-Պողոսյանի ու Արտաշես Գևորգյանի ձեռքով սպանվեց Ջեմալ փաշան՝ երիտթուրք կառավարության անդամը, ծովային նախարարը և Մեծ եղեռնի գլխավոր հանցագործներից մեկը։

1922-ի օգոստոսի 4-ին միջինասիական ավազուտներում հայ կարմիր սպա Հակոբ Մելքումովի առաջ պատժահար ընկավ օսմանյան եռապետության վերջին մոհիկանը՝ ռազմական նախարար և Թալեաթի գլխավոր գործակից Էնվեր փաշան, որը Պոլսում հեռակա մահվան դատապարտված լինելով, 1921-ից գլխավորում էր բասմաչների ավազակային շարժումը և ուզում էր իրականացնել հին մարմաջը՝ ստեղծել պանթուրքական անեզերք պետությունը։

Եվ այսպես, հայ վրիժառուները պատժեցին հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչներին ու գլխավոր հանցագործներին։ Սակայն եղեռնը, որպես մարդկային պատմության մեջ կատարված առաջին ցեղասպանություն, դեռ սպասում է համաշխարհային իր ճանաչմանն ու համընդհանուր դատապարտանին։

*

Այժմ, երբ տասնամյակների հեռվում է մնացել հայոց բազմահազարամյա պատմության ամենամեծ ողբերգությունը, երբ երեսուն ու նրա գործոններն առավել ընդգծվել են ժամանակի համայնապատկերի վրա, հարկ է անաչառ հայացքով նայել դեպի ետ և անսխալ ճանաչել ոչ միայն չարագործության հեղինակներին, այլև բոլոր նրանց, ովքեր հնարավոր դարձրին Մեծ եղեռնի իրականացումը։ Չէ՞ որ լեհ գրող-իմաստասերը բանական մարդու գործած ու չգործած հանցանքներից ամենամեծն էր ճանաչում անտարբերությունը։

1915 թ. հայոց Մեծ եղեռնը թուրքերի ձեռքի գործն է, բայց այդ անօրինակ չարագործության մեջ երկրորդական դեր չէին ունեցել ժամանակի մեծ տերությունների անտարբերությունն ու թողտվությունը, նույնիսկ նրանցից ոմանց խրախույսները։ Այդ, այսպես կոչված, քաղաքակիրթ պետությունները հայոց հարցը նախ դարձրել էին առուծախի առարկա՝ նկատի առնելով միայն ու միայն իրենց շահերը շուկայական սուր գործարքների մեջ, ապա իրենց իսկ նախաձեռնությամբ հայակեր թուրքի ճանկերը նետված հայությանը թողեցին երեսի վրա ընկած, իսկ հաճախ էլ խափանեցին ամեն մի ջանք, որ ուղղված կլիներ հայոց իրավունքի պաշտպանությանը։

Իսկ հետո՞...

«Հետո»-ն ևս լի է զարհուրելի բազմաթիվ փաստերով, որոնցից պիտի նշեմ սոսկ մեկը, որ շատ է բնորոշ այն օրերի քաղաքական մթնոլորտին։ «Նյու Յորք Թայմս» թերթն է հաղորդել, թե 1924 թ. դեկտեմբերի 22-ին Մարսել քաղաքը փոթորկվեց մի քստմնելի բոթից. նավահանգիստ էր ժամանել անգլիական «Զան» նավը՝ բեռնված 400 տոննա մարդկային ոսկորներով։ Հայտնի դարձավ, որ հայ նահատակների ոսկորներն են՝ հավաքված Մարմարայի ծովեզերքից և Եվրոպա են փոխադրվել գործարաններում մշակման ենթարկվելու համար։

Ուրեմն, եղեռնի զոհերի ոսկորներն անգամ հանգիստ չպիտի գտնեին այս երերական աշխարհում։ Մինչդեռ եղեռնի կազմակերպիչներն արժանանում էին պետական հոգատարության և բարձր պատիվների։ Երբ հոգին էին հանձնում ժողովրդական վրիժառուի գնդակից ընկած Թալեաթին, թաղման

թափորի առջևից տանում էին մի ծաղկեպսակ, որի ժապավենի վրա շողում էր Գերմանիայի Արտաքին գործոց նախարարության մակագրությունը՝ «Պետական մեծ մարդուն և հավատարիմ բարեկամին»։

Տարբեր չէր նաև ուրիշ պետությունների վերաբերմունքը։

* * *

Եթե հայ ժողովրդի կենսագրության անցած էջերը լի են երևույթներով, որոնք հրաշք են թվում մեր բարեկամներին, ապա հրաշք է նաև եղեռնից փրկված արևմտահայ զանգվածների կյանքը երկրագնդի տարբեր մասերում։ «Փրկվածն» այստեղ չի կարող հարազատ պատկերացումը տալ չարչրկված, բզկտված այն խլյակների ճակատագրի մասին, որոնք սփռվեցին աշխարհի տարբեր երկրներում և դարձան Սփյուռք... Նրանք հայրենի եզերքներից տարագիր և հավաքականությամբ ու միասնականությամբ ապահովվող ամբությունից զուրկ, կորցրի՞ն իրենց մարդկային էությունը, արժանապատվությունն ու հպարտությունը։

Հիշենք եղեռնից հետո ոտքի ելած սփյուռքահայ առաջին սերնդի զրող Վազգեն Շուշանյանի դրական խոսքն իր սերընդակիցների մասին։ Շուշանյանի «Մթին պատմություն» վեպի հերոսներից մեկը, հայրենիքից տարագիր, օտարության դառը գավաթը ցմրուր վայելած մի մարդ, իր երիտասարդ բախտակիցներին տալիս է այսպիսի խորհուրդ. «Կարևորը միայն ապրելը չէ, այլ մեծությա՞մբ ապրելը»։ Մեծությամբ, որ այստեղ նշանակում է հպարտ արժանապատվությամբ, ոչ թե գլխակոր, այլ աշխարհի պինդ ճակատին հառած պայծառ հայացքով, մանավանդ՝ վաղվա նկատմամբ անխախտ հավատով։

Այսպես ապրեցին մեր տարագիր եղբայրները՝ մեծությամբ, իրենց մարդկային արժանապատվությունը բարձր պահելով։ Եվ սա սփյուռքահայության պատասխանն էր անտաքբեր աշխարհին։

Պատասխան, որ, առաջին հերթին, հնչեց որպես վրեժ։

Աշխարհը մոռացկոտ է, և այս թերությունը հաճախ է պատճառ դառնում, որ մարդկության դեմ գործված ոճիրը կրկնվի նույնությամբ։ Հայ մտավորականներն ու նրանց այլազգի բարեկամները վերջին տասնամյակներում հրապարակ են հանում, քննում ու հանրության սեփականությունն են դարձնում հայոց Մեծ եղեռնի պատմությունն իր բոլոր մանրամասներով։

Սակայն կար նաև վրեժի համապարփակ-համազգային զգացումը, որն իր հորձանքի մեջ առավ աշխարհասփյուռ հայությանը։ Այս առթիվ լավ է հիշենք ամերիկահայ ականավոր գրող Լևոն-Զավեն Սյուրմելյանի հերոս հոգևորականի խորհուրդն իր սաներին։ «Որդյա՛կք իմ սիրելիք,— ասել է նա,— թուրքերը տապալեցին մեր ազգի հինավուրց ծառը։ Անկասկած է, որ դուք պետք է վրեժ լուծեք։ Ձեր հայրենասիրական մեծագույն պարտականությունն է դա, ձեր կյանքի սրբազան գործը։ Սակայն դուք պետք է վրեժ լուծեք... բարձունքներ նվաճելով և պատիվ բերելով ձեր դպրոցին ու ազգին... Որպեսզի ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ձեզ ցույց տա և ասի՝ «Սրանք նոր ճյուղերն են հայ հզոր ծառի, որ տապալեցին թուրքերը, բայց արմատախիլ անել չկարողացան»։

Թուրքերը տապալեցին հայ ազգի հինավուրց ծառը... Տապալեցին՝ կարծելով, թե այդ է, ոչնչացրին այն... Իսկ նրա պտուղ-սերմերը տարտղնվելով տարածվեցին աշխարհով մեկ և ուր էլ ընկան՝ Լիբանան թե Եգիպտոս, Ֆրանսիա թե Ավստրալիա, Ամերիկա թե Կանադա, ծլարձակեցին իբրև նոր տունկեր, հայ ազգի տունկերը, բարձրացան՝ հաստատելով այն հինավուրց ծառի ազնիվ կենսունակությունը։

Ամերիկայի Միացյալ Նահանգների հայության օրինակը երևի թե ամենախոսունն է մեր հարցի տեսակետից։ Ժամանակակից աշխարհի ամենաապազգայնացնող վայրը, ազգերն ու ժողովուրդները դիմազրկող մի խառնարան, որտեղ այսօրվա շուրջ մեկ միլիոն հայը չպետք է կարողանար երևալ ո՛չ իր ազգային կերպարանքով, ո՛չ էլ առհասարակ որևէ բնագավառում կատարած իր էական ներդրումով։

Ամերիկյան գիտության ու տեխնիկայի, նույնիսկ գյուղատնտեսության վերելքի ասպարեզներում փայլում են բազմաթիվ հայերի անունները։ Կարող են ասել՝ այդ բնագավառներում կատարվող առաջադիմությունը չի պայմանավորված միայն ազգային պատկանելությամբ կամ տոհմակունքներով։ Չնայած շատ կարևոր է, որ նրանք բոլորն էլ միշտ և ամենուր

կապված են մնում իրենց ազգային ակունքներին, մասնակցում են գաղութահայության կյանքի մեծ ու փոքր միջոցառումներին և իրենց կյանքը չեն պատկերացնում հայրենի համայնքից դուրս։

Սակայն կան բնագավառներ, որոնցում գլուխ բարձրացնողը պիտի երկու ոտքով կանգնած լինի ազգային հիմքի վրա, անունդ առնի տոհմականությունից։ Ահա այստեղ է, որ ամերիկահայ գաղութը գարձյալ տվել է երախտագիտության արժանի օրինակներ։ Համաստեղի արձակը, Անդրանիկ Անդրեասյանի հրապարակախոսությունը, Վահե Հայկի քնարերգությունը, հայագետներ Հրանդ Արմենի, Հարություն Քյուրտյանի և ուրիշների հետազոտությունները, գեղանկարիչներ Հովսեփ Փուշմանի, Արշիլ Գորկի-Ոստանիկ Ադոյանի, Սարգիս Խաչատրյանի, քանդակագործներ Հայկ Բադիկյանի, Խորեն Տեր-Հարությանի և շատ ուրիշ արժանավորների ստեղծագործական կյանքը միշտ էլ խարսխված է եղել մեր ազգի տոհմիկ ավանդների, թեկուզ մեծ մասամբ վերհուշով ու տառապալից վերապրումներով ստեղծվող՝ հայրենի իրականության վրա։

Ֆրանսիայի նման մի երկիր, որը դարեր շարունակ լափ ու ձև է տվել աշխարհի քաղաքակրթությանը, այսօր իր ազգային ակադեմիայի «քառասուն անմահներից» երկուսին ընտրել է հայազգի մարդկանց՝ Անրի Թրուայային և Գառզուին։ Այս երկրում բնավորված հայ տարագիրների զավակներն ամբողջ Եվրոպային և հանուր մարդկությանը ցույց տվին, թե հայ ազգն ինչպես վեհանձնորեն ծառայում է բարուն, մարդկայնությանը՝ միշտ մնալով նաև իր ազգային ոգու նվիրյալն ու հետևորդը։

Կարծեմ Լևոն-Զավեն Սյուրմելյանի խոսքն է, ասում է՝ փոքր ազգերը մարդկության թագի ադամանդներն են, զարդաքարերը։ Հայերը Ֆրանսիական վերջին հարյուրամյակի փառքի թագի բոլոր հատվածներում դրել են իրենց մարգարիտները՝ ռազմական ու քաղաքական, գրական ու մշակութային ճառագայթներով։ Եվ պատահական չէ, որ հենց Ֆրանսիայի կառավարության ղեկավարը մի բարձր ու ներկայացուցչական ժողովում հայտարարել էր, թե ֆրանսահայ գաղութը լրացնում է իր երկրի բարոյական այն պատկերացումը, որ մեկ հասկացություն է, սակայն բնութագրվում է երկու բառով՝ հաբրստություն և հպարտություն։ Հայերը Ֆրանսիային տվել են քաղաքացիներ ու զինվորներ,— ավելացրել է այդ Ֆրանսիայի երախտագետ որդին,— նայած երկրին ո՞րն է եղել անհրաժեշտ։ Երբ Եվրոպայի երկինքը խավար էր ֆաշիզմի փչած հողմերից, հայերը Ֆրանսիայում ոտքի ելան և կռվեցին մարդկության գլխին կախված ամենահավոր չարիքի դեմ։ Իսկ բանաստեղծ Միսաք Մանուշյանը (1906-1944), ընդհատակյա ինտերնացիոնալ ջոկատների գլուխն անցած, հերոսաբար կռվեց մինչև վերջին շունչը և նահատակվեց հավատի ու հերոսության երգը շուրթին, երգ դարձավ Ֆրանսիայի ամենաժողովրդական բանաստեղծներից մեկի՝ Լուի Արագոնի գրչով։

Արշակ Չոպանյանը (1872—1954), դեռ 1895-ի Համիդյան ջարդերից ու հետապնդումներից խույս տալով, հասել է Փարիզ և այնտեղ ծավալել գրական-հայագիտական, հրատարակչական ու առհասարակ մշակութային մի այնպիսի եռանդուն բազմաբնագավառ գործունեություն, որի համար արժե նրան կոչել մարդ-ակադեմիա։

Իսկ ֆրանսահայ հաջորդ սերունդնե՞րը...

Եղան այնպիսիները, որոնք չդիմացան, ավելի ճիշտ՝ չդիմադրեցին օտար լեզվի գայթակղությանը, ցանկացան ունենալ ավելին, քան հայ ընթերցողն է, արտաշխարհում օրեցօր սակավացող, հայերեն խոսքն ու գիրը լքող սփյուռքահայությունը։ Նրանք որդեգրվեցին օտար լեզվին, ինչպես Արթուր Ադամովը, կամ թողեցին հայերենը և շարունակեցին ծառայել օտար գրականությանը, ինչպես Շահան Շահնուրը։ Չի կարելի ասել՝ նրանք չգիտեին, թե իրենց ի՞նչ է խոստանում օտար լեզուն։ Շահնուրը (1903—1974), որ «Նահանջ առանց երգի» (1929) առաջին վեպով սփյուռքահայությանն զգուշացնում էր ուծացումից, իսկ «Հարալեզներուն գավառանությունը» (1933) պատմվածքների գրքով էլ մտավ հայ գրականության վարպետների շարքը, 1950-ական թվականներից գրեց հիմնականում ֆրանսերեն և 1956-ին արժանացավ Ռիվարոյի մրցանակին։

Ֆրանսագիր Հարություն Ադամյան—Արթուր Ադամովի (1908—1970) հզոր թատերգությունները հետպատերազմյան Ֆրանսիայի մշակութային կյանքում երևացած նշանակալից երևույթներից են համարում իրենք՝ ֆրանսիացիները։

Լևոն Ասլանի Թորոսյան— Աների Թրուայան (ծնվ. 1911 թ.), ֆրանսագիր մեծ գրող, «Սարդը», «Արդարների լույսը», «Սգավոր ձյունը» և ուրիշ վեպերով նվաճեց երկրի գրական ամեն տեսակ մրցանակները, ընտրվեց Ակադեմիայի անդամ։

Համաստեղը (Համբարձում Օհանեսի Կելենյան, ծնվ. 1895-ին, Խարբերդի գավառի Փերճենչ գյուղում— վախճ. 1966-ին Նյու Յորքում) երևի թե Սփյուռքի հայ արձակի բարձրագույն գագաթն էր, պատմվածքի այնպիսի վարպետ, որն այսպես թե այնպես իր խոր դրոշմն է դրել 1930-ականներից հետո ստեղծված ամբողջ հայ գրականության վրա։

Մնձուրին (Հակոբ Տեմիրճյան, 1886, Էրզրումի նահանգի Արմտան գյուղ— 1978, Ստամբուլ) Սփյուռքի գրականության լռակյաց մշակն էր, որը ցերեկը զանազան ծառայություններ էր կատարում իր հանապազօրյա հացը վաստակելու համար, որպեսզի նվաստացուցիչ այդ վաստակով գիշերը ծառայեր հայրենի գրականությանը։ Միայն 1958-ին հրատարակվեց առաջին ժողովածուն՝ «Կապույտ լույսը», 1966-ին՝ «Արմբտանը», 1974-ին՝ «Կռունկ, ուստի՞ կուգասը»։ Սրանք հիմնականում կորսված եզերքի վերհուշներ են, յուրօրինակ «երկիր հիշատակաց» և հյութեղ լեզվով, գրական մի անպաճույճ կատարելությամբ վերակենդանացնում են ծննդավայրը, հայ աշխատավորի աղնվական կյանքը, հայրենի բնության անզուգական պատկերները...

Հայկական Լիբանանը տասնամյակներ ի վեր համարվում էր սփյուռքահայության ողնաշարը, և դա իրողություն էր։ Այնտեղ մենք ունեինք մի Փոքր Հայք, որը, հակառակ իր հին անվանակցի, Հայաստան էր իր ամեն ինչով։

Լիբանանը կար, ապրում էր հայկական գորեղ հանրության ազգային անտրոհելի կերպարով։ Այնտեղ իր բնականոն կյանքն ու առաջընթացն էր ապրում մեր ազգային մշակույթն իր բոլոր մարզերով։ Մի Փոքր Հայք՝ իր տասնյակ դպրոցներով, որոնցում դասավանդումը գնում էր մայրենի լեզվով։ Մշակութային-բարեգործական ընկերություններ, թատերական խմբեր, երգի-պարի և երաժշտական ուրիշ համույթներ, մարզական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, գրական և արվեստից ընկերություններ։

Բեյրութում լույս է տեսել ավելի քան 130 պարբերական։

— 600 —

Իսկ «Ազդակը», «Ջարթոնքը», «Հորիզոնը», հանդեսներից «Բագինը», «Շիրակը», գիտական տարեգիրք «Հայկազյան հայագիտականը...» ինչպե՞ս պահպանում են հայոց հրապարակախոսական, գրական ու գիտական լավագույն ավանդները, ծանրագույն պայմաններո՛ւմ անգամ ծառայում իրենց ընթերցողին պահելու, համազգային մշակույթը զարգացնելու սրբազան գործին։

Սփյուռքահայերի համար հաստատ, նրանց կենսունակության ակունքն ու հիմքը՝ հանուր Սփյուռքի ճշգրիտ կողմնորոշումն է, որ անխախտ է մնում հողագունդը պարուրած ամեն տեսակ մրրիկների դեմ։ Կա՞ ավելի աղնիվ ու շրջահայաց գիրք, քան այն, որ յուրաքանչյուր տարագրյալ, օտար երկրների տակ ապրող յուրաքանչյուր հայ, իսկ Սփյուռքի բարոյական ու մշակութային դեմքը ներկայացնող մեծերը՝ հատկապես, գիտեն, որ իրենք ունեն մայր հայրենիք՝ նոր Հայաստանը, և այդ նոր Հայաստանն է, որ դարձել է հայի հին ու նոր երազների խորհրդանիշը, ամենայն հայոց գոյության խարիսխն ու հենարանը։ Այս է աշխարհասփյուռ հայերի միակ հանգրվանը, որի ծավալումներով ու առաջընթացով էլ ապահովվելու է մեր ազգի կյանքի, միացյալ, անկախ ու հզոր պետության ստեղծումն ու հավերժությունը։ Այստեղ դարձյալ հիշենք Վազգեն Շուշանյանին՝ հնչեցնելով 1939 թե 1940 թվականին գրած նրա խոսքը մեր նոր ու հզոր հայրենիքի մասին։ Ի՞նչ պայծառատեսություն էր պետք՝ այն օրերին, աշխարհի վրա ծանրացած մռայլ ամպերի միջից տեսնելու փրկության այս եզերքը և գոչելու ի լուր համայն հայության. «Ճակատագիրդ հո՞ս է, և սրբությո՛ւնդ՝ հոս, վասնզի հոսկե՛ է միայն, որ բոլոր փառքերը կրնան արթնանալ և բոլոր ցորենները բարձրանալ գեղազարդ՝ բոլոր ակոսներենն»։

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՆՆԴԱՐԱՆ

1918 թ. գարունը կարող էր վերջինը լինել ազգային այն հավաքականության համար, որ կոչվում է հայ ժողովուրդ։ Արևմտահայության Մեծ եղեռնով չկշտացած թուրքական բանակները դարձանը նվաճեցին Արաքսի աջափնյա հողերը և շարժվեցին դեպի հյուսիս ու արևելք։

1918 թ. մայիսի 15-ին թուրքերը մտան Ալեքսանդրապոլ, շարդեցին և կողոպտեցին անզեն ու անպաշտպան բնակչությանը, առաջ շարժվեցին դեպի Էջմիածին ու Երևան՝ սպառնալով Արևելյան Հայաստանում ևս կատարել արյան այն զարհուրելի նախճիրը, որից հայաթափ դարձավ բովանդակ Արևմտյան Հայաստանը։ Ահա այս նոր ու վերջին նախճիրի սպառնալիքի տակ էլ Թուրքիայի բռնապետները Բաթումում խորհրդաժողովի էին հրավիրել Անդրկովկասի ներկայացուցիչներին և նրանց հետ իրենց հետագա անելիքներն էին որոճում։

Եվ այստեղ էլ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի պատգամավորների հետ հանդիսավոր ճաշկերույթի էին նստել արևմտահայության Մեծ եղեռնի հեղինակները։

Նման պարագաները մարդկանց դարձնում են ավելի բացախիտ ու անկեղծ, և խորհրդաժողովի մասնակիցները ոչինչ չէին թաքցնում միմյանցից։ Չնայած թուրքերն իրենց հայատյացությունը երբեք էլ չեն թաքցրել որևէ պարագայում... Սակայն այստեղ նրանք շատ էին անկեղծ, և, ինչպես բանակցությունների հայ մասնակիցն էր հիշում հետագայում, ծովային նախարար Ջեմալ փաշային կատաղությամբ էին լցրել հայ կամավորական ջոկատների դիմադրական շարժումներն ու ազատամարտերը, հայկական շրջանների կապերը Ռուսաստանի նոր զեկավարության հետ։ Իսկ ճաշկերույթին նույն Ջեմալ փաշան ու դոկտոր Բեհաեդդին Շաքիրը կամենում էին արել հայ բանագնացին և նրա ականջն էին լցնում իրենց զառանցանքը՝ իբրև վերջնագիր. «Հայերը կանգնած են մեր համաթուրանական և համաթրքական սրբազան բաղձանքների իրականացման ճամփի վրա, և մենք անխուսափելիորեն բախվում ենք նրանց հետ... Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնել մեր ճամփի վրայից այն ամենը, ինչ որ արգելք է հանդիսանում մեր ազգային բաղձանքներին։ Եվ հետո, դուք միշտ ռուսների հետ եք, դուք նրանց առաջապահն եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են։ Պատմակա՞ն թշնամիները։»

Սրանից առաջ էլ Թուրք պատվիրակության զեկավար Խալիլ բեյը և պատվիրակության անդամ ու Կովկասյան ճակատի հրամանատար Վեհիբ փաշան հայ պատգամավորներին առաջարկել էին Հայաստանը խոնարհաբար փոել թուրք բանակների առաջ, որպեսզի Թուրքիան անարգել գնա դեպի իր «սրբազան բաղձանքների իրականացումը»՝ դեպի Բաքու, Թիֆլիս և Հյուսիսային Կովկաս։ Ահա նրանց այդ առաջարկը. «Արե՛ք բոլոր զիջումները, մեզ հնարավորություն տվեք երթալու Ջուլֆա-Պարսկաստան երկաթգծով և հյուսիս՝ Ղարաքիլիսա-Եվլախ ճանապարհով։ Իսկ հետո, երբ պատերազմը վերջանա, մենք ձեզ օգնության կհասնենք և կվերադարձնենք այն, ինչ որ այսօր առնում ենք ձեզանից»։

Այս թուրքե՛րն էին խոստանում, հայոց Մեծ եղեռնի հեղինակնե՛րը։

Եվ այս «հոգատար» առաջարկից մոլորված պատվիրակները համաձայնության եկան, «որ թուրքական զորքերն անցնեն հայկական հողերով»։

Հայ ժողովուրդը կանգնած էր իր բազմադարյան դառն ու դժվար ճանապարհի ամենաաղետալի կետում։ Ըստ էության փուլ էր եկել Անդրկովկասյան սեյմ կոչված սուտ միությունը։ Հայոց ճակատագրի տնօրենները կտրականապես մերժել էին Ռուսաստանի օգնության առաջարկությունը, իսկ ամեն տեսակ հովանավորություն ու աջակցություն խոստացած Անտանտի գործակալները կանգնած էին Թուրքիայի ու մուսավաթի թիկունքում...

Ի՞նչ պիտի աներ բոլոր բարեկամներից մերժված ու թշ-

նամիների ողորմածությանը թողնված մի ժողովուրդ, որն արնաքամ էր, հյուծված ու անօգնական...

Միայն հրաշքը կարող էր փրկել նրան, և նա պատրաստվեց այդ հրաշքին։

Զինադադարի պայմանները ոտնահարելով՝ Արաքսն անցած թուրք բանակները երեք ճակատով առաջ էին շարժվում Անդրկովկասին տիրելու համար։ Մի զորամասն Արմավիր գյուղն էր առել, Սարդարապատ ու Արագած կայարանները և հայացքն էջմիածնին ու Երևանին հառած, պետք է բռներ Բաքու տանող երկաթգիծը, մահ ու ավեր սփռելով Հայոց երկրում՝ Արարատյան աշխարհից մինչև Զանգեզուր և Ղարաբաղից մինչև Գանձակ։ Մյուս զորամասը Ղարաքիլիսա էր հասել և, Լոռին ու շրջականները կործանելով, գնալու էր Թիֆլիսի վրա։ Երրորդ զորամասը, Բաշ-Ապարանն առնելով, դարձյալ պետք է շարժվեր Երևանի վրա՝ դեպի Բաքու կատարելիք զորաշարժը դյուրացնելու նպատակով։ Այսքանից չի կարելի չեզրակացնել, որ Սարդարապատ-Բաշ-Ապարան-Ղարաքիլիսա գծի վրա լուծվում էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև Թիֆլիսի ու Բաքվի հարցը։

Դեպի Երևան շարժվող թուրքական բանակի կորիզն էր կազմում այն օրերի համար շատ լավ սպառազեն 36-րդ դիվիզիան, որը Դարդանելում տարած հաղթանակների համար կոչվում էր Դարդանելյան կամ Գելիբոլու։ Նրա կազմի մեջ էին մտնում հետևակային երեք բազմամարդ գնդեր, երկու հրետանային դիվիզիոն, հարվածային հետևակների ու սակրավորների առանձին գումարտակներ։ Այստեղ գործում էին նաև կորպուսային մի հեծյալ գունդ, ավելի քան 1500 զինվորներից բաղկացած քրդական հեծյալ մի ջոկատ և տեղական մահմեդական բնակչությունից կազմված անկանոն կազմավորումներ։

Եվ այս ահռելի հեղեղի դեմ պետք է կռվեին տաճկական ճակատում ուժասպառ եղած մի քանի սակավամարդ հայկական գնդեր, ռազմական գործին անտեղյակ աշխարհազորայիններն ու զաղթական սովալլուկ այն բազմությունները, որոնք քաղցից ու համաճարակներից մեռնում էին Արարատյան դաշտի գյուղերում ու բաց երկնքի տակ։

Հայկական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը և Երևանյան զորամասի հրամանատար, գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, հետադիմադրությունը համարելով անօգուտ ու կործանարար, հաշտվել էին զենքերը վար դնելու մտքի հետ։ Նազարբեկյանը տագնապալից հեռագրերով Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին հորդորում էր անհապաղ դաշինք կնքել թուրքերի հետ։ Բազմափորձ զորավարի համար այլևս կարևոր չէին պայմանները, միայն թե լրեղեր այն քիչ արյունը, որ մնացել էր հայ ժողովրդի հոգնած երակներում։ Արաքսի ափերին գտնվող իր զորքերին էլ կարգադրել էր ետ քաշվել ճակատից և դիրքեր բռնել Կոտայքի ու Սևանի բարձրություններում։

Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որ բովանդակ հայության բախտի տնօրենն էր փաստորեն, արդեն հաշտվել էր անձնատվական այս որոշման հետ, հույսը դրել էր թուրք կառավարողների ողորմածության վրա և սպասում էր ազգի օրհասին։

Սակայն բարեբախտություն էր, որ այս պայմաններում, ինքնազինաթափման ու հոգեմաշ խուճապի այս մթնոլորտում, կային մարդիկ, որոնք հավատում էին հրաշքին։

Պահպանվել են ճակատագրական այն օրերի վավերագրերը։ Գրավոր աղբյուրները, հիշատակարաններն ու ականատեսների վկայությունները ներկայացնում են համազգային ողբերգությամբ մակարդված այն մթնոլորտը, որի մեջ վեհորեն բարձրանում են հերոսները։

Երևանյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանը, Հայոց սպարապետ Նազարբեկյանի ու Թիֆլիսի ազգային խորհրդի հանձնարարությամբ, էջմիածնում ներկայացել էր Ամենայն Հայոց կաթողիկոսին և առաջարկում էր ապահովության համար հեռանալ Մայր աթոռից։ Ապահովության համար, որովհետև որոշված էր Երևանն ու էջմիածինը հանձնել թուրքերին և հաշտություն կնքել, հակառակ դեպքում՝ ապավինել Կոտայքի ու Սևանի բարձունքներին և պաշտպանվել վերջին ուժերով։

Եվ այն ժամանակ ծերունազարդ կաթողիկոս Գևորգ Ե Տփղիսեցին ընդվզեց այդ անհեռատես ու անհեռանկար որոշման դեմ, կարգադրեց Արարատյան երկրի բոլոր վանքերի ու

եկեղեցիների զանգերից համազգային տագնապ ազդարարել։ Նա Մայր տաճարի բեմից այսպես խոսեց ժողովրդի հետ.

— Ա՜զգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության։ Գալիս է Արարատյան երկրի վրա։ Թուրքը կոտորած ու ավեր փռելով գալիս է, և մեր զորապետներն էլ ուրիշ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղելը։ Նրանք Ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը։ Առաջարկում են լքել այս բոլորը և սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ ուրիշ անմատչելի որևէ լեռնածերպի վրա։ Ո՜չ և ո՜չ, հազա՜ր անգամ ոչ։ Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր աթոռը։ Ես չեմ հեռանա հայոց առաքելական եկեղեցու օջախից։ Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի դորու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստե՛ղ, շեմի վրա՝ Մայր աթոռի, որի գահակալի պատիվն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստծո ողորմածությամբ։

Դահլիճում գոհունակության տնքոցը հորձանք տվեց, ժայթքեց դուրս, որպեսզի տարածվի տաճարի բակում ծփացող բազմության վրա և այնտեղից էլ հորդա Վաղարշապատի փողոցները, գնա ավելի հեռու, սփռվի կուլ եկած Հայաստանում ու նրա սահմաններից դուրս։

— Թուրքը չի կշտացել մեր ժողովրդի արևմտյան կեսով, հիմա էլ այս մի կեսի վրա է եկել անհագուրդ ու մոլեգնած,— իր խոսքն այսպես շարունակեց Ամենայն հայոց հայրապետը։— Եվ եթե այստեղ էլ հաղթեց, դա կլինի ստույգ վերջը մեր ազգային գոյության։ Մի՞թե մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային դոյի հիմքերը։ Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ և ոչ թե ողորմելի զեռունի պես ոսոխի առաջ սողալով։ Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ։ Դրանով չի սպառվել մեր արյունը, և չի

կորսվել քաջությունը մեր շարքերից։ Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով։ Եվ որովհետև ով գաղափարի հետ է մեռնում, մեռնում է որպես հատիկը ցորյանի, ապա հատիկի մահով նոր կյանքեր են ծնվում վաղ թե անագան։ Դրա համար է, որ զանգվածային մահերով ու կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և երբեք էլ չպետք է ունենա վերջին վերջակետ։ Ուրեմն էլ ինչո՞ւ դավենք ապրելու և գոյատևելու մեր ազգային կերպին։ Ինչո՞ւ ապրվին չբարձրանանք թշնամու դեմ, որ գալիս է անդրարաքսյան իր թեթև հաջողություններով հղփացած և մեր արյան վերջին կաթիլին ծարավի...

— Պատրա՜ստ ենք ելնելու, վեհափա՜ռ տեր,— գոչեցին դահլիճի տարբեր կողմերից։

Եվ այս ահեղաշունչ ձայնե՞րն էին՝ միացյալ, թե՞ դահլիճը միաձայն, միահամուռ պայթեց.

— Պատրա՜ստ ենք։

Կաթողիկոսը դրան էլ սպասում էր, շունչ առավ մի պահ և, հայացքը ծփացող ամբոխի վրա, աչով ադամանդազարդ լանջախաչը բռնած, երանությամբ շարունակեց.

— Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն։ Ես գիտեմ նրա անցած ճանապարհի գառնությունները։ Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց՝ անարդ թշնամուն դեռևս չի տսել իր վերջին խոսքը։ Եվ խոսքն այդ պետք է լինի հաղթական...

— Պետք է լինի հաղթակա՜ն... հաղթակա՜ն,— արձագանքից դահլիճը։ Եվ արձագանքն այդ թնդաց Մայր տաճարի կամարների տակ, ելավ նրա զոնևերով ու լուսամուտներով, տարածվեց-լցվեց Արարատյան աշխարհը։

* * *

Մայիսի 21-ին թուրքերը գրավել էին Սարդարապատ գյուղն ու Սարդարապատ երկաթուղային կայարանը և գիշերը երևի երազում տեսնում էին այն անբավ հարստությունները, որոնց տիրանալու էին էջմիածնում ու Երևանում, և արյան այն բաղանիքը, որ սարքելու էին Արարատյան աշխարհում։

Նույն այդ գիշեր հենց Սարդարապատի առաջ Սարդարապատյան ռազմաճակատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանը նախապատրաստում էր այն հարվածը, որ շշմեցնելու էր անցյալ ձրի հաղթանակներով հղփացած թշնամուն։ Ճակատի կենտրոնում նա դասավորեց Հայկական հրաձգային Հինգերորդ գունդը, որի հրամանատարն էր իր հորեղբորորդի Պողոսբեկ Փիրումյանը։ Աջ ու ձախ իրար բերեց կանոնավոր զորաջոկատների մնացորդներն ու կամավորական խմբերը։ Երկաթգծից հարավ գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդն էր՝ շուրջ 800 սվին, գնդապետ Պերեկրյոստովի պարտիզանական գունդը, Թռուցիկ Հովսեփի, Բուլանըղցի Մուրադի և Բաշգյառնեցի Մակեդոնի հեծյալ խմբերը, որոնց մոտ դիրքեր էին գրավել կապիտաններ Գորեն Իգիթխանյանի, Սերգո Աթանասյանի և Հույն Սակելլարիի հրետանային մարտկոցները։

Ճակատի հրամանատարը գիտեր, որ թուրքական երկու դիվիզիաներ կազմ ու պատրաստ կանգնած են Արաքսի աջ ափին և չնայած խնդիր ունեն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գծով շարժվելու դեպի Հյուսիսային Պարսկաստան, այնտեղից էլ Բաքու, սակայն առիթը բաց չէին թողնի Արաքսն անցնելու և հայոց թիկունքից հարվածելու համար։ Նա կարգադրեց խորտակել Մարգարայի ու Կարակալայի կամուրջները և տեղանքին քաջածանոթ գնդացրորդների ու աշխարհազորի միջոցով աչալուրջ հսկել դեռանցները։

Հայոց ճակատն արդեն պատրաստ էր հակահարձակման։ Զորաջոկատներից յուրաքանչյուրը գիտեր իր անելիքը։ Էջմիածնի և շրջակա վանքերի ու եկեղեցիների հոգևորականները զորախմբերում վաղ առավոտյան կարգացել էին հայրենասիրական այն քարոզները, որոնցից ոգեպնդված հայ զինվորությունը պետք է գնար անօրինակ սխրանքի։

Էջմիածնի ճեմարանի տեսուչ և ականավոր հայագետ Գարեգին Հովսեփյանն այդպիսին եղույթ էր ունեցել Պողոսբեկ Փիրումյանի 5-րդ գնդի առաջ և հիմնականում ղարաբաղցիներից կազմված այդ զորախումբը կնքել Մահապարտների գունդ։

— Դուք կանգնած եք թուրքերի հարձակման սուր անկյան դեմ և ձեր վրա՛ պիտի առնեք նրանց հարվածի ծանրությունը,— իր հայրական խոսքն այսպես էր սկսել Գարեգին եպիսկոպոսը։— Դուք պետք է ոչ միայն փշրեք այդ հարվածը, այլև առաջ շարժվեք։ Դա ձեր պարտքն է մեր մահամերձ ազգի առաջ։ Ազգը փրկելու համար դուք պետք է հաղթեք կամ մեռնեք։ Ուրեմն մահապարտներ եք դուք և միայն հաղթանակով պիտի նվաճեք ձեր ապրելու իրավունքը։

Եվ Մահապարտների գունդն այնօր, մայիսի 22-ին, մահ ցիտի տաներ Սարդարապատ գյուղն ու կայարանը նվաճած թուրք զորքին։

Ձախ թևից անվրեպ հրետանային ռմբակոծությամբ շշմեցրած թուրքերի դեմ շարժվեցին Մահապարտների գունդն ու Պերեկրյոստովի պարտիզանները։ Բաց դաշտում ոչ մի դիմադրություն չսպասող թուրք ասկյարները կոտորվում էին հենց այդ անսպասելի հարվածներից։ Խուճապահար փախչողներն էլ ոտի տակ էին տալիս իրար։

Այնպես էլ թուրք հրամանատարությունը մինչև երեկո չկարողացավ կարգի բերել իր զորքը և դիմադրել հայ վրիժառուներին։

Երեկոյան դեմ արդեն նվաճված էին Սարդարապատ գյուղն ու կայարանը։ Թուրքերն ամբողջ ճակատով նահանջել էին 15—20 կիլոմետր և ամուր դիրքեր բռնեցին Սարդարապատից բավական հեռու, Թուլքի-թափա և Ջիմնի-ղրա բլուրների վրա։

Ջեռք էր բերվել առաջին հաջողությունը, որ հուսադրող էր ու ճակատագրական։

Հաղթանակը համաժողովրդական խանդավառություն էր ստեղծել Երևանում և Արարատյան նահանգում։ Երևանի Ազգային խորհուրդը, Արամ Մանուկյանի գլխավորությամբ, քաղաքի ու շրջականների բնակչության օգնությունն էր կազմակերպում՝ կովողներին ապահովելով պարենի ու զինամթերքի պաշարներով։ Աշխարհազորը համալրվում էր նոր ջոկատներով։ Արամը՝ 1915-ին Վանի փրկիչը և հետագա բազմաթիվ դեպքերի իմաստուն կազմակերպիչը, դարձել էր Արարատյան երկրի ոգին։ Հայոց զինվորությունն առաջին անգամ զգում էր թիկունքի ոգևորող ուժն ու բազմակողմանի աջակցությունը։

Առաջին հաղթանակով ոգևորված էր նաև նախօրյակին անձնատվական տրամադրությամբ համակված գեներալ Մովսես Սիլիկյանը։ Այդ նա էր, որ Սարդարապատյան հակահարվածից անմիջապես հետո կոչ հղեց ժողովրդին՝ գրելով.

«Հայե՛ր, շտապեցե՛ք հայրենիքն ազատելու։

Հասել է պահը, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի՝ հայրենիքի փրկության և իր կնոջ, ազգիկների պատվի պաշտպանության, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար...»։

Կասեցված էր անպարտելի համարվող թշնամու առաջխաղացումը։ Եվ բանակի ու ժողովրդի մեկտեղվող ուժն ահագնանում, դնում էր առավել վճռական քայլին. թշնամուն պետք էր ետ մղել։

Վճռական բախումը տեղի պիտի ունենար մայիսի 26-ին՝ Ավարայրի ճակատամարտի օրը։ Զարմանալի այս զուգադիպությունն առաջինը շանթել էր զորավար Փիրումյանին՝ համոզելով, որ վերնայինի մատն է խառնված։ Եվ լուսաբացը Մասիսների առաջ դիմավորելով՝ նա աստծուց խնդրել էր միայն մի բան՝ այսօրվա զինվորության վրա թող թևածեն Ավարայրի նահատակների սուրբ հոգիները։

Հետաքրքիր է վճռական ճակատամարտի ռազմավարական պատկերը, որի մեջ պարզորոշ երևում է Դանիելբեկ Փիրումյանի ճկուն տաղանդը։ Զորամասի շտաբի պետ Ալեքսանդր Շնեուրն իր հուշերում գրել է, թե գիշերը, երբ ծրագրում էին առավոտյան սկսելիք մարտը, գնդապետը հեռախոսով դիմեց դեներալ Սիլիկյանին՝ խնդրելով իր տրամադրության տակ դնելու Խզնաուզի ջոկատը, որի հրամանատարն էր փոխգնդապետ Կարո Ղասաբբաշյանը (աղբյուրներում հիշված նաև որպես Հասան Փաշայան, Հասանբաշյան)։ Սիլիկյանը համաձայնեց, երևի չգուշակելով նույնիսկ, թե այդ խառը պահին ինչպե՞ս պիտի օգտագործվի Սարդարապատից բավականին հեռու գտնվող Խզնաուզյան ջոկատի ուժը։ Իսկ Փիրումյանը թույլտվություն ստանալուց անմիջապես հետո Ղասաբբաշյանին կարգադրեց, իր հրետանային մարտկոցն առած, աջից շրջանց կատարել և հաջորդ օրը հայտնվել թշնամու թիկունքում։ Նրա խնդիրն էր լինելու հրետանային անսպասելի համազարկով խուճապ առաջացնել թուրքաց զորակարգերում և, հաջողության դեպքում, պաշտպանել ճակատամարտի ընդհանուր թափը, հարվածներ հասցնել նահանջողներին։

Ըստ երևույթին, թուրքական բանակի ղեկավարությունը տեղյակ էր հայերի հիմնական ծրագրին և ամեն կերպ ջանում էր իր օգտին վճռել այդ օրվա մարտի ելքը։ Մանավանդ որ դրանից անմիջապես առաջ, Սարդարապատից օգնություն ուղարկված զորագնդերի հետ համագործակցելով, Բաշ-Ապարանում Դրոյի զորքերը ջարդել էին թուրքերին, և հայտնի էր, որ Սարդարապատը կարող է խափանել Երևանի վրա ուղղված թուրքական ծրագիրն առհասարակ։

Հայոց զորքերն առաջին ժամերին միայն կռիվն էին տարացնում՝ սպասելով ամենակարևոր պահին։ Եվ այդ պահը եկավ ճիշտ ժամանակին։ Շնեուրը պատմում է, թե «առավոտան ժամը 9-ին հյուսիսում, Խզնաուզի ջոկատի կողմում, բլուրների հետևում երևաց փոշու ամպ, որ գանդաղորեն սահում էր դեպի արևմուտք. ջոկատն առաջ էր շարժվում»։

Եվ ահա Փիրումյանը Շնեուրին է հանձնում մարտի ղեկավարությունը. «Կապիտան, դուք արդեն ամեն ինչ գիտեք, կռիվ վարեցեք այնպես, ինչպես որ մենք որոշել էինք»։ Իսկ ինքը մեկնում է դեպի կռվողների շղթան։ Այնուհետև շտաբի աշտարակից մարտը դիտող Շնեուրն իր հրամանատարին տեսնում է զորքի առջևից ճերմակ նժույգի վրա դեպի թուրքերի առաջապահ դիրքերը սլանալիս։ Դժվար չէ պատկերացնել, թե թշնամու վրա ինչ ազդեցություն է գործել մեկեն ժայթքած լավայի պես առաջ շարժվող զորամասը, երբ թիկունքից էլ Խզնաուզյան գնդի բոլոր հրանոթներն են միաբերան որոտացել՝ նրա դիրքերի ամբողջ երկարությամբ ցանելով սարսափ ու մահ։

Կարմիր կրա՞կ, աստծո պատի՞ժը թուրքաց գլխին։ Սարսափը փոխվում է խուճապի, և խուճապահար «թուրքերը փախուստի են դիմում՝ լքելով իրենց ռազմամթերքը, պաշարակիր սայլերը, իրենց վիրավորներին ու սպանվածներին» (Շնեուր)։

* * *

Մեր հանրապետության պետական արխիվում պահպանվում են հռչակավոր նկարիչ Հակոբ Կոջոյանի ձեռքով գծված երկու քարտեզներ, որոնք պատկերում են Սարդարապատի հերոսամարտի ավարտը։

Առաջին քարտեզում ներկայացված է պատերազմող կող-

մերի դասավորությունը մայիսի 27-ի ժամը 15-ի վրա։ Այստեղ երկաթգծի ուղղությամբ պատերազմական գիծը գտնվում էր Արաքս կայարանից արևելք, քանի որ կայարանը դեռևս թուրքերի ձեռքին էր։ Կայարանից հարավ, մինչև Արաքս գետի եղեգնուտները, համարյա ուղիղ գծով, դասավորված էին թուրքական երկու գնդեր՝ ամրացված քրդական հեծելազորով ու տեղական մահմեդական բաշիբոզուկներով։ Կարա-բուրուն կայարանում, Արաքսի թիկունքում, պահեստային ուժեր կային, որոնք օգնության պիտի հասնեին արաքսցիներին, եթե սրանք չդիմանային հայկական զորքերի ճնշմանը։ Երկաթգծից հյուսիս մինչև Արազածի փեշերը, Գելիպոլու կամ Դարդանելյան դիվիզիայի գնդերն էին զբաղեցնում։ Այստեղ էին՝ հարավից հյուսիս՝ 106-րդ, 107-րդ և 108-րդ գնդերը, որոնք աջից ու ձախից օժանդակ ուժեր էին ստացել Կարաբեքիր փաշայի դիվիզիայից։

Մայիսի 27-ի ժամը 15-ին, ըստ առաջին քարտեզի, Գառնեցի Մակեդոնի ու Թռուցիկ Հովսեփի հեծյալ ջոկատները նորից դիրքեր էին գրավել Արաքսի ափին, Կարա-բուրյանդ բլրի մոտերքում, Ղուրդուղուլիից հարավ-արևմուտք։ Հավանաբար նրանք այդ օրը խնդիր են ունեցել կասեցնելու թշնամու առաջխաղացումը։ Արաքս կայարանից արևելք նոր հարձակման անցած թուրքերի դեմ կանգնած էին Պերեկրյոստովի պարտիզանները։ Իսկ դրանից հյուսիս, ամբողջ ճակատով, թուրքական 36-րդ դիվիզիայի դեմ ճակատում էին Պողոսբեկ Փիրումյանի գնդի գումարտակները, առաջինը՝ հյուսիսում, երկրորդը՝ կենտրոնում, երրորդը՝ հարավային եզրում։ Նրանց թիկունքում պահեստի ուժերն էին դասավորված՝ մի վաշտ Իգդիրի գնդից, մյուսը՝ Կարսի գնդից։

Այսքանը՝ մայիսի 27-ի ժամը 15-ին։

Երկրորդ քարտեզը ներկայացնում է հակառակորդ ուժերի, ավելի ճիշտ՝ հայոց զորքի դասավորությունը մայիսի 27—28-ի գիշերվա առումով։ Հայոց զորքի, որովհետև այնտեղ, քարտեզի սահմաններում, այլևս թուրքեր չկան. նրանք խուճապահար, կոտորվելով ու գերի ընկնելով մեջտեղից վերացել էին, և քարտեզագիր նկարիչը հարմար է գտել ցույց տալու միայն հաղթանակած, հայրենի հողը կիլոմետր առ կիլոմետր ազատագրած հայ զորքի դասավորությունը։ Այստեղ զորքի մի

մասը պահեստային է՝ Մակվի գնդի մնացորդները Թալիշում, Երզնկայի գնդից կազմված գումարտակն ու Հինգերորդ գնդի երկրորդ գումարտակը՝ Ջիմնի-ղրի ու Թուլքի-թափայի ստորոտներում, ճակատի կենտրոնական մասում Մահապարանների (Հինգերորդ) գնդի առաջին ու երրորդ գումարտակները թուրքերի Դարդանելյան դիվիզիայի սնափառ գնդերին հալածելով հասել են Ղարա-բուրուն գյուղի ու Ղարա-բուրուն բլրի մոտերքը։ Աջ թևում Պանդուխտի հեծյալ ջոկատը, ներքին Թալիշն անցնելով, թուրքերին հետապնդում է Քյուլ-թափայի արևմտյան ստորոտներում։ Ձախ թևում գնդապետ Պերեկրյոստովի պարտիզաններն են առաջ գնում՝ արդեն նվաճած Մաստարա և Կարա-բուրուն կայարանները։ Թուրքերը ոչ թե նահանջում, այլ ճողոպրում են՝ լքելով իրենց դիրքերը, պարենն ու կողոպուտով կուտակած հարստությունները։

Այստեղ էլ պետք է ավարտվեր հայ ժողովրդի Սարդարապատյան հերոսամարտը։

Մայիսի 27-ի երեկոյան Թիֆլիս հասավ Երևանյան ռազմաճակատի հրամանատար Մովսես Սիլիկյանի հեռագիր-զեկույցն այն մասին, որ «Երեքյա համառ մարտերից հետո Սարդարապատի ուղղությամբ թուրքերը, թևերից շրջանցված ու ջարդված, ետ են շպրտվել բոլոր դիրքերից։ Մեր զորքերը հետապնդում են և արդեն հասել են Ղարաղուլա կայարանի ու Սոֆլիլու գյուղի գիծը։ Թուրքերի կորուստները նշանակալից են...»։

Զորավարը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին հաղորդելու բարի լուր ուներ նաև Երևանյան ճակատի մյուս ուղղությամբ՝ Թաշ-Ապարանի վերաբերյալ։ «Միաժամանակ Թաշ-Ապարանի ուղղությամբ երկու գունդ զորք ու թնդանոթներ ունեցող հակառակորդը, որ նեղել էր մեր առաջապահ հեծյալ ջոկատներին, երկօրյա համառ մարտերից հետո, մայիսի 27-ի երեկոյան դեմ, գլխովին ջարդված ետ է շպրտվել։ Այդ մարտերում մեր կորուստներն աննշան են։ Զորքի ոգին հրաշալի է։ Այս պահին մեր զորաջոկատներն զբաղեցնում են ուժեղ դիրքեր և սահմանազատման գիծն են հաստատում։ Գեներալ Սիլիկյան»։

Հայոց զորքը հետապնդում էր գլուխը կորցրած թշնամուն։ Սարդարապատյան ռազմաճակատի հաղթանակով ոգե-

վորված հայ ժողովուրդը,— տեղացի ու գաղթական, կին ու տղամարդ, ծեր ու երեխա,— ապրում էր այն ցնծությունը, որ չէր տեսել դարեր ի վեր։ Չէ՞ որ պետական ինքնուրույնությունը կորցնելուց հետո առաջին անգամ հայը հաղթել է իր թշնամուն, հաղթել է Թուրքին՝ բոլոր հին ու նոր թշնամիներից ամենադաժանին ու ամենաաղետավորին։

Թշնամին շարդվել էր Սարդարապատում և գլխապատառ փախչում էր հայ հետապնդող զորքերի առաջ, որոնց հայացքներն արդեն շոյում էին Ալեքսանդրապոլի բերդի աշտարակները։ Իսկ դենը հայոց բզկտված հողերն էին՝ Իգդիրն ու Սուրմարին, Կարսն ու Սարիղամիշը, հայոց կիսավեր ավաններն ու շենները...

Մայիսի 26-ից սկսած՝ հայոց զորքն ու աշխարհազորայինները հետապնդում էին դեպի Ալեքսանդրապոլ նահանջող Թուրքերին։ Հաղթանակի բերկրանքը ճաշակած հայ վրիժառուներից խուսափելու համար Թուրքական դիվիզիայի մնացորդներն ու քրդական հեծելազորը երկու օրվա մեջ ճողոպրեցին մինչև Արաքսի աջ ափը, և Բաթումից այնտեղ հասած Վեհիբ փաշան տեսավ իր զորքի խայտառակ պարտությունը։

Հնարավո՞ր պիտի լիներ կանգնեցնել խուճապահար փախչողներին, կասեցնել հայերի հարվածները, նորից շարժվել դեպի էջմիածին ու Երևան։ Երեք Թուրք զորավարը, որ լավ էր ճանաչում իր զինվորությանը, Սարդարապատի դասով ճանաչել էր նաև հայոց ուժը և արդեն հասկանում էր, թե ի՞նչ կարելի է սպասել պատերազմի շարունակությունից։ Նա հենց մայիսի 26-ին էլ կրնկի վրա վերադարձավ Բաթում և հայ պատվիրակների հետ սկսեց խոսել ուրիշ լեզվով։

Հայ զինվորությանն ու աշխարհազորայիններին վիճակված չէր շարունակելու իրենց հաղթական երթը և վայելելու հաղթանակի պտուղները։

Սարդարապատում ու Բաշ-Ապարանում շարդ կրելով՝ Թուրք պարագլուխները Բաթումում անմիջապես զինադադար առաջարկեցին։ Եվ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներն էլ, ընդունելով նրանց առաջարկությունը, հայ զորքին կարգադրեցին զենքը ցած դնել ու սպասել խաղաղության դաշնագրին։

Սովորաբար Սարդարապատի ճակատամարտը համեմատում են այն փառավոր կռվի հետ, որ հայ ժողովուրդը Պարսից բռնակալության դեմ է մղել հինգերորդ դարում Տղմուտ գետի ափին, Ավարայրի դաշտում։ Իրոք, այդ երկու ազատամարտերն իրենց էությամբ շատ են նման։ Երկու դեպքում էլ թշնամական գերակշիռ ուժերի դեմ կազմակերպվել է ժողովրդական պատերազմ, որին մասնակցել են հայության բոլոր խավերը՝ կռվելու և հաղթելու կամ փառքով նահատակվելու պատրաստակամությամբ։ Բայց եթե Ավարայրը Պարսից արքունիքին միայն համոզել էր, որ հայ ժողովուրդն իր ազատությունն ու ազգային ինքնությունը պաշտպանելու համար պատրաստ է մինչև վերջ կռվելու, ապա Սարդարապատը կատարեց նաև հաջորդ ու հաջող քայլը՝ ապացուցեց, որ հայ ժողովուրդը կարող է հաղթել անցյալ հաղթանակներով հղփացած, անհամեմատ մեծաքանակ թշնամուն։

Սարդարապատն էր, որ հայությանը փրկեց վերահաս վերջնական բնաջնջումից և դարձավ նրա վերածնության նախաշեմը։

Մայիսի 28-ին, Սարդարապատից ու Բաթումից ստացված բարի լուրերով ոգեշունչ, Թիֆլիսում նստող Հայոց ազգային խորհուրդը հավաքվեց կարևորագույն իր ժողովին և արեց մի հայտարարություն, որի համեստ ու անաղմուկ բառերն աշխարհին հաղորդում էին Հայոց պետականության վերականգնումը կամ նոր պետության ծնունդը։ Ահա այդ հայտարարությունը, որ ընդունվել է մայիսի 28-ին և հրապարակվել 30-ին։

«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն ու միակ իշխանություն։ Որոշ ծանրակշիռ պատճառներով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար։

ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴ»։

1918 թ. մայիսի 30,
Թիֆլիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒՍ ՈՒ ԿԵՍ ՏԱՐԻՆ

Այն ծնվեց 1918 թ. մայիսի 28-ին և ասպարեզը թողեց 1920-ի նոյեմբերի վերջին։ Ապրեց ընդամենը երկուս ու կես տարի։ Երկուս ու կես տարի, որը հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանի շարունակությունն էր։ Եվ դա ո՛չ թե նրա ստեղծողների ու կառավարողների մեղքով, ինչպես մինչև այսօր ներկայացրել են մեր աշառու պատմաբաններն ու գաղափարախոսության բնագավառի մյուս աշխատողները, այլ իրերի բերումով և պատմական անբեկանելի իրողությունների դաժան դասավորությամբ։

Այլ բան է իրական-պատմական մարդկանց արած-թողածը, որը դարձյալ ներկայացվել է ո՛չ անկողմնակալ, ո՛չ արդար չափանիշներով։ Մերոնք այն համարել են մի աննախադեպ աղետ, որն ազգին հասցրել է կործանումի դուռը. իբր Դաշնակցությունը նրա համար էր գործի դրել անցել և կառավարության հիստական սանձերն իր ձեռքը վերցրել, որպեսզի հայ ժողովրդի տունը քանդի։

Դաշնակցական ուսումնասիրողներից ոմանք էլ դրությունն այնպես էին ներկայացնում, թե այդ երկուս ու կես տարին մեր ազգի պատմության ամենափառավոր հատվածն են կազմում՝ արժանի միայն հախուռն գովաբանության ու պանծացումի։

Հարկ կա՞ պնդելու, որ երկու տեսակետներն էլ մոլորություն են, իրականությունը ծուռ հայելու մեջ դիտելու հետևանք։

Հարկ կա՞ ասելու, որ վաղուց ժամանակն է մեր ընթերցողի առաջ բացելու ճշմարտությունը, խնդրո առարկա ժամանակի և նրանում տեղ գտած դեպքերի, այս դեպքերին ուղղություն տված դեմքերի մասին խոսելու իրատես արդարամտությամբ։

1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասյան սեյմը կամ, այսպես կոչված, միացյալ կառավարությունը փլվեց, և նրա երեք առանձին մասերից գոյացան անկախ կառավարություններ. 26-ին՝ Վրաց մենշևիկների հանրապետությունը, 27-ին՝ Ադրբեջանի մուսավաթականները, և 28-ին էլ հայ դաշնակցականները, այլ ընտրություն չունենալով, հայտարարեցին, թե կազմում են Հայաստանի անկախ իշխանությունը։ Մենդյան վկայականը գրել են Թիֆլիսում նստող Հայոց ընդհանուր ազգային խորհրդի անդամներ Ավ. Ահարոնյանը, Ն. Ադբալյանը, Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը։ Ընդունվել է 28-ին և հայտարարվել 30-ին։

Մենք նրան ծանոթացանք նախորդ գրույցում։

Այդ հայտարարությունից հետո էր, որ Ալ. Խատիսյանի, Հ. Քաջազնունու և Մ. Պապաջանովի պատվիրակությունը հունիսի 4-ին Բաթումում Հայոց անկախ հանրապետության անունից դաշնագիր կնքեց Թուրքերի հետ։ Դաշնագրի ստորագրող պայմանները վրդովմունքով ընդունվեցին հայ ժողովրդի բոլոր խավերի կողմից։

Սակայն պատվիրակության ղեկավար Խատիսյանն Ազգային խորհրդի նախագահ Ահարոնյանին գրած նամակում իրեն երջանիկ էր համարում, որ վկան էր եղել Հայոց նոր պետականության ծնունդի և համոզված էր, թե մեր փոքրիկ բույնն ամուրճանաբար կծավալվի, կընդարձակվի, կդառնա ամենայն Հայոց նրազած տունն ու հայրենիքը։

Այսպես, ծանր երկունքով ծնվել էր Հայոց նոր պետականությունը, որի պահպանությունը և պաշտպանությունը լինելու էին ավելի ծանր ու դժվար։

Հանրապետության առաջին իսկ օրերին նրանից հեռացան Անդրանիկն ու իր զորքը։ Ժողովրդական մեծ զորապետն անհաշտ էր այն կառավարության հետ, որը համարում էր, իբր, հայաբեր Թուրքի պարգևածը։ Եվ քաշվելով Զանգեզուր, ասես այնտեղ ստեղծել էր իր պետությունը Հայաստանի հանրապետության կողքին։

Հիմա գուցե դժվար է այդ քայլի արդարացումը գտնել, քանի որ այն օրերի Հայաստանը, թեկուզ և փոքրիկ, թեկուզ խեղճ ու անճար, բայց փաստորեն հայ ժողովրդի մնացորդաց հավաքատեղին էր և ամենայն պաշտպանության կարոտ։

Բայց որքա՞ն երախտապարտ ենք զորավարին, որ Զանգեզուրում նստած՝ այն փրկեց թշնամիների ներխուժումից։ Հակառակ դեպքում երևի հանրապետությունն անկարող լիներ դիմադրել մուսավաթին, որն այս կողմերում եռանդուն գործում էր՝ թուրքերի և ծախու անգլիացիների բազմակողմանի հովանավորության ներքո։

Հայոց նոր քաղաքական վարչության ծնունդն արդեն իրողություն էր։ Սակայն երբ պիտի ոտքի կանգներ ու քայլեր, նրա առաջ ծառացան մեծ ու փոքր անհամար դժվարություններ։ Նախ՝ ովքե՞ր պիտի լինեն այդ կառավարության կազմում։ Եթե դաշնակցականները համոզված էին, որ իրենք են կազմելու նոր կառավարության կորիզը, ապա ժողովրդական կուսակցությունը պահանջեց, որ դաշնակցականները թողնեն առպարեզը, որպեսզի իրենք, միայն իրե՞նք տնօրինեն երկրի բախտը։ Եվ դրա համար բավարար հիմքն այն էին համարում, որ նոր կառավարությունը պարտավոր պիտի լիներ թուրքերի հետ լեզու գտնել, մի բան, որ դարձյալ, դատելով վերջին տարիների արած-թողածից, դաշնակցության համար անհնար էր լինելու։

Ո՛չ պակաս բարդություն էր ստեղծել նաև այն հարցը, թե կառավարությունը որտեղ էր նստելու։ Ազգային խորհրդի անդամները, որոնցից ոմանք արդեն կառավարության կազմի մեջ էին մտել, չէին ուզում պոկվել Թիֆլիսից։ Նրանք ու ժողովրդական կառավարության պարագլուխները հարմար էին համարում Երևան ուղարկել մի պատվիրակություն, որն այնտեղ պիտի կազմի «տեղական կառավարություն», իսկ Հայոց ազգային խորհուրդը, որպես համազգային մարմին և իշխանության գլուխ, պիտի մնար Թիֆլիսում։

Վերջապես, երբ կազմված էր կառավարության կորիզը (վարչապետ Հ. Քաջազնունի, արտաքին գործոց նախարար՝ Ալ. Խատիսյան, ներքին գործոց նախարար՝ Ա. Մանուկյան, ելևմտական նախարար՝ Խ. Կարճիկյան, զինվորական նախարար՝ Հ. Հախվերդյան), Ազգային խորհրդի ու կառավարության՝ հուլիսի 13-ին գումարված միացյալ նիստում Հովհաննես Քաջազնունին, դաշնակցականների միահամուռ պաշտպանությամբ, դրեց Երևան փոխադրվելու, այնտեղ «մեր սեփական տանն» ապրելու և գործելու առաջարկությունը։ Հակառակ

դեպքում, սպառնում էր նա, ինքը կհրաժարվի վարչապետի պարտականություններից։

Հովհաննես Քաջազնունին՝ ժամանակի դաշնակցության ամենաշրջահայաց գործիչներից մեկը, իր սեփական ու համառ կարծիքն ուներ նաև կառավարության կազմի մասին։ Նա գրում էր, որ միայն կոալիցիոն-դեմոկրատական կառավարությամբ, բոլոր կուսակցությունների, աշխատավորական բոլոր խավերի միահամուռ ու միաձույլ եռանդով հնարավոր կլինի երկիրը հանել քայքայված-քաոսային վիճակից։

Եվ հուլիսի 17-ին կառավարությունն ու Ազգային խորհուրդը մեկնեցին Երևան, տեղ հասան 19-ին։

Հաջորդ օրերին Թիֆլիսից եկած Հայոց ազգային խորհրդից, Երևանի ազգային խորհրդից և հայաստանաբնակ այլազգիների՝ թաթարների, եզդիների ու ռուսների ներկայացուցիչներից կազմվեց Հայաստանի խորհուրդը, որը պիտի լիներ առաջին օրենսդիր մարմինը հայոց հողի վրա։

Այդ խորհրդի առաջին իսկ նիստում պետք է ընդունվեր հանրապետության պետական դրոշը։ Հայագետ Ստ. Մալխասյանի զեկուցման հիման վրա խորհուրդը հաստատեց այն՝ հորիզոնական կարմիր, կապույտ ու նարնջի գույների համադրությամբ։ Դրոշն ասես խորհրդանիշն էր այն հույսի ու վստահության, թե դարեր շարունակ արյամբ իր հողն ու ինքնությունը պաշտպանած հայ ժողովուրդը, հայրենի կապույտ երկնքի տակ, աշխարհին հայտնի իր անհուն եռանդով ու տքնությամբ, կվերաշինի երկիրը, կստեղծի իր երազած երջանկությունը։

Օգոստոսի սկզբին Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստում նախագահ Ավետիք Սահակյանը ճառ կարդաց նորածին հանրապետության վիճակի և խնդիրների մասին ու նրա համար գծեց մի վարդագույն ապագա։ Նա գտնում էր, օրինակ, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե ուժով, գրավված հողամասերի վերաբերմամբ մեր արդար ու անվիճելի իրավունքների պաշտպանությամբ։

Առավել զգաստ խոսեց վարչապետ Քաջազնունին, նշելով, որ հայոց նորաստեղծ պետությունն ամեն ինչ սկսում է ոչ միայն զրո կետից, այլև պարտավոր է «քաոսի ու ավերակների կույտից ստեղծել կենսունակ և աշխատավոր մի մարմին»։

«Կասեցնել քայքայման ընթացքը, երկիրը հանել անիշխանության վիճակից և ստեղծել պայմաններ պետական շինարարության համար, ահա թե ներկա կառավարությունն ինչպե՞ս է ըմբռնում իր կոչումը»։ Ապա Քաջազնունին շարադրեց անելիքները պետական կյանքի բոլոր բնագավառներում՝ ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, զինվորական, արտաքին գործերի...

Սակայն այդ նիստում ելույթ ունեցան նաև տարբեր կուսակցությունների անդամներ (մենշևիկ Հ. Ազատյանը, բոլշևիկ Ա. Մելիքյանը, սոցիալ-հեղափոխական Ա. Խոնդկարյանը և այլք), հասարակական տարբեր խավերի ու ազգությունների ներկայացուցիչներ, և պարզվեց, որ սայլը տեղից չպետք է շարժվի, որովհետև լծկանները քաշում են տարբեր ուղղություններով։

Այս խառնիճաղանջի մասին հանգամանորեն խոսելով՝ Ս. Վրացյանը հետագայում գտնում էր, որ իր կյանքի հենց առաջին օրերից Հայաստանի հանրապետության «խորհուրդը դուրս եկավ ներքին շաղախից զուրկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով և անակնկալներով հարուստ մի մարմին։ Նրա այս հիվանդությունը բնածին էր և մինչև վերջ էլ կարելի չեղավ դարմանել»։

Սակայն, ինչ էլ որ լիներ, ծնվել էր Հայաստանի նոր պետականությունը։ Այն պետք է առաջ գնար, զարգանար ու ամրանար։ Եվ եթե ունենալու էր ավելի շատ խոտորումներ, քան բնականոն վերելք, դա էլ հետևանք էր ոչ թե իր բնածին հիվանդության, այլ առավելս, միջազգային բարդ իրադրության։

Կառավարողը՝ ժողովուրդը, պատրաստ էր վերածննդի ու բնական զարգացման, խանդավառ աշխատանքի և մեծ հաղթանակների։ Ասում են, երբ խորհուրդն առաջին նիստից հետո սպարապետ Նազարբեկյանի գլխավորությամբ կազմակերպել է զորահանդես, և զինական նոսր, բայց խրոխտ շարքերի վրա ծածանվել է հայոց դրոշակը, փողոցներ ելած հայությունը երջանիկ ցնծություն է ապրել, մարդիկ արտասվել են ուրախությունից. Հայոց նոր պետությո՞ւն, խորհրդարա՞ն, կառավարությո՞ւն, զորք ու դրոշա՞կ... Ի՜նչ իրականություն պիտի բացվեր, ինչպիսի՜ ճանապարհ, ի՜նչ բաղձալի հեռանկար...

Գործի գլուխ կանգնածները կարծես գիտեին էլ, թե ինչպես պիտի հասնեին այդ հեռանկարին։ Տեսեք ի՜նչ ծրագիր է ընդունել հանրապետության օրենսդիր մարմինը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված խորհրդարանը։ Ահա նրա առաջին նստաշրջանում (1919 թ. օգոստոսի 10-ին) հաստատած ծրագրային խնդիրներից մի քանիսը։

«Ժողովրդական լուսավորության գործի մեջ կառավարությունը պիտի ղեկավարվի հետևյալ սկզբունքով՝ ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթություն։

«Արտաքին քաղաքականության մեջ կառավարությունը հավատարիմ պիտի մնա նույն քաղաքականությանը, որին հարած է եղել մինչև այժմ հայ ժողովուրդը... Միաժամանակ կառավարությունը պիտի ջանա ստեղծել բարեկամական փոխհարաբերություններ հարևան պետությունների հետ և փոխադարձ համաձայնությամբ կարգավորել Հայաստանի սահմանների հարցը, որ հանդիսանում է միակ պատճառը շարունակական զժգոհության և թյուրիմացության։ Ո՛չ մի դեպքում սահմանային վեճերը Հայաստանի ու հարևան պետությունների միջև չպիտի լուծվեն զենքի ուժով։

«Կառավարությունը մեր երկրի ներսում ձգտում է Հայաստանի հանրապետության դեմոկրատական նպատակներին, աշխատելով իրականացնել բոլոր քաղաքական ազատությունները. այդ բանի համար կառավարությունը հիմնական բարեփոխումների է ենթարկում վարչական ամբողջ կազմը՝ ձգտելով ազդայնացնել այն՝ մայրենի լեզուն գործածության մեջ մտցնելով...

«Կառավարությունը պիտի իրականացնի կալվածատիրական, վանքապատկան և, մանավանդ, գինեգործական բոլոր հողերի ազգայնացումը, պիտի բաժանի այդ հողերը սակավահող գյուղացիության՝ ըստ աշխատանքի նորմայի և կարիքի։

«Կառավարությունն ամեն կերպ պիտի աջակցի կոոպերատիվներին, ամեն տեսակի միություններին՝ այս ձևով խրախուսելով ժողովրդական նախաձեռնությունը գյուղատնտեսության և անասնագործական արդյունաբերական վարկի շրջանում։

«Արդարադատության գործն ամուր հիմքերի վրա դնելու համար կառավարությունը մտցնում է դատարաններում ընտրական սկզբունքը... Գործավարությունը դատարանում պետք

է տարվի պետական լեզվով, դատավարությունը՝ մայրենի»։

(Այս «մայրենին», անշուշտ, Հայաստանում բնակվող ո՛չ հայ ազգություններին է վերաբերում, քանի որ մի կետով էլ պարտադրվում է կիրառել «ազգային կուլտուրական լայն ինքնավարության սկզբունքը օտարացեղ ժողովուրդների վերաբերմամբ»)։

Հատուկ կետերով կառավարության պարտականության մեջ էին մտցվում գաղթականության հարցի կարգավորումը, աշխարհասփյուռ հայության ազգահավաքը («Փոխացնել Հայաստանի սահմաններից դուրս մնացած հայերի վերադարձը իրենց հայրենիքը»), վերականգնումը Հայաստանի ավերակների ևն, ևն։

Հայոց նոր ու անփորձ կառավարությունը հնարավորություն պիտի ունենա՞ր իրականացնելու իր այս նվազագույն ծրագիրը։ Ներքին ու արտաքին պայմանները նպաստավո՞ր էին մի այդպիսի ծրագիր իրականացնելու համար։

Քաջազնունու «անձն քառսը» մեղմ բնորոշումն էր այն զարհուրելի վիճակի, որի մեջ հայտնվել էր իր պատմական հայրենիքի մի անկյունում կուլ եկած հայ ժողովուրդը։

Արդյունաբերություն համարյա չկար, և այն կառավարական որոշումներում շոշափվում էր սոսկ իբրև մշուշոտ հեռանկար։ Գյուղատնտեսության առաջարժումը տևական ժամանակ էր պահանջում և խոշոր միջոցներ, որոնք դժվարությամբ էին հայթայթվում։ Մեծ զոհողությունների գնով առաջին քայլերը կատարվեցին մշակույթի ու ժողովրդական կրթության ասպարեզում։ Հարյուրավոր նոր դպրոցներ բացվեցին։ 1919 թ. մայիսին կառավարությունը համալսարան հիմնելու որոշում ընդունեց, այն բացվեց 1920-ի հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ պատմալեզվագիտական, իրավաբանական, ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական ու գյուղատնտեսական բաժիններով, ավելի քան 600 ուսանողներով։

Սակայն պետության ծրագրերի մեծագույն մասն այնպես էլ անկատար մնաց կամ թողնվեց գալիք օրերին, քանի որ ներսից ու դրսից նեղում էին անհամար արգելքները։

Սովն ու համաճարակները բռնել էին ամբողջ Հայաստանը։ Մահն այնքան սովորական էր ու առատ, որ դիակները հողին հանձնելը դարձել էր անհնար։ Ահավոր չափերի հասան հատկապես գաղթականների կորուստները։ Սովից փրկվածները մահանում էին տիֆից ու անտերությունից։ Տիֆին զոհ գնացին ոչ միայն գաղթականների ու տեղացի աշխատավորական խավերի հազարավոր ներկայացուցիչներ, այլև հանրապետության բազմաթիվ պատասխանատու աշխատողներ։ 1919 թ. հունվարի 26-ին տիֆի զոհ դարձավ Սարամը՝ 1915—18 թթ. հայկական իրականության երևի թե ամենաերախտավոր գործիչը։

Հունվարի երկրորդ կեսին կառավարությունը որոշեց օգնության համար դիմել համաշխարհային հասարակայնությանը, հատկապես ԱՄՆ-ին։ Դրա համար արտասահման մեկնեց վարչապետ Հ. Քաջազնունին, և վարչապետի պաշտոնակատար դարձավ Ալ. Խատիսյանը։

Մայիսի 20-ին Բաքում հասավ ամերիկյան առաջին նավը 125 հազար փութ ալյուրով, իսկ մի շաբաթ անց ստացվեց ևս 600 հազար փութ։ 1919 թվականի ընթացքում Ամերիկայից Հայաստան եկավ մեկ միլիոն 295 փութ ալյուր։

Դեռ մարտին Ամերիկայի Նպաստամատույց կոմիտեն էր Հայաստան եկել և ստանձնել 15 հազար որբերի երկու տարվա հոգատարությունը։ Ըստ նախնական հաշիվների, այս նպատակների համար Նպաստամատույցը ծախսել էր 90 միլիոն ռուբլի։

Օգնությունն օգնություն, սակայն ներքին ուժերը դժվարությամբ էին գործի դրվում, քիչ արդյունք էին տալիս, և դա էլ լուծվում էր կարիքի ու չարիքի առատության մեջ։

Կարճակյաց հանրապետության մարմինն ուտող որդերի մեջ երևի թե ամենավտանգավորը հոգեբանական այն մթնոլորտն էր, որ մեկ բառով կարելի էր կոչել անմիաբանություն։ Անմիաբանություն՝ պետական ու հասարակական գործիչների, կուսակցությունների ու հասարակական խավերի, մանավանդ արևմտահայերի և արևելահայերի միջև։

Երբ ծանոթանում ես Հայաստանի խորհրդարանի կազմակերպած զանազան հավաքների մասին եղած տեղեկություններին, ամենից շատ զարմանք են պատճառում այն խոսքերը, որոնք վերաբերում են երկրի ու ժողովրդի միասնության ապահովմանը, միաձույլ ազգի կուռ հանրության ստեղծմանը... Եվ միաժամանակ չես կարող չնկատել նրա բացակայությունը պետության

ու հասարակության առօրյայում՝ վերից վար ու վարից վեր։

Ժամանակակիցներից մեկը հանրապետությունում տիրող անիշխանական-ամբոխավարական մթնոլորտն այսպես է ներկայացնում. «Ժողովուրդն արդեն կառավարություն ուներ, սակայն տեր չուներ իր գլխի վրա, որովհետև այդ ժողովուրդ կոչվածն ինքը դեռևս ի վիճակի չէր իր գլխի վերև հանդուրժելու որևէ իշխանություն, ենթարկվելու պետական կարգապահության ու բարոյական նորմերի»։

Ժողովուրդը մեղք չուներ, դարերի անիշխանական մղձավանջն իր տխուր գրոշմն էր դրել նրա հոգու, վարքի վրա, և նոր կառավարությունն էլ չէր կարող հպարտանալ իր հաստատած կարգապահությամբ։ Խմբապետական հոգեբանությունը, մանր իշխանավորների կարգազանցությունները, աշխատավորական խավերի աղքատությունն ու դրկանքները, մանավանդ գաղթականության վիճակը (բնակչության մեկ երրորդը գաղթական էր) երկրում մի այնպիսի քաոս էին ստեղծել, որ ոչ ոք իր գլխի տերը չէր։

Միաձուլության ծարավ ուներ հանրապետության սահմաններից ներս գտնվող հայությունը։ Կառավարության մեջ ներկայացված չէին հարյուրհազարավոր գաղթականները, որոնք ակամա էին դարձել նոր պետության քաղաքացիներ։ Ներկայացված չէին և այդ պատճառով էլ իրավունք ունեին մտածելու, թե իրենց հանդեպ խորթություն կա այստեղ, Արարատյան երկրում։ Այդ պատճառո՞վ չէր, որ 1919-ի փետրվարին Երևանում նրանք հավաքվեցին իրենց՝ Արևմտահայոց երկրորդ համագումարին, ընտրեցին սեփական գործադիր մարմին, որը, համաձայն նույն համագումարի որոշման, ունենալու էր վարչական ինքնուրույն միավորի իրավունքներ ու պարտականություններ։ Իսկ այս նշանակում էր՝ համագումարը ծնել էր մի նոր իշխանություն, որը պիտի ապրեր ու գործեր Հայաստանի նորաստեղծ պետության ներսում։

Այս գործադիր մարմնի ստեղծողները, ի՞նչ խոսք, սնունդ էին առել Փարիզում Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ գործող մի կազմակերպության ծրագրով, որի վերջնական նպատակն էր ամբողջ Հայաստանի միասնական անկախությունը։

Հայաստանի մեծագույն մասն անբնակ էր և Թուրքի լծի տակ, իսկ Փարիզի երազողն այն «ազատել էր, միացրել» փոքրիկ հանրապետությանը և «ստեղծել» «միացյալ, անկախ Հայաստան»։

Նուբար փաշան ու համախոհներն այնքան շոշափելի և իրական էին տեսնում իրենց նպատակը, որ որոշել էին Միացյալ Հայաստանի պետական կառուցվածքը, հենց իր՝ Պողոս Նուբարի միանձնյա առաջնորդության պայմանով։ Նա՛ պիտի լիներ մեծ Հայաստանի վարչապետը, որ նստելու էր Փարիզում, նաև խաղաղության համաժողովի հայկական պատվիրակության անփոփոխ նախագա՛հը, որ ունենալու էր անսահմանափակ ու անքննելի իրավունքներ։

Այս հավակնոտ ծրագրերը նոր Հայաստանի քաղաքացիներին թույլ չավին փոխըմբռնումի գալ նույնիսկ այն ժամանակ, երբ բանակցությունների էին հավաքվում արևմտահայերի ու արևելահայերի դիվանագիտական պատվիրակությունները (Նուբար փաշայի ու Ահարոնյանի գլխավորած խմբերը Փարիզում 1919 թ. ամառնամուտին և Վ. Թեքեյանի ու Ս. Վրացյանի պատվիրակությունների բանակցությունները Երևանում նույն թվականի հոկտեմբերին)։

Հանրապետության տարածքի ծավալման տեսակետից առաջին տարվա վերջում բավական նպաստավոր էին միջազգային հարաբերությունները։ Անգլիացիները, որ մինչ այդ մահմեդականների շահերն էին պաշտպանում, հիմա նույնիսկ իրենց զորքերը տրամադրեցին, որպեսզի արևմտահայկական մարզերի վրա տարածվեն Հայաստանի հանրապետության իրավունքները։

Եվ եթե ամիսներ առաջ Լոռին վերանվաճելու համար հայ-վրացական բախումներ եղան, ու հայրենի հողը հարյուրավոր հայ զինվորների արյան գնով միայն հնարավոր եղավ միացնել հանրապետությանը, ապա հարավում անարյուն հաղթանակ էր նախատեսված։ 1919 թ. ապրիլին անգլիական ու հայ զորքերը միասին շարժվեցին Արաքսի աջափնյակով և 24-ին մտան Կարս։ Այնտեղ քաղաքացիական նահանգապետ նշանակվեց Ստեփան Ղորղանյանը, զորքերի հրամանատար՝ գնդապետ Հովսեփյանը։

Եվ այսպես, հանրապետությանն էր միացվում Արաքսի աջափնյակի բավական մեծ մի տարածություն՝ Կարսի շրջ-

ջականերից մինչև Իգդիր։ Ասես դուռ էր բացվում դեպի Արևմտահայաստանի խորքերը... Մնում էր ամուր ոտք դնել այդ եզերքներում, յուրացնել հողը, վերականգնել տնտեսությունը՝ այստեղ վերաբնակեցնելով գաղթականներին, որոնք-սփռված էին Արաքսի ձախ ափին, Անդրկովկասի մյուս մասերում ու Հյուսիսային Կովկասում։

Հանրապետությունն ի վիճակի պիտի լինե՞ր իրականացնել այս կարևորագույն խնդիրը, որից կախված էր լինելու Հայության ապագան։

Այս ամենի համար առաջին հերթին անհրաժեշտ էր տևական խաղաղություն։ Իսկ հանրապետությունն այդպիսի երջանկությունից զուրկ էր իր գոյության երկուս ու կես տարվա համարյա ամբողջ ընթացքում։

Հանրապետության արտաքին քաղաքականությունը, որ ասոիճանաբար դաշնակցության ղեկավարության մենաշնորհն էր դարձել, առաջին մի քանի ամիսների ընթերում ու անորոշ քայլերից հետո բռնեց մի ճանապարհ, որը չէր կարող շտանել դեպի երկրի քայքայում ու կործանում։ Խի՞ստ է ասված։ Բայց այդպես էր իրականությունը։ Հանրապետությունը, ռազմաքաղաքական խարխուլ վիճակում գտնվելով հանդերձ, չկարողացավ լեզու գտնել նույնիսկ մերձավոր հարևանների հետ (չնայած խորհրդարանի առաջին իսկ նիստում ընդունել էր ծրագիր, որով «պիտի ջանար ստեղծել բարեկամական փոխհարաբերություններ հարևան պետությունների հետ և փոխադարձ համաձայնությամբ կարգավորել Հայաստանի սահմանների հարցը»...), իսկ հեռավորների մեջ էլ փնտրել նրանց «բարեկամությունը», ովքեր խաբել էին նախընթացին և խաբում էին հենց այդ օրերին։

Փաստերի համար հեռուն չգնանք. դաշնակցությունը, անկախ մի շարք ազդեցիկ ղեկավարների ռուսական հաստատուն կողմնորոշումից, ջանում էր ոչ մի կապ չունենալ Ռուսաստանի հետ։ Սակայն 1919 թ. գարնանն ու ամռանը Ռուսաստանի հարավում գլուխ բարձրացրած և մասնակի-խաբուսիկ հաջողություններ ձեռք բերած Դենիկինի «կառավարության» հետ համառորեն փնտրում էր բարեկամության ու համագործակցության ուղիներ։

Իսկ ինչպիսի՞ն էին հարաբերությունները հարևանների հետ,

հնարավո՞ր եղավ հասնել փոխըմբռնումի։ Դժբախտաբար այս ասպարեզում վիճակը սկզբից իսկ վատ էր, և դա էլ պայմանավորված էր սահմանային այն վեճերով, որոնցում իրեն արդար ու իրավացի էր համարում կողմերից յուրաքանչյուրը։ Այսպես. դեռևս 1917 թ. թուրքական առաջխաղացումը դեպի Թիֆլիս կասեցնելու համար Վրաստանի զորամասերն զբաղեցրել էին Ախալքալաքի ու Լոռու շրջանները։ Թուրքերի նահանջից հետո, 1918-ի ամռանից ի վեր, Հայաստանի կառավարությունը քանի՜ անգամ դիմել էր Վրաց մենշևիկյան կառավարությանը՝ առաջարկելով խաղաղ բանակցություններով լուծել հարցը և վերադարձնել այդ շրջանները, որոնք ոչ միայն պատմականորեն պատկանում են Հայաստանին, այլև վեճերի օրերին հայտնի էին իրենց բնակչության մեջ հայերի բացարձակ գերամասնությամբ։ Սակայն մենշևիկները միշտ էլ պատասխանում էին, թե հիշյալ շրջանները ո՛չ պատմականորեն, ո՛չ աշխարհագրական տեսակետից, ո՛չ էլ ազգագրական կազմով ոչ մի ժամանակ Հայկական չեն եղել։

Եվ եթե այդ մթնոլորտում վրացիները կորցրել էին միայն հարևանի բարեկամությունը, ապա հայերի համար խզումը նաև զրկանքների նոր ու վտանգալից պատճառ էր դարձել. Թիֆլիսի երկաթգծո՛վ պիտի Հայաստան հասներ երկրի ապահովության անհրաժեշտ ապրանքների կեսից ավելին։ Եվ ահա փակվեց այդ գիծը։

Այս հողի վրա դեկտեմբերին ծագած պատերազմը տևեց շուրջ երկու շաբաթ։ Բանակցությունները փոխադարձ մեղադրանքների ու անբարյացակամության մթնոլորտում ձգձգվեցին մոտ երեք ամիս և ավարտվեցին պայմանագրերով, որոնք կիսատ-պռատ կարգավորում էին դիվանագիտական հարաբերությունները, երկաթուղային հաղորդակցությունն ու փոստ-հեռագրական գործը։

Սակայն այսքանը բավակա՞ն էր երկրի արտաքին հարաբերությունների մեջ խաղաղ շրջան ապահովելու համար, երբ Հայաստանի հանրապետության զարգացման դեմ կանգնած էր առաջին և խոշորագույն խոչընդոտը՝ Թրքությունը։

Հայտնի է, որ օսմանյան Թուրքիան ու մուսավաթական Ադրբեջանը ձգտում էին միավորման, և նրանց այդ ծրագրի իրականացման համար կարևորագույն խնդիր էր Նախիջևան-

Զանգեզուր-Կարաբաղ գոտու վրա իրենց տիրապետության տարածումը։ 1918—20 թթ. իրադարձությունները տալիս են անառարկելի ապացույցն այն իրողության, որ երկու հայատյաց պետություններն ամեն ինչ անում էին Հայաստանի խըզճուկ հանրապետությունը դրսից խեղդելու և ներսից պայթեցնելու համար։

Հանրապետության ստեղծմանը հետևել էր Թուրքական զորքերի եռաքշումը հյուսիսային Հայաստանից։ Բայց այստեղ մնացել էին նրանց Թուրք ու ադրբեջանցի թափթփուկները, որոնք ստեղծել էին տեղական մահմեդական, այսպես կոչված «շուրա» (թուրք.՝ «խորհուրդ») ինքնավարությունները։ «Շուրաները» դաղտնի ու ակնհայտ գործողություններով ընդդիմանում էին հայկական իշխանություններին, կազմակերպում էին ընդվզումներ նրանց դեմ, ավազակային հարձակումներով խափանում էին Հայաստանի խաղաղ վերականգնման գործը։

Թուրքերը Կարսում, Նախիջևանում, Զանգիբասարում և այլ կետերում ունեին իրենց զորքն ու սպառազինությունը։ Օսմանցիները Հայաստանից հեռանալիս իրենց ամբողջ զինամթերքը նրանց էին թողել, իսկ դրամ Ադրբեջանն էր տրամադրում։ Եվ, այսպես, արյունաքամ Հայաստանում, քաղցկեղի իրար հետ կապված պալարների պես, «շուրաները» քայքայում էին երկրի մարմինը, նախապատրաստում էին Թրքության հաղթանակը նաև Արարատյան մարզում։ Նրանք այդ նպատակով շարունակարար հակապետական ընդվզումներ էին կազմակերպում, պարբերական հարձակումներով խռովում էին հարևան հայկական մեծ ու փոքր բնակավայրերի առանց այն էլ խաթարված կյանքը։ Այս տեսակետից (մանավանդ նման իրառնակչությունների դեմ հանրապետության անկարողությունը ցույց տալու համար) շատ բնորոշ է Վեդիի հայտնի դեպքը։

Բազմաթիվ հակահայկական ու հակակառավարական խրժգրժություններից հետո 1919 թ. հուլիսի 1-ին Վեդիում բուն դրած ավազակները Դավալուի (այժմյան Արարատ) մոտերքում կոտորեցին ավելի քան 20 հայ զինվորների ու գեղջուկների։

Հանցագործներին պատժելու համար հանրապետության ղեկավարներն ստիպված եղան զինական ուժեր տանել Վեդիի վրա։ Իսկ այս ավանում և հարևան թրքաբնակ գյուղերում կային ավելի քան չորս հազար կռվողներ, որոնք էլ ոտքի ելան պատժիչ ջոկատի դեմ։ Սրանք ոտքի ելան, որպեսզի պաշտպանեն իրենց «սպանելու իրավունքը»։ Ապստամբներին աջակցող մահմեդականները հակահայկական վայրագություններ սկսեցին Շարուրի ու Նախիջևանի կողմերում։ Եվ քանի որ նրանց հաջողությունները բավական նշանակալից էին, ապա Հայաստանում մուսավաթական Ադրբեջանի ներկայացուցիչ խան Թեքինսկին գաղտնագրով իր կառավարությունից հարցնում էր՝ հետագա ի՞նչ քայլեր պիտի ձեռնարկել, արդյոք ժամանակը չէ՞ արշավել Երևանի վրա։ Օգոստոսի 3-ին Թեքինսկին վարչապետ խան Խոյսկուն հեռագրում է. «Անհրաժեշտ է, որ երկու շաբաթվա ընթացքում Ադրբեջանը մաքրի Զանգեզուրի հաշիվը և զորքերը շարժի մինչև Ղամարլու»... Հաջորդ օրն էլ հանդամանալից տեղեկություններ էր հաղորդում հայկական զորքերի տեղաշարժի մասին[1]։

Հանրապետության կառավարությունը Թեքինսկուն վտարեց Երևանից... Սակայն դա բնավ էլ չփոխեց դրությունը, որովհետև ինչպես նրա փոխարեն մուսավաթական կառավարության ներկայացուցչի պաշտոնով Երևան եկած Հախվերդովը, այնպես էլ տեղերում մահմեդական օջախների ղեկավարները պիտի շարունակեին քայքայիչ աշխատանքը Հայաստանի հանրապետության դեմ։

Դրությունը «չկարողացան» բարելավել նաև Հայաստան ժամանած անգլիական ու ամերիկյան ուժերը։ Շարուրում ու Նախիջևանում ապստամբած մահմեդականներն այնքան ինքնուրույնացան, որ հայտարարեցին, թե իրենք էլ հայկական Լեռնային Ղարաբաղի պես պիտի կառավարվեն սեփական ազգային խորհուրդով, մինչև որ Փարիզի վեհաժողովը վերջնական վճիռ հանի իրենց մասին։

[1] Այս խան Թեքինսկու դիվանագիտական աշխատությունների մասին սկզբից իսկ գիտեին Հայաստանում, ուշադրությամբ հետևում էին հակապես նրա ծածկագիր հեռագրերին, որոնք լիքն էին լրտեսական տեղեկություններով, հակահայկական քայքայիչ առաջարկություններով ու հանձնարարություններով։ Այդ են ծակում գրական այն խաղերը, որոնց նպատակն էր կաշառել մեծ տերությունների ներկայացուցիչներին ու հակահայ ուժերին՝ երկրում քայքայիչ աշխատանքներ ծավալելու նպատակով [տե՛ս «Գաղտնի փաստաթղթեր» (Ադրբեջանի դավադրական գործունեությունից մի էջ), Երևան, 1920]։

Դրությունը ծանրացավ Արաքսի աջափնյակում։ Մահմեդական խառնակչություններից կաթվածահար էին դարձել Կարսի ու շրջակաների հայկական իշխանությունները։

Ճիշտն ասած, Կարսը հանրապետության ամենաթույլ կետը մնաց և դա ոչ միայն նրա շուրջ մահմեդականների չդադարող խառնակչությունների պատճառով։

Արաքսի աջափնյակի վրա հայկական իշխանությունն անխախտ դարձնելու համար երևի թե չկար առավել անսխալ եղանակ, քան գաղթականներին այնտեղ վերադարձնելը, տնտեսական ու ռազմական կարևորագույն կետերում ամրանալը։ Սուկայն, ցավոք, հանրապետության ղեկավարությունն այդպես էլ շուրջ երկու տարվա ընթացքում չկարողացավ կենսագործել իր այդ խնդիրը։ 1920-ի վերջին, Թուրքերի անարգել նվաճումներից հետո, ժամանակի մեր շրջահայաց գործիչներից մեկը, հայոց պարտության պատճառները թվարկելիս, հիշում էր, որ այնտեղ հայկական իշխանությունն իր գոյությունը պահպանում էր տնկեցի և ոչ թե տիրոջ իրավունքով։ Անգամ Կարսի պես խոշոր կետի երեք տերերը՝ գեներալ-նահանգապետ Ղորղանյանը, բերդապետ Փիրումյանն ու զորքերի հրամանատար Հովսեփյանը տարբեր ուղղությամբ էին քաշում և մինչև վերջ չկարողացան լծվել միասնական ու նպատակասլաց գործունեության։

Հանրապետության կառավարությունն ուժ չունեցավ լուծելու նաև երկրի արևելյան նահանգների հարցը։ Նախիջևանը, Զանգեզուրն ու Ղարաբաղը կովախնձոր էին դարձել, բայց նրանց համար հայկական կողմից համարյա կովող չկար։ Եվ այս պարագայում Զանգեզուրը փրկվեց լոկ այն պատճառով, որ սկզբից իսկ Անդրանիկն այնտեղ նստած էր և նահանգը պաշտպանեց Թուրքերի ու մուսավաթականների ներխուժումից։

Հանրապետության կառավարությունն արդեն բացահայտ փակուղու առաջ էր կանգնել 1920-ի ապրիլին, երբ հարևան Ադրբեջանում հաստատված խորհրդային կարգերն իրենց հովանու տակ առան նաև Ղարաբաղը և սպառնում էին Զանգեզուրին ու հարակից շրջաններին։

1920 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքերը մտան Կարս։

Կարսի անկումը Հայաստանի հանրապետության վերջի

սկիզբն էր, սակայն ղեկավարները, ի ցավ ազգի ու հայրենիքի, այդ չհասկացան։ Հակառակ դեպքում կձեռնարկեին այն միակ ճիշտ քայլը, որն ստիպված եղան ընդունել ու կատարել Ալեքսանդրապոլը կորցնելուց հետո։ Մնում էր աչքերը փակ դիտել ռուս-ադրբեջանական, ռուս-թուրքական բարեկամության ու համագործակցության զարգացման կայծակնային թափը և, դրա կողքին, եթե լինում էին իրատեսության պահեր, ապա բանակցություն փորձեր անել ռուսական կողմի հետ՝ նրանից սպասելով փոխըմբռնում, ավելի ճիշտ՝ զինական ու տնտեսական դիջումներ՝ ի վնաս նրա բոլշևիկյան շահերի...

Հանրապետության վերջին ամիսների վերաբերյալ հրապարակի վրա եղած փաստաթղթերից ու հանրահայտ իրողություններից կարելի է կատարել մի այսպիսի եզրակացություն. եթե Հայաստանում խորհրդային կարգեր հաստատված լիներն 1920-ի մայիսին և ոչ թե ուղիղ կես տարի հետո, ապա այդպիսի Հայաստանի սահմանների մեջ թերևս հնարավոր լիներ պահել ոչ միայն Կարսի մարզն ու Սուրմարիի գավառը, այլև Նախիջևանն ու Ղարաբաղը։ Չէ՞ որ այս դեպքում հենց նման սահմանների մեջ գտնվող հանրապետությունից, Ռուսաստանի դաշնակից պետությունից ո՞չ Թուրքիան կարող էր Արաքսի աջափնյակը պոկել, ոչ էլ Ադրբեջանը կհամարձակվեր հավակնություններ ցուցադրել դեռևս բնակչության գերամասնություն ունեցող Նախիջևանի և, մանավանդ, համարյա բացարձակապես հայաբնակ Ղարաբաղի վրա։

Ամենայն հավանականությամբ Երևանում անմիջապես իմացել էին, որ բոլշևիկները նոյեմբերի 29-ին Քարվանսարայում (Իջևանում) հռչակել են Հայաստանի խորհրդայնացումը։ Հաջորդ օրն արդեն վերսկսվեցին բանակցությունները Լեզրանի և դաշնակցական կառավարության ներկայացուցիչներ Դրոյի ու Հ. Տերտերյանի միջև։ Դրանք տևեցին երկու օր, և դեկտեմբերի 2-ին էլ, իբրև այդ բանակցությունների արդյունք, կընքվեց ու հրապարակվեց մի փաստաթուղթ, որով Հայաստանը հանձնվում էր բոլշևիկների իշխանությանը։

Այս դաշնագրի հետ միասին անկասկած, երկու կողմերի համաձայնությամբ, նույն դեկտեմբերի 2-ին հռչակվեց և հեռագրով գավառական իշխանություններին ու զորամասերի

պետերին հաղորդվեց «ակտ» կոչված հետևյալ փաստաթուղթը.

«Ի նկատի ունենալով սրտաջին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ի իր նիստում որոշեց հրաժարվել իշխանությունից և զինվորական ու քաղաքացիական ամբողջ իշխանությունը հանձնել ղորաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտոնում նշանակել ռազմական նախարար Դրոյին»։

Ստորագրում են լուծարքի ենթարկվող կառավարության անդամները։

Ամեն ինչ պարզ է. նախկին հանրապետության կառավարությունն ասպարեզից հեռանում է՝ երկրի տեր ճանաչելով խորհրդային իշխանությունը՝ հանձին Հեղկոմի, և վերջինս պիտի տնօրինի հայ ժողովրդի բախտը, իր խոսքն ասի Հայաստանի մի մասը նվաճած ու Ալեքսանդրապոլում նստած թուրք բռնակալներին։ Մանավանդ որ, ինչպես համաձայնագրի մեջ էր նշվում, «Թուրքիան խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապես անհրաժեշտ զինվորական ուժեր կենտրոնացնելու Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունը պաշտպանելու համար»։

Տեղի ունեցավ անարյուն հեղաշրջում։ Գ. Կ. Օրջոնիկիձեն է վկայել, թե Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու համար ոչ մի դնդակ չի արձակվել։ Հեղկոմը դեկտեմբերի 2-ին Երևան է մտել համաժողովրդական խանդավառության ուղեկցությամբ։ Հայության բոլոր խավերը հույս ունեին, թե վերջ է տրվում իրենց ազգային ու մարդկային ամեն տեսակ տառապանքներին, և սկսվում է հայոց կենսագրության խաղաղ-ստեղծագործական եռուզեռի շրջանը...

Այսպես փակվեց հայոց նոր պետականության առաջին փուլը։ Հայաստանի Հանրապետությունը, ուղիղ երկուս ու կես տարվա իր կենսագրության վերջակետը դնելով, կամավորապես հեռացավ ասպարեզից, և Հայաստանը հռչակվեց խորհրդային, հայ ժողովուրդը մտավ իր պատմության մի նոր շրջան, որն առաջին իսկ օրից լինելու էր ոչ պակաս աղետավոր ու անհեռանկար։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱՏԵՆԱՎԱՐԱՆԸ

Հայ ժողովրդի կողմից քաղաքակիրթ մարդկությանը պարգևած բառերից մեկն էլ «Մատենադարանն» է, որ նշանակում է հինավուրց ձեռագիր մատյանների (գրքերի) պահոց։

Այս բառով է կնքված Երևանի ամենաշքեղ փողոցի ծայրին, կանաչափառ Զեյթունի էլուծքը զարդարող այն շենքը, որ միայն վերջին մեծ պատերազմից հետո է կառուցվել, սակայն իր մեջ պարփակում է հայոց հին ու փառավոր մշակութային ժառանգության մի բնագավառի՝ ձեռագրական գործի լավագույն մասը։

Այս ձեռագիր մատյանները արժեքավոր են ոչ միայն նրանով, որ ունեն հին ու միջնադարյան հեղինակների երկերի նախնական օրինակները, հաճախ կորսված և այլուստ անհայտ, այլև գրիչների, այդ ձեռագրերն ստեղծողների սքանչելի վարպետությունն են ներկայացնում, նրանց հիշատակարաններն իրենց ժամանակներին տեղի ունեցած նշանավոր քաղաքական, տնտեսական ու մշակութային անցուդարձերի մասին... Եվ մեծ մասամբ էլ ծաղկազարդված են այնպիսի մանրանկարիչների կողմից, որոնց գործերն այսօր, հարյուրամյակներ հետո, շլացնում են գեղանկարչական հզոր ուժով, գույների ակնախտիտ հարստությամբ։

Մատենադարանի հարստագույն հավաքածուն խորհրդային կարգերի հաստատումից հետո է Երևան փոխադրվել էջմիածնի Մայր աթոռից։ Իսկ Մայր աթոռ-կաթողիկոսարանի ձեռագրատան հիմքը դրվել է չորրորդ դարի վերջի ու հինգերորդի սկզբի մշակութային եռուզեռում, և նրա առաջին մատյանները էլ գրվել են մեր գրի ու գպրության հայր Մեսրոպ

Մաշտոցի, Սահակ Պարթև կաթողիկոսի և նրանց աշակերտների ձեռքերով։

Մեսրոպ Մաշտոցի կենսագիր Կորյունը և Քերթողահայր Մովսես Խորենացին, որ վկաներն ու առաջին տեղեկատուներն են եղել մեր սեփական գրերով դպրություն ստեղծելու նախնական եռանդուն քայլերի, պատմում են, թե ինչպես էին ստեղծվում թարգմանական ու ինքնուրույն, եկեղեցական ու արտաքին գրականության մատյանները։

Ո՞ւր են հապա դրանք՝ սուրբ Մեսրոպի ու նրա աշակերտների ստեղծած առաջին մատյանները,— կարող է հարց տալ բծախնդիր ընթերցողը։

Այդ առաջին մատյանները, անընդհատ ու անխոնջ գործածության մեջ լինելով, մաշվել-սպառվել են, բայց նրանցից յուրաքանչյուրը եղել է ոչ միայն ընթերցանության ձեռնարկ, ուսումնառության աղբյուր, այլև դարձել է հաջորդ մատյանները ծնող մայր. նրանցից ընդօրինակվել-ստեղծվել-ծնվել են նոր մատյաններ, որոնք և շարունակել են հնամենի մատենադարանի կյանքն ու գործը։ Մեր հնագույն մագաղաթյա մատյաններից, այդ անխոնջ ու անդուլ աշխատավորներից մնացել են միայն պատառիկներ, որոնք, որպես սրբազան մասունքներ, հետագայում ստեղծվածների կազմերին կամ էջերին կարվելով, արդար ու սուրբ զորություն էին տալիս նորերին, ապահովում էին մեր մատենագրության, այսինքն՝ մեր Մատենադարանի շարունակականությունը, նրա հավերժությունը։

Ուրեմն, հենց Մեսրոպ Մաշտոցի օրերում Էջմիածնի Մայր աթոռում ստեղծվեց ձեռագիր մատյանների մայր պահոցը՝ մեր առաջին մատենադարանը։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ սույն ժամանակից մենք ունենք «մատենադարան» բառը, որ առաջին անգամ գործածված ենք տեսնում Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի թարգմանության մեջ, այն թարգմանության, որն անպայման կատարված է համարվում Սահակի ու Մեսրոպի առաջին աշակերտների կամ էլ հենց Մովսես Խորենացու ձեռքով, այսինքն՝ հինգերորդ դարի կեսում։

Իսկ նույն դարի երկրորդ կեսում ապրած Ղազար Փարպեցու հայտնի թղթում անուղղակի վկայություն է պահպանվել Էջմիածնի Մայր աթոռի մատենադարանի մասին։

Հետագայում, քաղաքական աննպաստ պայմաններից դրդված, Հայոց կաթողիկոսությունը տեղից տեղ է փոխադրվել. 484 թ. Վաղարշապատից Դվին տարվելով, որոշ ժամանակ հետո էլ հանդրվանել է տարբեր կենտրոններում՝ Աղթամարում, Արգինայում, Անիում, Փոքր Հայքի Ծամնդավում, Քեսունի Կարմիր վանքում, Ծոփքում, Կիլիկյան Հայքի Սիս մայրաքաղաքում, որպեսզի 1441-ին վերստին և ընդմիշտ վերադառնա ծննդյան տեղին՝ Վաղարշապատ-Էջմիածին։ Իր հետ, իհարկե, նա տուն է բերել տարագիր Մայր աթոռի հալածական մատենադարանը, որը եթե անցած ավելի քան հազար տարվա ընթացքում անընդհատ հարստացել էր ու ճոխացել, ապա համարյա անընդմեջ էլ կողոպտվել էր, ենթարկվել էր հրդեհների ու ավերածությունների՝ բաժանելով հայրենի երկրի և նրա հոգևոր ու քաղաքական բոլոր օջախների բախտը։ Բայց այստեղ՝ Էջմիածնում ևս բազմապատկվել էին սահակ-մեսրոպյան շրջանից ի վեր անընդմեջ ստեղծվող ու նորոգվող ձեռագրական գանձերը, և դրանք էլ իրենց գիրկն ընդունեցին տարագրությունից տուն դարձող հարազատներին։

Հին աղբյուրներն անհամար վկայություններ ունեն մեր ձեռագիր մատյանների ջլխներին եկած բազմատեսակ ու անհամար աղետների մասին։ Փավստոս Բուզանդն, օրինակ, պատմում է, որ Պարսից արքան Հայոց թագավոր Արշակ Բ-ին իր Անհուշ բերդում ցմահ բանտարկությանդատապարտելով՝ Արշակի պաշտած Ավետարանն էլ, որ Էջմիածնում ստեղծվածներից էր, շղթայակապ անել է տվել և բանտարկել իր գանձատանը։

Շապուհը միայն կյանքի տակ է առել մեր ձեռագիրը։ Իսկ Մուհամմեդի ժառանգներն այդպիսիք անխնա ոչնչացնում էին՝ մտածելով, թե դրանք են ում, զորություն և անհնազանդության կորով պարկեշտում հայ մարդկանց։

Եվ այս պատճառով է, որ սելջուկ-թուրքերը միայն մեկ արշավանքի ընթացքին, 1170 թ., Սյունիքի Բաղաբերդում ոչնչացրել կամ գերեվարել են ավելի քան 10 հազար ձեռագիր մատյան։ Այդ մասին Ստեփաննոս Օրբելյանն է կսկիծով պատմում։

Իսկ սելջուկների հետքերով եկած թաթար-մոնղոլներն արդեն իրենց շահն ավելի հասկանալու չափ խելք էլ էին ձեռք բերել. կողոպտում ու գերեվարում էին հայոց մատենադարան-

ները, ապա ձեռագիր մատյանները վաճառում կամ անասելի ծանր փրկագնով վերադարձնում նրանց հայ տերերին։

Քանի դարերը հառաջանում էին, այնքան բազմազան էին դառնում աղետները, նախորդների վայրենի փորձերն արհամարհելով, հնարում էին ավելի սոսկալիներն ու առավել աղետավորները։ Օրինակ, 1827—28 թթ. ռուսական արշավանքների ականատեսը ամենայն մանրամասնությամբ պատմում է, թե Մշո Սուրբ Կարապետ վանքն այդ ժամանակ ինչպես կողոպտեցին հարևան քուրդ ավազակախմբերը՝ ձեռագիր մատյաններն էլ առ էլ վառելով։

1828 թ. Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին և այս թվականից հայ ժողովրդի արևելյան հատվածի հետ միասին, հայոց կաթողիկոսության ու նրա մատենադարանի գոյությունը ևս ապահովվեց մեկընդմիշտ։ Հայտնի է, օրինակ, որ Ալեքսանդր Բ ցարը (1818—1881) հատուկ կարգադրություն է արել էջմիածնի մատենադարանի ձեռագրերը դասակարգելու, ցուցակագրելու և կանոնավոր խնամքի տակ առնելու մասին։

Դեռևս 1828 թ., Ալեքսանդր Բ-ի կարգադրությունից տասնամյակներ առաջ, Մանվել Կյումուշխանեցու ձեռքով կազմված ցուցակի համաձայն էջմիածնի մատենադարանն ուներ ընդամենը 1809 ձեռագիր։ Շուրջ տասնհինգ դարու կուտակումներից փրկվել էին միայն այսքան ձեռագրեր, որոնց թիվը հետագայում անընդհատ պետք է աճեր՝ ընդգրկելով նորանոր միավորներ պատմական Հայաստանի տարբեր վայրերից, վանական կենտրոններից ու անհատական հավաքածուներից։ Ինը տարի հետո, 1837 թ., Հովհաննես Շահխաթունյանցի կազմած ցուցակում արդեն նշված էին 2740 ձեռագրեր, այսինքն՝ 931 միավորով ավելի, քան 1828-ին։ Եվ այս աճն այնպես արագ ու անխաթար էր կատարվում, որ 1915 թ. դառն տարում էջմիածնի մատենադարանն ուներ արդեն 5660 ձեռագիր։

Ավարտվել էր առաջին աշխարհամարտը, և նորաստեղծ Հայոց հանրապետության ու նրան փոխարինած խորհրդային Հայաստանի նախաձեռնությամբ հայագիտական լավագույն ուժերը լծվեցին Մատենադարանի հարստացմանը և ունեցած ժառանգության գիտական մշակմանը։

Սկիզբ դրվեց, այսպես կոչված, ներքին սփյուռքի օջախների ձեռագրաց հայրենադարձին։ Քսանական թվականների սկզբին իսկ Հայաստանի կառավարության կարգադրությամբ Մատենադարան փոխադրվեցին աշխարհամարտի օրերին Մոսկվայում հանդրվանած հայերին ձեռագիր մատյանները։

Հիշենք, որ Սանասարյան վարժարանը 1900 թ., ըստ հավաստի աղբյուրների, ունեցել է 220 ձեռագիր։ Լազարյան ճեմարանից Մատենադարանին հասած ձեռագրերը 224-ն էին, Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերությունից եկածները՝ 179, Նոր Նախիջևանից՝ ավելի քան 400։

Իսկ անհատ երախտավորներից ստացվածնե՞րը։ Մի խաչիկ վարդապետ Դաղյան Մատենադարան է բերել այնքան ձեռագրեր, պատարիկներ, ձեռագիր փաստաթղթեր, հրովարտակներ, կոնդակներ և այլապես աղբյուրագիտական նյութեր, որոնք կարող էին մի առանձին հաստատության հիմք դառնալ։

Բանասեր, գրող ու հասարակական գործիչ Թորոս Ազարյանի հավաքածուն, բաղկացած 94 միավորից, այժմ գտնվում է Մատենադարանում։

Հովհաննես Թումանյանի հավաքածուն՝ քառասունութ ձեռագիր։

Առանձնահատուկ երախտագիտությամբ ենք հիշում այն սփյուռքահայերի անունները, որոնք իրենց հավաքածուները կամ եղակի ձեռագրերն են նվիրել, հաճախ գնել և տուն են վերադարձրել կամ ջանադրաբար կազմակերպել են հարյուրավոր ձեռագիր մատյանների հայրենադարձը։

Այդ անունների շարքում իր առանձնահատուկ և, իհարկե, ամենաբարձր տեղն ունի ամերիկահայ Հարությունն Հազարյանը, որն ամենատարբեր ճանապարհներով արտաշխարհ ընկած մեր մշակութային գանձերի անմրցակից հավաքողն ու մայր հայրենիքին նվիրաբերողն էր։ Ասենք, որ նրա ձեռքով հայրենադարձված միայն ձեռագրերի թիվն այժմ հասնում է չորս հարյուրի։

Հազարյանին հարց են տվել՝ ինչո՞ւ այդպիսի զոհողությունների՝ գնով (հիշենք, որ արտասահմանում լավագույն ձեռագիր մատյաններից յուրաքանչյուրը հարյուր հազարավոր դոլ-

յարներով է գնվում), այդքան զրկանքով ու տառապանքով Հայաստան ես տանում ձեռագիր մատյանները։ Եվ նա պատասխանել է. «Մեր այս անգնահատելի գանձերը սփռված են ամբողջ աշխարհում, և չկա որևէ կաղմակերպություն կամ մարմին, հոս թե Եվրոպա, այս որբերը հավաքելու և փրկելու օտարացումն ու փճացումն։

Ինձի համա՞ր չէ այս արվեստի գործերու քովին անցնիլ անտարբեր, առանց խանդավառվելու և հուզվելու։

...Հայրենիքեն դուրս հայկական ձեռագրերը և այլ թանգարանային իրերը ո՞ր թանգարանին մեջ, ո՞ր հասատատության և անհատի մոտ ալ գտնվին, ես կը նկատեմ հայերուս համար ի վերջո կորսված, մինչև որ անոնք վերադառնան հայրենիք, զանոնք ստեղծող ժողովուրդի ծոցը»։

Իմաստա՞ն խորհուրդ, որ իրենց համար միշտ էլ ուղեցույց ունեն մեր ազգային մշակույթի անխոնջ բարեկամները։

Եվ ո՞րն է այս բարերարությունների ու հավաքչական բազմատեսակ աշխատանքների արդյունքը. 1920 թ. շուրջ վեց հազարի փոխարեն Մատենադարանն այժմ ունի ավելի քան տասնվեց հազար ձեռագիր։ Տասնվեց հազար ձեռագրական հուշարձաններ, որոնք ոչ թե պարզապես հավաքված են, գտնըվում են թեկուզև ապահով պահոցներում, այլ ի մի են բերված, պարբերաբար բուժվում են, դարձել են ազգային անձեռնմխելի հարստություն։ Մի հարստություն, որն ամեն օր իր ոսկե տոկոսներն է բերում, որովհետև անընդհատ մշակվում, ուսումնասիրվում, դառնում է ժողովրդական լայն զանգվածների սեփականությունը, ազգային նոր մշակույթի զարգացման հենարանն ու խթանող անսպառ ուժը։

1959 թվականից սկսած Մատենադարանը, պահպանելով իր ավանդական ու սրբազան անունը, դարձավ գիտահետազոտական ինստիտուտ։ Մատենադարան-ինստիտուտն աննախադեպ եռանդով ու բարեխղճությամբ սկսեց իրականացնել իր այն խնդիրները, որ ստացել էր մեր նոր կառավարության անդրանիկ օրերին հրատարակված առաջին դեկրետով։ Ձեռագրերի պահպանությունը, նրանց երկարակեցության ապահովումը (նորոգումներ, բուժում, ամեն տեսակ խնամք) կատարվում են գիտության ու տեխնիկայի նոր նվաճումների մակարդա-

կով։ Ձեռագրական ամբողջ հարստությունն ի սպաս է դրվել հայագիտության և առհասարակ հայրենական գիտության բոլոր բնագավառների զարգացմանը։ Երաշխավոր և իրականացվում են գիտահետազոտական ուսումնասիրություններ, որոնց հիմքում ընկած են ձեռագրերի բնագրերն ու նրանց պարունակած անսպառ նյութերը։ Մատենադարանի մասնագետները, ինչպես նաև աշխարհում գտնվող սփռված հայերեն մյուս ձեռագրերի հիման վրա պատրաստվում են միջնադարյան մեր հեղինակների կարևորագույն երկերի քննական բնագրերը, որոնք տպագրվում են հետազոտական ուսումնասիրությունների ուղեկցությամբ։

Աշխույժ գործունեություն ունի նաև Մատենադարանի ցուցասրահը, որի այցելուն ծանոթանում է հայ գրչության և ձեռագրական ու մանրանկարչական արվեստի պատմությանը, ձեռագրաց լավագույն նմուշներին, ցաղափար է կազմում այս գանձարանի կենսագրության կարևորագույն շրջանների մասին։ Եվ պատահական չէ, որ Երևանում առաջին անգամ ոտք դրած յուրաքանչյուր մարդ, պետական խոշորագույն գործից մինչև շարքային եկվորը, իր անհետաձգելի խնդիրն է համարում այցելել Մատենադարան, այն սրբարանը, որի անունն աշխարհին հայտնի է այնպես, ինչպես ուրիշ ժողովուրդների էրմիտաժը, Լուվրը, Դրեզդենը։

Այսօր Մաշտոցյան Մատենադարանի կամարների տակ կարող ենք հանդիպել աշխարհի բոլոր ծայրերից եկած ուսումնասիրողներին։ Նրանցից ամեն մեկն այստեղ հանգրվանած մատյանների մեջ գտնում է իր երկրին ու իր հետազոտության բնագավառին վերաբերող նյութերի ավյուռներ, որոնք միայն այստեղ կարող է գտնել։ Չէ՞ որ մեր Մատենադարանն արաբատառ բազմաթիվ հնագույն ձեռագիր ազգյուրներով հարուստ պահոցներից մեկն է։ Չէ՞ որ նույնիսկ հունարեն, լատիներեն, ասորերեն բազմաթիվ հնագույն երկեր, որոնց բնագրերը կորած են համարվում, այժմ աշխարհին հայտնի են իրենց հայերեն թարգմանություններով, և նրանցով հետաքրքրվող մասնագետները՝ Հունաստանից, Իտալիայից և ուրիշ երկրներից, միայն այստեղ՝ մեր Մատենադարանում կարող են տեսնել իրենց հեղինակների կորսված բնագրերի հնագույն

թարգմանությունների ձեռագրերը, որոնք այժմ իրենք արդեն բնագրային արժեք են ներկայացնում։

Բայց այս գրությունը վերնագրված է «Ամենայն հայոց մատենադարան», և արժե բացատրել, թե ինչո՞ւ «Ամենայն Հայոց...», երբ հայտնի է, որ հայկական մատենադարաններ կան աշխարհի համարյա բոլոր այն երկրներում ու քաղաքներում, որոնցում հանգրվանել են իրենց հայրենի եզերքներից տարագրված հայկական նշանակալից համայնքներ, և տևականորեն բաբախել է հայկական կյանքը։

Աշխարհի բոլոր հայկական մատենադարանները ևս ինչ-որ չափով ներկա են այստեղ։ Եվ այս «ինչ-որը» մի աննշան բան չէ, մի անէական երևույթ, այլ այն կարևորն ու նշանակալիցը, որ կարող է ներկայացնել ամեն մի ձեռագիր մատյան։ Այստեղ են հավաքված աշխարհասփյուռ մեր մատենադարանների տպագիր ու անտիպ ձեռագրացուցակները։ Եվ որովհետև ձեռագրացուցակը դա ձեռագիր մատյանների հանգամանալից նկարագրությունն է՝ նրանց պարունակած հիշատակարաններով և օժանդակ ամեն տեսակ տվյալներով հանդերձ, ապա այս ձեռագրացուցակներին ծանոթացողն ինչ-որ չափով, համարձակվեմ ասել՝ մեծ չափով, տեղյակ է դառնում վերը հիշած աշխարհասփյուռ մեր մատենադարանների ձեռագիր հարստությանը, հնարավորություն ունի կատարելու ամենակարևորը՝ օգտագործելու նրանց հիշատակարանները։

Բայց օտար ափերին գտնվող մեր մատյանները միայն ձեռագրացուցակով չեն ներկա Մաշտոցյան մատենադարանում։ Նրանցից լավագույնները, այսինքն՝ նրանք, որոնց արժեքները չեն կարող սահմանափակվել թեկուզև ընդարձակ ու հանգամանալից նկարագրությունների և հիշատակարանների ընդօրինակության շրջանակներում, այստեղ են հասել խնամքով արված մանրաժապավենների ձևով։ Եվ եթե որևէ ուսումնասիրող կցանկանա ծանոթանալ Երուսաղեմի այսինչ կամ այսինչ ձեռագրի մանրանկարներին, եթե կուզենա սեփական աչքերով տեսնել 12-րդ դարի մեր իմաստուն գրող ու իրավագետ Մխիթար Գոշի ինքնագիր հիշատակագրությունը, որ պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը, ապա Մաշտոցյան մատենադարանի աշխատակիցները սիրաշոժար նրան կտրամադրեն այդ ձեռագրերի մանրաժապավենները...

Հայոց Մատենադարա՞ն։ Այն իրականում օժտված է ոչ միայն իր գրապահոցներում գտնվող տասնվեց հազար ձեռագիր մատյանների ու պատառիկների հարստությամբ, այլև աշխարհում սփռված բոլոր հայկական մատենադարաններում, օտար գրադարաններում ու ձեռագրատներում, նույնիսկ մասնավոր հավաքածուներում պահվող մոտավորապես նույնքան հայերեն ձեռագրերի ուժով ու կարողությամբ։



ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ ԿԱՄ ԻՆՉ ԷՐ ՄԵՐ ՍԱՌՈՒՑԱԾԸ

Հայ ժողովրդի երկար ու դժվար կենսագրության վերջին յոթանասուն տարվա մասին գրվել են անհամար գրքեր։ Զբաղված պարբերական մամուլի հրապարակումները, փաստաթղթերի ու արխիվային մյուս ամենաբազմազան նյութերի կուտակումները, որոնք, իբր թե, հիմք պետք է հանդիսանան սոցիալիստական շինարարության յոթ տասնամյակների պատմությունը հյուսելու համար։ Սակայն այդ բոլորը՝ արխիվային ամեն տեսակ նյութերից մինչև արդեն գրված ուսումնասիրությունները, անհավատալիորեն հեռու են իրականությունից, ժողովրդի ապրած կյանքից, և միայն խղճալ կարելի է ապագայի այն ուսումնասիրողներին, որոնք դրանց հիման վրա պիտի փորձեն հյուսել ժողովրդի պատմությունը։

Վերջին մեկ հնգամյակում ռուսական, տեղ-տեղ նաև ազգային հանրապետությունների պատմագիտության ապաստավորները բազմաթիվ հրապարակումներով ընդհուպ մոտեցել են պատմության սպիտակ ու սև էջերի կարգավորմանը։ Ընդ որում, գործին մեծ օգուտ են բերել ականատեսների վստահելի վկայությունները, ուսումնասիրողների քաջածանոթությունը աղբյուրագիտական նյութերի և նրանց իրական հիմքի միջև եղած տարբերությանը։ Հրապարակվել են հոդվածներ, ակնարկներ, հրապարակախոսական ելույթներ, որոնցում նոր ու ճշմարիտ հայացքով են դիտվում նորագույն պատմության մի շարք հարցեր, բծախնդրությամբ վեր են հանվում անհատի պաշտամունքի ավերածությունները երկրի կենսական բոլոր բնագավառներում ու ոլորտներում։ Առանձնակի աշխուժություն է տիրում ռուսական տնտեսագիտության ասպարեզում. մարդիկ, որոնք տասնյակ տարիներ տեսել ու հանդուրժել են տնտեսական մեքենայի խարխուլ վիճակը և ժողովրդական բարեկեցության անվերջ ու անընդմեջ անկումը, փորձում են խորանալ պատճառների մեջ և ցույց տալ այն ուղիները, որոնք պիտի տանեն դեպի առաջ, դեպի համաշխարհային տնտեսական առաջընթացի մակարդակը։ Այսպիսով, սկզբնավորվել է մեծ ճշմարտության որոնման, արևերես հանելու մի շահագրգիռ շարժում, որը չի կարող չտալ իր արդար պտուղները։

Մեղանում, սակայն, այդ գործընթացը մեծ դժվարությամբ է ասպարեզ գտնում իր համար։ Թմբիրը հազթահարելու և էական քայլեր կատարելու փորձ շատ քիչ բնագավառներում է նկատվում։ Ասենք՝ եղան պատմության մի շարք հարցերի, օրինակ՝ ազգային քաղաքականության ու ազգամիջյան փոխհարաբերությունների քննություններ, հայկական հարցի ու հայկական աղատագրական շարժումների 19-րդ դարի վերջի ու 20-րդի սկզբի դրսևորումների իրատես քննություն, դեպքերի ու դեմքերի մաքրում նախորդ տասնամյակների հակապատմական նստվածքներից։ Ինչ վերաբերում է խորհրդային կարգերի յոթանասուն տարիների պատմությանը, ապա այստեղ մակերեսային քննադատական հայտարարություններից այն կողմ ոչ ոք դեռ չի անցել՝ ո՛չ պատմաբաններից, ո՛չ տնտեսագետներից, ո՛չ փիլիսոփաներից, սոցիոլոգներից և հարակից մյուս գիտությունների ներկայացուցիչներից։

Ի՞նչն է պատճառը։ Մի՞թե մենք չունենք հիշյալ գիտությունների այնպիսի մասնագետներ, որոնք կարողանային գոնե այսօր, երկրում կատարվող վարչաքաղաքական, տնտեսական ու գաղափարական վերափոխումների մթնոլորտում, բաց աչքերով նայել մեր անցած յոթանասնամյա ճանապարհին, ցույց տալ նրա աջն ու ահյակը, գնահատել արդյունքները։

Ունենք, հայ ժողովուրդը մտավորական ուժերի պակաս երբեք չի զգացել, այսօր՝ հատկապես։ Սակայն կա ցավալի մի իրողություն. վերոհիշյալ գիտությունների սանձերը դեռևս հիմնականում գտնվում են մարդկանց ձեռքերում, որոնք զբաղեցրել են ճահճացման շրջանի, նույնիսկ ստալինյան տասնամյակների կեղծ գիտությունը։ Սրանց այն մասը, որ դավանում է բարոյական որոշակի նորմերի, դեռ ծանրությունն է անում հեղափոխական շարժման լծակները, փորձում է գիվանագիտական կապեր ստեղծել նոր գիտական հոսանքի հետ

Հնարավոր է նաև՝ պարզապես անբարոյական է համարում միանգամից հրաժարվելն իր երեկվա քարոզներից, երբ այսօր նույն բերանով պիտի ասի, նույն գրչով էլ գրի երեկվա ասածգրածի ճիշտ հակառակը։ Փորձեք պատկերացնել հասարակական վիճակը մի մարդու, որն ամբողջ կյանքում անխնա դատապարտել ու հայհոյել է մեր ազգային քաղաքական կուսակցություններին, իսկ այսօր պարտավոր պիտի լինի ապացուցել նրանց գոյության իրավունքը, խաղացած առաջավոր դերը մեր հասարակական կյանքում, գլխավորած պայքարի և ձեռք բերած նվաճումների առաջադիմական նշանակությունը։

Մյուս մասը, ամենից առաջ ընկնելով, նույնիսկ ծափահարելով վերակառուցումը, իսկ իրականում չըմբռնելով, ավելի ճիշտ՝ չընդունելով կատարված հեղափոխական շարժման էությունը, համառորեն մնում է հին դիրքերի վրա, ամեն կերպ խանգարում է գիտական ասպարեզում իսկական գիտական մթնոլորտ ստեղծելու անհրաժեշտ գործին, եթե այլևս չի կարողանում ցեխով բերաններ փակել, ապա ցեխ է շպրտում իր դոգմաները չընդունողների վրա... Այսպես եղավ, օրինակ, դեռևս նախկին տասնամյակներից եկող այն վեճի գծով, որ շարունակվում է մեր ազգի ծագման ու վաղնջական պատմության մի շարք հարցերի շուրջ։

Եղել են և կան նաև ուրիշ կարգի մասնագետներ։ Նրանց մասնագիտական կարողությունն այնքան է միայն, որ վիճակագրական տեղեկություններ կցմցեն, սարքեն իրականության պատրանք և հրամցնեն ընթերցողին։ Մեր երկիրը 1970 թ. յոթանասունհինգ անգամ գերազանցել է 1913 թ. արդյունաբերական արտադրանքը։ Հայաստանը 1975 թ., յուրաքանչյուր բնակչի հաշվով, յոթ անգամ ավել էլեկտրաէներգիա է արտադրել, քան եվրոպական այսինչ ու այնինչ երկրները։ Իսկ թե ի՞նչ գնով է արտադրվել այդ էներգիան և, մանավանդ, ի՞նչ է ստացվել նրանից, դա մեր ուսումնասիրողի հասկանալու և ասելու բանը չէր։ Էլ չեմ խոսում սարքովի և սուտ այն տեղեկությունների մասին, որոնք այնպես առատորեն սփռված էին մեր շուրջը, և որոնց ակունքներն ստուգելու հնարավորություն ո՛չ գիտականն ուներ, ո՛չ էլ այդօրինակ տվյալների հեղինակները։ Ուրեմն կարելի է պատկերացնել, թե նման սնունդով դոհացողները ժամանակի պատմության ի՞նչ պատկեր

պիտի ներկայացնեին իրենց գրոտած և հեշտությամբ հրապարակ հանած աշխատանքներում։ Ոչ միայն տնտեսագիտության բնագավառում, որանք այսպես էին կոցահարում նաև հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի, գրականության ու արվեստի հարցերը։

Այսպե՛ս, ուրեմն. հայոց պատմության վերջին յոթանասուն տարիների շրջանը կարոտ է քննական բազմակողմանի ուսումնասիրության, որը մեր գիտության բոլոր բնագավառների միասնական ջանքերով լուծելու առաջնակարգ խնդիրն է։

Հիմա վերլուծական և հատկապես քննադատական կիրքը հաճախ թույլ չի տալիս դրական որևէ քայլ տեսնելու յոթանասուն տարում անցած ճանապարհի վրա։ Մինչդեռ բավական է դարիս տասական թվականներից ժառանգություն մնացած երկրի տնտեսական հետամնացության, մշակութային կյանքի հեղհեղուկ վիճակի և նույն բնագավառների այսօրվա մակարդակի համեմատությունը կատարել՝ համոզվելու համար, որ շատ-շատ կետերում սար ու ձորի տարբերություն կա։ Առկա է առաջավոր կացութաձևի մի ցայտուն մակարդակ, որի համար մենք պարտավոր ենք մեր ժողովրդի ջանասիրությանը, համառությանը և մանավանդ ամենաբարդ վիճակներից ելք գտնելու ավանդական կարողությանը։

Խորհրդային իշխանության յոթանասուն տարիների ընթացքում անուրանալի նվաճումների է հասել հայ ժողովուրդը, և այդ նվաճումներն ընդգրկում են տնտեսության ու մշակույթի բոլոր բնագավառները, և՛ արդյունաբերության, և՛ գյուղատնտեսության, և՛ գրականության ու արվեստի։ Բավական է հիշենք, որ մենք կառուցել ենք Երևան՝ մեր պատմական բոլոր մայրաքաղաքներից ամենաշքեղը։ Երկուս ու կես հազարամյակից ավել կյանք ապրած Էրեբունի-Երևանը 20-րդ դարի սկզբին գավառական այնքան անհրապույր բնակավայր էր, որ երբ ժողովրդական հանգանակությամբ այստեղ պիտի կանգնեցնեին Խաչատուր Աբովյանի արձանը, հայ նշանավոր մտավորականներն ընդվզեցին. ինչպե՞ս կարելի է այսքան անշուք վայրում կարգին արձան դնել։

Հիմա Երևանն աշխարհի ինքնատիպ մայրաքաղաքներից մեկն է՝ իր կենտրոնի շքեղ ճարտարապետությամբ, որը հիաց-

մունք է պատճառում հին ու նոր կառուցողական արվեստի ամենապահանջկոտ սիրահարներին։

Բարձրացել, կենսական բոլոր օղակներում իր արժանի տեղն է գրավել հայ մարդը։ Հանրապետության, նույնիսկ Խորհրդային Միության հասարակական, քաղաքական, գիտական ու մշակութային ասպարեզներում տասնյակ ու տասնյակ հայեր ձեռք են բերել համաշխարհային անուն՝ փառավորելով իրենց ծնած ու սնած ազգին։ Հայրենական մեծ պատերազմի ճակատներում հարյուր հազարավոր խիզախներ իրենց հերոսական վարքով ու գործով արժանացել են ռազմական շքանշանների ու մեդալների։ Նրանցից ավելի քան հարյուր հոգի տուն են դարձել հերոսի աստղերը կրծքներին։ Տասնյակ ու տասնյակ գեներալների և չորս մարշալների առկայությունը փառք կբերեր ամեն մի մեծ ու բազմաքանքար ազգի։ Պատերազմից հետո ևս մեր ազգակիցներն ամենուրեք երկրի առաջընթացը գլխավորողների շարքերում են՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ, երկրային գործերն առաջ տանողների թե տիեզերական անհունները նվաճելու համար տքնող իմաստունների շարքերում։

Այսքանն այսպես է, իհարկե, և սա էլ պատիվ է բերում մեր ժողովրդին, նրա հանրությունը կազմող զանգվածներին ու անհատներին։

Սակայն, դժբախտաբար, վերջին յոթանասուն տարվա մեր ազգային և մանավանդ համամիութենական պատմության համար ոչ միայն և ոչ այնքան այսօրինակ սրտապարար տվյալներն են բնորոշ, որքան տնտեսական ու քաղաքական, մշակութային ու բարոյական ասպարեզների ահռելի ձախողանքները, ժողովրդի կենսամակարդակի պարբերական անկումները և, մանավանդ, հասարակարգի քաղաքական ու բարոյական այնպիսի ձևախեղումները, որոնց վերացման և հասարակության առողջացման ընթացքը երևի թե խլելու է առասպելական միջոցներ, շատ ջանքեր ու ժամանակ։

Այդօրինակ թերությունները ոչ թե Հայաստանին հատուկ երևույթ էին, այլ, ամենից առաջ, բնութագրական այն հասարակարգի համար, որին որդեգրվել էր նաև Հայաստանը։ Դրա մեջ համոզվելու համար բավական է նայել Խորհրդային Միության անցած ճանապարհին։

Սովորաբար հիշատակում են վիթխարի տարածք ընդգրկող, հարյուրից ավելի ազգեր ու ազգություններ իր փեշերի տակ առած պետությունը, որի վիթխարի տնտեսական միջոցառումները երևի թե նրա համար պիտի ապահովեին առաջնակարգ մի տեղ ժամանակակից աշխարհում։

Այո՛, այս երկիրը Դնեպրոգէս է կառուցել, ստեղծել է Վոլգայի վրայի վիթխարի ջրամբարները, Կամազ ու Ժիգուլի, ԲԱՄ ու միջինասիական ոռոգման համակարգը, ատոմային էլեկտրակայաններով ծածկել երկիրը՝ Լենինգրադի արվարձանից մինչև Արարատյան դաշտը... Այս ցուցակը կարելի է շարունակել, ապա դառնալ մյուս բնագավառներին, օրինակ, գազի ու նավթամթերքների հանույթին, որի մեջ մենք, ասում են, առաջին տեղն ենք գրավում աշխարհում, պողպատաձուլությանը, որով մենք անպայման առաջինն ենք, քիմիական պարարտանյութերի արտադրությանը, որով, իհարկե, աշխարհում առաջինն ենք ու առաջինը...

Հետո՞։ Բայց ա՛յն, որ մեր Վոլգյան ջրամբարները կաթվածահար են արել Ռուսաստանի սրտերակ Վոլգան և ավերել նրա ավազանի անհուն տարածությունների հողը։

Որ միջինասիական ոռոգման համակարգից մեռել է Արալյան ծովը և արդեն ահավոր թմբիրի մեջ է ողջ Միջին Ասիան։

Որ ամենաշատ գազ արտադրող ու արտահանող երկրի գյուղացիության մեծագույն մասը դեռևս միջնադարյան եղանակով է բավարարում իր կենցաղային պահանջները։

Որ աշխարհում ամենից շատ պողպատ ձուլող երկրի արտադրած մեքենաներն ամենից անորակներն են ու արտաքին շուկա չեն կարող դուրս գալ ոչ միայն անորակության պատճառով, այլև նրանով, որ չեն հասցնում բավարարել նույնիսկ ներքին պահանջները։

Որ ամենաշատ հանքային պարարտանյութեր արտադրող երկիրը գյուղատնտեսական մթերքների արտադրության մակարդակով աշխարհի ամենահետամնացների կողքին է կանգնած...

Է՞լ ինչ ցուցանիշներից խոսենք։ Հայաստանի համապատասխան բնագավառներից կամ նրանցում իրականացված սոցիալիստական հեղափոխիչ երևույթների՞ց։ Սևանի հետ խաղացած մեր անհեռատես խաղի՞ց, մեր լեռնային մի բուռ երկիրը

քիմիական ապականիչ արտադրությամբ ծածկած քաղաքականությունի՞ց, որը կլանել, ոչնչացրել է տասնյակ ու տասնյակ գյուղեր, ավաններ...

Եվ, վերջապես, մենք Հայրենական մեծ պատերազմում հաղթեցինք «մարդկության մեծագույն ու ամենաահարկու թշնամուն՝ ֆաշիզմին»։ Այս է՞լ սոցիալիզմի շնորհիվ։ Ո՞չ, չնայած լծվա՞ծ էինք սոցիալիզմին, ավելի ճիշտ՝ ի հեճո՞ւկս սոցիալիզմի։ Այդ պատճառո՞վ չէր, արդյոք, որ մենք՝ հաղթողներս, պատերազմի ընթացքում, ոչ լրիվ ու ոչ այնքան վրատահելի հաշիվներով, կորցրինք ավելի քան քսան միլիոն մարդ, իսկ պարտված Գերմանիան՝ ընդամենը չորս միլիոն։

Եվ, որ պակաս կարևոր չէ. այս պարտությունից հետո երկփեղկված Գերմանիան ոտքի կանգնեց, մեր աղդեցությունից դուրս մնացած իր մասով դարձյալ քայլեց Եվրոպայի ու աշխարհի ամենաառաջավոր երկրների շարքում, ժողովրդի բարեկեցության տեսակետից չզիջելով նրանցից և ոչ մեկին։ Իսկ մեր հաղթանակած, պատերազմից փառքով ու պարծանքով դուրս եկած երկիրն իր անհուն ու անեզերք տարածություններով դարձավ մի համատարած համակենտրոնացման ճամբար, որի փշալարերից այնկողմ կալանավորներն էին «կոմունիզմի կառուցներ» վեր հանում, այս կողմ՝ նրանց հարազատները՝ իրենց ճորտական կամ դարձյալ կալանավորի վիճակից անգիտակ։

Այո՛, անգիտա՛կ, որովհետև երկաթե վարագույրով անջատված էինք մնացած աշխարհից ու հարբած ամեն օր խելագար դոզաներով ընդունվող այն քարոզներից, թե հողագնդի վրա չկա մի ուրիշ կետ, ուր մարդն այսպես ազատ լինի, այսքան երջանիկ ու այս տեսակ վայելքների տիրացած։

Հասարակական գիտություններն ու նրանց լծված իմաստունները մեզ համոզել էին, որ սոցիալիզմը մի քանի տասնամյակում մեր երկիրը միջնադարյան հետամնացությունից հանել, հասցրել է աստեղային երանության, Չե՞ք հավատում. ծանր արդյունաբերության արտադրանքն ավելացրել է 291 անգամ, էլեկտրաէներգիայինը՝ 6540... Եվ այլն, և այլն։

Ուրեմն, մենք սոցիալի՞զմ էինք կառուցել։

Բայց ի՞նչ է սոցիալիզմը, որ, իբր, մենք արդեն կառուցել, պրծել էինք, վերջին երկու տասնամյակին էլ նրա հասուն կամ

զարգացած տեսակն էինք վայելում և քիչ էր մնում հասնեինք կոմունիզմին՝ մարդկային հազարավոր սերունդների երազած հասարակարգին։

Հանրագիտական հասկացությամբ՝ սոցիալիզմն այն է, որ իր առաջին պարտականությունն է դարձնում մասնավոր սեփականության վերացումը և այս միջոցով էլ անհնար է դարձնում մարդու շահագործումը մարդու կողմից։ Արդյունքում աննախադեպ բարձրության է հասնում ժողովրդի բարեկեցությունը, հասարակության յուրաքանչյուր անդամ անսահմանափակ իրավունքներ ու հնարավորություններ է ստանում համակողմանի զարգացման համար։ Մանավանդ իրավունքնե՞ր, որովհետև պետության ընդունած օրենքներով ու պարբերաբար նորոգվող Սահմանադրությամբ էլ հռչակվում են անձի ու անձնական գույքի անձեռնմխելիությունը, խոսքի, մամուլի և ուրիշ ամեն տեսակ ազատություններ։ Եվ եթե օրանց կողքին էլ նույն օրենքները պնդում են, թե սոցիալիստական համաժողովրդական պետությունը չունի ուրիշ որևէ հոգս, քան բանվորների, գյուղացիների ու մտավորականության շահերը, նրանց կենսամակարդակի անշեղ բարձրացումը և համանման ուրիշ-ուրիշ հրաշքներ, ապա դժվար չէ եզրակացնել, թե աշխարհում չկա ուրիշ որևէ երկիր, ուր մարդն այնպես երջանիկ լինի, այնպես ազատ շնչի ու վայելի այս հողագնդի վրա միայն իրեն պարգևված երջանկությունը։

Սակայն լոկ հիմա է ամբողջ մերկությամբ երևում, թե ի՞նչ տեսակ սոցիալիզմ էր մեր կառուցածը, հակաժողովրդական ու հակամարդկային, ի՞նչ տեսակ հասարակարգ, որի տիրապետողների բռնության ու կամայականությունների մեջ պիտի ետ թողնեին պատմական անցյալի ամենավայրագ բռնակալներին, իսկ ժողովուրդը, հասարակ մարդիկ պիտի ենթարկվեին չարագործությունների, որպիսիք չէին կիրառվել նույնիսկ ստրուկների և ճորտերի հանդեպ։

Բայց արդյոք այդպիսին էր միայն մե՞ր սոցիալիզմը։ Ահա այն փլուզվեց Արևելյան Եվրոպայի եղբայրական երկրներում ու Մոնղոլիայում, և պարզվում է, որ մեր օրինակով կառուցվածները բոլորովին էլ տարբեր չեն եղել մերինից։ Ժողովուրդները դտնվել են հասարակարգի պարտադրած ահավոր կաշկանդումների մեջ, իսկ տիրող բռնակալներն իրենց ազատ են

զգացել կիրառելու չարագործություններ, որոնց հավատալն անգամ դժվար է։ Եվ այսքանը՝ բոլո՛ր սոցիալիստական երկրներում, անխտի՛ր, առանց բացառությա՛ն։

Այստեղ հարկ է, թեկուզ ընդհանուր գծերով, ցույց տալ մեր սոցիալիզմի մի քանի էական կողմերը։

* * *

Սոցիալիզմ կառուցողների ամենասիրած կարգախոսները վերաբերում էին մարդուն, նրա իրավունքներին, նրա անձնական ու հասարակական դերը երկինք հանելուն։ Ստալինի անունից էին թմբկահարում, թե մարդն ամենաթանկ կապիտալն է, նրա անձեռնմխելիությունը պաշտպանելուն են ուղղված պետության օրենքները, Սահմանադրությունը, երկրի ուժն ու հարստությունը։

Վերջին տարիներին որոշ ջանքեր են արվել Ստալինից մինչև Բրեժնևի օրերը բռնությունների ենթարկված մարդկանց թիվը ճշտելու համար։ Ոչ լրիվ տվյալներով այն հասնում է հիսուն միլիոնի։ Հիսուն միլիոն մարդիկ մատաղ են տրվել սոցիալիզմին։ Եվ գրանք իրենց հիմնական մասով եղել են սոցիալիզմի գաղափարին անհունորեն նվիրված, նրա համար հեղափոխությանն ու հետագա զանազան մարտերին, ամեն տեսակ միջոցառումներին մասնակցած մարդիկ, կոմունիստական կուսակցության ու սոցիալիստական պետության ականավոր գործիչներ, արդյունաբերության ու գյուղատնտեսության լավագույն կազմակերպիչներ, գիտական մտավորականներ, գրական ու մշակութային գործիչներ, որոնք իրենց բնագավառների փառքն ու պարծանքն են կազմել։ Ուրիշ խոսքով՝ ժողովրդի ծաղիկը, միտքը, տաղանդը, ուժը։

1934 թ. գումարվել էր ԽՄԿԿ 17-րդ համագումարը, որով սոցիալիզմի կառուցումը հռչակվել էր ավարտված, իսկ համագումարը՝ սոցիալիզմ կառուցողների համաժողով։ Նրա պատգամավորների 90 տոկոսը հետագայում ոչնչացվել է։

1934 թ. ստեղծված Գրողների միության 90 տոկոսը ևս ենթարկվել է բռնություններին։ Ո՛չ թե այդ թվականին գումարված գրական համագումարի պատգամավորների՛, որոնցից հատուկենտ փրկվողներ են եղել, այլ ամբողջ Գրողների միության 90 տոկոսը։ Որովհետև ստալինյան բռնապետության համար գրողը, աշքարաց մարդը, արդեն ինքնին թշնամի տարր էր։

Ի՞նչ մեղք ունեին գրողները և առհասարակ նրանք ունե՞ն որևէ մեղք։ Որովհետև, եթե 20-ական թվականներին բռնության ենթարկվածները, ըստ խեղաթյուր աղբյուրների տեղեկության, հաճախ հասարակական կյանքի այս կամ այն երևույթի, ծագած այս կամ այն հարցի վերաբերյալ ունեցել են սեփական կարծիք և այն արտահայտելու համարձակություն, որը ոչ մի ժամանակ մեղքի նշանակ չէր կարող լինել, ապա 30-ականների ու հետագաների մթնոլորտում այսքանն էլ իսպառ բացառվել է, որովհետև մեկընդմիշտ հաստատված ու միակ ընդունելին էր, որ Ստալինն է աշխարհի ամենախմաստուն հանճարը, բոլոր մարդկանց, նաև ժողովուրդների ամենաբարի ու ամենահոգատար հայրը... Մահկանացուների միակ պարտականությունն էր վայելել հանճարի լույսը, կրկնել ու տարածել «թանավոր» դարձած նրա իմաստությունները և ինքնուրույն ոչինչ չասել կամ չանել։

Միլիոնավոր գոյերի ուշացած կենսագիրները չեն կարողանում գտնել դոնե սուտ տեղը «հիմնավորված» որևէ հանցագործություն, որի համար եթե պատժի դերագույն չափը հրամայական պատիժ է, ապա գոնե հնարավոր լինի արդարացնել կալանքի տակ առնելը։

Պատահաբար կենդանի մնացած, սակայն ստալինյան բռնությունը ցմբուր ճաշակած մեկին՝ գրող Իդա Նապպելբաումին այսպիսի հարց են տվել.

— Ձեզ ինչի՞ մեջ էին մեղադրում, երբ ձերբակալեցին, ո՞րն էր հիմնական մեղադրանքը։

— Այն ժամանակ այդպիսի կարգ չկար, որպեսզի մեղադրեին և նոր միայն բանտարկեին,— պատասխանել է գրողը։— Նախ կալանքի տակ էին առնում և նոր միայն վրադ բարդում զանազան ու ամեն տեսակ մեղքեր՝ մեկը մյուսից անմիտ ու անհեթեթ։ Կարևոր չէ, թե մեղքերից ոչ մեկը քեզ հետ կապ չի ունեցել և անհնար է կապել։ Քննիչ բռնավորներն այնպես կկապեին, այնպես խոստովանել կտային, որ կմնար խոստովանության տակ ստորագրելը, այդ էլ կկատարեին արյամբ, և սա՝ ուղղակի իմաստով։

Հայաստանում լայնորեն տարածված էր մեծ լեղվաբան

Հրաչյա Աճառյանի «հարցաքննության» պատմությունը։ Բրոնել էին իբրև արտասահմանյան լրտեսի։ Մեծով բերանից քաշել էին զանազան խոստովանություններ. Գերմանիայի լրտեսն եմ եղել, Իտալիայի լրտեսն եմ եղել, Ճապոնիայի, Եգիպտոսի, Իսպանիայի... Որքան երկրների անուններ կարող էր իմանալ բուն քննիչը։ Իսկ երբ սա հիշել է նաև Թուրքիան և պահանջել, որ Աճառյանը խոստովանի, թե Թուրքիայի լրտեսն էլ է եղել, արդեն ուժասպառ ու կիսամեռ գիտնականը պառկել է դահճի առաջ, թե «Սպանի՛ր, այդ մեկի լրտեսը լինել չէի կարող և չեմ եղել»։

Ժողովուրդը չէ՞ր տեսնում այս ամենը, չէ՞ր բողոքում, չէ՞ր ընդվզում։ Ժողովուրդը՝ երևի ո՛չ, քանի որ այն գլխից գաղափարական թմրադեղերով նրան շշմեցրել էին՝ համոզելով, թե բռնության ենթարկվում է միայն թշնամին, և դա միակ փրկությունն է։ Մանավանդ որ թշնամին էլ, ըստ նույն գաղափարական մեքենայի տարածած ամեն տեսակ միջոցների ու լայն զանգվածների համոզման, ժողովրդի՞ թշնամին էր։

Անկասկած, կային նաև աչքաբաց մարդիկ, իմաստուն ու ամենատես, որոնք սոցիալիզմի արշալույսին իսկ հասկացել էին, թե ի՛նչ աղետի է մատնվում ժողովուրդը, և ինչպիսի՛ն պիտի լինեն հետևանքները։

Ըստ երևույթին, գրական տաղանդը մարգարեության սաղմեր ունի իր մեջ։ Վ. Գ. Կորոլենկոն դեռևս 1920 թվականին, Ուկրաինայում ծավալված բռնություններից դատելով, գուշակել էր, թե «մենք դեռևս ականատեսները կլինենք այնպիսի աղետների, որոնց առաջ կխունանա այն ամենը, ինչ հիմա ենք տեսնում»։

1922 թ. Մաքսիմ Գորկին Ա. Ի. Ռիկովին գրած իր նամակով փորձում էր կանխել էսէռների դեմ գործվող մի չարագործություն։ «Ալեքսեյ Իվանովիչ,— գրել է նա,— եթե սոցիալիստ-հեղափոխականների դատավարությունն ավարտվի սպանությամբ, դա լինելու է նախապես մտածված ու ծրագրված սպանություն, եղկելի սպանություն։ Ես խնդրում եմ իմ այս կարծիքը հաղորդել Լ. Դ. Տրոցկուն և մյուսներին։

...Հեղափոխության ամբողջ ընթացքում ես խորհրդային իշխանությանը ցույց եմ տվել, որ անիմաստ ու հանցավոր բան է մեր անգրագետ ու անկիրթ երկրում մտավորականության ոչնչացումը։ Հիմա ես համոզված եմ, որ եթե էսէռներն սպանվեն, այդ հանցագործությունը սոցիալիստական Եվրոպայի կողմից արձագանք պիտի գտնի իբրև Ռուսաստանի բարոյական շրջափակում»։

Եվ հեղափոխության մրրկահավի զայրույթի այս գիրն ինչպե՞ս ընդունվեց իշխանության ղեկավարների կողմից։ Լ. Տրոցկին հանձնարարեց «Պրավդայում» կշտամբել Գորկուն, որի խոսքը, ինչպես նա էր կարծում, «քաղաքականության մեջ ոչ ոք լուրջ բանի տեղ չի դնում»։ Իսկ Լենինը, Գորկու նամակը «պիղծ մի բան» համարելով, այնուհանդերձ գտնում էր, թե հեղինակին հրապարակորեն հայհոյել չի կարելի։

1920 թ. երիտասարդ Անդրեյ Պլատոնովը տեսել ու արձանագրել է առավել մեծ աղետը և նրա քաղաքական ու հոգեբանական հետևանքները։ Նա գրել է, թե «Կոմունիստական հեղափոխության գործն է՝ սպանել անհատը և նրա մահով ծնել նոր կենդանի հզոր գոյություն՝ կոլեկտիվ-միասնական օրգանիզմ երկրի վրա, մեկ ռազմիկի՝ իր բռունցքով ընդդեմ բնության»։

Բնություն ասելով նա հասկանում էր կյանքը, աշխարհը, մարդկային հասարակությունը։

Տասը տարի էլ չէր անցել, որ նույն Պլատոնովն անդրադարձավ նաև անհատի ու ազգային հանրության փոխարեն սոսարեզի տեր դարձող անդեմ խաժամուժին։ «Չեվենգուր» վեպում ասում է. «Դրանք ինտերնացիոնալ պրոլետարների հավաքածու են. տեսնո՞ւմ ես՝ ո՛չ ռուսներ են, ո՛չ հայեր, ո՛չ թաթարներ, այլ ոչոքներ։ Ես քեզ համար կենդանի ինտերնացիոնալ եմ քշել-բերել, իսկ դու վշտանո՞ւմ ես...»։

Այսքանի կողքին գրողը գծում է նաև տիեզերական ավերածության պատկերը։ Ահա այն. «Ամբողջ երկրներ ոչնչացնելու համար պետք չէ կռվել, պետք է միայն այնպես վախենալ հրեաներից, այնպես կառուցել ռազմական արդյունաբերություններ, այնպես արհամարհել բնակչությանը, այնպես ռազմական պաշարներ կուտակել, որ ամբողջ բնակչությունը կործանվի տնտեսապես անարդյունավետ աշխատանքից, իսկ արտադրանքի, հագուստի, մեքենաների ու արկերի սարերը մնան մարդկության փոխարեն՝ իբրև նրա գերեզմանաթումբ ու հուշարձան»։

Այս պայմաններո՞ւմ չէր, որ Եղիշե Չարենցն էլ տեսավ ստեղծված համախորհրդային սոդոմ-գոմորը և իր ազգին պատգամ արեց. «Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»։

Իմաստուն տեսանողների մի զգալի մասը՝ գրողներ ու մտավոր կյանքի ուրիշ բնագավառների լավագույն ներկայացուցիչներ, սոցիալիզմի կամավոր կամ ակամա նահատակությունն ընդունեցին՝ սկսած հենց 20-ականների սկզբից։ Եղիշե Չարենցի պոռատանքը՝ «Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի», ըստ էության զոհաբերությունների, զանգվածային նահատակությունների այդ ահավոր երևույթին ընդդիմադիր գնալն էր։ Նրա ռուս բախտակիցներից շատերը ոչ միայն նույն աղոթքը բարբառեցին, այլև ինքնասպանությամբ վերջ տվին իրենց կյանքին՝ հետագա վայրագություններին ենթարկվելուց խուսափելու համար։ Հիշենք Սերգեյ Եսենինի, Վլադիմիր Մայակովսկու, հետագաներից Մարինա Ցվետաևայի և ուրիշների ճակատագրերը։ Անհնար է մեկ-մեկ հիշել 20—30-ականների բանտարկության, աքսորի ու խոշտանգումների ենթարկվածներին։ Իսկ նրանք, որ հրաշքով փրկվել էին բացահայտ բռնություններից, հրաշքով էլ այս կյանքին հրաժեշտ տվին, մեծ աղետի տարիներին՝ 1936-ին, 37-ին։ Հիշենք, օրինակ, Մաքսիմ Գորկուն, որը, ինչքան էլ մտերիմ էր «հանճարեղ» դահճի հետ, նույնիսկ երբեմն-երբեմն տուրք էր տալիս նրա գաղափարաքաղաքական հակամարդկային արշավանքին (հիշենք՝ «Երբ թշնամին չի հանձնվում...»), չկարողացավ փրկվել անբնական մահից։ Երևի թե նույն բախտին է արժանացել նաև ժամանակի ռուսաց գիտական մտքի ու բարոյականության մեծ ռահվիրան՝ Իվան Պավլովը։ Այդ նա էր, որ 1936 թ. առողջապահության նախարար Գրիգորի Կամինսկուն գրել է. «Դուք բավարար չափով մտածո՞ւմ եք այն մասին, որ բազմամյա ահաբեկումներն ու իշխանության անսանձ կամայականությունը մեր առանց այն էլ ասիական բնավորությունը դարձնում են ամոթալիորեն սարկական... Իսկ շա՞տ լավ գործեր կարելի է կատարել ստրուկենովով։ Բուրգե՞ր կառուցել, այո՛, բայց ո՛չ ընդհանուր իսկական մարդկային երջանկություն»։

Պավլովը պետության անասանության հիմք էր համարում ոչ թե անհամար վիթխարի ֆաբրիկաներն ու ամենազանազան

հաստատությունները, այլ ազգի ֆիզիկական առողջությունն ու բարոյական վիճությունը։ Բարոյականը չկար, որովհետև երկու տասնամյակի ընթացքում նորաթուխ բարբարոսները հիմնահատակ ոչնչացրել էին այն, ժողովուրդը դարձրել ստրուկների անմռունչ զանգված։ Ֆիզիկականն էլ չկար ու չէր լինելու, քանի որ նախապատերազմյան շրջանի սովի ու քաղցի պարբերական բռնկումներին գումարվելու էին ծանրագույն պատերազմի բերած նորանոր աղետները և հետպատերազմյան շրջանի տնտեսության քայքայման, շարունակական բռնագաղթերի ու հալածանքների շարքը։

Ստալինյան տասնամյակների մեր բուրգերը, որ կոչվում էին կոմունիզմի կառույցներ, վեր էին հառնել ժամանակի ստրուկների՝ կալանավոր ու աքսորական միլիոնների ջանքերով։ Տառացիորեն բոլո՞ր։ Ստալինն ու մյուս փարավոնները որոշել էին կոմունիզմը տեսնել սեփական աչքերով։ Եվ առաջ էին քայլում, ավելի ճիշտ՝ դոփում էին տեղում, միլիոնների դիակների վրա։

* * *

Անցած տասնամյակների համար ամենաճակատագրականն, իհարկե, Ստալին երևույթն էր՝ իր բոլոր դրսևորումներով, հասարակական կյանքի, դարաշրջանի վրա դրած իր դժնդակ կնիքով ու ծանրագույն հետևանքներով։ Բավական է հիշել, որ վիճակագրական ոչ լրիվ տվյալներով հենց միայն այդ ճիվաղի տիրապետության երեք տասնամյակում գործված բռնությունների զոհերի թիվը հասնում է 40 միլիոնի։ Անմիջակա՞ն զոհերի, նրա՞նց, որոնք գնդակահարվել են զանգվածաբար, նահատակվել բանտերում, համակենտրոնացման ճամբարներում ու աքսորներում։ Այս թվից դուրս են մնում զոհերի միլիոնավոր հարազատներն ու մերձավորները, որոնք եթե բանտ ու աքսոր էլ չեն քշվել, ապա անընդհատ ենթարկվել են հալածանքների ու կատանքների, զրկված են եղել մարդավարի ապրելու, իրենց կյանքը հասարակության մյուս անդամների պես քարշ տալու ողորմելի իրավունքից։

Միայն 1937—38 թթ. մեծ ջարդին զոհ են դարձել շուրջ 5—7 միլիոն մարդ, որից մեկ միլիոնը՝ կոմունիստներ։ Հայտնի է, օրինակ, որ բանտեր են նետվել նախահեղափոխական

ստաժ ունեցող կուսակցականների 80 տոկոսը, կուսակցական, պետական ու տնտեսական ղեկավարների, զորահրամանատարների, գիվանագետների, մշակույթի ու գրականության գործիչների լավագույն մասը։

Ստալինյան գաղափարական ու «իրավապահական» մեքենան ստեղծել էր թշնամու («ժողովրդի թշնամու», «իմպերիալիզմի գործակալի» են) մի համապարփակ կերպար, որով երկիրը լիքն էր ու շրջապատված։ Թշնամի փնտրելն ու «գտնելը» համաճարակ էր դարձել, իր ճիրանների մեջ առել ամբողջ հասարակությանը։ Ով չէր ուզում թշնամի դառնալ ու բռնվել, ինքը պիտի փնտրեր-գտներ։

Ստալինը կուս. պատմության դասընթաց էր գրել (թե՞ գրել էր տվել)՝ լիքը հակապատմական, հորինովի փաստերով, ստերով ու անհեթեթություններով, հանրահայտ իրողությունների կամայական մեկնաբանություններով, վայրենի հանձնարարականներով։ Եվ այս գիրքը դարձել էր երկրի, այսպես կոչված, գաղափարական ճակատի աստվածաշունչը։

Ոգևորված շրջապատողների լպրծուն գովեստներից՝ դարձել էր գիտության բոլոր մարզերի, արվեստի, գրականության միակ ու աննախադեպ գիտակը։ Եվ իրեն իրավունք էր վերապահում շարքային մի պատմվածքը վեր դասել Գյոթեի «Ֆաուստից», որպեսզի այնուհետև այս չափանիշը տիրապետող դառնար իր տերության մեջ։

Կոտորել էր ռազմական ասպարեզի հին ու նոր լավագույն ներկայացուցիչներին և մտել նաև այս ուղղության օրենսդրի ու հանճարեղ ռազմավարի դերի մեջ։ Արդյո՞ւնքը. իր գլխավորած պատերազմում երկիրը շարդվեց, քայքայվեց մինչև վերջին օղակը։ Եվ ֆաշիզմը պարտվեց խորհուրդների ու դաշնակիցների բանակների միացյալ հարվածներից։ Ընդ որում, ինչպես վերն ասվեց, պարտված Գերմանիան տվեց շուրջ չորս միլիոն զոհ՝ հաղթանակած խորհուրդների երկրի ավելի քան քսան միլիոնի դիմաց։

Պատերազմից հետո ելավ, եռաց գաղափարական նոր ոլորտներում աստվածանալու մարմաջը։ Ոտքի տակ տվեց լեզվաբանությունն ու տնտեսագիտությունը՝ այս ասպարեզներում հրապարակելով հոդվածներ, որոնք «հեղաշրջում էին»

գիտությունը, «լուսավորում» նրա անշեղ վերելքի ճանապարհը։

Սա Ստալինն էր, իսկ ստալինականնե՞րը։ Նույնն էլ ներբա՛նք էին, միայն իրենց սահմաններում, իրենց վերապահված կարգով, որ նշանակում էր՝ Ստալինի դրոշի տակ, ստալինյան կարգախոսները, փուք ու փուչ արտահայտությունները շուրթներին և ամեն ինչում ու ամենայն տեղ՝ ստալինաբար։

Նախորդ առաջնորդն ասել էր՝ խոհարարուհին էլ պիտի կարողանա երկիր կառավարել։

Երևի մինչև վերջ էլ չպարզեցին, թե սա ի՞նչ է նշանակում. խոհարարուհին է՞լ պիտի հնարավորություն ունենա սովորելու, կառավարման գաղտնիքներին տիրապետելու, երկրի ղեկավարության մեջ տեղ գրավելու, թե՞ հենց տեղից վեր կենալուն պես պիտի երկրի ղեկը ձեռքն առնի ու վարի առաջ։

Մինչև վերջ էլ չպարզեցին... Եվ այդ միամիտ ցանկությունը կտրական հանձնարարության տեղ ընդունած՝ երկիրը տվին խոհարարների ու բանվորների, գեղջուկների ու սոցիալական «մաքուր ծագում» ունեցող այլ խավերի ներկայացուցիչների ձեռքը... Իսկ սրանք, դեռ ոչինչ չսովորած, պարտավոր էին ղեկավարել տնտեսության զանազան բնագավառներ, մշակույթի, արվեստի ու գրականության առաջընթացը։ Պարտավոր էին ու գործի անցան։

Սրանց վարքի ու գործունեության համար աստվածառաք օրինակ էր ժողովուրդների մեծագույն առաջնորդը, աշխարհի ամենաիմաստուն մարդը, մարդկային գործունեության բոլոր բնագավառների համար միակ անսխալական ուղեցույցը, Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը։

Բռնության մեջ առաջնորդից ետ չէին մնում նաև նրա զինակիցներն ու կամակատարները։

Հայտնի է, որ, օրինակ, Մոլոտովի ու Կագանովիչի, Վորոշիլովի և ուրիշ շատերի ստորագրած դատարկ թղթերով բանտարկվել, աքսորվել, մահվան են դատապարտվել հազարավոր քաղաքացիներ, պաշտոնյաներ, իրենց ենթակա գիմնարկների աշխատավորական խմբեր։ Մոլոտովն է եղել գյուտարարը զանգվածային պատժամիջոցի այն թեթև ու հեշտ ձևի, ոչից հետո քաղբյուրոյի որոշմամբ կամ նրա անդամներից որևէ մեկի մակագրությամբ վավերացած գիրը բավական էր

ՆԳԺԿ-ի ներկայացրած ցուցակներով տասնյակ, հարյուրավոր, հազարավոր մարդկանց պատժելու անգամ ու անդատաստան։

Տիրահռչակ ստալինական Ի. Շեխովցովի «գործով» պատմաբան Վ. Պոլիկարպովը դատարանում ցույց տվեց, որ միայն 1937—38 թթ. Ստալինի մակագրություններով ու ստորագրություններով գործի են դրվել 383 ցուցակներ, որոնցով խաչ է քաշվել տասնյակ ու տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց գլխին տասնյակ հազարավոր մահվան դատավճիռների վրա։ Եվ, վերջապես, գտնվել է Ստալինի հեռագիր-կարգադրությունը, որով քննիչներին իրավունք էր տրվում խոշտանգումների ենթարկել հարցաքննության տակ գտնվողներին։

Ստալինի մահից (1953) հետո, 1956 թ., ԽՄԿԿ 20-րդ համագումարում դատապարտվեց Ստալինի շուրջ ստեղծված անհատի պաշտամունքը։ Ն. Ս. Խրուշչովը ժամանակի համար աներևակայելի մի խիզախությամբ պսակազերծեց ստալինյան սուտ աստվածությունը, բացեց նրա ոճրապարտ ծալքերը։ Թվում էր՝ այնուհետ այլևս անհնար պիտի լիներ նոր պաշտամունքի հայտնությունն ու հակաժողովրդական բյուրոկրատիայի ծաղկումը։ Սակայն մեկ տասնամյակ էլ չէր անցել, որ Խրուշչովն ինքը դահընկեց եղավ՝ համարյա նույն մեղքերի համար։

Ավելի քան չորս տասնամյակ տևած խավարի ու բռնության թագավորությունն ըստ երևույթին անհնար էր դարձրել մեծ երկրին արժանի քաղաքական գործչի ծնունդը։ Ծնված էլ լինեներ, միևնույն է, ղեկավար օղակներ, պետական ու կուսակցական բարձր ոլորտներ թափանցելու հնարավորություն չպիտք է ունենար։ Այդ պատճառով էլ աշխարհի ամենամեծ ու ամենահզոր տերություններից մեկի բախտի տնօրենը դարձան այնպիսի պատահականություններ, ինչպես Լ. Բրեժնևը՝ երկար ժամանակով, ապա Յու. Անդրոպովը և Ն. Չեռնենկոն՝ կարճ ժամկետներով։

Անցյալ տասնամյակների քաղաքական կյանքը քննելիս հիմա հաճախ են կառչում Խրուշչովի կերպարից՝ կարծելով, թե նրա ձախողումն էր պատճառը, որ, այսպես կոչված, վերակառուցումն ուշացավ ավելի քան երկու տասնամյակ։

Ո՞րն էր Խրուշչովի պարտության պատճառը։ Ուրիշ խոսքով՝ ո՞րն էր նրա թերությունը։ Վերջերս շատ են շեշտում այդ

խիզախ գործչի բռնած սխալ դիրքը մտավորականության հանդեպ։ Իբր, ինքը գեղջկական սահմանափակ բարեկրթության տեր մարդ է եղել, դրանից էլ՝ նրա հակամտավորական խառնվածքը։

Սակայն այս դեպքում մոռացության է տրվում այն աշխույժ մթնոլորտը, որ նա էր հբահրել ստեղծագործական կազմակերպությունների, գիտության ու մշակույթի մյուս բնագավառների համար։ Հանդիսավոր ու գործնական հանդիպումները, ասուլիսներն ու բանավեճերը, սթափ հայացքը հին ու նոր երևույթների վերաբերյալ... Եվ մեկ էլ այսքանի կողքին՝ հարձակումները բանաստեղծ Բ. Պաստեռնակի, քանդակագործ Է. Նեիզվեստնու և շատ ուրիշների վրա... Ճիշտ է, սրանց դեմ չգործադրվեցին անհատի պաշտամունքի ժամանակի միջոցները, ոչ ոքի չսպանեցին... Բայց չէ՞ որ նրանց սպանեցին իբրև ստեղծագործող անհատների։ Ինչո՞վ բացատրել մթնոլորտի այսպիսի ապականությունը։

Արդյո՞ք նրանով, որ Ն. Խրուշչովը միամտորեն կարծել էր, թե 30—40-ական թվականների անբարոյական-անմարդկային վարչակարգի մեղքը միայն Ստալինի ու նրա մերձավոր գործակիցների խմբինն է եղել։ Մտածել է, թե մթնոլորտը գարշելի է լոկ նրանց առկայությունից, ասպարեզից դեն շպրտվեն, Ստալինի դիակը հանեն Կրեմլյան դամբարանից, շրջապատն անմիջապես կմաքրվի, կառողջանա, կդառնա երանելի։ Մինչդեռ իր շրջապատը, եթե ոչ ամբողջովին, ապա գոնե մեծագույն մասով, բաղկացած էր հին մտայնության երկերեսանի կրողներից, այն ժամանակներում ասպարեզ եկած, այն օրերի բարքերով ապրող շարքային ու ղեկավար մարդկանցից։ Տափակ ու ժանգոտ... Իսկ եթե կային նաև նորաթուխ սեմիշատներներ, ապա չէ՞ որ դրանք էլ դուրս էին եկել ստալինյան կարգուկանոնով դրված ձվերից...

Խրուշչովը գլխի էլ չընկավ, թե սրանք ինչպես, խոսքները մեկ արած, իրեն հարբեցրին մեծագույն մտածողի ու անսխալականի ինքնախաբեության թմրադեղով, սկսեցին հուշել, թե ինչպես պիտի երկիրը մաքրել իսկական մտածողներից ու ստեղծագործողներից և վերջն էլ... մաքրեցին իրենից՝ Խրուշչովից։

Խրուշչովի օրոք, նախընթացին՝ առավել ևս, հանցագործու-

թյան պարունակ էր դիավում պրպտող միտքը։ Ստալինի ժամանակ բուրժուական-հակախորհրդային պիտակ էին կպցրել կիբեռնետիկային և մարդկային մտքի ուրիշ այսպիսի հաղթանակներին։ Կենսաբանության բնագավառում միահեծան իշխում էր լիսենկոյան շառլատանությունը։

Իսկ հետագայո՞ւմ (ես չեմ խոսում Անդրոպովի ու Չեռնենկոյի՝ բարեբախտաբար կարճ տևած ժամանակների մասին, երբ առողջ մարդիկ չէին կարող չզգալ բանտախցի ու կենդանի դիակի առկայությունը)։ Բրեժնև-սուսլովյան ռութ քարացածության երկու տասնամյակից, ուրիշ բան պետք չէ, հիշենք, թե ինչպես օրենքից դուրս հայտարարվեց ժամանակի մեծագույն մտածողը, համաշխարհային գիտական ու հասարակական մտքի ամենապայծառ պոռթկումներից մեկը՝ Անդրեյ Սախարովը...

Սախարովը համառորեն մնաց... բայց նրա պես շատ-շատերը, բազմաթիվ գիտնականներ, գրողներ ու արվեստագետներ ստիպված եղան հեռանալ հայրենիքից...

Դժբախտաբար, մենք լոկ այսքանի մասին գիտենք, իսկ որքա՞ն տաղանդներ ու մտքի տիտաններ կորան-հեռացան ասպարեզից՝ աշխարհին, արտադրությանը, մարդկությանը չտալով իրենց ունեցածը, իրենց միակ կյանքը ծախսելով նոր հավատի փնտրտուքի, բուսակերության ու իրահավաքության (սրբապատկերներից մինչև լուցկու տուփ), հարբեցողության ու թմրադեղերի վրա... Ուրեմն, կա՛մ պիտի հեռանային, կա՛մ այս եղանակներով կորչեին հասարակության համար, ասես ծծվեին ավազի մեջ։

Ինչո՞ւ կուռք դառնալու գայթակղությունն այնպես անհաղթահարելի է։ Ինչո՞ւ նախորդ կուռքի ոտքերի տակ յոթնապատիկ խաչված բազմությունները ոչ մի դաս չեն առնում և իրենց համար ստեղծում են նոր կուռքեր՝ նորից նոր խաչվելու, նոր տառապանքների ու ստորացումների ենթարկվելու համար։

Ստալինի պաշտամունքը պսակազերծելուց շատ ժամանակ չէր անցել, որ ժամանակի հերոս Խրուշչովը եկել էր Բաքու՝ Ադրբեջանի խորհրդայնացման 40-ամյակի ցնծությունների մասնակցելու։ Հանրապետության ղեկավարները նրան բարձրացրին Ստալինից ազատված պատվանդանի վրա։ Երբ Ախունդովը լորձնաշուրթ հայտարարում էր, թե «Ով Լենին չի տեսել,

թող գա, տեսնի, ահա նա՝ մեր առաջ կանգնած», խեղճ մարդն այս դատարկաբանությանց հավատում, աշխարհով մեկ էր լինում։

Այս կուռքի վար բերվելուց հետո էլ Հեյդար Ալիևն էր Բրեժնևին հրավիրել Բաքու, և քծնանքի նույն երգն էր երգում։ Եվ նույն ազդեցությունն էր, նույն զավեշտական տեսարանը։

Իսկ ժողովո՞ւրդը։ Երկրով մեկ ցրված, հանձնված մոլական թմբիրին՝ փովում էր կուռքի ոտքերի առաջ։

Մի՞թե դաս ու խրատ չպիտի լինի։

Բայց ո՞վ է մեղավոր, կամ, ժողովրդական խոսքով ասած, որտե՞ղ է թաղված շան գլուխը։ Ինչո՞ւ յոթանասուն տարի շարունակ, տասնյակ միլիոնավոր մարդկային կյանքերի, նյութական ու բարոյական ահռելի զրկանքների գնով կառուցած սոցիալիզմը ճիշտ չէր, հակասոցիալիստական էր։ Արդյոք իրավացի՞ է եղել Բիսմարկը, որ դեռևս հարյուր տարի առաջ զգուշացրել է. եթե ուզում եք սոցիալիզմ կառուցել, ընտրեցեք մի երկիր, որի համար չպիտի ափսոսաք։ Թե՞ մենք չկարողացանք ճիշտ կառուցել, մե՞նք չհասկացանք նրա լեզուն։

* * *

Խորհրդային տնտեսական համակարգի բնագավառում կատարված հակաժողովրդական ու հակամարդկային երևույթների մեջ երևի թե չկա առավել վատթարը, քան գյուղի ու գյուղացիության համատարած քայքայումը։ Ռուս գիտական ու գրական շրջաններում դա հիմա ունի իր անունը՝ раскрестьянивание-ապագյուղացիացում, որի ընդգրկուն բովանդակության տակ են առնվում և՛ գյուղերի քայքայումն ու ամայացումը, և՛ հողի անտիրացումը, և՛ առհասարակ կորուստը բարոյական այն բազմադարյան վսեմ գոյացումի, որ ներկայացնում էր հողի աշխատավորի հոգեբանությունը։

Ստալինիզմի համար ի՞նչ էին գյուղն ու գյուղացիությունը, այսինքն՝ հողն ինքնին և նրա ու իր հավերժական տիրոջ տրնտեսական, բարոյական միասնությունը, այս միասնությունն իբրև արարչության անսպառ աղբյուր։ Բոլոր այս ավանդական ու սուրբ իրողությունները դատարկ բաներ էին՝ ենթակա ամեն տեսակ փոփոխության ու ձևախեղումի, միայն թե ապա-

հովվի նախապես փայփայած ցնդաբանությունը՝ ծրագրված սոցիալիստական շինարարության հաղթանակը։ Իսկ սա էլ նշանակում էր դասակարգերի ու խավերի վերացում, բանվորության ու գյուղացիության միախառնումն այն տարածության վրա, որը կոչվելու էր ստալինյան դրախտ։ Սա էլ, ըստ այն ժամանակ տիրապետող գաղափարախոսության, նշանակելու էր քաղաքի ու գյուղի տարբերության վերացում, իսկ իրականում վերացնելու էր գյուղը՝ հոգուտ նոր, ուռճացած, բարոյական սկզբունքները կորցրած բնակավայրի, որ քաղաք կոչվածն է։

Տեսեք՝ այսքանն ինչպե՞ս էր պատկերացնում ու ծրագրում Ստալինը դեռևս 1927 թ.։ Նա գրել է. «Բանվորների և գյուղացիների միությունը մեզ պետք է ոչ թե գյուղացիությունը իբրև դասակարգ պահպանելու համար, այլ նրա վերաձևման ու վերակերտման համար՝ այն ուղղությամբ, որ համապատասխանում է սոցիալիստական շինարարության հաղթանակին»։

Գյուղացիության, իբրև դասակարգի, վերացման սկիզբ դրվել էր, իհարկե, ռազմական կոմունիզմի ժամանակ, նույնիսկ նրա անմիջական նախօրյակին։ Եվ ահա՛ թե ինչպես։

Մինչև այժմ շատ է խոսվել խորհրդային իշխանության ընդունած առաջին դեկրետներից մեկի մասին, որը վերաբերում է հողին։ Այն հռչակվել է 1917 թ. հոկտեմբերի 26-ի լույս 27-ի (նոյեմբերի 8—9 գիշերը)։ Նրանով իշխող դասերից խլված հողերը բաժանվում էին գյուղացիներին, և սրանք դառնում էին հողի իրավական տերերը։

Սակայն այս դեկրետը կյանք ունեցավ ընդամենը երեք ամսից մի քիչ ավել. 1918-ի փետրվարի 19-ին Կենտգործկոմի նոր դեկրետով («Հողի սոցիալիստականացման մասին») գյուղացին իրականում զրկվեց հողի իրավատիրությունից, չնայած այս դեկրետի մեջ բարձրագոչ խոսքեր կային «ամբողջ աշխատավոր ժողովրդի կողմից հողի տիրակալության» մասին։ Գյուղացիական զանգվածները հազիվ հոգեկցվել էին հող ունենալու, նրա վրա ազատ ապրելու և բարիքներ ստեղծելու, մանավանդ սեփական ձեռքով ստեղծածի տերը լինելու երջանկության հեռանկարին... Եվ հանկարծ նրան զրկեցին այդ երազից։ Պարզ է, թե ինչո՞ւ ծայր առան գյուղացիական զանգվածների՝ աստիճանաբար խմորվող զժգոհությունն ու ընդվզումները, որոնց էլ հաջորդեցին, նախ, քաղաքացիական պատերազմները, ապա 1921—1922 թթ. ահավոր սովը։

Մահամերձ երկրին միայն շտապ օգնությունը կարող էր փրկել, և Վլադիմիր Լենինը ձեռնարկեց նոր տնտեսական քաղաքականությանը (ՆԷՊ), որը լափազանց կարճ ժամանակում, շուրջ մեկ հնգամյակում, երկիրը հանեց տնտեսական ճգնաժամից, նրան պարգևեց ապրելու և առաջադիմելու հեռանկար։

Մինչև այժմ գաղափարական ոլորտներում այս երևույթն ունեցել է այնպիսի մեկնաբանություններ, որ դժվար է գլուխ հանել, թե ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ ՆԷՊ կոչվածը, էական ի՞նչ տարբերություն ուներ նախորդ ու հաջորդ շրջանների համեմատությամբ և, հատկապես, ինչո՞ւ վերացավ, եթե կոչված էր կործանվող տնտեսությունը փրկելու և իրականում էլ փրկեց։

Ասում են՝ դա անցման շրջանն էր (կապիտալիզմից սոցիալիզմին)։

Բայց դիտենք, որ կապիտալիզմից հետո, այսպես կոչված, ռազմական կոմունիզմն է եղել, երկու-երեք տարվա այնպիսի շրջան, որն իսկապես բովանդակ երկրում կործանեց տնտեսությունը։ Հայաստանում, օրինակ, պատճառ դարձավ հեղաշրջման, ժողովրդական զանգվածների նոր ու ահավոր ցնցումների, զրկանքների, նյութական ու բարոյական մեծամեծ կորուստների։

Հայտնի է, որ այդ «անցման շրջանից» հետո եկավ համատարած կոլեկտիվացումը՝ սկիզբ դնելով գյուղական տնտեսության քայքայման և կենսահիմքերի ու բարոյական հարաբերությունների այնպիսի փլուզման, որն այսօր շատ շատերին թվում է այլևս անուղղելի։

Համատարած կոլեկտիվացումն իր արտակարգ, նույնիսկ ռազմական կոմունիզմի համեմատությամբ առավել դաժան ու անմարդկային միջոցներով՝ երկրի ստալինյան վերափոխումների շղթայի մեջ կազմում է երևի թե ամենազարհուրելի օղակը։ Խորհրդային երկրում, ոչ լրիվ տվյալներով, 4—5 տարվա ընթացքում, 1928—33 թթ., գյուղը կորցրել է ավելի քան տասը միլիոն աշխատավոր։ Դրա մեծ մասը հողի լեզուն հասկացող, եռանդուն ու ջանասեր մարդիկ էին, որոնք, օգտվելով

նախորդ տարիների տնտեսական աղատությունից, ստեղծել էին իրենց բարեկեցիկ կյանքը։ Հենց սա էլ բավական էր եղել, որ ընկնեին կուլակների կամ ունևորների ցուցակը և ենթարկվեին կողոպուտի, աքսորի ու տաժանակրության։

Հայաստանի գյուղատնտեսության մարզում տգեղ ու հակաժողովրդական միջոցառումները միշտ էլ ավելի արագ ու ցայտուն են դրսևորվել, քան մեծ կենտրոններում։ Հայկական գյուղն իր լեռնային, կտրտված հողատարածություններով աչքից քիչ (ոչ մի) հարմարություն ունի կոլեկտիվ տնտեսության համար։ Սակայն 1930 թ. սկզբին արդեն Հանրապետությունում կազմավորված էին 668 կոլտնտեսություններ, և բազմաթիվ շրջաններ էլ վերևներին զեկուցել էին, թե իրենց տարածքներում այլևս չկա ոչ մի մենատնտես։

Այսօրինակ զեկույցներում կարևոր տեղ էր բռնում կուլակության՝ իբրև դասակարգի վերացման արձանագրումը։

Հայաստանում կուլակ էին համարվել ոչ միայն նախկին բոլոր մեծ ու փոքր հողատերերը, այլև այսպես կոչված միջակները, հողի բոլոր այն աշխատավորները, որոնք շատ թե քիչ տանելի կյանք էին ստեղծել ՆԷՊ-ի բարեբաստիկ շրջանում։

Համատարած կոլեկտիվացումը տեղի էր ունեցել անսանձ բռնությունների ուղեկցությամբ։ Բռնության ենթարկված զանգվածների բողոքի ցույցերին ու ապստամբական ելույթներին ի պատասխան՝ ստալինյան մեքենան գործել է մի այնպիսի դաժանությամբ, որի կողքին մոռացության պիտի տրվեին «ռազմական կոմունիզմի» շրջանի ամեն տեսակ կամայականությունները։ Ստալինն ու նրա հավատարիմ աշակերտները 1932 թ. ամռանը հացամթերման աննախադեպ միջոցառումներով դատարկեցին կոլտնտեսությունների պահեստները։ Նույն թվականի օգոստոսի 7-ի կառավարական հրամանագրով ել ոչ միայն օրինականացվեց կատարվածը, այլև նոր արշավանք ձեռնարկվեց գյուղացուն մնացած հացի վերջին մնացորդները բռնագրավելու համար։ Արդյունքը եղավ 1932—33 թթ. համատարած սովը, որը, մասնագետների չափազանց զգուշավոր հաշվումներով, Խորհրդային Միությունում առավել շատ մարդկային զոհեր է կլանել, քան Առաջին աշխարհամարտի տարիներին տվել են բոլոր կռվող կողմերը միասին վերցրած։

Հողի լիակատար սոցիալիստականացումը, որ իրականում նշանակում էր գյուղացու վերջնական հողազրկում, նշված տասնամյակներում հիմնավորապես քայքայեց գյուղն ու գյուղացու ավանդական հոգեբանությունը նաև նրանով, որ ստալինյան բռնություններն ուղեկցվում էին աննախադեպ հարկապահանջությամբ։ Մսամթերման, կթնամթերման-յուղամթերման, բրդամթերման և այլ այսպիսի տուրքերին 1940-ականներին գումարվեցին նաև ձվամթերումը, մորթամթերումը, այսպես կոչված, կամավոր փոխառությունը և տեղական հարկահանների հայտնագործած ուրիշ տեսակ-տեսակ կողոպուտները։

Այն ժամանակների գյուղում գեռևս բնակչություն կար միայն մեկ պատճառով. գյուղացուն անձնագիր չէր տրվում, և տաժանակրությունից ազատվել կարող էին լոկ բանակ զորակոչվողներն ու պետական միջոցառումներին մասնակցելու համար վերին մարմինների հատուկ հրավարտակներով այլ վայրեր փոխադրվողները։ Գյուղացիներին անձնագրավորելու, այսինքն պարտադիր կերպով անձնագիր տալու մասին միայն 1974 թ. օգոստոսի 28-ին հրապարակվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը, որից առաջ, սակայն, գյուղն ստացել էր այնպիսի մահացու հարվածներ, ինչպիսիք են, այսպես կոչված, կոմունիզմի կառույցների համար կատարված կամավոր ու բռնի գաղթեցումները, մանավանդ այս ու այնտեղ վեր հառնած նոր քաղաքները, արդյունաբերական կենտրոնները։ Դրանք, մեր համարյա առասպելական Արշակավանի նման, գոյանում էին արագ՝ որպես սնկերն անձրևից հետո և աճելովուռճանալով ժամ առ ժամ՝ կլանում էին գյուղի վերջին կենսական ուժերը։ Կլանում էին՝ քաղաք փոխադրվածներին դարձնելով իսկական արշակավանների անդեմ ու անկերպարան բնակիչներ, որոնք եթե ավելացնում էին ազգի քանակը, ապա, միևնույն է, պղտոր ու գռեհիկ հոսանք էին ավելացնում նրա հալումաշ եղած բարոյական ամբողջությանն ու մշակութային ժառանգությանը։

Մեր վայելած սոցիալիստական գյուղատնտեսության վարկի սիրահարները հիմա հաճախ են գանգատվում ընտրված միագիծ ուղղության դեմ։ Իբր, մենք նոր ուղի բացողներ էինք՝ զուրկ նախօրինակից կամ սերտված դասից, իսկ ճանապար-

հին էլ անհմուտ առաջնորդների միջոցով տնտեսական նոր ձևերի ու եղանակների փորձարկումներ չարինք, բավարար համարձակություն չցուցաբերեցինք իրենց սպառած կամ պարզապես վարկաբեկած եղանակների տեղ նոր ու առաջավոր ձևեր կիրառելու համար։ Եվ ահա արդյունքը. սոցիալիզմը կանգնեց կտրած տաշտակի առաջ։ Սա, իհարկե, անարդար գանգատ է, քանի որ ինչպես արդյունաբերության մեջ, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում հենց մի գլուխ փորձարարությամբ էին զբաղված։ Այս գանգատն անտեղի է, նախ, այն պատճառով, որ ձախողվել է նաև մեզնից հետո, մեր փորձի վրա հենված եղբայրական երկրների՝ արևելաեվրոպական «նոր դեմոկրատների», ինչպես նաև ուրիշ մայր ցամաքներում մեր ուղին բռնածների սոցիալիզմը։

Ապա՝ հիշենք կոլտնտեսությունները հախուռն կերպով խորհրդատնտեսությունների շրջելու, տնտեսությունները խոշորացնելու, հետո էլ ապախոշորացնելու, ղեկավար մարմինների կարգն ու իրավասությունները պարբերաբար փոխելու եռուզեռը և կտեսնենք, որ փորձերի ու փորձարկումների պակաս երբեք չի եղել։ Խելքի՞ պակաս է եղել, փորձարկվող միջոցառման էությունը հասկանալու և ըստ այնմ որոշելու՝ պե՞տք է փորձարկել թե ոչ։ Իսկ ամենակարևորը՝ միշտ էլ փորձարկման կամ նորացման է ենթարկվել անէականը, իսկ էականը կամ առանցքայինը մնացել է նույն հինն ու հետամնացը։

Ահա այսպիսի մի փաստ, որ տարիներ առաջ միութենական լրատվության որոշ մարմիններ քաջություն ունեցան հրապարակելու. Ռուսաստանի գյուղատնտեսական արտադրության մեջ մասնավոր հատվածն իր զբաղեցրած տարածությամբ կազմում էր 2—3 տոկոս, բայց տալիս էր գյուղատնտեսական արտադրանքի 35—40 տոկոսը։ Ինչո՞ւ։ Որովհետև վիթխարի հանրաբերության մշակվող հողատարածքի 2—3 տոկոսի վրա մարդն իրեն հողի տերն էր զգում, մասնավոր սեփականության գոնե մի խաբուսիկ տեսակով օժտված հողի՛, իսկ մնացած 97—98 տոկոսը կազմող տարածությունների վրա՝ զրկված ու անիրավված, հողից ու հողագործությունից խռով մի գոյություն էր, աղքատության, ընչաքաղցության դուռը հասած, ոչ մի կողմնորոշում ու հեռանկար չունեցող արարած։

* * *

Արդեն քանի՞ տարի է, երկիրը լծված է վերակառուցման, որ սկզբից իսկ ճանաչվում էր իբրև խաղաղ ու անարյուն հեղափոխություն։ Հեղափոխություն, որի գրոշին գրված էին սրբազան բառեր՝ ժողովրդավարություն, արդարություն, հրապարակայնություն։ Հեղափոխություն, որը վերջապես պետք է աշխատավոր մարդուն պարգևեր ստեղծարար աշխատանքի, երջանիկ կյանքի և սմեն տեսակ ազատությունների վաղուց խոստացված իրավունքները։

Արտաքին քաղաքականության ասպարեզում երևի թե հարցը պարզ էր ու դյուրին. գերմեծ տերությունների խաղաղ համագործակցություն, անպարագիծ ավերածությունների համար ստեղծված ահարկու զենքերի շարունակական կրճատում՝ մինչև իսպառ ոչնչացում։ Դաշնակից կոչված, իսկ իրականում բռնագրավված երկրների ազատություն, որի շնորհիվ նրանք լծվեցին իրենց ճակատագրերի տնօրինությանը։ Ճիշտ է, պատեպատ էին գարկվում ազատագրված ժողովուրդները։ Ասես խարխափում էին նոր ճանապարհի, քաղաքական ուղեցույցների և տնտեսական նոր եղանակների ընտրության մեջ։ Բայց չէ՞ որ անցյալ տասնամյակների խավարից ու բիրտ կաշկանդումներից ազատվողը հենց այդպես էլ պիտի լիներ, մինչև ընտելանար արևի լույսին և ազատ շունչ քաշելուն։

Այսքանը համանման ուրիշ քայլերի հետ՝ գրաշխարհում։

Իսկ ներսո՞ւմ։

Բավական ժամանակ է անցել հեղափոխության փող հընչեցնելուց, ի՞նչ է փոխվել, խոստումներից ո՞րն է կատարվել, ինչո՞վ կարելի է հպարտանալ։ Ժողովուրդը, որի համար, իբր, իրականացվում էր հեղափոխությունը, դժգոհ է կատարվածից, որովհետև ծայրահեղորեն քայքայվել է տնտեսությունը։ Ինչ վերաբերում է ազգամիջյան հարաբերություններին, ապա այստեղ բացվել են ու չեն լուծվում բարդ հանգույցներ, որոնք խնամքով քողարկված էին անցյալ յոթանասուն տարիներին, և ծայր են առել արյունալի բախումներ, որոնց վերջը չի երևվում։

Ո՞րն է պատճառը։ Ինչո՞ւ ոչ միայն տեղաշարժ չկա, այլև նախկին տեղում, այսպես կոչված ճահճացման շրջանի մակարդակին մնալը դարձել է անհնար։ Որովհետև վերակառուց-

ման կոչերով ու կարգախոսներով մարդկանց հանել են նախկին վիճակի դեմ, անզուսպ ատելությամբ լցրել անցած ճանապարհի նկատմամբ, իսկ նոր ճանապարհ չեն նշում, նոր ձևով, ճշմարիտ ապրելու հնարավորություն չեն տալիս։

Դեմոկրատիայի ու ժողովրդավարության փող են հնչեցրել, սակայն շարունակում են երկիր կառավարել վարկաբեկված, մահվան դատապարտված վարչական եղանակներով։

Մերկացրել են պետականացված տնտեսության ու ապրելակերպի սնանկությունը և դեռ կառչած են մնում նրա փեշերից։

Գոռում են՝ ավելի՞ սոցիալիզմ։ Բայց չէ՞ որ բազմիցս փորձարկված ժողովուրդը տեսել ու համոզվել է, որ դրա ոչ ավելին նշանակում էր բռնություն ու աղքատություն, հիմա վիզն ինչպե՞ս կդնի ավելիի տակ։

Ազգերի ու ազգությունների իրավահավասարություն են քարոզում և դարձյալ պաշտպանում ստալինյան աստիճանակարգը, որով մի ազգն իրավունք ուներ իշխելու մյուսի վրա, տնօրինելու նրա բախտը, ոտնահարելու նրա առանց այն էլ տրորված իրավունքները։

Ամենաբարձր ասյաններում ընդունում են օրենք, որով ազգերին տրվում է ինքնորոշման ու բաժանման իրավունք, իսկ իրականում այդպիսի քայլի փորձ կատարողի գլխին տալիս են՝ վերստին քաշելով նախկին լծի տակ։

... Առայժմ այսպիսին է մեր տեսած վերակառուցումը, որի դրոշակակիրները սեփական ձախողանքները հիմնավորելու համար եռանդագին փնտրում են հակառակորդներ, հիմա էլ՝ վերակառուցման թշնամիներ։

Օդը թանձրացել է կոչերից ու կարգախոսներից։ Դրանից էլ շնչելն է դժվարացել։

Ծիծաղելի, խորքում ողբերգական է, երբ մարդկանց առաջնորդում է ոչ թե լուրջ բանականությունը՝ պատմական փորձի հետ հմտորեն զուգակցված, այլ դարձյալ անքննելի կարգախո՛սը։ Վերջինս, թեկուզ և ամենախմաստուն գլխից ճառագած, դառնում է աշքի փառ, ձեռուոտի կապանք, առաջընթացը փակող պատնեշ, և մարդ օրը ցերեկով խարխափում է, հարթ ճանապարհին սայթաքում, աջ ու ձախ ընկնում։

Ասված մեզ ավելի վատից փրկի։

ՀԵՇԱՏԱՍԱՐԱՆ

Մեր երանելի հները, որևէ կարևոր գործի ձեռնարկելիս, մտածում էին, թե փոքրկված օվկիանոս են մտնում և գործի վերջը տեսնում էին իբրև անալեկոծ ու ապահով նավահանգիստ։

Հիմա ես անա ոտ եմ դրել այդ նավահանգստում, և, սակայն, սիրտս առավել փոքրկված է ու անհանգիստ, քան գործի սկզբին։ Ի՞նչ եմ ափ հանել իսկապես օվկիանոսյան ընդգրկումների մեր մշակութային հարստությունից։ Չէ՞ որ ես երազում էի հասկանալ ու ցույց տալ, թե ուր են այն ալիքները, որոնց խորքերում մեր ազգային գոյի հիմքերն են, ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք սկիզբ առել, ինչպե՞ս ենք անցել մեր ճանապարհը, ի՞նչն է մեզ պահել և ի՞նչն է պահելու։ Եվ այս ամենը՝ մեր ազգային երկար ու ձիգ կենսագրության մեջ, մեր մշակույթի օվկիանոսային հարստության շրջանում։

Երանի՞ թե գոնե մասամբ կատարված լինի իմ երազանքը։ Երանի՞ թե ընթերցողն այս գրքի մեջ իր աչքերով տեսնի իմ տեսածները, իր հայացքով բռնի իմ ցույցդրածները։ Իսկ եթե նաև վիճելու լինի ինձ հետ, ապա նրա՛ համար միայն, որ այդ վեճից հառնի ճշմարտությունը։

Ահա ես՝ վերջինը հոգևոր Հայաստանի սպասավորներից ու շարքայինը բոլոր այն երջանիկների մեջ, որոնք ժառանգորդն են անհուն-անեզերք մեր մշակույթի, փորձեցի նավել այդ հարստության միջով և պատմել իմ տեսածների մասին։

Դարձյալ դիմեմ երանելի մեր նախնիների կաղապարած աղերսանքին. անմեղադի՛ր լերում, կար իմ այս էր։

ՑԱՆԿ

Երկու խոսք 3
Հայոց բնաշխարհը 8
Մեր լեզուն մեր պատմությունն է 16
Դեռ պիտի խոսեն սեպագրերը 42
Հայաստանի հնագույն պետական կազմավորումները 67
Հին հայոց մշակույթը 87
Մեր բնիկ թագավորության նոր ծաղկումը 108
Արտաշես և Բարի 117
Հայաստանը Տիգրան Մեծի ժամանակ 125
Հելլենիստական դարաշրջանի հայկական մշակույթը 134
և Գառնիի տաճարը 143
Արշակունյաց հայկական թագավորությունը 160
Հայոց քրիստոնեության դարձը 174
և նրա գրական-պատմական աղբյուրը 194
Հայաստանը Արշակ Բ-ի և հետնորդների շրջանում 216
Մեսրոպ Մաշտոցը, հայերեն գրերի գյուտը և հայոց դպրության սկզբնավորումը 233
Մահ իմացեալ անմահություն է 236
Վահանանց պատերազմը 280
Հայոց մատենագրության ոսկեդարը (Փ. Բուզանդ, Ղազար Փարպեցի, Եղիշե, Մ. Խորենացի) 297
Հայոց արևելից կողմանք 311
Առանձնահատուկ թագավորության սկզբնավորումը 324
«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» 338
Հայաստանը արաբական տիրապետության շրջանում 348
Թագրատունյաց մեծագործությունը 362
«Սասունցի Դավիթ» կամ Սասնա ծռերի դյուցազնավեպը 372
Հայաստանը և սելջուկ-թուրքերը 383
Հայաստանը թաթար-մոնղոլների տիրապետության շրջանում 397
Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլների բռնատիրության դեմ, հայկական քաղաքական կյանքի գոյատևումը 411
Կիլիկյան Հայք. Հայկական պետությունը 419
Հայոց համալսարանը 455
Հայ մելիքությունը 470
Արցախ-սղնախյան ազատամարտերը 18-րդ դ. առաջին երեսնամյակում 486
Ազատամարտերը Սյունիքում 510
Խաչքար 527
Հայոց ակադեմիան օտար կղզու վրա կամ Մխիթարյան հոգևոր գերդաստանը 538
Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, նոր իրադրության աչն ու ահյակը 555
Հայկական հարցը 577
Հայոց ազատագրության նվիրյալները 602
Հոգևոր Հայաստանը 616
Սարդարապատը Հայաստանի նոր պետականության ծննդարան 633
Անմնայն հայոց Մատենադարանը 642
Հետադարձ հայացք կամ՝ ինչ էր մեր կատուցածը 659
Հիշատակարան 669

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ԲԱԳՐԱՏ ԱՐՇԱԿԻ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

Զրուցարան

Ակնարկներ

Դպրոցական միջին և բարձր տարիքի համար

Литературно-художественное издание

БАГРАТ АРШАКОВИЧ УЛУБАБЯН

Сборник бесед

Очерки

Для среднего и старшего школьного возраста

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1991

Խմբագիր՝ Ս. Ա. Վարդանյան

Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Գ. Բ. Իսահակյան

Տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան

Վերատեսող սրբագրիչ՝ Ա. Ս. Համզյան

ИВ 590

Հանձնված է շարվածքի՝ 12.04.1991 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 21. 07. 91 թ.։ Չափը՝ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագրական № 2։ Տառատեսակ՝ Գրքի սովորական։ Տպագրություն՝ բարձր, պայմ. 35,28 մամ., հրատ. 29,97 մամ.։ Տպաքանակ՝ 50 000։ Պատվեր՝ 573։ Գինը՝ 5 ռուբ.։

«Արևիկ» հրատարակչություն. Երևան—9, Տերյան 91։

Издательство «Аревик», 375009, ул. Теряна, 91.

22 Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի № 1 տպարան։ Երևան, Հանրապետության փողոց 65։

Типография № 1 Комитета по печати при Совете Министров Республики Армения. Ереван-10, ул. Анрапетутян, 65.